Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԴՐՈ

ԵՐԵՎԱՆ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
2014

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)
Գ 479

Գիրքը տպագրվել է Իրանահայուհի բարերարի՝ Արմինե Սեթխանյանի հովանավորությամբ

Տպագրվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի խորհրդի երաշխավորությամբ:

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Ներսիսյանը եւ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վալերի Թունյանը

Խմբագիր՝ պատմ. գիտ. թեկնածու Ավագ Հարությունյան

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀԱՄԼԵՏ
Գ 479 Դրո/Հ. Գեւորգյան. -Եր.: Հեղ. հրատ., 2014 – 920 էջ + 16 էջ ներդիր:

Համլետ Գեւորգյանի «Դրո» պատմագիտական աշխատությունը ներկայացնում է հայ ժողովրդի ռազմական եւ պետական ամենանշանավոր գործիչներից մեկի՝ Դրաստամատ Կանայանի կյանքն ու գործունեությունը, որն անմնացորդ նվիրում է հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին եւ Հայոց պետականության վերստեղծման ու վերակառուցման գործին: Պատմական իրողություններին ներկայացնում են 20-րդ դարասկզբի այն անցքերը, որոնց ոգին ու կազմակերպիչն էր մենագրության հերոսը՝ Դրոն:

ՀԴԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 978-9939-0-1227-8

© ԳԵՎՈՐԳՅԱՆ Հ., 2014

Իսկ Դրոն, Իգդիրցի այդ խմբապետը
որ եղել է հերոս, անվախ տեռորիստ...
ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ես ոչ մէկ ժողովրդի հանդէպ ատելութիւն չունեմ, բայց վայ այն ազգին, որ կը համարձակուի վատութիւն անել հայ ժողովրդին, նա լինի թուրք, ռուս կամ այլ ազգի, ես զէնք պիտի վերցնեմ նրա դէմ...»:

...Այսպես էր ասում Դրոն հայրենիքից հեռու տարագրության տարիներին: Արդեն տասնամյակներ էին անցել նրա կյանքի փոթորկահույզ օրերից: Հայոց Ազատամարտի անպարտելի ռազմիկը ժողովրդի ու պատմության դատին հանձնելով իր հերոսականությամբ ու դաժան մաքառումներով հագեցված կենսագրությունը՝ կյանքի վերջին տարիներն էր անցկացնում օտար ափերում: Չնայած իր բացառիկ ծառայություններին, հայության գոյապայքարում եւ ազատագրված հայրենիքի պետական շինարարության մեջ ունեցած վճռորոշ ու անգնահատելի դերակատարությանը՝ Դրոյի կյանքն ու գործունեությունը, հատկապես հայրենական պատմաբանների կողմից, մինչեւ 90-ական թվականները արժանվույնս ուսումնասիրված չէին եւ նրա մասին որեւէ նշանակալի ու ամբողջական աշխատություն գոյություն չուներ:

Ցավոք, Դրոյի, ինչպես եւ Հայոց Ազատամարտի բազում այլ նվիրյալների կյանքի ու գործունեության իմացության ու արժեւորման հնարավորությունը տասնամյակների ընթացքում բռնադատվել ու անջրպետվել է մեր ժողովրդի գիտությունից, որի ազատության գործին (Հանիրավի մոռացված), հերոսները նվիրաբերել էին իրենց ողջ ուժն ու կարողությունը: Ավելին, Հայոց Ազատամարտի ականավոր նվիրյալներին ժողովրդի իմացությունից ամբողջովին անջրպետելու ու նրանց նկատմամբ ատելություն ու հակակրանք առաջացնելու դիտավորությամբ հորինել եւ հրապարակել են բազմաթիվ ստահոդ, իրականության հետ որեւէ առնչություն չունեցող նողկալի պատմություններ:

Յոթանասուն տարի շարունակ կոմունիստ պատմաբանների ու գաղափարախոսների հարվածների ամենաընդգծված ու «սիրված» նշանակետերից մեկը Դրոն էր:

Բանասիրության դոկտոր, պրոֆեսոր Գեւորգ Հայրյանի դիպուկ բնութագրմամբ՝ «Ստահոդ պրոպագանդան, որ սկիզբ էր առել արյունռուշտ Աթաբեկյանից ու կիսախելագար Նուրիջանյանից, յոթանասուն տարի շարունակ զրպարտում, մրոտում էր նրա գործն ու անունը: Դրոն, այդ պրոպագանդայի համաձայն, լոկ խմբապետ էր, ահ ու սարսափ տարածող ահաբեկիչ, որի գործողություններն իբրեւ ուղղված էին ժողովրդի դեմ:

Ինչպիսի մոլորություն:

Այսպես կարող էին մտածել ստահակները, որոնք չէին հասկանում, որ այն ժամանակ ահաբեկչությունը ազատագրական պայքարի բաղադրիչ մասերից էր, որի միջոցով հայ ժողովուրդը վրեժ էր լուծում իր երկու թշնամիներից՝ սուլթանական Թուրքիայից և ցարական Ռուսաստանից »[1]:

Դրոն Հայոց Ազատամարտի ականավոր գործիչներ Նիկոլ Դումանի, Գեւորգ Չաուշի, Սեբաստացի Մուրադի ու բազում այլ անվանի նվիրյալների պես անհարկի է համարել, գուցեեւ ժամանակ չի ունեցել գրի առնել ու սերունդներին փոխանցել իր կատարած գործերի առավել ուշագրավ ու ուսանելի մանրամասնությունները: Այս առումով, Անդրանիկն ու առվել եւս Գարեգին Նժդեհը՝ այն երջանիկ բացառություններից էին, որոնք սերունդների ժառանգությանը թողեցեցին, կարելի է ասել, անգնահատելի հուշարձան հուշագրություններն ու մտորումների գիրքը:

Այս առումով ուշագրավ է Դրոյին նվիրված Սիմոն Վրացյանի հետեւյալ բնութագիրը. «Սակաւ չեն մարդիկ, որոնք, համեստութեան քղամիտ հագած, իբր թէ կարեւորութիւն չեն տալիս արտաքին փառքին, բայց ձեռքի տակից, ո՛չ մի միջոց չեն խնայում իրենց անունը յաւերժացնելու համար՝ դիւրասահ գրիչներին ու երգիչներին իրենց փառքը հիւսել տալով, իրաւ կամ անիրաւ պատմութիւնների հատորներով, ամէն միջոցով, միայն թէ «անմահանան»: Մարդիկ էլ կան, որոնց գործն է միայն հետաքրքրում, գաղափարը եւ գործը:

Դրոն վերջիններից էր: Նա իր մասին չէր ուզում խօսել եւ եթէ խօսում էլ էր, հերոսական ոչինչ չէր վերագրում իրեն:

Պարտականութիւնը կատարողի համեստութիւնը ունէր միայն: Նա կարող էր հատորներ գրել իր մասին-իր մասին համարեա ոչ մի

[1] Գեւորգ Հայրյան, Վահագնի ծնունդը (Ասք Դրոյի մասին), Երեւան, 2006, էջ 6:

յուշ չթողեց: Յուշերի այն հատուածները, որ մնացել են նրանից (նկատի ունի իր խմբագրությամբ լույս տեսած «ՎԵՄ» ամսագրում տպագրված Դրոյի գրած հուշերը, որոնք վերաբերում են 1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումներին-Հ. Գ.), անձնական գրեթէ ոչինչ չեն պարունակում, այլ նուիրուած են իր գործակից ընկերներին: Անշուշտ, միայն հոգեկան ազնուութեամբ կարելի է բացատրել այն իրողութիւնը, որ Դրոյի կեանքն ու գործը դարուս մեծագոյն հայերից մէկի-մնացել է անծանօթ լայն հասարակութիւնից»[1]:

Այսօր, ճիշտ է, արդեն հրատարակվել են հայոց պատմության այդ շրջանն ու նշանավոր գործիչների կյանքն ու գործունեությունը պատկերող զգալի թվով ուսումնասիրություններ, անգամ մեծածավալ մենագրություններ, բայց հայրենական պատմագիտությունն անհրաժեշտորեն անպայման պետք է իր անկողմնակալ ու գիտական առավել հիմնավոր խոսքն ասի պատմական հիշյալ ժամանակահատվածի, մասնավորապես Հայաստանի Հանրապետության կերտման եւ այդ գործում հայ ազգային-քաղաքական կուսակցությունների ու առանձին գործիչների դերի, ծառայությունների ու ավանդի գնահատման վերաբերյալ:

19-րդարի վերջին եւ 20-րդ դարի սկզբներին հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարի ուսումնասիրությունը աներկբայորեն ցույց է տալիս, որ այդ տարիներին ամենադժվարին պայմաններում գործել են սեփական անձը անգամ զոհաբերելու պատրաստակամ, հայրենիքի ազատագրումը հավատամքի, կյանքի ու ապրելու գերխնդիր դարձրած բազում հայորդիներ, որոնք հանիրավի օտարվել էին Հայոց պատմության էջերից: Կարծում ենք, որ այսօր ավելի քան անհրաժեշտ է մեր ժողովրդին ըստ ամենայնի եւ պատշաճորեն վերադարձնել նրանից ժամանակավորապես, որոշակի հանգամանքների՝ մանավանդ գաղափարախոսական, պարտադրանքով օտարված զավակներին, առավել եւս հերոսներին եւ նվիրյալներին:

Որպես հիմք ընդունելով նաեւ այս անժխտելի ճշմարտությունը, ներկա աշխատությունում, որը նախկինում լույս տեսած «Դրո» աշխատության առավել ճշգրտված եւ ամբողջականացված վերահրատարակությունն է, արխիվային նորահայտ փաստաթղթերի, հուշագրությունների, վկայությունների ու մի շարք աշխատությունների ուսումնասիրությամբ փորձել ենք անաչառորեն ներկայացնել եւ արժեւորել հայ ժողովրդի ազատագրության պայքարին նվիրված

[1] Վրացեան Ս., Մրրկածին Դրոն, էջ 103:

հայորդիներից առավել նշանավորներից մեկի՝ Դրոյի (Դրաստամատ Կանայան) կյանքն ու գործունեությունը եւ դրանով իսկ հերքել խորհրդային պատմագիտության մեջ նրան վերագրված, բայց իրականում նրա անձի հետ որեւէ կապ ու առնչություն չունեցող, մտացածին հորինվածքներն ու տեսակետները:

Նրա կյանքին ու գործունեությանը նվիրված այս աշխատությունում Դրոն գլխավորապես ներկայացվում է որպես ռազմական գործիչ, եւ այդ պատճառով էլ առավելապես կանգ ենք առել նրա հրամանատարությամբ մղված կռիվների ու ճակատամարտերի նկարագրության եւ նշանակության գնահատման վրա:

Անժխտելի է, որ Դրոն նաեւ պետական եւ քաղաքական գործիչ է, մասնավորապես Հայաստանի Հանրապետության գոյատեւման վերջին շրջանում, երբ նա՝ որպես զինվորական նախարար, Սիմոն Վրացյանի գլխավորած ՀՀ կառավարության հանձնարարությամբ Համբարձում Տերտերյանի ընկերակցությամբ ղեկավարում էր Խորհրդային Ռուսաստանի պաշտոնական ներկայացուցիչ Լեգրանի հետ տարվող բանակցությունները եւ դեկտեմբերի 2-ին իշխանությունը բոլշեւիկներին հանձնելու պահից, որպես ժամանակավոր իշխանության ներկայացուցիչ եւ զորքերի գլխավոր հրամանատար, պետք է իր վերաբերմունքն արտահայտեր նույն օրերին Ալեքսանդրապոլում ընթացող հայ-թուրքական բանակցություններին: Անխախտելի ու ողջ հայության համար կարեւորագույն, բախտորոշ եւ չափազանց պատասխանատու պահ էր: Այդ ժամանակ մեծապես նաեւ Դրոյի ընդունած վճիռներից, վճռականությունից ու հաստատակամությունից էր կախված Հայաստանի եւ հայ ժողովրդի հետագա ճակատագիրը: Նույն օրերին նրա ընդունած ծայրահեղ եւ ոչ հավասարակշռված, ժամանակի ոգուց եւ հնարավորությունից չբխող վճիռները միանշանակորեն կարող էին ծանրագույն եւ անկանխատեսելի հետեւանքներ ունենալ ողջ հայ ժողովրդի գոյության ու ճակատագրի վրա:

Հաշվի առնելով պատմական տվյալ ժամանակահատվածում վերոհիշյալ հարցերի կարեւորությունն ու նրբությունները՝ կարծում ենք, որ Դրոյի կյանքի ու գործունեության այդ շրջանն արժանի է ավելի համակողմանի եւ հիմնավոր ուսումնասիրության, ինչն առավելապես կամբողջականացնի հայ ժողովրդի ըը պատմության մեջ նրա իրական դերը որպես պետական, քաղաքական գործչի:

Ներկա մենագրության մեջ ընդհանուր գծերով ու համառոտ ներկայացնելով տարագրության տարիներին նրա ծավալած գործունեությունը՝ ըստ ամենայնի չենք անդրադարձել այդ ժամանակաշրջանում նրա կատարած աշխատանքների լուսաբանմանը:

Դրոյի կյանքի ու գործունեության վերջին շրջանում առավել ուշագրավ է եւ նշանակալի երկրորդ աշխարհամարտի ժամանակաշրջանում նրա ծավալած գործունեությունը, երբ նա միմիայն իր հարազատ ժողովրդի շահերից ելնելով, հարկադրված համագործակցել է հիտլերյան Գերմանիայի հետ:

Այս հարցի առավել վիճահարույց լինելու եւ նրա վերաբերյալ եղած նյութերի սահմանափակության պատճառով ու ինչպես նաեւ նրա կերպարը առավելապես ամբողջացնելու համար 2000 թ. լույս ընծայած «Դրո» մենագրությունում ընդգրկել ու ընթերցողի ուշադրությանն էինք հանձնել ՀՅԴ Սիրիայի Կենտրոնական Կոմիտեի «Ցուսաբեր» պաշտոնաթերթում 1948 թ. մայիսին հրապարակված «Դրոն եւ իր գործը» հոդվածը: Քանի որ այսօր հրապարակի վրա արդեն կան զգալի թվով ուսումնասիրություններ՝ նվիրված 2-րդ աշխարհամարտի ժամանակ առանձին հայ գործիչների, մասնավորապես Այսուհանդերձ, կարծում ենք, որ հայրենական պատմագիտությունը իր գիտական խոսքը պետք է ասի նաեւ վերոհիշյալ հարցի, մասնավորապես հայ-գերմանական հարաբերություններում Հ.Յ.Դաշնակցության դերակատարության եւ վերոհիշյալ գործիչների, այդ թվում եւ Դրոյի գործունեության համակողմանի ուսումնասիրության անկողմնակալ արժեւորման վերաբերյալ:

Ներկա աշխատասիրությունում տեղ է գտել Ս. Վրացյանին հասցեագրած Դրոյի ուշագրավ նամակը (15 օգոստոսի 1939 թ. Պուքրեշ(Բուխարեստ), որը պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլ. Ղազախեցյանի եւ տողերիս հեղինակի առաջաբանով եւ ծանոթագրություններով լույս է տեսել «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսի 2006 թ. թիւ 1 համարում:

Հեղինակը իր երախտագիտությունն է հայտնում բոլոր նրանց, ովքեր անշահախնդրորեն իրենց նյութական եւ բարոյական աջակցությամբ օգնեցին «Դրո» գրքի վերահրատարակմանը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԴՐՈՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1905-1906 ԹԹ. ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1.1. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ: ԳՅՈՒՂԱԳԵՏ ԳԱԼԱՎԱՑԻ ԵՎ ԲԱՔՎԻ ՆԱՀԱՆԳԱԳԵՏ ԳԵՆԵՐԱԼ ՆԱԿԱՇԻՋԵԻ ԱՀԱԲԵԿՈՒՄՆԵՐԸ

1894թ. մայիսի 31-ի գիշերը Սուրմալու գավառի Իգդիր ավանում սարսափելի փոթորիկ էր ու երկրաշարժ: Բնությունն իր հզոր տարերքով կարծես կանխանշում էր այդ օրը լույս աշխարհ եկած Հայոց Ազատամարտի եւ անկախության մեծանուն նվիրյալի՝ զորավար Դրոյի (Դրաստամատ Կանայանի) կյանքի ու գործունեության մրրկածուփ ուղին:

Ջափազանց անհանգիստ ու ազատատենչ բնությամբ էր օժտված Դրոն՝ Իգդիրի դպրոցի ամենաբմբոստ եւ աշխույժ աշակերտներից մեկը: Դպրոցն ու ուսումը, չնայած մտավոր փայլուն ընդունակություններին, չէին գրավում նրան: Դրոյի տարերքը զենքն էր ու ձիավարժությունը:

Դպրոցի պարապմունքներից առավել նրա համար սիրելի ու նախապատվելի էր ազատ կյանքը, իսկ դասերին չհաճախելու, խուսափելու պատրվակով՝ նա հաճախակի լինում էր սարերում, արոտավայրերում՝ իրենց հովիվների մոտ:

Վերհիշելով նրա մանկությունը՝ հայ ականավոր գրող եւ ազգային գործիչ Ավետիս Ահարոնյանը (1917 թ. Հայոց Ազգային Խորհրդի Նախագահ) գրում է. «Ամրան տաք օրերին, Իգդիրի փոշոտ փողոցներով, տարիներ առաջ, ամէն երեկոյ առանց թամբի եւ խպառ մերկ եւ անսանձ ձիու վրայ՝ մի վեց-յոթ տարեկան ջլուտ ու նիհար մանուկ էր պլանում, նույնպէս մերկ՝ ինչպէս էր իր երիվարը:

Փոքրիկ Դրօն էր... Դրաստամատը, իսկական անունով:

Օրւայ այդ պահին, իր հոր՝ քաջածանօթ Մարտիրոս Կոկոյի ձին ջրելու եւ զովացնելու համար Իգդիրի մեծ առուն էր առաջնորդում, ինքն էլ լողանում կենդանու հետ, նրա թիկունքին ցատկելով, մերկ սրունքներով նրա կողերին պլլած եւ ձեռքերով բաշին կախած, սիրում էր արշաւել փողոցներով դէպի շուկայ, չորս կողմից բարձրացած ծիծաղին ու կատակին պատասխանում էր վրանբաց թշնամանքով ու շարունակում իր Անօրինակ արշաւը, որսկան բազէի պէս՝ ամեհի երիվարի թիկունքին թառած»[1]:

Հայրը՝ Սուրմալու գավառում իր հարստությամբ ու դիրքով հայտնի Մարտիրոս Կանայանը (Կակո), որդուն կանոնավոր կրթություն տալու եւ նոր կյանք մտցնելու նպատակով տանում է Երեւան եւ ընդունել տալիս տեղի ռուսական գիմնազիան: Նույն գիմնազիայում այդ տարիներին ուսանել են նաեւ Դրոյի հորեղբորորդիները՝ Համազասպ Հովհաննեսի Կանայանն ու Արդվարդ Մկրտչի Կանայանը:

19-րդ դարի վերջին Հայաստանի արեւմտյան հատվածի ազգային-ազատագրական պայքարի վերածննդի հետեւանքով քաղաքական զարթոնք էր ապրում նաեւ արեւելյան հատվածի հայությունը: Պատմական տվյալ ժամանակաշրջանի ազգային-ազատագրական շարժման դրոշակակիր Հ.Յ.Դաշնակցությունը հայ ժողովրդի ազատագրական պայքարը կազմակերպելու ու ղեկավարելու նպատակով արդեն բազմաթիվ մարտական կազմակերպություններ էր հիմնել Հայաստանի եւ նրա սահմանամերձ հայաբնակ շրջաններում: Երեւանում ստեղծված ՀՅԴ կենտրոնական կոմիտեն (Մրգաստանի) կոչված էր համախմբելու եւ առաջնորդելու Արարատյան աշխարհի բոլոր այն ուժերին, որոնք ընդունակ էին ու պատրաստակամ իրենց նվիրաբերել Հայ Դատի դժվարագույն պայքարին:

Զեյթունի, Տարոնի, Սասունի ու Վասպուրականի քաջակորով հայորդիների սխրանքների փառքն ու նրանց ձոնված երգերը տարածվելով թափանցել էին նաեւ հայոց դպրոցները, մարտական երգերը չունչ ու ոգի էին ներարկել դպրոցականներին, որոնց թվում՝ նաեւ Երեւանի ռուսական դպրոցի սաներին:

Դրոն հետագայում բազմիցս պիտի խոստովանի, որ իր ապագա գործունեությունը մեծապես պայմանավորվել է դեռեւս դպրոցական տարիներին քաջահամբավ հայդուկապետներ Նիկոլ Դումանի, Աղբյուր Սերոբի , Անդրանիկի եւ մյուս ֆիդայիների քաջագործությունների մասին լսած պատմություններով:

Դրոյի եւ գիմնազիայում ուսանող առավել խիզախ ու հայրենանվեր պատանիների՝ Սեդրակ Ջալալյանի (Սեթո), Տիգրան Դեւոյանի, Սմբատ Եղիազարյանի, Արտաշես Մելքոնյանի ու այլոց (շուրջ 10 հոգի) նախաձեռնությամբ ստեղծվում է Հայ Երիտասարդաց Միությունը, որը Միսաք Թորլաքյանի հավաստմամբ՝ Դրոյի եւ ուրիշների խմբապետու-

[1] «Ալիք», 1956, մայիսի 4, էջ 41:

թյամբ ու Նիկոլ Դումանի վերին հրամանատարությամբ, հետագայում դարձավ Հայ երիտասարդաց Դաշնակցության հանրահայտ «Փոթորիկ» կամ «Բորեաս» խումբը[1]:

«Բորեաս» խմբի կազմավորման գլխավոր նպատակն ու նվիրական երազանքը միակն էր. մեկնել Երկիր ու համալրել իրենց սիրած հերոսների՝ ֆիդայիների առաջնորդությամբ օսմանյան բռնապետության դեմ ազատագրական պայքարի դրոշը պարզած մարտիկների շարքերը:

Երեւանի գիմնազիայում տիրապետող ուժը ռուսամոլ բարքերն էին:

«Տնօրենն ու նրա կամակատար դաստիարակները, - վերհիշում է Դրոյի դասընկեր Տիգրան Դեւոյանը, - ստիպում էին, որ երեխաները փոխեն իրենց ազգանունների վերջավորությունը՝ «եան»-ի տեղ ռուսական «ով»-ով»[2]:

Տիգրան Դեւոյանի այս վկայությունը հաստատում է նաեւ Դրոյի հորեղբորորդի, հայագետ մանկավարժ Խաչատուր Կանայանը. «Երեւանի գիմնազիայի վարչությունը ուսումնական հիմնարկում ցուցանում էր իր մեծապետական շովինիզմի դեմքը: Օրինակ, պահանջում էր, որ հայերը իրենց ազգանունը վերջացնեն «ով»-ով եւ ոչ թե «յան»-ով: Այդ գիմնազիայում սովորել է նաեւ իմ վաղամեռիկ Արդվարդ եղբայրը: Առաջին թե երկրորդ դասարանում ռուսաց լեզվի դասատուն նրա տետրի վրա գրված Канаян-ը ջնջում է եւ պահանջում գրել Канаев...» (Խաչատուր Կանայանի անտիպ ձեռագիրը պահվում է հեղինակի տնային դիվանում - Հ.Գ.):

«Բորեաս» խմբի անդամները հնարավոր միջոցներով պայքարում են ոչ միայն ռուսացման քաղաքականության դեմ, այլեւ իրենց նպատակադրում են ահաբեկել ցարիզմի բոլոր այն ծառայամիտներին, ովքեր կփորձեին բռնադատել հայերի իրավունքներն ու ոտնահարել ազգային արժանապատվությունը[3]:

Խմբի ոգին եւ կենտրոնական դեմքը Դրոն էր:

Վերհիշելով գիմնազիայում ուսանելիս Դրոյի անցկացրած փոթորկահույզ օրերը՝ նույն գիմնազիայի սան Թադե Պետրոսյանը գրում է. «Դեռ այդ օրերին նրա մէջ կը խլրտար ազատութեան եւ ըմբոստութեան ոգին, զրկուածներուն եւ տառապածներուն օգնութեան հասնելու սիրտը: Դեռեւս ռուսական գիմնազիայի աշակերտ, ան իր շուրջն էր հաւաքել հասակակիցների մի խումբ եւ ուժգնօրէն կը դիմադրէր ռուս տեսչի հակահայ բոլոր հրահանգներին: Նրա

[1] Տե՛ս Թորլաքեան Մ., «Օրերուս հետ», Երեւան, 1982, էջ 556:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1956, թիւ 10, էջ 17:
[3] Տե՛ս Գեւորգեան Կ., Ամէնուն տարեգիրք, 1954, Ա. տարի, էջ 102:

կազմած «Բորեաս» խումբը հայկական ազատասէր ոգու հնոց էր, որ ապագային դարձաւ ինքնապաշտպանութեան արժէքաւոր մի ուժ»[1]:

Համաձայն վկայությունների՝ Դրոն գրեթե չի մասնակցել գիմնազիայում կազմակերպված միջոցառումներին, աշակերտական հավաքույթներին, նրան կարծես բնորոշ չեն եղել դպրոցական պատանու աշխարհն ու հետաքրքրասիրությունը:

«Մի անգամ,- շարունակում է Թադե Պետրոսյանը,- իմ հարցումին, թէ «Դրաստամա՛տ, ինչո՞ւ կը խուսափիս մեր ընկերական հաւաքույթներէ», նա առանց երկար մտածելու պատասխանեց.

-Ես խօսքի եւ ճառի սիրահար չեմ: Իմ հոգին կենդանի գործ է սիրում: Ուր որ գործ կայ, եւ ո՛չ թէ խօսք, ես սիրով կ՚երթամ այնտեղ»[2]:

19-րդ դարի վերջին Հայաստանի արեւմտյան հատվածի ազգային-ազատագրական պայքարի վերածննդի հետեւանքով քաղաքական զարթոնք էր ապրում նաեւ արեւելյան հատվածի հայությունը: Պատմական տվյալ ժամանակաշրջանի ազգային-ազատագրական շարժման դրոշակակիր Հ.Յ.Դաշնակցությունը հայ ժողովրդի ազատագրական պայքարը կազմակերպելու ու ղեկավարելու նպատակով կարողացել էր արդեն բազմաթիվ մարտական կազմակերպություններ էր հիմնել Հայաստանի եւ նրա սահմանամերձ հայաբնակ շրջաններում: Երեւանում ստեղծված ՀՅԴ Մրգաստանի կենտրոնական կոմիտեն կոչված էր համախմբելու եւ առաջնորդելու Արարատյան աշխարհի բոլոր այն հայորդիներինն, որոնք ընդունակ էին ու պատրաստակամ իրենց նվիրաբերել Հայ դատի երկարատեւ ու դժվարագույն պայքարին:

Զեյթունի, Տարոնի, Սասունի ու Վասպուրականի քաջակորով հայորդիների սխրանքների փառքն ու նրանց ձոնված երգերը տարածվելով թափանցել էին նաեւ հայոց դպրոցները, մարտական երգերը չունչ ու ոգի էին ներարկել դպրոցականներին:

«Բորեաս» խմբի անդամ Դրոն հետագայում բազմիցս պիտի խոստովանի, որ իր ապագա գործունեությունը մեծապես պայմանավորվել է դեռեւս դպրոցական տարիներին քաջահամբավ հայդուկապետեր Նիկոլ Դումանի, Աղբյուր Սերոբի, Գեւորգ Չավուշի, Անդրանիկի եւ մյուս ֆիդայիների քաջագործությունների մասին լսած լեգենդատիպ պատմություններով:

Երեւանի ՀՅԴ Մրգաստանի կենտրոնական կոմիտեի անդամ Գալուստ Ալոյանի տեսաղաչտից չեն վրիպում «Բորեասի» համարձակ

[1] «Հայրենիք» ամսագիր, 1956, թիւ 10, էջ 17:
[2] Նույն տեղում:

տղաները, որոնք իրենց վարքով ու գործելակերպով արդեն արժանի վստահություն էին ներշնչում:

«Բորեաս» խմբի անդամ Սեդրակ Զալալյանը (Ապարանի շրջանի Քասախ գյուղից - Հ.Գ.) վերհիշում է. «Երբ 17-18 տարեկան եղանք, արդէն ունէինք մօսին հրացաններ ու մաուզէր ատրճանակներ, որոնց գործածութիւնն ու նշանառութիւնը հասցուցած էինք կատարելութեան աստիճանին:

...1903-1904 թուականներուն, երբ մենք արդէն մեզ կը զգայինք հասուն, պատրաստի զինուորներ, ամբողջ Արարատեան Հայաստանը բռնկուած էր Երկրին օգնութեան հասնելու մոլեգին մղումով:

...Անչափահասներ ըլլալով, դեռ դաշնակցութեան կողմէ վաւերացուած մարտական խումբ չէինք: Անհատապէս կը դիմէինք դաշնակցութիւնը իր անձին մէջ մարմնաւորող, ամենահեղինակաւոր գործիչ Գալուստին՝ Խանասորի հերոսներէն, խնդրելով, որ մեզ միացնէ մեկնող հայդուկային խումբի մը: Բայց կը մերժուէինք այն պատճառաբանութեամբ, որ դեռ հասունանալու պէտք ունէինք»[1]:

Գալուստ Ալոյանի խոհեմ մերժումները չեն ընկճում Դրոյի եւ իր ընկերների բուռն ձգտումը՝ զինվորագրվելու հենց այն կուսակցությանը, որի դրոշով էին մարտնչում իրենց սիրած հերոսները:

Զանցած մի քանի ամիս «Գալուստը, - շարունակում է Ս. Զալալյանը,- ընդունեց մեր խումբը Հ.Յ.Դաշնակցութեան մարտական կազմակերպութեան մէջ «Բորեաս» խումբ անուան տակ»[2]:

«Բորեաս» խմբի անդամներին ապագայում Հայոց ազատամարտին զինվորագրելու նպատակադրությամբ ՀՅԴ Երևանի Մրգաստանի կենտրոնական կոմիտեն տրամադրում է մոսին հրացաններ ու մաուզեր ատրճանակներ և ոստիկանությունից թաքուն կազմակերպում զինավարժություններ: Շնորհիվ պարբերաբար կրկնվող զինավարժությունների ու մարզումների, նրանք զենքերի գործածությունն ու նշանառությունը հասցնում են կատարելության:

17-18 տարեկան հասակում անդամագրվելով Հ.Յ.Դաշնակցությանը՝ Դրոն ձգտում էր դեպի մարտադաշտ՝ համալրելու այն ռազմիկների շարքերը, որոնց առասպելական գործողությունների արձագանքները բորբոքել էին իր հոգու հայրենանվեր կրակները:

Դեռ գիմնազիայում ուսանելու տարիներին փափագում էր ընդունվել ռազմական դպրոց՝ հասկանալով, որ կանոնավոր կրթությունը կարող է իրեն օգնել դառնալու իսկական, պրոֆեսիոնալ ռազմական գործիչ:

1903 թվականն էր, ցարիզմը՝ հավատարիմ իր հայակործան քաղաքականությանը, հայոց դպրոցները, գրադարանները, թերթերն ու ամսագրերը փակելուց հետո հռչակեց հայ եկեղեցու կալվածքներն ու հարստությունները բռնագրավելու հունիսի 12-ի հանրահայտ հրովարտակ-օրենքը:

Մինչ այդ, ոչ հայոց դպրոցների պարբերաբար փակումը, ոչ ռուսական զորքերի կողմից հայ մարտական ջոկատների ջախջախումը եւ ոչ էլ ցարական աստիճանավորների կողմից հայ գյուղացիների շահագործումն ու հարստահարումը կարծես թե արեւելահայության շրջանում չէին սերմանել ռուսական պետականության դեմ ընդվզելու ձգտումներ: Սակայն եկեղեցական կալվածքների բռնագրավման մասին հրովարտակը միանգամից արթնացրեց «բարի ցարի» հավատով նիրհող հայությանը, որը հզոր կայսրության պատմության ողջ ընթացքում աննախադեպ ու զարմանահրաշ երեւույթ էր: Ցարիզմի նենգադավ քաղաքականության դեմ հանդգնել, ընդվզել էր մի բուռ ժողովուրդ:

Ահեղ գոտեմարտի դուրս եկած ազատամարտիկների առաջավոր շարքում էր մինչ այդ գլխավորապես արեւմտահայության ազատագրության դրոշով առաջնորդվող Հ.Յ.Դաշնակցությունն կուսակցությունը: Ի պաշտպանություն հարազատ եկեղեցու ունեցվածքի պաշտպանության՝ Դաշնակցության նախաձեռնությամբ ստեղծվում է ժողովրդական շարժումը կազմակերպող ու ղեկավարող «Հայկական ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտեն», որի գործունն մասնակցությամբ բողոքի ցույցեր, գործադուլներ կազմակերպվեցին Երեւանում, Թիֆլիսում, Կարսում, Բաքվում եւ այլ քաղաքներում ու բնակավայրերում: Հայ վրիժառուների գնդակների զոհ գնացին իրենց հակահայ գործունեությամբ ու կեցվածքով առավելապես աչքի ընկած մի շարք ցարական աստիճանավորներ եւ ցարական գաղտնի ծառայություններին սպասարկող բազմաթիվ ազգադավ հայ կամակատարներ:

Նույն տարվա ամռանը հազարավոր հայերի բազմությունը՝ շարժվելով Էջմիածին, Ամենայն Հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկից պահանջում է, որ պատռի ցարի հրամանագիրը:

Հայաստանի տարբեր շրջաններից հավաքված բազմության մուտքը Էջմիածին խոչընդոտելու դիտավորությամբ ցարական ոստիկանությունը փորձում է ցրել ցուցարարներին: Երեւանի ռուսա-

[1] Նույն տեղում:
[2] Տե՛ս ՀՅԴ ԿԱ (Հայ Յեղափոխական Դաշնակցության Կենտրոնական Արխիվ, ԱՄՆ, Բոստոն), թղ.(թղթածրար) 451, գ. 78, էջ 3:

կան գիմնազիայի աշակերտների «Բորեաս» խումբը, որի կազմում էր նաեւ Դրոն, ի պաշտպանություն ցուցարարների, քարերի կարկուտ է տեղում ոստիկանների վրա եւ ջախջախում ոստիկանապետ Բալուեւի գլուխը:

Այդ ընդհարման ժամանակ պատանի Դրոն ստանում է իր առաջին մարտական մկրտությունը: Իսկ մի քանի շաբաթ անց, նրա անվրեպ հարվածի զոհն է դառնում Սուրմալուի գավառապետ Բոգուսլավսկու կարգադրությունները հավատարմորեն կատարող Թեջերապատ գյուղի գյուղապետ(գալավա) Մարտիրոսը, որը ոստիկանության հանձնարարությամբ մշտապես հետեւում էր հեղափոխական գործիչներին ու նրանց գործերի ու գտնվելու վայրի մասին հայտնում «տերերին»:

Տարիներ անց այդ դեպքի մասին Դրոն Ս. Վրացյանին պատմել է հետեւյալը. «Մի երեկոյ, 1953 թ. հոկտեմբերի 15-ին, երբ, ըստ սովորության, միասին նստած տանը վերյիշումներ էինք անում անցեալից, Դրոն դարձաւ ինձ, թէ, -

-Գիտե՞ս ինչ, այսօր իմ զէնք բանեցնելու յիսնամեակն է:

Եւ իմ պնդումի վրայ պատմեց: Վերջը ես պատմածը գրի առի.

- «1903 թուի ամառուանից մեծ թափ առաւ զէնքի փոխադրութիւնը դէպի Տաճկահայաստան: Գաւառապետ գազան Բոգուսլաւսկին խիստ հետապնդում էր հայ յեղափոխականներին: Թեջէրապատ գիւղին դաւաճան գալաւա (գիւղապետ) Մարտիրոսը օգնում էր ոստիկանութեան: Որոշուեց խփել եւ գործը յանձնուեց ինձ, մեր շրջանի յանդուգն ու նուիրուած Դաշնակցական Գէորդանի (Դրոյի հորեղբորորդին է- Հ. Գ.) եւ ուրիշ մի ընկերոջ հետ միասին:

«Մեր տանը ապրում էր Սաշա Զաքոլոտկո անունով մի սպայ, որի մօտ յաճախ հաւաքւում էին իր սպայ ընկերները եւ ուրախ ժամանակ էին անցնում: Այդ երեկոյ էլ, հոկտեմբերի 15-ին հիւրեր եկան: Սաշան խնդրեց ինձ, ձի նստեմ եւ երթամ շուկայից ուտելիք բերեմ: Գնացի: Նոր էի վերադարձել ուտելիքով, լուր բերին, թէ գալաւան երկու հոգու հետ միասին բաղնիք է գնում: Շտապով դուրս թռայ եւ մէկ հարուածով գետին փռեցի՝ պոռալով «Սատկիր, դաւաճան շուն»: Վրայ հասաւ եւ Գէորդանը. նա էլ դաշոյնի երկու հարուած տուեց սրիկային: Դրանից յետոյ, ես անմիջապէս եկայ տուն: Սպաները թուղթ էին խաղում, նստեցի նրանց մօտ եւ սկսեցի դիտել խաղը:

«Դրանից յետոյ դէպքին ականատեսներ լուր էին տուել ոստիկանութեան: Մէկ էլ ոստիկանութիւնը շրջապատեց մեր տունը, թէ «աւազակ Դրոն մարդ է սպանել, ո՞ւր է»: Սպայ Սաշան պատասխանեց, թէ Դրօն ամբողջ ժամանակ ինձ հետ էր եւ հետեւաբար, չէր կարող մարդ սպանել...»[1]:

Գյուղապետի ահաբեկումը նա իրականացնում է այնպիսի արագությամբ ու հմտությամբ, որ նրանց տանը հավաքված սպաներից եւ ոչ մեկի մտքով իսկ չի անցնում կասկածել նրա մեղսագործության վրա: Օրեր շարունակ ընթացող հարցաքննությունների ժամանակ Դրոյի «անմեղությանը» անվերապահորեն հավատացող սպաները միահամուռ կերպով պաշտպանում են նրան գազազած գավառապետի հարձակումներից:

«...Հա, - շարունակում է Դրոն, - այս էլ աւելացնեմ, 1916-ի վերջերը, ես Թիֆլիսում հանդիպեցի Սաշային: Այժմ գնդապետ էր, վիրաւորուած եկել էր ռազմաճակատից բժշկւելու:

- Ցիշո՞ւմ ես, - հարցրեց նա, - անպիտան Բոգուսլաւսկին ուզում էր գալաւայի սպանութիւնը քո վրայ ձգել:

- Գիտե՞ս ինչ, Սաշա, - պատասխանեցի ես, - Բոգուսլաւսկին իրաւունք ունէր, իսկապէս որ գալաւային ես էի սպանել: Գնդապետ Սաշա Զաքոլոտսկոն շշմած նայում է Դրոյի երեսին...»[2]:

Թեջերապատի գյուղապետի սպանությունը առաջին ահաբեկչական գործն էր Դրոյի մարտական կյանքում:

Վերոհիշյալ մարտական գործողություններից հետո, դպրոցական միջավայրը այլեւս չէր կարող բավարարել ռազմի փոթորկահույզ կյանքին ձգտող Դրոյին: Ռազմական կրթություն ձեռք բերելու վճռականությամբ նա որոշում է թողնել գիմնազիան եւ ընդունվել ռազմական դպրոց: Բայց ընդունված օրենքների համաձայն, ռազմական հաստատություններ կարող էին ընդունվել միայն դպրոցում բարձր գնահատականներ ունեցող եւ կարգապահությամբ աչքի ընկած սովորողները: Իսկ գիմնազիայում Դրոյի եւ գնահատականները, եւ կարգապահությունը անբավարար էին: Բայց նա արդեն վճռել էր եւ այլեւս ոչինչ չէր կարող նրան խոչընդոտել իրականացնելու իր վաղեմի երազանքը:

«Անհամարձակ, - գրում է Ս. Վրացյանը, - գնում է տեսչի մօտ, թէ՝ - Պարոն տեսուչ, ուզում եմ գնալ զինուորական դպրոց, բայց... նիշերս... կարելի՞ է մի բան անել...

- Սիրելիս, - ուրախանում է տեսուչը, - քո բոլոր երեքները հինգ կը դարձնեմ, վարքիդ զերօն եւս հինգ ու խաչ կանեմ, միայն թէ գնաս... Կը մաղթեմ քեզ յաջողութիւն, որ զօրավար դառնաս ...»[3]:

---

[1] «Դրօ», 1956, Պէյրութ, էջ 6-7:
[2] Նույն տեղում:
[3] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Դ, 1965, էջ 126:

Գիմնազիայի ամենաբմբոստ ու անհանգիստ աշակերտը՝ Դրոն, գերազանցիկությունյան վկայականը գրպանում մեկնում է Պյատիգորսկ եւ ընդունվում Ախուլգինսկի գնդի ռազմական ուսումնարանը, որը միաժամանակ համարվում էր պարտադիր զինվորական ծառայություն:

Սակայն հարազատ ժողովրդի դաժան փորձություններով լեցուն կյանքը թույլ չի տալիս նրան ավարտելու զինվորական ուսումնարանը:

1905 թ. փետրվարին Անդրկովկասում բռնկվում են հայ-թուրքական(թաթար) ազգամիջյան ընդհարումները եւ Դրոն հայտնվում է հայության ինքնապաշտպանությանը զինվորագրված մարտիկների շարքերում:

20-րդ դարի սկզբներին ցարական լծի տակ հեծող ազգերից կովկասահայությունն էր, որն իր ազգային իրավունքներն ու արժանապատվությունը, եկեղեցին ու դպրոցները պաշտպանելու վճռականությամբ ընդվզեց ընդդեմ հզոր կայսրության: Մի՞թե «Եվրոպայի ժանդարմ» անունը վաստակած ցարիզմը կարող էր հանդուրժել նման հանդգնություն փոքր ազգի կողմից:

Մինչ վերոհիշյալ որոշումների (հայոց դպրոցների փակում, մի փոքր անց հայ բարեգործական ընկերությունների հիմնած դպրոցների, գրադարանների, ընթերցողների, հրատարակչական ընկերությունների, թերթերի ու պարբերականների արգելման եւ վերջապես 1903 թ. հայոց վանքապատկան հողերի ու գույքի՝ հօգուտ պետության բռնագրավման մասին հանրահայտ օրենքը) հռչակումը հայ ժողովուրդը կայսրության մյուս ազգություններին հավասար եւ գուցե առավել հավատարմորեն ծառայում էր ռուսական պետության շահերին: Բազմաթիվ հայազգի գործիչներ փառաբանվեցին՝ տարբեր ժամանակահատվածներում ցարական վարչական մարմիններում եւ բանակում ծառայելիս: Նշանակալի էր նաեւ հայազգի արվեստագետների ու մշակույթի գործիչների ներդրումը ռուսական մշակույթի զարգացման գործում:

Հայ ազգային-ազատագրական պայքարի վերածննդի առաջին իսկ օրերից, երբ թուրքական բռնակալության ջարդարար սուրը սպառնում էր ողջ Արեւմտահայաստանը վերածել արյան հովիտների, ռուսական, թուրքական կայսրություններում, արտասահմանյան մի շարք երկրներում բնակվող հայության շրջաններում ծայր առած շարժումներն ուղղված էին միմիայն թուրքերի եւ քրդերի կողմից հարստահարվող արյունակիցների արդար դատի ու ոտնահարված

իրավունքների պաշտպանությանը: Եվ այդ պայքարը ուղղված էր միմիայն թուրքերի դեմ:

Ազգային-ազատագրական շարժումների հիմքի վրա կյանքի կոչված հայ ազգային կուսակցությունների (Արմենական, Հնչակյան, Հ.Յ.Դաշնակցություն) ծրագրերի, գործողությունների, համաժողովների ու ղեկավար մարմինների որոշումների մեջ դժվար է գտնել որեւէ փաստաթուղթ, արարք, որոնք ունենային հակառուսական, հակացարական ուղղվածություն ու բովանդակություն:

Առաջնորդվելով «Հայաստանն առանց հայերի» քաղաքականությամբ, ցարիզմը՝ սկսած 19-րդ դարի երկրորդ կեսից հայության նկատմամբ հետեւողականորեն, բայց նուրբ վարպետությամբ կիրառելով հայաջինջ քաղաքականություն, միաժամանակ աշխատում էր հայ հեղափոխական կուսակցությունների եւ ողջ ժողովրդի ուշադրությունը գլխավորապես բեւեռել Հայաստանի արեւմտյան հատվածի վրա՝ ստեղծելով այն կեղծ պատրանքը, թե իբր հայությունը ճնշվում եւ հոշոտվում է միայն օսմանյան Թուրքիայի կայսրությունում: Այդ խաբկանքը հաջողությամբ իրականացվեց մինչեւ հայ եկեղեցու ունեցվածքը հօգուտ ցարական կառավարության բռնագրավելու՝ 1903 թ. հունիսի 12-ի հանրահռչակ օրենքի ընդունումը եւ 1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումները: Բայց իրականում ցարական կառավարությունը հիվանդագին կերպով արձագանքելով արեւմտահայության ազատագրական պայքարին եւ մեծապես նպաստելով համիդյան արյունոտ քաղաքականության կենսագործմանը՝ ամեն կերպ խոչընդոտում էր իրենց արյունակիցներին ջարդերից պաշտպանելու ոգով համակված հայ մարտական ու զինատար խմբերի, հեղափոխական գործիչների մուտքը Երկիր: Հայաստանի արեւմտյան հատվածի ազատագրումը ցարիզմը դիտում էր որպես արեւելահայության ազատագրության ձգտումների ամենահզոր ազդակներից մեկը եւ այդ պատճառով միջոցների մեջ խտրականություն չդնելով՝ գործադրում էր բոլոր միջոցները՝ խեղդելու ազգային-ազատագրական շարժումները Հայոց աշխարհի ե՛ւ արեւմտյան, ե՛ւ արեւելյան հատվածներում:

Վիթխարածավալ կայսրությունում բռնկված հեղափոխական շարժումները խեղդելու համար իշխանություններն օգտագործեցին իրենց հզոր ռազմական ու ոստիկանական ուժերը, իսկ Անդրկովկասում հայակործան ծրագրի իրագործման համար ցարիզմն ուներ հիանալի միջոց. դա խավարամիտ, պանթուրքիզմի շնչով թունավորված կովկասյան թուրքերն (ազեր) էին:

Կովկասյան թուրքերի (թաթարներ) վերնախավին հրաշալի հնարավորություն ընձեռվեց իր արյունակից թուրքերի քաղաքականությունը կյանքի կոչել նաեւ Անդրկովկասում: Եվ արեւելահայությանը կոտորելու խորհրդավոր, լուռ համաձայնությամբ կարծես ներդաշնակվեցին ցարական քաղաքականությունն ու պանթուրքիզմը, յուրաքանչյուրն առաջնորդվելով իր ազգային, պետական, քաղաքական շահերով ու հայ ժողովրդի նկատմամբ ծրագրած նպատակներով: Ի՞նչ է անունը այդ «ներդաշնակ» ծրագրի,- իրավացիորեն նշել է Հ.Յ.Դաշնակցության պաշտոնաթերթ «Դրոշակ»-ը,-մշակուած երկու մայրաքաղաքներում, թէեւ միմեանցից շատ հեռու եւ ըստ երեւոյթին շատ տարբեր, բայց «հոգով եւ սրտով» այնքան նման, այնքան համերաշխ: Հայաստան՝ առանց հայերի, ահա այդ անունը, արդէն ընտանի հայութեան ականջին, երբեմն ահաւոր ու սոսկալի, բայց այժմ արժանի հեգնութեան եւ նոյնիսկ արհամարհանքի»[1]:

Գոտեպնդված ցարական իշխանությունների հովանավորությունից՝ հայոց գյուղերը, քաղաքները ավերակույտերի վերածելու ու հայի «հեքիաթային հարստություններին» տիրելու տենդով, ինչպես նաեւ հայության անպատրաստ վիճակից, թուրք զինված ու վաղօրոք նախապատրաստված ամբոխը փաբրվարի 6-ին Բաքվում դիմում է ամենավայրագ միջոցների, ամենուրեք կատարում է սպանություններ, թալան եւ հայերին պատկանող բնակարանների ու ձեռնարկությունների հրկիզումներ:

Ցարական իշխանությունների կողմից առաջինը Բաքվում հայկական կոտորածներ ու ազգամիջյան զինված բախումներ սանձազերծելը բնավ պատահական չէր:

Ս. Վրացյանի գնահատմամբ՝ «Տնտեսական ու մշակութային մեծ կշիռ էր ներկայացնում Բագուի հայութիւնը Կովկասում ընդհանրապէս եւ ազգային կյանքում ի մասնաւորի: Եւ զարմանալի չէ, ուրեմն, որ ռուս բռնապետութիւնը կոտորելու համար հայերի դիմադրական ուժը, հարուածը հայերի գլխին Բագուից իջեցրեց, իբրեւ գործիք ծառայացնելով խաւարակուռ մահմեդականութիւնը»[2]:

Հաշված օրեր անց հայերի կոտորածները եւ ջարդերի ալիքը Բաքվից տարածվում ողջ Անդրկովկաս:

[1] «Դրոշակ», 1905, էջ 73:
[2] Վրացեան Ս., Մորկածին Դրոն, էջ 24-25:

«Այլեւս,- նշում է «Լումա» հանդեսը, - կասկածելի չէ, որ թուրքերի ներկայ շարժումը Անդրկովկասում համախլամութեան առաջին ծաղիկն է: Բոլոր ոչ մահմեդական ականատեսները միաբերան վկայում են, որ թուրք խուժանը Նախիջեւանում եւ գիւղերում յարձակումների ժամանակ ունեցել է կրօնական դրօշակ եւ Ալիի ձեռքը: Շատերը յարձակուողներից հագած են եղել սպիտակ շապիկ կարմիր թեւերով եւ գլուխներին ունեցել են տաճկական կարմիր ֆէսեր: Կարմիր ֆէսը համախլամական գաղափարի էմբլեմներից մէկն է»[1] :

Ահեղ արհավիրքներին դիմագրավելու հայության միակ զենքը համընդհանուր ինքնապաշտպանությունն էր:

Ընդհարումների առաջին օրերին օգտվելով հայերի անպատրաստ ու աննպաստ վիճակից եւ իշխանությունների օժանդակությունից, թուրք ջարդարարներն անգթորեն ու անպատիժ արյան ու ավերումների տեսարանների են վերածում բազմաթիվ հայկական բնակավայրեր: Սակայն դա ծավալվող գործողությունների սկիզբն էր միայն: Պատմական տվյալ ժամանակահատվածում հայ ազգային կուսակցությունները եւ մասնավորապես Հ.Յ.Դաշնակցությունը մինչ Կովկասում ծնունդ առած ազգամիջյան բախումները, գլխավոր ուշադրությունը կենտրոնացնելով արեւմտահայության ազատագրության պայքարի խնդիրների վրա եւ ընդհարումների առաջին օրերին հայտնվելով աննպաստ իրավիճակում ու անակնկալի գալով՝ չեն կարողանում ինչպես հարկն է արժանի հակահարված տալ թուրք ամբոխի վայրագություններին: Սակայն հաշված օրերի ընթացքում արագորեն կողմնորոշվելով ծավալվող դեպքերի քառսում՝ Հ.Յ.Դաշնակցությունը, դրսեւորելով մեծագույն կազմակերպվածություն եւ մարտունակություն, կարողանում է շատ լավ կազմակերպել հայոց ինքնապաշտպանությունը: Անխորտակ ինքնապաշտպանություն կազմակերպելու նպատակով ՀՅԴ-ը վտանգված շրջաններն է ուղարկում նախորդ տարիներին անբասիր վարքով ու հերոսականությամբ աչքի ընկած բազմաթիվ գործիչների եւ առաջին հերթին բազում կռիվների մասնակցած ու մեծ փորձառություն ունեցող ֆիդայիների, որոնց առաջնորդությամբ հայաբնակ բոլոր վտանգված շրջաններում ստեղծվում են ինքնապաշտպանական մարտական խմբեր:

Թուրքերը փետրվարի 6-ին արյունալի սպանդանոցի են վերածում Բաքվի հայկական թաղամասերը:

[1] «Լումա», 1905, թիւ 1, էջ 152:

Ընդհարումների հենց առաջին օրը Դրոն լքում է ռազմական դպրոցը եւ մի քանի զինորների ընկերակցությամբ (ուսումնառության ժամանակաշրջանը միաժամանակ համարվում էր պարտադիր զինվորական ծառայություն) ու գալիս Բաքու:

Հայ-թուրքական ընդհարումների լուսաբանմանը նվիրված հոդվածաշարում ՀՅԴ Ոսկանապատի կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Աբրահամ Գյուլխանդանյանը իր հեղինակած «Բագուի անձնուէր մարտիկները» խորագիրը կրող հոդվածում ներկայացնելով Բաքվի ինքնապաշտպանական մարտերի հիմնական մասնակիցներին, պատմում է Բաքվում Դրոյի հայտնվելու մանրամասները:

Ըստ Աբրահամ Գյուլխանդանյանի վկայության՝ Դրոն, «Այդ շրջանի ամենապատասխանատու գործ կատարողներից մէկն եղաւ...» ու մի քանի զինվորներ փախչում են Վլադիկավկազի զորանոցից եւ տեղացի հայերի աջակցությամբ փոխում են իրենց զինվորական համազգեստը ու մեծ դժվարությամբ հասնում Բաքու:

Դրոյի ու զորանոցից փախած զինվորների մասին Աբ. Գյուլխանդանյանին հայտնում է է Բաքվի ՀՅԴ գործիչներից Գրիգոր Վեհապետյանը, որի ներկայացմամբ՝ «Վլադիկավկազի զօրանոցից փախել են մի քանի հայ զինվորներ, որոնք ցանկանում են կուսակցական աշխատանքի լծուել: Լաւ եւ քաջ տղաներ են երեւում: Պէտք է անպատճառ վերցնել... »[1]:

Աբ. Գյուլխանդանյանը բացասական պատասխան է տալիս Գրիգոր Վեհապետյանին, քանի որ համաձայն ՀՅ Դաշնակցության դավանած տեսակետի՝ բանակ զորակոչված բոլոր հայերը անկախ կուսակցական պատկանելությունից, պիտի բարեխղճ կերպով ու կարգապահությամբ կատարեին իրենց զինվորական պարտականությունը:Իսկ ով խուսափում էր ծառայությունից ու չէր վարժվում զինվորական կարգապահությանը, ապա «...չէր կարող նաեւ լաւ մարտիկ լինել յեղափոխական գործերի համար: Հետեւապէս ոչ մի կերպ պէտք չէր քաջալերել զինուորական ծառայութիւնից խուսափողներին եւ կուսակցական շարքերը լցնել այդպիսի տարրերով»[2]:

Աբ. Գյուլխանդանյանի մերժողական պատասխանը չէր կարող հուսալքել ու իր վճռից հետ պահել Դրոյին: ՀՅԴ կենտր. կոմիտեի ներկայացուցիչից մերժում ստանալուց հետո նա փողոցում հանդիպում է Աբ. Գյուլխանդանյանին եւ դարձյալ խնդրում, որն իրեն ու զորանոցից փախած զինվորներին վերցնեն դաշնակցական մարտիկների մեջ: Այս անգամ պատասխանը դարձյալ նույնն էր՝ «... Դաշնակցութիւնը այդպիսիների համար տեղ չունի: Բայց երբ երիտասարդը վճռականապէս յայտարարեց, թէ մահ կայ, բայց վերադարձ չկայ այլեւս դէպի զօրանոց, ինձ մնում էր լուրջ կերպով խորհել այդ մասին: Եւ միւս օրը որոշ հարցափորձից յետոյ, նպատակահարմար համարեցի այդ երտասարդին պահել մարտական խմբակի մէջ: Երիտասարդը Դրօն էր»[1]:

Մահմեդական ամբոխի սանձազերծած ընդհարումների երկրորդ օրը ընդամենը յոթ մարտիկներով Բաքու է հասնում Նիկոլ Դումանը:

Պատմում է Բաքվի ընդհարումների մասնակից Թադէ Պետրոսյանը. «Հասանք Մելիքեանի լուսանկարչատունը, ուր Նիկոլ Դումանը նշանակած էր իր շտաբի վայրը: Ներսը, Դումանը, Ա.Գիւլխանդեանը, Հայր Աբրահամը եւ Դաշնակցական Խէչօն, մի սեղանի շուրջ նստած, ինքնապաշտպանութեան ծրագիրն էին մշակում: Իսկ մուտքին մօտ, ոտքի կեցած, անհամբեր սպասում էր անվեհեր երիտասարդներու մի խումբ: Այստեղ էին Մարտիրոս Զարուխչեանը, Մկրտիչ Աղամալեանը, Հմայակ Զամփոլադեանը, Առիւծ Աւագը, Թադ. Ամիրեանը: Հազիւ էին իրարու բարեւ ասել, երբ ներս մտաւ Դրաստամատ Կանաեանը՝ զինվորական համազգեստով:

«...Հազիւ մի քանի խօսք էինք փոխանակել Դ. Կանաեանի հետ, երբ Դումանը մոտեցաւ մեզ եւ լուրջ ու կտրուկ կերպով ասաց.

-Տղերք ջան, դրութիւնը ահաւոր է եւ ճակատագրական: Անհաւասար պիտի լինի բախումը, բայց ոչ յուսահատական: Ամէն կերպ պէտք է յետ մղել գազազած թշնամուն եւ փրկել հայութիւնը...

Եվ ստանալով պէտք եղած հրահանգները մեր անելիքների մասին, ելանք քաղաք:Դումանը ամէն մէկիս տուեց մէկական մօսին հրացան կամ մաուզէր»[2]:

Մեծ վարպետությամբ կազմակերպելով տեղի հայության ինքնապաշտպանությունը՝ Նիկոլ Դումանի գլխավորած հայկական մարտախմբերը արժանի ջարդ են տալիս ցարական աստիճանավորների եւ անձամբ գեներալ-նահանգապետ իշխան Նակաշիձեի առաջնորդությամբ հայկական թաղերն ասպատակող թուրք ամբոխին: Մի խումբ քաջազուն հայորդիների, կայծակնային հարվածներից շանթահար՝ Բաքվի թուրք առաջնորդները պարզում են սպիտակ դրոշն ու իշխանության ներկայացուցիչների միջնորդությամբ հաշտության են կոչում մինչ այդ իրենց կողմից «վախկոտ» համարվող հայերին:

[1] «Հայրենիք» ամսագիր, 1953, թիւ 12, էջ 134:
[2] Նույն տեղում:

[1] Նույն տեղում:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1956, թիւ 10, էջ 18:

Այո՛, անվարան կարելի է պնդել, որ Թուրքերի՝ հաշտության դիմելու միակ ծանրակշիռ պատճառը Դումանի գլխավորած քաջակորով հայորդիների հերոսական հարվածներն էին:

«Մոլլաները,- նշում է Վ. Մինախորյանը,- եկան հայկական եկեղեցի եւ քահանաների հետ համբուրեցին: Քահանաներն էլ գնացին մեճեյտ ու մոլլաների հետ համբուրեցին: Հայ եւ Թուրք ամբոխը իրար խառնուեց. զարմացան տեղի ունեցած դէպքերի առթիւ. միաբերան դատապարտեցին «Շեյթանը», որ պատճառ էր դարձել երկու դարաւոր հարեւանների գժտութեան...»[1]:

Այդ դեպքերի մասնակից Հ. Ստեփանյանը, նույնպես ըստ արժանվույն գնահատելով Բաքվում խաղաղություն հաստատելու գործում Դումանի եւ նրա գլխավորած մարտիկների անգնահատելի ծառայությունները՝ գրում է. «Ընդհարումների երրորդ օրը, Նիկոլ Դումանի քաջարի արծիւները՝ Դրոն, Խէչօն, Մարտիրոսը եւ նմանները, ո՛չ թէ միայն կարողացան յետ մղել թաթարական ստուար խմբերը, այլեւ՝ խորանալ դէպի թրքական թաղերը եւ թշնամուն զգալի կորուստներ պատճառել: Ուստի եւ կուռող կողմերի հոգեւոր պետերը յարմար գտան միջամտելու: Եւ այսպէս, «խաղաղութիւնը» վերականգնուեց: Ինչ ասել կուզէ, որ սպիտակ դրօշակ պարզեց Թուրք խուժանն այն ժամանակ միայն, երբ զգալի հակահարուած ստացաւ՝ շնորհիւ Նիկոլ Դումանի կազմակերպած խմբերի: Թուրքերը պարզ տեսան, որ կոտորուող հայերն արդէն բաւականաչափ Թուրքեր են կոտորում...»[2]:

Մեկ շաբաթ տեւողությամբ ընթացող կռիվներից հետո հաղթական հայ մարտիկները հավաքվում են Բաքվի հայության ինքնապաշտպանության ռազմական շտաբում՝ Մելիքյանի լուսանկարչատանը եւ անհամբերությամբ սպասում հրամանատարին: Գալիս է Նիկոլ Դումանը:

«Մտաւ Դումանը՝ Խէչօյի հետ,- վերհիշում է Թադեւ Պետրոսյանը, - բոլորս ոտքի ելանք եւ սրտատրոփ սպասում էինք Դումանի խօսքին: Այդ պաղ, համարեա անժպիտ մարդը ուրախ դէմքով եւ կրակոտ աչքերով նայեց բոլորիս եւ ասաց. «Ապրիք, տղերք ջան. Դաշնակցական վրիժառու հայդուկին վայել գործ կատարեցիք: Իմացած եղէք, որ մեծ դաւը սրանով չվերջացաւ: Եղէք միշտ եւ ամենուր պատրաստ՝ աւելի մեծ պայքարներու համար...

Եւ Դումանը մօտեցաւ ամէն մէկիս եւ համբուրեց մեր ճակատները: Երբ մօտեցաւ Դրօյին, գրկեց նրան եւ ասաց.

[1] ՀԱԱ, ֆ. 4047, ց. 4, գ. 2, էջ 2-3:
[2] Ստեփանեան Հ., Նիկոլ Դուման, «Կայծեր» մատենաշար, Պէյրութ, թիւ 5, էջ 88:

- Այս արիւնոտ պայքարի մէջ մի նոր գիւտ արի: Այդ գիւտը Դրաստամատն է: Սա մեծ ապագա պիտի ունենայ, եթէ արժանաւայել միջաւայրի մէջ մնայ: Ապրիս, տղաս, քեզ վրայ մեծ յոյս ունեմ:

Դրօն անհուն ուրախութիւնից լացաւ: Մեծ ռազմիկի գովքը ամենամեծ վարձատրութիւնն էր Դրօյի համար:

- Պարոն Դուման, պիտի աշխատեմ քո յոյսդ արդարացնել,- եղաւ Դրօյի պատասխանը»[1]:

Ճիշտ է, շնորհիվ հայ մարտիկների հերոսության Բաքվում չիկացած իրավիճակը խաղաղվել էր, բայց դեռ մնում էր չիրագործված եւս մի կարեւորագույն խնդիր: Ընդհարումների առաջին օրը ՀՅԴ Բաքվի կենտրոնական կոմիտեն մահվան էր դատապարտել հայերի ջարդերի կազմակերպիչ գեներալ Նակաշիձեին եւ այդ մասին ի լուր ամենքի արդեն հայտարարվել էր: Իսկ նման պարագաներում դաշնակցությունը երբեք չէր դրժել իր դատավճիռը:

Հարկ է ընդգծել, որ գեներալ-նահանգապետի ահաբեկման որոշումը կայացրել էր ոչ միայն Հ.Յ.Դաշնակցությունը, այլեւ ռուս Սոցիալ-հեղափոխական կուսակցությունը: Ընդառաջելով ռուս Սոցիալ-հեղափոխական կուսակցության դիմումին՝ Հ.Յ.Դաշնակցությունը գեներալ Նակաշիձեի ահաբեկումը իրականացնելու առաջնությունը զիջում է ռուս հեղափոխականներին, որոնք թեպետ երկարատեւ նախապատրաստությունից հետո, կազմակերպում են նահանգապետի ահաբեկումը, սակայն այն անցնում է անհաջող: Այժմ խոսքն արդեն Հ.Յ.Դաշնակցությանն էր[2]:

Ո՞վ պետք է իրագործեր նահանգապետի ահաբեկումը: ՀՅԴ Բաքվի կենտրոնական կոմիտեին (Ոսկանպատի) թեպետ հայտնի էր Դրոյի կողմից թեղերապատ գյուղին գյուղապետ Գալավայի ահաբեկելու իրողությունը, սակայն իրավամբ գտնում էր, որ Բաքվի նահանգապետ գեներալ Նակաշիձեի ահաբեկում անհամեմատ ավելի դժվարին ու բարդ գործ է, առաջարկում է այդ գործողությունը հանձնարարել առավել փորձառու եւ մարտական հարուստ կենսագրություն ունեցող ռազմիկի: Սակայն Նիկոլ Դումանի վճիռը հաստատակամ էր ու անառարկելի: Ընդառաջելով գեներալ Նակաշիձեին ահաբեկելու Դրոյի բուռն ցանկությանը՝ նա ասում է. «Շա՛տ լավ, Տէրը քեզ հետ, գնա, կը վերադառնաս կամ վահանը ձեռքիդ կամ վահանի վրայ», այս էր համբավավոր հադուկապետի պատգամն ու հրամանը քսանամյա Դրոյին: Թեեւ նրա նախասիրած զենքը մաուզերն էր, բայց որոշվում է գեներալ Նակաշիձեի ահաբեկումը իրա-

[1] «Հայրենիք» ամսագիր, 1956, թիւ 10, էջ 18:
[2] Տե՛ս «Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակց-ն», հ. Բ, էջ 372:

կանացնել ռումբի հարվածով, որովհետեւ ռումբի պայթյունի եւ թողած հետքերի տպավորությունը ավելի ցնցող եւ սարսափազդու պետք է լիներ[1]:

Անսպասելի էր դեռեւս նոր-նոր մարտական առաջին փորձությունը ստացած Դրոյի համար նման պատասխանատու առաջադրանք ստանալ համբավավոր, խստապահանջ հայդուկապետից:

Դրոն այնքան էլ չի սիրել պատմել իր կատարած գործերի մասին եւ միշտ ընկերների թախանձանքին պատասխանել է «Ախար, ի՞նչ եմ արել, որ պատմեմ, դուք գրէք» արտահայտությամբ: Սակայն մեկ անգամ տեղի տալով հետաքրքրվողների հորդորներին՝ անդրադարձել է Նակաշիձեի սպանության մանրամասներին. «Որոշուած ժամին,- պատմել է Դրոն,- ինչ որ հարկաւոր էր հետս վերցրած, խեղճ ու կրակ ձեւ տալով ինձ, գնացի եւ կանգնեցի որոշուած տեղը: Թարսի նման այդ օրը սոսկալի փորցաւ ունէի եւ փորս գալարումների մէջ էր. մտածում էի գնալ մի մօտ տեղ հանգստանալ ու վերադառնալ, բայց երբ զգում էի, որ այդ ժամին նահանգապետը կարող է գալ ու գնալ, յետոյ ինչ անեմ եւ ինչ պատասխան տամ: Պիտի մնամ, մտածեցի, փորս տրորելով, ոտքերս վեր ու վար շարժելով, ման էի գալիս: Այդ ժամին ինձանից քիչ հեռու, մի կեռաս ծախող թուրք էր նստած, գնում էի նրա մօտ, մի բան ասում ու վերադառնում էի: Մէկ էլ տեսայ նահանգապետը կառքի մէջ. շրջապատուած հեծեալ պահակներով գալիս է. պատրաստուեցի, մոռացայ փորիս ցաւը եւ երբ մօտեցան ինձ, նետեցի ձեռքիս ռումբը ճիշտ տեղը: Ահաւոր պայթումի ձայնից ու իրարանցումի մէջ, նոյն խեղճ ու կրակ ձեւը տալով ինձ, հեռացայ: Զախ կողմից մի նեղ փողոց կար, մտայ այդ փողոցը, տեսայ որ մի դրան առաջ կանգնած էր յայտնի մանկաւարժ Տիգրան Ռաշտմաճեանի կինը, որ Իգդիրից էր եւ ինձ բարեկամ: Հարցրեց ինձ. «Դրօ ջան, այդ ի՞նչ ձայն էր», ասացի՝ ձայնից մի հարցրու:

Մտայ ներս, ապա քիչ ետք, անմիջապէս միւս փողոցով, պտտուեցի եւ գնացի ահաբեկման տեղը, մտայ հասարակութեան մէջ իմանալու, թէ ինչ էր կատարուել: Տեսայ, որ հաւաքում էին թէ կառքի կտորները եւ թէ սպանուածների դիակների կտորները եւ այն աւերածութիւնը, որ ռումբը կատարել էր շրջապատում: Միայն շատ ցաւեցի, որ կեռաս ծախող թուրքն էլ կտոր-կտոր էր եղել»[2]:

1905 թ. մայիսի 11-ին, Բաքվի փողոցներից մեկում, օրը ցերեկով, վրիժառու Դրոյի ռումբի անվրեպ հարվածով արժանի դատաստանի

[1] Տե՛ս Վրացեան Ս., Սրրկածին Դրոն, էջ 27:
[2] «Հայրենիք» օրաթերթ, 1956, ապրիլի 22:

արժանացած հայակեր նահանգապետի սպանությունը ցնցող ու սարսափելի տպավորություն է թողնում ողջ Կովկասում:

«Դաշնակցութեան հմայքը, - գրում է Մ. Վարանդյանը, - որ մեծ էր արդէն եկեղեցական գոյքերու շուրջ կռիւներէն եւ ահաբեկումներէն ի վեր, խիստ բարձրացաւ ժողովուրդներու աչքին: Հայ մարտական կազմակերպութեան անունը կը հոլովէին բոլոր շրջաններում, ոմանք հիացումով ու պատկառանքով, ուրիշները՝ ատելութեամբ ու ատամներու կրճտոցով: Իր շեշտակի հարուածով եւ յարուցած դղրդիւնով, այդ ահաբեկումը, զոր կարելի է համեմատել Պլէվէի եւ մեծ իշխան Սերգէի դէմ կատարուած մեծաշառաչ ահաբեկումներուն հետ, պիտի մնայ Հ.Յ.Դաշնակցութեան փառաւոր գործերէն մէկը»[1]:

Կարելի է ասել, որ նահանգապետ գեներալ Նակաշիձեի ահաբեկումն այն կարեւորագույն հիմնաքարն էր, որ մեծապես պայմանավորեց նրա հետագա գործունեությունը: Քսանամյա Դրոն ազատագրական պայքարի բովով անցած փորձառու եւ հեղինակավոր գործիչների կողմից ընդունվում է որպես խիզախ մարտիկ ու վստահության արժանի հմուտ ահաբեկիչ:

Աբ. Գյուլխանդանյանի գնահատմամբ՝Դրոյի հետագա գործունեության համար առանձնահատուկ ու կարեւորագույն նշանակություն է ունեցել Բաքուն:

«Նրա կատարած բոլոր գործերը,- գրում է Աբ. Գյուլխանդանյանը,- դարձել են պատմութեան սեփականութիւն: Սակայն, այդ բոլորի համար նա պարտական է նախ եւ առաջ Բագուին: Բագուն էր, որ հնարաւորութիւն տուեց նրան երեւան բերելու իր աննման խիզախութիւնը եւ հոգեկան կորովը: Բագուի մեջ կատարած իր հերոսական գործերով էր, որ նա հնարաւորութիւն ունեցաւ անարգել զարգացնելու իր անհատական քաջութիւնը եւ զինուորական ընդունակութիւնները: Բագուից յետոյ նա մասնակցեց հայ կեանքը մրրկող բոլոր կռիւներին եւ պատերազմներին եւ ամէն տեղ, շնորհիւ իր վճռականութեան, անձնական քաջութեան եւ արտակարգ զինուորական ընդունակութիւնների, միշտ կարողացաւ առաջնակարգ դեր կատարել»[2]:

[1] Վարանդեան Մ., «Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն», հ. 1, էջ 24:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1953, թիւ 12, էջ 135:

1.2. ԿՈՏԱԾՔԻ, ԴԱՐԱԼԱԳԵԱԶԻ, ԵՐԵՎԱՆԻ, ԼԵՌՆԱՅԻՆ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐՈՒՄ

Բաքվի փետրվարյան դեպքերը ծավալվող գործողությունների միայն սկիզբն էին: Շուտով ընդհարումներն ավելի մեծ ընդգրկումներով ու ուժգնությամբ տարածվում են Երեւանի նահանգ, Արցախ, Զանգեզուր, Գանձակ եւ ընդհուպ Թիֆլիս:

Մայիսի23-ին(12), դարձյալ թուրքերի նախաձեռնությամբ, Երեւանում վերսկսվում են ընդհարումները եւ ինչպես ցույց են տալիս տեղի ունեցած դեպքերը, հայկական կողմը այս անգամ եւս ինչպես հարկն է նախապատրաստված չէր:

Օգտվելով հայկական կողմի անպատրաստ վիճակից, թուրք հրոսակախմբերը նախահարձակ են լինում եւ միահամուռ կրակ տեղում քաղաքային շուկայի տարբեր մասերում գտնվող հայերի վրա:Շուկայում սանձազերծած կոտորածից հետո, որին զոհ են դառնում 20 հայեր, թուրքերը խմբերով՝ զինված խմբերի ուղեկցությամբ, վերադառնում եւ հավաքվում են իրենց թաղերում:

Հայկական կողմի համար թեեւ թուրքերի ձեռնարկած հարձակումը անսպասելի էր, բայց կարող էին համարժեք պատասխան տալ ու գնդակահարել բազմաթիւ թուրքերի: Նույնիսկ համանման իրավիճակում հայկական կողմը առաջնորդվել է պաշտպանողական մարտավարությամբ եւ «Դրօշակ»-ի վկայությամբ «...իրենց զսպում էին, սպասելով տեսնել թէ կառաւարական պաշտոնեաները ի՞նչպէս կը վերաբերեն կոտորածի հեղինակներին»[1]:

Գործին միջամտում է նահանգապետը, որը զինվորների ուղեկցությամբ հայտնվում է հայկական թաղերում եւ համոզում հայերին՝ կրակ չբացել: Հայերը իրենց հերթին շրջապատում են նահանգապետին եւ նրանից պահանջում իրենց հանձնել կռիվներ հրահրող գլխավոր կազմակերպիչներին:

Ուշագրավ է թուրքական կողմը ներկայացնող խաների դիրքորոշումն ու բացատրությունը: Նրանք հայտարարում են, որ կոտորածի հեղինակները, իրոք, թուրքերն են եւ նահանգապետին ներկայացնելով գործի հետ բոլորովին առնչություն չունեցող երեք թուրքերի, պահանջում են խստորեն պատժել նրանց:

«Դրօշակ»-ի գնահատմամբ, թուրքերն այդ քայլով փորձում էին «...հայերին հանգստացնել աշխատեցին, բայց այստեղ եւս

[1] «Դրօշակ», 1905, թիւ 7, էջ 103:

թուրքերն իրենց սովորութեան հաւատարիմ մնացին, փոխանակ գլխաւոր ոճրագործներին՝ նրանք ներկայացրին, իբրեւ յանցաւորներ, ինչ որ խեղճ ու կրակ համբալներ»[1]:

Նահանգապետին եւ հայկական կողմին թուրք խաների տված խոստումները կեղծ էին եւ հաշվարկված:Հաջորդ օրերին թուրքերը դարձյալ նախահարձակ են լինում եւ քաղաքի զանազան մասերում կրակ բացում հայերի վրա:

«Երեք օր շարունակ,- նշում է Մ. Վարանդյանը,- 1905-ի մայիսի 12 էն մինչեւ 15, իշխանութիւններու աչքին առջեւ կը կատարուէր խուժանային գինարբուքը,- ջարդ, հրդեհ, կողոպուտ, կանանց բռնաբարում, եկեղեցիներու սրբապղծում... Հայոց բոլոր ապրանքները յափշտակուեցան, 182 հայկական խանութներէն ազատեցան 4 հատ միայն: Եւ նոյն վայրագութիւնները՝ գաւառի մէջ»[2]:

Թուրքերի հարձակման ճիշտ հաջորդ օրը Բաքվից Երեւան է գալիս Դրոն: Քանի որ ցարական ոստիկանությունը փնտրում էր Բաքվի գեներալ-նահանգապետ իշխան Նակաշիձեի ահաբեկչին, այդ պատճառով Բաքվի ՀՅԴ կենտր. կոմիտեի(Ոսկանապատի) որոշմամբ, նա պետք է հեռանար Բաքվից:

Գեներալ Նակաշիձեի ահաբեկությունից հետո զինակիցների շրջանում արդեն անվեհեր ահաբեկչի անուն վաստակած Դրոն գալիս է Երեւան եւ անմիջապես ներկայանում քաղաքի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար Դաշնակցական Խեչոյին:

«Ես,-գրում է Դրոն,-Խէչօին երբեք այդքան ընկճած ու մտազբաղ չէի տեսել: Ով նրան ճանաչում էր, գիտէր, որ ինչքան էլ դժուար պայմանների մէջ էլ գտնուէր, միշտ կը պահեր հոգեկան արիութիւնը եւ իր մշտազարթ եւ օրհնեալ կատակներով կուրախացնէր ամենքին: Այժմ ընկել էր խորունկ տխրութեան մէջ...»[3]:

Դրոյի այն հարցումին, թե ի՞նչ է տեղի ունեցել, Խեչոն պատասխանել է. «-Էլ ի՞նչ պիտի լինի...-Հալա որ ջարդեցին, մնացածը յետոյ կը պատմեմ»[4]:

Դաշնակցական Խեչոյի օգնական Փառակեցի Մկրտչի պատմածից պարզվում է, որ քաղաքի թուրքերն անսպասելիորեն հարձակվել ու սպանել են 20-25 հայերի: Թուրքերի հարձակումը ոչ միայն սարսափի ու խուճապի էր մատնել քաղաքի հայ բնակչությանը, այլեւ

[1] Նույն տեղում:
[2] Վարանդեան Մ., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Երեւան, 1992, էջ 313:
[3] «Դրո», Երեւան, 1991, էջ 179:
[4] Նույն տեղում:

ծանրագույն խնդիրների առջեւ կանգնեցրել Երեւանի ՀՅԴ կենտրոնական կոմիտեին:

«Երեւանցիք,-գրում է Դրոն,-որ գուցէ ամենից լաւ ծանօթ էին Դաշնակցութեան մարտիկների կեանքին ու քաջագործութիւններին, որ ա՜յնքան մեծ յոյսեր էին դրել Դաշնակցութեան վրա, ա՞յժմ չչմել ու չւարել էին: Չէին հասկանում, թէ ի՞նչպես պատահեց կոտորածը, թէ ինչո՞ւ լուռ եւ անգործ էր Դաշնակցութիւնը, ինչո՞ւ հարւածին չպատասխանեց հակահարւածով»[1]:

Քանի որ այդ ժամանակ քաղաքի ինքնապաշտպանությունը հուսալիորեն կազմակերպելու համար Երեւանի ՀՅԴ կենտրոնական կոմիտեի տրամադրության տակ չկար բավարար քանակությամբ զենք ու զինամթերք,ըստ Փառակեցի Մկրտիչի վկայության, այդ պատճառով կենտր. Կոմիտեն նույնպես սարսափի մատնված՝ գլուխը կորցրել ու հրահանգել էր առայժմ զգույշ մնալ ու տեղիք չտալ ընդհարումների [2]:

Զուտ մարտավարական ու մանավանդ բարոյահոգեբանական առումով ձեռք բերած առաջին հաջողությունը թուրքական կողմին, անկասկած, մեծ ոգեւորություն էր պատճառել ու հայերի նկատմամբ նկատելի առավելություններ ընձեռել: Որեւէ կասկած լինել չէր կարող, որ թուրքերն անպայմանորեն կօգտագործեին հայ բնակչության մեջ տիրող խուճապային տրամադրությունն ու անկազմակերպ իրավիճակը եւ շատ շուտով կվերսկսեին հարձակումը:

Եթե թուրքերին հաջողվեր կրկնել նախորդ հարվածը, ապա ծանրագույն իրավիճակում կհայտնվեին ոչ միայն Երեւանի, այլեւ ողջ նահանգի հայ բնակչությունը: Քաղաքում ձեռք բերած հաղթանակն առավելագույն հնարավորություն էր ընձեռում թուրքերին ավելի հեշտությամբ կոտորածներ սանձազերծել ողջ նահանգում, որտեղ հայ բնակչության իրավիճակն արդեն չափազանց ծանր էր :

Համաձայն Դաշնակցական Խեչոյի վկայության՝ Երեւանի նահանգում մայիսյան առաջին դեպքերից հետո տիրել է հետեւյալ իրավիճակը. «Նախիջեւանն ու Շարուրը շատ ծանր վիճակի են մատնված, կարող են ջարդվել, Դարալագեազը ենթակա է թարաքեամայի (թուրքական քոչվոր ցեղեր) անմիջական հարւածներին: Սուրմալուի մի բուռ հայությունն էլ բնաջնջման վտանգի տակ է: Երեկւայ ջարդը սիրտ պիտի տա Երեւանի թրքության, իսկ հայերի

[1] Նույն տեղում, էջ 182:
[2] Նույն տեղում, էջ 180:

ոգին պիտի ընկնի: Կռիւը շատ ա մէծ, իմ խելքի բանը չէ էս գործը: Բլնգեազ Կենտրոնական Կոմիտէի մէջ էլ էն մարդը չկայ, որ այս չափ զինւորական գործ ըմբռնի ու վարէ: Փամփուշտի ու զէնքի տեսակէտից էլ մենք շատ խեղճ ենք, մինչ թրքութիւնը զինւածա ու զինւում է կառաւարութեան օժանդակութեամբ: Ասում են՝ Դումանը պիտի գայ. ախ՜ ուր ա մի գար...»[1]:

Ի՞նչ պետք է արվեր: Ո՞րն էր ելքը:

Անհրաժեշտ էր օգտագործել եղած հնարավորությունը եւ հակառակորդի համար անսպասելի մարտավարությամբ ձեռնարկել այնպիսի պատասխան կանխարգելիչ գործողություն, որը կարող էր արմատական բեկում մտցնել ստեղծված կացություն մեջ:

ՀՅԴ Երեւանի Մրգաստանի կենտր. կոմիտեն, ճիշտ է հրահանգել էր, որ առայժմ զգույշ մնալ ու տեղիք չտալ ընդհարումների, բայց Երեւանում էին մարտական բովով եւ Նիկոլ Դումանի դպրոցով անցած Սարգիս Օհանջանյանը(Ցարհաղ), Դաշնակցական Խեչոն ու Փառակեցի Մկրտիչը: Իրականում հենց նրանք էին ղեկավարում քաղաքի ինքնապաշտպանական ուժերի մարտական գործողությունները:

Տվյալ ճակատագրական ու բախտորոշ պահին Երեւանի մարտական ուժերի հրամանատարությունը կայացնում է միակ արդյունավետ ու կշռադատված ճիշտ որոշումը, այն է՝ ոչ թե սահմանափակվել սոսկ կրավորական ինքնապաշտպանությամբ, այլեւ նախահարձակ լինել, այսինքն գործել հարձակողական բնույթի մարտավարությամբ:

Անդրադառնալով, հիրավի, ճակատագրական նշանակություն ունեցող այդ մարտավարության կիրառման անհրաժեշտության արժեւորմանը՝ Դրոն նշում է. «Կռւի մէջ յաղթութիւնը մեծ չափով ապահոււած է նրան, ով իր ձեռքը կառնէ նախաձեռնութիւնը: Բոլոր երեւոյթները ցոյց էին տալիս, թէ սպասելու անմիտ քաղաքականութիւնը կարող էր լինել լիովին կորստաբեր հայերի համար: Ընդհակառակը, հակահարւածը մեր կողմից յաջողութեան դէպքում հիմնովին պիտի փոխէր դրութիւնը եւ հայերին պիտի դնէր աւելի նպաստաւոր վիճակում...

Լաւագոյն պաշտպանութիւնը յարձակումն էր[2]»:

Այդ ժամանակ Երեւանի մարտական ուժերը, համաձայն Դրոյի վկայության, ունեին ընդամենը 100 մոսին հրացան եւ 50 ատր-

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, էջ 183:

ճանակ, որոնց մեծ մասը եղել է մաուզեր: Նույն օրը Ալեքսանդրապոլից ստանում են 15 մոսին եւ 4000 փամփուշտ:

Համաձայն վաղօրոք մշակված ծրագրի՝ հայ մարտական խմբերի մի մասը դիրքեր է գրավում մարտավարական առումով քաղաքի առավել կարեւոր նշանակություն ունեցող մասերում եւ փակում հայկական թաղերը տանող ուղիները, իսկ մյուս մասը պիտի բարձրանար Նորքի բարձունքները եւ այնտեղից գրոհեր ու կրակ տեղար հայկական թաղերի վրա հարձակվող թուրքական հրոսակախմբերի վրա:

Մինչ մարտական գործողություններ սկսելը, Դրոն Խեչոյին խնդրում է, որ նա իրեն վստահի թուրքերին թիկունքից հարվածող թռուցիկ մարտախմբի հրամանատարությունը:

Իր հուշագրությունում նկարագրելով կռվի մանրամասները՝ Դրոն նշում է. «Դաշնակցական Խեչօն համաձայնեց եւ իմ տրամադրության տակ դրեց Թիֆլիսից նոր եկած տասը սքանչելի մարտիկներ՝ Կոփեցի Կնեազին, Էրզրումցի Արամին, Թիֆլիսեցի Շէկ Տիգրանին եւ այլն...Խեչօյի հրահանգի համաձայն գնացի ուղիղ մեր պահեստապետի մոտ եւ տղաների համար ստացայ հրացաններ հարիւրական փամփուշտներով: Զինված մարտիկներին միացան եւ Նորքի ուժերը, որոնց մի մասը անզէն էին կամ միայն դաշոյն ունէր»:

Մարտախումբը պիտի Նորքից աննկատ տեղափոխվեր Կոնդի բարձունքները եւ թիկունքից հարվածեր հայկական թաղերի վրա հարձակվող թուրքերին:

Քանի որ Դրոյի գլխավորած թռուցիկ մարտախմբին տրված հանձնարարությունը չափազանց կարեւոր էր, Նորք է գալիս նաեւ Երեւանի ինքնապաշտպանական ուժերի ընդհանուր հրամանատար Դաշնակցական Խեչոն:

«Մեր շարժուելու վայրկեանին,-շարունակում է Դրոն,- հասաւ նաեւ Խէչօն եւ մեր շուրջը գտնուած անզէն գիւղացիներին տեսնելովէ սրախօսեց.

-Հը՛, ինչա՞, պոլկ (գունդ) էք կազմել:

Եւ հրամայեց, որ լոյսը չբացուած վերադառնանք Նորք»[1]:

Ի դեպ, թեպետ մինչ այդ Դրոն մասնակցել էր Բաքվի փետրվարյան դեպքերին, բայց որպես մարտական խմբի հրամանատար Երեւանում տեղի ունեցած կռիվը նրա մարտական գործունեության

[1] Նույն տեղում, էջ 186:

առաջին մարտական գործողությունն էր Արեւելյան Հայաստանի տարածքում:

Նորքեցիների առաջնորդությամբ մարտախումբը գիշերով անկատ հասնում է Կոնդ: Նախորդ օրը քաղաքում ընթացող թեժ կռիվներում Դաշնակցական Խեչոյի ընդհանուր հրամանատարությամբ գործող հայ մարտիկները կարողացել են ոչ միայն անառիկ պահել իրենց դիրքերը, այլեւ դիմել են հարձակման եւ թուրքերի ձեռքից խլել մի քանի կարեւոր հենակետեր:

Հաջորդ օրը հայ ինքնապաշտպանական ուժերը պիտի անսպասելի ու սրընթաց գրոհ ձեռնարկեին եւ երկու կողմից տեղացող հարվածներով վճռական պարտության մատնեին հակառակորդին: Դրոյի գլխավորած մարտախումբը հարմար դիրքեր է գրավում թուրքական թաղամասի վրա իշխող բարձունքի վրա, ապա որսալով հարմար պահը եւ միահամուռ համազարկեր տեղալով՝ գիշերով հարձակվում է թուրքական հրոսակախմբերի վրա, որոնք կրակ էին արձակում հայկական թաղի ուղղությամբ:

Նկարագրելով այդ հիրավի վճռորոշ պահը՝ Դրոն գրում է. «Մեզ հետ եկած անզէն գիւղացիներն էլ «ուռա՛»-ներով սրտապնդում էին մեզ: Այդ աղմուկը գիշերային խորհրդաւորութեան մէջ ահաւոր տպաւորութիւն էր թողնում, եւ զարմանալի չէ, Դամբրբուլաղի թուրք թաղի բոլոր ճրագները անմիջապէս մարեցին, երթեւեկութիւնը փողոցներում դադարեց եւ յարձակումները հայերի վրա վերջ գտան»[1]:

Դրության լիիրավ տերն արդեն հայ մարտիկներն էին, որոնք հարձակվում ու հեռահար մոսիններից թուրքերի վրա կրակ էին տեղում հանդիպակաց ուղղություններից:Թուրքերի շարքում խուճապն ու սարսափն ավելի է ուժեղանում, երբ հայ մարտիկները ռումբերի հարվածներով պայթեցնում են հայկական դիրքերի մերձակայքում գտնվող թուրքերին պատկանող մի քանի տներ:

Եզրափակելով կռվի մանրամասների նկարագրությունը՝ Դրոն նշում է. «...մեր թիկունքային հարուածը վճռական էր եւ շշմեցրեց թուրքերին...

Գիշերային այդ գրոհը բոլորովին բարձրացրեց քաղաքի հայերի բարոյական կորովը, ոգեպնդեց ու բարձրացրեց նաեւ նահանգի հայութեան տրամադրութիւնը:

Միւս օրը առաւօտեան գնացի տեսնելու Խէչօյին: Նրա դեմքը փայլում էր ուրախությունից: Նա պինդ գրկեց ինձ, տաք-տաք

[1] Նույն տեղում:

համբուրեց ու ասաց. «Խաթաքեա՛ր(սխալվող), դու որ մի շաբաթ կռիւ անես Քանաքեռի ջաբախանան(զենքի պետական արհեստանոց, պահեստ-Հ.Գ.) քեզ չի հերիքի»[1]:

Թուրք հրոսակախմբերը մայիսի 23, 24-ին եւ առավել ուժգնությամբ 25-ին զանգվածային գրոհներ են ձեռնարկում հայկական թաղամասերի վրա: Հայոց մարտական խմբերը հակահարվածով կանգնեցնում են թուրք հրոսակախմբերի գրոհները եւ խափանում հայկական թաղամասեր թափանցելու բոլոր փորձերը:

Ըստ արժանվույն գնահատելով այդ կռվում Երեւանի ինքնապաշտպանական ուժերի հաղթանակը՝ Ս. Վրացյանը գրում է. «Երեւանի թուրքերը, խրախուսվելով առաջին յաջողութիւնից, պատրաստւում են նոր յարձակման, բայց այս անգամ անակնկալի են հանդիպում: Խեչօն դասաւորել էր իր ուժերը այնպէս, որ թշնամին ընկնում է երկու կրակի միջեւ եւ շշմեցուցիչ հարուած է ստանում: Այս կռւում աչքի ընկնող դեր է կատարում Դրոն իր թռուցիկ խմբով եւ զինւած մարդկանցով ու կամաւորներով...»[2]:

Մայիսի 25-ի հաղթանակը Երեւանի նահանգում հայերի կողմից թուրքերին հասցրած առաջին լուրջ եւ ծանրակշիռ հարվածն էր: Շնորհիվ կազմակերպված հակահարվածի, կանխվեց Երեւանի հայության գլխին ծառացած մահացու վտանգը: Որեւէ կասկած լինել չէր կարող, որ եթե թուրք ավազակախմբերին հաջողվեր թափանցել քաղաքի հայկական թաղերն ու կոտորել հայերին, ապա անկասկած կշարունակեին նույն սպանդն առավել հեշտությամբ եւ ոգեւորությամբ իրականացնել նաեւ նահանգի հայկական բնակավայրերում:

Սարգիս (Ֆարհատ) Օհանջանյանի հավաստմամբ, Երեւանում տեղի ունեցած մայիսյան կռիվներում հայ մարտիկների դրսեւորած քաջագործությունները հիացրել են ոչ միայն ռուս սպաներին ու զինվորներին, այլեւ նույնիսկ նահանգի եւ քաղաքի իշխանություններին, որոնք որեւէ փորձ չեն ձեռնարկել զինաթափելու հայ մարտիկներին[3]:

Երեւանի մայիսյան դեպքերից հետո, լուր ստանալով, որ Բաքվում ոստիկանությունը ձերբակալել է իր սիրելի ընկերոջը՝ Մարտիրոս Զարուհյանին, նա անմիջապես վերադառնում է Բաքու: Քաղաքում նրա հայտնվելը զարմանք է հարուցում ՀՅԴ Ոսկանապատի կենտրոնական կոմիտեի անդամներ Աբրահամ Գյուլխանդանյանին եւ Լեւոն Թադեւոսյանին (Պապաշ): Իրոք, մեծագույն հանդգնություն էր նրա հայտնվելը, ուր ցարական ոստիկանությունը համառորեն փնտրում էր Նակաշիձեի ահաբեկչին: Սակայն Դրոն չէր կարող չարհամարհել իրեն սպառնացող վտանգը, երբ ոստիկանությունը մահապատժի սպառնալիքով բանտ էր նետել նահանգապետի սպանության գործում մեղադրվող մարտական զինակցին: Հանդիպելով Մարտիրոսի քրոջը՝ կարողանում է գաղտնորեն տեսակցություն կազմակերպել եւ մարտական ընկերոջն օգնելու անհրաժեշտ գործերը կարգավորելուց հետո դարձյալ վերադառնում է Երեւան եւ ներկայանում Երեւանի նահանգի ինքնապաշտպանության հրամանատար Նիկոլ Դումանին: Ճիշտ է, թեպետ Բաքվի կռիվների ժամանակ Դրոն գործել էր նրա հրամանատարությամբ, բայց իրականում նրան առաջին անգամ էր վիճակվում միայնակ հանդիպել ու առանձին խոսել Դումանի հետ, որի խստապահանջությունն ու զինվորական կարգապահության նկատմամբ դրսեւորած արտակարգ խիստ վերաբերմունքը հայտնի էր ամենքին:

«Կուսակցութիւնը,- ասել է Դումանը Դրոյին,- քո ձեռքով մի գործ է կատարել, այդ չի նշանակում, թէ դու հակառակ Կենտրոնական Կոմիտէի հրահանգի կարող ես, կամ իրաւունք ունիս վերադառնալ այն վայրը, որտեղից քո իսկ ապահովութեան եւ իրեն յայտնի այլ պատճառներով հեռացրել է: Հայ ազատագրական պայքարը շատ մեծ է, քեալագէոզութեան վայրկեաններն անխուսափելիօրէն դեռ կը գան, հարկավոր է տնտեսել ուժերը եւ սպասել յարմար ժամանակի: Մանաւանդ դու, որ թէ գիմնազիայում ես սովորել, թէ զինւորական դպրոցում, շատ լաւ պէտք է հասկանաս, թէ ինչ բան է կարգապահութիւնը...

Ես լուռ, գլուխս կախ լսում էի: Մերթ տաք քրտինք էր գալիս վրաս, մերթ պաղ: Ոյժ չունէի առարկելու կամ արդարանալու:Նրա պարզ, բայց կտրուկ եւ ազդող խօսքերը մխւում էին գլխումս այլեւ երբեք չմոռացուելու համար»[1]:

Հաջորդ օրը Դումանը դարձյալ կանչում է Դրոյին եւ առանց նրա կարծիքը հարցնելու, նշանակում Կոտայքի շրջանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար: Առաջարկն անսպասելի էր եւ քանի որ ինքը դեռեւս չուներ հրամանատարության փորձառություն, փորձում է հրաժարվել: Բայց Դումանի վճիռները որպես օրենք անբեկանելի էին:

---

[1] Նույն տեղում, 186-187:
[2] Վրացեան Ս., Մրրկածին Դրոն, էջ 37:
[3] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թթ. 293, գ. 11, էջ 3:

[1] «ՎԷՄ»,1934, մայիս-յունիս, էջ 14:

«Նա (Դումանը), - գրում է Դրոն, - դէմքը մի քիչ խոժոռած, սուր հայացք նետեց վրաս եւ արտասանեց.

- Վաղը առաւօտեան ժամը 9-ին եկէք շտաբ. պատրաստ եղէք մեկնելու Ղըրխբուլաղ (այժմ Աբովյանի շրջան - Հ.Գ.), - եւ ոսկրոտ ձեռքը պարզելով ինձ՝ աւելացրեց՝ ազատ էք, կարող էք գնալ:

Ինձ ոչինչ չէր մնում, բայց եթէ համակերպուել»[1]:

Լավ դաս էր Դրոյի համար Դումանի՝ նման կտրուկ եւ խիստ արտահայտման ձեւն ու զինվորական չոր վերաբերմունքը:

Չնայած Կոտայքի շրջանում կռիվները մեծ ծավալներով ու ուժգնությամբ տեղի չէին ունենում, բայց հայկական գյուղերը ցանկացած պահի կարող էին հարձակման ենթարկվել թարաքեամների (քոչվոր թուրքեր- Հ.Գ.) եւ նրանց աջակցող քրդական հրոսակախմբերի կողմից: Հայկական բնակավայրերին սպառնացող այդ իրական վտանգին դիմագրավելու եւ հայ գյուղացիների անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ էր ըստ ամենայնի կազմակերպել շրջանի ինքնապաշտպանությունը: Մինչեւ Դրոյի գալը, Կոտայքի շրջանում արդեն կազմակերպվել էին որոշակի մարտական ուժեր, որոնց արդեն «բախտ էր վիճակվել» մի քանի կռիվներում ուժերը չափել թուրքական ու քրդական հրոսակախմբերի հետ: Կոտայքի մարտական ուժերի կազմակերպիչների թվում էին Բաշգառնեցի հանրահայտ ռազմիկներ Ղազար Քոչարյանը(Մեծ կամ Քաչալ), Մարտիրոս Աբրահամյանը, Մակեդոն Հակոբջանյանի, Խնկո Ասատրյանն եւ Արտուշ Քոչարյանը, որոնք մասնակցել էին Գայլ Վահանի ու բաբերդցի Միհրանի գլխավորությամբ տեղի ունեցած նշանավոր «Մոսուն - Զորի» արշավանքին եւ արդեն ձեռք էին բերել մարտական որոշակի փորձառություն:

Դրոն Կոտայքի ինքնապաշտպանական շրջանի հրամանատարությունը ստանձնել է 1905 թ. ամռանը: Նիկոլ Դումանի հրամանով նրա օգնականն է նշանակվել բաշգառնեցի Ղազար Քոչարյանը (Քաչալ Ղազար), որը «Մոսուն - Զորի» արշավանքի ժամանակ առաջնորդել էր գառնեցիների տասնյակը: Հենց Կոտայքի շրջանում գործելու ժամանակ հիմք է դրվում Դրոյի եւ Հայոց Ազատամարտի նվիրյալ գործիչներ՝ Գառնի հայրենանվեր ականավոր զավակների՝ Ղազար Քոչարյանի, Մարտիրոս Աբրահամյանի, Խնկո Ասատրկանի, Արտուշ Քոչարյանի, Մակեդոն Հակոբջանյանի եւ գառնեցի բազում այլ քաջակորով ռազմիկների ջերմ բարեկամությանը:

[1] Նույն տեղում:

Հարկ է ընդգծել, որ ինչպես 1905-1906 թթ. հայ- թուրքական, այնպես էլ կամավորական շարժման, Մայիսյան հերոսամարտերի եւ Հայաստանի Հանրապետության գոյության ժամանակահատվածում, վերոհիշյալ գործիչները մեծամասամբ իրենց գլխավորած զորախմբերով մասնակցել են Դրոյի հրամանատարությամբ տեղի ունեցած մարտական գործողություններին:

Դրոն Կոտայքի ինքնապաշտպանական շրջանի հրամանատարությունը ստանձնում է այն ժամանակ, երբ այդ շրջանի մարտական ուժերը Նիկոլ Դումանի հանձնարարությամբ պիտի կենսագործեին մի շատ կարեւոր հանձնարարություն: Հայ բնակչության անվտանգությունն ապահովելու համար, համաձայն Դումանի հրահանգի, հայ ինքնապաշտպանական ուժերը բոլոր շրջաններում նախ եւ առաջ պիտի «մաքրեին» թուրքաբնակ այն գյուղերը, որոնք ընկած լինելով հայկական գյուղերի միջնամասերում, խափանում եւ արգելակում էին հայ գյուղացիների ազատ երթեւեկությունն ու հաղորդակցությունը:

Կոտայքի մարտական ուժերին տրվող հանձնարարությունը ստանալու նպատակով, Ղ. Քոչարյանն ու Մարտիրոսը ներկայանում են Երեւան՝ Դումանի հրամանատարական կետը:

«Դումանը, - գրում է Մարտիրոսը, - բացեց զինուորական քարտէզը, նայեց ուշի-ուշով:

- Գալուստ (Գալուստ Ալոյան-Հ.Գ.), Բաշգառնին ապահովելու համար, անհրաժեշտ է «մաքրել Բաշգառնիի եւ Կոտայքի միջեւ ընկած լեռնաշղթայի վրայ գտնուող թրքաբնակ գիւղերը», որպէսզի ազատ երթեւեկ ստեղծի Բաշգառնիի ու Կոտայքի միջեւ...

Մատով ցոյց էր տալիս քարտէզի վրայ, գիւղերի անուններն արտասանում էր խորը զգւանքով...»[1]:

Դումանի հանձարարությունը, որպես օրենք, անպայմանորեն պիտի կատարվեր: Կոտայքի մարտական ուժերը, նորքեցիների մարտախմբի համագործակցությամբ, ձեռնամուխ են լինում իրականացնել Գառնիից մինչեւ Կոտայք ձգվող տարածքում գտնվող թուրքաբնակ գյուղերի «մաքրում»-ը: Սակայն հայ բնակչությանը միայն թուրքերը չէին սպառնում: Քրդերը, որոնք ամռանը մշտապես անցկացնում էին մոտակա սարերում, պատեհ հնարավորությունը օգտագործելով, նույնպես փորձեր էին ձեռնարկում ասպատակելու հայկական բնակավայրերը:

[1] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, Իմ յիշելի յուշերը, գիրք 1, Թեհրան, 1978, էջ 104:

Դրոյին վստահելով Կոտայքի շրջանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը՝ Դումանը նրան հանձնարարում է կազմակերպել Կոտայքի մարտական խմբերը եւ ոչ մի պարագայում թույլ չտալ, որպեսզի ամռանը Գեղամա լեռները բարձրացող քուրդ ցեղախմբերը հարձակվեն ու թալանեին հայկական գյուղերը[1]:

Հայ մարտական ուժերին մասամբ հաջողվում է կատարել Դումանի հանձնարարությունը եւ մի շարք բնակավայրեր մաքրել թուրքերից, սակայն նրանց արդյունավետ գործողություններին մեծապես խոչընդոտում էին ռուսական ոստիկանական ուժերը, որոնք Քանաքեռի պրիստավ Խումարովի գլխավորությամբ յուրաքանչյուր անգամ հայտնվում էին դեպքի վայրում եւ սատար կանգնում թուրք բնակչությանը:

Օգոստոս ամսին, երբ Դրոն գյամրեցիների խնդրանքով գտնվում էր նրանց գյուղում՝պաշտպանելու դաշտում աշխատող գյուղացիներին թուրքերի հնարավոր հարձակումից, պրիստավ Խումարովը, տեղի տալով թուրքերի կողմից միտումնավոր կազմակերպված սադրանքին, հայ մարտիկներին ձերբակալելու նպատակադրությամբ 12 կոզակների եւ 10 միլիցիոներների ուղեկցությամբ հայտնվում է այն վայրում, ուր տվյալ պահին իր զինվորներով գտնվում էր Դրոն: Նկատելով ռուս զինվորներին ու միլիցիոներներին, հայ մարտիկները կարողանում են ձորերի միջով խույս տալ հետապնդումից, իսկ Դրոն 10 գյամրեզցի մարտիկներով անկարող լինելով մեկնել Կոտայք, հայտնվում է Գառնիում եւ հենց այդ օրն էլ կայանում է նրա եւ Մարտիրոս Աբրահամյանի (խմբապետ բաշգառնեցի Մարտիրոս) ծանոթությունը:

Վերհիշելով այդ պահը՝ Մարտիրոսը գրում է. «Երեկոյեան կողմն էր, երբ կալում զբաղված էի, երբ լուր բերին, թէ 12 զինված մարդիկ են եկել բաղերը եւ ինձ են ուզում:

Անմիջապէս ինձ հասցրի նրանց մօտ:

Տասը գեամրէցցիներին ճանաչում էի, սակայն երկու հոգի անծանօթ էին ինձ, մէկն իմ հասակին էր, ընչացքները նոր բուսած՝ կարճահասակ, իսկ միւսը՝ բարձրահասակ, յաղթանդամ մի տղամարդ...

Երբ ինձ ասացին.

- Ծանոթացիր Խմբապետի հետ, բարձրահասակին խմբապետ կարծեցի...նա ցոյց տվեց իր կողքինին: Կողքինը՝ ձեռքս սեղմելով ասաց.

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 110:

- Դրօ Կանայեան:

Մարտիրոս...

Իմ կարծեցեալ խմբապետն էլ, իր հորեղբօր որդին՝ Գեորգանն էր (Հայրապետ Կանայան)»[1]:

Այդ օրը Դրոն ծանոթանում է նաեւ Խնկո Ասատրյան եւ Արտուշ Քոչարյանի հետ ու նրանց եւ Գառնիի Հ.Յ.Դաշնակցության կոմիտեի անդամների մասնակցությամբ քննարկում ինքնապաշտպանության կազմակերպման ու մասնավորապես քրդերին առնչվող հարցերը:

Խորհրդակցության ժամանակ դիմելով ներկաներին՝ Դրոն հարցնում է. «- Ձեր սարերի քրդերը, որքա՞ն կուռող ուժ կարող են տալ...- հարցրեց Դրօն լուրջ կերպով:

- Մօտաւորապէս հինգ հազար մարդ,- պատասխանեց կոմիտեի նախագահը:

- Գիւղի բոլոր կուռող ուժերը թող պատրաստուեն: Լաւ վալաղներ գտէք: Կը հավաքենք Կոտայքի բոլոր գիւղերի զէնք գործածել իմացողներին եւ կը յարձակուենք քրդերի վրայ...»[2]:

Սարերում հանգրվանած բազմահազար քրդերի վրա հարձակվելու չափազանց հանդուգն գործողության իրականացումը դժվարագույն խնդիր էր: Դումանն այդ մասին տեղեկանալով, հրահանգում է Դրոյին, որ «Ինքնագլուխ, ո՛չ մի գործ չձեռնարկի...»[3]:

Դրոն լրջորեն մտադրվում է իրականացնել այդ շրջանների տարածքներն ու սարերը քրդերից մաքրելու գործողությունը, սակայն հանգամանքները խոչընդոտում են իրականացնել այդ ծրագիրը: Հայկական կողմի գործողություններին ակնդետ հետեւող պրիստավ Խումարովն մեծաքանակ զինվորական եւ ոստիկանական ուժերով ավելի է ուժեղացնում բնակավայրերի վրա սահմանված հսկողությունն ու խուզարկությունները:

Պրիստավ Խումարովի գլխավորած ոստիկանական ուժերի հերթական խուզարկություններից մեկի ժամանակ Դրոն Ղազարի ընկերակցությամբ Գառնիի մոտակայքում անսպասելիորեն հանդիպում է ոստիկաններին, բայց կարողանում է հնարամտորեն մոլորեցնել նրանց ու խուսափել հետապնդումից:

Համաձայն Մարտիրոսի պատմածի, այդ նույն օրը ինքն ու Խնկոն, կալերում աշխատելիս, լուր են առնում , որ իրենց խմբա-

[1] Նույն տեղում, էջ 111-112:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

պետը՝ Դրոն մեն - մենակ հանդ է գնացել: Քանի որ այդ օրերին ոստիկանները հայկական բնակավայրերում խուզարկություններ էին կատարում, նրանց խիստ մտահոգել է իրենց խմբապետի միայնակ հանդ գնալու հանգամանքը:

«Ես ու Խնկոն,-պատմում է Մարտիրոսը,- վազեցինք հանդ, առանց զէնքի:

Գիւղից բավականին հեռացել էինք, երբ նկատեցինք, որ մի հոգի դէպի մեզ է գալիս...էշի վրայ նստած:

Սկզբում թուրքի նմանեցրինք, բայց յետոյ անդրադարձանք, որ թուրք չի կարող լինել: Խնկոն վազեց, մոտեցաւ- բռնեց էշի գլուխը եւ հարց տուեց հեծուորին.

- Ադա մեր խմբապետին չտեսա՞ր, որտե՞ղ գնաց...

Մարդը անխոս ծիծաղում էր միայն: Երբ հասաց, ժպիտից ու աչքերից ճանաչեցի՝ Դրոն էր»[1]:

Նրա մտահղացած հանդուգն, բայց իրականացնելու դեպքում չափազանց կարեւոր ու օգտակար գործողությունը նման իրավիճակում այլեւս անհնար է լինում իրականացնել:

Այսուհանդերձ Դրոն իր մարտական զինակիցների համագործակցությամբ վարպետորեն է կազմակերպում Կոտայք գավառի ինքնապաշտպանությունը: Թուրք եւ քուրդ քոչվորներին ոչ մի անգամ չի հաջողվում իրենց ասպատակությունները սփռել այդ գավառի հայկական գյուղերում:

Թշնամուն դիմավորելու համար ամենուրեք կազմ ու պատրաստ էին նրա եւ զինակիցների կազմած մարտախմբերը:

Ահա Դրոյի մասին Կոտայքի ինքնապաշտպանության կազմակերպիչներից մեկի՝ Արամայիս Ազնավուրյանի վկայությունը. «Յիշում եմ, աւելի քան յիսուն տարի առաջ էր, Կոտայք գիւղում նշանակուած էր Շրջանային Կոմիտէի ժողով: Դեռ ժողովը չսկսած, ներս մտաւ մի բոլորովին երիտասարդ զինուոր՝ հրացանը ձեռքին եւ ամբողջովին կորած փամփուշտակալների եւ փոչու մէջ: Ընդհանուր բարեւ տալով, մօտեցաւ կոմիտէի տեղացի անդամին.

- Որտեղ կարող եմ մի քիչ հանգստնալ, շատ բեզարած եմ:

-Հէնց էստեղ պառկիր, Դրո ջան, ոչ դու մեզ կը խանգարես, ոչ էլ մենք քեզ:

... Աւանեցի բիձան, Կոտայքի Շրջանային կոմիտէի ամենատարիքաւոր անդամը, այն որ նոյն տարին սպանուեց դաւաճանութեամբ, նկատեց նորեկ զինուորի հասցէին.

[1] Նույն տեղում, էջ 114-115:

- Ջահել է, բայց արդէն արտակարգ ճարպիկ է ու յաջողակ, նաեւ ռափուծի սիրտ ունի: Դժգոհ է թիկունքային զինուորական աշխատանքներից եւ ուզում է, որ Դումանը նրան ուղարկի այն շրջաններից մէկը, ուր ընդհարումներ կան թուրքերի հետ:

Առաջին անգամ էի հանդիպում Դրոյին:

Աւանեցի բիձան շատ ճիշտ էր բնորոշել Դրոյին: Այնուհետեւ Դրոն ամբողջ կեանքի ընթացքում բազմաթիւ ապացոյցներ է տուել, որ գործ կազմակերպելու մէջ վերին աստիճանի «ճարպիկ էր», այսինքն՝ հնարամիտ էր, իսկ վտանգի պահերին «ռափուծի սիրտ ունէր», այսինքն՝ քաջ էր հերոսութեան աստիճան»[1]:

Կոտայքի գավառում կատարած գործերը Դրոյին չէին կարող բավարարել, նա ձգտում էր առավել գործուն մարտադաշտ եւ այդ խնդրանքով բազմիցս դիմում է Նիկոլ Դումանին: Որպես վարձահատույց Կոտայքի գավառում ցուցաբերած արդասաբեր աշխատանքներին եւ ընդառաջելով Դրոյի բուռն ցանկություններին, Դումանը նրան նշանակում է Լեռնային Նախիջեւանի ինքնապաշտպանության հրամանատար: Իսկ այդ նշանակումը հեշտ ու պատահական չէր: Դումանի նման բազմափորձ եւ անառարկելի հեղինակություն վայելող խստապահանջ հրամանատարը քսանմեկամյա երիտասարդին պատասխանատու առաջադրանք հանձնարարելու ու վստահելու համար անպայմանորեն պետք է ունենար որոշակի կայուն երաշխիքներ: Բաքվում եւ Կոտայքի շրջանում Դրոյի հանձնած հաջող քննությունները այդպիսի երաշխիքներ արդեն տվել էին:

«Արդէն, - վերհիշում է Դրոն, - բաւական մտերմացել էի Դումանի հետ: Նա արտակարգ ջերմութեամբ եւ սիրալիր վերաբերմունք էր ցոյց տալիս դէպի ինձ, բայց բոլոր դիմումներիս կտրուկ ու վճռական մերժումով էր պատասխանում:

-Եթէ ես ամէն զինուորի ու խմբապետի քէֆով շարժւեմ եւ նրանց անհատական ցանկութիւններին յարմարուեմ, էլ ինչո՞ւ է իմ այստեղ նստելն ու հրամաններ տալը, - առարկում էր նա իմ թախանձանքներին: Եւ ոչնչով կարելի չեղաւ փոխել նրա կամքը»[2]:

1905 թ. օգոստոսին վերջապես իրականանում է Դրոյի բաղձանքը. Նիկոլ Դումանը վերջապես որոշում է մարտադաշտում փորձարկել նրա հրամանատարական կարողությունները եւ նրան մի փոքրիկ խումբ վստահելով՝ ուղարկում է Դարալագյազ, որտեղից պիտի անցներ Լեռնային Նախիջեւան:

[1] «Հայրենիք» օրաթերթ, 1956, ապրիլի 26:
[2] «ՎԷՄ», 1934, մայիս-յունիս, էջ 3:

«Ինձ, - շարունակում է Դրոն, - Ցանձնուած նոր խումբը բաղկացած էր 14 հոգուց: Ամենքն ալ ձիաւոր եւ զինուած բարձրագոյն հրացաններով: Տղաներից ոմանք էլ մարզուած էին ռումբ նետելու գործում:

Հրահանգներ ստանալուց յետոյ տղաներով մեկնեցի Դաւալու գիւղը՝ այստեղից Ջնջրլիի ու Մալիշկայի վրայով Սուլթանաբէկ գիւղը անցնելու համար»[1]:

Այս անգամ արդեն հայտնվելով ռազմադաշտում որպես մարտական ուժերի հրամանատար՝ նա պետք է հանձներ թերեւս ամենադժվարին քննությունը:

1905-1906 թթ. Կովկասում բռնկված ընդհարումներում հայ ժողովրդի մղած պայքարը ազգային միասնականության դրսեւորման եւ խիզախումների փայլուն օրինակ է: Ստանձնելով ինքնապաշտպանության ղեկը՝ Հ.Յ.Դաշնակցությունը մարտադաշտ է առաջնորդում մեր ժողովրդի ամենակենսունակ ու մարտնչող ուժերին:

Բացառությամբ Անդրանիկի, որն այդ ժամանակ գտնվում էր Բուլղարիայում եւ Սասունի ու Տարոնի հայությանը թուրք-քրդական հրոսակների ոտնձգություններից պաշտպանող հայդուկապետ Գեւորգ Չավուշի գլխավորած մարտական խմբի կազմում գտնվող հայդուկներից, վտանգված հայկական բնակավայրերը պաշտպանելու առաքելությամբ ընհարումների շրջաններն էին եկել բազում կռիվների բովում թրծված համբավավոր ֆիդայիներ: Համաձայն Երեւանի նահանգի եւ Զանգեզուրի ինքնապաշտպանական ուժերի ընդհանուր զորահրամանատար Նիկոլ Դումանի հրահանգի, առավել փորձառու եւ համբավավոր ֆիդայիները ստանձնում են վտանգված շրջանների ինքնապաշտպանության կազմակերպման պատասխանատվությունն ու մարտական խմբերի հրամանատարությունը: Օրինակ, Զանգեզուրի ինքնապաշտպանության ղեկը իր մշտական զինակիցների՝ Կայծակ Առաքելի եւ Ավոյի ընկերակցությամբ ստանձնում է Սեբաստացի Մուրադը, Արցախինը՝ Խանասորի Վարդանն ու Համազասպը, Շամշադին-Ղազախում՝ Սեւքարեցի Սաքոն, Լեռնային Նախիջեւանում՝ Քեռին (Արշակ Գաֆաֆյան), Ղամարլուի եւ Դավալուի ու Շարուրի շրջաններում՝ Տարոնի նշանավոր հայդուկներ Մախլուտոն (Սմբատ Բորոյան) եւ Սեյդո Պողոսը, Թիֆլիսինը՝ Տուրբախը եւ այլք:

Երիտասարդ Դրոն իր մարտական կարողություններով բազմափորձ ռազմիկների շրջանում պիտի ապացուցեր, որ ինքն արժանի է

[1] Նույն տեղում, էջ 4:

նրանց հրամանատարը լինելու եւ վստահությանն արժանանալու պատվին: Մինչեւ Լեռնային Նախիջեւան անցնելը, Դրոն մի քանի օր անցկացնում է Դարալագյազում, ուր ինքնապաշտպանության ղեկն ստանձնել էին Տարոնի նշանավոր հայդուկ, Անդրանիկի եւ Գեւորգ Չավուշի զինակից Հաճի Հակոբ Կոտոյանը (Հաճի Կոտո-Հ.Գ.) եւ Աղբյուր Սերոբի մարտական ընկեր Առյուծ Ավագը: Դարալագյազի կռիվներին նվիրված իր հուշագրությունում Դրոն մեծ ջերմությամբ ու հիացմունքով է նկարագրում ֆիդայիների եւ հատկապես Առյուծ Ավագի քաջագործությունները[1]:

Առյուծ Ավագը հատկապես աչքի էր ընկել ու ժողովրդի մեջ մեծ հռչակ ձեռք բերել Դարալագյազին սահմանամերձ Նախիջեւանի տարածքում գտնվող թուրքական Իթղռան գյուղը գրավելու ժամանակ՝ դրսեւորած հրամանատարական վարպետության ու քաջագործության շնորհիվ: Այդ օրերին Իթղռանի վրա ձեռնարկած հաղթական գործողությունը նշանակալի երեւույթ էր: Ընդ որում, այդ հաղթանակը հայ- թուրքական կռիվներում առաջին հարձակողական բնույթի մարտական գործողություններից էր, որի կենսագործմամբ հայ մարտական ուժերին հաջողվում է ոչնչացնել թուրքական ուժերի հենակետներից մեկը եւ դրանով մեծ ոգեւորություն պատճառել Դարալագյազի ու Նախիջեւանի հայությանը[2]:

Դարալագյազի ինքնապաշտպանության հրամանատար Հաճի Հակոբը իր օգնականների՝ Առյուծ Ավագի եւ Զոփուր Արսենի համագործակցությամբ արդեն հասցրել էր շատ լավ կազմակերպել շրջանի հայության ինքնապաշտպանությունը եւ թուրքերի հետ ունեցած կռիվներում կարողացել թշնամուն արժանապատվորեն ցույց տալ հայ ֆիդայու բազկի ուժն ու կարողությունը: Չնայած կռիվներում նվաճած հաղթանակներին, որոշակի սառնություն եւ լարվածություն էր արմատավորվել Տարոնի անվանի հայդուկների՝ Հաճի Հակոբի եւ Առյուծ Ավագի միջեւ: Աղբյուր Սերոբի զինակից Առյուծ Ավագը չէր կարողանում հաշտվել այն իրողությանը, որ «Քաչալ Անդրանիկի» (այդպես են Անդրանիկին անվանել Աղբյուր Սերոբի զինվորները - Հ.Գ.) զինվորը՝ Հաճի Հակոբը, կարող է լինել Սերոբ Փաշի զինվորի հրամանատարը, իսկ նրա խորին համոզմամբ Սերոբից մեծ եւ քաջ մարդ աշխարհում գոյություն չուներ:

«- Հէյ-Հէ՜յ աշխարհ, քեզ հիմ դնողին ի՞նչ ըսեմ, - գանգատվում էր նա, - Սերոբ Փաշի մահէն ետ Քաչալ Անդրանիկ ընոր փոխնորդ ի

[1] Տե՛ս նույն տեղում, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 8:
[2] Տե՛ս «Դրօշակ», 1905, թիւ 8, էջ 116:

դառի, էնօր Ֆուլտաղչի (խաբեբա) զինուորն էլ, հրամանատար ի դարձի իմ գլխին, վայ լըմըն բաւոչ, էդ յուր հասանք... Քո տունն աւրի, աշխարհ...»[1]:

Մի քանի օր Մալիշկայում Հաճի Հակոբին եւ Առյուծ Ավագին հյուրընկալվելուց հետո, Դրոն իր խմբով Սարվազ Խեչոյի ուղեկցությամբ մեկնում է Սուլթանաբեկ, որտեղից պիտի անցներ Լեռնային Նախիջեւանի Նորս գյուղը: Նրա խումբը Սուլթանաբեկին մոտենում է ճիշտ եւ ճիշտ այն պահին, երբ թուրք քոչվորները, իջնելով սարերից, գրավում են գյուղի մերձակա բարձունքները եւ մի քանի ուղղությամբ կրակի տակ վերցնելով գյուղը՝ փորձում են հափշտակել գյուղի նախիրը: Հանդիպելով գյուղացիների դիմադրությանն ու չբավարարվելով բարձունքներից տեղացող կրակով՝ թուրքերը փորձում են մեծ ուժերով ներխուժել գյուղ: Դրոն, ճիշտ ժամանակին հայտնվելով մարտադաշտում, իր խմբով անվարան օգնության է շտապում ինքնապաշտպանության դիմած գյուղացիներին եւ դիրքեր գրավելով՝ կրակ տեղում թուրքերի վրա: Դժվար է պնդել, թե ինչ ճակատագրի կարժանանային գյուղի բնակչությունն ու Դրոյի մարտախումբը, եթե ամենավճռորոշ պահին մարտադաշտում չհայտնվեին Առյուծ Ավագն ու նրա առաջնորդած զինվորները:

«Այդ վայրկեանին,- վերհիշում Դրոն,- չգիտեմ ո՞ր գիւղից, կայծակի արագութեամբ օգնութեան հասաւ Առիւծ Աւագը՝ հեծած իր գեղեցիկ սպիտակ նժոյգը: Նրան հետեւում էր իր խումբը: Մեր հրացաններուն ձայնը լսելուն պէս՝ նա շտապել էր մեզ օգնութեան: Մեր դիրքերը դիտելով եւ իմ զինուորական հրամանները լսելով՝ նա բղաւեց ամբողջ կոկորդով.

- Տո՛ւք... մոլի տղէք, էդա պրիցել ի՞նչ ի: Ես տասնեակ տարիներ զինուորութիւն իմ էրի, չըմ խասկցի պրիցել ինչ ի, վառէք, հա վառէք:

Ու դառնալով Քիւրդ Խէչոյին, որ նրա խմբի մէջ էր եւ իմ մտերիմ ընկերն էր, հրամայեց.

Տղայ, Քրդո՛, քշէ՛ վըր թշնամուն վրէն:

Եւ իր ամեհի ձին՝ քառասմբակ ուղղեց դէպի թիւրքերի դիրքերը: Նրան հետեւեցին խմբի միւս անդամները: Փոթորիկ էր, կարծես, որ տարերային թափով առաջ սլացաւ, ճանապարհին իր ամեհի ուժի տակ խորտակելով ամէն բան»[2]:

Ոգեշնչվելով Առյուծ Ավագի քաջությամբ՝ Դրոն խմբով արագորեն հետեւում է առջեւից գնացողներին ու հասնելով նրանց՝ հարձակվում թուրքերի վրա: Հայկական ինքնապաշտպանական խմբերն Առյուծ Ավագի առաջնորդությամբ անկասելի հարվածներով գրավում են թուրքերի դիրքերն ու ստիպում նրանց փախուստով լքել մարտադաշտը:

«Կռուի ամենատաք վայրկեանին, Առիւծ Աւագը նկատեց, որ մի քանի թուրքեր ձորի միջով քշում էին նախիրը: Կանգ առաւ ու գոռաց մեզ.

- Տղէք, Սերոբ Փաշի զինուորի գլխին փափախ չկա՞յ, որ թուրքերը էդա նախիրը տանին, խլէ՛ք, էդ տաւարը:

Մենք անմիջապէս յարձակուեցինք տաւարը խլեցինք նրանց ձեռքից: Թարաքամաներին հետապնդելիս Առիւծ Աւագը նկատում է, որ մի թուրք վախից պահուել է փոքրիկ քարի տակ...

Ու ձիուց իջնելով՝ վախից ահաբեկուած թուրքի գլուխը ջախջախել է իր հրացանի կոթով: Հարուածը այնքան սաստիկ է եղել, որ հրացանի կոթը կոտրուել է»[1]:

Արժանի ջարդ տալով հայկական գյուղերն ասպատակող թուրք քոչվոր հրոսակախմբերին՝ հայ զինվորներն այդ օրվա կռվի գլխավոր հերոս Առյուծ Ավագի առաջնորդությամբ հաղթականորեն մտնում են գյուղ:

Աղբյուր Սերոբի զինակցի՝ Առյուծ Ավագի եւ նրա խմբի հայդուկների ցուցաբերած սխրագործությունը շատ լավ, ուսանելի դաս էր Դրոյի համար:

Սուլթանաբեկի հաղթական կռվից հետո Առյուծ Ավագի դժգոհությունն ավելի է մեծանում: Նրան թվում է, որ իր կատարած սխրագործությունները յուրացնելով՝ Հաճի Հակոբը անուն եւ փառք է ձեռք բերում: Իր մտահոգությունները Դրոյին դառնությամբ արտահայտելով՝ շեշտում է. «- Մըր ամակ ջուր կըյնի, մըր քաջութիւն կը կորսուի:

Հէհէհ~յ, Սերոբ փաշա, քեռ գերեզմանին մըռնիմ, քեռ զինուորներ քաջութիւն կէնեն, իդա Ֆուլտաղ (խաբեբա) Կոտոյի Հաճին կը շահուի:

...Քեռ տեսած (նկատի ունի Սուլթանաբեկի կռիվը - Հ.Գ.) գրէ պ. Դումանին. թէ չէ մենք կը կռուինք, քաջութիւն կէնինք, դա քեռփակ օղլի Ֆուլտաղ Կոտոյի Հաճին թուղթ կը գրէ ու մըր քաջութիւն իրեն կը վերագրէ: Վա~յ լըմըն աշխարհ, քեռ հիմ դնողին ինչ ըսիմ»[2]:

Հնարավորին սահմաններում մխիթարելով Առյուծ Ավագին եւ նրա քաջագործությունների մասին նամակով հաղորդելով Նիկոլ

[1] «ՎԷՄ», 1934, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 8:
[2] Նույն տեղում, էջ 6:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, էջ 7:

Դումանին՝ Դրոն հրաժեշտ է տալիս Դարալագյազի հայդուկներին եւ ուղեւորվում Լեռնային Նախիջեւան՝ ընդունելու տեղի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը:

Ինչպես Կոտայքի, Դարալագյազի շրջաններում, այնպես էլ Լեռնային Նախիջեւանում բնակչության ինքնապաշտպանությունը կազմակերպելիս Դրոն առաջին հերթին պետք է ստեղծեր մարտական խմբեր, որոնց զինելու համար անհրաժեշտ էր հայթայթել զենք ու զինամթերք: Ընդհարումների բոլոր շրջաններում մարտական խմբերը կազմակերպվում էին համաձայն Երեւանի նահանգի եւ Զանգեզուրի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար Նիկոլ Դումանի սահմանած խստիվ հրահանգների եւ կարգադրության:

«Համաձայն Դումանից ստացած հրահանգի, - գրում է Դրոն,- հայկական բոլոր գիւղերում ստեղծում էինք հետեւակ ու ձիաւոր մնայուն եւ թռուցիկ խմբեր: Շրջանը, որի գլուխ կանգնած էր ընդհանուր խմբապետը կամ հրամանատարը, գիւղերի դասաւորության համեմատ բաժանւում էր շրջանակների: Ամէն մի շրջանակում փորձուած հայդուկներից մէկը նշանակւում էր խմբապետ եւ մէկն էլ՝ նրան օգնական: Ըստ Դումանի յատուկ կարգադրության, տեղական հետեւակ թռուցիկ խմբերը կազմում էին ռուսական բանակում ծառայութիւն արած երիտասարդ զինուորներից: Տեղական սեփականութիւն եղող զէնքերը տրւում էին զինաւարժ տղաներին, որոնք մտնում էին տեղական զինեալ ուժերի շարքերը: Կուսակցական (նկատի ունի Հ.Յ.Դաշնակցությանը - Հ.Գ.) փամփուշտը տրւում էր միայն թռուցիկ խմբերին, որոնք նորը ստանալու համար պարտաւոր էին ներկայացնել կրակուած փամփուշտները»[1]:

Բնակչության ինքնապաշտպանության կազմակերպման գործում ամենադժվարին եւ ամենակարեւորը՝ զենքի ու զինամթերքի ձեռք բերման խնդիրն էր: Բավարար քանակի զենք ու զինամթերք ունենալու դեպքում արդեն մեծ դժվարություն չէր ներկայացնում մարտական խմբերը կովողներով համալրելը, քանի որ մարտնչելու տրամադրությամբ համակված մարդկանց քանակը քիչ չէր: Իսկ զենք ձեռք բերելը անհամեմատ դժվարին խնդիր էր:

«Զէնքը,-շարունակում է Դրոն,-այն օրերին շատ թանգ էր, մի մոսին հրացանը 2-300 ռուբլի արժէր, փամփուշտը հատը՝ 30-40 կոպէկ: Գիւղի ամէն ունեւոր բնակիչ պարտաւոր էր գնել որոշուած քանակով եւ տրամադրել ինքնապաշտպանության ընդհանուր գործին»[2]:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

Նիկոլ Դումանի սահմանած կարգի համաձայն, ինքնապաշտպանական խմբերին զենք ու զինամթերքով ապահովումը պետք է հոգային նաեւ համապատասխան բնակավայրի բնակիչները եւ առաջին հերթին հարուստ, ունեւոր մարդիկ: Դաժան պատիժ էր սպասվում այն ունեւոր հային, որը կհանդգներ չենթարկվել ու չկատարել նրա սահմանած կարգը: Որպես ինքնապաշտպանական շրջանի հրամանատար՝ Դրոն խստորեն պետք է հետեւեր եւ կենսագործեր մարտական խմբերի կազմակերպման գործում խստապահանջ հրամանատարից՝ Դումանից ստացած հրահանգները եւ ժամանակին տեղյակ պահեր նրան այն ամենի մասին, ինչ որ կատարվում էր իրեն վստահված շրջանում:

Դարալագյազի դեպքերից հետո, մինչեւ Լեռնային Նախիջեւանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարության ստանձնումը՝ Դրոն մի քանի ամիս անցկացնում է Երեւանում, որտեղ նա Նիկոլ Դումանի հանձնարարությամբ ստանձնում է մայրաքաղաքի ինքնապաշտպանական մարտախմբերից մեկի հրամանատարությունը եւ միաժամանակ ուսանում հենց Դումանի նախաձեռնությամբ հիմնած ու նրա անմիջական ղեկավարությամբ գործող ռազմագիտական դպրոցում:

Հայ- թուրքական ընդհարումները գնալով ավելի եւ ավելի էին խորանում ու ծավալվում եւ զուգահեռաբար հայկական ինքնապաշտպանական մարտախմբերի քանակը շնորհիվ Նիկոլ Դումանի գլխավորած Զինվորական մարմնի անբասիր ու արդյունավետ գործունեության, նույնպես ավելանում էին ու հզորանում: Ինքնապաշտպանական շրջանների զինական ուժերը կազմակերպելու եւ առաջնորդելու համար անհրաժեշտ էին մարտական համապատասխան որակներով օժտված հրամանատարներ: Իսկ փորձառու եւ կարող հրամանատարների քանակը խիստ սահմանափակ էր: Դումանը կատարում է շատ համարձակ ու միանգամայն կշռադատված եւ արդյունավետ, համանման իրավիճակում գուցեեւ միակ հնարավոր քայլը: Նա ընտրում է առավել վստահություն ներշնչող երիտասարդների ու նրանց հանձնարարում ինքնապաշտպանական շրջանների եւ մարտական խմբերի հրամանատարությունը: Երեւանի մի քանի թաղերի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը Նիկոլ Դումանը վստահում է «Բորեաս» խմբի անդամներին, որոնց թվում էին Դրոն, Սեդրակ Ջալալյանը(Սեթո), Սմբատ Եղիազարյանը, Արտաշես Մելքոնյանը եւ այլք:

Պիտի ընդգծել, որ «Բորեաս» խմբի անդամները ընդհարումների հենց առաջին իսկ օրից սկսած, արդեն դրսեւորել էին իրենց խիզա-

խությունն ու նվիրվածությունը: Նրանք իրենց հրաշալիորեն են դրսևորում ոչ միայն Երևանում, այլև հայաբնակ վտանգված շրջաններում տեղի ունեցած մարտերում: Կռիվների առաջին իսկ օրից «Բորեաս»-ի անդամները մեկնում են ամենավտանգված բնակավայրերն ու իրենց գործուն մասնակցությունը բերում հայ բնակչության ինքնապաշտպանության կազմակերպմանը:

Ընդհարումների սկզբնական շրջանում վտանգված բնակավայրերից մեկը, եթե ոչ ամենավտանգվածը, Նախիջևան քաղաքն էր: «Բորեաս»-ի զինավառ վեց անդամներ, որոնց թվում Սեդրակ Ջալալյանը, մեկնում են Նախիջևան, ուր տեղի հայությունը այդ պահին չունենալով ինքնապաշտպանություն կազմակերպելու որևէ նշանակալի միջոց, հայտնվել էր ծանրագույն իրավիճակում:

Ճիշտ է, «Բորեաս»-ի փոքրաքանակ խումբը շրջադարձային նշանակություն ունեցող գործողություններ չէր կարող իրականացնել, բայց մարտնչելու հաստատակամությամբ տրամադրված զինավառ մարտիկների ներկայությունը որոշակի ոգի ու հույսեր է ներշնչում տեղի հայությանը:

Ավելի քան երկու շաբաթ ընթացող մարտերում բորեասցիների դրսևորած անհողդողդ կամքն ու հերոսական գործողությունները վեր են որևէ գովեստից: Հատկապես արժանահիշատակ է ու նշանակալի նրանց ավանդը Նախիջևան քաղաքի հայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու գործում[1]:

1905 թ. փետրվարյան կռիվների վերջին օրերին, երբ թուրք զինյալ ամբոխը իր հերթական հարձակումն էր ձեռնարկում հայկական թաղամասի վրա «... հանդիպում են մեր մարտիկների դրոհին եւ զոհեր տալով յետ են նահանջում:

Հայդուկների գալու լուրը տարածւում է քաղաքում, եւ թուրքերը քաշւում են իրենց թաղը:

... Այդ ամբողջ ժամանակամիջոցում «Բոյրազ»-ցիները կազմակերպում են խմբեր թէ՛ քաղաքի եւ թէ՛ մօտակայ շրջանների համար, կապում են հայ ժողովուրդը ինքնապաշտպանութեան գործին եւ 15-րդ օրը վերադառնում Երեւան»[2]:

Երեւանի նահանգում ընթացող իրադարձություններին ուշի ուշով հետեւող Դումանին, անշուշտ, հայտնի էին «Բորեաս» խմբի անդամների կատարած սխրանքները, եւ այդ պաճառով հրամանատարների ընտրություն կատարելիս նրանցից շատերին ընդգրկում է ինքնապաշտպանական ուժերի հրամանատարական կազմում:

Հայ- թուրքական ընդհարումների առաջին օրերին ընթացող մարտական իրադարձությունները ցույց տվեցին, որ այն մարտավարական ձեւերն ու միջոցները, որոնք մինչ այդ դեռեւս տիրապետող էին հայկական մարտախմբերի գործողություններում (տիրապետողը հիմնականում կռիվներ վարելու ֆիդայական եղանակն էր - Հ.Գ.), նոր պայմաններում եւ իրավիճակում այլեւս արդյունավետ չէին: Տվյալ ժամանակահատվածում այդ իրողության ճիշտ արժեւորումը եւ համապատասխան հետեւություններ անելը չափազանց կարեւոր էր: Նիկոլ Դումանը, ճիշտ ժամանակին ըմբռնելով այդ հանգամանքի կարեւորությունն ու նշանակությունը, աշխատում է հայկական ինքնապաշտպանական մարտախմբերը կազմել եւ մարզել կանոնավոր բանակում, հիմնականում ռուսական բանակում տիրապետող օրենքներով ու չափանիշներով: Այդ նպատակի կենսագործման համար նա Երեւանում հիմնում է ռազմագիտական դպրոց, որտեղ սովորելու համար ընտրում է առավել աչքի ընկնող երիտասարդ մարտիկների:

Մի վկայություն այդ զինվորական դպրոցի սաներից մեկի՝ Սեդրակ Ջալալյանի հուշերից. «Այդ ժամանակ Նիկոլը որոշեց զինուորական դպրոց բացել այն երիտասարդների համար, որոնք գործնականի մէջ յաջողւում էին եւ իրենց ընդունակութիւններով խոստանում էին զինուորական ասպարէզում ղեկաւարողի դեր կատարել: Ընտրեց 12 հոգի, որոնց մէջ մտնում էր նաեւ Դրօն, հանգուցեալ Մկօ Աղումալեանը, Վաղարշակ Գասպարեանը, Արտաշէս Մելքոնեանը, բժ. Սմբատ Եղիազարեանը, ես եւ ուրիշ ընկերներ: Որպէսզի դասընթացների ժամանակ մենք Երեւանից չհեռանանք, նա քաղաքի ինքնապաշտպանութեան ղեկը յանձնեց մեզ եւ այսպիսով 3 ամիս շարունակ Նիկոլը մեզ ծանօթացրեց զինուորական արուեստի թէօրիայի հետ: Որից յետոյ տուեց բոլորիս զինուորական խմբեր կազմելու, մարզեցնելու եւ ղեկաւարելու կարողութեան վկայականներ»[1]:

Ուշագրավ է այն, որ ռազմագիտական դպրոցի սաների մեծ մասը Երեւանի ռուսական գիմնազիայի եւ «Բորեաս» խմբի տղաներն էին, որոնց ուսուցանելուց զատ՝ Դումանն այդ օրերին տալիս էր մի շատ կարեւոր հանձնարարություն:

---

[1] Տե՛ս Համլետ Գեւորգյան, Սեդրակ Ջալալյանի գործը եւ հուշերը, Երեւան, 2012:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1957, թիւ 4, էջ 71:

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 41, գ. 1:

Հավաստի աղբյուրներից տեղեկություն է ստացվում, որ Երեւանի նահանգապետը թուրքերին էր հանձնելու 60 մոսին հրացան եւ 7000 փամփուշտ: Նահանգապետի գործած նման արարքը Դումանը չէր կարող հանդուրժել: Նա որոշում է բռնագրավել թուրքերին նվեր ուղարկվելիք զենքն ու զինամթերքը եւ այդ առաջադրանքի կատարումը հանձնարարում է Դրոյին եւ «Բորեաս»-ի տղաներին:

«Երիտասարդ քաջերը ամենայն զգուշությամբ եւ յաջողությամբ կատարում են Դումանի հրամանը եւ ռազմամթերքը ամբողջությամբ հասցնում Քանաքեռ: Դումանը գովում է քաջերի գործը, ամէն մէկին տալիս մի մսին՝ իր փամփուշտներով եւ նրանց բոլորին լծում է շրջանի ինքնապաշտպանության գործին»[1]:

Դասընթացներում սովորելուն զուգընթաց, Դրոն, ինչպես արդեն նշվել է, ղեկավարում է նաեւ Երեւանի շրջաններից մեկի ինքնապաշտպանական խմբերի մարտական գործողությունները: Դումանը նրա հրամանատարությամբ գործող թուրքիկ մարտական խմբին հանձնարարում է քաղաքի ամենապատասխանատու՝ կենտրոնական մասի՝ քաղաքային շուկայի ու Աստաֆյան փողոցի պաշտպանությունը:

Տ. Դեւոյանի վկայությամբ. « Երեւանի մէջ, մեյդանի մօտերը, Դրօն ունէր իր հրամանի տակ ընտրովի մարտիկներից(Խէչօն, Ճապոնը) կազմուած թուրքիկ մարտական խումբ»[2]:

Թուրք պարագլուխները, պարտություն կրելով մայիսի 23-25-ին տեղի ունեցած կռիվներում, տենդագին ջանքեր են գործադրում համախմբել իրենց ուժերը եւ վերստին հարձակվել հայկական թաղամասերի վրա: Սակայն անգործության մատնված չէր նաեւ հայկական կողմը: Թշնամուց առավել եռանդուն գործում էր Նիկոլ Դումանի գլխավորած հայկական ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը: Քաղաքի բոլոր թաղամասերում դիրքավորված մարտախմբերը կազմ ու պատրաստ սպասել են հակառակորդի հարձակմանը:

«Դրօն,- շարունակում է Տ. Դեւոյանը, - Ասթաֆեան փողոցի մօտ տղաները բաժանել էր երկու մասի, - մէկը նայում էր դէպի հրապարակը, միւսը՝ դէպի փոստի շրջանը»[3]:

Զուտ մարտավարական նկատառումով Նիկոլ Դումանը հրամայում է չպատասխանել թուրքերի կրակոցներին եւ թույլ տալ, որպեսզի նրանք հնարավորինս ավելի մոտենան հայկական թաղամասերին: Թուրք հրոսակախմբերն առավել ոգեւորված հայկական թաղամասերի լռությունից, անցնում են հարձակման եւ ընդհուպ մոտենում հայ ինքնապաշտպանական մարտիկների դիրքերին: Եւ միայն այդ ժամանակ «Վերջապէս, խօսեց Դումանը հրամայելով. «Կրակ բոլոր դիրքերից»:

Նորքի տակի լեռներից, թուրքերին սահմանակից թաղերից մի այնպիսի ուժեղ համազարկ կապուեցաւ, որ 3-4 օր թուրքերը հնարաւորութիւն չունեցան իրենց քիթը դուրս հանելու: Իսկոյն մէջ ընկան մօլլաները, թէ «այս գործը չէյթանի գործն է» եւ խնդրեցին հաշտութիւն...»[1]:

Երեւանում գտնվելու ժամանակամիջոցում նրա գլխավորած մարտախմբերը՝ Նիկոլ Դումանի ընդհանուր հրամանատարությամբ գործող ինքնապաշտպանական ուժերի կազմում, արժանի ջարդ են տալիս մայրաքաղաքի հայկական թաղամասերը ներխուժելու փորձ անող թուրք հրոսակախմբերին եւ հուսալիորեն ապահովում հայկական թաղամասերի պաշտպանությունը: Երեւանում գործնական եւ տեսական շատ լավ դպրոց անցած, մարտական փորձառություն ձեռք բերած Դրոն մեկնում է Լեռնային Նախիջեւան՝ ղեկավարելու այդ շրջանի ինքնապաշտպանությունը: Նախիջեւանը հայկական այն շրջաններից էր, որն ավելի մեծ չափերով էր տուժել թուրք ավազակախմբերի հարձակումներից:Դրոյի խմբի զինվորներից ոմանք հեգնանքով էին վերաբերվում իրենց 21-ամյա հրամանատարին, իսկ տարեց հայդուկներից մեկը՝ Խլաթցի Գալոն, նկատի ունենալով նրա երիտասարդ տարիքը, արհամարհանքով ասել է. «-Տղաք, մեր Մոկաց իշխաններ կը ժողովին ու էրկար ֆիքր կընեն, թէ իրենց հարկ որո՞ւ ձեռքով ղրկեն Վանայ Վալիին, որ քրտեր չթալլեն ճամբին: Շատ ֆիքր կընեն, քիչ կընեն ու կ՚որոշեն փողեր ժամկոչի աղուէսի վիզէն կապել, որ տանի, սաղ-սալամաթ տեղ հասցնէ: Հիմա մեր պարոն Դուման մեզ կապեր է իդա աղուէսի վիզ (Խլաթցի Գալոն նկատի ունի Դրոյին - Հ.Գ.)»[2]:

Սակայն շատ շուտով Խլաթցի Գալոն եւ մյուս փորձառու ֆիդայիները փոխելով իրենց վերաբերմունքը, ջերմ սիրով են կապվում իրենց երիտասարդ հրամանատարին:

Ինչպես Կոտայքի, Դարալագյազի, այնպես էլ հայաբնակ գրեթե բոլոր շրջաններում ամենավտանգավոր թշնամին, որը պետք է վնասազերծվեր, հենց առաջին հերթին քոչվոր խաչնարած թուրքերն

---

[1] «Հայրենիք» ամսագիր, 1958, թիւ 10, էջ 20:
[2] Նույն տեղում, 1957, թիւ 9, էջ 12:
[3] Նույն տեղում:

---

[1] Նույն տեղում:
[2] «ՎԷՄ», 1934, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 9:

էին, որոնք արոտավայրեր փնտրելու, ոչխարի հոտերը պահելու պատրվակով անընդհատ տեղաշարժվում էին մի վայրից մյուսը եւ յուրաքանչյուր հնարավորություն օգտագործելով՝ հարձակվում հայկական գյուղերի եւ ամառանոցների վրա: Թուրք քոչվորների, որոնք որպես օրենք մշտապես շատ լավ զինված էին, գլխավոր նպատակը հայերի ունեցվածքի, ոչխարի հոտերի, կովերի նախիրների, արոտավայրերի թալանն էր ու բռնազավթումը: Նման իրավիճակում հատկապես զգոն եւ եռանդուն պետք է գործեին շարժական թռուցիկ խմբերը, որոնք մշտարթուն հետեւելով քոչվորների տեղաշարժերին՝ պատրաստ պետք է լինեին յուրաքանչյուր պահի հակահարված տալ նրանց ոտնձգություններին, իսկ անհրաժեշտության դեպքում հակառակորդի ձեռնարկած քայլերի մասին ժամանակին իրազեկ դարձնելու շրջանի եւ գյուղերի ինքնապաշտպանական մարտախմբերի հրամանատարներին[1]:

Դրոն բուռն գործունեություն է ծավալում Լեռնային Նախիջեւանում: Շրջանի գյուղերում տեղացիների ուժերից կազմակերպում է մարտական խմբեր եւ կապեր հաստատում հարեւան շրջանների ինքնապաշտպանական ջոկատների հետ: Նրա ակտիվ գործունեությունը եւ հայկական գյուղերում կատարվող տեղաշարժերը չեն վրիպում նրանց քայլերին ակնդետ հետեւող թուրք հրոսակապետերի ուշադրությունից:

Նորս գյուղը, ուր գտնվում էր Դրոյի ռազմական շտաբը, բացառիկ կարեւոր ռազմական նշանակություն ուներ: Փաստորեն այդ գյուղի միջոցով էր իրականացվում հաղորդակցությունը Զանգեզուրի, Դարալագյազի եւ Լեռնային Նախիջեւանի միջեւ:

Շուտով թուրքական մի քանի ցեղախմբերի միավորված ուժերը Լեռնային Նախիջեւանի ինքնապաշտպանության կենտրոնը խորտակելու նպատակով հարձակվում են Նորս գյուղի վրա: Դրոն, վաղօրոք տեղյակ լինելով հակառակորդի ձեռնարկումներին, կարողանում է, ինչպես հարկն է, վարպետորեն կազմակերպել ու ղեկավարել գյուղի պաշտպանությունը: Նրա հրամանատարությամբ գործող մարշտական խմբերը ոչ միայն կարողանում են չեզոքացնել թշնամու հարձակումներն ու հուսալիորեն պաշտպանել գյուղը, այլեւ դիմելով հակագրոհների՝ արժանի ջարդ են տալիս թուրքերին եւ բռնագրավում զգալի քանակությամբ զենք ու զինամթերք, ինչպես նաեւ տավարի նախիր եւ ոչխարի հոտեր[2]:

[1] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 4բ, գ. 208ա, էջ 12:
[2] Տե՛ս «ՎԷՄ», 1934, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 6-7:

Այս հաղթանակից հետո նույնիսկ հեգնոտ խլաթցի Գալոն սկսում է անկեղծ համակրանքով վերաբերվել Դրոյին:

Նորսի կռիվներից հետո Դումանի հրամանով Դարալագյազի եւ Լեռնային Նախիջեւանի ինքնապաշտպանության ընդհանուր հրամանատար է նշանակվում բազմափորձ Քեռին(Արշակ Գաֆաֆյան), իսկ Դրոն դառնում է նրա օգնականը:

Նիկոլ Դումանի հրամանն ու Քեռուն որպես իր փոխարեն ինքնապաշտպանական շրջանի հրամանատար նշանակելու լուրը նրան հայտնել է Դաշնակցական խեչոն: Մինչ այդ որպես կանոն, Դրոն իրեն տրված բոլոր հանձնարարությունները կատարել էր գերազանց եւ խստապահանջ Նիկոլ Դումանը երբեւէ առիթ չէր ունեցել նրան որեւէ ձեւով, դույզն-ինչ նկատողություն անել կամ հանդիմանել, եւ հանկարծ հրամանատարի փոփոխություն: Դաշնակցական խեչոյի համար այնքան էլ հաճելի չի եղել այդ լուրը հաղորդել Դրոյին եւ մտավախություն է ունեցել, որ նա կառարկի եւ ինչ-որ ձեւով բացասաբար կվերաբերվի այդ նշանակումներին: Փոքր-ինչ կաշկանդվելով՝ Դաշնակցական խեչոն զգուշորեն փորձել է Դրոյին բացատրել հրամանատարության փոփոխության անհրաժեշտությունը:

«Ճիշտն ասած, - վերհիշում է Դրոն, - խեչոյի խօսելու ձեւը մի քիչ տարօրինակ թուաց ինձ, Ի՜նչ գայլի շարական էր կարդում գլխիս. որ պէտք է՝ պէտք է. էլ ի՞նչ կարիք կայ երկար-բարակ խօսելու: Ես անմիջապէս կտրեցի նրա խօսքը.

- Էլ ինչ ես երկար ճառում, ես շատ ուրախ եմ, ես մեծ հաճոյքով շրջանը կը յանձնեմ Քեռուն: Խեչոն անուշ աչքերով նայեց երեսիս, գրկեց ինձ եւ ասաց.

- Այ, իմ բոլոր բալիկներն այսպէս են, կեցցե՛ս: Դումանին էլ այս մասին գրել են, նա էլ է համաձայն: Քեռին շատ փորձուած, խիզախ, ազնիւ խմբապետ է, ինչպէս ինձ ես սիրում ու յարգում, այնպէս էլ նրան վերաբերուիր»[1]:

Սիրահոժար ընդունելով կռիվներ վարելու հսկայական փորձառություն ունեցող Քեռու (Արշակ Գաֆաֆյան) օգնականը լինելու Դումանի որոշումը եւ մի քանի ամիս մարտնչելով նրա հրամանատարությամբ՝ Դրոն աչքի է ընկնում բազմաթիվ կռիվներում ու արժանանում Քեռու հարգանքին ու վստահությանը:

Դրոյի համագործակցությամբ փորձառու ռազմիկ Քեռին թեպետ մեծ նվիրվածությամբ ու արդյունավետությամբ է կազմակերպում

[1] «ՎԷՄ», 1934, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 13-14:

Լեռնային Նախիջեւանի հայ բնակչության ինքնապաշտպանությունը, բայց լարվածությունը գնալով ավելի ու ավելի է մեծանում: Թուրքերը, մի քանի կռիվներում արժանի ջարդ ուտելով Քեռու եւ Դրոյի ղեկավարած ինքնապաշտպանական ուժերից, որոշում են համախմբվել եւ միացյալ ուժերով արշավել հայկական բնակավայրերի վրա:

«Աղուտի Թրքերը, Բազարչայէն նոր ուժեր ստացան եւ համաձայնացած Դարաբասի եւ Քիւրտլարի Թրքերի հետ՝ ծրագրած էին արշաւելու Սիսիանի վրայ՝ Ուղիի վրայով: Իսկ Մուսուլմանլարի Թրքերը, Արցախի օգնութեամբ, ծրագրած էին Զաբուղէն շարժուել դէպի Տեղ-Խնձորեսկ եւ սպառնալ Գորիսին: Ուղիին տիրանալով՝ Թուրքերը պիտի վտանգէին ե՛ւ Սիսիանը, ե՛ւ Դարաբասի ձորը»[1]:

Թուրքական ուժերի հիմնական կենտրոնավայրը՝ որջը, Աղուտ գյուղն էր: Քեռին, ճիշտ կողմնորոշվելով այդ իրավիճակում, վճռում է առաջին հերթին վերացնել հենց այդ գյուղը եւ այդ անչափ պատասխանատու գործը հանձնարարում Դրոյին: Ստանալով Քեռու հանձնարարությունը՝ Դրոն իր մարտախմբով գրավում է Ուղիի բարձունքներն ու Որոտանի կամուրջը եւ այնտեղից սրընթաց գրոհ ձեռնարկելով՝ գրավում Աղուտ գյուղը եւ մեծ ջարդ տալով Թուրքերին՝ փախցնում Բազարչայ:

«Ցաղթական Դրօն,-պատմում է Թադէ Պետրոսյանը(շրջանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարներից է- Հ.Գ.),-վերադարձաւ Ախլաթան, ուր ես գացած էի Քեռու հետ: Անհուն կարօտով գրկեցի հին օրերի իմ ընկերոջը: Քեռին, երբ տեսաւ գրկախառնումը, ասաց. - Եթէ Արցախի եւ Արարատյան դաշտի ժողովուրդն ալ ձեզի պէս իրարու կապուած լինեին, մենք միշտ կը յաղթենք թշնամուն: Կեցցէ՜ք»:

Անմոռանալի եւ հիշարժան բազում օրեր է անցկացնում Դրոն Քեռու ընկերակցությամբ Լեռնային Նախիջեւանի եւ Սիսիանի շրջանի գյուղերում:

«Մեր շրջանի մէջ, - շարունակում է Թ. Պետրոսյանը, - Դրօն մնաց մի քանի ամիս, պտտեց բոլոր վտանգուած դիրքերը եւ խրախուսեց թռուցիկ խումբերը: Սիսիանի հայութիւնը գուրգուրանքով է յիշում «Կրակ ու բոց խմբապետին» »[2]:

Իր հուշերում անդրադառնալով Քեռու ընկերակցությամբ վարած կռիվներին՝ Դրոն անկեղծ համակրանքով է ներկայացնում

[1] «Հայրենիք» ամսագիր, 1958, թիւ 10, էջ 20:
[2] Նույն տեղում:

բազմավաստակ հայդուկի, հիրավի, հիացմունքի արժանի քաջագործությունները, որոնցից ամենանշանավորը Սիսիան գյուղի գրավման հերոսամարտն է:

Քեռին մեծ սիրով ու ջերմությամբ է վերաբերվել իր երիտասարդ օգնականին ու առանց երկմտելու նրան է վստահել ինքնապաշտպանության հետ կապված ամենակարեւոր գործերը:

«Նա, - վերհիշում է Դրոն, - ինձ տուել էր գործելու կատարեալ ազատութիւն: Ինձ էր յանձնել շրջանի տեղական ուժերի կազմակերպումը, մի սահմանափակումով սակայն.

- Դու ձիաւորները թո՜ղ, անոնք ունին իրենց խմբապետները:

Եւ ես ձիաւորներին թողած, ամբողջապէս կլանուեցի տեղական մարտական ուժերի կազմակերպման գործով»[1]:

Պարտականությունների բերումով նա անընդհատ եղել է շարժման մեջ: Ճիշտ է, նրանց վստահված շրջանի գյուղերում արդեն ստեղծվել եւ գործում էին ինքնապաշտպանական խմբեր, բայց միաժամանակ անհրաժեշտ էր մշտարթուն վիճակում հսկել ու համադրել այդ խմբերի գործողությունները եւ մշտապես մնալով կազմ ու պատրաստ, մարտական վիճակում, թույլ չտալ թուրք ու քուրդ զինյալներին ասպատակելու եւ թալանելու հայկական բնակավայրերը եւ արոտավայրերում գտնվող ամառանոցներն ու կացարանները: Հերթական շրջագայության ընթացքում նա այցելում է Բռնակոթ, ապա Թազա գյուղ: Պիտի ասել, ճիշտ է, Քեռին նրա տվել էր գործելու ինքնուրույնություն, սակայն բազմափորձ հայդուկը ուշի ուշով հետեւել է նրանց գործողություններին ու տվել կշռադատված անհրաժեշտ խորհուրդներ ու հանձնարարություններ:

Այդ անգամ եւս «... Քեռին կարգադրեց, որ զինուոր առնեմ եւ անցնեմ Թազա գիւղ, որ հանդիսանում էր շրջանի գիւղերի սիրտը եւ մի տեսակ հանգոյց էր դէպի Մազրա տանող ճանապարհին: Ես չէի ուզում նոյն օրը մեկնել, բայց Քեռին պնդեց իր կարգադրութեան վրայ: Նա կարծես բնազդով զգում էր, թէ մի բան է պատահելու:

-Այսօր եւ պէտք է երթաս, - ասաց նա վճռական կերպով, - ես այդ գիւղէն քիչ մը կը վախնամ: Ձիաւորներ ալ առ հետդ, որ կուգես»[2]:

Հետը վերցնելով իր մշտական ուղեկիցներ Իգդիրցի Քուրդ Խեչոյին (Քուրդը՝ Խեչոյի ածական անունն է - Հ.Գ.), Բերդակցի Օսկանին, Խլաթցի Գալոյին, Մոկացի Խեչոյին եւ այլոց, ընդամենը տասը

[1] «ՎԷՄ», 1935, մայիս-յունիս, էջ 13-14:
[2] Նույն տեղում:

զինվոր, Դրոն հրաժեշտ է տալիս Քեռուն եւ մեկնում Թազա գյուղ: Գյուղացիների հետ խոսելու նպատակով, նրանց եկեղեցում հրավիրում է հանդիպման՝ ընդհանուր ժողով: Գյուղի գիշերապահները այդ հավաքի ազդեցությամբ, կարծելով, թե իրենց գյուղ մեծ քանակի մարտական ուժեր են եկել, թողնում են դիրքերն ու հանգիստ գնում տները: Թուրքերը, որոնք ուշի-ուշով հետեւում էին հայերի ամեն մի քայլին՝ անմիջապես օգտագործում են ընձեռված հնարավորությունը՝ հարձակվում գյուղի վրա: Այդ ժամանակ Դրոն իր մի քանի զինվորների հետ գտնվում էր եկեղեցում: Լսելով հրացանների կրակոցների ձայնը եւ գյուղացիների բարձրացրած աղմուկն ու աղաղակը՝ նա իր զինվորներով անմիջապես շտապում է դիմավորելու հարձակվողներին:

Վերհիշելով այդ պահը՝ Դրոն գրում է. «Տղե՛րք, հետեւեցէք ինձ», - հրամայեցի ես բռնակոթցիներին, - եւ ամենքս դուրս թռանք եկեղեցուց: Մեր միւս տղաներն էլ տկլոր ձիերը նստած, կայծակի արագութեամբ բարձրանում են դէպի թուրքերի բռնած դիրքերը...

Սակայն դեռ տեղ չհասած, տեսանք, որ թուրքերն արդէն գրաւել էին այդ բարձունքները: Վայրկեանը ճգնաժամային էր: Գիւղը իրական վտանգի տակ էր: Ամէն կողմից լսւում էին անհանգիստ աղաղակներ: Մոկացի Խէչոն ի զէն էր հրաւիրում ժողովրդին եւ ինձ սիրտ տալու համար անւերջ կրկնում էր.

- Դերօ ջան, վալլահ տղեկներ յըմէն ելան դիրքերը»[1]:

Դրոն, համաձայն արդեն ընդունված զինվորական կարգ ու կանոնների եւ մարտավարությանը, բռնակոթցիներից ու իր մարտական խմբի մարտիկներից շղթա կազմած գրոհում է բարձունքներում դիրքավորված թուրքերի վրա: Իսկ այդ ընթացքում հակառակորդի զինյալները հիմնական ուժերով գրոհելով թեւերից՝ փորձում են շրջանցել ու անցնել թիկունքը եւ շրջապատման մեջ վերցնել հայ զինվորներին: Եթե Դրոն չհասցներ ժամանակին փակել իրենց դիրքերը շրջապատել ձգտող թուրքերի ճանապարհը, ապա իրավիճակն անդառնալիորեն կարող էր դառնալ օրհասական: Պարզվում է, որ թուրքերն ունեին պատկառելի մարտական ուժեր, իսկ հայ զինվորների քանակը, տվյալ պահին, ավելի քան սահմանափակ էր: Նման դժվարին կացությունում ամենակարեւորը խուճապի չմատնվելն ու տեղի չտալն էր: Անհրաժեշտ էր պահպանել հանգստությունն ուսառնասրտությունը եւ ձեռնարկել ճիշտ ու համարձակ

[1] Նույն տեղում:

քայլեր: Դրոյի ժամանակակիցների վկայությամբ, նրա, որպես զորապետի ու ռազմիկի, կարեւորագույն եւ անվիճելի յուրահատկություններից ու առավելություններից մեկը հենց այն էր, որ նա երբեք, նույնիսկ ամենադժվարին, անելանելի ճգնաժամային իրավիճակում անգամ խուճապի չէր մատնվում եւ կատարում հակառակորդի համար միանգամայն անկանխատեսելի, ամենաանհրաժեշտ ու ամենավճռական քայլերը[1]:

Այս անգամ եւս, կարծես հանպատրաստից հայտնվելով մարտադաշտում նա սառնասրտորեն ընդունում է թուրքերի մարտահրավերը եւ որոշում անսասան պահել դիրքերն ու սպասել օգնական ուժերի գալստյանը:

«Թուրքերը, - գրում է Դրոն, - աշխատում էին անցնել մեր տղաների թիկունքը: Մի քիչ եւս եւ մերոնք պիտի կտրուէին թիկունքից: Մենք անմիջապէս վրայ տուինք ու շեշտակի կրակի տակ առանք թուրքերին, որոնք անակնկալի եկած սկսեցին խուճապով յետ քաշուել: Մենք երեք հոգով, տաքացած, առանց մեզ հաշիւ տալու, թէ ինչ ենք անում, անցանք առաջ:

... Երկու կողմի համար էլ կռիւը օրհասական էր: Մենք նահանջի տեղ չունէինք, թուրքերն էլ հասկանում էին, որ եթէ տեղի տան, ոչ միայն իրենց ամբողջ ձեռնարկը կը վիժէր, այլեւ անձնապէս կը վտանգուէին»[2]:

Առանց դույզն-ինչ վախենալու թուրքերի մեծաքանակ ուժերից՝ Դրոն զինակիցներով առաջ է անցնում հակառակորդից եւ հասնելով տեղանքին իշխող բարձունքի գագաթը՝ դիրքավորվում է ու կրակ տեղում գյուղը թափանցելու փորձ անող թուրքերի վրա: Հայ զինվորները պաշտպանվում են աներեր եւ մեծ համառությամբ, բայց հակառակորդին վճռական պարտության մատնելու համար անհրաժշտ էին օգնական ուժեր:

«Բոգդանին (Բռնակոթի խմբապետ-Հ.Գ.) ուղարկեցի գիւղ եւ պատուիրեցի, որ անմիջապէս մեզ օգնութեան գան 10 բռնակոթցիներ: Բոգդանը գիւղ մտնելիս հանդիպում է Քեռուն, որը իր խոստման համաձայն 10 ձիաւորներով օգնութեան էր եկել Թազա գիւղ: Բոգդանը նրան պատմում է մեր վիճակը, յայտնում է իր վիրաւորուելը, աւելացնում է, թէ ես էլ եմ վիրաւորուած, եւ թէ շտապ օգնութիւն է հարկաւոր: Քեռին կարծում է, թէ ես սպանուած եմ, Բոգդանը թաքցնում է տղաների մէջ լքում առաջ չբերելու համար:

[1] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 140, գ. 65, էջ 12:
[2] «ՎԷՄ», 1934, մայիս-յունիս, էջ 51:

Ուստի առանց երկար մտածելու, թռչում է ձին եւ քառասմբակ արշաւում դէպի մեր դիրքերը»[1]:

Մինչ Քեռին կհասցներ հասնել օգնության՝ Դրոն ընդամենը իր երեք զինակիցներով շարունակում է օրհասական գոտեմարտը բազմիցս գերակշռող հրոսակների դեմ: Արդեն սպառվում էին նաեւ փամփուշտները, թշնամին տեսնելով հայ մարտիկների կողմից տեղացող կրակի թուլացումը՝ ոգեւորվում եւ դիմում է էլ ավելի կատաղի գրոհի: Պահը իրոք դառնում է ճգնաժամային ու անելանելի. եւս մի ակնթարթ եւ թուրքերը, օգտվելով հայդուկների փամփուշտների սակավությունից՝ կարող էին նվաճել ռազմական կարեւոր նշանակություն ունեցող Թազա գյուղը:

Իր հուշերում ներկայացնելով այդ ճակատագրական պահը՝ Դրոն նշում է. «Նոյն վայրկեանին, կատաղի փոթորիկի պէս սրարշաւ հասաւ նաեւ Քեռին: Ես սարսափած գոռացի.

-Քեռի՛, թուրքերը մօտ են, շուտ իջիր ձիուց, կը խփուես:

Դեռ խօսքս չէի վերջացրել, երբ նրա տակի ձին գնդակահար գետին գլորուեց: Անայլայլ, կարծես ոչինչ չէր պատահել մտրակն ու պարեբելտը(ատրճանակ)ձեռքին, Քեռին առաջ խոյացաւ թուրքերի վրայ: Տատանուելու ժամանակ չէր, մենք հետեւեցինք նրան »[2]:

Շուտով մարտադաշտում են հայտնվում նաեւ բռնակոթիները, իսկ մի փոքր անց՝ նաեւ Ախլաթան եւ Պնուս գյուղերի մարտախմբերը, որոնք լսելով Թազա գյուղի մերձակայքում տեղի ունեցող կռվի արձագանքները՝ անմիջապես շտապել էին օգնության: Համատեղ ուժերով ջախջախելով Թազա գյուղը ոչնչացնել ցանկացող թշնամու ուժերը՝ հայկական ինքնապաշտպանական մարտախմբերը Քեռու եւ Դրոյի առաջնորդությամբ շարունակում են զարգացնել մարտում ձեռք բերած հաջողությունը: Պահն ու հակառակորդի ընձեռած հնարավորությունը ավելի քան նպաստավոր էին: Անհրաժեշտ էր առանց երկմտելու օգտագործել ընձեռված հրաշալի հնարավորությունն ու անհապաղ հարձակվել թուրքերի ամենանշանավոր հենակետի՝ Սիսիան գյուղի վրա:

«Քեռին, - պատմում է Դրոն, - ձի հեծած անվերջ «ուռա» գոռալով՝ գնում էր շղթայի առջեւից: Նա հրահանգել էր հիմքից քանդել եւ այրել Սիսեանը, որ ոչինչ չմնա թշնամու համար կարեւոր ռազմական նշանակություն ունեցող գիւղից»[3]:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, էջ 52:
[3] Նույն տեղում:

Հայ մարտական խմբերը Քեռու ու Դրոյի առաջնորդությամբ ներխուժում են Սիսիան եւ սրի քաշում այդ գյուղի ու այնտեղ կուտակված թուրքերին, որոնք այնտեղ էին եկել հայկական Թազա գյուղը կործանելու եւ թալանելու նպատակով:

Եզրափակելով Սիսիանի գրավման հերոսամարտի պատմությունը՝ Դրոն նշում է. «Փառաւոր ճակատամարտ էինք շահել: Սիսեանի այրուելը սարսափելի տպաւորութիւն գործեց շրջանի թրքութեան վրայ, որի ողնաշարը վերջնականապէս կոտրուում էր: Սիսեանն իր մեծութեամբ ու խաղացած ազդեցիկ դերով շրջանի թրքութեան սիրտն էր»:

Թազա գյուղի պաշտպանության եւ մանավանդ թուրքաբնակ Սիսիան գյուղի կռիվներում նվաճած հաղթանակները ոչ միայն ամրապնդեցին հայ ինքնապաշտպանական ուժերի հեղինակությունը, այլեւ ավելի ոգեւորեցին ու մարտնչելու տրամադրություն հաղորդեցին հայ բնակչությանը:

«Այդ կռուից յետոյ էր,- շարունակում է Դրոն,- որ Մոկացի Խէչօն առիթ գտնելով՝ մեղայի եկաւ, թէ ինձ սխալ է ճանաչել եւ տղաների առջեւ իմ կարողութիւնները ծաղրելու համար մոկաց իշխանների առակն էր պատմել»[1]:

Մոտ մեկ տարի տարբեր շրջաններում մարտնչելուց հետո, արդեն անվախ խմբապետի անուն վաստակած Դրոն, օգտվելով կռիվների ժամանակավոր դադարից, ամուսնանալու նպատակով մեկնում է Իգդիր:

Նրա սիրած աղջիկը՝ Նվարդը, Կանայանների գերդաստանին թշնամաբար տրամադրված՝ Ավագյանների ընտանիքից էր: Ամիսներ առաջ խոսք անգամ չէր կարող լինել նրանց ամուսնության մասին: Բայց այդ օրերին խիզախ ահաբեկչի եւ խմբապետ-հրամանատարի անուն վաստակած Դրոյին իրենց փեսացու ունենալն արդեն մեծ պատիվ էր ցանկացած ընտանիքի, անգամ Ավագյանների համար: Թեպետ Դրոն արդեն հանրահայտ դեմք էր Իգդիրում, բայց Ավագյանները, այնուամենայնիվ, ոչ մի պարագայում լսել անգամ չէին կամենում Կանայանների հետ խնամիական կապեր հաստատելու մասին. թշնամանքն այդ երկու գերդաստանների մեջ գնալով ավելի էր խորացել:

Նրանց ամուսնության վերաբերյալ պահպանվել են հետաքրքրական մի շարք հուշագրություններ, որոնցում հաստատվող իրողու-

[1] Նույն տեղում:

թյունը՝ անձնական կյանքով օժտված եւ հայրենիքի ազատությանը անմնացորդ նվիրված հայ զինվորի կերպարը բնութագրող պերճախոս վկայություն է:

Դրոյի եւ Նվարդ Ավագյանի ամուսնությունն առանց որեւէ ծայրահեղ միջոցների գործադրման, օրինական ճանապարհով իրականացնելու համար, անհրաժեշտ էր հաշտեցնել թշնամաբար տրամադրված գերդաստաններին: Եթե չկայանար հաշտությունը, ապա երիտասարդ սիրահարները համաձայնության էին եկել փախչել Պարսկաստան ու այնտեղ ամուսնանալ: Իսկ այդ պարագայում թշնամանքը Կանայանների եւ Ավագյանների միջեւ կարող էր ծայրահեղորեն սրվել: Թշնամաբար տրամադրված գերդաստաններին հաշտեցնելու առաքելությունը հարկադրված ստանձնում է Հ.Ց. Դաշնակցության Մրգաստանի կենտրոնական կոմիտեն: Ի՞նչ պետք է արվեր:

Պատմում է Դրոյի համադասարանցի, «Բորեաս» խմբի անդամ Սեդրակ Ջալալյանը (Սեթո): Հաշտեցման գործի կազմակերպիչ, ՀՅԴ Երեւանի Մրգաստանի կենտրոնական կոմիտեի անդամ Գալուստ Ալոյանը հավաքում է Դրոյի մի քանի ընկերների եւ նրանց հայտնում հետեւյալը. «-Մրգաստանի Կեդր. Կոմիտէն, նկատի ունենալով, որ նման փախուստի պատճառով, երկու գերդաստանների թշնամութիւնը աւելի պիտի բորբքուի, որոշել է ոչ մի ջանք չխնայել հաշտեցնելու երկու կողմերը, որպեսզի խնամական կապերով անկեղծ բարեկամութիւն հաստատուի նրանց միջեւ: Ահա այդ առաքելութեամբ էլ որոշուած է ընկեր Աւետիք Իսահակեանը ուղարկել Իգդիր: Եւ որպեսզի մեր Աւօն ծեծ չուտի, որոշուած ենք նաեւ նրան ընկերակցել մեր լաւագոյն ռազմիկներէն ու միանգամայն Դրոյի մտերիմ ընկերները,-Դաշնակցական խէջօն. Մկո Աղամալեանը, Մարտիրոս Զարուխչյանը եւ երկու հոգի էլ «Բորեազից», որոնցից մին դո՛ւ»[1]:

Թշնամի գերդաստաններին հաշտեցնելու առաքելությունը ստանձնած զինավառ խումբը Ավետիք Իսահակյանի առաջնորդությամբ Երեւանից մեկնում է Իգդիր: Նրանց ներկայությունը պիտի բացարձակապես լիներ խիստ գաղտնի եւ աննկատ: Դեռեւս շարունակվում էին հայ- թաթարական կռիվները: Ցարական ոստիկանությունը եթե տեղեկանար Երեւանում եւ Իգդիրում խմբի անդամների ներկայության մասին, անկասկած կփորձեր ձերբակալել նրանց:

[1] Կարօ Գէորգեան , Ամէնուն Տարեգիրք , 1959, էջ 181-182:

խմբի կազմում չի եղել նաեւ Դրոն, որին նահանգի իշխանությունները խիստ կերպով հետապնդում էին:

Գիշերով խումբը հասնում է Իգդիր, եւ լույսը բացվելուն պես Ավետիք Իսահակյանը բանագնաց է ուղարկում Ավագյանների տուն, հայտնում նրանց իր Իգդիր գալու նպատակը եւ առաջարկում հանդիպել: Ավագյանները կտրականապես հրաժարվում են ընդունել նրա առաջարկությունը, պատճառաբանելով, որ որեւէ դեպքում իրենք չեն հաշտվելու, առավել եւս խնամիանալու Կանայան ընտանիքի հետ, ընդսմին նշելով. «...թէ Դրոյի հանդէպ թշնամութիւն չկայ, քանի որ նա նորահաս երիտասարդ էր եւ մասնակցած չէր տեղական վեճերուն»[1]:

Ավետիք Իսահակյանի առաջնորդած խումբը հայտնվում է անորոշ իրավիճակում: Ի՞նչ պետք է անել: Խմբի անդամները խորհրդակցելով որոշում են դիմել Ավագյանների ընտանիքի երիտասարդ անդամներին: Ավետիք Իսահակյանը, ենթարկվելով խմբի որոշմանը, Մարտիրոս Զարուխչյանի ընկերակցությամբ հանդիպում է երիտասարդներին, եւ մեծ վարպետությամբ գովերգում է Դրոյին, նրա կատարած քաջագործություններն ու նրան ներկայացնելով որպես ազգի նվիրյալ եւ հերոս, ի վերջո կարողանում է կոտրել երիտասարդների համառությունն ու ստանալ նրանց համաձայնությունը:

«Ավագեանները, - շարունակում է Ս. Ջալալյանը, - ի վերջոյ կը խոնարհին Նուարդի վճռական կեցուածքին առջեւ եւ երբ յաջորդ օրը Աւօն կերթայ իմանալու իրենց պատասխանը, կը յայտնեն, թէ կը հաւանին խնամիանալ եւ ատով ալ վերջ տալ տնաքանդ պառակտումներուն»[2]:

Խմբի անդամները Նվարդի վճռական պահվածքի աջակցությամբ հաջողությամբ կատարում են թշնամի գերդաստաններին հաշտեցնելու առաջադրանքը եւ ի նշան ձեռք բերած հաղթանակի, խնջույք են կազմակերպում: Խնջույքի պահին տրվելով գինարբուքին, Սեթոն հումորով փոքր- ինչ կոպիտ պատասխաններ է տալիս Ավետիք Իսահակյանին, որը սեղանակիցների տրամադրությունն ավելի բարձրացնելու համար զվարճալի պատմություններ էր պատմում իր հայրենի Ապարանի կյանքից:

Վերհիշելով այդ պահը՝ Սեթոն գրում է. «- Է՜յ, Գիւմրեցի բոշա, ըսի լրջութիւն կեղծելով, սրանից յետոյ չհամարձակուես Մարմար

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, էջ 183:

Զարոյի բիւրեղ անունը բերանդ առնիլ... Զարօն իմն է եւ կարդիլեմ քեզ Արագած բարձրանալ...

Աւօն թէ՝ «Զարօն յաւէտ իմս կը մնայ, տղայ ես՝ առջեւս ելիր, ես քո մասուզէրից վախեցողը չեմ»...

... Հազիւ կարող էի ոտքի կենալ, աչ ու ձախ օրօրուելով: Տեղս նստելէ առաջ, ըսի.

- Աւօ՛ ջան, արի՛, իգդիրցիների նման մենք էլ հաշտուենք...

Եւ երբ կուացայ, որ հաշտութեան համբոյրը դրոշմեմ Աւոյի դէմքին, թշի փոխարէն անոր նշանաւոր քիթն էր ինկած բերանս: ...համբուրելու փոխարէն ուժեղ կերպով խածեր էի քիթը... Աւոյի ճչոցին վրայ, տղաները բռնեցին զիս ու պառկեցուցին:

Արթնացուցին զիս լուսադէմին, երբ անաղմուկ դուրս պիտի գային Իգդիրէն: Եւ դուրս եկանք:

Երբ հասանք Մարգարա գիւղը եւ իջեւանեցանք ընկերոջ մը տուն, Աւօն դարձաւ ինծի.

- Տօ անաստուած, ըսաւ, այս ի՞նչ արեցիր քիթս, էս կերպարանքով ո՞նց Երեւան կը մտնեմ...»[1]:

Արդեն հայ-թուրքական ընդհարումների երկրորդ տարին էր: Հայաստանի տարբեր շրջաններից բազմաթիւ տագնապալի լուրեր էին հասնում Երեւան՝ ինքնապաշտպանության ընդհանուր հրամանատար Նիկոլ Դումանի մարտական շտաբը: Ռազմական իրադրությունը առավելապես լարված բնույթ էր ստացել Զանգեզուրում, ինքնապաշտպանական ուժերի հրամանատար Սեբաստացի Մուրադը պահանջում էր օգնական ուժեր: Շրջանի ինքնապաշտպանությունն ուժեղացնելու համար անհրաժեշտ էին խիզախ ու փորձառու մարտիկներ: Դրոն պիտի վերադառնար Զանգեզուր: Դրոն ու Նվարդը Իգդիրի ամենանշանավոր գերդաստանի զավակներն էին, եւ իհարկե պիտի կայանար նրանց շքեղ ու ճոխ հարսանիքը: Բայց քանի որ դեռեւս չէր կայացել նրանց հարսանեկան արարողությունը, այդ պատճառով նրա մեկնումը մարտադաշտ փոքր-ինչ ձգձգվում էր:

Այդ օրերին Իգդիրի եկեղեցիներից մեկում՝ «...Գաւառական քաղաքի մէջ,-գրում է Վահան Փափազյանը (Կոմս),- օգտուելով իր արձակուրդի օրերէն, պիտի ամուսնանար երիտասարդ, յանդուգն եւ Դումանի կողմէ սիրուած մարտական նոր ղեկաւարներէն մէկը:

Գաւառական այդ քաղաքը մեծ խրախճանքի մէջ էր: Խմբապետը տեղի յայտնի ընտանիքէն էր եւ սիրուած տեղի երիտասարդութենէն:

[1] Նույն տեղում, էջ 184:

Պսակը պիտի կատարուէր իրիկունը: Եկեղեցին լուսաւորուած, տեղացիները տօնական հագուստներով խռնուած էին եկեղեցիի մուտքին մօտ:

Ահա եւ փեսան կը մտնէ եկեղեցին, իր զինակից ընկերներով շրջապատուած: Կուգայ նաեւ հարսը հարսնեւորներով: Արարողութիւնը կը վերջանայ, հարս ու փեսան դանդաղ կը յառաջանան դէպի ելքը, երբ մարդ մը արագ կը մօտենայ փեսային եւ թուղթի կտոր մը կը պարզէ անոր: Հեռագիր մըն էր (գրուած պայմանական լեզուով). Նիկոլ Դումանը կը հրամայէր՝ անմիջապէս մեկնիլ Զանգեզուր. «քեզի կարիք ունին» ... Խմբապետ փեսան վայրկեան մը շշմած՝ կարձանանայ. շուրջինները իրար կանցնին, բայց շփոթութիւնը ակնթարթ մըն էր, խմբապետը անվրդով եվ դանդաղ կը շարունակէ իր երթը հարսի քովէն, բայց երբ տուն կը հասնին եւ ընտանիքի հարազատները բոլորուած էին նորապսակներու շուրջը, նոր փեսան կը մօտենայ իր հօրը՝

- Հայրիկ, հրաման է եկել Դումանէն. պիտի երթամ անմիջապէս... կինս քեզի կը յանձնեմ, պիտի պահես ինչպէս քո զաւակը... Հայրը, աւանդապահ, ծանրագլուխ իշխանաւոր մը, կը շփոթուի, կարծես չըմբռնելով իմաստը տղայի խօսքերուն, ապա կը մրմնջէ.

- Ատաթ չէ, պալէս... մեղք է... վաղը կերթաս:

- Չէ հայրիկ ջան, չի ըլլի, հրամանը հրաման է, կռիւ է...

- Դէ, տղերք ջան, ձիերը թամբեք, - կը դառնայ նա իր զինակիցներուն: Ապա արագ կը մօտենայ հօրը եւ մօրը, ջերմօրէն կը համբուրէ անոնց դողդոջ ձեռքերը, կը շոյէ հարսին գլուխը եւ դուրս կուգայ...»[1]:

Դրոյի այդ տարօրինակ վարմունքը, հարսանիքը կիսատ ձգելու ու հեռանալու իրողությունը հաստատում է նաեւ Ս. Վրացյանը, բայց փոքր- ինչ այլ մեկնաբանությամբ: Նա նույնպես նկարագրում է հարսանեկան ճոխ արարողության եւ պսակադրության մանրամասները ու ներկայացնելով նաեւ այն պահը, երբ նորապսակները դուրս են գալիս եկեղեցուց, նշում է, որ հարսանքավորների ընդհանուր բացականչությունների եւ ցնծության մեջ փեսային է մոտենում մի անծանոթ երիտասարդ ու նրան հանձնում մի կնիքած թղթածրար:

«Դրոն բաց է անում եւ կարդում: Հրամանագիր էր Նիկոլ Դումանից, «Կռիւները վերսկսել են Զանգեզուրում, անմիջապէս վերադառնալ ռազմաճակատ»...

[1] Կոմս, Խոնարհ հերոսներ, մաս 1, Թեհրան, 1982, էջ 52-53:

Հազիւ տուն հասած՝ Դրոն յայտնում է հօրը, թէ պէտք է իսկոյն մեկնի: Իրարանցում, աղաչանք՝ գէթ մի օր մնալ, բայց Դրոն մնում է անդրդուելի: Հրամանը հրաման է. զինուորը պարտական է առանց առարկութեան անհապաղ ենթարկուել: Եւ ձգելով հարսանիքը կիսատ՝ Դրոն շտապում է վերադառնալ...»[1]:

Այդ դէպքը կատարվել է 1906 թ. ամռանը: Դրոն մեկնում է Զանգեզուր՝ օգնելու տեղի ինքնապաշտպանական ուժերի զորահրամանատար Սեբաստացի Մուրադին:

Զանգեզուրը հայ-թուրքական ընդհարումների ամենադժվարին շրջաններից էր: Ամիսներ շարունակ բազմաթիվ թուրք հրոսակախմբեր ասպատակում ու ավերում էին հայկական գյուղերը եւ միջոցների մեջ խտրականություն չդնելով՝ ձգտում էին ոչնչացնել գավառի հայ բնակչությանն ու տիրել նրա հարստությանը: Մեծանուն սեբաստացի ռազմիկը, իր անբաժան զինակիցներ Կայծակ Առաքելի, Ավոյի եւ Մեչեդի Ավետիսի ընկերակցությամբ Զանգեզուրի քաջարի լեռնականների մարտական ուժերի գլուխն անցած, կայծակնային հարվածներ էր հասցնում լեռնաշխարհի մերթ այս, մերթ այն բնակավայրերի վրա հարձակվող թուրք եւ նրանց միացած քուրդ ավազակախմբերին:

Դրոյին բախտ վիճակվեց իր սիրելի հրամանատարի՝ Քեռու ընկերակցությամբ մարտնչել նաեւ Հայոց ազատամարտի նշանավոր ռազմիկ Սեբաստացի Մուրադի հրամանատարությամբ:

Զանգեզուրում ընդհարումները չթուլացող ուժգնությամբ դեռեւս շարունակվում էին: Չնայած հայ ինքնապատպանական ուժերի նվաճած հաղթանակների, թուրք հրոսակախմբերի դիմադրությունը դեռեւս լիովին հաղթահարված չէր: Ձեռք բերած նվաճումներն ամրապնդելու եւ հակառակորդի դիմադրությունը վերջնականապես խորտակելու համար անհրաժեշտ էր փորձառու մարտական խմբերով համալրել Զանգեզուրի ինքնապաշտպանական ուժերի մարտաշարքերը: Այդ նկատառումով Նիկոլ Դումանի հանձնարարությամբ Զանգեզուր են մեկնում մի քանի մարտական խմբեր, որոնց թվում էր նաեւ Մարտիրոս Աբրահամյանի գլխավորած գառնեցիների մարտական խումբը, որի անդամներից մի քանիսը մարտական մկրտություն էին ստացել՝ մասնակցելով Մոսուն-Զորի նշանավոր արշավանքին, ապա նաեւ Երեւանի նահանգում տեղի ունեցած կռիվներին[2]:

[1] Վրացեան Ս., «Մրրկածին Դրոն», էջ 47:
[2] Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1958, թիւ 3, էջ 27:

Հասնելով ռազմադաշտ՝ Դրոն Զանգեզուրի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար Սեբաստացի Մուրադի հանձնարարությամբ ստանձնում է նրա գլխավորած ինքնապաշտպանական զորախմբի ջոկատներից մեկի հրամանատարությունը: Սիսիանում հանդիպում են մարտական զինակիցները՝ Դրոն ու Մարտիրոսը: Այդ օրերին խիստ տագնապալի կացություն էր ստեղծվել Գողթնում: Մարտիրոսի գառնեցիների մարտախումբը ընդգրկվում է Դրոյի գլխավորած ջոկատի կազմում ու մեկնում Գողթան, ուր մի քանի հաղթական կռիվներ մղելուց հետո անցնում են Ղափանի շրջան[1]:

Այդ ժամանակ Զանգեզուրում էին գտնվում բազում համբավավոր ֆիդայիներ՝ Քեռին, Մեչեդի Ավետիսը, Կայծակ Առաքելը, Ավոն եւ այլք:

Զանգեզուրում մղած կռիվներից արժանահիշատակ է Քեռու ընկերակցությամբ Տաթեւի մոտակայքում նրանց առաջնորդած մարտախմբի կողմից թուրք հանրահայտ հրոսակապետ Սելիմի ավազակախմբի ջախջախումը: Տաթեւի մերձակայքում տեղի ունեցած կռվի մասին Ս. Վրացյանին պատմել է Տաթեւի գյուղացիներից մեկը: Ըստ գյուղացու պատմածի՝ հրոսակապետ Սելիմի առաջնորդած ավազակախումբն ավարառության նպատակով պարբերաբար հարձակումներ է գործել հայկական գյուղերի վրա ու մեծ վնասներ հասցրել շրջանի հայ գյուղացիներին: Քեռու եւ Դրոյի գլխավորած մարտական խումբը դարանակալում ու «...թակարդն են ձգում Սելիմին եւ մինչեւ վերջին մարդը կոտորում՝ մեծ ցնծությունն պատճառելով հայ գիւղացիներին»[2]:

Սիսիանի, Գորիսի շրջաններում արժանի ջարդ կրելով սեբաստացի անվանի ռազմիկի հրամանատարությամբ մարտնչող ինքնապաշտպանական զորախմբերից՝ թուրք ցեղապետերը որոշում են միավորել իրենց զինական ուժերը եւ շարունակել առավել հզոր ու կազմակերպված զինախմբերով արշավել հայկական բնակավայրերի, մասնավորապես Տաթեւի, ապա նաեւ Ղափանի եւ Գենվազի շրջանների վրա:

«Թուրք բէկերը, - նշվում է Զանգեզուրի ընդհարումները լուսաբանող հուշագրություններից մեկում,- իրենց կրած անյաջողություններից յետոյ՝ բարբաջանքների մէջ են ընկել եւ եռանդուն պատրաստւում են՝ նորանոր արշաւանքներ գործելու ամբողջ Ղա-

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Ա, էջ 230-231:

փանի եւ Գիւնէյուզի վրայ: Ամէն օր սպառնական լուրեր են գալիս: Զանգիլան գիւղում թուրք բէկերի մօտ եղել է բազմամարդ ժողով՝ մասնակցութեամբ Պարսկաստանից եկած խաների»[1]:

Թուրք բեկերի դիտավորությունները խափանելու, տեղի հայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու նպատակով Սեբաստացի Մուրադը զորախմբով, որի կազմում էր նաեւ Դրոյի գլխավորած ջոկատը, մեկնում է Ղափանի շրջան: Զանգեզուրի շրջաններում իրենց ավազակային գործողություններով հայտնի Տանձավեր գյուղի բեկեր սուլթանովները թուրք հրոսակախմբի գլուխն անցած շարունակաբար, մինչ այդմ դեռեւս անպատիժ, ասպատակում էին հայկական գյուղերը:

Օգոստոսի 1-ին թուրք զինյալ խմբերը հարձակվում են Տաթեւ գյուղի վրա եւ հանդիպելով տեղի քաջակորով գյուղացիների դիմադրությանը՝ նահանջում: Զանցած մի քանի օր ավելի մեծաքանակ ուժերով վերսկսելով հարձակումը՝ գրավում եւ մոխրակույտերի են վերածում ու թալանում հայերի ամառանոցները:

Անհրաժեշտ էր վճռական հակահարված տալ եւ մեկընդմիշտ վերջ տալ թուրք ավազակախմբերի գործողություններին: Մուրադը, խորհրդակցելով իր մարտական զինակիցներ Քեռու, Սմբատ Եղիազարյանի, Դրոյի, Կայծակ Առաքելի, Ավոյի եւ այլոց հետ, թշնամուն վերջնականապես ու գլխովին ջախջախելու նպատակով վճռում է ձեռնարկել հակառակորդի համար անսպասելի ու համարձակ գործողություն: Առաջնորդվելով Երեւանի նահանգի ու Զանգեզուրի ինքնապաշտպանական ուժերի ընդհանուր զորահրամանատար Նիկոլ Դումանի «Թշնամուն հարվածել ու ջախջախել հենց իր որջում» պատգամ-հրահանգով՝ զանգեզուրյան զորախմբերի հրամանատարությունը որոշում է հարձակվել թուրքերի հիմնական որջի՝ Տանձավեր եւ Աղվանք գյուղերի վրա:

Թուրք հրոսակախմբերին վճռական պարտության մատնելու համար Մուրադը գործում է այնպիսի մարտավարությամբ, որը խորապես կշռադատված էր ու կենսունակ, իսկ հակառակորդի համար՝ անսպասելի: Տանձավեր եւ Աղվանք գյուղերում կենտրոնացած էին թուրք պարագլուխներն ու նրանց առաջնորդած մարտական ուժերը: Եթե հայ ինքնապաշտպանական ուժերին հաջողվեր խորտակել այդ գյուղերում կենտրոնացած թուրք զինյալների դիմադրությունն ու ոչնչացնել նրանց առաջնորդ աղաներին, խաներին ու բեկերին,

[1] «Դրօշակ», 1906, թիւ 9, էջ 55:

ապա անտարակույս առավել հեշտ կլիներ ծնկի բերել Զանգեզուրի մահմեդական բնակչությանը:

Ճիշտ է, զուտ քանակական առումով Մուրադի առաջնորդած մարտական ուժերը զգալիորեն զիջում էին թուրքական կողմին, բայց դա չէր ամենակարեւորն ու վճռորոշը: Գործողության հաղթական ավարտն առաջին հերթին պետք է ապահովեին գրոհի անսպասելիությունն ու սրընթացությունը եւ հրամանատարների ու զինվորների վարպետությունը:

Օգոստոսի 8-ին թշնամու ավազակաբները ոչնչացնելու վճռականությամբ Սեբաստացի Մուրադի գլխավորած զորախումբը, որի կազմում էր նաեւ Դրոյի զորաջոկատը, արշավում է Տանձավեր եւ Աղվանք գյուղերը, ուր, ինչպես արդեն նշվել է, կենտրոնացել էին թուրք առաջնորդների ու Սուլթանովների գլխավոր ուժերը: Որպեսզի զրկի հակառակորդին տեղաշարժվելու, ուժերը մի ուղղությունից մեկ այլ ուղղություն տեղափոխելու հնարավորությունից՝ Մուրադը որոշում է գյուղերի վրա հարձակումը իրականացնել մի քանի կողմից, միաժամանակ ու սրընթաց:

Համաձայն «Դրօշակ»-ի հոդվածագրի՝ «Մուրադը բաժանեց իր խումբը մի քանի տասնեակների: Աւոն իր տասնեակով գրաւեց գիւղի աջ կողմի բարձր դիրքը: Մի ուրիշ տասնեակ՝ Սմբատի ղեկաւարութեամբ, անցաւ գիւղի ձախ կողմը: Մուրադը, վերցնելով իր հետ Դրոյի, Մկրտիչի, Կնեազի, Կայծակ Առաքելի եւ Արսէնի տասնեակները, մտաւ գիւղը, նախօրօք պատուիրելով զինուորներին՝ ձեռք չտալ կանանց, երեխաներին ու ծերերին»[1]:

Քեռին, իր զորաջոկատով դիրքավորվելով գյուղի մերձակա բարձունքներումմ, պետք է հսկեր թուրքական այլ ուժերի տեղաշարժերը, որոնք կարող էին անսպասելիորեն հայտնվել ու ծանր կացության մեջ գցել հայ զինվորներին:

Մուրադի հրահանգով մարտական ջոկատները մրրիկի ուժգնությամբ ներխուժում են թուրքերի որջը. «Երկու գիւղերում էլ հրդեհը սկսեց լափել տները, իսկ դիմադրող թուրք ասպատակիչները ընկնում էին մերոնց գնդակներից: Եւ ահա՝ նոյն բէկերը, աւազակապետերը, որոնք ամբողջ երկու տարի ահ ու սարսափի մէջ էին պահում խաղաղ ժողովուրդը, այն նոյն «քաջերը» ամօթաբար փախչում էին հայդուկների առաջից, թողնելով տուն, տեղ, զէնք ու ընտանիք, չկարողանալով մի բոպէ դիմադրել հայդուկների գրոհին...»[2]:

[1] Նույն տեղում, թիւ 9, էջ 137:
[2] Նույն տեղում:

Հայկական ինքնապաշտպանական ուժերի գրոհը ավարտվում է փայլուն վերջաբանով. չանցած մեկ ժամ՝ ահեղ դատաստանի արժանացնելով բեկերի գլխավորած ավազակախմբերին՝ հայ մարտիկները, բեռնված թշնամուց գրաված զենքով ու զինամթերքով, հեռանում են այրվող գյուղերից:

Դրոն, չնայած իր երիտասարդ տարիքին, արդեն կռիվների պատկառելի փորձ ուներ: Նրան բախտ էր վիճակվել մարտնչել այնպիսի համբավավոր, փորձառու ռազմիկների ընկերակցությամբ, ինչպիսիք էին Նիկոլ Դումանը, Սեբաստացի Մուրադը, Քեռին, Առյուծ Ավագը, Դաշնակցական Խեչոն, Կայծակ Առաքելն ու Ավոն, որոնց կողքին լինելը մեծ պատիվ էր ու անզուգական ուսանելի դաս յուրաքանչյուր զինվորի համար:

Դրոն, վերոհիշյալ ականավոր ռազմիկների ընկերակցությամբ մասնակցելով թուրքերի հիմնական որջի՝ Տանձավեր եւ Աղվանք գյուղերի գրավման չափազանց կարեւոր նշանակություն ունեցող մարտական գործողությանը, հրաշալիորեն է հանձնում այդ հերթական քննությունը եւս:

Օգոստոսի 12-ին թուրքական մեկ այլ հրոսակախումբ, հիմնականում Ղաթար գյուղի բնակիչները, որոնց միանում են քրդական թարաքամա (քոչվոր)ցեղախմբի ձիավորները, հարձակվում են Բեխ հայկական գյուղի վրա: Թուրք պարագլուխները ծրագրել էին այդ գյուղի բնակիչներին կոտորելուց ու նրանց ունեցվածքը տնօրինելուց հետո լիովին հողին հավասարեցնել նաեւ Կավարթ գյուղը: Տեղեկանալով այդ մասին՝ Մուրադն ընդամենը քսան ձիավորներով, Դրոյի, Կայծակ Առաքելի ու գյումուշխանցի Ավոյի ընկերակցությամբ անհապաղ գալիս է Կավարթ եւ իր ջոկատը համալրելով տեղի մարտունակ ուժերով՝ անվարան արշավում է թուրքական հրոսակախմբերի հավաքատեղիի վերածված Ղաթար գյուղի վրա: Առավոտյան, երբ թուրքերը հավաքված քննարկում էին հայկական գյուղերի վրա հարձակվելու ծրագիրը, Մուրադը հասնում է Ղաթար եւ մարտական խումբը երեք մասի բաժանելով՝ տարբեր ուղղությամբ սրընթաց նետվում թշնամու վրա:

«Դրօշակ»-ում տպագրված այս կռվի լուսաբանմանը նվիրված հոդվածում նկարագրելով մարտական գործողության մանրամասները՝ հեղինակը նշում է. «...Մուրատի խմբակը ներս խուժեց գիւղը: Մօտակա տներն այրւում էին, կրակը արագօրէն լափում էր շէնքերը: Գնդակների տարափի տակ, որոնք կարկուտի պէս թափւում էին թուրքերի տներից, Մուրատը արագօրէն իջնում էր դէպի գիւղի ներքին մասը՝ սարսափ տարածելով իր շուրջը: Ահա՜, նա եւ Աւոն, Մկրտիչը, Կայծակն ու Դրօն...»[1]:

Հայկական զորախմբի սրընթաց ու հանկարծակի գրոհից չփոթահար թուրքերը սթափվելով՝ պատսպարվում են տներում եւ գնդակների հեղեղով դիմավորում հայ զինվորներին: Հրաշքներ էին գործում բազմափորձ ֆիդայիները, փորից վիրավոր Կայծակ Առաքելը, անտեսելով ընկերների թախանձանքները, համառորեն շարունակում է մարտնչել: Անտեղի զոհերից խուսափելու նպատակով Մուրադը երեք անգամ թշնամուն առաջարկում է անձնատուր լինել՝ խոստանալով խնայել հանձնվողների կյանքը, սակայն թուրքերը, մերժելում են նրա առաջարկն ու շարունակում դիմադրել: Պայթուցիկ նյութերով խորտակելով հակառակորդի դիրքերը՝ հայ մարտիկները Մուրադի, Կայծակ Առաքելի, Ավոյի եւ Դրոյի առաջնորդությամբ ներխուժում են թշնամու պաշտպանության հանգույցն ու անխնա կոտորում արդեն երկրորդ տարին անընդմեջ հայկական գյուղերն ավերի ու մոխրակույտերի վերածող սուլթանովների գլխավորած հրոսակախմբերին[2]:

Ընդհարումների օրերին Զանգեզուրի ողջ տարածքը ողողվել էր տեղացի, ինչպես նաեւ հարակից շրջանների, Պարսկաստանի կողմից հայերի բնակավայրերն ասպատակող թուրք հրոսակախմբերով: Զարմանք է հարուցում, թե ինչպես էին հայ ինքնապաշտպանական ուժերի հրամանատարները՝ ֆիդայիների եւ տեղի մարտական խմբերի գլուխն անցած, արագ տեղաշարժերով կարողացել հայոց գյուղերը պաշտպանել մահմեդական ավազակախմբերի վայրագություններից: Մի օրինակ եւս:

Ղաթար գյուղում կենտրոնացած թուրքական ուժերին ջախջախելուց ընդամենը երկու օր անց՝ օգոստոսի 14-ին, թուրք զինյալ խմբերը պաշարում են Ուժանիս գյուղը: Հայ բնակչությունը, չերկնչելով թշնամու ուժերի բազմությունից, Եղվարդից եւ Հագարակից օգնության եկած մարտախմբերի աջակցությամբ դիմում է ինքնապաշտպանության: Թուրք հրոսակախմբերի ու նրանց աջակցող մահմեդական ամբոխի ձեռնարկած բոլոր գրոհներն անցնում են ապարդյուն: Մի շաբաթ չանցած թուրք զինյալ ամբոխին են միանում Ռահիմ ու Ալի խաների առաջնորդությամբ Պարսկաստանից Զանգեզուր անցած 1500 ձիավորներ: Թշնամին, գոտեպնդվելով ուժերի հսկայական գերակշռությունից, փորձում է ներխուժել

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

գյուղ: Կովի ամենաօրհասական պահին մարտադաշտ են հասնում Մուրադի, Դրոյի, Ցապոնի եւ Հայրիկի գլխավորած մարտախմբերը եւ հողմի արագությամբ հարվածում մոտալուտ հաղթանակի ակնկալիքով հայ պաշտպանների դիրքերը գրոհող թուրքերին թիկունքից: Կես ժամ չանցած թուրքերը, ջախջախվելով, սարսափահար փախուստի են դիմում[1]:

Ամենուրեք հայ մարտական խմբերի վճռական հարվածներից ջախջախված մահմեդականները՝ ճարահատյալ պարզում են սպիտակ դրոշն ու դիմում հաշտության:

«Այնուհետեւ - գրում է Զանգեզուրի թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանը, - թուրքական խմբեր էին, որ գալիս էին Տաթեւ վանքը, հաշտություն էին խնդրում, իմ միջնորդությանն էին դիմում, անիծում էին իրենց խաներին, որոնք կոտորածների պատճառ եղան, անիծում էին, որ զուր տեղը կռուեցրին երկու հարեւան ժողովուրդներուն»[2]:

1905-1906 թթ. հայ-թուրքական(թաթարական) ընդհարումների ուսումնասիրությունն աներկբա հավաստում է, որ եթե չլիներ ցարական իշխանությունների, զորքի ու ոստիկանական ուժերի միջամտությունը, ապա բազմափորձ ֆիդայիների ու ռուսական բանակում մարտական մկրտություն ստացած հայ զինվորականների առաջնորդությամբ մարտնչող հայկական մարտական ուժերը վերջնականապես կջախջախեին մահմեդական հրոսակախմբերին, ու չէր բացառվում, որ Հարավային Կովկասը լիովին մաքրեին թուրք ու քուրդ բնակչությունից:

Անտարակուսելի է, որ Դրո-հրամանատարի ձեւավորման դպրոցը 1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումների ռազմաբեմն էր եւ տվյալ ժամանակահատվածում Հայոց ազատամարտի նշանավոր ռազմական գործիչներ Սեբաստացի Մուրադի, Կայծակ Առաքելի, գյումուշխանցի Ավոյի, Քեռու, Հաճի Հակոբի, Առյուծ Ավագի եւ, իհարկե, նրա իսկ բնորոշմամբ «իմ մեծ ուսուցիչ Նիկոլ Դումանն»- ի ղեկավարությամբ ու ընկերակցությամբ բազմաթիվ կռիվների մասնակցելը:

Մոտ մեկուկես տարի տեւողությամբ ընթացող հայ-թուրքական ընդհարումներում Դրոն, մարտնչելով Բաքվի, Կոտայքի, Երեւանի, Դարալագյազի, Լեռնային Նախիջեւանի, ապա նաեւ Զանգեզուրի շրջաններում տեղի ունեցած բազմաթիվ կռիվների, աչքի է ընկնում

[1] Տե՛ս նույն տեղում, թիւ 2, էջ 27:
[2] Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 65:

հրամանատարական ակնառու ունակություններով եւ իսկական ռազմիկին բնորոշ համեստությամբ ու խիզախությամբ[1]:

Ուշագրավ գնահատական է տալիս նրա գործունեությանը հայտնի ազգային գործիչ, բժիշկ Երվանդ Խաթանեսյանը (Ե. Խաթանեսյանը որպես բժիշկ ծառայել է Անդրանիկի գլխավորած 1-ին կամավորական զորախմբում, իսկ 1917-1918 թթ. համագործակցել է Սեբաստացի Մուրադին-Հ. Գ.). «Դրօն կարկառուն մարտիկի եւ ներհուն ռազմագէտի անուն շահեց: Նիկոլ Դումանը Դրօյի մէջ նշմարեց ու գտաւ նրբազգաց հոտառութեամբ հետախոյզը, ռազմախաղերի բանիբուն գիւտարարը, թշնամու դիտաւորութիւնները նախատեսելու ընդունակ հայդուկը եւ ճակատամարտերի գաղտնիքին ու իմաստին դիւրաւ թափանցող տաղանդը: Սրանց վրայ աւելացրէք իր պայծառ իմացականութիւնը, իրադարձութիւնները յստակ տեսնելու եւ դատելու իւրայատուկ քանքարը, եւ հասկանալի պիտի լինի այն բարդ համարումը, որին իրաւամբ արժանի էր Դրօն»[2]:

1905-1906 թթ. բովանդակ Կովկասում բռնկված հայ-թուրքական ընդհարումների ժամանակ հայ ժողովուրդը դաժան, բայց հրաշալի քննություն բռնեց: Պատմական տվյալ ժամանակահատվածում պանիսլամիզմի գաղափարախոսությամբ առաջնորդվող կովկասյան թուրքերի (թաթարներ) հրոսակախմբերի միջոցով ցարական իշխանությունների քաջալերանքով ու թողտվությամբ սանձազերծված ջարդերի քաղաքանությունը իրականում հայության նկատմամբ կենսագործված ցեղասպանության առաջին փորձն էր, որը հիմնովին տապալվել է շնորհիվ հայ ազգային-ազատագրական պայքարի նշանավոր գործիչների առաջնորդությամբ կովկասահայության մղած հերոսական ինքնապաշտպանության:

Մ. Վարանդյանի բնութագրմամբ՝ հայ ժողովուրդը, որը հարեւան ազգերի, նույնիսկ վրացիների ու ռուսների կողմից դիտվում էր որպես ստորադաս ցեղ, շահի հետեւից ընկած, վախկոտ վաճառականների եւ վարժապետների զանգված, «...չուզեր այլ եւս էշ–նահատակի անպատիւ դերը: Դարեր շարունակ խաչ ու աւետարանը կուրծքերիս սեղմած՝ համերաշխութեան քարոզը հնչեցրինք, եւ կոտորուեցինք, գթութիւ~ն աղերսեցինք-եւ կոտորուեցինք: Շատ արդ-

[1] Տե՛ս «ՎԵՄ», 1934 (Դրոյի հուշերը նվիրված են 1905-1906 թթ հայ-թուրքական ընդհարումների ժամանակ իր մասնակցությամբ Երեւան քաղաքում, Դարալագյազի, Լեռնային Նախիջեւանի ու Զանգեզուրի շրջաններում տեղի ունեցած ինքնապաշտպանական մարտերին):
[2] «Ալիք», Բացառիկ, 1956, մայիս 4, էջ 17:

դէն վայելեցինք կոտորուողի հոչակը, ամբողջ տիեզերքը սասանեցինք մեր մարտիրոսութեամբ-հերի՛ք է...»[1]:

Ցարական իշխանությունների թողտվությամբ սանձազերծված ազգամիջյան կռիվներում մեր ժողովուրդը միմիայն հերոսական ինքնապաշտպանությամբ նվաճեց ապրելու ու հարատեւելու իրավունքը եւ այդ գործում անգնահատելի են Հայոց ազատամարտին զինվորագրված հայրենաշունչ մարտիկների՝ Նիկոլ Դումանի, Սեբաստացի Մուրադի, Քեռու, Սեպուհի, Սեւքարեցի Սաքոյի, Վարդան Մեհրաբյանի, Սմբատ Բորոյանի, Կայծակ Առաքելի, Գյումուշխանցի Ավոյի, Քեռու, Հաճի Հակոբի, Առյուծ Ավագի, Դաշնակցական Խեչոյի, Սեյդո Պողոսի, Համազասպի, մշեցի Մագար Վարժապետի ու բազում այլ նվիրյալների, որոնց շարքում նաեւ Դրոյի ծառայությունները:

Կովկասահայության ինքնապաշտպանության կազմակերպման գործում անտարակույս պիտի ընդգծել Հ.Յ. Դաշնակցության ծառայությունը, որը Մ. Վարանդյանի գնահատմամբ՝ «...իր ծոցեն առնելով հայ բովանդակ ժողովուրդը, այդ երկարատեւ մաքառումներու ընթացքին ցուցաբերեց այնքան եռանդ, արիութիւն ու անձնազոհութիւն, այնքան ռազմական ու ռազմագիտական կորով եւ տաղանդ, որ հակառակորդը չչմեցաւ-միանգամայն անսպասելի էր իրեն համար-չչմեցաւ նաեւ Զարիքը նիւթող ցարական կառավարութեան»[2]:

[1] Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 361:
[2] Նույն տեղում:

1.3. ԳԵՆԵՐԱԼ ԱԼԻԽԱՆՈՎ-ԱՎԱՐՍԿՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ ՏԵՐ-ՍԱՀԱԿՈՎԻ ԱՀԱԲԵԿՈՒՄՆԵՐԸ, ԴՐՈՆ ՀԻՆ ԲԱՔԱԶԵՏՈՒՄ

Անդրկովկասում ավարտվում են գրեթե երկու տարի տեւողությամբ ընթացող հայ-թուրքական ընդհարումները, բայց նրան վիճակված չէր ապրելու խաղաղ կյանքով: Փոքր-ինչ տեւած «խաղաղ կյանքից» հետո Դրոն Մարտիրոս Զարուխյանի հետ անցնում է Բաքու, տեղի ՀՅԴ կենտրոնական կոմիտեի տրամադրության տակ: Այդ ընթացքում նրանց կյանքում կատարված ամենահիշարժան ու պատասխանատու գործը ցարական բանակի գեներալ, Նախիջեւանի թուրք Ալիխանով-Ավարսկու ահաբեկումն էր:

Վրաստանի Գուրիայի շրջանի գյուղացիական հուզումները դաժան միջոցներով խեղդելու պատճառով վրաց հեղափոխականները որոշել էին մահվան դատապարտել մարդակեր գեներալին: Ալիխանով-Ավարսկին ուղղակիորեն նպաստել էր նաեւ Նախիջեւանի հայերի կոտորածների կազմակերպմանը:

Վրաց հեղափոխականների կողմից գեներալին սպանելու մի քանի անարդյունք փորձերից հետո, Դաշնակցությունը վճռում է իր ուժերով իրագործել այդ օրերին Ալեքսանդրապոլի նահանգապետի գահին բազմած Ալիխանով-Ավարսկուն:

Ո՞ւմ պիտի վստահեին իրականացնելու գեներալին ահաբեկելու դատավճիռը: Հ.Յ.Դաշնակցության Բաքվի Ոսկանապատի կենտր. կոմիտեի եւ անձամբ Նիկոլ Դումանի վճռով գեներալի ահաբեկման գործը հանձնարարվում է Դրոյին եւ Մարտիրոսին:

Այդ մասին Դրոն Ս. Վրացյանին պատմել է, որ իր համաձայնությունը ստանալու նպատակով, իրեն կանչել են ՀՅԴ Ոսկանապատի կենտրոնական կոմիտեի անդամներ Ա. Գյուլխանդանյանն ու Գրիգոր Աղաջանյանն ու հարցրել. «Ուզո՞ւմ ես դու կատարես այդ պարտականությունը»:

-Ի հարկէ, ուզում եմ, այդ ինչ հարցնելու բան է:

-Ո՞ւմ հետ ես ուզում գնալ, երկու հոգով պէտք է անէք:

- Ի հարկէ Մարտիրոսի, այդ ի՞նչ հարցնելու բան է:

- Ուրեմն գնացէք պատրաստուեցէք, որ շուտով ճանապարհ ընկէք:

Դրոն շտապում է Մարտիրոսի մոտ ու նրան հայտնում իրենց համար չափազանց բաղձալի Ոսկանապատի կենտր. կոմիտեի վճիռը:

«Մարտիրոսը խենթի պէս վեր թռաւ տեղից, փաթաթուեց վզիցս եւ սկսեց քաշքշելով ինձ, վալս պարել:

-Թո՛ղ ինձ. վերջ տուր յիմարութեանդ, բարկացայ ես:

-Ուռա՜, կեցցե՛ Հայաստան, պոռաց նա...

Երբ հանգստացաւ, նստեցինք խորհրդակցութեան. Մարտիրոսը խնդրեց՝

-Նիկոլի կարծիքը ի՞նչ է, նա էլ համամիտ է Ալիխանովի գործին:

Պարզ էր, որ Նիկոլ Դումանը գլխաւոր դատախազն էր Ալիխանովի»[1]:

Ստանալով «Ոսկանապատ» - ի զինակիցների օրհնութիւնը՝ երկու ընկերները անցնում են Դիլիջան, ապա Ղարաքիլիսա, ու խնձորներով լեցուն ճամպրուկի մէջ տեղավորելով ռումբերն ու ատրճանակները՝ մեկնում են Ալեքսանդրապոլ:

Ալիխանով-Ավարսկու սպանութեան կապակցութեամբ Դրոն պատմել է հետեւեալը. «...Ալեքսանդրապոլում ունէինք Աւոյի հասցէն՝ բանաստեղծ Աւետիք Իսահակեանի, որ ՀՅԴ Քարի (Ալեքպոլ) կենտր. կոմիտէի անդամ ու ներկայացուցիչ էր:

- Ինչ էք ուզում ինձանից, ինչո՞ւ էք եկել, - հարցրեց նա...

Մենք յանձնեցինք նրան կարմիր կնիքով թուղթը, որ հրահանգում էր «ամէն աջակցութիւն ցոյց տալ» մեզ, եւ պատմեցինք Ալեքսանդրապոլ մեր գալու նպատակը:

Աւոն սարսափահար բացականչեց.

- Ես ոչինչ չեմ կարող անել, հեռացէք այստեղից, շուտ...

Մարտիրոսը բարկացած ասաց.

- Ո՞նց թէ հեռացէք... մենք Դաշնակցութեան գործով ենք եկել...

- Հեռացէք, կորէք, ես դաշնակցական չեմ... գործ չունեմ ձեզ հետ: Ռադ եղէք:

Ես Աւոյին ծանօթ էի, գիտէի նրա վախկոտ բնաւորութիւնը: Կէս-լուրջ, կէս-կատակ ասացի նրան.

- Ուրեմն, այդպէս, դաշնակցական չես... նշանակում է՝ սխալուել ենք յայտնելով Ձեզ մեր գաղտնիքը... Ցեղափոխական օրէնքով պէտք է այժմ սպանենք Ձեզ, որպէսզի մեզ չմատնէք...

- Կանէք, կանէք, շան տղերք, էդ էլ կանէք, - արտասանեց նա նոյնպէս կէս-լուրջ, կէս-կատակ...

Բայց եւ այնպէս մերժեց մեզ օգնել եւ ջանաց համոզել, որ անմիջապէս հեռանանք... Եւ զամբիւղները մեր ձեռքը տալով՝ ճամփու դրեց՝ դուռը պինդ փակելով մեր յետեւից»[2]:

[1] Վրացեան Ս. Մրրկածին Դրոն, էջ 51-52:
[2] Նոյն տեղում, էջ 53-54:

Զրկվելով Իսահակյանի աջակցությունից՝ Դրոն եւ Մարտիրոսը առանձին-առանձին շրջում են քաղաքում եւ զգուշորեն տարբեր միջոցներով աշխատում տեղեկություններ հավաքել: Նրանց հաջողվում է պարզել, որ Ալիխանով-Ավարսկին պատրաստվում է մեկնել Կարս:

«...Կարճ խորհրդակցութեան մէջ, - շարունակում է Դրոն,- որոշւում է անմիջապէս ձեռնարկել գործը: Մարտիրոսը պնդում է, որ ռումբը ինքը նետէ, Նակաշիձէի վրայ Դրօն էր նետել, ուրեմն այժմ առաջնութիւնը իրեն է պատկանում: Դրօն տեղի է տալիս...

...Փողոցներում իրարանցում, սուլոց, ոստիկանների թոհ ու բոհ... անցորդները շտապում են հեռանալ կողքի փողոցները: Զօրաւարը հպարտ բազմած կառքում եւ խուզարկու աչքերով դիտում է շրջապատը:

Մէկ էլ, ստուերի միջից դուրս է թռչում Մարտիրոս Զարուխեանը, բացականչում է «առ քեզ» ու ռումբը շպրտում Ալիխանովի գլխին: Ահռելի պայթիւն: Կառքը եւ կառքի միջինները բզիկ-բզիկ են լինում:

Անդին՝ որոտում է Դրոյի մաուզէրը: Ընդհանուր խուճապի մէջ ահաբեկիչներն անհետանում են»[1]:

Գեներալ Ալիխանով-Ավարսկու ահաբեկումը երկու տարի առաջ իրականացված Նակաշիձեի սպանության նմանությամբ ցնցող տպավորություն է գործում բովանդակ Կովկասում: Ամենքը կարծում էին, որ գեներալի սպանությունը, ի պատասխան Գուրիայի արյունալի դեպքերի, վրաց հեղափոխականների գործն է:

Դրոն, օգտվելով տարածված այդ կեղծ լուրերից, անարգել անցնում է Բաքու եւ հաջորդ տարին այնտեղից մեկնում Հայաստան եւ 1908 թ. ամռանը Երեւանում կազմակերպում Երեւանի նահանգի ոստիկանապետ, հայ հեղափոխական գործիչների նկատմամբ թշնամանքով տրամադրված Տեր-Սահակովի սպանությունը:

Այս առնչությամբ ուշագրավ հիշողություններ է պատմում Ս.Վրացյանը, որն, ի դեպ, Դրոյի հետ ծանոթացել է Տեր-Սահակովի ահաբեկումից մի քանի օր առաջ, Բաքվում: Ս. Վրացյանը որպես Պետրոգրադի ուսանողության ներկայացուցիչ եկել էր Բաքու՝ մասնակցելու այդ օրերին այնտեղ գումարվող Հ.Յ.Դաշնակցության Ռայոնական ժողովին: Երբ ավարտվում է Ռայոնական ժողովը, Ս.Վրացյանը Երեւան վերադառնալիս երկաթուղային կայարանում

[1] Նույն տեղում:

պատահաբար հանդիպում է Դրոյին եւ երկուսով միասին միեւնույն վագոնով գալիս են Երեւան: Դրոն այդ ժամանակ ստացել էր Երեւան վերադառնալու եւ Տեր-Սահակովին ահաբեկելու հրահանգը, որի մասին նա բնականաբար որեւէ մեկին իրավունք չուներ հայտնելու: Երեւանում հանդիպելով տարբեր մարդկանց, Ս. Վրացյանն, այնուամենայնիվ, նկատում է նրանց եւ Դրոյի գաղտնի ու խորհրդավոր հանդիպումներն ու խոսակցությունները:

«Դրոն անհետանում էր չգիտեմ ուր եւ շարունակում իր խորհրդաւոր կեցուածքը:

... Մի օր էլ Դրոն յայտնեց, թէ պէտք է երթայ Իգդիր ծնողներին տեսնելու: Ես էլ վերջացրել էի Երեւան գործերս եւ պիտի անցնէի Էջմիածին: Ճանապարհեցինք միասին...

Էջմիածնում բաժանուեցինք: Ես տեղական ընկերների հետ, զբաղուեցի կազմակերպական գործերով: Դրոն, իր ասելով, երեկոյան պիտի հասնէր Իգդիր:

Յետոյ իմացա, որ Իգդիր իմ աչքին թոզ փչել է եղել: Էջմիածինում ինչ-որ անելիք ունէր եւ անմիջապէս վերադարձել էր Երեւան: Իսկ մի քանի օր անցած՝ Երեւանից ստացուեց ցնցող մի լուր:

Օրը ցերեկին, քաղաքի կենտրոնում, Շահնազարովի դեղատան առջեւ, մայթի վրայ, շանսատակ ընկել էր ոստիկանապետ Տէր-Սահակովը: Ահաբեկիչը ազատ էր:

... Նահանգապետ Տիզենհաուզէնի հաւատարիմ շունը ամէն տեղ յայտարարում էր, թէ իր ջանքերով այլեւս Երեւանում ոչ մի յեղափոխական չէր մնացել...

Երեւանից մենք բաժանուեցինք: Կուսակցութեան որոշումով հակառակ իր կամքի, Դրոն հեռացաւ Կովկասից»[1]:

Ցարական իշխանությունները դաժան հալածանք են սկսում Հ.Յ.Դաշնակցության գործիչների դեմ: Մի՞թե ցարիզմը կարող էր մոռացության մատնել Անդրկովկասում իր հայաջինջ քաղաքականության տապալման գլխավոր «մեղսագործներին»: Ոստիկանության հալածանքներից խուսափելով՝ շատերն անցնում են արտասահման, իսկ Դրոն, օգտվելով Թուրքիայում հռչակված «սահմանադրության» իրավունքներից, վաճառական Սուրեն էֆենդի կեղծանունով անցնում է Հին Բայազետ եւ զբաղվում քարյուղի, շաքարի ու ցորենի առեւտրով:

[1] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Դ, 1965, էջ 160-161:

Հին Բայազետում կեղծանունով վաճառականությամբ զբաղվելը նրա համար պարզապես հուսալի միջոց էր իշխանությունների տեսադաշտից թաքցնելու իր բուն գործունեությունը:

Համաձայն նրա գործունեությունը ներկայացնող Հ.Յ. Դաշնակցության Կենտրոնական Արխիվում (ՀՅԴ ԿԱ, ԱՄՆ Բոստոն) վավերագրի՝ Դրոն որպես բնակության վայր ընտրել է ընտրել Հին Բայազետը Ռոստոմի խորհրդով: Եթե կարողանար որպես վաճառական հաստատվել Հին Բայազետում, ապա այդ քաղաքից նա վաճառականի անվան տակ կարող էր համեմատաբար ավելի դյուրին ուղիներով կապեր ու հարաբերություններ հաստատել Երեւանի նահանգի եւ Վան-Վասպուրականի ՀՅԴ կառույցների հետ: Բացի դրանից, Դրոյի հայրը՝ Մարտիրոս Կանայանը որոշակի կապեր է ունեցել այդ տարածաշրջանում բնակվող ազդեցիկ քրդերի հետ[1]:

Այդ նույն վավերագրում հիշատակվում է մի ուշագրավ դեպք, որը պերճախոս վկայությունն է նրա անվրեպ նշանառուի վարպետության: Հին Բայազետ ուղեւորվելիս, Դրոն նախ գալիս է իր հայրենի Իգդիր եւ մտնում գինետուն ու գինի է պատվիրում: Պարզվում է, որ այդ պահին Դրոյին գաղտագողի հետապնդող ոստիկանության գործակալներից մեկը հետեւելով, նույնպես մտնում է գինետուն ու փորձում անաղմուկ ձերբակալել նրան: Այն պահին, երբ բարձրացնում է գինու բաժակը, նկատում է ատրճանակը ձեռքին, գինետան վերջում դռան մոտ կանգնած անծանոթ տղամարդուն ու անմիջապես զգում իրեն սպառնացող վտանգը: Ակնթարթորեն հետեւում է վաճառասեղանի մոտ կանգնած Դրոյի կրակոցը, եւ գլխից գնդակահարված ոստիկանության գործակալը փռվում է հատակին: Մինչ քաղաքի ոստիկանությունը կտեղեկանար կատարվածի մասին եւ կփորձեր որոնել ու գտնել իր գործակալի գնդակահարողին, Դրոն արագավազ նժույգով արագորեն հեռանում է Իգդիրից ու արդեն մոտենում Հին Բայզետին[2]:

Հաստատվելով Հին Բայազետում՝ նա նորհիվ իր հնարագիտության եւ ձեռերեցության կարճ ժամանակահատվածում կարողանում է մեծ հեղինակություն ձեռք բերել առեւտրականների եւ անգամ թուրք պաշտոնյաների ու քուրդ ցեղապետների շրջանում:

Մի փոքրիկ հատված Ավ. Ահարոնյանի կողմից Դրոյին նվիրված բնութագրից. «Հազիւ միջահասակ, կուռ ու թիկնեղ կազմուածքով,

[1] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 142, գ18, էջ 1-2:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 2:

առնական գեղեցիկ գլուխը հաստատորէն նստած կարճ պարանոցին, շատ մեղմ, գրեթէ նուրբ դիմագծերով այդ երիտասարդը ամբողջապէս իր զոյգ աչքերի մէջ է: Նրանք խորունկ են, իմացական եւ ուժեղ. իր հայեացքը դիւթիչ զօրութիւն ունի անգամ իր հանգստութեան մէջ եւ երբ մռայլւում է, յօնքերը կիտում եւ նուրբ շրթունքները ջղայնօրէն կծկում, այդ փոքրիկ մարդը դառնում է մի ահաւոր ու սաստկացող հսկայ: Իր ցասումի տարերային պոռթկումը միշտ վտանգաւոր է վասն զի երբէք առանց հետեւանք չի անցնի:

Մասնաւոր կամ մտերմական յարաբերութիւնների մէջ եւ նամանաւանդ ընկերական շրջանում անուշ, քաղցրախօս, կատակասեր էր: Նա խստասիրտ է ու անողորմ ստանձնած գործի պարտականութեան ճամբին: Անզիջող ու անվարան, յամառ եւ հետեւողական, նա դադար չի առնի մինչեւ չիրագործի թէկուզ եւ ամենաւտանգաւոր եւ մահառիթ ձեռնարկը: Ոչ մի արգելք կարող է նրան իր գծած ուղուց շեղել»[1]:

Հին Բայազետում ապրած տարիների ընթացքում ցարական ոստիկանութեան հետապնդումներից հալածված՝ Դրոյի մոտ են հանգրվանել նրա մարտական ընկերներից շատերը: Իսկ զինակիցների նկատմամբ նրա դրսեւորած վերաբերմունքը բացառիկ էր:Չի եղել մեկը, որը չարժանանար նրա հոգատար վերաբերմունքին:

Անդրադառնալով Հին Բայազետում Դրոյի գործունեության, նրա ունեցած հեղինակության ու դիրքի գնահատմանը՝ Ցապոնը (Հովհաննես Պարոնյան, Զանգեզուրյան ինքնապաշտպանական կռիվների Դրոյի մարտական զինակիցներից, որը նույնպես ցարական ոստիկանության հետապնդումներից խուսափելով՝ ապաստանել էր նրա մոտ - Հ.Գ.) վերհիշում է. «Դրօն, որ մինչեւ իմ գնալս արդէն բաւական անուն ու ազդեցութիւն էր ձեռք բերել, այդ տարիների ընթացքում աւելի առաջացաւ ու այդ շրջանի բոլոր պաշտօնեաները, գիւղապետերն ու շուկայի մարդիկ ճանաչում եւ հաշուի էին առնում Սուրէն Էֆենտիին: Իսկ մենք մեր այդ ազդեցութիւնը աշխատում էինք գործի դնել մէկ կողմից օգտակար լինելու համար մեր ցեղակիցներին, որտեղ ու ինչով կարող էինք, եւ միւս կողմից էլ տաճիկ անպարկեշտ պաշտօնէութեան առաջ պաշտպանելու հայ եւ թուրք գիւղացիների արդար գանգատը»[2]:

Հին Բայազետում նրա ծավալած արգասաբեր գործունեության իսկությունը վկայում է նաեւ Երեւանի ռուսական գիմնազիայի

[1] «Ալիք» բացառիկ, 1956, մայիս, էջ 42:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1957, թիւ 6, էջ 160:

Դրոյի դասընկեր, «Բորեաս» մարտական խմբի անդամ Տիգրան Դեւոյանը:

«Դրօն,-գրում է Տ. Դեւոյանը,- Հին Բայազէտում կարողացել էր հաստատել մեծ կապեր կառավարական բարձր պաշտօնեաների հետ: Նրա տունը ամէն օր լիքն էր հիւրերով, եւ ամէն մէկը արժանանում էր Դրոյի յատուկ ուշադրութեան եւ հիւրասիրութեան: Նա դարձել էր քիւրդերի կնքահայրը:

Երեւանի բանտից երբ ես փախայ եւ անցայ Դրոյի մօտ Հին Բայազէտ, ինձ օգնեցին սահմանն անցնելու մի քիւրդ ցեղապետ եւ մի հայ: Երբ սահմանը անցանք եւ ցեղապետը իմացաւ, որ ես Սուրէն Էֆենտիի ընկերն եմ, տարաւ իր վրանը հիւր, ոչխար մորթել տուեց եւ յետոյ ինքը տարաւ ինձ յանձնեց Սուրէն Էֆենտիին»[1]:

Համաձայն Տ. Դեւոյանի վկայության, նրանց հաջորդ հանդիպումը կայացել է տարիներ անց, Պարսկական հեղափոխության պարտությունից անմիջապես հետո, Ախթամար կղզում, Բարեկենդանի օրը: Այդ օրը Ախթամարի վանքում հավաքվածների մեջ բացի Դրոյից ու Տ. Դեւոյանից, եղել են նաեւ Նիկոլ Դումանը, որը նոր էր վերադարձել Պարսկաստանից ու Գալուստ Ալոյանը: Ախթամարի վանքում կայացած հանդիպումից հետո նրանք երկուսով վերադառնում են Հին Բայազետ:

«Ճանապարհին, - գրում է Տ. Դեւոյանը,- ես առիթ ունեցայ տեսնելու, թէ Ի՜նչ մեծարանքով քիւրդերը ամէն տեղ ընդունում էին Դրոյին: Ամէն տեղ ոչխար էին մորթում: Գիշերեցինք Իբրահիմ աղայի տանը: Առաւօտեան մօտ քսան զինուած քիւրդերով նա մեզ ճանապարհ դրեց մինչեւ Թափարիզի լեռնանցքը»[2]:

Դրոն գործուն կերպով մասնակցել է Բայազետի հայ բնակչության կյանքում տեղի ունեցող գրեթե բոլոր նշանակալի իրադարձություններին:

«Դրօն, - վկայում է Ս. Վրացյանը, - ջանք եւ նիւթական միջոցներ չէր խնայում եւ մշակութային գործերի համար. զարգ տալ կրթական գործին, տարածել հայերէն գրքեր, խրախուսել մշակութային ձեռնարկները...

Դերասան Ց. Զարիֆեանը պատմում էր, որ ինքը կազմակերպել է առաջին հայերէն ներկայացումը Հին Բայազէտում, Դրոյի տանը, Դրոյի նիւթական եւ բարոյական քաջալերութեամբ: Նա ասում էր.

[1] «Հայրենիք» ամսագիր, 1957, թիւ 9, էջ 13:
[2] Նույն տեղում, էջ 14:

- Դրոյին պետք է համարել Հին Բայազէտի հայ թատրոնի հիմնադիրը...»[1]:

Հին Բայազետում Դրոյի ծավալած գործունեության հաջողությունը իր նամակներից մեկում հաստատում է նաեւ Ռոստոմը:

«Դրոն,- նշում է Ռոստոմը,- Բայազէտ է. մեծ վաճառական է դարձել: Լաւ գործ է կատարում»[2]:

Թեպետ Հին Բայազետում ապրած տարիներին, նա վաճառականությունից զատ գործուն մասնակցություն է ունեցել քաղաքի մշակութային կյանքի եւ այլ ոլորտներում կատարվող իրադարձություններին, այնուամենայնիվ, նրա գործունեության հիմնական ուղենիշը զենք ու զինամթերքի տեղափոխությունն էր Արեւմտյան Հայաստան, առավելապես Վան-Վասպուրական:

Սկսած 1908 թվականից, Հ.Յ.Դաշնակցության Երեւանի, Թիֆլիսի, ՀՅԴ Բաքվի կենտրոնական կոմիտեների հեղափոխական գործիչները կապը Երկրի, մասնավորապես Վասպուրականի, Տարոնի, Բիթլիսի եւ Շատախի հետ իրականացնում էին նաեւ Դրոյի միջոցով:

Վաճառական Սուրեն էֆենդին գաղտնի ուղիներով սերտ կապեր է հաստատում Ռոստոմի, Արամի եւ Իշխանի հետ:

Ինչպես հայտնի է 1905-1906 թթ. Անդրկովկասում ծավալված հայ-թուրքական ընդհարումներից հետո ցարական իշխանությունները դաժան հալածանքներ ու բռնություններ սկսեցին իրականացնել Հ. Յ. Դաշնակցության ու նրան համագործակցող անձանց նկատմամբ: Ցարական ոստիկանությունը հակապետական գործունեության շինծու մեղադրանքով ոչ միայն աքսորավայրերն էր ուղարկում հարյուրավոր դաշնակցականների, այլեւ իր գործակալների միջոցով աշխատում էր բացահայտել ու բռնագրավել ՀՅԴ զինապահեստները: Այդ ժամանակահատվածում Դաշնակցության առջեւ ծառացած ռազմավարական կարեւորագույն խնդիրներից մեկը Անդրկովկասի տարբեր վայրերում գտնվող զինապահեստներում ամբարված զենք ու զինամթերքի փոխադրումն էր Արեւմտահայաստան: Զենքերի տեղափոխման գործուն երթուղիներից մեկը շնորհիվ Դրոյի անցնում էր Հին Բայազետով:

ՀՅԴ զինապահեստների, եթե կարելի է այդպես անվանել, գլխավոր պահեստապետ-պատասխանատուն եղել է Նիկոլ Դումանը եւ նա է կազմակերպել Երկիր տեղափոխվող զենք ու զինամթերքի առաքման գործը:

[1] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Դ, 1965, էջ 160-161:
[2] Ռոստոմ, 1979, էջ 188:

Իր Մեծն ուսուցչից՝ Նիկոլ Դումանից եւ միաժամանակ անձնական միջոցներով ձեռք բերած զենքն ուզինամթերքիտեղափոխության գործը հաջողությամբ կենսագործելու համար, Դրոն «...կազմակերպել էր կայարանները, գործի դրել երիտասարդ կամ հին փորձառած հայդուկներ եւ անձամբ հետեւում էր նրանց գործունեությեան: Պարբերաբար զեկուցումներ էր ուղարկում Կարին, Հայաստանի Բիւրոյի հատուածին, Ռոստոմի միջոցով: Ամէն անգամ, զեկուցում ստանալիս, Ռոստոմը սիրով խոսում էր Դրոյի մասին, որին շատ բարձր էր գնահատում»[1]:

Քարյուղի, շաքարի բեռների միջոցով Դրոն կազմակերպում է զենքի ու զինամթերքի առաքումը Վանի եւ Լեռնապարի շրջանների Հ.Յ. Դաշնակցության կոմիտեներին: Ահա մի հատված Կովկասից Արեւմտահայաստան զենք ու զինամթերք տեղափոխելու գործողության մասնակից խմբապետ Ասլանի (Ասլան Ստեփանյան) հուշերից.

«Սուրէնը նոյն ինքը Դրօն էր, որ յատուկ գործերով հաստատուել էր Բայազէդում, ծպտուած՝ իբրեւ նաւթի ու շաքարի առեւտրական, Սուրէն ծածկանունով: Սուրէնն ամբողջ երեք օր մեզ պահեց իր մօտ, անհրաժեշտ ցուցմունքներ տուեց եւ մեր տարած զէնքերը զետեղելով շաքարի հակերի մէջ, իր յեօթ ընկերների հետ ճամբու դրեց Վան՝ ինձ պահելով իր մօտ...

...Հանգստիս» տասներորդ օրը լրացել էր, երբ Սուրէնն ինձ ուղարկեց Իգդիր, ասելով.

- Դէ գնա, հերիք է հանգստացար, զէնքերն արդէն պատրաստ են Իգդիրից Բայազէդ եւ ապա Վան փոխադրելու համար:

1912 թ. մայիս -1914 թ. մայիս, Սուրէնի մօտ մնացի, Իգդիր-Բայազէդ գծով դէպի Վան կուսակցական զէնք ու ռազմամթերք փոխադրելու գործի մէջ»[2]:

Նրա գործունեության Բայազետյան շրջանը ներկայացնող փաստաթղթերն ու վկայությունները մատնանշում են, որ նա, Հին Բայազետում ապրած տարիներին, իրեն դրսեւորել է որպես շնորհալի, տաղանդավոր առեւտրական: Աստիճանաբար ընդլայնելով գործունեության շրջանակները, նա կարողացել է սերտ կապեր հաստատել նահանգի բարձրաստիճան պաշտոնյաների, քուրդ ցեղապետերի եւ բազմաթիվ առեւտրականների հետ: Շնորհիվ իր գործարարության եւ հաստատած կապերի, նա կարողանում է առավել հեշտությամբ

[1] Վրացեան Ս., Մրրկածին Դրոն , էջ 72:
[2] «Ալիք», բացառիկ, 1956, մայիսի 4, էջ 76-77:

եւ արդյունավետությամբ մեծ քանակությամբ ապրանք տեղափոխել իր ուզած վայրերը, մասնավորապես Վասպուրական:

«Այդ ընթացքում,- գրում է, - խմբապետ Ասլանը, - այնքան էի մտերմացել նրա ընտանիքի հետ, որ ամեն անգամ Իգդիր հանդիպելիս, Դրոյի հայրը՝ Կակօն ասում էր.

- Այ տղայ, ախր էն մեր տղան ինձ ի՞նչի մի երկու տող չի գրում:

Դրոյի քրոջ ամուսինը՝ Հայրապետ Լալաեանը հարցնում էր.

- Անվերջ ապրանք է ուզում, էդքան ապրանքը սպառո՞ւմ է»[1]:

Տվյալ ժամանակահատվածում Դրոյի գործունեությունը գլխավորապես ուղղված էր զենքերի տեղափոխման իրագործմանն ու Արեւմտահայաստանի ինքնապաշտպանության կազմակերպմանը: Վաճառական Սուրեն Էֆենդու ապրանքների պարկերով Վան եւ Լեռնապարի շրջան տեղափոխվող զենքն ու զինամթերքը ծառայելու էր հենց այդ նպատակին:

Հ.Յ.Դաշնակցությունը նույնիսկ երիտթուրքերի սահմանադրության հռչակումից հետո իր գործունեության տեսադաշտից որոշակիորեն պահպանել է հայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու կարեւորագույն խնդիրը: Այս առումով ուշագրավ է Ռոստոմի 1914 թ. ապրիլի 2-ին թվագրված նամակը՝ հասցեագրված Ս. Վրացյանին. «... Դուք՝ ամերիկացիներդ ի զուր էք կարծում, թէ մենք խրուել ենք դպրոցական գործի մէջ եւ ինքնապաշտպանութեան համար ոչինչ չենք անում: Բացարձակ կերպով սխալ է այդ: Դպրոցը՝ իր հերթին, բայց մեր գլխաւոր մտահոգութիւնը ժողովրդի ֆիզիքական գոյութեան պահպանութիւնն է: Գիտես՝ ինչ օրեր ենք ապրում: Պոլսեցիք տարուած են բարենորոգումների յուսով եւ պարլամենտարիզմով: Երանի հաւատացելոց: Այդ բոլորը լաւ, բայց մեր յոյսը պէտք է մեր վրայ դնենք: Ամերիկայի ընկերները թող վստահ լինեն, որ մենք էլ իրենց պէս ենք մտածում եւ եթէ կարող են ինքնապաշտպանութեան գործին օգնել, թող փող չխնայեն: Դրօն Բայազէդում, Արամը Վանում, Փիլոսը եւ մենք մի քանի ընկերները այդ գործին են լծուած: Ցաւալին այն է, որ միջոցները պակաս են, մեր հարուստները գրպանները պինդ փակել են, իսկ աղքատ ժողովուրդը ինչ կարող է անել: Հայ հարուստը հոգին կը տայ, բայց փող չի տայ. չեն մտածում, որ վաղը թշնամին հոգին էլ կառնէ, փողն էլ»[2]:

[1] Նույն տեղում:
[2] «Ռոստոմ», 1979, էջ 188:

Դրոն Հին Բայազետում մնում է մինչեւ առաջին աշխարհամարտի բռնկումը: Նա Հայոց ազատամարտի այն եզակի գործիչներից է, որը շնորհիվ իր ձեռներեցության եւ թուրք պաշտոնյաների ու քուրդ ցեղապետերի շրջանում ունեցած հարգանքի եւ հեղինակության, մինչեւ առաջին աշխարհամարտը որեւէ հալածանքի չի ենթարկվել իշխանությունների կողմից: Իսկ մինչ այդ, հատկապես 1912 թ. բռնկված թուրք-բուլղարական պատերազմի հետեւանքով թուրք իշխանությունները պատրվակ ծառայացնելով Անդրանիկի ու Գարեգին Նժդեհի գլխավորությամբ բուլղարական բանակի կազմում իրենց զորքերի դեմ կռվող ընդամենը 270 զինվորներից բաղկացած մարտախմբի առկայության փոստը, ավելի են ուժեղացնում վերահսկողությունը հանրահայտ գործիչների նկատմամբ: Այդ կարգավիճակը թեպետ Դրոյին չի վերաբերվում, սակայն պատերազմի նախօրեին նկատելիորեն փոխվում է իշխանությունների վերաբերմունքը նաեւ նրա նկատմամբ:

«...Բերկրիի մէջ, - գրում է Վ. Փափազյանը (Կոմս), - հանդիպեցայ Հայաստանցի պետերէն Մէհմէտ Սատը՝ մեր վաղեմի եւ հաւատարիմ բարեկամին, ըսաւ թէ կառաւարութիւնը գաղտնի հրահանգ է տուած սպանելու «Սուրեն էֆենդին»[1]:

Վ.Փափազյանը Հին Բայազետում Դրոյին հյուրընկալվելիս, որպես պաշտոնական անձ(Վ. Փափազյանը թուրքական պառլամենտի (Մեջլիս) անդամ էր-Հ.Գ.) այցելել է նաեւ գավառապետին(գայմագամ), որի հետ, ի թիվս մի շարք հարցերի, գայմագամը հետաքրքրվել է նաեւ Դրոյով:

«...գիտեր, որ Դրոյի քով եմ իջած ու նենգ արտահայտութեամբ մը հարցուց, որ՝ շատո՞նց է կը ճանչնայի «Սուրէն էֆենդին»: Ըսի, թէ Կովկասի յայտնի առեւտրականներէն է եւ օգտակար կրնայ լինել այս շրջաններուն: «Այո, պատասխանեց նա քմծիծաղով մը, վաճառական ըլլալու համար դեռ շատ ջահել է»[2]:

Գավառի թուրք պաշտոնյաների ու սպաների կողմից իր նկատմամբ դրսեւորած բարյացակամ վերաբերմունքի կտրուկ փոփոխությունը չէր կարող վրիպել նրա ուշադրությունից:

Այդ ժամանակ Կովկասում արդեն ծավալվում էր կամավորական շարժումը, որի մասին Դրոյին, ըստ Յապոնի, նրան նամակով տեղեկացրել էր Աբրահամ Գյուլխանդանյանը:

[1] Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. 2, Պէյրութ, 1952, էջ 285-286:
[2] Նույն տեղում:

Միաժամանակ Ա.Գյուլխանդանյանը հայտնում է, որ «...ամէն հնար գործ դնենք Թիֆլիս գալու, ուր հայ կամաւորական խմբեր էին կազմւում, եւ կառավարութիւնը ներում էր խոստանում բոլոր նրանց, որոնք կը համաձայնէին մտնելու այդ խմբերի մէջ: Որքան էլ գրողը մեզ լաւ ծանօթ էր, այնուամենայնիւ, ոչ մի քայլ առինք, մինչեւ որ ստացանք երկրորդ նամակը, նոյն բովանդակութեամբ: Այստեղ արդէն որոշեցինք, որ Դրօն անմիջապէս անցնի Թիֆլիս...»[1]:

Համաձայն Ս. Վրացյանի հավաստման, մի թուրք սպայից տեղեկանալով իրեն սպառնացող վտանգի մասին, Դրոն վաղօրոք իր ընտանիքը փոխադրում է Կովկաս, ապա հնարամտորեն կարողանում է մոլորեցնել թուրք պաշտոնյաներին, նժույգին նստած հանգիստ դուրս գալ քաղաքից եւ իր բարեկամ քրդերի աջակցությամբ անվտանգ հասնում Իգդիր[2]:

Ցապոնի տեղեկացմամբ՝ «Գնալուց առաջ նա այցելեց Բայազէտի միւթասարէֆին(քաղաքագլուխ) ու ասաց, որ որոշել է մի շաբաթով անցնել Թիֆլիս եւ Կովկասի ու առհասարակ Ռուսաստանի մասին ճշգրիտ տեղեկութիւններ հաւաքել ու վերադառնալ Բայազէտ:

Միւթասարէֆը, ինչ ասել կուզի, հաւատացել էր եւ շատ հաւանել Դրոյի մտքին:

Անցէք Թիֆլիս, Սուրէն Էֆենդի,- ասել էր նա,-ամէն ինչ իմացէք, մանաւանդ էդ զալում ռուսների մասին, նրանց մտմտուքի, ծրագիրների մասին ու էլ յետ դարձէք...Այստեղ գործ շատ կունենանք, Պոլսից հրահանգներ ունենք...

Միւս օրը Դրօն ճանապարհուեց Թիֆլիս»[3]:

---

[1] «Հայրենիք» ամսագիր, 1941, մայիս, էջ 169:
[2] Վրացեան Ս., Մրրկածին Դրոն, էջ 74-75:
[3] Համլետ Գեւորգյան, Յապոնի(Հովհաննես Պարոնյան) գործը եւ հուշերը, Երեւան, 2012, էջ 181-182:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ: ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ, ԴՐՈՆ ՀԱՅԿԱԿԱՆ 2-ՐԴ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԶՈՐԱԽՄԲԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

2.1. 2-ՐԴ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ, ԿԱՎՐԵ - ՇԱՄԵԻ ԿՌԻՎԸ

Բռնկվում է առաջին համաշխարհային պատերազմը, եւ Դրոն հաջողությամբ ազատվելով Հին Բայազետում իրեն սպառնացող անխուսափելի կործանումից, գալիս է իր հայրենի Իգդիր, ապա Թիֆլիս, ուր այդ օրերին հայրենիքի ազատագրության բուռն ձգտումներով համակված՝ կենտրոնանում էին Հայոց ազատամարտի բովում թրծված բազում համբավավոր ռազմիկներ:

Գալիք ռուս-թուրքական պատերազմը եւ համայն Ռուսիայի տիրակալ Նիկոլայ 2-ի ու Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի «Հայաստանն ազատագրելու» խոստումները հայության շրջանում արդեն պարարտ հող էին նախապատրաստել կամավորական շարժման ծավալման համար:

Հայկական կամավորական շարժման, զորախմբերի կազմավորման եւ ընդդեմ Օսմանյան կայսրության նրանց մասնակցության վերաբերյալ հայ պատմագիտության մեջ եղել են եւ մինչեւ օրս զարգացվում են ոչ միանշանակ, երբեմն իրարամերժ տեսակետներ:

Ո՞վ էր կամավորական շարժման նախաձեռնողն ու կազմակերպիչը: Եթե հայ ազգային-քաղաքական կազմակերպություններից ամենահզորն ու հեղինակավորը Հ. Ց. Դաշնակցությունն էր, բնականաբար այդ առաքելությունն առավելապես պիտի վերագրել նրան: Բայց արդյոք դա՞ է ճմարտությունը եւ որքանո՞վ է այն համապատասխանում իրականությանը:

Բռնկվելու էր իր ընդգրկումներով ու ուժգնությամբ նախադեպը չունեցող պատերազմ: Հարց է ծագում. ինչպիսի՞ն պիտի լիներ հայ ժողովրդի կողմնորոշումն ու վերաբերմունքը, նրա ազատագրական պայքարի ղեկն ստանձնած ՀՅԴ դիրքորոշումը, ռազմավարությունն ու մարտավարությունը պատերազմի բռնկման պարագայում:

Որեւէ գաղտնիք լինել չէր կարող. քանի որ Ռուսաստանն ու Թուրքիան ընդգրկված էին երկու թշնամի, հակոտնյա ռազմաքաղաքական խմբավորումների՝ Անտանտայի ու Գերմանիայի գլխա-

վորած եռյակ միության կազմում, ապա պատերազմի բռնկման պարագայում Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ ծավալվող պատերազմական գործողություններն անտարակույս ընթանալու էին Կովկասյան ռազմաճակատում, իսկ դա նշանակում է, որն կռիվները տեղի էին ունենալու նաեւ Արեւմտյան Հայաստանի ու հայաբնակ բազմաթիվ այլ բնակավայրերի տարածքներում:

Բնական է, որ պատրաստվելով պատերազմի, հակամարտող կողմերը՝ Ռուսաստանն ու Թուրքիան առաջնորդվելով իրենց ռազմական եւ աշարհաքաղաքական շահերով, պիտի հետամուտ լինեին շահել հայության ու նրան առաջնորդող ազգային-քաղաքական կուսակցությունների աջակցությունը:

Ինչպիսին պիտի լիներ հայության ու հայ ազգային-քաղաքական կուսակցությունների կողմնորոշումն ու վերաբերմունքը պատերազմող կողմերի, այն է՝ Ռուսաստանի եւ Թուրքիայի նկատմամբ:

Վաղ թե ուշ բռնկվելու էր պատերազմն ու հայությունն անխուսափելիորեն կանգնելու էր երկընտրանքի առջեւ. ի՞նչ էր անելու հայ երիտասարդությունը, պիտի զորակոչվեր օսմանյան բանակ, թե՞ խուսափեր ծառայությունից:

Առաջին աշխարհամարտի նախօրեին՝ 1914 թ. հուլիսին Էրզրումում կայանում է ՀՅԴ հերթական 8-րդ Ընդհանուր ժողովը, որը պիտի քննարկեր ու իր հաստակ դիրքորոշումն արտահայտեր այդ խնդիրների նկատմամբ:

Ընդհանուր ժողովում ի թիվս մի շարք որոշումների, որոնք վերաբերում էին Թուրքիայի, այն է՝ երիտթուրք կառավարության հետ շարունակվող հարաբերություններին, Արեւմտյան Հայաստանում իրականացվող ռեֆորմներին ու բարենորոգումներին, ազգային հաստատությունների ձեւավորման, ընդունվում է նաեւ համապատասխան որոշում զինվորական ծառայության վերաբերյալ[1]:

Այդ հարցի կապակցությամբ ժողովը ընդունում է «...յուրաքանչյուրը պարտավոր է կատարել իր քաղաքացիական պարտքը պետության հանդեպ»[2]:

Համաձայն այդ որոշման, պատերազմի դեպքում հայությունը պիտի պահպաներ չեզոքություն: Օսմանյան կայսրության հպատակ, նրա քաղաքացին համարվող հայը պիտի զորակոչվեր ու ծառայեր թուրքական բանակում, իսկ ցարական կայսրության հայ քաղաքացին՝ ռուսական բանակում:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 88, թ. 1-4:
[2] Նույն տեղում, թ. 4:

Կարելի է ասել, որ պատմական հիշյալ ժամանակահատվածում այդ որոշումը թերեւս, միակ հնարավոր իրատեսական որոշումն էր՝ պայմանավորված հայ ժողովրդի ու նրան առաջնորդող կազմակերպությունների իրական կացությամբ ու հնարավորությամբ, որը բացառում էր կողմնորոշումը դեպի Ռուսաստան կամ Թուրքիա:

Ժողովի մասնակիցներից թերեւս միակը եղել է Ռուբեն Տեր-Մինասյանը , որն արտահայտել է յուրահատուկ ու բոլորի համար խիստ տարօրինակ ու անսպասելի առաջարկություն:

Ս. Վրացյանի վկայությամբ՝ «Ռուբեն Տէր- Մինասեանը, Տարօնի ներկայացուցիչ, առաջարկեց կամաւորական խումբեր կազմել թուրք բանակի կողքին ռուսների դէմ, բայց այդ միտքը այնքան տարօրինակ թուաց, որ նոյնիսկ քուէարկութեան չդրուեց»[1]:

Ընդհանուր ժողովն արդեն ավարտվել էր, երբ Էրզրում են ժամանում երիտթուրքական կուսակցության ազդեցիկ գործիչներ Բեհաեդդին Շաքիրի ու Նաջի բեյի գլխավորած թուրք կառավարության պատվիրակությունը՝ բանակցելու ժողովի մասնակիցների հետ: Քանի որ Ընդհանուր ժողովն արդեն ավարտվել էր, թուրք պատվիրակները բանակցում են ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչներ Ռոստոմի եւ Վռամյանի հետ:

Երիտթուրքերի ներկայացուցիչներն անթաքույց տեղեկացնում են, որ Թուրքիան պատերազմելու է Ռուսաստանի դեմ եւ առաջարկում են, որ Դաշնակցությունը կովկասյան մյուս ազգությունների համագործակցությամբ ռուսական բանակի թիկունքում ապատամբություն բարձրացնի եւ կազմակերպի կամավորական խմբեր ու օգնի թուրքական բանակին: Թուրքական կողմը խոստանում էր, որ եթե հայերը ընդունեն իրենց առաջադրած պայմանները, ապա պատերազմի հաղթական ավարտի դեպքում Թուրքիայի հովանու ներքո կստեղծեին ինքնավար Հայաստան[2]:

Կ. Սասունու բնութագրմամբ՝ «Թուրքերը կուզէին, որ մենք ապստամբինք Արարատեան Հայաստանի մէջ, գործենք ռուսական բանակի կըռնակին, բացի օրինական զինուորներէ, կամաւորական գունդեր կազմակերպենք...»[3]:

Հ.Յ. Դաշնակցությունը, ինչպես արդեն նշվել է, 8-րդ Ընդհանուր ժողովում զինվորական ծառայության մասին ընդունել էր համա-

[1] Վրացան Ս., Կեանքի ուղիներով, Հ. Գ, Պէյրութ, 1963, էջ 9:
[2] Նույն տեսչղում, էջ 10:
[3] Սասունի Կ., Տաճկահայաստանը ռուսական տիրապետութեան տակ (1914-1918), էջ 22:

պատասխան որոշում եւ հիմք ընդունելով հենց այդ որոշումը՝ փորձել է Թուրքական կողմին համոզել, որ «Թուրքիան պատերազմին չմասնակցի, մնա չեզոք, որ Թուրքերի վարած հակահայ քաղաքականութեան հետեւանքով հնարաւոր չէ Կովկասում առաջ բերել որեւէ շարժում ի նպաստ Թուրքիայի, որ պատերազմի դեպքում հայ ժողովուրդը կը մնա օրինապահ եւ կը կատարէ իր քաղաքացիական բոլոր պարտականութիւնները...»[1]:

Երիտթուրքերի ներկայացուցիչներին, բնական է, որ չէր կարող բավարարել հայկական կողմի ներկայացրած առաջարկութիւնն ու խոստումները եւ դրանով բանակցութիւններն ավարտվում են անարդիւնք:

Չնայած այն հանգամանքին, որ Դաշնակցութիւնն ընդամենը օրեր առաջ տեղի ունեցած Ընդհանուր ժողովում ընդունել էր չեզոքութիւն պահպանելու եւ կամավորական շարժում ծավալելուց զերծ մնալու որոշում, այնուամենայնիվ, ձեռնամուխ է լինում ռուսական բանակի կազմում կամավորական զորախմբերի կազմակերպմանը:

Ինչո՞ւ եւ ի՞նչ հանգամանքների թելադրանքով Հ. Յ. Դաշնակցութիւնը հրաժարվեց պատերազմի բռնկման դեպքում չեզոքութիւն պահպանելու որոշումից եւ իր ձեռքը վերցրեց կամավորական զորախմբեր կազմակերպելու ու առաջնորդելու դեկը:

Այս առումով բավական ուշագրաւ են Հայաստանի Հանրապետութեան առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունու դատողութիւնները, որոնք ինչ-որ չափով կարող են լուս սփռել կամավորական շարժման ճիշտ արժեւորման վրա:

«Պարապ բան կը լինէր,-գտնում է Հովհ. Քաջազնունին,- հարց դնել այսօր, թէ պէտք է արդեօք ասպարէզ գային մեր կամաւորները: Պատմական երեւոյթները ունեն իրենց սեփական ու անխորտակ տրամաբանութիւնը: 1914 թուականի աշնան հայ կամաւորական խմբերը կազմուեցին եւ կռուեցին Թուրքերի դէմ, որովհետեւ չէին կարող չկռուել ու չկազմուել, սա բնական ու անխուսափելի հետեւանք էր մի հոգեբանութեան, որով սնուել էր հայ ժողովուրդը առնուազն մի քառորդ դար, մի ամբողջ սերունդ, այդ հոգեբանութիւնը պէտք է գտնէր իր արտայայտութիւնը եւ գտաւ:

Եւ Դաշնակցութիւնը չէր, որ պիտի կասեցնէր շարժումը, եթէ նոյնիսկ ցանկանար: Նա կարող էր եղած տրամադրութիւնը, ընթացք ու ելք տալ կուտակուած ցանկութիւններին, յոյսերին ու

[1] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Գ., էջ 11:

յոյզերին, կազմակերպել պատրաստի ոյժը - այդքան կարողութիւն ու հեղինակութիւն ունէր: Բայց հակառակել հոսանքին ու իր սեփական գիծը տանել անընդունակ էր, թէկուզ այն միակ պատճառով, որ Դաշնակցութիւնը ինքը՝ մասսա է, բնազդով ուժեղ, բայց գիտակցութեամբ թոյլ»[1]:

Պիտի նկատել, որ Հովհ. Քաջազնունին հայ ազգային-քաղաքական այն եզակի գործիչներից էր, որոնք զգաստանալով ու մտավախութիւն հայտնելով կամավորական շարժման հետեւանքով հայութիւնը սպառնացող ահավոր հետեւանքներից, համաձայն չէին դրա ծավալմանն ու կազմակերպմանը:

Անդրադառնալով կամավորական շարժման ծավալման պատճառներին՝ Հայոց Ազգային Բյուրոյի կամավորական զորախմբերի (Կարգադրիչ մարմին) պետ Նիկոլ Աղբալյանը 1917 թ. սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսներին Թիֆլիսում կայացած Հայոց Ազգային համախորհրդակցութիւնում ասել է. « Կամավորական շարժման մասին դատավճիռը կարձակի ապագա հայ պատմագիրը: Իսկ մենք, որպես ականատեսներ, կարող ենք մտքեր բանացնել այդ շարժման մասին եւ ցոյց տալ մեր վերաբերմունքը: Երբ ակնհայտ դարձավ, որ Թուրքիան էլ, որպես հակառակորդ մեր դաշնակիցներին, կռվի է դուրս գալիս, այդ ժամանակ ինքնաբերաբար շարժում սկսվեց հայկական բոլոր խավերում: Կամավորներ երեւացին անգլիական եւ ֆրանսիական բանակներում: Կամավորական հոսանք սկսվեց նաեւ դեպի ռուսական բանակը: Այդ ցրիվ, անկազմակերպ շարժմանը որոշ ձեւ եւ ուղղութիւն տալու համար ծնվեց համապատասխան ազգային մարմին (նկատի ունի Հայոց Ազգային Բյուրոյի կազմում ստեղծված կամավորական գնդերի շտաբը՝ Կարգադրիչ մարմին, որի պետը ինքն էր, իսկ օգնականը՝ Սիմոն Վրացյանը - Հ.Գ.), որ իր ձեռքն առավ հայ կամավորական շարժման ղեկավարութիւնը»[2]:

Տարիներ շարունակ Թուրքական իշխանութիւնները հայ ժողովրդի նկատմամբ գործադրած իրենց դժոխային քաղաքականութեամբ ատելության եւ պայքարի այնպիսի չիկացած տրամադրութիւններ էին սերմանել, որոնք կարող էին ժայթքել առաջին իսկ հնարավորության դեպքում: Ռուսական իշխանութիւններն, անշուշտ, քաջատեղյակ լինելով հայ-Թուրք փոխհարաբերութիւննե-

[1] Քաջազնունի Յովհ., Հ.Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս, 1923, Ալեքսանդրիա, էջ 7-8:
[2] «Բանբեր Հայաստանի Արխիվների», 1992, թիւ 12, էջ 79:

ին, հայ ժողովրդի հոգեբանությանն ու ձգտումներին՝ լավագույնս օգտագործեցին այդ իրողությունը:

Պատրաստվելով Թուրքիայի դեմ պատերազմի՝ ռուսական հրամանատարությունը որոշում է հնարավորություն ընձեռել հայերին կազմավորելու իրենց կամավորական զորախմբերը, դրանով իսկ բավարարելով նրանց ազգային զգացումներն ու ձգտումները եւ երկրորդ՝ հնարավորություն տալ հայրենիքից հեռացած թուրքահպատակ հայերին վերադառնալ ու հանուն հայրենիքի ազատագրության պայքարել ընդդեմ թշնամու: Ցարական իշխանությունները ճիշտ էին գնահատել իրավիճակը:

«Այդ նկատառումներից ելնելով՝ գլխավոր հրամանատարության հովանավորությամբ եւ Ռուսիայի կայսեր համաձայնությամբ Թիֆլիսում փոխարքայի պալատում հրավիրվում է հատուկ խորհրդաժողով, որին մասնակցում են գեներալներ Միչլաեւսկին եւ Ցուդենիչը (Կովկասյան ռազմաճակատի հրամանատարն ու շտաբի պետը - Հ.Գ.), Պետերսոնը, Մեսրոպ եպիսկոպոսը (Վրաստանի հայկական թեմի առաջնորդ, Հայոց Ազգային Բյուրոյի պատվավոր նախագահ), Թիֆլիսի քաղաքագլուխ Ա. Ի. Խատիսովը, հայկական կենտրոնական կոմիտեի նախագահ Ս.Ս. Հարությունյանը եւ դոկտոր Հ. Խ. Զավրիեւը: Այդ խորհրդակցությունում հայերին առաջարկվում է կազմակերպել կամավորական խմբեր եւ նրանց հրամանատարներ նշանակել փորձված եւ հեղինակավոր առաջնորդների՝ «խմբապետեր»[1]:

Ցարիզմը հրաշալիորեն օգտագործեց հայության հակաթուրք տրամադրությունները եւ այն վարպետորեն օգտագործեց ի շահ ռուսական զենքի հաղթանակի:

«Թուրքահպատակ հայերը գերազանց գիտեին տեղանքը եւ թուրքերեն ու քրդերեն լեզուները: Ռազմավարական ու մարտավարական խնդիրները լուծելիս՝ ռուսական հրամանատարությանը հայերի առավելություններն ու կարողություններն անհրաժեշտ էր առաջին հերթին օգտագործել հետախուզության եւ տեղանքի ուսումնասիրության նպատակներով...»[2]:

Համաձայն նաեւ Նիկոլ Աղբալյանի վկայության. «Ռուսական բանակի մեջ հայ կամավորների պարտքն էր լինել օժանդակ ուժ եւ, որպես ներքին ծանոթ տարը, զբաղվել հետախուզական գործողություններով: Կամավորական շարժումն ունի երկու շրջան. սկզբից մինչեւ 1915 թ. սեպտեմբերի 1-ը եւ մյուս շրջանը մինչեւ կամավորական գնդերի լուծարումը»:

Կամավորական շարժման մանրամասների ուսումնասիրությունը միանշանակորեն ապացուցում է, որ այն կյանքի է կոչվել ցարական իշխանությունների նախաձեռնությամբ ու հովանավորությամբ, իսկ Հ. Ց. Դաշնակցությունը հանգամանքների թելադրանքով շրջանցել է Էրզրումում կայացած 8-րդ Ընդհանուր ժողովում չեզոքություն պահպանելու, կամավորական շարժում չծավալելու վերաբերյալ իր ընդունած որոշումն ու իր ձեռքն է վերցրել կամավորական զորախմբեր կազմակերպելու եւ առաջնորդելու գործը:

Այսուհանդերձ, պիտի ընդունել, որ եթե չլիներ ցարական իշխանությունների նախաձեռնությանը տված Ազգային Բյուրոյի ու Հ.Ց. Դաշնակցության համաձայնությունն ու գործուն մասնակցությունը, ապա դժվար է ասել, թե ինչպիսի լուծում էր ստանալու կամավորական խմբերի կազմավորման խնդիրը:

Այս հարցը իր վերջնական լուծումն է ստացել 1914 թ. սեպտեմբերի 21-23-ին տեղի ունեցած ՀՑԴ Կովկասի Ռայոնական ժողովում, որի օրակարգի 3-րդ կետն էր «Զեկուցում հայ կամաւորների կազմակերպման եւ յարակից խնդիրների մասին»[1]:

Այդ հարցին վերաբերող զեկուցման մեջ, Ազգային Բյուրոյի նախագահ(Մեսրոպ եպիսկոպոս) հիմնավորում է ռուսական բանակի կազմում կամավորական խմբեր կազմավորելու հիմնական դրդապատճառները, որոնցից կարելի է թվարկել.

1. Զանազան պետությունների հետ կուսակցության վարած բանակցություններն ու բարենորոգումներ չիրականացնելու թուրք կառավարության համառությունն ու չկամությունը:

2. «Ռուս կառավարութեան հետ մտքերի փոխանակութիւնից երեւում էր, որ նա, զանազան քաղաքական նկատառումներով, վճռել է տաճկահայերի դրութիւնը բարելավել, որ նրա քաղաքական կուրսը ներկայումս նպաստաւոր է տաճկահայերի համար (նկատի ունի 1913 թ. հունիսի 4-ին Մանդելշտամի ներկայացրած՝ հայկական նահանգներում իրականացվող բարեփոխումների ռուսական տարբերակը, որը նախատեսում էր հայկական վեց՝ Էրզրում, Բիթլիս, Վան, Խարբերդ, Դիարբեքիր եւ Սեբաստիա նահանգներից կազմել մեկ նահանգ- Հ. Գ.), բայց նրան խանգարում է Գերմանիան, որ արգելք է հանդիսանում հայկական ռեֆորմների»[2]:

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 14, գ. 6, էջ 8:
[2] Նույն տեղում, էջ 7:

[1] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 577:
[2] Նույն տեղում, էջ 578-579:

3. Կառավարությունը խոստանում է իրագործել ռէֆորմների սկզբնական ծրագիրը եւ ցանկութիւն էր յայտնում, որ հայերը իրենց համակրութեամբ աջակցին ռուս զօրքին պատերազմի դէպքում: Այդ աջակցութիւնը պիտի կայանայ զօրքին թեթեւ ծառայութիւններ մատուցելու, մանաւանդ հետախուզումների ժամանակ, եւ ժողովրդական ինքնապաշտպանութեան մէջ»:

Հիմք ընդունելով ՀՅԴ Ռայոնական ժողովում հօգուտ կամաւորական խմբեր կազմաւորելու վերոհիշեալ փաստարկները՝ Ազգային Բիւրոն որոշում է. «...կամաւորների կազմակերպութիւնը, վարժութիւնը եւ ամբողջ զինուորական գործը յանձնել մեր կուսակցութեան: Թէ Ազգային Բիւրոն եւ թէ մեր ընկերները որոշում են գործին համազգային բնոյթ տալ...»[1]:

Որպես ընդհանրացում պիտի փաստել, որ Հ. Դ. Դաշնակցութիւնը կամաւորական խմբեր կազմաւորելու ու նրանց մարտադաշտ առաջնորդելու իրաւունքը պայմանաւորված է նաեւ Հայոց Ազգային բիւրոյի որոշմամբ:

Պիտի նկատել, որ կամաւորական շարժման ծաւամանը մեծապես նպաստել է Ամենայն Հայոց կաթողիկոս Գեւորգ 5-րդը, որին համոզել ու հայութեան համար լաւագոյն ապագա ստեղծելու խոստումներ էր տվել Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը[2]:

Տարիներ անց, կամաւորական շարժման կազմակերպման հարցը քննարկվել ու իր գնահատականն է ստացել 1919 թ.Երեւանում կայացած ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովում: Հավանութիւն տալով ու արդարացնելով կամաւորական շարժման կազմակերպումը՝ Ընդհանուր ժողովը այն գնահատում է որպես «...հայ ժողովրդի ինքնաշտպանական մէկ փաստ եւ մեր քաղաքական ազատագրութեան ազդակ»[3]:

Հայոց Ազգային Բիւրոյի դիրքորոշումը, ինչպես նաեւ պատերազմի բռնկման պարագայում Դաշնակցութեան մարտավարութիւնն արդեն հստակ էր, իսկ ինչպիսի՞ն էր կամաւորական զորախմբերի հրամանատարների , մասնաւորապես Դրոյի վերաբերմունքը կամաւորական շարժման, եւ ըստ այդմ՝ կամաւորական զորախմբեր կազմաւորելու նկատմամբ:

Հայ ազատագրական պայքարի մարտական նշանաւոր գործիչներից թերեւս միակը Նիկոլ Դումանն էր, որն այնքան էլ չի ոգեւորվել կամաւորական շարժմամբ: Ի տարբերութիւն Նիկոլ Դումանի,

[1] Նույն տեղում, էջ 579:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 709, թ. 65:
[3] Տե՛ս «Քաղվածքներ ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովի որոշումներից», Երեւան, 1920, էջ 3-4:

հայկական կամաւորական զորախմբերի հրամանատարներն առանց բացառության ողջունել են կամաւորական շարժումը եւ մեծ հաւատ ընծայելով ռուսական զենքի նկատմամբ, համոզված էին, որ ռուսական հզոր բանակը հայ կամաւորների աջակցությամբ ի զորու է հեշտությամբ ջախջախել թուրքական բանակը եւ կարճ ժամանակահատվածում ազատագրել Արեւմտյան Հայաստանը: Համանման համոզմունք եւ հավատ է ունեցել նաեւ Դրոն:

Ըստ Վ. Փափազյանի վկայության, կամաւորական զորախումբ կազմաւորելու անհրաժեշտությունը Դրոն մտահղացել է դեռեւս Հին Բայազետում գտնվելու ժամանակ՝ Առաջին աշխարհամարտի նախօրեին:

Անդրադառնալով Հին Բայազետում իրենց կայացած հանդիպմանը՝ Վ. Փափազյանը գրում է. «Դրօն պատմեց, թէ քիւրդ համիտեներու մէջ խլրտում կը նշմարէ. անոնց մեծերը վերջին օրերը Պայազետ լեցուցած են: Ըսաւ, թէ ինքն ալ կարծես հսկողութեան տակ կը գտնուի՝ բաներ կը դառնան իր շուրջը: Կը նախընտրէ վերադառնալ Կովկաս եւ վստահ է, որ պատերազմը պիտի պայթի. այդ ատէն արդէն ան կը խորհէր կազմելու զօրեղ կամաւորական գունդ մը»[1]:

Այն ժամանակ, երբ արդեն բուռն թափով ծավալվում էր կամաւորական շարժումը, Դրոն հեռագրում է Հիվանդանոցի մահճին գամված իր Մեծ ուսուցչին՝ Նիկոլ Դումանին, հայտնելով. «... քո հաստատված զէնքի ուժերդ պատրաստ են քու հրամանիդ տակ կռուի դաշտ դուրս գալու համար»:

Խորագետ Նիկոլ Դումանը նկատի ունենալով ու սթափ գնահատելով ինքնապաշտպանությանը հայության անպատրաստ վիճակը, բոլորովին ոգեւորված չէր կամաւորական շարժմամբ եւ այնքան էլ հավատ չի ընծայել ռուսական զորքերի կողմից Արեւմտահայաստանի արագ ազատագրմանը: Այդ պատճառով նա Դրոյին պատասխանում է հետեւյալ դատողությամբ՝ «Մեծ կռիւ մը կը սկսի, ուր փոքր ժողովուրդները, աւաղ, ըսելիք չունին, ես կը ցաւիմ, որ աճապարեցին մերոնք մեծերու կռիւին միջամտելու համար»[2]:

Ռուսական անհաղթ զենքի եւ նրա միջոցով Արեւմտահայաստանը հեշտությամբ ազատագրելու նկատմամբ մեծ հավատ է ունեցել նաեւ Անդրանիկը: Հայտնի է նրա «Տղաներին կհագցնեմ տրեխներ, գրպանները կը լեցնեմ հալվա- մի շաբաթից Սալմաստից Վան կհասնեմ» թեւավոր արտահայտությունը[3]:

[1] Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. 2, էջ 285:
[2] Նիկոլ Դուման, Պուքրեշ, 1933, էջ 15:
[3] Վրացեան Ս., Մրրկածին Դրոն, էջ 79:

Կամավորական խմբերի կազմակերպիչներին ու հրամանատարներին զոհացնում էր նաեւ այն հանգամանքը, համաձայն որի նախատեսվում էր, որ հայկական կամավորական զորախմբերը հիմնականում գործեին Արեւմտյան Հայաստանի առավելապես հայերով բնակեցված շրջաններում:Նրանք համոզված էին, որ վտանգի պահին կարող էին զորավիգ կանգնել ու փրկել ջարդերից վտանգված շրջանների բնակչությանը: Իսկ ժամանակը հստակորեն ցույց տվեց, որ դա բոլորովին էլ այդպես չէր:

Կամավորական գնդերը կոչվում էին «խմբեր», ինչպես եւ ասված է ռուսական պաշտոնական հրամաններում: Խմբերը գտնվում էին փորձված մարդկանց հրամանատարության տակ: Բաղկացած էին 450 մարդուց, միայն 1-ին գունդը 1000 - ից ավելի էր: Խմբերը հետագայում միացան եւ վերածվեցին բատալյոնների: Խմբերը նպաստ էին ստանում պետությունից եւ Ազգային Բյուրոյից»[1]:

Դատելով հայ զինուժի եւ կամավորական խմբերի նկատմամբ ցարական իշխանությունների դրսեւորած վերաբերմունքից՝ կարելի է հաստատապես, աներկբա պնդել, որ ցարիզմը քաջատեղյակ լինելով Թուրքիայի կողմից Օսմանյան տերության տիրապետության տակ բնակվող հայության անպաշտպանվածությանն ու հետեւաբար նրան սպառնացող անխուսափելի կոտորածների իսկությանը, ի սկզբանե որեւէ գործնական քայլեր չի ձեռնարկել կանխելու հայ բնակչությանը սպառնացող մահաբեր վտանգը: Այլապես ինչպե՞ս եւ ինչո՞վ բացատրել այն հանգամանքը, որ պատերազմի հենց առաջին օրերին ռուսական բանակ զորակոչված ավելի քան 200.000 հայ զինվորների ուղարկեցին մարտնչելու ոչ թե Կովկասյան, այլ Արեւմտյան՝ ռուս-գերմանական ու ռուս-ավստրիական ճակատ:

Միթե՞ պարզ եւ հասկանալի չէ, որ Կովկասյան ռազմաճակատում ավելի քան 200.000-250.000 հայ զինվորների ու դրան գումարած հայկական կամավորական զորախմբերի ներկայությունն անտարակույս կարող էր կանխել հայերի զանգվածային կոտորածները եւ հող նախապատրաստել Պատմական Հայաստանի երկու՝ արեւմտյան ու արեւելյան հատվածների միավորման եւ հայկական միացյալ պետականության վերստեղծման համար: Ժամանակը հստակ կերպող ցույց տվեց, որ հայ ժողովրդի պատմական հայրենիքում հայկական ինքնավարություն, առավել եւս պետականություն ստեղծելը ցարիզմի ծրագրերից ու քաղաքական նկրտումներից դուրս էր: Վստահաբար կարելի է պնդել. եթե ցարիզմը 1-ին աշխարհամարտում իր որդեգրած ու կենսագործած քաղաքականության ոլորտում դրսեւորեր փոքր-ինչ հայամետ կեցվածք ու դիրքորոշում, ապա բանակ զորակոչված 200.000 -25000 հայ զիվորների գոնե մի մասը Արեւմտյան ճակատից կտեղափոխեր մարտնչելու Կովկասյան ճակատ ու կռիվների ընթացքում կգործեր տիրող կացությանը համահունչ առավել կենսունակ ու արդյունավետ մարտավարությամբ:

Ռուսական հրամանատարության որոշմամբ հայ կամավորական զորախմբերը պետք է գործեին հիմնականում այն ուղղություններում, որտեղ կենտրոնացված էին ռուսական զորամիավորումները: Նախատեսվում էր զորքերի հարձակման չորս հիմնական ուղղություն՝ 1. Սարիղամիշից դեպի Ալաշկերտի հովիտ, 2. Կագիզմանից եւ Իգդիրից դեպի Ալաշկերտի հովիտ, 3. Իգդիր, Մակու, Բայազետ-Վան, 4. Ջուլֆա-Խոյ-Դիլիման-Բաշկալե-Վան:

Չորս գլխավոր ուղղություն, եւ այդ պատճառով թույլատրվել է կազմավորել կամավորական չորս զորախումբ, որոնցից յուրաքանչյուրը պիտի գործեր նախատեսված ուղղություններից որեւէ մեկում: Այսպես, առաջին ուղղությունում գործելու էր 4-րդ կամավորական զորախումբը (հրամանատար Արշակ Գաֆաֆյան-Քեռի), երկրորդ ուղղությունում գործելու էր 3-րդ զորախումբը (հրամանատար՝ Համազասպ Սրվանձտյան), երրորդ ուղղությունում՝ Դրոյի գլխավորած 2-րդ զորախումբը եւ չորրորդ ուղղությունում Անդրանիկի 1-ին զորախումբը:

Կամավորական խմբերը կազմավորելու, զինելու ու հանդերձավորելու նպատակով Ազգային Բյուրոյի շրջանակներում ստեղծվում է հատուկ բաժին՝ Կարգադրիչ Մարմին(կամավորական զորախմբերի շտաբ), որի նստավայրը սկզբմնական շրջանում գտնվում էր Թիֆլիսում, իսկ կռիվների ծավալման ժամանակ՝ Երեւանում:

Ուշագրավ է, որ Ազգային բյուրոյի հանձնարարությամբ Կարգադրիչ Մարմնի ղեկավարումը վստահվել է այնպիսի մարդկանց, որոնք ոչ միայն զինվորական չէին, այլեւ երբեւէ չէին առնչվել ո՛չ զենքին ու ո՛չ էլ զինվորականության:Կարգադրիչ Մարմնի պետը նշանավոր հայագետ, գրաքննադատ Նիկոլ Ադալյանն էր, իսկ նրա օգնականը՝ Գեւորգյան ճեմարանի շրջանավարտ Սիմոն Վրացյանը:

Ս. Վրացյանի բնութագրմամբ՝ «երկուսս էլ ման էինք գալիս զինուորական համազգեստով, երկարավիզ կոշիկներով ու փափախով՝ նագան տարճանակը գոտուց կախ: Կարող եք երեւակայել, թէ ինչ

[1] Բանբեր Հայաստանի Արխիվների, 1992, թիւ 1-2, էջ 81:

հերոսական տեսք ունէինք երկուսս էլ, բայց, մանաւանդ, Նիկոլը կախփեշ ֆրէնչով եւ արդէն նկատելի դարձած կուզով: Դրոյի անվերջ կատակների նիւթն էինք երկուսս էլ»[1]:

Ո՛վ պիտի հոգար լուծելու կամաւորական զորախմբերը զինելու ու հանդերձաւորելու ու այլ անհրաժեշտ պարագաներով ապահովելու խնդիրը:

Լեոյի հաւաստմամբ՝ կամաւորական զորախմբերի կազմաւորման համար պահանջվող գումարի (աւելի քան 200000 ռուբլի) մեծ մասը պիտի հատկացներ Ազգային Բիւրոն, իսկ փոքր մասը՝ ցարական կառաւարութիւնը[2]:

Դիւրին չէր կամաւորական զորախմբեր կազմակերպելու, նրանց լուծելու զինելու, հանդերձաւորելու եւ պատերազմական իրաւիճակներում պահանջվող անհրաժեշտ պարագաներով ապահովելու խնդիրը: Ազգային Բիւրոյի Կարգադրիչ Մարմնի զեկուցումից պարզվում է, որ առանձնապես դժվար է եղել հեծյալ ջոկատներին ձիերով ապահովելը:

«Ամէն խումբ,- նշվում է Կարգադրիչ Մարմնի զեկուցագրում, - կազմուած էր հետեւակ ու հեծեալ բաժիններից: Կառաւարութիւնը երկրորդ եւ չորրորդ խմբերին տուել էր 50 ձի, երրորդ խմբին՝ 70 ձի, իսկ առաջին խումբը պէտք է ունենար 200 ձի, բայց չէր կարողացել ձեռք բերել այդքանը:Ցիսուն ձին շատ անբաւարար էր 400 հոգիանոց խմբի համար, մանաւանդ, եթէ նկատենք, որ առնուազն 25 ձի պէտք էին բեռների համար:

...Երկրորդ եւ երրորդ խմբերը ստիպուած եղան բեռնակիր անասուններ վարձելու, չորրորդ խումբը երկանիւ սայլակներ ու ձիեր գնելու: Խմբի մէջ բացի հեծեալ բաժինը ձիաւոր էին խմբապետն ու իր օգնականները, պետերն ու իրենց օգնականները, շտաբի գլխաւորն ու խմբապետի թիկնապահները...

Ներկայումս առաջին խումբն ունի 102 ձի, երկրորդը՝ 95, երրորդը՝ մօտ 50, չորրորդը՝ 109 ձի...»[3]:

Շ-րդ կամաւորական զորախումբը կազմաւորվում է իր ծննդավայր Իգդիրում: Զորախմբի կազմաւորման վայրի՝ Իգդիրի ընտրութիւնը պատահական չէր: Իր հայրենի քաղաքում Դրոն աւելի մեծ հնարաւորութիւն ուներ լաւագոյնս զինելու եւ հանդերձաւորելու իր հրամանատարութեամբ մարտնչող մարտիկներին: Իսկ նրա հրամանատարութեամբ գործող զորամասերը, որպես կանոն, միշտ էլ առանձնացել ու աչքի են ընկել նաեւ իրենց զինվածութեամբ եւ հանդերձաւորմամբ:

Դրոյի գլխաւորած երկրորդ կամաւորական զորախումբը ուներ հետեւյալ կազմը. Ցապոնի (Հովհաննես Պարոնյան) եւ գանձակեցի Զեմլյակի (Հարութիւն Նանումյան) հրամանատարութեամբ գործող երկու հեծյալ կեսհարյուրակներ եւ կարբեցի Օնեի (Հովհաննես Մելքոնյան), Խոսրով Եղիազարյանի, Մարտիրոս Աբրահամյանի (բաշգառնեցի խմբապետ Մարտիրոս), գանձակեցի Դալի Ղազարի եւ Թիֆլիսցի Ռիժա Տիգրանի գլխաւորած հինգ հետեւակային հարյուրակներ: Դրոյի օգնականներն էին Արմեն Գարոն եւ Դաշնակցական Խեչոն:

Հարյուրակների բոլոր հրամանատարներն առանց բացառութեան Հայոց ազատամարտի բազմամյա պայքարում կոփված, 1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումներում մարտական հրաշալի դպրոց անցած քաջավարժ զինվորականներ էին: Իսկ նրանց հրամանատարը, չնայած իր երիտասարդ տարիքին արդեն արժանի հեղինակութիւն էր վայելում Հայոց ազատամարտի նշանաւոր ռազմագետ- գործիչների շրջանում: Եվ պատահական չէր, որ հրամանատարական կազմի ընտրութիւնները կատարելիս, Հայոց Ազգային Բիւրոն Շ-րդ կամաւորական խմբի հրամանատարութիւնը անվարան վստահեց 30-ամյա Դրոյին, երբ հայ կամաւորների շարքերում կային այնպիսի հարուստ մարտական կեսագրութիւն ունեցող հայդուկ-ռազմիկներ, ինչպիսիք էին Սեպուհը, Սմբատ Բորոյանը (Մախլուտո), Գյումուշխանցի Ավոն, Արմեն Գարոն, Դաշնակցական Խեչոն եւ այլոք:

«Այդ լուսաշող դէմքերի մէջ, - գրում է բժիշկ Եր. Խաթանեսյանը, - հնչում էր զօրեղ անունը մի երեսնամեայ երիտասարդի, որի արժէքը քչերին էր միայն ծանօթ:

Դա Դրօն էր:

Հանդիպեցի այն ժամանակ անտեղեակների, որոնք ապշանքի եւ շուարանքի էին մատնուել, որ այս դեռատի եւ «անփորձ» մարտիկին էր վստահուած ու յանձնուած՝ կամաւորական Բ. գունդի հրամանատարութիւնը, իր ձեռքի տակ ունենալով Արմէն Գարոյի նման հին յեղափոխական մի տիտան եւ Դաշնակցական Խէչօյի նման ճարտար ու յանդուգն մի խմբապետ: Քչերը՝ իր զինակիցները եւ մարտական շարժումի ղեկաւարները միայն իմանում էին, որ Դրօն՝ այդ վարպետ, յանդուգն ու ձեռներէց ահաբեկիչը, օժտուած էր ռազմաւարի բնածին ձիրքով: 1905-1906 թթ. հայ-թաթարական

[1] Վրացեան Ս., Կանքի ուղիներով, հ. Ա, Պէյրութ, 1967, էջ 182:
[2] Տե՛ս Լեո, Թիւրքահայ գաղափարաբանութիւնը, հ. Բ, էջ 111:
[3] ՀԱԱ, ֆ. 57, գ. 37, թ. 25-26, էջ 79:

կռիւներին, նախ իբրեւ սոսկ զինուոր, բայց շուտով իբրեւ խմբապետ, Դրօն առարկան դառաւ զինուորական հանճարեղ ղեկաւարի՝ Նիկոլ Դումանի բարձր գնահատականին»[1]:

Ժամանակն ապացուցեց Դրոյին կամաւորական զորախմբի հրամանատար ընտրելու անսխալութիւնը: Իսկ «Հայ ժողովրդի պատմութիւն» ութհատորյակի հեղինակները ընդամենը մի քանի նախադասութեամբ անդրադառնալով հայկական կամաւորական խմբերի կազմաւորմանը՝ նուազնիսկ հարկ չեն համարել զորախմբերի հրամանատարների անունները թվարկելիս նշել նաեւ 2-րդ զորախմբի հրամանատարի՝ Դրոյի անունը:

«Սկզբնական շրջանում, - կարդում ենք «Հայ ժողովրդի պատմութիւն» - ում, - կազմակերպվեցին կամաւորական չորս ջոկատներ, տարբեր ժամանակներում այդ ջոկատների հրամանատարներն են եղել Անդրանիկը (Օզանյան), հայդուկներ Քեռին (Գաֆաֆյան Արշակ), Խանասորցի Վարդանը (Մեհրաբյան) եւ ուրիշներ»[2]:

Կամաւորական զորախմբերը կազմակերպելու, այն մարտական ուժերով համալրելու, հանդերձաւորելու համար լարված ու հետեւողական աշխատանք էր պահանջում նաեւ զորախմբերի հրամանատարներից: Դրոն իր զորախումբը կամաւորներով համալրելիս եւ հրամանատարների ընտրությունը կատարելիս առաջին հերթին աշխատել է օգտագործել 1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումներին մասնակցած իր մարտական փորձառու զինակիցների ուժերն ու հնարաւորությունները: Նրանց ընկերակցությամբ ու աջակցությամբ Դրոն Հայաստանի զանազան շրջաններում հաւաքագրում է կամաւորների եւ նրանցով համալրում իր զորախմբի մարտաշարքերը:

Երկու վկայություն Դրոյի մարտական զինակիցներ Մարտիրոս Աբրահամյանի եւ Յապոնի (Հովհաննես Պարոնյան) հուշերից:

«Սեպտեմբերի 18-ին, - գրում է Մարտիրոսը, - պատրաստւում էի գնալ Երեւան եւ խօսել զինուորական պետի հետ, երբ ստացայ մի նամակ Դրոյից, որ գրում էր. «Սիրելի Մարտիրոս, ես վերադարձել եմ Երեւան, կամաւորական բանակ կազմելու: Եկ խորհրդակցենք» ...

Առաջին իսկ վայրկեանից ապշեցի: Դրոյի ստորագրությունը զարմացրեց ինձ: Այդ ինչպէ՞ս էր պատահել, որ տարիներով ռուս կառաւարությունից հետապնդուած Դրոն եկել էր Երեւան:

[1] «Ալիք», բացառիկ, 1956, մայիսի 4, էջ 18:
[2] Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, էջ 548:

... Սեպտեմբերի 10-ին կազմածս 30 հոգիանոց խումբը ուղարկեցի Երեւան...

Ես էլ Մակեդոնի հետ տեսնուեցի Դրոյի հետ: Դրօն Մակեդոնին 30 տղաներով ուղարկեց Իգդիր իսկ ինձ գնալ Նախիջեւան՝ կամաւորներ հաւաքելու[1]:

«Դրօն,- վերհիշում է Յապոնը,- ցոյց տուեց ինձ մի նամակ, որ յատուկ սուրհանդակի ձեռքով էր ստացել Թիֆլիսից: Նամակի մէջ գրուած էր, որ ամէն հնար գործ դնենք Թիֆլիս գալու, ուր հայ կամաւորական խմբեր էին կազմւում, եւ կառաւարությունը ներում է խոստանում բոլոր նրանց, ովքեր կը համաձայնէին մտնելու այդ խմբերի մէջ:

... Երբ հասանք Իգդիր, Դրօն այնտեղ չէր: Երեք օրից յետոյ եկաւ ու սկսեց կամաւորների արձանագրել: Մի քանի օրից կամաւորների արձանագրությունը յանձնեց ինձ, իսկ ինքը նորից անցաւ Թիֆլիս: Կազմուելիք խմբի համար զէնք, հագուստ եւ այլ մթերք ստանալու:

Արձանագրուած կամաւորներից վաշտեր կազմեցինք եւ ուղարկեցինք Բլուր գիւղը զինուորներին յատկացուած բնակարաններ կային:

Շուտով Դրօն վերադարձաւ Խէչօյի հետ միասին: Գործը յանձնեցի Դրոյին, իսկ ես անցայ Դարալագեազ՝ Կամաւորներ արձանագրելու համար: Շատ կարճ ժամանակամիջոցում արձանագրեցի 40 հոգի, որոնց մէջ էր հռչակաւոր Տէր Գրիգոր քահանան, Դարալագեազի Էրդափին գիւղից, իր 15 տարեկան տղայի հետ:

Հազիւ էի այդքան կամաւորներ արձանագրած, երբ Դրոյից հեռագրով հրահանգ ստացայ անմիջապէս մեկնելու Իգդիր: Կամաւորների հետ գնացինք Իգդիր:

Այստեղ կազմեցինք 2-րդ հայ կամաւորական խումբը, որի հրամանատար նշանակուեց Դրօն...»[2]:

Կամաւորական 2-րդ զորախմբին զինվորագրված էին ընդհանուր թվաքանակով 472 մարտիկներ: Ի տարբերություն Անդրանիկի գլխավորած 1-ին զորախմբի, որի անդամների ճնշող մեծամասնությունը արեւմտահայեր էին, 2-րդ կամաւորականին անդամագրված 472 մարտիկներից միայն 118-ն էին արեւմտահայեր, իսկ մնացած 354-ը՝ արեւելահայեր[3]:

1914 թ. հոկտեմբերի կեսերին հրաժեշտ տալով մերձավորներին ու ընկերներին՝ Դրոն Թիֆլիսից մեկնում է Իգդիր, ուր կազմ ու

[1] «Հայրենիք» ամսագիր, 1934, հունվար, էջ 67:
[2] Նույն տեղում, 1941, մայիս, էջ 173:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 6, թ. 13:

պատրաստ նրան էր սպասում արդեն կազմավորված 2-րդ կամավորական զորախումբը:

«Այսօրուայ պէս յիշում եմ,- գրում է Ս. Վրացյանը,- մեր ընթրիքը «Անոնա» ճաշարանում Դրօյի ճակատ մեկնելու առթիւ: Ներկաներից մտքումս մնացել են Յովհաննէս Թումանեանը, Խաչիկ Կարճիկեանը, բժ. Յակոբ Զաւրեանը, Նիկոլ Աղբալեանը եւ Յովսէփ Արղութեանը:

... Դրօն, որ միշտ նման հաւաքոյթների ոգին էր կազմում, ամբողջ ժամանակ նստած էր լուռ: Անսովոր մի բան: Ամենքը ուշադրութիւն դարձրին եւ հարցնում էին, թէ ինչ է պատահել, ինչո՞ւ է տխուր:

Իր վերջին խօսքում Դրօն ասաց.

- Ես զինուոր եմ: Քաղաքականութիւնից բան չեմ հասկանում: Բայց զգում եմ եւ համոզուած եմ՝ «Էտօ բուդէտ պոսլեդնիյ ռեշիտելնիյ բոյ» - սա կը լինի վերջին եւ վճռական ճակատամարտը... Կամ ազատութիւն, կամ մահ... Ես զգում եմ նոյնպէս, որ ով գիտէ քանիսը մեզանից չեն վերադառնալու կռուի դաշտից... Մեծ գործերը մեծ զոհեր են պահանջում... Տղերք ջան, ցտեսութիւն...

Ամենքը յուզուած էին: Թումանեանը ոտքի ելաւ՝ երկար վզի վրայ գեղեցիկ գլուխը վեր.

- Դրօ ջան. էս հօ Հայոց ազգն է խօսում քո բերանով... Շէն մնաս, ի՞նչ մեծ խօսք ասացիր. «Մեծ գործերը մեծ զոհեր են պահանջում» ... Թոյլ տուր համբուրեմ քո այդ հերոսի ճակատը...»[1]:

Հոկտեմբերի 18-ին սկսվում է ռուս-թուրքական պատերազմը, եւ հայ կամավորական զորախմբերից առաջինը (հոկտեմբերի 24-ին Իգդիրից) ռազմաճակատ է մեկնում Դրոյի 2-րդ կամավորականը:

Հայկական կամավորական զորախմբերի գործողությունները լուսաբանող հուշագրություններից մեկում կարդում ենք. «Նախքան ճակատ մեկնելը բոլոր մարտիկները հաւաքւում են եկեղեցի, ուր կատարւում է հանդիսաւոր մաղթանք եւ ապա երդւում են բոլորը: Խորհրդաւոր եւ սրտառուչ էր տեսարանը, երբ 400 հոգի գլխաբաց, ձեռքերը բարձրացրած վերեւ երդւում էին մեռնել հայրենիքի ազատութեան համար: Ամբողջ Իգդիրի եւ շրջակայքի գիւղացիութիւնը այնքան էր յուզուել, որ դժուարութեամբ էր բաժանւում կամաւորներից, երգերով ու կեցցէներով նրանք մի քանի վերստ ճանապարհ ձգեցին կամաւորներին եւ միայն ուշ գիշեր վերադարձան իրենց գիւղերը»[2]:

[1] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Դ, էջ 103:
[2] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 47, թ. 6-7:

Դրոյի զորախումբը, որը գործելու էր գեներալ Նիկոլաեւի զորախմբի կազմում, համաձայն վերին հրամանատարության հրահանգի, պիտի անցներ Հայկական Պար լեռնաշղթան եւ հաղթահարելով Թափարիզի լեռնանցքում (Գառնիձոր-լեռնանցք Մաղկանց լեռներում, Թոնդրակից 10 կմ. արեւելք) արդեն ամրացած հակառակորդի դիմադրությունը՝ գրավեր քրդական Կավրե -Շամե գյուղը եւ հարձակումը զարգացներ Վանի ուղղությամբ[1]:

Թուրքերի հետ ունեցած առաջին մարտը ընթացել է արագ եւ շատ հաջող: Զորախմբի ճանապարհին ընկած Թափարիզի լեռնանցքը գրավված է եղել թուրք ժանդարմների կողմից: Այդ լեռնանցքով է անցնում Բերկրի գետի ավազանը Բայազետի շրջանի հետ կապող միակ կարճ ճանապարհը: Որպեսզի կամավորները կարողանային անցնել դեպի Բերկրի գետի ավազանը, ապա՝ Վան, անհրաժեշտ էր նախ եւ առաջ խորտակել այդ լեռնանցքում ամրացած թուրք ժանդարմների ու նրանց աջակցող քուրդ զինյալների դիմադրությունը: Խորհրդակցելով իր օգնականների՝ Արմեն Գարոյի եւ Խեչոյի հետ, Դրոն որոշում է շրջանցել հակառակորդի դիրքերը եւ թեւերից ու ճակատից տեղացող միաժամանակյա հարվածներով ջախջախել թշնամուն եւ գրավել բարձունքները:

«Եապոնը, - գրում է Բաշգառնեցի Մարտիրոսը, - ըստ հրահանգի շարժուեց մինչեւ թշնամու մօտերը եւ մի աննկատելի շարժումով շրջանցեց նրա ձախ թեւը: Իմ հարիւրեակը կէս կիլոմետրի վրայ հետեւում էր Եապոնին:

...Եապոնի աննկատելի թեքումից յետոյ, ես շարունակեցի մօտենալ թշնամուն այնքան, որ նրանք սկսեցին կրակել հարիւրեակի վրայ, ուստի ջոկատները բաժանեցի, որով մէկ ջոկատը կրակելու ժամանակ, միւս ջոկատը շարժուելու դիւրութիւն էր ստանում: Այսպէս յառաջանալով հասանք թշնամու դիրքերի դիմաց...

Եապոնն արդէն անցել էր յարձակման՝ թշնամու ձախ թեւի վրայ:

Թշնամու դիրքերի կարգը խախտուեց: Մենք էլ մեր հերթին թռանք մեր դիրքերից եւ ուռաներով շարժուեցինք դէպի թշնամին: Միահամուռ գրոհի վրայ ժանդարմները թողին խրամատները եւ սկսուեց անկարգ, խուճապահար մի փախուստ»[2]:

Առաջին արգելքը հաղթահարված էր, զորախումբը արագորեն առաջանալով՝ հաջորդ խոչընդոտը հաղթահարելու վճռականությամբ կազմ ու պատրաստ, մուտք է գործում քրդական Կավրե-Շա-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 3, թ.8:
[2] Խմբապետ Մարտիրոս Աբրահամյան, Նշվ. աշխ., էջ 223:

մեզ գյուղը: Մեծ ոգեւորություն էր տիրում կամավորների խմբերում: Հայրենիքը թշնամու ճիրաններից վերջնականապես ազատագրելու ձգտումը խանդավառել էր ամենքին: Սակայն հետագա դեպքերը, որոնք մեծ հիասթափություն են պատճառում կամավորներին, ընթանում են բոլորովին այլ՝ չսպասված ուղղությամբ:

Դրոն՝ արագորեն անցնելով Հայկական Պար լեռնաշղթան, հաղթահարում է Թափառեսի բարձունքների արգելքները ու դեռ նոր էր հասցրել դիրքեր գրավել Կավրե-Շամե գյուղում եւ հանկարծ գեներալ Նիկոլաեւից ստանում է նահանջի անսպասելի հրամանը: Պարզվում է, որ գեներալ Աբացեւի (չափազանց թույլ ռազմագիտական կարողություններով այդ թրքամետ գեներալը ողջ պատերազմի ընթացքում աչքի է ընկել հատկապես իր հակահայ գործողություններով-Հ.Գ.) զորամասը, չկարողանալով դիմադրել Ալաշկերտի, Ղարաքիլիսա գյուղաքաղաքի կողմից թուրքական զորքերի գրոհներին՝ նահանջում է եւ դրանով իսկ հակառակորդին լուրջ հնարավորություն ընձեռում շրջապատելու գեներալ Նիկոլաեւի զորախմբին, որի առաջապահ մարտական միավորը Դրոյի խումբն էր: Եվ ինչպես հետագայում իրավացիորեն պիտի նշեր 2-րդ զորախմբի 1-ին հեծյալ հարյուրակի հրամանատար Յապոնը. «Պատերազմը հազիւ սկսած՝ մեզ համար պարզւում էր, որ ռուսը որոշած էր հայի գլխին խաղ խաղալ... Հրամանատարներն ու կամաւորները, փոխանակ նահանջի, պահանջում էին կոտրել դիմադրութիւնը ու օր առաջ հասնել պայքարող Վանին: Բայց ստիպուած էին ենթարկուել դաւադիր հրամանին»[1]:

Դեպքերի նման զարգացումը զարմանք է հարուցում հայ կամավորներին: Մի՞թե հայրենիքն ազատագրելու ձգտումներով ոգեկոչված եւ մարտադաշտում դեռ նոր-նոր ոտք դրած հայ զինվորը կարող էր մտածել նահանջելու մասին: Մյուս կողմից, կամավորական զորախումբը բավական առաջ էր անցել հիմնական զորամասերից եւ նահանջի պարագայում կարող էր դյուրությամբ զոհ դառնալ թշնամու մեծաքանակ ուժերի հարձակումներին:Զորախմբի հրամանատարությունը հետագա գործունեության համար պիտի հաշվի առներ ստեղծված կացությունը եւ գործեր իրականությանը համահունչ մարտավարությամբ:

Այդ իրողությունը լուսաբանող վավերագրերից մեկում պատմվում է հետեւյալը. « ... հոկտեմբերի 30-ին մօտենում են Կաւրէ-Շամէ քրդական գիւղին: Որոշուած էր այսպէս. խումբը գնալու է առաջուց եւ նրան 6 ժամուա տարածութիւնից հետեւելու է ռուսական զօրքը: Կաւրէ-Շամէից մերոնք պէտք է անցնէին Աբաղայի դաշտով դէպի Վան, յետեւից ունենալով ռուսական զօրքին, սակայն մերոնք երբ զբաղուած են լինում Կաւրէ-Շամէով, այդ ժամանակ պատերազմական ծրագիրը փոխւում է եւ ռուսները փոխում են իրենց ճամփան դէպի Դութաղ, առանց մեզ իմաց տալու»[1]:

Ի՞նչ անել: Իրենց անելիքները որոշակիացնելու նպատակով Դրոն զորախմբի հարյուրակների հրամանատարներին հրավիրում է խորհրդակցության:

«Արմէն Գարոն եւ Խէչոն, - գրում է 3-րդ հարյուրակի հրամանատար Մարտիրոսը, - խորհուրդ են տալիս «նահանջել»:

Դրօն առարկում է.

- Կռիւը դեռ նոր ենք սկսել, թշնամու ուժերը թարմ են եւ թւով շատ, եթէ նահանջենք, նրանք պիտի ոգեւորուեն եւ մեծ կորուստներ պատճառեն մեզ:

... Այդ ասելով Դրօն այլեւս չսպասեց, անհրաժեշտ կարգադրութիւններ արաւ, որովհետեւ թշնամին արդէն երես էր առել մեր տատանումը նկատելով»[2]:

Հարկ է նշել, որ հայկական զորախմբերը պատերազմի սկզբնական շրջանում այնքան էլ լավ զինված ու հանդերձավորված չէին. «Զորախմբերը պատերազմին մասնակցում էին առանց գնդացիրների, գումակի, երթային խոհանոցների, դեղորայքի եւ նույնիսկ առանց ջրամանների»[3]:

Կամավորները զինված են եղել տարբեր տեսակի հրացաններով ու ատրճանակներով, իսկ նրանց գլխավոր զենքը մարտական ոգին էր եւ իրենց գործի նկատմամբ ունեցած անհողդողդ հավատն ու վճռականությունը:Դրոն վճռում է չկատարել գեներալ Նիկոլաեւի հրամանը եւ ճակատամարտ տալ: Նա նաեւ հույս է փայփայել, որ իրենց հաջող գործողություններով կարող էին ոգեւորել ռուսական զորքերին եւ փոխել նրանց նահանջելու տրամադրությունները:

Հարյուրակների հրամանատարների եւ ողջ մարտախմբի տրամադրությունը մարտական էր: Դրոյի ընդամենը 500 զինվորներից բաղկացած զորախումբն անվարան ընդունում է քանակապես ավելի քան տասնապատիկ գերազանցող ուժեր ունեցող հակառակորդի

[1] «Հայրենիք» ամսագիր, 1942, մայիս, էջ 174:

[1] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 6, թ. 13:
[2] Խմբապետ Մարտիրոս Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 223:
[3] ՀՅԴ ԿԱ, թծ. 503, գ. 14, էջ 15:

մարտահրավերը: Բոլոր հարյուրակների հրամանատարներին խստագույնս հրամայվում է ոչ մի քայլ չնահանջել, դիմադրել մինչեւ վերջին փամփուշտը:

«Դրօն,-շարունակում է Մարտիրոսը, - գրում է ինձ, թէ Մակեդոնին ու Արշակին յայտնիր, որ դիրքերը ձեռքից չպիտի տան:

Մակեդոնն ինձ պատասխանում է.

«Դրօյին ասացէք, եթէ մենակ էլ մնամ, թշնամին Կարմիր սարը չի տեսնի» :Իսկ Արշակը պատասխանում է.

- Իմ դիրքերը գրաւող թշնամին դեռ չի ծնուել:

Եւ իսկապէս, երկուսն էլ արդարացրին Դրօյի յոյսերը»[1]:

Թուրք-քրդական մարտախմբերի հրամանատարությունը վստահ իրենց ուժերի քանակական գերակշռությանը, համարձակորեն գրոհում են գյուղի մատույցներում դիրքավորված կամավորական խմբի հարյուրակների վրա: Հմտորեն ղեկավարելով մարտը՝ Դրոն հակառակորդի գնդակների հեղեղի տակ շարժվելով մի հարյուրյակից մյուսը՝ քաջալերում եւ սխրանքների է կոչում հայ զինվորներին: Թշնամին ճանաչելով հայ մարտախմբի հրամանատարին, կրակը կենտրոնացնում է նրա վրա, բայց նա կարծես արհամարհելով իր վրա տեղացող գնդակները՝ արշավում է մի դիրքից մյուսը:

«Գետնի փոշին,- վերհիշում է Մարտիրոսը,- բարձրացած գնդակների կարկուտից եւ ձիու սմբակներից, իր մէջ առաւ նրան ձիու հետ միասին, ինձ թուաց, որ այլեւս ամեն ինչ վերջացաւ, բայց մի քանի վայրկեանից յետոյ, ձիով ճեղքելով փոշին՝ կրկին երեւաց Դրոն, գլուխը դրած ձիու ականջների արանքը քառատրոփ սլանալիս դէպի Կարմիր սարը՝ Մակեդոնի դիրքերը:

Հինգ րոպէից աւելի չմնաց այնտեղ, կրկին շուռ տուեց ձին եւ նոյն արագութեամբ, այս անգամ գնաց կանգ առնելու Արշակի տղաների մօտ:

-Դէ, քալաշներս (քաջեր - Հ.Գ.)...

Մի քանի րոպէից յետոյ վերադարձաւ նորից դէպի ինձ եւ ժպտալով ասաց.

- Տղաներս, քալաշներ են, շատ լաւ են դիմադրում: Մարտիրոս, թշնամին շատ է, շատ:

Լաւ տրամադրութեան մէջ էր եւ գոհ բոլորից»[2]:

Թշնամին, չկարողանալով կոտրել Կարմիր սարի բարձունքներում դիրքավորված Մակեդոնի եւ Արշակի հարյուրակների դիմա-

[1] «Ալիք», 1956, մայիսի 4, էջ 73:
[2] ՀՅԴ ԿԱ, թղ. 503, գ. 14, էջ 15:

դրություն, հարձակումը զարգանում է Կավրե-Շամե գյուղի ուղղությամբ: Գյուղի վրա գրոհի նետվող քրդական հեծելախմբերին եթե հաջողվեր հաղթահարել հայ զինվորների դիմադրությունը, ապա ծանր վիճակի մեջ կարող էր հայտնվել ողջ զորագունդը: Կռվի վճռական պահն էր: Դրոն թշնամուն թիկունքից հարվածելու ու նրան խուճապի մատնելու նպատակով գրոհի է նետում Դալի Ղազարի, ապա Կարբեցի Օնեի հարյուրակները: Նրա կիրառած մարտավարությունը պսակվում է լիակատար հաջողությամբ: Կամավորների հուժկու հարվածն անկասելի էր, թշնամու ջախջախված զորախմբերը հետ են շպրտվում գյուղի մատույցներից:

Նույն պատկերն էր տիրում ճակատամարտի մյուս հատվածում, ուր Մարտիրոսի հարյուրակի, Զեմլյակի եւ Ցապոնի հեծյալների հանդուգն գրոհներից թուրքերին ու քրդերին հաջողվում է ազատվել միայն փախուստով: Ճակատամարտի ողջ ընթացքում Դրոն անընդհատ կռիվների կիզակետում էր. «Այդպիսի մի խառը ժամանակ, - շարունակում է Մարտիրոսը, - Դրօն կրկին եկաւ մեզ մօտ: Էլ համբերել չկարողացայ ու դառնալով նրան ասացի.

-Դրօ ջան, խնդրում եմ, ցած արի ձիուց եւ եթէ Մակեդոնի մօտ ես ուզում գնալ, տուր ձիդ ես գնամ... - չթողեց խօսքս վերջացնեմ եւ ջղայնացած պատասխանեց.

- Ի՞նչ ես մտածում այդպէս խօսելով, Մարտիրոս, կարծում ես թէ դու ինձանից աւելի զոհաբերուելու իրաւունք ունես, թէ՞ ես, գնդակը, որ ինձ կպչի, քեզ կխնայի՞:

Պատասխանի չսպասեց, մտաւ ձիու ականջները, ձուլուեց նրա հետ եւ սլացաւ դէպի Կարմիր սարը տղերքի մօտ»[1]:

Ամբողջ օրն ուշադրություն չդարձնելով թշնամու կողմից արձակվող գնդակների կարկուտին՝ Դրոն, «Դե քալաշներս...» վանկարկելով, նետվում է մի հարյուրակից մյուսը եւ հայ զինվորները հրամանատարի համարձակությունից ավելի ոգեկոչված՝ ուժեղացնում են հարվածների հզորությունը: Կավրե-Շամեի կռիվը կարծես թե մոտենում էր ավարտին, երբ Դրոն իր հերթական արշավից վերադառնալով Արշակի դիրքերից՝ տեսնում է Արմեն Գարոյին, Խեչոյին եւ փորձում մոտենալ նրանց:

«Տեսայ,-վերհիշում է Մարտիրոսը,-պատրաստուեց իջնելու ձիուց, սակայն նկատեցի, որ անբնական կերպով թեքուեց թամբի վրայ եւ պիտի ցած ընկնէր, եթէ Արմէն Գարոն ու Խէչոն չհասնէին:

[1] Նույն տեղում:

Դրոյին գրկած, ձիուց ցած բերին եւ իրարանցում սկսուեց այնտեղ:

Աչքիս առաջ ամէն ինչ սեւացաւ: Տղաներին մի քանի խօսք ասելուց յետոյ վազէ-վազ հասա գիւղ:

Արմէն Գարոն, տեսնելով վիճակս, մի կողմ քաշեց ինձ ու ասաց.

- Զխօսեցնես Մարտիրոս, դրութիւնը ծանր է:

Դրօն ուշակորուս վիճակում պառկած էր»[1]:

Հայկական կամաւորական զորախմբերի գործողությունների լուսաբանմանը նվիրված վերոհիշյալ վավերագրում Կավրե-Շամե կռվի մասին նշվում է. « Մի ժամուայ հրացանաձգութիւնից յետոյ մերոնք գրաւում են գիւղը...Կէս օրից յետոյ քիւրտերը նորից յարձակւում են գիւղի վրայ, բայց անկարող լինելով դիմադրել, թողնում փախչում են: Սակայն, նորից, գիւղի զանազան ծայրերից իջնում են 2000 քիւրտ եւ կանոնաւոր զօրք, մերոնք ոչ միայն դիմադրում են քաջաբար, այլեւ մի քանի անգամ յարձակումներ են գործում իրենց դիրքերից եւ վախեցնում թշնամուն:

Այդ օրն է, որ վիրաւորւում է Դրօն»[2]:

Հենց նույն օրը Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը ստանում է հետեւյալ հեռագիրը. «Ամբողջ առաջին օրը միայն մեր ուժերը ունեցել են ծանր կռիվներ, վեց անգամ գերազանցող քրդերի ու թուրքական կանոնավոր զորամասերի դեմ: Ծանր վիրավորված է Դրոն...»[3]:

Կավրե-Շամեի կռիվը շարունակվել է մինչեւ մութն ընկնելը: Կամավորները ֆիդայական կռիվների փորձից քաջատեղյակ էին, որ քրդերը սովորաբար կռվում էին մինչեւ մութն ընկնելը: Զորախումբն աննահանջ աննահանջ դիմադրավել է հակառակորդի հարձակումները, ապա օգտվելով գիշերված խավարից՝ նահանջում են դեպի Ղըզլ Ղայա[4]:

Կամավորական 2-րդ զորախմբի հրամանատարությունը պիտի ընդուներ Դաշնակցական խեչոն, որը մինչ այդ մասնակցել էր բազմաթիվ կռիվների ու իր մարտական փորձառությամբ ու կռիվներում դրսեւորած քաջությամբ զինվորների շրջանում ավելի մեծ հարգանք ու հեղինակություն էր վայելում, բայց համաձայնությամբ զորախմբի հրամանատարությունը ստանձնում է Բանկ Օտոմանի գրավման մասնակից Արմեն Գարոն:

---

[1] Նույն տեղում:
[2] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 147, թ. 7:
[3] Նույն տեղում, ֆ. 127, ց. 2, գ. 25, թ. 47:
[4] «Ալիք», Բացառիկ, թիւ 87, էջ 75:

Զորախմբի նորընտիր հրամանատարի՝ Արմեն Գարոյի հանձնարարությամբ վիրավոր Դրոյին թիկունք պիտի տեղափոխեր Մարտիրոսի հարյուրակը:

«Փայտերից մի պատգարակ շինեցինք, գրում է Մարտիրոսը,- և տակը փափուկ խոտ լցրնելով Դրոյին տեղափոխեցինք նրա մէջ, ծածկելով զինուորական ծածկոցներով:

Վեց հոգի տղաներից պատգարակն առան իրենց ուսերի վրայ և սկսեցինք շարժուել դէպի Ղըզլ-Ղայա: Ամեն մի չորսից-հինգ հարիւր մետրի վրայ փոխւում էին քաջերս, առանց հոգնութիւն զգալու, չէ որ նրանք շատ էին սիրում իրենց հրամանատարին և չէ որ նրանց ականջներում զրնգում էին դեռ Դրոյի բառերը, խառնւած գնդակների սուլոցին:

-Դե՜, քալաչներս...»[1]:

Դրոյին ուշակորուս վիճակում տեղափոխում են Իգդիր, ապա Թիֆլիսի Արամյան հիվանդանոցը:

Պարզվում է, որ թշնամու արձակած գնդակը շատ խորը մխրճվել էր նրա թոքերի մեջ:

«Դրոն,-նկատում է Աբ. Գյուլխանդանյանը,- շատ մահ է սփռել եւ վերքեր է հասցրել հայութեան թշնամիներին, բայց եւ վերք է ստացել թշնամուց եւ իր կեանքի մէջ մինչեւ օրս պահում է թշնամուց ստացած գնդակը իբրեւ մի դաժան յիշատակ իր յաղթական օրերի»[2]:

Դրոյի զորախմբի մարտական գործողությունը որքան էլ հերոսական լիներ ու ոգեւորող, այնուամենայնիվ, դույզ-ինչ չէր կարող փոխել ռուսական զորքերի հրամանատարության ծրագրերն ու մարտավարությունը:

Քանի որ գեներալ Նիկոլաեւի զորամասը գեներալ Աբացեւի զորախմբի անհաջող գործողությունների հերեւանքով հարկադրված նահանջել էր սահման, այդ պատճառով Դրոյի զորախումբը հրաման է ստանում հեռանալ Թափառեզի լեռնանցքից , շարժվել Ալաշկերտի Ղարաքիլիսա՝ միանալու գեներալ Աբացեւի զորախմբին:

Արամյան հիվանդանոցում բուժվելու օրերին Թիֆլիս է ժամանում Ռուսիայի կայսր Նիկոլայ 2-րդը եւ այցելում զինվորական հիվանդանոցներ: Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսյանի ուղեկցությամբ ցարը այցելում է նաեւ Արամյան հիվանդանոց, որտեղ պառկած էր Դրոն:

---

[1] «Ալիք». Բացառիկ, 1956, թիւ 87, էջ 75:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1953, թիւ 12, էջ 135:

«... Ես,- գրում է Ալ. Խատիսյանը, - պատմեցի ցարին հայ կամաւորներու քաջագործութիւններու մասին, նոյնը հաստատեցին եւ ցարին շրջապատող ռուս զորավարները, եւ ցարը շնորհեց Դրոյին Գէորգեան զինուորական խաչը իր քաջութեան համար»[1]:

Այդ օրերին Նիկոլայ 2-րդի եւ Դրոյի հանդիպման մասին զանազան չինծու, իրականության հետ որեւէ առնչություն չունեցող լուրեր էին շրջանառվում:

Ըստ գնդապետ Եգոր Տեր Ավետիքյանի պատմածի՝ Արամյան հիվանդանոց այցելելիս Դրոն իրեն խնդրել է, որ «...հերքեմ Թիֆլիզի հայկական շրջաններում պտտվող լուրը՝ իբր թէ Նիկոլայ 2-րդը սեղմել է նրա ձեռքը և հարցրել, թէ «Ո՞ւրտեղ է սովորել զինուորական արհեստը» և որին նա իբր պաստասխանել է. «Հ.Յ. Դաշնակցութեան շկոլայում»:

Ինձ շատ խնդրեց, որ հերքեմ այդ լուրը»[2]:

Համաձայն Ռուսիայի կայսր Նիկոլայ 2-րդի հետ կայացած հանդիպմանը վերաբերող Դրոյի պատմածի՝ ցարը Թիֆլիսում գտնվելու ժամանակ Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսյանի եւ բարձրաստիճան զինվորականների ուղեկցությամբ այցել է զինվորական այն հիվանդանոցը, որտեղ պառկած էր Դրոն եւ բազմաթիվ այլ զինվորականներ: Նիկոլայ 2-րդը հիվանդանոցի գլխավոր բժշկի եւ մի քանի բարձրաստիճան պաշտոնյաների ուղեկցությամբ մեկ-մեկ մոտեցել է հիվանդներին ու հարցրել նրանց անունն ու վիրավորվելու հանգամանքը: Երբ մոտենում է Դրոյի մահճակալին, հիվանդանոցի կառավարիչը հայտնում է՝ «-Դրո, հայկական կամավորական երկրորդ գումարտակի հրամանատար:

Ցարը խոժոռում է հայացքը և հարցնում.

-Իսկ ինչու՞ դուք չնահանջեցիք, երբ ձեզ այդպէս էր հրամայած:

-Ձերդ Արքայական մեծութիւն, նահանջի հրաման ստացայ այն ժամանակ, երբ արդէն կուի մէջ էի թուով 4 անգամ շատ թշնամու հետ, երեք ուղղություններով: Այդ պայմաններում նահանջել նշանակում է կորցնել ամբողջ գումարտակը, ուստի յարմար դատեցի կուել մինչև գիշեր և քաշուել գուշերայ մթութիւնից օգտուելով:

-Ես էլ այդպէս կանէի, ճիշտ ես նկատել, աւելացնում է ցարը և սեղմելով նրա ձեռքը, իր իսկ ձեռքով ամրացնում է Դրոյի կրծքին Գէորգիի Ա. աստիճանը»[3]:

[1] «Հայրենիք» ամսագիր, 1932, հոկտեմբեր, էջ 159:
[2] «Ալիք». Բացառիկ, 1956, թիւ 87, էջ 81:
[3] Նույն տեղում, էջ 75:

Մինչ Դրոն հիվանդանոցի մահճակալին գամված բուժում էր վերքը, Կովկասյան ռազմաճակատում կատարվում են այնպիսի իրադարձություններ, որոնք մեծապես պայմանավորեցին Արեւմտյան Հայաստանի եւ հայության ողբերգական ճակատագիրը: Էնվերի գլխավորած թուրքական զորքերը շարժվելով Սարիղամիշ՝ ծանր կացության մեջ են դնում ռուսական զորաբանակին եւ հետագա հաջողության դեպքում սպառնում ներխուժել Կարս, Ալեքսանդրապոլ, ապա նաեւ Կովկաս:Սարիղամիշի ճակատում թուրքական զորքերի ժամանակավոր հաջողությունների հետեւանքով ռազմաճակատի մյուս հատվածներում տեղաբաշխված ռուսական զորքերը հարկադրաբար թողնում են գրաված դիրքերն ու բռնում նահանջի ուղին: Բնական է, որ հայ կամավորական զորախմբերը, որոնք գործում էին ռուսական զորամասերի կազմում, նույնպես պիտի առաջնորդվեին նույն մարտավարությամբ ու նահանջեին:

Դրոյի բացակայության ընթացքում 2-րդ զորախումբը նրա օգնական Արմեն Գարոյի ու Դաշնակցական Խեչոյի հրամանատարությամբ հաջողությամբ մասնակցում է բազմաթիվ կռիվների եւ արժանանում ռազմաճակատի հրամանատարության գովասանքին:

«Հայերի մասնակցությունը առաջին աշխարհամարտին, 1914-1918 թթ.» պատմա-զինվորական տեղեկագրում դրվատելով Դրոյի գլխավորած 2-րդ կամավորականի ձեռք բերած մարտական նվաճումները՝ հատկապես շեշտվում է Ալաշկերտի եւ Դիլմանի շրջանների հայության պաշտպանության եւ փրկության գործում զորախմբի նշանակալի ծառայությունները[1]:

«Ռուսական հրամանատարությունը,-նշվում է տեղեկագրում,- շատ գոհ է զորախմբի այդ ծառայությունից, քանի որ նա զգալիորեն ազատեց այդ անխուսափելի պարտականությունը կատարելուց մյուս զորամասերին, որոնք զբաղված լինելով բազում այլ մարտական եւ ռազմավարական տեղաշարժերի իրագործմամբ, պետք է կատարեին ընդհանուր իրավիճակից թելադրվող այլ խնդիրներ ու հանձնարարություններ»[2]:

Ըստ կամավորական զորախմբերի գործունեությունը ներկայացնող «Исторический очерк о боевых действых армянких добровольческих дружин» խորագիրը կրող մեկ այլ տեղեկագրի՝ Թափառեզի լեռնացքից նահահանջելուց հետո 2-րդ կամավորականը տեղափոխվել է Ալաշկերտի տարածք ու գործելով Դերիկի շրջանում՝ մինչեւ դեկ-

[1] Տե՛ս ՀՀ ԲԿԱ, թծ. 503, գ. 6, էջ 18:
[2] Նույն տեղում:

տեմբերի 18-ը, գեներալ Աբացեւ զորախմբի ջոկատների համագործակցությամբ մասնակցել է 7 կռիվների: Սարիղամիշի հանրահայտ դեպքերից հետո, երբ տեղի է ունեցել ռուսական զորքերի ընդհանուր նահանջը, 2-րդ զորախումբը թողել է զբաղեցրած դիրքեն ու նույնպես նահանջել: Ռուսական զորքերի ընդհանուր նահանջի հետեւանքով հազարավոր հայեր հարկադրված լքելով իրենց բնակավայրերը՝ հանգրվանել էին Ալաշկերտի սարահարթում[1]:

Տեղեկագրի հավաստմամբ՝ «Այդ նահանջի ընթացքում 2-րդ զորախումը իր զինական պաշտպանության տակ վերցրեց Ալաշկերտից գաղթող մեծաքանակ հայ փախստականների»[2]:

2-րդ կամավորականի գործունեությանը վերաբերող մեկ այլ փաստաթղթում նշվում է. «Երկրորդ գունդը իր գործունեությամբ շատ գոհ է թողել ռուս բանակի հրամանատարներին, իսկ զինուորական շրջաններից առանձին հիացմունքով են խոսում հայ կամաւորների անվեհեր կռիվների մասին»[3]:

Մինչ Դրոն բուժում էր վերքը, Կովկասյան ռազմաճակատում կատարվում են այնպիսի իրադարձություններ, որոնք մեծապես պայմանավորում են Արեւմտյան Հայաստանի եւ հայության ողբերգական ճակատագիրը: Էնվերի գլխավորած թուրքական զորքերը շարժվելով Սարիղամիշ ծանր կացության մեջ են դնում ռուսական զորաբանակին եւ սպառնում ներխուժել Կարս, Ալեքսանդրապոլ, ապա նաեւ Կովկաս: Սարիղամիշի ճակատում թուրքական զորքերի ձեռք բերած հաջողությունների հետեւանքով ռազմաճակատի մյուս հատվածներում տեղաբաշխված ռուսական զորքերը հարկադրաբար թողնում են գրաված դիրքերն ու բռնում նահանջի ուղին:

1914 թ. դեկտեմբերին ավարտվում է հայ կամավորական զորախմբերի մարտական գործունեության առաջին փուլը, որի ընթացքում նրանք կորցրել են իրենց կազմի 1/3-ը, 156 զոհ եւ 743 վիրավոր, ցրտահարվածներ ու հիվանդներ[4]:

Հայ կամավորական զորախմբերը փոքր-ինչ հանգստանալու ու կազդուրվելու եւ մարտական կազմը համալրելու նպատակով տեղափոխվում են Թիկունք, ավելի ստույգ՝ Քանաքեռ:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 3, թ. 8-9:
[2] Նույն տեղում:
[3] ՀՀ ԲԿԱ, թԺ. 503, գ.14, թ. 7:
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 3, թ. 12:

2. 2. ԵՐԿՐՈՐԴ ԱՐՇԱՎԱՆՔԸ
ԴԵՊԻ ՎԱՆ, ՇԱՏԱԽ, ՄՈԿՍ, ՌՇՏՈՒՆԻՔ, ՏԱՐՈՆ

Պատերազմի առաջին երկու ամիսները ցույց տվեցին, որ իզուր էին հայերի հույսերը, թե իբր ռուսական բանակն ընդունակ է եւ կարող մի քանի շաբաթների ընթացքում ջախջախել թուրքական զորքերին ու ազատագրել Արեւմտահայաստանը: Թուրքիայի զանազան շրջաններից մազապուրծ եղած հայ գաղթականները սարսափազդու լուրեր էին հաղորդում արեւմտահայությանը սպառնացող անխուսափելի ջարդերի մասին:

Դեպքերի զարգացման ողբերգական ընթացքը ցույց տվեց, որ «ազատարար» ռուսական բանակը ոչինչ չձեռնարկեց, իսկ հայ կամավորական խմբերը չկարողացան խոչընդոտել ողջ Արեւմտահայաստանն ու Օսմանյան կայսրության մյուս հայաբնակ վայրերը ջարդերի սարսափելի տեսարանների վերածող թուրքերի ու քուրդ ջարդարար ավազակախմբերի հրեշավոր գործողությունները:

Անխուսափելի կոտորածներից փրկվելու նպատակով հայությունը Արեւմտահայաստանի մի քանի շրջաններում դիմել էր ինքնապաշտպանության: Հայոց Ազգային Բյուրոյի եւ կամավորական խմբերի առաջ ծառացած օրվա կարեւորագույն խնդիրը արեւմտահայությանն օր առաջ օգնության հասնելն էր: Պիտի նշել, որ հայ կամավորական խմբերը գործում էին ռազմաճակատի տարբեր ուղղություններում եւ նրանցից յուրաքանչյուրն առանձին վերցրած չուներ ռազմական այնպիսի հզորություն, որպեսզի կարողանար միայնակ լուծել կարեւորագույն նշանակություն ունեցող մարտական առաջադրանքներ: Իսկ ժամանակը չէր աշխատում ի նպաստ հայերի: Տվյալ ժամանակաշրջանում անհրաժեշտ էր միավորել հայկական բոլոր մարտական ուժերը եւ դրանք կենտրոնացնել առավել կարեւորություն ներկայացնող ուղղություններում, որպիսին համարվում էին Վան-Մուշ, Վան-Բիթլիս ուղղությունները:

1915 թ. գումարվում է Հայոց Ազգային Բյուրոյի համագումարը, որի մասնակիցները հիմք ունենալով պատերազմի հետեւանքով ծանրագույն իրավիճակում հայտնված հայության առաջնահերթ ու անհրաժեշտ խնդիրները՝ սահմանում են Ազգային Բյուրոյի գործունեության հիմնական հետեւյալ ուղղությունները.

ա. Հայ կամավորական խմբերի կազմակերպությունը, պահպանությունը և նրանց քանակի ավելացումը ըստ կարևորության և պահանջի:

բ. Հայժողովրդի ինքնապաշտպանությունը այն վայրերում, ուր նրան առավելապես վտանգ է սպառնում:

գ, Բանակցությունները ռուս զինվորական և քաղաքացիական իշխանությունների հետ վերոհիշյալ խնդիրների բարեհաջող կարգավորման համար:

դ. և ի. Դրամական նվիրատվությունների հանգանակումը այլ և այլ հայաբնակ քաղաքներում և վայրերում հայ կամավորական խմբերի պահպանության համար:Բյուրոյի գլխավոր հոգատարության առարկան էր և շարունակում է մնալ մինչև այսօր հայ կամավորների գործունեությունը և նրանց պահպանությունը Տաճկատանի ռազմաճակատում»[1]:

Հայ մարտական խմբերը ենթարկվում էին կովկասյան ռազմաճակատի հրամանատարությանը, իսկ առանց նրա համաձայնության խոսք անգամ չէր կարող լինել նրանց միավորվելու մասին: Առաջնորդվելով վերոհիշյալ նկատառումներով՝ Հայոց Ազգային Բյուրոն դիմում է կովկասյան ռազմաճակատի հրամանատարությանը: Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի եւ կովկասյան ռազմաճակատի հրամանատարության միջնորդությամբ Գերագույն գլխավոր հրամանատարությունը հաստատում է հայկական կամավորական խմբերը միավորելու Ազգային Բյուրոյի ներկայացրած դիմումը: Կամավորական յուրաքանչյուր խմբի թվակազմը հասցվում է 1000-ի եւ այժմ արդեն նրանք իրենց հանդերձանքը, զենքն ու զինամթերքը պիտի ստանային ոչ թե Ազգային Բյուրոյի, այլ ի հաշիվ պետական միջոցների, ավելի ստույգ Կովկասյան ռազմաճակատի հրամանատարության[2]:

Ի տարբերություն նախորդ արշավանքի, այս անգամ արդեն կամավորական զորախմբերը համեմատաբար ավելի լավ էին զինված ու հանդերձավորված: Մի վկայություն այդ արշավանքի մասնակից գնդապետ Ֆեոդոր Ելիսեեւի հուշերից. «Հայ կամաւորները լաւապէս հագուած-սարքուած էին: Անոնք կը կրէին ռուսական հրացաններ, շատերն ալ ունէին մաուզէր սիստեմի երկար ատրճանակներ փայտէ պատեանով...

Քանի մը շաբք փամփշտակալներով ծանրաբեռնուած կըլլային հայ կամաւորներուն կուրծքն ու կողերը, եւ ատիկա ռազմաշունչ երեւոյթ կընծայէր անոնց...

[1] Կարապետյան Մ., Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները Կովկասյան ռազմաճակատում 1914-1917 թթ., Երևան, 1999, էջ 123-124:
[2] ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 3, թ. 12:

Կամաւորական գումարտակներէ իւրաքանչիւրն ունէր հարիւրեակ մը հեծեալ հետախոյզներ: Անոնց երիւարները ուժեղ էին եւ այծերու պէս արագաթռիչ...

Հայ կամաւորներու փառապանծ պետերը հայ քաղաքական գործիչներ էին... Անոնք հագուած ու զինուած էին սովորական կամաւորներու պէս, միայն հրացան չէին կրեր իրենց վրայ: Ոչ մէկը ուսադիրներ կը կրէր, պարզ զինուոր կամ հրամանատար»[1]:

Բացի արդեն գործող կամավորական չորս զորախմբերից, ռազմաճակատի հրամանատարությունը Հայոց Ազգային Բյուրոյին թույլատրում է կազմավորել եւս մեկ զորախումբ:

Բացի դրանից, ռազմաճակատի հրամանատարության եւ անձամբ ռուսական 4-րդ կորպուսի հրամանատարի՝ հայազգի գեներալ Օգանովսկու առաջարկությամբ Հայոց Ազգային Բյուրոն կազմավորում է կամավորական 5-ը զորախումբը, որի հրամանատար է նշանակվում Վարդան Մեհրաբյանը: Պիտի նշել, որ հինգերորդ զորախմբի կազմավորմանը նպատել է ռազմաճակատի Սարիղամիշի հատվածում թուրքական զորքերի ձեռք բերած ժամանակավոր հաջողությունը, որը խուճապային տրամադրություններ էր հաղորդել Թիֆլիսում գտնվող իշխանության ներկայացուցիչների շրջանում: Այդ ժամանակ Թիֆլիսում կային կռիվների բովով անցած ավելի քան 700 մարզված կամավորներ, որոնցից «...կազմուեց հինգերորդ գունդը Խանասորի հերոս Վարդանի ղեկավարութեամբ: Այդ նորակազմ գունդը պէտք է անցնէր անմիջապէս Սարիղամիշի ռուս բանակին օգնութեան, սակայն անկարող եղաւ անմիջապէս զէնք ստանալ եւ մնաց Ալեքսանդրապոլ...»[2]:

Ազգային բյուրոյի Կարգադրիչ մարմնի պետի տեղակալ Ս. Վրացյանի հավաստմամբ՝ կամավորական նոր զորախումբ կազմավորելու նպատակով, գեներալ Օգանովսկու առաջարկությամբ կամավորական զորախմբերի հրամանատարների եւ Կարգադրիչ մարմնի անդամների մասնակցությամբ գումարվում է ժողով, որտեղ որոշվում է Խանասորի Վարդանի կամ Իշխանի(Հովսեփ Արղությանի հրամանատարությամբ) կազմավորել եւս մեկ զորախումբ եւ բոլոր հինգ խմբերը 4-դ կորպուսի կազմում կենտրոնացնել Վան-Վասպուրականի եւ Տարոնի ուղղությամբ[3]:

Խանասորի Վարդանի (Վարդան Մեհրաբյան) գլխավորությամբ Քանաքեռում կազմավորվող 5-րդ զորախումբը հրանոթնե-

[1] «Հայրենիք» ամսագիր, 1957, թիւ 8, էջ 21:
[2] ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 5, թ. 20:
[3] Տե՛ս Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Գ., էջ 68:

րի եւ հրացանների անբավարարության հետեւանքով չի կազմավորվում, իսկ կամավորները հարկադրված համալրում են 1-ին, 2-րդ, 3-րդ եւ 4-րդ զորախմբերի մարտաշարքերը:

Հայ Ազգային Բյուրոյի պահանջով կամավորական 2-րդ, 3-րդ եւ 4-րդ զորախմբերը միավորվելով Վարդանի ընդհանուր հրամանատարությամբ կազմում են «Արարատյան ջոկատ» զորագունդը եւ որպես գեներալ Օգանովսկու գլխավորած կորպուսի կազմում գտնվող գեներալ Նիկոլաեւի Բայազետյան զորամասի առաջապահ միավորում, պիտի գործեին Իգդիր-Բերկրի-Կալա-Վան ուղղությամբ: Անդրանիկի 1-ին կամավորական զորախումբը Սալմաստի շրջանից նույնպես շարժվելու էր Վան:

Ցուրաքանչյուր զորախմբի որպես խորհրդական ուղեկցել է գեներալ Օգանովսկու շտաբի սպաներից մեկը: Դրոյի զորախմբի հետ եղել է զինվորական բարձրագույն դպրոցն ավարտած, ազգությամբ լատիշ, հայասեր կապիտան Օզոլը[1]:

Պիտի նշել, որ այս անգամ կամավորական խմբերին զենքն ու զինամթերքը տրամադրել է ռուս կառավարությունը, իսկ նյութական ու այլ անհրաժեշտ միջցները ըստ նախապես կազմած նախահաշվի՝ Հայոց Ազգային Բյուրոն, որը այդ միջցները ձեռք էր բերում հայաբնակ տարբեր բնակավայրերից ու առանձին անհատներից ստացած դրամական նվիրատվություններից[2]:

Վարդան Մեհրաբյանին «Արարատյան ջոկատ»-ի հրամանատար նշանակելու որոշումը կամավորական զորախմբերի հրամանատարների կողմից միանշանակորեն չի ընդունվել:

Ս. Վրացյանը, որն այդ ժամանակ վարել է Ազգային Բյուրոյի կամավորական խմբերի կազմավորման շտաբի (Կարգադրիչ մարմին) պետի՝ Նիկոլ Աղբալյանի տեղակալի պաշտոնը, անդրադառնալով «Արարատյան ջոկատ»-ի հրամանատարի ընտրության հարցին՝ գրել է. «Կրկնուեց Խանասորի արշաւանքի սխալը: Հրամանատարութեան ամենէն արժանաւոր թեկնածուն Նիկոլ Դումանը անտրտունջ ենթարկուեց որոշման եւ արշաւանքին մասնակցեց իբրեւ յիսնապետ, Անդրանիկը խռովեց եւ մերժեց մտնել Արարատեան ջոկատի կազմի մէջ: Պետք է ասել, որ Վարդանի՝ ջոկատի հրամանատար նշանակելուց գոհ չէին եւ միւս հրամանատարները, մասնաւորապէս Դրօն, որ առողջացած, թէեւ գնդակը թոքերի մէջ, ստանձնել էր կամաւորական երկրորդ խումբի հրամանատարութիւնը»[3]:

[1] Տե՛ս Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, նշվ. աշխ., էջ 254:
[2] Տե՛ս Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 124:
[3] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Գ, էջ 69-70:

Դրոն, իհարկե չէր կարող դեմ չլինել, որ Արարատյան զորագնդի հրամանատարությունը ստանձներ իր «Մեծ ուսուցչի»՝ Նիկոլ Դումանի մշտական հակառակորդ Վարդանը:

Խանասորի Վարդանը՝ անդրադառնալով իրեն Արարատյան զորախմբի հրամանատար նշանակելու իրողությանը՝ պատճառաբանում է հետեւյալ փաստարկով. «Այդ ժամանակ Երեւանում էին մեր ընկերներից Ռոստոմը, Միքայել Հովաննիսյանը (Մ. Վարանդյան) եւ ուրիշներ: Ցանուն այդ մեծ եւ սրբազան գործի, ինձ ստիպեցին (ես չէի ուզում, իմանալով կամավորների եւ իրենց ղեկավարների բոլոր թերությունները եւ անդիսցիպլին լինելը) բոլոր խմբերի ընդհանուր ղեկավարությունը վերցնել եւ շուտով առաջ շարժվել»[1]:

Ս. Վրացյանի գնահատմամբ՝ այդ պաշտոնին առավել արժանի էր Անդրանիկը, բայց «...նա նահանջի ժամանակ այնպիսի ջղայնություն էր ցոյց տալիս, այնպիսի անհաւասարակշիռ բանէր անում, որ գրեթէ ամէնքը դէմ էին՝ թէ՛ հրամանատարները, թէ՛ Ռոստոմը...»[2]:

Հարկ է ընդգծել, որ Ս. Վրացյանի արտահայտած վերոհիշյալ գնահատականը Դրոյին չի վերաբերվում:

Դրոն, համաձայն չէր, որ Խանասորի Վարդանը ստանձներ «Արարատյան ջոկատ»-ի հրամանատարությունը: Նրան անշուշտ հայտնի էին Վարդանի հրամանատարական համեստ կարողությունները, ինչպես նաեւ նրա եւ իր «Մեծ ուսուցչի»՝ Նիկոլ Դումանի միմյանց նկատմամբ դրսեւորած ոչ այնքան բարյացակամ հարաբերությունները: Նա ցանկանում էր, որ Արարատյան զորագնդի հրամանատարությունը ստանձներ Անդրանիկը կամ Քեռին, որի հետ, որպես իր նախկին հրամանատարի, կապված էր ջերմ սիրով ու հարգանքով: Նրա համոզմամբ ավելի ճիշտ ու օգտակար կլիներ, եթե զորագնդի հրամանատարությունը ստանձնեին Անդրանիկը կամ Քեռին, որոնք իրենց հարամանատարական կարողությամբ ավելի բարձր էին, քան Վարդանը:

Վարդան Մեհրաբյանին «Արարատյան ջոկատ»-ի հրամանատար նշանակումից, ինչպես արդեն նշվել է, հատկապես խիստ դժգոհել է Անդրանիկը, քանի որ ինքն էր ցանկանում ստանձնել զորախմբերի ընդհանուր հրամանատարությունը, ուստի այդ հողի վրա ավելի են խորացել նշանավոր հայդուկապետի եւ Ազգային Բյուրոյի միջեւ արդեն նկատելի հակասությունները:

[1] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 11, գիրք 4, էջ 6:
[2] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Գ, էջ 68:
[2] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 11, գիրք 4, էջ 6:

Խոյի շրջանում տեղի ունեցած Դյուզդաղ սարի մերձակայքում տեղի ունեցած կռվից առաջ, խստորեն արտահայտելով իր դժգոհությունը ռազմաճակատ գտնվող Ռոստոմին, Անդրանիկն ասել է. «Դուք արհամարեցիք իմ քսան տարուան փորձառությունը:

...Դուք գնդապետ կընտրէք Վարդանը, ինչու՞, որովհետեւ ան ռուսահայ է: Թո՛ղ, ան լինի, բայց այս բանակին մէջ մնալ ես այլեւս...»[1]:

Անդրանիկն այն աստիճան վրդոված ու բարկացած է եղել այդ նշանակումից, որ երբ նույն օրը Ռոստոմն անզուշաբար վայր է ընկել ձիուց, Անդրանիկը դույզն ինչ չի փորձել օգնել նրան, թողել է իր կուսակցական ընկերոջը գետնին ընկած ու մտրակելով իր նժույգը՝ հեռացել:

Ճիշտ է, Վարդան Մեհրաբյանը օժտված չէր հրամանատարական ընդգծված կարողությամբ, բայց լինելով հեղափոխական առաջին սերնդի ու Դիրիկի վանքում հանդրվանած անդրանիկ հայդուկներից մեկը՝ իր հեղափոխական կենսագրությամբ զգալիորեն գերազանցում էր Անդրանիկին:

Այսուհանդերձ, որպեսզի գոհացում տրվեր Անդրանիկի դժգոհությանը, նրա գլխավորած 1-ին կամավորականը չի ընդգրկվում Արարատյան զորագնդի կազմում եւ գործելու էր անկախ:

Մոտ երկու ամիս Թիֆլիսի Արամյան հիվանդանոցում բուժվելուց հետո Դրոն փետրվարի վերջերին դեռեւս լիովին չապաքինված վերադառնում է մարտաշարք եւ վերստին ստանձնում 2-րդ կամավորականի հրամանատարությունը:

«1915 թուի փետրուար 28-ին,-նշում է Մարտիրոսը,-Դրօն Երեւան եկաւ Թիֆլիսից: Կատարելապէս չէր բուժուել, Երեւանում կրկին պառկեց հիւանդանոցում: Բժ. Տէր- Գաբրիէլեանը կրկին գործողութիւն կատարելով՝ եկաւ այն եզրակացութեան, որ «գնդակը ձախ թոքից հանելը վտանգաւոր է, արիւնահոսութիւնը դադարեցնել թերեւս հնարաւոր չլինի...

Տասնհինգ օր Երեւանի հիւանդանոցում՝ մնալուց յետոյ, Դրօն վեր կացաւ եւ անցաւ իր գումարտակի գլուխը»[2]:

Քանաքեռում վերակազմավորվող հայկական զորախմբերը համալրվում են նոր կամավորներով: 2-րդ կամավորականի հրամանատար Դրոյի օգնական է նշանակվում Գարեգին Նժդեհը, իսկ նույն

[1] Սեպուհ, էջեր իմ յուշերեն, հ. Ա, էջ 184:
[2] Խմբապետ Մարտիրոս Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 254:

խմբի 2-րդ վաշտի հրամանատարությունը ստանձնում է Ղազար Քոչարյանը (Քաչալ Ղազո կամ Մեծ Ղազար - Հ.Գ.):

Ապրիլի 15-ին զորախումբը թողնում է Երեւանը եւ մինչեւ ռազմաճակատ մեկնելը անցնում Էջմիածին՝ ստանալու Հայոց Հայրապետի օրհնությունը:

Պատմում է այդ արարողության մասնակից Վահան Համբարձումյանը. «Ամենայն Հայոց կաթողիկոսը՝ Գէորգ Ե. պիտի օրհնէր մեր քաջամարտիկները, որպէսզի իրենց սուրը հատու եւ բազուկները հուժկու ըլլային: Ինչ ծաղկեփունջեր ու օվասաններ, ինչ յուզիչ տեսարաններ ու կեցցէներ... Մերուկները կարտասուէին, երիտասարդներ կը խայտային:

Արարատեան գունդը գիշերը անցուց Էջմիածին: Երգ ու պար, ցնծութիւն: Առաւօտեան, Գէորգեան ճեմարանի հարաւային բակի մէջ, կատարուեցաւ դրօշներու օրհնութիւնը, այրուձի եւ հետեւակ, զէն ի ձեռքին, պատուի էին կեցած, երբ Վեհափառը, շրջապատուած եպիսկոպոսներով ու վարդապետներով, յամրաքայլ մօտեցաւ պատուոյ սեղանին, ուր դրօշակներ էին կանգնեցրած: Արարողութիւնը սկսաւ խուռներամ բազմութեան ներկայութեամբ, խորհրդաւոր լռութեան մէջ: Վեհափառը օրհնեց դրօշակները եւ հրամանատարներուն ուժ ու կարողութիւն մաղթեց»[1]:

Ստանալով Հայոց Հայրապետի օրհնությունը՝ կամավորները շարժվում են Իգդիր եւ ապա պատրաստվում այնտեղից ուղեւորվել ռազմաճակատ: Արեւմտահայաստանում ծավալվող դեպքերը հրամայաբար թելադրում էին, որ կամավորական զորախմբերը պետք է անհապաղ սկսեին արշավանքը եւ օր առաջ օգնություն հասնեին Վանի ու ինքնապաշտպանության դիմած մյուս շրջանների հայությանը: Սակայն վերին հրամանատարությունը զանազան պատրվակներով ձգձգում էր հարձակումը:

Անդրադառնալով ռուսական հրամանատարության կողմից իրենց նկատմամբ դրսեւորած վերաբերմունքի գնահատմանը՝ «Արարատյան ջոկատ»-ի հրամանատար Վարդանը նշում է. «Այդ ժամանակաշրջանում մասնավորապէս եւ առհասարակ ընդհանրապես ռուսների վերաբերմունքը դեպի հայերը, դեպի հայկական հարցը շատ կասկածելի եւ խորհրդավոր է յեղել: Ցերբ Վանը շրջապատված էր տաճկական զորքով, ժողովուրդը հերոսաբար ամբողջ ամիս դիմադրում էր, քանիսիցս դիմեցինք կառավարության, նկարագրեցինք Վանի

[1] «Ալիք» բացառիկ, 1956, մայիսի 4, էջ 57:

դրությունը, վոր զորքերը շարժեն դեպի այն կողմ: Նոքա մեզ պատասխանում էին. թէ այո մենք պէտք է գնանաք, բայց վոչ այժմ»[1]:

Երկար սպասեցնելուց հետո, կամավորական խմբերը վերջապես ստանում են դեպի Վան արշավելու հրամանը: Ղազար Քոչարյանի վկայությամբ. «Իգդիր էինք, երբ ստացուեցաւ Վանի Արամի մէկ գրութիւնը, որով անմիջական օգնութիւնը կը խնդրեր մեզմէ...»[2]:

Հապաղելու ժամանակ այլեւս չկար: Արամի գրությունը ստանալուն պես Արարատյան զորագունդը, որի կազմում էր նաեւ Դրոյի առաջնորդած կամավորական 2-րդ զորախումբը, անմիջապես ուղեւորվում է դեպի Վան:

«Ապրիլի 20-ին, - նշվում է կամավորական զորախմբերի գործողությունները ներկայացնող տեղեկագրերից մեկում, - դժվարին արշավից հետո Արարատյան զորագունդը Իգդիրից հասնում է Կիզին-Դիզ եւ այնտեղ ընդգրկվում Բայազետյան զորամասի կազմում»[3]:

Արարատյան զորագունդն արշավանքի է դուրս եկել իր կազմում ունենալով 2300 հետեւակ ու 500 հեծյալ զինվորներ[4]:

Բացի Վարդանի գլխավորած Արարատյան զորագնդից, գեներալ Նիկոլայեւի գլխավորած Բայազետյան զորամասի կազմում էին ընդգրկված գնդապետ Պերեպլավսկու 6 հարյուրակից բաղկացած գունդը՝ 8 գնդացիրներով, գնդապետ Մագուզովի Կովկասյան 1-ին կազակական գունդը, Կուբանյան 4-րդ հրետանային մարտկոցը(6 հրանոթ), Կովկասյան 4-րդ հրետանային մարտկոցի լեռնա-հեծյալ դիվիզիոնը(6 հրանոթ), փոխգնդապետ Ուշակովի սահմանապահ բրիգադի 1-ին գումարտակը (մեկ հեծյալ եւ 4 հետեւակ հարյուրակ՝ գնդացիրներով), Թուրքեստանյան 2-րդ գումարտակի 5-րդ վաշտը եւ եւս մեկ վաշտ[5]:

Որպեսզի զորամասերը կարողանային առաջ շարժվել եւ դուրս գալ Աբաղայի դաշտավայր եւ օր առաջ ուղեւորվել դեպի Վան, անհրաժեշտ էր նախ եւ առաջ հաղթահարել Թափարեզի լեռնանցքում ամրացված հակառակորդի արգելապատնեշն ու գրավել լեռնանցքը, որը ձմռանը մշտապես տեղացող առատ ձյան պատճառով միշտ փակ էր լինում: Բնակլիմայական դաժան պայմանների պատճառով լեռնանցքում ամրացված հակառակորդի դիմադրությունը հաղթահարելը հեշտ խնդիր չէր:

[1] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 11, գիրք 4, էջ 6-7:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1934, օգոստոս, էջ 135:
[3] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 32, թ. 34 (2):
[4] Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 6, թ. 1:
[5] Տե՛ս նույն տեղում:

«Ապրիլի 24-ին Բայազետյան զորամիավորմանը տրվում է հետեւյալ առաջադրանքը. հաղթահարել եւ անցնել Թափարիզի լեռնանցքով: Այդ առաջադրանքը կատարելու համար ապրիլի 23-ին Բայազետյան զորամիավորումը ընդունում է ելման դրություն»[1]:

Զորախմբերը, համաձայն հրամանատարության որոշման, հարձակումը պետք է զարգացնեին հետեւյալ դասավորվածությամբ.

«Փոխգնդապետ Ուշակովի գլխավոր զորասյունը սահմանապահ ծառայության երկու գումարտակներով եւ երկու գնդացիրներով ու մեկ հեծյալ հարյուրակով գրավում է Ջամալ եւ Սուլեյմանբեկի շրջանը: Արարատյան զորագնդի պետ Վարդանի զորասյունը կամավորական 3-րդ եւ 4-րդ զորախմբերի, կազակների երկու եւ կես հարյուրյակների, երկու գնդացիրների, Կուբանյան 4-րդ մարտկոցի վաշտով գրավում է Բելլսերգ գյուղը:

Աջ զորասյունը՝ Դրոյի գլխավորած կամավորական 2-րդ զորախումբը, գրավում է Ներքին Զուրով գյուղը:

Գնդապետ Միգուզովի հեծյալները 2 գնդերով եւ գնդացիրներով գրավում են Քարաքենտ եւ Թափարեզ գյուղերի շրջանը:Թուրքերը իրենց ուժերը կենտրոնացնում են Կավրե-Շամե գյուղի մերձակայքում, իսկ առաջապահ զորամասերը Թափարեզ սարի լեռնանցքում»[2]:

Այս արշավանքի ժամանակ ռուսական հրամանատարության կողմից կամավորական զորախմբերի նկատմամբ դրսեւորվել է ավելի մեծ ուշադրություն եւ վստահություն, քան նախկինում էր: Այսպես, օրինակ. «Կամավորական զորախմբերի հրամանատարներին հաճախակի նշանակել են զորասյուների պետեր, ընդամին, նրանց ենթարկելով նաեւ կանոնավոր զորամասեր եւ հրետանի...»[3]:

Ապրիլի 24-ին ստանալով հրամանատարության առաջադրանքը՝ զորասյուները սկսում են առաջխաղացումը: Գրոհի աջ թեւում գործող Դրոյի զորախմբին հանձնարարվում հետեւյալ առաջադրանքը. է առավոտյան ժամը 5-ին դուրս գալ Զուրավա գյուղից, ջախջախել զորասյանը դիմակայող Սարիմ Գյոլ լճի մերձակայքում դիրքավորված հակառակորդին եւ նրան հետ շպրտել Սարիմ Գյոլ եւ Դասիմ Գյոլ լճերի մյուս կողմը:

Հայկական մյուս՝ 3-րդ եւ 4-րդ զորախմբերն իրենց աջակցող ռուսական զորավաշտերի համագործակցությամբ հարձակումը պիտի սկսեին Բելլասերգ գյուղի մոտակայքից եւ հաղթահարելով

[1] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 32, թ. 34(2):
[2] Նույն տեղում:
[3] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 102, թ. 44:

դիմակայող հակառակորդի պաշտպանությունը՝ Թափառեզի լեռնանցքով դուրս գային դեպի Աբաղայի դաշտավայրը:

Ճակատում զորքերի հարձակումը ընթացել է աննպաստ պայմաններում, թիկունքային ծառայությունների կողմից շատ վատ են կազմակերպվել մատակարարման աշխատանքները:

«Ճանապարհների եւ փոխադրամիջոցների բացակայության պատճառով ժամանակին չէին բերել ոչ հաց եւ ոչ էլ անասնակերը: Մարդկանց բաժանել էին ընդամենը 1/2 ֆունտ հաց»[1]:

Բնությունն իր հզոր տարերքով շատ դաժան է գտնվել դեպի Վան արշավող զորքերի նկատմամբ: Տեղացող առատ ձյունը, փակելով բոլոր ճանապարհները եւ ուղիները, խոչընդոտում էր զորքերի առաջ շարժվելուն ու տեղաշարժերին: Ռուսական զորամիավորման առջեւից ընթացող հայ կամավորները անասելի դժվարությամբ ու ուժերի գերագույն լարումով պետք է ճեղքեին ձյան հաստ շերտերը եւ ճանապարհ բացեին իրենց ետեւից եկող զորքերի համար:

«Մարդիկ եւ ձիերը, - գրում է այդ արշավի մասնակից կապիտան Աբոզովը, - թավալվում էին ձյան մեջ, նրանց մեծ դժվարությամբ էր հաջողվում օգնություն ցույց տալ: Զորախմբերը շարժվում էին ժամում մեկ վերստ արագությամբ: Ի դժբախտություն մեզ լեռներում սկսվել էր ձյունախառն ուժեղ բուքը»[2]:

Չնայած անասելի դժվարություններին, կամավորական զորախմբերը՝ գերմարդկային ջանքերով հաղթահարելով բնության հարուցած խոչընդոտները, քայլ առ քայլ առաջ են շարժվում եւ իրենց հետեւից տանում ռուսական զորագնդերը:

Ճեղքելով ձյան շերտերը՝ հայ կամավորները հասնում են թշնամու պաշտպանական բնագծերին եւ գրոհում նրանց դիրքերի վրա: Մեծ եռանդով ու անձնազոհությամբ գործել են կամավորական բոլոր զորախմբերն ու նրանց աջակցող ռուսական զորավաշտերը: Համազասպն իր կամավորներով հասնելով հակառակորդին՝ սրընթաց գրոհ է ձեռնարկում Թափառեզի հարավային ժայռերում դիրքավորված հեծակետերի վրա եւ, հաղթահարելով թուրքերի դիմադրությունը՝ շուտ է տալիս իր զորախումբը Կավրե-Շամե գյուղի ուղղությամբ ու հարվածում այդ հատվածում դիմակայող ուժերի դիրքերին:

Այդ օրը Քեռու գլխավորած 4-րդ զորախումբը, համաձայն Բայազետյան զորամիավորման հրամանատարության հրահանգի, գտնվել է պահեստում (ռեզերվ)՝ Համազասպի 3-րդ զորախմբի թիկունքում:

[1] Նույն տեղում, ֆ. 121, g. 2, q. 32, p.34 (2):
[2] Նույն տեղում:

Բազմափորձ եւ կյանքը կռիվների բովում անցկացրած Քեռու եւ նրա գլխավորած կամավորների համար, նույնիսկ ժամանակավորապես, անասելի ծանր է եղել հանգրվանել թիկունքում եւ իրենց արյունակիցների մարտական գործողությունների սոսկ ականատես լինելը: Կռիվների ամենաթեժ պահին անտեսելով հրամանատարության հանձնարարությունը, Քեռու զինվորները նետվում են գրոհի:

«Քեռու զորախումբը,-վավերագրված է վերոհիշյալ փաստաթղթում,-գնում էր Համազասպի զորախմբի հետեւից: Շատ դժվար էր Քեռու կամավորներին զսպել ռեզերվում: Լսելով կրակոցները՝ նրանք նետվում են գրոհի, իսկ շատերը թաքուն շարժվում են առաջ»[1]:

Դրոյի զորախումբը՝ հարձակվելով ճակատի աջ թեւում, մեծ դժվարությամբ ու համառությամբ հաղթահարում է բնության հարուցած արգելապատնեշներն ու հակառակորդի դիմադրությունը եւ ներխուժում է Աբաղայի դաշտ: Երեկոյան մարտադաշտ է հասնում նաեւ գնդապետ Ուշակովի զորասյունը: Շարունակելով հարձակումը՝ Դրոյի զորախումբը մարտերով հաղթահարում է թուրքերի պաշտպանության հաջորդ հանգույցը եւ երեկոյան գրավում Սաիմ եւ Դասիմ գյուղերի շրջանը[2]:

Նույն օրը Դրոն զորամիավորման հրամանատար գեներալ Նիկոլաեւին հաղորդում է. «Հայտնում եմ Ձերդ գերազանցությանը, որ Ձեր առաջադրանքը ապրիլի 25-ի լույս գիշերը կատարված է...»[3]:

Ճակատի կենտրոնում հայկական 3-րդ եւ 4-րդ կամավորական զորախմբերը, ռուսական զորքերի համագործակցությամբ, նույնպես խորտակում են հակառակորդի պաշտպանությունը եւ հետապնդելով նահանջող թուրքերին՝ հասնում մինչեւ Սաուկ գյուղը: Այսպիսով, հաջողությամբ կատարվում է զորամիավորման հրամանատարության առաջին առաջադրանքը՝ դժվարամատչելի Թափառեզի անցումը:

«Չնայած ճանապարհի դժվարություններին, ցրտին եւ սովին, բոլոր կամավորների տրամադրությունը եղել է հիանալի...

Այդ մարտերի եւ այդ թվում նաեւ բնության դաժան տարերքի դեմ մղած դժվարին պայքարի ընթացքում Արարատյան զորագնդի բոլոր հրամանատարներն իրենց դրսեւորում են որեւէ գովեստից բարձր, արիությամբ եւ անձնազոհությամբ»[4]:

Կռիվների ընթացքում առաջ անցնելով եւ ներխուժելով Աբաղայի դաշտ՝ Դրոյի առաջնորդած զորախումբը, նաեւ ճանապարհների

[1] Նույն տեղում, թ. 36 (2):
[2] Տե՛ս Նույն տեղում:
[3] ՀԱԱ, ֆ. 121, g. 2, q. 32, p.32 (2):
[4] Նույն տեղում, թ. 38:

դժվար հաղթահարելի լինելու պատճառով, կտրվում է զորամիավորման հիմնական ուժերից եւ հայտնվում մեկուսացված ու չափազանց դժվարին պայմաններում: Աբաղայի դաշտավայրի այն տարածքը, ուր ներխուժում են Դրոյի կամավորները, պատված է եղել անհամար, վեր ցցված սուր քարերով ու ժայռերով, որը որպես պաշտպանության միջոց խելամտորեն օգտագործվել է հակառակորդի կողմից:

«...Ոչ մի,- պատմվում է հուշագրությունում, - հնարավորություն չկար կապ հաստատել Դրոյի աջ զորասյունի հետ: Այդ զորասյունը անցնում էր այնպիսի տեղանքով, որտեղով դժվար թե անցած լինեն նույնիսկ առանձին մարդիկ...

... Կամավորները հարկադրված էին հակառակորդին դուրս մղել յուրաքանչյուր քարի հետեւից...

Այդ քարերի միջով մոտավորապես 18 վերստ անցնելու ընթացքում զարնվելով քարերին՝ Դրոյի զորասյունը կորցնում է 13 մարդ: Չնայած դժվարություններին՝ կամավորների եռանդուն հրամանատար Դրոն իր զորախմբով ապրիլի 27-ի երեկոյան հասնում է Սոուկսու գյուղից արեւմուտք...»[1]:

Թափառեզի բարձունքների խոչընդոտները հաղթահարելուց հետո հաջորդ արգելապատնեշը Բերկրի-Կալայի լեռնանցքն էր, որտեղով պետք է անցնեին ռուսական զորքերն ու հայ կամավորները:

Որպեսզի կարողանային արագորեն ու հեշտությամբ հաղթահարել լեռնանցքը պաշտպանող հակառակորդի դիմադրությունը, Բայազետյան զորամիավորման հրամանատարը հրամայում է բոլոր զորասյուներին հարձակումը սկսել միաժամանակ եւ սերտ համագործակցությամբ: Ապրիլի 30-ին զորասյուները շարժվում են դեպի Բերկրիի լեռնանցքը: Համաձայն հրամանատարության առաջադրանքի, Համազասպի զորախումբը պիտի շարժվեր լեռնանցքի աջ կողմով,Դրոն՝ լեռնանցքով, Քեռին՝ ձախ թեւով: Հայկական կամավորական խմբերին հետեւելու էին Բայազետյան զորամիավորման հիմնական ուժերը[2]:

Հայ կամավորներն, ինչպես միշտ, առջեւում էին: Այդ օրը Բայազետյան զորամիավորման հրամանատարության որոշմամբ կամավորական զորախմբերին որպես լրացուցիչ աջակցող ուժ տրվել է մեկական հեծյալ հարյուրակ:

Ցերեկվա ժամը 12-ին սկսվում է մարտը: Ճակատի կենտրոնում Դրոյի 2-րդ, ձախ եւ աջ թեւերում հարձակվող Համազասպի եւ Քեռու 3-րդ եւ 4-րդ զորախմբերն անկասելի հարվածներով ճեղքում են հակառակորդի պաշտպանական բնագծերն ու առաջ խոյանալով՝ մոտենում ընդհուպ Բերկրի-Կալա քաղաքին եւ պատրաստվում անհապաղ գրոհելու[1]:

Թուրքերը նահանջելիս քանդել էին մոտակայքով անցնող գետի միակ կամուրջը: Հարկավոր էր արագորեն հաղթահարել արգելքները եւ ժամ առաջ գրավել թշնամու պաշտպանության որջը: Առաջնորդելով հեծելախումբը՝ Դրոն անվարան մտնում է սառցակալած գետն ու հաղթահարելով այն, առաջապահ զորավաշտով նետվում հակառակորդի դիրքերի վրա:

Վերհիշելով այդ պահը՝ կամավորական 2-րդ զորախմբի 1-ին վաշտի հրամանատար Բաշգառնեցի Մարտիրոս Աբրահամյանը նշում է. «Դրոն իր Առչօ ձիով մտաւ ջուրը: Ձին կանգնել չէր կարողանում, սակայն քիչ յետոյ գլուխը վեր տնկեց, ոտները տեղաւորեց ու կանգնեց: Ջուրը խփում էր ձիու կողքին, կրծքին, մինչեւ թամբի տակը ջուր էր:

Մենակ թամբը, Դրօն ու ձիու գլուխն էին երեւում:

Իմ ձիով կանգնեցի Դրօյի մի կողմում, ուր ջուրն այնքան էլ ուժեղ չէր, Ռուբէնն էլ միւս կողմում: Վաշտը ջոկատային շարքով, իրար ձեռք բռնած, անցաւ ձիերի վրայով:

Գետի միւս կողմում, մագլցեցինք բարձունքը եւ միւս կողմից իջանք թշնամու թեւը»[2]:

Քիչ անց կռվի դաշտ հասած իր զորախմբի մյուս վաշտերի եւ կամավորական 3-րդ ու 4-րդ զորախմբերի համագործակցությամբ Դրոն գրավում է Բերկրի-Կալա քաղաքը:Գրեթե նույն պահին, քաղաք են մտնում նաեւ 3-րդ կամավորականի մարտիկները:

Այդ կռիվը լուսաբանող վավերագրում նշվում է. «...Դրօյի հեծեալները եւ Համազասպի վաշտերը գրոհում են Բերկրի-Կալայի վրայ եւ գրաւում այդ կարեւորագույն հանգույցը, որով վերջապէս մեր ձեռքն է անցնում Բերկրի-Կալայի լեռնանցքն ու Աբաղայի ողջ դաշտաւայրը»:

Ռազմավարական կարեւորագույն նշանակություն ունեցող Բերկրի-Կալայի լեռնանցքի գրավման գործում այդ նույն վավերագիրը շեշտում է ոչ միայն Դրոյի եւ Համազասպի կամավորական զորախմբերի վճռական դերը, այլ նաեւ «Աջ կողմի լեռներից Քեռու զորախմբի հայտնվելը շատ օգնեց Բերկրի-Կալայի գրոհին:

[1] Նույն տեղում, թ. 39:
[2] Նույն տեղում, թ. 41:

[1] Տե՛ս նույն տեղում
[2] Խմբապետ Մարտիրոս Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 258:

Այդ օրվա մեր կորուստներն են՝ 4 կամավոր զոհված, 8 վիրավոր եւ 25 ձի սպանված»[1]:

Հայկական լեռնաշխարհն իր զարմանահրաշ բնությամբ, կառուցվածքի բազմազանությամբ եւ բնակլիմայական պայմանների կտրուկ փոփոխությամբ երբեմն-երբեմն դժվարին ու անհասկանալի անակնկալներ է հրամցրել ու համապատասխան տրամադրություններ հաղորդել ռուսական զորքերին եւ նրանց շարքերում մարտնչող հայ կամավորներին:

Հայ կամավորական զորախմբերի մարտական գործողությունների մասին իր «Казаки на Кавказком фронте 1914-1917» հուշագրքում ուշագրավ մանրամասներ է հաղորդում այդ կռիվներին մասնակից գնդապետ Ֆյոդոր Ելիսեեւը: Կազակ գնդապետի հուշագրքի մի քանի հատվածներ տպագրվել են «Հայրենիք» ամսագրում [2]:

«Թափառէզէն անդին, - պատմում է գնդապետ Ֆ. Ելիսեեւը, - կը սկսեր քարքարոտ վայրէջք մը, որուն սակայն շուտով կը յաջորդէ Աբաղայի տափաստանը:

Մենք մտանք շքեղ խոտաւէտ դաշտ մը, եւ կարծես կախարդական գավազանի մը հարուածով յեղաշրջուած էր կլիման: Ձմեռը փոխուած էր իսկական գարունի մը, եւ ատիկա մեզ կը պատճառեր զարմանք ու հաճոյք միանգամայն...

Դաշտին խոտը կը հասնէր մեր ձիերուն ծունկերը: Հրաշալի աղբիւրներ ու առուակներ կը հոսեին: Մեր տրամադրութիւնը մեկէն բարձրացաւ...»[3]:

Ներխուժելով Աբաղայի դաշտ ու ջախջախելով այդ շրջանում բնակվող քրդական հրոսակախմբերը՝ հայ կամավորները վնասազերծում են իրենց զորասյուների, գումակի եւ հաղորդակցության ուղիների եւ միջոցների վրա մշտապես ասպատակող քուրդ զինյալներին: Բազմաթիվ քրդեր սարսափից եւ հուսահատությունից անիմաստ համարելով իրենց դիմադրությունը՝ կամովին հանձնվում են հայ կամավորներին:

«Երեկոյան,- հավաստում է վավերագիրը, - Բերկրի-Կալան գրավելուց հետո, Դրոն հայերի միջոցով Մամեդ բեկից (քուրդ ցեղապետ-Հ.Գ.) ստանում է նամակ, որով նա հայտնում է, որ ինքն անիմաստ է

[1] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 32, թ.42(2):
[2] Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1957, թիւ 8:
[3] Նույն տեղում, էջ 23:

համարում ռուսական զորքերի դեմ կռվելը եւ այդ պատճառով ցանկանում է ողջ զինյալ խմբերով հանձնվել:

Զորախումբը մեծ սարսափ է տարածում մերձակայքում ապրող քրդերի վրա: Այդ դեպքերից հետո բավական էր, որպեսզի երեւային կամավորները, եւ քրդերն անմիջապես քաշվում էին իրենց որջերը»[1]:

Զսպասելով գեներալ Նիկոլաեւի զորագնդերին՝ Դրոն անվարան հարձակվում է Վան տանող ճանապարհի թշնամու հաջորդ արգելապատնեշների վրա, եւ խորտակելով դրանք՝ արագորեն ուղեւորվում է Վան: 2-րդ կամավորական զորախմբի հարեւանությամբ դեպի Վան էին արշավում նաեւ Համազասպի եւ Քեռու գլխավորած3-րդ եւ 4-րդ կամավորականզորախմբերը:

Սարսափելի տեսարաններ են բացվում կամավորների առաջ: Դրոյի խումբն, անցնելով Աբաղայի դաշտավայրով, ողջ ճանապարհին հանդիպում է հայկական լքված, ավերակ գյուղերի եւ մորթված բազմաթիվ դիակների: Մի խոսուն վկայություն գնդապետ Ֆ. Ելիսեեւի հուշերից. «Բաւական առաջացած էինք, առանց կենդանի շունչի մը հանդիպելու մեր ճամբին: Եւ յանկարծ շան հաչոց կը լսենք: Գիւղ մը երեւաց մեր առջեւ: Արագօրէն կը մտնենք գիւղէն ներս, բայց մարդ չենք գտներ հոն: Միայն մորթոտուած կանանց ու մանուկներու դիակներ կային: Ատկէ հետեւցուցինք, որ հայկական գիւղ մըն էր: Դիակները տակաւին քայքայուած չէին, որ կը նշանակէր թէ կոտորածը նոր էր տեղի ունեցած: Երկու-երեք նիհար շուներէ բացի, ուրիշ ոչ ոք ողջ մնացեր էր գիւղի մէջ»[2]:

Այդ ամբողջ ազատագրված տարածքում հանդիպում էին միայն թուրքական ու քրդական զինյալ խմբեր, որոնք զոհ էին դառնում սարսափազդու տեսարաններից վրեժխնդրությամբ համակված հայ զինվորներին:

«Դրոյի զինվորները գրոհում են նահանջող թուրքերի վրա եւ սրի են քաշում բազմաթիվ թուրքերի ու քրդերի: Դեպի դաշտավայրը փախչող համարյա բոլոր քրդերը սրի են քաշվել Ձեմլյակի (Դրոյի զորախմբի հեծյալ հարյուրակի հրամանատար Արտեմ Նանումյան - Հ.Գ.)ձիավորների կողմից: Հետապնդելով թուրքերին, այդ քաջարի հեծյալները գրավում են Քեչկզ գյուղը»[3]:

Բարձր գնահատելով մարտերում հայ կամավորների դրսեւորած հերոսական գործողությունները՝ գնդապետ Ֆ. Ելիսեեւը նշում է.

[1] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 32, թ.42 (2):
[2] «Հայրենիք» ամսագիր, 1957, թիւ 8, էջ 25:
[3] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 32, թ.42 (2):

«Հայ կամաւորները փաստօրէն արժէքաւոր օժանդակութիւններ կը-նէին կօզակներէ կազմուած մեր Զօրամասին: Անոնք կը կռուէին մո-լեռանդօրէն, գաղափարօրէն: Թուրքերն ու քիւրտերը հայ մը գերի չէին առներ, այլ անմիջապէս կը մեռցնէին զայն: Փոխադարձաբար նոյնը կընէին հայերը բռնուած թուրքի մը կամ քիւրտի մը: Անիկա կը ջարդէին զիրար»[1]:

Բերկրի-Կալայի լեռնանցքի, քաղաքի եւ Աբաղայի դաշտավայրի գրաւումը հույժ կարեւոր էր. նախ բնակլիմայական խստաշունչ պայմաններում հաղթահարվում է հակառակորդի դիմադրությունն ու հնարավորություն է ընձեռվում լեռնանցքով առաջ շարժվելու մնացած զորամասերին:

Անկասկած հայ կամավորները ավելի վաղ կարող էին մտնել Վան, եթե չլինեին ռուսական հրամանատարության կիրառած հայ զինվորների համար անհասկանալի մարտավարությունն ու չինծու արգելքները: Բերկրի-Կալայում եւ նրան հաջորդած հենակետերում դիրքավորված թուրք զինվորների դիմադրությունն արագորեն խորտակելուց հետո, երբ Դրոն նույն ուժգնությամբ անվարան առաջ էր շարժվում, հանկարծ ստանում է հարձակումը դադարեցնելու մասին զորախմբի հրամանատար գեներալ Նիկոլաեւի անսպասելի հրամանը:

«Բերկրի-Կալայի գրաւումից հետո Բայազետյան զորամասին հրամայվում է ամրանալ Բերկրի-Կալայում եւ մնալ այնտեղ...

Իսկ այդ ընթացքում ստացվում են տեղեկություններ, որ գրեթե մեկ ամիս պաշարման մեջ գտնվող Վանի հայությունը արդեն սպառել է փամփուշտները եւ հայտնվել օրհասական վիճակում»[2]:

Անդրադառնալով ռազմաճակատում տիրող կացությանը եւ հրամանատարության այդօրինակ անսպասելի հրամանին՝ Արարատյան զորագնդի հրամանատար Վարդանը գրում է. «Մենք գիտեինք, Վանը շրջապատուած կանոնաւոր զօրէներով եւ քրդական հրոսակներով, կատաղի, անհաւասար կռիւ է տեղի ունենում եւ աշխատում էինք օր առաջ օգնութեան հասնել: Անսպասելի եւ մեծ եղաւ զարմանքս երբ գեներալ Նիկոլաեւը ինձ յայտարարեց , թէ կարգադրուած է Բերկրի Կալայում մնալ եւ առաջ չշարժուել: Наша задача только до Беркрикала»[3]:

Ավելի քան անհասկանալի ու զարմանալի էր նման որոշումը: Իսկ Վանից այդ օրերին ստացվող տագնապալի լուրերը թելադրում էին, որ անհրաժեշտ էր կատարել ճիշտ հակառակը:

Հապաղելը կարող էր ճակատագրական նշանակություն ունենալ: Թուրք հրամանատարությունը կարող էր օգտվել ռուսական զորքե-

[1] «Հայրենիք» ամսագիր, 1957, թիւ 8, էջ 21:
[2] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 32, թ.42 (2):
[3] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, «Վարդանի հիշատակարանը», էջ 93

րի պասիվությունից ու դանդաղկոտությունից եւ մեծ ուժեր նետելով Վան՝ ընկճել քաղաքի հերոսամարտիկների դիմադրությունը:

Վարդանի պնդմամբ՝ ինքը ընդհմացել է հրամանատարին եւ առանց տատանվելու պատասխանել, որ իրենք կանգ չեն առնի եւ շրջանցելով գեներալ Նիկոլաեւի որոշումը, հրամայել է զորագունդին առաջ շարժվել մինչեւ Վանա լճի արեւելյան ափը՝ Ջանիկ[1]:

Անկասկած, համանման դիրքորոշում առանց բացառության ունեցել են նաեւ զորախմբերի հրամանատարներն ու զինվորները:

Անդրադառնալով այդ օրերի դեպքերին՝ Բաշգառնեցի Մարտիրոսն իր հուշերում գրում է. «...Դրօն դիմեց զօրաւարին եւ խնդրեց թոյլ տալ առաջ շարժուելու, որպէսզի Վանի ժողովուրդը ի զուր չկոտորուին: Զօրաւարը մերժեց:

Դրօն ի մի հաւաքեց իր զօրամասի խմբապետներին եւ յայտնեց, թէ Ջերնոզուրովի եւ Անդրանիկի բանակը չի կարողանում առաջանալ Դիլմանում տեղի ունեցող կռուի պատճառով, որով եւ մեզ էլ հրամայում է չառաջանալ, թէ մեր չառաջանալու դէպքում Վանի մեր ազգակիցները կարող են կոտորուել, թէ մեր այստեղ մնալը այսքան զինուած ուժով կը լինի դաւաճանութիւն ու կը ծանրանայ մեր խղճի վրայ: Առաջարկեց զօրամասը յանձնել Նժդեհին, իսկ ինքը որոշած է 150 տղաներով գաղտնի ճանապարհով մտնել Վան, որով հնարաւորութիւն պիտի տրուէր Վանին մի առ ժամանակ էլ դիմանալ: Հակառակ պարագային, եթէ այդ իրեն չյաջողուէր, գոնէ հանգիստ սրտով կը մեռնէինք մեր ժողովրդի հետ միասին:

Բոլորս տուինք մեր համաձայնութիւնը եւ պատրաստուեցինք գիշերը մեկնել...»[2]:

Դրոյի՝ վճիռներ ընդունելու համարձակության եւ հաստատակամության մասին ուշագրաւ փաստեր է արձանագրում նաեւ 2-րդ կամավորականի հեծյալ հարյուրյակի հրամանատար Յապոնը: Ըստ նրա վկայության, այն պահին, երբ ռուսական հրամանատարությունը անորոշ պատճառներով ձգձգում էր հարձակումը, Դրոն լի էր վճռականությամբ, թեկուզ փոքրաթիվ խմբով, անպայմանորեն շուտափույթ օգնության հասնել Վանի պաշարված եւ ժամ առ ժամ անհամբերությամբ կամավորներին սպասող հայությանը[3]:

Բարեբախտաբար, ռուսական հրամանատարությունը առաջնորդվելով ինչ-ինչ նկատառումներով փոխում է իր նախկին որոշումը եւ

[1] Նույն տեղում:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1934, թիւ 8, էջ 73:
[3] Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1941, թիւ 7:

զորքերը վերսկսում են հարձակումը: Մայիսի 1-ին ռուսական զորքերն ու հայ կամավորները հասնում են Քելկ գյուղ, ուր յուրաքանչյուր զորախումբ՝ ստանալով համապատասխան հանձնարարություն, շարունակում է հարձակումը դեպի Վան:

«... 3-րդ զորախումբը շարժվելու էր լճի առափնյա երկայնքով եւ պետք է գրավեր Փանզու գյուղը, 4-րդ զորախմբին հրամայվում է շարժվել Շեւկյարի ուղղությամբ եւ գրավել Շեւկյարի հարավային գագաթը: 2-րդ զորախմբին հրամայվում է առաջ շարժվել Կորսուա սարի ուղղությամբ եւ գրավել նրա գագաթը»[1]:

Առաջապահ ունենալով հեծյալ հարյուրակները՝ զորախմբերը նետվում են գրոհի եւ հաջողությամբ խորտակելով թուրքերի պաշտպանությունը՝ մոտենում են Ջանիկ եւ Դերիբեկ գյուղերին, գրավում դրանք եւ զարգացնելով հարձակումը՝ թուրքերից ու քրդերից մաքրում բազմաթիվ բնակավայրեր:

«... Թուրքերը թողնելով 240 դիակ եւ 300 զենք եւ շատ փամփուշտ՝ փախչում են հարավ...

Դրոյի զորախումբը թուրքերի եւ քրդերի զորավաշտերի դեմ մարտի է բռնվում Շեխկարե գյուղի մոտ, ուր սպանվում են մեծ թվով թուրքեր եւ քրդեր, ինչպես նաեւ թուրքական մի յուզբաշի: Դրոն, հետապնդելով փախչող թուրքերին, հասնում է մինչեւ Ավերյակ գյուղը»[2]:

Գրավելով Շեխկարե, ապա Ավերյակ, իսկ հաջորդ օրը Ջանիկ գյուղերը՝ Դրոյի գլխավորած կամավորական 2-րդ զորախումբը, առաջ ընկնելով հարձակվող զորամիավորումից՝ արագորեն մոտենում է Վանին:

«Բաւական մը յառաջացած էինք, - գրում է 2-րդ կամավորականի վաշտապետերից Ղազար Քոչարյանը,-երբ, թնդանոթի ձայներ լսուեցան. ձայները հարաւէն կուգային ու շատ պարզ էր, որ թուրքերը կրկին Վանը ռմբակոծել էին սկսած: Ամբողջ գիշեր մենք լսեցինք թնդանոթի խուլ որոտները: Դրօն, իր վերցուցած ձիաւոր ջոկատները, հարթ ճանապարհով, իսկ մենք՝ Գիւանոցի եւ Աւերեակի ուղղութեամբ սկսանք յառաջանալ: Եթէ չլլային ճանապարհի ընթացքին պատահած մէկ քանի փոքր ընդհարումները, որոնք բաւական ժամանակ խլեցին մեզմէ, գուցէ այդ օրը իսկ Վան մտնէինք: Թշնամու փոքրիկ ու անկանոն ուժերու երբեմնի յարձակումները ստիպեցին մեզ կանգ առնել ու ապահովելու համար մեր թիկունքը,

[1] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 32, թ.44(2):
[2] Նույն տեղում:

որոշ հետախուզութիւններ կատարեցինք: Աւարտելով մեզ համար շատ անախորժ, սակայն անհրաժեշտ աշխատանքը՝ երկու օր յետոյ միայն Վան ուղղուեցանք»[1]:

Վանեցիների հերոսական ինքնապաշտպանության ու հայ կամավորական զորախմբերի հարձակումների հարկադրանքով թուրքական հրամանատարությունը ճարահատյալ վերացնում է քաղաքի պաշարումը: Հերոսամարտի զինվորները, ոգեւորված թուրքական բանակի փախուստից, գրոհում են քաղաքի թուրքական թաղամասերի վրա եւ կրակի տալիս դրանք: Վանից ոչ հեռու գտնվող հայ կամավորները, պարզորեն տեսնելով քաղաքից բարձրացող կրակն ու ծուխը եւ կարծելով, թե թուրքերն են այրել հայկական թաղամասերը, ավելի են արագացնում առաջխաղացումը: Այրվող քաղաքի տեսարանից խոցված Համազասպը (ծնունդով վանեցի- Հ.Գ.), որի առաջնորդած 3-րդ կամավորականը փոքր-ինչ ավելի հեռու էր գտնվում քաղաքից, հեռագրում է Վանին ավելի մոտ գտնվող Դրոյին. «Հասիր, հարազատ քաղաքս այրվում է...»:

Իսկ այդ ժամանակ հայ կամավորները եւ հրամանատարությունը դեռեւս չգիտեին եւ չէին կարող իմանալ քաղաքում կատարվող դեպքերի իրական ընթացքն ու մանրամասները: Իրականում այրվում էին թուրքական թաղամասերը:

Մի փոքրիկ հատված Դրոյի պատմածից. «...Վերջապէս, ռուսական զօրաց հրամաններէն «մա~րշ դէպի Վան» լսուեցաւ, ալ զինուորական օրէնք, կարգապահութիւն գոյութիւն չունեցաւ մեզ համար: Անմիջապէս ճամբայ ինկանք եւ վաղ առաւօտ, մութ ու լուսին, Շահպաղիի բարձունքները հասանք: Այնտեղէն որոշ կը տեսնէինք Այգեստանի բոլորտիքը թուրքերու զատ թաղերը, որոնք դեռ կը վառուէին: Իսկ մեզ հետ եղող վանեցի քաջերը, ուրախութենէն խելագար, սկսեցին երգել. «Կռուեցէք տղերք, կռուեցէք քաջ-քաջ, անուեհեր կանգնած թշնամու առաջ...»:

Ցուզուեցայ ես ալ: Երգը իմ խմբապետիս Նիկոլ Դումանի երկիր մտնելու առաջին երգն էր, յօրինուած Վանի մօտ Պողազքեասան գիւղի հայդուկային կռուին (1895) յիշատակին»[2]:

Համաձայն Արարատյան զորագնդի հրամանատարության որոշման՝ Վան քաղաք առաջինը պիտի մուտք գործեր յուրաքանչյուր երեք զորախմբերի 50 հեծյալ զինվորներից բաղկացած միացյալ ջոկատը, զորագնդի հրամնատար Վարդանի օգնական Դաշնակցական

[1] «Հայրենիք» ամսագիր, 1931, սեպտեմբեր, էջ 138:
[2] Նույն տեղում, 1967, հունիս, էջ 3:

Խեչոյի գլխավորությամբ: Հեծյալ ջոկատի հետ Վան պիտի մուտք գործեր նաեւ Դրոյի զորախմբի Դալի Ղազարի գլխավորած վաշտը:

Արարատյան զորախմբի հրամանատար Վարդան Մեհրաբյանի պնդմամբ Վան մուտք գործելու պատիվը Դաշնակցական Խեչոյին ընձեռելու իրողությունը նրանց կողմից կանխամտածված էր եւ պտճառաբանված: Քանի որ նախորդ կռիվների ժամանակ հայկական որեւէ բնակավայր ազատագրելիս, երբեմն կամավորական զորախմբերի հրամանատարների միջեւ բուռն վեճեր է ծագել, գրված տեղամասը առաջինը մուտք գործելու մենաշնորհը իր գլխավորած զորախմբին վերագրելու պատճառով, ուստի նման անցանկալի միջադեպեր տեղիք չտալու նպատակով, համաձայն Վարդանի հավաստման, որոշվում է. «...Վան մտնելուց կարող էր մրցման հետեւանքով աւելի մեծ անախորժութիւններ առաջ գալ, վորոշեցինք վոր Վան առաջին անգամ պէտք է մտնի Խէչոն»[1]:

Մայիսի 5-ի առավոտյան Արարատյան գնդի հեծյալ ջոկատը Դաշնակցական Խեչոյի եւ քաղաքին ավելի մոտ գտնվող Դրոյի զորախմբի Դալի Ղազարի գլխավորած առաջապահ վաշտը սրարշավ մտնում են քաղաք: Ընդամենը երկու ժամ անց քաղաք են մտնում 2-րդ կամավորական զորախմբի մյուս վաշտերը: Հայ կամավորական չորս զորախմբերից Դրոյի գլխավորած զորամասը, այնուամենայնիվ, առաջինն է մտնում Վան եւ արժանանում քաղաքի բնակչության ջերմ ընդունելությանը:

Վանի հերոսամարտի ղեկավարներից Հայկ Կոսոյանը, վերհիշելով իր եւ քաղաքում գտնվող ողջ բնակչության համար այդ երջանիկ պահը, ջերմությամբ գրում է. «30-օրեայ գոյամարտի անհաւասար խիզախումներից յետոյ, արիւնոտ պայքարի քննութեամբ յաղթանակը նւաճած մի սերունդ՝ այն օրը իր ազատ թեւերուն մէջ ընդունեց Արարատեան գնդի մաս կազմող մէկ հազարեակին եւ նրա առաջնորդ հրամանատար Դրոյին:

Վան քաղաքամիջի Զինուորական Վարիչ կազմը այդ օր իւր 150-ի հասնող ժողովրդական զէնքերով զինուած մարտիկներով միասին կեդրոնացած էին հազարաւոր երկսեռ քաղաքացիների հետ, պատմական քաղաքի հիւսիսային կողմի դաշտագետնի վրայ, Աւանուց գետափին, ընդառաջելու Դրոյին եւ իւր գնդին...

... Ու հասաւ պահը ցանկալի...

Պահերից ամենից աննկարագրելին, ամենից պատմականը:

Ահա գնդի հրամանատար քաջարի Դրօն, իր երկու թիկնապահների հետ սրարշաւ, փոշու ամպերը յետեւ թողած, հասաւ մեզի՝ գոչելով հաղթ ձայնով.

[1] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 11, գիրք 4, էջ 62-63:

Ողջո՜յն հերոսներին, ապրէք տղաներ, երջանիկ ենք, որ դիմաւորում էք մեզ իբրեւ յաղթողների, փառք ձեր զէնքերին... պատիւ ձեր զինապայքարին...

Մենք մեզ տեսանք շրջապատուած կամաւորական վաշտերի քառակուսի շրջանակի մէջ: Իսկ Դրօն ձիուց վայր ցատկելով ողջագուրեց մեզ, միշտ կրկնելով.

«Շնորհաւորում եմ ձեր ժողովրդական փայլուն յաղթանակը, ձեր զէնքի փառքը, շատ ապրէք...

Ապա հրամայեց գնդի առաջին հարիւրակին օդի մէջ կրակել համազարկերով հրացանային հինգական փամփուշտներ, ուռաներով հանդերձ...Մեր մարտիկները, որոնք զինուած էին տասհարուածեան մաուզէր ատրճանակներով, օդի մէջ պարպեցին 10-ական գնդակներ՝ գնդացրային արագահարուածութեամբ:

Այս ժամանակ ահա, շարժուեցին մեր երկու դրօշները, որ նշանակ եղաւ, որպէսզի բերդի բարձունքներից որոտան մեր գրաւուած թնդանօթները՝ 50 հրանօթային արձակումներով:

Հայկական զէնքի փառատօնով, թնդանօթային որոտներով, հայ հողի վրայ, մենք ընդունեցինք Դրոյին եւ իր գնդին»»[1]:

Երկու օր անց քաղաք են մտնում Համազասպի եւ Քեռու 3-րդ, 4-րդ մարտագնդերը եւ գեներալ Նիկոլաեւի զորագնդերը, իսկ ավելի ուշ Վան է հասնում նաեւ Անդրանիկի զորամասը:

Վանի ազատագրման կապակցությամբ Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը Հայոց կաթողիկոսին հղում է հետեւյալ շնորհավորական հեռագիրը. «Ամբողջ սրտէ շնորհակալութիւն կը յայտնեմ Ձեզի՝ Էջմիածնի տաճարին մէջ ամենաբարձրեալին ուղղուած Ձեր ջերմ աղօթքներուն համար այն անմոռանալի օրը, երբ իմ ղեկաւարութեանը յանձնուած յաղթական զօրքերու եւ քաջարի հայ կամաւորներու կողմէ Վանը ազատուեցաւ քրիստոնէութեան պատմական թշնամիէն, եւ հայ ժողովուրդը՝ իր դարաւոր բռնակալէն»[2]:

Քրիստոնեության անունից խոսող, կեղծ ջերմությամբ համեմված հեռագրի հեղինակը օրեր անց առանց վարանելու եւ մոռացության մատնելով Քրիստոսին, անձամբ պիտի ստորագրի Վանի մահվան դատավճիռը՝ ռուսական զորքերի կողմից քաղաքն ու Արեւմտահայաստանի մյուս շրջանները թողնելու հրամանը:

[1] «Ալիք», բացառիկ, 1956, մայիսի 4, էջ 62-63:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1927, սեպտեմբեր, էջ 76:

Վանում գտնվելու հենց առաջին օրը Դրոն շտապում է տեսակցել ու սփոփել Թուրքերի կողմից դավադրաբար սպանված Իշխանի ընտանիքին: Հին Բայազետում վաճառականությամբ զբաղվելու տարիներին նա սերտ բարեկամություն էր հաստատել Վանի գործիչների եւ հատկապես Լեռնապարի մարտական ուժերի կազմակերպիչ ու առաջնորդ Իշխանի հետ:

Դրոյի եւ Իշխանի կնոջ՝ Սիրանուշի հանդիպման ականատես Արամ Տապաղյանը, վերհիշելով այդ հուզիչ տեսարանը, գրում է. «1915 մայիս 3-ին Վանի հերոսամարտի յաղթանակի առաջին առաւօտն էր: Նահատակ Իշխանի սգաւոր այրիին՝ հօրեղբօրս աղջկա Սիրանուշին քովն էի, երբ յանկարծ սենեակին դռան վրայ երեւցաւ չերքէզի տարազով, թուխ դէմքով, հազիւ 30 տարեկան երիտասարդ մը: Ձեռները դէպի Սիրանուշը երկարելով՝ ըսաւ մորմոքած ձայնով.

- Ախ, իմ անբախտ քոյրս:

Սիրանուշը լալագին, խօսքը եկեւորին ուղղելով, հարցուց.

- Մ՞ւր է Սուրէն Էֆենտի (Դրոյի ծածկանունը Հին Բայազետում ապրած տարիներին - Հ.Գ.), ուր է քո սիրելի ընկերդ, իմ աննման Իշխանը... Տխուր եւ ճնշիչ մթնոլորտը մեղմացնելու համար՝ Սուրէն Էֆենտին սկսաւ պատմել, թէ ինչպէս իր զօրախումբը հասած էր Վան...»[1]:

Դրոյի անմիջական նախաձեռնությամբ հայ զինվորները Հիրճ գյուղում հայտնաբերում են Իշխանի եւ նրա զինակիցների մարմինները եւ տեղափոխելով Վան՝ ամփոփում քաղաքի գերեզմանատանը:

Դրոյի կյանքի ու գործունեության մասին պահպանված փաստերի, հուշագրությունների եւ կարծիքների ուսումնասիրությունն անառարկելիորեն հավաստում են ոչ միայն նրա քաջության ու զորավարական տաղանդի իրողությունը: Հայ ազատամարտի նշանավոր գործիչների համաստեղության մեջ նա եզակիներից էր նաեւ իր անբասիր ընկերասիրությամբ եւ հասարակ զինվորի նկատմամբ դրսեւորած ուշադրությամբ եւ հոգատարությամբ: Ահա իր զոհված զինակիցներից մեկի ընտանիքի նկատմամբ նրա ցուցաբերած վերաբերմունքի մի փոքրիկ վկայություն.

«Նորին գերազանցութեան փոխ թեմակալին Հայոց

Ներկայացնելով Ձերդ գերազանցութեան Էրզրումենցի (Շարուր-Դարալագեազի գավառ- Հ.Գ.) Յարութիւն Սայադեանի խնդիրը, պատիւ ունիմ յայտնելու, որ անցեալ 1914 թ. նոյեմբերի 1-ին Տաճկաստանի Կիւրէ-Շամէ գիւղի կուսում սպանուեց նրա որդի՝ Ալեքսան Յարութիւնի Սայադեանը: Նրա 6 հոգուց բաղկացած ընտանիքը եւ ծերունի հայրը մնացել են զուրկ նիւթական միջոցից:

Խնդրում եմ Ձերդ գերազանցութիւնից, եթէ հնարաւոր կլինի, Ձեր միջնորդութեամբ այդ ընտանիքին ցոյց տրուէր նիւթական օգնութիւն, որով հանգուցեալի որդիներին եւ ծերունի հօրը գոնէ որոշ չափով մխիթարութեան պատճառ կը լինէնք, ոգեւորելով նրա ընտանիքին: 3 մարտի 1915 թ.»[1]:

Իսկ Դրոյի միջնորդություններն ու դիմումները, որպես կանոն, երբեք ապարդյուն չէին անցնում:

Նրան բնութագրող մի հատկանշական կողմ եւս: Դրոն, գործարարության եւ մարդկանց հետ լեզու գտնելու զարմանալի շնորհներով էր օժտված: Որպես օրենք, նրա ղեկավարած զորամասերը իրենց զինվածությամբ, նյութական ապահովվածությամբ եւ կարգապահությամբ միշտ լավագույնն են եղել: Նույնիսկ բարձրաստիճան զինվորականները սիրով էին համաձայնել ծառայելու նրա հրամանատարությամբ գործող զորամասերում: Գուցե եւ նրա հաջողությունների գաղտնիքը պայմանավորված էր նաեւ վերոհիշյալ գործոններով: Վասպուրականի ազատագրումը դեռ միայն սկիզբն էր այն գործի, որին իրավամբ կոչված էին ծառայելու հայ կամավորները: Առջեւում էին Թուրք իշխանությունների յաթաղանի մյուս զոհերը՝ Շատախը, Մոկսը, Բիթլիսը, Տարոնը, Սասունը եւ Արեւմտահայաստանի մյուս շրջանները:

Վանի ազատագրման օրը Արամ Մանուկյանի նախաձեռնությամբ կազմակերպվում է ընդունելություն՝ ի պատիվ գեներալ Նիկոլաեւի ու նրա սպաների: Այդ հանդիպմանը, բացառությամբ Անդրանիկի, որն ի դեպ վանեցիներից դժգոհ լինելու պատճառով կտրականապես հրաժարվել է այցելել քաղաք, ներկա են գնվել կամավորական զորախմբերի հրամանատարներն ու հայ ազգային կուսակցությունների ներկայացուցիչները :

Այդ ընդունելության մասին ուշագրավ հուշեր է պատմում հանդիպման մասնակից՝ վերոհիշյալ գնդապետ Ելիսեեւը:

«Մենք մեծ երկհարկանի տան մոտ ենք: Լայն աստիճաններով վեր եմ բարձրանում: Բացելով երկփեղկանի դուռը, մտնում եմ հսկայական դահլիճ, որտեղ երկու երկար սեղանների շուրջ, ծածկված սպիտակ սփռոցներով եւ սպասքավորված, նստած էին մոտ 100 սպա մեր ջոկատից:

[1] Նույն տեղում, 1967, մայիս, էջ 2:

[1] ՀԱԱ, ֆ. 121, g. 2, գ. 25, թ.17:

Անցյալ տարվա օգոստոսից Մերվից պատերազմ գնալու օրվանից, մենք մեկ անգամ էլ չէինք նստել այնպիսի սեղանի շուրջ, որը «մարդավարի» ծածկված լիներ ընթրիքի համար, այսինքն ծածկված լիներ սպիտակ սփռոցով եւ ամբողջովին սպասքավորված: Տեսնելով այդ ամենը, այն էլ կիսավայրենի Թուրքիայում, այդ պատճառով ես զարմացած էի:

Համաձայն զինվորական կանոնադրության, պետք է զեկուցել ներկաներից ավագ պետին, տվյալ դեպքում՝ գեներալ Նիկոլաեւին... Երկու կողմից նրա մոտ նստած էին հայկական զորախմբերի առաջնորդները՝ Համազասպը, Դրոն, Քեռին եւ ինչ-որ հայ՝ քաղաքացիական կոստյումով, շատ սեւ, խուզած մորուքով, մտավորականի դեմքով ու տխուր աչքերով: Նա քաղաքագլուխ Արամ փաշան էր (իրականում Արամ Մանուկյանն այդ ժամանակ ոչ թե Վանի քաղաքագլուխն էր, այլ գեներալ Նիկոլաեւի հրամանով նշանակվելու էր Վանի նահանգի նահանգապետ-Հ. Գ.):Նրանց հետեւում նստած էին մեր գնդերի հրամանատարները, բոլոր սպաները՝ ըստ «կոչումների»:

Ընթրիքը նոր էր սկսվել: Զեկույցս լսելուն պես բարձրահասակ, չոր, 65 տարեկան, սպիտակամորուք ծերուկ գեներալ Նիկոլաեւը ոտքի կանգնեց: Նրա օրինակին հետեւեցին մյուսները...հաճելի էր Թուրքիայում, հատկապես Արամ փաշային ցույց տալ ռուսական կայսերական բանակի կարգապահությունը, որը պարտադիր էր բոլորի համար, եւ՝ գեներալի, եւ՝ մյուսների...

Զարմանալիորեն սեղանի շուրջը լռություն էր տիրում:

Բայց ահա ոտքի կանգնեց Արամ փաշան: Նա խմեց հաղթական Ռուսական կայսերական բանակի կենացը: Նա խոսում էր հայերեն: Նրա խոսքը մեզ համար ամբողջական ֆրազներով թարգմանում էր Դրոն՝ նրանց ամենախիզախն ու ականավորը՝ 2-րդ զորախմբի պետը:

Դրոն՝ ամրակազմ, միջահասակ, խիտ սեւ խուզած մորուքով մարդ էր: Զինվորական համազգեստով, նա հզոր եւ հաճելի տպավորություն էր գործում: Իր տեսքով նա նմանվում էր գեներալ Կուտեպովին»[1]:

Ռուսական բանակի ու հանդիսությանը ներկա գտնվող սպաներին ուղղությամբ խոսքեր ուղղելուց հետո, Արամը դիմում է գեներալ Նիկոլաեւին ու խնդրում թույլատրել հեռագիր ուղարկել Ռուսաստանի վեհապետին: Արամի խնդրանքը զարմանք է հարուցում:

«Մենք,-գրում է գնդապետ Ելիսեեւը,- ակամայից զգաստացանք. հայերի հեռագիր հեռավոր Թուրքիայից անձամբ ռուսական ցարին, դա այդ ժամանակ ինչ-որ արտակարգ երեւույթ էր»[2]:

[1] Елисеев Ф. С., Казаки на Кавказком фронте 1914-1917, М., 2001, ст. 94:
[2] Նույն տեղում:

Գնդապետ Ելիսեեւը իր հուշագրքում մեջբերում է հեռագիրն ամբողջությամբ:

«Ձերդ Գերազանցության ծննդյան օրը համընկավ Ձեր զորքերի Հայաստանի մայրաքաղաք մուտք գործելու օրվան: Ցանկանալով Ռուսաստանի հաղթանակն ու հզորությունը, մենք՝ Հայաստանի ներկայացուցիչներս խնդրում ենք մեզ ընդունել Ձեր հովանավորության ներքո: Եւ թող Մեծ Ռուսաստանի կայսրության շքեղ ու բազմերանգ ծաղկեփնջի մեջ, որպես փոքրիկ բուրավետ մանուշակ, ապրի ինքնավար Հայաստանը»[1]:

Գնդապետ Ելիսեեւի խոստովանությամբ՝ հեռագիրը նախադասություն առ նախադասություն խելացիորեն ու հասկանալի ներկայացրել է Դրոն, որին հետեւել են հանդիսության ներկա գտնվող Արարատյան զորախմբի սպաների բուռն ու երկարատեւ ծափահարությունները: Գեներալ Նիկոլաեւը զգաստացած ոտքի է կանգնում ու ասում. «Խնդրեմ, խնդրեմ...ես թույլատրում եմ»[2]:

Վանի հաղթական մուտքից ընդամենը մեկ օր անց Դրոյի զորախումբը դարձյալ կռիվների հորձանուտում էր: Զորախումբը, այս անգամ առանց հրանոթների ու գնդացիրների, զարգացնելով հարձակումը, միայնակ պիտի օգնության հասներ Շատախի եւ Մոկսի ինքնապաշտպանության դիմած հայությանը: Քեռու եւ Համազասպի զորախմբերը առաջանալու էին դեպի Ոստան:

Շատախի հայությունը ապրիլի առաջին իսկ օրերին զենքի դիմելով՝ արդեն երկրորդ ամիսն էր, ինչ համառորեն անհավասար ինքնապաշտպանական մարտեր էին մղում Թուրք ժանդարմական եւ քրդական զինյալ զորախմբերի դեմ:

«Կռիվը, - նշում է Արարատյան զորագնդի հրամանատար Վարդանը, - միայն Վանի մէջ չէր. շրջակա գավառները նույնպես կռիվների մէջ էին: Հարկավոր էր շտապ օգնության հասնել գավառներին: Ժամանակ չկորցնելով, հենց մյուս օրը մի դրուժինա Դրոյի ղեկավարությամբ ուղարկեցինք Շատախի կողմերը, մյուս դրուժինան Քեռու ղեկավարությամբ ուղարկեցինք Ռշտունիք»[3]:

Իրոք, ընդամենը մեկ օր Վանում անցկացնելով՝ 2-րդ կամավորականը, իր շարքերը համալրելով տեղացի մարտիկներով, հրաման է ստանում ուղեւորվել Շատախ, փրկել ինքնապաշտպանության դիմած շատախցիներին եւ այդ շրջանը մաքրել քրդերից:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 11, գիրք 4, էջ 6:

Շատախցիների զինված պայքարը արեւմտահայության մղած 1915 թ. ինքնապաշտպանական մարտերի ամենահերոսական եւ ուսանելի, բայց դեռեւս ըստ արժանվույն չուսումնասիրված էջերից մեկն է: Չնայած Թուրք իշխանությունների նենգադավությանը զոհ էր գնացել ինքնապաշտպանության ոգին ու կազմակերպիչը՝ Լեռնապարի Իշխանը, սակայն ազատատենչ շատախցիները, հավատարիմ մնալով իրենց հերոսական անցյալին եւ Իշխանի ներդրած մարտական ավանդին՝ ավելի քան մեկուկես ամիս անկոտրում համառությամբ ու հերոսական մաքառումներով պաշտպանեցին իրենց կյանքն ու ազգային արժանապատվությունը:

Շատախի պաշտպաններին օգնության հասնելը կապված էր լուրջ դժվարությունների հետ: Շատախ տանող ուղին անցնում էր քրդերով խիտ բնակեցված Գորան դաշտավայրով: Թուրքական հրամանատարությունը քրդական յուրաքանչյուր գյուղ վերածել էր ամուր պաշտպանական հանգույցի: Բացի դրանից, Հիրճ գյուղից դեպի Գորանի դաշտ տանող միակ ճանապարհը շրջափակված էր կիրճերով, որի թաքստոցներում դիրքավորվել էին Թուրք զինվորներն ու քրդական զինյալ խմբերը[1]:

Հարձակումը զարգացնելու կամավորների միակ հնարավորությունը թշնամու ամրությունները շրջանցելն էր: Գահեստում թողնելով Ցապոնի, Զեմլյակի եւ Խոսրովի հեծյալ ջոկատները՝ Դրոն հրամայում է Ղազար Քոչարյանի վաշտին շրջանցել թշնամու ամրություններն ու հարվածել թիկունքին:

Ռազմախաղն ավարտվում է գերազանց վերջաբանով, Թուրք-քուրդ հրոսակախմբերը, ընկնելով խաչաձեւ կրակի տակ, դիմում են փախուստի: Գորանի դաշտ տանող ուղին բաց էր: Դրոյի զինվորները հողմի նման ներխուժելով դաշտ՝ մեկը մյուսի հետեւից գրավում են քրդական գյուղերը եւ մոտենում դեպի Շատախ տանող ամենաուժեղ արգելապատնեշին՝ Աղվուտ գյուղին: Հաղթական կռիվներից հետո բարձր մարտական տրամադրությամբ համակված հայ զինվորները հաշված ժամերի ընթացքում ընկճում են հակառակորդի դիմադրությունը եւ մտնում հայկական Սեւտիկն գյուղը:

Թուրքական զորքերը, որոնք քրդական հրոսակախմբերի հետ արդեն 45-րդ օրն էր, ինչ պաշարել էին Շատախը, հայ կամավորների լուրն առնելուն պես լքում են մարտադաշտը:

Կամավորական զորախմբերի մարտական գործողությունները պատմող ռազմական ամփոփագրերից մեկում այդ մասին գրված է. «2-րդ կամավորականը, մայիսի 8-ին սկսելով հարձակումը, բազմիցս բախվել է

[1] Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 102, թ. 44:

Գորան դաշտում համախմբված քրդերի հետ, որոնք փակել էին դեպի Շատախ տանող ուղին: Բայց պարտություն կրելով յուրաքանչյուր կռվում, քրդերը մաքրում են այդ շրջանը եւ զորախումբը մայիսի 12-ին մուտք է գործում Շատախ»[1]:

Թուրքական զորքերի ու քրդերի փախուստը եւ հայ կամավորական զորախմբերի հաղթանակներն ավետող լուրերն անմիջապես տարածվում են նրանց գալստյանը սրտատրոփ սպասող Շատախի ինքնապաշտպանության մարտիկների շարքերում:

Գատմում է Շատախի ինքնապաշտպանության հրամանատարներից՝ Տիգրան Բաղդասարյանը. «Լեւոնը (Լեւոն Շաղոյանը նույնպես ինքնապաշտպանության հրամանատարներից է - Հ.Գ.) կը գրէ. «Դրօն 1000 հոգով Սեւտիկն է: Երեկոյեան աշխատիր ամէն գնով հոս լինել. խորհրդակցելու համար Մառնույի վրայ կատարուելիք վաղուան արշաւանքի մասին...

... Երկու ձի կը պատրաստեն անմիջապէս եւ Սեւտիկնցի Ցակոբի հետ կը շտապեմ հասնել Սեւտիկն: Մութն էր արդէն, երբ կը հասնիմ գիւղը: Աչքի կը զարնեն մեր կամաւորների վրաններն իրենց պլպլուան ճրագներով:

Կը մտնեմ տէրտրոջ սենեակը, եւ ահա կը հանդիպիմ Դրօյին շրջապատուած իր վաշտապետներով՝ Նժդեհը, Մեսրոպը, Եապոնը, Մարտիրոսը եւ այլն: Կը համբուրուինք, կը սկսինք զրոյց անել: Կը պատմեն ինձ իրենց կռիւների եւ ապագայի մասին: Ես էլ իմ հերթին՝ մեր կռիւների մասին:

- Այդպէս, ուրեմն Մառնույի արշաւանքը թողնենք ուրիշ անգամուան, այնպէս չէ, էֆենտի, - հեգնելով կը վերջացնէ Դրօն:

- Այո, պ. հրամանատար, - կը պատասխանեմ, - բայց երեւի ուրիշ ծառնուցներ կ՚ունենանք»[2]:

1915 թ. մայիսի 12-ին 2-րդ կամավորական մարտախմբի գլուխն անցած՝ Դրոն հաղթականորեն մուտք է գործում Շատախ գավառի ինքնապաշտպանության կենտրոն՝ Թաղ գյուղը[3]:

Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությանը ուղղված զեկուցագրերում արժանվույնս գնահատելով 2-րդ զորախմբի գործունեությունը՝ նշվում է . «Մայիսի 8-ին սկսելով առաջխաղացումը՝ 2-րդ զորախումբը բազում մարտեր մղեց Թուրքերի եւ քրդերի հետ, որոնք, կենտրոնանալով Գորան դաշտավայրում, փակել էին դեպի

[1] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 8, թ.6:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1931, հոկտեմբեր, էջ 138-139:
[3] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 8, թ.6:

Շատախ տանող ճանապարհը: Բայց յուրաքանչյուր քայլում պարտության մատնելով հակառակորդին՝ զորախումբն արագորեն մաքրեց այդ շրջանները եւ մայիսի 12-ին մուտք գործեց Շատախ»[1]:

«Կանցնի, - գրում է Տիգրան Բաղդասարյանը, - Հայկական բանակը եւ նրան կհետեւի Շատախի պզտիկ բանակը իր յաղթանակի երգն երգելով... Կը մտնենք վերջապէս Թաղը: Պատուհաններից, կտուրներից, կանայք եւ աղջիկներ ծաղիկներ կը սփռեն կամաւորների անցած ճանապարհով: Ուրախ զուարթ կանցնի բանակը եւ կը հաստատուի «Ամբրի Իգին», Տիգրիսի եզերքին:

Այդ օրը շատախցին հանգիստ ու խաղաղ քնեց»[2]:

Վանից մինչեւ Շատախի գյուղերը ձգվող տարածքը ամբողջովին մաքրված էր թուրքերից ու քրդերից: Ետեւում էին մնացել բազում մաքառումներով լեցուն տանջալի օրերը: 1915 թ. հունիսին Շատախի Զնով գյուղում հանդիպելով գյուղացիներին եւ նրանց պատմելով զորախմբի անցած մարտական ուղու մասին՝ Դրոն որպես անկեղծ խոստովանանք ասել է. «Ռուսական հողից, Անդրկովկասից մինչեւ Վասպուրական, մինչեւ Շատախ անցել եմ մեր ժողովրդի դիակների վրայով, մեր ավերված գյուղերով, մոխրակույտի վերածված բնակավայրերով: Արցունքով եմ անցել»[3]:

Կռիվների ընթացքում կամավորները բռնագրավում են մեծ քանակությամբ ռազմավար, հազարավոր ոչխարներ եւ բաժանում Շատախի եւ Սեւտիկնի հայ բնակիչներին:

Գավառի ազատագրումը դեռեւս տեղի բնակչության ապահովագրության վերջնական ու կայուն երաշխիքը չէր: Թուրք հրամանատարությունը, վերախմբավորելով հայ զինախմբերի հարվածներից ցաքուցրիվ եղած ուժերը սպառնում էր քուրդ հրոսակախմբերի աջակցությամբ հարավային շրջաններից վերստին հարձակվել Շատախի վրա: Անհրաժեշտ էր կայուն հիմքերի վրա դնել գավառի ինքնապաշտպանությունը: Շատախի շրջանների ներքին կյանքը կարգավորելու, ինքնապաշտպանությունը կազմակերպելու նպատակով՝ Դրոյի նախաձեռնությամբ ինքնապաշտպանական ուժերի հրամանատարներ Սամվել Պետրոսյանի եւ Տիգրան Բաղդասարյանի ղեկավարությամբ կազմակերպվում են գավառի կառավարություն եւ ոստիկանություն, որոնք անմիջականորեն պիտի ենթարկվեին Արամ Մանուկյանի գլխավորած Վանի նահանգապետությանը:

[1] Նույն տեղում:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1931, հոկտեմբեր, էջ 138-139:
[3] ՀԱԱ, ֆ. 370, ց. 2, գ. 5, թ. 9:

Շատախի գրավումից մեկ շաբաթ անց Դրոն արշավում է Մոկաց աշխարհ, ուր տեղի հայությունը, կենտրոնանալով մի քանի բնակավայրերում, օրհասական կռիվ էր մղում թուրք-քուրդ հրոսակախմբերի դեմ: Մոկաց աշխարհի հայկական բնակավայրերը վերածվել էին Վանի եւ Շատախի շրջաններից նահանջող թուրքական զորքերի ու հատկապես քրդական հրոսակախմբերի հարձակման հերթական նշանակետերի: Մոկսի հայությունը հայտնվել էր ծանրագույն իրավիճակում: Անհրաժեշտ էր անհապաղ օգնության շտապել, այլապես տեղի հայությանը սպառնում էր անխուսափելի կործանում:

Քանի որ Մոկսի հայ բնակչության ինքնապաշտպանական մարտերը ընթանում էին մի քանի հանգույցներում,այդ պատճառով Դրոն, մասնատելով իր զորախմբի ուժերը, հարձակումը զարգացնում է երեք հիմնական ուղղություններով: Համաձայն նրա հրամանի, Դալի Ղազարի, Յապոնի, Տիգրանի հարյուրակներն ու Մարտիրոսի վաշտը Նժդեհի հրամանատարությամբ արշավում են Մոկս, մակվեցի Մեսրոպի վաշտը՝ Սոքան, իսկ ինքը զորամասերի մնացած ջոկատների գլուխն անցած շարժվում Սպակերտ:

Ռազմաճակատում տեղի ունեցող մարտական գործողությունները բնութագրող վերոհիշյալ ամփոփագրերը անդրադարձել են նաեւ Մոկսի դեպքերին. «... Մոկսի ապստամբները հայտնվում են կրիտիկական իրավիճակում: Թուրք ժանդարմների եւ քրդական ուժերի հետ Սոքանի (Շատախի արեւմուտք) մոտ ունեցած հաջող կռիվներից հետո զորախմբի 2-րդ վաշտը հաղթահարելով դժվարանցանելի լեռներն ու կիրճերը՝ մայիսի 18-ին մտնում է Մոկս: Մոկսի եւ նրա հարակից բոլոր շրջանները մեր ձեռքն անցնելը հնարավորություն ստեղծեց ամուր կապ հաստատելու Մոկսի եւ Աղթամարի (մայիսի 16-ին գրավել էր Քեռու 4-րդ զորախումբը - Հ.Գ.) միջեւ»[1]:

Ամփոփելով դեպի Վանա լճի հարավային շրջանները ազատագրելու նպատակով 2-րդ կամավորականի ձեռնարկած մարտական գործողությունների արդյունքները՝ կարելի է ասել. մի շարք մարտերում արագորեն հաղթահարելով թշնամու դիմադրությունը՝ Դալի Ղազարի, Յապոնի, Տիգրանի հարյուրյակներն ու Մարտիրոսի վաշտը Նժդեհի առաջնորդությամբ գրավում են Մոկսը, Մեսրոպը՝ դժվարին կռիվներից հետո Սոքանը, իսկ Դրոն, ջախջախելով Սպակերտը պաշարող թուրքական զորաջոկատներին՝ ազատագրում է գյուղը եւ այնտեղ համախմբված ավելի քան չորս հազար հայերի տեղափոխում Մոկս: Հաջողությամբ էին զարգանում նաեւ կամա-

[1] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 8, թ.17:

վորական մյուս խմբերի հարձակումները: Քեռին եւ Համազասպը միացյալ ուժերով գրավում են Ոստանը եւ Աղթամարը[1]:

Ռազմաճակատում միմյանց հարեւանությամբ մարտնչող հայ կամավորականների կապն ու համագործակցությունը պատշաճ բարձրության վրա էր, ինչը եւ խոստովանում են նրանց մարտական գործողությունները բնութագրող ամփոփագրերը. «... իր աջ թեւը ապահովելու համար, զորախմբի հրամանատար Դրոն դեռեւս Գորանի դաշտում մղած կռիվների ժամանակ առանձնացրեց կես հարյուրյակ Ղազարի գլխավորությամբ եւ ուղարկեց Փեսանդաշտ: Այդ քայլով նա ապահովեց նաեւ դեպի Ոստան-Աղթամար առաջացող 4-րդ զորախմբի ձախ կողմը»[2]:

Շատախի գավառում եւ Մեծ Հայքի ամենափոքր նահանգի՝ Մոկաց աշխարհում 2-րդ կամավորական զորախմբի մղած կռիվներն ավելի քան արգասաբեր էին:

«Դրոն եւ Քեռին, - շեշտում է Վարդանը, - շրջաններ գալով, տեղի ունեցած կռիվները շարունակվում են: Քեռին Վոստանում թուրքերից 2 թնդանոթ է խլում, վորոնց ուղարկում է Վան:

Դրոն գործում է Շատախի եւ Մոքսի շրջաններում եւ հաջող կռիվներ է մղում»[3]:

Ռազմաճակատը Մոկսից ձգվելով հասնում է մինչեւ Աղթամար ու Սուրբ Հակոբ, ուր բացի Դրոյի եւ Քեռու 2-րդ ու 4-րդ զորախմբերից, դիրքեր են գրավում նաեւ Տիգրան Բաղդասարյանի եւ Լեւոն Շաղոյանի գլխավորած տեղի ինքնապաշտպանական ջոկատները: Թուրքական եւ քրդական ուժերը, հայտնվելով ծանր իրավիճակում, փորձում են անընդմեջ գրոհներով թափանցել 4-րդ զորախմբի թիկունքը, ապա ճեղքել Աղթամարից մինչեւ Մոկս ճակատային բնագիծը պաշտպանող կամավորների եւ ինքնապաշտպանական ջոկատների պաշտպանությունը եւ բացել դեպի հարավային շրջանները ձգվող ուղիներն ու միաժամանակ Մոկսը կտրել Շատախից:

Անդրադառնալով այդ օրերին Դրոյի զորախմբի մղած մարտերի լուսաբանմանը՝ ռազմաճակատից առաքվող ամփոփագրերից մեկում նշվում է. «...Թուրքերի կողմից 4 օրերի՝ մայիսի 22, 23, 24 եւ 25-ին ձեռնարկված անընդմեջ գրոհները հետ են մղվում միասնաբար գործող կամավորների եւ Մոկսի զինված հայերի կողմից: Միաժամանակ ձախողվեցին նաեւ հարավային կողմից Մոկսը Շատախից կտրելու նպատակով թշնամու կողմից ձեռնարկված փորձերը:

... Մոկս-Շատախ, Աղթամար-Ոստան ուղղությամբ 2-րդ զորախմբի մղած պաշտպանական հաջող գործողություններին նպաստել է երկու հանգամանք. 1. Կամավորական 1-ին զորախումբը, գրավելով Շատախին հարող Նորդուզի շրջանը, կապ է հաստատում գեներալներ Նազարբեկովի եւ Նիկոլաեւի զորամասերի միջեւ:

2. 4-րդ զորախումբը 3-րդի համագործակցությամբ, որը Վանից շարժվել է մայիսի 19-ին, առաջանում է Աղթամար-Սբ. Հակոբ-Զեյվա ուղղությամբ եւ դրանով սպառնալիք ստեղծում թշնամու ձախ թեւի վրա»[1]:

Զեյվայի կռվի նախօրեին, 1915 թ. հունիսին, գեներալ Նիկոլաեւի հրամանով հայ կամավորական զորախմբերի հրամանատարները պիտի մշակեին համատեղ գործելու ծրագիր ու մյուս օրն անցնեին հարձակման:Իսկ դա նշանակում էր, որ գեներալը հայ կամավորական զորախմբերին ինքնուրույն գործելու իրավունք ու հնարավորություն էր ընձեռում:

Խմբապետ Ասլան Ստեփանյան վկայությամբ՝ «Այնտեղ էին բոլոր հրամանատարները՝ Վարդան, Խէչօ, Քեռի, Համազասպ, Անդրանիկ, Դրօ:

Իբրեւ Անդրանիկի զինուոր, նրան ընկերացողների մէջ էի նաեւ այս փոքր յուշ պատմողը(նկատի ունի իրեն-Հ.Գ.)...

Հայ կամաւորական գնդերի հրամանատարները վիճում էին, համաձայնութեան չէին գալիս:

-Հայ ենք, չե՛նք կարող զիջել և համաձայնել,-բարձրաձայն ասում էր Դրօն:

Եւ ցրուցեին առանց համաձայնելու: Յաջորդ առաւօտեան, ամէն մէկը իր գիտցած ձեւով սկսեց յարձակումը, որ ծանր նստեց, բայց, այնուամենայնիւ, մեր կամաւորական ոյժերը յաղթեցին, պատռեցին շղթան,և Խալիլ բէյիը նահանջեց»[2]:

Վանից մինչեւ Շատախ-Մոկս, Աղթամար-Ոստան եւ Նորդուզ ձգվող շրջանների ազատագրական մարտերում հայկական կամավորական զորախմբերը գործել են մեծ կազմակերպվածությամբ ու համագործակցած: Առջեւում Տարոնն էր ու Սասունը:Տարոն տանող ճանապարհի առաջին խոչընդոտը Սորբն էր, ապա Դատվանը:

[1] Տես նույն տեղում, էջ 10:
[2] Նույն տեղում:
[3] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 11, գիրք 4, էջ 9:

[1] Նույն տեղում, էջ 7:
[2] «Յառաջ», Բացառիկ, 1956, թիւ 78, էջ 78-79:

Թուրք հրամանատարությունը հասցրել էր զգալի ուժեր կենտրոնացնել Սորբում եւ այն վերածել պաշտպանության ամուր հենակետի: Սորբի մոտակայքում գտնվող բարձունքները հակառակորդի կողմից նույնպես ամրացվել էին:

Զարգացնելով նախորդ մարտերում նվաճած հաղթանակները՝ 3-րդ եւ 4-րդ զորախմբերը Քեռու ընդհանուր հրամանատարությամբ դաժան կռիվներից հետո մայիսի 25-ին գրավում են Զեյվան, ապա մարտադաշտ հասած 2-րդ զորախմբի վաշտերից մեկի համագործակցությամբ շարունակում են առաջխաղացումը եւ մայիսի 30-ին հասնում մինչեւ Սորբ, սակայն զինամթերքի սակավության պատճառով դադարեցնում են հարձակումը[1]:

Եթե կամավորական զորախմբերին հաջողվեր գրավել Սորբ եւ Դատվան բնակավայրերը, ապա փաստորեն բացվելու էին Տարոն, Սասուն եւ Բիթլիս տանող ուղիները:

Թուրք հրամանատարությունը, նկատի ունենալով Մոկսի ու Սորբի ուղղություններից իրենց զորքերին սպառնացող վտանգը, լրացուցիչ ուժեր է կենտրոնացնում Սորբի ճակատում եւ մայիսի 31-ին անցնում հակահարձակման: Կամավորական բոլոր չորս զորախմբերը հարկադրված նահանջում են Զեյվա, ապա Սուրբ-Հակոբ եւ ընդհուպ մինչեւ Մոկս:

Մայիսի 31-ի դրությամբ ռուսական ճակատի դեմարկացիոն գիծը, որը զբաղեցնում էին կամավորական չորս զորախմբերը, ձգվում էր Վանա լճից հարավ դեպի Նորգեղ, Մոկս, Շատախ, Նորդուզ, իսկ ռուսական զորաասերը դեռեւս գտնվում էին Վանում[2]:

Զեյվայի մարտերի նախօրեին հայկական բոլոր չորս զորախմբերը Նիկոլաեւի զորամասից անցնում են Տրուխինի զորամասը:

Գեներալ Տրուխինի զորախմբի պաշտպանական դիրքերը ձգվում են Զեյվա գյուղից մինչեւ Սուրբ Հովհաննեսի վանքը: Այդ ժամանակ բացի հայկական 1-ին, 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կամավորական մարտախմբերից, Տրուխինի զորամասի կազմում էին նաեւ սահմանապահ հետեւակային գումարտակը, հեծյալ ջոկատը, Անդրբայկալյան կազակական բրիգադը[3]:

Ինչպես վկայում են ռազմական ամփոփագրերը, ռազմաճակատում հանգիստ իրավիճակը տեւել է ընդամենը երկու շաբաթ հունիսի 1-ից մինչեւ 14-ը, այսինքն՝ մինչեւ Զեյվայի մարտերը, որոնք տեղի են ունեցել նույն ամսի 15-ին եւ 16-ին:

[1] ՀԱԱ, ֆ.1 21, ց. 2, գ. 8, թ. 18:
[2] Նույն տեղում:
[3] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 3, թ.8:

Այդ ընթացքում 3-րդ եւ 4-րդ զորախմբերին է միացել նաեւ 2-րդ զորախումբը, որի կազմի մեկ վաշտ մնում է Մոկսում, մեկ հետեւակ վաշտ Շատախում եւ մեկ հեծյալ դասակ Գորանդաշտում: (Այդ շրջանների ինքնապաշտպանության ղեկավարումը իրականացնելու էին Նժդեհը եւ Մեսրոպը- Հ.Գ.):

Հունիսի 15-ին այդտեղ է գալիս նաեւ 1-ին զորախումբը, որը Նորդուզից դուրս է գալիս մայիսի 28-ին, իսկ հունիսի 12-ին՝ Արտամետից[1]:

Եթե ընդհանրացնենք մայիս-հունիս ամիսներին Վանա լճի հարավային շրջաններում ռուսական զորքերի համագործակցությամբ հայ կամավորական զորախմբերի իրականացրած մարտական գործողությունները, ապա պիտի արձանագրել, որ համատեղ ուժերով ձեռնարկած այդ գործողությունների արդյունքում ազատագրվել են Զեյվա, Թախման, Սուրբ Հակոբ, Ախթամար, Վարկունիս եւ բազմաթիվ այլ բնակավայրեր:

Հակառակորդը ավելի համառ դիմադրություն է ցուց տվել Զեյվայում, ուր թուրք զինվորների հետ կենտրոնացել էին քրդական զինյալ հրոսակախմբերը: Զեյվայի կռվում ամենաուժեղ ուշադրության չարժանացնելով իրենց վրա տեղացող համազարկերը՝ հայ կամավորները նետվում են գրոհի ու ընդհուպ մոտենում են հակառակորդի դիրքերին ու նեխուժում գյուղ: Թուրք զինվորներն ու քրդերը պատսպարվելով գյուղի տներում՝ կատաղի դիմադրություն են ցուց տալիս, բայց անկասելի էր հայ մարտիկների գրոհը:

Վանի գործողությանը Արարատյան զորագնդի մասնակցությունը պատկերող ակնարկում ներկայացնելով այդ պահը՝ նշվում է. «Անցնելով խրամատների գիծը՝ կամավորները փախչող թուրքերի ու քրդերի հետեւից ներխուժում են գյուղ, ուր մարտերը ծավալվում են ավելի կատաղությամբ ու ուժգնությամբ: Փողոցները ծածկվում են դիակներով: Գյուղի տներում պատսպարվելու փորձ անող քրդերը՝ կոտորվում են:Ողջ մնացածները նետվում են գետ, որ կարողանան անցնել հակառակ ափը: Սակայն, կամավորները, որոնք վաղօրոք դիրքը էին գրավել գետի հակառակ ափին, նրանց դիմավորում են հզոր համազարկերով:Դրանով ավարտվում է մարտը: Հայ կամավորները նվաճում են հերթական հաղթանակը»[2]:

Պիտի նշել, որ տեղի ունեցած կռիվներում հայ կամավորները հակառակորդի համեմատ ունեցել են ավելի քիչ կորուստներ: Օրինակ, Զեյվայի ազատագրման մարտերում հայ կամավորների կորուստներն են՝14 զոհ եւ 23 վիրավոր, իսկ թուրքական կողմը՝

[1] Նույն տեղում, էջ 8:
[2] ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 1, թ. 18

300 սպանված ու 100 վիրավոր: Այդ կռվում կամավորները որպես ռազմավար վերցնում են ավելի քան 250 հարացան[1]:

Զեյվայի մոտակայքում ձեռք բերած հաղթանակից հետո, ինչպես արդեն նշվել է, մինչեւ հունիսի 28-ը հանգիստ է եղել: Այդ ընթացքում հակառակորդի ուժերին որպես համալրում միանում են 106 եւ 107 հետեւակային գնդերը: Նույն ամսին ռազմաճակատ Ալաշկերտ-Ղարաքիլիսայի ուղղությամբ Խալիլ փաշայի ձեռնարկած հարձակմանը զուգընթաց, թուրք հրամանատարությունը տենդագին միջոցներ է գործադրում կանգնեցնելու գեներալ Տրուխինի զորամասի ու հայ կամավորական զորախմբերի հետագա առաջխաղացումը, որը ուղղված էր մի կողմից դեպի Բիթլիս, իսկ մյուսը՝ Նեմրութ միանալու գեներալ Նազարբեկովին, որը գտնվում էր Փթխուա-Քարմունջ շրջանում:

«... Թուրքերը, - նշվում է ռազմաճակատի ամփոփագրերում,- կենտրոնացնելով 106 եւ 107 գնդերը Սորբի մոտ՝ խնդիր են ստանձնում խոչընդոտել ռուսների մուտքը Սորբ-Վանիկ»[2]:

Զափազանց կարեւոր էր, որ ռուսական զորքերն ու կամավորական զորախմբերը գրավեին Սորբը, ապա Դատվանն ու առաջանային դեպի Ախլաթ, Տարոն եւ Սասուն:Սակայն այդ ուղղությամբ գործող թուրքական զորամասերը՝ Խալիլ փաշայի կողմից ուղարկված 106 եւ 107 գնդերի ուժերով համալրելուց հետո՝ ռուսական զորքերի ու կամավորական զորախմբերի համար ավելի է դժվարանում Սորբի գրավումն ու հետագա առաջացումը: Իսկ այդ ժամանակ 2-րդ կամավորականի՝ Մարտիրոսի, Օնեի եւ Մեսրոպի գլխավորած վաշտերը գտնվում էին Մոկսում:

Հարձակման գլխավոր ուղղությունը Սորբն էր, ապա Դատվան ու Տարոնը: Անհրաժշտ էր այդ ճակատում միավորել կամավորական զորախմբերի մարտական ողջ ուժերն ու գործել ավելի կազմակերպված ու համագործակցված:

Առաջնորդվելով այդ նկատառումով, Դրոն Ոստանից երկտող է ուղարկում Մոկսում գտնվող Նժդեհին՝ հրահանգելով, որ Մարտիրոսի եւ Օնեի վաշտերը ուղարկել իր մոտ՝ Աղթամար:

«Նժդեհը,-գրում է Մարտիրոսը,-չէր ուզում գումարտակի միաւորները բաժանել իրարից, գտնելով՝ «Կամ բոլորս էլ պիտի գնանք, կամ ոչ ոք»: Եպոնն ու ես դիտել տվինք, որ «երբ հրամանատարը կանչել է մեզ, մենք պիտի մեկնենք առաւօտեան, չենք կարող մնալ»...

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 3-18:
[2] ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 3, թ. 3:

Առաւօտեան, երկու վաշտով ճանապարհուեցինք Մոկսից»:[1]

Մարտական ուժերի անհրաժեշտ վերադասավորումից հետո գեներալ Տրուխինը վճռական գրոհ է ձեռնարկում Սորբի մերձակայքում դիրքավորված թուրքական 105 եւ 107 գնդերի վրա: Համաձայն հրամանատարության մտահղացման, հարձակումը ընթացել է հետեւյալ մարտավարությամբ. Քեռու գլխավորած 4-րդ զորախումբը գրոհը զարգացրել է թուրքական զորաբանակի ձախ թեւի վրա, Անդրանիկի 1-ին զորախումբը՝ կենտրոնի, իսկ Դրոյի 2-րդ եւ Համազասպի 3-րդ զորախմբերը եւ սահմանապահ ջոկատները՝ աջ թեւի վրա:

Մարտերի առաջին օրը 1-ին եւ 4-րդ զորախմբերը, հանդիպելով հակառակորդի համառ դիմադրությանը, ունեցել են զգալի կորուստներ: Գեներալ Տրուխինը, նկատի առնելով այդ օրվա մարտի ոչ այնքան գոհացուցիչ արդյունքները, վճռում է դադարեցնել հարձակումը եւ հետ քաշել զորքերը[2]:

Բայց կատարվում է ճիշտ հակառակը, չնայած ունեցած շոշափելի կորուստներին. «... Գիշերը 1-ին զորախմբի մի քանի դասակապետերի նախաձեռնության շնորհիվ հաջողվում է դասակները առաջ շարժել եւ գրավել երկրորդ գծի խրամատները: Մյուս խմբերը, լսելով բարձրաձայն ուռռան, նույնպես անցնում են հարձակման եւ վերջ ի վերջո գրավում գլխավոր դիրքերը: Թուրքերը արագորեն նահանջում են դեպի Սորբ»[3]:

Հունիսի վերջերին հայկական մարտախմբերը, գեներալ Տրուխինի զորախմբի մյուս զորաջոկատների համագործակցությամբ, միահամուռ ուժերով գրոհում են Սորբի վրա: Այդ օրերին ընթացող կռիվներում հայ կամավորական զորախմբերը, իրենց գործողությունների փոխհամագործակցությունը պատշաճ մակարդակով չհամաձայնեցնելու պատճառով, հաղթանակը նվաճում են մեծ դժվարությամբ եւ զգալի կորուստներով:

Համաձայն Զեյվա-Սորբ-Դատվան կռիվների մասնակից խմբապետ Ասլան Ստեփանյանի վկայության, որն այդ ժամանակ ծառայում էր Անդրանիկի 1-ին կամավորականում, կռվի նախօրեին հարձակման միասնական գործողության մանրամասները համաձայնացնելիս «Հայ կամաւորական գնդերի հրամանատարները վիճում էին, համաձայնութեան չէին գալիս:

[1] Խբապետ Մարտիրոս Աբրահամեան, նշվ. աշխ., էջ 272:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 3, թ. 3:
[3] Նույն տեղում:

- Հայ ենք, չե՞նք կարող զիջել եւ համաձայնել, - բարձրաձայն ասում էր Դրօն:

Եւ ցրեցին առանց համաձայնելու: Յաջորդ առաւօտեան, ամէն մէկն իր գիտցած ձեւով սկսեց յարձակումը, որ ծանր նստեց...»[1]:

Սորբի մատուցյներում մղվող առաջին օրվա մարտերը չափազանց դանդաղ ու ծանր էին ընթանում: Բլրալանջերի հարմարավետ դիրքերում ամրացած թուրք զինվորները թնդանոթներից ու գնդացիրներից տեղացող կրակով խափանում էին հայ զինվորների գրոհները: Երեկոյան մարտադաշտ հասցրած թնդանոթներով մշակելով հակառակորդի դիրքերը՝ կամավորական զորախմբերը սրընթաց նետվում են գրոհի:

Դրոյի զորախումբն առաջին կամավորականի Արտաշես Սուչյանի գլխավորած վաշտի համագործակցությամբ ճեղքում է բարձունքներում ամրացած թշնամու դիմադրությունը եւ հասնում լճափ, որի ափերի երկայնքով հաջողությամբ հարձակվում էին Անդրանիկի զորախմբի մյուս վաշտերը:

Հակառակորդի դիմադրությունը խորտակում են նաեւ Համազասպի եւ Քեռու զինվորները: Արդեն հաջորդ օրը՝ կոտրելով հակառակորդի համառ պաշտպանությունը, հայ կամավորները գրավում են Սորբը, իսկ թշնամու ջախջախված զորքերի մնացորդները նահանջում են Դատվան[2]:

Ոգեշնչված հայ կամավորների հերոսական գործողություններով՝ ռուս զորավարներն նոյնպես առաջ են շարժվում:

Ռուսական չորրորդ զորախմբի հրամանատար գեներալ Տրուխինը, հիացած հայ կամավորների մարտական անբասիր գործողություններով, ընդգծում է հաղթանակի ձեռքբերման գործում. «... Անդրանիկի եւ Դրոյի խումբերուն յաղթական յարձակումը հակառակորդի ձախ թեւին դէմ: Համազասպի խումբին յարձակողականը խիստ դժուարին պայմաններու մէջ, առանց հրետանի աջակցութեան, ձիւնապատ լեռներով: Թշնամին յամառ հետապնդումը այդ խումբին կողմէ...»[3]:

Հայ զինավարներին հրաշալի հնարավորություն է ընձեռվում կրնկակոխ հետապնդել նահանջող հակառակորդին եւ արագորեն գրավել նաեւ Դատվանը: Եթե մարտական գործողություններն արագ ընթացք ունենային, ապա Տարոն մտնելու խնդիրը զգալիորեն կհեշտանար: Սորբի կռվում պարտություն կրած թուրք հրամանատարությունը դժվար թե կարողանար հասցնել ամուր պաշտպանություն կազմակերպել: Սակայն ճակատի հրամանատար գեներալ Տրուխինը, ոչ մի փաստարկներով չարդարացված պատճառաբանությամբ եւ կարծես կանխամտածված դիտավորությամբ, խոչընդոտում է հայ զինվորների հարձակումը եւ դրանով իսկ թուրքերին հնարավորություն ընձեռում ամրապնդվելու Դատվանում: Եւ միայն հուլիսի 4-ին, Սորբի գրավումից երեք օր անց, հայ կամավորները հրաման են ստանում գրոհելու Դատվանը: Ռուսական հրամանատարության բարեհաճությամբ շահած ժամանակահատվածում թուրքերին հաջողվում է համալրել զորքերի մարտաշարքերը եւ Դատվանը վերածել անմատչելի ամրոցի: Այս անգամ արդեն հայ կամավորական մարտախմբերի հրամանատարներին էին ենթարկվում նաեւ ռուսական մի քանի զորավաշտեր:

Դատվանի մատուցյներում ընթացող մարտերի առաջին օրը, չնայած գործադրած մեծագույն ջանքերին, հայ զինվորներին չի հաջողվում թուրքերին դուրս շպրտել իրենց անմատչելի դիրքերից: Հաջորդ օրն առավոտյան գեներալ Տրուխինը մարտադաշտ է դուրս բերում հեծելազորային գունդն ու հրանոթների մարտկոցը: Մի քանի ժամ շարունակ ընթանում էր միայն հրանոթային մենամարտ, իսկ երեկոյան կողմ. «Ամբողջ ճակատը յարձակման էր դիմել:

Դրօն առաջանում էր կենտրոնով ու գրաւում թշնամու կարեւոր դիրքերը, որոնք իշխում էին թշնամու Դատւանի դիրքերի վրայ: Իսկ Անդրանիկի զօրամասը Դրոյի ձիաւորներով վերցրեց Դատւանի դիրքերը»[1]:

Թուրքերի հզոր կրակակետերը հաղթահարելով՝ հարձակումը հաջողությամբ էին զարգացնում Համազասպն ու Քեռին: Անձնուրաց էին գործում Դրոյի վաշտերն ու հարյուրակների հրամանատարներ Մարտիրոսը, Մեծ Ղազարը, Ցապոնը, Կարբեցի Օնեն, Զեմլյակը, Դալի Ղազարն ու մյուսները: Այլեւս անկարող լինելով դիմադրել տարբեր ուղղություններից տեղացող ուժգին հարվածներին՝ հակառակորդը ստիպված տեղի է տալիս եւ սկսում կանոնավոր մարտաշարքերով նահանջել: Թուրքերի կանոնավոր նահանջը փախուստի վերածելու նպատակով հայ հեծելախմբերը Դաշնակցական Խեչոյի գլխավորությամբ սրընթաց գրոհ են ձեռնարկում եւ քշում նրանց մինչեւ Գրգուռ: Սակայն թուրքերն այս անգամ մար-

---

[1] «Ալիք», բացառիկ, 1956, մայիսի 4:
[2] Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1927, նոյեմբեր, էջ 77:
[3] Նույն տեղում:

---

[1] Նույն տեղում:

տապալում են գալիս բերում Գրգուռի մոտակայքում թաքնված ուժերն ու գնդացրային կրակահերթերով դիմավորում հայ հեծելազորայիններին: Թշնամու գնդացիրների համազարկերից զոհվում է Հայոց զորամասերի արժանավոր բազմավաստակ զինվոր Դաշնակցական Եէչան:

Ներկայացնելով այդ ճակատագրական պահը՝ Մարաթիրոսը գրում է. «Թշնամու խուճապահար նահանջի ժամանակ, Դաշնակցական Եէչան, Դրոյի, Անդրանիկի ու Համազասպի ձիաւորների գլուխն անցած, ալացաս գէպի ասոխը:

Արագշաս գնացող ձիաւորները արդէն քիչ էին մնացել, որ հասնէին տաճիկ հեծեւակազօրին ու սկսէին նրանց սրախողխող անել, երբ Գրգուռա լեռան փէշի ձորից, Թշնամին բաց արեց գնդացրային իր կրակը ու քիչ անց, հէնց նոյն ձորից երեւաց Թշնամու նոյնպէս արագշաս եկող հեծելազօրը...

Կողմերը իրար խառնեցին...

Եւ Դաշնակցական Եէչան, ինչ-որ մի խենթ ու ճարպիկ սրամտութի տանելով ազատներին կարողացաւ անակնկալի բերել Թշնամուն ու յաղթութեան նժարը իջեցնել իր օգտին, նահանջի ստիպելով Թշնամի հեծելազօրին:Թշնամին ճիշտ է որ ընկրկեց, մէջքը դարձրեց մերոնց ու փախաւ...ասկայն ափսո՜ս, հազար ափսոս, ընկաւ մեր անմոռան ու Թանկագին Եէչան...»[1]:

Զերթնչելով կարկամ ուժգնութեամբ տեղացող գնդակներից՝ Զեմլյակն իր ձիավոր հարյուրակով անկասելի հարվածով հետ է շպրտում թուրքերի հակագրոհը եւ մարտադաշտից դուրս բերում զոհված հերոսի դիակը: Մարտը չդադարող ուժգնությամբ շարունակվում է նաեւ գիշերը: Գիշերային խավարն անգամ անզոր էր արգելակելու ճակատամարտը հաղթական վախճանի հասցնելու հայ զինվորների բուռն ձգտումները: Դրոն, ճեղքելով այդ կռիվներում իրենց լավագույնս դրսեւորած թուրքերի զորաշղթան, գրավում է քաղաքի նավահանգիստը, իսկ Անդրանիկի զինվորները ներխուժում են քաղաք:

Երկօրյա ճակատամարտը ավարտվում է թուրքական զորքերի գաժան պարտությամբ[2]:

Գեներալ Տրուխինը արժանվույնս գնահատելով հայ կամավորների մարտական գործողությունները, հեռագրում է հրամանատարությանը. «Երկօրյա ճակատամարտի ատեն իր ղեկավարությանը յանձնուած ջոկատի զօրքերը դուրս քշեցին թշնամին իր դիրքերէն: Յաղթութիւնը գլխաւորաբար արդիւնքը պէտք է նկատել երկու երրորդով հայ կամաւորներէ բաղկացած մեր հետեւակազօրքի կրակին...»[1]:

Սորբի եւ Դատվանի հաղթական մարտերից հետո փոխվում է նաեւ ռուսական զորքերի տրամադրությունը: Տրուխինին փոխարինած գեներալ Նազարբեկովը՝ մարտադաշտ դուրս բերելով իր հրամանատարությամբ գործող զորքերի հիմնական խմբավորումը ու ողջ հրետանին՝ պարտության է մատնում իրեն դիմակայող թուրքական զորագնդերին, մտնում Տարոն աշխարհի Ախլաթ գավառը եւ հունիսի 11-ին հասնում մինչեւ Խանիկ գյուղ[2]:

Դրոյի զորավաշտերը հասնում են մինչեւ Գրգուռի ստորոտում գտնվող Զրխոր գյուղը, իսկ ապա մեծանուն հայդուկապետ Աղբյուր Սերոբի ծննդավայր՝ Սողորդ: Միաժամանակ Գրգուռ եւ Նեմրութ լեռների ուղղությամբ է առաջանում Անդրանիկի, իսկ Բիթլիսի՝ Քեռու եւ Համազասպի մարտախմբերը:

Կավրե-Շամեի կռվից մինչեւ Բերկրի, Վան եւ ապա Շատախի, Մոկսի, Սորբի ու Դատվանի ազատագրման մարտերում փայլուն քննություն է բռնում հայ կամավորական զորախմբերի ամենաերիտասարդ հրամանատարը՝ 32-ամյա Դրոն: Անցած բոլոր մարտերում նրա ղեկավարած զորախումբը մշտապես կրակների կիզակետում էր եւ մեծամասամբ ամենաառաջավոր գծում: Դրոն մարտերում դրսեւորած քաջությամբ եւ հիրավի իր ռազմագիտական տաղանդով իսկական ռազմիկի, զորահրամանատարի վառ օրինակ էր:

Բնութագրելով Դրոյի մարտական շնորհները՝ բժիշկ Եր. Խաթանեսյանը գրում է. «Ականատես եմ եղել Սորբից մինչեւ Դատուան ու Գրգուռ կամաւորական չորս գունդերի մղած ճակատամարտերին: Ես տեսայ եւ խոր յուզումով տեսայ, թէ ինչպէս Սորբի յաղթանակից յետոյ Անդրանիկը բաղեղի պէս փաթաթուեց Դրոյին, համբուրեց նրան ու իր վաղեմի ընկերոջ, աննման հայդուկին՝ Քեռիին ուղղելով խօսքը, ասաց.

- Ասլան է Տերօն, Ասլան:

Անդրանիկը Տերօ էր արտասանում Դրոյի անունը: Բայց այդ հնչիւնի մէջ մէկտեղուած էին հիացում, խանդաղատանք, բերկրանք եւ հպարտանք»[3]:

---

[1] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, նշվ. աշխ., էջ 279-280:
[2] Տե՛ս Հայրենիք» ամսագիր, 1927, նոյեմբեր, էջ 76-77:

[1] Նույն տեղում, էջ 77:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 21, թ. 33:
[3] «Ալիք», բացառիկ, 1956, մայիսի 4, էջ 16:

Թվում էր, թե այլևս ոչ մի ուժ չէր կարող խոչընդոտել ռուսական զորագնդերի եւ հայ կամավորների հաղթական պոռթկումը: Զենքերի համազարկերի արձագանքներն արդեն հասնում էին Տարոնի եւ Սասունի լեռների ամրություններին եւ իրենց բազուկների ուժին ապավինած տասնյակ հազարավոր հայերի, որոնք ամեն օր եւ ամեն ժամ սպասում էին «ազատարար» ռուսական զորքերի եւ հայ կամավորական խմբերի օգնությանը:

Սորբի եւ Դատվանի հաղթական մարտերից հետո կամավորական զորախմբերը մեկ շաբաթ, մինչեւ Վարդավառի օրը մնում են Դատվանում, եւ այդ նույն օրը ստանում են Ռուբեն Տեր Մինասյանի ահազանգ հնչեցնող նամակը, որով նա ներկայացնում է Սասունում հանգրվանած տասնյակ հազարավոր մարդկանց աղետալի վիճակը եւ միաժամանակ տեղեկացնելով, որ «Մշոյ դաշտում տաճկական զորք չկայ, միայն գաղթող քրդութիւն կայ»:

Առաջարկում էր.

«Մի զօրամասով իջէք Մշոյ դաշտ, Նեմրութի վրայով: Միանալով մեզ, կը փրկեք քառասուն հազար հայութիւնը սովամահ կոտորուելուց եւ այլն»[1]:

Ռուբենի նամակն ստանալուն պես, զորախմբերի հրամանատարներ Անդրանիկը, Քեռին, Դրոն եւ Համազասպը անհապաղ ներկայանում են գեներալ Տրուխինին ու նրան իրազեկում նամակի բովանդակությունը: Այդ մասին նրանք տեղեկացնում են նաեւ կորպուսի հրամանատար գեներալ Օգանովսկուն:

Հրամանատարության որոշմամբ Անդրանիկի ու Դրոյի 1-ին եւ 2-րդ զորախմբերն սիբիրյան կազակների մեկ գունդ Դատվանից մեկնում են Սողորդ, որտեղից Նեմրութի վրայով ու Մշո դաշտով պետք է շուտափույթ ուղեւորվեին Սասուն[2]:

Դժբախտաբար, ռազմաճակատում հետագա դեպքերը զարգանում են այնպիսի ուղղվածությամբ, որը ողբերգական ազդեցություն է գործում Սասունի լեռներում խմբված բազմահազար հայության ճակատագրի վրա:

Ախլաթ գավառ մուտք գործելուց հետո ռուսական զորքերը դադարեցնում են հարձակումը: Ցավոք, այդ ժամանակ ռուսական զորքերի գործողություններում ինչ-ինչ պատճառներով դարձյալ նկատվում են դանդաղկոտություն ու անվճռականություն: Թուրք հրամանատարությունը, օգտվելով ռուսական զորքերի կրավորակա-

[1] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, նշվ. աշխ., էջ 281:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 282-283:

նությունից, փորձում է ռազմաճակատի թեւերից եւ ճակատից տեղացող գրոհներով հետ շպրտել ռուսական զորքերին եւ թույլ չտալ նրա հետագա առաջխաղացումը դեպի Մուշ եւ Սասուն: Գեներալ Նազարբեկովը թուրքերի ծավալած եռանդուն գործողություններին կանխարգելիչ հակահարված հասցնելու նպատակով փորձում է որոշակի քայլեր ձեռնարկել. «Նկատելով թուրքերի հարձակումը, ես առաջարկեցի գեներալ Շերպանտեւին իր հեծելազորով հարվածել թուրքերի թեւին եւ նույնիսկ անցնել նրանց թիկունքը: Նա իմ առաջարկությանը ոչնչով չպատասխանեց...»[1]:

Համաձայն գեներալ Թ. Նազարբեկովի վկայության, ռուսական բանակի, հատկապես հեծյալ զորամասերի համար բավականին դժվար է եղել լեռնային պայմաններում մարտնչելը: Ռուս զինվորներն ու հեծյալ զորամասերը, որոնք առավելապես վարժված էին բնակլիմայական բոլորովին այլ պայմաններում կռվելու, չկարողանալով հարմարվել Հայաստանի խստաշունչ լեռնային պայմաններին՝ շարքից դուրս էին գալիս[2]:

Իսկ հարձակումն անհրաժեշտ էր շարունակել եւ թույլ չտալ, որպեսզի թուրք հրամանատարությունը համալրի եւ վերախմբավորի իր ուժերն ու անցնելով հարձակման՝ ռուսական զորքերից եւ հայ կամավորներից խլի նախաձեռնությունը:

«Երեկոյան,-գրում է գեներալ Թ. Նազարբեկովը,-մոտենալով Ալջեւազին, ես դիմեցի գեներալ Շարպանտեւին եւ ասացի, թե նա որպես ավագ չի ուզենա ընդունել զորամասի հրամանատարությունը»[3]:

Գեներալ Նազարբեկովի առաջարկության նպատակը միակն էր. համախմբել այդ շրջաններում գործող բոլոր մարտական ուժերը եւ վճռական քայլերով փլուզել թուրք հրամանատարության ձեռնարկումները:

«Նա, - շարունակում է գեներալ Նազարբեկովը, - այդ իմ հարցին պատասխանեց. «Դուք այդ շատ եք ուզում»: Ես նրան պատասխանեցի, որ պետք է իմանալ. եթե նա չի ուզում, ապա ինքը կընդունի հրամանատարությունը եւ կտա հանձնարարություններ:

Նա ինձ ոչինչ չպատասխանեց եւ շարունակեց դրագուններ հետ ոչ թե Ալջեւազ, այլ դեպի Նորշեն գյուղի ուղղությամբ»[4]:

Ընդամենը մի քանի օրից պարզվում է ռուս գեներալի լռության գաղտնիքը: Գեներալ Շարպանտեւն այդ ժամանակ արդեն

[1] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 21, թ. 33:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:

տեղյակ լինելով հրամանատարության կողմից իրենց զորքերի նահանջելու վերաբերյալ արդեն ընդունած որոշմանը, չի ցանկացել, որ այդ իրողությունը, որպես գաղտնիք հայտնի դառնա նաեւ հայազգի գեներալին, իսկ Սասունի լեռներում խմբված բազմահազար հայեր սպասում էին «ազատարար» ռուսական բանակին եւ հայ կամավորներին:

Այո, ռուսական զորքերի հրամանատարությունը մի շարք նկատառումներով աշխատում էր հայերից թաքցնել ու ծածուկ պահել իրենց զորքերի նահանջելու իրողությունը:

Այս առնչությամբ Վարդանը ներկայացնում է իր եւ գեներալ Նիկոլաեւի միջեւ կայացած հետեւյալ խոսակցությունը. «Կողմնակի կերպով իմանում եմ, վոր գեներալ Նիկոլաեւը առանց մեզ իմաց տալու ուզում է գաղտնի կերպով նահանջել դէպի Կովկաս: Գնում եմ մոտը եւ հարցնում նահանջի առթիվ. Ասում է այո՛, ուզում եմ նահանջել եւ չեմ ուզում վոր ժողովուրդը իմանա. վոր նա էլ միանա եւ խանգարի մեր նահանջի ճանապարհը»[1]:

Հայ կամավորական մարտախմբերի համար թերեւս ամենապատասխանատու պահն էր: Այժմ արդեն իրենց վճռական խոսքը պիտի ասեին հենց իրենք՝ կամավորական զորախմբերը, որոնք կոչված էին ժամանակին օգնության հասնել եւ կոտորածներից փրկել արեւմտահայությանը, իսկ այս դեպքում՝ Սասունի լեռներում խմբված բազմահազար հայությանը: Ինչո՞ւ հայ կամավորական զորախմբերը չեն փորձել անցնել Տարոն եւ Սասուն: Ս. Վրացյանը, որն այդ օրերին Ն.Աղբալյանի ընկերակցությամբ, որպես Ազգային Բյուրոյի ներկայացուցիչ գտնվում էր ռազմաճակատում, պատմում է կամավորական զորախմբերի հրամանատարների մասնակցությամբ խնձորկին գյուղում, լճափի այգիներում տեղի ունեցած զինվորական մի խորհրդակցության մասին, որին մասնակցել են նաեւ ինքն ու Ն. Աղբալյանը: Այդ խորհրդաժողովը տեղի է ունեցել անմիջապես Սորբի կռվից հետո, Դատվանի մարտերի նախօրեին:

Կ. Սասունու վկայությամբ Տ. Դեւոյանը (գեներալ Օգանովսկու կորպուսի հետախուզության բաժնի պետ-Հ.Գ.), ճիշտ այդ օրերին ստացել էր շորի կտորի վրա գրված ծածկագիր մի նամակ, որը գրել էին Վ. Փափազյանն ու Ռուբենը:

«Անոնք,- նշում է Կ. Սասունին,- կը գրէին Սասնոյ կռիւներու մասին եւ կը յայտնէին թէ՝ իրենք երեք ամիսներէ ի վեր ինքնապաշտպանութեան կռիւներուն մէջ սպառուած են եւ եթէ ընդհանուր բռնկում մը տեղի ունենայ, իրենք միայն 8 օր պիտի կարողանային դիմանալ: Եթէ այդ կարճ միջոցին ռուսական զօրքերը եւ կամաւորները չհասնէին, հայութեան ամբողջ ռազմամթերքը պիտի վերջանար եւ ժողովուրդը կոտորուէր...»[1]:

Վստահ լինելով, որ կամավորներն իրենց ահազանգն ստանալուն պես անհապաղ կշտապեն օգնության, նամակի հեղինակները նամակում նույնիսկ նշել են հետեւյալ գործնական քայլերը. «...պահակներ ունենանք Նէմրութի գագաթին, եւ կրակ վառենք հոն, որպեսզի Սասնոյ լեռներէն նշմարուին բոցերը, իբրեւ ազդանշան սկսած ընդհանուր յարձակողականին: Իսկ իրենք Սասնոյ լեռներու վրայ պիտի վառէին երկու խոշոր կրակներ, ի նշան օրհասական կռուին...»[2]:

Նամակում նրանք նշել են նաեւ ծածկագրի՝ «Բլբուլը թող չերգէ Մշո դաշտերում» երգի այսինչ տուները»[3]:

Կամավորական զորախմբերի հրամանատարությունն անշուշտ քաջատեղյակ էր Սասունից հնչեցրած անհապաղ օգնության հասնելու ահազանգին: Նախորդ մարտերում ռուս հրամանատարության դրսեւորած ոչ այնքան հուսադրող ու անհասկանալի գործելակերպը հուշում էր , որ հերթական անգամ ռուսական զորքերի հարձակումը տարբեր պատճառաբանությամբ կարող էր ձգձգվել, եւ Սասունի լեռներում պատսպարվածները կարող էին ժամանակին չստանալ անհրաժեշտ օգնություն: Եթե ռազմաճակատում դեպքերը, որը բնավ չէր բացառվում, ծավալվեին համանման ուղղվածությամբ, ապա իրենց վճռորոշ խոսքը պիտի առանց երկմտելու ասեին հայ կամավորական զորախմբերը:

Խնձորկին գյուղում կայացած խորհրդաժողովում կամավորական զորախմբերի հրամանատարները Հայոց Ազգային Բյուրոյի ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկել են հենց այդ՝ հայ կամավորական զորախմբերով, առանց ռուսական զորքերի մասնակցության Տարոն եւ Սասուն անցնելու հարցը:

Համաձայն Ս. Վրացյանի հավաստման, հայ կամավորական զորախմբերի հրամանատարներից Տարոն եւ Սասուն անցնելու ամենաջերմեռանդ պաշտպանը եղել են Դրոն, ինչպես նաեւ Քեռին եւ Դաշնակցական Խեչո : Նրա առաջարկած ծրագրի համաձայն, Ազգային Բյուրոյի ներկայացուցիչները եւ զորախմբերի հրամանա-

[1] ՀԱԱ, ֆ. 402, ց.2, գ. 11, թ. 9:

[1] Սասունի Կ., Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914-1918), Պէյրութ, 1966, էջ 86:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

տարները պիտի դիմեին հայերի կողմից սիրված, ծերունազարդ գեներալ Տրուխինին ու նրանից պահանջեին, որպեսզի նա արտոներ Անդրանիկի ընդհանուր հրամանատարությամբ միավորել հայ կամավորական զորախմբերը եւ նրանց միացնել կազակների երկու հարյուրակ, հրանոթային երկու մարտկոց ու արշավել Տարոն, ապա նաեւ Սասուն: Ընդ որում Դրոն վազօրոք խոսել էր կազակների հետ ու ստացել էր նրանց համաձայնությունը:

«Դրոն,- գրում է Ս. Վրացյանը,- համոզուած էր, որ կամաւորները յաջողութեամբ կը հասնեն Տարօն եւ կազատեն այնտեղի հայութիւնը: ...Ծրագիրը յանդուգն էր: Անյաջողութեան դէպքում կարող էին զոհուել կամաւորները, բայց յաջողութեան պարագային կը փրկուէր Տարօնի հայութիւնը, որ դեռ կանգուն էր եւ յուսահատօրէն պաշտպանւում էր թշնամու դէմ: Մեծ նպատակը կարդարացնէր ամէն զոհողութիւն»[1]:

Ըստ Ս. Վրացյանի, Դրոյի առաջարկությանը հիմնականում ընդդիմացել է Անդրանիկը, որը խելագարություն է համարել միայն հայ կամավորական զորախմբերով Տարոն եւ Սասուն արշավելը:

«Անդրանիկը-գրում է Ս. Վրացյանը,-սխալ եւ անիրագործելի էր համարում Դրոյի ծրագիրը, կամաւորական խմբերը առանձին, ասում էր նա, չեն կարող Տարօն հասնել եւ պէտք է իրենց շարժումները յարմարացնեն ռուս բանակի տակտիկային»[2]:

Նա հեգնանքով ծաղրել է այդ առաջարկությունը պաշտպանող Ազգային Բյուրոյի ներկայացուցիչներին եւ փորձել է ցույց տալ, որ Թիֆլիսի «Թիկունքի հերոս» վարժապետները (քանի որ Ազգային Բյուրոյի նստավայրը Թիֆլիսն էր, ուստի նկատի ունի նրա անդամներին եւ մասնավորապես Ն. Աղբալյանին ու Ս. Վրացյանին - Հ.Գ.) ոչինչ չեն հասկանում ռազմական գիտությունից եւ ուզում են վտանգել կամավորների կյանքը:

«Ցաւալի էր,- նշում է Ս. Վրացյանը,- լսել Սասունի հերոսի այդ տարօրինակ խօսքերը...

Դրոն սիրում էր Անդրանիկին: Նա կը գերադասէր, որ Անդրանիկը լինէր Արարատեան ջոկատի հրամանատար Վարդանի տեղը, բայց չէր կարող ըմբռնել Անդրանիկի բռնած դիրքը»[3]:

Ս. Վրացյանի վկայությամբ, խորհրդակցության հաջորդ օրը ինքը Վարդանի ուղեկցությամբ այցելել է գեներալ Տրուխինին եւ

[1] Վրացեան Ս., Մրրկածին Դրոն, էջ 88:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

ցավ հայտնել զորքերի նահանջի հետեւանքով տարոնահայությանը սպառնացող դաժան ճակատագրի վերաբերյալ: Գեներալը հասկացրել է, որ «ինքը ուրախ կինի, եթէ կամաւորական խումբերը, իբրեւ ընդհանուր ջոկատի յառաջապահներ, շտապեն հասնել Մուշի շրջանի ժողովրդին օգնութեան: Պատերազմների պատմութիւնը, ասաց նա, այդպիսի օրինակներ շատ ունի:

Երբ Անդրանիկը լսեց Տրուխինի կարծիքը, հեգնանքով ժպտաց եւ ոչինչ չասաց: Նրա կարծիքը Տրուխինի մասին յայտնի է, ծերունին ցնդած է»[1]:

Ս. Վրացյանը գտնում է, որ Անդրանիկի նման դիրքորոշումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ Ազգային Բյուրոն ոչ թե իրեն, այլ Վարդանին էր նշանակել Արարատյան զորագնդի հրամանատար: Անդրանիկը չէր կարողանում հաշտվել նաեւ այն իրողությանը, որ Վան մտնողներից առաջինը իր զորախումբը չի եղել եւ այդ պատճառով նույնիսկ մերժել է քաղաք այցելելու վանեցիների հրավերը:

Անդրանիկի դիրքորոշումն անշուշտ պատճառաբանված էր: Նախ, հայ կամավորական զորախմբերի հրամանատարությունը որեւէ տեղեկություններ չի ունեցել այդ օրերին Տարոնում եւ Սասունում գտնվող թուրքական զորքերի ու նրանց աջակցող քրդական զինյալ խմբերի ստույգ քանակի եւ տեղաբաշխման վայրերի մասին: Ավելին, համաձայն ռուսական զորքերի հրամանատարության տվյալների, ռազմաճակատում թուրքական զորքերի շարքերը համալրել էին նոր զորամասեր, որը պատճառ էր հանդիսանում ռուսական զորքերի նահանջին: Համանման իրավիճակում, իրոք, մեծ համարձակություն եւ պատասխանատվություն էր պետք ունենալ, չտիրապետելով հակառակորդի իրական ուժերի եւ դասավորության մասին որեւէ հավաստի տեղեկությունների, որոշում կայացնել միմիայն կամավորական զորախմբերով արշավել Տարոն եւ Սասուն: Իսկ եթե կամավորներին չհաջողվեր անցնել Սասուն եւ նրանք մինչեւ Սասուն հասնելը, կես ճանապարհին բախվեին մեծաքանակ թուրքական զորքերին ու քրդական զինյալ խմբերին: Կարելի է պնդել, որ Անդրանիկի մտավախությունը առավելապես պայմանավորված էր նաեւ հենց այդ հանգամանքով, եւ ոչ թե միայն Սիմոն Վրացյանի վկայակոչած փաստարկներով:

Անտարակույս, Անդրանիկը մյուսներից ոչ պակաս, գուցեեւ առավել, մտահոգված էր Սասունի լեռներում պատսպարված բազ-

[1] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Դ, էջ 91-92:

մահազար մարդկանց ճակատագրով: Նա գտնում էր, որ կամավորական զորախմբերը տվյալ ժամանակահատվածում հայությանը պաշտպանող միակ մարտական ուժերն էին, իսկ ո՞վ կպաշտպաներ ժողովրդին կոտորածներից, եթե, բախվելով թշնամու մեծաքանակ ուժերին, ջախջախվեին նրա վերջին հույսն ու մարտական միակ ուժը՝ կամավորական զորախմբերը:

Սասուն արշավելու հարցում Դրոյին առավելապես պաշտպանել է կամավորական 4-րդ զորախմբի հրամանատար Քեռին եւ Արարատյան զորագնդի հրամանատարի օգնական Դաշնակցական Խեչոն:

«Երբ, - շարունակում է Ս. Վրացյանը, - Անդրանիկը վերջացրեց իր տաք հակաճառությունը Դրոյին, Քեռին բարձրացրեց իր գլուխը եւ ի լուր ասաց.

- Ես քեզ հետ եմ, Դրո:

Խեչօն աւելացրեց.

- Ես էլ: Միւսները լուռ մնացին:

Ժողովը բանաձեւ չհանեց: Որոշումը յետաձգուեց վաղուան»[1]:

Հաջորդ օրը տեղի է ունենում Դատվանի կռիվը, որտեղ, ինչպես արդեն նշվել է, զոհվում է հայ կամավորական զորախմբերով Տարոն եւ Սասուն արշավելու ամենաջերմեռանդ կողմնակիցներից մեկը՝ Դաշնակցական Խեչոն:

Տարոնի եւ Սասունի տասնյակ հազարավոր հայության համար կենսական նշանակություն ունեցող այս կարեւորագույն հարցի վերաբերյալ միասնական եւ անհրաժեշտ որոշում կայացնելու գործում, այնքան էլ հասկանալի չէ Արարատյան զորագնդի հրամանատար Խանասորի Վարդանի դերն ու մասնակցությունը: Որեւէ տարակույս լինել չի կարող, որ եթե նա, որպես զորագնդի հրամանատար, ունենար հրամանատարին անհրաժեշտ հեղինակություն ու կշիռ, եւ իհարկե իր հրամանատարությամբ գործող զորախմբերի հետագա գործողությունների վերաբերյալ հստակ ու կայուն դիրքորոշում, ու կողմնակից լիներ Սասուն արշավելուն, ապա միանգամայն հնարավոր է, որ այդ բախտորոշ պահին կայացվեր ամենաօգտակար եւ կշռադատված որոշումը, եւ հետագա գործողությունները զարգանային ճիշտ հակառակ ուղղվածությամբ: Եւ քանի որ Սասուն արշավելու կապակցությամբ զորախմբերի հրամանատարները պաշտպանել են ոչ համարժեք, այլ տարաբնույթ տեսակետներ, այդ պատճառով չի կայացվել միանշանակ որոշում: Կամավորական զորախմբերը, ենթարկվելով ռուսական զորքերի հրամանատարության որոշանը, եւ կարծես մոռանալով Տարոնն ու Սասունը, ինչպես նաեւ

[1] Նույն տեղում, էջ 88-89:

իրենց հիմնական կոչումն ու պարտականությունը, նույնպես բռնել են նահանջի ուղին:

Իր հուշերում հպանցիկ անդրադառնալով Տարոն եւ Սասուն կամավորական զորախմբերի մուտք չգործելու պատճառների հիմնավորմանը՝ Վարդանը գրում է. «Մտածում էինք Մուշ անցնել, բայց որովհետեւ ռուսները չգնացին, մենք էլ չէինք կարող մեր փոքրաթիվ ուժերով ավելի խորը մտնել: Թուրքերի նահանջելուց հետո մենք էլ նահանջեցինք դեպի Վան»[1]:

Չի բացառվում, որ միասնական եւ անհրաժեշտ վճիռ կայացնելուն կարող էր խոչընդոտել նաեւ զորախմբերի հրամանատարների միմյանց նկատմամբ դրսեւորած վերաբերմունքը:

Կռիվների ընթացքում միշտ չէ, որ կամավորական զորախմբերի հրամանատարները գործել են հաշտ ու համերաշխ: Նրանց միջեւ երբեմն պատահել են տարաձայնություններ եւ անհարկի վիճաբանություններ: Խանասորի Վարդանը, իր անտիպ մեծածավալ հուշերում անդրադառնալով զորախմբերի հրամանատարների փոխհարաբերությանը, ներկայացնում է Դրոյի եւ Համազասպի, Անդրանիկի ու Քեռու միջեւ տեղի ունեցած վեճերը:

Դրոյի եւ Համազասպի վեճը տեղի է ունեցել Բերկրի-Կալայի գրավման ժամանակ: Այդ հաղթական գործողությանը մասնակցել են կամավորական 2-րդ, 3-րդ, 4-րդ զորախմբերը, որոնք իրենց դրսեւորել են փայլուն կերպով: Բայց անհարկի անախորժություն Դրոյի եւ Համազասպի միջեւ, այնուամենայնիվ, քաղաքը գրավելուց հետո ծագել է:

«...քիչ էր մնում,-վկայում է Վարդանը,-իրար կոտորէին, մեկն ասում էր յես եմ առաջ մտել Բերկրի, մյուսն ասում էր ես եմ մտել»[2]:

Անդրանիկի եւ Քեռու, որն իր հրամանատարական բազմաշնորհ կարողություններից զատ, հայտնի է նաեւ համեստությամբ եւ զինվորների ու մերձավորների նկատմամբ դրսեւորած հարգալից վերաբերմունքով, միջեւ ծագած վեճը տեղի է ունեցել Ռշտունիքում ընթացող կռիվների ժամանակ:

Անդրադառնալով այդ միջադեպի ծագման մանրամասներին՝ Վարդանը գրում է. «Այդ կողմի դիրքերից մեկում մեծ անախորժություն առաջ յեկավ Քեռիի եւ Անդրանիկի մէջ: Պատճառը Քեռու հարյուրապետերից մէկը՝ Արամայիս Ազնաւուրյանը, Անդրանիկի հրամանը չի կատարել: Անդրանիկն էլ գալով Քեռու բանակ, սկսեց Արամայիսին անպատվել: Արամայիսը չպատասխանեց, բայց Քեռին

[1] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 11, գիրք 4, էջ 5:
[2] Նույն տեղում, էջ 2:

վոր այնտեղ պառկած էր, վորպես թէ քնած էր, լսում է բոլոր խօսքերը եւ տեղից վեր կենալով սկսեց Անդրանիկին պատասխանել, վոր դու իրավունք չունես իմ հարյուրապետին անպատվել, գործ ունես, ինձ հետ խոսիր: Քիչ էր մնում, վոր իրար անպատիվ խոսքեր ասեին ու կռիվ տեղի ունենար, մէջտեղ ընկանք ու չթողինք»[1]:

Այդօրինակ վիճաբանութիւններ կարող էին ծագել, բայց բացարձակապես չպետք է հիմք հանդիսանային ու խոչընդոտեին հայության համար կենսական նշանակություն ունեցող միասնական որոշումներ ընդունելուն:

Եթե կամավորական զորախմբերը, այնուամենայնիվ, փորձեին միասնական ուժերով ձեռնարկել արշավանքը եւ կարողանային ազատագրել Տարոնն ու Սասունը, ապա դրանով մեծագույն եւ անգնահատելի ծառայություն կմատուցեին բովանդակ հայ ժողովրդին ու, բնականաբար, այլեւս որեւէ արդարացնող կամ դատապարտող տեսակետներ չէին հնչի կամավորական շարժման ու զորախմբերի օգտակարության վերաբերյալ: Բայց նման փրկարար գործողություն կամավորները չձեռնարկեցին:

Հետագայում պարզվում է, որ այդ ժամանակահատվածում Թուրք հրամանատարությունը Տարոնում շատ քիչ զորք է ունեցել ու եթե հայ կամավորական բոլոր 4 զորախմբերը, այնուամենայնիվ, փորձեին միասնաբար արշավել Սասուն, ապա այնտեղ տեղաբաշխված Թուրքական փոքրաքանակ զորամասը ի զորու չէր լինի դիմակայելու նրանց հարձակմանը ու առավել եւս խոչընդոտեր զորախմբերի անցումը Սասուն: Չորս կամավորական զորախմբերը իրենց հետ կարող էին տանել զգալի քանակությամբ տեխնիկա, զենք ու զինամթերք ու դրանցով զինել Սասունում հանգրվանած զենք կրելու ընդունակ տղամարդկանց: Եթե կամավորական խմբերը հասնեին Սասուն, ապա լեռնաշխարհն անտարակույս կվերածվեր պաշտպանության հզոր հանգույցի, եւ Թուրք հրամանատարությունը դժվար թե կարողանար խորտակել այդ անառիկ ամրոցը: Սակայն, ի դժբախտություն Սասունի եւ այնտեղ հանգրվանած բազմահազար հայերի, ռազմաճակատում դեպքերը զարգանում են այնպիսի ուղղվածությամբ, որի պատճառով տասնյակ հազարավոր հայեր կռվելով մինչեւ վերջին փամփուշտը՝ զոհ են դառնում Թուրքքրդական ջարդարարների:

Կ. Սասունին, ներկայացնելով ռուսական զորքերի եւ հայ կամավորական զորախմբերի, իր իսկ արտահայտությամբ, «Մեծ նահանջը», իրավացիորեն հարց է տալիս. «-Ի՞նչպես պատահեցաւ, որ մեր

[1] Նույն տեղում, էջ 6:

կամաւորական գնդերը հասան Դատւան ու Ախլաթ, եւ սակայն չկրցան օգնութեան հասնիլ Տարօնին...

Պատմութեան առջեւ չպիտի կրնան արդարանալ անոնք, որ Նէմրութի եւ Սիփանի ստորոտներէն նահանջեցին, տեսնելով հեռուն Մշոյ դաշտը, Մուշը ու Սասունը կրակի մէջ...»[1]:

Կ. Սասունին իրավացիորեն գտնում է, որ հին ֆիդայիներից եւ բազմաթիվ կռիվների բովով անցած փորձառու զինվորներից բաղկացած կամավորական խմբերը, որոնք կազմավորվել էին գերազանցապես արեւմտահայությանն արհավիրքներից պաշտպանելու ու ազատագրելու նպատակով, պարտավոր էին գործել բոլորովին այլ մարտավարությամբ: Կամավորական չորս զորախմբերը կարող էին չհնազանդվել ռուսական հրամանատարության հրամանին եւ միացյալ ուժերով ներխուժելով Մշո Դաշտ՝ բարձրանային Սասուն ու ազատեին այնտեղ կուտակված հայությանն եւ իրենց հետ տեղափոխել ավելի ապահով վայր[2]:

Մանավանդ, ինչպես արդեն նշվել է, որ այդ օրերին Տարոնում եղել է Թուրքական ընդամենը մի փոքրաքանակ զորամաս, որը լուրջ խոչընդոտ չէր կարող հարուցել դեպի Սասուն արշավող հայ կամավորական խմբերի ճանապարհին:

Այս հարցում Կ. Սասունու եւ Ս. Վրացյանի ներկայացրած պատճառաբանություններն ու մեկնաբանությունները գրեթե նույնն են:

«Ինձի,-գրում է Կ. Սասունին,- ծանօթ է, որ Դատվանի մէջ, վճռական այդ վայրկեանին, վերյիշուած խնդիրը քննութեան նիւթ դարձած է Դրոյի եւ Անդրանիկի կողմէ: Դրօն առաջարկած է երկու գունդերով չնահանջել, այլ ներխուժել եւ միանալ Մշոյ եւ Սասնոյ կռուողներուն: Սակայն Անդրանիկ ընդդիմացած է, ըսելով որ ինքն ստիպուած է ենթարկուիլ զինվորական կարգապահութեան»[3]:

Եթե հիմք ընդունենք Կարո Սասունու վկայությունը, ապա պիտի փաստենք, որ այն ամենայն հավանականությամբ տեղի է ունեցել Սիմոն Վրացյանի ներկայացրած Խնձորկինի խորհրդաժողովից եւ Դատվանի կռվից ու Դաշնակցական Խեչոյի զոհվելուց հետո, երբ արդեն հայտնի էր ազատագրված տարածքները թողնելու ու նահանջելու ռուսական հրամանատարության մտադրությունը: Դժբախտաբար այս կարեւորագույն խնդիրը վճռելիս Հայոց Ազգային Բյուրոյի ներկայացուցիչների (Ազգային Բյուրոյի Կարգադրիչ

[1] Սասունի Կ., Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914-1918), էջ 96:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Նույն տեղում:

մարմնի պետ Նիկոլ Աղբալյանը եւ նրա տեղակալ Սիմոն Վրացյանը ռազմաճակատում էին գտնվում կամավորական զորախմբերի մուտքը հնարավորիս Տարոն ու Սասուն արագացնելու առաքելությամբ- Հ.Գ.) եւ զորախմբերի հրամանատարների միջեւ առաջացած տարաձայնությունների հետեւանքով չկայացվեց միասնական որոշում, ու ռուսական զորքերի նահանջի հետեւանքով հայ կամավորական զորախմբերը մեկընդմիշտ զրկվեցին Սասունի լեռներում ապաստանած տասնյակ հազարավոր հայությանը օգնության հասնելու հնարավորությունից:

Ովքե՞ր էին մեղավորները: Այս հարցում միանգամայն արդարացի է Կարո Սասունին՝ գտնելով. «Ո՛վ առաջարկած ըլլայ եւ ո՛վ որ ալ մերժած՝ միեւնոյն է. գործը,-յեղափոխական գերագոյն պարտականությունը - չիրագործուեցաւ, եւ ատոր համար ե՛ւ Դրօն ե՛ւ Անդրանիկ եւ միւսները յանցաւոր կը մնան Տարօնի նահատակուած ժողովրդի առջեւ...

Բազմահազար արծիւներու աչքերը ջուր կտրեցան հեռաւոր Նէմրութին ակնակառոյց, բայց Նէմրութի գագաթէն հրեղէն լեզուները չխօսեցան... Ու «Բլլբուլը այլեւս չերգեց Մշո դաշտերում»[1]:

Ըստ Մարտիրոսի պատմածի, Սողոդում Անդրանիկի զինվորները մի թուրք զինվոր են բռնում, որը հարցաքննության ժամանակ զարմացած հայտարարել է. «Մեր զօրքը վերցրել է Մանազկերտը...դուք ի՞նչ էք անում այստեղ...

-Էդ չան ձագը սուտ կըսէ, տարէ՛ք,- բարկացաւ Անդրանիկը:

Ու չան ձագին «տարան»[2]:

Այդ դեպքից քսան րոպե անց, զորախմբերի հրամանատարները ստանում են թուրք զինվորի հաղորդածը հաստատող գեներալ Նազարբեկովի նամակը, որտեղ գրված էր. «Տաճիկները գրաւել են Մանազկերտը: Ինձ հրահանգւած է նահանջել անմիջապես, սակայն նկատի ունենալով, որ դուք կարող էք պաշարւել, այդ վտանգից ձեզ դուրս բերելու նպատակով, իմ նահանջը յետաձգում եմ մինչեւ գիշերւայ ժամը 12-ը: Եթէ չհասաք, ես կը նահանջեմ. գիշերւայ ժամը 12-ին, Ախլաթ եղէք: Զօր. Նազարբէգեանի գրութիւնն անմիջապէս ուղարկւեց Դատուան՝ Զօր. Տրուխինին»[3]:

Ինչպիսի՞ մարտավարությամբ պիտի առաջնորդվեին կամավորական զորախմբերը:

[1] Նույն տեղում, էջ 97:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, նշվ. աշխ., էջ 282:

Մարտիրոսի վկայությամբ՝ «Անդրանիկը նստեց ձին եւ իր ձիաւորներին ու վաշտապետներին հետն առած, մեկնեց, թողնելով հետեւակ զինուորներին:

Դրոն կարգադրեց շարք կազմեցնել բոլոր հետեւակ վաշտերին եւ ստուգում կատարել: Ստուգումը վերջանալուց յետոյ, իմ վաշտին յետնապահ կարգեց եւ հետեւյալ յայտարարութիւններ արաւ.

-Բոլոր վաշտապետերն պէտք է գնան իրենց վաշտի ետեւից: Մէկ զինուոր իսկ յետ թողած վաշտապետը, պատասխանատու է իր գլխով: Վաշտերի ջոկատներն ու դասակները կանոնաւոր շարքեր կազմած պիտի լինեն եւ հաւաք, որպէսզի ամեն պահ պատրաստ լինեն անակնկալների համար...»[1]:

Համաձայն զինվորական ընդունված մարտավարության, զորքերի նահանջելու ժամանակ հեծելազորը պիտի պաշտպանի հետեւազորի թիկունքը: Այդ նկատառումով Դրոն դիմում է կազակների գնդապետին ու խնդրում, որ նա համապատասխան կարգադրություն անի: Գնդապետը մերժում է Դրոյի խնդրանքը՝ առարկելով, որ իր հեծելազորը պատասխանատու է թնդանոթների համար ու այդ պատճառով հարկադրված է առաջ անցնել հետեւակից:

«Դրոն,-գրում է Մարտիրոսը,-պատրաստակամութիւն յայտնեց իր վրայ վերցնել թնդանոթների ապահովութան պատասխանատուութիւնը:

- Եւ համապատասխան ստացական կը տամ,-վերջացնելու համար ասաց Դրօն, բայց գնդապետը չէր ուզում համաձայնել, կրկնելով իր առարկութիւնը:

- Այդ դէպքում, ես մերոնց կը հրամայեմ կրակ բանալ ձեզ վրայ, որպէս փախուստ տուողի,-եղաւ Դրոյի վերջին խօսքը:

- Գնդապետը տեղի տւեց...»[2]:

2-րդ կամավորական զորախումբը 1-ին կամավորականի հետեւազորի ու կազակական գնդի հետ կանոնավոր զորաշարքով նահանջում է Ախլաթ:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, էջ 283:

2.3. ՆԱՀԱՆՋԻ ԴԺՎԱՐԻՆ ՕՐԵՐԸ

Կովկասյան ռազմաճակատի ռուսական բանակի բարձրաստիճան հրամանատարությունը զորքերի զանգվածային նահանջի անհրաժեշտությունը հիմնավորում է այն պարզունակ, մտացածին փաստարկներով, թե իբր Մանազկերտի շրջանում հայտնվել են թուրքական մեծաքանակ զորամիավորումներ, որոնց դեմ առճակատելը հավասարազոր էր կործանման:

Իրոք, ռուս-թուրքական ռազմաճակատում թուրք հրամանատարությունը, օգտվելով ռուսական զորքերի դանդաղկոտությունից եւ ոչ այնքան կազմակերպված գործողություններից, կարողանում է մի փոքր համալրել զորամասերը եւ մի քանի ուղղություններում հարձակումներ ձեռնարկել ռուսական զորքերի դիրքերին: Թեպետ թուրքական զորքերի հարձակումները այնքան մեծ հզորությամբ չեն կենսագործվել, այնուամենայնիվ, ռուսական զորագնդերն առանց մեծ ջանքեր գործադրելու՝ թողնում են նախօրեին գրաված տարածքները եւ նահանջում Ալջեւազ գյուղի ուղղությամբ: Հայկական կամավորական զորախմբերը, ենթարկվելով ռազմաճակատի հրամանատարության հրամանին, նույնպես բռնում են նահանջի ուղին[1]:

Հուլիսի 13-ին Դրոն, իր զորախմբով նահանջելով, հասնում է Ալջեւազ, ուր արդեն գտնվում էր գեներալ Նազարբեկովը: Դա նրանց առաջին հանդիպումն էր:

«... 7-րդ գնդից հետո, - գրում է Նազարբեկովը, - շատ մեծ կարգապահությամբ ու կազմակերպված եկավ հայկական 2-րդ կամավորական զորախումբը: Այստեղ ես առաջին անգամ տեսա Դրոյին, որն իր էներգիայով եւ կազմակերպվածությամբ ինձ, ինչպես նաեւ ողջ շրջապատի վրա շատ լավ տպավորություն թողեց: Զորախումբը իր արտաքին կեցվածքով հիշեցնում էր կանոնավոր բանակի կարգապահ եւ լավ կազմակերպված զորամասի:

2-րդ զորախմբից հետո ոչ այնքան կազմակերպված եկավ Անդրանիկի 1-ին զորախումբը: Մարդիկ շատ տանջված էին, եւ դա հասկանալի էր: 1-ին կամավորականի կազմի մեծ մասը Մուշի դաշտավայրից էին: Նրանք շատ ճնշված էին: Շատերի դեմքերից երեւում էր լիակատար հիասթափություն եւ անտարբերություն»[2]:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 71, թ. 70-71:
[2] Նույն տեղում:

Մանազկերտի եւ Փրխուս գյուղի ուղղություններում թուրքական զորքերի կողմից ձեռք բերված ոչ այնքան նշանակալի հաջողությունները, ռուսական հրամանատարությանը կարծես առիթ ընձեռեցին արագորեն թողնել գրաված տարածքները եւ բռնել նահանջի ուղին: Իրենց նահանջը առավելապես արդարացնելու դիտավորությամբ ռուս հրամանատարները նրբորեն տարածել էին հակառակորդի «մեծաքանակ» ուժերի ողորմածությանը հանձնվելու լուրերը:

Զորքերի նահանջի ծրագիրը մշակելու նպատակով ճակատի հրամանատար, գեներալ Թ. Նազարբեկովը իր գլխավորած զորամասի, ինչպես նաեւ հայ կամավորական զորախմբերի հրամանատարներին, հրավիրում է զինվորական խորհրդակցության եւ հրամայում թողնել գրաված տարածքները: Խորհրդակցությանը ներկա է գտնվել նաեւ Դրոն, որին խստիվ զարմացրել է ռուսական զորքերի հրամանատարության կողմիվ ընդունված անհասկանալի մարտավարությունը, որը բնավ պատճառաբանված չէր որեւէ հիմնավոր ու փաստարկված նախադրյալներով:

Պատմում է 2-րդ կամավորականի հեծելախմբի հրամանատար Յապոնը. «...երբ ժողովից վերադարձաւ, կանչեց ինձ ու ասաց, որ դրութիւնը բաւական լուրջ է, քանի որ տաճիկները գրաւել են Արճեշը ու կտրել նահանջի գիծը:

Ռուսները կարող էին անձնատուր լինել, բայց մենք անձնատուր լինելու մասին մտածել իսկ չէինք կարող: Հէնց այդտեղ էլ Դրոյի հետ որոշեցինք, որ ռուսական բանակի անձնատուր լինելու դէպքում նրանից բաժանուենք ու թշնամու շղթան ճեղքելով՝ Ալադաղով անցնենք Դիադին: Այդտեղի բոլոր ճար ու ճամբաներին լաւ ծանօթ էինք»[1]:

Դրոյի մտավախությունը իզուր էր. ռուսական զորքերի նպատակը Հայաստանը հայերից դատարկելն էր եւ ոչ թե անձնատուր լինելը: Եւ ինչպես իրավացիորեն նշում է Գաբրիել Լազյանը «Ռուսները իրենց համար բեռ կը նկատէին ազատագրուած հայ գաղթականները եւ երբեք տրամադիր չէին աչքառու զոհողութիւն մը կատարել, հայ նոր բազմութիւններ ազատելու համար»[2]:

Նահանջի հրամանը Վանում սարսափելի իրավիճակ էր ստեղծել: Վարդգես Ահարոնյանը, որն այդ օրերին գտնվում էր Վանում, պատմում է հետեւյալը.

[1] «Հայրենիք» ամսագիր, 1941, մայիս, էջ 175:
[2] Լազեան Գ., Հայաստանը եւ Հայ Դատը, էջ 182:

«Վանից քաշուելուն վճռական կերպով դէմ էր Արամը, որ իր տեսակէտը պարզեց մօտաւորապէս հետեւեալ բառերով.

«Մենք մի ամբողջ ամիս դիմադրեցինք թուրք բանակին եւ թուրք ու քուրդ զինուած խուժանին, ունենալով միայն հազիւ հազար կտոր զէնք, որից 400-ը ատրճանակներ էին, մնացածի մի մասը որսորդական հրացաններ, շատ սահմանափակ քանակութեամբ ռազմամթերք: Հիմա Վանի պաշտպանութեան համար մենք կարող ենք ունենալ մեր կամաւորական չորս գնդերը...

Վանի եւ Մոկսի ու Շատախի երիտասարդութիւնից կարելի է զինել մէկ կամ երկու հազար հոգի եւս:

...Մինչեւ ռուսների վերադարձը մենք կարող ենք պաշտպանել այս հայութիւնը, մինչ գաղթը կարող է այս ժողովրդի մէջքը կոտրել»[1]:

Արամի տեսակետը պաշտպանում էին առանց բացառութեան կամաւորական զորախմբերի բոլոր հրամանատարները եւ Ազգային Բիւրոյի ներկայացուցիչները:

«Ն. Աղբալեանը իր սովորական պատկերալից ու կտրուկ ոճով ձեւակերպեց իր ասելիքը. «Ռուսները գնո՞ւմ են՝ թող գնան, մենք էստեղ ենք, ռուսները կը գան, մենք էլի էստեղ ենք»[2]:

Այո, հայերը լի էին վճռականութեամբ մինչեւ վերջ պայքարելու, սակայն ռուսական հրամանատարութիւնը ուներ իր հաստատուն եւ ոչ մի ուժով չբեկանվող դատավճիռը:

Եթե հիմք ընդունենք ու հավատանք Վարդանի խոստովանութեանը, ապա պիտի արձանագրել, որ ռուսական կողմը վաղօրոք իրեն հայտնել էր զորքերի առաջիկա նահանջի մասին, եւ բնականաբար ռազմաճակատում տեղի ունեցող իրադարձութիւններն ու կտրուկ շրջադարձերը հայկական կողմի համար այնքան էլ անակնկալ չպետք է լինեին: Ըստ նրա խոստովանութեան, Երեւան - Վան ուղղութեամբ հարձակվող ռուսական զորքերի 4-րդ բանակային կորպուսի (հրամանատար՝ գեներալ Օգանովսկի) շտաբի պետ, ազգութեամբ լատիշ Վլադիմիր Անտոնովիչ Օզոլը, որը հայտնի էր իր հայամետ վերաբերմունքով, դեռեւս Երեւանում գտնվելու ժամանակ իրեն հայտնել է հետեւյալը. «... Մենք Վան մտնելուց այնտեղ յերկար չպետք է մնանք, ուստի դուք պատրաստվեցեք մեծ թվով մարդիկ, զենք ու ռազմամթերք ունենալ, վորպեսզի կարողանաք մեր նահանջից հետո դիմանալ Վանում...Վլադիմիր Անտոնովիչ Օզոլը(լատիշ) շատ կարգին եւ անկեղծ մարդ էր, նրա ասածները Երեւանում իրենց նահանջի մասին, ճիշտ իրականացան»[1]:

Վանի նահանջի մասին պատմող վավերագրերից պարզվում է, որ Արամն այնուամենայնիվ դիմել է գեներալ Նիկոլաեւին եւ խնդրել նրանից նահանջելու դեպքում իր տնօրինութեանը հանձնել լեռնային հրետանի, հեռագրասարքեր ու կապի միջոցներ, զենք ու զինամթերք եւ անհրաժեշտ այլ պարագաներ, ինչը նահանջելիս զորքերը չէին կարողանա իրենց հետ վերցնել: Գեներալ Նիկոլաեւից չստանալով որեւէ որոշակի պատասխան՝ Արամը նույն պահանջով դիմում է նաեւ գեներալ Յուդենիչին. այս անգամ եւս պատասխանը քար լռութիւնն էր [2]:

Անդրադառնալով հայ բնակչութեան նկատմամբ ռուս հրամանատարութեան ու մասնավորապես գեներալ Նիկոլաեւի դրսեւորած վերաբերմունքին՝ Արարատյան զորագնդի հրամանատար Վարդանը գրում է. «Կողմնակի կերպով իմանում եմ, որ Նիկոլաեւը առանց մեզ իմաց տալու, ուզում է գաղտնի կերպով նահանջի դէպի Կովկաս: Գնում եմ մօտը եւ խոսում նահանջի առիթով: Ասում է, այո՛ ուզում եմ նահանջել եւ չեմ ուզում, որ ժողովուրդը իմանա, որ նա էլ միանա եւ խանգարի մեր նահանջի ճանապարհը: Նկատի ունենալով նոցա նահանջը, որից յետոյ մեր դրութիւնը ծանրանում էր, խնդրեցի վոր գոնէ մեզ թողնի իրենց թնդանոթները իրենց զինուորներով եւ անթել հեռագիրը: Պատասխանեց, վոր վոչինչ չեմ կարող թողնել...»[3]:

Հարցն արդեն վերջնականապես վճռված էր:

Հարց է ծագում, ինչու՞ ռուսական զորքերը, որոնք մեծ զոհողութիւնների գնով հասել էին Տարոն եւ Բիթլիս, լքեցին ռազմաճակատն ու բռնեցին նահանջի ուղին:

Այս հարցում առավել ընդունված պատճառաբանութիւնն այն է, որի համաձայն ռուսական զորքերի նահանջը պայմանավորված էր ճակատում տեղի ունեցած փոփոխութիւնների վերաբերյալ 4-րդ կորպուսի հետախուզական բաժնի պետ Տիգրան Դեւոյանի ներկայացրած չափազանցված տեղեկութիւնները: Համաձայն Տիգրան Դեւոյանի ներկայացրած տեղեկութիւնների՝ Մանազկերտի շրջանում հայտնվել էին 70000 զինվորներ ունեցող թուրքական նոր զորամասեր, որոնց հարձակման պարագայում ռուսական

[1] Սիարոնեան Վ., Անդրանիկ, Բոսքրն, 1967, էջ 31-32:
[2] Նույն տեղում:

[1] ՀԱԱ, ֆ. 402, g. 2, գ. 11, գիրք 4, էջ 9:
[2] Նույն տեղում, ֆ. 57, g. 5, գ. 120, թ. 9:
[3] Նույն տեղում, ֆ. 402, g. 2, գ. 11, գիրք 4, էջ 9:

զորքերը կարող էին կտրվել թիկունքից ու հայտնվել ծանրագույն իրավիճակում:

Կարո Սասունու պնդմամբ՝ «...Տ. Դեւոեան, որ զօր. Օգանովսկու կեդրոնական սպակակոյտին կից հետախուզական բաժինը կը վարէր, իր զեկուցման մէջ Թրքական յարձակողական բանակի ուժը ներկայացուցած էր մօտ 70000 հոգի: Այդ տուեալները ցոյց կուտային, որ Բուլանուխ-Մանազկերտի ռուսական բանակը չպիտի կրնար դիմադրել այդպիսի խոշոր ոյժի մը եւ հետեւաբար հարկադրուած էր ընդհանուր նահանջ մը ընել ամբողջ ճակատի վրայ»[1]:

Կարո Սասունին, որը Ռոստոմի եւ Արամի հանձնարարությամբ մեկնել էր Մանազկերտի շրջան, այնտեղ պիտի պարզեր ռուս հրամանատարությանը Տիգրան. Դեւոյանի հաղորդած տեղեկությունների իսկությունն ու հնարավոր բոլոր միջնորները ներդնելով՝ կարողանար հասնել նրան, որ ռուսական զորքերն ու կամավորական զորախմբերը նահանջեին ոչ թե Դատվան- Բիթլիսի ուղղությամբ, այլ առաջանային դեպի Մշո դաշտ, որտեղից ավելի դյուրին էր առաջանալ Սասուն, ուր հանգրվանել էին բազմահազար տարոնահայեր:

Մանազկերտում ծանոթանալով այնտեղ տիրող կացությանը՝ Կարո Սասունին իր դժգոհությունն է հայտնում Տիգրան Դեւոյանից եւ հայտնում, որ Թուրքական բանակի զինվորների մոտավոր թիվը կարող է լինել ոչ թե 70000, այլ 30000[2]:

Հարց է ծագում. միթե՞ Մանազկերտում Թուրքական զորքերի կենտրոնացման վերաբերյալ միայն Տիգրան Դեւոյանի ներկայացրած տեղեկությունը կարող էր բավար հիմք ծառայեր, որպեսզի ռուսական բանակի հրամանատարությունը կայացներ մեծ զոհողությունների գնով նվաճած տարածքները վերստին հակառակորդի տնօրինությանը հանձնելու որոշումն ու դիմեր զանգվածային նահանջի:Իսկ ո՞ր էին Կովկասյան ռազմաճակատի հետախուզական մյուս ծառայությունների տվյալները:

Քննադատաբար արժեւորելով ռուս հրամանատարության որդեգրած մարտավարությունը՝ Գաբրիել Լազյանը իրավազիորեն նշում է. «Կը կարծենք, թէ այս մեղադրանքները չափազանցութիւն են. ռուս հրամանատարութիւնը այս կամ այն զինուորական կարեւոր շարժումը՝ նահանջ կամ յառաջխաղացում չի կատարէր միայն մէկ տեղեկութեան վրայ յենուելով»[3]:

[1] Սասունի Կ., Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, (1914-1918), էջ 169:
[2] Նույն տեղում, էջ 88:
[3] Լազեան Գ., Հայաստանը եւ Հայ Դատը,Երեւան, 1991, էջ 182:

Իրոք, միթե՞ ռուս հրամանատարությունը ռազմաճակատում տեղի ունեցող իրադարձությունների, հակառակորդի տեղաշարժերի վերաբերյալ ստույգ տեղեկություններ ստանալու այլ աղբյուրներ ու միջոցներ չուներ:

Այս հարցին պատասխան է տալիս հենց Տ. Դեւոյանը: Իր գրություններից մեկում փորձելով հերքել իրեն ներկայացրած մեղադրանքը՝ Տ. Դեւյանը գրում է. «Ցետախուզութիւնը կատարուում էր. 1. զինուորներին հետախուզութեամբ՝ գերի բռնելով, 2. յատուկ լրտեսների միջոցով, որը ուղարկում էին Թշնամու կողմը, 3. գրաուած վայրերի տեղացի ազգաբնակչութեան հարցաքննութեամբ, 4. փախած եւ գերի բռնուած գերիների հարցաքննութեամբ, 5. գերիների մօտ գտնուած փաստաթղթերի ուսումնասիրութեամբ, 6. Թշնամու շրջանում գտնուող մնայուն աշխատողների (rezident)միջոցով, 7. օտար դաշնակից տերութիւնների յետախուզական տեւալների օգտագործմամբ...»[1]:

Բացի թվարկածներից, Տ. Դեւյանի պնդում է, որ Ռուսական ամբողջ ճակատի վրայ, յուրաքանչիւր գունդ, բրիգադա, դիվիզեա եւ կորպուսի շտաբը ունեին իրենց յետախուզական գործի վարիչը»[2]:

Տ. Դեւոյանը թեպետ չի ժխտում իր հաղորդած տեղեկության իսկությունը, սակայն իր վկայակոչած փաստարկներով ցույց է տալիս, որ միայն իր հաղորդածը չէր կարող բավար հիմք հանդիսանալ ռուս հրամանատարության համար արմատական նշանակություն ունեցող վճիռներ կայացնելիս, քանզի նա տնօրինում էր հակառակորդի մասին բավարար տեղեկություններ ստանալու բազմաթիվ այլ միջոցների:

Ռուսական զորքերի նահանջի վերաբերյալ ուշագրավ բացատրություն է տալիս Սերովբե Մխիթարյանը: Նրա գնահատմամբ՝ ռուսական զորքերի նահանջը գլխավորապես պայմանավորված էր Կ. Պոլիսի եւ Բոսֆոր ու Դարդանելի նեղուցների նկատմամբ Անգլիայի եւ Ֆրանսիայի դրսեւորած վերաբերմունքով: Նրանք, ըստ Ս. Մխիթարյանի, քանի որ քաջատեղյակ էին Թուրքիայի մայրաքաղաքի ու նեղուցներների նկատմամբ Ռուսաստանի ունեցած վաղեմի ցանկությանը, ձգտում էին իրենց դաշնակից Ռուսաստանից այն գրավել ավելի շուտ եւ հաստատվել այնտեղ[3]:

Ի պատասխան Անգլիայի ու Ֆրանսիայի, Ռուսաստանի իշխանությունները «...պարտադրել էին ցարական Ռուսաստանի զի-

[1] ՀՅԴ ԿԱ, Ս. Վ., թ. 78, գ. 8, թ. 2:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս Մխիթարեան Սերովբէ, Հայկական Հարցը, Փարիզ, 1968, էջ 39:

նուորական իշխանութիւններին կովկասյան ճակատում նահանջ ու պարտութիւն ձեւացնել, որպեսզի այդ ճակատում թուրքերը յաղթանակ ու ինքնավստահ զգան իրեն եւ կարողանան բոլոր տրամադրելի ուժերը փոխադրել ու կեդրոնացնել Դարդանելի ռազմաճակատում, որպէսզի Ռուսաստանի «դաշնակիցներն» իրենից առաջ չկարողանային գրաւել նեղուցներն ու Կ. Պոլիսը»[1]:

Ս. Մխիթարյանի գնահատմամբ՝ Կ.Պոլսի ու նեղուցների նկատմամբ դաշնակից տերութիւնների՝ Անգլիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի որդեգրած հակադեմ վերաբերմունքն էր այն հիմնական պատճառը, որի հետեւանքով «...1915 թ. յուլիսի 23-ին ռուսական բանակը, առանց ենթակա ըլլալու թրքական մեծ յարձակողականի, նահանջեց Տարօնի ճակատեն, ուր մօտ 200 հազար հայեր լքուեցան թժնամիի ձեռքը եւ ահաւոր եղեռնի մը զոհեր եղան»[2]:

Եթե ընդհանրացնենք ու անաչառ գնահատենք ռուսական զորքերի նահանջը, ապա պիտի աներկբա փաստել, որ այն կործանարար նշանակութիւն ունեցաւ հայութիւնի համար:Այս առումով, կարելի է ասել, միանգամայն արժանահաւատ է Վարդան Մեհրաբյանի հետեւյալ եզրահանգումը. «Այս բոլորը ցոյց էին տալիս, որ հայերի կոտորուելը ցարական կառավարութեան ցանկութիւնն է: Իզուր չէ Լորանովը ասել, որ մենք Հայաստանը կուզէնք առանց հայերի, իսկ դժբաղտ տաճկահայ ժողովուրդը իրա փրկութեան յոյսը դրել էր քրիստոնեա ռուս կառավարութեան վրայ»[3]:

Հուլիսի կեսերին երեք ուղղութիւններով սկսվում է ռուսական զորքերի նահանջը: Նահանջի առաջին թեւը Բուլանուխ-Մանազկերտ-Ալաշկերտ-Արարատյան դաշտ ուղղութիւնն էր: Երկրորդ ուղղութիւնը ձգվում էր Վանա լճի հարավային ափով դեպի Սորբ, Ոստան, Վան եւ ապա Արճակ-Սարայի գծով դեպի Իրան: Մյուս թեւը նահանջելու էր Ախլաթ, Արճեշ, Բերկրի եւ Աբաղայի դաշտի միջով դեպի Կովկաս: Դրոյի զորախումբը Անդրանիկի 1-ին կամավորականի հետ պիտի նահանջեր երրորդ ուղղութիւնով: Ընդորում Անդրանիկի զորախումբը պիտի ընթանար գաղթական քարավանի առջեւից, իսկ Դրոյի զորախումբը, որպես հետնապահ պիտի պաշտպաներ գաղթականութիւնի թիկունքը:

Համաձայն Կ. Սասունու՝ «Այս երեք ուղղութեամբ նահանջող ժողովրդի թիւը 150,000-էն աւելի էր: Կամաւորական բոլոր գունդերու զինուորները միասին առած՝ 5000-ի կը հասնէին: Ատոնց վրայ պէտք է աւելացնել 3000-ի չափ ալ զինուած ժողովուրդ, որ կրցած էր օգտուիլ բանակներու ներկայութիւնէն ու զինուիլ հնարաւոր միջոցներով»[1]:

Հուլիսի 15-ին սկսվում է ռուսական զորքերի զանգվածային նահանջը: Դրոյի զորախումբը նահանջելիս անցնում է քանդված ու ավերակների վերածված Ախլաթով եւ մոտենում Արճեշին, ուր հարյուրավոր զինված քրդեր պաշարել էին զենքի դիմած տեղի հայ բնակչութիւնը: Արագորեն ոչնչացնելով քուրդ հրոսակներին՝ Դրոն իր զորախմբի պաշտպանութիւնի տակ է վերցնում Արճեշի հայութիւնը:

Ընդամենը 70 օրվա կարճատեւ կենսագրութիւն ունեցավ Վանի փոքրիկ հանրապետութիւնը: Արամի հմուտ ղեկավարութիւամբ կառավարվող Վասպուրականի քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքում արդեն ակնառու էին ձեռք բերած առաջին լուրջ նվաճումները:

Ռոստոմի գնահատմամբ՝ «...մեր Արամը իր ընկերներով արդեն ստեղծել է Հայաստան եւ կազմել Հայկական կառավարութիւն: Մենք այժմ ազատ Հայաստան ենք: Մենք եւս միւսների նման կառավարութիւն ունենք եւ այլեւս ստրուկ չենք: Մեր դարերի կորուստը վերջապէս գտանք եւ հայ ժողովուրդը դարերի իղձը կատարեց եւ նա այսօր ազատ է»[2]:

Իզուր էր Ռոստոմի ուգեւորութիւնը: Իրոք, Վանի Հանրապետութիւնը այն իրական վարչաքաղաքական կառույցն էր, որի վրա Հայաստանի պատմական տարածքում կարող էր կյանքի կոչվել հայկական անկախ պետականութիւնը: Սակայն Հայաստանի պատմական տարածքում հայկական պետականութիւնի հաստատումը, թեկուզ որեւէ կարգավիճակով Ռուսաստանի կայսրութիւնի կազմում, ցարիզմի ծրագրերից դուրս էր:

Այժմ արդեն ամբողջ Վասպուրականը տեղահան եղած՝ բռնել էր գաղթի ուղին:Պատմում է Ռուբեն Տեր-Մինասյանը. «Դուրս կուգանք Շատախի սահմանից եւ կը մտնենք Հայոց Ձոր: Մարդ չենք գտնի: Ձորս կողմ ամայի, բառի բովանդակ իմաստով: Բոլորը գացած են: Մաքրուած են ամէն տեղ...

Ցուլիսի 21-ին հասանք Վան: Ինչպէս է դատարկուած այդ բազմամարդ քաղաքը: Թողած ամէն ինչ՝ երկու օր առաջ էին գաղթած

---

[1] Նույն տեղում, էջ 40:
[2] Նույն տեղում:
[3] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 11, թ. 5:

---

[1] Տե՛ս, Սասունի Կ., Ճշվ. աշխ., էջ էջ 90:
[2] ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 281, թ. 1:

վանեցիները: Այդեստանի մէջ կը հանդիպինք Արամին:Հոն են նաեւ Վարդանը, Համազասպը եւ Արմէն Գարօն: Կը բարեւինք վշտալից: Խօսք չկայ ասելու, սեւ թախիծը պատած է բոլորին:

Իմանալով, որ առաջիկ վտանգը կը սպառնայ, հրաժեշտ կը տանք իրենց եւ կը շտապենք ժողովրդի մօտ, շուտ ճամբայ հանելու համար: Հրդեհն արդէն սկսած էր լափել Խաչ փողոցի շէնքերը: Կը գտնենք մեր ժողովուրդը, կը քշենք առանց հանդիստ տալու եւ կը հասնենք Բերկրի»[1]:

Պատկերը նոյնն էր նաեւ մյուս շրջաններում, ուր հայությունը դարձյալ հարկադրված էր լքել իր բնօրրանն ու բռնել գաղթի տանջալի ուղին:

Երբ ռազմաճակատում, սկսած հուլիսի 10-ից, նկատելի են դառնում ռուսական զորքերի գրաված տարածքները թողնելու եւ նահանջելու մտադրությունները, ուժեղանում է քրդական հրոսակախմբերի շարժումը Մոկս-Շատախ շրջաններում: Մոկսում, ինչպես արդեն նշվել է, կանգնած էր 2-րդ զորախմբից մեկ վաշտ, իսկ Շատախում մեկական հեծյալ եւ հետեւակ դասակներ: Հուլիսի 10-ի լույս 11-ի գիշերը քրդերը հարձակվում են Մոկսի վրա, բայց հետ են շպրտվում կամավորների կողմից: Հարձակումները շարունակվում են նաեւ հաջորդ օրերին եւ հուլիսի 14-ին Մոկսում իրավիճակը դառնում է օրհասական: Ելքը մեկն էր, գաղթ[2]:

Նժդեհի, Մեսրոպի զինավաշտերի եւ իրենց մարտական ուժերի պաշտպանությամբ գաղթի ճամփան է բռնում նաեւ Մոկսի ու Շատախի հայությունը, եւ հետեւելով Վանի գաղթականության քարավաններին՝ շարժվում դեպի Բերկրի-Կալայի ուղղությամբ:

Ռուսական զորքերի նահանջն արդեն իրողություն էր, եւ տվյալ պարագայում կարեւորագույն խնդիրը գաղթականության անվտանգության ապահովումն էր:

Եթե նախորդ կռիվների ընթացքում հայ կամավորները մշտապես գործում էին հարձակման սուր ծայրում, ապա նահանջի դեպքում վերջնամասում ապահովում էին մյուս զորամասերի եւ գաղթականության նահանջը:

«Նահանջի ժամանակ, - նշվում է Վանի նահանգին վերաբերվող վավերագրերից մեկում, - 2-րդ զորախումբը մշտապես եղել է հերթապահ, ընդ որում նրա հրամանատար Դրոն, որի պաշտպանությանը հանձնված էր նաեւ հրետանին, նշանակվում է ձախ զորասյունի

[1] «Հայրենիք» ամսագիր, 1948, թիւ 8, էջ 144:
[2] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 121, ց. 1, գ. 8, թ. 10:

պետ եւ պետք է պաշտպաներ կիրճը, որտեղով պետք է անցնեին զորքն ու գաղթականությունը[1]:

Մի հետաքրքիր մանրամասն եւս. նույն վավերագրերից պարզվում է. «Միայն այն ժամանակ, երբ բնակչությունն ու նրանց պաշտպանող 1-ին եւ 2-րդ զորախմբերն արդեն հասել էին Բերկրի, գեներալ Տրուխինն առաջարկում է կամավորներին մնալ, եթե կցանկանային»[2]:

Իրոք, ճակատագրի դառը հեգնանք. գեներալ Տրուխինի առաջարկությունը չափազանց ուշացած էր, թեպետ, ինչպես արդեն նշվել է, գեներալը այդ նույնը կամավորական խմբերին առաջարկել էր դեռեւս նահանջի նախօրեին: Կարեւոր է ընդգծել, որ այդ առաջարկությունը պայմանավորված էր հայ բնակչության նկատմամբ գեներալի դրսեւորած բարի կամեցողությամբ, որը բնավ համահունչ չէր ռուս հրամանատարության դիրքորոշմանը:

Քանի որ գաղթականության պաշտպանությունը դեպքերի թելադրանքով ստանձնելու էին կամավորական զորախմբերը, ուստի նրանք մշտապես պիտի կազմ ու պատրաստ լինեին դիմագրավելու հակառակորդի հարձակումները: Դրոյին սպասում էր մի նոր եւ չափազանց պատասխանատու փորձություն:Նրա զորախումբը, համաձայն գեներալ Նազարբեկովի հանձնարարականի, Անդրանիկի 1-ին կամավորականի համագործակցությամբ պիտի պաշտպաներ ու ապահովեր մի քանի կիլոմետր երկարությամբ ձգվող գաղթական քարավանների անվտանգությունը:

Հայ գաղթականների հսկայական բազմությունը հուլիսի 23-ին հասնում է Բերկրի: Նույն օրը նահանջողներին անընդհատ հետապնդող թուրքական զորքերն ու քրդական հրոսակախմբերը նույնպես հասնում են Բերկրի եւ գազանային մոլուցքով նետվում գաղթական բազմության վրա: Ռուսական զորքերն ու Անդրանիկի զորախումբը բավականին առաջ էին անցել: Համազասպի եւ Քեռու զորախմբերը «Արարատյան» զորագնդի հրամանատարության եւ անձամբ հրամանատարի՝ Վարդանի անփույթ ղեկավարման հետեւանքով կտրվելով գաղթականության հիմնական զանգվածից, անցել էին Պարսկաստան:

Ճակատագրական պահ էր. Բերկրին կարող էր վերածվել բազմահազարանոց գաղթականության գերեզմանոցի, եթե ամենավճռորոշ պահին թշնամու հետ օրհասական գոտեմարտի բռնված Վասպուրա-

[1] ՀԱԱ, Ֆ. 57, ց. 5, գ. 102, թ. 47:
[2] Նույն տեղում:

կանի, Ռշտունիքի(Գավաշ), Մոկսի եւ Շատախի մարտիկներին օգնության չհասներ Դրոյի զորախումբը:

Բերկրի-Կալայի պաշտպանության կռիվները Դրոյի մարտական կենսագրության ամենանշանակալի էջերից են:

Հուլիսի 23-ին ամենաճակատագրական վայրկյանին հասնելով մարտադաշտ, Դրոն, որի զորախմբին միացել էին նաեւ Նժդեհի եւ Մեսրոպի վաշտերը, գաղթականության նահանջը ապահովելու նպատակով՝ հրամայում է Մարտիրոսի, Մեծ Ղազարի, Ցապոնի զորավաշտերին՝ անհապաղ գրավել Բերկրիի կիրճը եւ տեղանքն իշխող բարձունքները: Հրամանը ճիշտ ժամանակին էր: Թուրքական զորքերը, որոնց գործուն կերպով աջակցում էին քուրդ հրոսակախմբերը, աշխատում էին գրավել դեպի Աբաղայի դաշտը կիրճերով անցնող միակ ուղին եւ շրջափակելով մի քանի տասնյակ հազարի հասնող գաղթականությանը՝ Բերկրին վերածել արյան ծովի:

Երկու օր շարունակ Վասպուրականի, Ռշտունիքի, Մոկսի եւ Շատախի ինքնապաշտպանական մարտախմբերի համագործակցությամբ անպատմելի խիզախումներով տապալելով թուրքական կանոնավոր զորագնդերի եւ քրդական զինյալ խմբերի իրար հաջորդող գրոհները, Դրոյի զորախումբը հնարավորություն է ընձեռում գաղթականության մեծ մասին անցնելու Բերկրիի կիրճով եւ փրկվելու անխուսափելի կործանումից:

«Այդ նահանջի ընթացքում, - նշվում է ռազմաճակատից հաղորդվող ամփոփագրում, - իր մարտական պաշտպանությամբ խումբը (Դրոյի 2-րդ կամավորական գունդը- Հ.Գ.) կարողացավ ապահովել Ալաշկերտի սարահարթում խմբված հսկայական քանակի հայ փախստականների տեղափոխությունը»[1]:

Այդ օրերին զորքերի նահանջի ու գաղթականությանը պաշտպանելու գործում ռուս հրամանատարության գործողություններում դրսեւորվել են այնպիսի անփութություն եւ անկազմակերպվածություն, որ կարծես այդ ամենը իրագործվել է վաղօրոք մշակված սցենարով ու կանխամտածված, որպեսզի թուրքերին հնարավորություն ընձեռվի ոչնչացնելու հերոսական ինքնապաշտպանությամբ փրկված Վասպուրականի, Շատախի, Ռշտունիքի ու Մոկսի տասնյակ հազարավոր հայ բնակչությանը: Իսկ դա կատարվել է այնպիսի պայմաններում, երբ ռազմաճակատի այդ հատվածում գտնվող ռուսական զորքերը՝ գեներալ Օգանովսկու 4-րդ կորպուսի (գեներալներ Նազարբեկովի, Նիկոլաեւի, Տրուխինի եւ Շարպանտեւի գլխավորած դիվիզիաները եւ այլ զորամասեր-Հ.Գ.) ուժերը ոչ միայն ի զորու էին պատշաճ մակարդակով ապահովելու գաղթականության նահանջը, այլ նաեւ ընդհանրապես չնահանջել եւ անգամ հարձակողական գործողություններ ձեռնարկել:

Վկայակոչենք այդ դեպքերի վերաբերյալ գեներալ Նազարբեկովի, որպես անմիջական մասնակցի, գնահատականը. «Շուտով ես իմացա, որ գեներալ Նիկոլաեւը իր զորամասով, որ տեղաբաշխված էր Վանում եւ նրա մերձակայքում, արագորեն լքել է քաղաքը եւ շարժվել Բերկրի-Կալայի ուղղությամբ եւ դրանով խուճապ առաջացրել վանեցիների եւ շրջակա բնակչության շրջանում:

... Այդ նահանջը, որ ոչ մի հիմք չուներ, պետք է համարել հանցագործություն, քանի որ գեներալ Նիկոլաեւի զորամասին ոչ մի վտանգ չէր սպառնում...

... Նիկոլաեւը ունենալով քաղաքը պաշտպանելու համար բավականաչափ ուժեր՝ կարող էր թողնել Վանը եւ նահանջել միայն ծայրահեղ դեպքում ու ավելի կազմակերպված վիճակով: Ավելին, նահանջի ճամփան ընտրելով վատթարագույնը՝ Բերկրի-Կալայի ուղղությունը, որն անցնում է կիրճերով ու ձորերով, գեներալ Նիկոլաեւը շատ վատ է կազմակերպել գաղթականությանը պաշտպանելու գործը, որի պատճառով հայկական 3-րդ եւ 4-րդ կամավորական խմբերը թյուրիմացաբար ու անկազմակերպվածության պատճառով կտրվում են գաղթականությունից եւ հայտնվում Պարսկաստանի տարածքում...»[1]:

Գեներալ Նազարբեկովը, նույնպես ենթարկվելով վերին հրամանատարության հրամանին, իր զորամասով նահանջում է դարձյալ Բերկրի-Կալայի ուղղությամբ, ուր հանդիպում է գաղթի տաժանակիր ուղին բռնած տասնյակ հազարավոր հայերի:

«Մոտենալով Բերկրի-Կալայի կիրճին, - վերհիշում է գեներալ Նազարբեկովը, - ես տեսա գաղթականներին, որոնք զանգվածաբար հեռանում էին Վանից եւ նրա մերձակա գյուղերից: Մարդու հոգին ցնցող նույն պատկերն էր, ինչ տեսել էի 1914 թ. դեկտեմբեր ամսին Սալմաստից եւ Խոյից նահանջելու ժամանակ:

Նայելով այդ թշվառ փախստականներին՝ ես չէի կարողանում հասկանալ, թե ինչո՞ւ է այդ կատարվում, քանի որ Վանին ոչ մի վտանգ չէր սպառնում եւ բացի դրանից Վանի մատույցները հարավային ուղղությամբ պաշտպանված էին գեներալ Տրուխինի զորամա-

[1] ՀՅԴ ԿԱ, թ0 503, գ. 16, էջ 3:

[1] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 21, թ. 42:

սերի ուժերով (3-րդ եւ 4-րդ հայկական կամավորական խմբերը, սահմանապահների մեկ գումարտակ, Սիբիրյան կազակների մի գունդ եւ մեկ մարտկոց), իսկ լճի հյուսիսային մասում իմ զորամասն էր: Այս ամենից բացի Վանում կային եւս բավականաչափ ուրիշ ուժեր»[1]:

Հասնելով Բերկրի-Կալա, գեներալ Նազարբեկովը, համաձայն իր հուշերի, ձեռնարկում է հետեւյալ միջոցառումները. «... 20-ին զորամասը հասավ Բերկրի-Կալա: Հասնելով Բերկրի-Կալա ես հանձնարարեցի Արնիսյան զորախմբին նահանջել նույնպես Բերկրի-Կալա, իսկ Ներչինյան կողակական գնդին եւ թեթեւ մարտկոցին մեկնել Վան՝ միանալու գեներալ Տրուխինի զորամասին: Հետագայում գեներալ Տրուխինը իր զորամասով հետ քաշվեց Պարսկաստան:

Բերկրի-Կալայում ես հրաման ստացա առանց կանգ առնելու շարժվել մինչեւ մեր սահմանը: Զուգենալով փախստականներին թողնել քրդերին հոշոտելու (այդ շրջանը բնակեցված էր բացառապես քրդերով), ես փախստականների պաշտպանությունը հանձնարարեցի Անդրանիկին եւ Դրոյին:

21-ին ես առանց հայկական զորախմբերի շարունակեցի իմ նահանջը... Դրոն ստիպված էր իր զորախմբով, որին կամավոր միացել էր նաեւ ռոտմիստր Կորոլկովի սահմանապահների ջոկատը, պաշտպանել փախստականների նահանջը»[2]:

Վասպուրականի բնակչության գաղթի մասին Մարտիրոսը պատմում է հետեւյալը. «... Զօր. Նազարբէկեանն իր 8-րդ գնդով, Արճեշից շարժուեց, որպէսզի Բաթնոցով անցնի Ղարաքիլիսա, միանալու իր 5-րդ, 6-րդ եւ 7-րդ գնդերին, իսկ Դրոյի գումարտակը ճանապարհուեց Բերկրի-Կալա:

Երբ Բերկրի-Կալա հասանք, Անդրանիկի վրանը խփուած էր Բերկրի-Կալայի մօտիկ մի բլուրի վրայ: Մեր տեղ հասնելուն պէս, Անդրանիկը շարժուեց դէպի Ղըզլ-Դիզա, այնտեղից էլ դէպի Իգդիր:Բերկրի-Կալայում մնաց մեր գումարտակը միայն:

Վանի ժողովուրդը գաղթում էր Զիլանի ձորով: Գաղթականութեանը կողոպտելու նպատակով, քրդերն եկել, բռնել էին ձորը:

Խոսրովի հարիւրակը ամբողջ ցերեկն զբաղուած էր վանեցիներին անվտանգ անցկացնելու գործով: Սակայն մէկ հարիւրեակ չէր կարող ապահով պահել եօթ կիլոմետր երկայնք ունեցող ձորը, երբ մի կողմից էլ անընդհատ աճում էր ախորժակ սրած քրդերի թիւը:

Արեւը մայր մտնելուն պէս, երեւացին Մոկսի, Շատախի, Սպակերտի եւ Կաւաչի գաղթող հայութեան կարաւանները:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, թ. 43:

...Տաճիկները թնդանօթի կրակ բացեցին Վանից երկարող ճամփին գտնուող գաղթականութեան վրայ...

Կէս գիշեր էր, երբ հրահանգ ստացայ, ամբողջ վաշտով քաշուել Բերկրի-Կալայի կամուրջը, նահանջելու համար:

Մենք ի վիճակի էինք շաբաթներով պաշտպանելու թշնամու դէմ, սակայն Վանի գաղթող ժողովրդին ապահով անցկացնելու կարեւոր խնդիրը կար:

...Գաղթականութեանը հասցրինք Մոուխ-սու եւ Բերկրի-Կալա վերադարձանք կեսօրուայ մօտ»[1]:

Կ. Սասունին, որն ականատես է եղել գաղթի տեսարաններին, նույնպես գտնում է, որ նահանջելու ընթացքում հայ բնակչության անվտանգության ապահովումն ու պաշտպանությունը ռուսական բանակի եւ կամավորական զորախմբերի հրամանատարության կողմից կազմակերպվել էին չափազանց անփույթ եւ ոչ պատշաճ մակարդակով:

«Նահանջը, - գրում է Կ. Սասունին, - վանեցիներու համար եղաւ դժնդակ: Գիւղացիները գոնէ փոխադրական միջոցներ ունէին, կամ վարժ էին չարքաշութեան: Իսկ Վան քաղաքի ժողովուրդն ուղղակի արգահատելի տեսարան մը կը պարզէր Իգդիրէն մինչեւ Բայազիտ Աղա...Բայազիտ Աղայէն կարելի եղաւ ստուգել, որ Քեռին եւ Համազասպ հասած են մինչեւ Բերկրի, կռուի բռնուած են, ու տեսնելով որ ճանապարհը կտրուած է, փոխած են իրենց նահանջի գիծը: Դրոյի ձիաւորները շաբաթ մը կրցան պահել Բայազիտ Աղան, ու ապահովեցին նահանջող ժողովրդի թիկունքը...»[2]

Հայրենի պատմաբաններից Մ.Կարապետյանը իր հեղինակած «Հայ կամավորական խմբերը եւ ազգային գումարտակները Կովկասյան ռազմաճակատում» գրքում մի շարք վավերագրերի օգտագործմամբ ներկայացնելով ու արժանավույնս գնահատելով 2-րդ կամավորական զորախմբի մարտական գործողությունները՝ նշում է, որ 2-րդ կամավորականը 1-ին, 3-րդ եւ 4-րդ զորախմբերի համագործակցությամբ Սորբի ու Դատվանի շրջաններում մի շարք կատաղի կռիվներ մղելուց հետո. «...շտապ վերադարձավ Բերկրի-Կալա, այստեղ մի քանի օր կարողացավ դիմադրել թշնամու գրոհները, որը հարձակումներ էր գործում Արճեշի կողմից: Այդ ժամանակ 2-րդ կամավորական խումբն ապահովեց նաև Բերկրիի ճանապարհով Արևելյան Հայաստան անցնող 200.000 հայ գաղթականության անվտան-

[1] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, նշվ. աշխ., էջ 285-286:
[2] Սասունի Կ., Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 94:

գությունը: Բերկրիից նահանջելով, մեկ օր անց Դրոն՝ հեծյալ մի խմբով կրկին վերադարձավ Բերկրիի կամուրջը և այնտեղից Արևելյան Հայաստան հասցրեց մեծ քանակությամբ հայ որբեր»[1]:

Դժբախտաբար, Բերկրի-Կալայի մոտակայքում թուրքերի եւ քրդերի հարձակումներին զոհ են գնում մեծ քանակությամբ գաղթականներ: Եթե մինչեւ Բերկրի կամավորական զորախմբերի փոխհամագործակցությունը խելացիորեն կազմակերպվեր, ապա հնարավոր էր ապահովել ողջ գաղթականության անկորուստ անցումը Երեւանի նահանգ:

Իր հուշերում դարձյալ հպանցիկ անդրադառնալով գաղթի նկարագրությանը, Արարատյան զորագնդի հրամանատար Վարդանը գրում է. «... չհանդիպելով վոչ մի թուրքի հասանք Բերկրի Կալա: Այստեղ էին Դրոն յուր դրուժինայով, Անդրանիկը մի քանի զինվորներով եւ ինչ-որ գեներալ Նադեժդին առանց զորքի: Բերկրիի շրջանում կային վոչ մեծ թվով թուրքական զորքեր, որոնց հետ կռվի բռնվեցինք: Անզեն ժողովուրդից մի քանի զոհեր տալով, անցանք այտ շրջանը: Բերկրի հասնելով, այդտեղ կանգ առանք, վորովհետեւ բավականին ժողովուրդ կար յետ մնացած եւ յատուկ ձիավորներ յետ ուղարկեցի, վոր ժողովրդյան շտապեցնի մեզ հասնելու: Բերկրիի մոտ է գտնվում Բանդի-Մահու գետը, վորի մոտ եւ կռիվ է տեղի ունեցել եւ զոհերը այստեղ են տրվել...»[2]:

Վասպուրականից գաղթողների երկրորդ՝ ավելի փոքրաքանակ քարավանը ճանապարհը Ալադաղի քրդերի կողմից փակելու պատճառով հարկադրված ուղեւորվում է Ատրպատական, իսկ երրորդ խումբը, որի հետ եղել է Կ. Սասունին, Բուլանուխ-Մանազկերտ-Ալաշկերտ երթուղով՝ Իգդիր:

Կարո Սասունին գրում է, որ իրենք երբ հասնում են Իգդիր, խորհրդակցում են եւ երեք ընկերներով անմիջապես մեկնում են Կավրե-Շամե, ու այնտեղ հանդիպում Դրոյին: Այնտեղից նրանք ուղեւորվում են Բայազիտ-Աղա, ուր այդ պահին գտնվում էին Դրոյի հեծյալները:

«Բայազիտ Աղայէն կարելի եղաւ ստուգել,-գրում է Կ. Սասունին,- որ Քեռին եւ Համազասպ հասած են մինչեւ Բերկրի, կռուի բռնուած են, ու տեսնելով որ ճանապարհը կտրուած է, փոխած են իրենց նահանջի գիծը:

[1] Կարապետյան Մ., «Հայ կամավորական խմբերը եւ ազգային գումարտակները Կովկասյան ռազմաճակատում», Երեւան, 1999, էջ 71-72:
[2] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 11, գիրք 4, էջ 103:

Դրոյի ձիաւորները շաբաթ մը կրցան պահել Բայազիտ Աղան, ու ապահովեցին նահանջող ժողովրդի թիկունքը...»[1]:

Կ. Սասունու գնահատմամբ՝ «Ձիաւորներու այդ խումբը փրկարար աշխատանք կատարեց: Ամէն մի զինուոր, մէկ կամ երկու մանուկ իր գրկին մէջ, հարիւրաւոր այնպիսի հոգիներ հասցուցին կայաններ ու կրկին դարձան հաւաքելու, եթե առաջին անգամ չէին կրցած բոլորը փոխադրել»[2]:

Ճանապարհին նրանք հանդիպում են Իգդիր գնացող Անդրանիկին, Արամին ու Վարդանին, ապա նաեւ զինվորների, ոստիկանների ու որբերի ու երեխաների:

Վան-Վասպուրականի բնակչության գաղթի մանրամասների ուսումնասիրությունը պարզորոշ ցույց է տալիս, որ այն ռուսական հրամանատարության կողմից, կարծես ինչ-որ հատուկ դիտավորությամբ, միտումնավոր կերպով կազմակերվել է չափազանց անփույթ ու անկազմակերպ:Իր հերթին, Արարատյան զորախմբի հրամանատարությունը գաղթականության անվտանգությունն ապահովելու գործում նույնպես չի գնվել պատշաճ բարձրության վրա եւ զուտ մարտավարական առումով թույլ է տվել աններելի սխալներ:

Իհարկե, այս հարցում իր մեղքի բաժինն ուներ Արարատյան գնդի հրամանարար Վարդանն ու նրա գլխավորած սպայակույտը(շտաբ):

Մարտիրոսի վկայությամբ Բերկրիում ավելի քան երկու տասնյակ հազար գաղթականների անիմաստ կորստի ցավից հավասարակշռությունը կորցրած Դրոն խստորեն հանդիմանում ու անպատվում է «Արարատյան» զորագնդի հրամանատար Վարդանին, որն այդ օրերին, չգտնվելով հրամանատարական պատշաճ բարձունքում, կորցրել էր հայ կամավորական զորախմբերի գործողությունները փոխհամաձայնեցնելու դեկն ու պարտականությունը[3]:

Նույն իրողությունն իր հուշերում հավաստում է նաեւ Ցապոնը. «Այստեղ Դրօն հանդիպում ունեցաւ Վարդանի հետ եւ մեղադրեց նրան, որ Քեռու եւ Համազասպի խումբերը թողել էր եւ ինքը գնացել Վան, մինչդեռ իբրեւ հրամանատար, պարտաւոր էր իր երկու խումբերու հետ լինելու:

Քեռու եւ Համազասպի խումբերը զօրաւար Տրուխինի զօրամասի հետ նահանջեցին պարսկական գծով»[4]:

[1] Սասունի Կ., Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 94:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1937, հունվար, էջ 77:
[4] Նույն տեղում, 1941, մայիս, էջ 175:

Արցախի Ազգային Խորհրդի նախկին նախագահ Եղիշե Իշխանյանի վկայությամբ, տարիներ անց խմբապետ Համազասպը իրեն պատմել էր Բերկրիի մոտ տեղի ունեցած Դրոյի եւ Վարդանի ընդհարման մասին, «...թէ Դրօն վիրաւորել էր Վարդանին ծանր խօսքերով, ինչպէս կասեն՝ վարանում էի հաւատալ Համազասպին, որ լաւ չէր տրամադրուած դէպի Դրօն, սակայն երբ այդ մասին պատմեց Դրօին նուիրուած մարտիկներից Բաշգառնեցի Մարտիրոս Աբրահամեանը, ամենայն մանրամասնութեամբ, որ Դրօն կառապանի հայհոյանքից աւելի խիստ հայհոյանք է տուել Վարդանին, շատ ծանր տպաւորութիւն էր թողել վրաս: Եւ, ըստ Մարտիրոսի, քիչ էր մնացել, որ երկու կողմի զինուորները բախուէին»[1]:

Փաստն այն է, որ ռուսական զորքերի եւ կամավորական զորախմբերի անփույթ եւ անկազմակերպ գործողությունների հետեւանքով թուրքերի ու քրդերի զոհն են դառնում ավելի քան քսան հազար վասպուրականցիներ:Իսկ Սասունի լեռներում խմբված ու ինքնապաշտպանության դիմած տասնյակ հազարվոր հայեր անափ հույսով եւ հավատով դեռեւս սպասում էին իրենց ազատարարների՝ հայ կամավորական զորախմբերի գալստյանը:

[1] Իշխանեան Ե., Լեռնային Արցախ 1917-1920, Երեւան, 1999, էջ 682:

2.4. ԱԼԱԴԱՂԻ ՊԱՏԺԻՋ ԶՈՐԱԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ: ԵՐՐՈՐԴ ԱՐՇԱՎԱՆԴԸ: ԴԵՊԻ ՄԱՆԱԶԿԵՐՏ, ԽՆՈՒՍ ԵՎ ՄՈՒՇ

Հուլիսի վերջին Դրոն գաղթականության հետ միասին հասնում է Իգդիր: Արդեն պատմության գիրկն անցած բազում ճակատամարտերից ու դժվարին ապրումներից հետո նա բնավ տրամադրություն չի ունեցել գոնե փոքր-ինչ շունչ առնելու հայրենի միջավայրում: Դրոյի գլխավոր մտահոգությունը թշնամու ճիրաններում դեռեւս մաքառող Տարոնն ու Սասունն էին:

Իգդիրում Դրոն կրկին անգամ կտրուկ կերպով բարձրացնում է կամավորների զորախմբերով Տարոն եւ Սասուն արշավելու հարցը:

Սասունի լեռներում խմբված բազմահազար հայությունը մեծ հույսով ու հավատով եւ անհամբերությամբ դեռեւս սպասում էր իր ազատարարներին: Իգդիրում Հայոց Ազգային Բյուրոյի ներկայացուցիչների ու կամավորական զորախմբերի հրամանատարների մասնակցությամբ տեղի է ունենում խորհրդակցություն, ուր մասնակիցները քննարկում են ռազմաճակատում տիրող իրավիճակն ու Տարոնին օգնության հասնելու հարցը:

Խորհրդակցության մասնակից Ս. Վրացյանի վկայությամբ՝ «Դրոն նորից պնդում էր իր առաջարկի վրայ՝ դնելով իր թեկնածութիւնը, բայց այս անգամ Անդրանիկի առարկութիւնները աւելի հիմնաւոր էին եւ ցոյց տուած դժուարութիւնները՝ աւելի ակնյայտ: Անդրանիկը վճռական կերպով մերժեց մասնակցել նման «խելագար» ծրագրի ու հեռացաւ Իգդիրից»[1]:

Իրոք, իրավիճակը ռազմաճակատում դեպի Սասուն արշավելու համար այլեւս նախկինը չէր: Այն ժամանակ կամավորական զորախմբերի համար անհամեմատ ավելի հեշտ էր Տարոն աշխարհի Ախլաթ գավառից արշավել Մուշ եւ Սասուն, քան Իգդիրից, որն, ի տարբերություն Ախլաթի, զգալիորեն հեռու էր գտնվում Մուշից ու առավել եւս՝ Սասունից:

Ճիշտ է, Հայոց Ազգային Բյուրոյի ներկայացուցիչների ու կամավորական զորախմբերի հրամանատարների մասնակցությամբ Իգդիրում կայացած խորհրդակցությունը Սասունի լեռներում ապաստանած տարոնահայությանը օգնության հասնելու վերաբերյալ որոշակի դրական որոշում չկայացրեց, բայց այդ հարցում նրա վճռակա-

[1] Վրացեան Ս., Մրրկածին Դրո, էջ 89:

նությունն ու տրամադրվածությունն անսասան էին: Եվ միայն շաբաթներ անց նրա համառ պահանջներից հետո բարձրաստիճան հրամանատարությունը վերջապես բարեհաճում է համաձայնվել, որ Դրոն հայ կամավորական զինախմբերից կազմած զորամասով արշավի Տարոն եւ Սասուն:

Կ. Սասունու հավաստմամբ, որն այդ ժամանակ գտնվում էր ռազմաճակատում եւ քաջատեղյակ էր այնտեղ տեղի ունեցող իրադարձություններին, Դրոն ռուսական բանակի հրամանատարությանն է ներկայացնում Տարոն եւ Սասուն արշավելու համարձակ ու ուշագրավ մի ծրագիր, որը հավանության է արժանանում գեներալ Օգանովսկու կողմից: Համաձայն այդ ծրագրի, նա 200-300 մարտիկներից բաղկացած հեծելախմբով Մանազկերտից չեչտակի հարվածով պիտի ներխուժեր Մշո դաշտ եւ իրեն միացնելով Քանի (Սասուն) մարտական ուժերը, ճեղքեր թուրքական բանակի արգելապատնեշն ու այնտեղ գտնվող հայությանը դուրս բերեր պաշարման օղակից:

«Ես,- գրում է Կ. Սասունին, - ջերմ կողմնակից էի այդ ձեռնարկին, եւ քանի մը ընկերներով եւ Մշեցի ու Սասունցի ձիաւորներով միացանք Դրոյի խումբին:

Դրոյի ձիաւոր զորամասը Ալաշկերտ հասած էր եւ քանի մը օրէ պիտի մեկնէր Մանազկերտ»[1]:

Դրոյի ծրագիրը թեպետ շատ հետաքրքիր էր եւ համարձակ, բայց այդ օրերի համար անիրականանալի: Մանազկերտից մինչեւ Քան(Սասունի լեռնաշղթա) ձգվող 120 կմ երկարություն ունեցող տարածքում ամուր կերպով նստած էին թուրքական կանոնավոր բանակի բազմաթիվ զորամասեր, որոնց շարքերը 200-300 մարտիկներից բաղկացած հեծելախմբով ճեղքելն ու հաջողությամբ Սասուն հասնելը գրեթե անիրագործելի էր: Բացի դրանից, ըստ Կ. Սասունու, կար նաեւ «Երկրորդ պարագան՝ Ալատաղի եւ Զիլանի քրդերու թիկունքային գործունեությունն էր: Անոնք քաջալերուելով Բերկրիի կոտորածէն եւ կողոպուտէն, սկսած էին աւելի խիզախ շարժումներ ընել ոչ միայն դէպի Բերկրի եւ Աբաղայ, այլ նաեւ դէպի Ալաշկերտի դաշտը եւ դեպի Մանազկերտ տանող ճանապարհները»[2]:

Քրդական հրոսակախմբերի գործողությունների հետեւանքով ռազմաճակատում ստեղծված իրավիճակի թելադրանքով փոխվում

[1] Սասունի Կ., Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914-1918), էջ 104:
[2] Նույն տեղում:

է Դրոյի մտահղացած ծրագիրը: Նախ, անհրաժեշտ էր վնասազերծել քրդերի հարձակումները, ապահովել թիկունքի անվտանգությունը, ապա նոր միայն ձեռնամուխ լինել Տարոն եւ Սասուն արշավելու ծրագրի կենսագործմանը:

Ռուսական 4-րդ կորպուսի հրամանատար գեներալ Օգանովսկին Դրոյին հանձնարարում է մեկ այլ պատասխանատու առաջադրանք:

«Զօր. Օգանովսքին,- նշում է Կ. Սասունին,- համաձայնեցաւ արշաւանք մը կատարել Ալատաղի վրայ, եւ տրամադրեց 250 կօզաքներ գնդ. Կարելքովի ղեկաւարութեամբ: Դրօն իր ձիաւոր զօրամասով ստանձնեց արշաւանքի ղեկաւարութիւնը: Այսպիսով, Մանազկերտ մեկնելու խնդիրը քանի մը շաբաթով յետաձգուեցաւ, ու մենք մեկնեցինք դէպի Ալատաղ»[1]:

Երկրորդ զորախմբի մարտական գործունեության լուսաբանմանը նվիրված փաստաթղթերից մեկում այդ առնչությամբ նշվում է. «...այդ միջոցին ռուսական չորրորդ զօրաբանակէն հրաման ստացաւ անցնիլ անմիջապէս Դիատին, ուր կազմուեցաւ պատժախումբ մը երկու հարիւրեակ ռուսաց հեծելազօրքերէ եւ երկու հարիւրեակ Բ. գունդի ձիաւորներէ բաղկացած:

Այդ պատժախումբին նպատակն էր մաքրել Դիատինէն դէպի հարաւ մինչեւ Արճէշ Ալատաղ կոչուած լեռնաշղթային քիւրտերը եւ Դիատինէ դէպի հարաւ արեւելք մինչեւ Թուխաքի քիւրտերը...»[2]:

Քանի որ Ալադաղի շրջանի քրդական զինյալ հեծելախմբերն արագ տեղաշարժերով բազմիցս հարձակումներ էին գործում ռուսական թիկունքային զորամասերի, գումակների եւ հաղորդակցության ուղիների վրա, այդ պատճառով Ալադաղի տարածքը քրդական հրոսակախմբերից մաքրելը շատ կարեւոր էր նաեւ ռուսական հրամանատարության համար: Ահա այդ պատճառով կարեւորելով Դրոյի գլխավորությամբ ձեռնարկվող արշավանքի նշանակությունը՝ ռուսական 4-րդ կորպուսի հրամանատարությունը նրա տնօրինությանն է հանձնում կազակական երկու հեծյալ հարյուրակ:

Անդրադառնալով Դրոյին տրված այս նույն հանձնարարության մեկնաբանմանը, որն ընդունված է անվանել «Ալադաղի արշավանք», Բաշգառնեցի Մարտիրոսը գրում է. «Ցիշեալ գաղթի ժամանակ, Ալադաղի քրդութիւնը շատ էր անհանգստացրել գաղթականութեանը, անընդհատ յարձակում գործելով ճանապարհի վրայ:

[1] Նույն տեղում:
[2] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 102, թ. 53:

Այդ պարագան գրաւած լինելով բարձր սպայակոյտի ուշադրութիւնը, Դրօյին հրահանգուեց հետեւակը թողնել հանգստանալու, վերակազմել, մարզել եւ երեք հեծեալ հարիւրեակներ կազմել՝ Ալադաղի քրդութիւնը պատժելու համար:

Դրօն արագ կերպով կազմակերպելով հարիւրեակները, մեկնեց Ալադաղ»[1]:

Կամավորական մյուս զորախմբերը մի փոքր դադար առնելու նպատակով տեղափոխվում են Թիկունք: Այդ ընթացքում նրանք պետք է համալրեին իրենց մարտաշարքերը, վերախմբավորեին ուժերը, հանգստանային, կազդուրվեին եւ պատրաստվեին նոր գոտեմարտերի:

Սեպտեմբերի 6-ին 2-րդ կամավորականը հասնում է Դիադին եւ միանալով ռոտմիստր Կորոլկովի (ազգությամբ ռուս Կորոլկովը, հետագայում գնդապետ, ռուսական բանակի հեռանալուց հետո մնում է հայկական զորքերի կազմում եւ կռիվների մեծ մասում մարտնչում է Դրոյի ընկերակցությամբ - Հ.Գ.) գլխավորած երկու հեծյալ հարյուրյակներին, պատրաստվում է հաջորդ օրն իսկ դիմելու վճռական գործողությունների: Դրոյի մտահղացմամբ պատժիչ զորախմբի գործողությունների հանկարծակիությունն ու անսպասելիությունը հուսալիորեն ապահովելու եւ թշնամուն անակնկալի բերելու նպատակով՝ զորախումբը բաժանվում է երկու զորասյուների, որոնք պետք է գործեին խիստ փոխհամաձայնեցված եւ հնարավորին սահմաններում գաղտնիորեն եւ անաղմուկ: Զորասյուներից յուրաքանչյուրին հատկացվում է հայ կամավորների եւ ռուս զինվորների մեկական հեծյալ հարյուրյակ: Զորասյուները պետք է աննկատ եւ զգուշորեն անցնեին Զիլանձորի արեւմտյան բարձրությունների վրա իշխող Ալադաղի ամենաբարձր գագաթը՝ Կոճպաշը եւ արեւելքի ու արեւմուտքի ուղղությամբ հարձակվեին քրդերի վրա: Նախապատրաստական աշխատանքներն ավարտելով գիշերը, զորասյուները լույսը բացվելուն պես անաղմուկ սկսում են առաջխաղացումը: Միաժամանակ քրդերի նահանջի ճանապարհները փակելու նպատակով առանձնացվում է 80 զինվոր թվակազմով կազակական ջոկատ, որը դիրքեր է գրավում Բերկրիի ձորի հյուսիսային բարձունքներում:

«Որոշեցին նախ պատժել Թուճին, որտեղ կը գտնուէին Սէիտ բէկի, Հազօ բէկի, Շէյխ Սալա բէկի եւ Ալի բէկի ցեղերը»[2]:

[1] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, Ճշվ. աշխ., էջ 289:
[2] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 102, թ. 53:

Քուրդ ցեղերի նման ընտրությունը պատահական չէր, այն կատարվել է մտածված եւ հաշվենկատորեն: Կոտորածների ժամանակ հենց այդ ցեղերն էին առավելապես անգթորեն դրսեւորել իրենց:

Չնայած պատժիչ զորախումբը, համաձայն Դրոյի խստագույն հրահանգի, գործում էր անաղմուկ ու զգուշորեն, այնուամենայնիվ, քրդերը նկատում են հարձակվողներին եւ հրացանի կրակոցներով իրենց ցեղակիցներին գուժում հայերի հարձակումը: Քրդերը դուրս թափվելով վրաններից՝ հասցնում են դիրքեր գրավել եւ սկսում եռանդուն պաշտպանվել: Սակայն նրանց հուսահատական դիմադրությունը երկար չի տեւում: Պատժիչ զորախմբի հրամանատարության մարտավարությունը շատ ճիշտ էր, մինչ քրդերը կհասցնեին դիրքեր գրավել եւ պաշտպանվել, անսպասելիորեն սարերի արեւելյան կողմից հայտնվում է պատժախմբի մյուս զորասյունը ու հեծյալ եւ հետեւակ մարտաշարքերով հարձակվում քրդերի վրա: Հանկարծակիի եկած քրդերը, խուճապի մատնվելով՝ լքում են մարտադաշտն ու փորձում փախչել:

2-րդ կամավորականի գործունեությունը պատմող փաստաթղթերից մեկում այդ մասին արձանագրված է հետեւյալը. «Քիւրտերը շատ մեծ կորուստներ ունենալով զէնքերը թափեցին եւ խելակորույս վիճակի մէջ խումբերով անձնատուր եղան, 300 քիւրտ դիակներ ընկած էին գետին, կիները եւ երեխաները ղրկեցան Ատիճէվազ, մերոնք գրաւեցին 10.000 ոչխար, 1000 տաւար, 50 ձի եւ մնացեալ իրեղենները...Մեր կորուստներն էին 2 կամաւոր, մէկ կազակ վիրաւոր եւ 6 ձի սպանուած»[1]:

Առաջին հարվածն ավարտվում է գերազանց վերջաբանով, հերթն արդեն մյուս ցեղախմբերինն էր:

«Կոճպաշէն դէպի հարաւ կը գտնուէին շէյխ Մարուֆի եւ Մուստաֆա բէկի ցեղերը: Այդ ցեղերը շատ մեծ գազանութիւններ ցոյց տուած էին նախորդ օրը կոտորուած Ալի բէկի ցեղին հետ Բերկրիի դաշտի մէջ գաղթող հայերու դէմ»[2]:

Այս ցեղախմբերի դեմ ձեռնարկած գործողության արդյունքը, նախկինի համեմատությամբ, մի փոքր համեստ էր: Քուրդ հովիվները պատահականորեն նկատում են հարձակվողներին եւ կարողանում փախչել ու լուր հասցնել իրենց ցեղակիցներին: Քրդերի մի մասին հաջողվում է տարբեր ուղղությամբ հեռանալ եւ ազատվել: Իսկ մյուս մասը զոհ է դառնում վրեժխնդիր հայ զինվորների համա-

[1] Նույն տեղում, թ. 54:
[2] Նույն տեղում, թ. 53:

զարկերին:Այդ կռվում կամավորների ավարն էր 5000 ոչխար, 2000 տավար եւ մի քանի ձի[1]:

Սեպտեմբերի 13-ին պատժիչ զորախումբը ձեռնամուխ է լինում Զիլանի քրդերի «մաքրման» գործողությունների իրականացմանը: Որպեսզի գործողությունն ընթանար առավելագույն արդյունավետությամբ, զորախմբի հրամանատարությունը վճռում է նախ եւ առաջ գրավել եւ փակել քրդերի փախուստի հնարավոր, դեպի Զիլանաձոր եւ Բերկրի տանող ճանապարհները: Լուսաբացին երկու հարյուրակ արագորեն առաջ է շարժվում եւ մոտենալով այդ անցատեղերին՝ փակում նահանջի ուղիները, իսկ զորախմբի մյուս ուժերը գրեթե նույն ժամանակամիջոցում հարձակվում են քրդերի բնակատեղերի վրա: Պատժիչ զորախմբի հուժկու հարվածներից սարսափի մատնված քրդերը, հասկանալով իրենց վիճակի ողջ անհուսալիությունն ու կործանման ստույգ վտանգը, փորձում են բանակցությունների մեջ մտնել հարձակվողների հետ: Կամավորների պահանջը միակն էր, բոլոր տղամարդիկ եւ առաջին հերթին նրանց առաջնորդները՝ շեյխ Մարուֆը եւ Մուստաֆա բեկը իրենց որդիներով եւ եղբորորդիներով, առանց որեւէ նախապայմանի պետք է զինաթափվեին եւ հանձնվեին: Քրդերը, շատ լավ ճանաչելով հայերին եւ ճիշտ գնահատելով նրանց ասպետական կարողություններն ու բարի վերաբերմունքը, դիմում են խորամանկության:

«Քիւրտերը չը համաձայնեցան եւ կռիւը շարունակեցին նկատի առնելով, որ մերոնք կանանց եւ երեխայոց կը խնայեն, իրենց կիները եւ երեխաները դիզեցին մեր գնդակներուն հսկողութեան ներքեւ եւ այրերը ձորին հանդիպակաց կողմը քարերու, կենդանիներու, կանանց մէջ զանազան տեղեր դիրք բռնեցին...»[2]:

Կռիվը չթուլացող ուժգնությամբ շարունակվում է գրեթե հինգ ժամ: Այդ օրը եղանակն ավելի քան բարեհաճ ու գթասիրտ է գտնվել քրդերի նկատմամբ: Կռվի ժամանակ սաստկորեն տեղացել է կարկուտ եւ անձրեւ, ու քրդերի մի մասը, օգտվելով բնության ընձեռած շռայլ պարգեւից, կարողանում է փախչելով ազատվել: Հայ զինվորները, փակելով քրդերի փախուստի հնարավոր ճանապարհները, կազակների համագործակցությամբ շրջապատում են եւ անխնա կոտորում իրենց հարվածների տակ հայտնվող քուրդ տղամարդկանց:

Զիլանի քրդերի հաշիվները մաքրելուց հետո Դրոյի զորախումբն անցնում է հյուսիս եւ գերեվարում ու զինաթափում այդ

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 55:
[2] Նույն տեղում, էջ 56:

շրջանների քրդերին: Մի հետաքրքիր փաստ. այն շրջանի քրդերը, որոնք չէին մասնակցել հայերի կոտորածներին ու առանց դիմադրելու դիմավորել էին կամավորներին, նրանց կողմից որեւէ բռնության չեն ենթարկվել: Նրանք միայն զինաթափվել են ու վտանգազերծվել:

Հայերի վրեժխնդրության հաջորդ զոհը հայ բնակչության նկատմամբ իրենց ընդգծված դաժանությամբ աչքի ընկած Ալադաղի եւ Դիադինի քրդերն էին, որոնք լսելով պատժիչ զորախմբի գործողությունների մասին՝ այդ օրերին անցել էին Թուրքաքի կողմը եւ պատսպարվել Թանթուրաքի արոտավայրերում եւ քարանձավներում: Պատժիչ զորախումբը սրարշավ մոտենում է Թուրքաքին, նախ բռնում եւ պատշաճ դատաստանի է արժանացնում Ալադաղի եւ Դիադինի քրդերին ապաստանողներին, ապա հարձակվում այդ վայրերում պատսպարվածների վրա:

«Մերոնք պատժեցին մեծ Թուրքաքի աչքի ընկնող մարդիկ, մնացածին ձեռք չը տուին:Միւս կողմանէ հաց տանող քիւրտերը հարցաքննեցին, որոնք եւ առաջնորդեցին դէպի թշնամին: Քիւրտերը բաժանուած էին երկու մասի, մէկ մասը, որ կարելի եղաւ գտնել, պատսպարուած էր քարաժայռերի մէջ, ձորին բերանը: Մերոնք մօտենալով եւ զանազան բաներ վառելով ծուխ առաջ բերին: Մէկ մասը խեղդուեցաւ եւ միւս մասը անձնատուր եղաւ»[1]:

Մոտ մեկ ամիս է տեւում «Ալադաղ» պատժիչ զորախմբի արշավանքը: Հայրենակիցների կործանման ցավով ու վրեժխնդրությամբ բռնկված Դրոն Զեմլյակի, Ցապոնի, Խոսրովի հեծելախմբերի եւ փոխգնդապետ Կորոլկովի զորամասի գլուխ անցած՝ ներխուժում է Դոմպանտի, Զիլանի եւ Ալադաղի շրջանները եւ մոտ մեկ ամիս տեւողությամբ ընթացող կռիվներում, առանց խնայելու, կոտորում այդ շրջանների թուրք-քուրդ խմբերին, որոնք ամենավայրագ ձեւով էին հաշվեհարդար տեսել հայերի հետ:

«Ալադաղի (Մաղկանց լերինք) քրդութիւնը պատժելուց յետոյ, շարունակում է Մարտիրոսը, - Դրօն վերադարձաւ Զեմլեակի, Եապոնի ու Խոսրովի երեք հեծեալ հարիւրեակներով, իսկ Կորոլկովի սահմանապահ հարիւրեակն էլ գնաց իր կայանը»[2]:

Պատժիչ արշավանքը ունեցավ փայլուն եւ արդյունավետ ավարտ: Արշավանքի ժամանակ զոհվում են 6 հայ կամավորներ, իսկ ռուս զինվորներից՝ ընդամենը 4 վիրավոր[3]:

[1] Նույն տեղում:
[2] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, նշվ. աշխ., էջ 289:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 102, թ. 56:

Արժանվույնս գնահատելով Դրոյի ներդրումը «Ալաղաղի արշավանք»-ը մեծ վարպետությամբ ու արդյունավետությամբ իրականացնելու գործում, Տիգրան Դեւոյանը, որն այդ ժամանակ ծառայում էր գեներալ Օգանովսկու գլխավորած 4-րդ կորպուսի հետախուզության բաժնում, գրում է. «Ալաղաղը կարճ ժամանակուան մէջ մաքրուեց Դրոյի եռանդին եւ տեղին լաւ ծանոթ լինելու շնորհիւ: Քիւրդերը քշուեցին Բիթլիսի ուղղութեամբ: Դրոյի խումբի ձեռքն անցաւ մօտ 30,000 տաւար, որի մէկ մասը բաժանուեց հայ փախստականներին, իսկ միւսը՝ հայ խմբերին[1]:

Ըստ «Ալաղաղի արշավանք»-ի մասնակից Կ. Սասունու, արշավանքի արդյունքն է. «Մօտ 40 գիւղ եւ եայլախ ոչնչացան: Տասնեակ հազար քրդեր բնաջնջուեցան...

Արշաւող բանակը զինուորական գրաւման ենթարկեց աւելի քան 40,000 խոշոր գլուխ անասուններ, ինչպէս նաեւ ձիեր եւ բազմահազար ոչխարներ...»[2]:

Ըստ Մարտիրոսի եւ Տ. Դեւոյանի վկայության, քրդերից բռնագրավված ավելի քան երեք տասնյակ հազարի հասնող ոչխարների հոտը եւ ավելի քան 5000 կովեր քշում են Երեւանի նահանգ եւ հանձնում գաղթականությանը եւ կամավորական զորախմբերին:

Ի տարբերություն Մարտիրոսի եւ Տ. Դեւոյանի, Կ. Սասունին նշում է, որ քրդերից բռնագրավված բազմահազար կովերի ու ոչխարների միայն չնչին տոկոսն է բաժին հասել գաղթականությանն ու հայ կամավորներին, իսկ «...մնացած ամբողջութիւնը ռուսական բանակի սեփականութիւնը դարձաւ»[3]:

Ալաղաղի արշավանքի հաղթական ու արդյունավետ կռիվներից հետո, համաձայն ռուսական զորաբանակի հրամանատարության թույլտվության, արդեն կարելի էր կենսագործել դեպի Տարոն եւ Սասուն ծրագրած արշավանքը: Դրոն մեծ եռանդով պատրաստվում է արշավանքի, բայց դժբախտաբար արդեն ուշ էր: Սասունից ռազմական հասած Ռուբեն Տեր-Մինասյանն ու Վահան Փափազյանը (Կոմս) գուժում են Տարոնի եւ Սասունի հայության բնաջնջման իրողությունը: Սասունի լեռներում պատսպարված ժողովրդի կողմից օգնություն հայցող՝ օրեր առաջ Իգդիր հասած մշեցի Նազարեթ վարժապետը ցնցող լուրի ներգործությունից չանթահար՝ ասում է. «Ախ, ինչպես ինձի մտիկ չըրին, - կ'ըսէր սրտաշարժ

[1] «Հայրենիք» ամսագիր, 1957, սեպտեմբեր, էջ 15:
[2] Սասունի Կ., Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին(1914-1918), էջ 105:
[3] Նույն տեղում:

հառաչանքով մը, - եթէ կամաւորական մէկ խումբ ղրկելու ըլլային, այդ շրջանի բոլոր ժողովուրդը կ'ազատուէր, որովհետեւ, արդէն թիւրք իշխանութիւնը շատ աննշան թիւով զօրք ունէր այնտեղ, եւ անոնք ալ «հայ Ֆիդայի» անունէն սարսափահար պիտի փախչէին:

Գլուխը կախեց կրծքին վրայ. քանի մը բոպէ լուռ մնալէ յետոյ ըսաւ. «Վահան Փափազեանը (Կոմս) իր վերջին նամակով Սասունէն կը գրէր: Ամէն առաւօտ, երբ արշալոյսը կը շառագունէր Սասունի լեռնակատարէն, աչքներիս այն կողմ յառած օգնութեան կսպասենք: Մ՞ւր է Անդրանիկը, ո՞ւր է Արամը...»[1]:

Նահանջից հետո Դրոյի 2-րդ զորախումբը, մի քանի օր Իգդիրում անցկացնելուց հետո, մեկնում է Երեւան եւ հանգստանալու նպատակով մոտավորապես մեկուկես ամիս մնում այնտեղ:

Ռուսական զորքերի նահանջը ոչ միայն թուրք իշխանություններին հնարավորություն չնորհեց ջարդերի ալիքը սփռել Տարոնի, Սասունի եւ հայկական մյուս գավառներում, այլեւ հուսախաբության եւ դասալքության տրամադրություններ սերմանեց հայ կամավորական զորախմբերի դերի շարքերում:

Հայ կամավորական զորախմբերի մարտական գործողությունները ներկայացնող տեղեկագրի բնութագրմամբ՝ «Նահանջը ահռելի դժբախտություն ու աղետ պատճառեց Վանի նահանգի ողջ բնակչությանն ու մասնավորապես կամավորներին:Արարատյան զորախումբ, որը իրեն փայլուն կերպող էր դրսեւորել հատկապես Վանի մարտական գործողությունների ավարտական փուլում ու դաժան փորձությունների դիմացել երկու ամիս (10 մայիսի-19 հուլիս) տեւողությամբ ընթացող բազմաթիվ կռիվներում՝ կազմալուծվեց: Բազմաթիվ կռիվների մասնակցությունից հոգնած ու մեծագույն զոհողությունների գնով իրենց մարտական նվաճումների կորստից հիասթափված կամավորները հասնելով Իգդիր՝ սկսում են ցրվել: Հատկապես արեւմտահայերը, որոնք կազմում էին կամավորների մեծամասնությունը, իրենց հարազատներին որոնելու պատրվակով լքում էին մարտաշարքերն ու մեկնում իրենց ծննդավայրերը...»[2]:

Զորախմբերում կամավորների մարտաշարքերը գնալով ավելի ու ավելի էին նոսրանում:

Ռուսական զորքերի նահանջի հետեւանքով, չորս զորախմբերում մարտնչող, հուսալքության գիրկն ընկած աւելի քան 4000

[1] «Ասպարեզ», թիւ 468, էջ 5:
[2] ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 8, թ. 23:

կամավորներից մնացել էին ընդամենը 12000 մարտիկներ, որոնք ըստ վերոհիշյալ տեղեկագրի՝ «...ծայրահեղ հոգնած էին ու խիստ կարիք ունեին հանգստի»[1]:

Հայ ժողովրդի գոյապայքարի բախտորոշ ժամանակահատվածում գերմարդկային ջանքեր էին գործադրում Հայոց Ազգային Բյուրոն, որի, ինչպես նաեւ կամավորական գնդերի հրամանատարության նպատակասլաց աշխատանքի շնորհիվ ոչ միայն հնարավոր եղավ կասեցնել մարտախմբերում սկիզբ առած դասալքությունն ու անկարգապահությունը, այլեւ Երեւանի մեջ կազմել երկու նոր մարտական զորախմբեր՝ 6-րդ եւ 7-րդ:

«Կովկասյան բանակի շտաբի հետ տարված բանակցություններից հետո որոշվում է. 1. թողնել 3-րդ եւ 4-րդ զորախմբերը Դիլմանում եւ նրանց համալրման համար 6-րդ եւ 7-րդ զորախմբերից առանձնացնել 750 մարդ: 2. Կարճ ժամանակամիջոցում համալրել եւ դարձյալ ճակատ ուղարկել 1-ին եւ 2-րդ կամավորական զորախմբերը:

Համաձայն այդ որոշման, օգոստոսի 8-ին Դիլման են ուղարկում 750 կամավորներ եւ քայլեր ձեռնարկվում 1-ին եւ 2-րդ զորախմբերը վերակազմավորելու ուղղությամբ:

Աստիճանաբար գալիս են նոր կամավորներ եւ վերադառնում զորամասերը լքած զինվորները[2]:

Ըստ վերոհիշյալ տեղեկագրի՝ զորախմբերի կազմավորումը շարունակվում է երեք ամիս (օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր): Համաձայն 4-րդ կորպուսի հրամանատարության 1915 թ. օգոստոսի 3-ին ստորագրած թիւ 61 հրամանի՝ հայկական բոլոր կամավորական զորախմբերը ենթարկվելու էին Կովկասյան 1-ին բրիգադի հրամանատար գեներալ մայոր Ցուրկեւիչին, որին տալիս են դիվիզիայի հրամանատարի կարգավիճակ[3]:

Պետք նշել, որ այդ որոշումը միանգամայն համահունչ էր Հայոց Ազգային Բյուրոյի ցանկությանը:

Դրոն, Երեւանում համալրելով նախորդ մարտերում զգալի կորուստներ կրած 2-րդ կամավորական զորախումբը, նույն տարվա նոյեմբերի 26-ին իր զորավաշտերի գլուխն անցած ուղեւորվում է Իգդիր, մի փոքր անց՝ Բատնոս: Այս անգամ նրա գլխավորած զորախումբը բաղկացած էր 1240 կամավորականներից, որից 585-ը՝ արեւելահայեր էին իսկ 655-ը՝ արեւմտահայեր:

[1] Տե՛ս Նույն տեղում:
[2] Նույն տեղում, թ. 22:
[3] Տե՛ս Նույն տեղում:

1916 թ. սկզբներին Կովկասյան հրամանատարությունը ձեռնարկում է վճռական եւ խոշոր մարտական գործողություններ ռազմաճակատի մի շարք ուղղություններում: Գլխավոր՝ Կարին, Մուշ եւ Բիթլիս ուղղություններում կենտրոնանում են հայ կամավորական գնդերը: Դրոյի 2-րդ կակավորականը, որը հանդիսանում էր գեներալ Աբացեւի զորամասի առաջապահ ջոկատը, գործելու էր Խնուս-Մուշ ուղղությամբ: 1916 թ. ձմռանը իրականացվող ռազմական գործողությունները Արեւմտահայաստանի ազատագրման ձգտումներով համակված ռազմադաշտ մեկնող կամավորական զորախմբերի 5-րդ արշավանքն էր:

Ինչպես նախորդ երկու արշավանքներում, այս անգամ էլ Դրոյի հետ էին զորախմբի 1-ին եւ 2-րդ հեծյալ զորավաշտերի հրամանատարներ Զեմլյակն ու Ցապոնը, 1-ին, 2-րդ եւ 3-րդ հետեւակային վաշտերի հրամանատարներ Դալի Ղազարը, Բաշգառնեցի Մարտիրոսն ու Մեծ Ղազարը (Ղազար Քոչարյան)[1]:

Կամավորների ոգեւորությունը, օր առաջ մարտադաշտ մեկնելու ցանկությունը բարձր էր: Դարձյալ հնարավորություն էր ընձեռվել հայրենի հողը վերջնականապես ազատագրելու եւ կոտորածներից ազատված հայության վերջին բեկորները փրկելու համար:

«Շատ ժամանակ,- գրում է Մարտիրոսը,- չէր անցել այն օրուանից, երբ ստիպուած կռնակ դարձրինք Սասնոյ ժողովրդին, առանց կարողանալու դոյզն օգնութիւն իսկ հասցնել նրան: Վրէժխնդրութեան կրակը կրկնակի ուժգնութեամբ բոցավառուած մեր հոգիներում, ահա թէ ինչու այնքան անհամբերութիւն կար բոլորիս մէջ»[2]:

Այդ ժամանակ ռուսական զորքերի նահանջի հետեւանքով ռազմաճակատի գիծը կրճատվել էր: Եթե մինչեւ 1915 թ. ամառը ռուսական ճակատը Վանի լճի հարավ արեւմտյան ափից՝ Դատուանից, ձգվում էր Ախլաթի վրայով մինչեւ Մանազկերտ ու այնտեղից Ալաշկերտ, ապա այժմ, երբ ռազմաճակատի գիծը կրճատվել էր, սկսվում էր Ռստանից եւ այնտեղից Վանի եւ Բերկրիի վրայով Բատնոս եւ Ալաշկերտ[3]:

Նոյեմբերի վերջերին ռուսական զորքերը՝ վերսկսելով հարձակումը հաստատվում են Արճեշ-Բատնոս բնագծերում: Արճեշը Բատնոսից բաժանվում է Ծաղկաց լեռներով եւ դրանց կապող հաղորդակցության ուղին անցնում է Զիլանի ձորով, որը գրեթե մշտապես

[1] Տե՛ս Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, նշվ. աշխ., էջ 90-91:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս Ահարոնեան Վ., Անդրանիկ Մարդը եւ Ռազմիկը, Բոսթըն, 1957, էջ 56:

ենթարկվել է քրդական զինյալ հեծելախմբերի հարձակումներին: Ռուսական հրամանատարությունը Արճեշ-Բատնոս ձգվող տարածքը քրդական ցեղախմբերից մաքրելու նպատակով առավելապես օգտագործում էր հայկական զորախմբերին:

Թուրքական հրամանատարությունը մի շարք կռիվներում կորցնելով մեծ քանակությամբ մարտական ուժեր եւ ռուսական զորքերի հարձակումը խոչընդոտելու նպատակով, ավելի է ակտիվացնում քրդական հրոսակախմբերի գործողությունները: Քուրդ հեծելախմբերի անակնկալ եւ պարբերաբար շարունակվող հարձակումները վտանգավոր կացություն են ստեղծում ռազմաճակատի թիկունքում: Նոյեմբերի վերջերին ու դեկտեմբերի սկզբներին քրդերի գործած հարձակումների եւ ավերածությունների հետեւանքով խափանվում են ռուսական տարբեր զորամիավորումների միջեւ հաղորդակցության ուղիները: Ռազմաճակատի թիկունքը մաքրելու ու հաղորդակցության ուղիները վերականգնելու նպատակով ռուսական բանակի հրամանատարության կարգադրությամբ հայկական կամավորական 1-ին եւ 2-րդ զորախմբերից կազմվում է երկու արշավախումբ:

Առաջադրանքը կատարելու նախօրեին Դրոյի 2-րդ կամավորական զորախումբը գտնվում էր Բատնոսում, իսկ Անդրանիկի 1-ին կամավորականը՝ Արճեշում:

Ձմռան դաժան պայմաններում հայկական 1-ին եւ 2-րդ կամավորական զինախմբերը հրաշալիորեն կատարեցին մարտական առաջադրանքը: Շնորհիվ հայ կամավորների անբասիր մարտական գործողությունների, ոչ միայն մաքրվեց թիկունքը եւ վերականգնվեցին հաղորդակցության ուղիները ռուսական զորամասերի միջեւ, այլեւ բավարար հնարավորություն ստեղծեցին հետագա ռազմական գործողությունների ծավալման համար:

Վարդգես Ահարոնյանը, որն այդ ժամանակ որպես Անդրանիկի համհարզ եւ 1-ին կամավորականի քարտուղար գտնվում էր ռազմաճակատում, նշում է. «...Արճէշի ռուսական զօրախմբի եւ Պանտոսի շրջանի ռուս ոյժերի միջեւ կապ հաստատելու համար մեր գունդը եւ ռուս կոզակների մի հարյուրակ, եւ Դրոյի գունդը Պատնոսից մի քանի անգամ արշաւանք են կազմակերպել Զիլանի ձորը թշնամուց ազատ պահելու համար: Բայց ամեն անգամ Զիլանի ձորը թշնամուց մաքրելուց յետոյ, երբ մեր ոյժերը Արճէշ ու Բատնոս են վերադարձել, քիւրդերը, շատ չանցած, նորից իջել են Զիլանի ձոր... Հոկտեմբերի, նոյեմբերի ընթացքում մեր եւ Դրոյի զորախումբը ստիպուած են եղել մի քանի անգամ, բաւական զոհեր տալով մաքրել Զիլանի ձորը, մինչեւ որ դեկտեմբերին ձիւնը ծածկել է Զիլանի ձորը...

Զիլանի ձորի կռիւները ղեկաւարել էր Սմբատը...»[1]:

Թեպետ Վ. Ահարոնյանի այն պնդման, որ «դեկտեմբերին ձիւնը ծածկել է Զիլանի ձորը եւ անկարելի դարձրել ռազմական շարժումները...», Դրոյի զորախումբի մարտական ուղին ներկայացնող ռազմական ամփոփագրերը մատնանշում են, որ 2-րդ կամավորականը, այնուամենայնիվ, շարունակել է մարտական գործողությունները:

Համաձայն այդ ամփոփագրերի տեղեկացման՝ «...Բ. գունտին վրայ պարտք էր դրուած պաշտպանել Սանճանի զօրամասի ձախ թեւը եւ հետախուզութիւններ կատարել Կորշեն, Ատիլճէվազի, Արճեշի եւ Մանազկերտի ուղղութեամբ: Այդ նպատակով հայկական ձիաւոր խումբերը ուժեղացուած էին 100 կազակով ու 200 հետեւակ ռուս զինուորներով»[2]:

Առաջադրանքը հաջողությամբ կատարելու համար նախ եւ առաջ հարկավոր էր իմանալ թուրքական բանակի, քրդական ուժերի, նրանց տեղաբաշխման վերաբերյալ որոշակի տեղեկություններ: Այդ նպատակով 2-րդ կամավորականի հրամանատարությունը կազմակերպում է հետախուզություն եւ հետախույզների ջանքերով գերի վերցրած թուրք զինվորներից ու քրդերից տեղեկանում. «...Թրքական կառաւարութիւնը կը կազմակերպէր Կոփէն դէպի Ախլաթ մինչեւ Սիփան գտնուած քիւրտերը, որոնց բաժնած էր 1500 հրացան: Հետախուզութիւնը ուժեղացուցին եւ յիսնապետ Ցակոբին հետ յիսնեակ մը ղրկեցին Սիփանի ուղղութեամբ»[3]:

Զեռնամուխ լինելով առաջադրանքի կատարմանը՝ ջոկատը Սիփան տանող ճանապարհին հանդիպում է թուրքական առաջապահ ուժերին: Մեկ վաշտով եւ 800 քուրդ զինյալների կազմով Բատնոսի արեւմուտքում գտնվող Թիրամուտ գյուղի մոտակայքում դարանակալելով հայ հետախույզներին, թուրքերը փորձում են անակնկալի բերել եւ ջախջախել նրանց: Անսպասելիորեն հայտնվելով հակառակորդի թակարդում՝ խումբն ընդունում է մարտահրավերը եւ առանց խուճապի, անկոտրում դիմադրությամբ սկսում քայլ առ քայլ նահանջել դեպի Բատնոս ու հասցնում իրենց վիճակի մասին լուր ուղարկել հրամանատարությանը: Մինչ օգնության կանչով ուղարկված հետախույզը կհասցներ հրամանատարությանը հաղորդել պատահարի մասին՝ Դրոն, լսելով հրաձգության ձայնը, իրադրությունը տեղում պարզելու նպատակով դեպքի վայրն է

[1] Նույն տեղում:
[2] ՀԱԱ, ֆ. 157, ց. 5, գ. 106, թ. 5:
[3] Նույն տեղում:

ուղարկում Խոսրով Եղիազարյանի գլխավորած հիսնյակը: Օգնությունը ճիշտ ժամանակին էր: Հասնելով մարտադաշտ՝ Խոսրովի հիսնյակը միանում է հետախույզների ջոկատին եւ հանպատրաստից դիրքավորվելով միահամուռ համազարկերով կասեցնում հակառակորդի առաջխաղացումը: Քանի որ արդեն մութն ընկնում է, երկուստեք դադարեցնում են գործողությունները եւ սպասում լուսաբացին:

Լույսը բացվելուն պես 2-րդ կամավորականը կենտրոնացնում է ողջ ուժերը եւ կազակական հարյուրյակի համագործակցությամբ անցնում հարձակման:

«Միւս օրը լուսաբացին մերոնք սկսան յառաջ խաղալ, մի փոքր դիմադրութիւնէ մը ետքը թշնամին ձիաւորն ալ նահանջեց դէպի Կէլէրաշ:Ժամը 10-ին սկսուեցաւ ընդհանուր յարձակումը Կէլէրաշի վրայ: Գեներալը, տեղեկանալով դրութեանը, անմիջապէս ղրկեց 4 գնդացիր, 2 թնդանօթ եւ մէկ գումարտակ, որոնք հազիւ հասան ժամը 4-ին, երբ արդէն ջարդուած թշնամին կը հալածուէր...

Բ. գունտը եւ կազակները այս կռիւներուն ստացան 15 Գէորգեան խաչ եւ 20 մէտալ Գէորգեան ժապաւէնով»[1]:

Ջախջախելով հակառակորդի առաջապահ ուժերը՝ զորախումբը, անգամ փոքր-ինչ դադար չառած, հրամանատարության կողմից ստանում է հաջորդ առաջադրանքը՝ անհապաղ շարունակել հետախուզությունը եւ պարզել Կոփի շրջանում տեղաբաշխված հակառակորդի ուժերը եւ անհրաժեշտության դեպքում նաեւ դիմել հարձակման: Ձմռան խստաշունչ պայմաններում, առանց դադարի, մարտական պատասխանատու առաջադրանքների կատարումը, մեղմ ասած, հեշտ գործ չէր:

«Դեկտեմբերի 16-ի գիշերը ժամը 2-ին շարժուեցան դէպի Մանազկերտ: 24 աստիճան ցուրտ կը տիրէր: Բ. գունտին ետեւէն կուգային ռուսական երկու գումարտակ հետեւակներ, որոնք պիտի ամրանային Մանազկերտի մէջ եւ հակառակ պարագային պիտի պաշտպանէին մերոնց»[2]:

Մանազկերտում ընդամենը մեկ օր մնալուց հետո Դրոյի զորախումբը, որին դարձյալ օգնելու էր կազակական հարյուրակը, շարունակում է առաջխաղացումը եւ հետախուզություն կատարելուց հետո հաջորդ օրն եւեթ հարձակվում Կոփում դիրքավորված թուրքերի եւ նրանց աջակցող քրդերի վրա: Գործողության հաջողությունը պետք է ապահովվեր հարվածների արագությամբ ու հանկարծակիությամբ:

[1] Նույն տեղում, էջ 57:
[2] Նույն տեղում, էջ 58:

«Որոշուեցաւ, որ մեր հեծելազօրքը 1 հարիւրեակ կազակներու հետ միասին յարձակուեն Կոփի վրայ:

...Ժամը 10-ին մօտեցան աննկատելի կերպով Կոփին: Մառախուղը պատած էր ամէն կողմ: Ժամը 11-ին անցան Կոփի չայը, շղթայ կազմելով եւ ուռա գոչելով յարձակուեցան: Թշնամիին ահաբեկուած պահակները առանց հրացան արձակելու սպանուեցան: Ատոնք Համիտիյէ գունդերուն կը պատկանէին:

... Համիտիյէ գունդերը գլուխները կորցուցած տուներու լուսամուտներէն անդիէն անկանոն հրաձգութիւն կը կատարէին...»[1]:

Կոփի համազարկերի արձագանքներից տեղեկանալով հայկական ուժերի հարձակման մասին՝ Կոփի մոտակայքում գտնվող թուրքական զորավաշտերը շտապում են օգնության եւ թնդանոթներից տեղացող կրակով եւ հետեւակազորի գրոհներով փորձում հայ զինվորներին դուրս բերել գյուղի տարածքից եւ բաց դաշտում նրանց հետ հաշվեհարդար տեսնել: Սակայն դա սոսկ ցանկություն էր: Արագորեն վնասազերծելով քրդերին՝ կամավորները հետ են մղում թուրքերի գրոհները եւ անցնելով հարձակման՝ հուժկու հարվածներով ջախջախում թուրքական զորավաշտերը:

«Մեր կորուստները եղան այս ճեռնարկին մէջ 1 զինուոր, 3 հայու եւ 2 կազակի ձի սպանուած: Ցուրտէն սառած 25 հայ, 100 կազակ ու ռուս զինուոր: Հետախուզութիւնը տեւեց 48 ժամ անընդհատ: Մերոնք ստացան 8 խաչ եւ 4 մէտալ Գէորգեան»[2]:

Այս հաղթանակից հետո 2-րդ զորախումբը շարունակում է հարձակումը եւ մի քանի վայրերում ջախջախելով զորքերի հաղորդակցության ուղիների եւ թիկունքի վրա ասպատակող քրդական հրոսակներին, քշում է նրանց մինչեւ Սիփան:

Եթե ամփոփենք Դրոյի 2-րդ կամավորականի ձմեռային արշավանքի արդյունքները, ապա կարելի է ասել. զորախումբը, որի կազմում էին նաեւ կազակական մեկ հետեւակ եւ հեծյալ վաշտեր, ջախջախելով Բատնոսից մինչեւ Արճեշ եւ Սիփան ընկած շրջաններում գործող քրդական զինված խմբերին՝ հունվարի սկզբներին Աղի-Գյադուկ լեռնանցքի մոտակայքում միանում է Անդրանիկի գլխավորած զորախմբին[3]:

Հունվարի 6-ին 2-րդ կամավորականը Մանազկերտի մոտ գետանցում է Եփրատը եւ ուղղություն վերցնում դեպի Խնուս:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, էջ 59:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 8, թ. 22-44:

«Ցունուարի 9-ի գիշերը, - նշվում է 2-րդ կամավորականի գործունեության լուսաբանմանը նվիրված զինվորական ամփոփագրում, - ռուսական 4-րդ զօրաբանակէն հրահանգ ստացուեց, որ հետեւեալ օրը անմիջապէս շարժուին դէպի Մանազկերտ, Սունդանջի, Շերւանշէյխ եւ այնտեղ միանալ ճիաւոր գումարտակին, որը չէր կրցել անցնիլ Թշնամիին ուժեղ ըլլալու պատճառով: Բ. գունտին կառաջարկուէր անմիջապէս անցնիլ Քարաքէօրբի Թրքական դիրքերու ետեւը, որու դիմաց կը կռուին արդէն ռուսական հետեւակ պոլքերը...»[1]:

Ստանալով մարտական առաջադրանքը՝ Դրոյի 2-րդ կամավորական զորախումբը հունվարի 10-ին սկսում է իր ռազմարշավը եւ մոտավորապես հաղթահարելով 40 վերստ տարածություն՝ ճանապարհին ռուսական զորամասերի համագործակցությամբ Կարաքեորբի բնակավայրի մոտակայքում հաղթահարում է Թուրքերի դիմադրությունը եւ նույն օրը երեկոյան մուտք գործում Մանազկերտ: Ինչպես եւ նախորդ ռազմարշավների ժամանակ, որպես ռուսական բանակի առաջապահ ուժերից մեկը՝ զորախումբը պետք է գործեր հարձակման սուր ծայրում, ամենավտանգավոր տեղերում եւ իր հետեւից տաներ հարձակվող զորաբանակի հիմնական ուժերը: Պիտի նկատել, որ անընդմեջ ընթացող կռիվներում, կամավորները բավարար ժամանակ չէին ունենում իրենց շարքերը համալրելու, փոքր-ինչ հանգստանալու ու կազդուրվելու համար:

«Մեր կամաւորական գնդերը, - նկատում է Վ. Ահարոնյանը, - առհասարակ, զինաւարժութեան եւ կարգապահութեան վարժուելու ժամանակ չէին ունենում: Հազիւ մի գնդի զինուոր արձանագրուած եւ հրացան ըստացած, մեր կամաւորները ուղարկւում էին ռազմաճակատ: Կամաւորներ կային, որոնք իրենց կեանքում առաջին անգամ էին հրացան ձեռք առնում եւ մի քանի օր չանցած արդէն կռուի ճակատ ուղարկւում: Բայց այդ անվարժ ու յաճախ անկարգապահ կամաւորները հիանալի կռուողներ էին»[2]:

Ընդամենը մեկ գիշեր անցկացնելով Մանազկերտում, 2-րդ զորախումբը, համաձայն վաղօրոք ստացած առաջադրանքի, առավոտյան վերսկսում է ռազմարշավը եւ դարձյալ անցնելով 40 վերստ տարածություն, նույն օրը մուտք է գործում Սուլթանլի, իսկ երեկոյան Շերվանշէյխ: Ճանապարհի ողջ ընթացքում զորախումբն երբեմն հարկադրված է լինում մարտի բռնվել քրդերի հետ, որոնք ռուսական զորքերի ներկայությունից գլուխները կորցրած, թողնելով իրենց ողջ հարստությունը՝ սարսափահար փախչում էին: Քրդերի դիմադրությունն աննշան էր եւ գրեթե չէր խանգարում զորախմբի արագ առաջխաղացմանը: Բայց երբ զորախումբը Շերվանշէյխից անցնում է Զարկետիվկ, դեմ հանդիման բախվում է թնդանոթներով ու գնդացիրներով զինված Թուրքական զորավաշտերին, որոնք ռուսական զորքերի հիմնական ուժերին հանդիպելուց խուսափելու նպատակով նահանջում էին:

«Բ. գունդը ամբողջապէս մէկ հարիւրեակ կազակներու հետ շարժուեցան: Շատ դժուարին ճամբաներու պատճառով հետեւակը յոգնած եւ սպառուած էր: Ժամը 8-ին 200 առաջապահներէ լուր ստացանք, որ Թշնամին յետ կը նահանջէ ռուսական գրոհին ներքեւ, իսկ իրենց ուժը քիչ է նահանջողներուն քամակը անցնելու համար»[1]:

Հանդիպելով Թշնամուն՝ Դրոն, չնայած զինվորների հոգնածությանն ու ուժերի սահմանափակությանը, իր զորախմբի եւ կազակների միացյալ ուժերով անվարան շարժվում է ընդառաջ եւ ընթացքից հարձակվում նրանց վրա: Հանպատրաստից նրա կիրառած մարտավարությունը պսակվում է հաջողությամբ: Թուրքերն ընկնելով երկու՝ հետեւից եկող ռուսական գնդերի եւ ճակատից գրոհող Դրոյի զորախմբի հարվածների տակ, հայ զինվորներին դիմագրավելու համար թողնում են ընդամենը մեկ հարյուրյակ, իսկ հիմնական ուժերով սկսում անկանոն նահանջել: Արագորեն իրենց ճանապարհից վերացնելով Թուրք հարյուրյակի հարուցած արգելապատնեշը՝ կամավորներն ու կազակները շարունակում են հետապնդել հակառակորդի հիմնական ուժերին եւ երեկոյան մարտաղաշտ հասած ռուսական զորքերի համագործակցությամբ շրջապատում եւ ոչնչացնում են նահանջողներին:

«...Թշնամին թողած էր 100 սպանուած եւ գերի թողած 300 զինուոր եւ 9 սպայ: Իսկ ռուսական ճակտին վրայ թողած էր 500 դիակ: Այդ օրը մեր զինուորները սարերէ ու ձորերէ անցնելով 40 վերստ ճամբայ ըրած էին»[2]:

Թուրքական զորքերը ռուսական զորագնդերի եւ հայ կամավորների հարվածներից՝ մազապուրծ նահանջում են Խնուս: Եթե անհապաղ չշարունակվեր նահանջող Թուրքական զորքերի հետապնդումը, ապա նրանք կարող էին լրացուցիչ ուժեր մոտեցնել եւ շատ լավ ամրապնդվել Խնուսում: Հարկավոր էր կանխել ու ի չիք դարձնել

[1] ՀԱԱ, ֆ. 157, ց. 5, գ. 102, թ. 59:
[2] Ահարոնեան Ա., նշվ. աշխ., էջ 116:

[1] ՀԱԱ, ֆ. 157, ց. 5, գ. 106, թ. 59:
[2] Նույն տեղում, թ 60:

Խնուսում ամրապնդվելու թշնամու հնարավորությունը: Հունվարի 12-ին կամավորները վերսկսում են հարձակումը եւ արագորեն շարժվում դեպի Խնուս:

Մինչեւ Զամուրլու գյուղն ընկած տարածքը հակառակորդի հետնապահ ուժերն առավելապես սարսափի եւ ահաբեկվածության պատճառով որեւէ լուրջ դիմադրություն ցույց չեն տվել, իսկ գյուղի մերձակայքում մեկ ժամ դիմադրելուց հետո թուրք զինվորները, անկարող լինելով դիմադրավել կամավորների եւ կազակների ներդաշնակ ու հուժկու գրոհներին, թողնում են մարտադաշտն ու արագորեն նահանջում Խնուս:

«Մեր աջ եւ ձախ թեւերը լինելով զուտ ձիաւոր երկու կողմէն աքցանի պէս կը սեղմէր ահաբեկած թշնամին, որ կեդրոնէն ալ հետապնդուած ողորմելիօրէն կը ջանար խուսափիլ, թողնելով ճանապարհին հիւանդներ, զէնքեր, ձիեր, ջորիներ եւ այլն»[1]:

Հունվարի 15-ին կամավորները ռուսական Լաբինսկյան գնդի համագործակցությամբ ջախջախում ու փախուստի են մատնում իրենց դիմակայող հակառակորդին, երեկոյան ներխուժում է Խնուս եւ մինչեւ լույս մաքրում քաղաքը թշնամու զինվորներից:

«Զորս օրուայ ընթացքին Բ. գունդը կատարած էր 150 վերստ ճամփայ սոսկալի ցուրտով: Հետեւակը մասնաւոր կերպով գնահատութեան արժանի էր, որովհետեւ հակառակ անյաղթելի դժուարութիւններու ետ չի մնաց եւ ձիաւորներու հետ համընթաց եղաւ:

Մեր կորուստները եղան հայերէն սպանուած 2 եւ 12 վիրաւոր եւ կազակներէն սպանուած 6 եւ 8 վիրաւոր եւ 25 ձի սպանուած:

... Թշնամին թողած էր 600 դիակ, առանց հաշուելու ձորերու, ճամփաներու եւ ասդին անդին մնացած դիակները...

Մեր Բ. կամաւորական գունդը իր անվեհեր եւ տոկուն զինուորական գործողութեանց համար ստացաւ ջերմ շնորհակալութիւններ: Գեներալը իր խօսքը սկսաւ «Քաջ հայեր» կոչելով: Գեներալի կողմէն հայկական գունդին եւ անոր հետ գործող կազակներու համար նշանակած է 20 Գէորգեան խաչ եւ 20 մէտալ Գէորգեան ժապաւէնով»[2]:

Խնուսի ազատագրումից հետո Դրոյի զորախումբը, նույն հաջողությամբ, ռուսական զորքերի համագործակցությամբ շարունակում է հարձակումը:

1916 թ. փետրվարի սկզբներին ռուսական զորքերի եւ հայ կամավորական զորախմբերի կողմից իրականացվող հարձակողական

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, թ. 60-61:

գործողությունները դարձյալ պսակվում են հաջողությամբ:Արդեն նույն ամսի 5-ին, Դրոյի առաջնորդած զորախումբը հնգօրյա դժվարին մարտերից հետո, հաղթահարելով հակառակորդի դիմադրությունը՝ առաջինն է մտնում Մուշ, իսկ մի քանի օր անց նոր միայն քաղաք է հասնում ռուսական զորքը:Մուշ քաղաքն ազատագրելուց երկու օր անց Դրոն բարձրանում է Սասուն, ապա շարժվում Առաքելոց վանքը:

Վերջապես նա Տարոնում էր ու Սասունում, այն ֆիդայիների հայրենիքում, որոնց մասին ժողովրդի մեջ տարածված առասպելանման պատմություններն ազատության պայքարին զինվորագրվելու ձգտումներ էին սերմանել նաեւ իր հոգում: Բայց պատանեկության տարիներին նրա երազած հայոց ըմբոստ լեռնաշխարհի հերոսներն այլեւս չկային:Սոսկալի պատկեր էր տիրում հայոց հինավուրց հողում, Տարոնի ողջ բնակավայրերը թուրքերն ու քրդերը հասցրել էին քանդել ու վերածել մոխրակույտերի: Այժմ նրա զորագնդի մարտիկներին մնում էր հավաքել լեռների ծերպերում, թաքստոցներում պատսպարված եւ հրաշքով փրկված հայերին:

Փետրվարի 24-ին Բիթլիսի շրջանից դեպի Մշո դաշտ է շարժվում Անդրանիկի 1-ին կամավորական զորախումբը: Հայկական Նորշեն գյուղում Անդրանիկը հանդիպում է Դրոյի հրամանով Մուշից Բիթլիս տանող ճանապարհը պաշտպանող Դալի Ղազարի զինավաշտին: Վարդգես Ահարոնյանի (այդ օրերին ծառայում էր Անդրանիկի մոտ – Հ.Գ.) վկայությամբ, Անդրանիկին հիացրել են Դրոյի զինվորների կարգապահությունն ու մարտական կեցվածքը: Դալի Ղազարի վաշտի զինվորների խրոխտ տեսքից զգացված Անդրանիկը «... վրդովուած նետեց մեր գնդի զինուորների երեսին.

- Դուք ալ զինուոր էք, ասոնք ալ...»[1]:

Մուշի գրավումից հետո 2-րդ կամավորական զորախմբի հրամանատարությունը ընդունում է գնդապետ Եգոր Տեր-Ավետիքյանը, իսկ Դրոն հիվանդության պատճառով տեղափոխվում է Թիկունք՝ բուժվելու:

Նրա բացակայության ժամանակ զորախումբը մասնակցում է Տարոնի եւ Սասունի շրջանները թուրքերից եւ քրդերից մաքրելու կռիվներին, ապա տեղափոխվում Բիթլիսի ճակատ:

Կլիմայական բարդ պայմաններում Բիթլիսը գրավելու նպատակով ձեռնարկված մարտական գործողություններն ավարտվում են

[1] Ահարոնեան Վ., նշվ. աշխ., էջ 115:

չափազանց բարեհաջող: Փետրվարի 18-20-ը թուրքական զորքերը լքում են Բիթլիսը: Այդ կռվում 2-րդ կամավորական զորախումբը, համագործակցելով գլխավոր տեղամասում հարձակվող Անդրանիկի 1-ին կամավորական զորախմբի հետ, զգալի ավանդ է ներդնում Բիթլիսի եւ նրա շրջակա բնակավայրերի ազատագրման գործում, իսկ Դալի Ղազարի գլխավորած 1-ին վաշտը քաղաք ներխուժող զինվորների առաջին շարքերում էր:

Բիթլիսի գրավումից հետո Դրոյի զորախումբը վերադառնում է Մուշ: Ապրիլի 3-ին զորախումբ է վերադառնում ապաքինված Դրոն եւ վերստին ստանձնելով 2-րդ կամավորականի հրամանատարությունը, հաջորդ օրն իսկ իր զորավաշտերին առաջնորդում է մարտի: Նա արդեն գիտեր, որ Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաիչը որոշել էր ցրել հայ կամավորական զինախմբերը: Երկրորդ կամավորականի վաշտապետերը, տեղեկանալով այդ մասին, իրենց վրդովմունքն են հայտնում ու հրաժարվում մասնակցել արդեն ընթացող ճակատամարտին, սակայն Դրոն՝ դիմելով զինակիցներին ասել է. «-Ընկերներ , ես հասկանում եմ ձեր վրդովմունքը, սակայն առաջարկը մերժելը տգեղ վերաբերմունք կը լինի մեր կողմից: Մինչեւ հիմա այսքանը կատարել ենք անտրտունջ, այս անգամ էլ առանց տրտունջի կը գնանք, կը մասնակցենք յարձակմանը, տղամարդավարի կը կատարենք մեր պարտականությունը ...

Դրոյի խօսքը օրէնք էր բոլորիս համար...Ինչպէ՞ս կարելի էր առարկել նրան: Ուստի լռեցինք... »[1]:

Եվ վերջին անգամ Արեւմտյան Հայաստանի հողում Դրոն իր կամավորներին առաջնորդում է գրոհի Կազմագեադուկ բնակավայրում կուտակված թուրքական ջոկատների վրա: Այդ օրը տեղի ունեցած կռվում 2-րդ զորախմբի մասնակցությունը փրկարար նշանակություն է ունեցել ծանր վիճակում հայտնված ռուսական զորամասի համար: Հասնելով մարտադաշտ՝ զորախումբն անմիջապես դիմում է հարձակման: Կամավորների առաջին հարվածն անկասելի էր. թուրքական զորախումբը մեծ կորուստներով սկսում է նահանջել: Սակայն մարտադաշտ են հասնում թուրքական նոր գումարտակներ եւ նահանջող զինաջոկատների հետ հարձակվում հայ զինավաշտերի վրա: Թշնամու արձակած գնդակներից վիրավորվում է 2-րդ վաշտի հրամանատար Բաշգառնեցի Մարտիրոսը, սպանվում է հայ զորագնդի կազմում գործող ռուսական վաշտի հրամանատար Իվանովը: Ռուս զինվորները իրենց հրամանատարի սպանվելու տեսարանից հուսալքված՝ դիմում են փախուստի: Մարտիրոսի վիրավորվելու պատճառով հրամանատարությունը կորցրած 2-րդ վաշտի հայ զինվորները, տեղի տալով թուրքերի գրոհներին՝ հետեւում են ռուսների օրինակին: Զարմանալի եւ նախադեպը չունեցող երեւույթ էր: Դրոյի զինվորներն առանց հրամանի երբեք չէին նահանջել. «Դրօն,- վկայում է Մարտիրոսը,- վրայ էր հասել: Ցետ նահանջող կամաւորները, տեսնելով իրենց սիրելի հրամանատարին, կանգ էին առել:

Դրօն խառնիճաղանջ զօրքին կարգի էր բերել, յարձակուել թշնամու վրայ, վերականգնել դրութիւնը, յետ վերցրել ռուսների թողած գնդացիրները, կարգով նահանջել ու ամրացել էր նախկին դիրքերում՝ Զանգոկի բարձունքներում»[1]:

Իսկ Դրոյի վաշտապետերից բաշգառնեցի Ղազար Քոչարյանը, անդրադառնալով այդ կռվի մանրամասներին, նշում է. «Ճիշտ այդ միջոցին էր (նկատի ունի ռուս զինվորների փախուստի պահը - Հ.Գ.), որ ռուս հրամանատարը օգնութիւն կը խնդրէր Դրօյէն: Վերջինը, թէպէտ էլ ոչ մէկ հնարաւորութիւն չունէր օգնելու, բայց եւ այնպէս կիսավաշտ մը օգնութեան կուղարկէ, այսպէսով քաջալերելու համար ռուս զօրքը: Սակայն մինչ այդ, ռուսները արդէն նահանջել սկսած էին:

...Թշնամին երես առած ռուսներու անկարգապահ ընթացքէն, քայլ առ քայլ կը հետեւէր մեզ: Հազար ու մէկ տեսակ դժուարութիւններով, մեծ մասամբ Դրօյի շնորհիւ, կարելի եղաւ կանգնեցնելու զօրքը»[2]:

Ահա այս կռվից հետո Դրոն իր զորախմբի հրամանատարությունը հանձնում է գնդապետ Սամարցեւին ու իր մի խումբ մարտական զինակիցների հետ ուղեւորվում Երեւան:

Հայ կամավորական զորախմբերի մարտական գործողությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պատերազմի ողջ ընթացքում մասնակցելով բազմաթիվ մարտերի ու մշտապես գործելով ռազմաճակատի ամենաշիկացած կետերում՝ 2-րդ կամավորականը հայ կամավորական մյուս զորախմբերի համեմատ, ունեցել է ավելի քիչ մարտական կորուստներ:

Համաձայն կամավորական զորախմբերի մարտական գործունեությունները ներկայացնող ամփոփագրի՝ 1915 թ. նոյեմբերից մինչեւ

[1] «Հայրենիք» ամսագիր, 1934, հունվար, էջ 82:

[1] Նույն տեղում:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1941, թիւ 2, էջ 118:

1916 թ. հունվարը, Դրոյի 2-րդ կամավորականը ունեցել է՝ 51 զոհված, 104 վիրավոր եւ 44 ցրտահարված զինվորներ[1]:

Այս փաստը, անկասկած, խոսուն վկայություն է հրամանատարի՝ Դրոյի զորավարական բացառիկ օժտվածության, կռիվներում նրա դրսեւորած կենսունակ ու խելամիտ մարտավարության:

Հարկ է նշել, որ հայկական զորախմբերի կազմավորման եւ նրանց հետագա գործունեությանն առնչվող խնդիրների կենսագործման գործում Հայոց Ազգային Բյուրոյի եւ ցարական կառավարության միջեւ որոշակի ընդհանրությունների առկայության պայմաններում եղել են նաեւ խոր, ընդգծված հակասություններ:

1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Թիֆլիսում գումարված Հայոց Ազգային համախորհրդակցությունում կամավորական շարժմանը նվիված իր զեկույցում Հայոց Ազգային Բյուրոյի կամավորական զորախմբերի շտաբի պետ Նիկոլ Աղբալյանը, անդրադառնալով կամավորական զորախմբերի կազմավորման մանրամասներին ու ցարական կառավարության կողմից կամավորական զորախմբեր նկատմամբ դրսեւորած վերաբերմունքին՝ նշում է. «1915 թ. սեպտեմբերի վերջում կամավորական գնդերն այլեւս իբրեւ այդպիսիք գոյություն չունեին, նրանց մի մասը ցրվեց, զինապարտները լուծվեցին ռուսական զորքի մեջ իբրեւ սովորական զորամասեր: Ազգային Բյուրոյի եւ ցարական կառավարության մեջ կար բացարձակ հակադրություն, նույնիսկ թշնամանք: Մինչդեռ Հայոց Ազգային Բյուրոն աշխատում էր մեծացնել գնդերի թիվը, կառավարությունն ընդդիմանում եւ աշխատում էր եղածի ուժն ամեն տեսակ արգելքներով թուլացնել: Նա ընդառաջ չէր գնում գնդերի ամենատարրական, նույնիսկ տեխնիկական պահանջներին»[2]:

1916 թ. հայ կամավորական զրախմբեր գործուն աջկցությամբ ռուսական զորքերի կողմից Արեւմտյան Հայաստանի գրեթե ողջ տարածքը գրավելուց հետո, Կովկասի նոր փոխարքա Նիկոլայ Նիկոլաիչի օրոք ցարիզմի քաղաքական բառապաշարից ընդմիշտ անհետանում է «Հայաստանի ինքնավարություն» հասկացությունը:

Հայոց Ազգային Բյուրոյին ու հայ կամավորական զորախմբերի հրամանատարությանը դեռեւս հայտնի չէր Անտանտայի տերությունների միջեւ կնքված գաղտնի համաձայնագրի իրողությունը: 1916 թ. գարնանը Լոնդոնում եւ Պետերբուրգում կայացած բանակցություններում Անգլիան, Ֆրանսիան եւ Ռուսաստանը ստորագրել

[1] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 121, ց. 1, գ. 16, թ. 5:
[2] Բանբեր Հայաստանի Արխիվների, 1992, թիւ 1-2, էջ 79:

էին Թուրքիայի բաժանման գաղտնի համաձայնագիրը, ըստ որի հայերին խոստացած տարածքները պիտի բաժանվեին երկու մասի:

1. Էրզրումի, Վանի ու Տրապիզոնի նահանգները (վիլայեթ) ստանում էր Ռուսաստանը:

2. Սիրիան եւ Կիլիկիան մինչեւ Խարբերդ բաժին էր հասնելու Ֆրանսիային:

Հայության եւ Հայաստանի նկատմամբ Ռուսական կայսրության դրսեւորած քաղաքականության անաչառ վերլուծությունն ու եզրահանգումը մատնանշում է, որ ցարիզմը հասել էր իր նպատակին: Իրականացվել էր Գալիցինների ու Լոբանով-Ռոստովսկիների վաղեմի ծրագիրը՝ «Հայաստանը մնացել էր առանց հայերի», եւ դատարկված Հայաստանը, համաձայն Անտանտայի տերությունների միջեւ կնքված վերոհիշյալ գաղտնի համաձայնագրի, պիտի վերածվեր կազակական բնակավայրերի: Հայկական ինքնավար նահանգների փոխարեն ստեղծվելու էին Եփրատյան ու Տիգրիսյան կազակություններ: Լուծարվում են, ինչպես արդեն նշվել է, մինչ այդ գլխավորապես ռուսական զենքի հաղթանակներին ծառայած հայ կամավորական զորախմբերը, որոնք ռուս իշխանություններին այլեւս պետք չէին:

Թիֆլիսում կայացած համախորհրդակցությունում խոսելով կամավորական զորախմբերի լուծարման պատճառների մասին, Նիկոլ Աղբալյանը վկայակոչում է հետեւյալ ուշագրավ փաստարկները. «Կառավարության թշնամանքը դեպի հայ կամավորներն ուներ մի այլ հիմնական պատճառ. այդպիսի մի զինական ուժ որոշ բարոյական կշռով չէր կարող հաճելի լինել բռնակալության: Այդ ուժը նկատվում էր իբրեւ մի վտանգ ապագայի համար: Ահա այդ էր պատճառը, որ կամավորների կատարած մի շարք փայլուն գործողություններն անտեսվում էին պաշտոնական մարմինների կողմից, չէին հրատարակվում, մի բան, որ խոր կերպով վիրավորանք էր հասցնում թե՛ մարտիկներին եւ թե՛ առհասարակ հայերի ազգային զգացմունքներին»[1]:

Վերոհիշյալ Հայոց Ազգային համախորհրդակցության նիստերից մեկում ելույթ ունենալով եւ անդրադառնալով կամավորական խմբերի կազմավորման ու լուծարման եւ արեւմտահայության կոտորածների խնդիրներին, Դրոն ասում է. «...Ռուս կառավարությունը մեզ իրեն գործիք դարձրեց, եւ երբ մեր կարիքն անցավ, մեզ դեն շպրտեց: Մենք այնպես դժգոհ ենք Ազգային Բյուրոյից, որ մեզ կա-

[1] Նույն տեղում, էջ 84:

ռավարության գիրկը նետեց, որ վերջիվերջո մեր խմբերը լուծեց իբրեւ հեղափոխականների օջախներ: Պետք է մխիթարվենք, որ թեկուզ ուշ, հասկացանք կառավարության քաղաքականությունը մեր վերաբերմամբ: Որ թուրքահայերի կոտորած պետք է լիներ, այդ ինքը անկասկածելի էր համարում: Թուրքահայերը չէին կարող լոյալ մնալ»[1]:

Համաձայն Անտանտի տերությունների միջեւ կնքված համաձայնագրի՝ հայկական նահանգների ու հայ բնակչության նկատմամբ ձեւակերպվել է նաեւ ցարիզմի քաղաքականությունը:

1916 թ. հունիսի 14 (27) Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սազոնովը գրում է Կովկասի փոխարքա Վորոնցով Դաշկովին փոխարինած Նիկոլայ Նիկոլաիչին . «Հնարավոր է որոշ շրջանակում հայերին տրամադրել դպրոցական եւ եկեղեցուն գործելու ինքնուրույնություն, մայրենի լեզվից օգտվելու իրավունք: Կարելի է տրամադրել նաեւ քաղաքային ու գյուղական ինքնավարություն այն պայմանով, որ ընտրությունների ժամանակ հարգվի ազգաբնակչության տոկոսային հարաբերակցությունը: Ոչ քրիստոնյա ազգերի նկատմամբ պետք է կիրառել նույն սկզբունքներն այնքանով, որքանով թույլ կտան տեղական պայմաններն ու նրանց մշակութային զարգացման աստիճանը»[2]:

Պատասխան նամակում Կովկասի փոխարքա Նիկոլայ Նիկոլաիչը կտրականապես մերժում է Թուրքահայաստանի ինքնավարության գաղափարը, բայց դրա փոխարեն ընդունում է Սազոնովի տեսակետը, ըստ որի կարելի էր հայերին տրամադրել դպրոցական ու եկեղեցական ինքնուրույնություն, մայրենի լեզվից օգտվելու իրավունք: Ըստ փոխարքայի պնդման, այդ բոլորը կարելի է տրամադրել հայերին, եթե պաշտոնական գործառույթներում պահպանվի ռուսերեն լեզվի առաջնությունը[3]:

Այսինքն, համաձայն փոխարքա Նիկոլայ Նիկոլաիչի տեսակետի, եթե նախատեսվում էր հային տալ մայրենի լեզվից օգտվելու իրավունք, ուրեմն նրա համար ոչ թե հայոց լեզուն պիտի լիներ առաջնայինը, այլ ռուսերենը:

1916 թ. հունիսի 6-ին կազմվել է Թուրքիայից գրված տարածքները կառավարելու ծրագիրը, եւ գեներալ Պեչկովը նշանակվել է այդ տարածքում կազմավորվող նահանգի նահանգապետ[4]:

---

[1] Նույն տեղում:
[2] Раздел Азиатской Турции по секретным документам, Москва, 1924, стр. 42.
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 44:
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 48:

Հայության նկատմամբ նախորդ տարիների ցարիզմի դրսեւորած քաղաքականությունը ցույց է տալիս, որ այդ այդ ծրագրերը կարող էին կյանքի կոչվել, եթե տեղի չունենար փետրվարյան հեղափոխությունը: 1917 թ. փետրվարյան հեղափոխության հետեւանքով ու ցարիզմի տապալումով այդ ծրագիրը մնաց թղթի վրա ու չիրականացվեց:

Ցարիզմի քաղաքականությունից խորապես հիասթափված Դրոն թողնում է զինվորական ծառայությունը եւ տրվելով դառը վշտերին՝ թափառում Թիֆլիսում, Երեւանում, Իգդիրում եւ այլ վայրերում: Նա երբեք չհամաձայնվեց կրելու իրեն բազմիցս առաջարկված ռուսական սպայի ուսադիրները եւ մտնել բանակային ծառայության մեջ:

Ս. Վրացյանի վկայությամբ՝ Դրոն այդ ժամանակ առավելապես տրվել է ցոփ ու շվայտ կյանքի եւ հաճախակի «Ամբողջ գիշերներ լուսացնում էր թղթի սեղանի գլուխը կամ քէֆերի մէջ: Բայց ցաւը մնում էր ցաւ. չէր ամոքում: Ընկերների յորդորները չէին օգնում...»[1]:

Մի օր, երբ նրանք միասին հերթական անգամ այցելում են Իգդիր, Դրոն Ս. Վրացյանին առանց նախապես զգուշացնելու, տանում է մի անծանոթ տուն, ուր հավաքվել էին մեծ թվով հյուրերը եւ առատորեն զարդարված սեղանների շուրջը բոլորած, ինչ-որ արարողություն էին նշում: Հավաքվածներն ընդգծված ջերմությամբ են ընդունում Դրոյին ու Վրացյանին: Ճոխ խնջույքն ավարտելուն պես, հավաքվածները, որոնց թվում նաեւ Դրոն, մեծ խանդավառությամբ տարվում են թղթախաղով:

Դրոն, ընդգծված հաճույքով եւ նաեւ ջղայնությամբ ու աղմկոտ, մինչեւ լուսաբաց մասնակցել է թղթախաղին:

«Խաղացողները,-շարունակում է Ս. Վրացյանը,- աղմուկով սկսեցին հաշուել շահ ու զէնը: Դրոն տարել էր 3600 ռուբլի- ահարկու մի գումար այդ օրերի համար...

Նա բաժանեց թղթադրամները երեք մասի:

- Էս մէկը քեզ, Կարմիր Խաչի համար, եւ յանձնեց տանտիկնոջ, որ ՀՅԴ տեղական մասնաճիւղի նախագահն էր:

- Էս մէկն էլ քեզ Կազմակերպութեան համար, տուեց Թուխալ Եղոյին:

_ Էս մէկն էլ- դարձաւ ինձ- առ, կը տաս Ռոստոմին, նա գիտէ գործածելու ձեւը:

Եւ ձեռքերը կրծքին խաչաձեւած, խղճալի տեսք առնելով կատակեց.

---

[1] Վրացեան Ս., Սրրկածին Դրո, էջ 93:

-Էլ պրծաւ... Էս վերջինն է: Էլ ձեռքս թուղթ չեմ առնելու...»[1]:

Շուտով Դրոն հայտնվում է կապալառուի պաշտոնով եւ ստանձնում Կաղզվան-Կողբ զինվորական ճանապարհի շինարարության վարձակալման իրավունքը:

«Շնորհիվ իր լայն կապերի,-շարունակում է Ս. Վրացյանը,- դիւրութեամբ ստացաւ զինուորական ճանապարհի շինութեան կապալը Կաղզուան-Կողբ գծի վրայ եւ եռանդով գործի անցաւ-դրամ շահելու: Ըստ սովորութեան գործի դրեց իր գնդի մարտիկ տղաներից շատերին, որոնք մի կողմից զերծ մնացին բարոյական արատներից, որոնց ենթակայ են զորացումի ենթակաները»[2]:

Դրո մարդը զարմանալի առեղծվածային երեւույթ էր: Հազվագյուտ են դեպքերը, երբ նա որեւէ գործ ձեռնարկեր եւ հաջողություններ չհասներ: Իր համար այս նոր, բոլորովին անծանոթ բնագավառում դարձյալ դրսեւորվում են նրա կազմակերպչական անբասիր ընդունակությունները:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, էջ 94:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

1918 ԹՎԱԿԱՆԸ ...

3. 1. ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՑԻՆ ԿՈՐԳՈՒՍԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ, ԴՐՈՆ ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ, ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ՀՐՈՍԱԿԱԽՄԲԵՐԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ «ԽԱՂԱՂԵՑՈՒՄԸ»

Փետրվարյան հեղափոխությունից հետո իրավիճակը ոչ միայն Ռուսաստանում, այլեւ Կովկասի քաղաքական կյանքում եւ ռազմաճակատում կտրուկ կերպով փոխվում է:

Փետրվարյան հեղափոխության հետեւանքով Ռուսաստանի իշխանության ղեկն ստանձնած ժամանակավոր կառավարությունը հաստատապես տրամադրված էր շարունակել պատերազմը եւ դաշնակիցների համագործակցությամբ այն հասցնել հաղթական ավարտի: Ժամանակավոր կառավարության որոշմամբ լուծարվում են պետական կառավարման նախկին մարմինները, այդ թվում նաեւ Վորոնցով-Դաշկովի գլխավորած Կովկասի փոխարքայությունը եւ նրա փոխարեն 1917 թ. մարտի 9-ին Պետական Դումայի նախկին հինգ անդամների՝ ազգությամբ ռուս Վ. Խալամովի (նախագահ), Մ. Պապաջանյանի (հայ), Ա. Զխենկելի, եւ Կ. Աբաշիձեի (վրացիներ), Մ. Ջաֆարով (թուրք) կազմով հիմնվում է Անդրկովկասի հատուկ կոմիտե (Озаком):

Համաձայն տրված իրավունքների՝ Անդրկովկասի հատուկ կոմիտեն պիտի հանդես գար ժամանակավոր կառավարության անունից եւ գործեր հիմնականում ռուսական զորքերի ու հայ կամավորական զորախմբերի կողմից ազատագրված Արեւմտյան Հայաստանի տարածքում:Փոքր-ինչ առաջ ընկնելով նշենք, որ այդ նորաստեղծ հատուկկոմիտեն գործել է չափազանց թույլ եւ աչքի չընկնելով գրեթե ոչ մի կառուցողական, դրական գործերով՝ կարճատեւ ժամանակ անց լուծարվել է:

Պատերազմը շարունակելու նկատառումով ժամանակավոր կառավարության որոշմամբ Կովկասյան զինվորական օկրուգին փոխարինում է Կովկասյան ռազմաճակատը, որն իր գործունեությունը պիտի համաձայնացներ Կովկասում հաստատված նոր իշխանության՝ Անդրկովկասի հատուկ կոմիտեի (Озаком) հետ[1]:

Հայաստանի ու Հայկական հարցի նկատմամբ Ռուսաստանի ժամանակավոր կառավարության դիրքորոշումն ու ընդունած որո-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 31, թ. 24:

շումները որոշակի հավատ էին ներշնչել հայությանը, սակայն շատ շուտով Ռուսաստանի քաղաքական կյանքում կատարվում են այնպիսի կտրուկ ու շրջադարձային նշանակություն ունեցող իրադարձություններ ու փոփոխություններ, որոնք դառը հիասթափություն են պատճառում Հայաստանի պետականությունը վերականգնելու հույսեր փայփայող հայությանն ու ռուսական բանակում ծառայող հայ սպաներին ու զինվորներին:

Ճիշտ է, ժամանակավոր կառավարությունը ձգտում էր եւ հաստատակամ ծրագրել էր շարունակել պատերազմը եւ դաշնակիցների համագործակցությամբ այն հասցնել հաղթական ավարտի, սակայն Արեւմտյան ու Կովկասյան ռազմաճակատներում պատերազմական գործողությունները զարգանում են հակառակ ուղղվածությամբ: 1917 թ. ապրիլին Թիֆլիսում կայացած զինվորական խորհուրդների պատգամավորների Անդրկովկասի երկրամասային համագումարում կովկասյան բոլշեւիկները մերժում են պատերազմը շարունակելու ժամանակավոր կառավարության դիրքորոշումը:

1917 թ. հեկտեմբերի 25-ին բոլշեւիկները Տրոցկու եւ Լենինի առաջնորդությամբ Պետրոգրադում իրականացնում են պետական հեղաշրջում ու բռնազավթելով իշխանությունը՝ արմատապես փոխում են պատերազմի նկամամբ ժամանակավոր կառավարության որդեգրած ռազմավարությունը:

Մերժելով պատերազմը՝ իշխանությունը բռնազավթած խորհրդային կառավարությունը(ժողովրդական կոմիսարների խորհուրդ) 1917 թ. դեկտեմբերի սկզբներին հրահանգում է ռազմաճակատների հրամանատարներին՝ կապվել հակառակորդի հետ ու ներկայացնել զինադադար կնքելու առաջարկությունն ու պայմանները[1]:

Իհարկե, Ռուսաստանի, որը զուտ քանակական առումով ուներ ցամաքային ամենամեծ բանակը, դուրս գալը պատերազմից, խիստ շահավետ էր գրեթե պարտության շեմին հայտնված Գերմանիայի գլխավորած ռազմա-քաղաքական խմբավորման համար: Բնական է, որ Գերմանիայի գլխավորած Քառյակ միությունը պիտի սիրահոժարաբար ընդուներ իրենց համար փրկարար նշանակություն ունեցող Խորհրդային Ռուսաստանի ներկայացրած հաշտություն կնքելու առաջարկությունը:

1917 թ. դեկտեմբերին Բրեստ-Լիտովսկում սկսվում են բանակցությունները Քառյակ միության եւ Խորհրդային Ռուսաստանի մի-

[1] Տե՛ս Արտեմ Օհանջանյան, նշվ. աշխ., էջ 127:

ջեւ: Բանակցություններն ընթանում են երեք փուլերով եւ մշտապես քննարկվել է հայկական տարածքներին վերաբերող հարցը: Քառյակ միության ներկայացուցիչները քաջատեղյակ լինելով Ռուսաստանում տիրող աղետալի կացությանն ու բանակի քայքայման, բարոյալքման ու ռազմաճակատը լքելու տրամադրվածության իրողությանը՝ ծանրագույն պահանջներ են ներկայացնում Ռուսական կողմին: 1918 թ. փետրվարի 3-ին Խորհրդային Ռուսաստանը ներկայացնող պատվիրակությունը ընդունում է Քառյակ միության կողմից իրենց ներկայացրած բոլոր պահանջները: Համաձայն այդ պայմանագրի՝ Ռուսաստանը պարտավորվում է առավելագույնս ուշ շաբաթվա ընթացքում զորքերը դուրս բերել գրավյալ տարածքներից, զորացրել հայ զինվորներից կազմված զորախմբերը եւ Թուրքիայի անօրինությանը վերստին հանձնել Արեւմտյան Հայաստանը, Կարսի մարզն ու Սարիղամիշի շրջանը :

Իսկ Մվ պիտի պաշտպաներ Արեւմտյան Հայաստանի ազատագրված տարածքներն ու Մեծ Եղեռնից հետո Թուրք եւ քուրդ ջարդարարների սրից կոտորածներից փրկված հայության վերջին բեկորները:Զորքերը դուրս բերել գրավյալ տարածքներից ու ցրել հայկական ռազմական կազմավորումները միանշանակորեն հավասարազոր էր Արեւմտյան Հայաստանի կորստին:

1918 թ. փետրվարի 10-ին, Տրոցկին Բրեստ-Լիտովսկում Գերմանիայի գլխավորած ռազմա-քաղաքական խմբավորման եւ Ռուսաստանի խորհրդային իշխանության ներկայացուցիչների մասնակցությամբ ընթացող բանակցությունների ժամանակ ժողովրդական կոմիսարների խորհրդի կողմից հայտարարում է. «... սրանով տեղեկացնում ենք մեզ հետ պատերազմող, դաշնակից եւ չեզոք երկրների կառավարություններին եւ ժողովուրդներին, որ Ռուսաստանը, հրաժարվելով անեքսիոնիստական պայմանագիր ստորագրելուց, իր կողմից ավարված է համարում պատերազմական դրությունը Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Թուրքիայի եւ Բուլղարիայի հետ: Միաժամանակ ռուսական զորամասերին բոլոր գծերում լիակատար զորացրման հրաման է տրվում»[1]:

Անդրկովկասի քաղաքական ուժերը մերժելով Խորհրդային Ռուսաստանի քաղաքականությունն ու Բրեստ-Լիտովսկի պայմանագրով իրենց պարտադրված պայմանները՝ 1917 թ. նոյեմբերին ստեղծում են երկրամասային նոր իշխանություն՝ Անդրկովկասի կոմիսարիատ,

[1] Նույն տեղում, էջ128:

իսկ 1918 թ. փետրվարի 10-ին Անդրկովկասյան Սեյմ(օրենսդիր գերագույն մարմին՝խորհրդարան):

Անդրկովկասյան Սեյմում ընդգրկված էին Անդրկովկասի քաղաքական կուսակցությունները(32 վրացի մենշեւիկներ, 30 թուրք մուսաֆաթիստներ, 27 դաշնակցականներ եւ 19 պատգամավոր սոցիալիստ-հեղափոխական կուսացությունից):

Սեյմի նախագահ է ընտրվում Ն. Չխեիձեն:

Նորընտիր Սեյմի որոշմամբ ձեւավորվում է Անդրկովկասյան կառավարությունը, որի կազմում ընդգրկվում են հայ, վրաց եւ կովկասյան թուրք-թաթարների ազգային-քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները: Անդրկովկասյան կառավարությունում գերիշխող դիրք են ունեցել վրաց մենշեւիկները, որոնց ներկայացուցիներից Ե. Գեգեչկորին ստանձնում է վարչապետի, Ա. Չխենկելին՝ արտաքին գործերի, Գ. Գեորգաձեն՝ ռազմական, Ն. Ռամաշվիլին՝ ներքին գործերի նախարարի պաշտոնները: Վրացիներին էր պատկանում նաեւ կապի ու հաղորդակցության նախարարությունը, որի ենթակայության տակ էր գտնվում հաղորդակցության միջոցները՝ երկաթուղին ու մնացած բոլոր տրանսպորտային այլ միջոցները: Իսկ դա նշանակում էր, որ ի տարբերություն հայերի, որոնք մեծ դժվարությամբ էին կարողանում օգտվել երկաթուղու եւ փոխադրամիջոցների ծառայություններից, վրացիները առանց որեւէ լուրջ խոչընդոտի կարող էին Վրաստան տեղափոխել ռուսական զորքերի թողած պահեստներում ամբարված զենքն ու զինամթերքը, հանդերձանքը եւ այլն:

Ռուսաստանում իշխանությունը բռնազավթած բոլշեւիկյան կառավարությունը չճանաչեց Անդրկովկասյան կոմիսարիատը(կառավարություն): Իր հերթին Անդրկովկասյան կառավարությունը թեպետ նույնպես չէր ճանաչում խորհրդային իշխանությունը եւ գործում էր անկախ, բայց դեռեւս չէր հայտարարել իր անկախությունն ու փաստորեն մասն էր կազմում Ռուսաստանի:

Պատերազմի նկատմամբ խորհրդային իշխանության որդեգրած ռազմավարությունն ու հնչեցրած կոչերն ու հայտարարությունները քաոսային, անկառավարելի իրավիճակ են ստեղծում բանակում, այդ թվում նաեւ Կովկասյան ճակատում:

Ռուսաստանում տիրող սոցիալ-տնտեսական, քաղաքական ծայրահեղ անմխիթար իրավիճակը պարարտ հող է ստեղծում հեղափոխական տրամադրությունների առավելագույնս ներթափանցման ու արմատավորման համար ոչ միայն կայսրության բազմազգ բնակչության մեջ, այլեւ բանակում եւ իհարկե նաեւ Կովկասյան ռազմաճակատի զորամասերում:

Իրենց քարոզչական զինանոցում ունենալով 1917 թ. հոկտեմբերի 25-ին տեղի ունեցած համառուսաստանյան խորհուրդների 2-րդ համագումարի կողմից ընդունած «Խաղաղություն եւ հող» դեկրետները ու կորչի պատերազմը, կեցցե խաղաղությունը կարգախոսները, բոլշեւիկ քարոզիչները թափանցելով բանակի շարքերը՝ մեծապես նպաստում են բանակի, բնականաբար նաեւ ռազմաճակատների քայքայմանն ու մերկացմանը:

Ցարիզմի տապալման ու հատկապես արեւմտյան ճակատում գերմանական ու ավստրո-հունգարական բանակների կողմից կրած պարտությունների հետեւանքով ռուսական զորքերի շարքերում արդեն նկատվում էր դասալքությունը, սակայն դա, կարելի է ասել, դեռեւս չարիքների փոքրագույնն էր: Հոկտեմբերյան հեղաշրջումը բազմամապատկեց կռիվները շարունակելու նկատմամբ ռուս զինվորներին համակած հոռետեսություն: Ռուսական զորաբանակներում նախկին մարտունակության եւ ռազմական կարգապահության փոխարեն արդեն նկատվում էին բարոյալքության ու ռազմաճակատը կազմալուծելու բացահայտ նշաններ:

Տեղիք տալով բոլշեւիկների քարոզչությանը՝ զինվորները այլեւս չէին ենթարկվում իրենց հրամանատարներին ու հրաժարվում էին կատարել նրանց հրամանները: Հայրենիք վերադառնալու ցանկությամբ համակված ռուս զինվորները զանգվածաբար լքում էին ճակատն ու հեռանում Ռուսաստան[1]:

Բնականաբար, նույն իրավիճակն էր տիրում նաեւ Կովկասյան ռազմաճակատում:

Ներկայացնելով այդ օրերին Կովկասյան ճակատում տիրող իրավիճակը՝ վավերագրերից մեկը ցավով արձանագրում է, որ ռազմաճակատից ռուսական զորքերի զանգվածաբար հեռանալու հետեւանքով՝ անօրինակ հերոսականության, տոկունության, անլուր տառապանքների գնով ձեռք բերած նվաճումները հավասարվեցին զրոյի ու անպատմելի աղքատության:

Շարունակելով ռազմաճակատում տիրող ծանրագույն կացության նկարագրությունը՝ վավերագիրը իրավացիորեն նշում է. « Առաջ եկավ թուրքերի դեմ հայերի միայնակ պայքարելու ահավոր խնդիրը, քանի որ Անդրկովկասում վրացիներից ու թաթարներից

[1] Տե՛ս նույն տեղում::

սպասվելիք հույսերը շատ քիչ էին, ինչը հետագայում հստակորեն ապացուցեց ժամանակը:

Վրացական զինված ուժերը կենտրոնացված էին Բաթումիում ու նրա շրջակայքում: Մահմեդականությունը փոքր-ինչ ավելի կազմակերպված էր: Հավաքվել ու կենտրոնացվել էին հսկայական քանակությամբ զինված հրոսակախմբեր, որոնք ձեռք- ձեռքի տված թուրքական հարձակվող զորքերին, մեկնում էին ոչ միայն ճակատ, այլեւ հարձակվում էին հայերի բնակավայրերի, թիկունքի ու հաղորդակցության ուղիների վրա»[1]:

Տվյալ ժամանակահատվածում դեպքերի նման կտրուկ շրջադարձը դժվարին կացություն էր ստեղծել նաեւ ռուսական հրամանատարության համար եւ ստեղծված ծանր մթնոլորտն անհրաժեշտաբար թելադրում էր դիմել վճռական միջոցների: Ռազմաճակատի մերկացումը փաստորեն իրական հնարավորություն էր ընձեռում թուրքերին, համալրելով բանակի մարտական կազմը, վերստին զավթել ոչ միայն Արեւմտյան Հայաստանը, այլեւ Անդրկովկասը եւ օգտվելով ռուսական զորքերի բացակայությունից՝ առանց մեծ ջանքերի, իրականացնել պանթուրքիզմի ծրագիրը, այն է՝ գրավել Բաքուն եւ դուրս գալ Հյուսիսային Կովկաս, ապա մինչեւ Բաշկիրիա, Թաթարիա ու Միջին Ասիա: Ռազմաճակատը կայունացնելու համար անհրաժեշտ էին միմիայն կարգապահ ռազմական միավորումներ, իսկ այդպիսիք կարող էին լինել հայկական մարտական ուժերը, որոնք շահագրգռված էին պաշտպանելու Արեւմտահայաստանն ու Անդրկովկասը:

Այդ օրերին Կովկասյան ռազմաճակատի զանազան ուղղություններից Թիֆլիս (այստեղ էր գտնվում Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարության ռազմակայանը- Հ.Գ.) առաքվող հեռագրերում զորամիավորումների հրամանատարությունը, ներկայացնելով զինվորների զանգվածային դասալքության հետեւանքով ճակատում ստեղծված անմխիթար ու անկառավարելի իրավիճակը, գլխավոր հրամանատարությունից խնդրում էր ռազմաճակատ ուղարկել ազգային, գլխավորապես հայկական զորամասեր, առանց որոնց ստեղծված դժվարին իրավիճակում անհնարին էր կայունացնել եւ պաշտպանել ռազմաճակատի առկա բնագծերը, որոնք Սեւ ծովից ձգվում էին մինչեւ Պարսկաստան[2]:

Դրոն այդ օրերին գտնվելով Երեւանում՝ իր մարտական զինակիցներ Մարտիրոսի, Մեծ Ղազարի,Յապոնի, Խոսրով Եղիազարյանի

[1] ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 15, թ. 8:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 33, թ. 10-13:

եւ այլոց համագործակցությամբ գործելով Երեւանի նահանգում, աշխատում էին խոչընդոտել թուրք եւ քուրդ հրոսակախմբերի զինյալ ելույթներն ու պաշտպանել հայ բնակչությանը այդ հրոսակախմբերի հարձակումներից:

Ռուսաստանի քաղաքական կյանքում տեղի ունեցող արմատական տեղաշարժերի հետեւանքով Կովկասում ու ռազմաճակատում կատարվող դեպքերի թելադրանքով՝ նա շտապում է Թիֆլիս եւ հայտնվում ծավալվող դեպքերի կիզակետում:

Ռազմաճակատի կայունացման եւ ամրապնդման միակ երաշխիքը ազգային զորամասերի առկայությունն էր: Հայկական զորամասերի կազմակերպման մասին պաշտոնական որոշումն ընդունվել է 1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Թիֆլիսում կայացած Հայոց ազգային համախորհրդակցությունում(համագումար), չնայած ի դեմս հայկական կամավորական զորախմբերի, այդ զորամասերի կազմակերպման հիմքերը, փաստորեն, դրվել էին դեռեւս կամավորական շարժման սկզբնական շրջանում:

Ի դեպ, այդ համախորհրդակցությանը, որին ներկա էին «Հայ հասարակության գրեթե բոլոր խավերը՝ քաղաքական կուսակցությունների, մտավորականության, զինվորականության, հոգեւոր դասի ներկայացուցիչներ, այլ գործիչներ, հյուրեր, բացառությամբ հայ բոլշեւիկների, որոնք բոյկոտեցին խորհրդակցությունը, եւ այդ ժամանակ մեծ ազդեցություն չունեին քաղաքական կյանքում», մասնակցել են, որպես պատգամավորներ նաեւ կամավորական զորախմբերի հրամանատարներից Անդրանիկն ու Դրոն[1]:

Թիֆլիսյան համախորհրդակցության աշխատանքների լուսաբանմանը վերաբերվող արձանագրություններից մեկում կարդում ենք. «Նախագահն (այդ օրը նիստը վարել է Նիկոլ Աղբալյանը- Հ.Գ.) ընդհատելով խոսողներին՝ առաջարկում է ողջունել կամավորական գործի այն հերոսներին, որ հիմա նստած են մեր շարքերում (բուռն ծափեր):

Անդրանիկն ու Դրոն ոտքի են կանգնում եւ շնորհակալություն հայտնում (բուռն, երկարատեւ ծափահարություններ)»[2]:

Սեպտեմբերի 26-ին տեղի ունեցած հերթական նիստերից մեկում համաժողովը անդրադառնում է նաեւ հայկական զորամասերի կազմակերպման հարցին եւ ի թիվս մի շարք որոշումների, ընդունում է նաեւ հետեւյալը.

[1] Տե՛ս Բանբեր Հայաստանի արխիվների, 1992, թիւ 1-2, էջ 5:
[2] Նույն տեղում, էջ 81:

«Ճակատի ամրացումը:

Վերջին ժամանակներում զորքի մեջ նկատվող կազմալուծման նկատմամբ ժողովը գտնում է անհրաժեշտ կռվել դասալքության դեմ ընդհանրապես եւ հայ զինվորների մեջ մասնավորապես: Ներկա քաղաքական մոմենտը անհրաժեշտ է դարձնում հայկական զորամասերի կազմակերպումը, այդ զորամասերին հայկական շրջանները պետք է ցույց տան ամեն աջակցություն: Միեւնույն ժամանակ, ի նկատի ունենալով սերտ կապը ճակատի եւ թիկունքի միջեւ, վերջինում անհրաժեշտ է կազմակերպել ժողովրդական միլիցիա, խոսքի ամենալայն իմաստով»[1]:

Համաժողովը հայ ականավոր գրող եւ ազգային-քաղաքական գործիչ Ավետիս Ահարոնյանի նախագահությամբ ընտրում է 15 անդամներից բաղկացած Արեւելահայ Ազգային Խորհուրդ, որը մինչեւ 1918 թ. մայիսի 28-ը, այսինքն մինչեւ Հայաստանի Հանրապետության հռչակումը, իր մասնաճյուղերով(Բաքվի Ազգային Խորհուրդ՝ նախագահ Աբ. Գյուլխանդանյան եւ Երեւանի Ազգային Խորհուրդ՝ նախագահ Արամ Մանուկյան) հանդիսանում էր հայությանը ղեկավարող գլխավոր մարմինը:

Նորընտիր Հայոց Ազգային Խորհուրդ ուներ տարբեր բաժիններ, այդ թվում նաեւ զինվորական բաժին, որի գործառույթի ու պարտականությունների մեջ առավելապես մտնում էին զորամասերի կազմավորման, զինման եւ հրամանատարական կազմի ընտրության հետ կապված խնդիրները:

Առաջնորդվելով պատմական տվյալ ժամանակահատվածի հրամայականով եւ Թիֆլիսում կայացած համաժողովում ընդունած հայկական զորամասեր կազմակերպելու որոշմամբ՝ նորընտիր Հայոց Ազգային Խորհուրդը հայկական զորամասեր կազմակերպելու թույլտվության նպատակով դիմում է Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարությանը եւ նրա միջոցով նաեւ Ռուսաստանի Ժամանակավոր կառավարությանը:

Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար գեներալ Լեբեդինսկին սթափ գնահատելով իր գլխավորած ճակատում ստեղծված տագնապալի իրավիճակը՝ շատ արագ արձագանքում է Հայոց Ազգային Խորհրդի կողմից իրեն ներկայացրած դիմումին:

Այս կապակցությամբ վերոհիշյալ վերագրությունում նշվում է. «Նկատի ունենալով, որ Կովկասյան ռազմաճակատում մինչ այժմ

[1] Նույն տեղում, էջ 142:

գործող զորամասերի մեջ հայկական գումարտակները (նկատի ունի հայ կամավորական զորախմբերը ցրելուց հետո կազմավորված հայկական վեց գումարտակները-Հ. Գ.) լավագույնն են եւ օժտված հրաշալի մարտական կարողություններով ու կազմակերպվածությամբ, Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար գեներալ Լեբեդինսկին 1917 թ. սեպտեմբերին դիմեց գլխավոր հրամանատարությանը, պահանջելով թույլատրել կազմավորել հայկական երկրորդ հրաձգային բրիգադ»[1]:

Տիրապետող իրավիճակում այլընտրանք գոյություն չուներ:

Կերենսկու գլխավորած Ժամանակավոր կառավարությունը ռազմաճակատի տիրող տագնապալի իրավիճակի թելադրանքով համոզվում է, որ հայ կամավորական զորախմբերի աջակցությամբ ռուսական զորքերի նվաճած տարածքները թուրքական զորքերի հարձակումներից կարելի էր ապահովել միայն ազգային զորամասերի ուժերով: Իսկ ռազմաճակատում ծավալվող դեպքերն աներկբա մատնանշում էին, որ ամենահուսալին կարող էր լինել միայն հայկական ազգային զորամասերը:

Հիմք ունենալով այդ հանգամանքը՝ գլխավոր հրամանատարության թույլտվությամբ՝ 1917 թ. նոյեմբերին հայկական երկու հրաձգային բրիգադները միավորվում են Հայկական հրաձգային կորպուսի (հետագայում՝ առանձնակի) կազմում»[2]:

Ժամանակավոր կառավարության թույլտվությամբ Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությանը արտոնվում է կազմավորել ազգային զորամիավորումներ, որոնց թվում նաեւ հայկական երկու զորամասեր: Նախատեսվում էր կազմավորել հայկական երկու զորամիավորում: Առաջին զորամիավորումը՝ 60.000 թվակազմով բանակային կորպուսը պիտի կազմավորվեր ի հաշիվ արեւմտյան ռազմաճակատում մարտնչող ավելի քան 200.000 հայ զինվորների եւ հայկական կամավորական խմբերի:

Երկրորդ զորամիավորումը՝ Անդրանիկի գլխավորությամբ բացառապես արեւմտահայերից կազմված աշխարհազորային դիվիզիան էր՝ 30.000 թվակազմով:

Այդ օրերին ստեղծվում է նաեւ Հայկական Զինվորական Խորհուրդ, որի պարտականությունն էր հայկական զորամասերի կազմավորումն ու նրանց գործունեության համադրումը: Զինվորական խորհուրդը, որպես հայկական զորամասերի իրավական ներկա-

[1] ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 15, թ. 8:
[2] Նույն տեղում:

յացուցչություն, ճանաչվեց Ռուսաստանի ժամանակավոր կառավարության եւ Անդրկովկասի Կոմիսարիատի կողմից:

Դժբախտաբար, ծրագրած այդ բոլոր միջոցառումները դառնում են անիրականալի, իսկ դժվարագույն պայմաններում արդեն կյանքի կոչված հայանպաստ գործերի արդյունքը՝ ապարդյուն:

Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո տապալվում է հայկական զորամիավորումների կազմավորման գործը: Համաձայն Ազգային Խորհրդի եւ ժամանակավոր կառավարության միջեւ կայացած համաձայնության, Արեւմտյան ռազմաճակատից Կովկաս ժամանող 50.000 հայ զինվորները Ռուսաստանում բռնկված քաղաքացիական կռիվների, ճանապարհների շրջափակման պատճառներով չկարողացան տեղ հասնել:

Հայրենիք վերադարձող հայ զինվորների մեծ մասը քաղաքացիական կռիվների օրերին Կարմիր բանակի հայազգի հրամանատարների կոչով՝ համալրելով նրանց իսկ գլխավորած զորամասերը Ռուսաստանի անծայրածիր տափաստաններում մարտնչում էին հանուն Խորհրդային իշխանության հաղթանակի: Իսկ նույն ժամանակամիջոցում եղեռնի ահավոր սարսափներն ապրած, հայրենիքի մեծագույն մասը կորցրած, սովի, ցրտի, տիֆի ու համաճարակի ճիրաններում տառապող հայությունը խմբված Արարատյան աշխարհում՝ օրհասական պայքար էր մղում իր գոյությունը պահպանելու համար:

Կարմիր հոկտեմբերի շնորհիվ տապալվեցին նաեւ հայկական ազգային զորամիավորումներ ստեղծելու իրական հնարավորությունները: Կովկասյան ռազմաճակատի հրամանատար գեներալ Լերեդինսկու համաձայնությամբ, այդ ճգնաժամային օրերին, հայ ժողովրդի գոյապայքարը առաջնորդող միակ փաստական ուժը՝ Հայոց Ազգային Խորհուրդը, կարողացավ կազմել միայն 16000-18000-անոց բանակային մեկ կորպուս:

Հայոց Ազգային Խորհուրդի առաջարկությամբ՝ Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը հայկական կորպուսի հրամանատար է նշանակում հանրահայտ զորահրամանատար, ցարական բանակի բարձրաստիճան կադրային սպա, գեներալ Թովմաս Հովհաննեսի (Իվան) Նազարբեկովին: Ուշագրավ է եւ ավելի քան անհասկանալի, որ ոչ Հայոց Ազգային Խորհուրդը եւ ոչ էլ Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը այդ նշանակումը վաղօրոք չէին համաձայնացրել գեներալ Թ. Նազարբեկովի հետ: Նրան, հայկական կորպուսի հրամանատարի պաշտոնում նշանակելու իրողությունը հայտնել են փոքր-ինչ ավել ուշ:

Գեներալ Թ. Նազարբեկովի հավաստմամբ՝ «1917 թ. հոկտեմբերին գտնվելով Վանա լճի արեւմտյան ափին ընկած Քարմանգլու գյուղում, որտեղ Կովկասյան 2-րդ հրաձգային դիվիզիայի շտաբն էր (նա այդ ժամանակ այդ դիվիզիայի հրամանատարն էր-Հ. Գ.), ստանում եմ հետեւյալ հեռագիրը. «Սպասում ենք Ձեր գալստյանը՝ կազմավորելու հայկական կորպուս: Մ. Պապաջանով*»»[1]:

Թիֆլիսից ստացած հեռագիրը խիստ զարմացրել է գեներալ Թ. Նազարբեկովին, քանի որ նա մինչ այդ որեւէ տեղեկություն չի ունեցել կազմավորվող ազգային զորամասերի ու այդ թվում հայկական կորպուսի մասին:

«Ես,-գրում է գեներալ Թ. Նազարբեկովը,-հեռագրով պատասխանեցի Պապաջանովին, որ նպատակադրվել եմ հոկտեմբերի վերջերին վերցնել արձակուրդ: Քանի որ ողջ պատերազմի ընթացքում ոչ մի անգամ չեմ օգտվել արձակուրդ գնալու իրավունքից, համոզված եմ, որ ինձ չեն մերժի եւ ես կգամ Թիֆլիս:Պապաջանովի հեռագրից հետո, Թիֆլիս արձակուրդ գնալու հարցով զեկուցագիր ուղարկեցի կորպուս: Շուտով կորպուսի շտաբից ստացա թույլտվություն եւ եկա»[2]:

Գեներալ Թ. Նազարբեկովը մի քանի օր անց գալիս է Թիֆլիս ու անմիջապես ներկայանում Հայոց Ազգային Խորհուրդին:

«Հայոց Ազգային Խորհուրդը,- գրում է գեներալ Թ. Նազարբեկովը,-հաստատեց ինձ կորպուսի հրամանատար ընտրելու զինվորական բաժանմունքի որոշումը: Երբ ինձ հայտնեցին այդ մասին, ես ներկայացա Ազգային Խորհուրդի նիստին եւ շնորհակալություն հայտնեցի նրանց այդ ընտրության ու ինձ այսպիսի պատվի արժանացնելու համար »[3]:

Հայոց Ազգային Խորհուրդ այցելելիս գեներալը հանդիպում է նրա նախագահ Ավետիս Ահարոնյանին, ապա նաեւ զինվորական բաժանմունքի նախագահ կապիտան Արսեն Շահամազյանին(հետագայում գնդապետ: Նրա գլխավորությամբ 1919 թ. աշնանը զանգեզուրյան մարտական ուժերը ջախջախում են Զանգեզուր ներխուժած գեներալ Շիլինսկու գլխավորած ազերի 15000-ոց բանակն ու Հաջի Սամլուի քրդական հրոսակախմբերին-Հ.Գ.), որի պատմածից տեղեկանում է, որ իր նշանակումը Հայոց Ազգային Խորհրդի անդամների

*Պապաջանով Միքայել, հայ քաղաքական եւ հասարակական գործիչ, կադետ: Պետական Դումայի 4-րդ նստաշրջանի անդամ, , իսկ 1917 թ. Օзаком-ի անդամ:

[1] Բանբեր Հայաստանի արխիվների, 1992, թիւ 3, էջ 37:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, էջ 39:

կողմից ընդունվել է ոչ թե միանշանակորեն, այլ որոշակի տարաձայնությամբ:

Պարզվում է, որ Ազգային Խորհրդի անդամներից մի քանիսը առաջարկել են, որ Հայկական կորպուսի հրամանատարի պաշտոնում ընտրեն որ թե գեներալ Թովմաս Նազարբեկովին, այլ գեներալ Միքայել Արեշևին: Բարեբախտաբար զինվորական բաժանմունքը մերժել է այդ առաջարկությունը[1]:

Հայ-Թուրքական պատերազմի մանրամասների ուսումնասիրությունն աներկբա մատնանշում է, որ հայկական կորպուսի հրամանատար, գեներալ Թ. Նազարբեկյանի հրամանով Անդրանիկից հետո ստանձնելով երկրապահ ռազմաճակատի հրամանատարությունը, պարտվողական հոգեբանությամբ համակված գեներալ Միքայել Արեշևը (Մ. Արեշյան) առավելապես աչքի է ընկնել խուճապահարությամբ, անվճռականությամբ ու մարտեր վարելու անընդունակությամբ:

1917 թ. դեկտեմբերին Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար գեներալ Լեբեդինսկու թիւ 136 հրամանի համաձայն հիմք դրվեց հայկական կորպուսի կազմավորմանը:

Հայկական նորաստեղծ զորամիավորման միջուկն էին կազմում 1-ին աշխարհամարտի կռիվների բովով անցած, հրաշալի մարտական կոփվածք եւ որակներ ունեցող հայ կամավորական զորախմբերի եւ ինքնապաշտպանական մարտերի փորձառու հրամանատարներն ու զինվորները:

Հայոց Ազգային Խորհրդի եւ Կովկասյան ռազմաճակատի հրամանատարության փոխհամաձայնությամբ Հայկական կորպուսի զինվորական կոմիսարի պաշտոնը վստահվում է Դրոյին:

Ցարական նահանգապետի, գեներալի ու բարձրաստիճան պաշտոնյաների ահաբեկիչը, հայ-Թուրքական ընդհարումներում Բաքվի, Կոտայքի, Երեւան քաղաքի, Դարալագյազի, Լեռնային Նախիջեւանի եւ Զանգեզուրի ինքնապաշտպանական մարտերի ամենաերիտասարդ խմբապետը եւ ապա կամավորական շարժման ընթացքում զորահրամանատարական փայլուն կարողություններ ու դրսեւորած 33-ամյա Դրոն գեներալ Թովմաս Նազարբեկյանից հետո փաստորեն առաջին դեմքն էր հայկական նորաստեղծ զորամիավորումում:

Դրոյին բնութագրելիս ուշագրավ ընդհանրացում է կատարում Ս. Վրացյանը՝ նշելով. «Դաշնակցական ահաբեկիչ Դրոն դարձաւ Քարիւղի եւ շաքարի վաճառական՝ Սուրէն Էֆենտի: Սուրէն Էֆէնտի եղաւ Կամաւորական գնդի հրամանատար: Գնդի հրամանատարը փոխուեց խճուղի չինող կապալառուի: Կապալառուն դարձաւ զինուորական կոմիսար, փաստօրէն զինուորական գերագոյն պետ Արարատեան Աշխարհի»[1]:

Դրոյին՝ հայկական զորքերի զինվորական կոմիսար նշանակելու կապակցությամբ ուշագրավ մանրամասներ է հաղորդում Հայ Զինվորական Խորհուրդի անդամ Թադեւ Պետրոսյանը:

«... Ըստ յեղափոխութեան շրջանի պահանջին, Հայ Զինուորական Խորհուրդը հրապարակ բերեց հայկական ուժերի գլխաւոր կոմիսարի հարցը: Այդ առթիւ Արամեանցի շէնքի մէջ, որ Հայ Զին. Խորհրդի շտաբն էր, կայացաւ խառն նիստ, որին ներկայ էին Հայ Ազգային Խորհրդի կողմից Ռուբէն Տէր-Մինասեանը, Լեւոն Աթաբէկեանը եւ Կորիւն Ղազարեանը, իսկ Անդրկովկասի կառավարութեան կողմից՝ Մ.Պապաջանեանը եւ Պարոյր Լեւոնեանը, ինչպէս եւ Հայ Զին. Խորհրդի դիւանը յանձին կապիտան Արսէն Շահմազեանի եւ պարուչիկներ Գագա Տէր-Օհանեանի եւ տողերիս գրող Թադէոս Պետրոսեանի:

... Հայ Զինուորական Խորհրդի կողմից կոմիսարի թեկնածու առաջարկուեց Դրօն: Ժողովականները պաշտպանեցին այդ առաջարկը...»[2]:

Զինվորական Խորհրդի որոշումը որպեսզի իրական ուժ եւ արժեք ստանար անհրաժեշտ էր, որ այն հավանության արժանանար Ազգային Խորհրդի եւ Հայկական բանակային կորպուսի ընդհանուր զորահրամանատար գեներալ Թ. Նազարբեկյանի կողմից:

«Մեր,- պատմում է Թ. Պետրոսյանը,- առաջին տեսակցութիւնը եղաւ զօրաւար Թ. Նազարբեկեանի հետ: Հերոս զօրավարը անհուն գոհունակութեամբ ընդունեց Դրօյի ընդհանուր զինուորական պաշտօնը: Անդրկովկասի կառավարութեան Դանսկոյը եւ իր օգնական Պարոյր Լեւոնեանը եւ որեւէ առարկութիւն չարին Դրօյի նոր պաշտօնի դէմ:

... Հայոց Ազգային Խորհուրդը եւս ողջունեց Դրօյի մասին եղած որոշումը:

Օրեր առաջ Հայ Զինուորական Խորհուրդը դիմած էր նաեւ Արամին, որ իր կարծիքը յայտնէր այդ մասին: Արամը հեռագրով դիմած էր Հայոց Ազգային Խորհրդին՝ խնդրելով, որ նա ուժ տայ հերոս Դրօյի թեկնածութեան»[3]:

---

[1] Տե՛ս նույն տեղում:

[1] Վրացեան Ս., Մրրկածին Դրոն, էջ 95:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1956, թիւ 10, էջ 24:
[3] Նույն տեղում, էջ 24-25:

Եվ այդչափ պատասխանատու պաշտոնը նրան վստահելը պատահական չէր, այն համակողմանիորեն հաշվարկված էր ու մտածված, ինչն ակնառու կերպով ապացուցեց ժամանակը:

«Ազգային Խորհրդի, - գրում է Ս. Վրացյանը,- զինուորական մասի վարիչն էր Մոսկուայի Հայկական Կոմիտէի նախագահ՝ Ստեփան Մամիկոնեանը՝ մի լրջամիտ եւ պատուական հայ, օգնական ունենալով Ռուբէն Տէր-Մինասեանին: Թէ Վարիչը եւ թէ օգնականը չունէին պահանջուած ծանօթութիւնը բանակի գործերում եւ հեղինակութիւնը զինուորականութեան աչքին, այդ պատճառով երբեմն բարդութիւններ էին ստեղծում, մանաւանդ Անդրանիկի եւ իր կողմնակիցների եւ Ազգային Խորհրդի վարիչների միջեւ: Դրօն հակակշռող ուժ էր, իբրեւ վստահութիւն ու համակրանք վայելող անձնաւորութիւն: Հակառակ իր տաքարիւն բնաւորութեան նա զարմանալի նրբամիտ վերաբերմունք էր ցոյց տալիս եւ դիւրութեամբ գտնում էր ձեւը եւ միջոցը մարդկանց յուզումները հանդարտեցնելու: Մանաւանդ, զինուորականները նրան յարգում եւ սիրում էին: Իր այդ յատկութիւնների շնորհիւ Անդրկովկասի բարձր իշխանութիւնը Դրօյին նշանակեց զինուորական կոմիսար»[1]:

Քանի որ արդեն ընտրվել էին հայկական կորպուսի հրամանատարը եւ զինվորական կոմիսարը՝ գեներալ Թ. Նազարբեկյանն ու Դրոն, ուստի անհրաժեշտ էր ձեռնամուխ լինել կազմավորել կորպուսը ու ընտրել նրա կազմում ընդգրկվող զորագնդերի հրամանատարական կազմը:

«Դժվար էր գտնել,-խոստովանում է գեներալ Թ. Նազարբեկյանը,- զորամասերի համար լավ հրամանատարներ, թեպետ զանկացողները քիչ չէին:

...Թիֆլիս ժամանեց Դրոն: Հայկական ազգային ժողովը նրան նշանակել էր կորպուսի կոմիսար:

Մի քանի օր անց հավաքվեց հանձնախումբը, որը բաղկացած էր զինվորական բաժանմունքի անդամներից (նկատի ունի Ազգային Խորհրդի զինվորական բաժինը-Հ. Գ.): Դրոյին ու ինձ էր հանձնարարված կորպուսի բարձրաստիճան դեմքերի ընտրությունը»[2]:

Ճիշտ է, հրամանատարների ընտրության հարցում գեներալ Թ. Նազարբեկյանի ու Դրոյի միջեւ եղել են որոշակի տարաձայնություններ, այնուամենայնիվ, կորպուսի զինվորական ծառայությունների պետերի ու զորամասերի հրամանատարների ու սպայա-

[1] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, 1956, հ. Դ, էջ 178-179:
[2] Բանբեր Հայաստանի արխիվների, 1992, թիւ 3, էջ 40:

կույտերի(շտաբ) պետերի ընտրությունը կատարվել է գլխավորապես նրանց առաջարկությամբ ու փոխհամաձայնությամբ[1]:

Հայկական կորպուսի կազմավորման գործում անշուշտ պիտի արժանավայելն ընդգծել Ավետիս Ահարոնյանի գլխավորած Հայոց Ազգային Խորհրդի եւ նրա մասն կազմող զինվորական բաժանմունքի ու հայ Զինվորական խորհրդի ծառայությունը: Գլխավորապես հենց նրանց ջանքերով էր իրականացվում հայ սպաների, զորամասերի շարքերը համալրող կամավորների զորահավաքը, լուծվում պարենի ու հանդերձավորման եւ նաեւ մասամբ զենք ու զինամթերքի ձեռք բերման խնդիրները:

Արժանավայել գնահատելով հայկական կորպուսի կազմավորման գործում Հայոց Ազգային Խորհրդի ծառայությունը՝ պրոֆեսոր Է. Զոհրաբյանը իրավամբ նշում է՝ «Պետք է արժանին մատուցել Հայոց Ազգային Խորհրդին, նրա ղեկավարությանը՝ 1917 թ. աշնան քաղաքական չափազանց բարդ ու լարված իրադրության պայմաններում ճիշտ կողմնորոշվելու, գալիքը կանխազգալու և նրան նախապատրաստելու ուղղությամբ ձեռնարկած հիրավի տիտանական ու անձնազոհ աշխատանքի համար:

...Զլիներ այդ աշխատանքը, չէր լինի այսօրվա Հայաստանը, քանի որ առանց կազմակերպված զինական ուժի հայությունն ի վիճակի չէր լինի դիմագրավելու ոչ միայն օսմանյան արշավող զորքերին, այլեւ ներքին թշնամուն՝ տեղական թուրքերին»[2]:

«1918 թ. Փետրվարի 25-ին կորպուսի շտաբը տեղափոխվեց Ալեքսանդրապոլ... Մարտի 3-ին հայկական կորպուսի հրամանատար գեներալ Նազարբեկովը (այդ օրվանից արդեն Նազարբեկյան- Հ.Գ.) ռազմաճակատի գլխավոր հրամանատար գեներալ Օդոշելիձեից ընդունեց ամբողջ ռազմաճակատի հրամանատարությունը»[3]:

Գեներալ Նազարբեկյանի ու Դրոյի գլխավորած Հայկական կորպուսի կազմի էին մտնում Արեշյանի 1-ին, Սիլիկյանի 2-րդ դիվիզիաներն ու գնդապետ Ղորղանյանի գլխավորած հեծյալ բրիգադը եւ թիկունքային ծառայությունները:

1917 թ. դեկտեմբերին Կովկասյան ռազմաճակատ իրականում արդեն գոյություն չուներ: Բոլշեւիկների քարոզչությունը եւ խորհուրդների հռչակած «Հող եւ խաղաղություն» կարգախոսները

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 41-42:
[2] Զոհրաբյան Է., Ազգամիջյան կռիվները Երեւանի նահանգում 1918թ, Երեւան 2000, էջ 17:
[3] ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 98, թ. 1:

իրենց կախարդիչ զորությամբ վերջնականապես բարոյալքելով ռուսական բանակը՝ հող նախապատրաստեցին ռազմաճակատի վերջնական քայքայման ու կազմալուծման համար: Ռուս զինվորները զանգվածաբար լքում էին ռազմաճակատն ու տուն էին վերադառնում: Ընդ որում ճակատից հեռացող ռուս զինվորներին սիրհոժարաբար օգնում էր նաեւ թուրքական կողմը՝ նրանց տրամադրելով տրանսպորտի զանազան միջոցներ:

«Տարերային ուժի, - գրում է Երեւանի Ազգային Խորհրդի կոմիտեի անդամ Արշալույս Ազնավուրյանը, - հեղեղի պէս տեղի ունեցաւ այդ տեղատուութիւնը՝ ճակատից դէպի Ռուսաստան:

...Դէպի տուն շտապող ռուսական զօրամասերը իրենց ճամբին խորտակում էին ամէն ինչ: Խորթ չէր նրանց հոգուն նաեւ թալանն ու կրակը: Երեւանում խանութները կողոպտելու նպատակով հրդեհ առաջ բերին խանութների շրջանում, որպէսզի քաղաքացիներին չփոթի մատնեն ու լաւապէս հասնեին իրենց սեւ նպատակին»[1]:

Համանման իրավիճակ է տիրել բոլոր այն վայրերում եւ հատկապես երկաթուղային հանգույցներում, որտեղով անցել են ռազմաճակատից զանգվածաբար հեռացող ռուսական զորքերը: Տագնապալի եւ անիշխանական կացություն է հայտնվում նաեւ Անդրկովկասյան Հանրապետության մայրաքաղաք Թիֆլիսը, որտեղ ապրում էին բազմահազար հայեր: Բացի դրանից, այնտեղ էր գործում ազգային բազմաթիվ մշակութային եւ կրթական հաստատությունների զգալի մասը: Թիֆլիսն այդ ժամանակ նաեւ հայ քաղաքական կուսակցությունների եւ Հայոց Ազգային Խորհրդի կենտրոնավայրն էր:

1917 թ. նոյեմբերի 29-ից մինչեւ դեկտեմբերի 8-ը Հ.Յ.Դաշնակցության Բյուրոյի նախաձեռնությամբ Թիֆլիսում գումարվում է խորհրդաժողով, ուր որպես օրվա կարեւորագույն հարցեր քննարկվել են ռազմաճակատի կայունացման, թիկունքի ապահովության, պարենավորման, դասալքության դեմ առնելու եւ հարեւան ազգերի հետ ունենալիք փոխհարաբերության խնդիրները[2]:

Մայրաքաղաքում տիրող անիշխանությունն ու քաոսը, որը նախ եւ առաջ կարող էր իրական սպառնալիք ստեղծել հայ բնակչության անվտանգության, Ազգային Խորհրդի եւ հայ քաղաքական կուսակցությունների գործունեության համար, անհրաժեշտաբար պահանջում էր ձեռնարկել որոշակի կտրուկ եւ վճռական քայլեր:

[1] Արամը, 1969, էջ 98:
[2] Տե՛ս Իշխանեան Ե., Լեռնային Ղարաբաղ 1917-1920, էջ 52-53:

Թիֆլիսում կայացած խորհրդաժողովի մասնակից, Արցախի Ազգային Խորհրդի նախկին նախագահ Եղիշե Իշխանյանը նկարագրելով ռազմաճակատի կազմալուծման հետեւանքով Թիֆլիսում տիրող ծայրահեղ քաոսն ու պայթյունավտանգ իրավիճակը, գրում է. «Քաղաքում տիրող անիշխանությունը, որ ծայրայեղութեան էր հասել, պակաս չափով չէր մտահոգում թէ՛ բնակիչներին եւ թէ՛ մեզ բոլորիս»[1]:

«Ժողովը որոշեց հեռագրել Դրօին՝ հայկական մէկ գունդ առած գալու, Թիֆլիս քաղաքը խաղաղեցնելու եւ կարգը վերականգնելու»[2]:

Դրոն այդ օրերին գտնվում էր Երեւանի նահանգում, ուր գլխավորապես զբաղվում էր հայկական կանոնավոր զորամասերի կազմավորման եւ թուրք բնակչության հնարավոր զինված ելույթները կանխելու ու թիկունքում խաղաղ կարգավիճակն ապահովելու գործերով: Ստանալով խորհրդաժողովի որոշումը՝ նա անհապաղ մի զորամասի գլուխ անցած, ժամանում է Թիֆլիս:

«Երեկոեան, - շարունակում է Ե. Իշխանյանը, - հայկական մէկ գնդի գլուխ անցած Դրօն Թիֆլիս հասնելով, գունդը տեղաւորելով, ուղղակի գալիս է ժողովատեղին, երբ դեռ նիստը շարունակւում էր:

Մենք նոր տեղ հասանք, ասաց Դրօն, ազգը ի՞նչ է հրամայում մեզ, ի՞նչ պիտի անենք»[3]:

Խորհրդաժողովին մասնակցում էին Հ.Յ.Դաշնակցության գրեթե բոլոր նշանավոր դեմքերը՝ Արամ Մանուկյանը, Ավետիս Ահարոնյանը, Նիկոլ Աղբալյանը, Ռուբեն Տեր-Մինասյանը, Վահան Փափազյանը (Կոմս), Վահան Նավասարդյանը, Ալ. Խատիսյանը եւ այլոք[4]:

«Նախագահը նկարագրեց քաղաքի ողբալի կացութիւնը, քաղաքի ազգաբնակչութիւնը ահաբեկւած է շրջան առած զանազան լուրերի հետեւանքով թէ կարող է քաղաքացիական կռիւ սկսւել, ալան-թալանի կը ենթարկւեն մարդիկ, մէկ ռեալ ուժ էլ չկայ, որ նման դէպք տեղի ունենալուց կարողանայ կտրուկ միջոցի դիմել եւ խաղաղութիւնը վերականգնել: Հենց այդ նպատակով էլ յարմար գտանք, որ դու այստեղ լինես հայկական գնդի գլուխ անցած: Նոյնիսկ վրացիներն էլ են ցանկացել որ մեր գնդերից մէկը գայ կարգ ու կանոն պահպանելու»[5]:

Դրոն եւ իր զինակիցները պատվով են հանձնում այս պատասխանատու քննությունը եւս: Հայկական զորագնդի ներկայությունը

[1] Նույն տեղում, էջ 56:
[2] Նույն տեղում, էջ 58:
[3] Նույն տեղում, էջ 56:
[4] Տե՛ս նույն տեղում:
[5] Նույն տեղում:

ավելի քան բավական էր զսպելու ռազմաճակատից հեռացող զինվորներին, որոնք կարող էին առաջին իսկ հնարավորության դեպքում տրվելու թալանի եւ ավերածություններ գործելու կրքերին: Հայ զինվորների անբասիր գործունեությունից գոհ են մնացել ոչ միայն հայ բնակչությունը, այլեւ վրացիներն ու մայրաքաղաքի այլազգի բնակիչները եւ կադրային զինվորականները:

Շնորհիվ Դրոյի եւ նրա գլխավորած զինվորների՝ Թիֆլիսում հաստատվում է խաղաղ եւ կայուն իրավիճակ, իսկ ռազմաճակատը գնալով ավելի ու ավելի էր կազմալուծվում ու մերկանում:

Եվ այս ամենի ականատեսն էր ջարդերի սարսափները տեսած եւ ռազմաճակատի մերկացման հետեւանքով դարձյալ մոտալուտ կոտորածների սարսափով ապրող հայությունը:

Սեւ ծովից մինչեւ Պարսկաստան ձգվող 720 կմ երկարությամբ հսկայածավալ ռազմաճակատը, ուր նախկինում կենտրոնացված էին ռուսական ավելի քան «200.000 հետեւակ զինուորներ եւ 30 գունդ ձիաւոր համապատասխան հրետանիով եւ մօտ 120.000 հոգինոց թիկունքային մասերով»[1], այժմ պաշտպանելու էին Վանում, Խնուսում, Ալաշկերտում, Էրզրումում, Կարինում, Երզնկայում ու Բաբերդում տեղաբաշխված հայկական փոքրաքանակ գնդերը, որոնց մարտաշարքերը պիտի համալրեին հայկական բանակային կորպուսի նոր-նոր ձեւավորվող զորամասերը:

Թուրքերն, օգտվելով հոկտեմբերի շնորհած պարգեւից, այն է՝ ռազմաճակատի մերկացումից մեծ եռանդով ձեռնամուխ են լինում ոչ միայն վերախմբավորելու ու համալրելու իրենց զորամասերը, այլեւ օգտագործում էին բոլոր հնարավոր միջոցները՝ խոչընդոտելու ռազմաճակատը հայ մարտական ուժերով կայունացնելու Հայոց Ազգային Խորհրդի ձեռնարկումները:

«Ինչ-որ մութ ձեռք, - նշում էր այդ օրերին «Հորիզոնը», - պատերազմի եւ խռովության սերմեր է փորձում ցանել հայ եւ թուրք ժողովուրդների մէջ...»[2]:

Իրականում ոչ մի մութ ձեռք գոյություն չուներ: Ռուսական փետրվարյան հեղափոխությունն ու առավելապես բոլշեւիկների Հոկտեմբերյան հեղաշրջումը, խոստումները եւ քարոզչությունը, ինպես նաեւ ռազմաճակատում ռուսական զորքերի բացակայությունն ու թուրքական զորքերի մոտալուտ հարձակման իրողությունը, թարմ լիցք էին հաղորդել Անդրկովկասում եւ հատկապես

[1] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, 1982, Թեհրան, էջ 122:
[2] «Հորիզոն», 1918, մայիսի 9:

Արեւելյան Հայաստանի տարածքում բնակվող մահմեդական հրոսակախմբերի ավազակային ու թալանչիական գործողություններին:

Պատերազմում պարտության եզրին հասած Թուրքիան, օգտվելով Հոկտեմբերի «շնորհներց» ու ռուս զինվորների հեռանալու հետեւանքով ռազմաճակատի մերկացումից, իր պանթուրքական ծրագրերը իրականացնելու նպատակով պիտի մտներ Կովկաս, իր ձեռքը վերցներ Բաքվի նավթը: Իսկ Անդրկովկասում հաստատվելու եւ Բաքու հասնելու համար Թուրք հրամանատարությունը նախ պիտի հաղթահարեր հայկական զորամասերի դիմադրությունն ու վերստին գրավեր ոչ միայն Արեւմտյան Հայաստանը, այլեւ Արեւելյան Հայաստանը:

Թուրք հրամանատարությունը հայկական զորամասերի դիմադրությունն արագորեն հաղթահարելու նպատակադրությամբ, ծրագրել էր ռազմական գործողությունները իրականացնել, կարելի է ասել, համակողմանիորեն մշակված մարտավարությամբ:

Համաձայն այդ մարտավարության՝ ռազմաճակատում թուրքական զորքերի հարձակմանը զուգընթաց, միաժամանակ պիտի զենքի դիմեին Արեւելյան Հայաստանի տարածքում բնակվող մահմեդական զինյալ հրոսակախմբերը, որոնց գործողությունների հետեւանքով հայկական զորամասերի թիկունքում պիտի ստեղծվեր կատարյալ խառնաշփոթ, քոսային ու անկառավարելի իրավիճակ:

Երեւանի Ազգային Խորհրդի անդամ Արշալույս Աստվածատրյանի տեղեկացմամբ՝ «Այդ նպատակը դյուրությամբ իրագործելու համար, նա՝ Ադրբեջանի քաղաքական գործիչների օգնությամբ՝ շարժման մեջ էր դրել հայկական շրջաններում ապրող թուրքերին և քրդերին»[1]:

Եթե թուրք հրամանատարությանը հաջողվեր իրականացնել իր ծրագրած մարտավարությունը, ապա հայկական զինուժը հարկադրված կլիներ պատերազմել ոչ միայն արտաքին ճակատում՝ ընդդեմ թուրքական կանոնավոր զորամասերի, այլեւ ներքին ճակատում՝ ընդդեմ թուրք սպաների ու գործակալների գործուն մասնակցությամբ կազմակերպված մահմեդական հրոսակախմբերի:

Թուրքական զինվորական հրամանատարության կողմից Կովկաս գործուղված սպաների ու գործակալների հրահրմամբ համաթուրանական գաղափարներով վարակված կովկասյան թուրքերը(ռուսական պաշտոնական օղակներում նրանց անվանել են կովկասյան թաթարներ-Հ. Գ.) ռազմաճակատի թիկունքը խարխլելու

[1] Աստվածատրյան Ա., Սարդարաբատի պատմաշինությունը եւ այլ երկեր, Երեւան, 2007, էջ 694:

եւ հայկական զորամիավորումների կազմավորումը խոչընդոտելու դիտավորությամբ՝ պարբերաբար հարձակումներ էին գործում հայոց գյուղերի ու հաղորդակցության կարեւորագույն հանգույցների, մինչեւ անգամ ճակատ մեկնող հայ զինաջոկատների վրա, ստեղծելով կատարյալ քաոսային եւ անկառավարելի իրավիճակ:

«Ամեն տեղ,-շարունակում է Ա. Աստվածատրյանը,-կռիվ էր: Հարձակվում էին Թուրքերը եւ քրդերը: Գաշտապանվում էին հայ զորամասերը և ինքնապաշտանական խմբերը: Երկաթուղին հայերի համար կտրված էր, գնացքից հանում էին հայերին և ամենքի աչքի առջեւ մորթում: Դավալուն կտրված էրն Երեւանից: Շարուր-Նախիջեւանի ամբողջ գավառներում կռիվներ էին տեսի ունենում Թուրքերի և հայերի միջև»[1]:

Այդ ժամանակահատվածու համանման իրավիճակ է տիրել գրեթե ողջ Արեւելյան Հայաստանում, ամենուրեք զինված բախումներ:

Ռազմաճակատի թիկունքում գործելու համար Թուրք հրամանատարությունը ակտիվացնում է նաեւ քրդական հրոսակախմբերի գործողությունները:

«Օգտուելով, նշում է «Հորիզոնը», - ժամանակաւոր կառավարութեան թուլութիւնից եւ պրովոկացիոն մութ ուժերի դրդումից, Սուրմալուից ու Հայոց Ձորից մինչեւ Մամախաթուն քրդական աւազակաբարոյ, մինչեւ ատամները զինուած հրոսակախմբերը յարձակւում են խաղաղ բնակչութեան վրայ, կողոպտում են, վիրաւորում ու սպանում: Ձեն քաշւում անգամ զինուորների ու պարէնատար զօրամասերի վրայ էլ յարձակուելուց»[2]:

Ռազմաճակատի թիկունքում ստեղծված տագնապալի կացությունը ինչ-որ եղանակով շտկելու ու կարգավորելու նպատակով, Ռուսաստանի ժամանակավոր կառավարության որոշմամբ խառը ազգաբնակչություն ունեցող վայրերում ստեղծվում են «Ազգային խառը մարմիններ»: Այդ մարմինները ժողովրդի կողմից ընտրված յուրօրինակ գործադիր իշխանություններ էին, որոնք պիտի ոչ միայն տեղերում ղեկավարեին գյուղական համայնքները, այլեւ կայուն խաղաղություն հաստատեին տարբեր ազգություններին պատկանող բնակիչների միջեւ: Իսկ Հայաստանի տարածքում՝ բուն ռազմաճակատի թիկունքում, կայուն խաղաղ իրավիճակի հաստատումը Թուրք իշխանությունների նպատակներից դուրս էր, նրանց անհրաժեշտ էր ճիշտ հակառակը:

[1] Նույն տեղում:
[2] «Հորիզոն», 1918, մայիսի 9:

Թուրք քարոզիչներն ու գործակալները իրենց հավատակիցների մոլեռանդությունն ու ընչաքաղցությունն ավելի խստացնելու, բորբոքելու եւ նրանց քրիստոնյաների դեմ առավելագույնս զորաշարժելու նպատակով ավելի ու ավելի են ակտիվացնում իրենց գործունեությունը: Անդրադառնալով այդ ժամանակահատվածում Թուրք բնակչության շրջանում տիրապետող տրամադրվածությանն ու նրանց քարոզիչների գործունեությանը, Մարտիրոս Աբրահամյանը նշում է. «Մենք (Թուրքերը - Հ.Գ.) պիտի զինուենք, աշխատենք կամաց-կամաց խառնել երկիրը, ճանապարհները կտրենք, Ֆրոնտի զօրքին ուղարկուող պարէնը թալանենք, որ քաղցած մնան:

... Կաւկազում պիտի յարձակուենք անհաւատ քրիստոնեաների վրայ, քանդենք գիւղերը, սպանենք, թալանենք, որ քրիստոնեաների գլուխը խառնուի իրենց պաշտպանելով, մինչեւ որ Օսմանց եղբայրների զօրքերը կը կարողանան յառաջանալ:

... Երբ օսմանցու զօրքերը կը հասնեն այստեղ, այս գեղեցիկ երկիրը կը դարձնենք զուտ մահմեդական երկիր...»[1]:

Ժողովրդի ինքնապաշտպանությունը կազմակերպելու եւ անվտանգությունը ապահովելու նպատակով ստեղծվում են «Ժողովրդական միլիցիաներ», որոնք պետք է գործեին շրջաններում եւ գյուղերում, ցուցակագրեին զենքերն ու զենքի ընդունակ մարդկանց եւ հիմք դնեին ինքնապաշտպանական ջոկատների:

«Գործի կազմակերպումը, - շարունակում է Մարտիրոսը, - յանձնւում է Դրօյին:

Խոսրով Եղիազարեանն ուղարկուեց Նոր-Բայազէդի շրջանը, Եապոնը՝ Դարալագեազի:

Մեծ Ղազարը ճանապարհուեց, կազմակերպելու համար Նախիջեւանի եւ Գողթանի շրջանների ինքնապաշտպանութիւնը: Ինձ կարգադրեց անցնել գործի՝ կազմակերպել Զանգի-Բասարի, Դաւալուի եւ Ղամարլուի հայութեանը:

Օնէն՝ Արարատի, Աշտարակի եւ Էջմիածնի, իսկ Յովսէփը՝ Սուրմալուի պատասխանատուներն էին»[2]:

Չնայած Դրոյի կողմից ձեռնարկված վերոհիշյալ քայլերին, իրավիճակը գնալով ավելի է շիկանում եւ լուրջ կերպարանք ստանում:

Այդ օրհասական ժամանակաշրջանում ժողովրդի ֆիզիկական գոյությունը հնարավոր էր ապահովել միմիայն ազգի կենսունակ, առողջ ուժերի համախմբման եւ թշնամու ոտնձգություններին անխորտակ հարվածներով պատասխանելու միջոցով:

[1] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, նշվ. աշխ., էջ 362:
[2] Նույն տեղում, էջ 263:

Անդրադառնալով այդ օրերին տեղի ունեցած դեպքերին՝ Դրոն նշում է. «Մի կողմից մեր դրան առջև կանգնած էր դարաւոր թշնամին՝ Թուրքը իր բանակներով, իսկ միւս կողմից թաթարների հետ մեր ներքին կռիւները կլանում էին հայ ժողովրդի հիւանդութիւնները սպառնում էին զանազան շրջանների: Ռուս բանակը հեռանում էր խուճապահար եւ արտաքին օգնութեան ոչ մի յոյս չէր մնում:

Ի՞նչ անել, ինչպէ՞ս փրկել ժողովրդի գոյութիւնը, ի՞նչ միջոցով դուրս գալ այս ծանր իրավիճակից:

Շուարումի, լքումի եւ յուսահատութեան այս խեղդող մթնոլորտի մէջ է, որ հայ ժողովրդի մարտական մեծ կուսակցութիւնը՝ Հ.Յ.Դաշնակցութիւնը տուեց վճռական որոշումը եւ տէր կանգնեց հայութեան ճակատագրին: Նա կռուից դուրս ուրիշ միջոց չգտաւ մեր ժողովուրդը փրկելու»[1]:

Հայոց Ազգային Խորհուրդը, ժողովրդի մարտական ոգին բարձրացնելու եւ նրան թշնամու դեմ քաջաբար մարտնչելու վճռականութիւն հաղորդելու նպատակով, ոգեշնչող կոչերով դիմում է բովանդակ հայութիւնը: Անտարակույս շատ մեծ պետք է լիներ Դրոյի նկատմամբ հայութեան ու հատկապես զինվորականութեան տածած սերը, հարգանքն ու վստահութիւնը, որպեսզի Հայոց Ազգային Խորհուրդի նախագահ Ավետիս Ահարոնյանը հայ մարտիկներին ռազմի դաշտ ու սխրանքների կոչելիս՝ նշեր. «Ո՛վ արի, նախնեաց մեր անզուգական հերոսների քաջութեամբ զինուած մարտիկներ, դէպի ճակատ՝ մեր նոր հերոսամարտին, ուր ձեր հրամայողը, մարտի սրբազան դաշտում ձեզ առաջնորդողը ԴՐՈՆ է, մեր ամէնքի պաշտելի հերոսը, որ երբեք պարտուել չգիտէ»[2]:

Այդ ժամանակ Դրոյի գործունեութեան ոլորտը ընդգրկում էր ռազմաճակատում եւ թիկունքում ծավալվող մարտական գործողությունների կարեւորագույն ու հրատապ լուծում պահանջող խնդիրները: Նախ, որպես Երեւանյան զորախմբի հրամանատար, Դրոն Երեւանի նահանգում եւ Արեւելահայաստանի մյուս շրջաններում պիտի իրականացներ Թուրք զինված խմբերի զանգվածային ելույթների շտապ «խաղաղեցումը», ռազմաճակատի թիկունքի ապահովումն ու կայունացումը եւ ապա, որպես հայկական բանակային կորպուսի զինվորական կոմիսար, նրա անմիջական պարտականությունների մեջ էին մտնում Հայկական բանակային կորպուսի զորամասերի կազմավորման եւ հայկական ողջ զինված ուժերի մարտական խնդիրների, մարտավարության մշակման, ինչպես նաեւ ղեկավարման հետ կապված աշխատանքները:

Պարտականությունների բերումով նա հարկադրված լինում էր ոչ միայն ռազմաճակատում ու կռիվների թատերաբեմի վերածված շրջաններում, այլեւ Թիֆլիսում, ուր Հայոց Ազգային Խորհուրդը, Զինվորական խորհուրդը եւ հայկական բանակային կորպուսի հրամանատարությունը քննարկում էին ռազմաճակատին ու թիկունքին վերաբերվող խնդիրները: Որպես օրենք, ռազմաճակատի հետ կապված ցանկացած հարցի քննարկման ժամանակ Դրոն իր դատողությունները շարադրում էր առանց երկմտելու, ռազմական իրավիճակը խորությամբ ըմբռնող իրատես ռազմագետի տրամաբանությամբ ու համարձակությամբ:

Հայոց Ազգային Խորհրդի զինվորական մասի վարիչը Մոսկվայի Հայկական կոմիտեի նախագահ, մասնագիտությամբ իրավաբան Ստեփան Մամիկոնյանն էր, իսկ տեղակալը՝ Ռուբեն Տեր-Մինասյանը: Նրանք զինվորական չէին ու ծանոթ չլինելով բանակին վերաբերող խնդիրներին, բնականաբար չունեին բավարար հեղինակություն զինվորականության շրջանում, եւ այդ պատճառով հաճախ վեճեր են ծագել նրանց ու զինվորականների միջեւ:

Ս. Վրացյանի գնահատմամբ՝ «Դրոն հակակշռող ուժ էր, իբրեւ բոլորի վստահութիւնն ու համակրանքը վայելող անձնաւորութիւն: Հակառակ իր տաքարիւն բնաւորութեան նա զարմանալի նրբամիտ վերաբերմունք էր ցոյց տալիս եւ դիւրութեամբ գտնում էր ձեւը եւ միջոցը մարդկանց յուզումները հանդարտացնելու համար:

Մանաւանդ զինուորականները նրան յարգում ու սիրում էին:

Ես յիշում եմ մէկից աւելի դէպքեր, երբ Դրոն, մի տեսակ, գազանազուսպի դեր էր կատարում կռուի փոխուած սուր վեճերը հանդարտացնելու համար, մանաւանդ, Անդրանիկի եւ Ռուբէն Տէր Մինասեանի միջեւ, որին Անդրանիկը, չգիտեմ ինչո՞ւ, տանել չէր կարողանում: Դրոյին իրեն համար ամենաընդունելի մտքերը նա լսում էր անվրդով»[1]:

Ինչպես արդեն նշվել է, 1917 թ. դեկտեմբերին Կովկասյան ռազմաճակատ փաստորեն գոյություն չուներ:Բնական է, որ այդ հանգամանքն արմատապես պիտի փոխեր Թուրք հրամանատարության տրամադրվածությունն ու մարտավարությունը: Հաջորդ տարվա փետրվարի 9-ին Էրզրումի զորախմբավորման հրամանատար, գեներալ Օդոշելիձեն Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանա-

[1] Հայաստանի Հանրապետութեան 60-ամեակը 1918-1978, էջ 5:
[2] Դրո, Երեւան, 1991, էջ 238:

[1] Վրացեան Ս., Մրրկածին Դրոն, էջ 98:

տարությանը ուղղված հեռագրում նշում է. «Վեհիբ փաշան բոլորովին որոշակի յայտարարեց, որ պատերազմի իրաւունքով մեր գրաւած թուրքական վայրերում մուսուլման բնակչութիւնը պահպանելու նպատակով ինքը առաջ կը շարժուի մինչեւ ռուս զօրքերի հանդիպելը, որպիսի զօրքեր նա չի համարում հայկական զօրամասերը: Այս նկատմամբ խնդրում եմ շուտափոյթ կարգադրէք անյապաղ Էրզրում (Կարին) ուղարկել ռուսական կորպուսի գէթ մի քանի բատալիոններ, իբրեւ յառաջապահ զօրքեր, որը թերեւս թուրքերին հարկադրէ Էրզրումի վրայ չշարժուելու: Առանց այս միջոցի, այսինքն՝ եթէ Էրզրումը գրաւուած մնաց բացառապէս Հայկական զօրամասերով՝ թուրքերն անխուսափելիօրէն կը գրաւեն Էրզրումը»[1]:

Իզուր էր գեներալի պահանջը, Կովկասյան ճակատում այլեւս ռուսական ոչ մի ռազմական ուժ գոյություն չուներ, եւ այդ իրողությանը քաջատեղյակ թուրք հրամանատարությունն աշխատում էր դիվանագիտական փակուղիների առաջ կանգնեցնել Կովկասյան հրամանատարությանը՝ արդարացնելու թուրքական զորքերի սպասվելիք հարձակումը:

Եվ դժվար չէր հասկանալ, որ թուրքերը՝ օգտվելով ռազմաճակատի մերկացումից, կխախտեին 1917 թ. դեկտեմբերին Երզնկայում ռուս հրամանատարության հետ կնքված զինադադարը եւ համալրելով ու վերախմբավորելով իրեց բանակը, շատ շուտով կդիմեին ակտիվ մարտական գործողությունների:

Բաբերդից Երզնկա եւ մինչեւ Բիթլիս ու Վան ձգվող հսկայածավալ ռազմաճակատում հայ փոքրաթիվ նորաստեղծ գնդերին վիճակված էր դիմագրավելու թեեւ մի շարք ճակատամարտերում պարտված, բայց դեռեւս զգալի հզորությամբ օժտված եւ հայ զորագնդերից անհամեմատ բազմաքանակ թուրքական կանոնավոր զորամիավորումներին, որոնց հիմնական միջուկը կազմում էին առաջին աշխարհամարտի հնոցում թրծված, անգամ անգլո-ֆրանսիական զորքերի դեմ Գալիպոլիեի ու Դարդանելիի նշանավոր ճակատամարտերին մասնակցած բազմաթիվ սպաներ ու զինվորներ: Հարց է ծագում՝ կարո՞ղ էին հայոց նորաստեղծ փոքրաքանակ ուժերը պաշտպանել Սեւ ծովից մինչեւ Ուրմիա ձգվող ավելի քան 720 կիլոմետրի հասնող հսկայածավալ ռազմաճակատը, որը նախկինում պաշտպանում էին ավելի քան 300.000 զինվորներ:

Հայ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող վերոհիշյալ հարցը քննարկելու եւ անհրաժեշտ որոշում կայացնելու նպատակով 1918 թ. դեկտեմբերին Թիֆլիսում գումարվում

[1] «Հորիզոն», 1918, թիւ 33:

է Հայոց Ազգային եւ Ապահովության Խորհուրդների համատեղ խորհրդակցություն, որին մասնակցել են նաեւ Արամ Մանուկյանը, Անդրանիկն ու Դրոն:

Խորհրդակցությունում ի թիվս մի շարք հարցերի, քննարկվել է նաեւ Դրոյի ներկայացրած առաջարկությունը, որը տեղիք է տվել բուռն վիճաբանությունների:

Ավելի քան զարմանալի է ու անբացատրելի, որ հայության համար ճակատագրական ու բախտորոշ նշանակություն ունեցող հարցերի քննարկմանը նվիրված նիստը կայացել է առանց հայկական զորամիավորումների բարձրաստիճան հրամանատարների, այդ թվում նաեւ գեներալ Թ. Նազարբեկյանի, մասնակցությամբ: Իսկ նրանց տեսակետը, որպես կադրային ու փորձառու զինվորականների, ավելի քան անհրաժեշտ էր:

Ելնելով ռազմաճակատում տիրող իրական կացությունից եւ մարտական ուժերի հնարավորությունից, Դրոն հավատարիմ համոզմունքները համարձակորեն արտահայտելու իր սկզբունքայնության, շատերի համար անսպասելի՝ առաջարկում է փոքրացնել, կրճատել ռազմաճակատը եւ եղած ուժերը կենտրոնացնելով ավելի փոքր հատվածում ստեղծել պաշտպանության հզոր հանգույց: Չնայած սահմանամերձ մի քանի կետերում արդեն գործում էին հայ երկրապահ նոր-նոր կազմավորված, փոքրաքանակ մարտական կազմ ունեցող զորագնդերը, սակայն ապրիլյան եղեռնից հետո Արեւմտահայաստանը մեծամասամբ ամայացել էր, եւ բացառությամբ Վանի, հայկական մյուս գավառներում մահմեդականությունն արդեն բնակչության մեծամասնությունն էր կազմում: Թիկունքը ռազմաճակատից բաժանող տարածքում վխտում էին թուրքական հրամանատարության գործակալների կողմից առաջնորդվող թուրք-քուրդ եւ չերքեզ զինյալ բազմաթիվ հրոսակախմբեր: Իսկ ռազմաճակատի պաշտպանունակությունը ամրապնդելու համար անհրաժեշտ էր թիկունքի հետ կայուն փոխկապակցվածություն, զինվորական համալրումների, զենքի, ռազմամթերքի ու պարենի մատակարարումների անխափան ապահովում: Տվյալ պարագայում, քանի որ թիկունքը մահմեդական հրոսակախմբերի պարբերաբար կրկնվող զինված ելույթների պատճառով վտանգված էր, այդ պատճառով հայկական բնակավայրերի անվտանգության ապահովման, ինչպես նաեւ ռազմաճակատը թիկունքին կապող հաղորդակցության ուղիների անխափան գործելուն նպատակաուղղված ջանքերն անասելի դժվարությունների առջեւ էր կանգնեցրել Հայոց Ազգային Խորհրդին եւ հայկական զորաբանակի հրամանատարությանը:

Անդրադառնալով ռազմաճակատի խնդիրների քննարկմանը նվիրված Ազգային Խորհրդի կողմից գումարված խորհրդաժողովում Դրոյի պաշտպանած տեսակետի լուսաբանմանը, Սիմոն Վրացյանը գրում է. «Դրօն խօսք առաւ եւ այդ օրերի համար «սարսափելի» խօսքեր ասաց.

- Ձեր այդ առաջարկները բոլորն էլ փորձուած են (մինչեւ Դրոյի խօսք առնելը բոլոր ելույթ ունեցողները՝ Ավ. Ահարոնյանը, Անդրանիկը, Ռուբենը, Խաչատուր Կարճիկյանը, Սա. Մամիկոնյանը եւ այլք, որտահայտվել էին նոր զորակոչ հայասարելու միջոցով ռազմաճակատի տակա տարածքը պահպանելու օգտին - Հ.Գ.): Անգամ է դրանց վրայ յոյս դնել: Իրողութիւնը այն է, որ ռուս զօրքերը հեռանում են ճակատից եւ մենք ի վիճակի չենք, բաւարար զօրք չունինք նրանց լքած բոլոր դիրքերը գրաւելու: Որոշ ժամանակ էլ եթէ այդպէս շարունակուի, ռազմաճակատը պիտի մերկանայ, եւ Թշնամին առանց դիմադրութեան առաջ պիտի շարժուի: Հետեւաբար, ի՞նչ պէտք է անել:

Եվ պատից կախուած զինուորական քարտէզի առաջ անցնելով շարունակեց.

- Ցնոնո՞ւմ էք այս տարածութիւնը, ահա Վանը, այս Բիթլիսն է, այս Մուշը, այս Երզնկան... Այս ամբողջ տարածութիւնը մենք պէտք է պաշտպանենք, մենք՝ հայերս, մի բուռ ուժերով: Հնարաւո՞ր բան է:

- Հնարաւոր է, - լսուեց մի ձայն:

- Ոչ հնարաւոր չէ:

- Ապա, ուրեմն, ի՞նչ անել, - շարունակեց Դրօն:

- Պէտք է կարճացնել ռազմաճակատը: Վան-Երզնկա գիծը չենք կարող պաշտպանել, զուցե՝ կարողանանք ...

Սենեակում լսուեցին վրդովուած բացականչութիւններ: Անդրանիկը բեղերն էր կրծոտում:

- Մի վրդովուէք, - ձայնը բարձրացրեց Դրօն, - հաշիւը պարզ է, եթէ չենք ուզում ամբողջը կորցնել, պահենք գոնէ մէկ մասը:

Ու սկսեց զօրամասերի անուններ յիշել, վայրերի տարածութիւնները ներկայացնել, մեր ուժերը համրել:

- Հաշիւը պարզ է, միայն մեր ուժերով չենք կարող Վան-Երզնկա-Տրապիզոն գիծը պաշտպանել: Դա աբսուրդ է: Պէտք է քաշենք մեր ուժերը Բայազէդ-Բասէն գծի վրայ... Պէտք է Վանի, Մուշի, Երզնկայի շրջանների բոլոր պահեստները ոչնչացնենք... Պէտք է մեր ուժերը, պաշտպանութեան բոլոր միջոցները կենտրոնացնենք կարճ սահմանագծի վրայ, այլապէս...

- Այլապէս, ի՞նչ, - լսուեց մի խեղդուկ ձայն:

- Այլապէս, Թրքահայաստանը կորցնելուց յետոյ, Ռուսահայաստանն էլ կը կորցնենք...

Սենեակում տիրեց խորին լռութիւն: Անդրանիկը, որ նստած էր մօտս, դրան մօտ, գլուխը կախ, ցնցւում էր ներքին յուզումից՝ սեւ ամպի պէս պատրաստ պայթելու:

-Ես համաձայն եմ Դրոյին, բայց...չկարողացաւ շարունակել Ռուբէն Տէր Մինասեանը: Սեւ ամպը պայթեց ահռելի որոտով...

Անդրանիկը, վագրի կատաղի ոստիւնով, ցատկեց տեղից եւ բռունցքները ճոճելով խոյացաւ Ռուբէնի վրայ, որ յանկարակիի եկած, մի պահ լռեց, ապա, անցնելով սեղանի միւս կողմը, նոյնպէս բռունցքները ճոճելով՝ սկսեց պոռալ Անդրանիկի երեսին: Ժողովը խանգարուեց:

Ռուբէնը մեղք չունէր. Անդրանիկի զայրոյթի առարկան Դրօն էր, բայց Դրոյի վրայ չէր կարող պոռալ, ինչպէս չէր կարող պոռալ Քեռիի կամ Ռոստոմի վրայ: Անդրանիկը սիրում էր Դրոյին եւ մի քիչ էլ պատկառում էր, հակառակ տարիքի տարբերութեան»[1]:

Դրոյի առաջարկած տեսակետի իսկութեան մասին հավաստում է նաեւ Արեւմտահայոց Ազգային Խորհրդի նախագահ Վահան Փափազյանը (Կոմս). «...Դրօն կը պնդէր ճակատը կարճացնել, զօրքերը Բասէն, Բայազէդ գծին վրայ տեղափոխել: Այդ ժամանակ նրա տեսակէտը չընդունուեց...»[2]:

Բացի դրանից, Դրոն առաջարկում է եւս մի բրիգադ կենտրոնացնել Դիլիջանի ուղղութեամբ: Նրա համոզմամբ՝ եթե մեր զորքերը ռազմաճակատում մատնվեին անհաջողության, ապա այդ բրիգադի աջակցությամբ կարելի կլինի շարժվել Գանձակի եւ Արցախի ուղղությամբ եւ «...միանալով Բաքուին՝ ապահովել հայ ժողովրդի գէթ մարդկային գոյութիւնը»[3]:

Տվյալ ժամանակահատվածում նրա տեսակետը զուտ հոգեբանական, բարոյական առումով դժվար ընկալելի էր եւ գուցե թե ճիշտ չէր հնչում: Իրոք, դժվար էր համակերպվել Արեւմտյան Հայաստանը թողնելու մտքին, բայց իրական կացության խոր իմացության ու գնահատման եւ սթափ ու առողջ բանականության տեսանկյունից Դրոյի առաջարկը ճիշտ էր, խորապես կշռադատված, ինչը եւ ապացուցեց ժամանակը:

Ազգային Խորհուրդը որոշում է պահել ռազմաճակատը: Այդպիսի որոշման ընդունման կողմնակիցների համոզմամբ, Թուր-

[1] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Դ, Պէյրութ, 1965, էջ 179-181:
[2] ՀՅԴ ԿԱ, թթ. 206, գ. 65/3:
[3] Տե՛ս Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Բ, էջ 181:

քիան եւ նրա դաշնակից տերությունները՝ Գերմանիան, Ավստրո-Հունգարիան եւ Բուլղարիան գրեթե պարտվել էին ու թուլացել, իսկ նրանց հաղթող տերությունները դրական վերաբերմունք ունեին Հայ Դատի եւ հայության նկատմամբ:

Մերժելով Դրոյի առաջարկությունը՝ Հայոց Ազգային Խորհուրդը որոշում է Անդրանիկին, որը ի դեպ Երզնկայից մինչեւ Վան եւ Բիթլիս ձգվող ռազմաճակատը պահպանելու ամենաջերմեռանդ կողմնակիցն էր, նշանակում է Էրզրումի երկրապահ ճակատի հրամանատար այն համոզմամբ, որ նշանավոր հայդուկապետը, իր հեղինակությամբ եւ ռազմական կարողությամբ կկարողանա ոգեկոչելով զորքին ու ժողովրդին՝ պաշտպանել ռազմավարական վճռական նշանակություն ունեցող Էրզրումի բերդաքաղաքը: Ավելին, Հայոց Ազգային Խորհրդի միջնորդությամբ Կովկասյան ռազմաճակատի հրամանատար գեներալ Լեբեդինսկու հրամանով 1919 թ. հունվարին նրան շնորհվում է զաուրյադ(պաշտոնակատար) գեներալ-մայորի զինվորական աստիճան:

Հարկ է նշել, որ Անդրանիկին երկրապահ ռազմաճակատի հրամանատարի պաշտոնում նշանակելիս, իսկ դա հավասարազոր է դիվիզիայի հրամանատարի պաշտոնին, Հայոց Ազգային Խորհուրդն ու Արեւմտահայ Ապահովության Խորհուրդը, ինչքան էլ տարօրինակ ու անհասկանալի լինի, շրջանցել էին Հայկական բանակային կորպուսի հրամանատարությանը, նույնիսկ գեներալ Թ. Նազարբեկովին եւ հաշվի չէն առել նրանց կարծիքը:

Կորպուսի հրամանատար գեներալ Թ. Նազարբեկյանի գնահատմամբ՝ ճիշտ չէր Անդրանիկին այդ պաշտոնին նշանակելը: Գեներալի կարծիքով այդ նշանակումը հավանաբար կատարվել էր նրա ազդեցիկ կողմնակիցների միջնորդությամբ[1]:

1918 թ. փետրվարին թուրքերը, խախտելով Երզնկայի զինադադարը, անցնում են հարձակման: Կատարվում է այն, ինչ կանխատեսում էր Դրոն: Չնայած հերոսական դիմադրությանը՝ հայկական փոքրաքանակ ուժերը չկարողանալով կայուն դիմադրություն ցույց տալ թուրքական զորքերին, թողնում են Բաբերդը, Երզնկան, Վանը, Բիթլիսը եւ վերջապես, Արեւմտահայաստանի ամենակարեւոր հենակետը՝ Էրզրումը: Ընդ որում Էրզրումի մատույցներում եւ բուն բերդաքաղաքում հայկական զորքերի դիմադրությունը եղել է բավական անկազմակերպ եւ թույլ, եւ ինչպես իրավացիորեն նշում է գեներալ Հախվերդյանը, «... թուրքերը հեշտությամբ կարողացան գրավել բերդաքաղաքը, թերեւս միայն Մուրադին (նկատի ունի Սեբաստացի Մուրադին - Հ.Գ.) իր ձիավորներով հաջողվեց փոքր-ինչ զսպել թուրքերի ճնշումը...»[1]:

Զկար այլեւս Հայաստանի արեւմտյան հատվածի վերջին պատվարը՝ Էրզրումի հզոր բերդաքաղաքը: Դեպի Արեւմտյան Հայաստան, արա նաեւ Արեւելյան Հայաստան տանող ուղիները բաց էին:

Ս. Վրացյանի վկայությամբ. «Տարիներ անց Բէյրութից վերջին անգամ Ամերիկա մեկնելիս՝ Դրօն, կրկին ու կրկին անգամներ, մանրամասնօրէն յիշեց այդ միջադէպը: Նա համոզուած էր, որ եթէ այն ժամանակ իր առաջարկը ընդունուէր, շատ դժբախտութիւններ տեղի չէին ունենայ»[2]:

Էրզրումի անկումից հետո թուրքական զորքերը, կրնկակոխ հետապնդելով նահանջող հայկական զորագնդերին, մոտենում են Սարիղամիշին: Ահավոր սպառնալիք է կախվում Հայաստանի մնացած փոքրիկ տարածքում հավաքված հայության վերջին բեկորների վրա, եթե հայկական զորքերը չկարողանային արժանի դիմադրություն ցույց տալ եւ կանգնեցնել թուրքերին:Ռազմաճակատում վատթարագույն ուղղվածությամբ զարգացող մարտական գործողություններին զուգընթաց՝ թիկունքում շարունակաբար կրկնվող թուրք զինված խմբերի ելույթներն իրենց բնակավայրերին էին գամել զենքի ընդունակ հայերին, որոնք Արեւելահայաստանի տարածքում ծայր առած զինված բախումների ճնշման տակ առավելապես մտահոգված էին իրենց գյուղերի եւ ընտանիքների ապահովության պահպանմամբ: Թուրք հրամանատարության նախաձեռնությամբ արյունակիցների միջոցով Հայաստանի շրջաններում ստեղծված քաոսային կացությունն իր սեւ գործը կատարեց: Ռազմաճակատից իրենց ընտանիքների ճակատագրով տագնապած բազմաթիվ հայ զինվորներ լքում էին զորամասերը եւ վերադառնում հարազատ

[1] Տե՛ս Բանբեր Հայաստանի արխիվների, «Թ. Նազարբեկյանի հուշերը», 1992, թիւ 3, էջ 70:

* Համաձայն ցարական բանակի գործող օրենքների, զինվորական աստիճան չունեցող անձնավորությանը կարելի էր ժամանակավորապես (զաուրյադ)շնորհել գեներալ- մայորի զինվորական աստիճան, եթե նա նշանակվում էր դիվիզիայի հրամանատար:

Նա այդ կոչումը կարող էր կրել այնքան ժամանակ, քանի դեռ զբաղեցնում էր դիվիզիայի հրամանատարի պաշտոնը: Հակառակ պարագայում, այսինքն երբ թողնում կամ հեռացվում էր զբաղեցրած պաշտոնից, այն է՝ դիվիզիայի հրամանատարությունից, այլեւս իրավունք չուներ կրելու գեներալի աստիճանն ու հագնելու գեներալի համազգեստը:

[1] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 24(2):

[2] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Դ, էջ 180:

վայրերը: Հայ զորագնդերում ծնունդ առած զանգվածային դասալքումներն ու տիրապետող անկազմակերպ վիճակը կարող էին ամենաողբերգական հետեւանքներն ունենալ:

Հեռավոր Ամերիկայում հրատարակվող Հ.Յ.Դաշնակցության «Ասպարէզ» օրաթերթը այդ օրերին դիմելով տեղի հայությանը գրում է. «Մօտ երկու միլիոն հայութիւնը, 300 հազար հայերու բեկորները, որոնք իրենց յոյսը դրած էին ռուս յեղափոխական ժամանակաւոր կառավարութեան վրայ, այսօր վտանգի սպառնալիքի ներքեւ կը գտնուին:

Կովկասեան ռազմաճակատի անխնամ վիճակը Թիւրքերու հակայարձակման հաւանականութիւնը, քիւրտերու մշտական թալանն ու սպանութիւնները, տեղական թաթարներու հապճեպ զինուելն ու վրացիների երկդիմի քաղաքականութիւնը վտանգի նոր դուռ բաց կանեն հայութեան համար: Մինակ ենք մեր անզօրութեան մէջ եւ մեր թշուառութեան հետ, շրջապատուած ենք մեզ չսիրող եւ մեզ հետ մրցակցող տարրերով, որոնք ամէն առիթ չեն փախցնի՝ հարուածելու մեզ»[1]:

Ռուսական զորքերի կողմից ռազմաճակատը լքելու հետեւանքով ծանրագույն իրավիճակ էր ստեղծվել ոչ միայն ռազմաճակատում, այլեւ թիկունքում եւ հատկապես Երեւանի նահանգում:

«Երեւանի նահանգը,-գրում է Ս. Վրացյանը,-արեւելահայութեան սիրտը, գրեթէ կէս առ կէս հայ եւ մահմետական-շատ կարեւոր ազգային-քաղաքական տեսակէտից, խոցելի էր ապահովութեան նկատառումներով: Մահմետական զանգուածները ենթակայ էին համաթրքական քարոզիչների գրգռումին, պատրաստ ազգամիջեան ընդհարումների համար: Անհրաժեշտ էր պահել անդորրութիւնը, ինչ գնով լինի, մանաւանդ որ ռազմաճակատը, հետզհետէ մերկանում էր ռուս զորամասերից»[2]:

Անհրաժեշտ էին կարող, ձեռներեց ու մեծ հեղինակությամբ օժտված, ազատագրական պայքարի նրբություններն ու դժվարությունները ապրած փորձառու գործիչներ՝ քաոսային կացությունը շտկելու եւ թիկունքում ծավալվող աշխատանքները կարգավորելու համար: Հայոց Ազգային Խորհրդի որոշմամբ, 1917 թ. դեկտեմբերի վերջերին Երեւան է գալիս Արամ Մանուկյանը եւ իրեն հատուկ մեծագույն եռանդով ձեռնամուխ լինում Արարատյան աշխարհի ծայրահեղ լարված ու խառնաշփոթ իրավիճակի կարգավորման խնդիրների լուծմանը: Արամի առաջարկությամբ Երեւանում ստեղ-

[1] Ասպարեզ, 1918, 1918, թիւ 488, էջ 2:
[2] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Դ, էջ 178:

ծվում է Ազգային Խորհրդի իրավունքով մի մարմին՝ Հատուկ Կոմիտե, որի ձեռքում է կենտրոնանում նահանգի քաղաքական, տնտեսական եւ ռազմական իշխանությունը:

Հատուկ Կոմիտեի կազմում ընդգրկվել են Արամ Մանուկյանը, անկուսակցական Մկրտիչ Մոսինյանը (Մ. Մոսինյանը անդամագրվել է ՀԵԴ 1919 թ.-Հ. Գ.),Արշալույս Աստվածատրյանը, Երեւանի նահանգական կոմիսար Սահակ Թորոսյանը եւ հայ զինվորական միության նախագահ բժ. Հովհաննես Մելիքյանը:

Հատուկ կոմիտեի նախագահ է ընտրվում Մ. Մուսինյանը, իսկ քարտուղար՝ Սարգիս Օհանջանյանը (Ցարհատ)[1]:

Անհրաժեշտության դեպքում Հատուկ Կոմիտեի նիստերին մասնակցել են Երեւանի շրջանի զինվորական ուժերի հրամանատար, գեներալ Մ. Սիրլիկյանն ու Հայկական բանակային կորպուսի զինվորական կոմիսար Դրոն: Հատուկ Կոմիտեի նախագահը թեպետ ընտրվել էր Մ. Մուսինյանը, սակայն Ազգային Խորհրդի ու Երեւանի նահանգի փաստացի ղեկավարը Արամ Մանուկյանն էր:

Ժողովրդի փրկությունն առաջին հերթին պայմանավորված էր միմիայն կազմակերպված ու մարտունակ բանակի գոյությամբ, իսկ հայրենիքին ծառայելու պատրաստակամ արհեստավարժ կադրային զինվորականների քանակը այնքան էլ պատկառելի չէր:

Հատուկ Կոմիտեի անդամ Ա. Աստվածատրյանի գնահատմամբ՝ «Ցատուկ Կոմիտէի առաջին ու գլխաւոր մտահոգութիւնն էր ռազմաճակատի ամրացումը և նրա կապակցութեամբ՝ թիկունքի ապահովութիւնը: Այդ նպատակով Ցատուկ Կոմիտի առաջին քայլը եղաւ զինակոչ յայտարարել: Այդ հայտարարութեան համաձայն՝ զէնքի տակ էին կանչւում մինչև 28 տարեկանները:

Ցատուկ Կոմիտէն այդ առթիւ մի կոչով դիմեց ժողովրդին, որով բացատրում էր կացութեան լրջութիւնը, զինակոչի անհրաժեշտութիւնը և, յանուն Ազգային Խորհրդի, հրաւէր ուղղում զինապարտներին՝ երեք օրուայ պաշարով ներկայանալու տեղական զինուորական կենտրոնները»[2]:

Արամ Մանուկյանը, չնայած երբեւէ չէր զբաղվել զինվորական գործունեությամբ, բայց ժամանակաշրջանի թելադրանքով դրսեւորելով զարմանալի կազմակերպվածություն եւ համառություն՝ զուգահեռաբար վարում է նաեւ Երեւանի Ազգային Խորհրդի զինվորական մասի գործերը:

[1] Տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի հանրապետութիւն, էջ 121:
[2] Նույն տեղում:

«Մինչեւ կառավարութեան Թիֆլիսից Երեւան ժամանելը,- գրում է Ռուբեն Տեր-Մինասյանը,- 1918 -ին Արամը վարում էր զինուորական գործերը իր յատուկ ձեւով, առանց կապուելու ընդհանրապէս ընդունուած զինուորական օրէնքներով եւ կանոններով: Նա՝ ժողովրդական կազմակերպութիւնը ճաշակաւորած եւ ուժեղացուցած էր զինուորական արուեստով: Գուցէ այս ինքնուրոյն ձեւը քննադատութեան ենթարկուի զինուորական քննադատների կողմից եւ որոշ թերութիւններ գտնուին զինուորական գիտութեան տեսակէտից, բայց իրականութիւն է, որ կիրառած ժողովրդական-զինուորական ձեւերի շնորհիւ, առանց նիւթական եւ դրամական միջոցների, մի պատկառելի զինուորական ոյժ էր կազմակերպուած Թուրքերի դիմաց, որից կակնածէին նոքա»[1]:

Հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակութիւն ունեցող ժամանակում Երեւանում էր նաեւ հայկական զորքերի զինվորական կոմիսար Դրոն, որն իրեն հատուկ եռանդով, Արամի համագործակցութեամբ, ձեռնամուխ է լինում հայկական բանակի զորամասերի կազմավորման, ինչպես նաեւ մահմեդական հրոսակախմբերի պարբերաբար կրկնվող զինված ելույթները «խաղաղացնելու» աշխատանքներին:

Երեւանի նահանգում հայկական զորամասի կազմավորման գործում անգնահատելի է նաեւ այդ նույն զորամասի(Հայկակական բանակային կորպուսի 2-րդ դիվիզիա-Հ. Գ.) հրամանատար գեներալ Մովսես Սիլիկյանի ներդրումը:

Ս. Վրացյանի գնահատմամբ՝ «Արամի խոհեմ դիւանագիտութիւնն եւ Դրոյի երկաթէ բազուկը, ինչպէս եւ տեղական գործիչների իմաստուն ու անձնուէր ճիգերը, երկար ժամանակ, համեմատաբար, խաղաղ պահեցին Արարատեան Դաշտը»[2]:

Ջնայած խաղաղությունը պահպանելու նկատառումով հայկական կողմի գործադրած ջանքերին, թիկունքում եւ մասնավորապես Ս. Վրացյանի մատնաշած «Արարատեան Դաշտ»ում տիրող կացությունն ավելի ու ավելի էր շիկանում ու սպառնալի դառնում:

Երեւանի նահանգում խիստ տագնապալի կացությունն էին ստեղծում նաեւ քուրդ հրոսակախմբերը, որոնք 1917 թ. գարնանը գետանցելով Արաքսը, Թուրքիայի եւ Պարսկաստանի տարածքից պարբերաբար ներխուժում էին Երեւանի նահանգ ու միանալով իրենց հավատակիցներին, հարձակվում եւ բռնությունների, թալանի ու ավարառության էին ենթարկում հայկական գյուղերը: Քրդերի

[1] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 7, էջ 330-331:
[2] Վրացեան Ս., «Կեանքի ուղիներով», հ. Դ, էջ 178::

հարձակումներն առավել հաճախակի կրկնվել է Դրոյի հայրենի Սուրմալու գավառում:

ՀՅԴ պաշտոնաթերթ «Հորիզոն»-ը փաստելով թուրքական եւ պարսկական քրդերի ավազակային գործողությունների ծավալների ընդարձակման իրողությունը՝ նշում է. «Վերջերս Արազդայանով դեպի Նոր-Բայազետի անւանի ամառանոց Այրինջա են դիմել 170 հոգի Ջալալի քրդեր, բոլորն էլ հեծեալ եւ զինուած տաճկական երեք-գծանի հրացաններով: Եղջիւրաւոր անասուններ քշել-տանելը, գիւղերի վրայ յարձակուելը, սպանութիւնը, թալանը, կանանց փախցնելը եւ բռնաբարելը կամաց-կամաց սկսում են զանգւածային կերպարանք ստանալ: Ջալալցիների ընդհանուր թիւը սկսած Բայազետ-Օրգով գծից մինչեւ Մասիսի ու Պարսկաստանի սահմանները՝ հասնում է, ըստ հեղինակաւոր աղբիւրների՝ 9-10 հազարի...»[1]:

Երեւանի նահանգում կացությունը վատթարագույնի էր հասցրել նաեւ այն հանգամանքը, որ մի քանի հարյուր հազարների հասնող գաղթականության զգալի մասը խմբվել էր Արարատյան աշխարհում: Անհրաժեշտ էր թուրք-քուրդ ավազակախմբերի անընդմեջ հարձակումներից պաշտպանել եւ կերակրել արդեն սովամահության գիրկն ընկած գաղթականությանը:

Այդ օրերին արեւմտահայ գաղթականների հոծ բազմության հետ էջմիածնի, Աշտարակի շրջաններն է հասնում Կարո Սասունին եւ ապա գալով Երեւան՝ ներկայանում է Ազգային Խորհրդի (Հատուկ Կոմիտե) անդամներին:

«Հոն էր, - վերհիշում է Կարո Սասունին, - Արամը, իբրեւ լիազօր, հոն էր Դրօն, իբրեւ զինական ուժերու հրամանատար: Կարճ էր իմ զեկուցումը:

- Տեղահան ժողովուրդը, բաց երկնքի տակ, զօրամասեր եւ ժողովրդական բանակ, առանց կայանի ու ամէն օր կռիւ՝ շրջապատի թաթարներու հետ:

Կարկուտ տեղաց իմ գլխուն, զեկուցումը երբ վերջացրի:

Սահակ Թորոսեան եւ քանի մը այլ ընկերներ, որոնք Ազգային Խորհրդի անդամ էին, իմ վրայ յարձակուեցան բուռն քննադատութեամբ.

- Այս ի՞նչ կողոպուտ ու թալան, այս ի՞նչ մարդասպանութիւն է, մենք ընկերվարականներ ենք, այս արարքներուն վերջ պիտի տրուի:

Զարմացած կը նայէի Ազգային Խորհուրդի անդամներուն զայրացած դէմքին:

[1] «Հորիզոն», 1917, օգոստոսի 20:

- Բայց, ընկերներ, Էջմիածնի եւ Աշտարակի շրջաններուն մէջ մեր զինուորներէն յիսունէ աւելի զոհեր խլած են թաթարները, իսկ Թալինի ապստամբները 19 սասունցիների արիւնը թափած են անոր պարիսպներուն տակ:

Մտիկ ընողի դէմք չունէին իմ ունկնդիրները: Ես ալ զայրացած էի: Նայեցայ Արամին:

Արամ եւ Դրօն ոտքի ելան...

- Դուք հանդարտօրէն գնացէք, եւ ձեր գործը շարունակեցէք: Կարեւորութիւն մի տաք ըսածներուն: Կացութիւնը չեն ըմբռնէր:

Արամի եւ Դրօյի հաւաստիքները զիս հանդարտեցուցին»[1]:

Արամն ու Դրոն երկրում տիրող կացությունը ճիշտ էին ըմբռնել եւ խորապես կշռադատված գիտեին իրենց գործը: Հատկապես Դրոն, որն այդ օրերին պետք է առաջնորդեր Երեւանի նահանգում բռնկված մահմեդական հրոսակախմբերի զինված ելույթները ճնշելու նպատակով կազմավորվող նոր զորամասերը, գերազանց էր ըմբռնել, որ Հայաստանի տարածքում մահմեդական բնակչության զանգվածային զինված ելույթները ճնշելու ու արմատախիլ անելու եւ ռազմաճակատի թիկունքն ամրապնդելու միակ երաշխիքը զենքն է ու մարտունակ զորամասերի առկայությունը:

Ներկայացնելով ռազմաճակատում ու Երեւանի նահանգում տիրող իրավիճակն ու այնտեղ տեղի ունեցող առավել արմատական նշանակություն ունեցող դեպքերը, Ս. Վրացյանը գրում է. «Թէ զօրամասերի մէջ տիրող անիշխանական տրամադրութեան վերջ տալու եւ թէ նահանգում ծայր տուած անկարգութիւնները զսպելու նպատակով Արամն ու Դրօն անհրաժեշտ գտան ստեղծել առողջ զինուորական մի կորիզ, որի վրա յենուած կարողանային երկրի մաքրագործման ու խաղաղութեան գործը դնել իրական հիմքերի վրա: Այդ նպատակով Դրոյին յանձնարարուեց կազմել մի հետեւակ բրիգադ եւ մի ձիաւոր դիվիզեօն»[2]:

Գլխավոր վտանգը ներկայացնում էր ներքին թշնամին՝ թուրքական եւ քրդական վաղօրոք շատ լավ զինված հրոսակախմբերը, որոնք կազմ ու պատրաստ հարմար պահի էին սպասում՝ ասպատակելու հայկական բնակավայրերը: Նրանց դեմ պայքար ծավալելու նպատակով Երեւանի նահանգում հատուկ նշանակության զորամիավորումների կազմավորման (չպետք է շփոթել հայկական բանակային կորպուսի զորամիավորումների հետ, որոնք արդեն հիմնակա-

[1] Արամը, Երեւան, 1991, էջ 536-537:
[2] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, 1982, Թեհրան, էջ 122:

նում կազմավորվել էին եւ գտնվում էին ռազմաճակատում- Հ.Գ.) համար անհրաժեշտ էր նաեւ Կովկասյան ռազմաճակատի հրամանատարության թույլտվությունը:

1918 թ. հունվարի 26-ին Հայոց Ազգային Խորհուրդը Կովկասյան ռազմաճակատի գլխավոր շտաբին դիմում է հետեւյալ խնդրանքով. «Բանակի կոմիսար Դրոյի զինվորական միավորումների կազմավորման համար խնդրում ենք հրամայել Ալեքսանդրապոլից պարտիզանական զորամաս տեղափոխել 10-րդ հեծյալ հարյուրակը»[1]:

Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը մինչեւ իրեն յուրահատուկ դանդաղկոտությամբ կհասցներ պատրաստել հրամանների նախագծերը, Դրոն, չսպասելով վերին հրամանատարության պատասխանին, կարճ ժամանակահատվածում հասցնում է կազմավորել առանձին հատուկ նշանակության բրիգադը: Նոր զորամիավորման միջուկն էին նրա մարտական զինակիցներ Խոսրով Եղիազարյանի եւ բաշգառնեցի Մարտիրոս Աբրահամյանի, պորուչիկ Սերյոժա Փիրումյանի, գանձակեցի Զեմլյակի (Արտեմ Նանումյան) եւ «Ալաղաղի արշավանքի» մասնակից կապիտան Կորոլկովի հրամանատարությամբ գործող հեծյալ հարյուրակները, որոնք հետագայում միավորվելով գնդապետ Կորոլկովի հրամանատարությամբ՝ կազմեցին պարտիզանական 2-րդ հեծյալ գունդը:

Անդրադառնալով Դրոյի գլխավորությամբ կազմավորվող զորամասի մանրամասներին՝ Ս. Վրացյանը նշում է. «Դրօն իսկոյն գործի կանչեց հմուտ խմբապետներ Բաշ Գառնեցի Մարտիրոսին, Խոսրով Եղիազարեանին եւ յանձնարարեց նրանց՝ ստանձնելով ռուսների թողած 800 ձիերը՝ ձեռնարկել կամաւորների հաւաքման: Երկու օրւա ընթացքում հաւաքուեցին աւելի քան 200 զինուորներ, մեծ մասամբ կամաւորական 2-րդ գնդի նախկին մարտիկներից: Միաժամանակ կոչ ուղղուեց սուրմալեցիներին, եւ ահա դէպի Երեւան շարժուեցին զինուորներ ու սպաներ սպայ Սահակեանի ու Շաւարշեանի ղեկավարութեան տակ:

Մի շաբաթւայ մէջ կազմուեց 6 վաշտ հետեւակ՝ պարտիզանական գնդի, իւրաքանչիւր վաշտը 200 սւին, եւ երկու ձաւոր հարիւրակ՝ Խոսրովի ու Մարտիրոսի...

Գնդապետ Զալինեանին յանձնարարեց՝ ընդունելով 2-րդ սահմանապահ գնդի Քանաքեռում թողած գոյքը, ձիերն ու ռուս սպաների մի մասին՝ կազմակերպել մի ձիաւոր գունդ: Այդ ռուս սպանե-

[1] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 119. թ. 15:

րի մէջ էր եւ գնդ. Կորոլկովը(այդ ժամանակ նա դեռեւս կապիտան էր-Հ. Գ.), որը նշանակուեց պարտիզանական գնդի ձիաւոր դիվիզիոնի հրամանատար եւ կարգադրութիւն ստացաւ կազմելու 3-րդ հարիւրեակը սպայ Փիրումեանի հրամանատարութեան տակ: Մի ուրիշ սպայ՝ փոխ- գնդապետ Պերեկրեստովը նշանակուեց հրամանատար պարտիզանական հետեւակ գնդի»[1]:

Ս. Վրացյանի ներկայացրած փաստերը իր հուշերում հաստատում է նաեւ Մարտիրոսը՝ նշելով. «Դրոյի հրահանգով գնդ. Զալինեանը Քանաքեռում կազմակերպում էր հայկական երկրորդ հեծելագունդը, գնդ. Պերեկրոստովը՝ պարտիզանական հետեւակ գունդը:

Առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ եւ վեցերորդ հայկական գումարտակները լրացւում եւ վերածւում են գնդերի:

...Մինչ այդ Դրոյին օժանդակում էր գնդ. Դանիել Բէկ Փիրումեանը: Այդ օրերին Երեւան եկաւ Զօր. Սիլիկեանը եւ տեսնելով տիրող եռ ու զեռը՝ ցանկութիւն հայտնեց մասնակցել ուժեր կազմակերպելու գործին...

Եւ պիտի ասել, որ նա շատ կարեւոր աշխատանքներ կատարեց...»[2]:

Թուրք եւ քուրդ զինված հրոսակախմբերի դեմ պայքարելու նպատակով Երեւանի Ազգային Խորհուրդը գործնական քայլեր է ձեռնարկել՝ կռիվներին մասնակից դարձնելով նաեւ Արարատյան աշխարհում ապաստանած եզդիներին, որոնց նկատմամբ թուրք հրոսակախմբերը գործել էինբազմաթիվ բռնութիւններ:

Համաձայն Հ. Թուրշյանի պնդման, Մայիսյան հերոսամարտերի նախօրեին Ալեքսանդրապոլում Գարեգին Նժդեհը փորձել է զորամաս կազմակերպել եզդիներից, սակայն նրան չէր հաջողվել կազմավորել եզդիներից բաղկացած մարտական խմբերը: Այդ ուղղութեամբ ավելի արդասաբեր են եղել Դրոյի ջանքերը: Այն, ինչ չի հաջողվել իրականացնել Նժդեհին, իրականացրել է Դրոն[3]:

Հ. Թուրշյանի հավաստմամբ՝ «Դրոյին հաջողվում է զենքի ընդունակ բոլոր եզդիներին ոտքի հանել նրանց ճանաչված Զհանգիր աղայի հրամանատարութեամբ: Այդ ժամանակ Արագածի երկու լանջերին և Արարատյան դաշտումն էին գտնվում Վանի վիլայեթից գաղթած Զհանգիր աղայի եզդիները, որոնք կարող էին տալ մինչև 1500 կռվող: Այդ վայրերում էին գտնվում նաև Սինագի ռուսահպատակ եզդիները՝ հայկական կրթություն ստացած ճեմարական Ուսուբ բեյի (ուսանել է Գեւորգյան ճեմարանում ու աշակերտել Կոմիտասին-Հ. Գ.) ղեկավարությամբ:

[1] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 122-123:
[2] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, նշվ. աշխ., էջ 370-371:
[3] Տե՛ս Թուրշյան Հ., Սարդարաբատի հերոսամարտը, Երևան, 1965, էջ 164:

Կարսի հայերի հետ նահանջել և Արագածի հյուսիսային լանջերին էին ապաստանել Կարսի եզդիները, որոնք Ուսուբ բեյի հետ միասին կարող էին տալ մի քանի հարյուր կռվող: Բաշ-Ապարանի կռիվների օրերին Զհանգիր աղան միավորում է բոլոր եզդիներին և շուրջ 1500 հեծյալ ու հետևակ կռվողներով մասնակցում է Բաշ-Ապարանի կռիվներին»[1]:

Պիտի նկատել, որ այդ գործում Դրոյին անտարակույս օգնել ու աջակցել է եզդիների առաջնորդ Ուսուբ բեկը (Ուսուբ բեկ Թեմուրյանց, Անդրկովկասի եզդիների առաջնորդ, հետագայում Հայաստանի Հանրապետության պառլամենտի անդամ-Հ. Գ.), որը նույնպես Իգդիրցի է, Դրոյի հայրենակիցը:

Հայտնի է, որ նրանց ընտանիքները Իգդիրում բնակվելիս եղել են ջերմ բարեկամականներ, իսկ «Դրոն և Ուսուբ բեկը փոքրուց չփվել, ընկերություն են արել, և այս երկու ընտանիքները հաճախ հյուրընկալել են միմյանց: Ուսուբյանները միշտ շեշտում են, որ Դրաստամատ Կանայանը եղել է Ուսուբ բեկի քավորը»[2]:

Փոքր-ինչ առաջ ընկնելով ասենք, որ Մայիսյան հերոսամարտերին հերոսաբար մասնակցելու համար եզդիական գումարտակի հրամանատար պորուչիկ Ուսուբ բեկ Թեմուրովը 1918 թ. գեներալ Մ. Սիլիկյանի հրամանով պարգեւատրվել է 4-րդ աստիճանի Գեորգեյան խաչ շքանշանով[3]:

Անժխտելի է Զհանգիր աղայի գլխավորած եզդիական հեծելազորի մասնակցությունը Սարդարաբատի ու Բաշ Ապարանի ճակատամարտերին: Այսուհանդերձ, պիտի նշել, որ Հ. Թուրշյանի վկայակոչած եզդիների զորամասի «...1500 հեծյալ ու հետևակ» թվաքանակն ավելի քան չափազանցված է:

Նրա հրամանատարությամբ Սարդարաբատի եւ Ապարանի ճակատամարտերում մասնակցած եզդիական հեծելազորը բաղկացած էր ավելի քան 300 հեծյալ մարտիկներից: Պիտի խոստովանել, որ կռիվներում բովով անցած 300 փորձառու մարտիկներից բաղկացած հեծելազորն այդ օրերին մարտական զգալի ուժ էր:

Երեւանի նահանգը վերածվել էր թուրք զինված հրոսակախմբերի ռազմական գործողությունների թատերաբեմի:

«Արդէն 1918 թ. յունուարից սկսած,-գրում է Ս. Վրացյանը,- Երեւանեան նահանգը գրեթէ ամբողջապէս թաթերաբեմ էր դարձել մահմետական խռովութիւնների: Զուգընթացաբար թրքական շար-

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս ՀԱԱ ֆ. 204, ց. 1, գ. 42, թ. 145:

ժումներ էին տեղի ունենում եւ Կարսի, Թիֆլիսի ու Գանձակի նահանգներում՝ բոլոր այն վայրերում, որոնք որեւէ կապ ունէին ճակատի պաշտպանութեան հետ»[1]:

Խռովութիւնները մոտենում էին Երեւանին: Մայրաքաղաքի մոտակայքում գտնվող Զանգիբասարի շրջանը (ներկայիս Մասիսի շրջանը - Հ.Գ.) վերածվել էր Թուրք զինախմբերի յուրօրինակ ռազմակայանի: Հունվարի 29-ին Երեւանի հատուկ կոմիտեն ստանում է հետեւյալ տագնապալի հեռագիրը.

«Ուլուխանլու-Նախիջեւան երկաթուղային հատուածին վրայ կացութիւնը այն աստիճան սպառնական է, որ եթէ անմիջապէս զբահապատ կառախումբ մը չի ղրկուի՝ հաղորդակցութիւնները երկար ատենուայ համար պիտի դադրին: Արաքսի եւ Գարապուրունի կայաններուն միջեւ գտնուող Մասթաբայի կայարանին վրայ քիւրտերը երկրորդ անգամ ըլլալով յարձակում գործած են: Յարձակումը յետ է մղուած: Պաշտօնեաները պահակազօրքի եւ զէնքի առաքումը կը խնդրեն»[2]:

Այս հեռագրից մի քանի օր անց Թուրքերը գրավում են Ուլուխանլու կայարանը եւ անվարան կոտորում մոտեցող գնացքների վագոններում գտնվող հայերին: Ուլուխանլու կայարանի գրավումով փաստորեն կտրվում է Կարս-Ալեքսանդրապոլ-Երեւան երկաթուղային ուղին: Ջնայած Արամի, Դրոյի եւ Թուրք պատասխանատու գործիչների միջեւ կայացած վիճելի հարցերը խաղաղ ճանապարհով լուծելու համաձայնությանը՝ իրավիճակը մնում էր շատ բարդ ու անկառավարելի: Նույն օրերին Թուրք զինյալները պաշարում են Կողբ գյուղաքաղաքը եւ շրջափակում Իգդիր-Երեւան ճանապարհը, դրանով իսկ ողջ Սուրմալուի գավառը կտրում Արարատյան դաշտից:

Նույնիսկ քրդական ավազակախմբերը՝ չուզենալով ձեռքից բաց թողնել հայ գյուղերը թալանելու ու կողոպտելու պատեհ հնարավորությունը, անցնում էին Արաքսը եւ հարձակվում հայկական գյուղերի վրա:

Ցավոք է անվերապահ ընդունել, որ առավելապես ավարառության նպատակներ հետապնդող քրդերը մարտավարական առումով անկազմակերպ էին ու անմարտունակ, իսկ նրանց կռիվը կրում էր ոտի ամբոխային ու հախուռն բնույթ: Նրանց մասնակցությամբ տեղի ունեցած կռիվների մանրամասների ուսումնասիրությունը

[1] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 123:
[2] «Հայրենիք» օրաթերթ, 1918, հուլիսի 13:

մատնանշում է , որ 1917 թ. գարնան ու ամռան ամիսներին Թուրքիայի եւ Պարսկաստանի տարածքից Երեւանի նահանգ ներխուժած քուրդ հրոսակախմբերը իրենց գործելակերպի յուրահատկությամբ ու մարտավարությամբ արմատապես տարբերվում էին հայությանը քաջածանոթ քրդերից, որոնց ավազակային գործողությունները գլխավորապես միտված էին հիմնականում թալանի ու ավարառության:

«Հորիզոն»-ում տպագրված «Քրդական վտանգը» խորագիրը կրող հոդվածի հավաստմամբ՝ Թուրքիայի ու Պարսկաստանի տարածքից Երեւանի նահանգ ներխուժած քրդական հրոսակախմբերի բոլոր անդամներն էլ երիտասարդ էին եւ անխտիր շատ լավ զինված՝ գլխավորապես ռուսական մոսին հրացաններով: Ավելին, «Հորիզոն»-ի հավաստմամբ՝ «Բոլոր քրդերը մարզված են ռազմական տեսակետներով: Նրանք այսօր չեն ներկայացնում սոսկ զինված մարդկանց մի մասսա, այլ պատրաստված, կանոնաւոր զօրք:

...Քրդերի յարձակումները սովորական աւազակային չեն, այլ կատարեալ արշաւներ են՝ ռազմական բոլոր մանրամասներով[1]:

Քրդական զինյալ հեծելախմբերի շարունակաբար կրկնվող հարձակումների ու ավազակային գործողությունների հետեւանքով կացությունը տագնապալի է դառնում ոչ միայն Երեւանի նահանգի գավառներում, այլեւ Երեւան քաղաքում:

«Այս ամենը,-նշում է Ա. Աստվածատրյանը,-բարձրացնում էր քաղաքի (Երեւան) մահմեդական խուժանի տրամադրությունը: Եւ ահա փետրվարի 22-ին Երեւանը եւս դարձավ թատերավայր հուզումնալի դեպքերի: Միայն երկու կողմերի ներկայացուցիչների պաղարյունությամբ և Արամի ու Դրոյի ջանքերի շնորհիվ կարելի եղավ փրկել քաղաքը անդարմանալի աղետից»[2]:

Ըստ «Քրդական վտանգը» հոդվածագրի՝ քրդերի գործողությունները, որոնք որպես կանոն կրում էին ամբոխային ու ավազակային բնույթ, այս անգամ բոլորովին այլ էին, ոչ ավազակային ու ավարառու:

Սթափ գնահատելով քուրդ զինյալ խմբերի գործողությունների յուրահատկությունն ու մարտավարությունը՝ «Հորիզոն»-ի հոդվածագիրը գտնում է, որ «Այստեղ անկասկած է քաղաքական աստառը, ամէն քայլափոխում, ամէն մի շարժման մէջ նկատելի է ծրագրւած գործունեութիւն:

[1] «Հորիզոն», 1917, սեպտեմբերի 2:
[2] Տե՛ս Աստվածատրյան Ա., Սարդարաբատի պատմաշինութը եւ այլ երկեր, էջ 694:

...Զտեսնել եւ չմբռնել, թե այստեղ մեր թշնամու մատը կայ, նշանակում է կոյր լինել կամ գիտակցաբար աչք գոցել կատարուող անցուդարձերի հանդէպ...»:

Հիմք ունենալով վերոհիշեալ նախադրեալները՝ հոդվածագիրը եզրակացնում է. «Այս ծրագրած քրդական շարժումները հենց մի նպատակ ունեն-վտանգել թիկունքը, խանգարել հաղորդակցութիւնը, «աբոզի» երթեւեկութիւնը, զօրքի ազատ շարժումը...Անկասկած է մեզ համար նաեւ մի բան, այն կապը, այն գաղտնի յարաբերութիւնը, որ կայ քրդերի, քրդական ներկայ շարժման եւ որոշ թրքութեան մէջ...»[1]:

Փոքր-ինչ առաջ ընկնելով՝ նկատենք, որ ժամանակը միանշանակ ապացուցեց վերոհիշյալ հոդվածագրի եզրահանգումներն ու փաստարկումները:

Այդ օրերին Անդրկովկասյան Սեյմն ու կոմիսարիատը եւ Հայոց Ազգային Խորհուրդը պարբերաբար Հայաստանի տարբեր շրջաններից ստանում էին բազմաթիվ բողոք-հեռագրեր, որոնցում հայ բնակչությունը ցասումով հայտնում էր մահմեդական զինված խմբերի ու զորքերի միջեւ տեղի ունեցած բախումների եւ հայկական բնակավայրերում ու հաղորդակցության հանգույցներում թուրք եւ քուրդ հրոսակախմբերի կողմից գործած վայրագությունների մասին[2]:

Ռազմաճակատի բախտը, հետեւաբար հայ ժողովրդի գոյության խնդիրը մեծապես կախված էին նաեւ թիկունքում՝ Արարատյան աշխարհում ծավալվող իրադարձություններից հետագա ընթացքից: Հայաստանից Թիֆլիս առաքվող բազմաթիվ բողոք-հեռագրերի եւ հայ-թուրք բախումների արձագանքների հարկադրանքով Անդրկովկասյան կառավարությունը (կոմիսարիատ) տեղում ընդհարումների պատճառները ուսումնասիրելու ու համապատասխան վճիռներ կայացնելու նպատակով բարեհաճում է «հաշտարար դատավորների ու քննիչների» հանձնախումբ ուղարկել Երեւան: Անդրկովկասյան կոմիսարիատի պատվիրակության անդամներն էին Խաչատուր Կարճիկյանն (Խ. Կարճիկյանը Անդրկովկասյան կառավարության ֆինանսների նախարարն էր-Հ. Գ) ու Զաֆարովը[3]:

Անդրկովկասի Սեյմի եւ Կառավարության (Կոմիսարիատ) պատվիրակության խնդիրն էր. մանրակրկիտ ուսումնասիրել եւ ծանոթանալ Երեւանի նահանգում ու նրա հարակից շրջաններում տիրող կացությանը եւ հակամարտող կողմերի ներկայացուցիչների

[1] «Հորիզոն», 1917, սեպտեմբերի 2:
[2] Տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 124-131:
[3] Տե՛ս Աստվածատրյան Ա., նշվ. աշխ., էջ 694:

մասնակցությամբ քննարկել ու բացահայտել զինված համկամարությունների ուղղվածությունն ու պատճառները եւ համապատասխան քայլեր ու միջոցներ ձեռնարկել դադարեցնելու զինված բախումներն ու հաստատելու խաղաղ իրավիճակ:

Պատվիրակության անդամները համաձայն իրենց տրված հանձնարարականի, Հայաստանում տեղի ունեցող դեպքերին առավել մոտիկից ծանոթանալու նպատակով այցելում են հայ եւ մահմեդաբնակ մի քանի գյուղեր: Պատահել են դեպքեր, որ մահմեդաբնակ գյուղերում պատվիրակության անդամներին դիմավորել են շատ վատ, իսկ փետրվարի 15-ին «Ալեքսանդրապոլի մոտ Մոլլա-Մուսա(Թուրք) (ներկայիս՝ Ոսկեհասկ) գիւղի բնակիչները յարձակուեցին իրենց մօտ եկող պատգամաւորութեան վրայ, սպանեցին զինուորական խորհրդի ներկայացուցիչ համակրելի հասարակական գործիչ Ասրիբէկեանին և ուրիշ վեց հոգու ու վիրաւորեցին վեց հոգու...

Այս դէպքը ահագին յուզում առաջ բերեց: Մոլլա-Մուսա գիւղը ենթարկուեց թնդանօթաձգութեան: Կայարանում գտնուող վաթսուն թուրքերը տարուեցին քաղաքից դուրս ու կոտորեցին...»[1]:

Պատվիրակները լինում են ամենաչիկացած տեղամասում՝ Ուլուխանլու կայարանում, որտեղ նրանց դիմավորում են թուրք զինվորներից բաղկացած կայարանի զինված պահակախումբն ու մի քանի հարյուր զինված թուրք գյուղացիներ եւ ձիավորներ:

Ավելի քան զարմանալի ու վրդովեցուցիչ էին կոմիսարիատի պատվիրակությանը ներկայացրած մահմեդականների ներկայացուցիչների հետեւյալ պահանջները..

1. «...մահմեդականներին տրվի այն քանակությամբ զենք, ինչ քանակությամբ որ համապատասխան է իրենց ազգաբնակչության թվին»[2]:

Մահմեդական հրոսակախմբերի շարունակաբար կրկնվող զինված ելույթներն արդեն միանշանակ ապացուցել էին, որ նրանք շատ լավ զինված էին ու կազմակերպված: Այս պարագայում կոմիսարիատի ներկայացուցիչներին ներկայացնելով մահմեդականներին զենք հանձնելու պահանջը, նրանք դրանով ձգտում էին, որ իրենց զենք կրելու կարգավիճակը համարվի անհրաժեշտ ու օրինական, իսկ զինված ելույթները դիտվեին ոչ թե որպես ապստամբ ձեռնարկներ, այլ սոսկ ինքնապաշտպանություն:

Կոմիսարիատի ներկայացուցիչների գլխավոր խնդիրը ոչ միայն խաղաղության հաստատումն էր, այլեւ երկաթուղու երթեւեկության

[1] Արամ Մանուկյան(Փաստաթղթերի ու նյութերի ժողովածու), Երեւան, 2009, էջ 461:
[2] Աստվածատրյան Ա., նշվ. աշխ., էջ 696:

վերականգնումը: Այս հարցում մահմեդական կողմի դիրքորոշումն ու պահվածքը եղել են ավելի քան կոշտ ու անզիջող:

2. Մահմեդականների ներկայացուցիչները հայտնում են, որ «...իրենք թույլ չեն տա երկաթուղային հաղորդակցության վերականգնումը, մինչև որ հիմնական պահանջը չգոհացվի: Եթե հայերը կամենում են խաղաղությամբ կարգադրել այս բախումը, նրանք պարտավոր են անհապաղ լուծել իրենց զորագնդերը, և զենքերը հանձնել թուրքերին, այլապես իրենց թույլ տա կարգի վերականգնում»[1]:

Որեւէ կասկած լինել չի կարող, որ մահմեդական կողմը քաջատեղյակ էր Երեւանի նահանգում հայկական զորագնդերի կազմավորման իրողությանը եւ այդ պատճառով նրանց համար առաջնահերթ ու կեսական նշանակություն ուներ հայկական զինուժի զինաթափումն ու լուծարումը:

Ա. Աստվածատրյանի գնահատմամբ՝ «Միանգամայն պարզ է, որ տեղական մահմեդական բնակչության ներկայացուցիչների բերանով տրված այդ պահանջը(հայկական զորամասերի լուծում և զենքերի հանձնումը թուրքերին) անողը տաճիկ հրամանատարությունն էր, որ կուզեր առանց դիմադրության հանդիպելու մտնել Անդրկովկաս»[2]:

Խ. Կարճիկյանն ու Ջաֆարովը Երեւանի նահանգում իրենց տեսածն ու դիտարկումները պիտի ներկայացնեին Կոմիսարիատի ու Սեյմի քննությանը:

Ճակատագրի ինչպիսի դառը հեգնանք. պատմությունը կրկնվում է: Ճիշտ 13 տարի առաջ՝ 1905 թ. իր իսկ թելադրանքով կովկասյան թուրքերի կողմից արեւելահայության նկատմամբ գործադրած բռնությունների ու սպանությունների հետեւանքով բռնկված հայ-թուրքական ընդհարումները տեղերում «ուսումնասիրելու եւ խաղաղեցնելու» նպատակով Անդրկովկասյան փոխարքայության իշխանությունները մեկը մյուսի հետեւից Երեւանի նահանգ էին գործուղում կեղծ, մտացածին հանձնախմբեր ու «հաշտարար դատավորներ», որոնց «ուսումնասիրություններն ու զեկուցագրերը» որեւէ ազդեցություն չէին ունենում խաղաղություն հաստատելու գործում:

1918 թ. հայ-թուրքական ընդհարումների նկատմամբ իր դրսեւորած վերաբերմունքով Անդրկովկասի կառավարությունը, կարծես ժառանգելով Վորոնցով-Դաշկովի փոխարքայության «բարի»

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

ավանդույթները, նույնպես «քննիչների» եւ «հաշտեցնողների» հանձնախմբեր է առաքում Երեւանի նահանգ:

Երեւանի նահանգի մահմեդական Ազգային խորհուրդը Կոմիսարիատի պատվիրակությանն ու հայկական կողմին անթաքույց խոստովանում է, որ ինքը պատասխանատու չէ մահմեդական բնակչության հակաօրինական խայտառակ գործողությունների համար:

Ա. Աստվածատրյանի գնահատմամբ՝ «Դրանով մահմեդական Ազգային Խորհուրդը անուղղակի կերպով խոստովանում էր նաև, որ այդ թուրք բնակչությունը ենթարկվում էր «դրսից» արված կարգադրություններին, իսկ այդ «դուրսը» Թուրքիան էր՝ կռնակ ունենալով Ադրբեջանի քաղաքական գործիչներին»[1]:

«Հաշտարարների» գործունեությունից պարզորոշ ակնառու էր, որ այն կոչված չէր բացելու թուրք զինախմբերի կողմից երկաթուղու եւ հաղորդակցության մյուս ուղիների շրջափակումը: Թուրքական կողմի ղեկավարությունը նույնպես անզիջողական ու թշնամական կեցվածք էր որդեգրել:

Եվ մինչ «հաշտարարների» հանձնախումբը տեղերում զբաղվում էր ընդհարումների պատճառների ուսումնասիրությամբ, թուրք զինախմբերի ելույթներն ավելի ու ավելի էին ծավալվում Դավալուի (Արարատ), Ղամարլուի (Արտաշատ) եւ Նախիջեւանի, Շարուր-Դարալագյազի եւ այլ շրջաններում:

Խռովությունները խաղաղեցնելու նպատակով Երեւանի Ազգային Խորհրդի նախաձեռնությամբ գումարվում է հայերի եւ թուրքերի ներկայացուցիչների ժողով, որի մասնակիցները քննարկելով նահանգում ստեղծված ծանր կացությունը, կայացնում են մի շարք որոշումներ, որոնցից առավել կարեւորներն էին՝ «քաղաքը հայտարարել պատերազմական դրության մէջ, կազմել ռազմա-յեղափոխական դատարան, բանալ ճանապարհները՝ ապահովելու համար զօրամասերի մեկնումը ռազմաճակատ...»[2]:

Ժողովում Արամ Մանուկյանը մասնակիցներին կոչ է անում գործադրել հնարավոր բոլոր միջոցները վերջ տալու նահանգում տիրող անիշխանությանն ու զինված բախումներին:

Հակառակ հայկական կողմի՝ ժողովին մասնակցող մահմեդական Ազգային խորհրդի ներկայացուցիչները հայտարարում են, որ անկարող են զսպել թուրքերին եւ խնդրում են հայ զինվորական մարմնի աջակցությունը: Այս հայտարարությունն ավելի քան տա-

[1] Նույն տեղում, 694:
[2] Տե՛ս Արամ Մանուկյան, Երեւան, 2009, էջ 462:

բորինակ է ու անհասկանալի: Ստացվում է, որ թուրք բնակչությունը չէր ենթարկվում Ազգային Խորհրդին: Հարց է ծագում. իսկ ո՞ւմ էր նա ենթարկվում[1]:

Մահմեդական Ազգային խորհրդի ներկայացուցիչների պահվածքը միանգամայն հասկանալի է: Թուրք բնակչության զինված ելույթները թելադրված էին թուրքական բանակի հրամանատարության կողմից, իսկ Մահմեդական Ազգային խորհրդի ներկայացուցիչները ոչ միայն քաջատեղյակ էին այդ իրողությանը, այլեւ գործում էին հենց նրա թելադրանքով:

Ա. Աստվածատրյանի գնահատմամբ՝ «Այժմ բոլորի համար պարզ էր, որ ստեղծուած վիճակը անտանելի էր: Եթէ նրան վերջ չտրուէր, ո՛չ ռազմաճակատին կարելի էր օգնութեան հասնել, ո՛չ էլ թիկունքում կարգ հաստատել,-մի բան, որին ձգտում էր թշնամին»[2]:

Ապարդյուն էին նաեւ Թիֆլիսից Երեւան ժամանած Անդրկովկասյան Կոմիսարիատի պատվիրակության թուրք բնակչությանը ներկայացրած զինված ելույթները դադարեցնելու ու իշխանություններին ենթարկվելու պահանջները:

Պատվիրակության անդամներն անարդյունք վերադառնում են Թիֆլիս եւ իրենց ուսումնասիրության մասին զեկուցումներ են ներկայացնում Անդրկովկասյան Սեյմի ու Կոմիսարիատի քննությանը: Խ. Կարճիկյանի ու Ջաֆարովի զեկուցումները տեղիք են տալիս բուռն վեճերի ու քննարկումների:

«Մահմեդական պատգամավորները մեղադրում էին հայերին, թե նրանք Երեւանի նահանգը մաքրում են մահմեդական բնակչությունից՝ «հայկական հող պատրաստելու համար»: Իսկ հայերը մեղադրում էին մահմեդականներին, որ նրանք իրենց հարձակումներով ու ավազակային շարժումներով անդամալուծել են կյանքը և անհնարին են դարձնում զորամասերին ճակատ ուղարկել»[3]:

Քանի որ պատվիրակության առաքելությունը Երեւանի նահանգ ավարտվել էր անարդյունք, իսկ մահմեդական բնակչության զինված ելույթները գնալով ավելի ու ավելի էին ծավալվում, Անդրկովկասյան Սեյմը մի նոր պատվիրակություն է ուղարկում, որի նախագահն էր վրացի Գեորգաձեն:

Երեւանի Ազգային Խորհրդի ու Հայկական բանակային կորպուսի զիվորական կոմիսար Դրոյի պահանջը Կովկասյան Սեյմի պատվիրակությունից նույնն էր: Ռազմաճակատում տիրող անմ-

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 463:
[2] Նույն տեղում:
[3] Աստվածատրյան Ա., նշվ. աշխ., էջ 695:

խիթար, տագնապալի իրավիճակը հրամայաբար պահանջում էր դադարեցնել թուրք զինված խմբերի ելույթներն ու անհապաղ բացել նրանց կողմից շրջափակված հաղորդակցության ուղիները, թիկունքում կազմավորվող զորամիավորումները հասցնել մարտադաշտ՝ համալրելու թուրքական բանակի հետ գոտեմարտի բռնված հայկական զորագնդերը:

Վերադառնալով Թիֆլիս՝ Գեորգաձեն Անդրկովկասյան Սեյմի ուշադրությանն է ներկայացնում Երեւանի նահանգում տեղի ունեցող զինված բախումներն արտացոլող մի զեկուցագիր, որը գրեթե նույն էր, ինչ օրեր առաջ Կոմիսարիատին Խաչատուր Կարճիկյանի ներկայացրածը:

Սեյմին ներկայացրած զեկուցագրում ներկայացնելով մահմեդական հրոսակախմբերի զինված ելույթների հետեւանքով Երեւանի նահանգում տիրող անմխիթար իրավիճակը՝ Գեորգաձեն նշում է. «...երկաթուղու վրա ոչինչ չեք գտնի. չկան կայարաններ, չկան շենքեր, ամեն ինչ թալանված է, ամեն բան փչացած: Կայարաններում չեք տեսնի ո՛չ մի կենդանի էակ, ո՛չ մի ծառայող, ամեն ոք հեռացել-կորել է, ոչինչ չի մնացել: Այս վիճակում են գտնվում Ուլուխանլու, Արարատ և ուիշ կայարանները: Պատվիրակության ունեցած տեղեկություններով դեպի Ջուլֆա տանող գծի վրա որևէ շարժում, զորամասերի որևէ փոխադրություն, ինչ զորամաս էլ ուզում է լինի՝ ռուս թե հայ, բոլորովին անհնարին է»[1]:

Գեորգաձեն պատվիրակության կողմից Սեյմի պատգամավորներին հայտնում է, որ թուրքերը ոչ միայն փակում են երկիրը թշնամու հարձակումներից պաշտպանելու նպատակով ռազմաճակատ մեկնող հայկական զորամասերի ճանապարհները, այլեւ իրենց գործունեությանը բնորոշ թալանչիությունն ու ավազակային հատկանիշները վերագրում հայ զինվորներին:

«Ահա այսպիսի հանգամանքներում, -նշում է Գեորգաձեն,-երբ ոչ միայն ազատ հաղորդակցութիւն չի կայ երկաթուղիներով, այլեւ փակուած է երթեւեկը գիւղերի միջեւ - այս դրութեան մէջ հայկական զօրքերի կոմիսար Դրօն յայտարարեց, որ բոլոր ռազմագիտական ճանապարհները փակուած են հայկական զօրամասերի առջեւ: Նա վճռական ու յամառ կերպով պահանջում էր, որ իրեն ցոյց տրուի որեւէ ճանապարհ, թէկուզ շատ վատ ու անյարմար, թէկուզ ամենաանցանկալի մի ճանապարհ: Այդ պահանջին նրան պատասխանուեց, որ ռազմագիտական բոլոր ճանապարհները փակուած են

[1] Նույն տեղում:

ռազմաճակատ գնացող հայ զորամասերի առջեւ: Մահմեդականների ներկայացուցիչները չառարկեցին»[1]:

Հիմք ընդունելով պատվիրակության նախագահ Գեորգաձեի զեկուցումը՝ Սեյմը, ուշադրության չարժանացնելով մահմեդական պատգավորների հնչեցրած բողոքներն ու պահանջները, ընդունում է մի բանաձեւ, համաձայն որի «...անմիջապես պետք է ձեռք առնվեն վճռական միջոցներ, որպեսզի զորամասերը(հայկական) կարողանան առանց արգելքի անցնել սահմանագլուխ»[2]:

Ճիշտ է, Սեյմը ընդունել է վերոհիշյալ որոշումը, բայց այն որեւէ գործնական նշանակություն չունեցավ ու չէր կարող ունենալ:

Քանի ու կովկայան թուրքերն ու Սեյմի նրանց ներկայացուցիչները առաջնորդվում էին թուրք իշխանությունների կողմից ստացած հրահանգներով, ուստի չէին կարող համաձայնել ու կատարել Սեյմի որոշումը: Իսկ Կովկասյան Սեյմն ու նրա գործադիր մարմինը՝ Կոմիսարիատը չունեին այն անհրաժեշտ ուժն ու լծակները, որպեսզի կարողանային հարկադրել մահմեդական կողմին՝ ընդունելու իրենց կայացրած որոշումը:Իսկ մահմեդական հրոսակախմբերն ու նրան առաջնորդները, բնավ ուշադրության չարժանացնելով Սեյմի ընդունած որոշումը, շարունակում էին փակ պահել թիկունքը ռազմաճակատին կապող հաղորդակցության ուղիները ու չթուլացող ուժգնությամբ հարձակումներ էին ձեռնարկում հայկական բնակավայրերի վրա:

Բնական է, որ Երեւանի Հատուկ Մարմինը, Արարատյան աշխարհում կազմավորվող հայկական զորքերի հրամանատարությունը(հրամանատար՝ գեներալ Մովսես Սիլիկյան) եւ իհարկե Դրոն չէին կարող սոսկ դիտորդի դերում լինել եւ մատնվել անգործության՝ հանգիստ դիտելով իրենց հայրենիքի կործանումը:

Այլեւս հապաղելու եւ թուրքերի հետ անիմաստ բանակցություններ վարելու ժամանակ չկար: Եթե հայկական զորամասերը եւ նրանց առաջնորդող Դրոն եւ Արամ Մանուկյանի գլխավորած Երեւանի Հատուկ Մարմինը անհապաղ չձեռնարկեին համապատասխան վճռական քայլեր, չջախջախեին ու չմարեին մահմեդական հրոսակախմբերի զինված ելույթները եւ չբացեին թիկունքը ռազմաճակատին կապող հաղորդակցության ուղիները, ապա թուրքական զորքերին առավել մեծ հնարավորություն կընձեռվեր սահմանափակ ժամանակահատվածում ներխուժել Արարատյան դաշտ

[1] Նույն տեղում, էջ 699:
[2] Նույն տեղում, էջ 700:

եւ այդ դեպքում Հայաստանն անտարակույս կարող էր հայտնվել անելանելի օրհասական իրավիճակում: Ստեղծված ծանրագույն իրավիճակում այլընտրանք ու ելք այլեւս գոյություն չուներ: Ելքը միակն էր՝ զենքի ուժը:

«Երեւանի զինուորական կոմիսար Դրոն պահանջեց գծի ապահովությունը Կովկասեան Սեյմի հաշտարար ներկայացուցիչներից, եւ սպառնաց մերժման դեպքում զենքով բաց անել այդ»[1]:

Կրկնակի անգամ թուրքերի հետ բանակցելու անհաջող փորձից հետո՝ փետրվարի 22-ին, Դրոն Ուլուխանլուում կենտրոնացած թուրքական զորախմբերի դիրքերին թնդանոթային կրակուտ տեղալուց հետո հակառակորդի ուժերի վրա գրոհի է նետում 3-րդ պարտիզանական եւ 4-րդ գնդերը: Տվյալ պարագայում զենքի ուժով Ուլուխանլու կայարանը գրավելը միակ միջոցն էր վերականգնելու կարեւորագույն նշանակություն ունեցող Երեւան-Ալեքսանդրապոլ, ապա դեպի Կարս ձգվող երկաթուղին: Թուրքերն ամիսներ շարունակ թեպետ շատ լավ նախապատրաստվել էին, սակայն հարձակումն այնքան սրընթաց ու հզոր է եղել, որ հարձակումից մի քանի ժամ չանցած հակառակորդը՝ ի նշան հնազանդության, պարզում է սպիտակ դրոշն ու հանձնվում հաղթողի ողորմածությանը: Եվ նույն օրը, ի նշան Ուլուխանլուի հաղթանակի, Դրոն Հայոց Ազգային Խորհրդին է հղում հետեւյալ հեռագիրը. «Զորամասը գնում է Ղամարլու, միանալու Ղամարլուի զորամասին եւ բանալու Դաւալուում 4-րդ գնդի մէկ գումարտակի ճանապարհը: Մէկ օրուայ հրացանաձգութիւնից յետոյ Աղհամզալում, ուղարկուած հայ-թրքական պատուիրակութիւնը, որ թուրքերը ետ քաշուեն ու չխանգարեն զորքին առաջ անցնելու, արդիւնք չտուեց: Թուրքերը օգնութեան հասած քրդերի հետ դիմեցին յարձակման՝ կամենալով ջարդել մեր զորամասը եւ գրաւել հրետանին: Թուրքերը ունէին ձեռքի ռումբեր: Այն ժամանակ մենք որոշեցինք վերջ տալ այդ ամենին եւ օգնութիւն հասցրինք գնդ. Դոլուխանեանին՝ հրամայելով յարձակուել ու գրաւել Ուլուխանլուն, որ եւ կատարուեց: Ուլուխանլուն գրաւուած է, շրջանը մաքրուած: Մեր զոհերն են՝ 9 սպանուած, 32 վիրաւոր, որոնցից երկուսը՝ սպայ:

Թուրք պատգամաւորները մեղադրում են իւրայիններին, որի համար կան փաստեր, եւ խնդրում են հաշտութիւն: Մեր դրած պայ-

[1] «Հայրենիք» օրաթերթ, 1918, հոկտեմբերի 15:

մաններն են. բանալ ճանապարհները, չկտրել հեռագրական թելերը եւ հրացանի չբռնել գնացքները»[1]:

Արամի հիշատակին նվիրված հուշագրությունում՝ Ա. Աստվածատրյանը, որն այդ ժամանակ Երեւանի Հատուկ Կոմիտի զինվորական մասի վարիչն էր, անդրադառնալով Ուլուխանլուի թուրքական ամրացված հենակետի գրվմանը՝ գրում է. «Երբ որովհետև բոլոր միջոցները սպառուած էին, ուստի Արամը, խորհրդակցելով զօրավար Սիլիկեանի և Դրոյի հետ, ապա խօսելով սրանց տրամադրութիւնների մասին Հատուկ Կոմիտէում, որոշեց դիմել կտրուկ միջոցների...

1918 թ. փետրուարի վերջերին Դրօն իր ուժերով պաշարեց Ուլուխանլուն: Նախքան զինուորական գործողութիւնների սկսելը, Արամ Մանուկեանի թելադրանքով առաջարկուեց թուրքերին վար դնել զէնքերն ու ենթարկուել իշխանութեան: Ի զուր: Այն ժամանակ Դրօն անցաւ գործի, խորտակեց թուրքերի դիմադրութիւնը և գիւղը մատնեց կրակի:

Ուլուխանլուցիների համար դա անսպասել էր: Զարաչարօրէն պատժուելով՝ նրանք խելքի եկան, յայտնեցին հնազանդութիւն ու այնուհետև մինչև վերջ հաւատարիմ մնացին իշխանութեան: Այսպիսով բացուեց երկաթուղային հաղորդակցութիւնը Ալեքսանդրապոլի հետ, բացուեց և՝ Ղամարլուի ճանապարհը»[2]:

Ուլուխանլու երկաթուղային կայարանի գրավումը հայկական կողմի համար թեպետ ուներ ռազմավարական կարեւորագույն նշանակություն, եւ ինչ-որ տեղ կոտրեց հակառակորդի մարտական տրամադրվածությունն ու ոգեւորությունը, սակայն կռիվները մի շարք շրջաններում դեռեւս շարունակվում էին:

Քանի որ թուրքերի զինված ելույթները միաժամանակ բռնկվում էին տարբեր վայրերում, ուստի Դրոն ստիպված էր գործել մեծ արագությամբ ու վճռականությամբ: Նրա առաջնորդությամբ հայ զինվորները արշավում են բազմաթիվ շրջաններ:

Ինչպես եւ նախորդ բոլոր մարտերում, հայ-թուրքական ընդհարումների ժամանակ Դրոյի կողքին էին նրա զինակիցները՝ կամավորական 2-րդ զորախմբի հրամանատարները: Մահմեդական հրոսակախմբերի դեմ ընթացող կռիվներում իրենց հրամանատարական վարպետությամբ ու քաջությամբ պատշաճ բարձունքում էին հեծելախմբերի հրամանատարներ Մարտիրոս Աբրահամյանն ու Խոսրով Եղիազարյանը, որոնք նույնպես բազում ապստամբական

[1] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 127-128:
[2] Արամ Մանուկյան, Երեւան, 2009, էջ 463:

օջախների առկայության եւ մարտական ուժերի փոքրաքանակության պատճառով ստիպված էին գործել տարբեր վայրերում եւ դարձյալ մեծ արագությամբ:

Այդ նույն առաքելությամբ Դարալագյազում էր գործում Դրոյի մարտական զինակիցներից՝ 2-րդ կամավորականի հեծյալ վաշտի հրամանատար Ցապոնը(Հովհաննես Պարոնյան), որի արտահայտությամբ՝ «...ընդամենը 28 հայկական գիւղերի ուժին կոթնած՝ կարողացայ մարդկային շատ չնչին կորուստով գրաւել 100-ից աւելի թուրք գիւղեր...»[1]:

Ցավոք, թուրք եւ քրդական հրոսակախմբերի հետ տեղի ունեցած ընդհարումների ժամանակ հայկական կողմը նույնպես ունենում է լուրջ կորուստներ: Դավալուի (Արարատ) շրջանում ընթացող կռիվներում զոհվում է հեծյալ հարյուրակի հրամանատար Խոսրով Եղիազարյանը: Այդ օրը նրա գլխավորած հարյուրյակը գործել է մեծ ծանրաբեռնվածությամբ եւ դեպքերի թելադրանքով հարկադրված է եղել անընդհատ կռիվներ մղելով՝ սրընթաց տեղաշարժեր կատարել մի վայրից մյուսը: Սկզբում նրա հարյուրակը օգնության է հասել Ռեհանլու գյուղի բնակչությանը, որի վրա հարձակվել էին Վեդիի շրջանի թուրք զինյալ հրոսակախմբերը: Գյուղացիների աջակցությամբ արժանի ջարդ տալով թշնամուն՝ Խոսրովը շտապում է իր ծննդավայրին՝ Դավալուին օգնության, որը նույն ժամանակամիջոցում տարբեր ուղղություններից պաշարել են Շարուրի թուրքերն ու Բոռոլանի քրդերը:

Հայկական բնակավայրերն ասպատակող քուրդ հրոսակախմբերից իրենց դաժան ու ավարառու գործողություններով աչքի են ընկել հատկապես Մասիս սարի մերձակայքում բնակվող քրդերը, որոնք տիրելով Հին Բայազետի ռուսական զինապահեստներում ամբարված հսկայական զենքին ու զինամթերքին, գետանցում էին Արաքսն ու միացած տեղի քրդերին, հարձակվում հայկական բնակավայրերի վրա: Մասիսի քուրդ հրոսակախմբերն՝ ասպատակելով հայկական մի շարք գյուղեր, հասնում են նաև Դավալու (Արարատ), որտեղ հանդիպում են լուրջ դիմադրության: Քրդերի համար կատարյալ անակնկալ է եղել հայերի կատաղի դիմադրությունը: Դավալուի ինքնապաշտպանական ուժերը թեև քաջաբար կռվել են, սակայն չեն կարողացել երկարատեւ դիմադրություն ցույց տալ, քանի որ տեղացի քրդերը քաջածանոթ լինելով տեղանքին, հայերի մարտական ուժերին ու նրանց դասավորվածությանը, առաջնորդում ու աջակցում էին գյուղի վրա հարձակվող իրենց արյունակիցներին[2]:

[1] Գեւորգյան Հ., Յապոն, Երեւան, 2013, էջ 183:
[2] Տե՛ս Սիմոնյան Ա., Վայոց Ձոր, Երեւան, 2011, էջ 97:

Այդ օրերին Դավալուում ծավալվող դեպքերի մանրամասները պատմող ականատեսներից մեկի հեղինակը, ներկայացնելով այնտեղ տիրող կացությունը, գրում է. «Դավալուն դժոխք էր դարձել: Հրացանների ճայթյուններ, սրերի շաչյուններ, փայտերով ու բռունցքներով տուր ու դմփոցներ: Զոր դաշտերի և գյուղերի փողոցների փըստփըստան հողի և փեյինի փոշին երկինք բարձրացավ ու շրջակայքը դարձավ անտեսանելի:

Դիմադրողներին սպանում էին, ենթարկվողներին հավաքում, խառնում էին անասուններին ու քշում...

Նույնիսկ բարուրի երեխաներին օրորոցով, բեռների հետ կապել էին գոմեշի կամ եզան վրա ու քշում էին, որ Արաքսն

...Ողջ Դավալու գյուղը քրդերի ալան-թալանին էր մատնված: Եւ ո՞վ կկարծեր, որ Մասիսի մեր ծանոթ քրդերը, մեր մազդար քուրդ չոբանները, մեր սարերի տերերը, իրենց ապրեցնող ժողովրդի վրա կհարձակվեն ու հաշիվը այդպես բաց կանեն:

Հազարավոր անասուններ, այդ թվում նաև թուրք գեղերից, հավաքում, հազարավոր տներց գույքը բեռնում էին ու քշում, ընդդիմացողներին սպանում...

Այդ խառնաշփոթության ժամանակ տեղական կռվողներին օգնության հասավ Ղամարլուի միլիցիայի ձիավոր վաշտը Խոսրովբեկի հրամանատարությամբ...»[1]:

Խոսրով Եղիազարյանի հարյուրակի Դավալու հասնելու նախօրեին՝ փետրվարի 18-ին, քրդերը հարձակվում են Խուիթ գյուղի վրա եւ չհանդիպելով դիմադրության՝ ներխուժում են գյուղ, կոտորում են բնակչությանն ու ավարառության են ենթարկում եւ հրդեհում գյուղացիների տներն ու գոմերը: Դավալուից օգնություն գնացող 20 հոգանոց խումբը թեեւ ուշացումով է հասնում է դեպքի վայրը, բայց, այնուամենայնիվ, կարողանում է օգնել բնակչությանը դուրս գալու քրդերի պաշարման օղակից ու տեղափոխվել Դավալու: Բացի Խուիթ գյուղի փրկված բնակիչներից, քրդերի մեծաքանակ զինված ամբոխի դեմ անընդմեջ կռիվներ մղելով, Դավալուում են տեղափոխվում նաեւ Աղաջան եւ Ուզունլախ գյուղերի բնակիչները[2]:

Փետրվարի 19-ին հազարից ավելի զինյալ քրդեր մոտենում են Դավալուին եւ փորձում ներխուժել գյուղ: Դավալուում հանգրվանած հարեւան գյուղերի բնակիչներն ու դավալեցիք համապատասխան պաշտպանական դիրքեր գրավելով՝ դիմում են ինքնապաշտպանության: Այդ բախտորոշ պահին մարտադաշտում է հայտնվում Խոսրով Եղիազարեանի գլխավորած հարյուրակն ու սրընթաց գրոհ ձեռնարկում Մասիսի քուրդ հրոսակախմբերի վրա եւ ջախջախելով ու հետ շպրտելով նրանց՝ հարձակվում է Բոռոլանի քրդերի վրա եւ հետապնդելով նրանց՝ հասնում մինչեւ Արաքս:

Քրդերը փախչելով մտնում են գետը՝ «... մեծ զոհեր տալով գետի մէջ: Արաքսի միւս ափին, աջ կողմին մի տնակ կար, որի լուսամուտները նայում էին գետին:

Այդ լուսամուտներից, քրդերի բացած կրակներից վիրաւորւում է Խոսրովը, ծանրօրէն... Նրան օգնութեան փութացող իր օգնական Արամայիսն էլ նրա կողքին ընկնում է նոյնպէս, սպանւում են իրար ետեւից 4-5 զինուորներ, նոյն տեղում: Կռիւը դադարում է այն ժամանակ, երբ քրդերը անցած են լինում գետը»[1]:

Դրոն, որը շատ է սիրել Խոսրովին, լսելով նրա զոհվելու լուրը՝ առաջնորդելով պարտիզանական գնդի վաշտերից մեկը շտապում է Դավալու, սակայն Կարալար գյուղի մերձակայքում հարձակման է ենթարկվում Վեղիբասարի թուրքերի կողմից: Զոհվում է վաշտի հրամանատարը ու երեք զինվորներ[2]:

Դրոն հաղթահարելով թուրք զինյալների ու քրդերի դիմադրությունը, փերվարի 25-ին հասնում է Դավալու եւ զինվորական պատիվներով հողին է հանձնում Խոսրովին ու կռիվներում զոհված մյուս զինվորներին: Տեսնելով հակառակորդի կողմից գյուղի փողոցներում թափված գնդակահարված հայերի դիակները՝ վրեժխնդրությամբ բռնկված գումարտակի մարտիկները ներխուժում են քրդերի տները, սպանում են պատահած քրդերին եւ անտարակույս կշարունակեին կոտորածը, սակայն գործին միջամտում են Դրոն եւ գումարտակի սպաները, որոնց «....մեծ դժվարությամբ միայն հաջողվեց զսպել զինվորներին և փրկել մնացած քրդերին»[3]:

Կռիվների ընթացքում հիացմունք ու միաժամանակ զարմանք է հարուցում թշնամու նկատմամբ հայ զինվորների դրսեւորած մարդկային վերաբերմունքը: Վերոհիշյալ դեպքից հետո, հայ զինվորները կարծես մարելով իրենց հոգում բռնկված վրեժխնդրությունը՝ «...Դավալուի քրդերին ոչ միայն ձեռք չին տվել, այլև թույլ էին

---

[1] Նույն տեղում, էջ 98:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ.276, ց. 1, գ. 4, թ. 24-25:

[1] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, նշվ. աշխ., էջ 372-373:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ.222, ց. 1, գ. 24, թ. , 3-րդ մաս, թ 441:
[3] Զոհրաբյան Է., Ազգամիջյան կռիվները Երեւանի նահանգում 1918 թ., Երեւան , 2000, էջ 32 (ՀԱԱ, ֆ. 276, ց. 4, գ. 4, թ. 25):

տվել, որ անվնաս փոխադրվեն Ավշար գյուղը՝ իրենց հետ տանելով նաև շարժական գույքը»[1]:

Դրոյի հրամանով զոհված Խոսրով Եղիազարյանի փոխարեն հեծյալ հարյուրակի հրամանատար է նշանակվում Նիկողայոս Թարխանյանը(Կոլյա Թարխանով), որը նույնպես լավագույնս դրսեւորելով իրեն՝ հրաշալի մարտական ուղի է անցնում: Դրոն կնքում է Նիկողայոս Թարխանյանի հեղափոխական անունը եւ այդ օրվանից նրան անվանում են Կուռո:

Արարատյան աշխարհում ընթացող կռիվներում քաջաբար են մարտնչել 2-րդ կամավորական զորախմբի կազմում մարտական փորձառություն ձեռք բերած զինվորականները: Իսկ հայկական զորաբանակի զինվորական կոմիսարը մարտնչում էր պատանեկան ավյունով՝ մշտապես իր զինվորների կողքին ու կռիվների ամենադժվարին տեղամասերում:

Արեւելյան Հայաստանում Թուրք եւ քուրդ հրոսակախմբերի դեմ Դրոյի գլխավորած մարտական ուժերի մղած կռիվների մասին, իր հուշերում բազմաթիվ ուշագրավ դրվագներ է ներկայացնում գնդապետ Կորոլկովի գլխավորած պարտիզանական հեծյալ գնդի հարյուրակի հրամանատար Մարտիրոսը:

Մի փոքրիկ, բայց իր բովանդակությամբ միանգամայն անկեղծ զարմանք եւ հիացմունք հարուցող վկայություն Մարտիրոսի հուշերից: Փետրվարի կեսերին Դրոն իր զորախմբի գլուխն անցած մաքրում է Ղամարլուի, Դավալուի շրջանների մահմեդաբնակ շրջաններն ու հետապնդելով հայկական գյուղերն անընդմեջ ասպատակող Շարուրի, Վեղիբասարի, Բաշքենդի Թուրքերին՝ հասնում է Արաքսի ու Հրազդանի խառնարանը:

«Քիւրտերը, գիշերուան ժամը 3-ին հասնելով Արաքսի ափը, թիկունքից յարձակւում են գումարտակի ու ժողովրդի վրայ, որ Արաքսը դեռ անցած չի լինում: Խուճապ է առաջ գալիս զօրքի ու ժողովրդի մէջ, որ քիչ է մնում իրեն գցի Արաքսը:

Դրօն, տեսնելով այդ դրութիւնը, մաուզէր ատրճանակը հանած, առաջանում է դէպի քրտերը... Դրօյի քայլը ոգեւորում է շատերին, եւ ահա հակայարձակմամբ յետ են շպրտւում քրտերը...»[2]:

Կռիվներից մեկի ժամանակ, ճիշտ այն օրը, երբ Խոսրով Եղիազարյանի մարտական խումբը Դավալուի շրջանում կռիվներ էր մղում Թուրքք հրոսակախմբերի եւ Մասիսի ու Բոռոլանի քուրդ

[1] Նույն տեղում:
[2] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, նշվ. աշխ., էջ 372-373:

զինյալների դեմ, Մարտիրոսը իր գլխավորած հեծյալ հարյուրյակով հետապնդելով Թուրք եւ քուրդ հրոսակախմբերին, հասնում է Մասիս սարի մերձակայքում գտնվող Ալիղըզլի հայաբնակ գյուղը, որն այդ պահին պաշարված էր քրդերի կողմից: Գյուղի բնակչությանն անխուսափելի կոտորած էր սպառնում, եթե հեծյալ հարյուրակը չհասցներ օգնության հասնել պաշարման մեջ հայտնված ալիղըզլիցիներին: Սրընթաց գրոհով խորտակելով քուրդ զինյալների դիմադրությունը՝ հեծյալները գրավում են գյուղը: Զարգացնելով հարձակումը, Մարտիրոսը հեծյալ հարյուրակի մի տասնյակը թողնում է նվաճած դիրքերի պաշտպանության համար, իսկ մյուս տասնյակներով շարժվում դեպի քրդաբնակ Փրչո գյուղը եւ հաշվի չառնելով իր առաջնորդած ուժերի փոքրաքանակությունը, գրոհում է հակառակորդի վրա: Նրա առաջնորդած մարտիկների գրոհն այս անգամ դարձյալ անկասելի էր:

«Թշնամին,-գրում է Մարտիրոսը,- փախուստ տուեց դէպի Արալըղ-Բաշքենդ գիւղը:

Մեր ձեռքն անցաւ 200-220 հրացան՝ ռուսական մոսին եւ տաճկական քիւչուկ չափլու: Այդ զէնքերն էլ լցրինք ֆուրգոնների մէջ եւ վերադարձանք Ալիզըղլի»[1]:

Մարտիրոսի հեծյալների տեղաշարժերին ակնդետ հետեւող հակառակորդը, մեծաքանակ ուժեր կենտրոնացնելով, պաշարում է գյուղը: Հեծելախումբը կարող էր սրընթաց գրոհով ճեղքել պաշարման շղթան ու հեռանալ, սակայն այդ պարագայում քրդերը կներխուժեին գյուղ ու անխնա կկոտորեին բնակչությանը:Այդ իրավիճակում, բացի պաշտպանվելուց, այլընտրանք գոյություն չուներ:

Ավելի քան տասը օր հայ մարտիկներն անխորտակ պաշտպանությամբ ոչ միայն կարողանում են հաջողությամբ դիմակայել թշնամու բազմիցս կրկնվող հարձակումները, այլեւ երբեմն դիմում են հակահարձակումների: Հարկ է նկատել, քանի որ ուժերը բացարձակ անբավարար էին ու չնայած դրսեւորած հերոսականությանը, այնուամենայնիվ, պաշարման օղակից դուրս գալու համար անհրաժեշտ էր օգնություն:

Սթափ գնահատելով ստեղծված իրավիճակը, Մարտիրոսը իրենց կացության մասին երկու անգամ լուր է ուղարկում Դրոյին ու Արամ Մանուկյանին եւ խնդրում օգնություն:

Պաշարման 16-րդ օրը Մարտիրոսին է հասնում Դրոյի հետեւյալ նամակը. «Սիրելի Մարտիրոս,

[1] Նույն տեղում, էջ 378-379:

Ստացա գրածդ երկրորդ նամակը, առաջին նամակդ դեռ չեմ ստացել, որովհետեւ այստեղ չէի: Քո կուի օրը, կռիւ ունեցաւ նաեւ Խոսրովը եւ սպանուեց...

Գնացի Դաւալու, ճանապարը փակուեց, մնացի այնտեղ: Այսօր Ճանապարհը բացեցի, եկայ Ղամարլու եւ ստացայ նամակդ: Անմիջապէս կարգադրեցի պարտիզան հետեւակ գնդի առաջին գումարտակի պետ Ասիկ Թարվերդեանին, որ անցնի Արազը եւ օգնութեան հասնի քեզ: Թշնամու ուժը շատ է, եթէ հնարաւորութիւն ունես, այդ կողմից խփիր թշնամու թեւից, որ կարողանանք միանալ... »[1]:

Մարտիրոսը հաջողությամբ է կատարում Դրոյի առաջադրանքը: Նրա հարյուրյակը գիշերով անցնում է հարձակման եւ մաքրելով իր ճանապարհին գտնվող քրդական գյուղերը, բացում է դեպի Մասիս ու Արալըդ-Բաշքենդ տանող ճանապարհն ու միանում մարտադաշտում հայտնված Ասիկ Թարվերդյանի գումարտակին: Այդ հաղթական կռվից հետո Մարտիրոսը, համաձայն Դրոյի կարգադրության, դիրքերի պաշտպանությունը հանձնում է Ասիկի գումարտակին, իսկ ինքը վերադառնում է Ալիղըզլի:

Նույն օրը երեկոյան, Դաշքուռունի կողմից մարտադաշտում են հայտնվում 500 քուրդ հեծյալներ, շրջանցում են Ալիղըզլի գյուղը, որտեղ այդ պահին գտնվում էր Մարտիրոսի հեծյալ հարյուրակը, անսպասելիորեն հարձակվում Ասիկի գումարտակի վրա: Անակնկալի եկած գումարտակի մարտիկները խուճապի են մատնվում եւ լքելով դիրքերը՝ դիմում փախուստի:

Մարտիրոսի գնահատմամբ, բարեբախտաբար այդ ճակատագրական պահին ներկա է լինում Դրոն, իսկ նույն րոպեներին մարտադաշտ են հասնում Արտուշ Քոչարյանի եւ Լեւոն Տեր Մելիքսեթյանի գլխավորած գառնեցի 15 փորձառու մարտիկներ, որոնք, լսելով իրենց հրամանատարի պաշարված լինելու մասին՝ շտապել են օգնության:

Ի՞նչ պիտի արվեր: Ասիկի գումարտակը դիմել էր փախուստի, իսկ մարտադաշտում մնացել էին Դրոն ու գառնեցիների փոքրաքանակ մարտախումբը: Դրոն իր մարտական հարուստ կենսափորձով քաջատեղյակ էր քրդերի ամբոխային կռիվներ վարելու մարտավարությանը եւ գիտեր, որ սրընթաց ու անսպասելի գրոհ ձեռնարկելու պարագայում նրանք խուճապի պիտի մատնվեին ու լքեին մարտադաշտը: Հավատարիմ իր դավանած առաջին իսկ հնարավորության դեպքում հարձակում ձեռնարկելու մարտավարությանը՝ նա առաջնորդելով գառնեցիների փոքրաքանակ մարտախումբը, անվարան գրոհում է քրդերի վրա:

[1] Նույն տեղում, էջ 383:

[illegible]

Դրան բա՞ էր [illegible] բուրգանցի [illegible]:

-Տղերք [illegible] գլ. [illegible] [illegible] [illegible]

վար, փետրվար, մարտ) Արամ Մանուկյանի գլխավորան Երեւանի Հատուկ կոմիտեների հետ նրա համագործակցությունը, որը դեռեւս իր արժանի գնահատականը չի ստացել հայ պատմագիտության կողմից, իր ազգանպաստ արդյունավետ գործունեությամբ ու փրկար նշանակությամբ, կարելի է իրավամբ նշել, որ վեր է որեւէ գովասանքից ու գնահատականից:

Հայկական մարտական ուժերի վճռական գործողությունների շնորհիվ կտրուկ կերպով փոխվում է օրեր առաջ Հայոց Ազգային Խորհրդի, Արամի եւ Դրոյի խաղաղության կոչերն ու առաջարկությունները արհամարհող թուրքերի զինված ելույթների կազմակերպիչների դիրքորոշումը: Անդրկովկասյան Սեյմը (Անդրկովկասի բարձրագույն օրենսդիր մարմինը՝ պառլամենտ - Հ.Գ.) արդեն այս անգամ հեղեղվում է հայ զինվորների հարվածներից սարսափի մատնված թուրք առաջնորդների կողմից ուղարկված բողոք-հեռագրերով, որոնցով նրանք գունազարդված՝ ներկայացնում են հայերի կողմից մահմեդական բնակչության նկատմամբ իրականացրած ջարդերն ու բռնությունները: Սեյմի մի շարք անդամներ եւ հատկապես մահմեդական պատգամավորներն անմիջապես օգտագործում են այդ հանգամանքն ու պառլամենտի ամբիոնից մեղադրանքների շարան են տեղում հայերի հասցեին ու որեւէ անգամ չհիշատակելով հայկական բնակավայրերի վրա մահմեդական հրոսակախմբերի պարբերաբար կրկնվող զինված հարձակումները:

«Նրանք իրար յետեւից բարձրանում էին ամբիոնը եւ արտասանում ցասումով լի, կրքոտ ճառեր՝ ուղղված հայերի ու դաշնակցության դէմ: Ամբողջ պատասխանատուությունը, նրանց կարծիքով, ընկնում էր հայերի վրայ, որոնք բռնի միջոցներով ձգտում էին ստեղծել «հայկական հողամաս»: Հայկական զօրամասերը չեն ենթարկվում կենտրոնական իշխանության (նկատի ունի Կովկասյան Սեյմը ու կոմիսարիատը -Հ.Գ.) եւ փոխանակ ռազմաճակատ մեկնելու՝ կռւում են խաղաղ ազգաբնակչության դէմ: Երեւանի դէպքերի հեղինակները Դրօն, գնդ. Փիրումեանն ու մի շարք ուրիշ հայ զինուորականներն ու գործիչներն են: Անհիմն է այն ամբաստանութիւնը, թէ մահմեդականները փակում են ճանապարհը հայ զօրամասերի առջեւ եւ այլն, եւ այլն»[1]:

Ահա Կովկասյան իշխանությունների եւ նրա կողմից ընդհարումների պատճառներն ու ուղղվածությունը տեղերում ուսումնասիրելու նպատակով Հայաստան ուղարկված «հաշտարարների»

[1] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 135:

հանձնաժողովի աշխատանքների արդյունքի նկատմամբ մահմեդական պատգամավորների դրսեւորած վերաբերմունքի մի պերճախոս վկայություն:Իսկ Կովկասյան Սեյմի ու Կոմիսարիատի ղեկավարությունը պարտավոր էին բողոքի ալիք բարձրացրած մահմեդական պատգամավորներին հիշեցնել օրեր առաջ Հայաստանից վերադարձած Սեյմի ու Կոմիսարիատի ներկայացուցիչների ու անձամբ պատվիրակության նախագահ Գեորգաձեի զեկուցումներն ու ընդհարումներն դադարեցնելու ու թիկունքը ռազմաճակատին կապող հաղորդակցության ուղիները բացելու Սեյմի կայացրած որոշումը, որը բացարձակապես անուշադրության մատնվեց եւ դույզն-ինչ չիրականացվեց մահմեդական հրոսակախմբերի ու նրանց առաջնորդների կողմից:

Երեւանի Հատուկ կոմիտեի անդամ Արշալույս Աստվածատրյանը Արամին նվիրված հուշերում անդրադառնալով այդ օրերին Հայաստանի տարածքում ծայր առած ընդհարումների վերլուծությանը՝ գրում է. «Թուրք հակապետական ու հակահայկական շարժումները ստացել էին տարերային բնոյթ: Ցարձակւում էին թուրքերն ու քրդերը, պաշտպանւում հայ զօրամասերն ու ինքնապաշտպանութեան խմբերը: Այս վերջինները կազմակերպուել էին Դրոյի նախաձեռնութեամբ՝ յատկապես ժողովրդի ինքնապաշտպանութեան համար՝ հնարաւորութեան սահմաններում չէզոքացնելու նպատակով զօրքի միջամտութիւնը, զօրքի, որի միակ նպատակը ռազմաճակատ մեկնելն էր»[1]:

Որքան էլ աղմկեին ու բողոքեին Սեյմի մահմեդական պատգամավորները, այսուհետ այդ ամենը որեւէ նշանակություն այլեւս չէր կարող ունենալ: Հայկական մարտական ուժերը սահմանափակ ժամանակահատվածում, առաջնորդվելով հարձակողական մարտավարությամբ , փայլուն կերպով են կատարում մահմեդական հրոսակախմբերին «խաղաղեցնելու» հույժ կարեւոր առաջադրանքը:

Թուրք հրոսակախմբերի զինված ելույթները շնորհիվ Դրոյի կազմավորած ու առաջնորդած զորամասերի, կարելի է ասել, անգնահատելի գործողությունների, հաջողությամբ «խաղաղեցվել էին», եւ բացվել էին թիկունքը ռազմաճակատին կապող ճանապարհները: Երեւանի նահանգում տիրող իրավիճակն արդեն թույլ էր տալիս, որ Դրոն այսուհետ իր ուշադրությունը կենտրոնացներ ռազմաճակատում ծավալվող մարտական գործողությունների ղեկավարման ու զորամասերի կազմավորման խնդիրների վրա:

[1] Արամը, Թեհրան, 1960, էջ 101:

Ս. Վրացյանի բնութագրմամբ՝ «1918 թուականը ճակատագրական տարի եղաւ Արարատեան Աշխարհի համար:

Տեղական թրքութիւնը, Թուրքիայի եւ Ադրբէյջանի (Այդ ժամանակ Ադրբեջան անվանումը դեռեւս չէր գործածվում: Ներկայիս ադրբեջանցիներին անվանում էին կովկասյան թուրքեր կամ թաթարներ-Հ. Գ.) դրդումով գլուխ էր բարձրացել հայութեան դէմ, նպատակ ունենալով Սուլթանի տիրապետութիւնը տարածել Վոսֆորից մինչեւ Բագու եւ Թաշքենտ: Հայաստանը սեպ էր խրուած թրքութեան կուրծքը. պէտք էր դուրս հանել այդ սեպը: Երեւանեան նահանգի, Գանձակի, Բագուի ամբողջ տարածութեան վրայ եւ հայկական զօրամասերի թիկունքում, ամէն կողմ, թրքական խռովութիւններ էին ծագում, յարձակումներ հայերի վրայ, հայկական ջարդեր, տեղահանումներ: Օրհասական ժամանակ էր հայերի համար, լինել-չլինելու հարց: Գոյութեան պայքար:

Եւ պէտք էր ասել, որ մասնաւորապէս Արարատեան Դաշտում, հայութիւնը այդ պայքարից դուրս եկաւ յաղթանակով ու պատուով, մեծ չափով, շնորհիւ քաղաքացիական եւ զինուորական ղեկավարութեան Արամի եւ Դրոյի»[1]:

[1] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Դ, էջ 181:

3.2. ՍԱՐԻՂԱՄԻՇԻ ԵՎ ՍՈՒՐՄԱԼՈՒ ՌԱԶՄԱՃԱԿԱՏՆԵՐՈՒՄ

Երեւանի նահանգում, Արամ Մանուկյանի համագործակցությամբ Դրոն անպատմելի ջանքեր է գործադրում ռազմաճակատը կայունացնելու, զինվորական ջոկատներ կազմավորելու եւ ժողովրդի ու հուսալքության տենդով բռնված հայ զինվորների մարտական ոգին բարձրացնելու ուղղությամբ: Հայկական զորաբանակի զինվորական կոմիսարը երբեմն հարկադրված էր լինել ռազմաճակատի ամենաառաջավոր բնագծերում: Հայկական բանակային կորպուսի ստեղծման առաջին օրերից մինչեւ 1918 թ. փետրվարի վերջերը Դրոն այդ նույն կորպուսի զինվորական կոմիսարն էր, իսկ երբ թուրքական զորագնդերը գրավում են Էրզրումի բերդաքաղաքը եւ ապա մոտենալով Սարիղամիշի ու Կարսի մատույցներին՝ սպառնում ներխուժել Արարատյան դաշտ, նա ներկայանում է Արարատյան դաշտում տեղաբաշխված հայկական զորքերի (հայկական բանակային կորպուսի 2-րդ դիվիզիան-Հ.Գ.)հրամանատար գեներալ Մովսես Սիլիկյանին եւ անկեղծորեն հայտարարում. «Ես, - պատմում է Դրոն,- գնացի Սիլիկեանի մօտ, եւ յայտարարեցի, որ այլեւս հայկական բանակի կոմիսարը չեմ, ես ինձ դրի Սիլիկեանի տրամադրութեան տակ»[1]:

Ռազմաճակատի թիկունքում բռնկված թուրք զինյալ հրոսակխմբերի զանգվածային ելույթները հիմնականում «խաղաղված» էին, եւ Դրոն արդեն կարող էր մեկնել ռազմաճակատ՝ մարտնչելու կռիվների ամենաթեժ կետերում: Այդ ժամանակ մարտերն ընթանում էին ռազմաճակատի Սարիղամիշի հատվածում:

Սարիղամիշում կուտակվել էին հազարավոր գաղթականներ, իսկ ռուսական զորքերի հեռանալուց հետո պահեստներում ամբարված էին մեծ քանակությամբ զենք ու զինամթերք, սննդամթերք, հանդերձանք եւ ռազմաճակատի համար բազմաթիվ այլ անհարաժեշտ պարագաներ: Ռազմաճակատում մարտնչող հայկական զորքերի, այն է՝ հայկական բանակային կորպուսի հրամանատարության առջեւ ծառացած առաջնահերթ խնդիրներից մեկը, անշուշտ, գաղթականության եւ պահեստներում ամբարված զենքն ու զինամթերքը եւ մյուս ապրանքները հնարավորինս արագ թիկունք տեղափոխելն էր:

Նախ, անհրաժեշտ էր կանգնեցնել թուրքական զորքերի հարձակումներն ու կայունացնել ռազմաճակատը:

[1] Դրոյի ձայնագրությունից:

Կովկասյան ռազմաճակատի կառուցվածքում եւ հրամանատարների կազմում արդեն տեղի էին ունեցել որոշակի փոփոխություններ: Մարտի 3-ին Օլթիից մինչեւ Մակու ձգվող ռազմաճակատի հրամանատարությունը, գեներալ Օդոշելիձեի փոխարեն, ընդունում է Հայկական կորպուսի հրամանատար գեներալ Թովմաս Նազարբեկյանը, որն այդ օրերին արդեն գտնվում էր Սարիղամիշում: Օլթիից մինչեւ Բաթում ընկած տարածքը թուրքական զորքերի հարձակումից պիտի պաշտպանեին վրաց ազգային զորամասերը: Այդ երկու՝ Օլթի-Մակու ու Օլթի-Բաթում ռազմաճակատներում տեղաբաշխված հայկական, ինչպես նաեւ վրացական բանակային կորպուսի զորամասերը համադրելու էր կովկասյան ճակատի գլխավոր հրամանատար գեներալ Լեբեդինսկին, որը ենթարկվում էր Անդրկովկասյան կառավարությանը եւ բացառապես լինում էր իր կենտրոնատեղ Թիֆլիսում:

Մարտի 6-ին Սարիղամիշի հատվածում մարտնչող հայկական զորքերի հրամանատարությունը ստանձնում է գեներալ Արեշյանը: Սարիղամիշի ճակատում տեղաբաշխված հայկական զորքերն ունեին հետեւյալ կազմը. «Ռուս սպաներէ կազմուած առանձին ջոկատ. Ա. հայկական առանձին կիսաբաժին (Երզնկայի եւ Կարինի գունդերը) , Ա. եւ Բ. հայկական զարկորդաց գունդ եւ վաշտ մը Դ.Հայկական զարկոնդաց գունդէն. Սարիղամիշ բերուած էր նաեւ Գ. եւ Է. գունդերը Կարսէն եւ Ալեքսանդրապոլէն եւ Ա. հայկական հեծելոց գունդը՝ Թիֆլիսէն:

Այս զօրախումբը, որը կը գտնուէր զօր. Արէշեանի հրամանատարութեան տակ եւ բաղկացած էր գլխաւորաբար Ա. հայկական զարկորդաց զօրաբաժնի եւ Ա. առանձին կիսաբաժնի մասերէն, կը հաշուէր իր կազմին մէջ մինչեւ 13 սակաւաթիւ վաշտ, 30 դաշտային ու լեռնային թնդանօթ եւ 4 հեծելոց գումարտակ»[1]:

Ա. Հարությունյանը իր հեղինակած «Թուրքական ինտերվենցյան Անդրկովկաս 1918 թ. եւ ինքնապաշտպանական կռիվները» արժեքավոր պատմագիտական աշխատությունում ավելի որոշակի է ներկայացնում Սարիղամիշի ճակատում կենտրոնացված հայկական բանակային կորպուսի զորամասերը:

Ըստ Ա. Հարությունյանի՝ «1. 1-ին, 2-րդ, 4-րդ և 7-րդ հրաձգային գնդերը, յուրաքանչյուրում 3 գումարտակ, ամեն գումարտակում 1000 սվին, ունեին 12.000 մարդ:

[1] «Հայրենիք» ամսագիր, 1927, թիւ 2, էջ 157:

2. Սեպուհի, Մուրադի և Դալի Ղազարի կամավորական հեծյալ և հետիոտն խմբերը:

3. Զորս լեռնային և դաշտային մարտկոցներ, յուրաքանչյուրում՝ 4, ընդամենը՝ 16 հրանոթ:

4. Նոր Սելիմում տեղավորված էր հատուկ բրիգադ, որի կազմում մտնում էր 2 հետևակային գունդ:

5. Հատուկ ջոկատի 3 մարտկոցներ(12 հրանոթ) և մեկ հեծյալ գունդ:

6. Մեկ զրահապատ գնացք, որ կանգնած էր Բեգլի-Ահմեդում:

7. 1-ին հայկական հեծյալ գունդը:

8. Սարիղամիշին մոտենում էր ռուս սպաների ջոկատը, գնդապետ Եֆրեմովի հրամանատարությամբ:

Այսպիսով, ստացվում է, որ մարտի առաջին օրերին Սարիղամիշի անմիջական պաշտպանության համար կենտրոնացվել էին 6 հետևակային, 2 հեծյալ գնդեր, 7 հրետանային մարտկոցներ, 28 հրանոթներ, 3 կամավորական ջոկատ, սպայական ջոկատ և այլն: Միայն հետևակային գնդերում հաշվվում էր 18.300 սվին»[1]:

Բացի վերոհիշյալ զորամասերից, Կարսի ամրոցում էր գտնվում 1-ին հեծյալ, 3-րդ հրաձգային գնդերը, բերդային հերտանային գունդը, սակրավորների վաշտը, հրանոթների մարտկոցներ եւ անգամ մի քանի օդանավ [2]:

Միաժամանակ, մի քանի հայկական զորամասեր էին տեղաբաշխված Ալեքսանդրապոլում, Ջալալօղլիում եւ Ղազախի շրջանում:

Օրինակ, Ա. Հարությունյանի պնդմամբ՝ «Ալեքսանդրապոլում որպես ռեզերվ կենտրոնացված էին հայկական 8-րդ հրաձգային գունդը՝ բաղկացած 3 գումարտակից(մոտ 3000 սվին), պահեստային գունդը, սակրավորների գումարտակը, պահեստային հեծյալ էսկադրոնը, դաշտային 2 մարտկոց (8 հրանոթ):

Ջալալօղլիում տեղավորված էր Լոռու գունդը, Ղազախում՝ Ղազախի գունդը և, այսպես կոչված, Ղարաբաղի գունդը, որը տեղից տեղ էր շարժվում, ձգտելով ընկնել Ղարաբաղ: Ախալքալաքում և Ախալցխայում կազմավորվել էին մի շարք ստորոբաժանումներ...

Մնդրանիկը ևս արդեն ձեռնամուխ էր եղել հարվածային զորամասի ստեղծմանը (նկատի ունի բացառապես արևմտահայ զինվորներից բաղկացած Հայկական առանձին հարվածող զորամասը-Հ. Գ.) »[3]:

[1] Հարությունյան Ա., Թուրքական ինտերվենցյան Անդրկովկաս 1918 թ. եւ ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984, էջ 138:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 139:
[3] Նույն տեղում:

Թվարկելով տարբեր վայրերում կենտրոնացված հայկական բանակային կորպուսի կազմում ընդգրկված զորամասերը՝ Ա. Հարությունը գտնում է, որ այդ ժամանակահատվածում հայկական զորամասերը զուտ քանակական առումով «...գերազանցում էին դեմ հանդիման կանգնած թուրքական զորքերին»: Որպես ապացույց Ա. Հարությունյանը մեջբերում է գեներալ Նազարբեկյանի հետևյալ վկայությունը՝ «Զորամասերը կազմավորվել էին զգալի քանակությամբ և չնայած դասալքության փաստերին, քանակով մեր ուժերը, անշուշտ, գերազանցում էին թուրքերին՝ նրանց հարձակման ժամանակ: Եվ այդ ուժերը միանգամայն բավական էին, որպեսզի ոչ միայն ետ մղվեր թուրքերի սկզբնական հարձակումը, այլ անգամ՝ հաջողություն ունենայինք»[1]:

Փոքր-ինչ առաջ անցնելով նշենք. ճիշտ է, հայկական զորքերը քանակական առումով գուցեեւ գերակշռում էին թուրքական զորքերին, սակայն գեներալ Արեշյանի գլխավորությամբ Սարիղամիշի ռազմաճակատում ծավալվող մարտական գործողությունների ընթացքն ու հայ զորահրամանատարների կենսագործած մարտավարությունը միանշանակորեն ցույց տվեցին, որ այդ ամենը դեռեւս բավարար չէին հաղթանակներ նվաճելու համար:

Էրզրումի անկումից հետո հայկական զորքերը աստիճանաբար նահանջելով՝ կանգ էին առել եւ դիրքեր գրավել Սարիղամիշից տարբեր հեռավորության վրա գտնվող հետեւյալ հինգ գլխավոր հենակետերում. 1. Դեպի Բարդուս (18 վերստ), 2. դեպի Ղարաուրգան (25 վերստ), 3. դեպի Միջնկերտ (27 վերստ), 4. դեպի Իսլամաձորի զառիթափ եւ Կիզիլ-Քիլիսա ու Սուրբ Խաչ սար (մոտավորապես 25 մինչեւ Էզնոս) եւ 5. դեպի Կարակուրտ (29 վերստ):

Բոլոր այդ ուղղությունները, հատկապես Ղարաուրգանի ճակատային բնագիծն ու Միջնկերտը եւ աջ թեւի դեպի Բարդուս ձգվող հատվածը, շատ կարեւոր էին[2]:

Գնդապետ Շնեուրի գնահատմամբ՝ «Էրզրումի շրջանը գրաւելուց յետոյ, թուրքերը միառժամանակ կանգ առան: Միաժամանակ Սարիղամիշում տենդագին աշխատանք էր կատարւում հայկական զորամասերը կարգի բերելու համար: Կովկասեան Բանակի Սպայակույտը անուանափոխուած էր Հայկական Առանձին Զորաբաժնի Սպայակոյտ անունով եւ գտնվում էր Ալեքսանդրապոլում...»[3]:

[1] Նույն տեղում:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1. գ. 37, թ. 11-12:
[3] «Սարդարաբատի հերոսամարտը» գրեց՝ գլխաւոր սպայակոյտի պետ գնդապետ՝ Ալեքսանդր Կ. Շնեուրը», Ֆրեզնո, 1967, էջ 15:

Սարիղամիշի շրջանի տարածքը շատ բարդ կառուցվածք ունի: Այն բնակավայրերը, ուր տեղաբաշխված էին հայկական զորամասերը, խորը փոսորակի մեջ գտնվող Սարիղամիշի հետ կապված են հիմնականում նեղ արահետներով, ինչը նկատելիորեն դժվարացնում էր հուսալի կապի, փոխհամագործակցության հաստատումը ռազմաճակատի տարբեր ուղղությունների միջեւ: Դժվարանց ուղիներով կատարվող տեղաշարժերին մեծապես խոչընդոտում էին նաեւ ձյունն ու մառախուղը: Զորքերի լիարժեք ղեկավարումը դժվարացնում էր նաեւ կապի միջոցների բացակայությունը: Նման բարդ պայմաններում չափազանց դժվար էր կազմակերպել մարտական ուժերի անհրաժեշտ փոխհամագործակցությունն ու տեղաշարժերը եւ զորամասերի վերախմբավորմանն ու համալրմանը նպատակաուղղված աշխատանքները: Չնայած առկա դժվարություններին, անհրաժեշտ էր հաստատակամորեն պաշտպանել Սարիղամիշը եւ խափանել հակառակորդի որեւէ փորձ՝ գրավելու ռազմավարական կարեւորագույն նշանակություն ունեցող հանգույցը:

Նախ, Սարիղամիշը ռազմաճակատի կարեւորագույն՝ Ղարաուրգան, Մեջնկերտ, Բարդուս, Կարակուրտ եւ Կագիզման ուղղությունների հետ կապակցվող եւ այնտեղ ծավալվող մարտական գործողությունները կարգավորող եւ համադրող կենտրոնն էր:

2. Սարիղամիշը դեպի Հայաստանի արեւելյան հատվածը տանող հիմնական ուղիների դարպասն էր ու արգելապատնեշը: Եթե հայկական զորքերը չկարողանային պահել Սարիղամիշի դիրքերը, ապա դրան անմիջականորեն հաջորդելու էր Կարսի բերդաքաղաքը, որը տվյալ պահին դեռեւս ինչպես հարկն է նախապատրաստված չէր եւ թուրքական զորքերի հարձակման դեպքում դժվար թե կարողանար որեւէ լուրջ դիմադրություն ցույց տալ:

3. Սարիղամիշի պահեստներում ամբարված էին մեծ քանակությամբ զենք, զինամթերք, հանդերձանք, սննդամթերք եւ այլ արժեքավոր իրեր: Ռուսական զորքերը Կովկասյան ճակատը զանգվածաբար լքելիս թողել էին այդ ամենը, եւ ժամանակ էր պահանջվում, որպեսզի պահեստներում ամբարվածները տեղափոխեին Երեւան, Կարս, Ալեքսանդրապոլ: Իսկ Սարիղամիշից դեպի Կարս ձգվող երկաթգիծը, թույլ թողունակության պատճառով, ի զորու չէր կարճ ժամանակամիջոցում Սարիղամիշում ամբարված ողջ «հարստությունը» տեղափոխել թիկունք: Սարիղամիշը հանձնելու պարագայում այդ ողջ հարստությունը, բնականաբար, կանցներ թուրքերի տնօրինությանը:

4. Սարիղամիշում հանգրվանել էին հազարավոր գաղթականներ, որոնց անվտանգությունը հարկավոր էր ապահովել եւ թույլ չտալ, որպեսզի նրանք զոհ գնային թշնամու վայրագություններին:

Խելամտորեն եւ սթափ գնահատելով Սարիղամիշի ռազմավարական նշանակությունն ու նահանջելու դեպքում սպասվելիք հետեւանքների արժեքը՝ հայկական կորպուսի շտաբից գեներալ Արեշյանին է ուղարկվում հետեւյալ հեռագիրը. « ... Կորպուսի հրամանատարը (գեներալ Թ. Նազարբեկյան -Հ.Գ.) ընդունում է, որ Ձեր զորախմբի վիճակը հեշտ չէ, բայց դրա հետ միասին կորպուսի հրամանատարը գտնում է, այդպիսի տեսակետ ունի նաեւ Ազգային Խորհուրդը, որ Սարիղամիշի շրջանն ունի ծայրահեղ կարեւոր նշանակություն: Կորպուսի հրամանատարը հավատում է, որ Դուք եւ Ձեր զորախմբի սպաները կանէք ամեն ինչ պաշտպանելու Սարիղամիշի շրջանը, որով հնարաւորություն կ՚ընձեռվի Կարսը դարձնել կռվի համար պիտանի, հակառակ պարագայում Կարսը կ՚ընկնի ընդամենը մի քանի օրում»[1]:

Մարտական ակնառու կարողություններից զուրկ գեներալ Արեշյանը ռազմաճակատի հրամանատարությունը ստանձնելու հենց առաջին օրից թերահավատորեն տրամադրվելով Սարիղամիշը պահելու հնարավորությունների նկատմամբ՝ պահանջում է թողնել պաշտպանական բնագծերը եւ նահանջել Կարս:

Ելնելով Սարիղամիշի պահպանման հույժ կարեւոր նշանակությունից, ռազմաճակատում տեղի ունեցող իրադարձությունները տեղում ուսումնասիրելու ու համապատասխան վճիռներ ընդունելու նպատակով Հայոց Ազգային Խորհրդի մի քանի անդամների ուղեկցությամբ Սարիղամիշ է ժամանում Ազգային Խորհրդի նախագահ Ավ. Ահարոնյանը եւ Հայկական կորպուսի հրամանատար գեներալ Թ. Նազարբեկյանի, Դրոյի, գեներալ Արեշյանի մասնակցությամբ գումարում զինվորական խորհրդակցություն:

Գեներալ Արեշյանը, ներկայացնելով ճակատում ստեղծված կացությունը, դարձյալ առաջարկում է թողնել Սարիղամիշի շրջանը, զորամասերը համալրել ի հաշիվ Երեւանյան ուղղությունում տեղաբաշխված ուժերի եւ այն կենտրոնացնելով Կարսում եւ նրա մատույցներում՝ բերդաքաղաքը վերածել պաշտպանական հզոր հանգույցի:Կարսի բերդաքաղաքը,-ըստ Արեշյանի,-այն միակ հուսալի պաշտպանական հանգույցն էր, որտեղ ամրապնդվելով՝ հնարավոր

[1] Նույն տեղում, g. 2, գ. 176, թ. 5:

կլիներ կանգնեցնել հակառակորդի հարձակումը: Իր առաջարկությունը հիմնավորելու համար նա որպես փաստարկ վկայակոչում է.

1. Ռազմաճակատի աջ թեւի՝ Արդահան-Օլթի-Բարդուս հատվածի թուլությունն ու անհուսալիությունը: Ըստ նրա, թուրքերը հեշտությամբ կարող են օգտագործել այդ խոցելի տարածքը եւ այնտեղից առանց որեւէ դժվարության անցնել մեր զորքերի թիկունքն ու շրջափակման մեջ վերցնել Սարիղամիշի ողջ խմբավորումը: Նրա մտավախությամբ, կարող էր կրկնվել Էնվեր փաշայի գլխավորած թուրքական զորքերի 1914 թ. դեկտեմբերի նշանավոր զորաշարժը:

2. Զորքերում արմատավորված բարոյահոգեբանական անմխիթար վիճակը, որի պատճառով զորամասերում արդեն նկատվում էին դասալքության դեպքեր[1]:

Ռազմաճակատում ծավալվող գործողություններին ոչ համահունչ գեներալ Արեշյանի ներկայացրած տեսակետը, որը առավելապես արդյունք էր պարտվողական հոգեբանության ու խուճապային տրամադրության, քան իրական կացության թելադրանքի ու սթափ գնահատման՝ մերժվում է: Ազգային Խորհրդի անդամները, Հայկական կորպուսի հրամանատարն ու զինվորական կոմիսարը, համակողմանիորեն քննարկելով ռազմաճակատում ընթացող մարտական գործողությունների իրական վիճակը եւ հաշվի առնելով ուժերի հարաբերակցությունն ու Սարիղամիշի ռազմավարական նշանակությունը, հանգում են միանգամայն հակառակ տեսակետի[2]:

«Նրանց կարծիքով, - նշվում է Սարիղամիշի կռիվների եւ այդ խորհրդակցության մեկնաբանմանը նվիրված փաստաթղթերից մեկում, - նախորդ կռիվների փորձը միանշանակորեն ապացուցել էր Սարիղամիշի, որպես Կարսի եւ Ալեքսանդրապոլի բանալու, ահռելի նշանակությունը: Եթե թուրքերը տիրեին Սարիղամիշին, ապա անմիջապես իրենց ձեռքը կվերցնեին ամենակարեւոր ու հուսալի հենակետը, որտեղից նրանք օգտվելով նաեւ երկաթգծի ծառայությունից՝ կարող են շարժվել հյուսիս, միաժամանակ իրենց հետ տանելով պահեստներում կուտակված հարստությունը: Եվ վերջապես, Սարիղամիշում կուտակվել է մեծաքանակ գաղթականություն եւ անհրաժեշտ է որոշակի ժամանակ, որպեսզի թիկունք տեղափոխվեին գաղթականությունն ու ռուսական զորքերի հեռանալու պատճառով այնտեղ պահեստավորված սարքավորումները...»[3]:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, g. 1. գ. 37, թ. 13-14:
[2] Տե՛ս Բանբեր Հայաստանի Արխիվների, 1992, թիւ 3, էջ 96:
[3] ՀԱԱ, ֆ. 121, g. 1. գ. 37, թ. 13-14:

Ռազմական խորհրդակցությունում չի ընդունվում Սարիղամիշը թողնելու եւ դեպի Կարս նահանջելու գեներալ Արեշյանի առաջարկությունը, եւ որոշվում է պահել առկա ռազմաճակատը, որն այդ ժամանակ ուներ հետեւյալ կառուցվածքը.

«Բարդուսի ուղղությամբ պաշտպանվում էր Տեր—Ղեւոնդյանի զորախումբը, Ղարաուրգանի ուղղությամբ՝ Դալի Ղազարի ջոկատը, Միջնկերտի ուղղություն է ուղարկվում Էրզրումի գնդի երկու վաշտերը, որոնք այնտեղից ճանապարհվելով Նոր Սելիմ միանում են գնդապետ Մորելի բրիգադին: Կարակուրտում եղել են 2-րդ հրաձգային գնդի 4 վաշտերը (3 կադրային եւ մեկ հավաքական), իսկ Բաշքյոլում Սեպուհի եւ Մուրադի հեծյալ պարտիզանները»[1]:

Այն պահին, երբ Սարիղամիշում ընթանում էր ռազմական խորհրդակցություն, իրավիճակը ռազմաճակատում՝ հակառակորդի ձեռնարկած գործողությունների հետեւանքով, կտրուկ կերպով փոխվում է: Մարտադաշտի առաջավոր բնագծերից ստացած տեղեկություններից հայտնի է դառնում, որ մարտի 11-ին թուրքական զորքերը վերսկսում են հարձակումը եւ առանց որեւէ ջանքերի գրավում թուրքական Միջնկերտ գյուղը (չպետք է շփոթել ռուսական Միջնկերտ գյուղի հետ - Հ.Գ.) եւ շարունակելով առաջխաղացումը Սարիղամիշի խճուղով գրավում են Ղարաուրգանի մերձակա Ենիկեյ-Զյակ եւ ռուսական Միջնկերտ, Աբուլվերտ գյուղերը: Պաշտպանության այդ բնագծում դիրքավորված Դալի Ղազարի զորաջոկատները չկարողանալով պատշաճորեն դիմակայել թուրքական զորքերի գրոհներին՝ նահանջում են Հայդարա գյուղը: Ռազմաճակատի Ղարաուրգան-Միջնկերտ հատվածում հայկական զորքերի նահանջի հետեւանքով ստեղծվում է շատ վտանգավոր ու տագնապալի իրավիճակ: Թուրքերը կարող էին լրացուցիչ ուժեր նետել մարտադաշտ եւ խորացնելով ճեղքումը, զարգացնել ձեռք բերած նվաճումն ու հարձակվել Սարիղամիշի վրա: Հարկավոր էր ձեռնարկել անհրաժեշտ քայլեր եւ վճռական ու արագ գործողություններով հետ շպրտել թուրքերին ու փակել ճեղքվածքը:

Իր աշխատություններում Դրոյի կյանքին ու գործունեությանը բազմաթիվ էջեր նվիրած Ս. Վրացյանը, որը 1918 թ. գարնան սկզբներին որպես Ազգային Խորհրդի ներկայացուցիչ գտնվում էր Սարիղամիշում՝ այդ ուղղության զորահրամանատար գեներալ Արեշյանի զինվորական շտաբում, պատմում է. «... Մի օր էլ ըմբոստացաւ եւ մերժեց ճակատ երթալ Սարիղամիշում գտնուող 101-րդ ձիաւոր հարիւրեակը: Արէշեանի բոլոր ջանքերը կարգի բերելու՝ անցան անօգուտ...

Զօրավար Արէշեանը սիրտը բռնած՝ չարչարւում էր ցաւից ու անկարողութիւնից՝ չարչարելով նաեւ մեզ: Նստած մռայլ՝ ելք էինք որոնում անելանելի եւ անտանելի կացութիւնից: Եթէ այս դրութիւնը շարունակուէր, կարճ ժամանակամիջոցում ռազմաճակատը փուլ կը գար, եւ թշնամին անարգել կը յառաջանար դէպի Կարս եւ Ալեքսանդրապոլ:

Մէկ էլ հրաշք: Վագներեան հերոսի պէս՝ ներս մտաւ Դրօն: Ո՞ր տեղից որտեղ եւ ի՞նչ օրհասական վայրկեանին: Կարծես լոյս բերեց հետը: Նոյն իսկ Արէշեանի դէմքը պայծառացաւ: Դրօն բանակի կոմիսարն էր:

...Դրօն յայտնեց, թէ եկել է Երեւանից զէնք ու ռազմամթերք հայթայթելու Արարատեան դաշտի զօրամասերի համար: Կարսից ստացել եւ ուղարկել է որոշ քանակութեան փամփուշտ եւ հագուստներ ու գնդացիրներ: Հիմա ուզում է Սարիղամիշի պահեստներից զէնք ու փամփուշտ ուղարկել Երեւան:

Բոլոր պահեստները, իբրեւ պարէտի, իմ տրամադրութեան տակ էին: Ես, իհարկէ, առաջարկեցի ինչ որ հնարաւոր է փոխադրել: Արէշեանը անմիջապէս հաւանութիւն տուեց.

- Տարեք ինչ որ ուզում էք եւ ինչքան որ ուզում էք:

Միայն թէ, սիրելի պարոն Դրօ, մնացէք մի քանի օր օգնելու մեզ:

Դրօն շտապում էր վերադառնալ Երեւանի նահանգը, ուր արիւնահեղ քաղաքացիական կռիւներ էին տեղի ունենում եւ ուր ինքը շրջանի հրամանատարն էր: Միայն ստիպողական հարկադրանքի տակ անձամբ եկել էր զէնք ու զինամթերք տանելու: Բայց զօր. Արէշեանի եւ մեր խնդրանքը այնքան բուռն էր, որ ստիպուած եղաւ տեղի տալ: Իր զինուորական բացառիկ բնազդով նա արագ կերպով ըմբռնել էր կացութեան ահաւոր լրջութիւնը եւ անմիջական դարմանումի անհրաժեշտութիւնը:

Առաջին հերթին անհրաժեշտ էր վերջ տալ 101-րդ հարիւրեակի ըմբոստութեան, որը բարոյալքում ու կազմալուծում էր բանակը: Մարդիկ զինուած՝ նստել էին զօրանոցում եւ մերժում էին ենթարկուել հրամատարութեան՝ ցուցական կերպով:

Իբրեւ բանակի կոմիսար, Դրօն արագ կերպով պատրաստեց ինչոր զինուորական ոյժ եւ հրամայեց, ըմբոստները դուրս գան զօրանոցից ... Դրօն մի կարճ ճառով դիմեց նրանց հայրենասիրութեան՝

[1] Նույն տեղում:

յորդորելով, որ մեկնեին ռազմաճակատ հայրենիքի պաշտպանութեան համար: Աջ ու ձախից լսուեցին տրտնջոցներ, մերժումի բացականչութիւններ: Դրօն մի պահ լուռ դիտեց եւ, յանկարծ, վագրի ոստիւնով ատրճանակը ուղղեց հարիւրեակին ու գոչեց.

- Հանդարտ:

Անակնկալի եկած զինուորները արագ կատարեցին հրամանը:- Տասը քայլ առաջ - գոռաց Դրոն:

Առանց վարանումի զինուորները առաջ անցան տասը քայլ:

- Հրացանները դնել գետին, - հրամայեց Դրօն:

Մի պահ տատանումից յետոյ, ամէնքը հրացանները վայր դրին:

-Սուրերը դնել գետին, - նորից հրամայեց Դրօն:

Զինուորները սուրերն էլ դրին վար:

- Տասը քայլ յետ, - գոչեց Դրօն:

Հարիւրեակը մէկ մարդու պէս քաշուեց յետ, նախկին տեղը:

Դրօյի կարգադրութեամբ եկան, արագ կերպով հաւաքեցին ու տարին հրացաններն ու սուրերը: Ապա Դրօն պահանջեց, որ անմիջապէս յանձնեն ըմբոստութեան պարագլուխներին: Առանց դժուարութեան յանձնեցին երկու հոգի:

Հարիւրեակը զղջում ու հնազանդութիւն յայտնեց: Լուրը կայծակի արագութեամբ հասաւ ռազմաճակատի զօրամասերին եւ ցնցող տպաւորութիւն գործեց նրանց վրայ»[1]:

Դրոյի կողմից ռազմաճակատում 101-րդ հարյուրյակի ըմբոստության չեզոքացումն ու զինաթափումը պատմող Ս. Վրացյանի ներկայացրած վերոհիշյալ փաստը իր հուշագրությունում հաստատում է նաեւ Վահան Փափազյանը (Կոմս), որը գեներալ Արեշյանին օգնելու հանձնարարությամբ այդ ժամանակ նույնպես գտնվում էր ռազմաճակատում:

«Նկատելի էր յուսալքում զինուորներու շարքերուն մէջ...

... Ոգիի եւ կորովի անկում նահանջող զօրամասերու մէջ: Արէշեանը անճրկած էր ու յուսհատած: Ոչ մէկ հաւատք ունէր մեր զինուորներուն վրայ. կրաւորական դիրք բռնած էր եւ Սարիղամիշէն նահանջի կողմնակից: Դասալքութեան դէպքեր նկատուեցան: Նոյն իսկ ճակատ ղրկուելիք վաշտերէն մէկը մերժեց տեղէն շարժուիլ - ապստամբած էին: Ճիշտ այդ օրերուն Դրօն հոն եկաւ, որ իր սովորական վճռականութեամբ գործի ձեռնարկեց - յանցաւոր վաշտը զինաթափ ըրաւ: Տեղի վրայ գտնուող Ազգային Խորհրդի անդամներու, Դրօյի եւ Արէշովի հետ որոշեցին Վրացեանի նախագահութեամբ արտակարգ զինուորական դատարան կազմել եւ պատժել այդպիսիներին»[1]:

Դրոյի գործունեությանը նվիրված հուշագրությունում Սարիղամիշի ճակատում տեղի ունեցած վերոհիշյալ դեպքի իսկությունը հաստատում է Թադեւոս Պետրոսյանը. «1918 -ին Սարիղամիշի հայ մի զօրամասի մէջ ստեղծուել էր անմխիթար կացութիւն: Հրամանատարական կազմը, հին ցարական օրերի բարձրաստիճան սպաներ, անելի վիճակի մէջ էր ընկած: Եվ ահա անակնկալօրէն երեւում է կոմիսար Դրօն եւ, առանց ճառ ու քարոզի, զինուորական ոգիով անմիջապէս վերջ է տալիս տխուր կացութիւնը՝ ապշահար թողնելով հին հրամանատարները»[2]:

Դրոն՝ քաջ գիտակցելով թուրքական զորքերի հարձակման հետեւանքով ռազմաճակատում ստեղծված պայթյունավտանգ իրավիճակի ողջ կարեւորությունը՝ վճռում է մեկնել Ղարաուրգան-Միջնկերտ ուղղությունն եւ անձամբ առաջնորդել հայ զինվորներին:

Ա. Հարությունյանը իր հեղինակած «Թուրքական ինտերվենցյան Անդրկովկաս 1918 թ. եւ ինքնապաշտպանական կռիվները» աշխատությունում վերլուծելով Սարիղամիշի ռազմաճակատում տեղի ունեցած մարտական գործողությունները եւ հպանցիկ անդրադառնալով Ղարաուրգանի հատվածում տեղի ունեցած դեպքերին ու դույզն չնչելով այդ ճակատում Դրոյի ներդրած, հիրավի, անգնահատելի ծառայությունը՝ գրում է. «Մարտի 23-ին թուրքերը Ղարաուրգանի մոտ գրոհեցին հայկական կամավորական ջոկատի պաշտպանության բնագիծը: Վերջինս նահանջեց Խան-Դերի բնագիծը:Սարիղամիշից օգնում էին ջոկատին՝ կանգնեցնելու թուրքերի առաջխաղացումը»[3]:

Համաձայն այդ օրերին ռազմաճակատում տիրող կացությունը լուսաբանող տեղեկագրի՝ «Այդ ժամանակ ժամանում է կորպուսի զինվորական կոմիսար Դրոն, եւ գեներալ Արեշյանը՝ գնահատելով այդ առաջնորդի ժողովրդականությունը, անմիջապես նրան է հանձնում Խան զորախումբը (այդ զորախումբը պայմանականորեն անվանվում է Խան-Դերեի սարի անունով - Հ.Գ.) եւ նրան հանձնարարում մարտի 14-ին Ղարաուրգանի եւ Միջնկերտի շրջանում անցնել հարձակման: Դրոյի հրամանատարության ներքո եղել են 1-ին գնդի

[1] «Ասպարեզ», 1956, ապրիլի 3, էջ 3-4:

[1] Փափազեան Վ., Իմ յուշերը, Բէյրութ, հ. 1, 1952, էջ 468:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1956, թիւ 10, էջ 25:
[3] Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 143:

3 վաշտեր, Դալի Ղազարի 4-րդ զորախմբի 4 վաշտեր, Արամի խումբը, 101-րդ հեծյալ հարյուրյակը, 4-րդ լեռնային մարտկոցը եւ մեկ թեթեւ հրանոթ: Այդ ամենից զատ նրան օգնելու համար ուղարկվում են Մուրադի եւ Սեպուհի հեծյալ վաշտերը:

Զորախմբի կազմում ընդգրկվում են նաեւ 12 սպաներ գնդապետ Միրզոեւի գլխավորությամբ»[1]:

Ղարաուրգանի ուղղությունը ռազմավարական առումով շատ կարեւոր էր, եւ այդ պատճառով թուրքերն աշխատում էին անպայմանորեն գրավել հենց այդ հատվածը: Մինչ մարտի 11-ի դեպքերը Ղարաուրգանը արդեն ձեռքից ձեռք էր անցել: «Մարտի 6-ին, - նշվում է տեղեկագրում, - Զովինի լեռնանցքում քրդերի կողմից գնդակոծվել է հայկական առաջապահ ուղեկալը: Հակառակորդը երեք կողմից հարձակվելով Ղարաուրգանի վրա, այնտեղից դուրս է մղել մեր առաջապահ զորախումբը, բայց Սարիղամիշից եկած համալրումը, մարտի 7-ին դուրս է մղել թուրքերին ու քրդերին Ղարաուրգանից եւ այնտեղ հաստատել կայուն իրավիճակ»[2]:

Ռազմավարական կարեւորագույն նշանակություն ունեցող բերդաքաղաքի՝ Էրզրումի հանձնումից եւ հայկական զորամասերի ոչ այնքան կազմակերպված նահանջից հետո ռազմաճակատի առաջավոր բնագծերում դիրքավորված հայ զինվորների շրջանում դեռեւս նկատելիորեն տիրապետում էին խուճապային տրամադրություններն ու անկազմակերպ իրավիճակը: Զորքերի մարտաշարքերն ուժեղացնելու, մարտնչելու ոգին եւ պատրաստակամությունը բարձրացնելու ու կայունացնելու համար հրամանատարությունից պահանջվում էր ուժերի գերագույն լարում եւ հսկայածավալ աշխատանք: Ընդունելով ռազմաճակատի ամենապատասխանատու եւ վտանգված շրջանի՝ Ղարաուրգան-Միջնկերտ հատվածի հրամանատարությունը՝ Դրոն պետք է միավորեր այդ ուղղությամբ գործող զորավաշտերը, կազմակերպեր հակահարձակումը եւ հաղթահարելով թուրքական զորքերի դիմադրությունը, ինչպես նաեւ ձմռան խստաշունչ պայմանների հարուցած խոչընդոտները՝ հետ նվաճեր Սարիղամիշի համար վճռական նշանակություն ունեցող Ղարաուրգան-Մեջնկերտ շրջանը:

Նրա մասին պատմող բազում վավերագրերը, հուշագրությունները ու այլ փաստաթղթերը միանշանակորեն վկայում են, որ Դրոն շատ լավ կարողացել է ընդհանուր լեզու գտնել եւ հաջողությամբ

[1] ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 37, թ. 15:
[2] Նույն տեղում, թ. 10:

համագործակցել ինչպես արհեստավարժ սպաների, այնպես էլ ոչ արհեստավարժ զինվորականների հետ: Ղարաուրգան ուղղությունում իրականացրած մարտական գործողությունների ժամանակ դարձյալ նույնն էր, նրա զորախմբում ժողովրդական անվանի հերոսների՝ Սեբաստացի Մուրադի, Սեպուհի, Զեմլյակի, Արամի եւ Դալի Ղազարի ընկերակցությամբ հաշտ ու համերաշխ կռվում էին արհեստավարժ զինվորականներ: Դրոն, իրոք, կարողացել է մեծ արդյունավետությամբ ներդաշնակել զինվորականության այդ երկու ուժերն ու կարողությունները:

Մարտի 13-ին, հակառակորդի դիրքերը փոքր-ինչ ուսումնասիրելուց եւ զորավաշտերին համապատասխան հրահանգներ տալուց հետո, Դրոն հաջորդ օրն առավոտյան տալիս է թուրքական զորքերի պաշտպանական հենակետերի վրա գրոհելու հրամանը: Խորտակելով նախորդ օրերի հաջողությամբ թեւավորված թուրքերի դիմադրությունը՝ զորախումբը շարժվում է առաջ:

«Հարձակում կատարվեց հաջողությամբ: Զորախումբը աջ թեւում հասնում է մինչեւ Սիբասարի բարձունքը, իսկ կենտրոնում եւ ձախ թեւում գրավում Խորում լեռը...»[1]:

Այդ օրվա կռիվների ընթացքում եղել են նաեւ չնախատեսված դեպքեր: Տարվելով գրոհներով՝ Մուրադի ու Սեպուհի հեծյալ վաշտերը մխրճվում են հակառակորդի դասավորության խորքը եւ մերկացնելով հարձակվող զորախմբի ձախ թեւը, հնարավորություն ընձեռում թուրքերին բաց տարածքից հարվածելու կենտրոնում եւ ձախ թեւում հաջողությամբ հարձակվող 4-րդ եւ 1-ին գնդերի զորավաշտերի թիկունքին: Հայտնվելով երկու հանդիպակաց հարվածների արանքում, Դրոյի զորախմբի կենտրոնն ու ձախ թեւը հարկադրված սկսում են նահանջել: Կռիվների ամենավճռական պահն էր. Դրոն թուրքերի առաջխաղացումը կասեցնելու նպատակով գրոհի է ուղարկում նախորդ կռիվներում իրեն փայլուն կերպով դրսեւորած Արամի գլխավորած վաշտը:

«Արամի խումբը,- նշվում է մարտական գործողությունների տեղեկագրում,- գործելով հերոսաբար, հարվածում է թուրքերի առաջ ընկած տեղամասին եւ հակառակորդը ջախջախվելով ու նահանջելով՝ մեր զորքի տնօրինությանն է հանձնում մարտադաշտը»[2]:

Ղարաուրգանի ուղղությամբ Դրոյի զորախմբի հաղթական գործողությունների մասին վկայում է նաեւ Սարիղամիշի ռազմա-

[1] Նույն տեղում, թ. 15:
[2] Նույն տեղում:

ճակատի հրամանատար գեներալ Արեշյանը. «Հարձակումն ընթացավ հաջողությամբ: Աջ թեւի զորամասերը հասան Սարիբանի բարձունքը, գրեթե մինչեւ Զոկ, իսկ կենտրոնի ու ձախ թեւերը գրավեցին Խորոմ Լեռը:

... Այդ օրվա մեր կորուստներն են 8 զոհ եւ 12 վիրավոր»[1]:

Թուրքական ջախջախված զորամասերը նահանջելով Ղարաուրգան-Մեջնկերտ շրջանից, միանում են ուրիշ զորամասերի եւ հաջորդ օրը եւեթ հարձակվում Քոշաքիլիսա, Կարակուրդ գյուղերի վրա ու առանց մեծ դժվարության գրավում այդ բնակավայրերը: Ռազմաճակատում իրավիճակը ավելի է շիկանում, երբ Սարիղամիշի բարձունքներից հայ զինվորները նկատում են թուրքական նոր՝ հեծյալ եւ հետեւակ զորամիավորումներին, որոնք շարժվում էին դեպի Բարդուսի եւ Խան-Դարեսայի լեռնանցքի ուղղությամբ: Թուրքերի նպատակը միանգամայն հասկանալի էր. գրավելով Բարդուսը եւ անցնելով լեռնանցքը՝ նրանք կարող էին դուրս գալ թիկունք եւ պաշարման մեջ վերցնել այդ շրջանում մարտնչող հայկական զորքերը:

«...Այդ շրջանցումը զորախմբում առաջ է բերում ցնցում, եւ առաջապահ զորամասերի զինվորները վախենալով շրջապատման վտանգից՝ սկսում են լքել մարտադաշտը»[2]:

Ռազմաճակատի հրամանատարությունը ձեռնարկում է տենդային քայլեր: Դեպի լեռնանցք է շարժվում Պանդուխտի գլխավորած պարտիզանական զորախումբը: Մարտի 16-ին թիկունքից Սարիղամիշի շրջան է հասնում 1-ին հեծյալ գունդը եւ կենտրոնանում Կարակուրդ եւ Կոշաքիլիսա ուղղությամբ: Նույն օրերին ռազմաճակատի առաջավոր հատվածում է հայտնվում նաեւ Զեմլյակի հեծյալ զորաջոկատը: Թուրքական զորքերի առաջխաղացումը կասեցնելու եւ նրանց կողմից նվաճված գյուղերը հետ վերցնելու նպատակով ռազմաճակատի հրամանատարությունը կենտրոնացնում է եւս մի քանի զորամասեր եւ անցնում հարձակման:

Ղարաուրգան-Միջնկերտ գործողության արդյունավետ ավարտից հետո պաշտպանական հանգույցներում թողնելով իր զորախմբի մի մասը՝ Դրոն զորախմբի ձախ թեւի ուժերով ռազմաճակատի հրամանատարության կողմից կենտրոնացված զորամասերի համագործակցությամբ հարձակում է ձեռնարկում թուրքական զորքերի վրա: Գրոհող զորավաշտերի հարվածն անկասելի էր, թուրքերը

[1] Նույն տեղում, թ. 44 ա:
[2] Նույն տեղում, թ. 15:

հետ նահանջելով հայկական զորքերի տնօրինությանն են հանձնում Կարակուրդ եւ Կոշաքիլիսա գյուղերի շրջանը: Այդ օրվա մարտերում իրենց անբասիր գործողությամբ առանձնապես աչքի են ընկնում 1-ին հեծյալ գնդի, եւ Զեմլյակի գլխավորած հեծյալ ջոկատի մարտիկները:

Թուրք զինվորների վկայություններից պարզվում է, որ Սարիղամիշի ուղղությամբ գործում էին թուրքական 9-րդ, 12-րդ եւ 36-րդ դիվիզիաները, որոնք մարտական մեծ փորձառություն էին ձեռք բերել մասնակցելով բազմաթիվ կռիվների եւ անգամ Գալիպոլիի նշանավոր ճակատամարտին:

Թուրքական զորքերի հարձակումներին զուգընթաց իրենց գործողություններն են ակտիվացնում նաեւ քուրդ հրոսակախմբերը, որոնք չբավարարվելով միայն թալանով, թիկունքի եւ հաղորդակցության միջոցների վրա պարբերաբար կատարվող ասպատակություններով, սկսում են պարբերաբար հարձակումներ գործել նաեւ հայկական զորամասերի վրա: Իրենց ձեռնարկած գործողությունների ընթացքում քրդերին հաջողվում է գրավել եւ հենակետի վերածել Կըզլ-Քիլիսա գյուղը ու այնտեղից հաճախակի հարձակումներ գործել հայկական զորամասերի եւ հատկապես թիկունքային ծառայության ուժերի վրա: Քուրդ հրոսակախմբերի սանձարձակությունների վերջ տալու նպատակով Դրոն Ղարաուրգանի հաղթական գործողությունից հետո զորախմբի մի մասով հարձակվում է Կըզլ-Քիլիսա գյուղում կենտրոնացած քրդական հրոսակախմբերի վրա եւ նույն օրը եւեթ կորպուսի շտաբը ռազմաճակատից ստանում է հետեւյալ հաղորդագրությունը. «Սարիղամիշի ուղղությամբ նորից հետ է գրավվել Բարդուսի մերձակայքում գտնվող Կըզլ-Քիլիսա գյուղը»[1]:

Այս արդյունավետ գործողություններից հետո ռազմաճակատի Ղարաուրգան-Մեջնկերտ-Կարակուրդ հատվածում ժամանակավորապես հաստատվում է հարաբերականորեն կայուն իրավիճակ:

Անդրադառնալով Սարիղամիշի ռազմաճակատում այդ օրերին ընթացող կռիվների եւ նրանում Դրոյի ավանդի գնահատմանը՝ հայկական Բանակային կորպուսի հրամանատար, գեներալ Թ.Նազարբեկյանը նշում է. «Երեկոյան կողմ (մարտի 6-ին) վերադարձա Սարիղամիշ: Հաջորդ օրը նախագահի (նկատի ունի Հայոց Ազգային խորհրդի նախագահ Ավետիս Ահարոնյանին - Հ.Գ.) գլխավո-

[1] ՀԱԱ, ֆ. 121, ց. 1. գ. 37, թ. 2:

րությամբ ժամանեցին Ազգային Խորհրդի մի քանի անդամներ: Նրանց հետ էր նաեւ կորպուսի նախկին զինվորական կոմիսար Դրոն, որը պարզվում է, հրաժարվել էր այդ պարտականությունից եւ ցանկություն էր հայտնել մեկնել ռազմաճակատի առաջավոր գիծ եւ մարտնչել հակառակորդի դեմ: Նրա փոխարեն կոմիսար էր նշանակվել Հակոբ Քրիստափորի Զավրիեւը:

Դրոն հաջորդ օրը՝ մարտի 8-ին, մեկնել էր առաջավոր զորամաս Ղարաուրգանի ուղղությամբ եւ ստանձնել այդ զորամասի հրամանատարությունը: Կարող եմ համարձակորեն ասել, որ շնորհիվ սպաների եւ զինվորների միջավայրում ունեցած իր հեղինակությանն ու խիզախությանը, նա կանգնեցրեց հակառակորդի հարձակումը ու մենք կարողացանք ավելի երկար մնալ Սարիղամիշում»[1]:

Սարիղամիշի ռազմաճակատի Ղարաուրգանի ուղղությունում Դրոյի գլխավորած զորաջոկատների հաջողությունը հույժ կարեւոր էր: Հայկական կորպուսի հրամանատարությանը ավելի քան անհրաժեշտ էր գոնե մի քանի օր ժամանակ, որպեսզի կարողանար ոչ միայն զորամասերը համալրել նոր ուժերով եւ համապատասխան քայլեր ձեռնարկել խուճապն ու անկազմակերպվածությունը մարտաշարքերից արմատախիլ անելու ուղղությամբ, այլեւ թիկունք տեղափոխել գաղթականությանը, պահեստներում ամբարված զենքն ու զինամթերքը, հանդերձանքը եւ այլ արժեքավոր իրեր:

Վկայում է գեներալ Թովմաս Նազարբեկյանը. «Ես օգտվեցի այդ դադարից: Նախորդ մարտերի նահանջի հետեւանքով խարխլված զորամասերը ուժեղացվեցին եւ փոքր-ինչ կարգի բերվեցին... Շարունակվեց ուժեղացված տեմպերով փախստականների, Սարիղամիշի հարուստ պահեստներից զենք ու զինամթերքի, հանդերձանքի, սննդամթերքի եւ այլ կարեւոր սարքավորումների բեռնաթափումը: Պահեստների կողքերին թափված էին մեծաքանակ շաքար, թեյ, կրուպա եւ պահածոներ: Ունենալով սահմանափակ քանակի վագոններ, ես այդ բոլորը, ինչպես նաեւ փախստականներին ուղարկեցի Ալեքսանդրապոլ[2]:

Գեներալ Նազարբեկյանի վկայություններից նաեւ պարզվում է, որ Սարիղամիշի պահեստների հարստությունից առավելապես օգտվել են վրացիները, որոնք ունենալով ավելի շատ վագոններ՝ կարողացել են թիկունք տեղափոխել Սարիղամիշում ամբարված հարստության մեծ մասը:

---

[1] Բանբեր Հայաստանի Արխիվների, 1992, թիւ 3, էջ 96:
[2] Նույն տեղում:

Ղարաուրգան-Միջնկերտ ուղղությունում Դրոյի գլխավորած զորամասի եւ Կարակուրդ-Կոշալքիլիսա շրջանում նրա գործուն մասնակցությամբ ձեռք բերած ակնառու նվաճումների շնորհիվ, ճիշտ է, կասեցվեց հակառակորդի հարձակումը, բայց թուրք հրամանատարությունը բոլորովին մտադրված չէր սահմանափակվել սոսկ ձեռք բերած նվաճումներով եւ կանգ առնել Սարիղամիշի դարպասների առջեւ: Որպեսզի հայկական զորքերի հրամանատարությունը կարողանար թուրք հրամանատարությանը ստիպել հրաժարվելու իր մտադրություններից, անհրաժեշտ էր զարգացնել Դրոյի եւ նրա հարեւանությամբ գործող զորամասերի հարձակումները եւ առավելապես կազմակերպված հարվածներով վճռական պարտության մատնել հակառակորդին: Սակայն հայկական զորքերը եւ մարտական պատրաստվածության եւ բարոյահոգեբանական առումով դեռեւս հեռու էին այդչափ կարեւոր ու պատասխանատու խնդիրներ կենսագործելու կարողությունից:

Միանգամայն պարզ է եւ հասկանալի, որ հայկական կողմի որդեգրած պաշտպանական, իսկ երբեմն էլ հարկադրական հակահարձակումների մարտավարությունը առավելաբար ձեռնտու էր թուրքերին, որոնք օգտվելով հայերի ոչ այնքան ակտիվ պահվածքից, կարողանում էին արագորեն կատարել ուժերի անհրաժեշտ վերախմբավորում ներ եւ հարվածել հայկական ուժերի պաշտպանական բնագծերի մերթ այս ու մերթ այն հատվածներին: Հայկական զորքերի հրամանատարությունը հաղորդակցության ուղիների եւ կապի անբավարարվածության պատճառով դժվարությամբ էր կարողանում ժամանակին արձագանքել ռազմաճակատում ծավալվող դեպքերին:

Հարկ է նշել, որ իր բարձրության վրա չէր գտնվում ռազմաճակատի հրամանատար գեներալ Արեշյանը, որը կտրուկ, եռանդուն գործողություններ ձեռնարկելու փոխարեն, ի սկզբանե հայկական կորպուսի շտաբն է հեղեղում Սարիղամիշը թողնելու պահանջով հագեցած հեռագրերով:

Ղարաուրգան- Միջնկերտ եւ Կարակուրդ-Կոշաքիլիսա շրջաններում կրած պարտություններից հետո թուրքերը դարձյալ կատարում են ուժերի նոր վերախմբավորում եւ հարձակում ձեռնարկում այս անգամ արդեն ռազմաճակատի աջ թեւի ուղղությամբ ու մարտի 22-ին գրավում Բարդուս, Ղզլքիլիսա եւ Ջերմուկ գյուղերը: Եթե թուրքերին հաջողվեր զարգացնել իրենց գրոհները, ապա նրանք կարող էին դուրս գալ Նոր Սելիմի շրջան, գրավել երկաթգիծը ու մի

փոքր առաջ շարժվելով՝ պաշարման մեջ վերցնել Սարիղամիշի ճակատում մարտնչող ողջ հայկական զորքերը:

Իրենց զորքերի հարձակումներին ավելի մեծ թափ ու արագություն հաղորդելու դիտավորությամբ թուրք հրամանատարությունը դարձյալ ակտիվացնում է քուրդ հրոսակախմբերի գործողությունները:

«Քրդական հրոսակախմբերը Սարիղամիշի վրա շարժվում էին Էրզրումի, Խնուսի եւ Ալաշկերտի Հարավ-արեւմտյան եւ հարավային կողմից: Ցուրաքանչյուր ուղղությամբ շարժվող հրոսակախմբերում քրդերի թիվը հասնում էր մոտավորապես 1000-ի: Զինյալ խմբերի կազմը մշտապես փոխվում էր:

... Գլխավորապես զբաղվելով թալանով եւ ավազակությամբ քրդերն, այնուամենայնիվ, չեղելով հայերի ուշադրությունը, էապես օգնում էին թուրքերին: Նրանց դեմ պայքարելու համար հայերը հարկադրված առանձնացնում էին մարտական զգալի ուժեր»[1]:

Այն պահին, երբ թուրքերը հարձակումը ծավալում էին ռազմաճակատի աջ թեւի՝ Բարդուսի ուղղությամբ, Դրոն հաստատակամորեն պահում էր Ղարաուրգան- Մեջնկերտ պաշտպանական բնագծերը: Թուրք հրամանատարությունը մինչեւ Բարդուսի ուղղությամբ հարձակում ձեռնարկելը մեկ անգամ եւս փորձ է անում ընկճել Ղարաուրգան-Մեջնկերտ շրջանում դիրքավորված հայ մարտիկների դիմադրությունը: Մարտի 18-ին կենտրոնացնելով զգալի քանակության մարտական ուժեր՝ հակառակորդը վերսկսում է գրոհները Ղարաուրգանի ուղղությամբ: Դրոն իր զորախումբը զուտ մարտավարական նպատակով քաշում է մի փոքր հետ, մինչեւ Խանդերիի բնագիծը եւ այնտեղից հարձակվում թուրքերի վրա ու հետ շպրտելով նրանց դեպի ելման դիրքերը, խափանում հակառակորդի հերթական ձեռնարկումներից եւս մեկը:

«..Այդ ժամանակ նկատվում է, - նշվում է ռազմական ամփոփագրում, - որ հակառակորդը փորձում է շրջանցել այդ զորախմբի աջ թեւը: Նահանջը կանգնեցվեց: Դրոյի զորախմբի աջ թեւը ամրացավ Էզնոսի սարահարթում»[2]:

Ղարաուրգանի հատվածում կրելով իր հերթական պարտությունը՝ թուրք հրամանատարությունը իր զորքերի հարձակումը նպատակաուղղում է ռազմաճակատի աջ թեւը: Պետք է նկատել, որ այդ շրջանը եղել է Սարիղամիշի ճակատի ամենաանհուսալի եւ անպաշտպան ուղղությունը: Բարդուսից դեպի արեւմուտք՝ մինչեւ Սեւ

[1] ՀԱԱ, ֆ. 121, g. 1. գ. 37, թ. 1:
[2] Նույն տեղում, թ. 45:

ծով, Բաթում ձգվող տարածքը, պետք է պաշտպանեին վրացական զորքերը, որոնց գործողությունների ներդրումը թուրքերի դեմ համատեղ ուժերով մղվող պատերազմում բացարձակապես չի զգացվել: Թուրքերը կարող էին յուրաքանչյուր պահի լավագույնս օգտագործել վրաց զորքերի կողմից բարձիթողի, անպաշտպան տարածքը եւ հարվածել Սարիղամիշի զորախմբի աջ թեւին եւ դուրս գալ հայկական զորքերի թիկունքը:

Մեկ անգամ եւս դրսեւորելով իր մարտական կարողությունները եւ անառիկ պահելով իրեն վստահված ճակատի հենակետերը, Դրոն հնարավորություն է ընձեռում հայկական զորքերի հրամանատարությանը գլխավոր ուշադրությունը բեւեռելու ռազմաճակատի մյուս, մասնավորապես Բարդուս, Նոր Սելիմ ուղղությունների պաշտպանության ամրապնդման վրա:

Թուրքական զորքերի կողմից Բարդուսի գրավումից հետո Սարիղամիշի ռազմաճակատի հրամանատարությունը, դարձյալ հայտնվելով ծանր կացությունում, փորձում է կտրուկ եւ համապատասխան ձեռնարկումների միջոցով շտկել իրավիճակը: Ինչպես արդեն նշվել է, Բարդուսի ուղղությամբ հարձակվող հակառակորդին կանգնեցնելու ու Խանդերիի լեռնանցքը փակելու առաջադրանքով այդ շրջան է ուղարկում Պանդուխտի զորախումբը:

Ըստ գեներալ Արեշյանի վկայության, Բարդուսի ուղղությամբ մարտնչող զորամասերն իրենց դրսեւորել են շատ վատ:

Ներկայացնելով ռազմաճակատում տիրող կացությունը՝ գեներալ Արեշյանը նշում է. «Վերջապես իմ բազմաթիվ կարգադրություններից հետո,-նշում է գեներալ Արեշյանը,- Պանդուխտի զորախումբը սկսում է հարձակումը Բարդուսի վրա եւ հասնում մասնավոր հաջողության, գրավում է Քչուրչկի, Զակիմ գյուղերը: Հակառակորդը ձեռնարկում է հակահարձակում եւ առանց որեւէ դժվարության հետ մղում Պանդուխտի եւ գեներալ Տեր-Ղեւոնդյանի զորամասերը, որոնք մի փոքր դիմադրելով փախչում են եւ մերկացնում ամբողջ թեւը: Այդ ճակատում դիմադրություն ցույց տալու մասին խոսք անգամ լինել չի կարող, քանի որ այնտեղ ոչ մի զինվոր այլեւս չի մնացել: Հաշվի առնելով Բարդուսի ուղղությունը պաշտպանելու անհրաժեշտությունը ու Խանդերիին (Դրոյի ճակատի անմիջական թիկունքը - Հ.Գ.), Էզնոսին եւ Մեչարլիին սպառնացող կործանարար վտանգը, ես ռազմաճակատի մնացած տարբեր զորամասերի վաշտերին հրամայեցի գրավել եւ պաշտպանել Սարիղամիշի մերձակայքում գտնվող բարձունքները...»[1]:

[1] Նույն տեղում, էջ 45 ա:

Ռազմաճակատի աջ թեւի տարածքները կորցնելուց հետո Դրոյի զորախումբը դարձյալ հաստատակամորեն պաշտպանում էր Ղարաուրգան-Մեջնկերտ շրջանը: Ռազմաճակատի հրամանատարությունը անհրաժեշտաբար պետք է շտապ ուժեղացներ Նոր Սելիմի պաշտպանական հանգույցը եւ հնարավոր բոլոր միջոցները ներդնելով՝ խոչընդոտեր երկաթգծին տիրելուն եւ Սարիղամիշը շրջանցելուն նպատակաուղղված թուրք հրամանատարության ձեռնարկումները:

Նոր Սելիմի պաշտպանական շրջանն ուժեղացնելու նպատակով այդ ուղղությամբ է կենտրոնացվում գնդապետ Մորելի եւ կապիտան Շնեուրի գլխավորած հատուկ զորախումբը: «... մեր Առաջին Ցատուկ Հայկական Վաշտը, - գրում է գնդապետ Շնեուրը (այդ ժամանակ ուներ կապիտանի աստիճան- Հ.Գ.), - որի հրամանատարն էր ընդհանուր սպայակոյտի անդամ՝ գնդապետ Մորէլ, իսկ ես վարիչն էի նրա սպայակոյտի, անցաւ Նովo-Սելիմ:Նրա պարտականութիւնն էր՝ պաշտպանել աջ թեւը եւ միաժամանակ նա ընդհանուր պահեստի ոյժն էր»[1]:

Գեներալ Նազարբեկյանի հավաստմամբ, գնդապետ Մորելի եւ կապիտան Շնեուրի գլխավորած հատուկ զորախումբը ունեցել է հետեւյալ կազմը. «Հետեւակային երկու գունդ, հետեւակային մեկ գումարտակ, հրետանային 3 մարտկոց եւ հատուկ հեծյալ գունդ»[2]:

Այդ ժամանակ Նոր Սելիմի շրջանում են հայտնվում նաեւ Զեմլյակի, ինչպես նաեւ Դրոյի զորախմբի Արամի գլխավորած հեծյալ զորավաշտերը:

Թուրքական զորքերի կողմից Սարիղամիշը շրջանցելու փորձերը խափանելու համար, ըստ գեներալ Նազարբեկյանի վկայության, կարելի էր օգտագործել իր տրամադրության ներքո գտնվող «Հայկական 1-ին հեծյալ գունդը, ռուս սպայական զորախումբը, ինչպես նաեւ Ալեքսանդրապոլի 8-րդ հետեւակային գունդն ու սակրավորային գումարտակը»:

«Այդ զորամասերը, - գրում է գեներալ Նազարբեկյանը, - եթե ռազմաճակատի կարիքները պահանջեին, ես կարող էի ժամանակին տեղափոխել ճակատ, իսկ ծայրահեղ դեպքում Կարսից կարող էինք վերցնել նաեւ հայկական 3-րդ հետեւակային գունդը...»[3]:

[1] «Սարդարաբատի հերոսամարտը», գրեց գլխաւոր սպայակոյտի գնդապետ Ալեքսանդր Շնեուր, 1967, Ֆրեզնու, էջ 18:
[2] Բանբեր Հայաստանի Արխիվների, 1992, թիւ 3, էջ 96:
[3] Նույն տեղում:

Թվում է՝ հայկական ուժերը ավելի քան բավարար էին թուրքական զորքերի հարձակումը կանգնեցնելու եւ Սարիղամիշը անառիկ պահելու համար, բայց կատարվում է ճիշտ հակառակը: Մարտի 23-ին գեներալ Արեշյանը արձակում է Սարիղամիշը թողնելու հրամանը:

Մարտի 22-ի դրությամբ Սարիղամիշի պաշտպանական բնագծերում տիրել է հետեւյալ իրավիճակը. «Սարիբանի խճուղի, Մեջնկերտ, Էզնոս, Վանկի լեռնանցք, Մեզերլի: Բարդուսին է մոտենում գնդապետ Մելիք-Շահնազարովի գունդը: Նոր Սելիմի ուղղությամբ հակառակորդը գրավել է Բաշկե գյուղը եւ ուժեղ ճնշում է մեր աջ թեւը: Էզնոսի ուղղությամբ աշխատում է թուրքական հրետանին: Նկատվել է թուրքական 2-3 գնդերի, յուրաքանչյուրը 3 գումարտակ կազմով, տեղաշարժը դեպի Սարիղամիշ: Մինչեւ մարտի 21-ը Սարիղամիշի զորախումբը կորցրել է մոտավորապես 100 մարդ: Հակառակորդի առաջխաղացումը դեպի Վարիշան կանգնեցվել է: Բաշկեի մերձակայքում շարունակվում է քրդերի կուտակումը: Երկաթգծի պաշտպանության համար առանձնացվել է 1 վաշտ, 2 գնդացիր եւ 2 հրանոթ»[1]:

Ճիշտ է, հայկական զորքերի շարքերում նկատվում էին դասալքության դեպքեր ու բարոյահոգեբանական անբավարար վիճակ, բայց զորամասերի մեծ մասը տրամադրված է եղել մարտականորեն եւ հրամանատարության անհողդողդ կազմակերպվածության դեպքում կարելի էր հաջողությամբ մարտնչել, եւ պահել Սարիղամիշը: Սակայն գեներալ Արեշյանի, ինչպես այդ մասին վկայում է ընդհանուր զորահրամանատար գեներալ Նազարբեկյանը, պարտվողական հոգեբանությունն ու հոռետեսական տրամադրությունը իրենց բացասական ազդեցությունն են ունենում մարտադաշտում ծավալվող դեպքերի հետագա զարգացման վրա:

Մարտի 22-ին ռազմաճակատում տիրող կացության եւ զորամասերում արմատավորված դասալքության պատճառով ծայրահեղ հուսահատության մատնված գեներալ Արեշյանը հայկական կորպուսի հրամանատարությանն է ներկայացնում Սարիղամիշը թողնելու եւ ռազմաճակատի հրամանատարությունից հրաժարվելու իր առաջարկները: Ռազմաճակատում հայկական զորամասերի դրությունը իրոք այնքան էլ բարվոք չէր, բայց այդ պահին ավելի քան հարկավոր էր ներդնել ողջ ուժերն ու կարողությունները եւ հաստատակամորեն մարտնչելով ու չընկնելով խուճապի եւ հուսալքության գիրկը՝ պահել ռազմաճակատը:

[1] ՀՀ ԲԿԱ (Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Արխիվ, ԱՄՆ, Բոստոն), թիւ 503, թծ. 14, գ. 6, էջ 3:

Առանալով Արեշյանի հեռագիրը՝ գեներալ Նազարբեկյանը պատասխանում է. «Սարիղամիշի շրջանի ամուր պաշտպանությունը այն օրերից ավել է շատ լավ արդյունք. քրդերը Աղ-Բաբի շրջանից այլևս չեն տեղաշարժվում ոչ արևելք, ոչ էլ արևմուտք: Կագիզմանի նահանգի մահմեդականությունը հանձնել է զենքը եւ հնազանդություն հայտնել, որն էլ հնարավորություն տվեց մեր զորամասերին շարժվել Կագիզմանից: Եվ վերջապես, երկու օրվա մարտերից հետո քո զորախմբի կորուստները քիչ են: Ես գտնում եմ, որ զորքերը կանգնած են բավականաչափ ամուր եւ դրա հետ միասին թուրքերը այնքան էլ ուժեղ չեն: Վաղը, մարտի 23-ին քո զորախմբին ուղարկում եմ համալրում: Խնդրում եմ բոլոր սպաներին ու զինվորներին ներշնչել մեր հայրենիքի տարածքները պաշտպանելու եւ թշնամուն պատշաճ հարվածներ հասցնելու համոզմունքը...»[1]:

Կոդրային զինվորականը, որպես կանոն կատարում է վերին հրամանատարության հրամաններն ու հանձնարարությունները, սակայն այս անգամ կոդրային զինվորական գեներալ Արշեյանը շինու պատճառաբանությամբ շրջանցում է վերադասի՝ գեներալ Թ. Նազարբեկյանի հանձնարարությունը:

Զորաստելով կորպուսի հրամանատարի խստացած օգնական ուժերին՝ գեներալ Արեշյանը հաջորդ օրը եւեթ գործյալ նույն պահանջով գեներալ Նազարբեկյանին է հղում հետեւյալ հեռագիրը.

«Ես պահի գնահատման համոզվածության եւ ֆիզիկական իրավիճակի պատճառով զորախումբը հրամայել չեմ կարող: Այսօր երկու անգամ ունեցել եմ գլխապտույտ եւ առաջին անգամ կոկորդիցս արյուն է գնացել: Հրամանատարությունը հանձնում եմ գնդապետ Բեյ Մամիկոնյանին»[2]:

Առանց հայկական զորքերի ընդհանուր զորահրամանատարի՝ գեներալ Նազարբեկյանի գիտության եւ համաձայնության, հայկական զորամասերը գեներալ Արեշյանի խուճապային տրամադրվածության հետեւանքով չհասցնելով անգամ պայթեցնել ու ոչնչացնել քաղաքում գտնվող պահեստները, մեկը մյուսի հետեւից նահանջելով՝ թողնում են Սարիղամիշը: Եւ միայն վերջին պահին Սեբաստացի Մուրադն ու Սեպուհը կարողանում են իրենց առաջնորդած զինվորների աջակցությամբ պայթեցնել Սարիղամիշում գտնվող հակազինապահեստների մի մասը:

Գեներալ Արեշյանի հոգեբանության վրա բացասաբար էին ազդել ռազմաճակատի Բարգուշ-Վարիշան-Նոր Սելիմ ուղղությամբ մարտի 2-ին թուրքերի ձեռք բերած հաղթանակները:

[1] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2. գ. 176, թ. 10:
[2] Նույն տեղում, թ. 9:

«Ապիլի 5-ին (մարտի 23-ին), - գրում է Գ. Ղորղանյանը, - թուրքերը գործողություններ սկսան, յարձակուելով Սարիղամիշի ջոկատի դիրքերու կեդրոնին, գլխաւորաբար անոր աջ թեւին դէմ Վարիշանի ուղղութեամբ: Ցամառ ճակատամարտ մը ետք Վարիշանի մօտ, որը կը պաշտպանուէր Ա. առանձին կիսաբաժնի կողմէ գնդապետ Մորեի հրամանատարութեամբ, թուրքերը գրաւեցին այդ վայրը[1]:

Ճիշտ է, թուրքերը գրավում են Վարիշանը եւ սպառնում Նոր Սելիմին, բայց դա բնավ էլ չէր նշանակում, թե կացությունը անշտկելի էր եւ Սարիղամիշը անպայմանորեն պետք է պարպվեր: Կազմակերպված եւ վճռական գործողություններ ձեռնարկելու դեպքում կարելի էր շտկել կացությունը, մանավանդ որ, ըստ գեներալ Նազարբեկյանի հավաստման, մարտական ուժերը բավարարում էին:

«Հաշվի առնելով, - նշում է գեներալ Արեշյանը, - Բարդուսի ուղղությունը պաշտպանելու անհնարինությունն ու խանդերին, էզնոսին եւ Մեչատլիին սպառնացող կործանարար վտանգը, ես ռազմաճակատի մնացած տարբեր զորամասերի վաշտերին հրամայեցի գրավել եւ պաշտպանել Սարիղամիշի մերձակայքում գտնվող բարձունքները...

Մինչեւ մարտի 23-ը Սարիղամիշը բոլոր առումներով տեղահանվեց ամբողջությամբ: Փոքր-ինչ արժեք ունեցող սպառազինությունը չթողնելով հակառակորդին՝ պայթեցվեց եւ ոչնչացվեց»[2]:

Կորպուսի հրամանատարին հասցեագրած գեներալ Արեշյանի հեռագիրը, ապա նաեւ Սարիղամիշի անսպասելի հանձնումը ցնցող տպավորություն են թողնում, չէ որ հենց վերջին հեռագրով գեներալ Նազարբեկյանը հրամայել էր, համաձայն նույն Արեշյանի վկայության, «...կորպուսի հրամանատարը պատասխանեց, որ Սարիղամիշը անհրաժեշտ է պահել»[3]:

Անդրադառնալով գեներալ Արեշյանի հեռագրի եւ Սարիղամիշը հանձնելու իրողության գնահատմանը՝ գեներալ Նազարբեկյանը նշում է. «Ինձ սարսափելիորեն զարմացրեց այդ հեռագիրն իր անսպասելիությամբ: Գուցեեւ ես ուրիշին էի նշանակելու տեղակալ, եւ երկրորդ, Սարիղամիշից նահանջելու պատճառ եւ հիմքեր չկային: Թուրքերի այն ուժերը, որոնք սպառնում էին շրջանցել Սարիղամիշը, փոքրաթիվ էին, եւ չէին կարող զորախմբի համար լուրջ վտանգ ներկայացնել:

[1] «Հայրենիք» ամսագիր, 1927, թիւ 2, էջ 159:
[2] ՀԱԱ, ֆ. 121, ց. 1. գ. 37, թ. 47:
[3] Նույն տեղում, էջ 46:

... Ես խորապես համոզված եմ, եթե չլիներ Արեշեւի ինքնաներշնչումը, քանի դեռ թուրքերը չէին հասցրել ավելի ուժեղանալ, ապա կարելի էր Սարիղամիշը պահել ավելի երկար ժամանակով»[1]:

Կորպուսի շտաբի պետ, գեներալ Վիշինսկին՝ զայրացած Սարիղամիշը հանձնելու չպատճառաբանված քայլից, պահանջում է դատի տալ գեներալ Արեշյանին: Հետագայում Սարիղամիշը հանձնելու իր վճիռն արդարացնելու ու հիմնավորելու նպատակով գեներալ Արեշյանը նշում է. «Մարտի 23-ին ժամը 17-ին ինքնաթիռով (այրոպլան) կատարած հետախուզությունը պարզել է, որ Բարդուսի կողմից դեպի Կիզիլ-Զուբախ շարժվում էր 14 զորայուն, յուրաքանչյուրը ոչ պակաս մի վաշտ կազմով: Իմ հետախուզությունը դրանից մեկ օր առաջ պարզել էր 1500 թուրք զինվորների շարժումը դեպի Բարդուս: Հետախուզության հայտնած այդ տվյալները անվերապահորեն ապացուցում են մարտի 23-ին Սարիղամիշի նահանջի իրավացիությունը»[2]:

Իսկ դեպքերն անդառնալի էին. գեներալ Արեշյանի թուլամորթությունը, մարտական ոչ բավարար պահվածքն ու իրավիճակին տիրապետելու անկարողությունն իրենց սեւ գործը կատարեցին. Թշնամուն հանձնվեց դեպի Արեւելահայաստան տանող հերթական կարեւորագույն պաշտպանական հանգույցներից եւս մեկը:

Սարիղամիշը հայկական զորքերի կողմից պարպելու պահին Դրոն գտնվում էր իր գլխավորած ճակատի՝ Ղարաուրգանի ուղղությամբ: Դատելով այդ ժամանակահատվածում ռազմաճակատում ընթացող մարտական գործողությունների իրական վիճակը բնութագրող վավերագրերից, կարելի է միանշանակորեն պնդել, որ նա այդ օրերին երբեւէ չի նպատակադրվել դույզն-ինչ տեղի տալ հակառակորդի ճնշումներին եւ նահանջել: Եթե չլիներ ռազմաճակատի աջ թեւի՝ Բարդուսի ուղղությամբ Թշնամու ուժերի ճեղքման ու թեւանցման վտանգը, ապա Դրոյի զորախումբը հաստատակամորեն կկանգներ եւ կպաշտպաներ իրեն վստահված ճակատը: Հենց Սարիղամիշի պարպման օրը՝ մարտի 23-ին, թուրքական զորքերը գրոհներ են ձեռնարկել նաեւ Ղարաուրգան- Մեջնկերտ ուղղությամբ: Դրոյի գլխավորած զորամասերը, ինչպես եւ նախորդ մարտերում, այս անգամ դարձյալ անկոտրում պաշտպանությամբ դիմագրավում եւ հետ են մղում հակառակորդի գրոհները:

Հետաքրքիր իրավիճակ է ստեղծվում: Ղարաուրգանի շրջանում Դրոյի զորախումբը հաստատակամորեն կանգնեցնելով թուրքերին

[1] Բանբեր Հայաստանի Արխիվների, 1992. թիւ 3, էջ 96:
[2] ՀԱԱ, ֆ. 121, ց. 1. գ. 37, թ. 47:

պահում է իրեն վստահված ճակատը, իսկ ռազմաճակատի մեկ այլ հատվածում թուրքերն օգտվելով հայկական զորքերի թույլ գործողություններից առաջ են շարժվում: Եթե թուրքերին հաջողվեր գրավել Վարիշանն ու ապա նաեւ Նոր Սելիմը, ապա նրանք կկտրեին երկաթգիծը, կհայտնվեին Սարիղամիշի թիկունքում, եւ ռազմաճակատում մարտնչող հայկական զորքերը, ինչպես նաեւ ամենահեռավոր հատվածում դիրքավորված Դրոյի զորախումբը անխուսափելիորեն կհայտնվեր շրջափակման մեջ: Տվյալ իրավիճակում, մանավանդ Սարիղամիշը պարպելուց հետո, որպեսզի ապահովվեր ռազմաճակատի թիկունքի ու դեպի Կարս ձգվող հաղորդակցության միջոցների եւ մյուս ուղղություններում տեղակայված զորամասերի անվտանգությունը, հայկական զորքերի հրամանատարությունը նախ եւ առաջ պիտի ուժեղացներ Վարիշանի եւ Նոր Սելիմի պաշտպանական բնագծերը, կազմակերպեր տարբեր շրջաններում մարտնչող զորքերի անվտանգ նահանջը եւ փորձեր կտրուկ եւ կենտրոնացված հակահարվածներով կանգնեցնել հակառակորդի առաջխաղացումը:

Մարտի 24-ին գնդապետ Մորելի եւ կապիտան Շնեուրի գլխավորած զորամասերը Վարիշանի ուղղությամբ անցնում են հարձակման եւ հետ շպրտելով թուրքերին՝ գրավում են այդ բնակավայրը:

«... Ապրիլի 6-ին (մարտի24), - գրում է գեներալ Գ.Ղորղանյանը, - Մորելը ետ նետեց թուրքերը Վարշանէն դէպի արեւմուտք, այն նոյն պահուն, երբ Սարիղամիշի ջոկատը կռուով դէպի Նոր Սելիմ կը նահանջեր»[1]:

Մարտի 23-ին հերթական անգամ հետ մղելով թուրքերի զանգվածային գրոհները, Դրոն, համաձայն ռազմաճակատի հրամանատարի հրահանգի եւ պաշարման վտանգից խուսափելու նպատակով, հարկադրված թողնում է Ղարաուրգանի շրջանն ու սկսում կանոնավոր զորաշարքերով ու կազմակերպված մարտավարությամբ նահանջել: Դրոյի զորախումբը փաստորեն Արեւմտահայաստանի վերջին տարածքներից՝ Սարիղամիշի շրջանից հեռացող հայկական վերջին մարտական ուժն էր:

Նկարագրելով այդ պահը, գնդապետ Շնեուրը գրում է. «... հայկական վերջին միաւորները թողին հեռացան Թուրքիայից: Ցետնապահ գունդը՝ Դրօյի (Դրաստամատ Կանաեան) հրամա-

[1] «Հայրենիք» ամսագիր, 1927, թիւ 2, էջ 159:

նատարության տակ, յանձինս նրա ունէր արժանաւոր, խիզախ ղեկաւար, որ մնում էր Ղարաուրգանի շրջանում: Նրա առջեւ՝ փոքրիկ թիկունքային ջոկատ՝ 30 մարդուց, գնդապետ Թորգոմի ղեկաւարութեամբ: Դէպի աջ, այսինքն դէպի հիւսիս այդ «աղիքից»-ոչի՛նչ: Ամայի, ոչ ոքի կողմից չբռնուած տարածութիւն (նկատի ունի դեպի արեւմուտք վրացական զորքերի կողմից լքված, անպաշտպան տարածքները - Հ.Գ.) »[1]:

Աստիճանաբար նահանջելով եւ ճանապարհին բազմիցս հետ մղելով իրեն կրնկակոխ հետապնդող հակառակորդի գրոհները՝ Դրոյի զորախումբը հասնում է Սարիղամիշ: «...Գնդապետ Թորգոմի ջոկատը,-շարունակում է գնդապետ Շնեուրը,-պաշարուեց քրդերի կողմից: Նա քաշուեց Դրոյի յետնապահ գունդի մօտ: Շուտով քրդերի յետեւից երեւացին Թրքական կանոնաւոր զօրամասեր, եւ Դրօն դանդաղօրէն քաշուեց Սարիղամիշ, իսկ նրա ետեւից շարժւում էին Թուրքերը»[2]:

Սարիղամշին տիրելը Թուրք հարամանատարության համար, կարելի է ասել, ուներ ռազմավարական նշանակություն: Գնդապետ Շնուրի գնահատմամբ «...Բարդուսի անցքից հյուսիս, ձգւում էր անիւային ճամբաների ցանցը Էրզրումից, որ հնարաւորութիւն էր Թուրքերին բռնելու մեր աջ Թեւը և ուղակի դուրս գալու Կարսի վրայ:[3]

Այդ շրջանը, որը գնդապետ Շնեուրի գնահատմամբ՝ Էրզրումի ռազմաճակատի «Աքիեսյեան կրունկն» էր, ըստ վրացիների հետ ունեցած համաձայնության պիտի պաշտպանեին վրացական զորքերը: Սակայն այդ օրերին, երբ հայկական զորքերը դաժան կռիվներ էին մղում ընդդեմ Թուրքական դիվիզյանների, այդ տարածքում վրացական որեւէ զորամաս գոյություն չուներ:

«Վրացական բանակը,- գրում է գնդապետ Ա. Շնեուրը,- կազմակերպւում էր, կազմակերպւում եւ ճակատ դուրս չէր գալիս»[4]:

Դրոն իր զորախմբով Սարիղամիշ է հասնում այն ժամանակ, երբ քաղաքում այլեւս հայկական զորքեր չկային: Հեռանալով լքված Սարիղամիշից՝ զորախումբն այնուհետեւ շարժվում է դեպի Նոր Սելիմի շրջան, ուր տվյալ ժամանակահատվածում կենտրոնանում էին ռազմաճակատի գրեթե ողջ ուժերը:

Ռազմավարական նշանակություն ունեցող Սարիղամիշը, որտեղ կենտրանացված էին հսկայան քանակությամբ զինապահեստներ,

[1] «Սարդարաբատի հերոսամարտը», գրեց գլխաւոր սպայակոյտի գնդապետ Ալեքսանդր Շնեուր, էջ 18:
[2] Նույն տեղում, էջ 16:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում, էջ 15:

հակառակորդի տնօրինությանը հանձնելուց հետո, ռազմաճակատում տիրող կացությունը հայկական զորքերի հրամանատարությանը հրամայաբար թելադրում էր փոխել մարտավարությունը, կատարել զորքերի վերախմբավորում եւ վճռական քայլեր ձեռնարկել կանգնեցնելու Թուրքական զորքերի առաջխաղացումը:

Ռազմաճակատի հրամանատարական կազմում կատարվում են փոփոխություններ: Գեներալ Նազարբեկյանի հրամանով ռազմաճակատի հրամանատարությունը ստանձնում է զինվորականության շրջանում հարգանք չվայելող գնդապետ Բեյ- Մամիկոնյանը, որին զինվորականները հեգնանքով անվանել էին Էշ Մամիկոնյան, այսինքն Բեյի փոխարեն՝ Էշ:

Այժմ հայկական զորքերի հիմնական խնդիրն էր խելամտորեն ու արդյունավետ օգտագործել եղած մարտական ուժերի հնարավորությունները եւ կազմակերպված ու համարձակ գործողություններով կանգնեցնել Թուրքերի հարձակումները, հակառակ պարագայում, գեներալ Գ. Ղորղանյանի գնահատմամբ, «... եթէ Թուրքերը շարունակէին իրենց առաջխաղացումը Վարիշանի կողմէն դէպի Կարս- Սարիղամիշ երկաթուղագիծը, Սարիղամիշի ջոկատը կարող էր կտրուիլ Կարսէն...»[1]:

Սարիղամիշը պարպելու պահին ռազմաճակատում մարտնչող զորքերի քանակը, ըստ գեներալ Արեշյանի հավաստման. «... Սարիղամիշի վերջին գործողությունների ժամանակ իմ հրամանատարության տակ կային 5000 զինվորներ խմբերի հետ (նկատի ունի ոչ կանոնավոր՝ Արամի, Զեմլյակի, Դալի Ղազարի եւ այլոց գլխավորած կամավորական զորաջոկատները - Հ.Գ.)»[2]:

Նոր Սելիմի շրջանում, համաձայն գեներալ Նազարբեկյանի տվյալների, մարտի 24-ի դրությամբ, կենտրոնացվել էին Երզնկայի գունդը, 1-ին հեծյալ գունդը, 7-րդ հետեւակային գնդի երկու գումարտակներ, 4-րդ հետեւակային գնդից մեկ գումարտակ եւ 3 հրետանային մարտկոց 14 հրանոթներով[3]:

Այս թվարկված ուժերին միանում է նաեւ Դրոյի զորախումբը, որի կազմում մի քանի կանոնավոր զորավաշտերի հետ միասին գործում էին Արամի եւ Զեմլյակի գլխավորած հեծելազորայինները եւ Դալի Ղազարի կամավորները:

Սարիղամիշի հայկական զորախմբի դեմ Թուրքերը, համաձայն գեներալ Արեշյանի վկայության, կենտրոնացնում են. «... հետախու-

[1] «Հայրենիք» ամսագիր, 1927, թիւ 2, էջ 159:
[2] ՀԱԱ, ֆ. 121, g. 1, գ. 37, թ/ 46:
[3] Բանբեր Հայաստանի Արխիվների, 1992, թիւ 3, էջ 97:

զության տվյալներով կազմում էին 6 գունդ, յուրաքանչյուրը 1000-1200 սվին, ոչ պակաս 16 հրանոթ եւ մեկ հեծյալ գունդ»[1]:

Ռազմաճակատում զորքերն առավելագույնս կազմակերպելու, մարտաշարքերը համալրելու եւ մարտական ոգին ու պատրաստվածությունը բարձրացնելու համար բացարձակապես ժամանակ չկար: Հայկական նահանջող զորամասերին կրնկակոխ հետապնդում էին թուրքական զորքերն ու քուրդ հրոսակախմբերը: Հակառակորդին արժանիորեն դիմակայելու համար հայկական զորքերի հրամանատարությունը ստիպված էր բոլոր անհրաժեշտ պատրաստությունները կատարել ընթացքից եւ շատ արագ: Գեներալ Արեշյանին փոխարինած գնդապետ Բեյ-Մամիկոնյանի գլխավորությամբ Նոր Սելիմի շրջանում կենտրոնացված զորամասերից կազմավորվում է հարվածող զորախումբ, որն անհրաժեշտ պահին պետք է անցներ հարձակման եւ մյուս զորամասերի համագործակցությամբ հետ շպրտեր թուրքերին ու խոչընդոտեր նրանց առաջխաղացումը դեպի Կարս:

Թուրքերը երկար սպասեցնել չեն տալիս: Մարտի 25-ի առավոտյան հրետանային նախապատրաստությունից հետո նրանք վերսկսում են հարձակումը եւ գրոհում կապիտան Հալաբյանի գլխավորած Երզնկայի գնդի եւ գնդապետ Մորելի զորախմբի դիրքերին: Համառ պաշտպանությամբ դիմադրավելով թուրքերի գրոհներին՝ հայկական զորքերը առանց որեւէ խուճապի, կազմակերպված ձեւով սկսում են մի փոքր հետ նահանջել:

«Նոր Սելիմից,- նշվում է այդ մարտերի լուսաբանմանը նվիրված վավերագրում,-բացվեց պատասխան հրետանային կրակը: Ժամը 12-ին Նոր Սելիմի զորախումբը սկսեց նահանջել դեպի Օլուխլի: Նրան որպես օգնություն շտապել են 1-ին դիվիզիայի զորամասերը: Ժամը 15-ին սկսել է նահանջել նաեւ գնդապետ Մորելի զորախումբը, ընդ որում, առաջինը նահանջել է դեպի Բեյկար, իսկ երկրորդը դեպի Բայբուրտ:

Նահանջել են մարտերով...»[2]:

Հաջորդ օրը նահանջող զորամասերը ճակատի հրամանատարությունից ստանալով համապատասխան օգնական ուժեր՝ 7-րդ գունդը 2 հրանոթներով եւ 1-ին հեծյալ գունդը, կանգնեցնում են թուրքերի հարձակումը[3]:

«Թուրքերը, - շարունակվում է նույն վավերագրում, - հրետանային կրակի եւ հեծյալների ճնշման հետեւանքով նահանջել

[1] ՀՀ ԲԿԱ, թիւ 503, թծ. 14, գ. 6, էջ 3:
[2] Նույն տեղում, էջ 5:
[3] Նույն տեղում:

են: Երեկոյան կողմ կռիվը դադարել է: Զորախմբի կորուստները մեծ չեն»[1]:

Շնորհիվ ժամանակին ձեռնարկված համապատասխան քայլերի՝ հաջողվում է կանգնեցնել թուրքերի առաջխաղացումը: Անհրաժեշտ էր զարգացնել մարտադաշտում ձեռք բերած նվաճումները եւ հուժկու հարվածներով վճռական պարտության մատնել թշնամուն:

Մարտի 27-ին Դրոյի եւ գնդապետ Բեյ-Մամիկոնյանի գլխավորած հարվածող զորախմբերը Երզնկայի, 1-ին հեծյալ գնդերի եւ գնդապետ Մորելի առաջնորդած զորամասի համագործակցությամբ անցնում են հարձակման եւ խորտակելով թուրքական զորամասերի դիմադրությունը՝ առաջ են շարժվում ու հետ շպրտում նրանց ելման դրությունից այն կողմ[2]:

«Նոր Սելիմի շրջանում մեր զորամասերը անցնում են հարձակման եւ հաղթահարելով հակառակորդի համառ դիմադրությունը՝ հաջողությամբ առաջ շարժվում»[3]:

Այդ մարտերում հատկապես աչքի են ընկնում Դրոյի զորախմբի՝ Արամի եւ Զեմլյակի գլխավորած հեծյալ զորավաշտերը: Նույնիսկ գեներալ Արեշյանը, որը որպես կանոն, ընդգծված հակակրանքով է արտահայտվում ոչ կադրային զինվորականների նկատմամբ, արժանվույնս գնահատելով այդ մարտերում Արամի եւ Զեմլյակի զորախմբերի դրսեւորած մարտական որակները, նշում է. «... Զեմլյակի զորախումբն ու Արամի ձիավորները կռվել են նույնիսկ կանոնավոր զորամասերից ավելի լավ: Այս երկու հրամանատարների եռանդը վեր է ամեն մի գովեստից»[4]:

Մարտի 25-27-ի մարտերում դրսեւորելով մարտական գերազանց որակներ եւ կազմակերպվածություն՝ հայկական զորքերը հասնում են շոշափելի հաջողության: Սակայն, ցավոք, գեներալ Արեշյանին փոխարինած ճակատի հրամանատար գնդապետ Բեյ Մամիկոնյանն իր նախորդի համանմանությամբ չդրսեւորելով մարտական պատշաճ հատկանիշներ, չի կարողանում ինչպես հարկն է զարգացնել ձեռք բերած նվաճումները եւ վճռական պարտության մատնել հակառակորդին:

Այս կռիվներում գնդապետ Բեյ Մամիկոնյանի դրսեւորած ոչ այնքան դրական վարքագծի մասին քննադատաբար է արտահայտվում կորպուսի հրամանատար գեներալ Նազարբեկյանը[5]:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, թ. 46:
[4] ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 37, թ. 46:
[5] Տե՛ս Բանբեր Հայաստանի Արխիվների, 1992, թիւ 2, էջ 46:

Մարտի 27-ին հաջողությամբ ձեռնարկած հարձակումը կանգ է առնում: Թուրքերը, մարտադաշտ նետելով լրացուցիչ ուժեր, կարողանում են կանգնեցնել հայկական զորքերի հարձակումը:

Ռազմաճակատում տիրում է հարաբերական դադար: Այս մարտերից հետո Դրոն, օգտվելով ռազմաճակատում հաստատված կայուն իրավիճակից, վերադառնում է Երեւան, բայց նրան վիճակված չէր հանգստանալու:

Մի էական ճշտում: Գեներալ Թ. Նազարբեկյանը իր հուշերում մանրամասնորեն ներկայացնելով հայ-թուրքական պատերազմի առավել արմատական նշանակություն ունեցող մարտական գործողություններն ու իր քննադատական վերաբերմունքն արտահայտելով հայկական զորքերի հրամանատարության կիրառած մարտավարությանը, միաժամանակ իր դժգոհությունն է արտահայտում ոչ կադրային զինվորականների ու ազգային գործիչների նկատմամբ: Նրա գնահատմամբ՝ «Դրոն առանց որեւէ մեկի թույլտվությունը հարցնելու՝ մեկնել է Երեւան: Բոլորը գերազանց գիտեին, որ Հայաստանի ճակատագիրը վճռվում է Կարսի դաշտերում եւ թվում էր, որ ազգային բոլոր գործիչները՝ Դրոն, Արամը, Անդրանիկը, Սեպուհը, Մուրադը, Դալի Ղազարը եւ այլոք պետք է գտնվեին ճակատում ու իրենց օրինակով եւ հեղինակությամբ բարձրացնեին զինվորների մարտական ոգին:Բայց ցավոք, նրանք, գրեթե բոլորն այդ ժամանակ ճակատում չէին»[1]:

Իհարկե, ճմարիտ է գեներալ Թ. Նազարբեկյանը՝ գտնելով, որ ազգի ճակատագրական պահին բոլորը պարտավոր էին լինել ճակատում, բայց պիտի նշել, որ նա այս հարցում այնքանով իրավացի չէ՝ մեղադրելով վերոհիշյալ ազգային գործիչներին, որոնք այդ ժամանակ ճակատում չէին գտնվում :

Այդ նույն ժամանակահատվածում ժողովրդի պահանջով ու ընտրությամբ Արարատյան աշխարհում դիկտատոր հռչակված Արամ Մանուկյանը հսկայականն աշխատանք էր ծավալում կարգմակերպելու թիկունքը, կարգավորելու Երեւանի նահանգում գեներալ Մ. Սիլիկյանի հրամանատարությամբ կազմավորվող 2-րդ դիվիզիան համալրող զինվորների զորահավաքը:

Նախորդ բոլոր մարտերում իրենց քաջաբար դրսեւորած Սեբաստացի Մուրադին եւ Սեպուհին ռազմաճակատից հեռացրել էր ճակատի ապաշնորհ հրամանատար գեներալ Արեշյանը, որն արհամարական վերաբերմունք ուներ ոչ կադրային զինվորականների նկատմամբ: Գեներալ Արեշյանի, որին ի դեպ պաշտպանում էր գեներալ Թ. Նազարբեկյանը, կարգադրությամբ լուծարվել էին Սեբաստացի Մուրադի եւ Սեպուհի գլխավորած կամավորական հեծյալ զորախմբերը, որոնց անբասիր, հերոսական գործողությունների շնորհիվ անխուսափելի կոտորածից փրկվել էին տասնյակ հազարավոր հայեր: Անդրկովկասի տարածքից երկու նշանավոր հերոսներին հեռացրել է Հայոց Ազգային Խորհուրդը[1]:

Անդրանիկը, որը Էրզրումի անկումից հետո գեներալ Թ. Նազարբեկյանի հրամանով ազատվել էր զբաղեցրած պաշտոնից(դիվիզիայի հրամանատար-Հ. Գ.), ռազմաճակատի հրամանատարությունը հանձնել էր գեներալ Արեշյանին եւ կազմավորում էր արեւմտահայ զինվորներից բաղկացած Առանձին հարվածող զորամասը:

Դրոն, ճիշտ է, այդ ժամանակ Կարսի ճակատում չէր, բայց դարձյալ գտնվում էր կրակների կիզակետում:Նա Սարիղամիշ-Կարս ուղղությունից գալիս է Երեւան ու անմիջապես մեկնում է Իգդիրի ճակատ:

Հայկական զորքերի հրամանատար գեներալ Թ. Նազարբեկյանը նույնպես նախապատվություն տալիս էր կադրային զինվորականներին ու նախեւառաջ պաշտպանում եւ հաստատում էր նրանց առաջարկությունները: Պատերազմի ողջ ընթացքում գեներալ Թ. Նազարբեկյանի հրամանատարական կետը գտնվել է ճակատից զգալիորեն հեռու եւ նա հազվադեպ է եղել ռազմաճակատի առաջավոր բնագծերում, զինվորների կողքին: Կարելի է հաստատապես պնդել, որ նա ընտրել ու գործում էր ռազմական գործողությունները վարելու այնպիսի այնպիսի մարտավարությամբ, որն այնքան էլ համահունչ չէր ռազմաճակատում տիրող կացությանը: Չի բացառվում, որ լիովին չտիրապետելով ռազմաճակատում ու թիկունքում տեղի ունեցող իրադարձություններին, նա կարող էր ոչ միտումնավոր, բայց փոքր-ինչ այլ կերպ ներկայացներ ու գնահատեր ոչ կադրային, ազգային-ազատագրական պայքարի կրակներում հասունացած, ազգային հերոսի անուն վաստակած զինվորական գործիչների գործունությունն ու իրական նկարագիրը:

Ինչպես արդեն նշվել է, գլխավոր ռազմաճակատը, ուր այդ օրերին ընթանում էին մարտական հիմնական, վճռորոշ գործողու-

[1] Նույն տեղում, թիւ 3, էջ 100:

[1] Մանրամասն տե՛ս Գեւորգյան Հ., Սեբաստացի Մուրադ, Երեւան, 2005, էջ 331-369:

թյունները՝ Էրզրում-Սարիղամիշ-Կարս ուղղությունն էր: Բացի գլխավոր ճակատից, կային նաեւ երկրորդական նշանակություն ունեցող ուղղություններ, որոնք անտարակույս նույնպես ունեին իրենց կարեւորությունն ու նշանակությունը: Երբ Թուրքերը, խախտելով ռուս հրամանատարության հետ 1917 թ. դեկտեմբերին կնքած Երզնկայի զինադադարը, անցնում են հարձակման գլխավոր՝ Երզնկա-Էրզրում-Սարիղամիշ ուղղությամբ, մնացած երկրորդական ուղղություններում գտնվող զորամասերը հատուկ առաջադրանքներով փոխադրվում են ավելի կարեւոր վայրեր:

Այսպես. «Ե. հայկական գունդը եւ Գ. առանձին կիսաբաժինը (Ա. եւ Բ. Վանի գունդերէն բաղկացած) ետ քաշուեցան Վանի լճի շրջանն, ուր բոլորովին մեկուսացուած վիճակի մէջ էին, եւ ուղարկուեցան Բայազետ: Հոն, ապահովելով Երեւանեան նահանգի հարաւային սահմանները, այդ զօրամասերը մնացին մինչեւ ապրիլի կէսը, ապա փոխադրուեցան Իգդիր...»[1]:

Մինչեւ մարտի կեսերը հայկական զորքերի հրամանատարությունը, կատարելով զորամասերի անհրաժեշտ վերախմբավորում եւ կենտրոնացում, հայկական մարտական ուժերը տեղաբաշխում է երկու գլխավոր ուղղությամբ:

1. «Սարիղամիշի խումբ՝ բաղկացած 9 վաշտէ. ներգործականներէն կը պաշտպանէր Արաքս գետի գիծը»[2]:
2. Սուրմալուի ուղղություն:

Դրոն հրաժեշտ տալով Սարիղամիշի զորախմբին, գալիս է Երեւան, ապա առանց դույզն-ինչ դադար առնելու մեկնում է Իգդիր, ուր այդ օրերին մի քանի զորամասերի հետ գտնվում էր գնդապետ Տիգրան Բաղդասարյանի գլխավորած Վանի գունդը:

Սուրմալու գավառում դարձյալ հայտնվել էին Թուրք եւ քուրդ հրոսակախմբերը, որոնք պարբերաբար հարձակումներ էին գործում հայկական բնակավայրերի, իսկ երբեմն էլ նաեւ այդ ուղղությամբ տեղաբաշխված զորամասերի վրա:

«Սուրմալուի ճակատին վրայ, - գրում է գնդապետ Տ. Բաղդասարյանը, - գտնուած ենք առաջին անգամ 1918 -ին, երբ Վանէն նահանջեցինք ու Պայազիտի վրայով Իգդիր եկանք: Այդ ատեններն ալ նոյն անապահովութիւնն ու վտանգը կը սպառնար Սուրմալուի հայ ազգաբնակչութեան: Թէեւ բաւականաչափ հայկ. զօրամասեր կը գտնուէր Իգդիրի եւ Կողբի շուրջ, սակայն քիւրտերը

[1] «Հայրենիք» ամսագիր, 1927, թիւ 2, էջ 159:
[2] Նույն տեղում:

յանդգնած էին յարձակուելու Թաշբուռուն հայկ. մեծ գիւղի վրայ, զայն տեղահան ըրած եւ յառաջանալով մինչեւ Տէլիք Թաշ՝ կտրած էին Իգդիր-Մարգարա խճուղին եւ այդպիսով խզած Սուրմալուի կապը Էջմիածնի եւ Երեւանի հետ»[1]:

Հարկավոր էր վերջ տալ թշնամու սանձարձակություններին, վերականգնել գավառի կապը մայրաքաղաքի հետ եւ հուսալիորեն պաշտպանել հայկական բնակավայրերը Թուրք-քուրդ հրոսակախմբերի ասպատակություններից:

Դրոն իր հայրենի Սուրմալու գավառ է մեկնում հենց այդ առաքելությամբ: Մի քանի օր անցկացնելով Իգդիրում եւ ծանոթանալով գավառում տիրող կացությանը, Դրոն որոշում է անցնել վճռական գործողությունների: Թուրք հրամանատարությունը, ելնելով զուտ ապագայի ծրագրերից, ռազմական հենակետի էր վերածել Թուրքաբնակ Դիզա գյուղը: Այդ գյուղում կենտրոնացնելով կանոնավոր զորքեր, գնդացիրներ եւ կառուցելով ռազմական ամրություններ՝ Թուրք հրամանատարությունը ձգտում էր պաշտպանական անխորտակ ամրոցի վերածել այդ գյուղը:

«Գլխաւոր ճամբան, - նշում է գնդապետ Տ. Բաղդասարյանը, - միանգամ ընդմիշտ ապահովելու համար, պէտք էր վերագրաւել Թաշպուռուռը, քանդել Դիզա կոչուած ամրոցը եւ տեղահան ընել անոր շուրջ հաւաքուած զինուած թաթար ազգաբնակչութիւնը»[2]:

Այդ ժամանակ բացի Վանի գնդից Իգդիրի շրջանում տեղաբաշխված էին նաեւ «Բաղդասարովի զօրամասը, Զէյթունի գունդը, Ախլաթի շրջանէն նահանջող Սմբատի եւ ուրիշ խումբեր»[3]:

Չնայած հիշյալ զորամասերը եւ խմբերն արդեն ունեին մարտական որոշակի փորձառություն, բայց Դրոն որոշում է ծրագրված գործողության իրականացումը հանձնարարել Վանի գնդին:

«Ձեմ գիտեր, - շարունակում է գնդապետ Տ.Բաղդասարյանը, - թէ ինչո՞ւ այդ ծանր ռազմական պարտականութիւնը մեզ բաժին ինկաւ: Մեր զօրամասի պակասները լրացնելէ եւ երկու դաշտային թնդանօթ տալէ յետոյ, Դրօն մեզի հրամայեց յառաջ շարժիլ եւ ամէն գնով գրաւել Դիզան»[4]:

Մարտական գործողությունները տեւում են ընդամենը երկու օր: Առաջին օրը հայկական զորավաշտերը գրավում են Դաշբուռունը

[1] Սատենաշար «Ռազմիկ», թիւ 1, «Հայաստանի Հանրապետութեան վերջալույսին», գրեց Տ. Բաղդասարեան, Փարիզ, 1937, էջ 200:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:

եւ հաջորդ օրը հարձակվում Դիզայի վրա: Թուրքերն օգտագործելով գյուղի շրջակայքում կառուցած ամրությունները, բուռն կերպով դիմադրում են հայկական զորավաշտերի գրոհներին: Չնայած թուրքերի համառ դիմադրությանը, կռիվը երկար չի շարունակվել: Խորտակելով թուրքերի համառ դիմադրությունը՝ հայ զինվորները ներխուժում են Դիզա:

«Մինչեւ կէսօր թշնամին արդէն բարոյալքուած ու ջախջախուած էր: Մեր ձիաւորները եւ հետեւակները միաժամանակ մտան անառիկ համարուած այդ մեծ գիւղը եւ թաթար վերջին կռուողներէն ազատուածները Արաքսի ալիքներուն յանձնուեցան...»[1]:

Գլխավոր խնդիրը կատարված էր: Դրոն գերազանց է կատարում հայկական զորքերի հրամանատարության հերթական առաջադրանքը: Ընդամենը երկու օրվա ընթացքում հայկական զորքերը նրա առաջնորդությամբ ջախջախում են Սուրմալուի շրջաններն ասպատակող թուրք զորամասերին եւ նրանց աջակցող քուրդ հրոսակախմբերին ու մաքրում գավառի տարածքները թշնամու ուժերից:

Եթե ընդհանրացնենք եւ անաչառորեն արժեւորենք նրա գործունեության այդ շրջանը, ապա կարելի է անվարան հաստատել, որ հայկական զորքերը նրա անմիջական ղեկավարությամբ կարողացան կանգնեցնել եւ հետ մղել թուրքական զորքերի հարձակումները ոչ միայն ռազմաճակատի գլխավոր՝ Սարիղամիշ-Ղարաուրգան-Կարս ուղղությամբ, այլեւ հասան նշանակալի արդյունքների նաեւ Սուրմալուի ճակատում:

Դրոյի գործունեության այդ շրջանը սահմանափակված չէ միայն բանակի հետ առնչվող խնդիրներով եւ ռազմաճակատում ընթացող մարտական գործողությունների ղեկավարման աշխատանքներով:

Թիկունքում առկա էին բազում բացասական երեւույթներ, որոնց հրատապ լուծումը անհրաժեշտ էին ոչ միայն թիկունքի, այլեւ ռազմաճակատի ամրապնդման համար:

Թուրք զինված զանգվածների ելույթներին զուգընթաց երկրում աննախադեպ չափերի էին հասել գողության եւ ավազակությունների դեպքերը: Հայաստանում տիրող դժվարին կացությունը լիցքավորել էր ազգային խնդիրների ըմբռնողությունից եւ հայրենասիրական տարրական զգացմունքներից զուրկ բարոյալքված որոշ հայ տարրերի, որոնք իրենց խառնակչությամբ ու թալանչիական գործողություններով ապակայունացնում էին առանց այն էլ անմխիթար քաղաքական եւ տնտեսական իրավիճակը: Անկարգությունների

[1] Նույն տեղում:

ալիքը տարածվել էր նաեւ Երեւանում, եւ տեղի Հատուկ Կոմիտեից զգալի ջանքեր էին պահանջվում զբաղվելու նաեւ այդ կարգի դժվարությունների հաղթահարմամբ:

Դրոն երբեմն ստիպված էր լինում զբաղվել հասարակական կարգ ու կանոնի ապահովության խնդիրներով:

Վերոհիշյալ Արշալույս Աստվածատրյանը, անդրադառնալով նմանօրինակ դեպքերին Դրոյի մասնակցությանը, գրում է.

«Մի օր, երբ Ազգային Խորհրդի շէնքում, Ցատուկ Կոմիտէի նախագահութեան սենեակում Մ. Մոսինեանի հետ աշխատում էինք, դրսից, Աստաֆեան փողոցից լսուեցին աղմուկ-աղաղակներ, ձայները գնալով աւելի սաստկացան: Արամը բացակայ էր: Աշխատանքը ընդհատեցի եւ դուրս եկայ պատշգամբ, հասկանալու համար աղմուկի պատճառը: Ինչ որ ջղայնացած իրարանցում կար փողոցում, ուր ահագին ամբոխ էր հաւաքուել. ոմանք աշխատում էին խառնակիչներին-աղմկարարներին ի կարգ հրաւիրել, բայց անյաջող: Նրանց ելույթներն աւելի սպառնական կերպարանք էին առնում, երբ՝որտեղից որտեղ երեւաց Դրօն եւ անմիջապէս մտաւ ամբոխի մէջ, կարծես երկնքից ուրուր իջաւ հաւերի մէջ. աղմկարարները ծակ ու ծուկ քաշուեցին, ամբոխը ցրուեց, եւ փողոցն ստացաւ իր խաղաղ, բնական տեսքը:

Մի փոքրիկ, ըստ ինքեան աննշան դէպքը, որ սակայն բնորոշ վկայութիւն է Դրօյի նկարագրի մասին: Ամէն տեղ, ամէն ժամանակ վտանգի (մեծ թե փոքր) պահերին նա երեւան էր հանում զինուորական իր բացառիկ յատկութիւնները, - մի հայեացքից ըմբռնել կացութիւնը եւ անմիջապէս անցնիլ գործի՝ միայն հերոսին յատուկ վստահութեամբ դէպի գործի յաջող վախճանը»[1]:

Խորագետ քաղաքական գործիչ, տաղանդավոր կազմակերպիչ Արամ Մանուկյանի եւ մարտական երկաթյա կարգապահությամբ օժտված աննկուն հրամանատար Դրոյի համագործակցությունը Արարատյան աշխարհում տվեց իր արգասաբեր պտուղները: Նրանց, ինչպես նաեւ Երեւանի Հատուկ Կոմիտեի մյուս անդամների ջանքերով հնարավոր եղավ լուծել թերեւս ամենահրատապ խնդիրը՝ մարել Հայաստանի տարածքում բռնկված թուրք հրոսակախմբերի զանգվածային ելույթները եւ ապահովել թիկունքը ռազմաճակատին միացնող ուղիների անխափան աշխատանքը: Բացի վերոհիշյալից, Երեւանի Հատուկ Կոմիտեն Հայաստանում տիրող ճգնաժամային

[1] «Հայրենիք» օրաթերթ, 1956, ապրիլի 27:

պայմաններում կարողացավ կազմավորել նոր զորամիավորումներ, որոնք անգնահատելի ծառայություն ունեցան Հայության գոյապայքարի մարտերում: Այս գործում նույնպես անժխտելի ու անգնահատելի է Դրոյի ներդրած զգալի վաստակը:

Հայության գոյապայքարում զորամասերի կազմավորման կենսականորեն չափազանց կարեւոր գործի իրականացումը դյուրին խնդիր չէր: Զորամասերի կազմավորման համար անհրաժեշտ էին ոչ միայն մարտական ուժեր, զենք, հանդերձանք: Զինվորներին հարկավոր էր կերակրել, իսկ այդ օրերին, երբ երկրում տիրում էր սովն ու համաճարակը, եւ յուրաքանչյուր օր սովամահության զոհն էին դառնում հազարավոր մարդիկ, անասելի ծանր էր լուծել զինվորներին կերակրելու խնդիրը: Միշտ չէ, որ հայ գյուղացին սիրահոժար է համաձայնել հաց տրամադրել զինվորներին:Եղել են դեպքեր, երբ Երեւանի Հատուկ Կոմիտեն ու Արամ Մանուկյանը, գյուղերից հաց ձեռք բերելու համար, հարկադրված դիմել են բռնի միջոցների: Համանման իրավիճակում իր վճռորոշ խոսքն է ասել Հատուկ Կոմիտեի եւ անձամբ Արամ Մանուկյանի հրահանգով գործող հատուկ նշանակության մարտախումբը (Ազգային Խորհրդի գվարդիան), որի հրամանատարն էր Նիկոլ Դումանի դպրոցի սան, Երեւանի նահանգում պանիսլամիզմի հիմնադիր, Նախիջեւանի հայության կոտորածների գլխավոր կազմակերպիչ, փաստաբան Կինգիրլինսկու ահաբեկիչ, Ապարանի շրջանի Քուչակ գյուղի արժանավոր զավակ՝ Մաթեւոս Հովհաննիսյանը[1]:

Չնայած թիկունքում ձեռք բերած հաջողություններին՝ ռազմաճակատում ծավալվող գործողությունները գնալով ավելի ու ավելի սպառնալի կերպարանք էին ստանում, իսկ քաղաքական ու ռազմական իրավիճակը զարգանում է ի վնաս հայության:

Քուրքական զորքերը գրավելով Սարիղամիշը, ապա նաեւ Բաթումի նահանգի զգալի մասը՝ փաստորեն արդեն ներխուժել էին Անդրկովկաս տարածքը եւ հիմք ունենալով մարտի 3-ին կնքած Բրեստ- Լիտովսկի դաշնագիրը՝ Կովկասյան կառավարությունից պահանջում են հանձնել Բաթում քաղաքը: Բաթումը վերցնելու թուրքական կողմի ներկայացրած վերջնագիրը նոր իրավիճակ է ստեղծում: Բաթումիի նավահանգիստը ռազմավարական նշանակություն ուներ Վրաստանի համար, քանզի քաղաքը ծովային այն կարեւորագույն ուղին ու վայրն էր, որի միջոցով Վրաստանը ելք ուներ եւ հաղորդակցվում էր արտաքին աշխարհի հետ:

[1] Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1950, թիւ 11, էջ 50:

Վրացիները, որոնք մինչ այդ որեւէ լուրջ քայլեր չէին ձեռնարկել խոչընդոտելու դեպի Կովկաս թուրքական զորքերի առաջխաղացմանը, այս անգամ վճռականորեն տրամադրվուն են դիմադրել եւ հակառակորդին չհանձնել ոչ միայն Բաթումը, այլեւ վրացական որեւէ, անգամ մի փոքրագույն տարածք:

Իսկ այդ ընթացքում Կովկասյան Կոմիսարիատի ու թուրքական պատվիրակությունների միջեւ Տրապիզոնում ընթացող բանակցությունները դեռեւս շարունակվում էին

Ի պատասխան Բաթումը իրեն հանձնելու թուրքերի ներկայացրած պահանջին՝ Կովկասյան Սեյմը մարտի 31-ին հրավիրում է նիստ, որտեղ վրաց սոցիալ-դեմոկրատական կուսակցության առաջնորդ Ն. Ժորդանիայի առաջարկությամբ ընդունվում է հետեւյալ բանաձեւը. «Նկատի ունենալով, որ Թուրքիո եւ Անդրկովկասի միջեւ կարելի չեղավ խաղաղ համաձայնություն մը գալ սահմաններու վերաբերմամբ, կառաջարկուի Անդրկովկասեան պատուիրակության անմիջապես վերադառնալ Թիֆլիս»[1]:

Ա. Խատիսյանի բնութագրմամբ՝ «Ժորտանիայի բացատրությամբ այդ բանաձեւի ընդունումը կը նշանակէր պատերազմի յայտարարութիւն Թուրքիո դէմ: Պատերազմը վարելու համար ընտրուեցաւ մարմին մը արտակարգ լիազօրութիւններով: Այդ մարմնի մէջ կը մտնէին վարչապետ եւ միաժամանակ զինուորական նախարար Գեգեչկորի, ներքին գործերու նախարար Ռամիշվիլի եւ ելեւմտական նախարար Կարճիկյան»[2]:

Ճիշտ է, գլխավորապես վրաց պատվիրակների պնդմամբ՝ Սեյմը ընդունում է թուրքիային պատերազմ հայտարարելու որոշում, սակայն հետագա դեպքերը եկան ապացուցելու, որ վրացիներն այնքան էլ լուրջ ու վճռականորեն տրամադրված չէն դիմակայելու թուրքական զորքերի հարձակմանը:

1918 թ.ապրիլի 1-ին թուրքական զորքերը գրեթե առանց դիմադրության գրավում են Բաթումը, որի բերդում (Միխայլովյան ամրոց) 300 սպաների գլխավորությամբ կենտրոնացված էին ավելի քան 3000 զինվորներ:

Ավելին, Բաթումը գրավելուն զուգընթաց, թուրքական զորքերը խորանում են Վրաստանի խորքերն ու դարձյալ գրեթ առանց դիմադրության գրավում մի շարք բնակավայրեր, այդ թվում նաեւ Ախալցխան, Ախալքալակն ու մի շարք այլ շրջաններ:

Դրան հակառակ, հայ-թուրքական ճակատում հայկական զորքերը համառ դիմադրություն են ցույց տալիս դեպի Կարս առաջացող թուրքական զորքերին:

[1] Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 50:
[2] Նույն տեղում:

Բաթումը հանձնելուց հետո, վրաց իշխող կուսակցության մեջ ծագում են լուրջ տարաձայնություններ:

«Անոնք կը զգային,-գրում է Ալ.Խատիսյանը,-որ իրենց ժողովուրդը չուզեր կռուիլ Բաթումի անկումէն յետոյ: միւս կողմէ, գտած էին միջոցը համաձայնութիւնն էր երմանիոյ հետ:

Այս պարագան բախտորոշ ազդեցութիւն ունեցաւ դէպքերու ընթացքին վրա»[1]:

Թուրքական կողմը քաջատեղյակ լինելով Կովկասյան Կոմիսարիատում եւ Սեյմում, ինչպես նաեւ պարերազմի նկատմամբ վրաց իշխող կուսակցության մեջ տիրող տարաձայնություններին, Անդրկովկասյան կառավարությանն է ներկայացնում երկրամասը անկախ հռչակելու վեջնագիրը:Իսկ Անդրկովկասը պաշտոնապես դեռեւս գտնվում էր Ռուսաստանի կազմում եւ այդ պատճառով ռազմաճակատում գտնվող հայկական, վրացական, ինչպես նաեւ կովկասյան թուրք-թաթարներին պատկանող զորքերը ենթարկվում էին Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար գեներալ Լեբեդինսկուն:

Թուրքական կողմի պահանջն անշուշտ խորապես կշռադատված էր: Եթե Անդրկովկասյան Սեյմը եւ կոմիսարիատը հռչակեին Անդրկովկասի անկախությունը, ապա ռազմաճակատում մարտնչող հայ, վրաց ու կովկասյան թուրքերի զորքերն այսուհետ ենթարկվելու էին ոչ թե գեներալ Լեբեդինսկուն, այլ Կովկասյան կառավարությանն ու նրա ռազմական նախարարությանը:

1918 թ. ապրիլի 9-ին Սեյմը կայացնում է Ռուսաստանի կազմից դուրս գալու, Անդրկովկասյան հանրապետության անկախությունը հռչակելու որոշումը: Վարչապետ Գեգեչկորիի գլխավորած կառավարությանը փոխարինած Չխենկելիի կառավարությունը որոշում է Թուրքիայի հետ վերսկսել ընդհատված բանակցությունները:

Սեյմը հիմք ունենալով Չխենկելիի զեկուցումը՝ ընդունում է հետեւյալ բանաձեւը. «...Սէյմը կառաջարկէ կառավարութեան շարունակել հաշտության բանակցությունները եւ միջոցներ ձեռք առնել հաշտությունը շուտափոյթ կերպով կնքելու համար. միժամանակ Սէյմը կառաջարկէ կառավարութեան եռանդուն միջոցներ ձեռք առնել երկրի պաշտպանությունը կազմակերպելու համար»[2]:

Սեյմի Հ. Դ. Դաշնակցության անդամներն լուռ համաձայնությամբ ընդունում են այդ որոշումը, քանի որ ըստ Ալ. Խատիսյանի

[1] Նույն տեղում, էջ 53:
[2] Նույն տեղում, էջ 55:

պնդման՝ «...բոլորին ցանկությունն էր պահպանել համերաշխությունը Անդրկովկասեան դրացիներու եւ, մասնաւորապէս, Վրացիներու հետ՝ մինակ չմնալու համար Թուրքերու հետ: Պատերազմի ամբողջ պատասխանատվությունը Թուրքերուն հետ Հ. Ց. Դաշնակցությունը իր վրայ չէր կրնար վերցնել, իսկ այդպէս պիտի ըլլար, եթէ ան գործէր հակառակ վրացիներուն»[1]:

Ճիշտ է, դժվար է այս հարցում մեղադրել Հ. Ց. Դաշնակցությանը համանման որոշմանը համաձայնելու համար, իրոք ցեղասպանություն ապրած հայ ժողովուրդը գտնվում էր անպատմելի ծանրագույն, անելանելի իրավիճակում, սակայն ռազմաճակատում ծավալվող հետագա դեպքերն եկան ապացուցելու, որ այդ բախտորոշ ժամանակահատվածում վրացիների համագործակցությունն ակնկալող հայությունը, այնուամենայնիվ, մեն-մենակ մնաց թուրքերի դեմ ու ապավինելով իր սեփական ուժերին՝ դատապարտված էր միայնակ վճռելու իր ճակատագիրը:

Հաշված օրը անց «...եռանդուն միջոցներ ձեռք առնել երկրի պաշտպանությունը կազմակերպելու համար» որոշում կայացրած Կովկասյան կառավարության վրացի ղեկավարները կայացնում են հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն որոշում:

Գերմանական ու թուրքական հրամանատարության հետ ձեռք բերած գաղտնի համաձայնությա՝ն Կովկասյան կառավարության նախագահ Չխենկելին եւ ռազմական փոխնախարար գեներալ Օդոշելիձեն առանց Հայոց Ազգային Խորհրդի եւ կառավարության հայ նախարարների գիտության, ապրիլի 12-ին հրամայում են հայկական զորքերի հրամանատար գեներալ Նազարբեկյանին (նա անմիջականորեն ենթարկվում էր Կովկասյան կառավարությանը եւ ռազմական նախարարությանը - Հ.Գ.) թուրքերին հանձնել Կարսի հզոր բերդաքաղաքը:

Համաձայն Կարսի բերդապետ գեներալ Դեեւի, որը նոր էր ստանձնել այդ պաշտոնը եւ դեռուս այնքան էլ տեղեկացված չէր ռազմաճակատում տիրող իրավիճակին, ներկայացրած զեկուցագրի՝ Կարսի ամրոցում ապրիլի 22-ին կենտրոնացված էին հետեւյալ զորամասերը. 1) Երեք գումարտակներից բաղկացած 1600 թվակազմ ունեցող Կարսի բերդային հետեւակ գունդը, 2) 1200 զինվորներ ունեցող 3-րդ հրաձգային գունդը, 3) 221 հետեւակ եւ 100 հեծյալ այլ զորամասերից եւ անձնակազմից զուրկ ռուսական հրետանային գնդի 3-րդ մարտկոցը, որոնք առանձնացված էին որպես պահեստային ուժեր:

[1] Նույն տեղում, էջ 54-55:

Գեներալ Դեելի հաշվարկմամբ՝ Կարսի ամրոցում կային ընդամենը 3000 զինվորներ:

Առավել հզոր ուժ էր ներկայացնում Կարսի բերդային հրետանայինստորաբաժանումը, որի կազմում գտնվեղ էրզրումի ու Կարսի հրետանայինգումարտակներում ծառայում էին 100 սպաներ ու 1700 զինվորներ: Բացի դրանցից բերդի համապատասխան կետերում տեղադրված էին 70 գնդացիր:

Կարսի բերդի ներսում առանց օգտագործման եղել են 700 հրանոթ, որոնք գեներալ Դեելի վկայությամբ՝ մեծ մասը հին էին, բայց օգտագործման համար պիտանի:

Ամրոցում էին 4-5 հեծյալ հարյուրակներ, որոնք պարտականությունը ոստիկանական ծառայություններ կատարելն էր:

Կարսի ամրոցը ունեցել է իր ավիացիան՝ բաղկացած անօգտագործելի 3 ինքնաթիռներից[1]:

Բերդապետ գեներալ Դեելի հավաստմամբ՝ Կարսի բերդի ճարտարագիտական(ինժեներական) պատրաստվածությունը միանգամայն բավարար էր, իսկ սննդամթերքի եւ հանդերձանքի պաշարները կարող էին լիարժեք բավարել եթե բերդի պաշարումը շարունակվեր նույնիսկ մի քանի ամիս: Բերդը ապահովված էր նաեւ բժշկա-սանիտարական անհրաժեշտ միջոցներով[2]:

Ըստ գեներալ Դեելի զեկուցագրում տեղ գտած տվյալների՝ Կարսի բերդաքաղաքը պաշարող թուրքական 5-րդ, 9-րդ եւ 36-րդ դիվիզիաները բաղկացած էին երեք գնդերից, որոնցից յուրաքանչյուրի կազմում կային 1200 զինվոր, այսինքն բոլոր երեք դիվիզիաներում մարտնչող զինվորների ընդհանուր քանակը կազմում է 10.800:

Դիվիզիաներից յուրաքանչյուրուրը ունեցել է 12 հրանոթ եւ 36 գնդացիր: Բացի այդ ամենից, թուրքական դիվիզիաների շարքերում մշտապես եղել են 3000-4000 քուրդ հեծյալ զինյալներ:

Եթե անաչառ ու անկողմնակալ համեմատենք Կարսի ամրոցի եւ հակառակորդի մարտական ուժերին վերաբերող գեներալ Դեելի զեկուցագրում տեղ գտած տվյալների հարաբերակցությունը, ապա աներկբա պիտի պնդել, որ խոսք անգամ չպետք է լիներ ըստ ամենայնի ամրացված հզոր բերդաքաղաքի հանձնման մասին, բայց կատարվում է ամենասարսափելին. «... Կարսի բերդը, - նշում է հայկական բանակային կորպուսի շտաբի պետ գեներալ Վիշինսկին,- անտարակույս, յետ կը մղէր թիւրքերին. այսօր էլ դեռ բերդը շատ

[1] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 121, ց. 1, գ. 42, թ. 29:
[2] Տե՛ս նույն տեղում:

լաւ պաշտպանւում էր. մինչեւ որ ստացուեց վարչապետ Զիսենկելիի եւ զօր. Օդոշելիձէի կարգադրութիւնը, որ բանագնացներ ուղարկուեն՝ ճչտելու համար բերդի դատարկման պայմանները: Այս բանը բերդապետին յայտնելուց յետոյ՝ կռիւը դադարեց: Զօրքերը՝ ենթարկուելով հրամանի՝ հեռացան Աղաջ-Աղբաբա-Հարամ Վարդան առաջավոր դիրքերից...»[1]:

Գեներալ Թ. Նազարբեկյանը եւ Կարսի բերդաքաղաքի զինվորական պարետ, գեներալ Դեելը կադրային զինվորականներ էին եւ համաձայն բանակում ընդունված անխախտ օրենքի, նրանք որպես կադրային զինվորականներ, պիտի ենթարկվեին վերին հրամանատարությանն ու կատարեին իրենց տրված հրամանները:

Գնդապետ Շնեուրի համոզմամբ՝ Կարսի ուղղությամբ հարձակվել են «...թուրքական 12-րդ եւ 36-րդ զորաբաժինները(գեներալ Դեելի զեկուցագրում՝ 5-րդ, 9-րդ եւ 36-րդ դիվիզիաներ-Հ. Գ.): Այն, ինչ-որ մեզ՝ ռուսական հին սպաներիս համար պարզ էր՝ էրզրումի նահանջով պարզ երեւաց նաեւ միւս հրամանատարական կազմին, որ պէտք էր նահանջել մինչեւ Կարս, ուր կային ուժեղ բերդային դիրքեր, ուժեղ հրետանի եւ ուր հասնում էին արդեն թիկունքում նոր կազմակերպուած թարմ զորամասեր: Այնտեղ (Կարսի բերդաքաղաքում) կարելի էր դիմանալ բաւական երկար ժամանակ, մինչեւ որ հայ բնակչութիւնը կը պարպէր ու կը հեռանար դէպի ռուսական Հայաստան»[2]:

Գնդապետ Շնեուրի գնահատականում, պիտի ասել, որ կա որոշակի վիճահարույց կետեր. 1. Ու՞մ նկատի ունի գնդապետ Շնեուրը՝ նշելով՝ « էրզրումի նահանջով պարզ երեւաց նաեւ միւս հրամանատարական կազմին, որ պէտք էր նահանջել մինչեւ Կարս:

2. Ավելի քան անհասկանալի է Հայկական բանակային կորպուսի հրամանատարության որդեգրած մարտավարությունը:Բերդաքաղաքում գնվող հայկական զորքերը իրենց թվակազմով գրեթե չէին զիջում այդ ուղղությամբ հարձակվող թուրքական 12-րդ ու 36-րդ դիվիզիաներին, իսկ զինվածությամբ, հատկապես հրետանիով, նույնիսկ գերազանցում էին: Հարց է ծագում. ինչու՞ հայկական զորքերի հրամանատարությունը չէր ծրագրում ոչ թե «դիմանալ բաւական երկար ժամանակ, մինչեւ որ հայ բնակչութիւնը կը պարպէր ու կը հեռանար դէպի ռուսական Հայաստան», այլ գործեր հար-

[1] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 110:
[2] «Սարդարաբատի հերոսամարտը», գրեց գլխաւոր սպայակոյտի գնդապետ Ալեքսանդր Շնեուր, 1967, Ֆրեզնու, էջ 16:

ձակողական մարտավարությամբ եւ ձեռնարկելով առավել վճռական հարձակողական գործողություններ՝ պարտության մատներ ու ջախջախեր հակառակորդին:

Պատմական այդ ժամանակահատվածում հայ-թուրքական ռազմաճակատում տեղի ունեցած ռազմական գործողությունների ու հրամանատարական կազմի մարտական որակների ու կիրառած մարտավարության մանրակրկիտ ուսումնասիրությունն աներկբա հավաստում է. եթե կադրային զինվորականների փոխարեն Կարսի բերդաքաղաքի պատասխանատուները լինեին հայ ազգային-ազատագրական պայքարի հնոցում ծնունդ առած եւ հայդուկային կռիվներում թրծված զինվորականները, ժողովրդական հերոսներ Անդրանիկը, Սեբաստացի Մուրադը, Սեպուհը, Սմբատը կամ Դրոն, ապա, կարելի է վստահաբար պնդել, որ նրանք առանց Հայոց Ազգային Խորհրդի համաձայնության եւ թույլտվության, որեւէ պարագայում չէին համաձայնի կատարել Կարսի հզոր բերդաքաղաքն առանց դիմադրության թշնամուն հանձնելու Կովկասյան կառավարության(Կոմիսարիատ) նախագահ Զխենկելիի եւ ռազմական նախարար գեներալ Օդոշելիձեի հայակործան հրամանը:

Ահավասիկ որպես ասածի օրինակ հիշենք 2-րդ կամավորական զորախմբի մղած Կավրե-Շամեի կռիվը, երբ Դրոն շրջանցելով վերին հրամանատարության կողմից իրեն տրված նահանջելու հրամանը՝ չնահանջեց ու կռիվ տվեց զորախմբին քանակապես քառապատիկ անգամ գերազանցող հակառակորդին:

Հայոց Ազգային Խորհրդի կողմից իրենց վստահված տեղամասերում նույն ոգով եւ մարտավարությամբ են առաջնորդվել նաեւ Սեբաստացի Մուրադը՝ Երզնկայում, իսկ Սեպուհը՝ Բաբերտում:

Թուրքական հրամանատարության նպատակը բոլորովին էլ միայն Կարսի բերդաքաղաքը չէր: Խախտելով Կովկասյան կառավարության հետ կնքված ապրիլյան զինադադարը՝ թուրքական զորքերը անսպասելիորեն վերսկսում են հարձակումը եւ գետանցելով Արփա գետը, մոտենում են Ալեքսանդրապոլին ու վերջնագիր ներկայացնում հայկական բանակի հրամանատարությանը:

Իսկ այդ օրերին Բաթումիում վերսկսվել էին բանակցությունները Թուրքական եւ Անդրկովկասյան կառավարության պատվիրակությունների միջեւ: Բանակցություններին Անդրկովկասյան կառավարության պատվիրակության կազմում հայկական կողմից մասնակցում էին ՀՅԴ անդամներ Ալ. Խատիսյանը, Հովհ. Քաջազնունին, Ս. Վրացյան, Կ. Ղազարյանը, եւ Վահան Մինախորյանը:

Հայության համար ճակատագրական ու բախտորոշ նշանակություն ունեցող օրերին կապը Բաթումիի եւ Թիֆլիսի ու Երեւանի Ազգային Խորհուրդների միջեւ շատ թույլ է գործել: Պատվիրակությունը տեղեկություններ չէր ստանում ռազմաճակատում ծավալվող դեպքերի մասին, իսկ Երեւանը անտեղյակ էր բանակցությունների ընթացքից:

Այսուհանդերձ, Թիֆլիսից Ս. Վրացյանին ու Կ. Ղազարյանին հաջողվում է մայիսի 15-ին կեսօրվա ժամը 2-ին ուղիղ հեռագրաթելով կապվել Երեւանի հետ ու Բաթումիում ընթացող բանակցությունների մասին որոշ մանրամասներ հաղորդել ապարատի մոտ գտնվող Արամին ու Դրոյին:

Ս. Վրացյանն ու Կ. Ղազարյանը հայտնում են, որ խաղաղարար պատգամավորության առաջին նիստը կայացել է մայիսի 11-ին, որին ներկա են եղել թուրքական, գերմանական եւ Դաղստանի պատգամավորությունը: Բանակցություններին մասնակցելու նպատակով Բաթումի պիտի ժամանեին նաեւ Ավստրիայի ու Բուլղարիայի պատգամավորությունները:

Թուրքական պատգամավորության կազմում նիստին մասնակցել է Թուրքիայի ծովային նախարար, երիտթուրքերի պարագլուխներից Ջեմալ փաշան, որը հայ պատգամավորների հետ ունեցած զրույցի ժամանակ հայտնել է, որ «...տաճկահայերը նորէն իրենց հայրենիք վերադառնալ չեն կարող»[1]:

Ս. Վրացյանի ու Կ. Ղազարյանի տեղեկացմամբ՝ բանակցություններում իրենք պահանջել են հիմք ունենալ միայն Բրեստի պայմանագիրը, սակայն թուրքական կողմը խիստ կեպով բողոքել է այդ պահանջի դեմ, ու ներկայացրել են իրենց նոր պահանջները, որոնք՝ «...հասնում են համարեա ձեր սահմաններին-(այսինքն Երեւանի սահմաններին-Հ. Գ.):

Անդրադառնալով հայ-թուրքական ռազմաճակատում տեղի ունեցող իրադարձություններին, նրանք Արամին ու Դրոյին ներկայացնում են Ալեքսանդրապոլից գեներալ Արեշևից ստացած հեռագրի բովանդակությունը, համաձայն որի «...տաճիկները նախայարձակի դիմեցին, և ռմբակոծում են Ալէքսանդրապոլը և որ մեր զօրամասերը դիմադրութիւն են ցոյց տալիս: Հենց նոր Ազգային Խորհրդից խնդրում են յայտնել ձեզ, որ ընդհանուր հրամանատարը հրամայել է դիմադրել»[2]:

---

[1] Ձանգ, 1918, մայիսի 17(4), թիւ 34:
[2] Նույն տեղում:

Արամին ու Դրոյին հայտնելով պատերազմը շարունակելու վերաբերյալ Հայոց Ազգային Խորհրդի տեսակետն ու Հայկական բանակային կորպուսի հրամանատար գեներալ Նազարբեկյանի հրամանը, նրանք միաժամանակ տեղեկացնում են Թուրքական կողմի ներկայացրած պահանջները, որոնց համաձայն «Տաճկական հրամանատարը ուլտիմատումի ձևով պահանջել է տաճկական շտաբի տրամադրության տակ դնել Ալէքսանդրապոլ-Զուլֆա երկաթուղագիծը, որպեսզի իրանց զորամասերը տեղափոխվեն Զուլֆա, անգլիացիների դէմ...Պահանջել են նաև յետ քաշել մեր զօրքերը երկաթուղու գծից 20 վերստ հեռու դէպի մեր սահմանը: Խաղաղ բնակչութեանը խնդրում են մնալ իր տեղում: Պատերազմից յետոյ, սահմանը կը լինի Արփաչայը»[1]:

Թուրք պատգամավորության ներկայացրած պայմանների մեջ առավելապես ուշագրավ է «Պատերազմից յետոյ, սահմանը կը լինի Արփաչայը» խոստովանությունը: Ստացվում է, որ չնայած այն իրողությանը, որ պատերազմը շարունակվում էր, ու դեռևս տեղի չէին տեղի ունեցել Մայիսյան հերոսամարտերը, սակայն Թուրքական կողմն արդեն գծագրել էր հայ-թուրքական սահմանը, որը լինելու էր Արփաչայը:

Բանակցություններում Թուրքերին, ինչպես նաև գերմանացիներին հետաքրքրել են հայ-թուրքական հարաբերությունները Երևանի նահանգում: Չնայած այն իրողությանը, որ Երևանի նահանգում Թուրք հրոսակախմբերը շարունակաբար զենքի էին դիմում հենց Թուրքիայի թելադրանքով ու աջակցությամբ, սակայն Թուրք պատգամավորները պահանջել են վերջ տալ մահմեդական ազգաբնակչության վրա գործադրած ճնշումներին ու բռնություններին: Թուրք պատգամավորները հայտարարել են, որ եթե հայկակա կողմը չդադարեցնի մահմեդական բնակչության նկատմամբ գործադրվող բռնությունները, ապա հակառակ պարագայում իրենք ստիպված կլինեն Թուրքական զորքերով պաշտպանել իրենց հավատակիցներին:Այսինքն անթաքույց սպառնում են ներխուժել Արարատյան դաշտ ու Երևան:

Արամին ու Դրոյին հետաքրքրել է հայության նկատմամբ գերմանական կողմի պաշտպանած դիրքորոշումը:

Ըստ Ս. Վրացյանի ու Կ. Ղազարյանի. «Գերմանացիների մասին մենք էլ նոյն կարծիքին ենք և այդ ուղղութեամբ աշխատում ենք Բաթումում, մենք նրանց ասել ենք, որ կընդունենք ամեն մի պայման, միայն թէ ապահովեն մեր ֆիզիկական գոյութիւնը: Նոքա ասացին, որ Գերմանիան երբէք թոյլ չի տայ, որ տաճիկները հայերի վերաբերմամբ իրագործեն իրենց ծրագիրը: Միայն թէ հայերը անկեղծօրեն ընդունեն գերմանական օրիենտացիան: Նրանք պաշտպանում են Բրեստի պայմանագիրը»[1]:

Հայ-թուրքական ռազմաճակատում ծավալվող դեպքերը հստակորեն ցույց տվեցին, որ միանգամայն անհիմն էին ու անիրագործելի հայությանը սատարելու գերմանական կողմի հնչեցրած խոստումները: Այդ պայքարում հայությունը բացարձակապես մենակ էր, եւ նրա ֆիզիկական փրկության գործում բացառվում էր երրորդ ուժին ապավինելը:

Բաթումիում ընթանում էին բանակցությունները, իսկ ռազմաճակատում հենց այդ օրը կատարվում են այնպիսի իրադարձություններ, որոնք անակնկալ էին ոչ միայն բանակցությունների մասնակից հայ պատգամավորների ու Երեւանի Ազգային Խորհրդի անդամների, այլեւ Հայկական բանակային կորպուսի հրամանատարության համար:

Դատելով տվյալ ժամանակահատվածում ռազմաճակատում տեղի ունեցած դեպքերի ընթացքը բնութագրող վավերագրերի, հուշագրությունների բովանդակությունից եւ հայկական զորքերի (Հայկական բանակային կորպուսի) ընդհանուր զորահրամանատար, գեներալ Նազարբեկյանի խոստովանությունից, Հայկական բանակային կորպուսի եւ մասնավորապես նույն կորպուսի առաջին դիվիզիայի հրամանատարության համար միանգամայն անսպասելի էին Ալեքսանդրապոլի ուղղությամբ թուրքական զորքերի արագ հարձակումներն ու հայկական բանակի հրամանատարությանը ներկացրած վերջնագիրը:

Հայկական զորքերը, չհասցնելով ինչպես հարկն է նախապատրաստվել ու բավարար մարտական պատրաստվածության հասցնել մարտաշարքերը եւ տեղի տալով անկազմակերպվածությանն ու խուճապին, արագորեն լքում են մարտադաշտն ու գրեթե առանց դիմադրության քաղաք-ամրոցը հանձնում հակառակորդին[2]:

Հարկ է նշել, որ ռազմաճակատում ծավալվող դեպքերի զարգացման, զինվորների մարտական եւ բարոյահոգեբանական կեցվածքի ու տրամադրության վրա բացասական ազդեցություն է գործել Կարսի հզոր բերդաքաղաքի անսպասելի եւ առանց դիմադրության թշնամուն հանձնելու իրողությունը: Զորամասերում մեծ չափերի

[1] Նույն տեղում:

[1] Նույն տեղում:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 92, էջ 6-12:

էր հասել զանգվածային դասալքությունը: Կովկասյան կառավարությունը հայության նկատմամբ դրսևորած այդ դավաճանական եւ հանցավոր քայլով կոտրում է հայկական բանակի դիմադրողական ոգին եւ պատճառ դառնում ահավոր ողբերգությունների:

«Այսպիսով, - իր հուշերում գրում է գեներալ Նազարբեկյանը, - տեղի ունեցան մեկը մյուսին հաջորդող կործանարար մի շարք իրադարձություններ. Բաթումիի հանձնումը, այնուհետեւ, համաձայն կնքված զինադադարի, առանց դիմադրության Կարսի ամրոցի հանձնումը եւ վերջում, զինադադարի ընթացքում, Ալեքսանդրապոլի մոտ, թուրքերի գետանցումը Արփաչայ: Արդյունքում, դեռեւս բավականաչափ չհամադրված ու չկազմակերպված հայկական զորքերը, թուրքերի գործադրած սարսափելի վայրագությունների, սարսափելի բնակլիմայական ծանր պայմաններում անընդմեջ չդադարող մարտական գործողությունների ազդեցության հետեւանքով վերջնականապես բարոյալքվելով եւ կորցնելով մարտունակությունը՝ լքում են մարտաշարքերն ու միանում փախստականներին, որոնք այդ օրերին նման էին փախչող եւ փրկություն որոնող մարդկանց տարերային ծովի»[1]:

Ալեքսանդրապոլի անկումից մի քանի օր անց թուրքերը, շարունակելով հարձակումը, մարտական գործողություններ են ձեռնարկում ռազմաճակատի ողջ երկայնքով: Հայկական զորքերը, դիմադրելով թշնամու գերակշռող ուժերին, աստիճանաբար նահանջում են, ընդ որում մի մասը՝ առաջին դիվիզիան եւ երկրորդ դիվիզիայի 7-րդ եւ 8-րդ գնդերը, դեպի Փամբակի լեռնանցք՝ փակելով Համամլու-Ղարաքիլիսա տանող ճանապարհը, իսկ մյուս մասը՝ 2-րդ հեծյալ գունդը, 1-ին եւ 2-րդ բրիգադները՝ դեպի Սարդարապատ՝ համալրելու այդ ուղղությամբ մարտնչող գեներալ Սիլիկյանի գլխավորած Երեւանյան զորախմբի մարտաշարքերը:

Թուրք հրամանատարությունն իր զորքերը բաժանելով չորս զորախմբերի՝ հարձակումը զարգացնում է հետեւյալ ուղղություններով.

1. Առաջին զորախումբը (Մյուրսել բեյի գլխավորած 5-րդ դիվիզիան), նպատակ ունենալով գրավելու Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսը, հարձակվելու էր Վորոնցովկայի (Կալինինո) ուղղությամբ դեպի Բոլնիս-Խաչեն, Բորչալու, ուր պետք է միանար Ղազախից դեպի Թիֆլիս շարժվող թուրքական զորքերին:

2. Երկրորդ զորախումբը (Ջամիլ-Ջավադ բեյի գլխավորած 11-րդ դիվիզիան) պետք է հարձակում գործեր Ջաջուռ-Համամլու-Ղարաքիլիսա-Ղազախ-Ելիզավետպոլ ուղղությամբ եւ միանալով այդ շրջանների թուրք զինյալ խմբերին՝ շարժվեր դեպի Բաքու:

3. Երրորդ զորախումբը (Էսադ փաշայի 9-րդ դիվիզիան) հարձակվելու էր Ալեքսանդրապոլ-Համամլու-Բաշ-Ապարան ուղղությամբ: Այդ զորախմբի նպատակն էր արագորեն անցնել Ապարան-Աշտարակ կամ Ապարան-Եղվարդ գիծը եւ մոտենալով Երեւանին՝ շրջափակման մեջ վերցնել Երեւանյան զորախումբն ու անհրաժեշտության դեպքում փակեր Հրազդան-Սեւան ձգվող նահանջի ուղիները, ապա հարձակումն արագորեն զարգացներ դեպի Բաքու:

4. Չորրորդ զորախումբը (36-րդ դիվիզիա) Ալեքսանդրապոլից հարձակվելու էր դեպի Սարդարապատ[1]:

Իր զորքերը բաժանելով մի քանի խմբավորումների՝ թուրք հրամանատարությունը ծրագրում է տարբեր ուղղություններից տեղացող հարվածներով գրավել Երեւանն ու, արագորեն հայերի հետ մեկընդմիշտ հաշիվները մաքրելուց հետո, ձեռնամուխ լինել իրենց գլխավոր նպատակի կենսագործմանը:

Ինչպես իրավացիորեն մատնանշում է գեներալ Ղորղանյանը, «...1918 թ. ամռանը, թուրքական բանակի գործողությունների նպատակը, թուրքական հրամանատարության պլանի եւ գերմանական գլխավոր շտաբի ցուցումների համաձայն, Կովկասյան ճակատում անգլիական բանակի աջ թեւի ոչնչացումն էր Մուսուլում եւ Բաքվի շրջանի գրավումը: Քանի որ Հայաստանը ներքաշված էր պարսկական Ադրբեջան եւ Բաքու տանող ճանապարհներին տեղի ունեցող մարտական գործողություններում, նրա գրավումը եւ նրա բանակային կորպուսի ոչնչացումը թուրքերի համար անհրաժեշտություն էր...»[2]:

Սակայն ինչպես ապացուցեց ժամանակը, թուրքերն իրենց հաշիվների մեջ այս անգամ արդեն չարաչար սխալվում էին:

Ի՞նչ էին իրենցից ներկայացնում եւ ինչպիսի՞ թվակազմ ունեին թուրքական դիվիզիաները: Համաձայն Կարսի բերդի եւ կայազորի պետ գեներալ Դեւի՝ Կովկասյան ռազմաճակատի հրամանատար գեներալ Լեբեդինսկուն հասցեագրված ապրիլի 22-ի զեկուցագրի, թուրքական դիվիզիաները բաղկացած էին երեք գնդերից, որոնցից յուրաքանչյուրի կազմում հաշվվում էր մոտավորապես 1200 սվին (հետեւակային զինվոր): Բացի հետեւակայիններից, յուրաքանչյուր

[1] Նույն տեղում:

[1] Տե՛ս Հարությունյան Ա., Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. եւ ինքնապաշտպանական կռիվները, Երեւան, 1984, էջ 174:
[2] Սարդարապատ, Բաշ-Ապարան, Ղարաքիլիսա, Երեւան, 1998, էջ114:

գունդ ունեցել է 12 գնդացիր եւ չորս հրանոթ: Բացի թվարկածներից, թուրքական զորքերի շարքերում մարտնչել են նաեւ հեծյալ գնդեր ու 3000-4000 զինյալ քրդեր[1]:

Մեկ այլ սկզբնաղբյուրի հավաստմամբ՝ հայ-թուրքական ռազմաճակատում կենտրոնացած թուրքական դիվիզիաները, իրենց կազմում ունեին 1600-1800 թվակազմ ունեցող չորս հետեւակային գնդեր, հեծյալ վաշտ, հրետանային մարկոց եւ թիկունքային ծառայություն(գումակ) ու այդ ամենին գումարած քրդական հեծյալ հրոսակախմբեր[2]:

Ինչպիսի՞ մարտական ուժերով կարող էր հայկական զորահրամանատարությունը, մասնավորապես գեներալ Սիլիկյանի Երեւանյան զորախումբը, դիմակայել քանակական առումով զգալի գերակշռություն ունեցող թուրքական զորամասերին:

Համաձայն գեներալ Սիլիկյանի վկայության՝ իր հրամանատարությամբ գործող Երեւանյան զորախումբը բաղկացած է եղել հետեւյալ զորամասերից.

1. Պարտիզանական գունդը՝ հրամ-տար գնդապետ Պերեկրյոստով.
2. Պարտիզանական հեծյալ գունդը՝ հրամանատար փոխգնդապետ Կորոլկով.
3. Վանի առաջին գունդը՝ հրամանատար գնդապետ Ցուզբաշեւ.
4. Վանի երկրորդ գունդը՝ հրամանատար գնդապետ Զախմախչեւ.
5. Երկրորդ հեծյալ գունդը (Քանաքեռ)՝ հրամանատար գնդապետ Զալինյան.
6. Վեցերորդ գունդը (Ղամարլու)՝ հրամանատար գնդապետ Դոլուխանով.
7. Չորրորդ գունդը (Վաղարշապատ)՝ հրամանատար գնդապետ Հովսեփյան.
8. Հրետանային բրիգադ.
9. Կամավորական խմբեր:

Բացի դրանցից, Վանից եւ Խնուսից նահանջող որոշ ստորաբաժանումներ գալիս էին Երեւանի կողմերը[3]:

Գեներալ Սիլիկյանը, իր նամակներում թվարկելով զորամասերի տեսակները, համարներն ու հրամանատարներին, չի անդրադառնում նրանց թվակազմին: Այս հարցին առնչվող հրապարակումներից պարզվում է, որ Երեւանյան զորախումբն ունեցել է հետեւյալ

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 42, թ. 29:
[2] Տե՛ս ՀՀ ԲԿԱ, թիւ 508, թծ. 12, գ. 4:
[3] Հարությունյան Ա., Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. եւ ինքնապաշտպանական կռիվները, էջ 182-183: ՀԱԱ, ֆ. 45, «Սիլիկովի նամակները Նազարբեկովին»:

թվակազմը. «... մօտաւոր հաշուով, զօր. Սիլիկեանի զօրքի քանակը, այդ օրերին, հասնում էր 10000 հոգու՝ բաղկացած հետեւյալ մասերից, 4-րդ գունդը՝ 1500 սուին, 5-րդ գունդը՝ 800 սուին, Պարտիզանական առաջին գունդը՝ 1200, Երզնկայի գունդը՝ 700, Մակուի գունդը՝ 300, սպայակոյտի պարետի գումարտակը՝ 200, Վանի առաջին եւ երկրորդ գնդերը՝ 2500 սուին, երկրորդ ձիաւոր գունդը՝ 700, Զէյթունի ձիաւոր գունդը՝ 500, Սմբատի, Դալի Ղազարի, Մուրատի խմբերը՝ 500 ձիաւոր, եւ չորս մարտկոց 16 թնդանօթներով»[1]:

Երեւանյան զորախմբի թվարկած վերոհիշյալ զորամասերին պետք է գումարել նաեւ Ղամարլուում (Արտաշատ) տեղաբաշխված գնդապետ Դոլուխանյանի 6-րդ գունդը՝ 1800 սվին, գնդապետ Սակինի գումարտակը՝ 400 սվին, որոնք մայիսի 23-ին եւ 25-ին տեղափոխվեցին Բաշ-Ապարանի ճակատ եւ հրետանային եւս երկու մարտկոց:

Մայիսի 21-ին Սիլիկյանը իր գլխավորած զորախմբին տրված հրամանում նշում է. «Հակառակորդը ընդհատել է խաղաղ բանակցությունները եւ դիմել է հարձակման Հայկական կորպուսի ողջ ռազմաճակատով»[2]:

Բացի արդեն թվարկած ուղղություններից, թուրքական զորքերի հարձակում դեպի Արարատյան դաշտ, ապա նաեւ Երեւան, կատարվում էր նաեւ Սուրմալու գավառի ուղղությամբ: Ռազմաճակատի այդ ուղղությունը դեպի մայրաքաղաքը տանող ամենակարճ ճանապարհն էր: Թուրք հրամանատարությունը, հաշվի առնելով այդ կարեւորագույն հանգամանքը, Սուրմալուի ճակատում է կենտրոնացնում 12-րդ դիվիզիան եւ փորձում քրդական զինյալների աջակցությամբ հաղթահարել այդ շրջանում դիրքավորված հայկական զորքերի դիմադրությունը եւ Մարգարայի ու Կարակալայի կամուրջներով գետանցել Արաքսն ու ներխուժել Արարատյան դաշտ: Սուրմալուի ռազմաճակատում մարտնչող հայկական զորամասերը գնդապետ Դանիել Բեկ Փիրումյանի (Երեւանյան զորախմբի հրամանատար, գեներալ Սիլիկյանի տեղակալը - Հ.Գ.) գլխավորությամբ համառ պաշտպանությամբ կարողանում են կանգնեցնել հակառակորդին, բայց Կարսի եւ նրան հաջորդած Ալեքսանդրապոլի բերդաքաղաքների անսպասելի հանձնումը եւ հայկական զորքերի անկազմակերպ նահանջն ու բանակի շարքերում սողոսկած դասալքությունն իրենց բացասական ազդեցությունն են գործում նաեւ այս ուղղու-

[1] «Հայրենիք» ամսագիր, 1925, մայիս, Մելիքեան, «Արեան ճանապարհով»:
[2] ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 43, թ. 6:

թյամբ մարտնչող զինվորների եւ հրամանատարության վրա: Եթե իրավիճակը ռամաճակատի մյուս հատվածների համանմանությամբ շիկանար եւ տագնապալի դառնար նաեւ այս շրջանում, ապա Արարատյան դաշտում տեղաբաշխված հայկական զորքերը կհայտնվեին շրջափակման մեջ::

Կարսի, ապա Ալեքսանդրապոլի անկումն ու թուրքական զորքերի արագ առաջխաղացումը, համաձայն Դրոյի վկայության, իրենց բացասական ազդեցությունն էին գործել նաեւ Դանիել բեկ Փիրումյանի մարտական տրամադրվածության վրա: Ռազմաճակատում տիրող քաոսային, տագնապալի իրավիճակը ինչ-որ չափով հուսալքության գիրկն էր ընկղմել մարտական հրամանատարին, որն ընդամենը մի քանի օր անց փայլուն քննություն է հանձնելու արդեն Սարդարապատի ճակատամարտում:

Սթափ ու կշռադատված գնահատելով Սուրմալուի ուղղության հույժ կարեւոր նշանակությունն ու այնտեղ ստեղծված ճգնաժամային կացությունը, Երեւանյան զորախմբի հրամանատար գեներալ Սիլիկյանն այդ ճակատում մարտնչող զորքերի հրամանատարությունը հանձնարարում է Դրոյին:

Ստանալով գեներալ Մ. Սիլիկյանի հանձնարարությունը՝ նա մեկնում է Սուրմալուի ռազմաճակատ եւ գնդապետ Դանիել բեկ Փիրումյանից ստանձնում այդ ուղղությամբ մարտնչող զորքերի հրամանատարությունը:

«Ասի,- պատմում է Դրոն,-Դանիելբեկ, դու գնա, քեզ արդեն նշանակել են Սարդարապատի ուղղություն, դու գնա Էջմիածինի ստանցիան, դիրքեր կազմի, ես բանակները հետ կքաշեմ...»[1]:

Ինչպես եւ նախորդ մարտերում, այս անգամ դարձյալ Դրոյի հետ էին Մարտիրոսի, Կուռո Թարխանյանի գլխավորած հեծելավաշտերը, որոնք մտնում էին փոխգնդապետ Կորոլկովի գլխավորած 1-ին հեծյալ գնդի կազմում ու նրա անմիջական համանատարությամբ գործող՝ բացառապես Իգդիրցի, ավելի քան 800 զինվորներից բաղկացած զորամասը:Իսկ այդ ժամանակ Սուրմալուի ճակատում հայկական զորամասերը հայտնվել էին չափազանց ծանր իրավիճակում: Թուրք հրամանատարությունը, զգալի ուժեր կենտրոնացնելով, հարձակում է ձեռնարկում նաեւ այս ուղղությամբ: Նպատակը միակն էր՝ արագորեն ընկճել Սուրմալուի ճակատի պաշտպանների դիմադրությունը, գետանցել Արաքսը եւ ներխուժել Արարատյան

[1] Դրոյի ձայնագրությունից:

դաշտ, շրջապատման մեջ վերցնել այնտեղ մարտնչող հայկական զորամասերն ու գրավել Երեւանը:

Սուրմալուի ճակատը պաշտպանող հայկական փոքրաքանակ ուժերը՝ գնդապետ Զարուխչյանի Վանա գունդը, գնդապետ Սակինի գումարտակը եւ Մակեդոնի հարյուրակը, սկզբում կարողացել են լուրջ դիմադրություն ցույց տալ, սակայն հետագայում, տեղի տալով թուրքական մեծաքանակ զորամասի ճնշմանը՝ հարկադրված նահանջել են: Օրգով գյուղում Վանա գունդը պաշարվում է թուրքերի կողմից եւ չնայած հրամանատարի՝ գնդապետ Զարուխչյանի գործադրած հերոսական ջանքերին, մեծ կորուստներ է տալիս ու փախուստի դիմում: Հայկական բանակի հրամանատարությունը Սուրմալուի ռազմաճակատում ստեղծված աղետալի կացությունը շտկելու համար անհապաղ այնտեղ է ուղարկում օգնական ուժեր՝ գնդապետ Դոլուխանյանի 6-րդ գնդի մեկ գումարտակ եւ փոխգնդապետ Կորոլկովի հեծյալ գունդը: Այդ ժամանակ այնտեղ է մեկնում նաեւ Դրոն:

Պատմում է 6-րդ գնդի 4-րդ վաշտի հրամանատար, պոդպորուչիկ Մամիկոն Իսահակի Տեր-Սարգսյանը. «1918 թվի ապրիլ ամսում լուր ստացվեց, որ տեղական թուրքերն ու քրդերը գիշերը հարձակվել են Օրգովում մեր զինանոցների վրա, կոտորել են 300-ից ավելի զինվոր ու սպա, որոնց թվում նաեւ գնդի հրամանատար Զարուխչյանին: Հրոսակային խմբերը օգտվելով ժամանակավոր հաջողություններից, հարձակվել էին Իգդիրի վրա, ուր շտապ մեկնել էր Դրոն, եւ կարգադրված 6-րդ գնդին, շտապ օգնության ուղարկել մեկ գումարտակ: Մեր գումարտակը ուժեղացված չորս ծանր գնդացիրներով գիշերը հասավ Իգդիր: Առավոտյան լույսը բացվելուն պես կռիվը սկսվեց Իգդիրի պատերի տակ: Ամբողջ օրը տեւեց մարտը: ... Դրությունը վերականգնելուց հետո, գումարտակը տեղափոխվեց գյուղերում ըստ վաշտերի»[1]:

Անդրադառնալով նույն դեպքերի գնահատմանը՝ Մարտիրոսը գրում է. «...տաճկական ոյժերը կրկին յարձակման ձեռնարկեցին լուսաբացին: Գնդ. Սակինի գումարտակը եւ Մակեդոնի հարիւրեակը վերստին ուժեղ դիմադրութիւն ցոյց տալով, յետ շպրտեցին թշնամուն, մինչ Վանեան գունդը խուճապային նահանջի դիմեց: Գնդապետ Զարուխչեանը շատ էր աշխատել կանգնեցնել փախուստի դիմող իր ոյժերին, բայց չէր կարողացել... իր կեանքը վրայ տալով, սպանուել էր Արխաջում:

[1] ՀԱԱ, ֆ. 403, ց. 1, գ. 40, թ. 1-2:

Իգդիրից կրկին հասանք օգնութեան... երկու հետեւակ գումարտակ եւ իմ հարիւրեակը, յետ շպրտեցինք թշնամուն եւ նորից գրաւեցինք Ջիլին: Վանեան գունդը մնաց իր դիրքերում, իսկ երկու գումարտակները Օրգովում, նրան մօտիկ, որ հարկ եղած դէպքում օգնութեան շտապեն»[1]:

Այդ կռիվներում, բացի վերոհիշյալ 6-րդ գնդի վաշտերից, իրենց անկոտրում մարտունակությամբ աչքի են ընկել նաեւ Դրոյի անմիջական հրամանատարությամբ գործող իգդիրցիների ջոկատը, գնդապետ Սակինի գումարտակը, Մակեդոնի հարյուրակն ու փոխգնդապետ Կորոլկովի հեծյալ գունդը:

Սուրմալուն անընդմեջ ենթարկվում էր թուրքական զորքերի կատաղի հարձակումներին: Թուրքերն անընդմեջ գրոհներով ձգտում էին արագորեն հաղթահարել Սուրմալուի պաշտպանների դիմադրությունը եւ գետանցելով Արաքսը՝ հարձակումը զարգացնել դեպի Երեւան:

Դրոն՝ անխորտակ պաշտպանությամբ, իսկ երբեմն էլ ակտիվ հարձակումներով կասեցնելով հակառակորդի գրոհները, ձախողում է Արարատյան դաշտ թափանցելու թուրք հրամանատարության ձեռնարկումները:

Մինչեւ Սարդարապատի ուղղությունում մարտական հիմնական գործողությունների սկսվելը Դրոյի գլխավորած հայ զինագնդերը հուսալիորեն պաշտպանում էին Սուրմալուի ճակատը թուրքերի չդադարող հարձակումներից:Հայկական բանակի հրամանատարության, անձամբ գեներալ Սիլիկյանի ձեռնարկած միջոցառումների շնորհիվ հաջողվում է կայունացնել Սուրմալուի ռազմաճակատը:

Համաձայն Դրոյի վկայության, զորքերը տեղաբաշխված են եղել հետեւյալ դասավորությամբ. «... բանակները կանգնած են՝ Սակինի բատալիոնը (գումարտակ) Զորի դեմ, լավ բատալիոն է, իմ պարտիզանական գունդը, որը 4-րդ դարձամ՝ բռնել է Ղոնչան, Օրգով եւ Ղարաբուղաջան, գունդն էլ 1400 հոգի: Հեծելազորն է Կորոլկովի, որը բռնել է մեր աջ թեւը, դեպի Կողբի ուղղությամբ: Այնտեղ էին հանգուցյալ Բուլանխցի Մուրադը 300-400 հոգով եւ 800 հոգի էլ իգդիրցիներ էին: Այս 1100 հոգին բռնել էր ձախ թեւը՝ դեպի Դաշբուռունի ուղղությամբ»[2]:

Ձափազանց կարեւոր էր թույլ չտալ, որպեսզի թուրքական զորքերը գետանցեն Արաքսն ու ներխուժեն Արարատյան դաշտ, ուր

[1] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, նշվ. աշխ., էջ 399-400:
[2] Նույն ձայնագրությունը:

այդ օրերին հայության վերջին բեկորները խմբված իրենց հայրենիքի վերջին հողակտորի վրա, գոյամարտ էին մղում թշնամու կանոնավոր զորագնդերի դեմ:

Թուրքական զորքերը՝ զարգացնելով հարձակումը, շարժվում են նաեւ դեպի Համամլու, ապա Ղարաքիլիսա: Մայիսի 21-ին Հայոց Ազգային Խորհուրդը գեներալ Նազարբեկյանից ստանում է հետեւյալ հեռագիրը. « Հակառակորդը գրավել է Համամլուն եւ շարունակում է հարձակումը: Զորախումբը նահանջում է դեպի Կիպլակ, ապա Ղարաքիլիսա»[1]:

Թուրք հրամանատարության հիմնական նպատակը ոչ թե Համամլուն կամ Ղարաքիլիսան գրավելն էր, այլ դուրս գալ Երեւան եւ Արարատյան դաշտ, արագորեն հաղթահարել այնտեղ կենտրոնացած հայկական զորամասերի դիմադրությունը, ապա շարժվել դեպի Բաքու՝ օր առաջ տիրելու նավթահանքերը:

Ջարդերի ահավոր սպառնալիք է ծանրանում Արարատյան աշխարհի փոքրիկ հողակտորի վրա կուտակված հայության վերջին բեկորների վրա:

Գեներալ Նազարբեկյանի շտաբը Կովկասյան բանակի հրամանատարությանը եւ Հայոց Ազգային Խորհրդին ուղղված զեկուցագրում նշում է. «Գեներալ Սիլիկովը հաղորդում է. մայիսի 21-ին, մոտավորապես ժամը 17-ին մարտն սկսվեց Երեւանյան երկաթուղու մոտակայքում գտնվող Սարդարապատի մատույցներում: Սարդարապատի ջոկատը նահանջում է Ղարա-Կոյունլու, Կերպալու եւ հայկական Զեյվայի ուղղությամբ

Կենտրոնացնելով հեծելազորը Մարգարայի մոտակայքում, հայկական զորամասերը Իգդիրի ուղղությունում փակել են Արաքսի գետանցումները (խոսքը վերաբերում է Իգդիրի ուղղությունում մարտնչող Դրոյի զորախմբին - Հ.Գ.): Հաջորդ օրն առավոտյան ժամը 9-ին ստացվել է հեռագիր Ղարաքիլիսայից, ըստ որի Ղարաքիլիսան գրավված է թուրքական զորքերի կողմից: Ստեղծվել է կորպուսը Թիֆլիսից ամբողջովին կտրելու իրավիճակ:

Գեներալ Նազարբեկովը մեկ անգամ եւս համառորեն պնդում է, որպեսզի կառավարությունը շտապի կնքելու հաշտություն»[2]:

Ռազմաճակատում ստեղծված չափազանց աննպաստ իրադրության պատճառով վտանգավոր կացության մեջ է հայտնվում նաեւ Սուրմալուի ուղղությունում մարտնչող Դրոյի զորախումբը: Թուր-

[1] ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 43, թ. 6:
[2] ՀՀ ԲԿԱ, թիւ 508, թղ. 14, գ. 6, էջ 18:

քական բանակի հետագա առաջխաղացման դեպքում Սուրմալուի ճակատը եւ տեղի հայ բնակչությունը կարող էին կտրվել Սարդարապատի շրջանում գործող հիմնական ուժերից եւ հայտնվել շրջապատման մեջ: Առաջնորդվելով ռազմաճակատում տիրող իրավիճակի թելադրանքով՝ Դրոն զորքերի պաշտպանությամբ կազմակերպում է գավառի հայ բնակչության տեղափոխությունը եւ այրելով Մարգարայի եւ Կարակալայի կամուրջները, մայիսի 20-ին գետանցում է Արաքսն ու կանոնավոր զորաշարքերով, անկորուստ նահանջում Արարատյան դաշտ, ուր Արամ Մանուկյանի գլխավորած Հատուկ կոմիտեն, գեներալ Սիլիկյանի ռազմական շտաբի համագործակցությամբ, անպատմելի ջանքեր էր գործադրում՝ ողջ Երեւանի նահանգը վերածելու անխորտակ մարտական ամրոցի[1]:

Ա. Հարությունյանը իր հեղինակած «Թուրքական ինտերվենցիան. Անդրկովկաս 1918 թ. եւ ինքնապաշտպանական կռիվները» պատմագիտական արժեքավոր աշխատությունում, ճիշտ է, անդրադառնում է նաեւ հայ-թուրքական ռազմաճակատի Սուրմալի ուղղությանը՝ նշելով. «Սիլիկովին հայտնի էին, որ Երեւանին վտանգ էին սպառնում նաեւ Կողմի ու Իգդիրի կողմից դեպի Երեւան շարժվող թուրքական 5-րդ և 12-րդ հետեւակային դիվիզյաները: Այստեղ նա առանձին ռեզերվներ չուներ, բացի մի քանի ստորաբաժանումներից, որոնց հրամայեց պայթեցնել Ղարաղալայի ու Մարգարայի կամուրջները, Արաքսի ձախ ափին խրամատներ կառուցել և թույլ չտալ թշնամուն անցնել գետը»:[2], բայց միայն իրեն հայտնի պատճառաբանությամբ չի նշում, որ Սուրմալուի ճակատում իր մատնանշած Արաքսի երկու կամուրջները այրելու եւ զորքին ու բնակչությանը գետի մյուս ափը տեղափոխելու եւ պաշտպանական դիրքեր ընտրելու գործողությունները ղեկավարել է Դրոն:

Բացի դրանից, Սուրմալուիի ուղղությունում գործել են թուրքական ոչ թե երկու՝ 5-րդ եւ 12-րդ դիվիզիաները, այլ միայն Մյուրսել փաշայի գլխավորած 5-րդ դիվիզիան ու քրդական հեծելախմբեր:

Հայկական բանակի զորահրամանատարության կողմից Դրոյի զորախումբը Սուրմալուից Երեւանյան ուղղություն տեղափոխելու վճիռը ռազմավարական առումով շատ ճիշտ էր եւ հույժ կարեւոր:

Եթե անաչառորեն գնահատենք Սուրմալուի ուղղությունում Դրոյի գլխավորությամբ հայկական զորքերի մարտական գործողությունների արդյունքն ու նշանակությունը, ապա պիտի միանշանակորեն ընդգծել, որ այն առաջին ծանրակշիռ նվաճումն էր Մայիսյան հերոսամարտերում: Փաստորեն թուրքական մեկ ամբողջ դիվիզիա ու նրան աջակցող քրդական հեծյալ հրոսակախմբերը, կտրվելով թուրքական հիմնական ուժերից՝ մնում են Արաքսի մյուս ափին եւ չեն կարողանում մասնակցել Արարատյան աշխարհում ծավալվող մարտական գործողություններին:Թուրքական զորքերը, իհարկե, փորձեր են ձեռնարկել նույնպես գետանցել Արաքսն ու մասնակցել Արարատյան աշխարհում ընթացող կռիվներին, սակայն յուրաքանչյուր անգամ հանդիպելով գետանցումները պաշտպանող հայ մարտական ուժերի անսասան դիմադրությանը՝ չեն կարողանում անցնել Արաքսն ու ներխուժել Արարայան դաշտ: Դրան հակառակ, Սուրմալուի ճակատի հայկական զորքերը՝ գետանցելով Արաքսը, մասնակցում են Սարդարապատի ու Բաշ Ապարանի ճակատամարտերին:

Բազում մարտերում կոփված, փորձառու եւ մարտունակ զորամասերի ներկայությունը ավելի քան անհրաժեշտ էր ռազմաճակատի մյուս ուղղություններում մարտնչող հայկական զորքերը համալրելու եւ թուրքերի հարձակումները հաջողությամբ դիմագրավելու համար: Արաքսի գետանցումները պաշտպանելու նպատակով հայկական բանակի հրամանատարությունը Վանի գնդի կազմից առանձնացնում է ավելի փոքրաքանակ մարտական ուժեր, որոնք լավագույնս կատարելով իրենց տրված առաջադրանքը՝ հուսալիորեն պաշտպանում են գետանցումները եւ խոչընդոտում թուրքական զորքերի ներխուժումը Արարատյան դաշտ:

[1] Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1936, մարտ, էջ 104:

[2]. Հարությունյան Ա., «Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. եւ ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984, էջ 177:

3.3. ԲԱՇ-ԱՊԱՐԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

Մայիսի 21-ին Դրոն արդեն հասնում է Վաղարշապատ երեւանյան զորախմբի հրամանատար գեներալ Մ. Սիլիկյանի շտաբ եւ իր զորագնդերով համալրում այդ ուղղությամբ (Սարդարապատ) մարտնչող զորքերի մարտաշարքերը:

Այդ օրը կատաղի մարտեր էին ծավալվում ռազմաճակատի երեք գլխավոր՝ Սարդարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսայի ուղղությամբ:

Մայիսի 22-ին հայկական զորամասերը Սարդարապատի ուղղությամբ անցնելով հարձակման Քյորփալու-Քյուրաքյանլու (Արշալույս-Ցերիկս)- Հայ Զեյվա (Առատաշեն), Ղուրդուղուլի (Արմավիր) բնագծերից՝ հուժկու հարվածներով հետ են շպրտում թուրքերին մինչեւ Արաքս կայարանը եւ հետ վերցնում Սարդարապատ կայարանն ու Մոլլա-Բայազեթ (Բամբակաշատ) բնակավայրերը: Կարելի է փաստել, որ դա Սարդարաբատի ուղղությունում հայկական զորքերի ձեռք բերած առաջին լուրջ նվաճումն է:

Բաշ-Ապարանի ուղղությամբ՝ հայկական կանոնավոր զորամասերի բացակայության պայմաններում, թուրքական առաջապահ զորաջոկատների դեմ եռանդուն մարտական գործողություններ են ծավալում ապարանցիների աշխարհազորայինները:

Ղարաքիլիսայի ուղղությամբ թուրքական զորքերը հասնում են Ղշլաղ, եւ Անդրանիկը երկօրյա մարտերից հետո մայիսի 22-ին թողնելով Ջալալօղլին՝ նահանջում ու մայիսի 23-ին հասնում է Դսեղ[1]:

Անդրանիկի զորախմբի եւ հայկական զորամասերի կողմից Ջալալօղլու պարպումից հետո թուրքերի համար իրական հնարավորություն է ընձեռում այդ ճակատում հարձակումը ծավալել հենց Ղարաքիլիսայի ուղղությամբ:

Հայկական բանակի հրամանատարությունը իր գլխավոր ջանքերն ու մարտական ուժերը նպատակաուղղում է հենց այս երեք գլխավոր ճակատներում, ուր վճռվելու էր հայության գոյության ու ապագայի հարցը:

Մի կարեւոր ու էական ճշտում:

Անդրադառնալով, իհարկե, ոչ այնքան հիմնավոր, մայիսյան հերոսամարտերի որոշ մանրամասների նկարագրությանն ու արժեվորմանը՝ խորհրդային պատմագիտության մեջ այն տեսակետն է, ըստ

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 35, թ. 17-20:

որի հայկական զորքերի հրամանատարությունը մտադրություն չի ունեցել ճակատամարտել Արարատյան դաշտ ներխուժած թուրքական ուժերի դեմ եւ նույնիսկ որոշել էր հանձնել Երեւանն ու նահանջել դեպի Սեւանի կողմերը:

Վկայակոչենք բուհերի ուսանողների համար մինչեւ 80-ական թթ. որպես դասագիրք ծառայող Վ. Պարսամյանի եւ Շ. Հարությունյանի խմբագրած «Հայ ժողովրդի պատմություն»-ում այդ հարցը մեկնաբանող հետեւյալ տեսակետը. «Գլխավոր հրամանատարության ապիկարության պատճառով հայկական զորամասերի մեծ մասում հուսալքություն էր առաջ եկել: Վտանգավոր դիրք էին բռնել Դաշնակցության պարագլուխները: Բաթումիի հայ պատվիրակները հեռագրում էին Թիֆլիս՝ Հայոց Ազգային Խորհրդին, այլեւս ռազմական դիմադրություն ցույց չտալ թուրքերին: Մայիսի 18-ին Երեւանի քաղաքային Դուման որոշում ընդունեց չդիմադրել Երեւան շարժվող թուրքերին եւ հանձնվել նրանց ողորմածությանը»[1]:

Համանման տեսակետներ են զարգացնում նաեւ խորհրդահայ պատմաբաններ Ծ. Աղայանն ու Հ. Թուրշյանը[2]:

Կարծում ենք, հարկ չկա կանգ առնել գլխավոր հրամանատարության եւ «Դաշնակցության պարագլուխների» հասցեին արված ոչ պատշաճ արտահայտությունների վերլուծությանը, քանի որ միանգամայն պարզ է ու ակնհայտ հեղինակների կողմից վերոհիշյալ «Դաշնակցության պարագլուխների»-ն հանիրավի վարկաբեկելու ու զրպարտելու միտումը, իսկ ինչ վերաբերում է Երեւանի Քաղաքային Դումայի որոշման ճշմարիտ գնահատականին, ապա պետք է ընդգծել հետեւյալը.

Նախ, Հայկական կորպուսի հրամանատար, գեներալ Թ. Նազարբեկյանի եւ Երեւանյան զորամիավորումների ընդհանուր հրամանատար գեներալ Սիլիկյանի հրամանագրերում այդպիսի որոշում չկա եւ չի եղել, իսկ եթե կա եւ եղել է, ապա վերոհիշյալ տեսակետի պաշտպանողները պարտավոր են մատնանշել այդ որոշումը հավաստող սկզբնաղբյուրն ու փաստաթուղթը:

2. Երեւանի Քաղաքային Դումայի իրավասությունների մեջ ամենեւին չի մտել ղեկավարելու եւ ուղղություն տալու Երեւանի

[1] Պարսամյան Վ. Ա., Հարությունյան Շ. Լ., Հայ ժողովրդի պատմություն, Երեւան, 1979, դասագիրք բուհերի ուսանողների համար, էջ 417:
[2] Աղայան Ծ., Հոկտեմբերը եւ հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Երեւան, 1982, էջ 126: Թուրշյան Հ., Սարդարապատի հերոսամարտը, Երեւան, 1965, էջ 81-82:

նահանգում ընթացող մարտական գործողությունները եւ հետեւաբար՝ վճռելու պատմական տվյալ ժամանակի համար մեծ նշանակություն ունեցող Երեւանը պահելու կամ նահանջելու խնդիրը:

3. Երեւանի նահանգի փաստական ղեկավարը Հայոց Ազգային Խորհրդի կողմից Երեւան գործուղված եւ ժողովրդի կողմից Արարատյան աշխարհի դիկտատոր հռչակված Արամ Մանուկյանի գլխավորած Երեւանի Ազգային Խորհուրդը (Հատուկ կոմիտե) էր: Միմիայն Հատուկ կոմիտեն էր իրավասու Երեւանը թողնելու կամ պահելու վճիռ կայացնել, եթե, իհարկե, այդ քայլը համաձայնեցներ Հայոց Ազգային Խորհրդի, Հայկական կորպուսի հրամանատարության եւ անձամբ Երեւանի ուղղությամբ գործող զորքերի ընդհանուր զորահրամանատար, գեներալ Սիլիկյանի հետ:

Մի վկայություն Երեւան քաղաքի զինվորական պարետ, գնդապետ Արշավիր Շահխաթունու հուշերից. « Թուրքերը յառաջանում են դէպի Սարդարապատ-Քարխուն ճակատից: Ալեքսանդրապոլից, Անիից եւ Աղինից կտրուած ենք: Զունիմ որեւէ պահեստի զինուոր՝ թշնամուն դիմադրելու համար: Կարելի արէք անմիջապէս ինձ հասցնելու Ձեր տրամադրութեան տակ եղած պահեստի զինուորները, ինչպես նաեւ պաշար, փամփուշտ, ռազմամթերք եւ այլն: Ցայտնեցէք Արամ փաշային գաղտնապէս թէ՝ պիտի աշխատիմ նահանջել դէպի Քարխունի ճահիճները եւ ամրանալ Թոզ-Թէփէլէրի վրայ: Դուք ամրացրէք Երեւանը:

Տեղի մի տաք չփոթութեան եւ իրարանցումի...»[1]:

Գեներալ Սիլիկյանի եւ Երեւանի զինվորական պարետ գնդապետ Ա. Շահխաթունու միջեւ կայացած այս հեռախոսազրույցը տեղի է ունեցել մայիսի կեսերին, երբ իրոք ռազմաճակատում մարտական գործողությունները դեռեւս ծավալվում էին հօգուտ թուրքերի: Նույնիսկ այդ ծանր ժամանակներում գեներալ Սիլիկյանի հրահանգը հստակ է. «... ամրացրէք Երեւանը, Տեղի մի տաք չփոթութեան եւ իրարանցումի»:

Ահա այս հարցին առնչվող եւս մի ուշագրավ վկայություն-փաստարկ Երեւանի Հատուկ կոմիտեի անդամ Արշալույս Աստվածատրյանի «Սարդարապատի պատմաշինություն»-ը գրքից. «Այդ առթիւ պիտի ասել, որ «ընդհանուր յուսալքման այդ օրերին» (Հ. Թուրշյանի խոսքերն են- Հ.Գ.) Քաղաքային խորհուրդը իբր ինքնավար մարմին, կարող էր յուսահատական նման որոշում հանել: Սակայն այդ

[1] Արամը, մահուան յիսնամեակի առթիւ, Բէյրութ, 1969, էջ 506:

որոշումը գործնական որեւէ հետեւանք չէր կարող ունենալ եւ կը մնար մեռած տառ, քանի որ այն վաւերացուած չէր Ազգային Խորհրդի, աւելի ճիշտ՝ նրա գործադիր մարմնի՝ Ցատուկ Կոմիտէի կողմից, որը երկրի բարձրագոյն իշխանությունն էր:

...Քաղաքային ինքնավարութեան Խորհրդի հանած որոշումը դաշնակցական քաղաքագլխի առաջարկով, մի որոշում, սակայն,որ ժամանակին ոչ մի հետեւանք չի ունեցել եւ մնացել է մեռած տառ, որն այժմ Թուրշեանի «բարի ցանկութեամբ» յարութիւն է առնում՝ Հ. Ց. Դաշնակցութեան կատարած «մեղքերի» թիւն աւելացնելու համար»[1]:

Արարատյան աշխարհում ընթացող մայիսյան դեպքերի ուսումնասիրությունը անառարկելիորեն ապացուցում է, որ հայ քաղաքական եւ ռազմական այն գործիչները, որոնք անմիջականորեն կապված են եղել ծավալվող իրադարձություններին, ճնշող մեծամասնությամբ վճռականորեն համակված են եղել Երեւանը մինչեւ վերջը պահելու եւ թուրքերի դեմ ճակատամարտելու մտադրությամբ:

Նույն տեսակետն է պաշտպանել նաեւ Դրոն:

«Դրօն, - վերհիշում է Վահան Աֆրիկյանը, - նկարագրելով այդ վիճակը (նկատի ունի Կարսի եւ Ալեքսանդրապոլի անկումից հետո երկրում ստեղծված վիճակը - Հ.Գ.) ասում էր.

«Մանր կոշմարի տակ գլուխներս կորցրած, Արամի գրասենյակից դուրս գալով, Արամը, ես եւ Երեւանի յայտնի վաճառական, հասարակական գործիչ Յովհաննէս Մելիքեանը, մտանք զբօսավայր, շարունակելով մեր խորհրդակցութիւնը: Ես առաջարկեցի հրահանգել սպայակոյտին անմիջապէս բանակը ուժեղացնել եւ բաժանել երկու մասի՝ Սարդարապատի եւ Բաշ-Ապարանի: Այնուհետեւ կտրուկ միջոցների դիմել, թույլ չտալ Երեւանի Ազգաբնակչութիւնը տեղից շարժուելու, անգամ շարժուողին գնդակահարելու որոշումով, որպէսզի կռուող զինուորը զգայ, որ Երեւանը կանգուն է եւ իրեն նահանջելու տեղ չկայ»[2]:

Նա ճիշտ էր ըմբռնել պահի լրջությունը: Երեւանի հանձնումը կարող էր կործանարար ազդեցություն գործել զինվորների մարտական, բարոյահոգեբանական տրամադրությունների եւ դեպքերի հետագա զարգացման վրա: Խորագետ զորապետի լրջությամբ գնահատելով Հայաստանում ստեղծված ռազմական իրավիճակը՝ Դրոն

[1] Աստուածատուրեան Ա., Սարդարապատի պատմաշինութիւնը, Պէյրութ, 1966, էջ 32:
[2] «Հայրենիք» օրաթերթ, 1956, ապրիլի 28:

պնդում է, որ անհրաժեշտ է առանց Երեւանը հանձնելու վճռական ճակատամարտ տալ Արարատյան դաշտավայրը ներխուժած թուրքական զորաբանակին: Նույն տեսակետն է պաշտպանում նաեւ Արամ Մանուկյանը:

Երեւան-Սարդարապատ ուղղությունում գործող հայկական զորքերի հրամանատարությունը (հրամանատար՝ գեներալ Սիլիկյան) որոշ տատանումներից հետո վճռում է պահել Երեւանն ու ճակատամարտ սկսել Սարդարապատում:

Այդ որոշումը իրականացնելու վճռականությամբ Դրոն Սիլիկյանի հետ էջմիածնից մեկնում է Երեւան՝ հանդիպելու Արամին:

«- Մենք որոշել ենք, կռիւ պիտի տանք Երեւանի փողոցների մէջ եւ մեր դիակները պիտի թափենք Երեւանի մէջ, - յայտնում է Դրոն:

- Ես էլ ձեզ խօսք եմ տալիս, որ էջմիածնում կը մեռնեմ, - միւս կողմից աւելացնում է զօրաւար Սիլիկեանը»[1]:

Վիճակն արդեն գցված էր, Արամը վաղօրոք լի էր հաստատակամությամբ հօգուտ ճակատամարտի:

Ժողովրդի եւ զինվորների ոգին բարձրացնելու նպատակով մայիսի 21-ին Երեւանի Հայոց Ազգային Խորհուրդը արդեն հրապարակել էր հետեւյալ կոչը.

«Երեւանի ամբողջ հայ ժողովուրդը վճռել է դիմադրել:

Դիմում ենք բոլոր հայ սպաներին, որպէսզի նրանք գան եւ կամաւորական խմբերի գլուխն անցած ընդառաջեն թշնամուն:

Ովքեր ցանկանում են ղեկաւարի, առաջնորդի դեր ստանձնել, թող դիմեն Երեւանի Ազգային Խորհուրդ հէնց այսօրուանից:

Երեւանի Հայոց Ազգային խորհուրդ

21 Մայիսի 1918 թ., Երեւան»[2]:

Երեւանի Ազգային Խորհրդի հրապարակած կոչին զուգահեռ՝ ժողովրդին «Հայեր, շտապեցէք Հայրենիքն ազատելու» ուղերձով դիմում է նաեւ Երեւանյան զորախմբի հրամանատար, գեներալ Սիլիկյանը: Իր ուղերձում կարեւորելով տվյալ բախտորոշ ժամանակահատվածում զենքի դիմելու հույժ կարեւորությունը՝ գեներալ Սիլիկյանը նշում է.

« Հայեր,

Ժամանակը չէ դանդաղելու: Բոլոր մինչեւ յիսուն տարեկան հասակ ունեցողները պարտաւոր են զէնքի տակ գալու, եւ ես պահանջում եմ բոլորից ներկայանալ իրենց զէնքերով ու փամփուշտներով հայրենիքի պաշտպանութեան համար:

Հայուհիներ,

Յիշենք 5-րդ դարու փափկասուն տիկնանց, որոնք ոգեւորեցին իրենց ամուսիններին դէպի Մեծ Գործը անմահ Վարդանի կռիւների ժամանակ, հետեւեցէք նրանց օրինակներին, եթէ չէք ուզում, որ Ձեր պատիւը ոտնակոխ լինի, խրախուսեցէք նրանց եւ արհամարհէք այն վախկոտներին, որոնք զանազան պատրուակներով խուսափում են ճակատ գնալուց: Հաւաքեցէք նրանց համար ռազմամթերք, հաց, շոր եւ ուրիշ մթերքներ...

Խորին կերպով համոզուած եմ, որ այս իմ կոչը անարձագանք չի մնայ եւ երկու օրուայ ընթացքում կը կազմակերպուի մի այնպիսի քաջարի զօրաբանակ, որին կը յաջողուի վռնդել թշնամուն Հայրենի հողի սահմաններից եւ ապահովել հայ ժողովրդի գոյութիւնը:

Յանուն բազմաչարչար հայ ժողովրդի ֆիզիկական գոյութեան,

Յանուն ոտնակոխ եղած ճշմարտութեան,

Ոտքի կանգնեցէք: Դէպի գործ, դէպի սրբազան պատերազմ...»[1]:

Երեւանի Ազգային Խորհուրդն ու Երեւանում կազմավորվող հայկական բանակային կորպուսի 2-րդ դիվիզիայի հրամանատարությունը, ի դեմս Արամ Մանուկյանի, գեներալ Մ. Սիլիկյանի ու Դրոյի, այդ օրերին առավելագույն ջանքեր էին գործադրում Հայոց աշխարհի վերջին փոքրիկ հողակտորն ու մայրաքաղաքը պաշտպանելու եւ թշնամուն ջախջախելու ուղղությամբ:

Ռազմաճակատից ստացվող տեղեկություններից պարզվում է, որ Երեւանին սպառնում էր ոչ միայն Սարդարապատի ուղղությամբ հարձակվող թուրքական բանակը: Հայկական բանակային կորպուսի 1-ին դիվիզիայի (հրամանատար՝ գեներալ Արեշյան)՝ Ալեքսանդրապոլից Ղարաքիլիսա նահանջելը թուրքական զորքերի հրամանատարությանը հնարավորություն է ընձեռում 9-րդ դիվիզիայի ուժերով մայիսի 20-ին գրավել Համամլու (Սպիտակ) կայարանը եւ ապա չհանդիպելով որեւէ լուրջ դիմադրության, դեպի Երեւան հարձակումը զարգացնել Ապարան-Եղվարդ կամ Ապարան-Աշտարակ ուղղությամբ:

Մայիսի 21-ին գեներալ Սիլիկյանը իր գլխավորած զորամասերին տրված հրամանում նշում է. «Հակառակորդը ընդհատել է խաղաղ բանակցությունները եւ դիմել է հարձակման Հայկական կորպուսի ողջ ռազմաճակատով»[2]:

---

[1] Նույն տեղում:
[2] Սարդարաբատ, Բաշ-Ապարան, Ղարաքիլիսա, Երեւան, 1998, էջ 25:

[1] Նույն տեղում, էջ 29:
[2] ՀԱԱ, ֆ. 204, g. 1, գ. 43, թ. 8:

Ի տարբերություն Սարդարապատի եւ Ղարաքիլիսայի, ուր այդ օրերին կենտրոնացվել էին Հայկական բանակային կորպուսի առաջին եւ երկրորդ դիվիզիայի զորագնդերն ու մի շարք այլ զորախմբեր, Բաշ-Ապարանի ուղղությունում մինչեւ մայիսի 23-ը լիարժեք կանոնավոր զորամասեր դեռեւս չեն եղել: Հայկական բանակի հրամանատարությունը ռազմաճակատի այդ հատվածում հակառակորդի գործողություններին իրազեկ լինելու, հետախուզություն անցկացնելու, իսկ անհրաժեշտության դեպքում նաեւ բնակչության ինքնապաշտպանությունը կազմակերպելու նպատակով Բաշ-Ապարանի ճակատ է ուղարկում Սեդրակ Ջալալյանի եւ Արսեն Տեր-Պողոսյանի (Բաֆֆու «Խենթ» վեպի հերոս Վարդանի (Խենթի)՝Սամսոն Տեր Պողոսյանի որդին -Հ.Գ.) գլխավորած մարտական խմբերը:

Առանձին փոքր ընդհարումներ թուրքերի հետախուզական առաջապահ ջոկատների հետ քրդական Ղոնդախսազ գյուղի ու նրա հարեւանությամբ գտնվող Ճըլիգոլի մերձակա բարձունքներում մղել են Մելիքգյուղի եւ Դանագիրմազի (Նիգավան) ինքնապաշտպանական փոքրաքանակ ջոկատները՝ Սարգիս Պողոսյանի (Տեր Տաճատ) եւ Հարություն Գրիգորյանի (Մելիքգյուղացի Արսենի Արթեն) գլխավորությամբ: Կարելի է ասել, որ ինքնապաշտպանական այդ փոքր մարտերը Բաշ-Ապարանի հերոսամարտի նախերգանքներն էին:

Հաղթահարելով մի քանի տասնյակի հասնող աշխարհազորայինների դիմադրությունը՝ թուրքերը շարժվում են դեպի Բաշ-Ապարան:

Մինչեւ թուրքերի՝ Բաշ-Ապարանին մոտենալը՝ Սեդրակ Ջալալյանն ու Արսեն Տեր-Պողոսյանը գավառապետ ալիքուշակցի Մաթեւոս Հովհաննիսյանի եւ տեղի բնակչության գործուն աջակցությամբ հաշված օրերի ընթացքում հասցնում են կազմակերպել ինքնապաշտպանական աշխարհազորային մարտախմբեր եւ լուրջ դիմադրություն ցույց տալ թուրքական 3-րդ դիվիզիայի առաջապահ զորաջոկատներին: Առաջին լուրջ բախումները տեղի են ունեցել «Դավաբոյին» կոչվող տեղամասի բարձունքներին, Քասախ գետին հարող բլուրներին եւ Արագածի լեռնալանջերին, որտեղով անցել են աշխարհազորայինների պաշտպանական առաջին դիրքերը: Դավաբոյնի պաշտպանական բնագծերից անմիջապես հետո Ապարանին մերձակա բլուրներով, Քասախ գետի բարձրադիր ափին գտնվող Մուլքի գյուղից դեպի արեւմուտք մինչեւ Ապարանի բերդ, Արագածի փեշերի բարձունքները, անցել է պաշտպանական երկրորդ գիծը:

Մինչեւ մայիսի 23-ը հայկական բանակի կանոնավոր զորամասերի բացակայության պայմաններում թուրքերի դեմ կռվել են

Սեդրակ Ջալալյանի, Արսեն Տեր-Պողոսյանի գլխավորած մարտախմբերը եւ նրանց գործուն մասնակցությամբ կազմակերպված Ապարանի, Արագածի, Նիգավանի, Մելիքգյուղի, Քուչակի, Քասախի (Ջամալու), Վարդենիսի եւ մյուս գյուղերի աշխարհազորայինները:

Բաշ-Ապարանի ուղղությամբ թուրքական զորքերի առաջխաղացումը հայտնի է դառնում հայկական բանակի հրամանատարությանը, բայց դեռեւս պարզ չէր հարձակվող զորամասի կազմն ու ուժերը՝ գումարտակ էր, գունդ է, թե դիվիզիա:

Մայիսի 23-ին հայկական բանակային կորպուսի հրամանատար գեներալ Նազարբեկյանը ռազմաճակատից հեռագրում է Հայոց Ազգային Խորհրդին.

«... Ստացվել է հաղորդագրություն Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսայի ուղղությամբ թուրքական զորքերի մասին:

Գեներալ Սիլիկյանը հաղորդում է Սարդարապատի ուղղությամբ իր հարձակման մասին, որն առայժմ ընթանում է հաջողությամբ»[1]:

Բաշ-Ապարանի ճակատում թուրքերի հայտնվելը կրկնակի սպառնալիք է ստեղծում Երեւանի համար: Մայրաքաղաք տանող հյուսիսային դարպասները բաց էին: Ի պատիվ հայկական զորքերի հրամանատարության, պիտի ընդգծել, որ նա կարողանում է ճիշտ ժամանակին նկատել ու գնահատել Ապարանի ուղղությամբ Երեւանին սպառնացող մահացու վտանգը:

Հաշվի առնելով ռազմաճակատում ստեղծված տագնապալի իրավիճակը՝ Երեւանյան զորախմբի հրամանատար, գեներալ Սիլիկյանը Հայկական բանակային կորպուսի հրամանատարության համաձայնությամբ, Երեւանյան ուղղությունից Բաշ-Ապարանի ճակատ է ուղարկում մի քանի զորամասեր: Ռազմաճակատի Ապարանյան ուղղության հայ զորագնդերի հրամանատարությունը վստահվում է Դրոյին:

Ինչպիսի մարտական ուժերից էր կազմված Դրոյի Ապարանյան զորախումբը: Գեներալ Նազարբեկյանին հասցեագրված նամակներից մեկում անդրադառնալով այս հարցին՝ գեներալ Սիլիկյանը գրում է.«Երեւանյան զորամասը բաժանված է երկու զորախմբերի.

1. Գնդապետ Փիրումովի զորախումբը Սարդարապատի ուղղությամբ: Այդ զորախմբի խնդիրն էր կանգնեցնել թուրքերի հարձակումը եւ անցնելով հարձակման՝ հետ շպրտել հակառակորդին Արփաչայից արեւմուտք:

2. Դրոյի զորախումբը (երկու գումարտակ, երկու լեռնային հրանոթ եւ հեծյալ պարտիզանական գունդ) պետք է հարձակվեր Աշտա-

[1] ՀՀ ԲԿԱ, թիւ 503.թթ. 16, գ. 6, էջ 19-20

բակ-Բաշ-Ապարան խճուղիով եւ գրոհելով՝ հետ շպրտեր թուրքերին արեւմուտք»[1]:

Երեւանյան զորախմբին 1918 թ. մայիսի 21-ին տրված իր թիվ 20 հրամանագրում գեներալ Սիլիկյանը նշում է. «Դրոյի հատուկ զորախմբին (պարտիզանական հեծյալ գունդ՝ չորս հարյուրակ, հայկական 2-րդ գունդը՝ երկու էսկադրոն,հայկական հրանոթային բրիգադին՝ երկու լեռնային հրանոթ) ՝ արագորեն ուղեւորվել Ալի-Քուչակի շրջան մինչեւ հակառակորդի հետ հանդիպելը եւ նրանց ուժերի գերակշռության դեպքում համառորեն կառչելով յուրաքանչյուր դիրքին՝ մարտերով դանդաղորեն նահանջել Աշտարակի ուղղությամբ: Երեւանյան զորախմբի պետը գեներալ Սիլիկով»[2]:

Ի տարբերություն Նազարբեկյանին հասցեագրված նամակում եղած վկայության, Սիլիկյանի այս հրամանագրում չեն նշվում 6-րդ գնդի գումարտակները, որոնք Ղամարլուից (Արտաշատ) պետք է տեղափոխվեին Աշտարակ, ապա Ապարան:

Բաշ-Ապարանի ճակատամարտը բացառիկ տեղ է գրավում Դրոյի մինչ այդ միայն հաղթանակներով հագեցած մարտական հարուստ կենսագրությունում: Նա ոչ այնքան մեծ խանդավառությամբ է ընդունում Բաշ-Ապարանի ճակատը ղեկավարելու որոշումը: Նա այդ օրերին հայկական զորահրամանատարությանն, ավելի ստույգ՝Երեւանյան զորախմբի հրամանատար գեներալ Սիլիկյանին է ներկայացնում հակառակորդին վերջնականապես ջախջախելու չափազանց համարձակ եւ բավական հետաքրքիր մի տարբերակ:

Ելնելով այն նախադրյալից, որ Սարդարապատի ուղղությունում հայկական զորքերը քանակապես եւ որակով համարյա չէին զիջում հակառակորդին՝ առաջարկում է չմասնատել ճակատում գտնվող զորագնդերը եւ հզոր, կենտրոնացված հարվածով ջախջախել թուրքական սարդարապատյան խմբավորումը, ապա հիմնական ուժերը տեղափոխել Բաշ-Ապարանի ճակատ եւ շրջապատել ու պարտության մատնել նաեւ թուրքական զորախմբերին: Նրա կարծիքով՝ մինչեւ Սարդարապատի հատվածում թուրքական զորքերին ջախջախելը, հայ աշխարհազորայինները եւ փոքրաթիվ կանոնավոր զորաջոկատները ի զորու կլինեին պաշտպանելու Ապարանի ճակատը: Նրա այդ պնդումը հիմնված էր նաեւ ռազմաճակատից ստացված այն ոչ ճիշտ տեղեկության վրա, ըստ որի Ապարանի ճակատում հարձակվում էին թուրքական միայն երկու գումարտակներ:

[1] ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 35, թ. 17-23, էջ 3:
[2] Նույն տեղում:

Իր մտահղացումը իրականացնելու նպատակով Դրոն առաջարկում է իրեն թողնել Սարդարապատի ուղղությունում: Սակայն գեներալ Սիլիկյանն արդեն ուներ իր որոշումը:

«... Էստեղ, - պատմում է Դրոն, - մի վէճ ունեցանք Սիլիկեանի հետ: Ինձ ասում ա, քեզ նշանակում եմ Բաշ-Ապարանի հրամանատար: Մոիսէյ Պավլովիչ (գեներալ Սիլիկյանի անունն ու հայրանունն է - Հ.Գ.), ուր ուզես կերթամ, մի բաժանիր բանակը: Թող ամբողջ ուժով յարձակուենք Սարդարապատից գալող բանակի վրայ, լաւ ջարդենք: Ի՞նչ տեղեկութիւն ունենք, մեզ տեղեկացնում են, թէ ընդամէնը երկու թաբուրա (գումարտակ-Հ.Գ.): Նրանք եթէ Աշտարակ էլ իջնեն՝ կը ջարդենք»[1]:

Տվյալ պարագայում պատերազմը շարունակելու Դրոյի մտահղացման կենսագործումը մեծ համարձակություն եւ պատասխանատվություն էր պահանջում: Իրոք, չափազանց վտանգավոր էր Երեւանի հյուսիսային դարպասի պաշտպանությունը թողնել միայն տեղի աշխարհազորի եւ փոքրաթիվ կանոնավոր զինաջոկատների հույսին: Օգտվելով իրենց ուժերի գերակշռությունից՝ թուրքական զորքերը կարող էին ընկճել Բաշ-Ապարանի պաշտպանների դիմադրությունը եւ արագորեն մոտենալով Երեւանին, շրջապատման օղակի մեջ վերցնել Սարդարապատի ճակատում գործող հայկական զորագնդերը:

Համաձայն գեներալ Ղորղանյանի գնահատման.

«... Զօր, Սիլիկեանը, սպառնալով Ալեքսանդրապոլի ուղղութեամբ թուրքերու կռնակին, իր կարգին կարող էր կտրուել Երեւանէն, եթէ Դրօյի ջոկատը չհասցնէր կանգնեցնել թշնամիի առաջխաղացումը»[2]:

Հաշվի առնելով դեպքերի զարգացման նման հնարավորությունը՝ Մ. Սիլիկյանը չի ընդունում Դրոյի առաջարկած տարբերակը եւ նրան ուղարկում է Բաշ-Ապարանի ճակատ:

Ա. Հարությունյանը իր հեղինակած «Թուրքական Ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. եւ ինքնապաշտպանական կռիվները» մենագրությունում նկարագրելով հայ-թուրքական ռազմաճակատում տեղի ունեցող մարտական գործողություններն ու հայկական զորքերի հրամանատարության կենսագործած մարտավարությունը՝ գրում է . «Գեներալ Սիլիկովը հետախուզության օգնությամբ արդեն տեղյակ էր, որ թուրքերի մյուս զորախումբը դեպի Երեւան է

[1] «Հայրենիք» օրաթերթ, 1956, մայիսի 27:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1928, թիւ 5, էջ 125:

շարժվում Բաշ-Ապարանի կողմից, ուստի հաշվի է առնում գործի նաև այդ կողմը: Նա առանձնացրեց 6-րդ հրաձգային գունդը (հրամանատար՝ գնդապետ Դոլուխանով), պարտիզանական հեծյալ գունդը (հրամանատար՝ գնդապետ Զալինով) և գնդապետ Սիլինի սահմանապահ գումարտակը:

Այս խմբի մարտական խնդիրն էր՝ ուժեղ հակագրոհների միջոցով ետ շպրտել թշնամում Բաշ-Ապարանի մոտից»[1]:

Ա. Հարությունյանը, որի հեղինակած վերոհիշյալ մենագրությունը իրավամբ կարելի է համարել խորհրդահայ պատմագրությունում պատմական հիշյալ ժամանակահատվածը, մասնավորապես Մայիսյան հերոսամարտերը ներկայացնող լավագույն պատմագիտական աշխատությունը, այս հարցում այնքան էլ անկողմնակալ չէ: Հիշատակելով գնդապետներ Դոլուխանովին, Զալինովին, Սիլինին և նրանց հրամանատարությամբ· Ապարանի ճակատ մեկնող զորամասերը՝ նա ինչ-ինչ նկատառումով չի նշում Ապարանյան զորախմբի հրամանատարի՝ Դրոյի անունը: Նկատվում է, որ Ա. Հարությունյանը խուսափում է հիշատակել ոչ կադրային զինվորականների, հայ ազգային ազատագրական պայքարի այն գործիչների, անգամ ականավոր, անունները, որոնք Հ. Ց. Դաշնակցության անդամներ էին: Օրինակ, Արամ Մանուկյան, Վահան Փափազյան (Կոմս), Ռուբեն Տեր-Մինասյան եւ Հայոց Ազգային Խորհրդի անդամներ եւ այլոք:

Բացի դրանից, մայիսի 23-ին Ապարանի ճակատ մեկնած զորախմբի կազմում, թվակազմով ամենամեծ զորմասը եղել է գնդապետ Կորոլկովի 650 մարտիկներից բաղկացած պարտիզանական հեծյալ գունդը: Դոլուխանովի 6-րդ գնդի չորս գումարտակներից առաջին օրը Ապարանի ճակատ է մեկնել ընդամենը մեկ գումարտակ: Գնդապետ Դոլուխանովի 2-րդ հեծյալ գունդը իր կազմում ունեցել է ընդամենը 100 զինվոր, իսկ գնդապետ Սիլինի գումարտակը Ապարանի ճակատ է տեղափոխվել մայիսի 26-ին:

Ճակատամարտի ժամանակ գնդապետ Զալինյանը զուգահեռաբար գլխավորել է Ապարանյան զորախմբի շտաբը:

Դրոն Բաշ-Ապարանի ճակատն է մեկնում համեմատաբար փոքրաթիվ ուժերով: Նրա գլխավորած զորամասի ամենահզոր մարտական ուժը՝ պարտիզանական գունդը, Սիլիկյանը պահում է Սարդարապատի տեղամասում:

Բաշ-Ապարանի զորախմբի մարտական կազմի մասին գեներալ Մ.Սիլիկյանի նամակում եւ հրահանգում արդեն նշվել է: Այս հարցում գեներալ Մ. Սիլիկյանի տեղեկությունները ավելի է որոշակիացնում Մարտիրոս Աբրահամյանի հետեւյալ վկայությունը.

«Մեր ուժերն էին

Պարտիզանական հեծեալ գունդը - չորս հարիւրեակ - շուրջ 650 թուով սուր, գնդ. Զալինեանի գնդից՝ 100 սուր, Արամի մոտ եղած ձիաւորները ապարանցի Մաթէոսի[1] գլխավորութեամբ 20 սուր, հետեւակ 6-րդ գնդից մէկ գումարտակ՝ շուրջ 300 սուին, ապարանցի Սէթոյի (չամուլեցի Սեդրակ Զալալյան - Հ.Գ.) տեղացի ձիաւորները՝ 30-35 սուր... մօտաւորապէս 800 սուր եւ 300 սուին, չհաշուած տեղացիներից կազմակերպուած 1000 հոգանոց հետեւակազօրը»[2]:

Պարտիզանական հեծյալ գնդի հրամանատարն էր գնդապետ Կորոլկովը, նույն գնդի չորս հարյուրակների հրամանատարներն էին Մարտիրոս Աբրահամյանը, Կուռո Թարխանյանը, գանձակեցի Զեմլյակը (Արտեմ Նանումյան) եւ Սերյոժա Փիրումյանը: Երկրորդ հեծյալ գնդի հրամանատարն էր գնդապետ Զալինյանը, իսկ հետեւակային 6-րդ գնդի հրամանատարը՝ գնդապետ Դոլուխանյանը, հրետանային մարտկոցինը՝ Սուլթան-Շահը:

Թվարկված վերոհիշյալ մարտական ուժերին Ապարանի ճակատում նրանց են միանում Սեդրակ Զալալյանի եւ Արսեն Տեր-Պողոսյանի գլխավորած աշխարհազորային մարտախմբերը:

Մի փոքրիկ, բայց էական պարզաբանում:

Անդրադառնալով Բաշ-Ապարանի ուղղությունում ինքնապաշտպանության կազմակերպման «իրողության» վերլուծությանը, Հ.Թուրշյանն իր «Սարդարապատի հերոսամարտը» աշխատությունում գրում է. «Բաշ-Ապարանի ճակատում, որտեղ ոչ մի կադրային հայ զորք չկար, դիմադրությունն, ինչպես արդեն ասել ենք, սկսել էին Քյուլուջա (ներկայիս Վարդենիս - Հ.Գ.) գյուղը հավաքված աշխարհազորայինները՝ տեղացիներ կոմունիստ Դավիթ Մելիքսեթյանի եւ Մաթեւոս Հովհաննիսյանի ղեկավարությամբ: Մայիսի 23-ին իրենց խմբերով նրանց օգնության են հասնում Արսեն աղան (Տեր-Պողոսյան) եւ Սեթոն (Սեդրակ Զալալյան)»[3]:

Մանոթանալով Թուրշյանի կողմից Բաշ-Ապարանի ինքնապաշտպանության կազմակերպմանը տրված գնահատականին, բնականո-

---

[1] Հարությունյան Ա., «Թուրքական Ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները», Երևան, 1984, էջ 177:

[1] Ապարանցի Մաթեոս (քուչակցի Մաթեւոս Հովհաննիսյան), այդ ժամանակ Երեւանի Ազգային խորհրդի հատուկ հանձնարարություններ կատարող զորախմբի (գվարդիայի) հրամանատարն էր ու միաժամանակ Ապարանի ցավառակի պատասխանատուն:

[2] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, նշվ. աշխ., էջ 401:

[3] Թուրշյան Հ., նշվ. աշխ., էջ 163-164:

բեն ծագում են հետեւյալ հարցումները, որոնց պատասխանը բացակայում է հիշյալ աշխատությունում:

1. Բացի հեղինակի կամքով կոմունիստ հորջորջված Դավիթ Մելիքսեթյանից եւ Մաթեւոս Հովհաննիսյանից, ովքե՞ր էին իր իսկ կողմից թվարկված Բաշ-Ապարանի ինքնապաշտպանության մյուս կազմակերպիչները:

2. Ի՞նչ միջոցներով եւ ինչպե՞ս նրանց հաջողվեց մեկ երկու օրվա ընթացքում գինել եւ կազմակերպել տեղի աշխարհազորային զինաջոկատներին, որոնք կարողացան մինչեւ հայկական կանոնավոր զորամասերի ճակատ հասնելը դիմադրավել եւ կասեցնել թուրքական մի ամբողջական կանոնավոր դիվիզիայի հարձակումները:

Ամենեւին չնպատակադրվելով թերագնահատելու Բաշ-Ապարանի ինքնապաշտպանության կազմակերպման գործում ապարանցի աշխարհազորայինների հիրավի հերոսական գործողությունները, այնուամենայնիվ, հարկ է նշել, որ Թուրշյանի վերոհիշյալ պնդումներում ակնհայտ է դեպքերի ու փաստերի անիրազեկություն եւ միտումնավոր խեղաթյուրում:

Կոմունիստ պատմաբանը Բաշ-Ապարանի հերոսամարտի կազմակերպմանը վերագրելով բացառապես ժողովրդական բնույթ, ընթերցողից թաքցնում է, որ իր թվարկածներից Սեթոն (Սեդրակ Զալալյան) եւ Արսեն աղան (Սամսոն Տեր-Գողոսյան - Հ.Գ.) Հ.Յ.Դաշնակցության անդամներ էին, որոնք իրենց մարտական խմբերով այդ ուղղությունում էին գտնվում Երեւանի Հատուկ կոմիտեի, Արարատյան ռազմաճակատի հրամանատարության եւ անձամբ Արամ Մանուկյանի գիտությամբ ու հրահանգով:

Վկայակոչենք Հ.Թուրշյանի հիշատակածներից մեկի՝ Սեթոյի հուշագրությունից մի հատված.

«Երբ տաճիկները սկսեցին առաջանալ Ղարսի վրայ եւ ներսից թուրք ազգաբնակչությունը սպառնական դիրք բռնեց դէպի նորակազմ հայկական կառավարությունը- Էջմիածնում Ազգային Խորհուրդը հրաւիրեց ինքնապաշտպանության խորհուրդ Սիլիկեանի նախագահութեամբ: Այդ խորհուրդը ինձ առաջարկեց կազմակերպել կամաւորական մի զօրամաս: Որոշեց լիազօրութեան սահմանները եւ հրահանգեց Էջմիածնի գաւառի քաղաքացիական հիմնարկութիւններին ենթարկուել իմ կարգադրութիւններին ինքնապաշտպանութեան վերաբերեալ բոլոր հարցերում: Սիլիկեանի տուած հրահանգների մի մասն էին միայն կատարել, երբ տաճիկները գրաւեցին Ղարսը եւ սպառնում էին Ալեքսանդրապոլին: Արամը հեռագրեց ինձ, դադարեցնել գործողութիւնները, որպէսզի տաճիկներին առիթ չը տանք մեր ներքին գործերին խառնուելու: Միաժամանակ հրահանգեց ուժեղացնել իմ զօրամասը թէ մարդկանցով եւ թէ ռազմամթերքով: Ալեքսանդրապոլից ինձ ուղարկեցին 4 գնդացիր եւ այլ ռազմամթերք եւ հրահանգեցին միշտ պատրաստ սպասել Նազարբէգեանի հրամանին: Այնինչ Ալեքսանդրապօլը անսպասելի կերպով պարտուեց եւ մեզ ոչ մի հրահանգ չը տրուեց: Այդ ժամանակ ինքնագլուխ մենք դիմադրեցինք Ալեքսանդրապօլից առաջացող տաճիկներին, նոյնիսկ հակառակ գեներալ Սիլիկեանի կամքին, մինչեւ որ Արամը որոշեց զօրք ուղարկել Ապարանի սահմանները դիմադրելու համար»[1]:

Քանի որ մինչեւ Բաշ-Ապարանի տարածքում թուրքական 9-րդ դիվիզիայի հայտնվելը մարտական գործողությունները գլխավորապես ընթանում էին Արարատյան դաշտում, գեներալ Սիլիկյանի գլխավորած ռազմական շտաբը եւ Արամ Մանուկյանը, հեռատեսորեն գնահատելով Բաշ-Ապարանի կողմից մայրաքաղաքին սպառնացող իրական վտանգը, այդ ուղղությունն են ուղարկում վերոհիշյալ գործիչներին: Եվ նրանք իրենց մարտական խմբերի աջակցությամբ կարողանում են ի հաշիվ Ապարանի գյուղերի բնակչության, կազմակերպել ինքնապաշտպանական ջոկատներ, որոնք անգնահատելի ծառայություն մատուցեցին Բաշ-Ապարանի ճակատամարտի ողջ ընթացքում:

Երեւանում հրատարակվող «Զանգ» լրագիրը պատշաճ իրատեսությամբ արժեվորելով Բաշ-Ապարանի ճակատամարտում Ապարանի գավառակի աշխարհազորայինների ինքնապաշտպանական մարտերի նշանակությունը՝ գրում է. «Մարդկային տուած այն զոհերը, որ ունեցաւ այս պատերազմում Աբարանը, մի գրաւական են նրա արիութեան ու տոկունութեան եւ այն հերոսական կռիւները, որ ժողովուրդն ինքը առանց որեւէ դրսի ուժի, քաջաբար կազմակերպեց ու տուեց Բաշ-Աբարանի կողքերում ընկած բարձունքների վրա, մինչեւ կանոնաւոր ուժի առաքումը, տաճիկների հետ շպրտումը դէպի Միլիքէնդ՝ փայլուն ապացոյցներ են նրա հայրենասիրութեան եւ քաջութեան»[2]:

Դրոն իր զորախմբով Բաշ-Ապարանի ճակատ է հասել մայիսի 23-ի երեկոյան՝ մայրամուտից 1-2 ժամ առաջ: Ավելի ստույգ, որպես առաջապահ ուժ, այդ նույն օրը, նույն ժամին առաջինը Բաշ-

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 16, գ. 5, էջ 3:
[2] «Զանգ», Երեւան, 1918, սեպտեմբերի 24:

Ապարանի ճակատ է հասել հայկական 6-րդ գնդի պոդպորուչիկ Մամիկոն Իսահակի Տեր-Սարգսյանի (ծնվել է Ելիզավետապոլի նահանգի Էրքեջ գյուղում (ներկայիս Շահումյանի շրջան)-Հ. Գ.) գլխավորած 4-րդ վաշտը[1]:

Վաշտի հրամանատարի վկայությամբ, Բաշ-Ապարանի ճակատում մարտնչող Դրոյի գլխավորած զորախմբի գլխավոր հարվածային ուժը՝ 6-րդ գնդի վաշտերը զինված էին «...երեք գլխանի ֆրանսիական «Լեբել» սիստեմի հրացաններով, սակայն առանց սվինների, իսկ գնդացրորդները, հետախույզները և հրետանայինները ռուսական կարաբիններով: Գնդացրային մեկ կոմանդան զինված էր ռուսական սիստեմայի «Մակսիմ» ծանր գնդացիրներով, իսկ մյուսը՝ անգլիական «Վիկերս» սիստեմայի եռոտանի գնդացիրներով»[2]:

Զորախմբի հայտնվելը ճիշտ ժամանակին էր: Այդ օրը աշխարհազորայինները չափազանց ծանր ու համառ մարտեր էին մղել: Քաջաբար դիմադրելով հրանոթների եւ գնդացիրների աջակցությամբ հարձակվող թուրք զորաջոկատների գրոհներին՝ աշխարհազորայինները, տեղի տալով հակառակորդի գերակշռող ուժերին, հարկադրված նահանջել են պաշտպանության երկրորդ բնագիծ: Թուրքերը՝ շրջանցելով Ապարանը եւ հարձակումը զարգացնելով երկու ուղղությամբ, փորձել են թեւերից տեղացող հարվածներով ընկճել աշխարհազորայինների դիմադրությունը:

Պատմում է 6-րդ գնդի 4-րդ վաշտի հրամանատար՝ վերոհիշյալ պոդպորուչիկ Մամիկոն Իսահակի Տեր-Սարգսյանը. «Մայիսի 23-ին, ժամը երկուսին վաշտը Աշտարակից դուրս եկավ դեպի Բաշ-Ապարան... Գումարտակը շարժվում էր Բաշ-Ապարան տանող խճուղով, իսկ գնդի հետախույզները մեզանից դեպի Ղարաքիլիսա (Կիրովական) ընկած բարձունքների վրա էին՝ անտառի փեշով քողարկված...

Երբ բավականին մոտ էինք Բաշ-Ապարան գյուղին, պարզվեց, որ թշնամու հեծյալ հետախույզները թվով 15-20 հոգի մտել են գյուղը եւ սկսել են հավերի որսը... Թշնամու հետախույզների հավերով զբաղվելը վաշտին հնարավորություն տվեց աննկատելի կերպով մոտենալ փոքր մասերով գյուղից դեպի հարավ-արեւելք Արագածի փեշերից կախված լեզվակին եւ ամրանալ նրա վրա... Դեռ չէինք հասցրել անգամ ստուգելու յուրաքանչյուր զինվորի ընտրած բնակետի ապահովությունը թշնամու կրակից, երեւաց թշնամին: Նա շարժվում էր խճուղով դեպի Բաշ-Ապարան:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 403, ց. 1, գ. 40, թ. 11-12:
[2] Նույն տեղում, թ..2-3:

Թշնամու զորասյունի գլուխը մոտենում էր մեզ, իսկ պոչը պերեվալից չէր կտրվում: Վաշտի քանակը, նրանց արանքներում շարժվող գնդացիրները՝ ձիերու վրա եւ հրանոթները ապացույց էին, որ շարժվողը գունդ էր:

Օրը վերջանալու վրա էր: Թշնամուն պետք է թույլ տայինք մոտենալու մեզ մինչեւ 150-200 քայլ եւ նոր միայն 160-170 հրացանից եւ երկու ծանր գնդացիրներից հանկարծակի կրակ թափենք թշնամու գլխին:

... Վաշտի հանկարծակի կրակը մեխեց թշնամուն տեղում, մի քանի րոպե նրանք քարացած գլորվում էին գետին եւ վերջը խելքի գալով՝ տեղից շարժվեցին:

... 10-15 րոպե անց միայն նրանց հետին ստորաբաժանումներից բացազատվեցին երկու վաշտ խճուղով աջ եւ ձախ ու սկսեցին հարձակվել մեր ուղղությամբ»[1] :

Բաշ-Ապարանի ուղղությամբ հայկական կանոնավոր զորամասերի հայտնվելը թուրքերի համար անսպասելի էր: Մայիսի 23-ի երեկոյան հայկական զորամասերի հարվածներից հանկարծակի եկած թուրքերը՝ տալով զգալի կորուստներ, այնուամենայնիվ, կարողացել են վերախմբավորել իրենց ուժերը եւ գնդացիրների ու թնդանոթների կրակի աջակցությամբ ստիպել հայկական ուժերին նահանջելու դեպի Արագածի լանջերը:

«Զյունոտ փեշերին չհասած,-շարունակում է պոդպորուչիկ Տեր-Սարգսյանը,-թշնամին գրավեց մեր թողած լեզվակը, եւ մութը ընկավ»[2]:

Ըստ պոդպորուչիկ Տեր-Սարգսյանի՝ մայիսի 24-ի դրությամբ հայկական մարտական ուժերը Բաշ-Ապարանի ռազմաճակատում տեղաբաշխվել են հետեւյալ դասավորությամբ. « Լենինական տանող խճուղուց ձախ մինչեւ Արագածը ներառյալ տրված էր 6-րդ գնդին, որի հրամանատարն էր պոլկովնիկ Դոլուխանովը (հայ), աջ թեւը Ալիքուչակ գյուղից դեպի Ղարաքիլիսա (Վանաձոր) ընկած անտառապատ բարձունքները՝ հանձնված էին հեծելազորայիններին, որոնց հրամանատարներն էին պոլկովնիկներ Զալինովը (հայ) եւ Կորոլկովը (ռուս), իսկ նրանց եւ 6-րդ գնդի արանքում պետք է գործեին մնացած խմբերը»[3]:

Մայիսի 23-ի երեկոյան տեղի ունեցած մարտերը դեռեւս բավարար պատկերացում չէին կարող տալ թուրքական զորամասերի քա-

[1] Նույն տեղում, թ. 12-13:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

նակի, նրանց զինվածության հագեցվածության եւ մարտական պատրաստվածության ու որակների մասին:

Զորախմբերի եւ արդեն նրան միացած աշխարհազորայինների անելիքները ավելի որոշակիացնելու, հաջորդ օրվա մարտական խնդիրները մշակելու համար Դրոն գումարում է զինվորական խորհրդակցություն:

«Մայիսի 23-ից 24-ը, - գրում է պոդպորուչիկ Տեր-Սարգսյանը, - գիշերը տեղի է ունենում բարձրաստիճան հրամանատարների խորհրդակցություն Դրոյի գլխավորությամբ, որտեղ ընդունվում են որոշումներ մայիսի 24-ի անելիքների մասին: Տրվում են կոնկրետ խնդիրներ»[1]:

Քանի որ Ապարանյան զորախմբի հրամանատարության շրջանում դեռեւս տիրում էր այն նախկին կարծիքը, ըստ որի իրենց ռազմաճակատում կռվում էին ընդամենը թուրքական երկու գումարտակներ, ապա որոշվում է ուժերի անհրաժեշտ վերախմբավորում կատարելուց հետո անցնել հարձակման, դրանով իսկ ժամանակ շահել, մինչեւ մյուս զորախմբերի տեղ հասնելը: Քանի որ զորամասերն իրենց թվակազմով այնքան էլ բազմամարդ չէին, ապա որոշվում է այն համալրել ի հաշիվ աշխարհազորայինների:

Սեդրակ Ջալալյանի վկայությամբ «երբ Դրոն զօրքով եկաւ Աբարան, իմ 1200 զինուորներից (նկատի ունի աշխարհազորը - Հ.Գ.) վերցրեց 700 հոգի, լրացրեց ուրիշների զորամասերը, իսկ 500 զինուորներ ու իմ 4 գնդացիրները թողեց իմ հրամանի տակ»[2]:

Ի հաշիվ աշխարհազորայինների համալրելով սակավաթիվ զորավաշտերի մարտաշարքերը՝ Ապարանյան զորախումբն անմիջապես դիմում է մարտական գործողությունների[3]:

Իսկ ընդամենը երկու օր անց գեներալ Մ. Սիլիկյանի շտաբին հայտնի է դառնում, որ Բաշ-Ապարանի ուղղությամբ թուրք հրամանատարությունն արդեն կենտրոնացրել էր լրացուցիչ մարտական ուժեր:

«Հավաստի տեղեկությունների համաձայն,- մայիսի 25-ի թվագրված 22 հրամանում նշում է գեներալ Սիլիկյանը, - մայիսի 23-ի երեկոյան Բաշ-Ապարանից հյուսիս-արեւմուտք Գյոզդարայի, Կիրխի, Դագերմանի, Հաջի-Խալիլի շրջանում հայտնվել են 106 գնդի երեք գումարտակներ երկու հրանոթներով»[4]:

---

[1] Նույն տեղում:
[2] ՀՅԴ ԿԱ, թղ. 41, գ. 5, էջ 3:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 43, թ. 9-10, էջ 4:

«Հայերի մասնակցությունը համաշխարհային պատերազմի ժամանակ Կովկասյան ճակատում» գրքում նույնը հաստատում է գեներալ Գ.Ղորղանյանը: Նրա վկայությամբ՝ «Արդէն մայիսի 23-ին Բաշ-Աբարանի շրջանին մէջ Երեւան հանուած էր Գ. թուրքական զօրաբաժինը, որը՝ Ա. հայկական զարկորդաց զօրաբաժնի մասերը Ղարաքիլիսէ նահանջելէ ետքը՝ կը յառաջանար Համամլու կայարանէն:

Այսպէսով, զօրավար Սիլիկեանը, սպառնալով Ալեքսանդրապոլի ուղղութեամբ թուրքերու կռնակին, իր կարգին կարող էր կտրուել Երեւանէն, եթէ Դրօյի ջոկատը չկասեցնէր թշնամիի յառաջխաղացումը...»[1]:

Անհրաժեշտ էր ժամանակ շահել, մինչեւ մյուս զորախմբերը տեղ կհասնեին: Ահա այդ նպատակով՝ մայիսի 25-ին Դրոն եղած ուժերով հարձակվում է հակառակորդի վրա՝ հետ շպրտելով թուրքերին, գրավում է Ապարանը, եւ զարգացնելով հարձակումը՝ հասնում մինչեւ եզդիների Ղոնդաղասազ գյուղը:

«Մայիսի 20-ին թէ 21-ին,-գրում է Մարտիրոսը,-թողնելով Սուրմալուն, 23-ին մենք արդեն Ջամալու գիւղումն էինք: Մայիսի 24-ին հետախուզութիւն է կատարւում դէպի Դանագիրմազը, իսկ 25-ին անցնում ենք յարձակման»[2]:

Մայիսի 25-ին հայկական բանակային կորպուսի ռազմակայանից Հայոց Ազգային Խորհուրդը ստանում է հետեւյալ հեռագիրը. «Դրոն հարձակվեց եւ Բաշ-Ապարանի հյուսիսային կողմում ջախջախեց թուրքերին: Ղոնդաղասազ գյուղի մոտակայքում հեծելազորի (Կորոլկովի հեծելագնդի Զեմլյակի գլխավորած հարյուրակ-Հ. Գ.) գրոհի հետեւանքով թրատված են 30 ասկյար եւ մեկ սպա»[3]:

Այս իրողությունը վերոհիշյալ գրքում հաստատում է նաեւ գեներալ Գ. Ղորղանյանը. «Մայիսի 24-ին Դրոն հասավ Ալիքուշակ գյուղը եւ շարունակելով առաջխաղացումը՝ մայիսի 25-ին հարձակվեց թուրքական 3-րդ դիվիզիայի առաջապահ զորքի վրա Բաշ-Ապարանի հյուսիսում: Այդ ճակատամարտի ընթացքում հեծելազորի 2-րդ ջոկատը Ղոնդաղասազ գյուղի մոտ շեշտակի հարձակվեց թշնամու վրա, որը կորցրեց 30 զինվոր եւ 1 սպա»[4]:

Մայիսի 25-ի հայկական զորախմբերի ձեռնարկած հարձակման հաջողությունը չափազանց կարճատեւ էր: Թուրք հրամանատարությու-

---

[1] «Հայրենիք» ամսագիր, 1928, թիւ 5, էջ 125:
[2] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, նշ. աշխ., էջ 407-408:
[3] ՀՅԴ ԿԱ, թղ.503, գ. 14, էջ 20:
[4] «Հայրենիք» ամսագիր, 1928, թիւ 8, էջ 128:

նը՝ մարտադաշտ նետելով թարմ ուժեր, հաջորդ օրը՝ վաղ առավոտյան հուժկու հակագրոհ է ձեռնարկում հայկական զորախմբերի դեմ:

«Առաջին անգամ, - խոստովանում է Դրոն, - մի յարձակում գործեցինք, յաջող, բայց յաջող էլ ետ շպրտեցին մեզ...

Էնպէս ետ շպրտեցին, որ Բաշ-Ապարանն էլ ձեռքիցս առան»[1]:

Առաջին անհաջողությունը լավ դաս էր: Պարզվում է, որ Բաշ-Ապարանի ուղղությամբ գործում են ոչ թե երկու գումարտակներ, ինչպես նախկինում կարծում էին, այլ թուրքական 9-րդ դիվիզիայի ողջ զորագնդերը, իսկ թուրքական դիվիզիաները պատերազմական իրավիճակում, որպես օրենք, համալրված էին եւ բավականին լավ զինված:

Ապարանի ուղղությունում հայտնված 9-րդ դիվիզիան մասնակցել էր 1916 թ. գարնանը տեղի ունեցած Գալլիպոլիի նշանավոր ճակատամարտին, որտեղ թուրքական բանակը կարողացել էր հաղթել անգլո-ֆրանսիական բանակին: Ճիշտ է, այդ դիվիզիան, որի հրամանատարը Գալլիպոլիի ճակատամարտի մասնակից գեներալ-լեյտենանտ, փորձառու Էսադ փաշան էր, նախորդ մարտերում զգալի կորուստներ էր կրել, սակայն նրա կազմում մարտնչում էին մեծ թվով սպաներ ու զինվորներ, որոնք, անցնելով պատերազմի բովով՝ ձեռք էին բերել կռիվներ վարելու փորձառություն:

Չնայած այն հանգամանքին, որ Գալլիպոլիի նշանավոր ճակատամարտում թուրքական զորքերի հրամանատարները թուրք զինվորականներն էին, սակայն ճակատամարտը իրականում ղեկավարել են գերմանացի զինվորականները: Իսկ 9-րդ դիվիզիայի հրամանատարը՝ գեներալ Էսադ փաշան, նույնպես մասնակցել էր Գալլիպոլիի ճակատամարտին ու եղել է թուրքական զորքերի հրամանատարության գործողությունները համադրող գեներալ Ֆոն Սանդերսի մերձավորագույն օգնականը: Այնպես որ հանձին գեներալ Էսադ փաշայի, Դրոն գործ ուներ պատերազմի բովով անցած պրոֆեսիոնալ ու փորձառու զինվորականի հետ:

Ի՞նչ էր իրենից ներկայացնում թուրքական 9-րդ դիվիզիան:

Մարտիրոս Աբրահամյանի հավաստմամբ՝ «Բաշ-Ապարանում կենտրոնացված էր մի զորամաս՝ 9-10 հազար հոգուց բաղկացած: Նույն թվով տաճկական ուժեր կային նաեւ Սարդարապատի եւ Ղարաքիլիսայի ճակատում»[2]:

Անդրադառնալով Ապարանյան զորախմբի առաջին հարձակողական գործողությանը՝ գեներալ Նազարբեկյանը նշում է. «Դրոն

[1] «Հայրենիք» օրաթերթ, 1956, մայիսի 27:
[2] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, նշ. աշխ., էջ 407-408:

թուրքերի հետ առաջին հանդիպական մարտը տվել է Բաշ-Ապարանի մոտերքում: Զգիմանալով թուրքերի հարձակմանը՝ զորախումբը նահանջել է դեպի հարավ եւ դիրքավորվելով Ղազնաֆարի մերձակա բարձունքներում եւ քարանձավներում կարգավորել է իր մարտական ուժերը եւ սպասել համալրման»[1]:

Միաժամանակ, մյուս՝ Ղարաքիլիսայի եւ Սարդարապատի ուղղություններում ընթացող կռիվներում, ի տարբերություն Բաշ-Ապարանի ճակատի, մայիսի 26-ի դրությամբ հաջողությունը առավելապես հայկական զորքերի կողմն էր: Մայիսի 27-ին Հայկական բանակային կորպուսի շտաբի պետ գեներալ Վիշինսկին իր պաշտոնական զեկուցագրում հաղորդում է. « Ալեքսանդրապոլի ուղղությամբ մեր զորքերը Ղշլաղի մօտ, կանգնեցնելով թշնամու առաջխաղացումը մայիսի 25-ին, որը գերիների ասելով, նպատակ ունէր Ղարաքիլիսայի գրաւումը, 26-ի առաւոտեան իրենք յարձակում գործեցին եւ թշնամու աջ թեւի յետէն անցան Գետդա-Մայմէխ սարի վրայով, չնայելով տեղի անմատչելի դժուարութիւններին մեր յարձակումը յաջողութեամբ պսակուեց եւ երեկոյեան դէմ, յամառ կռուից յետոյ յետ մղուեց Հաջի-Ղարայից եւ այն բարձունքները, որոնք գտնուում են այդ գիւղից դէպի արեւելք: Միաժամանակ յարձակման դիմեցինք եւ ճակատի ուղղութեամբ ուղիղ հարուածով գրաւեցինք 650-ի շրջանում ընկած բարձունքները: Մեր կողմից հետապնդած թշնամին փախուստի դիմեց...

Երեւանեան ուղղութեամբ մայիսի 26-ի վաղ առաւօտեան թշնամին գերազանց ոյժերով յարձակման դիմեց Բաշ-Աբարանի զօրամասի դէմ եւ ձախ թեւի կողմից եւ ձախ թեւից մեր թիկունքն էր անցնում: Որովհետեւ օժանդակ ուժեր դեռ չէին հասել եւ չկամենալով շրջապատուած լինել, մեր զօրամասը յետ նահանջեց Կազինաֆար-Ղարաքիլիսա գիւղի շրջանը, որտեղ միացաւ օգնութեան եկող զօրամասին: Նահանջի ժամանակ մենք թողինք մի թնդանօթ:

Սարդարապատի ուղղութեամբ թշնամու աջ թեւը սկսեց յետ նահանջել Արաքս կայարանից: Մեր զօրամասերը ճակատի ամբողջ ուղղութեամբ վճռական յարձակման դիմեցին»[2]:

Մայիսի 26-ին թուրքերը զարգացնելով ձեռք բերած հաջողությունը՝ հասնում են մինչեւ Ղազնաֆար-Ղարաքիլիսա, Ալիքուշակ եւ Զամալու (Քասախ) գյուղերի մատույցները, ուր նրանց կազմ ու պատրաստ սպասում էին պորուչիկ Սահակյանի եւ գնդապետ Կորոլ-

[1] ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 43, թ. 9-10, էջ 4:
[2] Նույն տեղում:

կովի պարտիզանական հեծյալ, Կուռո Թարխանյանի եւ բաշգառնեցի Մարտիրոսի զորավաշտերը:

«Մեր կռիւները,-գրում է Արշակ Ջամալյանը,-մայիսի 26-ին հասել էին իրենց գագաթնակէտին: Այդ օրը Դրօն Ղարաքիլիսա-Կազինաֆար գծի վրայ կատաղի կռիւներ էր մղում Համամլուից եկած թիւրքական զօրամասերի հետ՝ նրանց դէպի Դուզքենդ չպրտելու համար»[1]:

Ճակատամարտի ամենավճռող եւ ամենադրամատիկական պահերից մեկն էր: Եթե Ապարանյան զորախումբը չկարողանար պաշտպանության այդ բնագծում կանգնեցնել դեպի Երեւան շտապող, դիվիզիայի հիմնական ուժերով հարձակվող հակառակորդին, ապա թուրքերը դուրս կգային Աշտարակ Երեւան տանող խճուղին եւ դժվար է ասել, թե այնուհետեւ հայկական մարտական ուժերն ինչպես կկարողանային կանգնեցնել նրանց առաջխաղացումը: Քաջ գիտակցելով իրենց վստահված ռազմաճակատի կենսականորեն անհրաժեշտ նշանակությունը՝ հայկական զորավաշտերը դրսեւորելով մեծագույն կամք եւ հաստատակամություն կանգնեցնում են հակառակորդի հարձակումը: Թուրքական զորքերի առաջխաղացման բոլոր փորձերը ձախողվում են: Դրոյի զորավաշտերը, ապարանցի աշխարհազորայինների համագործակցությամբ, աննկուն պաշտպանությամբ խափանում են թուրքական զորքերի գրոհները:

«... տաճկական զօրախմբերը, - նշում է Մարտիրոսը, - դուրս են գալիս Ապարանից, բարձրանում, իջնում Ջամբուլու գիւղը: ...մէկ ջոկատ դիրք պիտի բռնէր Ջամբուլի դիմաց, մեր ձեռքին պահելու համար խճուղին, միւս ջոկատը դիրք պիտի գրաւէր Ալիքուչակի դիմաց, նորեն խճուղին անվտանգ պահելու դիտումով, իսկ երրորդը պիտի գնար Կազանաֆարից շարժուած թշնամու դէմ: ...Ջամբուլու հասած թշնամին ուզում էր բռնել խճուղին, երբ առաջին ջոկատը պաշտպանութեան դիմեց, իսկ երկրորդ ջոկատն ամրանալով Ալիքուչակի դիմացի քարքարոտ մի կէտում... արգելելով նրա յառաջխաղացումը դէպի խճուղին...»[2]:

Հայ զորախմբերի առաջին հարձակումները թեեւ ձախողվեցին, բայց ձեռք բերվեց ամենակարեւորը՝ Դրոն կարողացավ մի փոքր ժամանակ շահել:

1918 թ. մայիսյան կռիվներին ըստ էության հայության մղած գոյամարտի երեք հիմնական (Սարդարապատ, Ղարաքիլիսա, Բաշ-Ապարան) եւ փոխկապված ուղղություններն էին: Ցուրաքանչյուր

[1] Նույն տեղում, գ. 12, թ. 2:
[2] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, նշ. աշխ., էջ 407-408:

ուղղության անհաջողությունը կարող էր ողբերգական հետեւանքներ ունենալ հայ ժողովրդի գոյապայքարի վերջնական արդյունքի վրա: Այս առումով տվյալ ժամանակահատվածում Բաշ-Ապարանի ճակատամարտը՝ իր պատմական դերով ձեռք է բերում արտակարգ կարեւորագույն նշանակություն:

Բաշ-Ապարանի ճակատում թուրքական 9-րդ դիվիզիայի հիմնական ուժերի հայտնվելը շատ ծանր կացություն է ստեղծում Ապարանյան զորախմբի համար: Անկասկած, չափազանց դժվար էր փոքրաքանակ ուժերով դիմակայել բազում ճակատամարտերի փորձառությամբ անցած մի ամբողջ կադրային դիվիզիայի գրոհներին: Հայկական բանակի հրամանատարությունը, այս անգամ եւս գտնվելով պատշաճ բարձրության վրա ճիշտ գնահատելով Բաշ-Ապարանի ուղղության կարեւորությունն ու այնտեղ ստեղծված տագնապալի իրավիճակը, որոշում է ուժեղացնել Ապարանյան զորախումբը: Հայկական բանակի հրամանատարության կայացրած այդ չափազանց կարեւոր ու անհրաժեշտ որոշմանը վճռականապես նպաստել են Սարդարապատի ճակատում մեր զորքերի ձեռք բերած ակնառու նվաճումները: Եթե Սարդարապատի ուղղությունում այդ օրերին հայկական զորքերի հարձակումները չպսակվեին հաջողությամբ, ապա, բնականաբար, Երեւանյան զորախմբի մարտական ուժերը կհայտնվեին դժվարին իրավիճակում եւ դժվար է ասել, թե հայկական բանակի հրամանատարությունը ինչպես եւ ինչ զորամասերով կկարողանար ուժեղացնել Բաշ-Ապարանի ռազմաճակատը: Իսկ իրականում այլընտրանք չկար եւ չէր կարող լինել, եթե հանկարծ թուրքերն ընկճեին Ապարանյան զորախմբի դիմադրությունն ու շարժվեին դեպի Երեւան, ապա բնականաբար ի չիք կդառնային եւ կփլուզեին Սարդարապատի ուղղությունում ձեռք բերած նվաճումները:

Սարդարապատի ուղղությամբ մայիսի 22-24-ին ձեռնարկած հաղթական հարձակումները եւ ռազմաճակատում զորագնդերի հետագա գործողությունների համար ստեղծված բարենպաստ պայմանները հնարավորություն ընձեռեցին որպեսզի հայկական բանակի հրամանատարությունը կարողանա լրացուցիչ մարտական ուժեր տեղափոխել Բաշ-Ապարանի ճակատ:

Երեւանյան զորախմբի հրամանատար գեներալ Սիլիկյանի մայիսի 25-ի թվագրած թիվ 22 հրամանի համաձայն, Ապարանյան հատուկ զորախումբը ստանում է հետեւյալ հանձնարարությունը.

«Դրոյի հատուկ զորախմբին.

Շարունակել հակառակորդի դիրքերի ուժեղ հետախուզումը Գեզալ-Դարա, Հաջի-Խալիլ շրջանում: Գնդապետ Դոլուխանովի զորա-

այունների մոտենալուն պես դիմել վճռական հարձակման եւ ջախջախել ու Արփաչայից այն կողմ շպրտել հակառակորդին: Հաջողության դեպքում շարունակել հետապնդումը, մինչեւ նրա լրիվ ոչնչացումը:

Հաստատել ամենահուսալի կապ Երեւանյան զորախմբի հետ Աշտարակի միջոցով, որտեղ կա զինվորական հեռագրատուն:

Երեւանյան զորախմբի պետ գեներալ-մայոր Սիլիկով»[1]:

Մայիսյան հերոսամարտերին վերաբերող փաստաթղթերի, հուշագրությունների, զինվորական հրամանագրերի ու ռազմաճակատի տարբեր հատվածներից առաքված ամփոփագրերի ուսումնասիրությունն ու վերլուծությունն ակնհայտորեն մատնանշում են, որ փոխհամագործակցությունը Երեւանյան զորախմբի հրամանատարության եւ ռազմաճակատների միջեւ, մասնավորապես Բաշ-Ապարանի, որոշ բացթողումներով հանդերձ, գտնվել է պատշաճ եւ անհրաժեշտ բարձրության վրա: Երեւանյան զորախմբի հրամանատար Սիլիկյանն ու նրա գլխավորած շտաբը, մարտերի ողջ ընթացքում դրսեւորելով բարձր կազմակերպվածություն եւ ուշի-ուշով հետեւելով ռազմաճակատի տարբեր ուղղություններում ընթացող մարտական գործողություններին, կարողացել են ճիշտ գնահատել տիրող կացությունն ու ընդունել համապատասխան վճիռներ:

- Նույն, թիվ 22 հրամանագրով գեներալ Սիլիկյանը Բաշ-Ապարանի եւ Սարդարապատի զորախմբերի կայուն ռադիոկապ հաստատելու, ռազմաճակատներին մարտնչող զորամասերին ժամանակին զինամթերքով, պարենով ապահովելու համար, կարգադրում է.

«Կապի պոդպորուչիկ Տեր-Մկրտչյանին. հաստատել ռադիոկապ Բաշ-Ապարանի եւ Սարդարապատի զորքերի հետ, որի համար Բաշ-Ապարանի հատուկ զորախմբի պետ Դրոյի տրամադրության տակ ուղարկել ռադիոկայան: Հաստատել զինվորական կայուն հեռագրակայան Աշտարակում եւ Սարդարապատի զորախմբի շտաբում.

- Հրետանու պետ գնդապետ Արարատովին. կազմակերպել Դրոյի զորախմբին փամփուշտների առաքումը՝ ի հաշիվ զինվորական պահեստների...

- Երկրորդ կարգի գումակ Դրոյի զորախմբում չկա...

- Բաշ-Ապարանի ուղղությունը մթերքով եւ ջրով ապահովելու են ինտենդանտական զորամասերի եւ բեռնատարների միջոցով...»[2]:

Իսկ նույն ժամանակամիջոցում Բաշ-Ապարանի ռազմաճակատում Դրոյի զորաջոկատները դիրքավորվելով Ջամուլուից (Քասախ)

[1] ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 43, թ. 9-10, էջ 4:
[2] Նույն տեղում:

մինչեւ Ալիքուշակ եւ Ղազնաֆարի (Արագած) հարակից բարձունքներում, պատրաստվում էին վճռական գոտեմարտի:

Մայիսի 26-ի դրությամբ ռազմաճակատի գիծն անցնում է վերոհիշյալ պաշտպանական բնագծերով: Նույն օրը Բաշ-Ապարանի ճակատ են հասնում Դոլուխանյանի 6-րդ գնդի հիմնական ուժերը (երեք գումարտակ - 1800 սվին, որից 400-ը մայիսի 23-ի երեկոյան արդեն ճակատում էին), գնդապետ Սակինի գումարտակը (400 սվին), Մակեդոնի հարյուրակը (150 սվին), Ջհանգիր աղայի եզդիների հեծելազորը (300 հեծյալ) եւ շտաբս-կապիտան Իգիթխանյանի հրետանային մարտկոցը (4 հրանոթ):

Մի փոքրիկ, բայց էական ճշտում: Երեւանի պետական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի հրատարակած «Հայոց պատմություն» դասագրքում հեղինակը համառոտակիորեն ներկայացնելով Մայիսյան հերոսամարտերը՝ Բաշ-Ապարանի ճակատամարտի մասին նշվում է. «Այդ օրերին թուրքական հրամանատարությունն իր 9-րդ դիվիզիան շարժեց Բաշ Ապարանի ուղղությամբ, որպեսզի Սարդարաբատում կռվող հայկական զորամասերին հարվածի թիկունքից: Հայկական ուժերի հրամանատարությունը ճիշտ որոշելով թուրքական հարվածի ուղղությունը՝ Բաշ Ապարան ուղարկեց վեց հազարանոց մի զորամաս Դրոյի գլխավորությամբ:

...Այդ ճակատամարտում հայերի հետ միասին մարտնչում էր Ջհանգիր աղայի հրամանատարությամբ գործող եզդիների 1500 հոգիանոց աշխարհազորային ջոկատը»[1]:

Այո, հայկական ուժերի հրամանատարությունը, ավելի ստույգ գեներալ Մ. Սիլիկյանը, սթափ գնահատելով ռազմաճակատում տիրող իրական կացությունը, Դրոյի ուղարկելով Ապարանի ուղղություն, ճիշտ որոշում է կայացրել: Սակայն պիտի ասել, որ դասագրքում նշված «Բաշ Ապարան ուղարկեց վեց հազարանոց մի զորամաս » արտահայտությունը փոքր-ինչ չափազանցված է եւ չի համատասխանում իրականությանը: Եթե Ապարանի ճակատում մարտնչող կանոնավոր զորամասերին գումարենք Սեդրակ Ջալալյանի եւ Արսեն Տեր Պողոսյանի գլխավորած կռիվներին մասնակցած 1200 աշխարհազորայիններին, ապա թուրքական 8-10000 թվակազմ ունեցող 9-րդ դիվիզիային դիմակայող Դրոյի հրամանատարությամբ ճակատամարտին մասնակցած զինվորների ընդհանուր քանակը առավելագույնս կլինի 5000:

[1] Հայոց Պատմություն, Երեւան, 2012, էջ 516-517:

Իսկ ինչ վերաբերում է դասագրքում տեղ գտած այն տվյալին, որ Ապարանի ճակատամարտին մասնակցել է Ջհանգիր աղայի գլխավորած 1500 հոգանոց աշխարհազորային ջոկատը, ապա պիտի նշել, որ այդ տվյալը ավելի քան ուռչացված է: Ջհանգիր աղայի գլխավորած եզդիների հեծյալ ջոկատը բաղկացած է եղել ավելի քան 300 մարտիկներից, որոնք Մայիսյան հերոսամարտերի առաջին օրերին մասնակցել են Սարդարաբատի ճակատամարտին, ապա մայիսի 26-ին տեղափոխվել են Ապարանի ճակատ եւ իրենց անժխտելի ներդրումը ունեցել Ապարանյան զորախմբի նվաճած հաղթանակի գործում:

Մայիսի 26-ին ստանալով համալրումը՝ արդեն Դրոյի հրամանատարության տակ էին Սարդարապատի եւ Սուրմալուի ուղղությամբ գործող նրա գլխավորած պարտիզանական բրիգադի գրեթե ողջ ուժերը: Վերախմբավորելով տեղ հասած զորամասերը՝ Դրոն առանց հապաղելու սրընթաց հարձակումով հետ է մղում հակառակորդին եւ ընդհուպ մոտենում Ապարանին:

Ռազմաճակատում հայկական բանակի կանոնավոր զորամասերի ներկայությունն ու ձեռնարկած հաջող գրոհները ոգեւորում եւ մարտնչելու ավելի մեծ կորով են հաղորդում տեղի բնակչությանը:

Պատմում է Բաշ-Ապարանի ճակատամարտի մասնակից Միսաք Թորլաքյանը.«... Անկանոն խումբեր, ոմանք զինեալ, ոմանք կացին ու սուր ձեռքերին, ոմանք ծեր, ոմանք երիտասարդ, իրարու ետեւէ կը մօտենային ու...

- Բարեւ, Դրո ջան, ահա եկանք, հրամայէ:

Եվ Դրոն անհրաժեշտ կարգադրութիւններ կընէր, բոլորին ծառայութիւնը ի սպաս դնելու հայրենիքի փրկութեան գործին: Պատմական, ճակատագրական օրեր էին. եւ Աւարայրը վերակենդանացած էր: Դարաւոր հայութիւնը յարութիւն էր առած իր մարտական կեցուացքով»[1]:

Հարկ է նշել, որ Բաշ-Ապարանի ռազմաճակատում մարտնչող կամավոր աշխարհազորայինները միայն տեղացիները չէին: 6-րդ գնդի 4-րդ վաշտի հրամանատար Տեր-Սարգսյանի հուշերից պարզվում է, որ կռվողների շարքերում եղել են նաեւ Ղամարլուի (Արտաշատ) կամավորները:

«... Բաշ-Ապարան ժամանեցին, - նշում է Տեր-Սարգսյանը, - կամավորներ Ղամարլուի շրջանից՝ ինձ մոտ 4-րդ վաշտն էին ուղարկել առանց հրացանի մոտ երեսուն հոգի, որոնք ունեին իրենց մեջքին

[1] Թորլաքեան Մ., Օրերուս հետ, Պէյրութ, 1963, էջ 408-409:

կապած մի քանի օրվա ուտելիք: Դրանց առաջնորդներն էին Դալարի Մարկոս Բաղալյանը եւ Օղուբեկլվեցի Վարանցով Գեւորգյանը: Եկածների մեջ կար մի ծերունի, որին կոչում էին Համբարձում բիձա (Դալար գյուղից):

Նրանք բաժանվեցին դասակների մեջ, սպանված ու վիրավորներին փոխարինելու նրանց հրացաններով: Նրանցից մեկը սպանվեց եւ երեքը թեթեւ վիրավորվեցին, իսկ Մարկոս Բաղալյանը, որին Հաջի Մարկոս էին կոչում, Գէորգեւակի խաչը կրծքին՝ կռիվները վերջանալուց հետո վերադարձավ տուն»[1]:

Թուրքական 9-րդ դիվիզիայի հրամանատարությունը, իր հերթին, վաղօրոք տիրելով ռազմական առումով կարեւոր նշանակություն ունեցող Արագածի մոտակա բարձունքներին՝ ծրագրում է օգտագործել տեղանքի բարենպաստ հնարավորությունները եւ բարձունքներից տեղացող կրակի պաշտպանությամբ թեւանցել ու աջցանի մեջ վերցնելով՝ ջախջախել հայ զինագնդերին: Ճակատամարտի հաղթական վախճանը պայմանավորված էր ոչ միայն զինվորների խիզախությամբ եւ մարտնչելու հմտությամբ, այլեւ հրամանատարության մարտավարական կարողություններով ու վճռականությամբ:

Մի՞թե թուրք հրամանատարությանը, ի դեմս 1-ին աշխարհամարտի բովով անցած գեներալ- լեյտենանտ Էսադ փաշայի, կհաջողվեր գերազանցել արդեն բազում մարտերի մասնակցած եւ միայն հաղթանակի դափնիներ վաստակած Դրոյին: Բազմակողմանիորեն քննարկելով հակառակորդի հրամանատարության կողմից գործադրվելիք հնարավոր քայլերը, նա ծրագրում է ճակատամարտը շարունակելու իր տարբերակը:

Պիտի աներկբա ընդունել, որ Բաշ Ապարանի ճակատամարտում հայկական զորքերի նվաճած հաղթանակը մեծապես պայմանավորված էր Դրոյի կողմից կիրառված խորապես կշռադատված ու համարձակ մարտավարությամբ : Նրա մտահղացմամբ ճակատամարտը պիտի կենսագործվեր հետեւյալ մարտավարությամբ: Քանի որ Արագածի բարձունքները թշնամու կողմից գրավված լինելու պատճառով հայկական զորագնդերը զրկվել էին Արագածի ուղղությամբ հարձակվելու, թեւերում տեղաշարժվելու հնարավորությունից, ուստի Դրոն որոշում է հիմնական ուժերը հակառակորդից աննկատ կենտրոնացնել ճակատի կենտրոնում եւ անսպասելի, սրընթաց գրո-

[1] ՀԱԱ, ֆ. 403, ց. 1, գ. 40, էջ 7:

հով ճեղքել թուրքական զորքերի պաշտպանությունը՝ զրկելով նրանց թեւերում ձեռք բերած առավելություններից:

«Ալագէօզում,-պատմում է Դրոն,- ունէի մի բատալիոն (գումարտակ), թողեցի երկու վաշտ: Էն երկու վաշտն էլ իջացրի: Բեզերվնի (պահեստային) բատալիոնից էլ երկու վաշտ ուղարկեցի կենտրոն: Ուրեմն կենտրոնում ունեմ վեց վաշտ»[1]:

Դրոն՝համարձակորեն մերկացնելով թեւերը եւ նույնիսկ թուլացնելով Արագածի լանջերից հարձակվող թուրքերին դիմադրող միակ գումարտակը, յուրաքանչյուր չորս վաշտերից երկուսը տեղափոխում է կենտրոն: Սակելյարի գումարտակը, Կորոլկովի եւ Ջհանգիր աղայի հեծելազորը առաջավոր գծից դուրս է բերում թիկունք: Ճակատամարտի նախօրյակին տեղում է հորդ անձրեւ ու կարկուտ: Եվ մինչ թուրքերը ծվարած տանջվում էին տեղացող կարկուտի հարվածներից, Դրոն օգտվելով բնության պարգեւած դաժան, բայց տվյալ պահին հայկական զորքերի համար բարեպատեհ շնորհից, հետախուզության միջոցով վերջնականապես պարզում է հակառակորդի զբաղեցրած դիրքերի դասավորվածությունն ու նրանցում տեղաբաշխված մարտական ուժերի քանակը[2]:

Բացվում է մայիսի 28-ի առավոտը, մի պատմական օր, որը ընդմիշտ պիտի մնա Հայոց պատմության դյուցազնագրքում:

Լուսաբացին Դրոն տալիս է հարձակման հրաման: Ճակատամարտի կենտրոնում թուրքերը չդիմանալով հայ զինվորների փոթորկալի կրակին ու հուժկու գրոհներին, թողնում են դիրքերն ու նահանջում Ապարան: Թուրք հրամանատարությունը ի պատասխան կենտրոնում հայերի ձեռնարկած հարձակումների, օգտվելով բարձունքներում ունեցած դիրքային առավելությունից, փորձում է հարվածել մեր զորքերի թեւերին, ապա՝ թիկունքին: Սակայն աներեր էր պոռուչիկ Սահակյանի հրամանատարությամբ գործող ընդամենը երկու վաշտերի եւ ապարանցի աշխարհազորայինների դիմադրությունը:

Իր օրագրում ներկայացնելով Երեւանյան զորախմբի մայիսի 28-ից մինչեւ հունիսի3-ը ծավալած գործողությունները՝ գեներալ Սիլիկյանը անդրադառնալով մայիսի 28-ին Բաշ Ապարանի ուղղությունում տեղի ունեցող մարտերին՝ նշում է, որ ռազմաճակատի «...ձախ թեւում Ալագյազ սարի վրա դիրքեր է գրավում Հայկական 6-րդ գնդի գումարտակներից մեկը: Այդ գումարտակը հետ է մղում թուրքերի ձեռնարկած մի քանի հարձակումները»[3]:

[1] «Հայրենիք» օրաթերթ, 1956, մայիսի 27:
[2] Տե՛ նույն տեղում:
[3] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 82, թ. 5:

Բազմաթիվ գրոհներից հետո չկարողանալով ընկճել ռազմաճակատի թեւերում մարտնչող հայ զինվորների դիմադրությունը՝ թուրք հրամանատարությունը դիվիզիայի գլխավոր ուժերը նետում է կենտրոն եւ փորձում հարձակումը զարգացնել այդ ուղղությամբ: Դրոյի մտահղացումը իրականանում է: Թուրքերը իրենց ուժերը Արագածի անառիկ բարձունքներից տեղափոխում են ճակատի կենտրոն, ուր Դրոն նրանցից գաղտնի կենտրոնացրել էր իր զորաջոկատների մեծ մասը:

Ամենավճռական պահն էր: Անհրաժեշտ էր մի խիզախ թռիչք, անկասելի հարված: Կռիվներում Դրոյի նախընտրած մարտավարությունն էր. հակառակորդի տեսադաշտից ուժերի աննկատ կենտրոնացում ու անսպասելի խոյահարիչ ու սրընթաց հարված: Բաշ-Ապարանի ճակատամարտում հակառակորդին վերջնական պարտության մատնելու նպատակով՝ նա գործել է հենց այդ մարտավարությամբ: Ճակատամարտի վճռական պահին սթափ գնահատով հարմար պահը՝ Դրոն հրանոթների հզոր կրակի ուղեկցությամբ հարձակման է նետում թիկունքում կենտրոնացված ողջ ուժերը:

Վերհիշելով այդ պատմական պահը՝ Դրոն նշում է.

«Էստեղ էր, որ Կորոլկովը (հեծյալ զինավաշտերի հրամանատար - Հ.Գ.) իր պատմական դերն արեց: Ասի՝ կավալերիան (հեծելազոր) մեռցնելու եմ ուղարկում:

Եզդիներին էլ ուղարկեցի: Ջհանգիր աղան:

Ամբողջը ատակի (հարձակման) չպրտեցի:

Բայց կավալերիայի պատմութեան մէջ քիչ ա պատահել, գիտես Վարդգես (Ավետիս Ահարոնյանի որդին՝ Վարդգես Ահարոնյանը, որը Դրոյից գաղտնի ձայնագրել է Ապարանի և Սուրմալուի կռիվներին նվիրված նրա այս պատմածը -Հ.Գ.), 700 հոգի կավալերիայից 160-ը թափեցին:

Բայց ճղեց:

Ձեմլեակն էլ սպանուեց, ահագին տղաներ սպանուեցին:

Ճղեց, պատռեց ու անցավ դրանց թիկունքը:

Սակելին (գնդապետ Սակինի գումարտակը - Հ.Գ.) էլ չպրտեցինք: Բայց այդպէս արագ փախուստ ես չէի սպասում թուրքերի կողմից»[1]:

Պատմում է Մարտիրոսը. «Ճաշից յետոյ Դրօն եկաւ առաջաւոր դիրքերը եւ յարձակման պատրաստուելու հրահանգ տուեց...

Ճակատը մէկէն «ուռա՛յի» դիմելով, անցաւ գրոհի...

[1] Նույն տեղում:

Թշնամու ոյժերի կէսը դիրքերում քնած լինելով՝ հակառակորդն անակնկալի եկաւ եւ դուրս գալով դիրքերից՝ դիմեց խուճապային փախուստի:

Մի կողմից մեր գնդացիրներն սկսեցին հնձել, իսկ Ալագեազի կողմից էլ մեր գումարտակների գնդացրային կրակն ու համազարկերը նեղ դրեցին թշնամուն:

... տաճկական երեք գունդ իրար խառնուած փախուստի էին դիմել, ...սակայն ընկնելով գնդապետ Սակինի գումարտակի եւ Մակեդոնի հարիւրեակի համազարկերի տակ, վերադարձան եւ Բաշ-Ապարանի մօտով ուղղուեցին դէպի Դանագիրմազի բարձունքները»[1]:

Լեռնալանջերին դիրքավորված թուրքական ջոկատները տեսնելով յուրայինների փախուստը, իրենք եւս լքում են ամրություններն ու նահանջում:

«Մեր զորքերի հարձակման հետեւանքով,-գրում է գեներալ Սիլիկյանը,- հակառակորդը փորձում է ամրանալ Մուլքի գյուղի բարձունքներից մինչեւ Բաշ Աբարան ձգվող տարածքում»[2]:

Հայկական զորքերն արդեն հարձակման են անցնում ճակատի ողջ երկայնքով: Հարկավոր էր թույլ չտալ թուրքերին դիրքեր գրավել ու ամրանալ: Դրոյի հրամանով Կուռո Թարխանյանի հեծյալ հարյուրակը Քասախի գետափով շարժվում է դեպի Ապարան ու թիկունքից սրընթաց գրոհ է ձեռնարկում հակառակորդի վրա:

Թուրք հրամանատարությունը իր զորքերի վերջնական ջախջախումը կանխելու համար մարտադաշտ է նետում պահեստային զորաջոկատները ու դիրքեր գրավում Տանագիրմազի (Նիգավան գյուղ - Հ.Գ.) մոտերքում: Հարկավոր էր արագորեն զարգացնել հարձակումը եւ թուրքերին զրկել վերախմբավորվելու ու նոր դիրքերում ամրապնդվելու հնարավորությունից:

«Էստեղ էր, - շարունակում է վերհիշել Դրոն,- որ ասի, «տղերք ջան, յոգնած էք, ջարդուած էք, թշնամու պոչիցը չպիտի կտրուել»[3]:

Զթողնելով ուշքի գալու թուրքերին՝ Դրոն մայիսի 28-ի գիշերը Տանագիրմազի մոտերքում հաղթահարելով հակառակորդի դիմադրությունը, գրավում է գյուղը եւ հաջորդ օրը հասնում մինչեւ եզդիների Միրաք եւ Ղոնդախազ գյուղերը:

Մայիսի 29-ին թուրք հրամանատարությունը կենտրոնացնելով ուժերը, փորձում է կանգնեցնել հայկական զորքերի հարձակումը, սակայն նրա ձեռնարկումներն արդեն ապարդյուն էին:

[1] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, նշ. աշխ., էջ 413:
[2] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 82, թ. 5:
[3] «Հայրենիք» օրաթերթ, 1956, մայիսի 27:

Գեներալ Մ. Սիլիկյանի հավաստմամբ՝ «Չնայած այն հանգամանքին, որ Բաշ Աբարանի ուղղությունում մայիսի 29-ին, ամբողջ օրվա ընթացքում, թուրքական զորքերը մի քանի անգամ դիմել են հակահարձակումների, բայց մեր զորամասերը համառ մարտերից հետո կարողացել են ժամը 18-ի մոտերքը գլխովին ջախջախել ու փախուստի մատնել նրանց...

Հետապնդումը շարունակվում է»[1]:

Հայկական զորքերի հաղթանակը ձեռք է բերվում ոչ միայն շնորհիվ հայ զինվորների քաջության, այլեւ հրամանատարության կողմից կռիվներում դրսեւորած կշռադատված ու արդյունավետ մարտավարության: Պիտի անվերապահորեն ընդունել, որ կռիվների ողջ ընթացքում հայկական զորքերի հրամանատարությունը, գտնվելով պատշաճ բարձրության վրա, զուտ մարտավարական առումով գերազանցեց թուրք հրամանատարությանը:

Մարտիրոսի հավաստմամբ՝ մայիսի 28-ի հաղթական հարձակման ավարտին «Կուռոյի հարիւրեակը գետափով դուրս եկաւ Զամբուլուի տափարակը եւ մեր հարիւրեակները միանալով թոյլ չտուին, որ թշնամին ամրանայ Դանագիրմազի բարձունքներում... Նահանջելով մինչեւ Հաջի-Խալիլ:

Պոստեր նշանակելով այդ նոյն բարձունքներում գիշերեցինք Դանագիրմազ գիւղում: Մեր գործն արդէն թեթեւացել էր, որովհետեւ մինչեւ Ալեքսանդրապոլ՝ մեր դիրքերը միշտ էլ իշխող էին նրանց ուժերին: Միւս կողմից էլ կոտրուել էր թշնամու յամառ թափը... դիմադրութիւնն անգամ»[2]:

Ճակատամարտում վճռական բեկումն արդեն կայացել էր: Զարգացնելով հարձակումը՝ հայկական զորքերը մայիսի 29-ին հասնում են Հաջի-Խալիլ (Մաղկահովիտ) եւ ապա մինչեւ Մունջուղլի (Միլքար), Ախուլա (Բերքառատ) եւ Գյոզալդարա (Գեղադիր) գյուղերը եւ համաձայն հայ եւ թուրք հրամանատարության միջեւ կնքված մայիսի 28-ի զինադադարի՝ կանգնեցնում առաջխաղացումը:

Դրոյի եւ Մարտիրոս Աբրահամյանի խոստովանությամբ՝ իրենք այդ զինադադարի մասին իմացել են միայն մայիսի 29-ին, Հաջի-Խալիլ գյուղում, այն էլ թուրք բանագնացից:

«Մայիսի 29-ին, - վկայում է Դրոն, - ես դուրս եկայ Շիրակի դաշտավայրը, ուր հայկական մի մեծ գյուղ կար (նկատի ունի Հաջի-Խալիլ, ներկայիս Մաղկահովիտ գյուղը-Հ.Գ.): Այնտեղ էլ եկաւ թուրք բանագնացը...»[3]:

[1] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 82, թ. 5:
[2] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, նշ. աշխ., էջ 413:
[3] «Հայրենիք» օրաթերթ, 1956, մայիսի 27:

Այս նույն իրողության մասին մի փոքր ավելի մանրամասն ներկայացնում է նաեւ Մարտիրոսը. «Որպէս առաջապահ, իմ հարիւրեակը, վաղ առաւօտեան շարժուեց դէպի Հաջի-Խալիլ... ուր գիւղի ծայրին (այդ նկատեցի իմ հեռադիտակով) մի զինուոր դուրս եկաւ հրացանի ծայրին սպիտակ թաշկինակ ամրացրած...

Երկու զինուոր ուղարկեցի, պատուիրելով կապել աչքերը եւ բերել ինձ մօտ: Ասկեարը յարգալից բարեւելուց յետոյ, ասաց.

- Խնդրում եմ ինձ ուղարկեցէք ձեր գլխաւոր հրամանատարի մօտ: Բաթումի համագումարում մեր կառավարութիւնը հաշտուել է հայերի հետ... Հայերն ազատութիւն են ստացել, մեզ հրահանգուած է դադարեցնել կռիւը:

Տաճիկ զինուորին ուղարկեցի Դրօյի մօտ»[1]:

Նույն օրը պատերազմական գործողությունները դադարեցվում են ռազմաճակատի բոլոր՝ Սարդարապատ, Բաշ-Ապարան, Ղարաքիլիսա ուղղություններում: Դրոյի գլխավորած զորագնդերի հաղթական գրոհները փլուզեցին Ապարան-Եղվարդ կամ Ապարան-Աշտարակ ուղղությամբ Երեւանն ու Արարատյան զորախումբը շրջապատման մեջ վերցնելու ռազմական ծրագիրը, մայրաքաղաքի հյուսիսային դարպասն անառիկ էր:

Գեներալ Սիլիկյանը Հայոց Ազգային Խորհրդին ուղղված զեկուցագրում հաղորդում է.

«Ազգային Խորհրդին

Էջմիածին, - երեք օրուայ յամառ կռիւներից յետոյ Սարդարապատի ուղղութեամբ, մայիսի 27-ին, մի թեւից շրջապատուելով եւ ճակատից յետ շպրտուելով մեր զօրքերից տաճիկները դիմեցին անկարգ նահանջի հետապնդուելով: Հետապնդումը շարունակեց մինչեւ Ղարանլու կայարանը Ս. Սոզուվելի գիւղը: Տաճիկների կորուստները զգալի են:Միեւնոյն ժամանակ, Բաշ-Ապարանի ուղղութեամբ թշնամին երկու արտիլերիստական գնդով նեղուելով մեր առաջապահ՝ հեծելագնդից Ղազնաֆար-Ղարաքիլիսա գիւղերի գծի վրայ, երկու օրուայ կռիւներից յետոյ, յերեկոյեան դէմ, մայիսի 29-ին, գլխովին ջարդուեցին եւ յետ շպրտուեցին:

... Այդ կռիւներում մեր կորուստները աննշան են: Զօրքի տրամադրութիւնը գերազանցօրէն բարձր է: Ներկայումս զօրքերը բռնում են ուժեղ դիրքեր: Որոշուում է դեմարկացիոն գիծը:

Գեներալ Սիլիկեան»[2]:

Բաշ-Ապարանի ճակատում Հայոց զորքերի հաղթանակի լուրը նույն օրը հասնում է Երեւան եւ ջերմ խանդավառություն առաջ բերում մայրաքաղաքում կուտակված բազմահազար հայության շրջանում: Ոգեկոչված Բաշ-Ապարանի հաղթությունը ավետող լուրից՝ ժողովուրդը հոծ բազմությամբ շրջափակում է Երեւանի Ազգային Խորհրդի շենքն ու սրտատրոփ սպասում Սարդարապատի ճակատից սպասվող տեղեկություններին:

«Դրօն,- գրում է Հայոց Ազգային Խորհրդի նախագահ Ավետիս Ահարոնյանը, - սեղմել է թշնամուն եւ հալածում է անխնայօրէն, Սարդարապա՞դը, Սարդարապա՞դը... Ազգային Խորհրդի պատշգամբի առջեւ հազարաւոր ամբոխը հեւում էր անհանգստութիւնից ու անհամբերութիւնից: Ցաղթութեան ձայներ էին շշնջում իրար: Հաւատա՞լ...յոյսի ու երջանկութեան դողոցք ամէն կողմ: Ահա Արամը երեւաց պատշգամբում շրջապատուած գործակիցներով. հայեացքները դարձան նրան: Հեռագիր կայ ձեռքին, յուզմունքից գունատ է, բայց ժպիտ կայ երեսին: Այդ մռայլ մարդը ուրախ է իր ձեռքի խորհրդաւոր թերթիկով, որպէս մանուկն իր բռնած թռչնիկով: Քար լռութիւն: Բազմութիւնն ասես շնչելուց իսկ դադարել էր, ամբողջ այդ գորշ եռուն զանգուածը դարձել էր մի հատ աչք եւ լսողութիւն: Մովսէսը Սինա լեռից աւելի մեծ պատգամ չէր բերել Իսրայէլին...

«Ժողովուրդ Հայոց, լսեցէք մեր քաջարի հրամանատար զօր. Սիլիկեանի հեռագիրը».

«Հինգ օրերից ի վեր տեւող ճակատամարտը վերջացաւ թշնամու կատարեալ պարտութեամբ»[1]:

Տարիներ անց հայկական բանակի ընդհանուր զորահրամանատար գեներալ Թ. Նազարբեկյանի խնդրանքով անդրադառնալով մայիսյան հերոսամարտերի համառոտակի վերլուծությանն ու նկարագրությանը՝ գեներալ Սիլիկյանը, դարձյալ հավաստելով Բաշ-Ապարանի ճակատամարտում Դրոյի գլխարությամբ հայկական զորքերի նվաճած հաղթանակը՝ նշում է. «... Նրան (Դրոյին) օգնելու համար ես նշանակեցի 2-րդ հեծյալ գունդը եւ կարծեմ 2 հրանոթ (կարող է 4 հրանոթ), ավելի ճիշտ 4 հրանոթ: Համալրումից անմիջապես հետո, ջոկատն անցավ հարձակման եւ մարտի մեջ մտավ Բաշ-Աբարանից հարավ, կարծես մայիս 27-ին կամ 28-ին, եւ ինչպես զեկուցեց Դրոն, նրա դեմ էին հանել թուրքերի լավագույն ուժերը: Թուրքերը պարտություն են կրել եւ արագ նահանջել, մի մասը՝ Ալեքսանդրապոլ, մի մասն էլ՝ Համամլու»[2]:

Բաշ-Ապարանի հաղթական ճակատամարտի գնահատականը տվել է նաեւ Սարդարապատի հայկական զորախմբի շտաբի պետ

---

[1] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, նշ. աշխ., էջ 413:
[2] «Հորիզոն», 1918, 12 յունիսի:

[1] «Ալիք» բացառիկ, «Դրոյի յիշատակին», 1956, էջ 43:
[2] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 18:

կապիտան Շնեուրը (հետագայում հայկական բանակի գլխավոր շտաբի պետ՝ գնդապետ - Հ.Գ.).

«Միաժամանակ Սարդարապատի կռուի հետ,-նշում է գնդապետ Շնեուրը,- թուրքերը փորձեցին ներխուժել Հայաստանի սիրտը աւելի հիւսիսից՝ Բաշ-Աբարանի վրայով, բայց չարաչար ջախջախուեցին Դրաստամատ Կանայեանի (Դրօ) ձեռքով»[1]:

Ցաւոք, խորհրդահայ պատմագիտությունը տասնամյակների ընթացքում ըստ արժանվույն չգնահատելով մայիսյան հերոսամարտերի, մասնավորապես Բաշ-Ապարանի ճակատամարտի պատմական, հիրավի անգնահատելի նշանակությունն ու իրական արժեքը՝ ժողովրդին անջրպետել էր իր հերոսական ոչ վաղ անցյալի ճշմարիտ իմացությունից: Որպես խոսուն փաստարկ վկայակոչենք խորհրդահայ հանրագիտարանում Բաշ-Ապարանի հերոսամարտին նվիրված հետեւյալ փոքրիկ հատվածը.

«1918-ին Ապարանի բնակիչները Բաշ-Ապարանի ճակատամարտում զգալի հարված հասցրին թուրք զավթիչներին՝ կասեցնելով Ալեքսանդրապոլից դեպի Երեւան շարժվող թուրքական զորքերի առաջընթացը»[2]:

Պատմական իրողությունը կիսաճշմարտանման հայեցակետով արժեքավորելը ոչ մի քննադատության չդիմացող պարզունակ խաբկանք է: Իրոք, ճակատամարտին մասնակցած աշխարհազորայինների ներդրումը արժանի է ամենամեծ գնահատականի: Սակայն տվյալ պարագայում հարկավոր չէ ունենալ մեծ երեւակայություն եւ պատմական դեպքերի իմացության խոր գիտելիքներ՝ ըմբռնելու համար մի պարզ ճշմարտություն. տեղի բնակիչների ուժերից կազմված մի քանի ջոկատներ ինչքան էլ հերոսականություն եւ համարձակություն ցուցաբերեին, այնուամենայնիվ, առանց կանոնավոր զորախմբերի աջակցության ի զորու չէին դիմագրավել թնդանոթներով, գնդացիրներով զինված մի ամբողջ դիվիզիայի հարձակումները: Ավելին, ձգտելով նսեմացնել Դրոյի հիրավի անգնահատելի ծառայությունը՝ ժողովրդի մեջ տարածում էին այն մտացածին ստահոդ լուրերը, թե իբր Դրոն չի զարգացրել Հայոց հաղթական զորքերի ու աշխարհազորի հարձակումները եւ դրանով իսկ հնարավորություն ընձեռել թուրքերին՝ անվտանգ նահանջել Ղարաքիլիսա եւ անսպասելիորեն հայտնվելով մարտադաշտում վճռել ճակատամարտի ելքը:

[1] «Սարդարաբատի հերոսամարտը», գրեց գլխաւոր սպայակոյտի գնդապետ Ալեքսանդր Կ.Շնեուր, էջ 43:
[2] Հայկական սով. հանրագիտարան, հ. 1, Երեւան, 1974, էջ 563:

Որպես ապացույց վկայակոչենք Հ. Թուրշյանի «Սարդարապատի հերոսամարտը» եւ Ծ. Աղայանի «Հոկտեմբերը եւ հայ ժողովրդի ազատագրական պայքարը» աշխատություններում տեղ գտած հետեւյալ պնդումները.

«...Մայիսի 29-ին թուրքերն արդեն գլխովին ջախջախված էին եւ խուճապահար փախչում էին դեպի Համամլու եւ Ալեքսանդրապոլ: Հայ զորքը հաղթական առաջ է գնում եւ գրավում Դանագիրմազի իշխող բարձունքները»:

Անկեղծորեն նշելով Բաշ-Ապարանի ճակատամարտի հաղթանակը՝ հարգարժան պատմաբանը, այնուամենայնիվ, հաջորդ տողերում առանց վարանելու առիթը բաց չի թողնում սեւացնելու ու զրպարտելու հաղթական ճակատամարտի դաշնակ (ըստ Հ. Թուրշյանի - Հ.Գ.) հրամանատարին:

«Գրավում է (խոսքը Հայոց զորքի մասին է- Հ.Գ.),-շարունակում է Թուրշյանը,- ու կանգ առնում, որովհետեւ խուճապահար փախչող թուրքերը սպիտակ դրոշ պարզած պարլամենտյոր են ուղարկում Դրոյի մոտ եւ հայտնում, որ Բաթումում իբր թե զինադադար է կնքվել: Դրոն ընդունում է տաճիկների առաջարկությունը, դադարեցնում է նրանց հետապնդելը, հնարավորություն ընձեռելով, որ իր դեմ կռվող Էսադ փաշայի զորքերն օգնության գնան Ջավիդ փաշային եւ շարունակեն Ղարաքիլիսայում պարտված հայ բեկորների ջախջախումը Լոռվա ձորում»[1]:

Զբավարարվելով իր կողմից հորինված Բաշ-Ապարանի հաղթական ճակատամարտում Դրոյի դերն ու վաստակը նսեմացնող վարկածներով, Թուրշյանը ավելի է խորացնում մտացածին կեղծիքն ու զրպարտությունը. «Դրոն Բաշ-Ապարանի ռազմաճակատում, որ հայ ժողովրդի ինքնապաշտպանության կենտրոնն էր դարձել պատերազմական նոր իրադրության մեջ, չուզենալով զրկված լինել միստիկ Ջավրիեւի եւ մյուս վարժապետների դափնիներից, զինադադարի ընդունման գործով ասում է, թե երբ թշնամին ընկճված է ու շշմած, իսկ մենք հաղթական ենք, ապա պետք է մարդասիրաբար դադարեցնենք մեր զարկը, որ հակառակորդը հնարավորություն ստանա ուշքի գալու: Նման ռազմավարության հետեւանքով ոչ միայն վերջնական ջախջախման ենթարկվեց Ղարաքիլիսայի հայ զորքը, այլեւ ապարդյուն անցան Բաշ-Ապարանի եւ Սարդարապատի այնքան փայլուն հաղթանակները»[2]:

[1] Թուրշյան Հ., նշվ. աշխ., էջ 166-167:
[2] Նույն տեղում:

Նույն սցենարով եւ նույն դիտավորությամբ է առաջնորդվել նաեւ Ծ. Աղայանը, որը հոկտեմբերի լույսի ներքո ներկայացնելով հայ ժողովրդի ազատագրական պայքարը՝ Բաշ-Ապարանի հերոսամարտի հրամանատարին բացառապես ներկայացնում է Թուրչյանի կողմից ավելի վաղ վերագրված մեղադրանքները:

«Խուճապի մատնված թուրքերը, սպիտակ դրոշ բարձրացնելով, Բաշ-Ապարանի զորախմբի հրամանատար Դրոյին հայտնում են, որ Բաթումում արդեն զինադադար է կնքվել եւ առաջարկում են հարձակումը դադարեցնել: Քաղաքականապես ոչ հեռատես Դրոն իր զինակից դաշնակցականների նման համաձայնում է եւ դադարեցնում հարձակումը: Օգտվելով դրանից, Էսադ փաշան հնարավորություն ստացավ իր զորքերը շարժել դեպի Ղարաքիլիսա եւ օգնել Ջավիդ փաշային, որը շարունակում էր հայկական պարտված զորքերի մնացորդների եւ բնակչության ջարդը»[1]:

Այսպիսի տեսակետները չունեն իրական եւ ոչ մի հիմք ու բովանդակություն: Նախ, Ղարաքիլիսայի քառօրյա մարտերն ավարտվել են մայիսի 28-ին, եւ հայկական զորքերը՝ նույն օրն եւեթ թողնելով Ղարաքիլիսան, մայիսի 29-ին արդեն գտնվում էին Դիլիջանում: Մայիսյան հերոսամարտերի մանրակրկիտ ուսումնասիրությունը աներկբա ցույց է տալիս, որ Ղարաքիլիսայի հերոսամարտում, որն իր ուժգնությամբ ու քառորյա կռիվներին երկուստեք մասնակցած զորքերի քանակությամբ փոքր-ինչ գերազանցում էր Սարդարաբատի եւ Բաշ-Ապարանի ճակատամարտերին, հայ մարտական ուժերը 26-27-ին տեղի ունեցած կռիվներում դրսեւորել են արիության ու անձնազոհության հիսքանչ օրինակներ: Իզուր չէ, որ թուրքական զորքերի հրամանատար Վեհիբ փաշան արժանավույնս է գնահատել ու հիացմունքով արտահայտվել՝ ընդգծելով ճակատամարտում հայ զինվորի դրսեւորած հերոսականությունն ու մարտնչելու անբասիր ձգտումն ու մարտական կարողությունը: Դժբախտաբար ճակատամարտում իրավիճակը կտրուկ փոխվել է մայիսի 28-ին: Այդ օրը թուրքական զորքերը հուժկու գրոհ են ձեռնարկում ռազմաճակատի հարավային հատվածում եւ Գյադա-Մայմեխի տարածքից դիմելով հարձակման՝ հաղթահարում են հայկական զորքերի ձախ թեւի դիմադրությունն ու շրջանցելով Ղարաքիլիսան՝ փակում են դեպի Դիլիջան ձգվող նահանջի ուղիները[2]:

[1] Աղայան Ծ., նշվ. աշխ., էջ 149:
[2] Տե՛ս «Սարդարաբատ, Բաշ-Ապարան, Ղարաքիլիսա», Երեւան, 1998, էջ 219-220:

Համաձայն գնդապետ Բեյ-Մամիկոնյանի գլխավորած ռազմական շտաբի ճակատամարտը շարունակելու վաղօրոք մշակած մարտավարության՝ ճակատի ձախ թեւում մարտնչող հայկական զորքերին պիտի միանային գնդապետ Սամարցյանի, իսկ աջ թեւում դիրքավորված գնդապետ Ղորղանյանի գնդին պիտիմ օգնության շտապեր Դեղում գտնվող Անդրանիկի զորամասը:Սակայն, ավելի քան անհասկանալի եւ կարելի է ասել, առեղծվածային պատճառներով Անդրանիկը պատշաճ ուշադրություն չդարձնելով ռազմաճակատի հրամանատար գնդապետ Բեյ-Մամիկոնյանի հրահանգին՝ չի ներկայանում ռազմադաշտ՝ զբաղեցնելու իր գլխավորած զորամասին հատկացված պաշտպանական տեղամասը:

Հետագայում Գ. Նժդեհը քննադատաբար անդրադառնալով Ղարաքիլիսայի ճակատամարտի մանրամասների վերլուծությանը՝ցավով պիտի նշեր. «Իզուր սպասեցինք Անդրանիկին, նա չկար և չպիտի հայտնվեր: Նրա ունեցած մի քանի հազար զինվորների մեկ յոթերորդն անգամ բավական պիտի լիներ, կտրելով երկաթուղու գիծը, գալ ու թառել Ղարաքիլիսան եզերող արևելյան բարձունքներին: Այդ անելով՝ նա ոչ միայն ձախողանքի մատնած կլիներ մեր զորքերը Ղարաքիլիսայի մեջ շրջապատելու թշնամու փորձը, այլև մեզ հնարավորություն կընձեռեր, ռազմագիտական աքցանի մեջ առնելով թշնամուն, դեպի Ալեքսանդրապոլ շպրտել նրան»[1]:

Ճակատում մարտնչող հայկական զորքերը չստանալով անհրաժեշտ օգնությունը եւ խուսափելով վերջնական շրջափակումից՝ փչացնում են հրանոթներն ու հարկադրված լքում պաշտպանական դիրքերը եւ նահանջելով կենտրոնանում են Շահալի գյուղում::

Հայկական զորքերի անհարաժեշտ փոխհամագործակցության հանցավոր ու չպատճառամանված բացակայության եւ հրամանատարության անփույթ ու անպատասխանատու գործողությունների հետեւանքով «Ղարաքիլիսայից դեպի Շահալի Ղորղանյանի ջոկատի մեծ մասի նահանջից անմիջապես հետո երկաթգիծը նույնպես կտրվեց թշնամու կողմից, որով Ղարաքիլիսան ամբողջությամբ հայտնվեց շրջապատման օղակում: Շրջապատման մեջ մնացած հայ զինվորները և սպաները, 3-4 ժամյա կատաղի մարտում լրիվ սպառելով զինամթերքը զոհվեցին, մասամբ էլ գերի ընկան (1000 հոգի): Մայիսի 28-ի երեկոյան ժամը 4-ին թուրքական 11-րդ դիվիզիայի առաջապահը մտավ Ղարաքիլիսա»[2]:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, էջ 221:

Ղարաքիլիսայի ուղղությունում հայ զինվորների կորուստներին Հայաստանի խորհրդարանին ներկայացրած զեկուցագրում անդրադարձել է նաեւ Դրոն:

Հայաստանի խորհրդարանի 1918 թ. հոկտեմբերի 23-ին տեղի ունեցած նիստում՝ ներկայացնելով Մայիսյան դեպքերի ժամանակ Ղարաքիլիսայում տված կորուստները «Նախագահը անմիջապես կարդում է Ղարաքիլիսայից ստացված հեռագրերը, որոնցից մեկով Ղարաքիլիսայի հայությունը ի դեմս Դրոյի շնորհավորում է խորհրդարանի բացումը այժմ, քանի որ ժամանակին հնարավորություն չի եղել այդ անել և Բ. հեռագիրը, որով Դրոն հայտնում, որ Ղարաքիլիսայում ու շրջակայքում մայիսյան դեպքերին սպանվածների թիվը մոտ 7000 է, որոնցից շատ շատերի համար անթաղ դիակները նոր են հավաքել ու հոգեհանգիս կատարել»[1]:

Մայիսյան հերոսամարտերի ուսումնասիրությունը միանշանակորեն հավաստում է, որ ավելի քան հիմնավորված ու ճմարիտ է Ղարաքիլիսայի ճակատամարտին տված Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանի հետեւյալ գնահատականը. «Եթե Ղարաքիլիսայի պատերազմը, հակառակ հայ զինվորի անվեհեր քաջության, այնքան անփառունակ վերջացավ, դրա մեղքը ընկնում է միմիայն ապաշնորհ զեկավարների վրա»[2]:

Դրոյի զորախումբը մայիսի 28-ի գիշերը դեռեւս գտնվում էր Ապարանի մոտակայքի Դանագիրմազ (Նիգավան) գյուղի մոտերքում: Եթե նույնիսկ նրա ճանապարհին կանգնած չլիներ անգամ թուրքական գեթ մեկ զինվոր, ապա հայկական զորքը չէր կարող միեւնույն ժամանակահատվածում գտնվել Բաշ-Ապարանի ուղղությունում եւ ճիշտ ժամանակին այնտեղից հասնել ավելի քան 50 կմ հեռավորության վրա գտնվող Ղարաքիլիսա եւ անմիջապես մտնել մարտադաշտ:

Երկրորդ, ծանոթանալով վերոհիշյալ տեսակետներին, դարձյալ բնականորեն մի պարզագույն հարց է ծագում՝ որտեղից, ի՞նչ փաստաթղթից կամ սկզբնաղբյուրից են Հ. Թուրշյանն ու Ծ. Աղայանը պարզել, որ «քաղաքականապես ոչ հեռատես Դրոն իր զինակից դաշնակցականների նման համաձայնում է եւ դադարեցնում հարձակումը, որի հետեւանքով էսադ փաշային հնարավորություն է ընձեռում «գերձայնային արագությամբ» Բաշ-Ապարանից, նույն օրը՝ մայիսի 29-ին, հասնել Ղարաքիլիսա, որտեղ, ի դեպ, նույնիսկ

[1] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 16, թ. 1:
[2] «Սարդարաբատ, Բաշ- Ապարան, Ղարաքիլիսա», էջ 221:

մայիսի 28-ի երեկոյան այլեւս հայկական զորքեր չկային, եւ ոչնչով Ջավիդ փաշային վերջնականապես ջախջախելու «հայկական պարտված զորքերի մնացորդներին»:

Ավելին, Հ. Թուրշյանը նույնիսկ բառացիորեն մեջբերում է իբր թե Դրոյի կողմից տված խոսքերը: Այդ դեպքում բարեխիղճ պատմաբանը պարտավոր է նշել, ցույց տալ այն փաստաթուղթը, կամ սկզբնաղբյուրը, որտեղից օգտվել է: Պատասխանը միանշանակ է. այդպիսի փաստաթուղթ եւ սկզբնաղբյուր գոյություն չունի եւ երկու հեղինակներն էլ չխորշելով մատացածին պատկերներ հորինելուց, առաջնորդվել են միայն մեկ նպատակով՝ խեղաթյուրել ու վարկաբեկել այն ամենը, ինչ ձեռք է բերվել Հ.Յ.Դաշնակցության եւ նրա ակնառավոր գործիչների ջանքերով:

Երրորդ, դիմենք արխիվային փաստաթղթերի օգնությանը: Գեներալ Նազարբեկյանի ռազմական շտաբի կողմից Կավկասյան բանակին եւ Հայոց Ազգային Խորհրդին հասցեագրված զեկուցագրերից վկայակոչենք հետեւյալ փաստաթուղթը.

«Մայիսի 29-ին Բաշ-Ապարանի ջոկատը մոտեցավ Բաշ-Ապարանի բարձունքներին: Հրանոթային հզոր մենամարտից հետո թուրքերը հետ շպրտվելով Զինգիլ եւ Փոլիջա տարերի կողմը՝ ձեռնարկում են եւս մեկ հակահարձակում, բայց նորից հետ են շպրտվում ու նահանջում»[1]:

Եվս մեկ կարեւոր փաստաթուղթ: Վկայակոչենք այդ օրերին Բաշ-Ապարանի ուղղությունից կորպուսի հրամանատարությանը ներկայացրած ռազմական երկու ամփոփագրերը:

«Մայիսի 30-ին Բաշ-Ապարանի ուղղությունում հետ շպրտված թուրքերը կանգ են առնում եւ ամրապնդվում»[2]:

Եվս մեկը.

«Հունիսի 2-ին Բաշ-Ապարանի ուղղությունից ստացվել է հեռագիր, ըստ որի թուրքերը ակտիվություն են ցուցաբերել, բայց մեր հրետանու կրակի շնորհիվ հետ են շպրտվել»[3]:

Բաշ-Ապարանի ճակատից հաղորդած վերոհիշյալ ամփոփագրերից դժվար չէ հասկանալ, որ թուրքական զորքերը ոչ թե «Դրոյի թեղավությամբ» աներեւակայելի արագությամբ կարողացել են մայիսի 28-ին հայտնվել Ղարաքիլիսայի ճակատում, այլ համաձայն գեներալ Ղարգանյանի հավաստման՝ դիրքեր գրավելով... Դեպ

[1] ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 98, թ. 32:
[2] ՀՀ ԲԿԱ, թիւ 503, թղ. 14, գ. 6, էջ 22:
[3] Նույն տեղում:

քեանդ, Գիւզալդարէ, Աղքուլա եւ Մունջուխլի գիւղերի ուղղութիւնում, նոյնիսկ փորձել են դիմել հարձակողական գործողությունների[1]:

Հայրենի պատմաբաններից ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանի գնահատմամբ «Դրոյի գլխավորությամբ Բաշ-Ապարանում տարած փայլուն հաղթանակն իրեն արդեն վերագտնող հայությանը նոր ոգևորություն ներարկեց, նա նորից համոզվեց, որ ինքն ունակ է իրեն պաշտպանելու, եթե համախումբ և վճռական լինի»[2]:

Հարկ է նշել, որ Սարդարապատի եւ Բաշ-Ապարանի ուղղություններում մայիսի 28-ից հետո տեղի ունեցած իրադարձությունների ճշմարիտ գնահատականը դժվար է փնտրել միայն հայ-թուրք փոխհարաբերությունների շրջանակներում:

Մայիսի 26-ին լուծարքի է ենթարկվում Անդրկովկասյան Սեյմը, եւ նույն օրը Վրաստանի Ազգային խորհուրդը՝ ապավինելով Թուրքիայի դաշնակից Գերմանիայի հովանավորությանը, Ն. Ժորդանիայի գլխավորությամբ հռչակում է Վրաստանի անկախությունը: Հաջորդ օրը նույն բովանդակության հռչակագիր է ընդունում նաեւ ազերի Ազգային խորհուրդը:

Չկար այլեւս հայերին, վրացիներին ու ազերիներին գոնե ձեւականորեն միավորող Կովկասյան հանրապետությունը: Հայոց Ազգային Խորհրդի առջեւ ծառացել էր լուծելու հետեւյալ խնդիրը. կամ ընդհատել Բաթումի բանակցությունները, հրաժարվել թուրքերի հետ բանակցելուց եւ շարունակել պատերազմը, կամ ծանր զիջողությունների գնով հռչակել Հայաստանի անկախությունը:

Անժխտելի փաստ է, որ հաղթական մարտերից ոգեշնչված հայկական զորքերը թե ռազմական եւ թե բարոյահոգեբանական առումով պատրաստ էին զարգացնել ձեռք բերած հաջողությունները եւ առաջ շարժվել:

Իսկ Արարատյան զորախմբի հրամանատար գեներալ Սիլիկյանը, ելնելով ռազմաճակատում տիրող նպաստավոր կացությունից եւ հայ զինական ուժերի մարտական տրամադրությունից, նպատակադրվում է գրավել Կարսն ու Ալեքսանդրապոլը: Սակայն նույն օրերին Բաթումիում ընթացող բանակցություններում հայ-թուրք պատվիրակությունների միջեւ հենց մայիսի 28-ին կայացվում է զինադադարի ժամանակավոր համաձայնություն, որի մասին ռազմաճակատի տարբեր հատվածներում մարտնչող հրամանատարներն արդեն հաջորդ իսկ օրը ստանում են գեներալ Նազարբեկյանի հրամանը:

[1] Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1928, թիւ 5, էջ125-126:
[2] Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, էջ 145:

Դրոն հայ եւ թուրք հրամանատարության միջեւ կնքված ժամանակավոր զինադադարի մասին տեղեկանում է մայիսի 29-ին, երբ նրա գլխավորած զորքը գտնվում էր Ծաղկահովիտ գյուղի մերձակայքում: Ինչպես նա, այնպես էլ Արարատյան ուղղության զորահրամանատար գեներալ Մ. Սիլիկյանն ու Սարդարապատի հայկական զորագնդի հրամանատար Դանիել Բեկ-Փիրումյանը, որպես զինվորականներ, պարտավոր էին կատարել գլխավոր հրամանատարության հրամանը:

Պիտի նկատել, որ զինադադարի հրամանն ստանալուց հետո երկուստեք ակտիվ մարտական գործողություններ չեն ծավալել ոչ միայն Բաշ-Ապարանի, այլեւ Սարդարապատի ուղղությունում, չնայած մասնակի բախումներ շարունակվել են մինչեւ հունիսի կեսերը: Անժխտելի է նաեւ՝ այն իրողությունը, որ թուրքական զորքերի հրամանատարությունը երբեք չէր նպատակադրվի գնալ զինադադարի, եթե չլիներ Սարդարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսայի ուղղություններում Հայոց զորքերի կողմից ստացած ջախջախիչ հարվածները:

Նազարբեկյանի հրամանը խոր հիասթափություն եւ վրդովմունք է առաջ բերում մայիսյան հաղթանակներից գոտեպնդված հայ զինվորների ու բնակչության շրջաններում:

Հունիսի 2-ին Երեւանի Ազգային Խորհուրդը ստանում է Հայոց Ազգային Խորհրդի նախագահ Ավ. Ահարոնյանի եւ քարտուղար Ն. Աղբալյանի ստորագրությամբ վավերացրած հետեւյալ հեռագիրը. «...Ազգային Խորհուրդը ստիպված եղաւ ընդունել ուլտիմատումը (նկատի ունի Բաթումիի բանակցություններում թուրքական պատվիրակության կողմից Անդրկովկասի կառավարությանը ներկայացրած վերջնագիրը-Հ.Գ.), մի կողմից փրկութեան յոյս չունենալով, չցանկանալով հայ ժողովրդին անհաւասար կռւի, գաղթի, հիւանդութեան եւ սովի զոհ դարձնել: Ինչպէս անցեալ անգամ գրեցինք, մենք յոյս չունինք, թէ այս հաշտութիւնը տեւական կլինի, բայց ուրիշ ելք չէր մնում Հայոց Ազգային Խորհրդին, քան անել այս քայլը...»[1]:

Վերլուծելով այդ օրերին Երեւանում տիրող դրամատիկ իրավիճակը՝ Ս. Վրացյանը գրում է.

[1] ՀԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 11, թ. 1:

«...Ցուսահատությունը անսահման էր. Երեւանի Ազգային Խորհուրդը անընդհատ նիստեր էր գումարում, բայց որոշ եզրակացություններ չէր կարող յանգել. մեծամասնություն չէր կազմում: Արամը գրեթէ չէր մասնակցում այդ նիստերին. նա ամփոփուել էր իր մէջ եւ սպասում էր զոր. Նազարբէկեանին: Ազգային Խորհուրդն ալեկոծուում էր առանց նրան- ոմանք առաջարկում էին հաշտուել կացութեան հետ եւ ընդունել Բաթումիի դաշնագրի պայմանները, ուրիշները- գլխաւորապէս, դաշնակցականները - պահանջում էին չեղեալ համարել զօրավար Նազարբէկեանի հեռագիրը հաշտութեան մասին, զօրքերի ընդհանուր հրամանատար նշանակել զօրավար Սիլիկեանին եւ շարունակել պայքարը:

Ցուցարարները, կանայք եւ օրիորդներ - դրօշակները ձեռներին՝ կանգնում էին Ազգային Խորհրդի շէնքի առջեւ եւ ներկայացուցիչների բերանով յայտարարում, թէ իրենց շրջանը ամբողջ ունեցուածքն ու կռուող ուժերը տրամադրում է Ազգային Խորհրդին, միայն թէ թշնամու պայմանները չընդունեն:

Վճիռ տալը այնչափ դժուար էր. վտանգը շատ էր մեծ: Հայկական զօրքերի ընդհանուր քանակը, այդ օրերին հասնում է 30 ոչ լրիվ գումարտակների, մինչդեռ Թուրքիան շարժման մէջ էր դրել 5 դիւիզիա (3-րդ, 5-րդ, 9-րդ, 11-րդ, 36-րդ), այսինքն 50 գումարտակ եւ ի վիճակի էր նորանոր ուժեր հասցնելու: Հայ զինուորների թիւը 12000-ը չէր անցնում: Թիւրքերն առաջ էին քաշել 35000 կռուող:

Ազգ. Խորհուրդը չկարողացաւ միակամութիւն երեւան բերել, եւ զոր. Սիլիկեանին մնում էր ենթարկուել զոր. Նազարբէկեանի հրամանին: Պատերազմը վերջացաւ»[1]:

Պատերազմը շարունակելու կամ դադարեցնելու վերաբերեալ իր վճռորոշ խոսքը պիտի ասեր նաեւ Երեւանի Ազգային Խորհուրդն ու նրա առաջնորդ Արամ Մանուկեանը: Երեւանն արդեն ստացել էր պատերազմը դադարեցնելու վերաբերեալ հայկական զօրքերի հրամանատար գեներալ Թ. Նազարբեկեանի հրամանն ու Հայոց Ազգային Խորհրդի որոշումը: Համանման իրավիճակում Երեւանի Ազգային Խորհուրդն ու Արամ Մանուկեանն այլընտրանք ունենալ չէին կարող:

Իրոք, ռազմաճակատում եւ հատկապես Անդրկովկասյան Հանրապետության բարդ եւ քաոսային իրավիճակը դժվարին երկընտրանքի առջեւ էր կանգնեցրել Հայոց Ազգային Խորհրդին: Մայիսի 26-

[1] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 144-145:

ին Անդրկովկասյան Սեյմի լուծարման եւ նույն օրը վրացիների կողմից Անդրկովկասյան կառավարության կազմից դուրս գալու ու անկախության հռչակագիր ընդունելու քայլերը նոր կացության առջեւ կանգնեցրին Հայոց Ազգային Խորհրդին:

Հայոց Ազգային Խորհուրդը՝ հայտնվելով դժվարագույն իրավիճակում, բնականաբար, ստեղծված կացությունից դուրս գալու համար պիտի համապատասխան քայլեր ձեռնարկեր: Մայիսի 26-ին գումարվում է Հայոց Ազգային Խորհրդի նիստ, ուր պետք է որոշվեր Հայաստանը անկախ հանրապետություն հռչակելու կամ չհռչակելու խնդիրը: Ազգային Խորհրդի անդամ Արտաշես Բաբալյանի (հետագայում Հայաստանի Հանրապետության խնամատարության նախարար -Հ.Գ.) վկայությամբ այս խնդրի վերաբերյալ տիրապետել է երկու հիմնական կարծիք.

1. Ազգային Խորհրդի մի մասը, որոնց թվում նաեւ ինքը՝ Արտաշես Բաբալյանը, ինչպես նաեւ Ավ. Ահարոնյանն ու Ռուբեն Տեր-Մինասյանը, պնդել են, որ չպետք է հռչակել Հայաստանի անկախությունը: Իրենց տեսակետը հիմնավորելու համար նրանք վկայակոչել են հետեւյալ փաստարկները.

ա. Հայկական տարածքների մեծ մասը գտնվում էր Թուրքերի տիրապետության տակ:

բ. Անդրկովկասը երեք անկախ մասերի բաժանելը Թուրք իշխանությունների կողմից առաջադրված պայմաններն էին:

Ելնելով այդ նախադրյալներից՝ նրանք գտնում էին, որ ներկա պայմաններում Ռուսաստանից անջատվելը վտանգավոր է եւ ոչ նպատակահարմար: Անդրկովկասում տիրապետող վատթարագույն իրավիճակի ստեղծման գործում մեղադրելով իրենց վրաց գործընկերներին, նրանք դատապարտում եւ քննադատում էին նրանց անջատողական քայլերը: Իհարկե, վրացական կողմի դրսեւորած հակահայ քայլերն ակնհայտ են, բայց իզուր է նրանց մեղադրելը: Վրաց ազգային գործիչներն արել էին ճիշտ եւ ճիշտ այն, ինչը թելադրում էր ժամանակը եւ Վրաստանի շահերը:

2. Ազգային Խորհրդի մյուս անդամները, որոնց թվում էր Սիմոն Վրացյանը, կողմ էին Հայաստանի անկախության հռչակմանը[1]:

Մայիսի 27-ի հարավ կովկասյան Թուրքերի (Թաթար) կողմից իրենց անկախությունը (ապագա Ադրբեջանի Հանրապետություն) հռչակելու փաստն ավելի է հստակեցնում ձեռնարկվելիք քայլերը:

[1] Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1923, յունիս, էջ 43:

Մայիսի 28-ին, Հայոց Ազգային խորհուրդը դեռեւս անկախության հռչակագիրը չընդունած՝ որոշում է վերստին պատվիրակություն (Ալ. Խատիսյան, Հովհ. Քաջազնունի, Մ. Պապաջանյան) ուղարկել Բաթումի եւ Հայաստանի անունից Թուրքական կողմի հետ վերսկսել ընդհատված բանակցությունները:

Մայիսի 29-ին Թիֆլիսում գումարվում է Հ.Յ.Դաշնակցության Արեւմտյան եւ Արեւելյան Բյուրոների, Ազգային խորհրդի դաշնակցական ներկայացուցիչների, ինչպես նաեւ Սեյմի հայ պատվիրակների միացյալ խորհրդաժողովը, ուր մեկ անգամ եւս քննարկելով Անդրկովկասում եւ ռազմաճակատում տիրող քաղաքական ու ռազմական իրավիճակը, որոշվում է Հայաստանը հռչակել անկախ հանրապետություն: Եվ խորհրդաժողովի վճռից հետո միայն Հայոց Ազգային խորհուրդը որոշում է ընդունել հետեւյալ հռչակագիրը.

«Անդրկովկասի յայտարարութիւնը քաղաքական ամբողջութեան լուծումով եւ Վրաստանի ու Ադրբեջանի անկախութեան հռչակումով ստեղծուած նոր դրութեան հանդէպ Հայոց Ազգային խորհուրդը իրեն յայտարարում է հայկական գաւառների գերագոյն եւ միակ իշխանութիւն: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մօտիկ օրերում կազմել Հայոց Ազգային կառավարութիւն: Ազգային խորհուրդը ժամանակաւորապէս ստանձնում է կառավարութեան բոլոր ֆունկցիաները հայկական գաւառների քաղաքական եւ վարչական ղեկը վարելու համար:

1918 թ. Մայիս 30, Թիֆլիս, Հայոց Ազգային խորհուրդ»[1]:

Մայիսյան հերոսամարտերը հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի միասնության եւ անպարտ ոգու դրսեւորման հիասքանչ օրինակ են, որոնց ծնունդն ու արդյունքն էր Հայաստանի Հանրապետությունը: Հարյուրամյակներ շարունակ ազգային պետականությունը կորցրած հայությունը անպատմելի արհավիրքների ու հերոսական մաքառումների գնով ձեռք բերեց իր հայրենի փոքրիկ հողակտորում գոյատեւելու, ազատ ու անկախ ապրելու իրավունքը:

Արժանվույնս գնահատելով Հայաստանի անկախության հռչակման գործում մայիսյան հերոսամարտերի եւ հայկական զորքերի ավանդն ու նշանակությունը, Հայոց Ազգային խորհրդի նախագահ Ավ. Ահարոնյանն ու քարտուղար Ն. Աղբալյանը Երեւանի Ազգային խորհրդին հասցեագրված՝ 1918 թ. հունիսի 5-ին թվագրված ուղերձում գրում են. «Ձեր կռիւների մասին մենք տեղեկութիւններ ստացանք Վեհիբ փաշայից: Մեր թեկուզ եւ ոչ մեծ եւ աղքատ, սակայն ազատ Հայաստանի համար մենք պարտական ենք զօրքերի ինքնազոհողութեանը: Պէտք է ենթադրել, որ զօրքերի ընդհարումները թուրքերին ստիպեցին ճանաչել Հայաստանը»[1]:

Այս հարցում երկրորդ կարծիք լինել չի կարող: Եթե չլինեին մայիսյան հերոսամարտերը, հայ ժողովրդի եւ հայկական բանակի հերոսական դիմադրությունը, ապա թուրքերը երբեք չէին համաձայնի դադարեցնել պատերազմական գործողությունները եւ առավել եւս, թեկուզ փոքր հողակտորի վրա, ճանաչել Հայոց անկախ պետականությունը՝ Հայաստանի Հանրապետությունը:

Մայիսյան հերոսամարտերի պատմական նշանակության մասին հետաքրքիր եւ ուշագրավ գնահատական է տալիս գեներալ Գ.Ղորղանյանը. «... անհրաժեշտ է քանի մը խօսք ասել մայիսի 24-էն մինչեւ մայիսի 26-ը Հայկական Զօրամարմնի մղած կռիւներու նշանակութեան մասին, երբ հայկական զօրքերը մասնակի տաքթիք յաջողութիւններ ունեցան Ղարաքիլիսէի, Սարդարաբադի եւ Բաշ-Աբարանի մօտ՝ զօրավար Նազարբեկեանի, զօրավար Սիլիկեանի եւ Դրօյի հրամանատարութեան տակ:

Այդ յաջողութեանց ռազմական արդիւնքը այն էր, որ թուրքերու յառաջացումը առժամապէս կասեցուեցաւ, ու անոնք բաւական ժամանակ կորսնցուցին: Իսկ քաղաքական արդիւնքը ուղղակի նշանակալի եղաւ հայ ժողովուրդի ապագայի համար»[2]:

Ինչպես արդեն նշվել է, թուրքերի գլխավոր խնդիրը հնարավորինս արագ դեպի Բաքու դուրս գալն էր: Գերմանիան ու նրա զինակից տերությունները պատերազմում Անտանտայի տերություններին վերջնական պարտության մատնելու նպատակադրությամբ՝ պատրաստվում էին վճռական ռազմական գործողությունների եւ նրանց չափազանց անհրաժեշտ էր վառելիք՝ նավթ, որը գտնվում էր Բաքվում: Թուրք հրամանատարության հաշվարկով թուրքական զորքերը պետք է արագորեն ընկճեին իրենց ճանապարհը պատնեշող հայկական զորամասերի դիմադրությունը եւ շարժվեին դեպի Բաքու, ապա նաեւ Կովկասի թուրքաբնակ մյուս վայրերը: Սակայն այս անգամ նրանց հաշվարկներն այնքան էլ ճիշտ չէին:Հայկական զորքերն իրենց հերոսական դիմադրությամբ խափանեցին նրանց

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 1/1, գ. 6:

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 125-127:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1928, յթիւ 5, էջ 126:

ծրագրերը, եւ թուրքերը կորցրին իրենց համար չափազանց կարեւոր ավելի քան հինգ ամիս ժամանակը:

Գեներալ Գ. Ղորղանյանը՝ շեշտելով թուրքերի ժամանակի կորուստը, նկատի ունի հենց այս հանգամանքը:

«... այդ կռիւները,- նշում է գեներալ Ղորղանյանը, - ցոյց տուին, որ Հայկական Զօրամարմնի դիմադրական կորովը խորտակուած չէ, եւ որ թուրքերը պէտք էին գործ դնել բաւական ջանք ու ատեն, որպէսզի ստիպէին Զօրամարմինը՝ զէնքը վար դնել»[1]:

Մայիսյան հերոսամարտերում եւ նրան նախորդած կռիվներում հայկական զորքերի դրսեւորած անկոտրում դիմադրությունն ու ձեռք բերած նվաճումը, ըստ գեներալ Ղորղանյանի, թուրք հրամանատարությանը կանգնեցնում է երկընտրանքի առջեւ. կամ պետք է շարունակել պատերազմը, որն անվերապահորեն նշանակում էր ուժերի կորուստ եւ գլխավոր նպատակի՝ Բաքու ու թուրքաբնակ մյուս վայրերը դուրս գալուց հրաժարում անորոշ ժամանակով, կամ հանուն գլխավոր նպատակի իրականացման, գոնե ժամանակավորապես, Հայաստանի հետ հաշտություն:

Երկընտրանքից դուրս գալու ելքը գտնվեց.

«Վերոհիշեալ կռիւներէն քանի մը օր յետոյ, - շարունակում է գեներալ Ղորղանյանը,- Թուրքիա ճանչցաւ Հայաստանի անկախութիւնը, ստորագրելով անոր հետ հաշտութեան դաշինք (4 յունիս 1918) ու ձեռք բերելով գործողութեանց ազատութիւն այդ ռազմաբեմի վրայ: Թուրքերը վճռեցին այդպիսի քայլ մը առնել, վասնզի չվաւերացնելով դաշինքը՝ միշտ հնարաւորութիւն ունէին պատեհ վայրկեանին իրենց զէնքը Հայաստանի դէմ դարձնել:

Կեդրոնական պետութիւններու պարտութիւնը ի դերեւ հանեց այդ ծրագիրը:Իովին կտրուած լինելով արտաքին աշխարհէն, հայ ժողովուրդը իր փրկութեամբ պարտական է միայն իր որդիներու՝ Ղարաքիլիսէի, Բաշ-Աբարանի եւ Սարդարաբատի մարտիկներու դիւցազնութեան»[2]:

Ահա պատմական այդ իրողության Դրոյի գնահատականը.

«Կատարուեց հրաշքը: Դաշնակցութիւնը կարողացաւ ի մի հաւաքել եւ գոյապայքարի ճակատ նետել հայութեան բոլոր կենդանի ուժերը: Հայաստանն ամբողջ, մեծով- պզտիկով, ոտքի կանգնեց եւ պատուով մեռնելու կամ ազատ ապրելու վճռով կուրծք տուեց թշնամուն: Որքան յուզիչ դրուագներ եւ հերոսական դէպքէր կարելի է նկարագրել այն կռիւներից, որոնց արդիւնքը եղաւ մայիսի 28

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, էջ 127:

պատմական թուականը: Սարդարապատի, Ղարաքիլիսէի, Բաշ-Աբարանի ճակատամարտերուն մէջ իր տարած անօրինակ յաղթանակներով՝ հայ ժողովուրդը տիրացաւ ազատ եւ անկախ ապրելու անփոխարինելի բարիքին: Այդ ճակատամարտերն եղան պատճառ, որ տաճիկները հարկադրուեցին դաշինք կնքել հայերի հետ եւ ճանաչել Հայաստանի անկախութիւնը:

Ցարգանք հայ ժողովրդին, նրա յեղափոխական մարտիկներին եւ ղեկավարներին, փառք հայ բանակին եւ նրա անձնուէր զինուորներին ու սպաներին, որոնք գիտցան արհամարհել ամէն դժուարութիւն եւ կամքով խոյացան մահուան դէմ՝ մինչեւ արեան վերջին կաթիլը կռուելու վճռականութեամբ:

Այդ հերոսների կերտած թուականն է մայիսի 28-ը»[1]:

Եթե ըստ ամենայնի անաչառ գնահատենք Մայիսյան հերոսամարտերի դերն ու նշանակությունը, ապա պիտի փաստել, որ այդ ճակատամարտերում հայ մարտական ուժերի նվաճած հաղթանակը ոչ միայն անգնահատելի է իր համազգային պատմական նշանակությամբ, այլեւ մեկ այլ ակնառու իրողությամբ: Թուրք հրամանատարության հարձակման նպատակետը ոչ միայն Հայաստանն էր, այլեւ Բաքուն եւ Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսը: Հարց է ծագում. ինչպիսի՞ իրավիճակում կհայտվեին Բաքուն պաշտպանող Կոմունայի զորքերը, եթե չլինեին հայկական զորամասերի հերոսական դիմադրությունն ու Սարդարաբատի, Բաշ Ապարանի եւ Ղարաքիլիսայի հերոսամարտերը:Նույնը հավասարապես վերաբերում է Վրաստանին ու նրա մայրաքաղաք Թիֆլիսին:

Անտարակույս, եթե թուրքական զորքերին հաջողվեր արագորեն հաղթահարել Երզնկայից, Էրզրումից մինչեւ Սարդարաբատ, Ապարան եւ Ղարաքիլիսա ընկած տարածքում մարտնչող հայկական զորքերի դիմադրությունը, ապա նրանք կարող էին առավել հեշտությամբ ու անհամեմատ կարճատեւ ժամանակահատվածում հայտնվել Բաքու ու Թիֆլիս եւ իրենց համագործակցող տեղի մարտական ուժերի համագործակցությամբ՝ գրավել այդ քաղաքները:

Այս առումով ուշագրավ է Ա. Հարությունյանի դատողություններն ու տրված գնահատականները:

Թեպետ նա իր դատողություններում ու գնահատականներում անհամեմատ քիչ է հիշատակում Բաշ Ապարանի ճակատամարտը, սակայն իրավացիորեն նշում է. «...միթե՞ պարզ չէ, որ եթե Սարդարաբատում և Ղարաքիլիսայում հայկական զորքերը չկաշկանդեին, չկազմալուծեին թուրքական դիվիզիաների հարվածային ուժերը,

[1] «Հայաստանի Հանրապետութեան 60-ամեակը 1918-1978 թթ.», էջ 5:

ապա նրանք հաղթական արշավով կհայտնվեին Ղազախում, Ելիզավետապոլում...

Ավելին, այդ դիվիզիաները ավելի շուտ կհայտնվեին Բաքվի մատույցներում, քան Շահումյանն ու Կուրգանովը կհասցնեին կազմավորել կոմունայի զորքերը»[1]:

Ա. Հարությունյանի գնահատմամբ՝ հայկական զորքերի դիմադրությունը կանխեց նաեւ դեպի Վրաստան, Թիֆլիս առաջացող Թուրքական զորքերի հարձակումը եւ դա հնարավորություն ընձեռեց վրացիներին ժամանակ շահել ու համոզել գերմանացիներին ու Թուրքերին, որպեսզի «...ռազմական էշելոնները Թիֆլիսով չանցնեն: Սակայն, եթե Թուրքական այդ դիվիզիաները, որոնց մարտունակությունը ջարդվեց Սարդարաբատում եւ Ղարաքիլիսայում, իրենց լիակատար կազմով հայտնվեին Սաղախլու կամ Նավթալուղ կայարաններում, ապա հազիվ Թե որեւէ մեկը կասկածեր, որ նրանք, արհամարելով բոլոր համաձայնագրերը, հիմնովին տակնուվրա կաներին Թիֆլիսը»[2]:

Դրոյի մարտական գործունեության այդ ժամանակահատվածին փոքր-ինչ իրազեկ մարդը կարող է անվարան հաստատել Սիմոն Վրացյանի հետեւյալ կարծիքը.

«Ցիշենք միշտ, որ եթէ այսօր Հայաստանը Հայաստան է իր ազգային կազմով եւ ազգային պետական կառույցով, հայութիւնն այդ բանի համար երախտագէտ պէտք է լինի առաւելապէս Արամին ու Դրոյին եւ, իհարկէ, Արարատեան աշխարհի հայ ժողովրդին ու գործիչներին»[3]:

Մայիսյան հերոսամարտերի հաղթանակի եւ Հայաստանի Հանրապետության կերտման գործում Դրոյի հիրավի անգնահատելի ներդրումն ու վաստակը արժանվույնս գնահատել ու նշել են նրա ժամանակակիցներից շատերը:

Մի ուշագրավ վկայություն եւս: Համառոտակի նարագրելով Երեւանյան զորախմբի մայիսի 22-29-ին ծավալած արգասաբեր գործողությունները՝ կորպուսի հրետանային բրիգադի հրամանատար, իսկ 1919 թվականից մինչեւ 1920 թ. մայիսը Հանրապետության պաշտպանության նախարար գեներալ Արարատյանը գրում է. «...ուզում եմ մի քանի խոսք ասել Երեւանի Ազգային Խորհրդի գործունեության մասին, որի ոգին էին Արամ Փաշան(Մանուկյան) ու ոգով զինվորական, մեր ազգային հերոս Դրոն:

[1] Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 188:
[2] Նույն տեղում:
[3] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Դ, էջ 182:

Երեւանի շրջանում,-իշխանությունը ամուր գտնվում էր Արամ Մանուկյանի ձեռքում, որը համերաշխ գործում էր ժողովրդին ու զորքին ոգեշնչող գեներալ Սիլիկյանի եւ Դրոյի հետ: Երեւանի շրջանի ռազմական եւ տնտեսական հզորության կազմակերպման նրանց ակնառու ունակությունը հայերին հնարավորություն տվեց զենքը ձեռքին պահել մի կտոր հողը, միակ քաղաք Երեւանը եւ Սուրբ Էջմիածնի վանքը: Եվ եթե մեր՝ հայերիս հետ հաշվի էին նստում այն ժամանակ եւ հաշվի են նստում այժմ, ապա այդ ես վերագրում եմ բացառապես երեք անձանց՝ Արամին, գեներալ Սիլիկյանին, Դրոյին»[1]:

Բազում կռիվների հորձանուտում թրծված մարտական գեներալի անկեղծ խոստովանությունն ու գնահատականը ավելի քան խոսուն է:

Աբ. Գյուլխանդանյանի գնահատմամբ՝ «Եթէ մեր այժմեան փոքրիկ հայրենիքը 1918 թուին ձեւաւորուեց եւ իրական կերպարանք ստացաւ, Դրոյի բազկի ուժով եւ նրա կորովով էր, որ այդ հայրենիքի անկիւնաքարերից մէկը դրուեց...»[2]:

Իսկ այդ ընթացքում Բաթումիում բանակցությունները դեռեւս շարունակվում էին: Բանակցությունների մասնակից հայ պատվիրակների հետագա խոստովանությունից պարզվում է, որ մայիսյան դեպքերի ազդեցության շնորհիվ փոխվում է նաեւ թուրք պատվիրակների ընդգծված կարծր ու կոշտ վերաբերմունքը: Թուրքերը, որոնք մինչ այդ առաջնորդվում էին միմիայն Վրաստանի եւ Ադրբեջանի անկախությունը ճանաչելու դիրքորոշմամբ, այժմ արդեն խոսում էին նաեւ Հայաստանի մասին, իսկ նրանց պատվիրակության ղեկավար Խալիլ փաշան նույնիսկ խնդրում է հայ պատվիրակներին Հայոց Ազգային Խորհրդին հաղորդել, որ իրենք համաձայն են «Հայաստան կազմակերպելուն Կովկասի այն վայրերում, որոնք իրենց կողմից գրավված են...»[3]:

Հունիսի 4-ին հայ եւ թուրք պատվիրակությունների միջեւ ստորագրվում է նաեւ պատերազմը դադարեցնելու մասին համաձայնագիրը: Թուրքերը, ճակատագրի դառը հեգնանքով, առաջինը ճանաչելով Հայոց անկախ Պետականությունը, Հայաստանի Հանրապետությունը՝ համաձայնվում են Հայաստանի համար սահմանված մոտավորապես 10000 քառակուսի կիլոմետրին ավելացնել եւս 1000 քառակուսի կիլոմետր: Հանրապետության սահմանները հասնում էին

[1] ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 82, թ. 18:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1953, թիւ 12, էջ 135:
[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 11, թ. 42-44:

Ջաջուռ կայարանից Ալագյազի գագաթը եւ այնտեղից ձգվում դեպի Վաղարշապատ[1]:

Այսպիսով, Անդրկովկասյան Սեյմի ու կոմիսարիատի լուծարմամբ, համաձայն Բաթումի պայմանագրի, Անդրկովկասում ձեւավորվում են երեք հանրապետություններ՝ Հայաստան, Վրաստան եւ Արեւելակովկասյան մուսուլմանական հարապետություն, որը Նուրի փաշայի կողմից Բաքուն գրավելուց հետո, կոչվեց Ադրբեջանական դեմոկրատական հանրապետություն[2]:

Անդրկովկասում նոր-նոր ծնունդ առած հանրապետությունների փոխհարաբերություններն ի սկզբանե կրում էին ոչ թե բարեկամական, այլ ավելի շուտ թշնամական բնույթ, քանզի նրանց միջեւ կային հողային, տնտեսական ու բազում այլ վիճահարույց խնդիրներ, որոնք որեւէ պահի կարող էին վերածվել առճակատման ու զինված բախումների:

Ռուբենը, վերլուծելով Անդրկովկասյան նորստեղծ երեք հանրապետությունների փոխհարաբերությունը, վկայակոչում է Անդրկովկասի վիճակագրությունն ու ժողովուրդների քանակական կազմն ու դասավորվածությունը, որոնցով պայմանավորված էին Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի հանրապետությունների ներքին ու արտաքին քաղաքականությունը:

Ըստ Ռուբենի՝ «Համաձայն ռուս պաշտոնական վիճակագրության, 1915 եւ 1917 թուականներին՝ Անդրկովկասի 195.000 քառ. վերստ(1 քառ. վերստը հավասար է 1,14 քառ. կիլոմետրի) տարածության վրայ կապրէին(՞) –

Հայ——————————1.786.000
Մահմեդական——————— 2.522.000
Վրացի——————————1.784.000
Զանազան——————————914.000
Գումար——————7. 006.000 »[3]:

Ներկայացնելով Անդրկովկասի ազգաբնակչության վիճակագրական տվյալները՝ Ռուբենը կատարում է հետեւյալ պարզաբանումը. «Ի՞նչ են ասում այս թվերը: Եթէ նկատի առնենք, որ վրացիների թուի մէջ մտնում են մօտ 130.000 մահմեդական վրացիներ, իսկ 2. 522.000 իսլամների մէջ մտնում են տաճիկներ, քիւրտեր, լեռնականներ, եւայլն(որոնք եթէ դուրս հանելու լինենք՝ մօտ 1.600.000 թաթար է մնում Անդրկովկասում)»[1]:

Ներկայացնելով Անդրկովկասի ազգաբնակչության վերոհիշյալ վիճակագրությունը՝ Ռումենը կատարում է հետեւյալ ուշագրավ եզրակացությունը.

«ա. Որ Անդրկովկասի թաթար, հայ եւ վրացի տարրերը համարեա հաւասար ոյժ կը ներկայացնեն.

բ. Որ հաւասար ուժերը պիտի ձգտում ունենային հաւասար կտորների բաժանել Անդրկովկասը:

Եւ իրօք, այս ուժերի հաւասարութիւնը ստեղծում էր երեք իրարու հաւասար հակադիր ուժեր, որոնցմէ իւրաքանչիւրը կը ջանար իր սահմանները գծել կամ ազգագրական իրաւացի հիմքի վրայ եւ կամ սահմանային, տնտեսական, զինուորական եւ քաղաքական շահերու նկատառումով»[2]:

Կովկասյան հանրապետություններնը դեռ նոր էին ձեւավորվում եւ միայն ժամանակը ցույց կտար, թե ինչպես ուղղվածությամբ էին ընթանալու նրանց փոխհարաբերությունները: Իսկ Բաթումիում արդեն կնքվել էր համաձայնագիր եւ հայոց զորքերի հրամանատարությանը այլեւս ոչինչ չէր մնում անելու, բացի վերոհիշյալ համաձայնագրի կենսագործումից:

Զինադադարի հրամանն ստանալուց հետո նույնպես անորոշ վիճակում հայտնված Դրոն վերադառնում է Երեւան: Հայկական զորքերի հրամանատարական կազմի շրջանում, ինչպես որ սպասվում էր, դարձյալ տիրել են իրարամերժ տեսակետներ պատերազմի հետագա ընթացքի վերաբերյալ:

Բաթումի հաշտության պայմանագրից իր դժգոհությունն ու անհամաձայնությունն է արտահայտել Անդրանիկը:

Ակադեմիկոս Հր. Սիմոնյանի գնահատմամբ՝ «Անդրանիկին հատկապես հավասարակշռությունից հանել էր պայմանագրի 4-րդ հոդվածը, որի համաձայն ինքն ու իր զորքը, ըստ էության, համարվում էին օրենքից դուրս: Միայն իր զորամասի զինվորների թիվը ավելի քան երկու անգամ գերազանցում էրմ հայոց հանրապետության համար նախատեսված զորքի թվին(համաձայն Բաթումիի պայմանագրի՝ Հայաստանին իրավունք էր վերապահվում ունենալ 1200 զինվորներից բաղկացած բանակ-Հ.Գ.)»[3]:

---

[1] Նույն տեղում, գ. 12, թ. 12-13:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 7, էջ 178:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, էջ 178-179:
[3] Սիմոնյան Հ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 161:

Մերժելով Բաթումիի պայմանագիրը՝ Անդրանիկը հրաժարվում է կատարել իր զորամասը ցրելու Հայկոց Ազգային Խորհրդի պահանջը՝ պատճառաբանելով, որ իր զորքը բաղկացած է արեւմտահայ զինվորներից, իսկ հաշտություն կնքողը Ռուսահայ Ազգային Խորհուրդն է:

Իր գլխավորած Հարվածող Զորամասի հետագա անելիքները որոշելու նպատակով՝ Անդրանիկը հունիսի 4-ին հրավիրում է զինվորական խորհրդի նիստ: Իր ելույթում ընդգծելով, որ ինքն ու իր զորքը զրկված են Հայաստանում մնալում իրավունքից՝ Անդրանիկը հայտնում է, քանի որ իրավունք չունի զորամասը ցրելու, ուստի «...միայն մի ելք է տեսնում՝ զորքով ու գաղթականների զանգվածով հեռանալ Հայաստանի Հանրապետության տարածքից:

...Հարվածող Զորամասի զինվորական խորհուրդը որոշում է թողնել Կովկասը և բռնել Բաղդադի ճանապարհը»[1]:

Նույն օրը՝ հունիսի 4-ին, զինվորական խորհրդի նիստի ավարտից հետո, Անդրանիկը գեներալ Նազարբեկյանին, Հայոց Ազգային Խորհրդին ու Հայաստանի Ապահովության Խորհրդին հասցեագրած հեռագրում հայտնում է. «Նկատի ունենալով, որ Դուք սեփական ձեռքով Ձեր վրա եք նետել սև ստրուկի հավերժական շղթաները՝ և՛ խիղճը, և՛ պատիվը անամոթաբար ծախելով դրանց նկատմամբ ոտնձգություն անող անպատկառ հակառակորդին, հաղորդում եմ, որ իմ զինվորը այսուհետև չի կարող մնալ իր դիրքերում որպես անզեն մարտիկ և լինել լկտի հակառակորդի կողմից բազմաչարչար հայրենիքի սուրբ մարմնի պղծման լուռ վկան, ուստի իմ ջոկատը այսօր երեկոյան կամ վաղը առավոտյան կմեկնի այստեղից: Կարգադրեք Սեմյոնովկայում կանգնած զորամասերին առաջ շարժվելու և գրավելու իմ ջոկատի կողմից այժմ զբաղեցրած դիրքերը »[2]:

Անժխտելի է, որ եթե Անդրանիկի առաջնորդած ըստ ամենայնի զինված եւ հանդերձավորված զորամասը մասնակցեր Ղարաքիլիսայի ճակատամարտին, ապա բնավ չէր բացառվում, որ այդ ճակատամարտը նույնպես հաղթական ավարտ ունենար: Եթե Սարդարաբատիմ ու Բաշ-Ապարանի հաղթական ճակատամարտերին գումարվեր նաև Ղարաքիլիսայի հաղթանակը, ապա Բաթումիում ընթացող բանակցություններում հայկական պատվիրակությունը անտարակույս կհայտնվեր ավելի շահեկան իրավիճակում ու արդյունքում

[1] Նույն տեղում, էջ 164:
[2] Նույն տեղում, էջ 165:

ձեռք կբերեր ավելի մեծ իրավունք ու հնարավորություն՝ կնքելու հայության համար շատ ավելի դրական պայմանագիր:

Մեղադրանքի ու անարգանքի սյունին գամելով Հայոց Ազգային Խորհրդին ու հայկական բանակի հրամանատարությանը՝ Անդրանիկը բնավ չի խոստովանում ու չի ընդունում ստեղծված դժգույն կացությունում իր ունեցած մեղքի բաժինը:

Այս առումով խիստ ուշագրավ է, իսկ զուտ իմացաբանակ տեսանկյունից բավականին խոսուն Անդրանիկի հեռագրին ուղղված գեներալ Նազարբեկյանի հետեւյալ պատասխանը. «Ստանալով Ձեր հեռագիրը, հայտնում եմ, որ դա ինձ չի վիրավորում, որովհետև անհաջողության գլխավոր հանցավորներից մեկը ես համարում եմ Ձեզ և Ձեր զորամասը: Ունենալով այնպիսի մեծ ուժ, ինչպիսին Ձերն է, միամիտ է պաշարման վտանգի և կորպուսի շտաբի հետ կապ չունենալու պատճառաբանությունը: Ձալալօղլիից նահանջեցիք, ունենալով Ձեր դիմաց տաճկական մի գումարտակ հետևակ զորք և որով մերկացրիք Ղարաքիլիսայի զորամասի շատ կարևոր թևը: Նման երևույթ տեղի ունեցավ նաև Էրզրումի և Սարիղամիշի տակ: Նախքան այդպես անթույլատրելի կերպով մեղադրեիք ձեր ղեկավարին, որի անձնավորությունը և հայացքները անցյալի փորձից շատ լավ գիտեք, պետք էր որոնել ամոթալի հաշտության իսկական հանցավորներին ու պատճառները: Պատմությունը կքննի ու կդատապարտի իսկական հանցավորներին, որոնց պատճառով Հայոց Ազգային Խորհուրդը ստիպված եղավ ընդունել ստորացուցիչ հաշտությունը...»[1]:

Պատերազմը դադարեցնելու վերաբերյալ գեներալ Սիլիկյանի տեսակետն հայտնի է: Սակայն կային նաև այնպիսի ռազմական գործիչներ, որոնք համաձայն էին անգամ Երեւանը հանձնելու գնով ձեռք բերել կռիվները դադարեցնելու համաձայնությունը:

Բաշ-Ապարանի հաղթանակի գլխավոր հերոսն այլընտրանք չէր կարող ունենալ: Դրոյին խիստ զայրացրել էր մեծ զոհողությունների ու զիջողությունների գնով թուրքերի հետ հաշտություն կայացնելու քարոզիչների տեսակետը: Այս կապակցությամբ արդեն բազմիցս հիշատակված Մարտիրոսը պատմում է մի ուշագրավ դրվագ:

«Երեւանում տեղի ունեցած խորհրդակցության մասին լսեցինք, թէ զօրավար Բէդժանբէգովը եւ Դրօն ընդհարուել են: Զօրավարը յայտնել է, որ եթէ տաճիկները ցանկանան վերցնել Երեւանը, մենք

[1] Նույն տեղում, էջ 166:

պէտք է տեղի տանք, քանի որ դիմադրել չենք կարող: Իսկ Դրօն առարկել է ասելով. «Դու նախ քո կինն ու աղջիկները տար յանձնիր տաճիկներին, ապա քեզ իրաւունք համարիր տաճիկներին յանձնելու հայ գիւղացու կինն ու աղջիկները առանց կռուի»:

Ընդհարումը այն աստիճան է հասել, որ Դրօն ցանկացել է ատրճանակով խփել զօրավար Բէժանբէգովին, բայց արգիլել են նրան»[1]:

Զնայած հունիսի 4-ին կնքված զինադադարին՝ դրությունը ռազմաճակատի տարբեր հատվածներում դեռեւս շարունակում էր մնալ լարված ու անորոշ: Թուրքերն այս անգամ էլ հավատարիմ գտնվելով զինադադարը խախտելու իրենց հարազատ սկզբունքին, մերթ-ընդմերթ մինչեւ հունիսի վերջերը փորձել են վերսկսել հարձակումները ե՛ւ Սարդարապատի եւ թե՛ Բաշ-Ապարանի ուղղություններում: Վերոհիշյալ ուղղություններից այդ օրերին ստացված տեղեկագրերն ակնհայտորեն ապացուցում են, որ թուրքերի համար ծայրաստիճան դժվար է եղել հաշտվել անգամ ընդամենը 11000 քառակուսի կիլոմետր տարածք ունեցող նորաստեղծ հանրապետության գոյության հետ[2]:

Հայաստանի նորաստեղծ Հանրապետությունում առավել ծանր իրավիճակում էին գտնվում արեւմտահայ գաղթականները, որոնք բնակության վայր որոնելու ու որեւէ տեղ հաստատվելու նպատակով հարկադրված տեղափոխվում էին մի շրջանից մեկ այլ շրջան: Մահմեդական հրոսակախմբերն այդ տեղափոխությունները խափանելու դիտավորությամբ հաճախակի հարձակվել են գաղթականների վրա եւ կատարել բազմաթիվ սպանություններ ու բռնություններ:

Անհրաժեշտ էր պաշտպանել գաղթականների անվտանգությունը, այլապես նրանք հեշտությամբ կդառնային մահմեդական հրոսակախմբերի հարձակումների զոհը:

Ապարանի ճակատամարտից հետո Դրոն գնդապետ Կորոլկովի գլխավորած պարտիզանական հեծյալ գնդի հեծյան հարյուրակների հրամանատարներ Կուռ Թարխանյանին եւ Սերյոժա Փիրումյանին թույլատրում է ընդամենը երեք օրով գնալ Երեւան, իսկ Մարտիրոսը բուժվելու նպատակով նույնպես մեկնում է մայրաքաղաք: Դրոն իր գլխավորած զորախմբի հետ թեպետ ճակատում մարտական գործողությունները դադարել էին դեռեւս մնում էր Ապարան-Ալեքսանդրապոլ-Թալին տարածաշրջանում՝ մահմեդական

[1] «Հայրենիք» ամսագիր, 1934, մարտ, էջ 107-108:
[2] ՀՅԴ ԿԱ, թղ. 1/1,, գ. 6:

հրոսակախմբերի հարձակումներից պաշտպանելու այդ շրջաններում հանգրվանած գաղթականությանը:

Հովհ.Քաջազնունու գլխավորած Հայաստանի Հանրապետության նորընտիր կառավարությունը Թիֆլիսից դեռեւս չէր ժամանել Երեւան, իսկ Արամ Մանուկյանի ղեկավարությամբ գործող Երեւանի Հատուկ Կոմիտեն(Վարիչների Մարմին) նախկին եռանդով ու նվիրվածությամբ Արարատյան աշխարհշարունակում էր իր գործունեությունը:

Ամերիկահայ նշանավոր պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանը իր հեղինակած «Հայաստանի Հանրապետություն» աշխատությունում, ի թիվս բազում այլ հարցերի, անդրադառնալով Հայաստանի Հանրապետության անդրանիկ կառավարության կազմավորման մանրամասներին՝ նշում է. «Մինչ այդ Հայաստանն անկախ էր՝ համենայն դեպս անվանապես, մեկ ամբողջ ամիս, սակայն վարչության միակ նմանությունը Երեւանի շրջակայքում մնում էր ժողովրդական դիկտատուրան: Այն գլխավորում էր Արամ Մանուկյանը՝ 1915 թ. ինքնապաշտպանության եւ Երեւանի նահանգի 1918 թ. մայիսի դիմադրության առաջնորդը եւ Դրոն(Դրաստամատ Կանայան)՝ փառաբանված պարտիզանական հրամանատարը: Երկու ղեկավարներ, որոնք շատ ժամանակակիցների գնահատմամբ դիտվում էին որպես Հանրապետության իսկական հիմնադիրներ, չազատվեցին իրենց պարտականություններից անգամ Ազգային Խորհրդի կողմից Քաջազնունու կատավարության հաստատումից հետո, որովհետև պաշտոնական կառավարությունը դեռեւս մնում էր Թիֆլիսում...»[1]:

Արամը այդ օրերին թեպետ գործի բերումով գլխավորապես գտնվում էր Երեւանում, սակայն անխափան կապի մեջ էր շրջանների, այդ թվում նաեւ Դրոյի հետ եւ քաջատեղյակ էր Հայաստանի տարբեր վայրերում կատարվող իրադարձություններին:

Մարտիրոսը այդ օրերին տառապել է ստամոքսի սարսափելի ցավերից եւ ինչպես արդեն նշվել է, բուժվելու նպատակով մեկնել է Երեւան: Մինչեւ բժշկին ներկայանալը, հանդիպել է մի քանի ընկերների, որոնք, տեղեկանալով նրա հիվանդության մասին, առաջարկում են մասնակցել իրենց կազմակերպած խնջույքին ու կոնյակ խմել: Տեղի տալով ընկերների հորդորներին՝ Մարտիրոսը խնջույքի ժամանակ մի քանի գավաթ կոնյակ է խմում, որից հետո ի զարմանս իրեն ու ընկերների, ստամոքսի ցավերը խպառ կտրվում են:

Հաջորդ օրը նա ներկայանում է բժիշկներին եւ արժանանում նրանց դժգոհությանն ու հանդիմանությանը:

[1] Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ. 1, Երեւան, 2005, էջ 43:

«Գլխաւոր բժշկի զայրագին յանդիմանութիւնից յետոյ սթափուած, ինքս ինձ հաշիւ էի տալիս անխոհեմութեանս մասին, երբ ներս մտաւ Արամը:

-Ի՞նչ եղաւ, ի՞նչ էք անում,- դիմեց նա գլխաւոր բժշկին:

...Նւազ չեղաւ Արամի զարմանքը ու բարկութիւնը:

-Այդպիսի անխելքութիւն կանե՞ն, իսկ եթէ հիմա մահացած լինէիր...ի՞նչ է քեզ նմաներին փոխարինողներ չա՞տ ունենք: Դէհ, գնա գտիր Կուռոյին ու միւսներին եւ որքան կարող էք շուտ, գնացէք ճակատ, Դրօն մենակ է, ձեզ է սպասում»[1]:

Կատարելով Արամ Մանուկյանի հրահանգը՝ Մարտիրոսը հաջորդ օրը Կուռո Թարխանյանի, Սերյոժա Փիրումյանի եւ մյուսների ընկերակցութեամբ մեկնում են Ապարան եւ անմիջապես ներկայանում այնտեղ գտնվող Դրոյին ու վերստին ստանձնում Ապարանում տեղաբաշխված պարտիզանական հեծյալ գնդի կազմում գործող իրենց հարյուրակների հրամանատարությունը:

Դրոն համապատասխան հանձնարարություն է տալիս իր հրամանատարության տակ գնվող զորամասերի հրամանատարներին, իսկ Մարտիրոսին ու Կուռոյին հանձնարարում է «...շարժել դէպի Զանգիբասարի Հաջի Էյլազ գիւղը եւ բռնել Ենգիջայի բարձունքից մինչեւ Թազաքենդի դիմացի երկաթուղագիծը:

Մութն էր արդէն, երբ մի գնացք եկաւ Ալեքսանդրապոլից:

Գնացքը կանգնեցրինք եւ հեռախոսով կապւեցինք Դրոյի հետ: Կարգադրեց, որ թույլ տանք գնացքը շարունակի իր ճամբան:

Գնացքի մէջ էր տաճիկ ոյժերի Կովկասեան ճակատի ընդհ. հրամանատար Խալիլ փաշան, իր սպայակոյտի անդամների հետ, որ Երեւան էր գնում, բանակցելու Ազգային Խորհրդի հետ»[2]:

Դրոյին հրահանգով Ազատ գետի երկայնքով դէպի Գառնի տեղափոխվող Ղամարլուի գաղթականության անվտանգությունն ապահովելու նպատակով գնդապետ Կորոլկովի գլխավորած պարտիզանական հեծյալ գունդը տաղափոխվում է Ղամարլուի (Արտաշատ) շրջան եւ դիրքեր գրավում Ազատ գետաբերանի մերձակա բարձունքների վրա:

Մարտիրոսի վկայությամբ՝ «Առաւօտեան, Միլիի Դարայի թրքութիւնը յարձակւել էր Սբ. Գեղարդի եւ Գողթ գիւղի վրայ: Գառնեցիներից եւ գաղթականներից մի քանի խմբակներ կազմելով, շտապեցի դէպքի վայրը, միաժամանակ մի գրութեամբ այդ մասին տեղեկացնելով գնդ. Կարալկովին:

Հակառակորդին յետ շպրտեցինք եւ հետապնդեցինք մինչեւ Միլլի Դարա, որից յետոյ Վերադարձանք Բաշգառնի»[1]:

Այդ գործողությունից հետո, գնդապետ Կորոլկովի պարտիզանական հեծյալ գունդը, որի կազմում էր Մարտիրոսի հեծելավաշտը, Դրոյի հրահանգով մեկնում է Քանաքեռ՝ հանգստանալու:

Համաձայն զինադադարի՝ սահմանված գոտիներում տեղաբաշխված հայկական զորամասերը մշտապես գտնվել են լարված, կազմ ու պատրաստ վիճակում: Ավելին, օգտվելով թուրքական զորքերի մերձությունից եւ զինական ու բարոյական աջակցությունից, դարձյալ գլուխ են բարձրացնում Հայաստանի տարածքում բնակվող թուրք զինված զանգվածները: Զանգիբասարի եւ Վեդիբասարի շրջանների ողջ տարածքը վերածվում է թուրք հրոսակախմբերի զինված ելույթների ռազմաբեմի, բայց այս անգամ ավելի թույլ ու սահմանափակ ընդգրկումով: Ինչպես եւ ամիսներ առաջ, թուրք զանգվածների «խաղաղացնելու» գործը դարձյալ ստանձնում է Զանգիբասարի ռազմաճակատի զորահրամանատարությունը ընդունած Դրոն:

Հուլիսի 10-ին Հայաստանի Հանրապետության կառավարության անդամները վարչապետ Հովհաննես Քաջազնունու գլխավորությամբ Թիֆլիսից ժամանում են Երեւան:

Հուլիսի 19-ին Դրոն գեներալ Նազարբեկյանի եւ Արամ Մանուկյանի ընկերակցությամբ Երեւանի մերձակայքում դիմավորում է Հովհ.Քաջազնունու գլխավորած կառավարության ու Հայոց Ազգային Խորհրդի անդամներին:

Դրոյի կարգադրությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանը դիմավորող պատվո պահակը գնդապետ Կորոլկովի, Կուռո Թարխանյանի եւ Մարտիրոս Աբրահամյանի գլխավորած հեծելազորն էր:

Վերհիշելով այդ հիշարժան պահը՝ Մարտիրոսը գրում է. «Ի՜նչ երջանիկ օր էր...Բա՜խտ ունենալ, դիմաւորելու մեր հարազատ կառավարութեան...երազ չէր, այլ իրականութիւն:

Հայաստանի բոլոր շրջաններից Երեւան եկած գիւղացիութիւնը, սայլերը զարդարած, ուրախութեան արցունքն աչքերին, աղոթքը շրթունքներին, դիմաւորում էր իր Նորածին Հանրապետութեան Կառավարութեան...

---

[1] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, նշվ. աշխ., էջ 418:
[2] Նույն տեղում, էջ 419:

[1] Նույն տեղում, էջ 419-420:

Երբ պատուոյ պահակի պետը զեկուցումից յետոյ բարի գալուստ մաղթեց կառավարութեան, Աստաֆեան փողոցն ողողած ժողովուրդն սկսեց հեկեկալ ուրախութիւնից: Միթէ՞ այլ կերպ կարող էր լինել...

Այնքա՜ն զոհաբերութիւն եւ պայքար...

Այնքա՜ն արիւն...այս օրւան հասնելու համար»[1]:

Հովհաննես Քաջազնունու գլխավորած կառավարութեան նախարարութիւնների նախարարներն էին՝ Ալեքսանդր Խատիսյանը՝ արտաքին գործերի, Արամ Մանուկյանը՝ ներքին գործերի, Խաչատուր Կարճիկյանը՝ ֆինանսների, գեներալ Հովհաննես Հախվերդյանը՝ զինվորական:

ՀՀ կառավարությանը զուգահեռ ձեւավորվում է նաեւ Հայաստանի օրենսդիր բարձրագույն մարմինը:

Վրացյանի ներկայացմամբ՝ «Թիֆլիսի եւ Երեւանի Ազգ. Խորհուրդների մի շարք խառն նիստերում վերջնական ձեւ ստացան Ազգ. Խորհուրդն ու կառավարութիւնը: Որոշւեց, հակառակ ժողովրդականների քւէի, եռապատկել Ազգ. Խորհրդի անդամների թիւը եւ հրաւիրել այլազգիների՝ թուրքերի, եզդիների ու ռուսների ներկայացուցիչներին: Այս ձեւով կազմւեց Հայաստանի առաջին օրէնսդիր մարմինը՝ Հայաստանի Խորհուրդ անունով»[2]:

Աննախանձելի առաքելություն էր վիճակվել իրականացնելու Հանրապետության նորընտիր ղեկավարությանը: Երկիրը ծայրահեղորեն քայքայված, տասնյակ հազարավոր անապաստան գաղթականներ, սով ու համաճարակ, իսկ մյուս կողմից՝ մայրաքաղաքից ընդամենը մի քանի կիլոմետր հեռավորության վրա կենտրոնացած թուրքական զորքեր, եւ այդ ամենից զատ թուրք հրոսակախմբերի զինված ելույթներն, ինչպես նաեւ հայ ապստամբների զինված խմբերի (մուզերիստ)անօրինական ու թալանչիական գործողությունները :

Ռ. Հովհաննիսյանի պատկերավոր բնութագրմամբ՝ «Նոր ժամանած վարիչների առջև բացված պատկերը դժվար էր նկարագրել: Ամառվա օդը ծանրացած էր մահվան թանձր ստվերներով: Հիվանդ ու քաղցած մարդիկ ուրվականների պես երևում էին ցեխոտ խրճիթների խորշերում ու կեղտի մեջ: Ասում էին, որ թուրքերը խղճացել էին հայերին՝ բավական հող թողնելով զանգվածային գերեզմանի համար, և այդ գնահատականը հազիվ թե չափազանցված թվար Հանրապետության առաջին տառապալից ամիսներին: Տեղացիներն ու գաղթականները սնվում էին մի բուռ ցորենի հատիկներով և խոտերի ու բույսերի ապուրով. բայց ձմռան վրա հասնելով նույնիսկ դրանք էլ անհետացան»[1]:

Դարձյալ առաջնահերթ խնդիրն է դառնում երկրի քաղաքական իրավիճակի կարգավորման հարցերի լուծումը, առանց որի անհնարին էր որոշակի քայլեր ձեռնարկել նորաստեղծ Հանրապետության տնտեսական եւ սոցիալ-քաղաքական կյանքի կարգավորման ուղղությամբ: Անհրաժեշտ էր վճռական քայլեր ձեռնարկել արմատախիլ անելու զինված ելույթներն ու Հանրապետության կառավարությանը հնարավորություն ընձեռել լրջորեն զբաղվելու Հայոց պետականության հիմքերի կառուցման ու ամրապնդման խնդիրներով:

Այն օրերին, երբ Երեւանում Սարդարապատի եւ Բաշ-Ապարանի ճակատամարտերի մասնակիցները հանդիսավորությամբ դիմավորում էին Թիֆլիսից Երեւան ժամանած Հայաստանի Հանրապետության վարչապետ Հովհաննես Քաջազնունու գլխավորած կառավարության անդամներին, Դրոյի գլխավորած հայկական զորագնդերը գրոհում էին Զանգիբասարի եւ Վեղիբասարի շրջաններում գործող թուրքական հենակետերի վրա:

Դրոյի զորագնդերի հարվածներն, ինչպես միշտ, անվրեպ էին: Ջախջախված թուրք զինախմբերը՝ վերջնական կործանումից փրկվելու համար, ստիպված հանձնվում են հաղթողի ողորմածությանը:

Դրոն այս անգամ էլ փայլուն կերպով է իրականացնում թուրքերին «խաղաղացնելու» գործողությունները եւ դրանով ՀՀ նորաստեղծ կառավարությանը ժամանակավորապես ազատում թուրք հրոսակախմբերի հարուցած գլխացավանքից:

Հարկ է ընդգծել, որ մահմեդական հրոսակախմբերի պարբերաբար կրկնվող զինված ելույթների «խաղաղեցմամբ» Դրոն մեծապես նպաստեց Արարատյան աշխարհի մաքրմանը, ավելի ստույգ՝ նրա հայացմանը: Այս առումով ուշագրավ է Ս. Վրացյանի հետեւյալ գնահատականը. «Հարցրեք ոեւէ հայի՝ ո՞ւմ ենք պարտական առաւելապէս Արարատեան դաշտի հայացումը: Այլ եւ այլ-իրական կամ շինծու-անուններ պիտի լսեք ի պատասխան. բայց քչերը հաւանաբար, պիտի տան Դրոյի անունը: Մինչդեռ եթէ այսօր Հայաստանը-անկախ վարչաձեւից-ազգային պետութիւն է, եթէ հայերը կազմում ենՀայաստանի բնակչութեան 80-85 տոկոսը, այդ պարտական ենք Դրոյին եւ ի հարկէ Արամին իրենց գործակիցներով»[2]:

---

[1] Նույն տեղում, էջ 420-422:
[2] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 182:

---

[1] Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 44:
[2] Վրացեան Ս., Սրրկածին Դրոն, էջ103-104:

Թուրք հրոսակախմբերի զինված ելույթները ճնշելը հարցի լուծման միայն մի կողմն է, առաջին կարեւորագույն քայլը: Պակաս կարեւոր չէր մահմեդական բնակչությանը զինաթափելն ու հարկեր գանձելը: Հանրապետությունում հանգրվանել էին տասնյակ հազարավոր գաղթականներ, հարկավոր էր նրանց կերակրել, փրկել սովամահությունից: Այս գործը թեեւ առավելապես վերաբերում է Արամ Մանուկյանին, որպես Հայաստանի Հանրապետության ներքին գործոց նախարարի, բայց թուրքաբնակ գյուղերից հարկեր գանձելու գործընթացին իր գլխավորած զորամասով մասնակցել է նաեւ Դրոն: Նրա որոշմամբ՝ Արամի ենթակայությամբ պիտի գործեին նաեւ գնդապետ Կորոլկովի հեծյալ գնդի բազմափորձ հարյուրյակները, որոնցից Մարտիրոս Աբրահամյանի հեծյալ հարյուրյակը թուրքական գյուղերը զինաթափելու եւ նրանցից հարկեր հավաքելու նպատակով, միլիցիայի ջոկատի հետ միասին գործուղվել է Նոր Բայազետի շրջան:

«Մեր կազմն էր,-գրում է Մարտիրոսը,-Տիգրան Բաղդասարեանն իր զինուորներով, իմ հարիւրակը, Ոզմեցի Սիմոնի 25 ձիաւորները եւ Ոզմեցի Ասլան Ստեփանեանի 70-80 զինվորները»[1]:

Զորախումբը եղել է Զոդում, Բասարգեչարում, Նոր Բայազետում եւ առանց որեւէ բռնության դիմելու՝ պահանջել է հանձնել գյուղացիների մոտ գտնվող զենքերն ու մուծել օրենքով սահմանված երկու տարվա հարկը: Թուրք առաջնորդները հավաքել ու հայկական կողմին են հանձնել են մի քանի տասնյակ հնամաշ ու ոչ պիտանի զենքեր եւ դրանով փորձել ապակողմնորոշել ու չհանձնել մարտական զենքերը: Նրանց համար, իհարկե, անցանկալի էր ոչ միայն զինաթափվելը, այլեւ սահմանված հարկեր վճարելը: Թուրքերը թեպետ խոստացել են հանձնել զենքերն ու հարկերը, սակայն մշտապես տարբեր պատրվակներ վկայակոչելով խուսափել են ու ձգձգել կատարել իրենց տված խոստումը:Ի դեպ, համանման գործելակերպը թուրքերի համար ընդունված ու գերադասելի մարտավարություն էր,, որը հայկական կողմի համար չպետքէ գաղտնիք լիներ:

Պարզվում է, որ խաղաղ ճանապարհով այնքան էլ հեշտ չէր իրականացնել թուրք բնակչության զինաթափումն ու գանձել սահմանված հարկը:Ի՞նչ պիտի արվեր, ելքը մեկն էր:

Մարտիրոսի վկայությամբ՝ «Մի առաւօտ թնդանօթները դրինք Բասարգեչարի վերի մասում: Իմ հարիւրեակը բռնեց Զոդի հարաւային կողմի իշխող դիրքերը, որպեսզի հարեւան գիւղերից օգնութեան չկարողանան հասնել, իսկ Ասլանն ու Սիմոնը յառաջացան դէպի Զոդ: Թնդանօթների որոտը բաւական եղաւ...Զօդեցիք բերին եւ յանձնեցին թէ զէնքերը եւ թէ տուրքը»[1]:

Նույն մարտավարությամբ նրանք գործել են նաեւ Բասարգեչարում, Նոր Բայազետում եւ թուրքաբնակ մյուս գյուղերում, իսկ արդյունքը եղել է ավելի քան արդյունավետ:

«Մեր նշանակած ժամկէտին,-վկայում է Մարտիրոսը,- բոլորն էլ կատարեցին իրենց պարտականութիւնը, հպատակութիւն հայտնեցին կառավարութեան եւ խոստացան հանգիստ մնալ»[2]:

Հայաստանի Հանրապետության կառավարության առջեւ ծառացած առաջնահերթ խնդիրներից էր բանակի կազմավորումը:Նորատեղծ Հ�հ բանակը կազմավորվում է՝ հիմք ունենալով գեներալ Թ. Նազարբեկյանի գլխավորած Առանձին հայկական կորպուսի զորամասերը: Համաձայն Բաթումիի պայմանագրի, ՀՀ բանակը պիտի ունենար ընդամենը մեկ դիվիզիա:

Գեներալ Թ. Նազարբեկյանի թիւ 99 հրամանով(1918 թ. հուլիսի 26) իր գլխավորած կորպուսը վերածվում է հայկական առանձնակի դիվիզիայի[3]:

Դիվիզիայի հրամանատար է նշանակվում գեներալ Մովսես Սիլիկյանը, իսկ շտաբի պետէ փոխգնդապետ Վեքիլյանը:

Հայաստանի Հանրապետության տարածքում թուրք զանգվածների վառած հրդեհը մարելուց հետո Դրոն ստանձնում է ՀՀ զորքերի Երեւանյան զորախմբի հրամանատարությունը: Այդ նշանակումը պատահական չէր: Ռազմական առումով Երեւանյան զորախմբի հրամանատարի ուսերին տվյալ ժամանակահատվածում դրված էր թերեւս ամենածանր եւ պատասխանատու պարտականությունը: Ինչպես արդեն նշվել է, թուրքական զորաբանակը գտնվում էր Երեւանից ընդամենը մի քանի կիլոմետր հեռավորության վրա եւ բացառված չէր, որ թուրք հրամանատարությունը ցանկացած պահին խախտեր զինադադարի համաձայնագիրը եւ զորքերը շարժեր մայրաքաղաքի վրա: Զինվորների զգոնությունն ու մարտական կուռ պատրաստությունը պատշաճ բարձրության վրա մշտապես պահելու եւ ավելորդ բախումներից խուսափելու համար հրամանատարից պահանջվում էր լարված, հաստատակամ աշխատանք ու ծայրաստիճան զգուշություն:

---

[1] Խմբապետ Սարտիրոս Աբրահամեան, նշվ. աշխ., էջ 422:

[1] Նույն տեղում, էջ 423:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 47, թ. 2:

Ս. Վրացյանի բնութագրմամբ՝ «Երեւանի զինեալ ուժերի հրամանատար-պաշտօնը անուն էր լոկ, փաստօրէն Դրոն ամէն ինչ էր կազմակերպուող հայ բանակում: Հայաստանը ունէր զինուորական նախարար՝ զօր. Հախվերտեանը, ունէր սպարապետ՝ Նազարբէկեան: Երկու քաջ, ռազմագէտ եւ հմուտ զինուորականներ: Երկուսն էլ անպայման հայ եւ հայրենասեր, բայց ոչ հայերէն լեզու գիտէին, ոչ հայութիւնն ու հայ իրականութիւն էին ճանաչում բաւարար չափով: Ոչ էլ իրենց անուններով ու հեղինակութեամբ դեռ ընդունակ էին ոգեւորելու եւ բարձր հեղինակութիւն դառնալու հայ ժողովրդի աչքին: Դրոյի ներկայութիւնը նրանց կողքին լրացնում էր այդ պակասը:

Դրոն անունով խմբապետ էր, կոչումով՝ յեղափոխական, հմտութեամբ եւ փորձառութեամբ՝ զինուորական: Այն անձը, որ իր բարոյական հեղինակութեամբ կարող էր ներքին շաղախը դառնալ նորակազմ բանակի եւ կամաւորական խմբերի միջեւ: Զօր. Նազարբէկեանն ու Հախվերտեանը այդ լաւ հասկացան եւ շատ բարձր էին գնահատում Դրոյի ներկայութիւնը բանակում: Կառավարութիւնը եւս, Քաջազնունիի գլխաւորութեամբ, շուտով համոզուեց, թէ ինչ անփոխարինելի ուժ է իրեն համար Դրոն, որպէս անվիճելի հեղինակութիւն մարտական տարրերի աչքին»[1]:

Դրոն պատվով է հանձնում այս քննությունը եւս: Իզուր չէր, որ նորաստեղծ հանրապետության զինված ուժերի հրամանատարությունը հենց նրան է վստահում այդչափ պատասխանատու գործը:

ՀՀ նորընտիր կառավարության առջեւ ծառացած ամենադժվարին ու կարեւորագույն խնդիրներից մեկը հանրապետության ներքին կյանքում կարգ ու կանոնի հաստատումն էր: Պատերազմից հետո երկրում հայտնվել եւ գործում էին զինված բազմաթիվ խմբեր, որոնք իրենց ավազակային ու թալանչիական գործողություններով քաոսային եւ անկառավարելի իրավիճակ էին ստեղծում: Պետության կայացման, բնակչության անվտանգությունն ու իրավունքները պաշտպանելու համար անհրաժեշտ էր հանրապետությունը մաքրել անբարո եւ վնասակար տարրերից: ՀՀ ներքին գործոց նախարարը Արամ Մանուկյանն էր: Բնականաբար, հանրապետության տարածքում ներքին կարգուկանոնի հաստատումը գլխավորապես նրա իրավասությունների ոլորտն էր:

Հանրապետությունում խաղաղ իրավիճակ, կարգուկանոն հաստատելու համար ներքին գործերի նախարարությունը 1918 թ. օգոստոսի 21-ին կառավարությանը,

[1] Նույն տեղում, էջ 110-111:

ներկայացրեց բնակչությանը զինաթափելու, զենքն ու զինամթերքը պետականացնելու նախագիծը[1]:

«Նման իրավիճակում,-ազդարարում էր Արամ Մանուկյանը,- կառավարությունը չի կարող կարգ ու կանոն հաստատել կամ իրական իշխանություն ունենալ իր ձեռքին, քանի դեռ ամբողջ քաղաքացիական բնակչությունը զինաթափված չէ և չի սովորել հարգել կարգապահությունը: Նա մերժում էր այն պատճառաբանությունը, թե պետության համար զինված ազգաբնակչությունը կարևոր ռազմական ուժ է ներկայացնում, այն ուժն էր միայն անիշխանության համար»[2]:

Որքան էլ զարմանալի հնչի, Հայաստանի Խորհրդի ու կառավարության քննարկմանը ներկայացրած Արամի համակողմանիորեն կշռադատված ու չափազանց օգտակար նախագիծը, որն անտարակույս պայմանավորված էր երկրում տիրապետող չափազանց ծանր կացությամբ, տեղիք տվեց բուռն վիճաբանությունների ու քննադատությունների, հատկապես ընկերվարական գաղափարախոսություն ջատագովող անձանց կողմից :

Արամ Մանուկյանի նախագծին առավելագույնս ընդգիմացել ու խիստ քննադատությամբ է հանդես եկել սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը: Մերժելով բնակչությանը զինաթափելու նախագիծը՝ սոցիալ-դեմոկրատ Թադեւոս Ավդալբեկյանը պնդում էր, որ կառավարությունը խիստ սխալվում է՝ նույնացնելով անիշխանությունը զենք կրելու ազատության հետ: Քաղաքացիները զենք ունեին շատ երկրներում, որտեղ անիշխանության հետքն իսկ չկար: Նրա գնահատմամբ՝ «...երկիրը մաքրելն է կաշառակեր պաշտոնյաներից, ովքեր անտեսում կամ խախտում են կառավարության ցուցումները և վարկաբեկում նրան: Քաղաքացիները կզինաթափվին սեփական կամքով, երբ կենտրոնական կառավարությունը ցույց տար, որ ի վիճակի է օրինականությունը հաստատել և պաշտպանել բոլոր բնակիչներին»[3]:

Ժողովրդական կուսակցության ներկայացուցիչ Ստեփան Մալխասյանը իր կուսակցության անունից հայտարարել է, որ զենքի խստիվ հսկողությունը եւ հանցագործների դեմ կտրուկ քաղաքականությունը համապատասխանում են իր կուսակցության սկզբունքներին: Ջմերժելով նախագիծը՝ նա միաժամանակ հայտարարում է, որ

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 105, թ. 2:
[2] Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 48:
[3] Նույն տեղում:

«...ժողովրդական ֆրակցիան կարող էր պաշտպանել Արամի առաջարկությունը միայն այն դեպքում, եթե այդ գործողությունը սկսվեր ներքին լիակատար ապահովություն ձեռք բերելուց հետո: Անգամ այդ դեպքում, զինաթափումը պետք է սկսվեր հսկողության առավել դժվար ենթարկվող սահմանամերձ շրջաններից և աստիճանաբար շարժվեր դեպի ներս և մայրաքաղաք»[1]:

Սոցիալ-դեմոկրատ Թադեւոս Ավդալբեկյանի «...երկիրը մաքրելն է կաշառակեր պաշտոնյաներից...» պահանջն անկասկած վիճարկելի չէ, բայց ինչու՞, ի՞նչ նպատակով Հայաստանի Հանրապետության բնակիչները պիտի զինված լինեին:

Հայաստանի Հանրապետության իրավիճակի ու քաղաքական կուսակցությունների գործունեության ուսումնասիրությունը մատնանշում է, որ ժողովրդավարական սկզբունքներով առաջնորդվող կուսակցությունները ինչպես հարկն է չէին գնահատել ժամանակաշրջանի գործոնը, Հայաստանում տիրող իրական կացությունը: Նրանց համար, որպես ընդդիմադիր ուժի, շատ ավելի գերադասելի էր քննադատել ու մերժել ՀՀ կառավարության եւ Հ.Յ.Դաշնակցության, որպես իշխող կուսակցության քաղաքականությունն ու ձեռնարկած քայլերը, քան թե գործել Հայաստանի ու հայ ժողովրդի իրական կացության ու շահերի թելադրանքով ու կատարել իրականությանը համահունչ եզրահանգումներ եւ անհրաժեշտ գործնական քայլեր:

Ճիշտ է հանրապետության ներքին ու արտաքին խնդիրների վերաբերյալ հայ քաղաքական կուսակցությունները որդեգրել էին ու ներկայացնում էին տարաբնույթ, իսկ երբեմն իրարամերժ տեսակետներ, սակայն անհրաժեշտ էր ինչ-որ որոշում ընդունել:

Այսուհանդերձ, 1918 թ. օգոստոսի 29-ին Հայաստանի խորհուրդը ընդունում է «Մասնաւոր սեփականութիւն կազմող զէնքերի եւ զինամթերքների պետականացման մասին» օրենքը, ըստ որի նախատեսվում էր, բացի որսորդական հրացաններից, պետականացնել բոլոր տեսակի զենքերը[2]:

Համաձայն այդ օրենքի՝ զենքն ու զինամթերքը կամովին չհանձնելու դեպքում, քաղաքացիներին սպառնում էր երեք ամիս ժամկետով բանտարկություն կամ 3000 ռուբլի տուգանք[3]:

Հայաստանի Հանրապետությունում տիրող կացությունը հրամայաբար թելադրում էր չտրվել տվյալ ժամանակաշրջանին անհարիր ու ավելորդ ժողովրդավարությանը եւ վճռական քայլեր ձեռնարկել՝ զինաթափելու ժողովրդի համար չարիք դարձած զինված խմբավորումներն ու արմատախիլ անել երկրում տիրող քաոսն ու անկառավարելի իրավիճակը: Չնայած Արամ Մանուկյանի գլխավորած ՀՀ ներքին գործերի նախարարության գործադրած եռանդունությանը, այնուամենայնիվ, անհրաժեշտ էր նաեւ զինվորականության գործուն աջակցությունը:

Երեւանյան զորախմբի հրամանատար Դրոյի պարտականությունների մեջ էին մտնում ոչ միայն մայրաքաղաքի եւ նրա հարակից շրջանների պաշտպանությունը, այլ նաեւ կարգուկանոնի հաստատումն ու պահպանումը, ինչպես նաեւ վնասակար ու ավազակաբարո տարրերի անօրինական գործողությունների վնասազերծումը: Արամ Մանուկյանն ու Դրոն խիստ եւ հետեւողական պայքար են ծավալել հանրապետության տարածքը վերոհիշյալ տարրերից մաքրելու, երկում խաղաղ ու տանելի պայմաններ հաստատելու համար: Իսկ այդ ժամանակահատվածում դա էին պահանջում պետության ու ժողովրդի շահերը: Հանրապետության տարածքը անցանկալի եւ վնասակար տարրերից մաքրելու գործում հարկ է եղել հաղթահարել, ինչպես արդեն նշվել է ոչ միայն ընդդիմադիր ձախակողմյան կուսակցությունների, այլեւ իրենց կուսակցական գործընկերների, անգամ կառավարության որոշ անդամների դիմադրությունը, որոնք առավելապես առաջնորդվելով ընկերվարական ու ժողովրդավարական սկզբունքներով, շատ հաճախ ընդդիմանում էին Արամի եւ Դրոյի գործադրած, նրանց բնորոշմամբ, ոչ ընկերվարական, բռնի միջոցառումներին: Բայց ժամանակը հրամայաբար պահանջում էր գործել արագ ու նպատակասլաց, իսկ ահրաժեշտության դեպքում անգամ բռնի միջոցների գործադրմամբ:

ՀՀ կառավարության եւ Հ.Յ. Դաշնակցության ղեկավար մարմնի որոշ անդամներ նույնիսկ ցանկացել են, որ Դրոյի «բռնի» գործելաոճի կերպի ջերմեռանդ պաշտպան ՀՀ ներքին գործոց նախարար Արամ Մանուկյանը ինչ-որ պատրվակով կամ հանձնարարությամբ մեկներ հանրապետությունից: Շատ չուտով Արամին «կարեւորագույն հանձնարարությամբ» հանրապետությունից հեռացնելու պատրվակը ներկայանում է:

Հայաստանի Խորհրդի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը պիտի 1918 թ. դեկտեմբերի սկզբներին մեկներ Փարիզ՝ մասնակցելու հաղթանակած դաշնակից տերությունների խաղաղության խորհրդաժողովին: Հայաստանի Խորհրդի եւ ՀՅԴ Բյուրոյի որոշմամբ ՀՀ պատվիրակության նախագահ նշա-

[1] Նույն տեղում, էջ 49:
[2] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 4, թ. 1:
[3] Տե՛ս նույն տեղում:

նակվում է Ավ. Ահարոնյանը, իսկ երկու անդամներից մեկը պիտի լիներ Արամ Մանուկյանը:

Ըստ Հ. Ամատունու, Արամին պատվիրակության կազմում ընդգրկելու կողմնակիցները թեեւ հասկանում էին, որ «...այն պայմաններուն մէջ, երբ Հայաստանը կանցներ մաքրագործումի շրջանէ մը, այդ պաշտոնին վրայ անօր մնալը խիստ կարեւոր էր: Ասիկա կըմբռնէին բոլոր ժողովականները, բայց կը զգային թէ՝ այդ պաշտոնին վրա անօր աւելի երկար մնալը պատճառ պիտի ըլլար անօր ֆիզիքական քայքայումին եւ թերեւս մահուան...»[1]:

Որեւէ տարակույս լինել չի կարող, որ շատերին է մտահոգել Արամ Մանուկյանի առողջական անմխիթար վիճակը, բայց ընկերվարական եւ ժողովրդավարական սկզբունքների ջատագով գործիչների համար ցանկալի էր Հայաստանից Արամի բացակայությունը: ՀՀ ներքին գործոց նախարարի համար կարեւորագույնը Հայաստանը զինված խմբավորումներից, ապստամբ տարրերից մաքրելն ու երկրում կարգուկանոնի, օրինականության հաստատումն էր: Արամի գնահատմամբ, այս գործում այնքան էլ ընդունելի չէին ընկերվարական եւ ժողովրդավարական սկզբունքների ջատագով գործիչների տեսակետները:

Հայաստանի եւ հայության համար ծանրագույն ժամանակահատվածում ստանձնելով Արարատյան աշխարհի առաջնորդի չափազանց պատասխանատու ղեկը՝ Արամը իր գործունեությամբ ու փորձով գերազանց գիտեր մահմեդական ամբոխի ու նրանց առաջնորդների հետ ընկերվարական ու ժողովրդական սկզբունքներով գործելու սնանկությունն ու ավելորդությունը:

Այս հարցում Արամն ու Դրոն գործել են միասնաբար եւ փոխհամաձայնեցված ու բնականաբար Հայաստանի Հանրապետության պատվիրակության կազմում Արամ Մանուկյանի ընդգրկելու խնդիրը չէր կարող չմտահոգել Դրոյին: Ճիշտ է նա Հայաստանի նորատեղծ Հանրապետությունում ուներ անժխտելի կշիռ ու հեղինակություն, սակայն նրա համար չափազանց դժվարին կլիներ առանց Արամի գործուն աջակցության Հանրապետությունը մաքրել անցանկալի ու վնասակար տարրերից, հատկապես զինված խմբերից եւ հաստատել կայուն խաղաղ իրավիճակ:

Դեկտեմբերի 1-ին Արամի բնակարանում տեղի է ունենում ՀՅԴ Բյուրոյի ժողովը, որտեղ ի թիվս մի շարք հարցերի, պիտի լուծվեր նաեւ Փարիզ մեկնող ՀՀ պատվիրակության կազմի հարցը: Համաձայն նախնական պայմանավորվածության, Արամը նույնպես պիտի ընդգրկվեր պատվիրակության կազմում:

Արամը, լսելով պատվիրակության կազմում իրեն ընդգրկելու ժողովականների առաջարկությունը, խիստ զայրանալով՝ բացականչել է. «Ես Պատուիրակութեան անդա՞մ, բայց ես կեանքիս մէջ գործ ունեցած չեմ դիւանագիտական աշխարհին հետ: Մի՛ մոռանաք նաեւ, որ իմ ներկայութիւնը ներքին նախարարութեան մէջ խիստ կենսական է այս օրերուն, եթէ պիտի ուզէք, որ Հայաստանը դառնայ իսկապէս Հայաստան»[1]:

Արամը համառորեն հրաժարվում է ընդունել պատվիրակության կազմում ընդգրկվելու եւ Փարիզ մեկնելու առաջարկությունը, սակայն ժողովականները ոչ պակաս համառությամբ պնդում եւ պահանջում են հաստատել նրա թեկնածությունը: Հանրապետությունում տիրող անմխիթար ու անկառավարելի կացությունը չէր կարող չմտահոգել նրան ու բնական է, որ նա պիտի մերժեր ընդգրկվելու պատվիրակության կազմում, որը հավասարազոր էր լքելու ծանրագույն իրավիճակում գտնվող Հայաստանը: Վիճաբանությունը Արամի եւ ժողովականների միջեւ շարունակվում էր, եւ դեռ պարզ չէր, թե այն ինչպիսի ավարտ կունենար, երբ հանկարագորեն ներս է մտնում Դրոն, ներողություն խնդրում ժողովի ատենապետից եւ հայտնում, որ ինքը ուզում է շատ կարեւոր հայտարարություն անել:

Ատենապետի թույլտվությամբ Դրոն հայտնում է. «Ընկեր Ատենապետ, կիմանամ թէ մտադրութիւն ունիք Արամը նշանակելու Պատուիրակութեան անդամ: Ես կը հաստատեմ, թէ պիտի հրաժարիմ զօրաբաժնի հրամանատարութենէ, եթէ Արամը հեռանա ներքին գործերու նախարարութենէն, որովհետեւ ոչ մէկուն կրնամ վստահիլ ինձի յանձնուած խիստ կարեւոր առաքելութիւնը...»[2]:

Դրոյի կողմից, կարելի է ասել, ներկայացրած վերջնագիրը արմատապես փոխում է ժողովի մասնակիցների տրամադրվածությունը: Նրա հայտարարությունը ժողովի մասնակիցները ընդունում են որպես ահազանգ ու սպառնալիք:

Հարցը, կարելի է ասել, արդեն լուծված էր: Ժողովականները հասկանում էին, որ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Դրոյին տրված չափազանց կարեւոր հանձնարարությունը, այն է՝ հանրապետության տարածքը մահմեդական ապա-

[1] «Հայրենիք» ամսագիր, 1940, թիւ 12, էջ 72:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

տամբ, ինչպես նաեւ ավազակաբարո ու վնասակար տարրերից մաքրելը, առանց Արամի գործուն մասնակցության, անհնարին կլիներ կենսագործել:

Դրոն հրապարակում է հայտարարությունը եւ առանց պատասխան ստանալու՝ մեկնում , իսկ «...Արամը իր քթին տակէն կը ժպտէր գոհունակ...»[1]:

Արամը մնում է Հայաստանում, բայց դժբախտաբար նրան վիճակված չէր երկար ապրել: 1919 թ. հունվարի 29-ին, թոքախտ հիվանդությամբ ու բծավոր տիֆով վարակված Արամը կնքում է իր մահկանացուն:

Ի դժբախտություն Հայաստանի ու բովանդակ հայության, Արամի մահանից ընդամենը 10 օր առաջ(1919 թ. հունվարի 19-ին), դարձյալ բծավոր տիֆով վարակված, իր մահկանացուն էր կնքել հայ ազգային-ազատագրական պայքարի մեծավաստակ գործիչ, Հ. Յ. Դաշնակցության հիմնադիր անդամներից՝ Ռոստոմը (Ստեփան Զորյան): Անտարակույս, նրանց մահը ծանրագույն հարված էր Հայոց պետականության կայացման ու ամրապնդման գործին:

Հայաստանի Հանրապետությանը սպասում էին բազմաթիվ դժվարագույն փորձություններ, որոնց հաղթահարման համար անհրաժեշտ էին հայրենանվեր, հզոր կամքով ու կազմակերպական տաղանդով օժտված գործիչներ:Իսկ երկրորդ Ռոստոմ եւ Արամ, որնք ի զորու լինեին արժանիորեն փոխարինել նրանց, ինչպես միանշանակորեն ցույց տվեց ժամանակը, դժբախտաբար չգտնվեցին:

Դրոյին սպասում էր մի նոր փորձություն, ուր նա կրկին անգամ պիտի հաստատեր իր նվաճած անհաղթ զորահրամանատարի կոչումն ու համբավը:

1918 թ. դեկտեմբերին բռնկվում է հայ-վրացական պատերազմը:

[1] Նույն տեղում, էջ 72-73:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԴՐՈՅԻ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԸՆԴԱՐՁԱԿՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

4. 1. ՀԱՅ - ՎՐԱՑԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ավարտվում է առաջին համաշխարհային պատերազմը եւ Գերմանիայի գլխավորած համադաշնության երկրները, որի կազմում էր նաեւ Թուրքիան, պարտվում են եւ հանձնվում Անտանտի տերությունների տնօրինությանը:

Հայաստանի նորաստեղծ հանրապետությունը իր գոյության կարճատեւ, ընդամենը մի քանի ամիս ապրած ժամանակահատվածում, միջազգային ասպարեզում տեղի ունեցող դեպքերի թելադրանքով թեւակոխում է զարգացման նոր շրջան:

1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուդրոսի պայմանագրի համաձայն՝ Թուրքիան իրեն ճանաչում է լիակատար պարտված եւ պարտավորվում է մինչեւ 1919 թ. ապրիլը իր զորքերը դուրս բերել Անդրկովկասից եւ նահանջել մինչեւ 1914 թ. ռուս-թուրքական սահմանը: Նույն պայմանագրի 24-րդ հոդվածի համաձայն Անտանտի տերություններին իրավունք է վերապահվում առանց որեւէ խոչընդոտի գրավել նաեւ հայկական վեց՝ Էրզրումի, Բիթլիսի, Վասպուրականի, Խարբերդի, Դիարբեքիրի եւ Տրապիզոնի նահանգները:

Հայաստանի Հանրապետության կառավարության առջեւ ծառացած բազում խնդիրների շարքում, թերեւս, ամենաառաջնահերթ եւ կարեւորագույններից մեկը, բնականաբար, դառնում է հանրապետության տարածքների ընդարձակման կենսագործումը, որը պետք է ընթանար մի քանի ուղղությամբ, ընդսմին՝ հաղթող տերությունների համաձայնությամբ եւ աջակցությամբ: Առանց այդ խնդիրների լուծման, խոսք անգամ չէր կարող լինել երկրի, որը պարփակված էր միայն Երեւանի շուրջը, հետագա զարգացման եւ ուժեղ պետականություն ստեղծելու մասին:

Հայաստանի Հանրապետության կազմում առաջին հերթին պետք է միավորվեին մայրաքաղաքին մերձակա շրջանները՝ Ալեքսանդրապոլն ու Նոր Բայազետը, ապա նոր միայն Կարսի ու Շարուր-Նախիջեւանի նահանգները:

«Ատով, գրում է հանրապետության վարչապետ Ալ. Խատիսյանը, - սակայն կովկասեան Հայաստանի սահմաններու խնդիրը չփակուե-

ցաւ. վիճելի կը մնային Արցախն ու Զանգեզուրը, որոնց վրայ յաւակնութիւն ունէր Ադրբէջանը, Լոռին, Ախալքալաքը եւ Կարսի շրջանի որոշ մասերը, որոնք կը պահանջուէին Վրաստանի կողմէ, եւ վերջապէս Օլթին ու Նախիջեւանը, որոնք Թուրքերու աշխարհակալութեան առարկա էին: Սահմանային այս խնդիրներէն զատ, Հայաստանի կառավարութիւնը իր առջեւ ունէր ամէնէն մեծ հողային վէճը՝ Թրքահայաստանի վիլայէթներու վերաբերմամբ»[1]:

Հանրապետության սահմանների ընդարձակումը կենսականորեն անհրաժեշտ էր, բայց իրագործումը չափազանց դժվար, եւ ինչպես ցույց տվեց ժամանակը, սահմանների ընդարձակման գործում հանդիպելով իր հարեւան պետությունների անզիջում դիմադրությանը՝ Հայաստանը ներքաշվում է պատերազմի մեջ եւ զենքի ուժով հարկադրված պաշտպանում իր իրավունքները:

Ծանր օրեր էր ապրում նորաստեղծ հանրապետությունը. մի կողմից երկրում տիրող դժվարին կացությունը, բազմահազար գաղթականության սովյալ ու թշվառ վիճակը, մյուս կողմից՝ մուսաֆաթական Ադրբեջանի դավերն ու Արցախի, Զանգեզուրի, Նախիջեւանի նկատմամբ զավթողական հավակնությունները եւ հանկարծ հողային տարածքների առնչությամբ մյուս հարեւանի՝ Վրաստանի հետ բռնկված ընդհարումները:

Անդրկովկասում վարչատարածքային հարցը վաղուց էր հասունացել, եւ այն իր լուծումը պիտի գտներ դեռեւս մինչ փետրվարյան հեղափոխությունը:

Անդրկովկասյան ժողովուրդների՝ հայերի, վրացիների եւ ազերիների միջեւ գոյություն ունեցող հողային, սահմանային վեճերը հիմնականում կապված էին Հայաստանի պատմական գավառների՝ Արցախի, Զանգեզուրի, Զավախքի, իսկ հայ-վրացական ընդհարումների նախօրեին՝ նաեւ Լոռի-Փամբակի տարածքների պատկանելության վիճարկման հետ:

Ինչպես հայտնի է, որպեսզի հայությունը չկազմեր բնակչության մեծամասնությունը, Արցախի եւ Զանգեզուրի գավառները ցարական կառավարության կողմից դիտավորյալ մտցվել էին առավելապես մահմեդական հավատքին դավանող բնակչություն ունեցող Ելիզավետպոլի, իսկ Զավախքի ու Բորչալուի գավառները՝ Թիֆլիսի նահանգի կազմում: Լոռի-Փամբակը մասն էր կազմում Բորչալու գավառի:

[1] Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, 1968, էջ 154:

Հիշյալ գավառներում (Զավախք և Բորչալու) բնակվում էին 260000 հայեր, 7000 վրացիներ եւ 3000 այլազգիներ[1]:

Հայ - վրացական խնդիրների առնչությամբ արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունը հստակորեն մատնանշում է, որ վրաց քաղաքական կուսակցությունները մինչեւ Անդրկովկասում անկախ հանրապետությունների հաստատումը այդ հարցերի լուծման վերաբերյալ պաշտպանել են հետեւյալ դիրքորոշումը. «... Սոցիալ-դեմոկրատները (մենշեւիկները) հայտարարել են. «Ինքնակառավարման տերիտորիալ սահմանները պետք է որոշվեն ըստ այդ շրջաններում մեկ կամ այլ ազգերի բնակչության տոկոսային հարաբերության՝ միաժամանակ հաշվի առնելով նաեւ այդ ազգերի տնտեսական ու մշակութային պայմանները: Իսկ երբ սահմանները որոշվեն, ապա այն պետք է հաստատվի այդ շրջաններում բնակվող ժողովուրդների հանրաքվեի միջոցով:

Վրացական ֆեոդալ-սոցիալիստական հեղափոխական կուսակցության կոնֆերանսը վրացական սահմանների առնչությամբ որոշեց. Վրաստանի տարածքը պետք է կազմված լինի հետեւյալ շրջաններից՝ Թիֆլիս, Գորի, Դուշեթ, Թելավ, Սիղնախ, Թիոնեթի, Բորչալու, Ախալցիխե, Ախալքալաք, Քութայիս, Բաթում, Սուխում, եթե այդ շրջաններում անցկացված հանրաքվեները պետք է համաձայնություն տան նմանօրինակ որոշմանը»[2]:

Ինչպես հստակորեն մատնանշվում է փաստաթղթում, վրաց մենշեւիկների ընդունած այս որոշման մեջ, ճիշտ է, ամրագրված են նաեւ Ախալքալաքի, Բորչալուի շրջանները, բայց չկա որեւէ նշում Լոռի-Փամբակի մասին: Բնակավայրերի նշումները նրանք կատարել են համապատասխան գավառների եւ նահանգների անվանմամբ, իսկ դրանց մաս կազմող շրջանները, անկախ բնակչության կազմից եւ պատկանելությունից, չեն նշվել: Ցարիզմի օրոք Լոռի-Փամբակի շրջանները մաս էին կազմում Բորչալուի գավառի:

Մենշեւիկների բանաձեւում կարեւորվում է նաեւ հիշյալ շրջանների պատկանելության հարցը հանրաքվեով որոշելու սկզբունքը:

Վիճելի տարածքային հարցերը նման ժողովրդական սկզբունքով լուծելու հարցում հայ եւ վրացական քաղաքական հոսանքների միջեւ այդ ժամանակաշրջանում տիրում էր կատարյալ համաձայնություն եւ փոխըմբռնում: Սակայն 1918 թ. մայիսի 26-ի անկախության հռչակագիրը ընդունելուց հետո, Վրաստանի նորաս-

[1] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 65, գ. 1, էջ 4:
[2] Նույն տեղում:

տեղծ Հանրապետության իշխանության ղեկն ստանձնած, նախկինում ժողովրդական սկզբունքով առաջնորդվող սոցիալ-դեմոկրատները (մենշեւիկներ) կտրուկ կերպով փոխում են տարածքային հարցերին վերաբերող իրենց դիրքորոշումը:

1918 թ. հունիսին Վրաստանի Հանրապետության ղեկավարներ Ռամաշվիլին եւ Ժորդանիան այցելում են Հայոց Ազգային Խորհրդի ներկայացուցչություն եւ Ավ. Ահարոնյանին, Հովհ. Քաջազնունուն եւ Ալ. Խատիսյանին իրենց կառավարության անունից հրավիրում մասնակցելու Ախալքալաքի, Բորչալու գավառի, որի կազմում էր Լոռվա շրջանը, ըստ ազգային պատկանելության բաժանելու նպատակով գումարվող խորհրդակցությանը: Հայոց Ազգային Խորհրդի հանձնարարությամբ հայ պատգամավորներ Խաչատուր Կարճիկյանը, Ալ. Խատիսյանն ու Ղորղանյանը ներկայանում են Վրաստանի կառավարությանը:

Այստեղ նրանց սպասում էր կատարյալ անակնկալ.

«Իրակլի Մերեթելին հայտարարում է, որ Վրաստանը պետք է վերցնի Ախալքալաքը, Ղազախը, Բորչալուն եւ Փամբակը»[1]:

Մինչ այդ բոլորովին այլ տեսակետ պաշտպանող Իրակլի Մերեթելու անսպասելի հայտարարությունը զարմանք ու ցասում է առաջացնում հայ պատգամավորների շրջանում:

«Այս առիթով Խաչատուր Կարճիկյանը հայտարարում է, որ Մերեթելու հայտարարության մեջ ինքը տեսնում է Հայաստանը Վրաստանի, Ադրբեջանի եւ Թուրքիայի մեջ բաժանելու հին նախագծի իրագործման գործընթացը»[2]:

Բողոքը լսելուց հետո Մերեթելին ժամանակ է խնդրում հայկական ներկայացուցչությունից մտածելու՝ նորից հանդիպելու խոստումով: Բայց դրա փոխարեն մի քանի օր անց առանց հայկական կողմի տեղեկության գծվում է վրացական սահմանը, որի մեջ նեբառվում են բոլոր վիճելի շրջանները»[3]:

Երեւանի Ազգային Խորհրդի անդամ Արշալույս Աստվածատրյանի բնութագրմամբ՝ «Այդ անիրավ ու անարդար պահանջով վրացիներն ուրանում էին իրենց բերնով տված հայտարարությունը, թե հիշյալ հողամասերը պատկանում են հայերին, և թե այդ հարցում իրենք միանգամայն համամիտ էին հայերին: Իսկ այժմ վրացիներն իրենց տեսակետները փոխել էին, որովհետև Վրաստանի ապահովության համար անհրաժեշտ էին համարում Ախալքալակի գավառը և Լոռին մինչև Շահալի»[1]:

Վրաստանի Հանրապետության կառավարության վերաբերմունքը բավականին հետաքրքիր էր: Ըստ նրա եւ Ադրբեջանի կառավարության նպատակադրության, Անդրկովկասի ողջ բնակչության ավելի քան 30 %-ը կազմող հայությունը պետք է ամփոփվեր միայն Սեւանա լճի ավազանում եւ Արարատյան դաշտի մի մասում, այսինքն բավարարվեր ընդամենը 11000 քառ. կմ տարածքով, որը կազմում էր Անդրկովկասի միայն 5 %-ը : Իսկ հայերից ավելի պակաս բնակչություն ունեցող Վրաստանը հավակնում է տիրելու Անդրկովկասի ամբողջ տարածքի 42 %-ին, այսինքն մոտ 8 անգամ ավելի, քան պետք է ունենային հայերը: Անդրկովկասի տարածքի մնացած 53 % -ին հավակնում էր տիրել Ադրբեջանը[2]:

Համաձայն Թիֆլիսում հրատարակվող (1917թ.) «Կավկազսկի կալենդար»-ի տվյալների, որն իր «Հայաստանի Հանրապետություն» աշխատությունում հիմք է ընդունում նաեւ պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը, 1916 թ. Անդրկովկասը ունեցել է 6.973.800 բնակչություն, բացառությամբ Դաղստանի ու բաժանված էր հետեւյալ ազգային-կրոնական խմբերի՝

«Հայ առաքելական	1.722.500	Շիա մահմեդական	1.485200
Հայ ուղղափառ	2.200	Սունի մահմեդական	817.200
Հայ հարանվանական	56.900	Քուրդ մահմեդական	97. 100
Վրացի ուղղափառ	1.641.000	Եզդի	40.400
Վրացի մահմեդ-ն	139.300	Գնչու	40.200
Ռուս ուղղափառ	352.600	Հրեա	65.900
Ռուս աղանդ-ն	99.500	Եւրոպացի	2.200
Լեռնական մահմեդ.	117.000	Այլ քրիստ-ներ	198.600
Լեռ-ն այլ հավ-ներ	46.900»[3]:		

Թեպետ Ռուբենի, ինչպես արդեն նշվել է, վերլուծությամբ ու եզրահանգմամբ.

«ա. Որ Անդրկովկասի թաթար, հայ եւ վրացի տարրերը համարեա հաւասար ոյժ կը ներկայացնեն.

բ. Որ հաւասար ուժերը պիտի ձգտում ունենային հաւասար կտորների բաժանել Անդրկովկասը:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] ՀՅԴ ԿԱ, թղ. 65, գ. 1, էջ 4:

[1] Աստվածատրյան Ա. «Սարդարաբատի պատմաշինությունը » եւ այլ երկեր Երեւան, 2007, էջ 670:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 70:

Սակայն ժամանակը շատ շուտով եկավ ապացուցելու, որ Կովկասյան հանրապետությունների փոխհարաբերություններում առկա սահմանային ու տնտեսական վեճերն ավելի քան լուրջ էին, որոնք ի վերջո վերածվում են պատերազմական գործողությունների:

Տվյալ ժամանակաշրջանում ի հաշիվ Հայաստանի պատմական գավառների, Անդրկովկասում երկու հզոր՝ Վրացական եւ Ադրբեջանական պետություններ ստեղծելու հարցում մեր հարեւան երկու ժողովուրդների կառավարությունների միջեւ գոյություն ունեին քաղաքական ու տնտեսական շահերի վրա հիմնված կատարյալ փոխհամաձայնություն եւ ներդաշնակություն:

Հայ-ադրբեջանական հակամարտությունը նոր չէր: Հայաստանի Հանրապետության կառավարության համար անակնկալ չէր ադրբեջանական իշխանությունների զավթողական վերաբերմունքը Արցախի եւ Զանգեզուրի նկատմամբ: Սակայն բոլորովին այլ էր Վրաստանի պարագան:

«Վրացիները,-գրում է Արեւմտահայոց Ազգային Խորհրդի նախագահ Վահան Փափազյանը (Կոմս),- կլանելով Ախալքալաքը, Արտահան-Արդուինի շրջանները եւ մեր առջեւ փակելով Սեւ ծովը տանող Ճորոխի հովիտը՝ ախորժակ ունէին ձեռք ձգելու նաեւ Լոռիի ամբողջ հովիտը, հողամաս մը որ բացառապէս հայերով բնակեցուած էր եւ հարուստ էր անտառներով ու հռչակաւոր պղնձահանքովը:

...Վրացիները, որոնք պատմութեան մէջ միշտ եղբայրօրէն կենակցած են հայութեան հետ, գերազանցեցին ազրպէյջանցիներուն. ախորժակնին ուտելով բացուեցաւ: Օգտուելով Հայաստանի Հանրապետության ներքին ծանր վիճակէն, տնտեսական ծանր պայմաններէն եւ նորակազմ պետութեան յարաբերական թուլութիւնէն, յանկարծակի խուժեցին Լոռիի գիւղերը եւ փորձեցին վրացական վարչութիւններ հաստատել»[1]:

Անշուշտ, Վրաստանի կառավարության նման ձգտումների եւ մտադրությունների համար կային որոշակի նախադրյալներ:

Նախ՝ իշխանության ղեկն ստանձնած, մինչ այդ ժողովրդավարական քաղաքականությամբ առաջնորդվող վրաց սոցիալ-դեմոկրատներին քաջ հայտնի էր ոչ միայն Հայաստանի, Թուրքիայի եւ Ադրբեջանի ավանդական հակամարտությունը, այլեւ մեր երկրի քաղաքական ու տնտեսական կյանքի ծայրահեղորեն խարխլված, անմխիթար իրավիճակը:

2. Վրացական իշխանությունների ինքնավստահ, զավթողական տրամադրությունները մեծապես լիցքավորել էր Թուրքիայի հզոր դաշնակցի՝ Թիֆլիսում գտնվող Գերմանիայի ներկայացուցչությունը, որը վրաց կառավարությանը խոստացել էր տնտեսական եւ անգամ ռազմական օգնություն հայ-վրացական հնարավոր ընդհարումների ժամանակ:

Վկայակոչենք Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Արշակ Ջամալյանի եւ Գերմանիայի ներկայացուցիչ Ֆոն Քրեսի միջեւ կայացած պաշտոնական զրույցից մի ուշագրավ հատված:

«Անդրկովկասում գերմանական միսիայի ներկայացուցիչ Ֆոն Քրեսը Թիֆլիսում հայտնում է Ջամալյանին, որ հայերն ազատեն «վրացական» տարածքներն առանց արյունահեղության:

Ջամալյանի այն հարցապնդմանը, թե ինչո՞ւ է գերմանական միսիայի ներկայացուցիչը խառնվում վրաց-հայկական գործերին եւ սատար կանգնում վաղուց ի վեր հայերին պատկանող հողերին հավակնող Վրաստանին, Ֆոն Քրեսը պատասխանել է, որ Գերմանիան գտնվում է Վրաստանի հետ նույն միության մեջ եւ պարտավորություն է վերցրել պաշտպանել այդ հանրապետության տարածքային շահերը եւ դա է իրենց միսիայի նպատակը Անդրկովկասում»[1]:

Գերմանիայի զորակցության խոստումներից թեւավորված՝ վրաց իշխանությունները քաղաքական եւ տնտեսական բնագավառում դեռ նոր-նոր ինքնուրույն քայլեր ձեռնարկող Հայաստանի Հանրապետությանը լուրջ մրցակից չէին համարում եւ այդ պատճառով ձգտում էին ամեն գնով կենսագործել հզոր վրացական պետություն ստեղծելու պատեհ առիթն ու հնարավորությունները:

Ավելին, նույնիսկ այն ժամանակ, երբ Մուդրոսի զինադադարից հետո Գերմանիան եւ Թուրքիան այլեւս չունեին որեւէ նշանակալի ազդեցություն, իսկ Կովկասում հաստատվել էր անգլիական գերիշխանությունը, Վրաստանը դարձյալ չէր ձերբազատվում Լոռիի նկատմամբ դրսեւորած նախկին նկրտումներից: Ըստ վրաց իշխանությունների որդեգրած տեսակետի, սահմանային հարցերը հօգուտ Վրաստանի լուծումն անհրաժեշտ է, որովհետեւ. «...հայերի շահն էլ պահանջում է այդ շրջանների Վրաստանի սահմաններում լինելը, որովհետեւ այդպիսով յանձին Վրաստանի, Կովկասում կը ստեղծուի կենսունակ ու հզոր քրիստոնեայ պետութիւն, որը գերմանացիների աջակցութեամբ կը պաշտպանէ եւ հայերին»[2]:

Վիճակն արդեն գցված էր, սահմանային հարցերի վերաբերյալ վրաց կառավարության այդօրինակ դիրքորոշումը բնականաբար պիտի վերածվեր առճակատման:

[1] Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. 2, Պէյրութ, 1952, էջ 495-496:

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 65, գ. 1, էջ 4:
[2] Տե՛ս նույն տեղում:

Անդրադառնալով հայ-վրացական ընդհարումների լուսաբանմանը՝ Հայաստանի Հանրապետության առաջին վարչապետ Հովհ.Քաջազնունին գրում է.

«Դեկտեմբերի սկզբներին ծագեց կարճատեւ հայ-վրացական պատերազմը:

Երբ Թուրքական բանակը՝ Ալեքսանդրապոլի վրայից անցնելով հասաւ Փամբակ ու գրաւեց Ղարաքիլիսան, վրացիները օգտուեցին հանգամանքից ու զօրքերը մտցրին հայկական Լոռին: Պատրուակը այն էր, թէ ուզում են կանգնեցնել Թուրքերի առաջխաղացումը դէպի Թիֆլիս: Բայց Թուրքերի հեռանալուց յետոյ էլ վրացիները չուզեցին դատարկել Լոռին, ընդհակառակը, եռանդօրէն աշխատում էին ամրացնել ու յաւերժացնել իրենց տիրապետութիւնը, իսկ տեղացիների դժգոհութեան արտայայտութիւնները խեղդում էին դաժանօրէն:

Լոռին- կռուածաղիկ էր Հայաստանի ու Վրաստանի միջեւ, ամէնից ցաւոտը հայ-վրացական սահմանային վէճերի մէջ: Մեզ վրայ ճնշում գործ դնելու նպատակով, Վրաստանը փաստօրէն կտրել էր մեր հաղորդակցութիւնը դրսի աշխարհի հետ, փակել էր մեր սահմանները, նոյնիսկ այն հացը, որ ուղարկւում էր դրսից մեր սովամահ գաղթականութիւնը կերակրելու համար, այդ հացն էլ հանդիպում էր Վրաստանում բազմազան արգելքների ու ուշանում էր, լրիւ չէր հասնում տեղը:

Վրաստանը գրաւել էր Լոռին, փակել երկաթուղին ու պաշարել մեզ, այն էր պատերազմի հիմնական պատճառը:

Իսկ անմիջական առիթը՝ Լոռայ մի քանի հայ գիւղերի ապստամբութիւնն էր եւ վրաց կառավարութեան գործադրած անհամապատասխան խիստ միջոցները, կարծես կառավարութիւնը առիթ էր որոնում (ու նոյնիսկ ինքը ստեղծում) որպէսզի կոտորի ու ահաբեկի հայ ազգաբնակչութիւնը»[1]:

Աւելին, կտրուկ փոխվում է վրաց իշխանությունների վերաբերմունքը վիրահայության, հատկապես Թիֆլիսահայության նկատմամբ: Վրաստանի տարածքում բնակվող հայությունը ենթարկվում է բռնությունների ու թալանի:

Անդրադառնալով այդ օրերին Վրաստանում հայ բնակչության նկատմամբ վրաց իշխանությունների դրևսեւորած քաղաքականությանը՝ «Զանգ»-ը նշում է. «...Տները խուզարկելիս՝ թալանում ու

[1] Քաջազնունի Յովհ., Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս, Ալեքսանդրիա, 1926, էջ 39-40:

գողանում են հայերի ստացուածքներն ու ոսկեղենը: Գրաւում են հայերի գուլպերը: Հայկական հասարակական ու քաղաքական կազմակերպութիւնները խեղդուած են: Փակուած են «Նոր Հորիզոն», «Աշխատաւոր», «Զնամեա Նարոդա», «Կովկազսկօէ Սլովօ» թերթերը: Խմբագիրները ձերբակալուած են: Թիֆլիսի բոլոր հայ միլիցիոներները՝ 476 հոգի, զինաթափ են արուած և հեռացուած են պաշտօնից: Պարզ երևում է, որ վրացիները կամենում են հայերին քայքայել տնտեսապէս և նրանց ոյժը թուլացնել Վրաստանում:

Թէ Վրաստանի կառավարութեան, թէ պաշտօնեաների և թէ վրաց հասարակութեան վերաբերումը դէպի հայերը անհանդուրժելի է: Հայերը ենթարկւում են քաղաքական ու բարոյական ամենածանր ճնշումների»[1]:

Մայրաքաղաք Թիֆլիսում վրաց իշխանությունները բռնագրաւել են հայերին պատկանող բանկերը, առեւտրի եւ սպասարկման կետերը, հիվանդանոցները, կրթական ու մշակութային օջախները, ինչպես նաեւ տարբեր նշանակության բազմաթիվ հիմնարկներ ու ձեռնարկություններ:

Հայ-վրացական հակամարտությունը ավելի է շիկանում, երբ հայկական զորքերը Դրոյի գլխավորությամբ հոկտեմբերի 18-ին մուտք են գործում Լոռի եւ գրավում Շահալի կայարանից մինչեւ Կամենկա գետը ընկած տարածքը, որտեղ մինչեւ այդ գտնվում էին Թուրքական զորքերը: Ընդ որում հայկական զորախմբի մուտքը Լոռի-Փամբակ կատարվել է խելամտորեն հաշվարկված, եւ որպեսզի հակառակորդը չկարողանա համապատասխան քայլեր ձեռնարկել, գործողությունը իրականացվել է սրընթաց, հակառակորդի համար աննկատ:

Ըստ Ս. Վրացյանի՝ Դրոյի հրամանատարությամբ գործող Դիլիջան-Լոռի զորամասն այդ միջոցին բաղկացած էր հերեւալ մարտական ուժերից,. «...պարտիզանական հետեւակ գունդ՝ գնդ. Միրիմանյանց հրամանատարութեան տակ, պարտիզանական ձիաւոր գունդ՝ հրամանատար գնդ. Կորոլկով, 4-րդ լեռնային մարտկոց (4 թնդանոթ) եւ նոր կազմուող Ղազախի միլիցեոն գունդը՝ սպայ Թ. Մնացականեանի գլխաւորութեամբ: Դրօն զօրամասի հրամանատար է նշանակել օգոստոսին: քաղաքացիական մասի օգնականն էր Սարգիս Մանասեանը (ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալ, ապա նախարար)»[2]:

[1] «Զանգ», 1918, դեկտեմբերի 29, թիւ 86:
[2] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 195:

Պատերազմի ժամանակ զորախումբը համալրվել է եւս մի քանի զորամասերով:

Դիլիջան-Լոռի զորախումբը գործել է հետեւյան մարտավարությամբ. «... հոկտ. 18-ին Դրօն կարգադրեց Կուռռ Թարխանեանին, 2 հարիւրեակ ձիաւորներով շտապ գնալ գրաւել Դսեղ-Բոլագերան-Կաչական գիծը, իսկ Բաշ-Աբարանի զօրամասը- առաջին ձիաւոր գունդ, 5-րդ հետեւակ գունդ, 1 մարտկոց-հրամանատարութեամբ գնդ. Ղորղանեանի՝ անցնելով Սպիտակի լեռնանցքը՝ գնաց բռնեց Ջալալ-Օղլի-Գերգեր-Կուրթան գիծը: Կարգադրութիւնը կատարուեց շատ արագ, եւ հոկ. 21-ին արդէն շրջանը ամբողջութեամբ հայերի ձեռքին էր, գրեթէ առանց միջադէպի»[1]:

Դեկտեմբերի 19-ին հայկական բանակի զինվորական շտաբի պետը ստանում է հետեւյալ հեռագիր-զեկուցագիրը.

«Հաղորդում եմ, որ հոկտեմբերի 18-ին ժամը 18-ին Շահալիի կայարանը գրավված է մեր հեծելազորի կողմից:

Փոխգնդապետ Շնեուր»[2]:

Իսկ ընդամենը երկու օր անց, նույն ամսի 21-ին, զինվորական նախարարի անունով ստացվում է հետեւյալ զեկուցագիրը.

«Հաղորդում եմ, որ հոկտեմբերի 19-ի լույս 20-ի գիշերը մեր զորքերի կողմից գրավված է Նովո-Պոկրովկա, Ջալալ-Օղլի, Վարդանլու եւ Կարքենդ ռազմաճակատը: Վրաց-գերմանական ճակատը որոշակիացնելու նպատակով կատարվում է հետախուզություն:

Գեներալ-մայոր Սիլիկով»[3]:

Կատարվեց Լոռին իր իսկական տիրոջը վերադարձնելու առաջին անհրաժեշտ քայլը: Լոռվա տարածքի զգալի մասը, որտեղ մինչ այդ տեղաբաշխված էին թուրքական զորքերը, արդեն վերահսկվում էր հայկական զորքերի կողմից:

Թուրքական զորքերի կողմից բռնագրավված էր նաեւ Ախալքալաքի գավառը, իսկ Բորչալուի մյուս շրջանները, այդ թվում նաեւ Լոռվա տարածքի մի մասը, տնօրինում էին վրացական զորամասերը:

Հարկ է նշել, որ Բորչալուի գավառում, որի վարչական միավորը, ինչպես արդեն նշվել է, կազմումէր նաեւ Լոռին, վրացական զորամասերի հայտնվելը կատարվել էր Հայոց եւ Վրաց Ազգային Խորհուրդների փոխհամաձայնությամբ:

Համաձայն Բաթումիի պայմանագրի, Հայաստանի Հանրապետությունը իրավունք ուներ պահելու ընդամենը մեկ դիվիզիա: Հանրապետության բանակը ուներ մեկ դիվիզիա եւ նրա հրամանատարը գեներալ Մ. Սիլիկյանն էր, մնացած զորամասերը, այդ թվում նաեւ Դրոյի գլխավորած Դիլիջան-Լոռի զորախումբը կազմում էին այդ դիվիզիայի բաղկացուցիչ մասերը:

1918 թ., երբ թուրքական զորքերը Ալեքսանդրապոլի գրավումից հետո սպառնում էին հարձակումը զարգացնել դեպի հյուսիս, Հայոց Ազգային Խորհուրդը, հաշվի առնելով Վրաստանի սահմանների ապահովության հարցը եւ ընդառաջելով Ռամիշվիլու եւ Ժորդանիայի դիմումներին, համաձայնվեց, որպեսզի վրացական զորամասերը մուտք գործեին Բորչալուի շրջանը: Ընդամին, այդ ժամանակ Վրաց Ազգային խորհրդի ներկայացուցիչները հավատացնում էին, որ վրացական զորքերն անմիջապես կպարպեն Բորչալուն, եթե թուրքերը հեռանան Վրաստանի սահմանամերձ շրջաններից: Սակայն ժամանակը ցույց տվեց, որ վրաց կողմը ոչ միայն չկատարեց իր խոստումը, այլեւ հիշյալ տարածքների նկատմամբ դրսեւորած իր հավակնությամբ պատճառ հանդիսացավ հայ-վրացական ընդհարումներին:

Ա. Հարությունյանը, ինչպես արդեն նշվել է, միանգամայն փաստարկված, ընդգծելով Մայիսյան հերոսամարտերի դերն ու նշանակությունը դեպի Թիֆլիս արշավող թուրքական զորքերի հարձակումը կասեցնելու գործում, իրավացիորեն գրում է. «Զիսենկելին և Օդոշելիձեն(Վրաստանի Հանրապետության վարչապետն ու զինվորական փոխնախարարը-Հ. Գ.), որոնք այնքան ճիգեր էին գործադրում ստիպելու Նազարբեկովին՝ Կարսը թուրքերին հանձնել առանց դիմադրության, կհամոզվեին, որ, այնուամենայնիվ, Թիֆլիսը ավելի հեշտ էր պաշտպանել Սարիղամիշի, Կարսի, Արդահանի մատույցներում, Սարդարաբատի տակ, քան Նավթալուղում: Կրկնում ենք, Թիֆլիսը զերծ մնաց թուրքական արշավանքից՝ թուրքերին Ղարաքիլիսայում, Սարդարաբատում և Բաշ Ապարանում հայկական զորքերի հասցրած հակահարվածի շնորհիվ»[1]:

Թուրքական զորքերի դուրս բերումը գրավյալ տարածքներից եւ դրանք հայկական զորամասերով փոխարինելու գործողությունը կատարվել է հայկական եւ թուրքական զորքերի հրամանատարության նախնական պայմանավորվածությամբ եւ փոխհամաձայնությամբ: Ընդամին՝ հայկական կողմի հետ տարվող բանակցությունները վարել է Անդրկովկասում թուրքական զորքերի հրամանատար Խալիլ փաշան: Հայաստանի զինվորական նախարար, գեներալ Հախ-

[1] Նույն տեղում:
[2] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 78, թ 45:
[3] Նույն տեղում:

[1] Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 188:

վերդյանին հասցեագրված՝ այս հարցերին նվիրված հեռագրերից մեկում նշվում է.

«Ձերդ Գերազանցություն

Ես ստացել եմ հեռագիր Խալիլ փաշայից: Նա ինձ խնդրել է հայտնել Ձեզ, որ զորքերի դուրս բերումը սկսելու է այս ամսի 18-ին (հոկտեմբերի 18-ին - Հ.Գ.): Նա խնդրել է Ձերդ գերազանցությանը անել բոլոր կարգադրությունները նշուած օրը պարպած տարածքները գրաւելու համար:

Օտոմանյան կայսրության ներկայացուցիչ
եւ դիվիզիոնի գեներալ Մախմեդ- Ալի»[1]:

ՀՀ զինվորական նախարար գեներալ Հախվերդյանի հեռագրից պարզվում է, որ գրավյալ տարածքներից թուրքական զորքերի դուրս բերմանն առնչվող բանակցությունները, Հանրապետության կառավարության հանձնարարությամբ, թուրքական զորքերի հրամանատարության հետ, գնդապետ Ղորղանյանի ընկերակցությամբ, վարել է անձամբ Դրոն[2]:

Հանրապետության կառավարության որոշմամբ՝ նա նշանակվում է նաեւ ազատագրված տարածքները մուտք գործող զորամասի հրամանատար եւ նույն տարվա դեկտեմբերին, երբ թուրքերը հեռացան Ալեքսանդրապոլից, ազատագրված քաղաքը մուտք գործող զորամասը առաջնորդում էր Դրոն: Զուգահեռաբար, նրա հրամանով հայկական մեկ այլ զորամաս, իհարկե, ՀՀ կառավարության համաձայնությամբ, մուտք է գործում Ջավախք:

Ալեքսանդրապոլից Դրոն ՀՀ կառավարությանն ուղղված հեռագրում հաղորդում է. «Մեր զորամասը գրավեց Ախալքալակի Գորելովկա գիւղը: Դեկ. 8-ի առաւօտեան մի առաջապահ խումբ ուղարկուեց Բոգդանովկա»[3]:

Պարզվում է, որ վրացական կողմը հայկական զորքի մուտքը Ջավախքի տարածք խոչընդոտելու եւ իր իշխանությունն այնտեղ լիարժեքորեն հաստատելու նպատակով արդեն ձեռնարկել էր որոշակի անհրաժեշտ քայլեր:

Նույն հեռագրում Դրոն հաղորդում է. «Երբ վերջիններս (նկատի ունի հայկական զորամասը-Հ.Գ.)հասնում են այնտեղ վրացական մի սպայ առաջարկում է մեր զօրքին հեռանալ և բոլորովին դատարկել Ախաքալակի գաւառը:

[1] ՀԱԱ, Ֆ. 276, ց. 1, գ. 78, թ 18:
[2] Տե՛ս Նույն տեղում:
[3] «Զանգ», 1918, դեսեմբերի 29, թիւ 86:

Պահակի պետը յայտնում է, որ առանց իր իշխանության թոյլտուության նա չի թողնի շրջանը. դրանից յետոյ յայտնւում է վրացական մի զօրամաս թւով 300 հոգի և մի թնդանոթախումբ: Դեկ. 8-ին ժամը 2-ին Բոգդանովկա մտած զօրախումբը լսել է հրացանաձգութեան և գնդացիրների ձայներ: Հետևանքներն անյայտ են»[1]:

Լոռվա տարածքը թուրքական զորքերի կողմից պարպելու իրողությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանը հայտնի դարձավ դեռեւս օգոստոսի 31-ին, այսինքն ավելի վաղ, քան Գերմանիայի գլխավորած ռազմա-քաղաքական միության վերջնական պարտությունն ու Մուդրոսի զինադադարը:

Այդ օրը՝ օգոստոսի 31-ին, օսմանյան արեւելյան բանակի հրամանատար Խալիլ փաշան պաշտոնական այցով ժամանել էր Երեւան: Իհարկե, նրա ժամանանումը Երեւան պատահական լինել չէր կարող, այն խորապես կշռադատված էր:

Անդրադառնալով Խալիլ փաշայի եւ Հայաստանի Հանրապետության ղեկավարների հանդիպման մանրամասներին՝ Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական հավատարմատարը գրում է. «Օգոստոսի 31-ին առաւօտեան Խալիլ փաշան Ֆոն-Կրէսսի (Թիֆլիսում Գերմանիայի ներկայացուցիչը - Հ.Գ.), բարոն Ֆրանկենշտայնի (Ավստրիայի դիվանագիտական երկայացուցիչը - Հ.Գ.) եւ իմ ուղեկցությամբ մտաւ Երեւան:Ընդունելութիւնը բաւական սրտագին էր: Կայարան էր եկել ներքին գործերի մինիստր պ. Արամը, որ Խալիլ փաշայի վաղեմի ընկերն է. Խալիլ փաշան վազելով ընառաջեց եւ գրկախառնուեց պ. Արամի հետ: Դրանից յետոյ Խալիլ փաշան ընդունեց պատուաւոր պահակախմբի պարադը եւ ապա պատուաւոր հեծելազօրի ուղեկցությամբ Արամի հետ միասին գնաց քաղաք: Միւս հիւրերը հետեւցին նրանց»[2]:

Երեւանում Խալիլ փաշան հանդիպումներ է ունենում ՀՀ վարչապետ Հովհ. Քաջազնունու, խորհրդարանի նախագահ Ավ. Սահակյանի, Դիլմանի նշանավոր ճակատամարտում նրան պարտության մատնած, ՀՀ բանակի սպարապետ գեներալ Թ. Նազարբեկյանի ու այլ պաշտոնատար անձանց հետ:Բանակցությունների ժամանակ ի թիվս բազմաթիվ քննարկվող հարցերի, անդրադառնում են նաեւ Ախալքալակի եւ Լոռի-Փամբակի շրջանները թուրքական զորքերից պարպելու խնդիրներին: Նույն օրը ի պատիվ Խալիլ փաշայի Հայաստանի կառավարության կողմից տրվում է պաշտոնական ճաշկերույթ:

[1] Նույն տեղում:
[2] ՀՀ ԲԿԱ, պ. 12, դ. 5, թծ. 65, գ. 1, էջ 2-3:

«Ճաշը իր վախճանին էր մոտենում, երբ Խալիլ փաշան, որ փոքր-ինչ գինով էր, խնդրեց բերել Անդրկովկասի քարտէզը եւ երկար նայելուց յետոյ վեր կացաւ ու յայտարարեց, թէ այլեւս խոսքերը բաւական են, գործ է հարկաւոր այժմ եւ ինքը, իբրեւ կատարումը իր հայանպաստ խոսքերի խոստանում է երեք օրուայ ընթացքում իր պատասխանատուութեամբ համաձայնութիւն գալով Հայոց կառավարութեան հետ, դատարկել Հայաստանի գրաւած մասերը (Փամբակ եւ Լոռի) ամբողջովին կամ մասամբ:

Այս յայտարարութիւնը գերմանացիների եւ աւստրիացիներին սկզբում շփոթութեան մէջ գցեց, սակայն վերջը նրանք էլ ուրախ էին(մի տեսակ չարախնդութեան շեշտ կար այդ ուրախութեան մէջ) եւ մեզ դրդում էին մինչեւ անգամ խօսք առնել Խալիլ փաշայից, որ Ալեքսանդրապոլը դադարկի...

Ճաշից յետոյ տեղի ունեցաւ պ. Արամի բնակարանում մեր պաշտոնական խորհրդակցութիւնը:

Առաջին հերթին պ. Հովհ. Քաջազնունին դրեց խորհրդակցութեան առաջ Փամբակն ու Լոռին դատարկելու հարցը: Երկար թեր ու դէմ խօսակցութիւն տեղի ունեցաւ այս շուրջը, եւ հարցը փոխուեց նրանով, որ Խալիլն երեք օրուայ ընթացքում պէտք է իր կառավարութեանը այդ գաւառները դատարկելու առաջարկ անի եւ համապատասխան հրաման ստանալուց յետոյ դատարկի»[1]:

Հոկտեմբերի 5-ին Խալիլ փաշան դարձեալ ժամանում է Երեւան եւ հայտնում, որ այս անգամ արդեն ինքը հրաման է ստացել դատարկել Լոռի-Փամբակի շրջանները: Այս հաղորդումից հետո հայ-թուրք զինվորական շտաբի ներկայացուցիչներն անմիջապես մշակում են հիշյալ շրջաններում թուրքական զորքերին հայ զորամասերով փոխարինելու ծրագիրը, որն էլ իրականացվում է նույն տարվա հոկտեմբերի 18-ին[2]:

Մի ուշագրաւ փաստ. թուրքական քաղաքականության դերն ու ազդեցությունը հայ-վրացական պատերազմում:

Նույն Խալիլ փաշան, մինչեւ թուրքական զորքերի կողմից Լոռի-Փամբակի տարածքի պարպումը, դեռեւս սեպտեմբերին Թիֆլիսում Հայաստանի կառավարության հավատարմության ղեկավարին (հավատարմատար՝ Ա. Ջամալյան - Հ.Գ.) հստակորեն արդեն արտահայտել էր այդ շրջանների նկատմամբ Թուրքիայի դիրքորոշումը:

1918 թ. սեպտեմբերի 21-ին թվագրված՝ Թիֆլիսում Հայաստանի միսիայի թիվ 2 օրագրում կարդում ենք. «Լոռի եւ Փամբակի շրջան-

[1] Նույն տեղում, էջ 3:
[2] Տե՛ս նույն տեղում:

ները Հայաստանի մի մասը համարելով, Խալիլն առաջարկեց անմիջապէս այնտեղ հայկական քաղաքացիական ադմինիստրացիա ուղարկելու: Տաճկական զօրքը կը մնայ տեղերում, բայց ամբողջ քաղաքացիական կառավարութիւնը պիտի հայկական լինի: Ազգաբնակչութիւնը (խոսքը հայ գաղթականների մասին է - Հ.Գ.) կարող է անմիջապէս վերադառնալ: Երկաթուղային վարչութեան հարցը դեռ լուծուած չէ: Մեր տպաւորութիւնն այն է, որ պիտի մնայ տաճիկների ձեռքում: Խալիլն աւելացրեց, որ վրաց կառավարութիւնը Աբդուլ-Քերիմից (Թուրքիայի ներկայացուցիչը Թիֆլիսում - Հ.Գ.) քաղաքացիական վարչութեան մասին իմանալով, պաշտոնապէս յայտնել է, որ իր վարչութիւնը պիտի ուղարկի ազատուող շրջանները կառավարելու համար: Սակայն Խալիլը մեզ հաւաստիացրեց, որ նրա ստացուած բացորոշ հրամանի հետեւանքով վրացիներն այդ շրջանները չը պէտք է մուտք գործեն ու Լոռին եւ Փամբակը Հայաստանի մասը լինելով, վարչութիւնը պէտք է լինի միմիայն հայկական»[1]:

Խալիլ փաշայի՝ օգոստոսի 31-ին եւ հոկտեմբերի 5-ին արած պաշտոնական հայտարարություններին, ինչպես եւ վերոհիշյալ տողերի բովանդակության ծանոթությունը բնականորեն հարց է առաջադրում. ինչո՞ւ Գերմանիայի, որն, ի դեպ, միանշանակորեն պաշտպանում էր Վրաստանին, դաշնակից Թուրքիան ժամանակից շուտ էր բացում իր խաղաքարտերը եւ Հայաստանի Հանրապետությանկառավարությանը աջակցում վերստին հաստատվելու այդ տարածաշրջաններում: Որո՞նք են Թուրքիայի կողմից ձեռնարկված նման քայլերի պատճառն ու նպատակները: Մի՞թե Թուրքիան եւ բազմափորձ դիվանագետ Խալիլ փաշան կարող էին անկեղծ, բարյացակամ վերաբերմունք դրսեւորել իրենց թշնամի, թեկուզեւ ոչ այնքան ուժեղ պետության՝ Հայաստանի Հանրապետության նկատմամբ: Իհարկե, ոչ, ճակատագրի հարկադրանքով ճանաչելով Հայաստանի անկախությունը, Թուրքիան երբեք չէր համակերպվել Հայաստանի Հանրապետության գոյության, առավելեւս նրա կայացմանն ու հզորացման իրողությանը: Պարզորոշ տեսնելով իրենց մոտալուտ պարտությունը եւ ստիպված հաշտվելով գրավյալ տարածքները պարպելու դառը փաստին՝ Թուրքիան ուղիներ էր որոնում Անդրկովկասում իրավիճակը ապակայունացնելու, ազգային թշնամանքը ավելի խորացնելու եւ այն ընդհուպ մինչեւ պատերազմի վերածելու ու դրանով իսկ Հայաստանի նորաստեղծ Հանրապետությանն ու հայությանը մեկ անգամ եւս հարվածելու ուղղությամբ:

[1] ՀՀ ԲԿԱ, պահ. 12, դ. 5, թթ. 65, էջ 5:

Ամենայն հավանականությամբ Հայաստանի նկատմամբ Թուրքիայի դրսեւորած հիշյալ «ջերմ բարեացակամ» վերաբերմունքը հենց այդ նպատակն էր հետապնդում, մանավանդ որ քաջատեղյակ էր բովանդակ Անդրկովկասում, մասնավորապես նորաստեղծ Հայաստանի եւ Վրաստանի հանրապետություններում տիրող կացությանը, նրանց միջեւ գոյություն ունեցող սահմանային վեճը:

Դրոյի գլխավորած զորքերի մուտքը Լոռի վրացական կառավարության համար պատրվակ է ծառայում, որպեսզի ողջ Անդրկովկասում եւ տարբեր մակարդակի հանդիպումներում աղաղակի հայերի ռազմական ներխուժման մասին, չնայած Բորչալուի գավառի եւ հայկական այլ շրջանների գրավումով ինքն էր արդեն տվել նախահարձակ լինելու օրինակը:

Հայաստանի Հանրապետությանկառավարության կողմից Լոռվա տարածք հայկական զորքեր մտցնելու իրողությունը գնահատելով որպես Վրաստանի շահերի դեմ ուղղված քայլ՝ վրաց հանրապետության արտաքին գործոց նախարարը հոկտեմբերի 19-ին Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Արշակ Ջամալյանին է հանձնում հետեւյալ բողոքագիրը.

«Վրաստանի Հանրապետության կառավարությունը տեղեկացաւ, որ Թիֆլիսի նահանգի մէկ մասը՝ Քոբէր կայարանից սկսած մինչեւ սահմանակից կամուրջը, այլեւ Սանահինի մօտի շրջանները, սոյն հոկտեմբերի 18-ին գրաւուել են հայկական կանոնաւոր զօրքերի առաջին եւ չորրորդ հրացանաձիգ գնդերի կողմից: Վրաց կառավարությունը, որ միշտ պատրաստ է խաղաղ, փոխադարձ համաձայնության միջոցով կարգաւորել սահմանների հարցը բարեկամ Հայաստանի Հանրապետության հետ, իր պարտականությունն է համարում յայտնելու, որ քանի այդպիսի համաձայնութիւն չի կայացել, հայկական զօրամասի մուտքը Թիֆլիսի նահանգի սահմաններից ներս՝ վրաց կառավարության կողմից կը դիտուի որպէս Հայաստանի կողմից արուած ակներեւ մի թշնամական քայլ Վրաստանի նկատմամբ»[1]:

Հայկական զորամասի մուտքը զուտ հայկական ու հայաբնակ Լոռի զայրույթ ու ցասում է առաջ բերում Հայաստանի Հանրապետության հետ սահմանների հարցը «խաղաղ, փոխադարձ համաձայնության միջոցով կարգավորելու միշտ պատրաստ» վրաց կառավարության շրջանում: Վրաց արտաքին գործոց նախարարի վերոհիշյալ հեռագիրը կրկին հավաստում է, որ գերմանացիների զինուաջակցությամբ խանդավառված Վրաստանի իշխանությունները լի էին հաստատակամությամբ զավթելու Լոռին, որը Վահան Փափազյանի (Կոմս) բնորոշմամբ «... Հայաստանի թոքն է. առանց այդ գեղեցիկ եւ ռազմական կարեւորութիւն ունեցող շրջանի եւ երկաթուղագծին, անկարելի էր շնչել»[1]:

Առաջնորդվելով վիճելի տարածքների հարցը զենքի ուժով լուծելու սկզբունքով՝ վրաց կառավարությունը, բացի գերմանացիներից, փորձում է գտնել նոր դաշնակիցներ ու աջակիցներ:

1918 թ. սեպտեմբերի 23-24 թվագրված՝ Թիֆլիսում Հայաստանի միսիայի թիվ 4 օրագրում նշված է. «... Գեգեչկորին եւ գեն. Մազնիեւը հասել են Եկատերինբուրգ, Ալեքսեեւի Կուբանի ներկայացուցիչների հետ խորհրդակցելու: Ըստ դեռեւս չստուգուած տեղեկութիւնների, Մազնիեւի զօրախմբի ծախսերը հոգում է Կուբանի կառավարութիւնը»[2]:

Վրաստանի իշխանությունները տենդագին պատրաստություններ են տեսնում պատերազմի պատրաստվելու ուղղությամբ, իսկ հետեւանքը իրեն երկար սպասեցնել չի տալիս:

Վրաց զինվորական նախարարի հրամանով հոկտեմբերի 20-ին Սանահինում գտնվող վրացական զրահագնացքի պետ, կապիտան Գոգոաձեն Լոռվա հայկական զորախմբի սահմանապահ վաշտի հրամանատարությանն է ներկայացնում հետեւյալ վերջնագիրը.

«Հիմնուելով Վրաստանի Հանրապետության զինուորական նախարարի թիւ 372 հեռագրի վրայ, յանձնարարում եմ ձեզ 24 ժամուայ ընթացքում տեղեկացնել ձեր կառավարությանը, որ դուք պէտք է հեռանաք ձեր այժմ գրաւած տեղից Շահալի կայարանից այն կողմը: Սպասում եմ ձեր պատասխանին հոկտեմբերի 22-ին, ժամը 2-ին»[3]:

Հայկական կողմին վերջնագրի պահանջները արագորեն կատարել հարկադրելու դիտավորությամբ՝ վրացիները չսպասելով անգամ իրենց վերջնագիր-հեռագրի պատասխանին, աստիճանաբար զինական ուժեր, անգամ զրահագնացքներ են կենտրոնացնում Լոռվա շրջանի առավել կարեւոր նշանակություն ունեցող կետերում եւ հաղորդակցության ուղիներում:

Հոկտեմբերի 21-ին կապիտան Գոգոաձեն զինվորական նախարարությունից ստանում է մեկ այլ հեռագիր.

---

[1] «Հայրենիք» ամսագիր, 1957, թիւ 2, էջ 2-3:

[1] Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. 2, էջ 496:
[2] ՀՀ ԲԿԱ, պահ. 12, դ. 5, թծ. 65, էջ 1:
[3] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 80, էջ 13:

«Վագը, ամսի 22-ին, ժամը 12-ն, երկաթուղով ձեզ մոտ են գալիս նահանգային զումարտակի 250 զինուորներ, դէպի Վարոնցովկա է շարժւում զօր. Ցիցիանովի զօրամասը՝ բաղկացած մարտկոցներից եւ հեծեւակներից: Զօր. Ցիցիանովի գալուց յետոյ նա կընդունի բոլոր զօրքերի հրամանատարութիւնը: Ամբողջ Բարչալուի գաւառի մաքրագործման եւ մինչեւ Թիֆլիսի (նկատի ունի Թիֆլիսի նահանգը, որի սահմանների մեջ ցարական իշխանությունների կամքով մտցվել էր նաեւ հայկական Լոռվա գավառը - Հ.Գ.) սահմանները հեռանալու պայմանը անպայման է»[1]:

Միանգամայն բնական է, որ հայկական կողմը չէր կարող վրացիների կողմից ձեռնարկվող գործողությունների սուկ հանդիսատեսը լինել: Ի պատասխան վրացական կողմի ձեռնարկած քայլերի, ՀՀ կառավարության որոշմամբ գեներալ Սիլիկյանի հրամանատարությամբ գործող դիվիզիայի կազմում, բայց ինքնուրույնաբար գործելու իրավունքով, Դրոյի գլխավորությամբ կազմավորվում է Դիլիջան -Ղարաքիլիսա զինվորական օկրուգ: Արդեն դժվար չէր հասկանալ, որ հարցը լուծվելու է ռազմական միջոցներով: Մարտական գործողություններ ծավալելու համար անհրաժեշտ էր կազմակերպել թիկունքը, տվյալ պարագայում Լոռվա բնակչությանը, հստակ սահմանել ու կարգավորել բնակչության եւ զինվորականության գործառույթներն ու փոխհարաբերությունները:

Ստանձնելով զորքերի հրամանատարությունը՝ Դրոն 1918 թ. նոյեմբերի 26-ին ստորագրում է հետեւյալ հրամանը.

« Հայտնում եմ ի գիտություն եւ ի գործ, որ ես նշանակվել եմ Դիլիջան-Ղարաքիլիսայի ռազմական օկրուգի հրամանատար եւ բոլոր զինվորականներին, քաղաքացիական անձանց եւ ձեռնարկություններին հրամայում եմ, որ ծառայողական հարցերով ինձ դիմել Ղարաքիլիսա գյուղում:

Հիմք. Հայկական դիվիզիայի նոյեմբերի 14-ի թիւ 005 հրամանի:

2. Հայտնում եմ հայկական դիվիզիայի նոյեմբերի 14-ի թիւ 005 հրամանի քաղվածքը. Հայտնում եմ առաջնորդվելու համար մինիստրների խորհրդի հոկտեմբերի թիւ 50 որոշումը, 1. Դիլիջանի եւ Ղարաքիլիսայի տեղամասերը ժամանակավորապես միավորվում են Դիլիջան-Ղարաքիլիսա մեկ միասնական օկրուգում, որը թե քաղաքական եւ թե զինվորական առումով ենթարկվելու է միմիայն օկրուգի պետին:

3. Հրամայում եմ բոլոր գյուղերում անցկացնել կոմիսարների նոր ընտրություններ...

[1] Նույն տեղում:

4. Նկատի ունենալով Դիլիջանի եւ հատկապես Ղարաքիլիսայի գյուղական բնակչության տնտեսական ծանր վիճակը, հրամայում եմ բոլոր զինվորական մասերին, որ առանց տեղամասային ու գյուղական կոմիսարների գիտության եւ թույլտվության բնակչությունից ոչինչ չգանձել: Գանձումը պետք է կատարվի գյուղական եւ տեղամասային վարչությունների ու համայնքների ներկայացուցիչների ներկայությամբ, միայն սահմանված պետական գներով: Փողը պետք է վճարվի տեղում, առանց ուշացնելու:

5. Զինվորականներին քաղաքացիական իշխանությունների կողմից օգնության հայցով դիմելու դեպքում, բոլոր զինվորական մասերի պետերին հրամայում եմ ցուցաբերել օրենքով սահմանված օգնություն:

6. Քաղաքական իշխանությունները պետք է օրենքով սահմանված կարգով, ամեն միջոցներ ներդնեն, աջակցեն զինվորական մասերին:

Դիլիջան-Ղարաքիլիսա զինվորական օկրուգի պետ Դրո»[1]:

Վրացական կողմը իր գրված տարածքում բացահայտորեն տեղաբաշխում է նոր մարտական ուժեր եւ ռազմական տեխնիկա:

Ուշի-ուշով հետեւելով վրացիների կատարած քայլերին՝ հայկական զորախմբի հրամանատարությունը նույնպես նպատակադրվում է դիմել վճռական գործողությունների:

Հոկտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարը ստանում է Լոռիի շրջանում տիրող իրավիճակի ներկայացնողհետեւյալ հեռագիրը.

«Զինվորական նախարարին

Վրացիները Շահալին պարպելու վերաբերյալ ներկայացնում են վերջնագիր եւ զրահագնացքը մոտեցրել են Կոբեր կայարանին: Սանահին կայարանում նրանք կենտրոնացրել են 300 զինվորներ, որոնց առավոտյան միանալու է եւս 500 մարդ: Նրանց ակտիվ գործողություն ծավալելու դեպքում Դրոն մտադրվել է հարձակվել եւ գրավել Սանահին կայարանը:

Նա խնդրում է անհապաղ հրամայել Դիլիջանի պահեստներից տալ հրացանի փամփուշտներ, նռնակներ...

Փոխգնդապետ Շնեուր»[2]:

Իր շտաբի պետի՝ Շնեուրի հեռագրի իսկությունը, Հայաստանի Հանրապետության արտաքին գործոց նախարարին հասցեագրված

[1] ՀԱԱ, ֆ. 201, g. 1, գ. 102, թ. 89:
[2] ՀԱԱ, ֆ. 276, g. 1, գ. 78, թ. 44:

հոկտեմբերի 22-ի հեռագրում, հավաստում է նաեւ հայկական դիվի-զիայի զորահրամանատար գեներալ Սիլիկյանը.

«Հոկտեմբերի 21-ին,-նշում է գեներալ Մ. Սիլիկյանը,- վրացիները մոտեցրել են Կոբեր կիսակայարանին զրահագնացք, իսկ Սանահին կայարանին 300 զինվորներ: Առավոտյան նրանց են միանալու եւս 500 զինվորներ: Այդ նույն օրը 10 զինվորներով Քարանֆի գյուղն է եկել գերմանական սպան: Վրացիները պահանջել են մաքրել Շահալին:

Դիլիջանի զորախմբի պետին հանձնարարված է հակառակորդի ակտիվ գործողությունների դեպքում դիմել հարձակման եւ գրավել Սանահինը»[1]:

Վրացիները, չսպասելով Հայաստանի իշխանությունների հետ ընթացող բանակցությունների արդյունքներին, ավելի ու ավելի են ավելացնում իրենց զորքերի թիվը Լոռվա տարածքում:

Վրաց զինվորական նախարարության կողմից ձեռնարկվող քայլերը արդեն ոչ այլ ինչ էին, եթե ոչ պատերազմական գործողություններ ծավալելու բացահայտ մարտահրավեր:

Վրաց կառավարության վերջնագիր ներկայացնող հեռագրերը եւ վիճելի տարածքներում վրացական կողմի ձեռնարկած գործողությունները փոթորկահույզ իրավիճակ են ստեղծում Հայաստանի խորհրդարանում ու կառավարությունում: Հայաստանի խորհրդարանի հոկտեմբերի 22-ի նիստում վարչապետ Հովհ. Քաջազնունին հայտարարում է.

«Մեր հողի մի մասը, Լոռի-Փամբակի շրջանում, գրաւուած էր թուրքական զօրքերով: Մեր կառավարութիւնը մի քանի անգամ բողոքներ ներկայացրեց Թուրքաց կառավարութեան, ինչպէս նաեւ գերմանական եւ աւստրիական մինիստրներին եւ միշտ պատասխան ստացաւ, որ գրաւումը ժամանակաւոր է:

Հոկտ. 5-ին Խալիլ փաշան Երեւանում յայտնեց, որ հրաման է ստացուել դատարկել վերոհիշեալ երկրամասերը: Անմիջապէս մեր եւ թրքական շտաբները գծեցին այդ գործողութեան ծրագիրը, որը սկսուեց հոկտ. 13-ին եւ առանց որեւէ միջադէպի, շարունակուեց մինչեւ հոկտ. 18-ը, երբ գիշերուայ ժամը 12-ին հեռագիր ստացուեց Դրօյից այն մասին, որ «վրացիները վերջնագիր են ներկայացրել՝ դատարկելու համար մեր ստացած շրջանը մինչեւ Շահալի՝ ու շարժուիլ Կոբէրի վրայով»: Նա խնդրում է կարգադրութիւն անել: Մեր կառավարութիւնը որոշեց չընդունել վերջնագիրը, չյանձնել Շահալի կայարանը եւ զինուած ուժի դիմելու պարագային ցոյց տալ դիմադրութիւն»[1]:

[1] Նույն տեղում, թ. 49:

Չնայած հանրապետության ծանր կացությանը, այնուհանդերձ, Հայաստանի Հանրապետության խորհրդարանն ու կառավարությունը չէին կարող ընդունել վրաց կառավարության վերջնագիրը, որը միանշանակորեն կհանգեցներ ոչ միայն Ջավախք աշխարհի, այլեւ Բորչալու գավառի Լոռի-Փամբակի շրջանի կորստյանը:

Հայոց խորհրդարանի որոշման համաձայն վարչապետ Հովհ. Քաջազնունին ի պատասխան վերջնագրի, Արշակ Ջամալյանի միջոցով վրաց կառավարությանն է հղում հետեւյալ հեռագիրը.

«Հայաստանի խորհրդարանը լսելով Վրացական հա.4303 դիմումի եւ Շահալին պարպելու վերջնագիր-պահանջագրի մասին իմ հաղորդումը, որոշեց. հավանություն տալ կառավարության գործողություններին եւ առաջարկեց հետագայում էլ հետեւել ընդունված ուղղությանը:

2. Պարտավորեցնել կառավարությանը ամեն ջանք գործադրել կոնֆլիկտը խաղաղ ճանապարհով լուծելու համար՝ հուսալով, որ Վրաստանը ձեռնպահ կմնա հարձակողական գործողություններից եւ չի անցնի իր զբաղեցրած գիծը:

Խնդրում եմ այդ մասին հաղորդել Վրաստանի կառավարությանը:

Հա.519 մինիստր նախագահ Քաջազնունի»[2]:

Սակայն ապարդյուն էին սահմանային խնդիրները խաղաղ ճանապարհով լուծելու Հայաստանի կառավարության գործադրած ջանքերը:

Վրաստանի Հանրապետության կառավարության պահանջը մեկն էր. դուրս բերել հայկական զորագնդերը Լոռվա գավառից եւ Հայաստանի կառավարությանը հարկադրել ընդունել վիճելի բոլոր տարածքների նկատմամբ Վրաստանի իրավասությունն ու գերիշխանությունը: Ավելին, Վրաստանի կառավարության որոշումով շրջափակվեց Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող Բաթում-Ալեքսանդրապոլ երկաթուղին՝ կտրելով մեր երկիրը ԱՄՆ-ից եւ Անգլիայից ստացվող տնտեսական օգնությունից: Օգտվելով այն հանգամանքից, որ Թուրքիայի պարտության հետեւանքով թուրքական զորքերը հարկադրաբար պարպել էին Ախալքալաքի շրջանները՝ վրացական զորամասերը դեկտեմբերի 5-ին գրավում են նաեւ այդ գավառը:

[1] Նույն տեղում:
[2] ՀՀ ԲԿԱ, պահ. 12, դ. 5, թծ. 65, էջ 6:

Գրված տարածքներում վրաց իշխանությունները զենքի ուժով անլուր տառապանքների ու հարստահարումների էին ենթարկում հայ բնակչությանը: Իսկ Լոռվա մի շարք գյուղերը վրաց զինվորականության զրահագնացքների հրանոթներից ու գնդացիրներից տեղացող կրակով ռմբակոծելն ու քանդելը դարձել էր պարբերաբար կրկնվող սովորական երեւույթ:

Ախալքալաքի եւ Լոռի-Փամբակի շրջաններում վրաց զինվորները մահվան սպառնալիքով հարկադրում էին հայ բնակչությանը կեղծ վկայություններ տալ՝ իբր թե իրենք հոժարակամ համաձայն են միանալ Վրաստանին եւ ոչ Հայաստանին:

Այդ օրերին Հայաստանի Հանրապետության կառավարության անունով բազմաթիվ հեռագրեր էին ստացվում հիշյալ շրջանների հայ բնակիչներից, որոնցում նրանք իրենց զայրույթն ու բողոքն էին արտահայտում վրաց զինվորների գործադրած վայրագությունների կապակցությամբ:

Վկայակոչենք Ուզունլար(Օձուն) գյուղից ուղարկված հեռագիրը.

«Հայաստանի զինվորական նախարարին

Հաղորդում ենք, որ դեկտեմբերի 5-ին վրացական զորքերը փորձել են զենքի ուժով գրավել Ուզունլար գյուղը:

Երկու օր Ուզունլարը գտնվել է հրանոթային կրակի տակ: Վրացիները սպառնում են ոչնչացնել ուզունլարցիների 1000 տները: Խնդրում են օգնության հասնել զոհվող հարազատ ժողովրդին»[1]:

Արժանին պիտի մատուցել Ուզունլարի բնակչությանը: Ուզունլարցիները, ճիշտ է, երեք օր անընդմեջ ենթարկվում են թնդանոթներից ու գնդացիրներից տեղացող կրակին, սակայն իրենց դրսեւորել են արժանապատվորեն ու հերոսաբար:

Համաձայն Ուզունլարի դեպքերը «Զանգ»-ում ներկայացրած հոդվածագրի, «...600 հոգի գիւղացիներ ոտքի կանգնեցին և հրացաններով ու քարերով վրաց չորս հարիւրակի մի մասը ջարդեցին, իսկ մնացած մեծ մասը քշեցին սահմաններից և այդպիսով պարգեցին ապստամբութեան դրօշակը»[2]:

Բնական է, որ Լոռիում գտնվող ՀՀ զորքը եւ նրա հրամանատարը՝ Դրոն, չէին կարող այնտեղ ծավալվող դեպքերի սոսկ հանդիսատեսը լինել ու չասեին իրենց վճռորոշ խոսքը:

ՀՀ կառավարությանը հասցեագրած զեկուցագրերում ահազանգելով վրացական զորքի կողմից ուզունլարցիների նկատմամբ կիրառած բռնություններ մասին՝ Դրոն դեկտեմբերի 8-ին թվագրած հեռագրում հայտնում է. «Ուզունլարցիները ահա երկու օր է, որ գտնուում են վրացական զօրքի թնդանօթային եւ գնդացրային կրակի տակ: Լոռու շրջանի հիւսիսային մասի հայ գիւղերը ենթարկուում են թալանի և կողոպուտի նոյն զօրքերի կողմից: Ազգաբնակչութիւնը օգնութիւն է խնդրում, դրութիւնը ծայր աստիճան յուսահատական է: Յայտնում եմ, որ եթէ վրացական զօրամասերը կշարունակեն տանջել հայ ժողովրդին այլևս չեմ կարող լռել: Խնդրում եմ Հայաստանի կառավարութեանը ձեռք առնել կտրուկ միջոցներ կամ ընդունել իմ հրաժարականը

Սպասում եմ շուտափոյթ պատասխանի»[1]:

Դրոյի կողմից ՀՀ կառավարությանը ներկայացրած, կարելի է ասել, վերջնագիրը պատահական լինել չէր կարող, այն անկասկած խորապես կշռադատված էր ու հաշվարկված: Նա համոզված էր, որ վրաց իշխանությունները իրենց զորքերը որեւէ պարագայում դուրս չէին բերելու Լոռվա տարածքից եւ այն հոժարակամ զիջելու Հայաստանի Հանրապետությանը: Հայ եւ վրաց կառավարությունների միջեւ տեղի ունեցող բանակցություններն աներկբա ցույց էին տալիս, որ այդ հարցը կարելի էր լուծել միմիայն զենքի միջոցով և ինչքան շուտ, այնքան լավ:

Դրոն մեծ հեղինակություն էր վայելում Հայաստանում եւ հատկապես բանակում: ՀՀ կառավարությանը ներկայացնելով վերոհիշյալ վերջնագիրը, նա համոզված էր, որ այդ օրերին կառավարության համար գրեթե անհնարին կլիներ ընդունել զորքերի հրամանատարությունը թողնելու նրա ներկայացրած հրաժարականը:

Իսկ այդ ընթացքում վրացական կողմը ավելի է սաստկացնում Լոռվա հայության նկատմամբ գործադրած բռնությունները: Դեկտեմբերի 11-ին Դրոյի անունից գնդապետ Միրիմանյանը Հայոց Ազգայի Խորհրդի նախագահ Ավ. Ահարոնյանի, Պապաջանյանի եւ Արզումանյանի ներկայությամբ Վրաստանի հանրապետության ներկայացուցչին է ներկայացնում գեներալ Մուլուկիձեի զորքերի կողմից գնդացիրներով ու թնդանոթներով Ուզունլար գյուղը ռմբակոծության ենթարկելու իրողությունը եւ խնդրում, հանուն երկու ժողովուրդների բարեկամության նշանակել հանձնաժողով՝ հետաքննելու այնտեղ տեղի ունեցած դեպքերը[2]:

Նույն օրերին, ՀՀ զինվորական նախարարության գլխավոր շտաբին ուղղված զեկուցագրում, հետախուզական բաժնի պետ գնդապետ Զինկեւիչը հաղորդում է վրացական զորքերի կողմից Լոռվա

[1] Նույն տեղում, էջ. 13:
[2] «Զանգ», 1918, դեկտեմբերի 15:

[1] Նույն տեղում:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 16, թ. 13-14:

հայության նկատմամբ գործադրած ոչ միայն բռնությունների, այլեւ Ուզունլար եւ Ծաթեր գյուղերի վրա գնդացիրներից ու թնդանոթներից գյուղերը ռմբակոծելու փաստերը[1]:

Այսուհանդերձ, պիտի արժանին մատուցել Լոռվա հայությանը: Գլխավոր շտաբին հասցեագրած դեկտեմբերի 12-ի զեկուցագրում գնդապետ Զինկեւիչը տեղեկացնում է, որ Ուզունլար եւ Ծաթեր ու նրանց մերձակա գյուղերի բնակիչներն այլեւս անկարող լինելով համակերպվել վրացական կողմից իրենց նկատմամբ գործադրած բռնություններին, հարձակվել են վրաց զինվորների վրա եւ փախուստի մատնելով նրանց՝ խլել են գնդացիրներն ու փակել երկու զրահագնացքների ճանապարհը: Գնդապետ Զինկեւիչի տեղեկացմամբ՝ հայ գյուղացիները գրավել են Սանահին գյուղը եւ մոտեցել Ալավերդիի գործարանին[2]:

Նույն օրը՝ դեկտեմբերի 12-ին, ՀՀ վարչապետին հասցեագրած հեռագրում Դրոն հաղորդում է, որ Ախալքալակում մեր զորքերը, համաձայն դիվիզիայի հրամանատարի (նկատի ունի գեներալ Սիլիկյանին-Հ. Գ.) հրամանի ու իր կարգադրությամբ՝ Բոգդանովկայից նահանջել են Գորելովկա: Վրացական 300 հոգանոց զորաջոկատը եւ 4 թնդանոթ մոտեցել են Գորելովկային, իսկ այնտեղ գտնվող մեր զորամասը նահանջել է դեպի սահմանը:

ՀՀ կառավարությանը տեղյակացնելով Լոռիում եւ Ախալքալակում տիրող իրավիճակը՝ Դրոն նույն հեռագրում հայտնում է, որ ինքը որոշել է վաղը առավոտյան Ախալքալակի սահման տեղափոխել առաջին դիվիզիոնը եւ խնդրում թույլ տալ անհապաղ գրավել Սանահինը, Վորոնցովկան ու Ալավերդին: Նրա գնահատմամբ՝ Լոռվա տարածքում ծավալվող դեպքերը չպետք է հետաձգվեն[3]:

Դեկտեմբերի 12-ին Հայաստանի Հանրապետության վարչապետ Հովհաննես Քաջազնունին վերջին անգամն է դիմում Վրաստանի կառավարությանը.

«Վրաստանի կողմից բռնությամբ զավթած Բորչալուի գավառում վրացական զորքի գործողությունները այդ շրջանում ստեղծել են այնպիսի իրավիճակ, որն այլեւս հնարավոր չէ հանդուրժել: Միայն այդ շրջանից վրացական զորքի դուրս բերումը կարող է կանխել հետագա արյունահեղությունը եւ հաստատել ամուր բարեկամական հարաբերություններ Հայաստանի եւ Վրաստանի միջեւ:

[1] Տե՛ս Բանբեր Հայաստանի Արխիվների, 1991, թիւ 3, էջ 25:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 74:
[3] Տե՛ս նույն տեղում:

Այդ նպատակով Հայաստանի կառավարությունը պատիվ ունի Վրաստանի կառավարությանը առաջարկելու անհապաղ դուրս բերել վրացական զորքերը Բորչալու գավառի հայկական մասից: Հրաժարվելու կամ հապաղելու դեպքում Հայաստանի կառավարությունը իր քաղաքացիների ապահովությունը վրացական զորքերի բռնություններից պաշտպանելու նպատակով հարկադրված կլինի ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ»[1]:

Վրաց իշխանությունները հարկ չեն համարում պատասխանել, նույնիսկ որեւէ ձեւով արձագանքել իրենց ուղղված ՀՀ կառավարության ներկայացրած դիմումին:

Հայկական եւ զուտ հայերով բնակեցված տարածքների նկատմամբ Վրաստանի իշխանությունների զավթողական տրամադրությունները պայմանավորված էին նաեւ Հայաստանի նորաստեղծ հանրապետության իրական կացությամբ, երկրում տիրող տնտեսական ու ընդհանրապես բոլոր առումներով տիրող վատթարագույն իրավիճակով: Վրաստանի իշխանությունները, անշուշտ, տեղյակ էին այս ամենին եւ այդ պատճառով համոզված, որ ծայրահեղ ճգնաժամային իրավիճակում գտնվող Հայաստանի Հանրապետությունն ի զորու չէր լինելու մարտի դաշտ դուրս բերելու կազմակերպված բանակ եւ պատերազմելու բոլոր առումներով անհամեմատ բարվոք վիճակում գտնվող Վրաստանի դեմ:

1. Ի տարբերություն եղեռնի ահավոր սարսափներն ապրած հայության եւ անհամար կռիվների ռազմաբեմի վերածված Հայաստանի, Վրաստանն ու վրաց ժողովուրդը ոչ միայն չէին ապրել հայությանը վիճակված սարսափները, այլեւ չէին տուժվել պատերազմի հետեւանքով: Այս առումով Վրաստանը Հայաստանի նկատմամբ ուներ մի շարք անվիճելի առավելություններ:

Պատերազմի ողջ ընթացքում եւ անգամ այն պարագայում, երբ ռուսական զորքերի կողմից կովկասյան ճակատը լքելու հետեւանքով, թուրքական զորքերին հաջողվեց ներխուժել Անդրկովկաս, Վրաստանը գրեթե չտուժեց: Ավելին, լինելով Գերմանիայի դաշնակիցը, Վրաստանի հանրապետությունը զգալի օգնություն էր ստացել նրանից, որը դրականորեն էր ներգործել նրա տնտեսության կայունության պահպանմանը:

2. Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսը Կովկասի փոխարքայության կենտրոնն էր: Ցարական իշխանության տապալումից եւ փոխարքայության վերացումից հետո Վրաստանում ու Թիֆլիսում

[1] «Հայրենիք» ամսագիր, 1957, թիւ 2, էջ 8:

մնացել էին մեծ քանակության զենք ու զինամթերք եւ այլ հարստություններ: Հայտնի է, որ Անդրկովկասյան կառավարությունում վրացիների ձեռքում էին կենտրոնացված կառավարության գլխավոր պաշտոնները՝ վարչապետ, ներքին եւ արտաքին գործերի, ռազմական, ինչպես նաեւ հաղորդակցության նախարարություններ: Վրացական կողմը հետեւողականորեն, մեծ արդյունավետությամբ ու նպատակասլացորեն օգտագործել էր այդ հանգամանքը եւ կարողացել Վրաստան տեղափոխել Արեւմտահայաստանում, մասնավորապես Սարիղամիշի եւ Օլթիի ռուսական հրամանատարության ռազմական պահեստներում ամբարված զենք ու զինամթերքի, հանդերձանքի եւ պարենի մեծագույն մասը:

3. Շատ լավ վիճակում էին Վրաստանի հաղորդակցության ուղիները, հատկապես երկաթուղին, որը մեծ հնարավորություն էր ընձեռում վրացական կողմին պատերազմի բռնկման պարագայում ապահովել ռազմաճակատի եւ թիկունքի անխափան կապը եւ ճիշտ ժամանակին անհրաժեշտ զինուժով, զենք ու զինամթերքով համալրել եւ մատակարարել իրենց զորամասերը:

4. Համաձայն Հովհաննես ավ. քահանա Հաճյանի, վրացական կողմը օգտագործել է «... Թիֆլիսում կենտրոնացած հայոց անհատական մեծարժէք ունեցվածքները... Թիֆլիսի դրամանատներում դրամն առատ էր, որի մեծագույն մասը պատկանում էր հայերին»[1]:

Ըստ նույն Հովհաննես ավ. քահանա Հաճյանի հավաստման, որն այդ ժամանակ բնակվում էր Թիֆլիսում, Վրաստանի մայրաքաղաքի ազգաբնակչության մեծամասնությունը հայեր էին:

«Մինչեւ 1914 թվի պատերազմը, համաձայն ըստույգ վիճակագրութեան, Թիֆլիսի 280.000 ազգաբնակչութիւնից 150.000-ը հայեր էին, մնացածը վրացի, թուրք, ռուս եւ այլն: Այս թվի վրայ եկաւ ու աւելացաւ պատերազմի հետեւանքով տաճկահայ, պարսկահայ, եւս առաւել Կարսից գաղթած բազմահազար հայութիւնը(նկատի ունի Անդրկովկասի ֆեդերացիայի վարչապետ Զխենկելու եւ ռազմական նախարար Օդոշելիձեի կարգադրությամբ 1918 թ. ապրիլի 12-ին Կարսի բերդաքաղաքը թուրքերին առանց դիմադրության հանձնելու հետեւանքով Թիֆլիսում հանգրվանած կարսահայությանը-Հ.Գ.)»[2]:

5. Վրաստանի մահմեդական բնակչության գործոնը: Վրացական կողմը շատ լավ գիտեր, որ պատերազմի ծավալման դեպքում Լոռվա

[1] Յովհաննես ավ. քահանա Հաճեան, Հայոց տաժանքի ճամբաներով, Թեհրան, 1965, էջ 127:
[2] Նույն տեղում, էջ 139:

սահմանակից շրջանների թուրք բնակչությունը հնարավոր բոլոր միջոցներով կաջակցեր իրենց եւ կկռվեր հայկական զորքերի դեմ:

6. Վրացական կողմին անշուշտ հայտնի էին ՀՀ իշխանությունների նկատմամբ Հայաստանի տարածքում բնակվող մահմեդական բնակչության դրսեւորած չենթարկվելու ու զենքի դիմելու, ապստամբություն բարձրացնելու տրամադրվածությունները: Թուրքիայի կապիտուլյացիայից հետո բազմաթիվ թուրք սպաներ, սփռվելով եւ բնակություն հաստատելով Հայաստանի թուրքաբնակ վայրերում, գործուն կերպով զինում եւ կազմակերպում էին թուրք բնակչությանը: Այդ ժամանակահատվածում Հայաստանի իշխանությունների համար առաջնահերթ ու կարեւորագույն խնդիրներից մեկը, եթե ոչ կարեւորագույնը, նպատակաուղղված էր հանրապետության սահմանների անվտանգության ապահովմանը եւ հայ բնակչությանը մահմեդական հրոսակախմբերի հնարավոր հարձակումներից պաշտպանության կազմակերպմանը:

Հիմք ընդունելով ու առաջնորդվելով վերոհիշյալ հանգամանքներով՝ Վրաստանի Հանրապետության իշխանությունները սոցիալ-տնտեսական ու քաղաքական անմխիթար վիճակում գտնվող Հայաստանին լուրջ հակառակորդ ու մրցակից չէին համարում եւ «... արբեցրել, յոխորտանքի էին մատնել, եւ թեւ էին տալիս Վրաստանի արտաքին գործոց նախարար Ն. Ռամաշվիլիին (այդ պաշտոնում նա փոխարինել է Գեգեչկորիին-Հ.Գ.), թէ՝ «Թիֆլիսի նահանգն անվիճելիօրէն համարւում է վրացական հող», իսկ զինւորական նախարար Գէորգաձէին, թէ՝ «Ինքը զէնքի ուժով շուտով կը ճնշէ հայոց ապստամբութիւնը»[1]:

Եվ Հայաստանի, եւ Վրաստանի կառավարությունները վիճելի տարածքների նկատմամբ ունեին իրենց հաստատուն ու միանգամայն հակադիր դիրքորոշումը, որը դիվանագիտական փակուղի էր ստեղծում հարցը խաղաղ միջոցներով լուծելու ճանապարհին:

Վրաստանի Հանրապետության կառավարության անդամներից միակ պաշտոնյան արտաքին գործոց նախարար Գեգեչկորին է եղել, որն աշխատել է խաղաղությամբ լուծել հարցը, բայց հաղթել է ագրեսիվ մասը, որը կողմնակից է եղել Հայաստան Հանրապետության հետ պատերազմելուն[2]:

Մնում էր միայն մեկ միջոց՝ դիմել զենքի:

«Հանգիստ սրտով չէ,- գրում է Երեւանի Ազգային խորհրդի անդամ Արշալույս Աստվածատրյանը,- Հայաստանի կառավարութիւ-

[1] Նույն տեղում, էջ 125-126:
[2] Տե՛ս «Զանգ», 1918, դեկտեմբերի 15:

նը մտնում էր պատերազմի մէջ - ան շատ լաւ գիտէր, որ պայմանները աւելի քան աննպաստ էին: Նոր էր վերջացել պատերազմը. երկիրը լի էր գաղթականներով, որբերով ու ապրում էր տնտեսական ծանր վիճակ, հաղորդակցութեան միջոցները ողբալի էին, հարեւանների վերաբերմունքը, բացի Իրանից, թշնամական էր. երկրի բնակչութեան մահմետական մասը կիսաապստամբ վիճակում էր: Եվ, այնուամենայնիւ, հայ ժողովուրդը հերոսական ճիգերով չտկել էր իր մէջքը եւ լծուել շինարարական աշխատանքի: Եւ ահա՝ նորից պատերազմ:

Սակայն, ինքնապաշտպանութեան այլ ճանապարհ չկար: Կառավարութիւնն այդ քայլն արեց՝ սպառելով բոլոր միջոցները»[1]:

Այժմ արդեն վճռորոշ խոսքը պատկանում էր հայ զորաբանակին եւ նրա հրամանատար Դրոյին:

Հայաստանի կառավարության դիրքորոշումը Լոռին վրացական զորքերից զենքի զորությամբ մաքրելու գործում արդեն միանշանակ էր ու վճռված: Սակայն վրացական զորքերի կողմից բռնազավթված էր նաեւ զուտ հայկական եւ հայաբնակ Ջավախքը: Ինչպիսի՞ն պիտի լիներ Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը Ջավախքի հարցում: Միանգամայն պարզ էր ու հասկանալի, որ ինչպես Լոռվա շրջանը, այնպես էլ Ջավախքը վրացական զորքերից հնարավոր էր մաքրել միմիայն զենքի միջոցով: Արդյո՞ք ծանրագույն տնտեսական կացությունում գտնվող Հայաստանի Հանրապետությունն ի զորու էր, որպես ռազմավարական եւ կենսական նշանակություն ունեցող խնդիր, իր գործունեության ոլորտում ներառել նաեւ Ջավախքի ազատագրումը:

Ջավախքի հարցը քննարկվել է ՀՀ կառավարությունում 1918 թ. դեկտեմբերի 1-ին կայացած խորհրդակցությունում.

«Լսեցին. Մինիստր - նախագահը զեկուցանում է զինվորական մինիստրից ստացված գրությունը Ախալքալաքի գավառը զինական ուժ մտցնելու մասին: Այս հարցի մասին զինվորական մինիստրը հատուկ խորհրդակցություն է ունեցել դիվիզիայի պետ գեներալ Սիլիկովի, զինվորական շտաբի պետ գեներալ Դոլուխանովի, դիվիզիայի շտաբի պետ գնդապետ Զինկեւիչի եւ Դիլիջանի շրջանի պետ Դրոյի հետ: Խորհրդակցությունը նկատի առնելով սպասվելիք բարդությունները հարավային սահմանի վրա եւ մի քանի այլ հանգամանքներ, միաձայն եկել է այն եզրակացության, որ ներկայիս Ախալքալաքի գավառը զորքեր չպետք է մտցնել...

[1] ՀՀ ԲԿԱ, պահ. 12, դ. 5, թծ. 65/1, էջ 14:

Որոշեցին. Ընդունել զինվորական մինիստրի պատճառաբանությունների հիմնավորվածությունը եւ լիազորել նրան՝ չմտցնել ներկայումս Ախալքալաքի գավառ զորք եւ առայժմ բավականանալ նախապատրաստական գործողություններով»[1]:

Ջավախքի հարցում որդեգրելով համանման դիրքորոշում՝ Հայաստանի կառավարությունը, բնականաբար, իր ուժերն ու կարողությունները պիտի առավելագույնս նպատակաուղղեր լուծելու Լոռին վրացական զորքերից մաքրելու խնդրին:

Հայ-վրացական զինված առճակատումը կանխելու փորձ է արել, անկասկած Վրաստանի կառավարության թելադրանքով ու արտոնությամբ, Վիրահայոց Ազգային խորհուրդը: 1918 թ. դեկտեմբերի 11-ին Վիրահայոց պատվիրակությունը, որի կազմում էին Վրաստանի խորհրդարանի անդամ Ա. Երզնկյանը, Ա. Քոչարյանը, Տեր-Օհանյանն ու Աբովյանը Թիֆլիսից գալիս են Ղարաքիլիսա, հայկական կողմին համոզելու, կռիվը դադարեցնելու ու վեճը խաղաղ ճանապարհով լուծելու առաքելությամբ: Սակայն Վիրահայոց Ազգային խորհուրդի պատվիրակության առաքելությունն անցնում է ապարդյուն[2]:

Պատերազմը կանխելու փորձ է արել Հայաստանում Վրաստանի ներկայացուցիչ Ս. Մդիվանին: ՀՀ արտաքին գործոց նախարար Սիրեկան Տիգրանյանի հետ կայացած հանդիպման ժամանակ նա Հայաստանի կառավարությանը առաջարկել է զորքերը դուրս բերել Լոռվա տարածքից, հայ ու վրաց ներկայացուցիչներից կազմել խառը հանձնախումբ, ապա մեկնել գյուղերը հորդորելու գյուղացիներին, որ նրանք հնազանդվեն ու ճանաչեն Վրաստանի իշխանությունը, մինչեւ բանակցությունների միջոցով սահմանային վեճերի խաղաղ ճանապարհով լուծումը:

Ի պատասխան Ս. Մդիվանիի առաջարկության, Ս. Տիգրանյանը նախ իր բողոքն է հայտնում ազգաբնակչության նկատմամբ վրաց իշխանությունների գործադրած բռնությունների կապակցությամբ, ապա ներկայացնում ՀՀ կառավարության տեսակետը. «Մեր կառավարությունը կարծում է,որ կատարված իրադարձությունները ու ստեղծված դրությունը պահանջում են, որ վրաց դեմոկրատիկ հանրապետության կառավարությունը իր իսկ սեփական նախաձեռնությամբ դուրս հանէ այդ բոլոր վայրերից իր զորքերը, յարգելով ժողովուրդների ինքնորոշման իրաւունքը...»[3]:

[1] ՀԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 105:
[2] Տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 218:
[3] «Զանգ», 1918, դեկտեմբերի 29, թիւ 86:

Ս. Մդիվանուն խոստանալով, որ նրա առաջարկությունը կհայտնի կառավարությանը՝ ՀՀ արտաքին գործոց նախարար Սիրեկան Տիգրանյանն ասում է. «...խնդրում եմ որևէ կերպ իմաց տաք վրաց կառավարությանը, որ գոնէ անմիջապես վերջ տրվի բոլոր պատերազմական գործողություններին և զօրք ուղարկելուն, որովհետեւ դրանով աւելի է խորացնում վիհը, բորբոքում կրքերը և դժուարացնում խաղաղ յարդարման հնարաւորությունը»[1]:

Արդեն որեւէ գաղտնիք չէր ու միանգամայն ակնհայտ էր վիճելի հարցը խաղաղ ճանապարհով լուծելու՝ Վրաստանի կառավարության դիրքորոշմամբ պայմանավորված Մդիվանու առաջարկած տարբերակի իրական իմաստն ու նպատակը:

Ս. Վրացյանի արտահայտությամբ՝ «Մի ձեւ, որ, ի հարկէ, անհնար էր ընդունել ստեղծված պայմաններում: Եւ դէպքերն ընթացան իրենց ճանապարհով. խօսքը մնացել էր զէնքին»[2]:

Դեկտեմբերի 13-ին Դրոն ստանում է Լոռի-Փամբակը վրացական զորքերից մաքրելու Հայաստանի Հանրապետության կառավարության հրամանը:

Դիլիջան-Լոռի զորախմբի հարձակումը նախատեսվում էր զարգացնել Վորոնցովկա-Պրիվոլնոյե-Սանահին-Օփրեթ-Այրում ուղղությամբ ավելի որոշակի՝ կենտրոնում Ղարաքիլիսայի զորամասը, աջ կողմը՝ Դիլիջանի, իսկ ձախ կողմը՝ Ջալալողլիի: Զուգահեռաբար հատուկ նշանակությամբ մեկ այլ զորամաս գործելու էր Ախալքալաքի գավառի սահմաններում[3]:

Դրոյի երեք զորաշարքերով հարձակվող զորամասերն ունեին հետեւյալ կազմը. «... աջ թեւում փոխ-գնդապետ Կորոլկովի 6-րդ գնդի 2-րդ վաշտով, 2 գնդացիրով, 3 հարիւրեակ ձիաւորով եւ միլիցիոն գնդի 4 վաշտով: Կենտրոնում փոխ-գնդապետ Նեստերովսկին 4-րդ գնդի 2 գումարտակով, 4 գնդացիրով, 7-րդ լեռնային մարտկոցի 2 թնդանօթով: Ձախ թեւում գնդապետ Տէր-Նիկողոսեանը 5-րդ գնդի 3 գումարտակով, 12 գնդացիրով, 4-րդ լեռնային մարտկոցի 3 թնդանօթով: Ընդհանուր պահեստ՝ հրամանատար գնդապետ Միրիմանեանը 4-րդ գնդի 3 վաշտով, 4-րդ գնդի ձիաւոր հետախույզներով եւ 7-րդ լեռնային մարտկոցի 2 թնդանօթներով: Զօրամասի ուժերի համագումար թիւն էր՝ 28 վաշտ, 26 գնդացիր, 7 լեռնային թնդանօթ, 4 հարիւրեակ ձիաւորներ»[4]:

[1] Նույն տեղում:
[2] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 219:
[3] Տե՛ս «Զանգ», նույն տեղում:
[4] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 220:

Վրաստանի դեմ պատերազմող Դիլիջան-Լոռի զորախմբի թվակազմի վերաբերյալ տվյալներ կան նաեւ Հանրապետության զինվորական նախարար գեներալ Հախվերդյանի հուշագրությունում.

«...3-րդ բրիգադը 5-րդ եւ 6-րդ գնդերը հրետանային մարտկոցներով տեղաբաշխված էին Ղարաքիլիսայում եւ Դիլիջանում:

2-րդ գունդը 6-րդ մարտկոցով եւ 4-րդ գունդը, որի գումարտակներից մեկը ավելի վաղ ուղարկվել էր Ախալքալաքի ուղղությամբ:

Գնդապետ Կորոլկովի պարտիզանական հեծյալ գունդը, որը նախկինում տեղաբաշխված էր Շահալի - Վորոնցովկայի շրջանում:

Բացի թվարկվածներից, կային տեղացիներից կազմված աշխարհազորային վաշտեր, որոնք լրացրել էին կանոնավոր զորագնդերի շարքերը:Վաշտերը 100-120 անձնակազմ ունենալու պայմաններում զորամասերի ընդհանուր անձնակազմի քանակը պետք է կազմեր 6000 սվին, 2000 աշխարհազորայիններ եւ 16-20 հրանոթ»[1]:

Չնայած թվարկված բոլոր գնդերը մայիսյան հերոսամարտերի բովում թրծված, փորձառու, հրաշալի զորամասեր էին, բայց իրականում Դրոյի գլխավորած Դիլիջան-Լոռի զորախմբի մարտական հնարավորությունները բավական համեստ էին: Նույն ճակատում գործող վրացական զորաբանակը մարտակազմով, զինվածությամբ եւ մանավանդ հանդերձավորմամբ, ռազմամթերքի ու սննդամթերքի ապահովվածությամբ զգալիորեն գերազանցում էր կիսասովյալ եւ վատ հանդերձավորված հայկական զորամասերին: Վրացական զորքերի կազմում գործում էին նաեւ թնդանոթներով ու գնդացիրներով զինավորված 4 զրահագնացքներ, որոնք ռազմական հզոր ուժ էին ներկայացնում:

Նկատի ունենալով հայկական բանակի անբավարար պատրաստվածությունն ու հանրապետությունում տիրող չափազանց ծանր իրավիճակը՝ Հայաստանի կառավարության ղեկավար շրջաններում եղել են գործիչներ, մասնավորապես՝ ՀՀ պաշտպանության նախարար, գեներալ-մայոր Հախվերդյանը, որոնց կարծիքով ձմռան խստաշունչ պայմաններում պատերազմ սկսելը աննպատակահարմար է եւ վաղաժամ:

Համաձայն գեներալ Հախվերդյանի տեսակետի, պատերազմական գործողություններն անհրաժեշտ էր սկսել թիկունքն ապահովելուց, բանակի մարտաշարքերը համալրելուց, մարտական պատրաստվածությունն անհրաժեշտ մակարդակի բարձրացնելուց եւ զորամասերը պարենով, հանդերձանքով ու բավարար քանակի ռազմամթերքով ապահովելուց հետո[2]:

[1] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 8:
[2] Տե՛ս նույն տեղում:

Անկասկած խելամիտ տեսակետ է, սակայն այդ ամենի իրականացման համար ժամանակ էր պետք: Միաժամանակ չպետք է անտեսվեր եւ մոռացության մատնվեր նաեւ այն իրողությունը, որ վրացական կողմը քնած չէր ու իր հերթին տենդագին գործողություն էր ծավալել բանակի կազմավորման ու հզորացման ուղղությամբ: Եթե վրացիներին հնարավորություն եւ ժամանակ ընձեռվեր ավելի ամրապնդվելու գրավյալ տարածքներում, ապա հայկական զորամասերին դժվար թե դյուրությամբ հաջողվեր նրանց դուրս մղել Լոռվա տարածքից:

Երկրորդ՝ գրավյալ տարածքների հայ բնակչության կողմից ՀՀ կառավարությանը հասցեագրված բազմաթիվ բողոք-հեռագրերը միանշանակորեն հավաստում էին, որ վրացական զորքերի գործադրած բռնություններն ու թալանը այնպիսի դժվարագույն, անտանելի իրավիճակ էին ստեղծել, որ այդ շրջանների բնակչությունը յուրաքանչյուր պահի հարկադրված կարող էր դիմել զենքի՝ անգամ չսպասելով հայկական զորամասերի գործողությունների սկսվելուն:

Հաշվի առնելով բոլոր թեր եւ դեմ հանգամանքները, Հայաստանի Հանրապետության կառավարությունը վճռում է սկսել Դիլիջան-Լոռի զորախմբի ուժերով հայկական շրջանները վրացական զորքերից մաքրելու մարտական գործողությունները:

Հայկական զորաբանակի զինվորական կազմը, առանց բացառության, ուներ ոչ միայն պատերազմական հարուստ փորձ, այլեւ մարտական ոգի եւ հրաշալի ֆիզիկական կոփվածք: Իսկ Արեւմտահայ Ազգային խորհրդի նախագահ Վահան Փափազյանի (Կոմս) բնորոշմամբ «Դրոյի զօրագունդը պատերազմներու մէջ թրծուած ուժ մըն էր, իսկ հրամանատարը՝ կորովի, վճռական եւ յանդուգնի մէկը»[1]:

Դեկտեմբերի 13-ին Դրոն իր զորաբանակին տալիս է հարձակումն սկսելու առաջին հրամանը:

Հայկական զորքերի հարձակումը, ինչպես արդեն նշվել է, ընթանալու էր երեք հիմնական ուղղությամբ, եւ դա պատահական չէր. ամեն ինչ խելամտորեն հաշվարկված էր եւ կշռադատված:

Իր գնահատականներում չափազանց ժլատ, բայց օբյեկտիվ՝ ՀՀ զինվորական նախարար, գեներալ Հախվերդյանը, արժանվույնս գնահատելով Դրոյի գլխավորությամբ ռազմական գործողությունների կազմակերպման ու մշակման մտահղացումը՝ գրում է. «...Գործողության պլանը կազմված էր ճիշտ, այսպես, զորամասերի հիմնական զանգվածը կենտրոնացվել էր գլխավոր՝ դեպի Թիֆլիս տանող ամենակարճ ճանապարհի ուղղությամբ, իսկ զորամասերի մյուս, փոքրաթիվ մասը երկրորդական՝ Ախալքալաքի ուղղությամբ:Երեք զորախմբերով հարձակվելը հնարավորություն է տվել դուրս գալ հակառակորդի թիկունքը, որը լեռնային պայմաններում մարտ վարելու համար շատ կարեւոր հանգամանք է...»[1]:

Կռիվների առաջին օրվա արդյունքները հրաշալի էին: Դեկտեմբերի 13-14-ին փոխգնդապետ Նեստերովսկու հրամանատարությամբ գործող զորագունդը հաջողությամբ գրավում է Սանահին կայարանը: Դեկտեմբերի 15-ին համառ կռիվներ են տեղի ունենում Ալավերդի հանքերի բարձունքներում, ուր դիրքեր էին գրավել գեներալ Մուլուկիձեի անմիջական հրամանատարությամբ գործող զորքերը: Նույն օրը մեր զորքերը գրավում են Ալավերդին ու Սանահին գյուղը եւ վերցնում երկու թնդանոթ, մի քանի գնդացիր ու մեծ քանակությամբ ռազմամթերք[2]:

Վրացական կողմը, ինչպես ցույց տվեց ժամանակը, շատ լավ էր նախապատրաստվել շարունակելու պատերազմը: Դեկտեմբերի 15-ին Թիֆլիսից ռազմաճակատ են հասնում վրացական նոր զորամասեր, բայց լոռեցի կամավորների աջակցությամբ գործող հայկական զորքերի հարձակումն անկասելի էր:

Հայկական զորագնդերը միայն առաջին օրվա մարտերում գերեվարում են տասնյակ զինվորների եւ որպես ռազմավար վերցնում զգալի քանակությամբ զենք ու զինամթերք:

Ռազմաճակատում կռիվներն ընթացել են հետեւյալ ուղղվածությամբ. «...ձախ թեւում գնդ. Տէր-Նիկողոսեանի զօրամասը, գիշերային խիզախ յարձակումով, գրաւեց Վորոնցովկան ու Պրիւոլնոյէն: Գերի առնուեցին 6 վրաց սպաներ, 45 զինուորներ, 3 լեռնային թնդանօթ, 1 մաքսիմ գնդացիր, առատ փամփուշտ եւ մեծ քանակութեամբ ձիեր:Մեր կորուստներն էին՝ սպանուած տեղակալ՝ Զարաֆեան, վիրաւոր 8 զինուոր եւ տեղակալ Ազատեան, որը մինչեւ կռուի վերջը զօրամասից չհեռացաւ:

Կենտրոնում հարձակվող «փոխգնդ. Նեստերովսկու զօրամասը գրաւեց Սանահին կայարանը, ուր մերոնց ձեռքն ընկան 49 վագոն ու մի շոգեքարշ եւ գերի առնուեցին 15 զինուորներ: Վրացիներն ունեցան մեծ կորուստ: Մեր կողմից վիրաւորուեց մի զինուոր»[3]:

---

[1] Փափազեան Վ., Իմ յուշերը, Պէյրութ, 1953, հ. 2, էջ 496:

[1] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 8:
[2] Տե՛ս «Զանգ», 1918, դեկտեմբերի 29, թիւ 86:
[3] «Հայրենիք» ամսագիր, 1957, թիւ 2, էջ 9:

Այրումի ուղղությամբ, ուր մարտնչում էր գնդապետ Կորոլկովի զորամասը հայ զինվորները հաղթահարելով 3 զրահագնացքների ու վրացական զինավաշտերի համառ դիմադրությունը՝ գիշերային գրոհով գրավում են Լալվարը եւ հասնում մինչեւ Ախտովկա եւ Հաղպատ: Զարգացնելով հարձակումը՝ Կորոլկովի զորամասը հայ կամավորների համագործակցությամբ պայթեցնում են զրահագնացքներից մեկը եւ հաջորդ օրը ջախջախելով վրացական 1000 զինվորներից բաղկացած գունդը՝ դեկտեմբերի 16-ին գրավում Այրում կայարանը: Գնդապետ Կորոլկովի զորագնդի հաղթանակի արդյունքն էր. «...Վրացիներից գերի ընկան 12 սպաներ, գնդ. Վաչնաձէի գլխաւորութեամբ եւ 300 զինուորներ: Մօտ 200 հոգի սպանուեցին եւ վիրաւորուեցին, միւսները փախան: Մեր կողմից սպանուեցին տեղակալ Մուկուչ Տէր-Յովհաննիսեան եւ մի զինուոր, վիրաւորուեցին 7 հոգի»[1]:

«Հայրենիք» ամսագրում տեղ գտած հայկական զորքերի ձեռք բերած հաղթանակներն ու վերոհիշյալ տվյալները գրեթե նույնությամբ նշում է Ս. Վրացյանը[2]:

Հայ-վրացական ռազմաճակատում տեղի ունեցած մարտական գործողությունների ամփոփագրերն առավել մանրամասնությամբ իրենց արտացոլումն են գտել նաեւ այդ օրերում Երեւանում հրատարկվող «Զանգ» լրագրի էջերում:

«Զանգ»-ի տեղեկացմամբ՝ դեկտեմբերի 13-15-ին մեր զորքերը մի քանի հաղթական կռիվներից հետո գրավում են Սանահին կայարանը, Ալավերդին, իսկ դեկտեմբերի 16-ին՝ «...Այրումի մեր զօրամասը, Կորոլկովի ղեկավարութեամբ, յամառ կռիւներից յետոյ համարեա ջարդում է վրացական մի էշելոն 1000 հոգուց բաղկացած: Այս կուռում վրացիների կորուստը մեծ է լինում: Նրանք գերի են տալիս 12 սպայ, որանց մէջ նաեւ գնդապետ Վաչնաձէն և 300 զինուոր: Սպանուածների ու վիրաւորների թիւը լինում է 300-ից աւելի: Որպէս աւար մերոնց ձեռքն են ընկնում 4 գնդաձիր, 31 հրացան, 34 արկղ ռումբ, 200 ձի, մի շոգեշարժ մեքենայ, 60 վագոն, մէկ զրահապատ գնացք, հագուստեղէն ու ռազմամթերք:

Դեկտ. 17-ի լուսաբացին, առ. ժամը 3-ին, Ախթալա-Այրում ճանապարհի վրայ, մի քանի ուժեղ գրոհներից յետոյ, գնդապետ Նեստերովսկին ջարդում է վրացական մի զօրամաս և գերի է վերցնում երկու զրահապատ գնացք: Մանրամասնությունները պարզում են, որ այդ կռւում փչանում են վրացական 5-րդ և 6-րդ գնդերի մասերը և նահանգական պահակային բատալիոնը: Որպէս աւար մերոնք ձեռք են անցնում բացի երկու զրահապատ գնացքներից, նաև 2 գաուբեց, 2 դաշտային թնդանօթ և 25 գնդացիր: Հաղորդագրութեան համաձայն մեծ են լինում վրացիների կորուստները»[1]:

Իր հուշագրությունում ՀՀ պաշտպանության նախարար, գեներալ Հախվերդյանը, նույնպես անդրադառնալով այդ նույն մարտերի վերլուծությանն ու գնահատմանը, տալիս է մի փոքր այլ տեղեկություններ. «Գլխավոր զորախումբը հակառակորդի կողմից հանդիպեց լուրջ դիմադրության Սանահինի մոտ, ուր հայերը կռիվների ընթացքում վերցրին վրացական երկու, իսկ երրորդ զրահագնացքը պայթեցվել էր վրացիների կողմից... Այ զորախումբը շրջանցել եւ փակել է Այրում տանող ճանապարհը, ինչը եւ ստիպել է վրացիներին նահանջել Սանահինից:

Սանահինի եւ Այրումի արանքում, այդ ամենից բացի, բռնագրավել են գնացքը երկաթուղայինների կազմով, 3-4 վագոն սննդամթերքով եւ հագուստ, իսկ Այրումի մոտ վրացական զորքերի հրամանատար գեներալ Մազնիեւի սալոն վագոնը (ճիշտ չէ, պետք է լինի գեներալ Ծուլուկիձեի վագոն, այդ ժամանակ վրացական զորքերի հրամանատարը գեներալ Ծուլուկիձեն էր: Գեներալ Մազնիեւը ճակատի հրամանատարությունը ընդունել է գեներալ Ծուլուկիձեից, մի փոքր ավելի ուշ -Հ.Գ.):

Այդտեղ գերի են վերցրել մի ամբողջ գումարտակ գնդապետ Էրիստովի գլխավորությամբ»[2]:

Ռազմաճակատի մյուս հատվածներում նույնպիսի հաջողությամբ էին ընթանում նաեւ հայկական մյուս զորագնդերի հարձակումները: Վրացական զորքերի հրամանատար գեներալ Ծուլուկիձեն Դրոյի զորաբանակի սրընթաց հաղթարշավը կանգնեցնելու նպատակով մարտադաշտ է նետում Թիֆլիսից ժամանած մարտական նոր ուժեր: Սակայն, դեկտեմբերի 17-ին հայկական զորագնդերը լոռեցի կամավորների ակտիվ աջակցությամբ անկասելի հարվածով խորտակում են վրացական զորքերի կատաղի դիմադրությունը եւ Ախլաթի կայարանում բռնագրավում հակառակորդի մնացած 2 զրահագնացքներն ու մեծ քանակությամբ ռազմամթերք:

---

[1] Նույն տեղում:
[2] Տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 220:

[1] «Զանգ», 1918, դեկտեմբերի 29, թիւ 86:
[2] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 9:

«Մերոնց,- նշում է Վ.Փափազյանը,- խիզախ գրոհով ջարդուփշուր եղան 5-րդ եւ 6-րդ վրացական գնդերը եւ գվարդիայի սահմանապահ գումարտակները»[1]:

Հաղթանակի շնորհիվ հայ զինվորներին բաժին է հասնում հետեւյալ ռազմավարը. «...2 հաուբիցներ, 2 դաշտային թնդանոթ, 25 գնդացիր եւ 2 կազմ ու պատրաստ զրահապատ գնացքներ, որոնք տեղնուտեղը գործողութեան դրուեցին հակառակորդի դէմ»[2]:

Վրացական ճակատի հրամանատար գեներալ Ծուլուկիձեն, հետեւելով իր ջախջախված զորքերին, փախչում է Սադախլու եւ Դրոյին որպես ռազմավար թողնում իր սալոն-վագոնը[3]:

Վրացական զորքերը, պարտութիւն կրելով ռազմաճակատի բոլոր 3 ուղղութիւններում, նահանջում եւ կենտրոնանում են Սադախլու կայարանի շրջանում:

Համաձայն «Զանգ»-ում տպագրված ռազմաճակատում կատարվող մարտական գործողությունները լուսաբանող ամփոփագրերի՝ «Կռիւները վարում են Դրոյի անմիջական ղեկավարութեամբ»[4]:

«Զանգ»-ի հավաստմամբ՝ մինչեւ դեկտեմբերի 16-ը «Դրոյի զօրաբանակի դէմ գործել են՝ Թիֆլիսի նահանգական բատալիոնը, 5-րդ և 6-րդ գնդերի մասերը, Բ. սահմանապահ գունդը, Բ. առանձին հեծեալ հարիւրակը, կարմիր գւարդեականներ, 3 զրահագնացք, որոնցից մէկը խորտակւում է, 4 բատարեա (հրետանային մարտկոց), որոնցից մէկը գաուբեցային»[5]:

Դրոն փայլուն կերպով է իրագործում Լոռի-Փամբակը վրացական զորքերից մաքրելու հանրապետության կառավարության առաջադրանքը: Վատ հանդերձավորված ու զինված հայկական զորագնդերը, հաշված օրերի ընթացքում հաղթահարելով բուքն ու ձյունը եւ հակառակորդի համառ դիմադրությունը, մաքրում են Լոռի-Փամբակի ողջ տարածքը վրացական զորքերից եւ հասնում մինչեւ Սադախլու կայարանը: Իսկ գնդապետ Տեր Նիկողոսյանի գլխավորած զորագունդը Վորոնցովկան գրավելուց հետո,դեկտեմբերի 17-ի առավոտյան հասնում է Բոլնիս-Խաչեն գյուղ եւ գերի է վերցնում երկու սպա, մի բժիշկ ու 30 զինվոր: Վրաց հրամանատարությունը՝ համալրելով իր զորքերի մարտաշարքերը՝ հակագրոհներ է ձեռնարկում ու հասնում է մինչեւ Բոլնիս-Խաչենից մի քանի կիլոմետր հեռավորությամբ գտնվող թուրքական Քյափանակ գյուղն ու փորձում կանգնեցնել հայկական զորքերի առաջխաղացումը, սակայն չդիմանալով գնդապետ Տեր Նիկողոսյանի զորամասի հարձակմանը՝ նահանջում է մինչեւ Արախլու: Այս կռվում մեծ զոհեր են տվել հատկապես վրաց հեծելազորային մարտիկները:

Եթե ընդհանրացնենք դեկտեմբերի 13-ից մինչեւ դեկտեմբերի 19-ը ընկած ժամանակահատվածում հայ-վրացական կռիվներում հայկական զորքերի նվաճած հաղթանակների արդյունքը, ապա տեղին է հիշատակել Երեւանի Ազգային Խորհրդի անդամ Արամայիս Աստվածատրյանի հետեւյալ գնահատականը. «...Դրօն իր սահմանափակ ուժերով, սկսած հայ-վրացական պատերազմի առաջին օրից, ծեծելով, ջարդեր տալով ու մասամբ ոչնչացնելով՝ քշեց-հանեց վրացական զօրքերը հայկական Լոռիի սահմաններից»[1]:

Հայկական զորքերի հարձակումների հետեւանքով տագնապալի իրավիճակ է ստեղծվում Վրաստանում: Հանրապետության կառավարությունը երկրում հաստատում է արտակարգ դրություն եւ զուգահեռաբար ռազմաճակատը կայունացնելու ու զորքերը համալրելու հայտարարում է զորահավաք: Հայկական զորքերի հարձակման հաջորդ օրը՝ դեկտեմբերի 14-ին Վրաստանի հանրապետության արտաքին գործերի նախարար Գեգեչկորին «...հաղորդում էր Բաթումում վրացական ներկայացուցչին, որ կռիվը երկիրը դրել է խիստ ծանր կացության մեջ»[2]:

Հայկական զորքերի հարձակումը կասեցնելու նպատակով դեկտեմբերի 18-ին ռազմաճակատ է գալիս Վրաստանի պաշտպանության նախարար Գեորգաձեն՝ իր հետ բերելով 1000 զինվոր, մեկ հեծյալ հարյուրյակ ու վերջին զրահագնացքը: Սակայն Դրոյի զորախմբի հարձակումն անկասելի էր: Դեկտեմբերի 20-ին հայկական զորքերը գրավում են հայկական Շուլավեր գյուղը եւ հասնում Խրամ գետին[3]:

Կարելի է ասել, որ դրանով ավարտվեց հայ-վրացական կռիվների առաջին շրջանը եւ դեկտեմբերի 19-ից սկսվում է երկրորդ շրջանը:

Մինչ մարտական գործողություններ շարունակելը, արյունահեղությունից խուսափելու եւ Վրաստանի կառավարությանը զգաստության կոչելու նպատակով Դրոն հղում է հետեւյալ հեռագիրը.

---

[1] Փափազեան, Իմ յուշերը, հ. 2, էջ 9:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1957. թիւ 2, էջ 9:
[3] Մարտադաշտում որպես ռազմավար վերցրած սալոն-վագոնը, որին անվանել են գեներալ Ծուլուկիձեի վագոն, ՀՀ կառավարության որոշմամբ օգտագործվել է Հայաստան ժամանած բարձրաստիճան հյուրերին դիմավորելու ու ճանապարհելու եւ այլ կարգի հատուկ նպատակներով :
[4] «Զանգ», 1918, դեկտեմբերի 29, թիւ 86:
[5] Նույն տեղում:

---

[1] «Հայրենիք» ամսագիր, 1957. թիւ 2, էջ 9:
[2] Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 119:
[3] Տե՛ս նույն տեղում:

«Վրացական կառավարությանը

Ձեր եւ ձեր կողմից ղեկավարվող զինվորների կողմից հայկական բնակչության նկատմամբ գործադրված ճնշումները անցնում են բոլոր հնարավոր սահմանները: Այդ ճնշումների հետեւանքն է այն, որ հայկական կառավարությունը հարկադրաբար կայացրեց հայկական աշխատավոր գյուղացիության նկատմամբ գործադրվող բոլոր կարգի ճնշումներին զենքի ուժով վերջակետ դնելու հրամանը:

Ուշքի եկեք, հիշեցեք, որ դուք զորքերն եք դեմոկրատական հանրապետության, որը գլխավորում են ժողովուրդների ինքնորոշման գաղափարի ջատագովները: Եթե դուք չեք ցանկանում հետագա արյունահեղությունը, ապա անմիջապես պետք է մաքրեք մեր տարածքները:

Դիլիջան-Լոռի զորախմբի պետ Դրո: 17 դեկտեմբերի 1918 թ.»[1]:

Չնայած կռիվներում կրած պարտություններին ու Դրոյի կողմից արված առաջարկությանը՝ պատերազմը շարունակվում էր:

Պատերազմի բռնկման առաջին օրերին Ղարաքիլիսայում գտնվող անգլիական սպա կապիտան Գրինը փորձել է միջամտել՝ առաջարկելով կազմել հայ-վրացական խորհրդակցություն ու վիճելի հարցերը լուծել խաղաղ ճանապարհով: ՀՀ կառավարությունն ընդունել է այդ առաջարկությունը եւ Ղրաքիլիսա է ուղարկել մի պատվիրակություն, որի կազմում էին՝ Մ. Հարությունյանը (նախագահ), Ս. Խաչատրյանը, Ս. Մամիկոնյանը, Ա. Խոնդակերյանը եւ Գ. Տեր-Խաչատրյանը: Ղարաքիլիսայում նրանց է միանում գեներալ Ղորղանյանը[2]:

Միաժամանակ, դեկտեմբերի 18-ին ՀՀ արտաքին գործոց նախարար Ս. Տիգրանյանը Վրաստանի կառավարությանն է հեռագրում Հայաստանի Խորհրդի որոշումը. «...Հայաստանի կառավարությունը իր զորքերը Բորչալուի գաւառից կարող է հանել միայն այն դէպքում, երբ երաշխիք ստանայ, որ այս, ինչպէս եւ Ախալքալաքի գաւառը կապահովեն Վրաստանի նոր յարձակումներից...

Մեր պատգամաւորութիւնը ուրախ կը լինի հանդիպելու ձեր լիազօրներու հետ, որպեսզի համերաշխաբար աշխատեն լաւագոյն պատմական աւանդութիւններով կապուած եւ ընդհանուր մշակութային տենչերով համակուած երկու հարեւան ժողովուրդների բարօրութեան համար»[3]:

[1] ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 149, թ 76:
[2] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 218:
[3] Նույն տեղում:

Վրացական կողմը ոչ միայն չի կարեւորում ՀՀ կառավարության առաջարկությունը, այլեւ նույնիսկ պատվիրակություն չի ուղարկում Ղարաքիլիսա: Վրաստանի կառավարության պահանջը մեկն էր. «Հայերը պիտի հեռանան Լոռիից, իսկ իրենք մնան Լոռիում եւ Ախալքալաքում»[1]:

Չնայած այն իրողությանը, որ վրացական կողմը պատվիրակություն չուղարկեց Ղարաքիլիսա եւ մերժեց ՀՀ կառավարության ներկայացրած առաջարկությունները, այնուամենայնիվ, հայկական զորաբանակի սրընթաց առաջխաղացումը տագնապալի իրավիճակ է ստեղծում ողջ Վրաստանում եւ նրա մայրաքաղաք Թիֆլիսում: Վրաց կառավարությունը տենդագին միջոցներ է ձեռնարկում կայունացնելու Դրոյի զորախմբի հարվածներից խարխլված ռազմաճակատն ու կասեցնելու հայկական բանակի առաջխաղացումը: Վրաստանի զինվորական նախարարությունը ռազմաճակատը ուժեղացնելու նպատակով զորահավաքի է կոչում վրաց ողջ մարտական ուժերը:

Դեկտեմբերի 18-ին հրանոթային մարտկոցներով եւ 1000 զինվորների գլուխն անցած վերջին՝ 4-րդ զրահագնացքի ուղեկցությամբ Սադախլու է ժամանում Վրաստանի Հանրապետության զինվորական նախարար գեներալ Գեորգաձեն[2]:

Ըստ «Զանգ» լրագրի տվյալների «Վրացիք մեծ քանակութեամբ թարմ ուժեր են կենտրոնացնում Սադախլուի շրջանում: Թիֆլիսից բերում են երկու հետեւակ նոր պոլկ և մէկ պոլկ ձիաւոր, այդտեղ է գալիս նաև վրաց զինուորական մինիստր Գէորգաձէն: Բերում են նաև 4 բատարէա»[3]:

Դեկտեմբերի 19-ին թեժ կռիվներ են տեղի ունենում Բոլնիս-Խաչենից դեպի հարավ մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող գերմանական Եկատերինֆելդ գյուղի մերձակայքում: Ավելի քան 14 ժամ ընթացող կռվում մեր զորքերը թեպետ կարողացել են հաջողությամբ հետ մղել վրաց զորախմբերի հարձակումը եւ որպես ռազմավար վերցնել 4 թնդանոթ, սակայն տեղի տալով մարտադաշտում հայտնված վրացական զորքերի ճնշմանը՝ նահանջում են Բոլնիս-Խաչեն[4]:

Վրացական ճակատի հրամանատար գեներալ Մուլուկիձեն, կենտրոնացնելով մարտական ողջ ուժերը՝ պատրաստվում է վճռական ճակատամարտի:

[1] Նույն տեղում:
[2] Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1957. թիւ 2, էջ 9:
[3] «Զանգ», 1918, դեկտեմբերի 29:
[4] Տե՛ս նույն տեղում:

Անկասկած, Սադախլուի ճակատամարտի ելքը վճռորոշ նշանակություն էր ունենալու ոչ միայն հայ-վրացական պատերազմում, այլեւ վճռելու էր Լոռվա ճակատագիրը, նրա պատկանելիության հարցը: Եթե հայկական զորքերը չկարողանային պարտության մատնել զինվածությամբ ու քանակական առումով իրենցից զգալի գերակշռություն ունեցող վրացական զորագնդերին, ապա որեւէ կասկած լինել չէր կարող, որ վրացական զորքերը դարձյալ կզավթեին Լոռի-Փամբակը եւ դեռ հարց էր, արդյոք չափազանց ծանր կացությունում գտնվող Հայաստանի Հանրապետությունը ի զորու կլիներ շարունակելու պատերազմն ու վերստին ազատագրել Լոռի-Փամբակը:

Դրոն եւ նրա գլխավորած զորագնդերն այլընտրանք չունեին, նրանք անպայմանորեն պետք է պարտության մատնեին վրացական զորքերին ու տոնեին հերթական հաղթանակը:

Հարկ է նշել, որ նախորդ մարտերում հայկական զորագնդերը նույնպես զգալի կորուստներ էին կրել: Ի տարբերություն վրաց զորաբանակի, որն անընդհատ համալրվում էր ի հաշիվ թիկունքային զորամասերի, հայկական զորագնդերն այդ օրերին չէին ստանում եւ ոչ մի համալրում:

Ցյան պատճառով ճանապարհների փակվածությունը չափազանց դժվարացնում էր զորքին պարեն եւ ռազմամթերք մատակարարելու գործը: Ձմռան խստաշունչ պայմաններում կռիվների հնոցում անընդհատ մարտնչող թերսնված հայ զինվորների մոտ արդեն նկատելի էին հոգնածությունն ու գերլարվածությունը: Չնայած անասելի դժվարություններին, այնուհանդերձ, հայ զինվորների մարտական կորովն ու հաղթելու ձգտումը դեռեւս բավական բարձր էին: Դրոն լի էր պատերազմը հաղթական վախճանի հասցնելու հաստատակամությամբ: Նրա կամքին ու վճռականությանը անգամ չէր կարող խոչընդոտել այն իրողությունը, որ վրաց հրամանատարությունը կարողացել էր ռազմական խոշոր միավորումներ կենտրոնացնել Սադախլուի շրջանում եւ հօգուտ իրենց փոխել ուժերի հարաբերությունը: Չերկնչելով վրացական ռազմական ուժերի բացահայտ գերակշռությունից՝ Դրոն, այնուամենայնիվ, վճռում է իր հրամանատարությամբ գործող համեմատաբար փոքրաքանակ ուժերով հարձակվել ու ջախջախել գեներալ Ծուլուկիձեի զորքը: Ընդսմին, համաձայն նրա ծրագրած մարտավարության, հայկական զորքերը տարբեր ուղղությամբ ձեռնարկվող գրոհներով պիտի շրջափակման մեջ վերցնեին Սադախլուում կենտրոնացած վրացական զորքերին ու ճկուն մարտավարությամբ խորտակեին նրանց պաշտպանությունն ու նվաճեին վճռական հաղթանակ:

Ճիշտ է, Դրոյի զորախումբը կենտրոնից դեռեւս չէր ստացել անհրաժեշտ ռազմական աջակցություն, սակայն մատնված չէր պարապուրդի: Վրացական զորքերի քանակական ու տեխնիկական գերակշռությանը մեր զորքերը պիտի հակադրեին կշռադատված ու ճկուն մարտավարություն եւ մարտնչելու մարտական ոգի ու պատրաստակամություն:

Դեկտեմբերի 18-ին եւ 19-ին հայկական զորախումբը իր վերահսկության տակ է վերցնում երկաթուղագծին զուգահեռ գտնվող ռազմավարական կարեւորագույն նշանակություն ունեցող լեռնաշղթան, որը ձգվում է Շուլավերի արեւմտյան եւ արեւելյան կողմից մինչեւ Սադախլու կայարանը: Զուտ մարտավարական առումով լեռնաշղթայի տեղանքին գերիշխող բարձունքները հենակետերի վերածելը շատ կարեւոր էր: Վրացական զորքերը, եթե փորձեին երկաթգծի ուղությամբ հարձակվել Սադախլուի վրա, ապա կհայտնվեին ծուղակում եւ նրանց վրա կտեղար բարձունքների հենակետերում տեղադրված թնդանոթների ու գնդացիրների կրակը:

Բացի վերոհիշյալ ձեռնարկումից, վրացական զորքերին հերթական անգամ պարտության մատնելու նպատակով Դրոն ծրագրում է գործել հետեւյալ մարտավարությամբ.

«Գնդ. Տեր-Նիկողոսեանին նա հրամայեց Բոլնիս-Խաչենից մի գումարտակ առաջ քաշել դէպի արեւելք՝ երկաթուղու կողմը եւ ցուցական շարժումներով օժանդակել Կորոլկովի զօրասիւնին, իսկ Կորոլկովին հրամայեց երկու թնդանօթ եւ 3 վաշտ թողնել Այրումում եւ մնացած ուժերով, Բարդաձորի եւ Գիւլբէգիի վրայով, անցնելով Դամիա գիւղը, վրացիների թիկունքը՝ ջարդել նրանց՝ լուրջ ուշադրութիւն դարձնել Շուլաւերից Օփրէթ տանող ճանապարհի վրայ: Դեկտ. 19-ին փոխգնդ. Կորոլկովին միացաւ եւ միլիցիոն գունդը 350 զինուորներով ու 2 գնդացիրներով, որին հրամայուեց գրաւել Շուլաւերը»[1]:

Եվ մինչ հայկական զորախմբի հիմնական մարտական ուժերը, համաձայն Դրոյի հրահանգի, ձեռնարկում էին հակառակորդին շրջապատելու ռազմական գործողությունները, տեղի է ունենում անկանխատեսելի գործողություն: 4-րդ գնդի 6-րդ վաշտը եւ 2-րդ հեծյալ հարյուրյակը փոխտեղակալ Ֆեյերկովսկու եւ տեղակալ Տեր-Մարտիրոսյանի գլխավորությամբ, առանց հրամանատարության գիտության, գրոհում եւ փորձում են գրավել Սադախլուի կայարանը: Սակայն դեպքերն ընթանում են վատթարագույն ուղղ-

[1] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 222:

վածությամբ: Այդ ժամանակ Սադախլուի կայարանում կազմուպատրաստ կանգնած է եղել վրացական վերջին՝ 4-րդ զրահագնացքը: Հարձակվողներին առավել հեշտությամբ ջախջախելու դիտավորությամբ վրացիները դիմում են խորամանկության: Նրանք բարձրացնում են սպիտակ դրոշակը, իսկ հայ մարտիկները անտեղյակ հակառակորդի պատրաստած ծուղակին, խաբվելով մոտենում են երկաթգծին, ուր կանգնած էր զրահագնացքը: Անմիջապես հետևում է պատասխան անսպասելի ու հուժկու հարվածը, եւ «...մերոնց վրայ զրահապատից և դիրքերից վրաց զօրքերը բացում են թնդանօթային և գնդացրային շատ ուժեղ կրակ ու միաժամանակ շրջապատում: Խաբէական այդ ակտի շնորհիւ մերոնք առաջին մեծ ու անտեղի զոհեր են տալիս: Մերոնց մի մասը ջարդւում է, մի մասը գերի է ընկնում, իսկ մի մասն էլ կարղանում է փախուստի դիմել և ազատւել»[1]:

Հայկական զինաջոկատի հրամանատարների ինքնագործունեությունը կարող էր բացասաբար անդրադառնալ ճակատամարտի հետագա ընթացքի վրա: Վրաց հրամանատարությունը ոչ մեծ ջանքերի գնով Սադախլուում կենտրոնացնելով մեծ քանակությամբ մարտական ուժեր, զրահագնացքի աջակցությամբ կարող էր արմատական բեկում մտցնել արդեն ընթացող ճակատամարտում: Սակայն վրացական կողմի ձեռքբերած մասնակի հաջողությունը, ինչը հստակորեն մատնանշում է այդ օրերին տեղի ունեցող մարտական գործողությունների ուսումնասիրությունը, այլեւս չէր կարող փոխել ճակատամարտի ընթացքը: Անհրաժեշտ էր շարունակել գործել ծրագրած մարտավարությամբ, այն է՝ ավարտին հասցնել վրացական զորքերի շրջափակումը, զրկել նրանց կենտրոնաձիգ հարված հասցնելու հնարավորությունից, ապա վճռական գրոհով ջախջախել Սադախլուում կենտրոնացած խմբավորումը:

Նույն օրը մեր զորքերը գրավում են կարեւորագույն նշանակություն ունեցող երկու կետեր՝ Դամիան գյուղը, իսկ քաջարի Կուռո Թարխանյանը հանդուգն գրոհով հասցնում է վերցնել Շուլավերը: Այդ երկու կետերի գրավմամբ, հատկապես Շուլավերի, կարելի է ասել, հայկական զորքերը գրեթե ավարտում են Սադախլուում կենտրոնացած վրաց խմբավորման շրջափակումը: Այժմ արդեն հարկավոր էր գործել արագ ու վճռական:

Ինչպե՞ս պիտի իրականացվեր վճռական հարվածը. «Շուլաւեր-Սադախլու շրջանում գործող վրաց ուժերի մի մասը մի կողմ քաշելու նպատակով՝ Դրոն հրամայեց գնդ. Տէր-Նիկողոսեանին, դեկտ. 21-ին 1 գումարտակ ու 2 թնդանօթ թողնել Մեծ Դումանիսում, իսկ մնացած ուժերով շարժուել Արախլուի վրա: Սկսուեց տաք կռիւ: Մերոնք յարձակւում էին անվերջ, վրացիները յուսահատական դիմադրութիւն էին ցոյց տալիս: Գլխ. Մնացականեանի Շուլաւերի զօրամասը կռուի բռնուեց Թիֆլիսից նոր հասած վրացական թարմ ուժերի հետ: Մերոնք քանդեցին Սադախլու-Մամայ երկաթուղագիծը՝ կտրելով վրաց զրահապատի նահանջի ճանապարհը: Կուռո Թարխանեանը, յանդուգն յարձակումներ գործելով Աշաղա-Սարայլի ուղղութեամբ, գրաւեց մի թնդանօթ եւ մի գնդացիր»[1]:

Վրացական զորքերին լիակատար շրջապատելու նպատակով Դրոն դեկտեմբերի 22-ին գրոհի է նետում Ճոճկանի զորախումբը, որը փոխտեղակալ Պետրոսյանի գլխավորությամբ ճեղքում է վրաց զինվորների մարտաշարքերը եւ ներխուժում Սադախլու: Փոխտեղակալ Պետրոսյանի զորախմբի հաջողությունը չափազանց կարեւոր էր: Փաստորեն Սադախլուում դիրքավորված վրացական ուժերը մասնատվելով՝ կորցնում են նախկին ուժն ու հզոր հարված հասցնելու հնարավորությունը: Ճակատամարտը գնալով ավելի է շիկանում: Գնդապետ Կորոլկովի զինավաշտերը քանդում են երկաթգիծը եւ զրահագնացքին զրկելով տեղաշարժվելու հնարավորությունից՝ հարձակվում են Սադախլուի մոտակայքում կենտրոնացած վրաց զորախմբի վրա:

Վրաց հրամանատարությունը՝ խուսափելով շրջապատումից, փորձում է անկատ նահանջել, բայց դա նրանց չի հաջողվում: Դեկտեմբերի 22-ին մեր զորքերը Այրումի ուղղությամբ մոտենում եւ դիրքեր են գրավում Սադախլուի մերձակայքում:

Դրոյի ծրագրած մարտավարությունը իրականանում է, վրացական զորքերը Սադախլուի ճակատում հայտնվում են շրջափակման մեջ: Դեկտեմբերի 22-ին վրաց հրամանատարությունը, ստիպված նոր ուժեր կենտրոնացնելով Բոլնիս-Խաչենի մոտակայքում՝ սկսում է անընդմեջ գրոհներ ձեռնարկել Սադախլուի շրջանում իրենց զորախմբին պաշարման մեջ վերցրած հայկական զորախմբի վրա, բայց ապարդյուն: Հայկական զորքերի հրամանատարության կիրառած մարտավարությունն այս անգամ դարձյալ ավելի կենսունակ էր ու վճռորոշ: Վրացական այդ հենակետը վնասազերծելու ու ջախջախելու նպատակով Դրոն անհապաղ դիմում էհարձակման եւ «Բոլնիս Խաչենից հայկական զորամասերը յարձակւում են Եկատերինֆելդիի

[1] «Զանգ», 1918, դեկտեմբերի 29:

[1] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 222:

գնդի վրա, ջարդում են վրաց զորքերը, իլում նրանցից 4 թնդանոթ ու մեծ աւար և քշում են դէպի Բելիյ-Կլիչ»[1]:

Վրաց հրամանատարությունը՝ իր զորքերը վերջնական ջախջախումից փրկելու նպատակով արագորեն մարտադաշտ է հասցնում նոր զորագնդեր եւ փորձում կանգնեցնել հայկական զորքերի հարձակումը, սակայն նրանց հարվածներն անկասելի էին: Հայկական զորքերը հետ են մղում վրաց զորագնդերի գրոհները եւ մոտենում ընդհուպ Սադախլուին:

Ստեղծված իրավիճակում վրացական զորքերը համար այլընտրանք այլեւս գոյություն չուներ: Վրաց հրամանատարությունը խուսափելով շրջապատումից՝ հարկադրված նահանջում է դեպի Խրամ գետը: Անհրաժեշտ էր դիմել վճռական գործողությունների եւ թույլ չտալ, որպեսզի վրացական զորքերը դուրս գային շրջափակումից ու անկորուստ հեռանային: Հասել էր այն պահը, երբ իր վճռորոշ խոսքը պիտի ասեր զորախմբի հրամանատարը: Վրացական զորքերի նահանջը խոչընդոտելու ու նրանց վերջնականապես պարտության մատնելու վճռականությամբ Դրոն անձամբ առաջնորդելով զորախումբը՝ դեկտեմբերի 23-ի գիշերը սրընթաց գրոհ է ձեռնարկում վրացական զորամասերի վրա:

Ըստ ճակատամարտի մանրամասները ներկայացնող թղթակցության «...Դրոն մի խիզախ քայլի է դիմում. իր զորքերի գլուխն անցած մի հմուտ շարժումով անցնում է վրաց զորքերի թիկունք և մեծ ջարդ է տալիս»[2]:

Կարելի է աներկբա փաստել, որ Սադախլուի ճակատամարտում Դրոն մեկ անգամ եւս դրսեւորում է զորքերն առաջնորդելու ու նրանց ոգեշնչելու իր անզուգական քաջությունն ու կռիվների ամենավճռորոշ պահին արագորեն կողմնորոշվելու եւ ամենակենսունակ ու անհրաժեշտ վճիռներ կայացնելու զորավարական փայլուն կարողությունն ու ռազմագիտական տաղանդը: Եթե Բաշ-Ապարանի ճակատամարտում նա հաղթել է կիրառելով կենտրոնաձիգ, խոյահարիչ հարվածի մարտավարությունը, ապա Սադախլուի ճակատամարտում՝ հակառակորդի ուժերը պաշարելու, շրջափակման մեջ վերցնելու մարտավարությունը: Երկու՝ Բաշ-Ապարանի ու Սադախլուի ճակատամարտերում նրա կիրառած մարտավարությունը խորապես կշռադատված էր ու արդյունավետ:

Դեկտեմբերի 23-ի երեկոյան ժամը 4-ին ռազմաճակատից պաշտոնապես հեռագրում են. «Կռիւները Սադախլօի մօտ վերջացան: Վրացիները նահանջում են:

[1] «Զանգ» 1918, դեկտեմբերի 29, թիւ 86:
[2] Նույն տեղում:

...Զնայած Սադախլօում հաւաքած մեծ ուժերին՝մօտ 2 հազար հետեւակ, 400 ձի, 12 թնդանոթ, մէկ զրահապատ գնացք, կարմիր գւարդիական գունդ և այլն-չեն դիմացել մեր զօրքերի գրոհին և, հաւանաբար, կնահանջեն մինչև Խրամի միւս ափը»[1]:

Զորս օր տեւողությամբ ընթացող կատաղի ճակատամարտն ավարտվում է վրացական զորքերի դաժան պարտությամբ:

Գեներալ Ծուլուկիձեն դարձյալ դիմում է փախուստի եւ շնորհիվ շրջակա թուրք բնակիչների օգնության, կարողանում է ազատվել անխուսափելի կործանումից: Իսկ ռազմաճակատի մյուս հատվածներում կռիվները դեռեւս շարունակվում էին:

Ճակատամարտի ավարտին հայ զինվորների տնօրինությանն է մնում հետեւյալ ռազմավարը.

«...մերոնց ձեռքը գերի ընկան 6 սպայ, 126 զինուոր, 2 կոլտ գնդացիր, աւելի քան 100 վագոն պարէն, ռազմամթերք ու փամփուշտ, 3 շոգեքարշ եւ ուրիշ պաշարեղէն:

Մեր կորուստներն էին փոխ. գլխապետ Ալեքսանդրովը վիրաւոր, 7 զինուոր սպանուած եւ 11 վիրաւոր»[2]:

Ճակատամարտում հայկական զորախմբի վերցրած ռազմավարի մասին փոքր-ինչ այլ տվյալներ է հաղորդում «Զանգ»-ում տեղ գտած թղթակցությունը: Նրա տեղեկացմամբ՝ «Ճակատամարտը, ինչպէս ստացւած պաշտօնական տեղեկութիւններն են հաղորդում, շատ կատաղի է լինում, մերոնք ջարդում են վրաց զորաբանակը, գերի են վերցնում 37 սպայ, 500 զինուոր, աւար են վերցնում երեք շոգեքարշ մեքենայ, 100 վագոն, 200 հրացան, 2 թնդանոթ, 1 գնդացիր, փամփուշտներ և պաշարեղեն...»[3]:

Ամփոփելով տասն օրվա կռիվների արդյունքները եւ պատշաճորեն գնահատելով Դրոյի զորախմբի հաղթանակներն ու ակնառու նվաճումները՝ Հայաստանի Հանրապետության խնամատարության նախարար Արտաշես Բաբալյանը նշում է. «Դեկտեմբերի 13-ին, մեր զօրքերը, ի պատասխան Ուզունթալայի դէպքերի, յարձակման դիմեցին եւ, Լոռիի վրէժխնդիր ազգաբնակչութեան օգնութեամբ, դէն շպրտեցին յոխորտացող վրացիներին, մեծամեծ կորուստներ պատճառելով նրանց: Տասն օրուայ ընթացքում ամբողջ Լոռին հայկական բանակի ձեռքին էր: Վրացական զօրքը ջախջախուեց, թողնելով 2000-ից աւելի գերիներ, որոնցից 100-ի չափ սպաներ, մեծ

[1] Նույն տեղում:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1957, թիւ 2, էջ 10:
[3] «Զանգ» 1918, դեկտեմբերի 29:

թով վագոններ, շոգեմեքենաներ, ռազմամթերք եւ երեք զրահապատ գնացք»[1]:

Վրաստանի կառավարության որոշմամբ մի շարք ճակատամարտերում պարտված գեներալ Մուլուկիձեն ազատվում է պաշտոնից, իսկ նրա փոխարեն վրաց զորքերի հրամանատարությունը ստանձնում է Վրաստանի առավել հարգված զինվորականներից՝ գեներալ Գեորգի Մազնիեւը(Մազնիաշվիլի): Ընդունելով վրաց զորքերի հրամանատարությունը՝ գեներալ Մազնիեւը նույնպես չի կարողանում կանգնեցնել հայկական զորքեր հաղթարշավը[2]:

Հայկական զորքերի հերթական հաղթանակն արդեն նրանց ընդամենը 50 կիլոմետր է բաժանում Վրաստանի մայրաքաղաքից:

Հայկական զորախմբի հաջողություններն ակնառու էին, բայց պատերազմը դեռեւս շարունակվում էր: Անժխտելի է, եթե այդ ժամանակ Դրոյի առաջնորդած զորախումբը կենտրոնից ռազմական փոքր-ինչ օգնություն ստանար, ապա վերջնականապես կջախջախեր խուճապի մատնված վրաց զորքերը եւ, անտարակույս, հաշված օրերի ընթացքում կհասներ Վրաստանի մայրաքաղաք: Ի տարբերություն հայկական կողմի, գեներալ Մազնիեւը զորախումբը հոկտեմբերի 25-ին ստանում է նոր համալրում, ավելի քան 1000 զինվորներ եւ նույնիսկ ինքնաթիռներ, որոնք Շուլավերի մոտակայքում առաջին անգամ ռմբակոծում են հայկական զորամասերի դիրքերը: Հոկտեմբերի 25-ին հայկական զորքերի հարձակումը փոքր-ինչ դանդաղում է:

Հայ-վրացական կռիվների բռնկման պատճառներն ու ընթացքի ուսումնասիրությունը միանշանակորեն մատնանշում են, որ Հովհ. Քաջազնունու գլխավորած Հայաստանի Հանրապետության կառավարությունը պատերազմի հարցում ի սկզբանե տրամադրված է եղել ավելի քան խաղաղասիրաբար: Լոռի-Փամբակի խնդիրը խաղաղությամբ լուծելու եւ արյունահեղությունը դադարեցնելու Հայաստանի կառավարության խաղաղասիրական դիրքորոշումը դրսեւորվել է նույնիսկ այն պահին, երբ հայկական զորքերը, ջախջախելով Լոռին բռնագրաված վրաց զորամասերին եւ մաքրելով շրջանի տարածքը, հասնում են հայ-վրացական սահմանի բաժանարար Խրամ գետը: Այդ ժամանակ պատերազմը դադարեցնելու առաջարկությամբ ՀՀ կառավարությունը Թիֆլիս է գործուղում հաշտարար պատվիրակություն:

[1] Բժ. Բաբալեան Ա., էջեր Հայաստանի անկախութեան պատմութիւնից, Գահիրէ, 1959, էջ 26:
[2] ՀՅԴ ԿԱ, թղ. 65, գ. 1, էջ 2:

Վրացական կողմը ոչ միայն անուշադրության է մատնում եւ չի պատասխանում ՀՀ պաշտոնական առաջարկությանը, այլեւ անցկացնում է նոր զորահավաք ու հետեւողականորեն շարունակում նորանոր զորամասերով համալրել ռազմաճակատը ու դեկտեմբերի 19-ին ՀՀ կառավարությանը հասցեագրած պաշտոնական հեռագրում հայտնում Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունները խզելու մասին:

Ի տարբերություն վրաց իշխանությունների դիրքորոշման՝ վրացական զորքերի պարտությունը տագնապ ու խուճապային տրամադրություններ է հարուցել Վրաստանում, նույնիսկ Ադրբեջանում: Անհանգստացած հայկական զորքերի հաղթանակներով, «Ադրբէջանի արտ. գործ. մինիստր Աղայեւը հեռագրով դիմել է Հայաստանի Խորհրդարանին՝ պատեհիկ խոսքերով խնդրելով վերջ տալ եղբայրասպան պատերազմին վրացիների հետ»[1]:

Ի՞նչ պիտի արվեր, որպեսզի վերջ տրվեր պատերազմին: Գործին կարող էին միջամտել հաղթող տերությունները, հատկապես Անգլիան եւ Ֆրանսիան, որոնք իրենց դիվանագիտական ներկայացուցչություններն ունեին Թիֆլիսում: Իսկ նրանց դիրքորոշումն այդ ժամանակ այնքան էլ հայանպաստ չէր:

Դեկտեմբերի 25-ին Թիֆլիսում գտնվող Անգլիայի ներկայացուցիչ, գեներալ Միլը եւ Ֆրանսիայի ներկայացուցիչ գնդապետ Շարդինիեն Վրաստանի եւ Հայաստանի հանրապետությունների ներկայացուցիչներ Ժորդանիայի ու Վրաստանի կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետությանգործերի հավատարմատար Ա. Ջամալյանի մասնակցությամբ հրավիրում են խորհրդակցություն: Գեներալ Միլի եւ գնդապետ Շարդինիենի թելադրանքով հայ-վրացական պատերազմը դադարեցնելու վերաբերյալ խորհրդակցության մասնակիցները ընդունում են որոշումներ, որոնց մասին հեռագրով տեղեկացնում են ՀՀ կառավարության նախագահ (վարչապետ) Հովհաննես Քաջազնունուն:

Հայաստանի Խորհրդարանի դեկտեմբերի 26-ի նիստում Հայաստանի Հանրապետության վարչապետ Հովհաննես Քաջազնունին պատգամավորներին հայտնում է, որ Անգլիայի եւ Ֆրանսիայի ներկայացուցիչների գործուն մասնակցությամբ Թիֆլիսում տեղի է ունեցել խորհրդակցություն, որտեղ որոշում է կայացել հայկական, վրացական, անգլիական ու ֆրանսիական ներկայացուցիչներից կազմված հանձնաժողով ուղարկել ռազմաճակատ ու իրականացնել

[1] «Զանգ» 1918, դեկտեմբերի 29:

պատերազմը դադարեցնելու ու համաձայնություն կայացնելու հետեւյալ պայմանները.

«1. Վրաց զորքերը Բորչալուում մնում են իրենց ներկայ տեղում:

2. Հայոց զորքերը գրաւում են Դսեղ-Ջալալօղլի գիծը:

3. Միջի տարածութեան վրայ ստեղծւում է խառն վարչութիւն հայերից և վրացիներից:

4. Անգլիական զինուորական պահակները գրաւում են երկաթուղին:

Ախալքալակի վրաց վարչութեան վրայ հաստատւում է դաշնակիցների կոնտրոլ հայերի և մուսուլմանների մասնակցութեամբ:

6. Անմիջապէս ֆրոնտ է մեկնում անգլիական, ֆրանսիական, հայկական ու վրացական խառն մի յանձնախումբ:

7. Անմիջապէս Եւրոպա են մեկնում հայկական և վրաց պատուիրակութիւնները այնտեղ վերջնականապէս լուծելու համար հայ-վրացական սահմանների խնդիրը»[1]:

Խորհրդակցությունում ընդունած որոշմամբ չէր սահմանվում բացարձակապես հայաբնակ Լոռիի կարգավիճակը, իսկ Ախալքալակի գավառը պիտի գրավվեր վրացական զորքերի կողմից: Բնական է, որ նման որոշումը չէր կարող գոհացնել հայկական պատվիրակությանը: Այդ որոշման կապակցությամբ իր անհամաձայնությունն ու բողոքն է արտահայտել Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Արշակ Ջամալյանը:

Հայաստանի Խորհրդարանը՝ լսելով ՀՀ կառավարության նախագահ Հովհ. Քաջազնունու զեկուցումը, քննում է հայ-վրացական պատերազմը դադարեցնելու կապակցությամբ դաշնակիցների, այն է՝ Անգլիայի ու Ֆրանսիայի առաջադրած պայմաններն ու ընդունում է հետեւյալ բանաձեւը. «Հայաստանի Խորհրդարանը լսելով կառավարութեան նախագահի զեկուցումը հայ-վրացական կոնֆլիկտը լուծելու համար դաշնակիցների առաջարկած պայմանների մասին, ընդունում է երկու հարևան ժողովուրդների եղբայրասպան պատերազմին վերջ տալու առաջարկը:

Ապա գտնելով, որ ներկայացած պայմանները չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության իրավունքներին և արդար պահանջներին, հրահանգում է կառավարութեանը բանակցութեան միջոցով ջանալ փոփոխել այդ պայմանները համաձայն Խորհրդարանի նախորդ որոշումների»[2]:

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում:

Վիճելի հարցի վերաբերյալ Հայաստանի Խորհրդարանի եւ կառավարության տեսակետն ու որոշումը մեկն էր՝ Հայոց պատմական Գուգարաց աշխարհի Լոռվա շրջանը Հայաստանի Հանրապետության անբաժանելի մասն էր, եւ դատապարտելի էին Վրաստանի կառավարության դրսեւորած զավթողական նկրտումներն եւ բնակչության նկատմամբ վրաց զինուժի կիրառած անօրինականություններն ու բռնությունները:

Պիտի ասել, որ այդ ժամանակահատվածում պատերազմը շարունակելու վերաբերյալ տարբեր դիրքորոշումներ են զարգացրել հայ քաղաքական կուսակցությունները:

Հարկ է ընդգծել, որ պատերազմը Լոռի-Փամբակում սկսվել է Հայաստանի Խորհրդարանի որոշմամբ, եւ այդ հարցում բոլոր կուսակցությունները, բացառությամբ Սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի, կողմ են քվեարկել հօգուտ ռազմական գործողությունների ծավալման: Սոցիալ-դեմոկրատները ընդունելով Լոռի–Փամբակի Հայաստանի մասը կազմելու օրինականությունը, միաժամանակ դեմ էին զենքի դիմելուն եւ համաձայն, որ վրացիները գրավեին Լոռին եւ Ախալքալակը:

Հայ ժողովրդական կուսակցությունը այդ օրերին հրաժարվելով իր պաշտպանած նախկին տեսակետից, նույնպես Հայաստանի կառավարությունից պահանջում էր վերջ տալ եղբայրասպան կռվին: Զափազանց տհաճ իրավիճակ է տիրել հայ քաղաքական կյանքում: Հայության համար բախտորոշ նշանակություն ունեցող ժամանակահատվածում անհրաժեշտ էր, որ Հայաստանի բոլոր ուժերն՝ անկախ կուսակցական պատկանելիությունից ու սոցիալական դիրքից, միավորվեին ու հանդես գային միասնաբար: Փոխանակ իրենց զորակցությունը բերելու ՀՀ կառավարությանն ու բանակին՝ հայ քաղաքական վերոհիշյալ կուսակցությունները կառավարությունից պահանջում էին հրաժարվել տարած հաղթություններից ու հեռանալ ազատագրված տարածքներից, որն աներկբա հավասարազոր է Լոռի-Փամբակը Վրաստանի անբաժանելի մասը ճանաչելու իրողությանը:

«Զանգ»-ում տպագրած «ԽՄԲԱԳՐԱԿԱՆ»-ում համառոտակի ներկայացնելով պատերազմը սկսելու պատճառները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հայ քաղաքական կուսակցություններին հայտնում է. «Արիւնահեղութեան վերջ տալը բնաւ մեզանից չէ կախւած: Մենք ստիպւած եղանք զէնքի ուժով գրաւել մեզ պատկանող Բորչալուն: Հասնելով սահմանին՝ Խրամ գետին,

մենք լուծած ենք համարում այս ուղղությամբ մեզ առաջադրած խնդիրը: Ուղարկելով հաշտարար պատվիրակություն Վրաստանի պատվիրակության և դաշնակիցների ներկայացուցչի հետ բանակցելու՝ մենք անկեղծորեն արտահայտել ենք մեր խաղաղար տրամադրությունը և պատրաստակամությունն յայտնել վերջ տալու արյունահեղությունը»[1]:

«ԽՄԲԱԳՐԱԿԱՆ»-ում շեշտելով պատերազմը դադարեցնելու իր պատրաստակամությունը՝ հայկական կողմը միաժամանակ հայտնում է. «...Հիմա արիւնահեղութիւնը կարող է դադարեցնել միայն Վրաստանը և ուրեմն նրան էլ պիտի դարձնեք ձեր հաշտարար խօսքը: Իսկ եթէ դուք պահանջում էք Հայաստանի կառավարութիւնից վերջ տալ արիւնահեղութեան, ապա բարի պիտի լինէք ասել, թէ ի՞նչ եղանակով հնարաւոր է իրագործել այդ պահանջը զինելով վրացիներին, մաքրելով Լոռին, հայ զօրքերը յետ քաշելով մինչև Ղարաքիլիսէն: Այդ դեպքում ի՞նչ կասէ ձեր խիղճը հանդէպ այն արեան, որ թափւեց Բորչալուում նաև ձեր կամքով, ի՞նչ կասէ հայ զինուորութիւնը, որին դուք երէկ դէպի կռիւ էիք քշում, իսկ այսօր հրամայում էք հրաժարւել տարած հաղթութիւններից ու հեռանալ. վերջապէս, ինչ կասէ Լոռուայ հարստահարած հայ ազգաբնակչութիւնը...»[2]:

Իզուր էին ՀՀ կառավարության դիմումներն ու պատերազմը դադարեցնելու ու հարցը խաղաղ ճանապարհով լուծելուն նպատակաուղղված քայլերը: Չնայած Անգլիայի ու Ֆրանսիայի և պատերազմող կողմերի կայացրած վերոհիշյալ որոշմանը՝ պատերազմը չթուլացող ուժգնությամբ շարունակվում էր:

Վրաստանի կառավարությունը, լարելով հանրապետության ողջ կարողություններն ու զորաշարժի ենթարկելով զենքի ընդունակ բնակչությանը, շարունակում է նորանոր զորամասերով համալրել ու ուժեղացնել ռազմաճակատը ու փորձում բեկում մտցնել պատերազմական գործողություններում:

Վրաստանի կառավարության որոշմամբ՝ նույնիսկ այն զորամասերը, որոնք գտնվելով ներկայիս Աբխազիայի տարածքում, պիտի դիմակայեին գեներալ Դենիկինի գլխավորած Կամավորական բանակի հնարավոր ներխուժմանը ծովափնյա շրջաններ (Սուխում, Ադլեր, Գագրա), շտապ տեղափոխում են հայ-վրացական ճակատ՝ կանգնեցնելու հայկական զորքերի առաջխաղացումը:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

Ռիչարդ Հովհաննիսյանը որպես հիմք ընդունելով գեներալ Դենիկինի ու այլ հեղինակների աշխատություններում հայ-վրացական պատերազմին վերաբերող փաստերը՝ գրում է. «...վարչապետ Նոյ Ժորդանիան առաջ քաշեց այն մեղադրանքը, որ Կամավորական բանակի(նկատի ունի Դենիկինի գլխավորած բանակը-Հ.Գ.) ներխուժումը Սև ծովի երկայնքով նախապատրաստված էր հայկական ռազմերթին Լոռիում աջակցելու համար, որ հետամտում էր Վրաստանի անկախությունը տապալելու համար: Իրոք, մի շարք վրացական զորամիավորումներ ծովափնյա կայազորներից շուտափույթ փոխադրվեցին՝ դիմակայելու Դրոյի զորքերի վտանգավոր հարվածին»[1]:

ՀՀ պաշտպանության նախարար, գեներալ Հախվերդյանի գնահատմամբ. «...Չնայած այդ հաջողություններին (նկատի ունի մինչ այդ հայկական զորքերի նվաճած հաղթանակները-Հ.Գ) հայերի վիճակը յուրաքանչյուր օր դարձել է ավելի ու ավելի ծանր: Վրացիները անընդհատ մոտեցնում էին օգնական, համալրող ուժեր: Թիֆլիսից մշտապես իրականացվող մատակարարումները կատարվել են ժամանակին եւ անընդմեջ, իսկ այդ ընթացքում հայկական զորամասերը չէին ստանում ոչինչ...»[2]:

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ կառավարությունը դեռեւս ի զորու չէր լուրջ զինական աջակցություն ցույց տալու Վրաստանի Հանրապետության դեմ միայնակ մարտնչող եւ դեռեւս ոչ մի համալրում չստացած Դրոյի առաջնորդած զորախմբին, այնուամենայնիվ, որոշակի քայլեր ձեռնարկում է բանակը մարտական ուժերով համալրելու ու հզորացնելու ուղղությամբ: Ամենաբարդ ու դժվարին լուծելի խնդիրը թերեւս նոր զորահավաքի կազմակերպումն էր: Երկրում տիրող տնտեսական ծայրահեղ դժվարին կացությունն ու աղքատությունը, ինչպես նաեւ բազմահազար անօթեւան գաղթականության առկայությունը մեծապես խոչընդոտել են իրականացնել զորահավաքը: Զենքի ընդունակ տղամարդիկ, հոգնած անվերջ շարունակվող կռիվներից եւ խիստ մտահոգվելով իրենց ընտանիքների ճակատագրով, հրաժարվում էին ենթարկվել զորակոչի հրամանին ու մեկնել բանակում ծառայելու, առավել եւս հայտնվել մարտադաշտում:

Այդ ժամանակահատվածում ՀՀ կառավարության եւ զինվորական նախարարության ուշադրությունը գամված չէր միայն հայ-վրացական ռազմաճակատում ծավալվող իրադարձությունների

[1] Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 402-403:
[2] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 9:

վրա: Հանրապետության անվտանգությանն սպառնում էին նաեւ վտանգավոր այլ ուժեր:

«...կառավարության ուշադրությունը, - գրում է Ա. Աստվածատրյանը, - զբաղուած էր Շարուրի ճակատում սպառնացող բարդություններով: Պարսկաստանից ու Նախիջեւանից հայրենիք վերադարձող բազմահազար թուրք զինուորները՝ անկարգ ու բոլշեւիկացած, ահուդողի էին մատնել մերձակայ շրջանների հայերին, եւ մեր կառավարությունը ճիգ էր լարում՝ այդ փորձանքից ազատելու: Վրաց ճակատը գրեթէ ամբողջապէս մնացել էր Դիլիջան-Լոռի զօրամասերին եւ Ղազախի ու Լոռիի կամաւորներին»[1]:

Նոր զորահավաք կազմակերպելու նպատակով ՀՀ զինվորական նախարար, գեներալ Հախվերդյանը ստորագրում է պաշտոնական հրամանը, որը զուտ ճանաչողական առումով հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում ու որոշակի պատկերացում տալիս բանակի կազմակերպման դժվարությունների եւ զորակոչի ենթակա քաղաքացիների դրսեւորած վերաբերմունքի մասին:

Գեներալ Հախվերդյանը հրամանի 1-ին կետում, դիմելով զինվորականներին ու քաղաքացիներին, հայտնում է, որ հայկական Բորչալուի հայ բնակչությունը չհանդուրժելով իր նկատմամբ վրաց իշխանությունների կողմից կիրառված բռնությունները, ապստամբել է օտար իշխանության դեմ եւ դիմել է Հայաստանի կառավարության օգնությանը[2]:

«Մեր քաջարի զորքը, - նշվում է գեներալ Հախվերդյանի հրամանում, - աչքի չառնելով սառնամանիքն ու կռվի դժվար պայմանները հառաջ շարժվելով ազատել է մեր եղբայրներին ճնշումներից ու ստրկացողներից: Բայց մեր հարազատ, իր կյանքն ու առողջությունը իր եղբոր համար զոհող զինվորին օգնություն է հարկավոր: Թանկ է բոպեն, նրանից է կախված Բորչալվի եղբայրների ու խիզախ զինվորների կյանքը: Դուք, որ մինչեւ հիմա խուսափել եք զինվորական ծառայությունից ու թողել եք Ձեր զորամասերը՝ չտապեցեք մտնելու զորքի շարքը, այդ է պահանջում Ձեզանից հայրենիքն ու ազնիվ քաղաքացու պարտքը»[3]:

Հրամանի 2-րդ կետում տեղեկացվում է, որ զորահավաք կազմակերպելու նպատակով հանրապետության տարածքը բաժանվում է ութ շրջանների՝ Դիլիջանի(Ղազախի հարավային մասը), Նոր Բայազետի, Երեւանի, Սուրմալուի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլ-Ախալքա-

[1] «Հայրենիք» ամսագիր, 1957, թիւ 2, էջ 9-10:
[2] Տե՛ս ՀԱԱ, Ֆ, 200, ց. 1, գ. 22, թ. 9:
[3] Նույն տեղում:

լաքի, Լոռի-Ղարաքիլիսայի (Բորչալուի հարավային մասը), Շարուր-Դարալագյազի[1]:

Համաձայն հրամանի 3-րդ կետի՝ սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետությունում բնակվող 20-25 տարեկան հայերն ու ասորիները պարտավոր են երեք օրվա ընթացքում ներկայանալ համապատասխան կենտրոններ[2]:

Ճիշտ է, գեներալ Հախվերդյանը ստորագրել է զորահավաքի կատարման հրամանը, բայց Դրոյի զորախումբը մինչեւ կռիվների ավարտի նախավերջին օրը համալրում չի ստացել:

Հրամանի վերջում զինվորական նախարարը խստորեն հայտնում է. «Ես կարգադրություն էի արել բոլոր նրանց, որոնք չեն գտնվում զորամասերում, կատարեն իրենց զինվորական պարտքը զինվորական ծառայության, բայց քչերը կատարեցին իրենց պարտքը, այդ պատճառով ներկա հրամանով նորից կոչ եմ անում ու հայտարարում, որ բոլոր նրանք, որոնք ըստ սույն հրամանի 4 կետի ժամանակամիջոցին չեն ներկայանա հավաքական կենտրոններ ու չեն ստանա համապատասխան վկայականներ՝ կհամարվեն կռվի մասնակցելու հրամանից խուսափողներ եւ... կենթարկվեն մահվան պատժի...»[3]:

Իսկ այդ ընթացքում վրացական կողմը ձեռնարկում է ավելի վճռորոշ գործնական քայլեր: Դեկտեմբերի 24-ին Վրաստանի զինվորական նախարարության հրամանով 1500 զինվորից կազմված զորագնդի գլուխն անցած՝ ճակատամարտի դաշտն է հասնում ռազմաճակատի նոր հրամանատար, գեներալ Մուլուկիձեին փոխարինած գեներալ Մազնիեւը (Մազնիաշվիլի):

Ի տարբերություն վրացականի, հայկական զորաբանակը դեռեւս որեւէ օգնություն չէր ստացել, թեեւ արդեն հրապարակվել էր զորակոչի վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարար, գեներալ Հախվերդյանի հրամանը:Հաղորդակցության ուղիների փակվածության, հատկապես երկաթուղու բացակայության եւ երկրում տիրող ծայր աստիճանի աղքատության պատճառով հայ զինվորները հարկադրված սնվում եւ կռվում էին վրացիներից նվաճած սննդով ու ռազմամթերքով: Հարկ է նշել, որ նախորդ մարտերում հայկական զորամասերին ակտիվորեն օժանդակել եւ նրանց շարքերում մարտնչել էին լոռեցի կամավորները: Սակայն իրավիճակը կտրուկ փոխվում է, երբ կռիվներն արդեն ընթանում էին ոչ թե Լոռվա տարածքում, այլ նրա սահմաններից դուրս:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

«Հէնց որ ամբողջ Լոռին գրաւուեց, - նշում է Ա. Աստվածատրյանը, - եւ պատերազմը սկսեց տեղափոխուել հայկական շրջաններից դուրս, լոռեցիները, մեծ մասամբ, հեռացան իրենց տները: Այս պարագան, ի հարկէ, վատ անդրադարձաւ մնացած զինուորների հոգեկան վիճակի վրայ:

Այսպիսով, հայկական բանակը, առանց օգնական ուժեր ստանալու, աստիճանաբար փոքրանում էր, իսկ վրացիները, ընդհակառակը, աւելանում էին արագօրէն»[1]:

Պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանի գնահատմամբ՝ «Ոչ մի համալրում չէր նախատեսվում, քանի որ բանակի մեծ մասը զբաղված էր Հանրապետութեան հարավային անապահով շրջաններով: Ավելին, որքանով որ ռազմաճակատը տեղաշարժվել էր Լոռու հայկական գյուղերից այն կողմ՝ հյուսիսի հարակից հարթավայրերը, պարտիզանական խմբերը այլեւս կանոնավոր զուգքերի հետ առաջ չէին գնում: Դրա փոխարեն, Լոռու հայ ապստամբները վերադարձան հայրենի գյուղերը՝ գոհ իրենց հաղթանակից և համոզված, որ իրենց հողերը վերջնականապես կմիացվեն Հայաստանին»[2]:

Նույն իրողությունը, այսինքն ռազմաճակատից Լոռվա ապստամբների հեռանալը եւ Դրոյի Դիլիջան-Լոռի զորախմբին համալրում չուղարկելու փաստը իր հուշագրություններում հաստատում է նաեւ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար գեներալ Հախվերդյանը[3]:

Կռիվների ժամանակ հայկական զորախմբին դիմակայողը միայն վրացական զորքերը չէին: Շրջակայքի թուրք զինյալ հրոսակախմբերը, հիմնականում Բորչալուի թուրքերը, հնարավոր բոլոր միջոցներով օժանդակում էին վրաց զորքերին ու շարունակաբար հարձակումներ գործում հայկական զինաջոկատների վրա ու խափանում նրանց կապակցող հաղորդակցության ուղիները:

Բացի դրանից, վրաց զորքերը հայկականի համեմատ ունեցել են եւս մի առավելություն: Թիֆլիսը ռազմաճակատից բաժանող տարածքի փոքրացումը ավելի մեծ հնարավորություն է ընձեռում վրաց հրամանատարությանը՝ ժամանակին եւ պարբերաբար համալրելու իր բանակի մարտաշարքերը:

Զարմանքի ու հիացմունքի էին արժանի հայ զինագնդերն ու նրանց հրամանատարը: Դեռեւս ոչ մի համալրում չստացած ընդամենը 5000-անոց կիսասովյալ զորաբանակը, որի շարքերը նախորդ մարտերում արդեն զգալիորեն նոսրացել էին, փաստորեն միայնակ մարտնչում էր Վրաստանի Հանրապետության ողջ ռազմական ուժերի դեմ եւ, որպես օրենք, գրեթե բոլոր մարտերը նշանավորում էր հաղթանակով: Այս առումով ուշագրավ է ու պերճախոս «Զանգ»-ում տեղ գտած թղթակցությունում հայկական ու վրացական զորքերին եւ նրանց վիճակը ներկայացնող բնութագիրը:

Թղթակցության բնութագրմամբ, վրաց զորքերը բացի գերազանց զինվածությունից ու քանակական գերակշռությունից, Դիլիջան-Լոռի զորախմբի համեմատությամբ ունեցել են նաեւ հետեւյալ նպաստավոր պայմաններն ու առավելությունները. «...թիկունքի մոտ լինելը, առատ ռազմամթերքը, տաք հագուստը, լաւ պարենաւորման միջոցներն ու դիւրութիւնները, դրամների առատութիւնը, և վերջապէս այն երկարատև հանգիստը, որ վայելել է վրաց զօրքը հանդէպ մերի: Մեր զօրքերի ներկայ յաջողութիւնները կարելի է բացատրել միմիայն հերոս ու տոկուն զօրքերի յատկութիւններով, և իրօք, մեր զօրքը հերոս զօրքերից է, մանաւանդ երբ նկատի ենք առնում այն մեծ զրկանքները, որ նա կրում է»[1]:

Հայկական զորքին տված այդ բնութագրին, անկասկած, պիտի գումարել նրան առաջնորդող հրամանատարության, սպայական կազմի մարտական գերազանց պատրաստվածությունն ու կռիվների ժամանակ առավել կենսունակ եւ գործող մարտավարությամբ առաջնորդվելու կարողությունը:

Ըստ Հայաստանի կառավարությանը գեներալ Սիլիկյանի ներկայացրած դեկտեմբերի 26-ին թվագրված հեռագրի. դեկտեմբերի 25-ին ժամը 2-ին վրաց հրամանատարությունը Շուլավերից Աշաղա-Սարալի բնակավայրի մոտ գնացքից իջեցնում է 1500 զինվորներ եւ հրետանային մի դասակի կրակի աջակցությամբ գրոհում է գնդապետ Կորոլկովի գնդի վրա:

«Մեր մասերը,-հաղորդում է գեներալ Սիլիկյանը,-կանգնեցրին յարձակումը, իսկ 7-րդ բատարէյի վզվոդը սուր կրակով ջարդեց թշնամու հրետանին և ցրեց հետեւակներին»[2]:

Այդ օրը վիրավորվում է նախորդ կռիվներում իրեն քաջաբար դրսեւորած գնդապետ Կուռո Թարխանյանը:

Գեներալ Սիլիկյանի տվյալներով՝ «Առ դեկտ. 26-ին մեր զօրքերը վրացիներից առել են 48 սպայ, 882 զինուոր, 3 բժիշկ, 17 թնդանօթ,

---

[1] «Հայրենիք» ամսագիր, 1957, թիւ 2, էջ 10:
[2] Հովհաննիսյան Ռ. Հայաստանի Հանրապետություն, Երեւան, 2005, էջ 125-126:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 9:

[1] «Զանգ» 1918, դեկտեմբերի 29:
[2] Նույն տեղում :

39 գնդացիր, 600 հրացան, 12 շոգեմեքենայ, 4 կիսափչացած զրահապատ գնացք (նկատի ունի նաեւ գեներալ Մուլուկիձեի սալոնվագոնը-Հ.Գ.), 48 արկղ ռումբ, 49 հեռախոսային գործիք, շատ փամփուշտ, հագուստեղէն, ուտելիք և ուրիշ իրեր»[1]:

Նույն հեռագրում գեներալ Մ. Սիլիկյանը հաղորդում է. «Մեր զորքերի տրամադրությունը շատ բարձր է: Թէ՛ զինուորները և թէ՛ ժողովուրդը կռւում են քաջութեամբ և իրենց գործի լիակատար գիտակցութեամբ»[2]:

Ճիշտ է, մարտական գործողություններն անմիջականորեն գեներալ Մ. Սիլիկյանը չէր ղեկավարում, սակայն հայկական զորքերի ընդհանուր հրամանատարը նա էր եւ պիտի ընդունել, որ նրա վկայակոչած տվյալներն ավելի հավաստի են:

Դեկտեմբերի 27-ին Թիֆլիսից Լոռի են մեկնում Անգլիայի ու Ֆրանսիայի դիվանագիտական ներկայացուցիչներ գեներալ Միլը եւ գնդապետ Շարդինեն: Դաշնակիցների ներկայացուցիչներին հայկական պատվիրակության եւ Լոռի-Դիլիջան զորախմբի կողմից դիմավորում են գեներալ Ղորղանյանն ու կապիտան Պուագեբարը[3]:

Մեկ օր անց՝ դեկտեմբերի 28-ին, անգլիական կապիտան Դըդլեզ Վիցերիսի գլխավորությամբ Ղարաքիլիսա է հասնում 2 անգլիացի, 1 ֆրանսիացի ու 1 վրացի սպաներից բաղկացած հանձնախումբը եւ հայկական հրամանատարությանն է հանձնում անգլիացի Ռայկրորֆտի, ֆրանսիացի Շարդինի եւ Ժորդանիայի ստորագրությամբ վավերացված, մայիսի 25-ին Թիֆլիսի խորհրդակցությունում ընդունած որոշումը, որի ընդունման կապակցությամբ, ինչպես արդեն նշվել է, իր բողոքն ու անհամաձայնությունն էր ներկայացրել Վրաստանի կառավարությանը առընթեր ՀՀ գործերի հավատարմատար Արշակ Ջամալյանը[4]:

ՀՀ կառավարության հանձնարարությամբ՝ Ղարաքիլիսայում նրանց դիմավորել են ՀՀ Կառավարության պատվիրակության նախագահ Մ. Հարությունյանն ու գեներալ Ղորղանյանը:

Հանձնախմբի ժամանումը ռազմաճակատ դեռեւս որեւէ էական ազդեցություն չի գործում այնտեղ ծավալվող մարտական գործողությունների վրա:Ճիշտ հակառակը, դեկտեմբերի վերջերին վրացական զորքերի նոր հրամանատար, գեներալ Մազնիեւը, համալրելով ու կարգի բերելով նախորդ մարտերում ջախջախված զորագնդերը, դիմում է մարտական ակտիվ գործողությունների:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 225:

Վերջին կռիվների նախօրեին «Զօր. Մազնիեւի յետագայ յայտարարութիւնների համաձայն, վրացիները ամբողջ հայկական ճակատի վրայ ունէին 8000 կռուողներ»[1]:

Այժմ արդեն վրացական զորքերն ավելի քան կրկնակի քանակական գերակշռություն ունեին հայկական զորախմբի նկատմամբ:

Դեկտեմբերի 27-ին վրացական զորքերը, օգտագործելով իրենց քանակական գերակշռությունը, հարձակում են ձեռնարկում երկու գլխավոր՝ Շուլավերի եւ Սադախլուի ուղղությամբ: Այս անգամ վրացական հրամանատարությունը լիահույս էր, որ իրենց գերակշռող ռազմական ուժերին ի վերջո կհաջողվի խորտակել անընդմեջ մարտերում հոգնած ու զգալի կորուստներ կրած եւ առայժմ ոչ մի համալրում չստացած հայկական զորախմբի դիմադրությունն ու հաղթական վերջակետ կդնի պատերազմին: Ընդսմին, վրացական կողմին առավելագույնս օգնելու ու աջակցելու նպատակադրությամբ իրենց գործողություններն ավելի են ուժեղացնում Բորչալուի թուրքական բնակավայրերի զինյալ հրոսակախմբերը:

Գեներալ Մազնիեւը, ունենալով զորքերի քանակական գերակշռություն եւ թուրք հրոսակախմբերի աջակցությունը, փորձում է չդադարող անընդմեջ գրոհներով վճռական գերակշռություն ձեռք բերել ռազմաճակատի մերթ այս, մերթ այն հատվածում, սակայն ամենուրեք հայ զինվորների խիզախ հակահարվածները ձախողում են վրաց զորահրամանատարի ձեռնարկումները: Ռազմաճակատի բոլոր հատվածներում հայ զինվորները մարտնչել են աննահանջ, անձնուրաց համառությամբ ու խիզախումով:

Արժանվույնս գնահատելով պատերազմում հայկական զորքերի դրսեւորած խիզախությունը՝ Հովհաննես ավ. քահանա Հաճյանը նշում է. «...հակառակ թշնամու ուժերի խիստ գերակշռութեան եւ հայկական զօրքերի չափազանց յոգնածութեան ու սակաւութեան, հայկական բանակը ճիշտ որ հրաշքներ գործեց, շնորհիվ իր փորձաւած հրամանատար Դրօի, այնքան նուիրուած ճակատապետների եւ հայրենասէր զինուորների»[2]:

Վրաց հրամանատարությունը վերջին կռիվների ժամանակ առանձնակի ուշադրություն է դարձրել ու կարեւորել Շուլավերի բարձունքները, քանի որ տեղանքի վրա գերիշխող դիրք ունեցող բարձունքներից ավելի հարմար էր հարձակումը զարգացնել դեպի

[1] Նույն տեղում:
[2] Յովհ. ավ. քահանա Հաճեան, նշվ. աշխ., էջ 127:

Սադախլու: Շուլավերի բարձունքներից ձեռնարկվող հարձակումով Սադախլուն գրավելու համար վրաց զորքերը պիտի ապահովվեին իրենց թիկունքի անվտանգությունը: Քանի որ Շուլավերը զուտ հայաբնակ մեծ գյուղ էր եւ բազմիցս զգացել էր վրացական կողմի բռնությունները, ուստի չէր բացառվում, որ կռիվների ժամանակ գյուղի զինված խմբերը եւ այնտեղ գտնվող հայկական զորամասը հարվածեին դեպի Սադախլու առաջացող վրացական զորքերի թիկունքին: Նկատի ունենալով այդ հանգամանքը, վրաց հրամանատարությունը ավելի է ուժեղացնում Շուլավերի մերձակայքում կենտրոնացած իր զորամասերը:

Շուլավերի շրջանում կենտրոնացնելով 3500 զինվոր՝ գեներալ Մազնիեւը 12 թնդանոթներից տեղացող կրակի աջակցությամբ գրոհում է գնդապետ Կորոլկովի զորամասի վրա: Չնայած հակառակորդի քանակական ու կրակային կրկնակի գերակշռությանը՝ գնդապետ Կորոլկովի զորամասը, դեկտեմբերի 26-ից սկսած, չորս օր շարունակ մեծ կորուստներ հասցնելով վրաց զորքերին, հաջողությամբ հետ է մղում գրոհները:

Չկարողանալով հաղթահարել գնդապետ Կորոլկովի զորամասի դիմադրությունը՝ գեներալ Մազնիեւը փոխում է ճակատամարտը շարունակելու մարտավարությունը: Վրացական զորքերը պիտի հարձակվեին հայկական զորքերի կենտրոնի՝ գնդապետ Տեր-Նիկողոսյանի զորամասի վրա եւ հրանոթային հզոր կրակի աջակցությամբ խորտակեին նրա պաշտպանությունը, ապա գրոհեին ռազմաճակատի թեւերում դիրքավորված զորամասերի վրա: Համաձայն վրաց հրամանատարության մշակած մարտավարության՝ հայկական զորքերի կենտրոնի պարտության հետեւանքով դժվարին իրավիճակում պիտի հայտնվեին նաեւ թեւերում մարտնչող գնդապետ Կորոլկովի ու Իշխանյանի գլխավորած զորամասերը[1]:

Նույն օրը՝ դեկտեմբերի 27-ին, վրացական զորքերը հարձակվում են գնդապետ Տեր-Նիկողոսյանի զորամասի վրա: Եթե գնդապետ Կորոլկովի զորամասը կարողանում է գրեթե անկորուստ հետ մղել հակառակորդի բազմիցս կրկնվող հարձակումները, ապա գնդապետ Տեր-Նիկողոսյանի զորամասը չդիմանալով վրաց զորքի գրոհին, հարկադրված նահանջում է Շուլավերի հյուսիսային կողմը, դրանով ծանր կացության մատնում ռամաճակատի թեւերում գտնվող զորամասերին:

Գնդապետ Կորոլկովի զորամասը, ավելի հարմար դիրք գրավելու նպատակով, զուտ մարտավարական նկատառումով, կռվելով նահանջում է: Միաժամանակ, վրաց զորքերը Բորչալուի թուրքական հրոսակախմբերի աջակցությամբ հարձակվում են գնդապետ Իշխանյանի զորամասի վրա: Հայկական զորքերը՝ օգնական ուժեր չստանալով, առանց խուճապի, հետ մղելով հակառակորդի անընդմեջ ձեռնարկվող գրոհները, նույնպես նահանջում են:

Ճակատամարտի մանրամասները ներկայացնող ռազմական ամփոփագրի համաձայն՝ «Մեր գլխավոր ոյժերը երեկոեան ամրացան և հիմնաւոր կերպով բռնեցին Գեառնուշ-Թափա-Սադախլո բարձունքները: Նահանջը կատարւեց կարգապահութեամբ, զինուորների տրամադրութիւնը լաւ է: Մեր զոհերը սպանւած և վիրաւոր 7 սպայ և 200 զինւոր, 3 թեթև թնդանօթ: Վրացիները կենտրոնացնում են եկու կէտերում՝ Շուլաւերի տակ մօտ 3500 զինւոր, 12 թնդանօթ և Կալագանի մօտ 600 մարդ: Վերջիներիս են միացել նաև տեղացի թուրքերը»[1]:

Վրացական զորքերը մի քանի անգամ գրոհում են Սադախլու կայարանի վրա եւ դեկտեմբերի 30-ին թուրք ամբոխի հետ միասին ներխուժում են Սադախլու, բայց հայ մարտիկները՝ վրացիներից վերցրած զրահագնացքի կրակի աջակցությամբ, փախուստի են մատնում նրանց ու դարձյալ ամրապնդվում Սադախլուում:

Այդ կռիվներում արդյունավետ է գործել զրահագնացքը, որը փոխտեղակալ Սուլթան-Շահի (Բաշ-Ապարանի ճակատամարտում Սուլթան-Շահը հրետանային մարտկոցի հրամանատարն էր- Հ.Գ) հրամանատարությամբ «...յանդուգն յարձակումներ էր գործում եւ ահագին վնաս պատճառում հակառակորդին»[2]:

Հայ-վրացական պատերազմը մոտենում էր իր վախճանին: Մի պիտի նվաճեր հաղթանակը հարյուրամյակներ շարունակ միմյանց հարեւանությամբ ապրող երկու ազգերի միջեւ բռնկված պատերազմում:

Դրոն իր մարտական հարուստ կենսագրությամբ արդեն բազմիցս ապացուցել էր, որ ճակատամարտերում հաղթելու անհրաժեշտ պայմանը բոլորովին էլ զորքի թվական գերակշռությունը չէ, իսկ մարտերի ընթացքում սոսկ պաշտպանվելը, թեկուզ եւ հաջողությամբ, երբեք նրա դավանանքը չի եղել: Պատերազմելու նրա տարերքը սրընթաց հարձակումն էր եւ անսպասելի ու հուժկու հարվածները:

Դեկտեմբերի վերջերին ծավալված կռիվներում հաջողությամբ հետ մղելով վրաց զորքերի գրոհները՝ նա դարձյալ մտածում է նոր հարձակում ձեռնարկելու մասին: Հարկ է խոստովանել, որ Հայաս-

[1] Տե՛ս «Զանգ» 1918, դեկտեմբերի 29:

[1] Նույն տեղում:
[2] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 227:

տանի Հանրապետության կառավարությունը դեռևս բավարար ուշադրություն չէր դարձրել Դրոյի զորախումբը ժամանակին օգնական ուժերով համալրելու, զենք ու զինամթերքով, հանդերձանքով ու պարենով ապահովելու գործին: Դիլիջան-Լոռի զորախումբը չնայած դեռևս չէր ստացել անգամ փոքրագույն համալրում, այնուամենայիվ, շարունակում էր կիսասովյալ ու վատ հանդերձավորված վիճակում միայնակ աննահանջ ու վճռականությամբ մարտնչել Վրաստանի բանակի դեմ:

Այս առումով քննադատաբար մոտենալով կառավարության գործունեության գնահատմանը՝ Արտաշես Բաբալյանը գրում է. «Մեղաւոր էինք եւ մասնաւորապէս վարչապետ Յովհ. Քաջազնունին, որ իւրայատուկ կեցուացքով չուզեց պատերազմին ժողովրդական բնոյթ տալ եւ չօգտագործեց մեր մաքսիմում կարողութիւնը:

Ճիշտ է, մեր ժողովուրդը սոսկալի վիճակի մէջ էր, բայց թէ՝ Խորհրդում, թէ՝ երկրում կառավարութիւնը ջանք չթափեց օգնական ուժեր ուղարկելու բանակին եւ մեծ «խոհեմութիւն» արեց լռութեան տալով մեր փայլուն յաղթանակները պատերազմի դաշտում»[1]:

Դրոն, իհարկե, քաջատեղյակ էր Հայաստանում տիրող ծանրագույն կացությանը, բայց պատերազմը շարունակելու համար անհրաժեշտ էր համալրում, օգնություն: Իր զորախումբը ուժեղացնելու համար նա ՀՀ կառավարությունից պահանջել է ընդամենը 1000 զինվոր, 50.000 ռուբլի, 1500 լեբել ու թուրքական հրացաններ, ինչպես նաեւ բժիշկներ ու ֆելդշերներ: ՀՀ կառավարությանն ու զինվորական նախարարությանը ներկայացնելով վերոհիշյալ, կարելի է ասել, ավելի քան համեստ պահանջները՝ Դրոն հավատացրել է, որ նվաճած հաղթանակները կարող են ամրապնդվել, եթե բավարարվեն իր ներկայացրած պահանջները[2]:

Դեկտեմբերի 30-ին Դրոյի համառ պահանջներից հետո, վերջապես մարտաղաշտ է հասնում երկար սպասված համալրումը՝ ընդամենը 600 զինվոր: Իհարկե, համալրումը այնքան էլ մեծ չէր, բայց պատերազմելու հարուստ փորձ ունեցող 600 մարտունակ զինվորների օգնությունը, անտարակույս, կարող էր դրական ներգործություն ունենալ մարտական հետագա իրադարձությունների հաջող զարգացման վրա: Անհրաժեշտ էր եւս մեկ խիզախ թռիչք, մեկ վճռական հաղթանակ, եւ Վրաստանի մայրաքաղաք տանող մայրուղին բաց կլիներ:

Համալրելով եւ վերախմբավորելով իր զորագնդերի մարտաշարքերը՝ Դրոն ծրագրում է շրջապատել եւ ոչնչացնել գեներալ Մազ-

[1] Բժ. Ա. Բաբալեան , Նշվ.աշխ., էջ 26:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 16, թ. 348:

նիեւի բանակը: Հայկական զորագնդերի բարոյական ու մարտական ոգին, կորովը եւ հաղթելու ձգտումը դեռևս բավականաչափ բարձր էին: Հայկական զորքերին հաջողվում է հրանոթների ու գնդացիրների հզոր եւ դիպուկ հարվածներով գրավել նաեւ վրացիների վերջին՝ 4-րդ զրահագնացքը, որն անմիջապես օգտագործում են ընդդեմ վրաց զորքերի: Դեկտեմբերի 31-ին հայ-վրացական զորքերի միջեւ սկսվում է վերջին ճակատամարտը:

Հայկական զորամասերը դեկտեմբերի 31-ին՝ վերջին ճակատամարտի նախօրեին, կենտրոնացել էին հետեւյալ դասավորությամբ. «... աջ թեւում կանգնած էր գնդ. Տիմոշենկոն 6-րդ գնդի 2 գումարտակով (մօտ 1100 ուին) եւ 6-դ լեռնային մարտկոցի 2 թնդանօթով: Կենտրոնում 2-րդ գնդի 3 գումարտակներ (մօտ 600 ուին) գլխ. Յովհաննիսեանի հրամանատարութեամբ եւ 4-րդ լեռնային մարտկոցի երկու թնդանօթ երկաթուղուց մինչեւ Բարդաձորից Ճոճկան տանող ճանապարհը: Ձախ թեւի վրայ՝ գնդապետ Կորոլկովը՝ Բարդաձորի ճանապարհից մինչեւ Օփրեթի ճանապարհը: Նրա մասերը դասաւորած էին. Գիլ - Գագիում միլիցիոն գունդը, Բարդաձորում 4-րդ գնդի մէկ գումարտակ, 2 գումարտակ Խոժոռնիում, 50 ձիաւոր Աղքեորփիում: Պահեստը գտնվում էր Ճոճկանում 2-րդ գնդի 2 գումարտակներ եւ 7-րդ մարտկոցի 2 թնդանօթներ»[1]:

Դրոյի մտահղացմամբ՝ գեներալ Մազնիեւի գլխավորած բանակը Սադախլուի ճակատամարտում պիտի ջախջախվեր հետեւյալ մարտավարությամբ: Նախ պիտի ընդգծել, որ ի տարբերություն Բաշ-Ապարանի ճակատամարտի, որտեղ նա, ինչպես արդեն նշվել է, թուրքական կանոնավոր դիվիզիային կարողացավ պարտության մատնել շնորհիվ կենտրոնացված խոյահարիչ եւ հակառակորդի համար անսպասելի սրընթաց հարվածի, ապա այս անգամ նա ընտրում է բոլորովին այլ մարտավարություն: Համաձայն նրա մտահղացման՝ կենտրոնի հանդիպակաց եւ թեւերից տեղացող հարվածներով ու արագ տեղաշարժերով հայկական զորագնդերը պետք է օղակեին, շրջապատման մեջ վերցնեին վրաց զորախմբավորումը, ապա սրընթաց ու հզոր գրոհներ ձեռնարկելով՝ խորտակեին նրա դիմադրությունն ու շարժվեին դեպի Թիֆլիս: Այսինքն, հայկական զորքերը ճակատամարտում պիտի շարունակեին գործել ընդամենը 2-3 օր առաջ տեղի ունեցած Սադախլուի հաղթական ճակատամարտում կիրառած մարտավարությամբ, բայց քանի որ ուժերը

[1] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 228:

սահմանափակ էին, ուստի զրոհները պիտի զարգացնեին ավելի արագ ու վճռական: Հաղթանակի դեպքում բացվելու էին Թիֆլիս տանող ուղիները:

Հայ-վրացական պատերազմում տեղի ունեցած մարտական գործողությունների, առանձին դրվագների, մասնավորապես վերջին՝ դեկտեմբերի 31-ի կռիվների վերլուծությունն ու նկարագրությունն առավել ամբողջական իր հեղինակած «Հայաստանի Հանրապետություն» աշխատությունում ներկայացնում է Ս. Վրացյանը: Բոլոր այն հեղինակները, ինչպես նաեւ տողերիս հեղինակը, ովքեր անդրադարձել են հայ-վրացական կռիվների վերլուծությանն ու նկարագրությանը, գլխավորապես օգտվել են հենց Ս. Վրացյանի «Հայաստանի Հանրապետություն» գրքի «Պատերազմ եւ հաշտություն» գլխում տեղ գտած նյութից: Ավելորդ կրկնաբանություններից խուսափելու համար նպատակահարմար ենք գտնում ներկայացնել այդ ճակատամարտի վերջնամասի նկարագրությունն ամբողջությամբ:

Ճակատամարտը իր մտահղացած մարտավարությամբ ծավալելու համար Դրոն զորամասերին տվել է հետեւյալ հրամանը. «Աջ թեւը, ժամը 2-ին, սկսում է յարձակումը, գրաւում 2660 բարձունքը եւ, եթէ ձախ թեւը առաջանայ յաջողությամբ, Մամայում կապւում նրա հետ: Կենտրոնական զօրամասը՝ զարնում է ճակատից եւ զբաղեցնում Սադախլուի թշնամուն: Ձախ թեւը շարժւում է կենտրոնի հետ միաժամանակ եւ գրաւելով Սիոն-Դամիա շրջանը՝ Ամայում միանում է աջ թեւին: Այսպիսով թշնամին առնելու էր օղակի մէջ եւ ջախջախելու:

Սակայն ճակատամարտը տեղի է ունենում նախատեսվածից մի քիչ տարբեր ձեւով: Հեռախօսային կապ չլինելու պատճառով՝ Կոբոլկովը մի քանի ժամ ուշ ստացաւ հրամանը, եւ նախաձեռնությունը նրա ճակատում անցաւ թշնամու ձեռքը: Ժամը 8-ին վրացիները, սպայական գումարտակի գլխաւորությամբ, դիմեցին ուժեղ յարձակման, Գիւլ-Գագիի մօտ պատռեցին մերոնց շղթան եւ շարժւեցին դէպի Գեղեք-Բուռուն լեռը: Ժամը 1-ին թշնամու առաջխաղացման մասին լուր ստացւեց զօրամասի սպայակուլտում, եւ Դրօն շտապեց պահեստից օգնութեան հասցնել 2-րդ գնդի 2-րդ գումարտակը, որը կանգնեցրեց վրացիների արշաւը:

Ժամը 2-ին ուժգին յարձակման անցաւ 6-րդ գունդը՝ շարժւելով դէպի 2660 բարձունքը: Կենտրոնական ճակատից անընդհատ տեղեկութիւններ էին ստացւում, որ վրացիները 2600 բարձունքի կողմից, Մամայից ու Դամիայից Սադախլու էին քաշում իրենց ուժերը եւ

շարժւում դէպի Գիւլ- Բաղի: Եւ որովհետեւ ձախ թեւը չէր շարժւում, Դրօն հրամայեց աջ զօրասիւնին ցոյց տալ վճռական գործունէութիւն եւ մի զօրասիւն ուղարկել դէպի Սադախլու՝ Գիւլ-Բաղի ուղղութեամբ վրացիներին թիկունքից հարվածելու համար:

6-րդ գունդը յառաջացաւ երկու թեւով. մէկը 1-ին գումարտակ՝ Գիւնաչ-Թափայից 2660 բարձունքի լանջերով շարժւեց դէպի Լամբալու եւ Սադախլու: 6-րդ լեռնային մարտկոցի 2 թնդանօթ կրակ բաց արին Սադախլուի վրա. 2660 բարձունքի վրա դրւեց մի պահակ: Միւս գումարտակը գործում էր Քարամլուի եւ Կաչաղանի շրջանում: Միաժամանակ Սադախլուի վրա կրակ բաց արեց եւ 7-րդ լեռնային մարտկոցը, եւ 2-րդ գնդի 3-րդ գումարտակը 2702 բարձունքից սկսեց հարաւից իջնել դէպի Սադախլու: Զրահապատը, առաջ անցնելով, օգնում էր 3-րդ գումարտակի:

Ձախ թեւի վրա շարունակւում էին կատաղի կռիւները, վրացիները տարածւում էին Գեղեք-Բուռունի ուղղութեամբ:

Ժամը 3-ի մօտերը, 6-րդ գնդի 2-րդ գումարտակը սկսեց մոտենալ 2660 բարձունքի կատարին: Վրացիները բաց արին ուժեղ գնդացրային կրակ, բայց մերոնք առաջ շարժւեցին գնդակների տարափի տակ՝ պատրաստ անցնելու սուինամարտի: Վրացիները խուսափեցին սուինամարտից եւ ժամը 4 ու կէսին փախան: 2660 բարձունքը անցաւ հայերի ձեռքը, որոնց առաջաւոր մասերը սկսեցին իջնել դէպի Մամայ՝ կտրելով Սադախլուի ճակատում գործող վրացական զօրամասի թիկունքը: Երեկոեան 6-րդ գնդի ձախ զօրասիւնը գրաւեց Լամբալուն, իսկ 2-րդ գնդի 3-րդ գումարտակը ներս խուժեց Սադախլուի հարաւային մասը:

Գիշերը կռիւը դադարեց: Թիկունքից կտրած՝ վրացիները կանգնեցին Գիւլ- Բաղի շրջանում եւ սկսեցին կամաց-կամաց յետ քաշւել: Մեր ձախ զօրամասը բռնեց բարձունքները Խոժոռնիի, Գիւլ-Բաղի ու Բարդաձորի Գլխին...»[1]:

Ինչպես հայտնի է, Սադախլուի մոտակայքում մղվող այդ ճակատամարտը մնում է անավարտ: Անգլիայի եւ Ֆրանսիայի դիվանագիտական ներկայացուցիչների միջնորդությամբ Հայաստանի եւ Վրաստանի կառավարությունները համաձայնվում են դադարեցնել պատերազմը եւ պարտավորվում սահմանային հարցերը լուծել դիվանագիտական ճանապարհով:

Վ. Փափազյանի գնահատմամբ՝ «Կարճ միջոցի մէջ, Դրօն յաջողեցաւ-հակառակ անոր որ վրացիները զրահաւոր գնացքներ բերած էին ճակատէն-Լօռիի եւ Ջալալ Օղլուի շրջանէն քշել օտարամուտ

[1] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 228:

ուժերը, մօտենալ Թիֆլիզ տանող ճամբուն՝ հովտի ելքին եւ Շուլավէր գիւղաքաղաքին: Այդ ատեն էր, որ Կովկաս գտնուող անգլիական զինուորականներու միջամտութեամբ վերջ տրուեցաւ այդ ամօթալի կռիւներուն»[1]:

Հարց է ծագում. ո՞վ էր հաղթողը այս պատերազմում: Պատերազմող երկու կողմերից յուրաքանչիւրը պնդում է, որ ճակատամարտը շարունակվելու դեպքում հաղթանակն ինքն էր նվաճելու:

Եզրափակելով ճակատամարտի նկարագրությունը՝ Ս. Վրացյանը փորձում է տալ այդ հարցի պատասխանը:

«Եւ իրոք, ուշադրութիւն դարձրէ՛ք ճակատամարտի քարտէսին-ուժերի ի՛նչ տարօրինակ դասաւորութիւն: Հայ-վրացական զօրամասերը խառնուել են իրար. վրացիները մտել են խորունկ հայկական շրջանը, հայերը սպառնական՝ անցել են վրացիների թիկունքը: Կը դիմանայի՞ն Կորոլկովի զօրամասերը վրացական գրոհին, կը կարողանայի՞ն վրացիները մաքրել թիկունքը հայկական խուժումից. կը կարողանա՞ր Մազնիեւը տոկալ Դրոյի հարուածին...»[2]:

Նկատի ունենալով Դրոյի երկաթյա կամքը, ռազմագետի անբասիր կարողություններն ու նպատակասլացությունը, ինչպես նաեւ նրա զորաբանակի մարտական փայլուն պատրաստվածությունը, կարգապահությունն ու պատերազմը մինչեւ հաղթանակը շարունակելու ձգտումը՝ կարելի է անվարան պնդել, որ նա անպայման կջախջախեր գեներալ Մազնիեւի բանակն ու կգրավեր Վրաստանի մայրաքաղաքը, եթե չլինեին անգլիացիների ու ֆրանսիացիների միջնորդությունները:

Հայ-վրացական պատերազմի մանրամասները ներկայացնող փաստերը վկայում են, որ ռազմաճակատում հայկական զորքերի նվաճած հաղթանակներն ու առաջխաղացումը տագնապալի կացություն էին ստեղծում Վրաստանի մայրաքաղաքում եւ Վրաստանի ողջ Հանրապետությունում:

Օրինակ, Խորեն Ռահանյանը (ամերիկահայ կամավոր զինվոր: Մարտնչել է Անդրանիկի 1-ին կամավորականի շարքերում, ապա եղել է Սեբաստացի Մուրադի զորախմբում եւ մասնակցել Երզնկայի, Էրզրումի, Սարիղամիշի մարտերին-Հ. Գ.): Հայ-վրացական կռիվների ժամանակ գտնվելով Թիֆլիսում ձերբակալվում ու տեղափոխվում է Քութայիսի բանտը-Հ. Գ.) իր բանտային հուշերում անդրադառնալով հայ-վրացական կռիվներին, ներկայացնում է հետեւյալ ուշագրավ փաստը. «Գիշերը չէինք կրնար քնանալ, կառքերու ճռնճիւններուն եւ բանտին անտանելի մթնոլորտին պատճառով: Օր

[1] Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. 2, էջ 496:
[2] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 228:

մը հարցուցինք պահակ Սրիկին. թէ այդ ի՞նչ ձայներ էին գիշերները: Պատասխանեց թէ վրացիները իրենց մայրաքաղաքը հոս կը փոխադրէին, «որովհետեւ ձեր Դրօն շատ զոռ կընէ եւ Թիֆլիսը իյնալու վտանգի տակ է:

Նույն օր բանտ եկան երկու բժիշկ, հայ թարգման մը եւ երկու սպաներ ու ըսին, թէ հաշտութիւն կար եւ թէ հայերու եւ թէ վրացիներու միջու կազմուած էր չեզոք գոտի»[1]:

Պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը, վկայակոչելով հայ-վրացական պատերազմին վերաբերվող հետեւյալ վիճակագրական տվյալները, համաձայն որի «...հայերը ավելի քիչ կորուստներ էին ունեցել, քան վրացիները եւ տվել էին հարյուրից պակաս գերիներ, մինչդեռ գրավել էին 2 զրահագնացք, մոտ 75 գնդացիր, 200 բեռնված ապրանքատար վագոն եւ գերել էին ավելի քան հազար վրացական զինվոր», ընդհանրացնում է. «Բայց անգամ այս թվերը թեեւ գալիս են ժխտելու վրացական պարծենկոտությունը ջախջախիչ հաղթանակի մասին, ինքնըստինքյան, չեն ապացուցում հայերի վճռորոշ հաղթանակը»[2]:

Ռ. Հովհաննիսյանը՝ ի ապացույց հայկական զենքի առավելության, մեջբերում է անգլիացի մի թղթակցի եւ հեղինակի հետեւյալ խոսուն խոստովանությունը. «... ինքը Կովկաս էր գնացել հայերի նկատմամբ «առհասարակ եւրոպական նախապաշարումներով լցված» եւ այդպիսով, կիսով չափ հակված հավատալու այն ցինիկ տեսակետին, որ «Հավանաբար, աստվածային նախախնամությամբ հայերը նախասահմանված են կոտորվելու համար», պնդում է, որ բրիտանական զինվորական իշխանությունները փրկեցին Վրաստանը ծանր վիճակից. «Երկու ժողովուրդները բախվեցին 1918թ. դեկտեմբերին եւ, ի զարմանս նրանց, ովքեր կարծում էին, թե հայերը փողամոլների այլասերված ցեղ են, փախուստի մատնեցին վրացիներին եւ, թերեւս, կգրավեին Թիֆլիսը՝ վրացական մայրաքաղաքը, եթե դաշնակիցները չմիջամտեին»[3]:

Մի ուշագրավ փաստարկ եւ արժեւորում այդ հարցի լուսաբանման վերաբերյալ. հայկական պատմական տարածքների, այս պարագայում Բորչալու գավառի Լոռվա շրջանի համար մղված միանգամայն օրինական եւ անհրաժեշտ պայքարը խորհրդահայ մի շարք պատմաբանների կողմից որակվել է որպես Հ. Յ. Դաշնակցության կողմից հարեւան երկրների տարածքների նկատմամբ դրսեւորած նվաճողական քաղաքականություն:

[1] «Հայրենիք» ամսագիր, 1966, թի 50, էջ 63:
[2] Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ էջ 127:
[3] Նույն տեղում:



Հայ-վրացական պատերազմի վերջին՝ անավարտ ճակատամարտի պատկերը:

Օրինակ, «Նոյեմբերյան հեղափոխությունը Հայաստանում» գրքում անդրադառնալով հայ-վրացական կռիվների գնահատմանը՝ Մ. Ներսիսյանը գրում է. «...Դաշնակցությունը չքաշվեց զենքից ու պատերազմից: Նա, ընդհակառակը, մեծ ամբարտավանությամբ դիմեց իր սովորական հայդուկային-ավանտյուրիստական քաղաքականությանը: Դաշնակցությունը սկսեց սուր ճոճել: Եվ ահա Անդրկովկասյան սեյմի քայքայումից ընդամենը հինգ ամիս հետո դաշնակցական կառավարությունը առաջին մեծ պատերազմն ունեցավ մենշեւիկյան Վրաստանի հետ: 1918 թ. դեկտեմբերին պայթեց դաշնակ-մենշեւիկյան պատերազմը»[1]:

[1] Ներսիսյան Մ., Նոյեմբերյան հեղափոխությունը Հայաստանում, Երեւան, 1935, էջ 35:

Ընթերցելով այս տողերը՝ բնականորեն հարց է ծագում. մի՞թե հայրենի հողը հարեւան երկրի զավթողական նկրտումներից պաշտպանելն ու ազատագրելը ամբարտավանություն է եւ ավանտյուրա: Հայկական զորքերի հաղթանակն ու հայոց պատմական տարածքների ազատագրումը խորհրդահայ ակադեմիկոս-պատմաբանի համար կարծես դատապարտելի իրողություն է. «Դաշնակ պարոնները, - շարունակում է Մ. Ներսիսյանը,- այդ պատերազմի ժամանակ, օրինակ, հրճվում, ուրախանում էին, երբ կատարվում էին այդ չտեսնված ոճրագործությունը, ավերումներն ու կոտորածները, այդ նույն ժամանակ պարոն Սիմոն Վրացյանը ցինիկորեն խմբապետ-մաուզերիստ Դրոյին հեռագրում է.

«Գործող բանակ, Դրոյին:

Սիրելի Դրո, Հ. Հ.Դաշ. Ֆրակցիան, կենտրոնական կոմիտեն եւ բյուրոն ջերմապես ողջունում են քեզ, քո ընկերակիցներին եւ քո ղեկավարության տակ գտնվող հերոսներին, Ուզունլարից մինչեւ Խրամ տարված փայլուն զինվորական գործողությունների համար: Փառք եւ պատիվ նրանց, որոնք ընկան հայրենիքի հանդեպ իրենց ունեցած պարտականությունները կատարելիս»[1]:

Մի՞թե պարսավելի է, երբ Մ. Ներսիսյանի բնորոշմամբ «Դաշնակ պարոններ»-ը ողջունում էին հայ զորապետին ու նրա առաջնորդած զորքին, որոնք հաղթանակներ էին նվաճել մի շարք ճակատամարտերում եւ թույլ չէին տվել, որպեսզի Հայաստանի պատմական տարածքը՝ Լոռին, սեփականացվեր հարեւանի՝ Վրաստանի կողմից:

Անվանի պատմաբան Լեոյի բազմիմաստ բնութագրմամբ՝ «Երկու հազար տարվա պատմությունը տանում հասցնում է այն եզրակացության, որ առանց Լոռու երկար դարաշրջաններում չէր կարող երեւակայել Հայաստան: Ներկայումս այս բանն ավելի ևս աներեւակայելի պիտի համարել, քանի որ կտրել Լոռին Հայաստանի մարմնից, կնշնակե հոշոտել նրա ամբողջ անցեալը և նրա կուլտուրական գանձերը՝ դարերի և հարյուրավոր սերունդների մեծագործությունը թալանի տալ»[2]:

Արշալույս Աստվածատրյանի արտահայտությամբ՝ «Հայ ժողովրդի բոլոր խավերի գաղափարն էր արտահայում Լեոն»[3]:

Արժանավույնս գնահատելով հայ-վրացական պատերազմում Դրոյի ծառայությունը՝ Ա. Աստվածատրյանը նշում է. «Հայ-Վրա-

[1] Նույն տեղում:
[2] Աստվածատրյան Ա. նշվ. աշխ., էջ 679:
[3] Նույն տեղում, էջ 686:

ցական պատերազմը կասկած չի թողնում մի բանում, այն, որ Դրոն իր վրա դրված պարտականությունը կատարեց փայլուն կերպով»[1]:

Բնականաբար հարց է ծագում. ինչպիսի՞ ճակատագրի կարժանանար Լոռին, եթե Դրոյի զորաբանակին չհաջողվեր շրջանը մաքրել վրացական զորքերից: Մեր պատմությունը արդեն տվել է եւ տալիս է այդ հարցի միանշանակ պատասխանը: Եթե հայկական զորաբանակին չհաջողվեր Լոռին մաքրել վրաց զորքերից, ապա այն անխուսափելիորեն կարժանանար Արցախի ճակատագրին եւ նրա նմանողությամբ մինչեւ օրս կռվածաղիկ կդառնար Հայաստանի եւ Վրաստանի միջեւ:

Կարելի է աներկբա պնդել, որ եթե հայկական Լոռին այսօր գտնվում է Հայաստանի կազմում, ապա այդ գործում չափազանց մեծ են հայ-վրացական պատերազմում հակառակորդի մարտական ուժերին քանակական առումով, զինվածությամբ եւ սննդամթերքի ու հանդերձանքի մատակարարմամբ զգալիորեն զիջող եւ անասելի դժվարին պայմաններում հերոսաբար մարտնչած Դրոյի եւ նրա գլխավորած քաջարի սպաների ու հայ զինվորների, հիրավի, անգնահատելի ծառայությունը:

Արժանվույնս գնահատելով հայ-վրացական «անմիտ, խելացնոր, բայց անխուսափելի կռիվներում» (Ս. Վրացյանի գնահատականներն են - Հ.Գ.) Դրոյի ծառայությունը՝ Ս. Վրացյանը գրում է.

«Դրոն այդ օրերին իսկապէս հանճարեղ ռազմագէտի հմտութիւն երեւան բերեց, որ յարգանք պարտադրեց նոյնիսկ թշնամուն: Ես յիշում եմ Երեւան գերի բերուած մի քանի տասնեակ վրացի սպաներին եւ բարձրաստիճան զինուորականներին ի պատիւ տրուած մի ճաշկերոյթի Հայաստանի սպարապետութեան կողմից: Այդպիսի բաներ էլ հնարաւոր էին դեռ, որ պատերազմի միջոցին, գերի զինուորականութեան ի պատիւ ճաշկերոյթ տրուի: Իրենց բարքին յատուկ՝ վրացի գերիների լեզուները արագ բացուեցին եւ գինու հետ միասին սկսեցին հոսել նաեւ բաժակաճառերը: Պերճախոս զինուորականներից մէկը ասաց.- Ես առաջարկում են խմել տաղանդաւոր եւ վեհանձն զօրահրամանատար Դրոյի կենացը: Ես առաջարկում եմ խմել հայ եւ վրացի եղբայրական ժողովուրդների կենացը»[2]:

Արժանվույնս գնահատելով Դրոյի ավանդը հայ-վրացական պատերազմում՝ Երեւանի Ազգային խորհրդի անդամ Ա. Աստվածատրյանը գրում է. «Հայ-վրացական պատերազմը կասկած չի թողնում մի բանում,- այն՝ որ Դրօն իր վրայ դրուած պարտականութիւնը կատարեց փայլուն կերպով»[1]:

Ավարտվում է հայ-վրացական պատերազմը եւ Ս. Վրացյանի արտահայտությամբ՝ «խոսքը անցնում է քաղաքագետներին»:

Զինադադարի հաջորդ օրը հայկական հաշտարար պատվիրակությունը մեկնում է Թիֆլիս, ուր հունվարի կեսերին բացվում է հայ-վրացական խորհրդաժողովը: Վրացիների կողմից խորհրդաժողովին մասնակցել են Ե. Գեգեչկորին, Ն. Ռամիշվիլին, Սաբախտարաշվիլին եւ գեներալ Գեգեւանովը, իսկ հայկական պատվիրակությունը ներկայացրել են Մ. Հարությունյանի գլխավորած Ղարաքիլիսայի պատվիրակությունն ու գեներալ Ղորղանյանը: Խորհրդաժողովում քննարկվել են ոչ միայն պատերազմին ու հաշտության, այլեւ երկու երկրների փոխհարաբերություններին վերաբերող կարեւոր խնդիրները: Խորհրդաժողովը շարունակվել է մոտ երեք ամիս եւ ինչպես որ սպասվում էր, այնտեղ ծավալված վիճաբանությունների գլխավոր նյութը եղել է սահմանների հարցը[2]:

Ս. Վրացյանի գնահատմամբ՝ վրացական կողմը դիտավորյալ ձգձգել է խորհրդաժողովի աշխատանքները: Քաջատեղյակ լինելով Հայաստանի Հանրապետությունում տիրող ծանրագույն իրավիճակին, վրացական կողմը հույսեր է փայփայել, որ Հայաստանում գնալով ավելի ու ավելի կծանրանա տիրող դժվարին կացությունը, ու հետեւաբար հայ պատգամավորությունը հարկադրված կլինի լինել ավելի զիջող ու կընդունի իրենց առաջադրած պահանջները:

Վրաց պատվիրակության հույսերը չեն իրականանում: Հասկանալով վրացական կողմի դիրքորոշումն ու հետապնդած նպատակը՝ Հայաստանի կառավարությունը հրահանգում է իր պատվիրակությանը մինչեւ մարտ վերջացնել բանակցությունները եւ վերադառնալ Երեւան:Խորհրդաժողովի աշխատանքները ընդհատվում են, բայց փետրվարի 28-ին վերսկսվում ու ընդունվում են մի քանի որոշումներ[3]:

Խորհրդաժողովի ընդունած որոշումներից պիտի առանձնացնել. 1. երկու հանրապետությունների փոխադարձ անկախությունների ճանաչման եւ դիվանագիտական հարաբերությունների վերականգնման դաշինքը: Բացվում է Բաթում-Երեւան երկաթուղու շրջափակումը, եւ օրեր անց Հյուսիսային Կովկասից գնացքները Հայաստան

---

[1] Նույն տեղում:
[2] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, 1965, հ. Դ, էջ 186:

[1] «Հայրենիք» ամսագիր, 1957, թիւ 2, էջ 11:
[2] Տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 237:
[3] Տե՛ս նույն տեղում:

են հասցնում Անտանտայի երկրների, գլխավորապես ԱՄՆ-ի կառավարության կողմից հայ ժողովրդին տրամադրած ալյուրի ու սննդամթերքի այլ տեսակների բեռները, որոնք այդ օրերին փրկարար նշանակություն ունեին Հայաստանի Հանրապետությունում հանգրվանած բազմահազար գաղթականության ու հատկապես որբ եւ անապաստան երեխաների համար:

Լոռվա վիճելի շրջանը հայտարարվում է չեզոք գոտի, եւ մշակվում է Լոռիի չեզոք գոտու վարչության առանձին կանոնագիր: Այդ ճանապարհով լուծվում են քրիստոնյա հարեւանի հետ ունեցած վիճելի հարցերը[1]:

Լոռվա չեզոք գոտու ընդհանուր կոմիսարը, որը պիտի լիներ արտակարգ լիազորություններով օժտված դաշնակիցների սպաներից որեւէ մեկը, որը ունենալու էր հայ եւ վրացի մեկական օգնական:

«Չեզոք գոտին, գրում է Ռիչարդ Հովհաննիսյանը,-որն ընդգրկում էր Ալավերդու հարուստ պղնձահանքերը, 43 գյուղ՝ գերազանցապես հայկական, և երկաթուղու մոտավորապես 30 մղոնանոց հատված՝ 6 կայարաններով, բաժանվեց Ուզունլարի, Վորոնցովկայի և Ալավերդու շրջանների: 13 գյուղախմբեր ընդգրկող երեք շրջաններից յուրաքանչյուրը պետք է ունենար տեղացի կոմիսար: Արդեն վճռված էր, որ հրաձգային բրիգադի 4-րդ գումարտակի կապիտան Ա. Շ. Ջ. Դուգլասը պաշտոնավարելու էր որպես Դաշնակիցների ընդհանուր կոմիսար»[2]:

Խորհրդաժողովում քննարկվել է նաեւ Ախալքալակի խնդիրը:

Ըստ Ռ. Հովհաննիսյանի՝հայկական պատվիրակությունը ծայրաստիճան դժկամությամբ, անուամենայնիվ, համաձայնվել է, որ «...Վրաստանի երկու հետեւակ վաշտերի ժամանակավոր տեղակայմանը Ախալքալակում, բայց միայն այ պայմանով, որ շրջանը դրվի Դաշնակիցների (նկատի ունեն Անտանտի տերություններին-Հ. Գ.) հսկողության տակ և երաշխավորվի հայերի մասնակցությունը: Փոխգնդապետ Ալան Ռիչին պաշտոնավարելու որպես բրիտանական զինվորական ներկայացուցիչ[3]»:

Պատերազմն ավարտվեց, բայց արդյունքը՝ Լոռին որպես չեզոք գոտի, Հայաստանի համար այնքան էլ գոհացուցիչ չէր, այն անկասկած կարող էր ավելի ակնառու լինել: Այս առումով կարելի է միանգամայն ընդունել Արտաշես Բաբալյանի հետեւյալ տեսակետի իրավացիությունը. «Դժբախտաբար, անգլիական նորեկ իշխանությեան

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 238:
[2] Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 130:
[3] Նույն տեղում, էջ 129:

միջամտությամբ, դեկտեմբերի 31-ին վերջ տրուեց պատերազմին մեզ համար ոչ ձեռնտու պայմաններով:

...Դժբախտությունն էր մեզ համար, որ ա՜յնքան վճռական բոպէին Արամը հիւանդ էր եւ անկարող եղաւ մասնակցել գործին:

Մենք նպատակ ունէինք գրաւել Լոռին մինչեւ Խրամ գետը, որ համարում էինք մեր սահմանը Վրաստանի հետ:

Բայց յոխորտացող թշնամուն վերջնականապէս պատժելու համար ի վիճակի էինք գրաւել Թիֆլիսը, եթէ կառավարութեան գլուխը անշարժ եւ վեհերոտ չլինէր»[1]:

Զգոհանալով հայ-վրացական կռիվների արդյունքում հայկական կողմին բաժին հասած փաստական նվաճումներով՝ Արտաշես Բաբալյանը, այնուամենայնիվ, որպես դրական, շահավետ երեւույթ նշում է. «...երկու շաբաթ տեւող պատերազմը ունեցաւ իր բարերար հետեւանքները-ճանապարհները բացուեցին, եւ ալիւրը անարգել սկսաւ տեղափոխուել Հայաստան: Վերջ գտան բոլոր կարգի ստոր խախտումները եւ Հայաստանը տրանզիտի իրաւունք ստացաւ Վրաստանի վրայով»[2]:

Այսուհանդերձ, եթե ըստ ամենայնի ու անաչառ գնահատենք հայ-վրացական պատերազմում հայկական զորքերի ձեռք բերածը, ապա անտարակույս պիտի հաշվի առնել երկրում տիրող իրական կացությունը՝ սովը, տիֆն ու համաճարակը եւ այդ ամենին գումարած բազմահազար սովյալ ու անօթեւան գաղթականության առկայությունը: Միայն այն փաստը, որ հայկական զորքերը կարողացան հաշված օրերի ընթացքում ջախջախել ռազմական հագեցվածությամբ եւ քանակապես իրեն զգալորեն գերազանցող հակառակորդին ու Լոռվա ողջ տարածքը մաքրել վրաց զորքերից, կարելի է անվարան պնդել, որ հայկական զորքերը հայրենիքի ու բովանդակ հայության հանդեպ կատարել են մեծագույն ու անգնահատելի ծառայություն:

[1] Բժ. Ա. Բաբալեան, նշվ. աշխ., էջ 26:
[2] Նույն տեղում:

4.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄԸ, ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ

Հայ-վրացական պատերազմի ավարտից մի փոքր անց Հայաստանի իշխանությունները ձեռնամուխ են լինում լուծելու հանրապետության համար նոր, կենսական նշանակություն ունեցող խնդիրներ, որոնց իրագործմանը դարձյալ իր գործուն մասնակցությունն է բերում ռազմադաշտից նոր-նոր դուրս եկած եւ դեռեւս կռիվների ծանրությունը չթոթափած Դրոն:

Հանրապետության համար անասելի դժվարին ժամանակում Երեւանյան զորախմբի հրամանատար Դրոն կառավարության որոշումով նշանակվում է զինվորական նախարարի օգնական: Այդ նշանակումը պատահական չէր:

Նախ, երկիրը շրջապատված էր թշնամական պետություններով, որպիսիք էին Թուրքիան, Ադրբեջանը, իսկ Վրաստանի հետ պատերազմը դեռ նոր էր ավարտվել: Հանրապետության կայացման համար նախ եւ առաջ անհրաժեշտ էր կազմակերպված, մարտունակ բանակ: Բանակի կազմավորման գործում նկատելի հակասություն եւ անհանդուրժողականություն էր նկատվում ռուսական բանակի բովով անցած կադրային զինվորականության եւ ոչ կադրային ռազմիկների միջեւ, որոնք ծնունդ էին հայոց ազգային-ազատագրական պայքարի եւ սկսած 1905-1906 թթ. հայ-թուրքական (թաթարական) ընդհարումներից մինչեւ Հայաստանի Հանրապետության հռչակումը մշտապես գտնվելով մարտադաշտի ամենաշիկացած տեղերում ձեռք էին բերել մեծ փորձառություն:

Քննադատաբար վերլուծելով Հայաստանի նորաստեղծ հանրապետության կյանքում, մասնավորապես ՀՀ զինված ուժերի համակարգում տեղի ունեցող առավել արմատական նշանակություն ունեցող իրադարձությունները՝ պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը գրում է. «Բանակի հրամանատարությունը, որ վարժված էր ավանդական ցարական ռազմական դպրոցին, չափազանց դժվարությամբ էր համակերպվում այդպիսի մի հեղհեղուկ, նորահայտ պետության պահանջմունքներին: Հրամկազմը հայերեն վատ գիտեր, և՛ վարչական աշխատանքում, և՛ վարժական ծրագրերում օգտագործվում էր ռուսերենը...

Զենքի, զինամթերքի և պահեստամասերի պակասը խորացնում էր անառողջ իրադրությունը զինվորականության մեջ: Ավելին, զորակոչվածներն անընդհատ կռիվների մեջ էին գտնվում մահմեդական ապստամբների դեմ և զրկված էին որևէ խաղաղ ընդմիջումից՝ անհրաժեշտ վարժությունների կամ դրանք ավելի արդյունավետ կազմակերպելու համար: Լայնորեն տարածված էր դասալքությունը: Շատ գյուղեր թաքցնում էին իրենց երիտասարդներին կամ բացահայտորեն հրաժարվում էին կատարել նոր զորակոչերի մասին հրամանները»[1]:

ՀՀ կառավարությունը հանրապետությունում տիրող իրավիճակի թելադրանքով, նկատելի փոփոխություններ է կատարում ոչ միայն կառավարության վարչական կազմում, այլեւ բանակի հրամանատարության կազմում ու զինվորական աստիճանակազմում: Նկատի ունենալով բանակում տիրող անառողջ մթնոլորտը, ՀՀ կառավարությունը գնդապետ Քրիստափոր Ալավերդյանին բարձրացնելով գեներալ մայորի աստիճանի՝ գեներալ Հախվերդյանի փոխարեն նշանակում է զինվորական նախարար:

Զուգահեռաբար, Ռ. Հովհաննիսյանի բնութագրմամբ՝ «Կոփված պարտիզանական ղեկավար Դրոն մտցվեց կառավարության մեջ՝ որպես զինվորական նախարարի օգնական, այն հույսով, որ այդ զույգը ի վիճակի կլիներ ստեղծել ամրապինդ, կարգապահ, այլև ճկուն հրամանատարություն և նախապատրաստել բանակը այն տեղայնացված անկանոն կռիվներին, որոնց մեջ ներքաշված էր»[2]:

Ռուբենի դիպուկ բնութագրությամբ. «Հայաստանի բանակը ունէր իր արժանիքները գիտական տեսակէտից, բայց ունէր իր թերութիւնները ոգու եւ ազգային տեսակէտից»[3]:

Դրոն ցեմենտող ուժ էր այդ երկու կարգի զինվորականության ներդաշնակության կայացման գործում:

Հետաքրքիր եւ խոսուն է նաեւ Վահե Արծրունու (1919-1920 թթ. նա ԱՄՆ-ից գալիս է Փարիզ ու աշխատակցում այնտեղ գործող Ավ. Ահարոնյանի գլխավորած ՀՀ պատվիրակությանը, ապա ԱՄՆ-ի ու Անգլիայի դիվանագիտական աշխատանքներին աջակցելու նպատակով ՀՀ կառավարության հանձնարարությամբ գալիս է Հայաստան-Հ.Գ.) հետեւյալ բնութագիրը. «Մեր բարձր սպայութեան մէկ կարեւոր մասը չէր սիրում ժողովրդական խաւերից դուրս եկած, ռազմական արժանիքի հասած, բայց խմբապետ անունով ճանաչած

---

[1] Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 160-161:
[2] Նույն տեղում:
[3] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 7, 1979, էջ 331:

դասակարգին: Հակառակ այս ամէնի, սակայն, երբ հարցը վերաբերում էր խմբապետ Դրօյին, անգամ մեր բաձր սպայութիւնը, զգուշութեամբ էր նրա անունը բերան առնում...»[1]:

Արժանվոյնս դրվատելով նորաստեղծ հանրապետության բանակի կազմակերպման գործում գեներալներ Նազարբեկյանի, Սիլիկյանի, Հախվերդյանի ծառայությունները՝ Հայաստանի Հանրապետության վարչապետ Ալ.Խատիսյանը շատ բարձր է գնահատում նաեւ Դրոյի եւ Սեպուհի դերը.

«Դրօն, - գրում է Ալ. Խատիսյանը, - թէեւ յեղափոխական գործիչ մըն էր, բայց օժտուած ըլլալով զինուորական խոշոր ձիրքերով, արտակարգ քաջութեամբ եւ ողջամտութեամբ մեր զինուորական շտաբի հեղինակաւոր վարիչներու իսկ վկայութեամբ շատ մեծ եւ դրական դեր մը կատարեց Հայաստանի բանակի ստեղծման եւ կռիւներու մէջ: Դրօն շատ ողջամիտ մարդ էր եւ գիտէր գնահատել զինուորական գիտութիւնն ու արուեստը... նախապաշարումներ եւ յետին մտքեր չունէր երբեք, եւ կաշխատէր միշտ որեւէ որոշում տալէ առաջ ծանօթանալ զինուորական հեղինակութեանց կարծիքներուն: Դրօն խորապէս հաւատարիմ էր Հայաստանի Անկախութեան գաղափարին, անոր հարազատ էր հայ զինուորը, որուն հետ կապրէր միեւնոյն կեանքով եւ ձգտումներով, կը մօտենար հայ զինուորին, իբրեւ հաւասարը հաւասարին, բայց կրթուած սպաներն ալ շատ կը սիրէին աշխատել Դրօյի հետ, որովհետեւ ան կը գնահատէր զինուորական գիտութիւնն ու պատրաստութիւնը: Իր անձնական քաջութեամբ Դրօն դարձած էր հայ զինուորի կուռքը եւ այդ պատճառով՝ ընդունակ էր անոր հետ հրաշքներ գործելու: Դրօն ծայրահեղութիւններու սիրահար չէր, եւ միշտ ալ չափաւոր կարծիքներ կը պաշտպանէր: Անկասկած՝ Դրօն վարչական խոշոր դիրքեր ալ ունէր, որով ան կրնար համեմատութեան դրուիլ Արամի, Կարճիկեանի եւ Մանասեանի հետ»[2]:

Երկրորդ, Երեւանի սահմանամերձ Զանգիբասարի (Մասիսի շրջան), Ղամարլուի (Արտաշատ), Դավալուի (Արարատ), Շարուր-Նախիջեւանի շրջանների թուրք ազգաբնակչությունը շարունակում էր զինված ելույթները եւ դատելով դեպքերի զարգացումից՝ որեւէ մտադրություն չէր ցուցաբերում կամովին ենթարկվելու հանրապետության իշխանություններին:

[1] «Ալիք» բացառիկ, 1956, էջ 60:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1925, թիւ 9, էջ 109:

Երրորդ, երկրի ծայրահեղորեն քայքայված, անկայուն կացությունը պարարտ հող էր նախապատրաստել զանազան մարդկանց ու անօչինական խմբերի ի հայտ գալուն, որոնք իրենց հակապետական, թալանչիական ու քայքայիչ գործողություններով ապակայունացնում էին հանրապետության առանց այն էլ անմխիթար քաղաքական ու տնտեսական իրավիճակը: Անհրաժեշտ էր ուժեղ ու կարող ձեռք, որպեսզի սանձեր ոչ միայն թուրք բնակչության մոլեգնող ելույթները, այլեւ կարողանար կայուն քաղաքական իրավիճակ հաստատել մայրաքաղաքում ու նրա մերձակա շրջաններում եւ դրանով իսկ հող նախապատրաստել հանրապետության խաղաղ վերակառուցման համար:

Դրոն իր ժողովրդականությամբ, կազմակերպչական տաղանդով եւ նվիրվածությամբ տվյալ ժամանակահատվածի հայ նշանավոր այն եզակի գործիչներից էր, որը կարող էր մեծագույն պատասխանատվությամբ կենսագործել այդ դժվարին գործը:

«Դրօն, - գրում է Ս. Վրացյանը, - ամէն տեղ էր եւ պետական բոլոր գործերի մէջ: Նրա անմիջական մասնակցութեամբ կազմակերպուեց բանակը: Իբրեւ Հայաստանի Խորհրդի, ապա՝ Խորհրդարանի պատգամաւոր, նա զինուորական յանձնախմբում գործոն դեր էր կատարում բանակի օրէնքների եւ ելեւմուտքի օրինագծերի պատրաստութեան մէջ: Նրա առաջարկով եւ անմիջական գործակցութեամբ հիմնուեց Քանաքեռում սպայական դպրոց: Ամէն անգամ, երբ բանակում ծագում էին դժգոհութիւններ, սպարապետ Նազարբէգեանը դիմում էր նրա խորհրդին եւ աջակցութեան: Ամէն անգամ, երբ երկրի այս կամ այն մասում առաջ էին գալիս բարդութիւններ, կառավարութիւնը օգտուում էր նրա հեղինակութիւնից եւ պատրաստակամութիւնից: Բանակի լաւագոյն սպայութիւնը մտերիմ կապերով կապուած էր նրա հետ: Երկրի երիտասարդութեան շրջանակում նա մեծ հմայք էր վայելում: Բացառիկ ազդեցութիւն ունէր Դրօն եւ նախկին կամաւորների ու մարտիկների վրայ: Իր շէն ու կենցաղագէտ բնաւորութեան շնորհիւ: Նա սիրուած էր ամէն տեղ, բոլորի կողմից»[1]:

Իսկ կռիվներում դրսեւորած նրա խիզախության եւ անվախության մասին հյուսված լեգենդների իսկությունը, առանց բացառության, խոստովանել են նրա զինակիցներն ու բոլոր նրանք, ովքեր մոտիկից չփվել ու ծանոթ էին նրա գործունեությանը:

Մի ուշագրավ վկայություն բժիշկ Եր. Խաթանեսյանի հուշերից. «Մի երիտասարդ դաշնակցական, որ հմայվել էր հայ հերոսների փառքով, հարց տուաւ Դրօյին.

[1] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 299:

-Ինչպէս կարելի է երբեք վախ չունենալ, մշտապէս անվախ լինել:

Դրօն իր խորաթափանց հայեացքը սեւեռեց երիտասարդի աչքերի մէջ, ուր կարդաց անկեղծութիւն եւ հոգեկան վերացում:

-Բալիկս-ասաց Դրօն, հայրական քնքուշ հոգածութիւնով, - մարդ էակը ստեղծուել է վախի զգացումով: Արարչութիւնն այդ բնազդով օժտել է նրան՝ ինքնապաշտպանութեան համար: Դա բարիք է: Բայց չարիք է դառնում այդ, երբ փախուստ է տալիս նրանից: Որքան փախչես, այնքան պինդ կը կպչի քեզ: Համարձակ նայի՛ր նրա աչքերի մէջ, երբ ճանաչես նրան, նա զինաթափ կը լինի:

Ինձ զարմացրեց Դրօյի ինքնատիպ բացատրութիւնը, որ հոգեբանական վերլուծումներով չէ, որ գտել էր, այլ փորձառութեամբ, մանաւանդ ներիմացումով»[1]:

Զինական նախարարի օգնականի պաշտոնի ստանձնումը ավելի է մեծացնում նրա պարտականությունների եւ գործունեության շրջանակները, բնականաբար, նաեւ ծանրաբեռնվածությունն ու պատասխանատվությունը:

Առաջին աշխարհամարտի ավարտական փուլում հոկտեմբերի 30-ին կնքվում է Մուդրոսի զինադադար, որի համաձայն պարտված Թուրքիան պարտավոր էր իր զորքերը դուրս բերել նաեւ Կարսի, Սարիղամիշի, Օլթիի, Կաղզվանի եւ այլ շրջաններից:

Հայաստանի Հանրապետության առաջնահերթ ու կարեւորագույն խնդիրն իր սահմանների ընդարձակման հարցն էր, առանց որի իրագործման անհնարին էր փոքրիկ լեռնաշխարհում ապահովել տեղի բնակչության եւ հարյուր հազարավոր գաղթականության ֆիզիկական գոյությունն ու կենսամակարդակը:

Հայաստանի կառավարության համառ պահանջներից հետո Անդրկովկասի անգլիական գլխավոր հրամանատարությունը 1919 թ. ապրիլին վերջապես համաձայնվում է Թուրքական զորքերի կողմից պարպված հայկական տարածքները հանձնել հանրապետության տնօրինությանը: Հայաստանի կառավարությանը վերջապես հնարավորություն էր ընձեռվում, ի թիվս բազում այլ կենսական նշանակություն ունեցող հարցերի, լուծել նաեւ հանրապետության տարբեր շրջաններում ժամանակավորապես հանգրվանած արեւմտահայ գաղթականության տեղաբաշխման հույժ կարեւոր խնդիրը:

Այդ նույն ամսին, երբ արդեն իրականություն էր դառնում, ի հաշիվ Թուրքական զորքերի կողմից հայկական տարածքները պարպելու հետեւանքով, հանրապետության տարածքների ընդարձակումը, Զանգեզուրից իր առաջնորդած զորախմբով եւ հազարավոր արեւմտահայ գաղթականներով Արարատյան դաշտ է անցնում Անդրանիկը: Հայաստանի կառավարության հանձնարարությամբ նրան պետք է դիմավորեր ու մայրաքաղաք հրավիրեր ՀՀ ռազմական նախարարի օգնական, Երեւանյան զորախմբի հրամանատար Դրոն: ՀՀ կառավարության կողմից Անդրանիկին դիմավորելու պարտականությունը Դրոյին հանձնարարելը պատահական լինել չէր կարող: ՀՀ կառավարության անդամները հույս ունեին, որ Անդրանիկը կհարգի իր մարտական զինակցի հրավերն ու մոռանալով ՀՀ կառավարության հետ ունեցած նախկին տարաձայնությունները՝ զորամասով մուտք կգործի Երեւան: Սակայն, ինչպես հայտնի է, Դրոյին չի հաջողվում համոզել Անդրանիկին, որը հրաժարվելով Երեւանում հյուրընկալվելուց, զորամասով մեկնում է Էջմիածին: Անդրանիկի կենսագիրների մեծ մասը անդրադարձել է մայրաքաղաք չմտնելու եւ մի քանի օր անց Երեւանի շուկայում նրա եւ մայրաքաղաքի ներքին ծառայության զինվորների միջեւ տեղի ունեցած ոչ ցանկալի բախման պատմությանը:

Ակադեմիկոս Հր. Սիմոնյանը իր հեղինակած «Անդրանիկի ժամանակը» պատմագիտական աշխատությունում, որը տողերիս հեղինակի խորին համոզմամբ Անդրանիկի կյանքին ու գործունեությանը նվիրված լավագույն աշխատությունն է, նույնպես անդրադառնում է Անդրանիկի ու Դրոյի վերոհիշյալ հանդիպմանը եւ կատարում հետեւյալ եզրահանգումը. «Ողջագուրվելուց հետո Անդրանիկը եւ Դրոն կարճատեւ զրույց ունեցան: Թե ինչի մասին նրանք խոսեցին, մեզ հայտնի չէ, բայց հայտնի է, որ այդ զրույցը խորացրեց այն հակակրանքը, որ հայ ժողովրդի այդ երկու մեծ զավակները տածում էին միմյանց հանդեպ»[1]:

Այդ նույն աշխատությունում՝ բնութագրելով Անդրանիկ, Արամ Մանուկյան եւ Դրո փոխհարաբերությունը՝ Հր. Սիմոնյանը նշում է. «Անդրանիկի նկատմամբ խիստ բացասաբար էին տրամադրված հատկապես Արամ Մանուկյանը և Դրոն: Երկար տարիների մարտավարական մի շարք հարցերում նրանք գաղափարական լուրջ տարաձայնություններ ունեին Անդրանիկի հետ: Վերջինիս և նրանց հարաբերությունները խիստ լարվել էին հատկապես այն բանից հետո, երբ Անդրանիկը հեռացել էր Դաշնակցությունից, իսկ Հայաստանի

[1] «Ալիք», բացառիկ, 1956 թ., մայիսի 4, էջ 24:

[1] Սիմոնյան Հր., Անդրանիկի ժամանակը, հ. 2. էջ 564:

Հանրապետության հռչակումից հետո հրաժարվում էր համագործակցել կառավարության հետ, հայոց պետությունը համարելով «Թուրքից ստացած նվեր»[1]:

Հարկ է ընդգծել, որ Անդրանիկը Սասունի 1904 թ. ապստամբության պարտությունից հետո մեկնել էր Հայաստանից և մինչև 1-ին աշխարհամարտի բռնկումը, իսկ ավելի որոշակի, մինչեւ կամավորական շարժման ծավալումը, բնակվում էր Բուլղարիայում եւ որևէ անգամ չէր եղել ոչ միայն Հայաստանում, այլեւ Կովկասում: Արամ Մանուկյանին, որը գործում էր Վան-Վասպուրականում, Անդրանիկը հանդիպել է միայն 1907 թ. Վիեննայում կայացած ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովում: Անդրանիկը, ճիշտ է, վճռական ձայնի իրավունքով մասնակցել է Ընդհանուր ժողովին, բայց, կարելի է ասել, շատ թույլ մասնակցություն է ունեցել ժողովի աշխատանքներին ու քննարկվող հարցերի նկատմամբ հազվադեպ է արտահայտել իր տեսակետը: Ընդհանուր ժողովի նյութերի ուսումնասիրությունը միանշանակ ապացուցում է, որ Անդրանիկը Արամ Մանուկյանի հետ չի ունեցել գաղափարական որևէ վեճ ու տարաձայնություն: Իսկ Հայաստանի Հանրապետության նկատմամբ Անդրանիկի տածած բացասական վերաբերմունքն ու «Թուրքից ստացած նվեր» արտահայտությունը չպետք է միանշանակ ընդունել որպես տեղին ու արդար գնահատական:

Այս կապակցությամբ ուշադրավ են վերոհիշյալ աշխատությունում Հր. Սիմոնյանի մեջբերումները, որոնք ներկայացնում են Հայոց Ազգային Խորհրդին ուղղված Անրանիկի հեռագիրը եւ հայկական բանակային կորպուսի հրամանատար, գեներալ Նազարբեկյանի պատասխանը:

Հայտնի է, որ Անդրանիկը խիստ զայրացել ու չի ընդունել Բաթումիի պայմանագիրն ու հետեւաբար, նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը՝ որակելով այն «Թուրքից ստացած նվեր»: Այդ կապակցությամբ արտահայտելով իր բացասական վերաբերմունքը՝ Անդրանիկը հունիսի 4-ին Հայոց Ազգային Խորհրդին ու Ապահովության Խորհրդին է ներկայացնում հետեւյալ հեռագիրը. «Նկատի ունենալով, որ Դուք սեփական ձեռքով Ձեր վրա եք նետել սև ստրուկի հավերժական շղթաները և՛ ներքին խիղճը, և՛ պատիվը անամոթաբար ծախելով դրանց նկատմամբ ոտնձգություն անող անպատկառ հակառակորդին, հաղորդում եմ, որ իմ զինվորը այսուհետեւ չի կարող մնալ իր դիրքերում որպես անզեն մարտիկ և լինել

[1] Նույն տեղում, էջ 442:

լկտի հակառակորդի կողմից բազմաչարչար հայրենիքի սուրբ մարմնի պղծման լուռ վկա, ուստի իմ ջոկատը այսօր երեկոյան կամ վաղը առավոտյան կմեկնի այստեղից...»[1]:

Ի պատասխան Անդրանիկի հեռագրի՝ գեներալ Նազարբեկյանը գրում է. «Ստանալով Ձեր հեռագիրը, հայտնում եմ, որ դա ինձ չի վիրավորում, որովհետև անհաջողության գլխավոր հանցավորներից մեկը ես համարում եմ Ձեզ և Ձեր զորամասը: Ունենալով այնպիսի մեծ ուժ, ինչպիսին Ձերն է, միամիտ է պաշարման վտանգի և կորպուսի շտաբի հետ կապ չունենալու պատճառաբանությունը: Ջալալօղլիից նահանջեցիք, ունենալով Ձեր դիմաց տաճկական մի գումարտակ հետևակ զորք և որով մերկացրիք Ղարաքիլիսայի զորամասի շատ կարևոր թիևը: Նման երևույթ տեղի ունեցավ նաև Էրզրումի ու Սարիղամիշի տակ: Նախքան այդպես անթույլատրելի կերպով մեղադրեիք ձեր զեկավարին, որի անձնավորությունը և հայացքները անցյալ փորձերից շատ լավ գիտեք, պետք էր որոնել ամոթալի հաշտության իսկական հանցավորներին ու պատճառները:

Պատվավոր հաշտություն մենք ստանալ չէինք կարող այն միջոցին, երբ մեր ժողովուրդը ենթարկվում էր բռնության ու կողոպուտի, և մարտական հրամանները ինձ ենթարկվող հրամանատարների կողմից չէին կատարվում: Պատմությունը կքննի ու կդատապարտի իսկական հանցավորներին, որոնց պատճառով Հայոց Ազգային Խորհուրդը ստիպված եղավ ընդունել ստորացուցիչ հաշտությունը»[2]:

Ընդհանրացնելով, կարելի է պնդել, որ քիչ հավանական է, որ Անդրանիկի նկատմամբ խիստ բացասաբար էր տրամադրված Արամ Մանուկյանը ու առավել եւս՝ Դրոն:

Գուցեեւ հարգարժան պատմաբանին հայտնի են Դրոյի նկատմամբ Անդրանիկի տածած հակակրանքը մատնանշող ծանրակշիռ փաստեր, բայց ամենայն պատասխանատվությամբ կարելի է պնդել, որ Դրոն երբեք հակակրանք չի տածել Անդրանիկի նկատմամբ: Ավելին, ինչպես արդեն նշվել է, Դրոն Հայոց ազատամարտի նշանավոր գործիչներից առավելապես ու անվերապահորեն սիրել ու հարգել է իր իսկ արտահայտությամբ իր Մեծ ուսուցչին՝ Նիկոլ Դումանին, Աղբյուր Սերոբին եւ Անդրանիկին, որոնց նկատմամբ դրսեւորած սերն ու հարգանքը նա պահպանել է ընդմիշտ:

Ինչ խոսք, որոշակի տարաձայնություններ, նույնիսկ հայության գոյապայքարին եւ ապագային վերաբերող կենսական նշանակու-

[1] Նույն տեղում, էջ 165:
[2] Նույն տեղում, էջ 166:

թյուն ունեցող խնդիրները վճռելիս, նրանց միջեւ եղել են: Օրինակ, կարելի է մեկ անգամ եւս հիշատակել 1915 թ., երբ հայկական կամավորական զորախմբերի հրամանատարները Ազգային Բյուրոյի ներկայացուցիչներ Նիկոլ Աղբալյանի եւ Սիմոն Վրացյանի մասնակցությամբ տեղի ունեցած խորհրդակցությունում, պիտի որոշեին Ախալթի տարածքից Տարոն-Սասուն արշավելու հարցը: Նույնը վերաբերում է 1917-1918 թթ., երբ Հայոց Ազգային Խորհրդի ու հայկական բանակային կորպուսի հրամանատարության առջեւ ծառացել էր ռուսական զորքերի հետեւանքով մերկացած 720 կմ. երկարությամբ ձգվող կովկասյան ռազմաճակատը հայկական փոքրաքանակ մարտական ուժերով, եւ ըստ այդմ, Արեւմտահայաստանը պահելու կամ թողնելու խնդիրը: Տվյալ ժամանակահատվածում հայության համար կենսական կարեւորագույն նշանակություն ունեցող վերոհիշյալ խնդիրների կենսագործման վերաբերյալ նրանք պաշտպանել են հակադիր, բայց յուրովի փաստարկված տեսակետներ: Սակայն դա բոլորովին չի նշանակում, որ նրանց որդեգրած հակադիր տեսակետները վերածվել են հակասության եւ հակակրանքի:

Դրոյի կինը՝ տիկին Գայանեն, անկեղծորեն խոստովանելով Անդրանիկի նկատմամբ ամուսնու տածած մեծագույն համակրանքը, պատմում է, որ նրա ներկայությամբ որեւէ մեկը չէր համարձակվում դույզն-ինչ քննադատական խոսք ասել Անդրանիկի մասին:

«Անդրանիկը, - ասել է Դրոն, - սուրբ մարդ է, սրբապղծություն է նրա մասին վատ բան ասելը»[1]:

Հր. Սիմոնյանը վերոհիշյալ աշխատության ծանոթագրությունում անդրադառնալով Անդրանիկ-Դրո փոխհարաբերությանը՝ գրում է. «Առանձին աշխատությունում եւ արխիվներում պահպանվող մի շարք հուշերում այն կարծիքն է հայտնվում, որ եթե Դրոյի փոխարեն կառավարության կողմից մի ուրիշ պաշտոնյա գար Դավալու եւ դիմավորեր Զորավարին, ապա վերջինս կգնար Երեւան»:

Այսուհանդերձ, Հր. Սիմոնյանը՝ միաժամանակ ներկայացնելով իր տեսակետը՝ նշում է. «Մենք դժվարանում ենք հաստատ կարծիք հայտնել մանավանդ, որ այդ հանդիպմանը հետագայում չեն անդրադարձել ո՛չ Անդրանիկը եւ ո՛չ էլ Դրոն»[2]:

Այ՛ո, Անդրանիկը չի անդրադարձել, բայց հետագայում Դրոն, այնուամենայնիվ, անդրադարձել է իրենց հանդիպմանը:

[1] Տիկին Գայանեի հուշերի ձայնագրությունից:
[2] Սիմոնյան Հր., Անդրանիկի ժամանակը, հ. 2. էջ 564:

Պետք է նշել, որ Անդրանիկին ընդունելու համար ՀՀ կառավարությունը կայացրել էր հետեւյալ հատուկ որոշումը.

«ՀՀ կառավարության որոշումը գեներալ Անդրանիկին Երեւանում զինվորական պատշաճ պատիվներով ընդունելու մասին
9 ապրիլի 1919 թ.

Լսեցին. Ներքին գործերի մինիստրի զեկուցումը Անդրանիկի Երեւան ժամանելու մասին:

Որոշեցին. Ընդունել Անդրանիկին զորամասի հրամանատարին պատշաճ պատվով, իսկ նրա զորքի վերաբերմամբ խորհրդակցել զինվորական վարչության հետ, համակերպվելով զորքի տրամադրության հետ»[1]:

Համաձայն Դրոյի պատմածի, կառավարության հանձնարարությամբ ինքն է Անդրանիկին դիմավորել եւ հրավիրել է Երեւան, խոստանալով նրան տրամադրել վրացիներից բռնագրված գեներալ Ծուլուկիձեի սալոն - վագոնը: Այդ հանդիպումը բացարձակապես չի խաթարել եւ չէր կարող խաթարել միմյանց նկատմամբ նրանց ունեցած հարգալից վերաբերմունքը: Դրոյի պատմածը մատնանշում է ճիշտ հակառակը.

«Մեր հանդիպումը,- պատմել է Դրոն,- սիրալիր եղաւ, ողջագուրեցինք, որից յետոյ ես հրաւիրեցի Անդրանիկին Երեւան:

-Ես Երեւան չեմ գար, ես այդ կառաւարութիւնը չեմ ճանչնար, - պատասխանեց Անդրանիկը:

- Լաւ, եթէ չես ուզում Հայաստանի կառաւարութեան հիւրը լինել, եղիր իմ հիւրը: Քո պատուական տեղը կը գտնես Երեւանում: Երեւանի ժողովուրդը քեզ իր գլխի վրայ կընդունի, - ասացի ես:

- Ուրտեղ որ ուզես՝ կուգամ, բայց Երեւան չեմ գար, քու հիւրդ կըլլամ ուրտեղ որ ուզես, բայց ոչ Երեւանի մէջ, - կրկնեց Անդրանիկը:Պնդելն այլեւս աւելորդ էր»[2]:

Դրոն, իրոք, անկեղծորեն ցանկացել է Անդրանիկին հաշտեցնել ՀՀ կառավարության անդամների հետ եւ նրան բերել Երեւան եւ այդ ուղղությամբ նույնիսկ որոշակի քայլեր է ձեռնարկել: Անդրանիկին համոզելու եւ նրան ՀՀ կառաարության անդամների հետ հաշտեցնելու նպատակով դիմում է խմբապետ Ասլան Ստեփանյանի միջնորդությանը:

«Այդ օրերին, - պատմում է խմբապետ Ասլանը, - Դրօն ժամանեց Էջմիածին եւ նվաստիս Իգդիրից Էջմիածին կանչեց հեռախոսով: Ճանապարհեցի անմիջապէս:

[1] ՀԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 27, թ. 95:
[2] Ահարոնեան Վ., նշվ. աշխ., էջ 174:

... Անդրանիկն եկել- նստել է Էջմիածին, չի համաձայնում գալ Երեւան: Որպէս իր զինուոր, գուցէ կարողանաս համոզել:

Շատ էի կապված Անդրանիկի հետ, նա սիրում էր այդ յուշը պատմողին, այդ գիտէր Դրօն եւ դրա համար էր կանչել:

Անդրանիկը վշտացած էր նաեւ նեւստիցս, թէ ինչո՞ւ արեւմտահայ բանակի (նկատի ունի Անդրանիկի գլխավորած զորամասը, որը կազմված էր բացառապես արեւմտահայերից: Ասլանի գլխավորած զորաջոկատը, որը այդ ժամանակ տեղաբաշխված էր Ղամարլուում (Արտաշատ), մասն էր կազմում Անդրանիկի զորամասի- Հ. Գ.) մեր զօրամասն էլ չի հետեւեց իրեն, չշարժուեց դէպի Նախիջեւան, այնտեղ իրեն միանալու համար:

Ժողովրդի լեզուով ասած, սիրտն առայ, Անդրանիկը ոչ միայն մոռացաւ այդ, այլեւ համոզուեց՝ ճի՛շտ էր այն ժամանակ մեր բռնած ընթացքը:

Անդրանիկն ուզում էր Երեւան գնալ, բայց իր շրջապատում եղած վատ մարդիկ չթողեցին, պղտորում էին նրա միտքը:

-Չի լինում համոզել: Օրւայ մէջ մի քանի անգամ փոխում է իր միտքը...»[1]:

Այս ամենին գուցեեւ հարկ չկար անդրադառնալու, եթե հայ պատմագիտության մեջ բացակայեր հետեւյալ, մեղմ ասած, ոչ այնքան գովելի միտումը: Որոշ հեղինակների աշխատություններում, խոսքը բացարձակապես չի վերաբերվում վաստակաշատ պատմաբան Հր. Սիմոնյանին, նկատվում է Հայոց Ազատամարտի նշանավոր գործիչներին անհիմն կերպով միմյանց հակադրելու, որոշ գործիչների ինչ- որ մտացածին արարքներ վերագրելու ու նրաց գործունեությունը նսեմացնելու հաշվին, իրենց ներկայացրած հերոսին գովերգելու միտումը: Հայ պատմագիտության մեջ այդ միտումը վերաբերվում է նաեւ սփյուռքահայ հեղինակներին, որոնց զգալի մասը զուտ կուսակցական դիրքերից է ներկայացնում եւ արժեւորում Հայոց ազատամարտն ու նշանավոր գործիչներին: Հայրենական պատմաբաններից Հ. Կարապետյանը Դրո-Անդրանիկ փոխհարաբերության որոշ դրվագներ, մասնավորապես Երեւանի շուկայում տեղի ունեցած միջադեպը ներկայացնելիս, իր «Անդրանիկ» եռագրությունում վկայակոչում է այնպիսի փաստարկներ, որոնք իրականության հետ որեւէ կապ չունեն: Հ. Կարապետյանը գրում է, որ Անդրանիկի զինվորներից մեկին Զանգվի կամուրջն անցնելիս, կամուրջը հսկող ոստիկանը խուզարկում է եւ նրա գրպանից հանելով ապրուստի համար հենց նոր ստացած ռուբլիները, դիմում է փախուստի: Անդրանիկի զինվորն ու նրա ընկերը գողացած փողը խլելու նպատակով, վազում են ոստիկանի հետեւից եւ փորձում բռնել նրան: Կամրջի պահակության սպան պաշտպանում է փողը գողացած ոստիկանին ու օժանդակում, որպեսզի նա կարողանա ազատվել հետապնդողներից: Այդ պահին գալիս են Անդրանիկի մի քանի զինվորներ, եւ կռիվը նրանց միջեւ բորբոքվում է[1]:

Շարունակելով այդ միջադեպի պատմությունը, հեղինակը՝ որեւէ սկզբնաղբյուր չնշելով, գրում է. «Դիպվածի վայրն է գալիս Դրոն, սկզբում մի հիանյակով, որին լրացնելու է գայիս նաեւ հարյուրակը: Սրանք, բարեբախտաբար, իրենց մեջ ունենալով արեւմտահայեր, հակառակ Դրոյի հրամանի, հրաժարվում են կրակ բացել Անդրանիկի զինվորի վրա: Եւ իրարանցումը բորբոքվում է: Շտապ, լուրն ստանալուն պես, տեղից ոստնում, գալիս է Անդրանիկը մի զորախմբով եւ տեղնուտեղը զինաթափում է կրակողներին, իսկ նրանց սպաներին տանում է իր հետ Էջմիածին»[2]:

Այս միջադեպը արագորեն լուծելուց հետո Անդրանիկը, ըստ Հ.Կարապետյանի պատմածի, սպանության հանգամանքները պարզելու եւ ոստիկանների կողմից գերի վերցրած իր զինվորներին ազատելու նպատակով, գալիս է Երեւան, բայց կամրջի վրա նրան ընդառաջ են գալիս մայրաքաղաքի պարետը՝ գնդապետ Ա. Շահխաթունին եւ Երեւանի անգլիական ներկայացուցչության սպաներից մեկը, որոնք իրենց հետ բերում են «...ընդամենը մի վիրավոր զինվոր, ժխտելով մահացության փաստերը: Պարետն ու անգլիացին ասում են, թե մեղավորը Դրոն է, խոստանալով, որ իրենք կպատժեն հանցավորներին»[3]:

Այս պատմությունը, ինչպես արդեն նշվել է, իրականության հետ որեւէ առնչություն չունի:

1.Նախ, վերոհիշյալ միջադեպը տեղի է ունեցել ոչ թե Զանգվի կամուրջի վրա, այլ քաղաքային շուկայում, զատիկի նախօրեին, երբ մյուս օրերի համեմատ, շուկան ավելի մարդաշատ է եղել:

2. Դրոյի գործունեությունը ներկայացնող բոլոր փաստերը միանշանակորեն ապացուցում են, չկա որեւէ դեպք, նույնիսկ ծան-

[1] «Ալիք» բացառիկ, 1956, մայիս, էջ 79:

[1] Տե՛ս Կարապետյան Հ., Անդրանիկ, հ. 3, Երեւան, 1994, էջ 631:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

բագույն ու անելանելի, երբ հայ զինվորները հրաժարվեին կատարել նրա հրամանները:

3. Դրոն, պարզապես, չի գտնվել դեպքի վայրում: Նրա հավաստմամբ, Անդրանիկի Երեւանի վրա արշավելու մասին իրեն առավոտյան ժամը 2-ին հայտնել են Երեւանի հոգեւոր թեմի առաջնորդ Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեգյանն ու Գարեգին վարդապետ Հովսեփյանը (Խորէն արքեպիսկոպոս Մուրադբէգեան, յետագային Խորէն Առաջին Կաթողիկոս Ամենայն Հայոց, որ խեղդամահ է եղել սովետական Ջեկայի ձեռքով: Գարեգին վարդապետ Յովսեփեան, յետագային Գարեգին Առաջին Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ)[1]:

Համաձայն խմբապետ Ասլանի խոստովանության, Անդրանիկի զինվորների ու ոստիկանների բախման եւ զորախմբով Երեւանի վրա Անդրանիկի հարձակվելու մասին Դրոյին տեղեկացրել է նաեւ ինքը: Ըստ նրա վկայության, Անդրանիկին ՀՀ կառավարության անդամների հետ հաշտեցնելու իր առաքելության անհաջող ավարտից 48 ժամ անց Անդրանիկի հանձնարարությամբ իրեն ներկայացել են չորս զինվորներ եւ հանձնել «... երեք նամակ, որից մէկն ուղղուած էր Նաստիս, 2-րդը խրաբշահցի խմբապետ Մուրադին, իսկ 3-րդը՝ եզդիների պետ Ջհանգիր Բէգին.

«Նաստիս գրուած նամակի բովանդակութիւնը հետեւյալն էր.-Իմ զինուոր Ասլան, անմիջապես, զօրամասով շարժւիր դէպի Էջմիածին: Գնում ենք Երեւանի վրայ:

Ենթադրելով, որ միւս նամակներն եւս նոյն բովանդակութիւն պիտի կրեն, չյանձնեցի տէրերին:

...Առաւոտեան հանդիպեցի Դրոյի համհարզ գլխապետ (կապիտան) Մուրադեանին, յայտնեցի ստացածս նամակի բովանդակութիւնը, իսկ միւս 2 նամակները յանձնեցի նրան, Դրոյին ուղարկելու համար»[2]:

4. Անդրանիկին անշուշտ հայտնի էր հանրապետությունում Դրոյի ունեցած անառարկելի հեղինակությունը եւ բնականաբար նա չէր կարող հավատ ընծայել Շահխաթունու «... իրենք կպատժեն հանցավորներին» խոստմանը:

Հ. Կարապետյանը ձեռնպահ է մնում նշելու Երեւանի վրա Անդրանիկի հարձակվելու իրողությունը: Ամենայն հավանականությամբ այնքան էլ հաճելի չէ նկարագրել, թե ինչպես է ազգային հերոսը զորախմբով հարձակում գործում Հայաստանի մայրաքաղաքի վրա:

Դրոն, ինչպես արդեն նշվել է, անդրադարձել է այդ միջադեպի մեկնաբանմանը: Նա այդ ժամանակ Երեւանի զորախմբի հրամանատարն էր, եւ նրա պարտականությունների մեջ էր մտնում ոչ միայն մայրաքաղաքի պաշտպանությունը, այլ նաեւ ներքին կարգուկանոնի պահպանումը: Ըստ Դրոյի մեկնաբանման, դեպքը տեղի է ունեցել զատիկի նախօրեին: Այդ օրը քաղաքային շուկան մարդաշատ է եղել: Գյուղացիները տարբեր շրջաններից մայրաքաղաք էին բերել վաճառելու գյուղատնտեսական մթերքներ: Քանի որ այդ օրը քաղաքի շուկան լեցուն կլիներ գյուղերից եկածներով ու մարդաշատ, ուստի անցանկալի դեպքերի ու հնարավոր անկարգությունների տեղիք չտալու նպատակով Դրոն քաղաքի եւ շուկայի կարգուկանոնի վերահսկողությունը հանձնարարում է գնդապետ Կուռո Թարխանյանին, որը զեկուցել է. «... խառնակիչները(նկատի ունի այդ օրը շուկայում հայտնված Անդրանիկի զինվորներին-Հ. Գ.) ոտքի տակ են տուել Երեւանի շուկայում գիւղերից եկած գիւղացիների մթերքներով լիքը զամբիւղներն ու կողովները եւ Հայաստանի կառաւարութեան հասցէին լուտանքներ են թափել: Անզուսպներին զսպելու եւ կարգը վերահաստատելու համար գնդապետ Կուռո Թարխանյանը հրամայել է իր զինվորներին օդի մէջ համազարկ տալ: Ըստ երեւոյթին, գնդապետ Թարխանյանի զինուորներից մէկի անզգոյշ կրակոցից ոտքից վիրաւորուում է Անդրանիկի զինուորներից մէկը: Դրանից յետոյ անկարգություն անող զինվորները փախչում են Էջմիածին...»[1]:

Այս նույն միջադեպին իր «Անդրանիկի ժամանակը» աշխատությունում անդրադարձել է նաեւ Հր. Սիմոնյանը: Նա նշում է , որ միջադեպը տեղի է ունեցել քաղաքային շուկայում, Երեւանի կայազորի եւ Անդրանիկի մի խումբ զինվորների միջեւ, որն ի վերջո վերածվել է ձեռնամարտի: Հեղինակն ընդունում է, որ կատարվածը Անդրանիկին ներկայացնում են չափազանցրած, իբր թե նրա զինվորներից մի քանիսը սպանվել են, եւ անհավասար կռիվը դեռ շարունակվում է: Նրա կարծիքով, հենց դեպքերը չափազանցված տեսքով ներկայացնելը «.Անդրանիկին հանեց հավասարակշռությունից» եւ նրան մղեց արշավելու Երեւանի վրա[2]:

---

[1] Սիարոնեան Վ., նշվ. աշխ., էջ 175:
[2] «Ալիք» բացառիկ, 1956, էջ 79:

---

[1] Սիարոնեան Վ., նշվ. աշխ., էջ 175:
[2] Սիմոնյան Հր., Անդրանիկի ժամանակը, հ. 2. էջ 564:

Այս տեսակետը համահունչ է Վարդգես Ահարոնյանի պատմածին, որը նրան գրավոր հայտնել է այդ դեպքի մասնակից, Անդրանիկի զինվոր Լեւոն Պարոնյանը[1]:

Բնական է, որ ով էլ փորձեր հարձակում գործել մայրաքաղաքի վրա, Դրոյի պարտականությունն էր, անհապաղ համապատասխան քայլեր ձեռնարկել եւ թույլ չտալ, որպեսզի որեւէ մեկը ներխուժեր Երեւան: Մայրաքաղաքը պաշտպանելու նպատակով անհրաժեշտ քայլեր ձեռնարկելուց հետո նա այդ եղբայրասպան ու միաժամանակ չափազանց անցանկալի եւ անպատվաբեր բախումը կանխելու նպատակով Անդրանիկին է դիմում հետեւյալ խնդրանքով ու զգուշացումով.

«Անդրանիկ,

Մենք Սասունի քո յեղափոխական կռիւներով, քո յեղափոխական շնչով դաստիարակուած սերունդն ենք: Այսօր, հիմնուած մի քանի հարբածների անճիշտ, յերիուրածոյ լուրերի վրայ, դու գալիս ես Երեւանի վրայ:

Ես խնդրում եմ իմ պաշտած հայդուկապետին, որ նա սեւ արատ չբերի իր յեղափոխական անցեալին եւ հրաժարուի Երեւանի դէմ քայլեր անելուց:

Միաժամանակ, իբրեւ Երեւանի նահանգի հրամանատար, պարտք եմ զգում զգուշացնել քեզ, որ եթէ չհրաժարուես քո մտադրութիւնից, դու ինձ կը ստիպես դիմել զէնքի եւ կարող եմ վստահացնել քեզ, որ Երեւան չես կարող մտնել: Այդ ուղղութեամբ հարկ եղած հրամանները տրուած են: Աւելորդ է փորձ անել, նպատակիդ չես հասնի...»[2]:

Այս գրությունը յուրօրինակ հավաստումն է եւ խոսուն վկայությունը Անդրանիկի նկատմամբ Դրոյի տածած հարգանքի:

Բարեբախտաբար, արյունալի բախումը հաջողվում է կանխել: Այդ միջադեպի մասին պատմող հեղինակները տարբեր կերպ են ներկայացնում եւ արժեւորում ընդհարումը կանխելու գործում վճռական նշանակություն ունեցող հանգամանքները: Համաձայն Դրոյի պնդման, ընդհարումը կանխելու գործում կարեւոր նշանակություն է ունեցել նաեւ իր գրությունը:

Անդրանիկի կենսագիրներից ոմանք, ներկայացնելով այս միջադեպը, չեն նշում Դրոյի պատմածի հետեւյալ վերջաբանը. «Այս երկտողը տուի մեր հին յեղափոխական ընկերներից քեաչալ Համբոյին, որ տանի: Համբոն գնաց եկաւ եւ պատմեց, որ Անդրանիկը կարդացել է իմ երկտողը, մի մտրակ է քաշել Համբոյին, նամակս պատռել է եւ ասել. «Ես Դերոյի «մասսաբը». ան խենթ է, ան կընէ, ես անոր հետ գործ չունիմ, ես Երեւանի կառաւարութեան հետ գործ ունիմ»:

Շատ չանցած նստել է ձին եւ իր զօրագունդը առած վերադարձել է Էջմիածին: Յետագայում իմացայ, որ վերադարձին Փարաքարում մտրակի տակ է առել իր խմբապետներին, որոնք սուտ տեղեկութիւններ էին հաղորդել իրեն...»[1]:

Դժվար է ասել, թե ինչ ազդեցություն է գործել Դրոյի գրությունը, բայց մի փաստ անժխտելի է. եթե Անդրանիկը, այնուամենայնիվ, փորձեր հարձակվել Երեւանի վրա, ապա Դրոն անկասկած կկատարեր «կարող եմ վստահացնել քեզ, որ Երեւան չես կարող մտնել» խոստումը եւ այստեղ կարեւորն այն է, որ հաջողվեց կանխել ընդհարումը, որը Հր. Սիմոնյանի գնահատմամբ. «... կլիներ հայոց պատմության խայտառակ էջերից մեկը...»[2]:

Այս առումով, կարելի է նշել, որ միանգամայն տեղին է ու անաչառ այդ միջադեպին տված Ս. Վրացյանի հետեւյալ գնահատականը. «Ուրիշ պայմաններում արիւնահեղութիւնը անխուսափելի կը դառնար՝ անջնջելի արատ թոնելով նորածնունդ պետութեան անուան վրայ: Առաւելապէս Դրոյի աչալրջութեան, բացառիկ վարելակերպին պէտք է վերագրել, որ Անդրանիկը հաւաքեց մայրաքաղաքի գլխին արուած զինուորները եւ քաշուեց-հեռացաւ Էջմիածին»[3]:

1919 թ. Հայաստանի Հանրապետության կյանքում նշանավորել է մի շարք կարեւոր իրադարձություններով: Այդ նույն տարում Երեւանում տեղի է ունենում Հ. Յ. Դաշնակցության 9-րդ Ընդհանուր ժողովը, որը Սիմոն Վրացյանի գնահատմամբ՝ «...տեղի ունեցավ յոյզերի եւ յոյսերի բարձր մթնոլորտում՝ որոշելով հայկական պետության ապագայ ուղիները»:

Խիստ թերի կլինի. եթե Դրոյին բնութագրենք ու նրան անվանենք սոսկ ռազմական գործիչ: Նա այդ ժամանակ Հայաստանի Խորհրդարանի անդամ էր: Այդ նույն տարում Հայաստան Հանրապետությունը վերաբաժանվել էր նոր վարչական միավորների, իսկ Երեւանին տրվել էր հատուկ կարգավիճակ՝ հանրապետական վարչակազմով: Դրոն ստանձնել էր առաձնակի զորամասի հրամանա-

[1] Ահարոնեան Վ., նշվ. աշխ., էջ 172:
[2] Նույն տեղում, էջ 176-177:

[1] Նույն տեղում:
[2] Սիմոնյան Հր., Անդրանիկի ժամանակը, հ. 2. էջ 574:
[3] Վրացեան Ս., Մորկածին Դրոն, էջ 113:

տարությունը, իսկ նրա հրամանատարական նստավայրն ու շտաբը գտնվում էին մայրաքաղաք Երեւանում:

Նա վճռական ձայնի իրավունքով մասնակցել է ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովին, ուր ի թիվս մի շարք հարցերի, քննարկվել են Հայաստանի Հանրապետության ապագա վարչակազմին ու կուսակցության նոր կանոնադրությանը վերաբերող հարցերը, որոնց վերաբերյալ զեկուցումներով հանդես են եկել Ռուբեն Տեր Մինասյանն ու Սիմոն Վրացյանը:

Ըստ Ռուբենի տեսակետի՝ Հայաստանը դեռեւս հասունացած չէր ազատ ժողովրդավարության ու Հ.Յ. Դաշնակցության ապակենտրոն գործունեությունը պիտի փոխարինվի կենտրոնացման: ՀՅԴ Բյուրոն պիտի դառնա Կենտրոնական կոմիտե, որին պիտի ենթարկվեն բոլոր կենտրոնական կոմիտեները, ինչպես նաեւ Խորհրդարանի ՀՅԴ ֆրակցիան[1]:

Ռուբեն Տեր Մինասյանը ձգտում էր Հայաստանի Հանրապետությունում հաստատել ՀՅԴ կուսակցության դիկտատուրան, ինչը իրականացվեց 1920 թ., բոլշեւիկների մայիսյան խռովությունից հետո, երբ Ալ. Խատիսյանի կառավարությանը փոխարինեց Համո Օհանջանյանի գլխավորած կառավարությունը, որի կազմում նա ղեկավարում էր միաժամանակ պաշտպանության ու ներքին գործերի նախարարությունները:

Ըստ Ս. Վրացյանի տեսակետի, «...Հայաստանի պետականության պայմաններում այլեւս օգտակար չէր կուսակցության բացարձակ ապակեդրոնացումը եւ Բյուրոն եւ Կեդրոնական Կոմիտեները պէտք է օժտուէին աւելի լայն վարչական իրավունքներով, բայց պետութիւնը պէտք է լինէր պետութիւն՝ ժողովրդավար խորհրդարանով եւ խորհրդարանի առջեւ պատասխանատու կառավարությամբ...»[2]:

Եթե զուտ ժողովրդավարության տեսանկյունից գնահատենք երկու տեսակետները, ապա պիտի ասել, որ Ս. Վրացյանի տեսակետն անկասկած, ավելի է ընդունելի: Ավելին, հակառակ Ռուբենի, նա գտնում էր, որ «Կուսակցութիւնը պէտք է մնար նախաձեռնողի, հսկողի, հակակշռողի սահմաններում խորհրդարանական իրավակարգի սկզբունքներով: Ուրիշ խօսքով՝ Հայաստանի Հանրապետութեան վարչաձեւը պէտք է լինէր իրաւական պետութիւն»[3]:

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 120:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 121:

Դրոն դեմ էր ՀՅԴ կուսակցության դիկտատուրան Հայաստանում հաստատելու Ռուբենի առաջարկած տեսակետին: Նրա կարծիքով «...իբրեւ գործի մարդ,-գրում է Ս. Վրացեանը,-նա շատ լաւ էր ըմբռնել հայկական միջավայրի պահանջները, քաջ ծանօթ էր հայ ժողովրդի հոգեբանութեանը...Նա իրաւամբ համոզված էր, եթե Ռոստոմը ողջ լիներ, պիտի պաշտպանէր «ապակենտրոնացումը», որին «Ռոստոմիզմ» էր կոչում»[1]:

Այդ նույն ժամանակահատվածում, ինչպես արդեն նշվել է, Հայաստանի Հանրապետության կյանքում տեղի էին ունենում նշանակալի տեղաշարժեր, որոնցից կարեւորագույնը հանրապետության սահմանների ընդարձակման խնդիրն էր:

Անգլիական իշխանությունների անդրկովկասյան դիվանագիտական ներկայացուցիչների մշակած ծրագրի համաձայն նախատեսվում էր գրավյալ տարածքներում հայկական իշխանությունների հաստատումը սկսել գարնան սկզբներին:

«Պէտք էր, - գրում է Ալ. Խատիսյանը, - իրագործել որոշումը: Եւ ահա այդ նպատակին համար նշանակուեցաւ գնդապետ Թեմպըրլէյը, որ անգլիական ներկայացուցիչն էր Երեւանի մէջ: Անկէ զատ Թիֆլիսէն եկաւ Ալեքսանդրապոլ նաեւ զօր. Պիչը: Մարտ ամսու սկիզբը, գիշերուայ ժամը 12-ին, ես հանդիպում ունեցայ անոր հետ՝ ինձ հետ ունենալով զօրավարներ Յովսէփեանը, Փիրումեանը եւ Դրօն: Խորհրդակցութեան մասնակցեցաւ նաեւ անգլիացի զօր. Տեւին: Որոշուեցաւ, որ մեր զօրամասերը պիտի շարժին դէպի Կարս երկու ուղղութեամբ: Մէկը երկաթուղային գիծով, միւսը՝ խճուղիով: Հայ զինուորների թիւը պիտի ըլլար 1200, իսկ անգլիական զինուորները պիտի ըլլային սկիզբը՝ 1500 եւ ապա 300»[2]:

Համապատասխան նախապատրաստական աշխատանքներ իրականացնելուց հետո՝ Հայաստանի կառավարության ներկայացուցիչները վարչապետ Ալ. Խատիսյանի գլխավորությամբ անգլիական եւ հայկական զորամասերի ուղեկցությամբ ուղեւորվում են Ալեքսանդրապոլից Կարս, Սարիղամիշ, Մերդենեկ, Արդահան, ապա նաեւ Նախիջեւան եւ Շարուր:

Մահմեդականների կողմից Հայաստանի կառավարության անդամների ընդունելությունը, որը հավասարազոր էր հայկական իշխանությունների ճանաչմանը, երբեմն այնքան էլ սիրալիր չի եղել: Մի շարք շրջաններում Շուրաների (գաղտնի կառավարու-

[1] Նույն տեղում, էջ 122:
[2] Խատիսեան Ալ., նշվ. աշխ., էջ 162:

թյուն) ներկայացուցիչները բնակչության աջակցությամբ փորձել են խոչընդոտներ հարուցել եւ չհնազանդվել հայկական իշխանություններին, բայց սկզբնական շրջանում մահմեդականների դիմադրությունը եղել է թույլ եւ ոչ այնքան կազմակերպված: Շուրանների ձեռնարկած ընդվզումները առանց մեծ դժվարությունների արագորեն հաղթահարվել է անգլիացի եւ հայ զինական ուժերի կողմից:

Ալ. Խատիսյանի կառավարության խնամատարության նախարար Արտ. Բաբալյանը, անդրադառնալով այդ օրերին հանրապետությունում ծավալվող դեպքերին, գրում է. «Հայ-վրացական պատերազմից յետոյ անգլիական իշխանությունը քշեց տաճիկներին Կարսի նահանգից, ձերբակալեց թիւրքական Շուրան եւ մեր իշխանությունը հաստատեց նահանգում: Յաղթական դաշնակիցները մէկ հրամանով մաքրել տուին նահանգի մեծագոյն մասը եւ սարսափահար տաճիկները նահանջեցին դէպի Էրզրում»[1]:

Դաշնակիցների աջակցությամբ Հայաստանի Հանրապետության սահմանների ընդարձակման գործընթացը իրականացվում էր բավական արագ եւ արդյունավետ: Բայց դա միայն գործի սկիզբն էր, հիմնական գործողությունները ծավալվելու էին մի փոքր ավելի ուշ:

Զափազանց կարեւոր էր հանրապետության թուրքաբնակ բնակավայրերում խաղաղություն հաստատելու, թուրքական զորքերի կողմից դեռեւս նոր-նոր պարպած շրջանների, որոնց թվում՝ ապստամբ ամենավտանգավոր օջախներից մեկի՝ Շարուր-Նախիջեւանի, հնազանդեցման եւ վերամիավորման հարցը:

Իրենց զորամիավորումները հարկադրաբար դուրս բերելով Հայաստանի գրավյալ մի շարք տարածքներից՝ թուրք իշխանությունները երբեք չէին կարող համակերպվել Հայոց անկախ պետականության գոյության իրողության հետ եւ ձեռնարկում էին հնարավոր ամեն ինչ՝ Հայաստանի Հանրապետությունը ներսից քայքայելու եւ այն կործանելու ուղղությամբ:

Հայ-վրացական պատերազմն էլ նրանց գործադրած մեքենայությունների ցայտուն դրսեւորումներից մեկն է:

«Թուրքերը, - վկայում է հայկական 8-րդ գնդի 3-րդ վաշտի հրամանատարի տեղակալ Հովհ. Սահակյանը, - Կովկասը պարպելէ եւ 1914-ի սահմանները քաշուելէ առաջ, Իգդիրէն Կաղզուան, մինչեւ Կարս տարածութեան վրայ գտնուող քիւրտ-թաթար եւ թուրք ժողովրդի մեծերէն կազմուած ժողով մը ունեցած են Շուրա անուանով գաղտնի կառավարութիւն մը հաստատած, որուն նպատակն է եղած չճանչնալ հայկական օրէնք կառավարութիւն: Ամէն շրջանի մէջ ձգած են գաղտնի ծպտեալ սպաներ, զէնք, փամփուշտ եւն...»[1]:

Հայաստանի Հանրապետության տարածքում թուրքերն ստեղծել էին երկու Շուրա (գաղտնի կառավարություն).

1. Արեւմտյան Կովկասի կառավարությունը (Շուրա) պետք է իրականացներ Կարսի, Սարիղամիշի, Կաղզվանի, Արգահանի շրջանների ղեկավարումը:

2. Արեւելյան Կովկասի կամ Արաքսյան Հանրապետություն (Շուրա), որի կազմում էին ընդգրկված Շարուր-Նախիջեւանի, Զանգեզուրի, Վեդիբասարի, Սուրմալուի շրջանները Նախիջեւան կենտրոնով:

Այս «Հանրապետությունները», բաժանվելով ավելի փոքր միավորումների՝ գավառների, ունեին նաեւ թուրք սպաների կողմից ղեկավարվող, շատ լավ, անգամ թնդանոթներով ու գնդացիրներով զինված զորաջոկատներ[2]:

Հայաստանի տարածքում ստեղծված գաղտնի կառավարություններին՝ Շուրաներին ֆինանսավորում, զինում եւ ղեկավարում էր ոչ միայն Թուրքիան, այլեւ՝ Ադրբեջանը: Եվ այդ ամենը իզուր չէր, ժամանակը ակնհայտորեն ապացուցեց, որ թուրքերի կողմից կյանքի կոչված այդ «կառավարությունների» գործունեության արդյունքները բավական արդասաբեր էին: Արհեստավարժ սպաների եւ հատուկ գործակալների կողմից ղեկավարվող մահմեդականությունը առաջին իսկ հնարավորության դեպքում ապստամբում էր եւ իրենց վայրագ ու թալանչիական գործողություններով ապակայունացնելով հանրապետությունում տիրող իրավիճակը՝ խոչընդոտում Հայաստանի իշխանություններին զբաղվելու երկրի տնտեսության զարգացմանը, սահմանների ընդարձակմանը եւ հզոր բանակի ստեղծմանը նպատակաուղղված խնդիրների լուծմամբ:

Անասելի բարդ եւ դժվարին խնդիր էր ծառացած հանրապետության կառավարության առջեւ: Մի՞թե հակահայ թույնով ներարկված մահմեդականները, որոնք փաստորեն երբեւէ չէին առնչվել հայկական իշխանությունների հետ, հոժարակամ կհամաձայնեին առանց դիմադրության ենթարկվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն ու առավել եւս կհամաձայնեին Հայոց

[1] Բժ. Ա. Բաբալեան, նշվ. աշխ., էջ 37:

[1] Մատենաշար «Ռազմիկ», 1937, թիւ 1, «Էջեր մեր ազատագրութեան պատմութիւնից», գրեց Յ. Սահակեան, էջ 18:
[2] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 282:

անկախ հանրապետության բաղկացուցիչ մասը կազմելու գաղափարին: Ինչպիսի՞ անհրաժեշտ քայլեր պետք է ձեռնարկեին հանրապետության իշխանությունները երկիրը վերակառուցելու եւ կայուն խաղաղություն հաստատելու ուղղությամբ:

Հանրապետության մահմեդական բնակչության նկատմամբ կիրառվելիք քաղաքականության հարցում Հայաստանի ղեկավար շրջաններում այդ օրերին տիրապետում էր երկու տեսակետ:

Տեսակետներից մեկի համաձայն, որի ջերմեռանդ պաշտպանն ու առաջադրողը Դրոն էր, անհրաժեշտ էր մահմեդական բնակավայրերի, առաջին հերթին Շարուր-Նախիջեւան, Վեդիբասարի, Զանգիբասարի, Ղամարլուի, Դավալուի հարցը լուծել զենքի միջոցով: Նրա համոզմամբ, այդ շրջանների հարցը խաղաղ ճանապարհով լուծելու համար որեւէ երաշխիք չկար եւ չէր կարող լինել, մահմեդականները կարող էին կեղծ խոստումներով միայն ժամանակավորապես պահպանել խաղաղ իրավիճակը: Նա իր մարտական հարուստ կենսափորձով համոզվել էր, իսկ այդ բնակավայրերի «խաղաղեցման» գլխավոր «մեղավորներից» մեկը, անցյալ ժամանակներում, նաեւ ինքն էր, որ մահմեդականները երբեւէ չէին հնազանդվելու Հայաստանի իշխանություններին եւ առաջին իսկ հնարավորության դեպքում անպայմանորեն կդիմեն զենքի ու կապստամբեն: Առաջնորդվելով այդ իրողությամբ՝ նա պնդում էր եւ պահանջում, որ եթե կառավարությունը ձգտում է, որպեսզի հիշյալ շրջանները մաս կազմեն Հայաստանի Հանրապետությանը, ապա անհրաժեշտորեն, քանի դեռ նրանք չեն հասցրել ինչպես հարկն է կազմակերպվել ու մարտական ուժեր կուտակել, մեկընդմիշտ լուծել մահմեդականների հարցը: Իսկ մահմեդականները արդեն սկսել էին պատրաստվել:

Հուլիսի 17-ին Երեւանյան զորախմբի հրամանատար Դրոն Երեւան է ուղարկում հետեւյալ հեռագիրը.

«... Ագուլիսի կոմիսարը հաստատում է այնտեղ եկող ադրբեջանական սպաների եւ ասկյարների մասին: Նորաշենից հաղորդում են, որ այնտեղ եկող ադրբեջանական սպաներն ու ասկյարները զբաղվում են մուսուլմանների ուսուցմամբ եւ Հայաստանի Հանրապետության իշխանությունը չճանաչելու քարոզչությամբ[1]:

Թուրքաբնակ շրջանների խնդիրը խաղաղ միջոցներով լուծելու տեսակետի ամենաջերմեռանդ կողմնակից, Հայաստանի Հանրապետության վարչապետ Ալ. Խատիսյանը հետագայում խոստովանում է. «Թրքական պրոպագանդի եւ պայքարի գլխաւոր օճախներն էին Բէօյիք Վերին, Զանգիբասարը, Զարուշատը, Աղբաբան, Գարա-Գոյանլիի ձորը, Հաճի Սամլուն (ներկայիս ԼՂՀ Քարավաճառի շրջանը-Հ.Գ.), Օրդուբադը եւ շարք մը ուրիշ վայրեր, ուր թրքական սպաներու ղեկավարութեամբ կանոնաւոր դիմադրութիւն էր կազմակերպուած Հայաստանի Հանրապետեան դէմ: Սպաներ կու գային Էրզրումէն եւ ապա Անկարայէն, դրամը կու գար Պաքուէն»[1]:

Դրոյի կարծիքով, մինչեւ Շարուր-Նախիջեւանի գավառների նկատմամբ վճռական գործողություններ ծավալելը, նախ եւ առաջ պետք է լուծվեր մայրաքաղաքից դեպի Սուրմալու, Շարուր-Նախիջեւան ձգվող շրջանների՝ Զանգիբասարի, Վեդիբասարի, Ղամարլուի եւ Դավալուի մահմեդականների հարցը, որոնք շարունակաբար կրկնվող զինված ելույթներով ու ավազակային գործողություններով անջրպետում ու մեկուսացնում էին հիշյալ գավառները Հանրապետության մայրաքաղաքից ու մյուս շրջաններից[2]:

Մյուս հիմնական տեսակետի համաձայն, որի գլխավոր պաշտպանն էր ՀՀ վարչապետ Ալ. Խատիսյանն ու նրա գլխավորած կառավարությունը, թուրքաբնակ շրջանների եւ մասնավորապես Շարուր-Նախիջեւանի գավառների հարցը պետք է լուծվեր բացառապես խաղաղ ճանապարհով: Հարկ է նշել, որ Հանրապետության կառավարության այդ տեսակետը պայմանավորված էր ոչ միայն երկրի դժվարագույն կացությամբ, այլեւ տվյալ հարցի նկատմամբ դաշնակիցների, առավելապես անգլիական իշխանության ներկայացուցիչների որդեգրած քաղաքականությամբ: Անգլիացիները, նույնը նաեւ նրա դաշնակից ֆրանսիացիները, Հայաստանի իշխանություններին ոչ միայն պարտադրում էին մահմեդականության նկատմամբ իրենց պաշտպանած դիրքորոշումը, այլեւ հետեւողականորեն առաջ էին քաշում Անդրկովկասի վարչատարածքային բաժանման խնդիրները:

Հայաստանի եւ Վրաստանի կառավարությունների նախագահներին հասցեագրված ուղերձում (1919 թ. ապրիլի 14) Անդրկովկասում անգլիական զորքերի հրամանատար գեներալ Թոմսոնը նշում է.

«... 1. Ախալքալաքի գավառը պետք է լինի Վրաստանի ենթակայության տակ:

2. Դեպի Քուռ գետի ուղղությամբ ձգվող Արդահան գավառի մի մասը, ներառյալ Արդահան քաղաքը, նույնպես պետք է հանձնվի Վրաստանի ենթակայությանը:

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 254, թ. 133:

[1] Խատիսեան Ալ., նշվ. աշխ., էջ 154:

[2] Տե՛ս ՀՀ ԲԿԱ, պ. 15, թծ. 10, գ. 15/3:

3. Բորչալու գավառի մի մասը ջրբաժանից սկսած մինչեւ Սեւքար, ներառյալ գյուղերը եւ Ալավերդի կայարանը, պետք է գտնվի Վրաստանի ենթակայության տակ:

4. Բորչալու գավառի մյուս մասը, հարավից մինչեւ ջրբաժան ներառյալ Սանահին կայարան, պետք է լինի Հայաստանի ենթակայությանը:

5. Կարսի եւ Կաղզվանի գավառները Հայաստանի ենթակայությանը:

6. Նախիջեւանի գավառը սահմանափակված հյուսիսային եւ հարավային ջրբաժաններով, ընդհուպ մինչեւ Ջուլֆա պետք է լինի Հայաստանի ենթակայության ներքո:

7. Օլթիի գավառը եւ Արդահանի գավառի մի մասը պետք է ենթարկվի Բաթումիում գտնվող բրիտանական զինվորական նահանգապետին...»[1]:

Նախիջեւանի հարցում դաշնակիցների եւ մասնավորապես անգլիացիների տեսակետը միանշանակ էր. այն պետք է մաս կազմեր Հայաստանի Հանրապետության, եւ հարցը պետք է կարգավորվեր միմիայն խաղաղ միջոցներով: Անգլիացիների կարծիքով, ոչ միայն Նախիջեւանի, այլ նաեւ բոլոր այն տարածքների հարցը, որոնք մտնելու էին Հայաստանի Հանրապետության կազմում, պետք է լուծվեր խաղաղ միջոցներով: Նրանց ներկայացուցիչների հավաստմամբ վիճելի հարցերը պետք է հարթվեին առանց արյունահեղության, իսկ անհրաժեշտության դեպքում անգլիական զինական ուժի օգնությամբ:

Հայաստանի թուրքաբնակ շրջանների հարցը խաղաղ ճանապարհով լուծելու տեսակետը պաշտպանում էին ոչ միայն դաշնակիցներն ու անգլիացիները, այլեւ հարեւան նորաստեղծ Ադրբեջանի Հանրապետությունը, որի կառավարությունը Հայաստանում եւ Վրաստանում Անգլիայի դիվանագիտական ներկայացուցիչ գեներալ Թոմսոնի միջոցով խոստանում էր ներգործել Շարուր-Դարալագյազի, Սուրմալուի եւ Նախիջեւանի մահմեդականության վրա՝ Հայաստանի իշխանությունը ճանաչելու գործում:

Իհարկե, նման քաղաքականությամբ առաջնորդվելու համար ադրբեջանական իշխանություններն անկասկած հետապնդում էին իրենց որոշակի նպատակները:

1919 թ. մայիսի 8-ին թվագրված զեկուցագրում Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը հանրապետության արտաքին գործոց նախարարին ուղղված զեկուցագրում նշում է.

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 191, թ. 34:

«Գեներալ Թոմսոնի խոսքերով Ֆատալի Խան-Խոյսկին (Ադրբեջանի Հանրապետության վարչապետը - Հ.Գ.) խոստանում է իր ամբողջական ազդեցությունը գործել Նախիջեւանի, Շարուր-Դարալագյազի եւ Սուրմալուի գավառի մուսուլմանների վրա՝ ճանաչելու Հայաստանի կառավարության հեղինակությունը: Այդ պատճառով գեներալ Թոմսոնը ուզում է համանման քաղաքականություն տեսնել Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչների կողմից Արցախում:

Փախստականները կվերադառնան Նախիջեւան եւ Հայաստանի մյուս շրջանները միայն այն ժամանակ, երբ Արցախում հայերը կհանդարտվեն ու այդ առնչությամբ գեներալ Թոմսոնը կհեռագրի գեներալ Դեւիին»[1]:

Առաջին հայացքից կարող է թվալ, որ վիճելի հարցերը խաղաղ միջոցներով կարգավորելու վերաբերյալ ադրբեջանական իշխանությունների տեսակետը, կարելի է ասել, մեղմ է, քանի որ խոսվում է սոսկ տարածքների փոխանակման եւ այնտեղ օրինականություն հաստատելու մասին: Բայց այդ ժամանակաշրջանում Ադրբեջանը իրականում վարում էր երկակի քաղաքականություն. մի կողմից՝ անգլիացիների միջոցով փորձում էր սիրաշահել Հայաստանի իշխանություններին, իսկ մյուս կողմից՝ Հայաստանում իր դիվանագիտական ներկայացուցիչ Թեքինսկու միջոցով ֆինանսավորում ու կազմակերպում էր մահմեդականությանը եւ ուժեր կուտակում Արցախի, ինչպես նաեւ Զանգեզուրի հարցը զենքի միջոցով վերջնականապես լուծելու համար:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը անգլիացիների թելադրանքով եւ զորակցությամբ գրավյալ տարածքների (Կարս, Կաղզվան, Սուրմալու, Արդահանի մի մասը եւ այլն) եւ մասնավորապես Շարուր-Նախիջեւանի մահմեդականության նկատմամբ կիրառում է ճիշտ եւ ճիշտ Դրոյի առաջարկությանը հակադիր քաղաքականություն:

«Մենք,-գրում է ՀՀ վարչապետ Ալ. Խատիսյանը,-կը շտապէինք գրաւել Նախիջեւանը օր առաջ՝ վախենալով որ անգլիական զօրքերու տրամադրութիւնը կրնայ փոխվիլ: Միայն Դրօն էր, որ անհրաժեշտ կը գտնէր նախ մեր զինուորական ուժերով գրաւել բոլոր մահմետական գիւղերը, որոնք կը գտնուէին Նախիջեւանի ճանապարհի վրայ՝ սկսած Դաւալուէն եւ Գայլի-Դրունքէն: Բայց այդ

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 355, թ. 34:

եղանակը երկար ժամանակ կը պահանջէր: Կառավարութիւնը խնդիրը բազմակողմանի քննութեան ենթարկելէ ետք գերադասեց նախ տէր դառնալ Նախիջեւանին քաղաքական միջոցներով՝ օգտվելով անգլիական հովանաւորութենէն, եւ յետոյ միայն աստիճանաբար մտցնել մեր զօրամասերը: Մեր նպատակն էր ցոյց տալ Նախիջեւանի մահմեդական բնակչութեան, որ Հայաստանի Հանրապետութիւնը խաղաղ ձգտումներ ունի»[1]:

Շարուր-Նախիջեւանի խնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու՝ վարչապետ Ալ. Խատիսյանի տրամադրվածությունը որոշակիորեն պայմանավորված էր նաեւ այն հանգամանքով, որ հայկական զորքերին հաջողվել էր առանց որեւէ ռազմական միջոցների գործադրման մուտք գործել Կարսի, Կաղզվանի, Արդահանի եւ մյուս շրջանները: Այսինքն, այդ շրջաններում հայկական իշխանությունը հաստատվել էր խաղաղ ճանապարհով: Հանրապետությունում տիրող իրական կացությունը թելադրում էր, որ տվյալ ժամանակահատվածում ամենակարեւոր խնդիրներից մեկը, եթե ոչ ամենակարեւորը, խաղաղության հաստատումն ու ամրապնդումն էր, մանավանդ որ բանակը թույլ, անբավարար պատրաստվածություն ունենալու պատճառով դեռեւս ի զորու չէր լուծելու մարտական լուրջ խնդիրներ:

Վաշինգտոնում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին հասցեագրած ուղերձում(18 նոյեմբերի 1919 թ.) Ալ. Խատիսյանը՝ ներկայացնելով ՀՀ ծանրագույն կացությունը, գրում է «Ինչպէս Ձէզ յայտնի է, տաճիկների Կովկասեան սահմանները անցնելու օրից մինչեւ այսօր մեր զինուորական ոյժերը շարունակ լարուած դրութեան մէջ են եւ մեր խեղճ զինուորները կատարում են իրանց պարտականութիւնը սոված, տկլոր եւ ոտաբոբիկ»[2]:

Ճիշտ է, Հայաստանը դեռեւս գնվում էր ոչ բարվոք վիճակում, եւ կային մի շարք դժվար լուծելի խնդիրներ, բայց միաժամանակ շատ կարեւոր էր չթուլացնել զգոնությունը եւ մոռանալ հայկական իշխանությունների նկատմամբ մահմեդականության իրական վերաբերմունքն ու տրամադրվածությունը:

Շարուր-Նախիջեւանի խնդրի լուծումը, ինչը հստակորեն ապացուցեց ժամանակը, ի տարբերություն Կարսի, Կաղզվանի, Արդահանի եւ մյուս շրջանների, կապված էր առավել բարդ ու դժվարին գործոնների հետ:

[1] Խատիսեան Ալ., նշվ. աշխ., էջ 162:
[2] ՀՅԴ ԿԱ, թղ. 3/3, գ. 3.3, էջ 1:

Հայաստանի Հանրապետության սահմանների ընդարձակման խնդիրների, մասնավորապես Շարուր-Նախիջեւանի, լուսաբանումը տեղ է գտել նաեւ Ռիչարդ Հովհաննիսյանի «Հայաստանի Հանրապետություն» աշխատությունում:

Ռ. Հովհաննիսյանը նույնպես գտնում է, որ Նախիջեւանի խնդիրը խաղաղ ճանապարհով կարգավորելու բրիտանական ռազմավարների դիրքորոշման վրա իր վճռորոշ ազդեցությունն էր գործել Կարսում առանց որեւէ լուրջ խոչընդոտի հաջողությամբ իրականացված գործողությունը:

Այդ հարցի վերաբերյալ բրիտանական կողմի որոշումը հետեւյալն էր. «Նախիջեւանի զինվորական վարչությունը պետք է վերացվի եւ շրջանը հանձնվի հայկական կառավարությանը, այնպես որ թույլատրվի բրիտանական զորքերի դուրս բերումը մինչեւ 1919թ. ապրիլի 30-ը:

Այդ պետք է կատարվի՝ խորհրդակցելով հայկական կառավարության հետ եւ Կարսի Շուրայի ձերբակալությունից հետո»[1]:

Ազատագրված շրջաններում հայկական իշխանություն հաստատելու իրականացումը հանձնարարվում է Կովկասում տեղաբաշխված բրիտանական զորաբաժնի հարավային զորախմբի հրամանատար, գեներալ Քիթ Մեյթլենդ Դեյվիին: Նախիջեւանում հայկական իշխանություն հաստատելու ուղիները քննարկելու եւ համապատասխան վճիռ կայացնելու նպատակով գեներալ Դեյվին ապրիլի 17-ին Ալեքսանդրապոլում հանդիպում է ՀՀ վարչապետ Ալ. Խատիսյանին, ապա անցնում Երեւան: Քանի որ Դրոն Նախիջեւանում հայկական իշխանություն հաստատելու վերաբերյալ մշակել էր առանձնահատուկ ռազմական ծրագիր, ուստի անգլիացի գեներալի համար, մինչեւ հիմնական գործողություն ձեռնարկելը, կարեւոր էր ծանոթանալ նաեւ Դրոյի ծրագրին:

Հայաստանի Հանրապետության պատմության, մասնավորապես այդ ժամանակահատվածի, ուսումնասիրությունը մատնանշում է, որ Հանրապետության կյանքում տեղի ունեցած արմատական նշանակություն ունեցող իրադարձությունների, հատկապես ռազմական ուղղվածություն ունեցող, ծրագրմանն ու կենսագործման աշխատանքներին գրեթե միշտ իր մասնակցությունն է ունեցել Դրոն:

Ի՞նչ էր նախատեսում Դրոյի ծրագիրը:

Պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը, այս հարցը քննարկելիս, մեջբերելով բրիտանական 82-րդ բրիգադի ռազմական օրագրում

[1] Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 259:

տեղ գտած նյութերը, գրում է. «Հայաստանի ականավոր ռազմիկը նախատեսում էր արագացրած երթով միացնել հարավային գավառները երեք փուլով՝ մայիսի 1-5 -ին Դավալուն եւ Վեղիչայ-Սաղարակ գոտու մնացյալ մասը, մայիսի 5-10-ին՝ Բաշ-Նորաշենից մինչեւ Նախիջեւան, եւ մայիսի 10-15՝ Նախիջեւանից մինչեւ Օրդուբադ եւ Ագուլիս: Նա խնդրում էր, որ 1,5 Ռաջպուտները (նկատի ունի բրիտանական հրամանատարության կողմից նաեւ Հայաստանում տեղաբաշխված հնդկական զորաբաժնի վաշտերը-Հ.Գ.) մտնեին Սաղարակ եւ պահպանեին երկաթուղու երկայնքով շուրջ 65 կիլոմետր տարածություն՝ այդ առանցքային գյուղից մինչեւ Նախիջեւան:

Դրոն առաջարկում էր բրիտանական դիտորդներ ուղարկել գրավվելիք բնակավայրերը, որպեսզի վկա լինեին, որ ինքը բոլոր ազգություններին նայում է հավասար աչքով, քանի որ մտադիր էր զինաթափել ամբողջ բնակչությանը՝ անկախ ազգությունից»[1]:

Ծրագիրը մշակելիս Դրոն կարեւորել էր մի շատ կարեւոր հանգամանք. գոյություն չուներ որեւէ կայուն երաշխիք՝ հաստատելու, որ թուրք բնակչությունը կարող էր ենթարկվել Հայաստանի իշխանություններին եւ հանրապետության տարածքում ընդմիշտ ապրեր հաշտ ու խաղաղ: Ժամանակը միանշանակորեն ապացուցել եւ ապացուցում էր ճիշտ հակառակը: Հայաստանի տարածքում բնակվող մահմեդական բնակչությունն անհրաժեշտ ու հարմար պահին կապստամբեր, եւ հանրապետությունը դարձյալ կհայտնվեր քառասային ու ճգնաժամային իրավիճակում: Ահա այդ կարեւորագույն հանգամանքը, ինչպես նաեւ հանրապետության ներքին իրավիճակի կայունացմանն ու խաղաղությանը մշտապես սպառնացող վտանգը նկատի ունենալով, նա առաջարկում է զինաթափել մահմեդական բնակչությանը:

Դժվար չէ նկատել, որ բրիտանական հրամանատարությանը ներկայացրած Դրոյի վերոհիշյալ ծրագիրը զգալիորեն տարբերվում է Նախիջեւանի հարցի լուծման նկատմամբ նրա դավանած նախկին դիրքորոշումից: Եթե նախկինում նա վճռականորեն պնդում էր, որ «... ամբողջ ճակատով սրբող-մաքրող հարձակումը Նախիջեւանի վրա միակ միջոցն է, որի շնորհիվ Երեւանը կկարողանա ազատվել ապստամբության եւ անջատման մշտական սպառնալիքից, եւ որի շնորհիվ մահմեդական բնակչությունը կհակվեր խաղաղություն

[1] Նույն տեղում, էջ 260-261:

պահպանելու կառավարության հետ», ապա այժմ նրա ծրագրի սլաքը հիմնականում նպատակաուղղված է բնակչության զինաթափման իրականացմանը[1]:

«Աւելորդ չեմ համարում, - գրում է Մարտիրոս Աբրահամյանը, - տալ այն տեսակէտները, որ կային Նախիջեւանի եւ Շարուրի գրաւելու ժամանակ: Խատիսեանը առաջարկել էր խաղաղ միջոցներով զօրք մտցնել Նախիջեւան եւ Շարուր եւ մեղմութեամբ ենթարկել թուրքերին Հայաստանի կառավարութեանը, իսկ Դրօն եղել էր հակառակ տեսակէտի վրայ եւ առաջարկել էր զինու ուժով մաքրել Շարուր-Նախիջեւան գիծը թուրքերէ, որպէսզի իր քիչ ուժերով հնարաւորութիւն ունենար պաշտպանելու ճակատը: Բայց չէր անցել այդ առաջարկութիւնը...»[2]:

Դրոյի դիրքորոշման փոփոխությունն անշուշտ պայմանավորված է Հայաստանում տիրող կացությամբ եւ այդ հարցի նկատմամբ վարչապետ Ալ. Խատիսյանի գլխավորած կառավարության եւ բրիտանական կողմի որդեգրած քաղաքականությամբ:

ՀՀ վարչապետ Ալ. Խատիսյանի տեսակետը պայմանավորված էր նաեւ հետեւյալ հանգամանքով:

«Հայաստանի դիւանագիտական ներկայացուցչին Վաշինգտոնում» խորագիրը կրող հեռագրում ՀՀ վարչապետը հայտնում է, որ չի կայացել իր գլխավորած կառավարության առաջարկությամբ ու Ադրբեջանի համաձայնությամբ նախատեսված նոյեմբերի 20-ին Բաքվում անցկացվող հայ-ադրբեջանական կոնֆերանսը, ուր պիտի վճռվեր այն բոլոր վիճելի խնդիրները, որոնց պատճառով շարունակվում էր երկու հարեւան երկրների թշնամությունը:

ՀՀ վարչապետի տեղեկացմամբ այդ կոնֆերանսի հետաձգման հետեւանքով հայ-ադրբեջանական հարաբերություններն ավելի սուր կերպարանք են ստացել[3]:

Ալ. Խատիսյանի փաստարկմամբ՝ կոնֆերանսը չի կայացել, քանի որ «Շնորհիվ Հասկելի միջամտութեանը Ադրբեյջանը արդեն ընդունել էր մի պայմանագիր, որով Շարուրի, Նախիջեւանի Գողթանի շրջանները պիտի կազմէին Ամերիկեան նահանգապետութիւ (Генерал-Губернаторство), չեզոք զօնա, մինչեւ Փարիզի Կոնֆերանսի վերջնական որոշումը Կովկասի մասին: Գերագոյն Կոմիսարի կարգադրութեամբ, Ամերիկեան նահանգապետը հոկտեմբերի 23-

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1934, մարտ, էջ 115:
[3] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 3/3, գ. 3.3, էջ 1:

ին հանդիսաւոր կերպով պիտի մտներ Նախիջեւան եւ Ադրբեյջանի եւ Հայաստանի ներկայացուցչների հետ միասին, բայց վերջի բոպէին Ադրբեյջանը հրաժարուեց մասնակցել այդ հանդեսին, միեւնոյն ժամանակ ծածուկ կազմակերպելով Նախիջեւանի թրքական ամբոխի կողմից դիմադրութիւն»[1]:

Գեներալ Դեյվին եւ Նախիջեւանում զինվորական նահանգապետ նշանակված գնդապետ Սիմփսոնը հավանություն են տալիս Դրոյի մշակած ծրագրին եւ որոշ ուղղումներ ու լրացումներ կատարելով՝ այն ներկայացնում են վերադասի հաստատման: Ի ցավ Դրոյի եւ Հայաստանի, այդ ծրագիրը բրիտանական հրամանատարության եւ անձամբ գեներալ Թոմսոնի կողմից, որը բազմիցս է արտահայտել իր ադրբեջանամետ տրամադրվածությունը, մերժվում է[2]:

Հարց է ծագում. ինչպիսին կլիներ Դրոյի, գեներալ Դեյվինի եւ գնդապետ Սիմփսոնի ներկայացրած ծրագրի նկատմամբ բրիտանական հրամանատարության եւ անձամբ գեներալ Թոմսոնի վերաբերմունքը, եթե Հայաստանի Հանրապետության կառավարությունը նույնպես պաշտպաներ եւ հետեւողականորեն պահանջեր հաստատել հենց այդ ծրագիրը:

Մերժելով իրեն հաստատելու ներկայացված ծրագիրը՝ գեներալ Թոմսոնը ապրիլի 23-ին թելադրում է հետեւյալ հրահանգները, որոնք գեներալ Դեվիսը հանձնում է Դրոյին, ապա փոխանցում կառավարությանը.

« Ես գեներալ Թոմսոնին ներկայացրի Նախիջեւանի գրավման եւ փախստականների վերադարձի հարցի մասին գեներալ Դրոյի առաջարկությունը:

Գեներալ Թոմսոնը համաձայն չէ այդ առաջարկություններին հետեւյալ պատճառով.

ա. Ուժերը չափազանց մեծ են, այսինքն զորքը չափազանց շատ է...

բ. Դա կարող է ցնցում առաջ բերել,

գ. Բնակիչներին զինաթափ անելը անիրականանալի է եւ չպետք է փորձել այն իրականացնել:

...Նախատեսված է, որ Նախիջեւանի նահանգը պետք է հանձնվի հայկական կառավարությանը, եւ Նախիջեւանի զինվորական նահանգապետությունը վերացվելու է: Հայկական ռազմական օկուպացիայի հարցը ներկայացված չէ...

[1] Նույն տեղում, էջ 1-2:
[2] Տե՛ս Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 261:

Ես կարծում եմ, որ 2000 սվիններ, 2 դաշտային թնդանոթներ եւ հեծյալ էսկադրոնի ուժերը բավարար են (օկրուգում գտնվող բրիտանական զորքի օգնությամբ) նախատեսված նպատակը իրագործելու համար:

... Բոլոր ուժերը պետք է նպատակաուղղվի, որպեսզի թույլ չտրվեն բախումներ, եւ պետք է հասկանալ, որ ռազմական օկուպացիան լավ արդյունքներ չի կարող տալ...»[1]:

Հարցն արդեն վերջնականապես վճռված էր: Հայաստանի կառավարությունը անգլիացիների զորակցությամբ ձեռնամուխ է լինում խաղաղ ճանապարհով իր իշխանությունը հաստատելու թուրքական զորքերի կողմից պարպված տարածքներում, իսկ Դրոն միաժամանակ նշանակվում է նաեւ Նախիջեւանը գրավելու կոչված զորամասի հրամանատար: Իսկ ժամանակը ցույց կտա, որ խաղաղ ճանապարհով այդ շրջաններում հայկական իշխանության հաստատումը սոսկ ժամանակավոր ու երերուն երեւույթ էր:

«Համաձայն անգլիական կառավարութեան հրահանգին, - գրում է Ալ. Խատիսյանը, - անգլիական գերագոյն յանձնակատարը Կովկասի մէջ առաջարկեց զօր. Տէյվիին Հայաստանի կառավարութեան հետ միասին կազմել գործնական ծրագիր մը, որով հայկական իշխանութիւնը պիտի հաստատուէր Նախիջեւանի մէջ: Մեր կողմէն այդ ծրագրի մշակման կը մասնակցէին 1) ես՝ իբրեւ արտաքին գործերու նախարար (ՀՀ վարչապետ Ալ.Խատիսյանը միաժամանակ զբաղեցնում էր նաեւ արտաքին գործերի նախարարի պաշտոնը- Հ.Գ.), 2) զօր. Ախվերտեանը՝ իբրեւ զինուորական նախարար, 3) Դրօն՝ իբրեւ Նախիջեւանը գրաւելու կոչուած զօրամասի հրամանատար, եւ 4) Խորհրդարանի անդամ Գէորգ Վարշամեանը՝ իբրեւ Նախիջեւանի ապագայ նահանգապետ»[2]:

Համաձայն Հայաստանի Հանրապետության խնամատարության եւ աշխատանքի նախարարության կողմից Հայաստանի կառավարությանը ներկայացված օրինագծի (1919թ. ապրիլի 27).

« 1912 թվին Նախիջեւանի գավառում կային 55.684 հայ, իսկ Շարուրում 10.000 հայ, ուրեմն երկու գավառում ընդամենը՝ 63.684 հայ: 1912-1918 թվականներին աճեցման քանակը հայտնի չէ...»[3]:

Թեպետ բրիտանական կողմը ձգտում էր գաղտնի պահել Հայաստանի սահմանների վերաբերյալ ՀՀ կառավարության ձեռք բերած

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 212, թ. 192:
[2] Խատիսեան Ալ., նշվ. աշխ., էջ 162:
[3] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 52, թ. 8:

պայմանավորվածությունները, այնուամենայնիվ, Ադրբեջանի իշխանություններին հայտնի է դառնում Շարուր- Նախիջեւանում հայկական իշխանություն հաստատելու անգլիական իշխանությունների որոշումը: Հայաստանում Ադրբեջանի լիազոր ներկայացուցիչ Խան-Թեքինսկին, տարբեր աղբյուրներից տեղեկանալով ՀՀ կառավարության եւ բրիտանական կողմի համատեղ ձեռնարկումներին, այդ մասին հաղորդում է Բաքու ու փորձում հնարավոր միջոցներով արգելել եւ թույլ չտալ, որ հայկական զորքերը մուտք գործեն Նախիջեւան: Միաժամանակ Խան-Թեքինսկին ոչ միայն տեղեկություններ է հաղորդում Ադրբեջանի կառավարությանը Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ, այլեւ այդ նույն օրերին Թիֆլիսում գտնվող Ադրբեջանի արտաքին գործոց նախարարին առաջարկում. «... ուղղակի խոսել անգլիական երկու գեներալների հետ, որոնք այն ժամանակ գտնվում էին Թիֆլիսի վերադարձի ճանապարհին: Երբ, ինչպես ինքը նախազգուշացրել էր, մայիսի 3-ին հայկական զորասյունը սկսեց առաջխաղացումը, Խան-Թեքինսկին թախանձեց իր կառավարությանը զորքեր կենտրոնացնել Հայաստանի սահմաններին: Նա հավատացնում էր, որ Նախիջեւանի ժողովուրդը պատրաստ է դիմադրելու, բայց բրիտանացիներից երկյուղելով, սպասում է, որ Ադրբեջանը քաջալերության նշան տա»[1]:

Եթե այդ հեռագրում Խան-Թեքինսկին Ադրբեջանական կառավարությանը առաջարկում է զորքեր կենտրոնացնել Հայաստանի սահմաններին, ապա մինչ այդ հեռագրում է, որ «...եթե իր կառավարությունը կարողանա զորքեր տրամադրել, թեկուզ եւ միայն կամավորների անվան տակ, մահմեդական բնակչությունը անպայման զենքի կդիմի»[2]:

Բաքուն, ստանալով Խան-Թեքինսկու տագնապալի հեռագրերը, իր պատասխանում հայտնում է, «... որ «առկա որոշ հանգամանքներ» խանգարում են կառավարությանը ուղղակի ռազմական օգնություն ցույց տալ, բայց Ադրբեջանը խորապես բավարարված կլիներ, եթե տեղի բնակիչները հաստատապես դեմ կանգնեն հայ նվաճողներին»[3]:

Ավելի քան տարօրինակ կարող է թվալ ադրբեջանական իշխանությունների դիրքորոշումը: Խուսափելով ռազմական միջամտությունից՝ նա փաստորեն իր համաձայնությունն է հայտնում եւ խրախուսում, որպեսզի Նախիջեւանի թուրք բնակչությունը «հաստատապես դեմ կանգնեն հայ նվաճողներին», որը հավասարազոր է զինված պայքարի, ընդսմին կարծես ամենեւին հաշվի չառնելով այն հնարավոր վատթարագույն հետեւանքները, որոնք անխուսափելիորեն կառաջանային զինված առճակատման հետեւանքով:

Իրականում ադրբեջանական իշխանություններն առաջնորդվում էին մեկ այլ ռազմավարությամբ: Նրանք այդ նույն ժամանակահատվածում արդեն կազմավորել էին գեներալ Շիխլինսկու գլխավորած զորաբանակը, որը շատ շուտով հարձակվելու էր Զանգեզուրի վրա: Մյուս կողմից, ադրբեջանական իշխանությունները խիստ գաղտնի ֆինանսավորում, զինում եւ թուրք սպաների միջոցով մարզում ու կազմակերպում էին Հայաստանում բնակվող մահմեդական բնակչությանը:

Մայիսի 3-ին Երեւանյան զորախմբի հրամանատար Դրոն, որը միաժամանակ նաեւ Շարուր-Նախիջեւանը գրավող զորամասի հրամանատարն էր, հայկական զորքերին առաջնորդում է Նախիջեւան:

Նախիջեւան մուտք գործելու նախօրեին Դրոն բրիտանական հրամանատարությանն է ներկայացնում մի նոր ծրագիր: Նա առաջարկում է թույլատրեն, որ հայկական զորքերը Նախիջեւան առաջանալու ընթացքում գրավեն Սուրմալու գավառի Արալըխի գավառակը, սակայն «....բրիտանական հրամանատարությունը չթույլատրեց Սուրմալուում Արալըխի գավառակը գրավելու՝ Դրոյի ծրագրի իրագործումը: Գնդապետ Փլաուդենը Երեւան ժամանելուց կարճ ժամանակ անց առաջարկեց, որ արգելքը վերացվի, ի նկատի ունենալով խռովարարական ակտիվությունը Սուրմալուում, բայց գեներալ Կորին կրկնեց Դեյվիի պնդումը, որ հայերն արդեն շատ առաջ են շարժվել և որ statys quo-ն» պետք է պահպանվի այդ սահանմերձ տարածքում՝ մինչև Փարիզի Հաշտության վեհաժողովի ձեռնարկելիք միջոցառումները»[1]:

Մուտք գործելով Նախիջեւան, Դրոն՝ ավելորդ բարդություններից խուսափելու նպատակով անգլիական գեներալ Դեյվիի եւ զորամասի շտաբի պետ կապիտան Մուրադյանի համատեղ ստորագրությամբ իր գլխավորած զորամասի զինվորներին եւ գավառի բնակչությանն է ներկայացնում դիմում-հռչակագիրը:

Դիմելով զորամասերի հրամանատարներին ու զինվորներին՝ նա խստորեն զգուշացնում է, որ չտրվեն թալանի եւ կողոպուտի, պաշտպանեն հանրապետության բոլոր քաղաքացիների, անկախ

[1] Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 264:
[2] Նույն տեղում, էջ 263:
[3] Նույն տեղում:

[1] Նույն տեղում, էջ 270:

ազգային ու կրոնական պատկանելությունից, իրավունքներն ու ունեցվածքը՝ հարգելով նրանց ազգային պատկանելությունը: Հուշագրում միաժամանակ տեղեկացվում է, որ տեղնուտեղը կգնդակահարվեն բոլոր նրանք, ովքեր կփորձեն միմյանց դեմ գրգռել տարբեր ազգության եւ դավանանքի պատկանող բնակչությանն ու ապակայունացնել գավառում տիրող իրավիճակը:

Դիմելով Նախիջեւանի բնակչությանը՝ Դրոն հայտնում է.

«... Ես իմ զորքով մտա այս շրջանը իմ կառավարության եւ դաշնակիցների հրամանով իրենց տուն վերադարձնելու համար իրենց բնակավայրերից կտրված ինչպես հայ, այնպես եւ մահմեդական գյուղացիներին:

... Բոլոր հողերը, ում կողմից ուզում է զավթված լինեն մեր Հանրապետության ամբողջ տերիտորիայի վրա, պետք է վերադարձվեն իրենց նախկին տերերին:

Ամեն մի քաղաքացու դեմ լինի դա հայ թե թուրք, որ կհամարձակվի հակառակել ամբողջ աշխատավոր ժողովրդի այս ամենաօրինական պահանջի անհապաղ կատարմանը, իմ կողմից ձեռք կառնվեն ամենավճռական միջոցները մինչեւ մահապատիժ:

Այն գյուղերն ու ավանները, որոնք դիմադրություն ցույց կտան, կհամարվեն օրենքից դուրս եւ կրակի ու սրի կմատնվեն:

... Զորամասերի հրամանատարներին հրամայում եմ համակվել մեր կառավարության գաղափարներով եւ կարողացածին հնարավորության չափով սահմանել ամեն տեղ կարգ ու խաղաղ կյանք: Իսկ չարամիտ մարդկանց ենթարկել ամենախիստ պատիժների: Կարողացածին եւ հնարավորության չափով օգնել կարոտյալ բնակչությանը, ինչ ազգության էլ որ պատկանելու լինի նա:Ամեն բան, ինչ որ անհրաժեշտ է զորքերի համար, գնել կանխիկ դրամով»[1]:

Դատելով Հայաստանի կառավարության ձեռնարկած քայլերից եւ Դրոյի, որը մահմեդականներին հնազանդեցնելու առավել կոշտ միջոցների կողմնակից էր, վերոհիշյալ ուղերձից, կարելի է անվարան ասել, որ մահմեդական բնակչության նկատմամբ հայկական իշխանությունների տրամադրվածությունը ավելի քան խաղաղասիրական էր: Հանրապետության տարածքում արմատավորված հայ-թուրք փոխհարաբերությունները, ինչպես արդեն նշվել է, խաղաղ ճանապարհով կարգավորելու կողմնակիցներն էին դաշնակիցները եւ մասնավորապես անգլիացիների ներկայացուցիչները: Սակայն հանրապետությունում, այդ թվում նաեւ Շարուր-Նախիջեւանում

[1] Բանբեր Հայաստանի Արխիվների, 1993, թիւ 1-2, էջ 103-104:

բնակվող թրքությունը այս հարցում առաջնորդվում էր միանգամայն այլ սկզբունքով ու չափանիշներով: Նախիջեւանի նահանգապետ Գ.Պ. Վարշամյանի կողմից Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարին հասցեագրված զեկուցագրերն ակնհայտորեն մատնանշում են, որ Նախիջեւանի թրքության գերակշիռ եւ առավել ազդեցիկ զանգվածը, որը ղեկավարվել է հայը եւ որդի Ջաֆար Կուլի խան Նախիջեւանսկու եւ Քալբալի խանի կողմից, վճռականորեն դեմ է եղել Հայաստանի մասը կազմելուն[1]:

Զգաստանալով անգլիացիների ներկայությունից եւ միմիայն առերես ընդունելով Հայաստանի իշխանությունը՝ նրանք լայն քարոզչություն են ծավալել բնակչության շրջանում եւ աշխատել նրանց տրամադրել ընդդեմ հայկական իշխանությունների:

Հայաստանի Հանրապետության ներքին գործոց նախարարին ուղղված մայիսի 29-ին թվագրված զեկուցագրում Նախիջեւանի նահանգապետ Վարշամյանը, նկարագրելով նահանգում տիրող անմխիթար իրավիճակը, նշում է. «...Վերջերս սա (նկատի ունի Ջաֆար Կուլի խան Նախիջեւանսկուն-Հ. Գ.) մի ժողով էր գումարել, ուր վճռել են մեզ տնտեսական բոյկոտ հայտարարել, ոչինչ չծախել եւ ամեն կերպ խույս տալ մեզ հետ հարաբերություն ունենալուց: Հիմնել են իրենց դատարանները եւ պատվիրել են՝ ոչ մի մուսուլման մեր դատարաններին եւ իշխանություն չդիմի: Տնտեսական բոյկոտ շատ ուժեղ կերպով տանում են: Ես Ագուլիսից եւ Օրդուբադից գրություն ստացա, որով հայտնում են, թե վերջերս իրենց անհասկանալի պատճառներով թուրքերը ոչ մի փութ ցորեն չեն ծախում եւ, առհասարակ, հարաբերությունը փոխվել է...»[2]:

Հեռագրում նշված միջոցառումներին զուգընթաց՝ թուրքերն առավելագույնս կազմակերպում են իրենց մարտական ուժերը եւ պարբերաբար անցկացնում զինավարժություններ: Նախիջեւանի թուրք պարագլուխները, չթաքցնելով իրենց նպատակը, հայտարարում են. «Նախիջեւանի նկատմամբ կատարվեց մեծ անարդարություն: Նա պետք է կպցվեր կամ Ադրբեջանին, կամ Պարսկաստանին, հայերդ երբեք չեք կարող կառավարել այս երկիրը: Սա լինելու է երկրորդ Մակեդոնիա եւ շատ շուտով դժգոհ էլեմենտները չեթեներ են կազմելու եւ հարձակումներ գործելու(Այս խոսքերը ասել է Քալբալա Ալի խանը անգլիացիների ներկայությամբ-Հ.Գ.) »[3]:

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Նույն տեղում, էջ 107:
[3] Նույն տեղում:

Այս կարգի անբռնազբոս, համարձակ հայտարարության համար Նախիջեւանի Թրքության առաջնորդն անշուշտ ուներ որոշակի անհրաժեշտ հիմքեր, որոնք առաջին հերթին պայմանավորված էին նրանց կազմակերպած մարտական ուժերի առկայությամբ:

Հայաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Թեքինսկու՝ արտաքին գործոց նախարարին ուղղված հունիսի 11-ի թիվ 16 հեռագրից պարզվում է.

«...Շարուր-Նախիջեւանի շրջանն ունի վեց հազար կիսականոնավոր զորք՝ հեծելազորով, թնդանոթներով եւ գնդացիրներով: Ռազմունակությամբ հետ չեն մնում հայերից, որոնց օժանդակում են անգլիացիները: Պատերազմական գործողությունների ժամանակ զինված ուժերի թիվը կարող է հասնել մինչեւ 10 հազարի: Կարծում եմ, որ մենք պետք է պահենք միայն վեց հազար ասկյար հին հրամանատարական կազմի հետ միասին, տեղավորելով նրանց այն վայրերում, ուր գտնվում էին մինչեւ հայերի գալը, իսկ մի մասն էլ Զանգեզուրի սահմանի վրա՝ լեռներում:

...Դրամը հրամանատարներին բաց կթողնեմ մաս-մաս... Վաղը դուրս է գալիս զինվորական կցորդը, լսեցեք նրա զեկուցումը եւ միասին քննեցե՛ք: Այսօր սուրհանդակ ուղարկեցի Նախիջեւան»[1]:

Նույնն էր իրավիճակը հանրապետության թուրքաբնակ գրեթե բոլոր շրջաններում եւ մասնավորապես Նախիջեւանին սահմանակից Շարուրի գավառում:

Նույն թվականի հունիսի 30-ին Դրոն՝ տեղեկանալով Շարուրի գավառում տիրող իրավիճակին, այդ մասին հանրապետության ներքին գործոց նախարարին հաղորդում է. «Մինչեւ այժմ Շարուրում վարչակազմը ինչպես հարկն է դեռեւս չի հաստատվել: Իր տրամադրության ներքո ունենալով ընդամենը 10 հեծյալներ՝ կոմիսարը ֆիզիկապես անկարող է այցելել գյուղեր, որոնք միմյանցից գտնվում են մեծ հեռավորության վրա:

Շարուրում դատական իշխանությունների՝ դատախազ, քննիչ; դատավոր, բացակայությունը հանգեցրել է նրան, որ մուսուլմանների մոտ մշտապես կասկած է առաջացնում երկիրը ղեկավարելու մեր ունեցած կարողությունների նկատմամբ:Միայն անհրաժեշտ քանակի անձնակազմով եւ այլ կարեւոր միջոցներով հագեցված իշխանությունների հաստատումը տեղերում կբարձրացնի մուսուլմանների աչքում մեր կառավարության հեղինակությունը: Վերջին հանգամանքը այս պահին ես համարում եմ առավել կարեւոր»[2]:

[1] Նույն տեղում, էջ 145-146:
[2] ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 45(2), թ. 719:

Դեռեւս ի զորու չլինելով ազատագրված շրջաններում կայուն իշխանություն ու խաղաղություն հաստատելու՝ հանրապետության կառավարությունն, ապավինելով դաշնակիցների զինական աջակցությանն ու խոստումներին, աշխատում է ժամանակ շահել: Իսկ թուրքերը համառորեն ու նպատակուղղված պատրաստվում էին եւ սպասում հարմար պահի: Շատ չուտով նրանց զինված ելույթների համար նպաստավոր պահը ներկայանում է: Թուրքերի եւ նրանց աջակցող Ադրբեջանի իշխանությունների լարված ու հետեւողական աշխատանքներն իզուր չանցան: Ընդամենը երկու ամիս է տեւում խաղաղությունը: Անգլիացիները իրենց զորքերը դուրս են բերում Հայաստանի տարածքից, սկզբում մայիսի 15-ին Կարսից, ապա նաեւ մյուս տարածքներից, իսկ մայիսի 30-ին՝ անգամ Նախիջեւանից: Թուրք հրոսակախմբերի համար դարձյալ հրաշալի պահ է ներկայանում զինված ելույթներ սկսել ընդդեմ հայկական իշխանությունների: Անգլիացիների հեռանալուց հետո այլեւս չկար մահմեդականությանը կաշկանդող հիմնական խոչընդոտ, նրանց ձեռքերն արդեն ազատ էին:

«Դժբախտաբար,-գրում է հանրապետության վարչապետ Ալ. Խատիսյանը,- մեր ուրախությունը երկար չտեւեց: Հազիւ երկու ամիս Նախիջեւանը խաղաղ մնաց: Այդ ժամանակաշրջանի մէջ Քերպալի խան Նախիջեւանսկին եւ մեր իշխանութեան թշնամի միւս խաները անդադար պատրաստութիւն կը տեսնէին: Անգլիական զօրքերը Նախիջեւանէն հեռացան անմիջապէս որ մեր զօրքերը մտցուցինք:

Մեր կառավարութիւնը շատ խնդրեց որ անգլիացիք մնան մինչեւ աշուն, բայց Լոնտոնէն եկած հրամանը վճռական էր: Անգլիացիներու հեռանալը թեւ տուաւ մահմետական դաւադիրներուն»[1]:

Անգլիական իշխանությունների կողմից իրենց զորքերի դուրս բերումը Հայաստանի տարածքից մեծ եւ ինչ-որ առումով անակնկալ հարված էր հանրապետության կառավարության համար, որը դեռեւս հնարավորություններ չուներ հզոր մարտական ուժեր տեղաբաշխել թուրքաբնակ շրջաններում եւ արմատախիլ անելով հայկական իշխանությունների դեմ ուղղված զինված ելույթները՝ խաղաղություն հաստատել հանրապետության տարածքում: Օրինակ, Նախիջեւանի նահանգում հանրապետության կառավարությունը, անգլիացիների հեռանալուց հետո, չհաշված նահանգապետի թիկնազորն ու սակավաթիվ ոստիկանական ջոկատը, կարողացել

[1] Խատիսեան Ալ., նշվ. աշխ., էջ 162:

էր տեղաբաշխել միայն գեներալ Շելկովնիկյանի գլխավորած փոքրաքանակ զորամասը, որը մահմեդականների կազմակերպված զինյալ ելույթների դեպքում բացարձակորեն ի զորու չէր որեւէ լուրջ գործողություն իրականացնել:

Միաժամանակ գեներալ Շելկովնիկյանի վրա է դրվում Նախիջեւանի նահանգապետի պարտականությունը:

1919 թ. հունիսի 26-ին Շելկովնիկյանը, նկատի առնելով նահանգում տիրող ծանր կացությունն ու հայկական զորքերի փոքրամասնությունը, կառավարությանը հղած հեռագրում նշում է.

«Զորքը քիչ է: Զուրֆայում կա պահակախումբ: Չեմ կարող պահակախումբ ուղարկել Գողթանի շրջան»[1]:

Մթնոլորտն օր օրի ավելի ու ավելի է չիկանում:

Վաշինգտոնի Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին հասցեագրած վերոհիշյալ ուղերձում ՀՀ վարչապետ Ալ. Խատիսյանը հայտնում է. «Անգլիացիների գնալուց յետոյ մենք գտնւում ենք ամերիկացիների հովանաւորութեան տակ, բայց այդ հովանաւորութիւնը կրում է միայն պլատոնական բնաւորութիւն, որովհետեւ ամերիկացիք զրկւած լինելով զինւորական ոյժից, ոչ մի հնարաւորութիւն չունեն ստիպելու թաթարներին եւ տաճիկներին կատարել իրենց կարգադրութիւնները»[2]:

Այդ նույն հեռագրում ՀՀ վարչապետը նաեւ հայտնում է , որ չի կայացել իր գլխավորած կառավարության առաջարկությամբ ու Ադրբեջանի համաձայնությամբ նախատեսված նոյեմբերի 20-ին Բաքվում անցկացվող հայ-ադրբեջանական կոնֆերանսը, ուր պիտի վճռվեին այն բոլոր վիճելի խնդիրները, որոնց պատճառով շարունակվում էր երկուհարեւան երկրների թշնամությունը:

ՀՀ վարչապետի տեղեկացմամբ՝ այդ կոնֆերանսի հետաձգման հետեւանքով հայ-ադրբեջանական հարաբերություններն ավելի սուր կերպարանք են ստացել[3]:

Թուրքական կողմը մահմեդական բնակչության ապստամբությունը ծավալելու եւ այն արդարացնելու նպատակով որոշակի քայլեր է ձեռնարկել նաեւ դիվանագիտական ուղղությամբ:

Բազմիցս Ադրբեջանի կառավարությանը ներկայացնելով Հայաստանին հարվածելու առաջարկը՝ Խան-Թեքինսկին հունիսի 20-ին կառավարությանը հայտնում է, որ «...Դրոյի զորքերը Շարուրում և

[1] ՀԱԱ, ֆ. 202, g. 1, գ. 39(մ. 3), թ. 103:
[2] ՀՅԴ ԿԱ, թծ. 3/3, գ. 3.3, էջ 1:
[3] Տե՛ս նույն տեղում:

Նախիջեւանում դրավել են ռազմավարական շատ կետեր: Նախիջեւանի շուրան , հայտնում էր նա, դիմել է դաշնակից տերություններին՝ հայկական դաժանությունների առթիվ և բողոքել, որ, չնայած Խատիսյանի և գեներալ Դեյվիի հանդիսավոր խոստումներին, խաղաղ բնակիչները հաճախակի զինաթափվում և ձերբակալվում են...

Ազգի պատիվն ու ապագան Ադրբեջանի Հանրապետությունից պահանջում են ընդունել մարտահրավերը»[1]:

Հուլիսի սկզբներին սկսվում են թուրք հրոսակախմբերի զինյալ ելույթները Բոյուք-Վեդի գյուղից եւ աստիճանաբար ու արագորեն տարածվում գրեթե թուրքաբնակ բոլոր շրջանները:

Հայաստանի կառավարությունը, գտնվելով աննպաստ իրավիճակում, սկզբնական շրջանում չի կարողանում վճռական քայլեր ձեռնարկել մահմեդականության զինյալ ելույթները կանխելու եւ ջախջախելու ուղղությամբ: Հանրապետության կառավարությունը հայտնվում է շատ ծանր իրավիճակում:

Հուլիսի 24-ին Հայաստանի վարչապետ Ալ.Խատիսյանը Կովկասում բրիտանական զորքերի հրամանատար գեներալ Քարիին հղած հեռագրում ներկայացնելով Նախիջեւանի, Շարուրի եւ Բոյուք-Վեդիի, Ղամարլուի եւ Դավալուի շրջաններում մահմեդականների զինված ելույթների պատճառով ստեղծված կացությունը, նշում է. «Ես գտնում եմ, որ Ձերդ Գերազանցությանը անհրաժեշտ է հայտնել հետեւյալը. մեր կողմից բրիտանական կողմին հանձնված փաստաթղթերը վկայում են, որ ամբողջ շարժումը կազմակերպվել է ադրբեջանական կառավարության կողմից, նրա ծախսերով եւ թուրք սպաների օժանդակությամբ: Որպես ապստամբներին աջակցություն՝ սահմանի մոտ կենտրոնացրել են ադրբեջանական զորքեր»[2]:

Ի տարբերություն Ադրբեջանի, թուրք գործակալների եւ նրանց կողմից ղեկավարվող մահմեդականության, Հայաստանի իշխանությունը այդ ուղղությամբ դեռեւս չէր հասցրել ինչպես հարկն է նախապատրաստվել եւ հայտնվելով անպատրաստ վիճակում՝ ստիպված դարձյալ դիմում է անգլիացիների օգնությանը. «Նոր արյունահեղությունը, - նույն հեռագրում շարունակում է Ալ.Խատիսյանը,- կանխելու նպատակով ես պատիվ ունեմ Հայաստանի կառավարության անունից խնդրել Ձերդ Գերազանցությանը կարճ ժամանակամիջոցում ձեռնարկել համապատասխան միջոցներ, որպեսզի պահանջվի ադրբեջա-

[1] Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 271:
[2] ՀԱԱ, ֆ. 276, g. 1, գ. 147, թ. 67:

նական կառավարությունից դադարեցնի իր կողմից ազերին ցուցաբերած օժանդակությունը»[1]:

Վաշինգտոնում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին հասցեագրած վերոհիշյալ հեռագրում ներկայացնելով անգլիացիների հեռանալու հետեւանքով Հայաստանում տիրող անմխիթար իրավիճակը՝ Ալ. Խատիսյանը գրում է. «Մեր երկրի այմեան ծանր վիճակի պատճառներց մէկը այն է, որ Փարիզի Կոնֆերանսը մինչեւ հիմա դեռ չի յայտարարել Հայաստանի անկախութիւնը. օգտուելով այդ հանգամանքից, տաճիկները եւ թաթարները աշխատում են ոչնչացնել մնացորդ հայութիւնը եւ մեր հանրապետութիւնը»[2]:

Ալ. Խատիսյանի գնահատմամբ՝ Հայաստանը ծանր իրավիճակից դուրս բերելու համար «Անհրաժեշտ է, որ անմիջապէս Ամերիկան հենց այժմեանից ճանաչի մեր անկախութիւնը եւ Կովկաս ուղարկի յատուկ լիազորութիւն ունեցող անձնաւորութիւններ...»[3]:

Իզուր էին Հայաստանի վարչապետի խնդրանքն ու հույսերը: Անգլիացիների միջնորդությունը որեւէ դրական արդյունք տալ այլեւս չէր կարող, իսկ Ամերիկան համաձայն ՀՀ վարչապետի խոստովանության՝ «Մինչեւ այժմս ամերիկացիներից ալիւրից զատ ուրիշ ոչ մի օգնութիւն չենք ստացել...»[4]:

Իսկ ժամանակն աշխատում էր հօգուտ հակառակորդի: Հայաստանի մահմեդական բնակչությունն այս անգամ տրամադրված էր ավելի քան վճռական ու անզիջում: Ընդ որում՝ հակառակորդը շատ լավ տեղյակ է եղել հանրապետությունում տիրող կացությանն ու բանակի կազմին եւ հնարավորություններին:

Հանրապետության տնտեսության ծայրահեղ անմխիթար վիճակը, հարյուր հազարավոր գաղթականների առկայությունը եւ այդ ամենին գումարած՝ մահմեդականության պարբերաբար կրկնվող զինյալ ելույթները մեծապես արգելակում էին կառավարությանը լիարժեք զբաղվելու երկրի վերաշինության, կայունացման եւ մասնավորապես բանակի կազմավորման խնդիրներով: Հանրապետության բանակը քանակական եւ որակական առումով դեռեւս խիստ սահմանափակ էր, թույլ եւ անկազմակերպ:

ՀՀ բանակն ըստ Ս. Վրացյանի՝ ուներ հետեւյալ կազմը. «... երեք հետեւակ բրիգադ՝ իւրաքանչիւրը երկու գնդից եւ գունդը՝ երեք գումարտակից, երկու ձիաւոր գունդ՝ իւրաքանչիւրը վեց հա-

[1] Նույն տեղում:
[2] ՀՅԴ ԿԱ, թղ. 3/3, գ. 3.3, էջ 3:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:

րիւրեակով, 12 մարտկոց՝ ամէն մէկը 4 թնդանօթով, 3 զրահապատ գնացք եւ մի քանի տեղական զօրամասեր: Այդ ուժերը ցրուած էին երկրի բոլոր կողմերում, ունէին թերի կազմ, չնչին քանակութեամբ ռազմամթերք, վատ հագուստ ու պարէնաւորում»[1]:

Համաձայն Ռուբեն Տեր-Մինասյանի՝ 1919 թ. ՀՀ զինվորական նախարարության հաշվից օգտվում էին 18.000-24.000 հոգի, իսկ իրականում «...գործող բանակի թիւն էր 7.900 սուին, 350 թուր, 26 թնդանօթ, մօտ 8.500 մարդկանցով, կլոր թիւով մօտ 9.000 մարդ:

.... Բացի յիշեալներից, կային ե՛ւ զօրամասեր, որոնք կարող էին համարուել գործօն բանակի եւ ներքին ապահովութեան եւ թիկունքի կազմակերպման զօրաբաժիններ: Բանակի համար ֆիզիքական ոյժ ներկայացնողները հետեւեալներն էին.-

Գողթանի առանձին բաժին՝
Նժդեհի ղեկավարութեամբ՝——————180 սուին-թուր
Ցատուկ զօրաբաժին Դարալագեազի, Ղարաբաղի եւ
Զանգեզուրի(Դրոյի զօրամաս)——————1.000 »
Երեւանի պահակային գունդ——————1.000 »
Ալեքսանդրապոլի պահակային գունդ——————1.000 »
Կարսի պահակային գունդ——————400 »
Սահմանային վաշտ, Կասելիովի——————300 »
Ընդամենը՝3.800 »[2]:

Ռուբենի գնահատմամբ՝ «Այս ուժերից, զինուորական տեսակէտից արժէքաւոր էր Ցատուկ զօրաբաժինը(նկատի ունի Դարալագեազի, Ղարաբաղի եւ Զանգեզուրի Դրոյի զօրամասը-Հ. Գ.), իսկ միւսները արժէք կը ներկայացնէին միայն իրենց տեղի վրայ: Ի զուր չէր, որ Խորհրդարանի զինուորական յանձնախմբում հարց էր բարձրացնում շարունակ կամ կրճատել մանաւանդ պահակային զօրամասերի թիւը եւ կամ տալ նրանց այլ բնոյթ.»[3]:

Վերոհշյալ թվերը ակնհայտորեն ցույց են տալիս, որ գործող բանակը, զուտ քանակական առումով զգալիորեն զիջում էր բանակի ընդհանուր թվին:

Ռուբենը վկայակոչում է ՀՀ զինված ուժերում դեռեւ գոյություն ունեցող մի քանի ուշագրավ երեւույթներ, որոնք մեծապես պայմանավորում էին գործող բանակի իրական կացությունը:

[1] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 297:
[2] Ռուբէն, նշվ., աշխ., էջ 336:
[3] Նույն տեղում, էջ 336-337:

Օրինակ, Ռուբենի հավաստմամբ՝ «Անհամեմատ մեծ թիւով մարդիկ էին կլանում թիկունքային աշխատանքների համար, ինչպէս օրինակ, սպայակոյտերի, զինամթերքային կէտերի, վերակացուների(պարենաւորման), հեռագրերի եւ այլ բազմաթիւ հիմնարկութիւնների վրայ»[1]:

Ռուբենի վկայութիւններից պարզվում է, որ ընդօրինակելով ռուսական բանակում արմատավորված սովորոյթներին, հայկական բանակի սպաները նույնպես ունեցել են դենշչիկների(ծառայողներ), որոնք մեծ թիվ են կազմել: Դենշչիկները օգտվել են բանակին հատկացրած պետական միջոցներից եւ սպասարկել ու ծառայել են միմիայն իրենց տերերին՝ սպաներին:

«Եւ եթէ հաշուելու լինենք,-գրում է Ռուբենը,-դրանց վրայ սպաների դենշչիկներին(ծառայողներին) եւ գործող բանակի թիկունքում աշխատողներին, ինչպէս օրինակ արոզչիկներին, այդ պարագային զորակոչի ենթարկուած սպաների եւ զինուորների 60 %-ից աւելի դառնում էին հաց ուտողներ եւ հազիւ 40 %-ն էր որ պիտի գործող բանակում դառնար թնդանօթ, սուր կամ սուին բռնող:

...Օրինակ ունենալով ռուս զինուորական օրէնքները, կազմակերպւում էին սպայակոյտերը, զինամթերքի կէտեր եւ այլն:...Հսկայածաւալ Ռուսիոյ համար դա անհրաժեշտ էր, բայց փոքրիկ Հայաստանը նոյն դրութեամբ առաջնորդւում էր՝ թիկունքը նախ կազմակերպելով ռուսական դրութիւններով, այլեւս մարդկային ուժեր քիչ պիտի ունենար գործօն բանակը լրացնելու համար »[2]:

Հիմք ունենենալով ՀՀ բանակում տիրող վերոհիշյալ իրավիճակը՝ Ռուբենը տալիս է հետեւյալ գնահատականը. «Ահա այդ էր պատճառը, որ Հայաստանի զինուորական կառուցվածքը մի հրեշ էր, որի գլուխն ու փորը մարմնի երեէ-չորրորդը կը բռնէր, իսկ գործող անդամները՝ փոքրիկ, աննշան»[3]:

Միանգամայն ակնհայտ է, որ այդպիսի սահմանափակ մարտական ուժերով հանրապետության բանակը ի զորու չէր արագորեն խորտակել խնամքով նախապատրաստված ու բավականին լավ զինված եւ կազմակերպված բազմաքանակ ապստամբ զորախմբերի դիմադրությունը: Մահմեդական բնակչության զինված ելույթները մարելու ժամանակահատվածում առավել դաժան ու արյունահեղ

[1] Նույն տեղում, 334:
[2] Նույն տեղում, էջ 334-335:
[3] Նույն տեղում, էջ 335:

կռիվներ տեղի են ունեցել Բոյուք-Վեդիում, ուր թուրք սպաներն ու ապստամբների ղեկավարները, կենտրոնացնելով ավելի քան 4000 (չորս հազար) զինյալներ, կարողացել էին այդ շրջանը վերածել պաշտպանության ամրակուռ ամրոցի: Մշտապես համալրելով Բոյուք-Վեդիի պաշտպանների մարտաշարքերը՝ թուրքերը կարողանում էին հաջողությամբ դիմադրավել եւ չեզոքացնել հայկական կանոնավոր զորամասերի հարձակումները:

Հանրապետության ներքին իրավիճակն ավելի է ապակայունանում ու սպառնալի կերպարանք ձեռք բերում, երբ Բոյուք-Վեդիի դեպքերից մի փոքր անց մահմեդական բնակչության զինված խնամքով նախապատրաստված զանգվածային ելույթներ են բռնկվում Զանգիբասարում, Ղամարլուում, Շարուր-Նախիջեւանում, ապա նաեւ Կարսի նահանգում եւ Սուրմալուի գավառում: Հանրապետության կառավարության համար մահմեդական բնակչության զինված ելույթները չպետք է անակնկալ ու անսպասելի լինեին: Կատարվում է այն, ինչի մասին ժամանակին բազմիցս ահազանգում էր Դրոն: Անհրաժեշտ էր ժամանակին մեկընդմիշտ լուծել այդ շրջանների թրքության հարցը, քանի դեռ նրանք չէին հասցրել ինչպես հարկն է զինվել ու նախապատրաստվել եւ ինչպես հստակորեն ապացուցեց ժամանակը, անհնարին էր ակնկալել, որ թուրքերը երբեէ կհամակերպվեին հայկական իշխանություններին ենթարկվելու, առավել եւս համակերպվելու Հայաստանի Հանրապետության անքակտելի մասը կազմելու իրողությանն ու գաղափարին:

Հուլիսի 23-ին մահմեդական հրոսակախմբերը, նախահարձակ լինելով, անակնկալ հարձակում են գործում գեներալ Շելկովնիկյանի զորախմբի վրա: Հայկական զորախումբը հանկարծակիի գալով եւ անկարող լինելով դույզն-ինչ դիմադրելու թշնամու գրոհներին՝ խուճապահար թողնում է Նախիջեւանի տարածքը: Զորախմբի մի մասը սպանվում եւ գերի է ընկնում, իսկ մյուս մասը, մի կերպ ազատվելով թուրքերի հետապնդումից, նահանջում է Երեւանի ուղղությամբ:

Հանրապետության զինվորական նախարարը Նախիջեւանի դեպքերի կապակցությամբ ստանում է հետեւյալ զեկուցագիրը.

«Նախիջեւանում ստեղծված դժվարին իրավիճակի պատճառով մեր զորամասերը նահանջել են Դավալու: Նախիջեւանի շրջանը Սադարակի կողմից կտրվել է թաթարների կողմից: Թաթարների թիվը հասնում է 10000-ի, նրանց հրամանատարն է թուրքական բանակի գնդապետ Խալիլ բեյը, որի հրամանատարության ներքո գործում են թուրքական եւ ադրբեջանական բազմաթիվ սպաներ:

Գեներալ Շելկովնիկովի զորախումբը (Նախիջեւան) եւ գնդապետ Կարաքեշիշովի (Սաղարակ) զորախումբը դուրս են եկել թաթարների շրջապատման օղակից եւ միացել են Դրոյին:

Երկու զորախմբերն էլ կրել են ծանր կորուստներ»[1]:

Հայաստանի Հանրապետության վարչապետ Ալ. Խատիսյանի հավաստմամբ՝ այդ նույն պահին Նախիջեւանում է գտնվել ամերիկյան նահանգապետը, բայց նրա ներկայությունն ու տրված կտրուկ հրամանները եւ սպառնալիքները որեւէ ազդեցություն չեն գործել մահմեդական բնակչության վրա, որը թուրք սպաների գլխավորությամբ, զինված թնդանոթներով ու գնդացիրներով, հարձակվել է Դարալագյազի վրա, նպատակադրվելով անցնել Զանգեզուր եւ անմիջական կապ հաստատել Ադրբեջանի հետ[2]:

Դրոն՝ տեղեկանալով Նախիջեւանում եւ Շարուրում կատարվող դեպքերին, շարժվում է նրանց ընդառաջ, փորձում օգնել, բայց արդեն շատ ուշ էր: Նա իր փոքրաթիվ զորամասով եւ գեներալ Շելկովնիկյանի ու գնդապետ Կարաքեշիշյանի ջախջախված զորախմբերի մնացորդներով տվյալ պահին այլեւս ի զորու չէր որեւէ լուրջ հակահարված կազմակերպել ընդդեմ բազմահազար մահմեդական զինյալների, մանավանդ որ իրավիճակը շատ ծանր էր նաեւ Բոյուք-Վեդիի եւ մյուս ապստամբ շրջաններում:

Մահմեդականները հրաշալիորեն են օգտագործում իրենց ընձեռված ժամանակը եւ հետեւողականորեն նախապատրաստվելով եւ օգտվելով անգլիական զինական ուժերի բացակայությունից՝ նախահարձակ են լինում եւ հանրապետության իշխանություններին դնում շատ ծանր կացության առջեւ:

Անդրադառնալով այդ օրերին Հայաստանի Հանրապետությունում կատարվող դեպքերի գնահատմանը՝ հանրապետության խնամատարության նախարար Ար. Բաբալյանը գրում է. « 1919 թուի գարնանը, մայիսի 19-ին, անգլիական զորքերը գրաւեցին Շարուրն ու Նախիջեւանը եւ այդ երկու գաւառների իշխանությունը յանձնեցին մեզ:Հազիւ երկու ամիս կարողացանք պահել Նախիջեւանն ու Շարուրը մեր ձեռքը, տեղական ազգաբնակչությունը, ղեկավար ունենալով տաճիկ սպաներին, յուլիսի 23-ին ապստամբեց մեր իշխանության դէմ, եւ մեր զորքերը ստիպուած եղան, մեծ կորուստներ տալով, նահանջել դէպի Երեւան:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 177, թ. 30:
[2] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թ. 3/3, գ. 3.3, էջ 2:

Ապստամբության ժամանակ անգլիական զորքերը չկային այդ գաւառում: Ընդհանրապէս անգլիական հրամանատարությունը շատ քիչ ժամանակ պահեց իր զորքերը Կարսի եւ Նախիջեւանի նահանգներում:Եւ դա եղաւ պատճառը, որ նախիջեւանցիները դուրս բարձրացրին ու յարձակուեցին մեր զորքերի վրայ ու խլեցին իշխանությունը մեր ձեռքից:

Անգլիական իշխանությունը Անդրկովկասում չկարողացաւ ըմբռնել արեւելքցու հոգեբանությունը եւ ժամանակ չտուաւ, որ մեր իշխանությունը ամրապնդուի թրքաշատ այդ շրջաններում»[1]:

Շարուրի գավառում դեպքերը զարգանում են ավելի ողբերգական ուղղվածությամբ: Շարուրի հինգ հայկական գյուղերի 5000 բնակիչներ եւ նրանց պաշտպանող երկու վաշտերը, հավատ ընծայելով այդ շրջանի թուրք զինյալների հրամանատար Խալիլ բեյի կեղծ խոստումներին, թշնամուն են հանձնում իրենց ունեցած զենքերը:

Հայաստանի խորհրդարանին հասցեագրված դիմումում այդ հինգ գյուղի ներկայացուցիչները ներկայացնելով իրենց ողբալի վիճակը՝գրում են. «...հայ ժողովուրդը բարվոք համարեց առանց կռվի ու դիմադրության անձնատուր լինելու թուրքերին, գուցե այդպիսով կարելի լիներ ազատելու իրենց կանանց ու երեխաների կյանքը, բայց, ավաղ, այսօր պատկերը այլ է փոխվել, ներկայումս մեզ հասնող ճիշտ ստացված լուրերի համաձայն թուրք ամբոխը իր դարավոր ոխերի համար, առավել եւս չմոռանալով եւ այն հատուցումը, որ նա ստացավ Շարուրի հայերից 18 թվի դեպքերի ժամանակ, զանազան պատրվակների տակ, հազար ու մի տեսակ չարչարանքների ու տանջանքների է ենթարկում զինաթափ եղած անմեղների կյանքը, կոտորելով, սպանելով հայ երիտասարդներին, բռնաբարելով կանանց եւ այլն, եւ այլն»[2]:

Նկարագրելով հայ գյուղացիների ողբերգական իրավիճակը՝ շրջրցիների ներկայացուցիչները խնդրում են Հայաստանի խորհրդարանին համապատասխան քայլեր ձեռնարկել տառապյալ ժողովրդին ազատելու համար[3]:

Այդ օրերին Դրոն դարձյալ գտնվում էր հանրապետության տարածքում ծավալվող մարտական գործողությունների կիզակետում: Որպես Երեւանյան զորախմբի պետ եւ հանրապետության զինված ուժերի նախարարի օգնական, նրա անմիջական պարտականությունն-

[1] Բժ. Ա. Բաբալեան, նշվ. աշխ., էջ 37:
[2] Բանբեր Հայաստանի Արխիվների, 1993, թիւ 1-2, էջ 119-120:
[3] Տե՛ս նույն տեղում:

ների մեջ էին մտնում թուրք զինյալ հրոսակախմբերի պաշտպանական դիրքերը գրոհող հայկական զորամասերի կազմակերպումն ու ղեկավարումը: Թուրք ապստամբների օջախները «խաղաղացնելուն» նպատակաուղղված այդ գործողությունները եղել են նրա մարտական կենսագրության թերեւս ամենադժվարին էջերից մեկը: Թուրքերը շատ լավ ամրացնելով իրենց բնակավայրերը, հատկապես Բոյուք-Վեդին, կատաղի դիմադրություն են ցույց տվել:

Հայկական բանակի հրամանատարության համար բնավ էլ անակնկալ լինել չէր կարող մահմեդականության զինյալ ելույթների իրողությունը, բայց այն, որ թուրքերը կկարողանային շատ լավ նախապատրաստվել, ըստ ամենայնի զինվել եւ պաշտպանական հզոր հանգույցների վերածել իրենց բնակավայրերը՝ սպասվածից վեր էր:

ՀՀ զինվորական նախկին նախարար, գեներալ Հախվերդյանի տեղեկացմամբ, հայկական բանակի հրամանատարությունը կռիվների սկզբնական շրջանում թույլ է տվել մարտավարական որոշակի վրիպումներ եւ ավելորդ շտապողականություն:

Նրա գնահատմամբ՝ փոխանակ կենտրոնացված հարվածներով մեկ հիմնական ուղղությամբ իրականացնելու հարձակումը, հայկական զորամասերը գրոհները ծավալել են մի քանի ուղղությամբ եւ դրանով իսկ թուլացնելով իրենց հարվածների ուժգնությունը՝ հնարավորություն են ընձեռել հակառակորդին հաջողությամբ դիմադրավելու եւ հետ մղելու հայկական զորքերի հարձակումները: Այս գործում նա մեղադրում է նաեւ Դրոյին[1]:

Գեներալ Հախվերդյանի դիտողության իրավացիությունը կարելի է ընդունել, բայց հարց է ծագում. իսկ ինչո՞ւ ինքը որպես զինվորական նախարար, անհրաժեշտ քայլեր չի ձեռնարկել, որպեսզի թույլ չտրվեին, կանխվեին Բոյուք-Վեդիի ամրակուռ հենակետերի վրա ՀՀ զորքերի ձեռնարկած հարձակումները, որոնք իր գնահատմամբ՝հրամանատարության չկշռադատված մարտավարության հետեւանքով մատնվել են անհաջողության: Անժխտելի է, եթե Հայկական զորքեր հրամանատարությունը զուտ մարտավարական առումով Բոյուք-Վեդիի թուրքական հենակետի վրա ձեռնարկած հարձակման ժամանակ թույլ էր տվել սխալներ, ապա այդ գործում գլխավոր մեղավորները նախեւառաջ ինքն էր՝ որպես զինվորական նախարար եւ ՀՀ բանակի սպարապետ գեներալ Թ. Նազարբեկյանն ու նրանց գլխավորած շտաբը:

Մահմեդական բնակչության զինված ելույթների ծավալման օրերին, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 78, թ. 16:

որոշակի փոխություններ է իրականացվում զինվորական նախարարության համակարգում:

Երեւանյան զորախմբի հրամանատար Դրոն հենց այդ օրերին, երբ հանրապետության տարածքում բռնկվել էին մահմեդական բնակչության զինված զանգվածային ելույթները, ՀՀ կառավարության որոշմամբ ստանձնել է զինվորական նախարարի օգնականի պաշտոնը: Հանրապետության կառավարության կողմից նրան այդ պաշտոնում նշանակելու համար կային որոշակի օբյեկտիվ հիմքեր ու պատճառներ:

Ինչպես հայտնի է, մինչեւ Հայաստանի Անկախ Հանրապետության հռչակվելը, հայկական բանակը ի դեմս գեներալ Նազարբեկյանի գլխավորած Հայկական բանակային կորպուսի, որն իր ուսերին տարավ ողջ պատերազմի հիմնական ծանրությունը, արդեն կազմավորվել էր: Սակայն, Հայաստանի Հանրապետության կառավարության եւ մասնավորապես զինվորական նախարարության կայացմանը զուգընթաց ավելի է ընդգծվում ու կարեւորվում բանակը կադրային սպաներով համալրելու, պրոֆեսիոնալիզմի սկզբունքներով ու օրինաչափությամբ եւ հատկապես ռուսական բանակի նմանողությամբ կազմավորելու անհրաժեշտությունն ու պահանջը:

Ռուբեն Տեր-Մինասյանի հավաստմամբ, այս տեսակետը առավելապես պաշտպանել է Հանրապետության առաջին վարչապետ Հովհ. Քաջազնունին[1]:

Վերոհիշյալ նպատակով զինվորական նախարարի պաշտոնը վստահվել է փորձառու, պրոֆեսիոնալ զինվորական, գեներալ-մայոր Հախվերդյանին, որը քաղաքական որեւէ կուսակցության չէր պատկանում:

«Այս վերջին հանգամանքը, գրում է Ռուբենը,-ոչ միայն կը բաւարարէր կուսակցութեանց մրցակցութեան ու նախանձին, այլ կը համապատասխանէր այն ռուսական մտայնութեան, թէ «բանակը դուրս է քաղաքականութիւնից»...

...Գլխաւոր հիմունքն է լինում - «Զինուորականութիւնը դուրս է քաղաքականութիւնից, ժողովրդական ոչ մի ոյժ մուտք պիտի ունենայ նրա մէջ, նրանք են զինուոր, որոնք ենթակայ են զօրակոչի, նրանք են ղեկավար, որոնք աւարտած են զինուորական դպրոց»[2]:

Առաջնորդվելով բանակը կառուցելու համար Ռուբենի թվարկած չափանիշներով, բանակի շարքերն ավելի ու ավելի են համալրվում կադրային զինվորականներով:

[1] Տե՛ս Ռուբէն, նշվ. աշխ., հ. 7, էջ 331:
[2] Նույն տեղում:

«Այդպիսով,-շարունակում է Ռուբենը,-Հայաստանի Հանրապետութեանբանակը կազմակերպուած էր զինուորական մասնագիտական տուալների վրայ, նա ունէր իր արժանիքները գիտական տեսակէտից, բայց ունէր իր թերութիւնները ոգու եւ ազգային տեսակէտից: Այս վերջին հանգամանքը դժգոհութիւններ առաջ բերած էր թէ կուսակցական շարքերում եւ թէ Խորհրդարանում...

Դրանից խուսափելու համար, Զինուորական նախարարի օգնական հրաւիրուեց Դրօն:

... Եթէ նախարարութեան մէջ հիմնական փոփոխութիւններ յառաջ չեկան, բայց գործող բանակի թիւը զգալի չափով աւելացաւ եւ կազմակերպուեց: Դրան նպաստում էր եւ այն հանգամանքը, որ զինուորական նախարարի օգնական Դրօն յաճախ իբր արեւելյան ճակատի հրամանատար դուրս կը գար եւ անձամբ կը ղեկավարէր Վեղիի ճակատի գործերը: Եւ այսպէս օր աւուր ուժեղանում էր զօրքը եւ բազմանում»[1]:

Դրոն, կարելի է ասել, ՀՀ-ում ունեցած իր ազդեցութեամբ ու հեղինակութեամբ եւ մարտականանբասիր կենսագրութեամբ կադրային եւ ոչ կադրային զինվորականների կողմից ընդունված եւ հարգանք վայելող գործիչ էր: Որպես զինվորական նախարարի օգնական, նա անտարակույս կարող էր ցեմենտող, միավորող ուժ լինել կադրային եւ ոչ կադրային զինվորականների միջեւ:

ՀՀ կառավարության որոշմամբ զինվորական նախարար գեներալ Հախվերդյանին փոխարինում է հրետանային ծառայության գնդապետ Արարատյանը, որը Մայիսյան հերոսամարտերի ժամանակ Հայկական բանակային կորպուսս հրետանային բրիգադի հրամանատարն էր: ՀՀ կառավարության հրամանագրով նրան շնորհում են գեներալ-մայորի զինվորական աստիճան:

Ռուբենի բնութագրմամբ՝ «Զօրավար Արարատեանը նախարար լինելով, չունէր առանձին մի ծրագիր, աստիճանով, պատրաստութեամբ եւ բնաւորութեամբ աւելի ցածր էր, քան իր սպայակոյտում նստած զօրավարները, ինչպէս Նազարբէկեան, Հախվերդեան, Սիլիկեան, Գամազով, Բրիսենկո եւ այլն, եւ նա շարունակում էր այն ինչ սկսուած էր, անում էր այն ինչ գլխաւորապէս Հախվերդեանը կը թելադրեր կամ ներշնչէր: Զօր. Արարատեանի նախարարութիւնը աւելի շատ քողարկուած Հախվերդեանի նախարարութիւն էր...»[2]:

Մահմեդական բնակչության զինված ելույթները Հայաստանի Հանրապետությունում, իրոք, ստեղծել էին չափազանց տագնապալի

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, էջ 333:

իրավիճակ: Բնականաբար, ՀՀ-ում ծավալվող դեպքերի թելադրանքով զինվորական նորանշանակ նախարարն ու փոխնախարարը՝ գեներալ Արարատյան ու Դրոն պիտի գործին ավելի ծանրաբեռնվածությամբ ու պատասխանատվությամբ:

Վաշինգտոնի Հայաստանի Հանրապետության ներկայացուցչին հացեագրած գրությունում ներկայացնելով նաեւ Նախիջեւանում ու Շարուրում տեղի ունեցած դեպքերն ու այդ ուղղությամբ Անգլիայի ու Ամերիկայի դիվանագիտական ներկայացուցիչների ձեռնարկած անարդյունավետ քայլերը՝ ՀՀ վարչապետը հաղորդում է. «Կառավարությունը բողոք ներկայացրեց բոլոր դաշնակից պետությունների ներկայացուցիչներին:

Անդրկովկասում ԱՄՆ-ի դիվանագիտական ներկայացուցիչ Հասկելի փոխանորդ գնդապետ Ռեյը կտրուկ կերպով հրամայել է, որ Ադրբէյջանի զորքերը դադարեցնեն իրենց շարժումը դէպի Զանգեզուր, բայց, ինչպէս երեւում է, թաթարները մեծ նշանակություն չեն տալիս այդպիսի սպառնալիքներին: Ամերիկացիք շատ են հեռու, իսկ Բաթումի նահանգի անգլիական զորքերը մտադրություն չունեն միջամտելու: Մեզ կարող ենայս վտանգաւոր դրությունից ազատել միայն ամերկեան զորքերը»[1]:

Իզուր էին ամերկյան զորքերի միջոցով վտանգավոր դրությունից ազատվելու ՀՀ վարչապետի փայփայած հույսն ու ակնկալիքը: Երկրում ստեղծված տագնապալի իրավիճակը հանրապետության իշխանություններին հրամայաբար թելադրում էր դիմել անհրաժեշտ եւ վճռական գործողությունների: Հաշվի առնելով տվյալ ժամանակահատվածի համար առավել կարեւորագույն նշանակություն ունեցող խնդիրների յուրահատկությունը՝ հանրապետության կառավարությունը ձեռնարկում է արտակարգ միջոցառումներ:

Նախ եւ առաջ հարկավոր էր համալրել ու ամրապնդել բանակը, հանրապետության բնակչության շրջանում ուժեղացնել կարգուկանոնը եւ կարգապահությունը: Առաջնորդվելով այդ առաջնահերթ խնդիրների կենսագործմամբ՝ կառավարությունը հուլիսի 23-ին Երեւանի, Էջմիածնի եւ Սուրմալուի գավառներում, իսկ օգոստոսի 18-ին նաեւ ողջ հանրապետությունում, հայտարարում է 26, 27, 28 տարեկանների զորահավաք, իսկ օգոստոսի 24-ին հատուկ որոշմամբ մահապատիժ է սահմանվում պետական դավաճանության եւ զորակոչից խուսափելու ու դասալքության համար[2]:

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 3/3, գ. 3.3, էջ 2:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 177, թ. 24:

Հատկապես խիստ զգացնել տվեց զենքի ու զինամթերքի պակասությունը: Հանրապետության կառավարության նախագահի եւ զինվորական նախարարի կողմից Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին եւ զինվորական կցորդին զենք ու զինամթերք գնելու պահանջով ուղարկված հեռագրերը վկայում են, որ չնայած ֆինանսական սուղ միջոցներին՝ կառավարությունը զգալի գործունեություն է ծավալում բանակին եւ նոր կազմավորվող զորամասերին զենքով, զինամթերքով ու հանդերձանքով ապահովելու ուղղությամբ:

Մի օրինակ այդ հեռագրից.

«Գեներալ Կամիշեւին (Թիֆլիսում Հայաստանի զինվորական կցորդ - Հ.Գ.) «Պետք է գնել 3 գծանի փամփուշտներ: Չնայած փամփուշտի գինը թանկ է, բայց այնուամենայնիվ պետք է գնել: Կարծում եմ, որ առայժմ պետք է գնել 300000, իսկ եթե կհաջողվին, գնեցեք 500000 փամփուշտ:

18. 08 -1919 թ.

Գեներալ Արարատյան»[1]:

Քանի որ նոր կազմավորվող զորամասերը զինելու համար միջոցները խիստ սահմանափակ էին, անբավարար, ապա կառավարությունը հարկադրված դիմելով կտրուկ միջոցների, ժողովրդից հավաքում է զգալի քանակությամբ զենք ու զինամթերք եւ սպհմանում է պարտադիր զինական տուրք:

Զորակոչի ենթակա տղամարդկանց եւ մինչեւ 40 տարեկան սպաների զորահավաքը կազմակերպելու եւ ժողովրդից պարտադիր զինական տուրքը ժամանակին գանձելու նպատակով, Արշակ Ջամալյանի գլխավորությամբ ստեղծվում է հատուկ մարմին՝ զինածողով: Իսկ երկրի պաշտպանությունը կազմակերպելու ու ղեկավարելու համար ստեղծվում է լայն լիազորություններով օժտված երեք հոգուց՝ վարչապետ, ներքին գործոց եւ զինվորական նախարարներ, կազմված ղեկավար մարմին, որը կոչվում է Ապահովության կոմիտե[2]:

Ձեռնարկած միջոցառումների շնորհիվ հանրապետության կառավարությունը կարողացավ կազմավորել մի քանի նոր զորամասեր եւ բանակը համալրել մարտական կենսափորձ ունեցող սպաներով ու զինվորներով: Ի հաշիվ ժողովրդից գանձվող պարտադիր զինական տուրքի ու նրանից հավաքած զենքի եւ զինամթերքի, հնարավոր

[1] Նույն տեղում, թ. 152:
[2] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 299:

եղավ բարելավել նոր կազմավորվող զորամասերի մատակարարումն ու հանդերձավորումը: Նոր կազմավորվող զորամասերը, դեռեւս ինչպես հարկն է չմարզված եւ բավարար մարտական պատրաստվածություն չստացած՝ մեկնում են ռազմաճակատ: Ուրիշ ելք չկար. Թուրք հրոսակախմբերի զինված ելույթները գնալով ավելի ու ավելի էին շիկանում եւ տարածվում: Ամենաշիկացած շրջանը, ուր Թուրքերն առավելապես կատաղորեն էին դիմադրում, Բոյուք-Վեդին էր: Հայկական բանակի հրամանատարության եւ անձամբ Դրոյի գործուն մասնակցությամբ մշակվում է Բոյուք-Վեդիի պաշտպանների դիմադրությունը վերջնականապես խորտակելու գործողության ծրագիրը: Համաձայն հայկական բանակի հրամանատարության մտահղացման, նախատեսվում էր կենտրոնացնել զինական բավարար ուժեր եւ գրոհել ոչ թե անմիջականորեն Բոյուք-Վեդիի ինժենեռական ու տեխնիկական առումով հրաշալիորեն կառուցված պաշտպանական հանգույցի վրա, այլ գյուղը շրջափակող թուրքաբնակ մյուս բնակավայրերը, որոնք կռիվների ընթացքում հնարավոր բոլոր միջոցներով օգնում եւ օժանդակում էին Բոյուք-Վեդիի իրենց արյունակիցներին:

Օգոստոսի 10-ին հայկական զորքերը անցնում են հարձակման: Թուրքերը ռազմագիտական կանոններով կառուցված ամրություններից դիմահար եւ փոթորկալի կրակով կատաղի դիմադրություն են ցույց տալիս հայկական զորամասերին: Թուրքերի կողմից պաշտպանվող հողի յուրաքանչյուր հատվածը հայ զինվորները նվաճում էին մեծագույն դժվարությամբ: Մի քանի օր ընթացող արյունահեղ կռիվներից հետո հայկական զորքերը խորտակելով թուրքերի դիմադրությունը՝ գրավում են Բոյուք-Վեդիի շրջակա գյուղերն ու բարձունքները, բայց բուն ամրացված շրջանը՝ Բոյուք-Վեդին, նախկին համառությամբ շարունակում է դիմադրել:

Հանրապետության պաշտպանության նախարար գեներալ Հախվերդյանը կառավարությանը ներկայացրած օգոստոսի 16-ի հաղորդագրությունում զեկուցում է.

«Օգոստոսի 10-ի հարձակումից հետո իրավիճակի բարդացման հետեւանքով որոշվել է անցնել պաշտպանության: Մեր զորամասերն այդ շրջանում զբաղեցնում են Կոտոր, Բոզ-Բուրուն, Շիրազլու, Քյուչուկ-Վեդի, Խոր-Վիրապ գիծը: Զորամասի կազմը նույնն է»[1]:

Հանրապետության մի շարք շրջաններում նախկին ուժգնությամբ դեռեւս շարունակվում էին կռիվները: Մինչեւ Բոյուք-Վե-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 1, գ. 178, թ. 16:

դիի եւ նրա շրջակա թուրքաբնակ գյուղերի վրա հարձակում ձեռնարկելը՝ հայկական զորքերը մեծ հաջողությամբ կարողանում են լուծել Շարուրի շրջանը ասպատակող մահմեդական հրոսակախմբերի հարցը: Օգոստոսի սկզբներին ահազանգ ստանալով Շարուրի շրջանում թուրք զինյալների կողմից շարունակվող բռնությունների եւ հարեւան շրջանների հայկական գյուղերի վրա կատարած հարձակումների մասին՝ Դրոն ոչ մեծ զորախմբով արշավում է Շարուրի գավառակ եւ օգնում այդ շրջանն ազատագրելու նպատակով այնտեղ գործուղված մարտական ուժերին: Համատեղ հարվածներով հայկական զորախմբերը ջախջախում են թուրք հրոսակախմբերին եւ դուրս շպրտում Շարուրի տարածքից:

Օգոստոսի 7-ին հանրապետության կառավարությունը ստանում է հետեւյալ զեկուցագիրը. «Շարուրի թուրքերը, ավելի քան երկու հազար զինյալներով, երկու թնդանոթներով ու գնդացիրներով, Խաչիկ գյուղի շրջանում համառ մարտերից հետո գլխովին ջախջախվել են եւ մեծ կորուստներով հետ շպրտվել»[1]:

Շարուրի թուրքերի ջախջախումն ու վնասազերծումը շատ կարեւոր էր, բայց գլխավոր թիրախը դարձյալ Բոյուք-Վեդին էր: Ճիշտ է, օգոստոսի 10-ի հարձակումը չավարտվեց սպասված արդյունքով, սակայն հայկական զորքերը, գրավելով Բոյուք-Վեդիի մերձակա բարձունքներն ու բնակավայրերը, հակառակորդի նկատմամբ ձեռք բերեցին շոշափելի դիրքային առավելություն եւ նախկին իրավիճակի համեմատ հարձակումը զարգացնելու ավելի բարենպաստ հնարավորություն:

«Մի քանի օրուայ արիւնահեղ կռիւներից յետոյ, - գրում է Ս. Վրացյանը, - հայկական զօրքերը ամրացան դիրքերում Բէոյիք-Վեդիի առջեւ եւ վերջ տուին գործողութիւններին, դրութիւնը սկսել էր լրջանալ միւս մասերում»[2]:

Հայաստանի տարածքում բռնկված մահմեդականության զինյալ ելույթների հրդեհը ընդարձակվելով՝ տարածվում է նաեւ հանրապետության տարածքներից դուրս: Դիադինի, Բայազետի, Ղարաքիլիսայի եւ Ալաշկերտի թուրքական ու նրանց միացած քրդական հրոսակախմբերը, օգտվելով Հայաստանի տարածքում իրենց արյունակիցների ու հավատակիցների սանձազերծած ելույթներից, ասպատակում են Սուրմալուի գավառ եւ վայրի մոլուցքով հարձակվելով հայկական բնակավայրերի վրա՝ սպանում, առեւանգում ու թալանում են գավառի հայ բնակիչներին: Սուրմալուի ուղղությամբ մարտնչող գնդապետ Տիգրան Բաղդասարյանի գլխավորած 8-րդ գունդը (1000 սվին), չկարողանալով ինչպես հարկն է դիմագրավել թշնամու մեծաքանակ ուժերի ճնշմանը, անընդմեջ կռիվներ մղելով, հարկադրված նահանջում է գավառի կենտրոն՝ Իգդիր: Զարդերի ահավոր սպառնալիք է ծառանում գավառի հայ բնակչության վրա:

Օգոստոսի 16-ին հանրապետության կառավարությանն ուղղած իր զեկուցագրում զինվորական նախարար գեներալ Հախվերդյանը նշում է. «...Թուրք, քուրդ, թաթարական հրոսակախմբերը, մոտավորապես հինգ հազար թվակազմով, հարձակվել են մեր զորամասերի վրա Ինջայի եւ Մոլակոմարի շրջանում: Համառ մարտերից հետո մեր զորամասերը հակառակորդի ճնշման տակ որոշակի հաջողությամբ հարկադրված նահանջել են: Օգոստոսի 14-ին Իգդիրյան զորախմբին հրամայված է թողնել Կողբը եւ նահանջել դեպի Կարակալայի կամուրջը, Զարալկի սարի, Խալֆալ գյուղի ուղղությամբ եւ այնտեղ ամրանալով ամեն գնով կասեցնել հակառակորդի հարձակումը»[1]:

Զինվորական նախարարի եւ պաշտոնական այլ փաստաթղթերում մատնանշված՝ Սուրմալուի գավառ ներխուժած թուրք-քուրդ հրոսակախմբերի անձնակազմը նույնն է՝ 5000, իսկ նրան դիմակայող հայկական միակ զորամասը՝ 8-րդ գունդը, իր թվակազմով հինգ անգամ պակաս:

«Մեր ուժերը, - գրում է 8-րդ գնդի 3-րդ վաշտի հրամանատար Հովհ. Սահակյանը, - սահմանափակ էին, մէկ գունդ, իսկ թշնամին խուժան մը, թալանի եւ կոտորածի ախորժակով գինովցած, ոգեւորուած իր լեռներու ուժէն, իր մեծերուն, շէյխերուն, աղաներուն կապուած կոյր հնազանդութեամբ:

Ահա այս էր կացութիւնը: Եւ դեռ կային շատ ու շատ անյարմարութիւններ մեզի համար»[2]:

Ինչպիսի՞ մարտական ուժերից էր բաղկացած եւ ի՞նչ պաշտպանական բնագծեր էր զբաղեցնում 8-րդ գունդը:

Համաձայն տեղակալ Հ. Սահակյանի վկայության.

«Գունդը ունէր երկու գումարտակ, չորսական վաշտով: Ամէն մէկ վաշտը կը բաղկանար 100-120 զինուորէ: Այս հաշուով մեր գունդին ռազմական ուժը կը ներկայացնէր 8-900 սուին, չորս լեռնային թնդանօթ, 2 գնդացիր, մօտ 50 հեծեալ:

---

[1] ՀԱԱ, ֆ. 275, g. 1, գ. 178, էջ 16:
[2] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 300-301:

[1] ՀԱԱ, ֆ. 275, g. 1, գ. 178, էջ 16:
[2] Մատենաշար «Ռազմիկ», 1937, թիւ 1, «Էջեր մեր ազատագրութեան պատմութիւնից», գրեց Յ. Սահակեան, էջ 42:

...Գունդը զետեղուած էր հետեւեալ կերպով. Ա. գումարտակի Ա. Բ. վաշտերը Մոլլա-Կամար եւ Ապազկեալ եւ Դ. վաշտը՝ Կողբ:

Բ. գումարտակը կը գտնուէր Իգդիրի մէջ, Օրկովի ուղղութեամբ քշած էր երկու վաշտ:

Մեր գունդի պաշտպանութեանը յանձնուած էր Օրկովի բարձունքէն Բարթողեան լեռնաշղթայի գագաթները, մինչեւ Կողբ երկարող սահմանը, մօտ 30-40 վերստ տարածութիւն»[1]:

Այս տվյալները պարզորոշ վկայում են, որ ընդամենը մեկ գնդի զբաղեցրած պաշտպանական բնագծերն ավելի քան ընդարձակ էին: Իրականում այլընտրանք չի եղել, քանի որ թուրք-քրդական զինյալ մարտախմբերը հարձակվել են միաժամանակ մի քանի ուղղությամբ, տարբեր բնակավայրերի վրա, ապա գնդապետ Տիգրան Բաղդասարյանի գունդը հարկադրված իր ուժերը մասնատելով թշնամուն դիմակայել է գրոհի բոլոր ուղղությամբ:

Սուրմալուում ծավալվող դեպքերը կարող էին ընթանալ վատթարագույն ուղղվածությամբ: Առանց լուրջ օգնական ուժերի գավառի հայությանը պաշտպանող միակ մարտական ուժը՝ 8-րդ գունդը, կարող էր հայտնվել անելանելի իրավիճակում: Այդ հանգամանքը հաշվի առնելով եւ սթափ գնահատելով ստեղծված կացությունը՝ գնդի հրամանատարությունը օգնական ուժեր ստանալու հույսով դիմում է Երեւան: Սուրմալուի շրջաններում տիրող տագնապալի դրությունը կարող էր ծայրահեղ վատթարագույնի հասցնել նաեւ այն, որ Էրզրումից դեպի Սարիղամիշ շարժվող թուրքական կանոնավոր դիվիզիան, համաձայն հանրապետության բանակի հետախուզության ձեռք բերած տվյալների, յուրաքանչյուր պահի կարող էր արշավել նաեւ Սուրմալու:

Օգոստոսի 16-ին հանրապետության վարչապետի պաշտոնակատար Սահակյանը իր թիվ 26 հեռագրում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Լ. Եվանգուլովին գրում է.

«Թուրք-քուրդ-թաթարական ուժերի կազմակերպված ճնշումների հետեւանքով մեր զորամասերը նահանջել են Իգդիրից ներքեւ դեպի Արաքսի Կարակալա կամուրջը: Մեր աղահանքերը (Կողբ) տեղահանվել են, հավանական է, որ կտեղահանվի նաեւ Իգդիրը: Ունենք տեղեկություն Էրզրում հասած 40 թնդանոթներ ունեցող թուրքական 9-րդ դիվիզիայի մասին, որ շարժվելու է Սարիղամիշի ուղղությամբ...»[2]:

[1] Նույն տեղում:
[2] ՀԱԱ, ֆ. 275, ց. 1, գ. 178, թ. 16:

Թուրքիայում արդեն սկսվել էր քեմալական շարժումը, որն ինչպես պարզվեց հետագայում, մեծ ազդեցություն ուներ նաեւ Կովկասում մահմեդական բնակչության ղեկավարման եւ մասնավորապես Հայաստանում զինված ելույթների հրահրման եւ կազմակերպման գործում: Էրզրում-Սարիղամիշի շրջանում թուրքական դիվիզիայի հայտնվելը նույնպես քեմալականների գործունեության արդյունքն էր, որի նպատակն էր օգտագործել ընձեռված հնարավորությունը եւ հարմար պահի ներխուժել Հայաստան, եւ միանալով մահմեդական ապստամբներին՝ մեկընդմիշտ լուծել Հայաստանի Հանրապետության հարցը: Այդ հարցում քեմալական գործակալները սերտորեն համագործակցում էին Ադրբեջանի Հանրապետության համապատասխան մարմինների հանձնարարությամբ Հայաստանում գործող անձանց հետ:

Մինչ Հանրապետության ղեկավարությունը կձեռնարկեր համապատասխան քայլեր Սուրմալուի պաշտպաններին օժանդակելու ուղղությամբ՝ գավառում դրությունը գնալով ավելի է վատանում: Թուրք-քրդական հրոսակախմբերը, շարունակելով հարձակումը երկու՝ Կարակալայի, Քիթի եւ Օրգովի ուղղությամբ, ներխուժում են Իգդիր եւ մի քանի ժամ ընթացող կռիվներից հետո ընկճելով պաշտպանվողների դիմադրությունը՝ գրավում են քաղաքը:

«Գիշերուան ժամը 3-ին, - նշում է տեղակալ Հ. Սահակյանը, - մերոնք Իգդիր ձգեցին: Թշնամին ամէն ուղղութեամբ խուժելով աւարի տուած էր քաղաքը»[1]:

Իգդիրի հանձնումը վեր էր ամեն մի սպասվածից: Եթե այդ ամենին գումարվեր նաեւ այն, որ թուրքական դիվիզիան հանկարծ որոշեր շարժվել դեպի Սուրմալուի ճակատ եւ միանար այդ գավառում արդեն գործող թուրք-քրդական մարտախմբերին, ապա դժվար չէ կանխագուշակել, թե ինչպիսի ահավոր, անելանելի իրավիճակում կհայտնվեին Սուրմալուի հայ բնակչությունն ու նրան պաշտպանող հայկական զինական ուժերը: Ծայրահեղորեն անհրաժեշտ էր դիմել ամենավճռական միջոցների եւ կտրուկ ու անսպասելի գործողություններով ջախջախել այդ գավառը ասպատակող զինյալ խմբավորումները եւ արագ ու հուսալիորեն կազմակերպել այդ շրջանների ինքնապաշտպանությունը, քանի դեռ թուրքերը չէին հասցրել լրացուցիչ մարտական ուժեր տեղափոխել Էրզրում-Սարիղամիշ ուղղությունից Սուրմալուի ճակատ: Հակառակ պարագայում թուրք-քրդա-

[1] Մատենաշար «Ռազմիկ», 1937, թիւ 1, «Էջեր մեր ազատագրութեան պատմութիւնից», գրեց Յ. Սահակեան, էջ 44:

կան հրոսակախմբերը Սուրմալուի ճակատի հայկական ուժերի դիմադրությունը հաղթահարելուց հետո կարող էին զարգացնել հարձակումը եւ գետանցելով Արաքսը՝ ներխուժել հանրապետության տարածքը, Արարատյան դաշտ:

Այն օրերին, երբ թուրք-քրդական հրոսակները, ասպատակելով Սուրմալուի շրջանները եւ ընկճելով հայկական զորախմբերի դիմադրությունը՝ ներխուժում էին Իգդիր, Դրոն գտնվում էր Ղամարլուի ռազմաճակատում եւ ղեկավարում էր Բոյուք-Վեդիի ու նրա շրջակա թուրքաբնակ գյուղերի վրա գրոհող զորքերի գործողությունները: Տեղեկանալով թշնամու կողմից իր ծննդավայրի՝ Իգդիրի գրավման մասին, Դրոն ոչ մեծաքանակ զորախմբով իսկույն եւեթ մեկնում է Սուրմալուի ճակատը: Բոյուք-Վեդիի շրջակա գյուղերը գրավելուց եւ թուրք ապստամբների հիմնական որջը շրջափակելուց հետո՝ իրավիճակը այդ շրջանում (Ղամարլուի ռազմաճակատ - Հ.Գ.) հուսալիորեն կայունացել էր, բայց վտանգը չէր անցել: Մահմեդական ուժերը դեռեւս վերջնականապես ջախջախված չէին, հարկավոր էր ծայրահեղորեն զգոն լինել եւ դույզն-ինչ չթուլացնել Բոյուք-Վեդիի հզոր պաշտպանական հանգույցը շրջափակած հայկական զորամասերը, հակառակ պարագայում թուրքական ուժերը կարող էին օգտագործել պատեհ հնարավորությունը եւ նոր տհաճ անակնկալ մատուցել հայկական զորքերի հրամանատարությանը:

Մյուս կողմից՝ յուրաքանչյուր պահի կարող էին ապստամբել Կարսի, Սարիղամիշի մահմեդականները, եւ չէր բացառվում Էրզրումի ուղղությունից թուրքական դիվիզիայի Կարսի նահանգ ներխուժման հնարավորությունը: Իսկ զորքերի քանակը բավական սահմանափակ էր եւ մեծամասամբ արդեն գտնվում էին գործող ռազմաճակատի տարբեր հատվածներում: Սակայն այլընտրանք գոյություն չուներ: Թշնամու կողմից գրավված էր իր հայրենի քաղաքը, եւ Դրոն ընդամենը երկու հարյուրակից բաղկացած հեծելախմբով, առանց դույզն-ինչ ժամանակ կորցնելու, անվարան ուղեւորվում է Սուրմալուի ճակատ:

«Երեւանէն, - վերհիշում է տեղակալ Հ. Սահակյանը, - եկած ուժը Տէլիք-Թաշ հասաւ,- մօտ 200 ձիաւորներ ու հետեւակ-կամաւորներ Դրոյի հրամանատարութեամբ:

Ցանդուգն եւ քաջարի հրամանատարը անմիջապէս հակայարձակման անցաւ...»[1]:

[1] Նույն տեղում:

Առաջին հերթին անհրաժեշտ էր թշնամուց հետ նվաճել Իգդիրը, թույլ չտալ, որպեսզի թուրք-քուրդ հրոսակները մինչեւ վերջ քանդեն ու ավերակների վերածեն քաղաքը: Իգդիրի արագ ազատագրումը կարող էր վճռական նշանակություն ունենալ թշնամուն ջախջախելու եւ ողջ գավառը վերանվաճելու, տեղի հայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու գործում: Քանի որ ավելի քան սահմանափակ էին իր զորախմբի մարտական ուժն ու հնարավորությունները՝ Դրոն հաշվենկատորեն որոշում է առավելագույնս օգտագործել այդ ճակատում մարտնչող հայկական զորամասերի՝ 8-րդ գնդի մարտական ողջ կարողությունները:

Դրոյի ներկայությունը ոգի եւ մարտնչելու վճռականություն ու կորով են հաղորդում մինչ այդ նահանջող 8-րդ գնդի զինվորներին: Կարգի բերելով գումարտակների ուժերն ու արագորեն ծանոթանալով ճակատում, մասնավորապես Իգդիրի շրջանում տիրող կացությանն ու հաշվի առնելով հայկական զորքի սահմանափակ հնարավորությունները՝ Դրոն վճռում է քաղաքի վրա գրոհ ձեռնարկել համեմատաբար փոքրաթիվ ուժերով, ընդսմին, խստորեն ապահովելով հարվածի առավելագույն սրընթացությունն ու անսպասելիությունը: Թշնամու վրա հարձակվելու նման համարձակ որոշում կայացնելիս՝ նա, ելնելով իր մարտական հարուստ կենսափորձից, խելամտորեն արժեւորում է այն իրողությունը, որ թուրք-քրդական ոչ կանոնավոր զորախմբերն անսպասելի եւ հուժկու հարվածների դեպքում կարող էին արագորեն խուճապի մատնվել եւ դիմել փախուստի: Նրա համոզմամբ, թուրք-քուրդ հրոսակների խուճապի մատնվելուն մեծապես կարող էր նպաստել նաեւ այն հանգամանքը, որ ներխուժած զինյալների հետ էին նաեւ նրանց կանայք եւ անզեն տղամարդիկ, որոնց միակ նպատակը հայերի ունեցվածքի թալանն էր ու կողոպուտը:

Իր մտահղացումը իրականացնելու նպատակով նա հրամայում է 8-րդ գնդի Ե. Տ. Մարտիրոսյանի եւ Հ. Սահակյանի (հուշագրության հեղինակը - Հ.Գ.) գլխավորած 2-րդ եւ 3-րդ զորավաշտերին աննկատ առաջանալ եւ դիրքավորվելով Իգդիրի եւ Սուլթանաբադի միջեւ ընկած տարածքում՝ փակել դեպի Օրգով նահանջող թշնամու ուղին: Իսկ ինքը հարվածող զորախմբով, դարձյալ աննկատ, խճուղու ուղղությամբ պետք է ներխուժեր Իգդիր եւ անսպասելի ու հուժկու հարվածներով ջախջախեր եւ քաղաքից դուրս չպրտեր այնտեղ բույն դրած թուրք-քուրդ զինյալներին ու նրանց ուղեկցող կանանց եւ անզեն տղամարդկանց: Գնդի մյուս զորավաշտերը պետք է մնային իրենց զբաղեցրած դիրքերում[1]:

[1] ՀԱԱ, ֆ. 275, ց. 1, գ. 178, թ. 36:

Հարձակմանն առնչվող յուրաքանչյուր մանրուք հաշվարկված է եղել խելամտորեն եւ շատ ճշգրիտ: Թշնամու մեծաքանակ, նախորդ մարտերի հաջողություններից զգաստությունը կորցրած հրոսակախմբերը, չկասկածելով, որ հայերն այդքան կարճ ժամանակամիջոցում կարող են արագ կազմակերպվել եւ հարձակում ձեռնարկել՝ խուճապի են մատնվում եւ դիմում փախուստի:

«Դրօն,- նշում է տեղակալ Հ. Սահակյանը, - իր ծննդավայրի պատիվը փրկելու համար դիմեց այդպիսի յանդուգն ձեռնարկի մը: Իր կարճ հրաման-որոշումը տալէն վերջ իր քաջերով դէպի Իգդիր յառաջացաւ:

...Դրօն իր մարդոցմով անշշուկ ու անարգել մտած էր քաղաքին կենդրոնի պարտէզը: Թշնամին այնքան վստահ էր իր յաղթանակին վրայ, որ բնաւ մտքէն չէր անցներ թէ խուճապահար փախած հայ զօրքը պիտի յամարձակի մտնել քաղաքի կեդրոնը:

Դրօն քաղաքի կեդրոնը հասնելէն յետոյ, յարձակման կ՚անցնի տասնոց մաուզէրներով եւ սուիններով: Մէկ ժամէն արդէն քաղաքը դատարկուած էր»[1]:

2-րդ եւ 3-րդ զորավաշտերը, համաձայն Դրոյի հրահանգի, հաղթահարելով ճանապարհի դժվարություններն ու խոչընդոտները, անշշուկ դիրքավորվում են Իգդիրի մերձակայքում եւ սառնասրտորեն սպասում թշնամու հայտնվելուն:

«Ճիշդ այդ վայրկեանին, - շարունակում է Հ. Սահակյանը, - Իգդիրը սկսաւ ոռնալ հարիւրաւոր անօթի գայլերու նման: Մենք մեր հրացանի փողերը դարձուցած Իգդիրի ուղղութեամբ կը սպասէինք: Խուճապային վայնասուն մըն էր որ ծայր տուաւ: Ձիաւորներու, հետեւակներու, կիներու, բեռնաւորուած մարդոց փախուստի շուքերը սկսան արագ արագ մեր կողմը շարժիլ անհասկանալի ձայներ հանելով:

... Մենք գործի անցանք:

Խաւարի մէջ ճարճատող գնդակները սարսափ ձգեցին ընդարձակ տափարակին վրայ: Մարդկային աղեխարշ վայնասուն մըն էր, որ ծայր տուաւ:

... Մեր հրացանները շարունակ կը բացուէին ու կը խփուէին...

... Թշնամի խուժանը դէպի Օրկով փախուստի ճամբան բռնած, ինկած էր այդ տարածութեան տափարակի մէջ, մեր գնդակներու հարուածին տակ»[2]:

[1] Նույն տեղում, էջ 45-47:
[2] Նույն տեղում:

Շնորհիվ կշռադատված ու հանարձակ մարտավարության, խելամիտ հաշվարկի եւ վճռական ու արագ գործողությունների, ձեռք բերվեց առաջին նշանակալի հաջողությունը: Սուրմալուի գավառի կենտրոն Իգդիր քաղաքը ազատագրվեց շատ արագ եւ գրեթե առանց զոհերի: Զարգացնելով հարձակումը՝ հայկական զորախմբերը հաջորդ օրը եւեթ չթուլացող արագությամբ անկասելի հարվածներով խորտակելով խուճապի մատնված հակառակորդի դիմադրությունը, գրավում են Սուլթանապատ, Արխաճ գյուղերը, իսկ հաջորդ օրերին նաեւ թուրքաբնակ մյուս բնակավայրերը եւ ջախջախելով այդ շրջաններն ասպատակող թուրք-քրդական հրոսակախմբերին՝ դուրս են շպրտում նրանց Սուրմալու գավառի տարածքից:

Դրոն կրկին անգամ հաստատեց, որ կռիվներում հաղթանակներ նվաճելը բոլորովին էլ պայմանավորված չէ սոսկ մարտական ուժերի մեծաքանակությամբ:

Գնահատելով Սուրմալուի գավառում ընթացած մարտերի արդյունքները՝ վերոհիշյալ Հ. Սահակյանը գրում է. « Թշնամիի այս վերջին յարձակումը իրեն շատ սուղի նստաւ, իր բոլոր յարձակումներուն հետ քանի մը չէն ու հարուստ թաթար գիւղերու կործանումը փութացուց: Այս անգամի յարձակումը մարդկային մեծ կորուստի պատճառ դարձաւ, Սուլթանապատ եւ Արկաճ գիւղերը աւերակի վերածել տուաւ:

... Թերեւս իր առած այդ դասերէն խրատուած, բաւական ատեն մեզ հանգիստ ձգեց»[1]:

Դրոն փայլուն կերպով է կատարում Հայաստանի Հանրապետության կառավարության հերթական հանձնարարությունը: Նրա գլխավորած համեմատաբար փոքրաքանակ մարտական ուժերը հաշված օրերի ընթացքում ոչ միայն գլխովին ջախջախում են Սուրմալուի գավառն ու նրա կենտրոնը՝ Իգդիր ներխուժած թշնամու ուժերն ու փրկում տեղի հայությանը վերահաս կոտորածից, այլեւ խորտակում այդ ուղղությամբ հանրապետության տարածքը ներխուժելու նպատակաուղղված թուրք-քրդական բազմահազար հրոսակների ձեռնարկումները:

Սուրմալուի գավառում թուրք-քրդական վերջին հրոսակներին դուրս շպրտելուց հետո Դրոն անհապաղ վերադառնում է Երեւան:

Ճիշտ է, Սուրմալուի ճակատում հայկական զորամասերի նվաճած հաղթանակը շատ կարեւոր էր, բայց այդ գավառը զինված

[1] Նույն տեղում, էջ 49:

բախումների թատերաբեմի վերածված բնակավայրերի ընդամենը մի շրջանն էր:

Օգոստոսի 23-ին Շարուր-Նախիջևանի զինյալ հրոսակախմբերի առաջնորդ Խալիլ բեյի համհարզ Մահմեդ բեյի գլխավորությամբ զենքի է դիմում Զանգիբասարի մահմեդականությունը եւ նախորդ տարիներին ձեռնարկած գործողությունների համանմանությամբ սկսում է զանգվածային հարձակումներ Ուլուխանլու, ապա Էջմիածին կայարանների, հայկական բնակավայրերի ու հաղորդակցության ուղիների վրա:

Հանրապետության վարչապետ Ալ.Խատիսյանը, խոր անհանգստություն արտահայտելով Զանգիբասարի շրջանում մահմեդական զինյալների ծավալած գործողությունների կապակցությամբ, Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Եվանգուլովին ուղղած նույն ամսի 27-ի հեռագրում նշում է.

«Անմիջապէս հաղորդեցեք Հասկելին (Փարիզի վեհաժողովի հինգ անդամ տերությունների ներկայացուցիչների խորհրդի կողմից նշանակվել էր Հայաստանի կոմիսար. այդ օրերին գտնվում էր Թիֆլիսում - Հ.Գ.), որպեսզի անհապաղ Երեւան ուղարկի ամերիկական սպաների, քանի որ Կարսից անգլիացիների հեռանալուց հետո Ուլուխանլու-Էջմիածին ճակատի վիճակը չափազանց ծանրացել է»[1]:

Այն ժամանակահատվածում, երբ Դրոն Սուրմալուն մաքրում էր քրդական ցեղախմբերից, թուրքական հրոսակախմբերը Սուրմալուի տարածքից գետանցելով Արաքսը՝ պարբերաբար ներխուժում են Արարատյան դաշտ եւ իրենց տեղացի արյունակիցների աջակցությամբ հասնում մինչեւ Էջմիածին: Դրոն, մշտապես գտնվելով շարժման մեջ, Էջմիածինի շրջանի բնակչությանը սպառնացող թուրք հրոսակներին «խաղաղացնելու» գործը հանձնարարում է Էջմիածնի գավառապետ Սեդրակ Ջալալյանին, որը մինչ այդ իրեն լավագույնս էր դրսեւորել Բաշ-Ապարանի հերոսամարտում, ինչպես նաեւ ապստամբ մահմեդական զինախմբերի դեմ մղված կռիվներում: Սեթոն այս անգամ եւս անթերի է կատարում մարտական առաջադրանքը: Նրա գլխավորած զորախմբերը ջախջախում են ոչ միայն Արարատյան դաշտ ներխուժած հրոսակախմբերին, այլեւ հիմնահատակ կոչնչացնեին Էջմիածնի գավառում գտնվող թուրքաբնակ բնակավայրերը, եթե չկանգնեցնեին նրանց հարձակումը[2]:

[1] ՀԱԱ, ֆ. 275, ց. 1, գ. 178, թ. 36:
[2] ՀՅԴ ԿԱ, թղ. 41, գ. 5, էջ 3:

«... Երբ,- իր ինքնակենսագրականում գրում է Սեթոն, -Սուրմալուի ճակատը խախտուած էր եւ թշնամու ոյժերը անցնում էին Էջմիածնի գաւառը, Դրօի կարգադրութեամբ ձեռնարկեցի ռազմական գործողութիւններ ապստամբ թուրքերի դէմ: Որի հետեւանքով մեր կուսակցութեան թշնամիները մեծ աղմուկ բարձրացրին եւ ստիպուած հրաժարուեցի այդ պաշտօնից»[1]:

Տվյալ ժամանակահատվածում, երբ հանրապետության բանակի հիմնական զորամիավորումները զբաղված էին տարբեր ճակատներում ապստամբ օջախների վնասազերծմամբ, Դրոյի գլխավորած խիստ սահմանափակ մարտական ուժեր ունեցող Երեւանյան զորախմբի համար չափազանց դժվար էր խորտակել թուրքական բազմաթիվ բնակավայրերի շատ լավ ամրացված պաշտպանական հանգույցների դիմադրությունը եւ ստիպելու թուրք պարագլուխներին ընդունելու հանրապետության կառավարության գերիշխանությունը: Որպես զինվորական նախարարի օգնական Դրոն ակտիվորեն մասնակցում էր հանրապետության բանակի մյուս զորամասերի կազմավորման եւ մարտական գործողությունների մշակմանն ու ղեկավարմանը: Գործի բերումով նա մշտապես շարժման մեջ էր, ռազմաճակատի ամենաթեժ կետերում ու կռիվների հորձանուտում:

Մինչ Զանգիբասարի եւ Էջմիածնի դեպքերը, օգոստոսի 18-ին բռնկվել էր մահմեդականության շարժումը նաեւ Կարսի նահանգում: Թուրք-քրդական հրոսակները, որոնց իրենց զորախմբերով օգնում էին թուրք սպաները, կամենալով որեւէ կերպ օգնել Հայաստանի մյուս թուրքաբնակ շրջաններում զենքի դիմած իրենց արյունակիցներին՝ սկսում են զանգվածային հարձակումներ գործել հայկական բնակավայրերի եւ առաջին հերթին Սարիղամիշի, Կաղզվանի վրա՝ նպատակադրվելով շրջափակել ու մեկուսացնել այնտեղ գտնվող հայկական զորամասերը եւ զրկել նրանց մյուս շրջանները պաշտպանելու հնարավորությունից:

«Օգոստ. 18-ին 1500 զինուած քրդեր ու թուրքեր յարձակուեցին Կաղզուանի վրայ, բայց յետ մղուեցին: Օգոստ. 21-ից սկսեցին մի շարք ընդհարումներ քիւրդերի եւ հայկական կանոնաւոր ուժերի միջեւ: Օգ. 22-ին 400 թուրքեր գրաւեցին Բայքարա գիւղը, Սելիմից 15 վերստի վրա՝ կամենալով փչացնել երկաթուղին Բեգլի-Եհմէդի մօտ եւ կտրել Սարիղամիշի հայկական զօրամասի հաղորդակցութեան գիծը: Դեւիկի մօտ քրդերը գնդակահարեցին անգլիական մի

[1] Նույն տեղում:

ինքնաշարժ եւ վիրաւորեցին մի զինուոր: Հայկական հողերի վրայ երեւացին եւ թիւրքական ուժեր»[1]:

Սարիղամիշի շրջանում թուրք-քրդական հրոսակախմբերի ելոյթներն ավելի են սաստկանում օգոստոսի 28-ին եւ հաջորդ օրն արդեն նրանց պարագլուխները վերջնագիր են ներկայացնում հայկական կողմին՝ 16 ժամվա ընթացքում շրջանի տարածքը թողնելու պահանջով: Հայկական կողմից չստանալով իրենց ցանկալի պատասխանը՝ թուրք-քրդական զինյալ ուժերը կենտրոնանում են Ղազիման-Ղարաքուրդ շրջանում եւ անցնում հարձակման: Երկու օր տեւողությամբ ընթացող կռիվներում հայկական մարտական ուժերը հետ են մղում թուրք-քրդական հրոսակախմբերի գրոհները եւ անցնելով հակահարձակման՝ խորտակում են հակառակորդի դիմադրությունն ու ամրապնդվում Երմիրյուրտան-Ներքին Սալախի բնագծում[2]:

Սարիղամիշում ծավալած մարտական գործողություններին զուգընթաց թուրք-քրդական ուժերը հայկական բնակավայրերի վրա հարձակումներ են սկսում գործել Մարդանեկի շրջանում եւ դարձյալ վերջնագիր ներկայացնում հայկական կողմին:

Այս շրջանում մարտական գործողությունները զարգանում են նույն ուղղվածությամբ, ինչ Սարիղամիշում: Մարդանեկի հայկական զորամասը, անկոտրում պաշտպանությամբ հետ մղելով թուրք-քրդերի գրոհները, անցնում է հակահարձակման եւ դուրս վանելով թշնամուն այդ շրջաններից՝ հուսալիորեն ապահովում հայկական բնակավայրերի անվտանգությունը[3]:

Այս հաղթական մարտերից հետո հանրապետության բանակի հրամանատարությանը հաջողվում է վնասազերծել ու խաղաղեցնել շիկացած շրջաններից մեկը եւս՝ Կարսի նահանգը: Իսկ ընդհարումների մյուս վայրերում, մասնավորապես Նախիջեւանում, իրավիճակը շարունակում էր մնալ ծայրահեղորեն լարված, բայց ոչ այնքան վտանգավոր, քանի որ արդեն վնասազերծվել էր ապստամբ բնակավայրերի մի մասը եւ ամենակարեւորը, ձեռնարկած միջոցառումների շնորհիվ հանրապետության կառավարությանը հաջողվում է կազմակերպել ու հզորացնել բանակը եւ խաղաղեցված շրջաններից զորամասերի մի մասը տեղափոխել վտանգված շրջաններ:

Վաշինգտոնի ՀՀ ներկայացուցչին հասցեագրած ուղերձում Ալ. Խատիսյանը համառոտակի ներկայացնելով Անգլիայի եւ Ամերիկայի ներկայացուցիչների կողմից հայ-ադրբեջանական զինված բախումները դադարեցնելու ու հարաբերությունները կարգավորելու նպատակով ձեռնարկած ոչ այնքան արդյունավետ միջոցառումները, նշում է. «Մեր զորքերը վեց տարեւոյ անդադար կռիւներից յետոյ, շարունակում են կատարել իրենց պարտականութիւնը, բայց ռազմամթերքի եւ շորերի պակասութիւնը այնքան մեծ է, որ կառավարութիւնը հնարաւորութիւն չունի օգտագործել երկրի բոլոր կուռող ոյժերը Մենք հազիւ կարողանում ենք երկրի սահմանները պաշտպանել»:

Թուրքաբնակ ապստամբ բնակավայրերը վերջնականապես վնասազերծելու ու խաղաղեցնելու համար հայկական բանակին դեռեւս սպասում էին նոր գոտեմարտեր, բազում դժվարությունների հաղթահարում, եւ բնականաբար նորանոր զոհեր ու զրկանքներ: Բայց իրականում դեպքերն ընթանում են այլ ուղղվածությամբ:

Օգոստոսի 20-ին, երբ հանրապետության զանազան շրջաններում դեռեւս մոլեգնում էին մահմեդականների զինված ելույթները, Հայաստան է ժամանում Հաշտության վեհաժողովի Խորհրդի կողմից Հայաստանի կոմիսար նշանակված գնդապետ Հասկելը եւ ձեռնամուխ լինում պատերազմական գործողություններին վերջ տալու եւ խաղաղություն հաստատելու գործին:

Հայաստանի եւ Ադրբեջանի, ինչպես նաեւ ապստամբ շրջանների մահմեդականության պարագլուխների հետ տարվող բանակցություններում գնդապետ Հասկելին հաջողվում է համաձայնեցնել հակամարտող կողմերին:

«Հասկելը,- գրում է վարչապետ Ալ. Խատիսյանը Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Եվանգուլովին, - առաջարկում է իր կողմից Ադրբեջանի հետ ձեռք բերած համաձայնության հիման վրա դադարեցնել մարտական գործողություններն ընդհուպ մինչեւ Շարուրում եւ նահանգում (նկատի ունի Նախիջեւանը - Հ.Գ.) Ամերիկյան նահանգապետության հաստատում:

Կառավարությունը համաձայնվել է դադարեցնել մարտական գործողությունները...»[1]:

Շնորհիվ գնդապետ Հասկելի միջնորդությունների՝ դադարեցվում են մարտական գործողությունները, ապստամբ շրջանների մահմեդականները ընդունում են հանրապետության կառավարության գերիշխանությունը, իսկ Նախիջեւանում ժամանակավորապես հաստատվում է Ամերիկյան նահանգապետություն:

---

[1] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 301:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 177, թ. 119:
[3] Տե՛ս նույն տեղում:

[1] Նույն տեղում, էջ 61:

Ավարտվեցին ամիսներ շարունակ Հայաստանի տարածքում ձգձգվող արյունահեղ կռիվները, որոնք բացի մարդկային զոհերից, պատճառ դարձան նաեւ նյութական հսկայական միջոցների ոչնչացման: Երկիրը վերջապես խաղաղվեց եւ կառավարությունը հնարավորություն ստացավ զբաղվելու Հանրապետության վերակառուցման գործով:

Դրոյի գործունեությունը սահմանափակված չէր միայն Հանրապետության տարածքում ընթացող ռազմական գործողությունների ղեկավարմամբ: Խաղաղ պայմաններում Դրոյին սպասում էր մի նոր փորձություն. ձեռնամուխ լինել երկրի ներքին կյանքում կարգուկանոնի, օրինականության հաստատման խնդիրներին, որոնց կենսագործումը մեծ նշանակություն ուներ Հանրապետության իրավիճակի կայունացման եւ հետագա զարգացման գործում:

ՀՀ ՆԳ նախարար Արամ Մանուկյանի եւ Երեւանյան զորախմբի հրամանատար Դրոյի համագործակցությունը Հայաստանի Հանրապետության սկզբնավորման շրջանում տվել էր իր արդասաբեր պտուղները, սակայն դժբախտաբար 1919 թ. հունվարի 29-ին մահանում է Արամը, բայց հակապետական տարրերի եւ անօրինական զինված խմբավորումների դեմ պայքարը անհրաժեշտաբար պիտի շարունակվեր ու իր ավարտն ունենար:

Մեծ ողբերգություն է ապրել Դրոն՝ լսելով Արամ Մանուկյանի մահը: Այդ առնչությամբ Ս. Վրացյանը գրում է. «...Դրոյի բնակարանում նստած էինք ճաշի: Յանկարծ, դրսի դրան զանգը հնչեց, եւ Դրոյի կինը՝ Արփենիկը ներս բերաւ սարսափահար աչքերով մի երիտասարդ: Արամը մեռաւ, ասաց նա: Դրոյի ձեռքից վար ընկաւ ապուրի գդալը: Առանց մի խօսք արտասանելու՝ նա դուրս թռաւ սենեակից...»[1]:

Արամ Մանուկյանի կառավարման, ապա նաեւ Հանրապետության ստեղծման առաջին տարիներին Հայաստանի տարածքում հայտնվել էին ինքնակոչ «խմբապետ-մաուզերիստներ», որոնք խմբերի գլուխն անցած, զենքի սպառնալիքով թալանում ու կեղեքում էին հայ գյուղացիներին եւ քաղաքի ունեւորներին:

Խորհրդային պատմագիտությունը, չխորշելով մեր ժողովրդի անցյալի հերոսական էջերը կեղծելու սկզբունքներից, հայության ազգային-ազատագրական պայքարի, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության կյանքում տեղ գտած բոլոր բացասական երեւույթները անպայմանորեն վերագրում էր Հ.Յ.Դաշնակցությանը եւ այդ հողի վրա վարկաբեկում ու խեղաթյուրում բազում հայրենանվեր գործիչների պայծառ անունները:

[1] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Ե, էջ 50:

Անդրադառնալով վերոհիշյալ «խմբապետ-մաուզերիստների» հիրավի անվայելուչ, ազգադավ արարքների լուսաբանմանը՝ խորհրդահայ մասնագետները հայության շրջանում տարիներ շարունակ տարածում էին այդ ամենի մեղքն ու պատասխանատվությունը դաշնակցական գործիչների եւ հատկապես Դրոյի վրա բարդելու մտացածին հորինվածքներ: Իսկ իրականում պատմական այդ ժամանակաշրջանի ուսումնասիրությունը ապացուցում է ճիշտ հակառակը: Հենց Դրոյի եւ նրա հրամանատարությամբ գործող մարտական ջոկատների ջանքերով հնարավոր դարձավ Հայաստանի Հանրապետությունում արմատախիլ անել բոլոր տեսակի «հայրենասեր» խմբապետների եւ մաուզերիստների խմբերին: Պատմական հիշյալ ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած դեպքերի ուսումնասիրությունը միանշանակորեն ցույց է տալիս, որ գլխավորապես հենց Դրոյի հաստատակամության եւ անկաշառ վարվեցողության շնորհիվ է Հայաստանի իշխանություններին հաջողվում կայունացնել հանրապետության քաղաքական իրավիճակը, որով հնարավորություն է ընձեռվում կառավարությանը զբաղվելու տնտեսական ու սոցիալ-քաղաքական, իրավական ու մշակութային առավել կարեւորագույն նշանակություն ունեցող խնդիրների լուծմամբ:

Դրոյի՝ «մաուզերիզմի» հիմնադրի մասին ուշագրավ դիտողություններ են ամփոփված գնդապետ Եգոր Տեր-Ավետիքյանի հուշագրությունում:

«Դրոյին մեղադրում են, որ նա եղաւ «Մաուզերիզմի» հիմնադիրը...ես էլ եմ Դրոյի ընկերն ու երկրպագուն, յայտարարում ու հաստատում եմ, որ Դրոն էր, որ կովկասահայութեան, խոր մրափի մէջ ընկած շրջանում, «Մաուզէրիզմ»-ը հիմնադրեց: Ահա թէ ինչպէս եղաւ այդ, ինչո՞ւ Դրոն «Մաուզէրիստ» դարձաւ:

Ձեզ բոլորիդ էլ՝ զէնք չսիրող, զէնքի արժէքը ժխտողներիդ յայտնի է, որ մեր դժբախտութիւնը, մեր կորուստները, մեր ամենաարժէքնի է, որ մեր դժբախտութիւնը, մեր կորուստները, մեր ամենաարժէքնի է, որ մեր գիւղացիութեան վախկոտութեան կամ այլ քաւոր մասսայի - հայ գիւղացիութեան վախկոտութեան կամ այլ պատճառների չպիտի վերագրել, այլ գերազանցօրէն ներքին այն պատճառներին, որոնք են՝ զէնք չսիրելը, զէնքի արժէքը ժխտելը...»:

«...Գոյութեան կռիւը հիմնուած է միայն զէնքի վրայ, այլ ոչ թէ մորալի, չիտակութեան, մարդասիրութեան, արդարութեան սկզբունքների վրայ...»:

«Ցոյց տուէք, որ արարչի մի որեւէ ստեղծագործութիւն զրկուած լինի ինքնապաշտպանութեան զէնքից կամ հնարաւորութիւնից եւ այն ժամանակ միայն դատապարտեցէք մեզ, մեր արտահայտած կարծիքի համար, որ գերազանցօրէն Դրոյինն է միեւնոյն ժամանակ...»:

«...Եւ երբ Հայաստանն ու Դրօն համաձայնեցին իրենց համար էլ մի զէնք գտնել գոյութեան կռուի համար եւ մաուզէր ատրճանակն ընդունեցին առաջին հերթին, անիրաւ, զէնք չսիրող, զէնքի արժէքը ժխտող հայն ուրիշ բան չգտաւ եւ մխիթարեց իրենց մեզ համար նոր տիտղոս գտնելով՝ «Մաուզէրիստներ»[1]:

Կռվում նրա առավել սիրած զենքերից էր նաեւ մաուզերը, որով նա ձգտել է զինել եւ իր մարտական ընկերներին: Այս հարցում նրա գործունեությանը քաջատեղյակ Եգոր Տեր- Ավետիքյանի դատողությունները ճշմարիտ են ու բավականին խոսուն: Սակայն նրա զինվորների զենքերը, որոնց թվում նաեւ մաուզերները, գործածվել են միմիայն ի պաշտպանություն հայ ժողովրդի: Իսկ «մաուզերի» սպառնալիքով ժողովրդի ունեցվածքը հափշտակողների նկատմամբ նա գործադրել է ամենախիստ պատժամիջոցները:

Դրոյի գլխավորած զորախմբերն իրենց զինվածությամբ ու կազմակերպվածությամբ, ինչպես արդեն նշվել է, գրեթե միշտ լավագույնն են եղել: Այս առում կարելի է վկայակոչել Հայկական դիվիզիայի շտաբի պետ գնդապետ Մ. Զինկեւիչի, նույն դիվիզիայի հրամանատար գեներալ Սիլիկյանին 1918 թ. հոկտեմբերին 1-ին ներկայացրած թիւ 40-41 զեկուցագիրը:

Գնդապետ Զինկեւիչը սեպտեմբերին հետաքննություն է անցկացրել իրենց գլխավորած դիվիզիայի զորամասերում եւ ուսումնասիրության արդյունքների մասին հրամանատարին ներկայացրած զեկույցում հատկապես ընդգծում է Դրոյի զորամասի կազմակերպվածությունն ու բավարար քանակությամբ զենք ու զինամթերք ունենալու իրողությունը: Գնդապետի գնահատմամբ՝ նոր զորահավաքի ժամանակ Դրոն կարող է լիովին ապահովել իր զորամասի զինվորների զինվածությունը[2]:

Միաժամանակ, Զինկեւիչը թվարկում է զորամասի զորանոցային վատ պայմանները, սննդի ու հանդերձանքի անմխիթար վիճակը: Պիտի նկատել, որ նրա կողմից նշված թերություններն այդ ժամանակահատվածում ունեին համընդհանուր բնույթ եւ վերաբերվում էին հայկական զինուժին ընդհանրապես[3]:

Զինվորականության շրջանում գնդապետ Մ. Զինկեւիչը հայտնի էր որպես խորագետ, զինվորական ստորաբաժանումների տաղանդավոր կազմակերպիչ ու անաչառ զինվորական եւ իհարկե, նրա կողմից Դրոյին ու նրա գլխավորած զորամասին տրված գնահատականը բոլորովին պատահական լինել չէր կարող:

[1] «Ալիք» բացառիկ, 1956, էջ 85:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 42, թ. 96:
[3] Տե՛ս նույն տեղում:

Նիկոլ Դումանի երկաթյա խստապահանջության եւ կարգապահության դպրոցի բովով անցած Դրոն հայ ռազմագետ-գործիչների մեջ եզակիներից էր իր մարտական զինակիցների, ինչպես նաեւ հասարակ զինվորի նկատմամբ դրսեւորած իր մարդասիրական ու հոգատար վերաբերմունքով: Պատահական չէ, որ նրա գործունեության մասին պահպանված հիմնական տեղեկությունները առավելապես հանդիպում են իր զինակիցների ու զինվորների հուշագրություններում: Վկայակոչենք մի օրինակ: Հայաստանի կառավարությունը հանրապետության տարբեր շրջանների միջեւ հաղորդակցության ուղիները ապահովելու նպատակով աշխատում էր ընդարձակել ոչ միայն երկաթուղային գծերը, ավտոմոբիլային ճանապարհներն ու խճուղիները, այլ նաեւ 1919 թ. կեսերին օգտագործում է Հայաստանի միակ նավարկելի՝ Սեւանա լճի հնարավորությունները: Սեւանա լճում առաջին անգամ շոգենավերի գործարկման հանդիսության օրը մի քանի պաշտոնատար անձանց ուղեկցությամբ ներկա է լինում հանրապետության վարչապետ Ալ.Խատիսյանը: Նույն օրը մի խումբ զինվորականների հետ արարողություններին ներկա է լինում նաեւ Դրոն:

Այդ հանդիսությունների մասին պատմում է Նոր Բայազետի քաղաքագլուխ Վահան Աֆրիկյանը:

«...Կառավարութեան կողմից,-նշումմ է Վ. Աֆրիկյանը,- ներկայ եղողները հիւրասիրուեցին ճաշկերոյթով, որ ղեկավարում էր Ալ. Խատիսեանը: Երբ ջերմ խոսքերով առաջարկեց խմել Դրոյի կենացը, նկատեց, որ Դրօն ներկայ չէր. «Մ՚ւր է Դրօն», տեսանք, որ լճի ափին, մի խումբ զինուորների մէջ կանգնած Դրօն, խմեցնում է զինուորներին եւ կանչել տալիս՝ «Կեցցէ մեր հանրապետութիւնը»: Այդ ժամանակ զօրավար Սիլիկեանը ոտքի կանգնեց ասելով. «Կեցցէ Դրօն, ահա նրա մեծութիւնը»[1]:

Որպես Զինվորական նախարարի օգնական եւ Երեւանյան զորախմբի հրամանատար, Դրոն գործուն կերպով մասնակցել է Հայաստանի Հանրապետությանբանակի շինարարության ու կայացման գործին: Միաժամանակ լինելով Հայաստանի Խորհրդի անդամ, հնարավորության սահմաններում նա իր մասնակցությունն է բերել բանակին վերաբերող օրենքների ու որոշումների մշակմանն ու ընդունման աշխատանքներին:

Նրա ղեկավարությամբ տեղի են ունեցել բանակաշինությանը նվիրված խորհրդակցություններ: Այս առումով արժանահիշատակ է 1919 թ. մարտի 12-ին նրա նախագահությամբ Երեւանում տեղի

[1] «Հայրենիք» օրաթերթ, ապրիլի 24:

ունեցած խորհրդակցությունը, որի աշխատանքներին մասնակցել են գեներալ-լեյտենանտ Մ. Սիլիկյանը, ՀՀ զինվորական նախկին նախարար, հրետանային բրիգադի հրամանատար, գեներալ-մայոր Արարատյանը, ինտենդանտական ծառայության գեներալ-մայոր Զումարովը, գեներալ Սիլիկյանի գլխավորած դիվիզիայի շտաբի պետ, գնդապետ Զինկեւիչը, 2-րդ եւ 3-րդ գնդերի հրամանատարներ Մելիք-Մուրադյանն ու Հալաբյանցն եւ զինվորական մի շարք այլ ստորաբաժանումների հրամանատարներ:

Խորհրդակցությունում Դրոյի, գեներալներ Մ. Սիլիկյանի եւ Ք. Արարատյանի ստորագրությամբ հաստատվում են խորհրդակցության մասնակիցների կողմից ընդունված մի շարք որոշումներ, որոնք վերաբերում էին Հայաստանի Հանրապետության բանակի գրեթե բոլոր բնագավառներին ու անպայմանորեն որոշակի ժամանակահատվածում պիտի կենսագործվեին[1]:

Դրոն, ՀՀ զինվորական նախարարի բացակայության դեպքում երբեմն ժամանակավորապես փոխարինելով նախարարին, կատարել է նրա պարտականությունները: Նրա գործունեության ուսումնասիրությունը միանշանակորեն մատնանշում է, որ նրա, որպես նշանավոր անհատի, արժանիքներից էր իր համոզմունքներն ու ճշմարտությունն ամենայն շիտակությամբ՝ անթաքույց արտահայտելու համարձակությունն ու դավանանքը: Այլընտրանք լինել չէր կարող, քանզի նրա գործունեության գլխավոր ուղենիշներից մեկը հայկական բանակի հզորացմանն ու կայացմանը նպատակաուղղված խնդիրների լուծումն էր:

1919 թ. հունիսին ժամանակավորապես ստանձնելով ՀՀ զինվորական նախարարի պարտականությունը, նա ՀՀ կառավարությանը հունիսի 9-ին ներկայացրած զեկույցում ամենայն շիտակությամբ ու փաստարկվածությամբ շարադրում է ՀՀ զինված ուժերում տիրող իրավիճակն ու անում բազմաթիվ ուշագրավ եւ օգտակար առաջարկություններ:

Կառավարությանը ներկայացրած զեկույցում դրվատելով գեներալներ Սիլիկյանի, Արարատյանի եւ իր գլխավորած զորամասերում կատարված դրական տեղաշարժերը, նա միաժամանակ ներկայացնում է զորքերում տիրող անմխիթար կացությունը: Զորքերում աղետալի էր հանդերձանքի վիճակը, զինվորները շատ հաճախ ժամանակին չեն ապահովվել սննդամթերքով: Մշտապես գտնվելով արշավանքներում ու զինվորական պարապմունքներում, զինվորները տառապում են կեղտի մեջ, իսկ սարերում գտնվելու ժամանակ ապրում են ցրտաշունչ պայմաններում:

[1] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 27. թ. 147:

Դրոյի գնահատմամբ՝ բանակում տիրող վերոհիշյալ աննպաստ պայմանների հետեւանքով զինվորները հիվանդանում են, իսկ բանակում արմատավորվում է դասալքությունը: Նա խստորեն բողոքում եւ դատապարտում է բանակում տիրող անարդարությունը, զինվորական հանդերձանքի ու պետական ունեցվածքի ապօրինի վաճառքը:

Զեկույցում նա կառավարության ուշադրությանն է ներկայացնում նաեւ հանրապետության զինված ուժերում տեղ գտած այն ցավալի ու վնասակար փաստը, որ համապատասխան ծառայությունների կողմից բավարար ուշադրության չեն արժանանում զինվորների կողմից ներկայացված արդար բողոքները եւ անտեսվում ու խստագույն միջոցներ չեն ձեռնարկվում խստագույնս պատժելու հանրապետության այն քաղաքացիներին, ովքեր խուսափելով զորակոչից, զարտուղի ճանապարհներով աշխատանքի են տեղավորվում պետական հաստատություններում:

ՀՀ կառավարության ուշադրությանն ու քննությանը ներկայացնելով զինված ուժերում տիրող իրական կացությունը, Դրոն բանակի կազմակերպվածության ու մարտունակության բարձրացման վերաբերյալ արտահայտել է իր տեսակետները, որոնցից կարելի է ընդգծել զորամասերին ու զինվորական հաստատություններին ֆինանսական բավարար միջոցներով, հանդերձանքով, սննդամթերքով ապահովելու առաջարկությունները:

Նա առանձնապես կարեւորել է բանակում կարգապահություն եւ արդարություն հաստատելու անհրաժեշտությունը ու այդ առնչությամբ առաջարկել է առավելագույն միջոցներ կիրառել արմատախիլ անելու դասալքությունը եւ խստագույնս պայքարել այն անձանց դեմ, ովքեր խուսափում էին զինվորական ծառայությունից[1]:

Հանրապետության զինված ուժերին վերաբերող հարցերում նա եղել է խիստ հետեւողական:

1919 թ. մարտին Երեւանում կայացած ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովում ՀՀ բանակին նվիրված ենթահարցի մասին զեկույցը ներկայացրել է Դրոն: Հիմք ունենալով նրա զեկույցում տեղ գտած առաջարկությունները, ՀՅԴ Ընդհանուր ժողովը ընդունում է համապատասխան որոշում, պարտադիր երկամյա ծառայության, բանակի հայացման վերաբերյալ[2]:

Պիտի նշել, որ նրա առաջարկությունները մեծամասամբ անհետեւանք չէին մնում, քանզի այդ առաջարկությունների նախադրյալները խորապես ուսումնասիրված էին ու հիմնավորված եւ բխում էին բանակաշինության շահերից:

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս «Քաղվածներ ՀՅԴ Ընդհանուր ժողովի որոշումներից», էջ 10-11:

4. 3. ԴՐՈՆ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ ԵՎ ԱՐՑԱԽՈՒՄ

Երիտասարդ հանրապետությունը գերմարդկային ջանքեր էր գործադրում երկրի պաշտպանության ամրապնդման ու զարգացման ուղղությամբ: Արդեն նկատվել էին լուրջ նվաճումներ հանրապետության կյանքի գրեթե բոլոր բնագավառներում: Սակայն հարեւան պետությունների եւ հատկապես Ադրբեջանի հետ շարունակվող մշտական բախումներն ու հանրապետության տարածքում բնակվող թուրք բնակչության պարբերաբար կրկնվող ելույթները դժվարին խոչընդոտների առաջ էին կանգնեցնում ՀՀ կառավարությանը: Դժվարագույնն ու անլուծելին Արցախն ու Զանգեզուրն էին, որոնց նկատմամբ Ադրբեջանի իշխանություններն ավելի ուժգնությամբ էին շարունակում դրսեւորել իրենց զավթողական ձգտումները: Այդ հողի վրա Հայաստանի եւ Ադրբեջանի հանրապետությունների հակամարտությունը գնալով ավելի էր խորանում ու շիկանում:

Ինչպես արդեն նշվել է, հանրապետության սահմանների ընդարձակումն ընթանում էր մի քանի ուղղությամբ, եւ այս առումով Զանգեզուրի ու Արցախի խնդրի վերջնական լուծումը տվյալ ժամանակահատվածում ուներ արտակարգ կարեւորագույն նշանակություն: Առանց Զանգեզուրի եւ Արցախի հարցի վերջնական լուծման Հայաստանը չէր կարող հուսալիորեն ապահովել իր սահմանների անսասանությունն ու անձեռնմխելիությունը եւ, բնականաբար, հարկադրված պետք է լիներ մշտապես պատերազմել Ադրբեջանական Հանրապետության եւ նրան սատարող Թուրքիայի հետ: Ուստի, հանրապետության թուրքաբնակ շրջանների եւ հարեւան Վրաստանի հետ վիճելի հարցերը մեծ դժվարությամբ հաղթահարելուց հետո՝ Հայաստանի Հանրապետության իշխանություններն անհրաժեշտորեն պետք է ձեռնամուխ լինեին առավել հաստատակամությամբ զբաղվելու Զանգեզուրի եւ Արցախի խնդրի վերջնական լուծմամբ:

Նկարագրելով հանրապետության ընդարձակման ուղղությամբ իր գլխավորած կառավարության կենսագործած առավել կարեւոր եւ անհրաժեշտ միջոցառումները՝ ՀՀ վարչապետ Ալ. Խատիսյանը գրում է. «Հայաստանի սահմաններու ընդարձակումը երրորդ ուղղությամբ կը կատարուէր Զանգեզուրի եւ Արցախի գծով: Այստեղ կընդհարուէին Հայաստանի եւ Ադրբեջանի շահերը: Հայաստանի համար Զանգեզուրը եւ Արցախը երեք տեսակ շահեկանութիւն կը ներկայացնէին. առաջին՝ բնակչութեան տեսակետով, որովհետեւ 300000 հայեր կապրէին այդ շրջաններուն մէջ: Երկրորդ՝ Զանգեզուրն ու Արցախը կը պաշտպանէին Հայաստանի թիկունքն այն թշնամիներէն, որոնք կերազէին անոնց վրայով միանալու իրարու հետ: Եւ երրորդ՝ երկու շրջաններու ալ բնակչութիւնը անբաժանելիօրեն կապուած կը զգար ինքզինքը Հայաստանի Հանրապետութեան հետ»[1]:

Զանգեզուրի լեռնականները կովկասյան թուրքերի(թաթար) եւ նրանց սատարող հավատակիցների դեմ պայքարելու հրաշալի մարտական դպրոց էին անցել: Սասունի 1904 թ. եւ Կովկասահայության 1905–1906 թթ. ինքնապաշտպանական մարտերի հերոսների՝ Սեբաստացի Մուրադի, Քեռու, Կայծակ Առաքելի, Գյումուշխանցի Ավոյի, Մեչեդի Ավետիսի եւ բազում այլ բազմափորձ ֆիդայիների առաջնորդությամբ, որոնց շարքերում էր նաեւ Դրոն, զանգեզուրցիներն անմոռանալի ջարդ տվեցին հայկական բնակավայրերնասպատակող թուրք հրոսակախմբերին: 1918 -1919 թթ. Անդրանիկի գլխավորած արեւմտահայ մարտական ուժերի գործուն աջակցությամբ զանգեզուրցիները դարձյալ հերոսական ինքնապաշտպանությամբ անառիկ պահեցին իրենց բնակավայրերը մահմեդական հրոսակախմբերի ոտնձգություններից ու ասպատակություններից:

Զանգեզուրին տիրելու Ադրբեջանի նկրտումները ավելի են ուժեղացել, հատկապես 1918 դեկտեմբերից սկսած, երբ Շուշիում հաստատվեց անգլիական զինվորական ներկայացուցչությունը: Անգլիացիների համար Զանգեզուրի ու Արցախի խնդիրը վճռված էր: Անգլիացիների որոշմամբ Հայաստան աշխարհի երկու պատմական գավառները՝ Զանգեզուրն ու Արցախը իրենց հոծ հայ բնակչությամբ պիտի մասն կազմեին Ադրբեջանական հանրապետության: Հիմք ունենալով այդ գավառների նկատմամբ կայացրած վերոհիշյալ վճիռը՝ Ադրբեջանի կառավարությունը Կովկասում Անգլիայի առաքելության ղեկավար, գեներալ Թոմսոնի համաձայնությամբ Արցախ-Զանգեզուրի ընդհանուրնահանգապետ է նշանակում դոկտոր Խոսրով բեկ Սուլթանովին, որը հայտնի էր իր հայատացությամբ ու ջարդարարի համբավով:

«Յունուարի 17-ին,-գրում է Եղիշե Իշխանյանը,-Դոքտ. Խոսրովբէկ Սուլթանովը, Ադրբէջանի կառավարութեան կողմից, զօրավար Տոմսոնի համաձայնութեամբ նշանակուած իբրև Ղարաբաղի նահանգա-

[1] Խատիսեան Ալ., նշվ. աշխ., էջ 167:

պետ, գալիս է Շուշի ի հեճուկս հայերի: Ադրբէջանի կառավարութիւնը Ղարաբաղի նահանգապետ, նշանակելով, Հայաստանի կառավարութեանը կանգնեցնում էր կատարած փաստի առջեւ, յուսալով տէր դառնալ Ղարաբաղին, թիկունքին ունենալով զօրավար Տօմսոնին, որպէս ուժեղ յենարան»[1]:

Ի պատասխան այդ նշանակման, ՀՀ արտաքին գործոց նախարար Ս. Տիգրանյանը վճռական բողոք է ներկայացնում Ադրբեջանական կառավարութեանը՝ հայտարարելով, որ Արցախն ու Զանգեզուրը Հայաստանի անբաժանելի մասն են[2]:

Իհարկե, Ս. Տիգրանյանի բողոքը չէր կարող լուրջ ուշադրության արժանանալ, քանզի վիճակն Անգլիայի հովանավորությամբ արդեն գցված էր: Ադրբեջանը բազմապատկում է ջանքերը՝ վերջնականապես նվաճելու Արցախն ու Զանգեզուրը:

Եթե 1919 թ. գարնանն ու ամռանն Ադրբեջանի իշխանությունները Երեւանում հավատարմագրված իր դիվանագիտական ներկայացուցիչ Թեքինսկու անմիջական ղեկավարությամբ Հայաստանի ապստամբ շրջանների թուրք բնակչությանն օգնում էր ֆինանսներով, զենքով, սպաներով եւ հրահանգիչներով, ապա Զանգեզուրի նկատմամբ ոչ միայն կիրառում էր վերոհիշյալ միջոցները, այլեւ ուղղակիորեն ապավինելով զենքի ուժին՝ զորքով, որոնց միացել էին նաեւ Զանգեզուրի հարեւան Հաճի-Սամլուի քրդական հեծելախմբերը, գեներալ Շիխլինսկու եւ դոկտոր Խոսրով-բեկ Սուլթանովի գլխավորությամբ Գորիսի հյուսիսային ուղղությամբ հարձակվում է Զանգեզուրի վրա:

Գեներալ Շիխլինսկու առաջնորդությամբ Զանգեզուր ներխուժած բանակը բաղկացած էր հեծյալ ու հետեւակ զորամասերից, որոնք համապատասխանաբար ունեցել են 800 եւ 4000 զինվորներ: Բացի դրանից, ազերի բանակը իր զինանոցում ունեցել է 12 հրանոթ ու ավելի քան երեք տասնյակ գնդացիրներ: Բանակի կազմում Զանգեզուր է ներխուժել 400 հեծյալներից բաղկացած քրդական հրոսակախումբը: Միաժամանակ զենքի պիտի դիմեր Զանգեզուրի մահմեդական բնակչությունը[3]:

Հայաստանի Հանրապետության կառավարության հանձնարարությամբ Զանգեզուր գործուղված գնդապետ Արսեն Շահմազյանի գլխավորությամբ զանգեզուրցիները մի շարք ճակատամարտերում

[1] Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 326:
[2] Տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 312:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 395, թ. 26-27:

ջախջախիչ պարտության մատնելով գեներալ Շիխլինսկու գլխավորած Ադրբեջանի կանոնավոր զորագնդերին եւ մահմեդական հրոսակախմբերին, փայլուն հաղթանակներ նվաճեցին:

Ըստ պաշտոնական տվյալների քառօրյա մարտերը տեղի են ունեցել Տեղ, Բայանդուր ու Խոզնավար գյուղերի մերձակայքում: Զանգեզուրի մարտական ուժերը որպես ռազմավար հակառակորդից վերցրել են 14 գնդացիր, մեծ քանակությամբ զենք ու զինամթերք, ինչպես նաեւ 150 գերի[1]:

Գեներալ Շիխլինսկու գլխավորած զորաբանակի ու նրան աջակցող Հաջի Սամլուի քրդական հեծյալ հրոսակախմբերի հարձակումը Զանգեզուրի վրա տեղի է ունենում 1919 թ. նոյեմբերին, այսինքն այն ժամանակ, երբ գնդապետ Հասկելի միջնորդությամբ Հայաստանի հանրապետության տարածքում արդեն դադարեցվել էին մարտական գործողությունները եւ ապստամբ թուրքաբնակ շրջաններում աստիճանաբար հաստատվում էր խաղաղություն: Բայց Հայաստանում խաղաղություն եւ կայուն իրավիճակի հաստատումը թուրք պարագլուխների ու ադրբեջանական իշխանությունների ծրագրերից դուրս էին: Առերես համաձայնելով Փարիզի վեհաժողովի խորհրդի կողմից Հայաստանում կոմիսար նշանակված գնդապետ Հասկելի առաջարկություններին՝ ադրբեջանական իշխանությունները շարունակում էին իրենց գործակալների միջոցով գաղտնորեն, իսկ Զանգեզուրի նկատմամբ բացահայտ, ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները Հայաստանում կացությունն ապակայունացնելու եւ իրենց նպատակներն իրականացնելու ուղղությամբ:

Նույն թվականի նոյեմբերի 18-ին Հայաստանի վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը Վաշինգտոնում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին հասցեագրված ուղերձում նշում է. «... Շնորհիվ Հասկելի միջամտության, Ադրբեջանն արդեն ընդունել էր մի պայմանագիր, որով Շարուրի, Նախիջեւանի եւ Գողթանի շրջանները պիտի կազմեին Ամերիկեան նահանգապետութիւն... Գերագույն կոմիսարի կարգադրությամբ Ամերիկեան նահանգապետը հոկտեմբերի 23-ին հանդիսավոր կերպով պիտի մտներ Նախիջեւան, Ադրբեջանի եւ Հայաստանի ներկայացուցիչների հետ միասին, բայց վերջին րոպեին Ադրբեջանը հրաժարվեց մասնակցել այդ հանդեսին, միեւնույն ժամանակ ծածուկ կազմակերպելով Նախիջեւանի թրքական ամբոխի կողմից դիմադրութիւն»[2]:

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 5, թ. 4:

Ադրբեջանական իշխանությունները մեծ հույսեր էին փայփայում վերստին զենքի դիմած Նախիջևանի զինյալ հրոսակախմբերի, տեղի մահմեդականության եւ Զանգեզուր ներխուժած Շիխլինսկու գլխավորած զորաբանակի վճռական հարվածների շնորհիվ վերջնականապես լուծել այդ գավառը Ադրբեջանի բաղկացուցիչ մասը մեկընդմիշտ դարձնելու խնդիրը:

«...Ինչպես, - շարունակում է Ալ. Խատիսյանը, - ամերիկացիների կտրուկ հրամաններին եւ սպառնալիքներին, Նախիջեւանի թրքությունը, տաճկական սպաների ղեկավարությամբ, զինված թնդանոթներով եւ գնդացիրներով, մի շաբաթ է, որ Դարալագյազի հայության հետ կռիվ է մղում, աշխատելով անցնել Զանգեզուր եւ անմիջական կապ ստեղծել Ադրբեջանի հետ: Կռիվները շարունակվում են Սոս եւ Մարտիրոս գյուղերի մոտ:

Միեւնույն ժամանակ ադրբեջանական զորքերը, մոտ 7000 սվին, հազարավոր քուրդ եւ թուրք խուժանի հետ միասին, հուչակավոր Խոսրով-բեկ Սուլթանովի եւ Շիխլինսկու առաջնորդությամբ շարժվել են Զանգեզուր»[1]:

Գեներալ Շիխլինսկու առաջնորդած բանակի ու Զանգեզուրի թուրք հրոսակախմբերի ջախջախիչ պարտությամբ փաստորեն տապալվում է գավառը Ադրբեջանի Հանրապետության անքակտելի մասը դարձնելու ազերի իշխանությունների ծրագիրը:

Հայաստանի տարածքում թուրքական զորքերի առկայությունը, ապա հարեւան Վրաստանի հետ զինված բախումները, մի փոքր անց Հանրապետության սահմանների ընդարձակման խնդիրները եւ երկրի ծայր աստիճան քայքայված տնտեսության վերականգնման դժվարությունները խոչընդոտում էին Հանրապետության կառավարությանը առավելագույնս զբաղվելու Արցախի եւ Զանգեզուրի հարցերով:

Այսուհանդերձ, պիտի նշել, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ի սկզբանե Արցախի նկատմամբ ունեցել է հստակ դիրքորոշում, որը վարչապետ Հով.Քաջազնունին արտահայտել է դեռեւս 1918 թ. օգոստոսի 31-ին, Խալիլ փաշայի հետ կայացած երեւանյան հանդիպման ժամանակ:

Հանդիպման ընթացքում Հովհ. Քաջազնունին՝ Խալիլ փաշային ներկայացնելով Արցախի ու Զանգեզուրի հարցում ՀՀ կառավարության դիրքորոշումը, ընդգծել է. «Ղարաբաղի լեռնային մասը

[1] Նույն տեղում:

եւ Զանգեզուրը, իբրեւ հայկական հոծ ազգաբնակչություն ունցող վայրեր, չեն կարող առանց այլեւայլության կցել Ադրբեջանին: Սակայն, որովհետեւ վերջինս այս մտքի դէմ առարկություններ է յարուցանում՝ Հայաստանի Հանրապետությունը կարծում է, որ Ղարաբաղի քաղաքական վիճակը կամ Պոլսի կոնֆերանսը պիտի որոշի եւ կամ ինքը՝ Ղարաբաղի ժողովուրդը: Մինչեւ խնդրի այս ճանապարհով լուծելը Հայաստանի կառավարությունը չի ուզում միջամտել Ղարաբաղի ներքին գործերին եւ պահանջում է, որ Ադրեջանն էլ չմիջամտի»[1]:

Պիտի ընդունել, որ այդ ժամանակահատվածում, երբ ՀՀ կառավարությունը դեռեւս նոր-նոր էր սկսել հիմնավորվել ու պիտի լուծեր իր առջեւ ծառացած կենսական նշանակության բազում հրատապ խնդիրներ, նրա համար Արցախի նկատմամբ ՀՀ ու Ադրբեջանի կառավարությունների կողմից համանման մոտեցում դրսեորելը, թերեւս ամնաընդունելի տարբերակն էր:

Խալիլ փաշան հավանություն է տալիս վարչապետի կողմից ներկայացրած ՀՀ կառավարության տեսակետին ու խոստանում է խոսել Ադրբեջանի կառավարության հետ ու ստանձնել միջնորդի դեր Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ[2]:

1919 թ. թուրքաբնակ շրջանները խաղաղեցնելուց ու նույն տարում Զանգեզուրում գեներալ Շիխլինսկու առաջնորդած բանակը ջախջախելուց ու նվաճած հաղթանակից հետո, Հայաստանի կառավարությունը վերջապես փոքր-ինչ հնարավորություն է ստանում ուշադրությունը կենտրոնացնելու նաեւ Արցախի եւ Զանգեզուրի վրա: Զանգեզուրի, ապա նաեւ Արցախի խնդիրը վերջնականապես լուծելու հերթը այժմ արդեն Հայաստանի Հանրապետության կառավարությանն էր:

ՀՀ կառավարության 1919 թ. նոյեմբերի 26-ին կայացած որոշմամբ, Զանգեզուրի քաղաքացիական իշխանության կոմիսար է նշանակվում Ս. Մելիք-Յոլչյանը, իսկ զինվորական մասի կոմիսար, այն է՝ զինված ուժերի հրամանատար՝ գեներալ Ղազարյանը, որոնք ժամանելով Գորիս, պիտի փոխարինեին գնդապետ Արսեն Շահմազյանին[3]:

Փոքր-ինչ առաջ ընկնելով՝ նշենք, որ ՀՀ կառավարության կողմից գնդապետ Արսեն Շահմազյանի փոխարեն Զանգեզուր գավառի քաղաքային մասի ու զինվորական մասի կոմիսարի պաշտոնները Ս. Մելիք-Յոլչյանին եւ Ղազարյանին վստահելը, ինչն ապա-

[1] ՀՀ ԲԿԱ, Պ. 12, դ. 5, թթ. 65|1, գ. 3, էջ 5:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, ֆ. 1469, գ. 1, էջ 18:

ցուցեց ժամանակը, այնքան էլ ճիշտ ու արդյունավետ չէր: ՀՀ կառավարության վերոհշյալ որոշմանը կապակցությամբ, Արցախ-Զանգեզուրի գործիչները, հատկապես Դրոն բազմիցս արտահայտել են իրեն անհամաձայնությունն ու դժգոհությունը:

Ե. Իշխանյանի վկայությամբ՝ «Դրոն դժգոհ էր թէ Ս. Մելիք-Եոլչեանից և թէ Զօրավար Ղազարեանից, որոնք խանգարել են իրեն և ոչ թէ աջակցել: Զօրավար Ղազարեանին անպետքութիւն է համարում, որովհետև աւելի ֆորմալիստ էր, քան կենդանի գործ անող»[1]:

Ս. Մելիք-Յոլչյանի եւ գեներալ Ղազարյանի գործունեությունը քննադատաբար է գնահատել նաեւ Զանգեզուրի հերոս, Սիսիանի մարտական ուժերի հրամանատար Պողոս Տեր-Դավթյանը: Արժանավույնս գնահատելով գնդապետ Ա. Շահմազյանի ներդրումը գեներալ Շիխլինսկու գլխավորած զորքերի դեմ նվաճած հաղթանակում՝ Պողոս Տեր-Դավթյանը նշում է. «...Արսէնը, որպէս Զանգեզուրի մարտական ուժերի հրամանատար, հռչակւեց հերոս, որին գէթ այդ ժամանակ, նոյնիսկ մէկ աստիճանի վրայից էլ անցնելով, պէտք է զօրավարի աստիճան տային, որով ոչ միայն գնահատւած կը լինէր Արսէնը, այլև Զանգեզուրի ժողովուրդը և ի մասնաւորի մարտական ուժերը: Մինչդեռ նոյեմբերեան յաղթանակի օրերին իսկ յետ են կանչում Արսէնին և նրա փախարէն ուղարկում ուղարկում Ս. Մելիք-Յոլչեանին ու նորակնունք, զինուորականների շրջանում անգամ անյայտ մնացած Զօրավար Ղազարեանին:

-Դրոն և Նժդեհը չէին հանդուրժում էդ զօրավար Ղազարեանին. Դրոն շատ էր առնւած նրանից և անւանում էր նրան անտաղանդ արարած: Դրոն իրաւունք ունէր այդպէս որակելու, նա ոչնչով օգտակար չեղաւ Զանգեզուրում, իրա բոյով, բուսաթով, արտաքինով էր յայտնի միայն, նրա արած մի գործը չտեսանք»[2]:

1919 թ. նոյեմբերի վերջերին Հայաստանի կառավարության հրահանգով Զանգեզուրում ստեղծվում է «Վարիչների խորհուրդ» մարմինը, որի ձեռքում է կենտրոնանում գավառի ողջ իշխանությունը:

Ս. Վրացյանի տեղեկացմամբ՝ մինչեւ Դրոյի Զանգեզուր-Ղարաբաղի ընդհանուր հրամանատար հայտարարվելն ու Գորիսում հաստատվելը, գնդապետ Արսեն Շահմազյանին փոխարինած գավառի քաղաքային մասի կոմիսար Ս. Մելիք-Յոլչյանի ու զինվորական մասի կոմիսար գեներալ Ղազարյանի ղեկավարման օրոք Զանգեզուրը ձեւականորեն կազմակերպվել էր որպես Հայաստանի Հանրապետության մաս[1]:

Ս. Մելիք-Յոլչյանի նախագահությամբ գործող քաղաքային իշխանությունը (վարիչների խորհուրդ)Զանգեզուրը բաժանել էր երկու գավառի. «1. Բուն Զանգեզուր, Տաթեւ, Դարաբաս, Սիսիան՝ Զանգեզուր գավառ անունով, 2. Ղափան, Բաղաբերդ-Գեղվայ ձոր, Արեւիք եւ Գողթն՝ Կապար Գողթ անունով»[2]:

Միաժամանակ Զանգեզուրը բաժանվել է երեք զինվորական շրջանների: Առաջին շրջանի՝ Սիսիանի հրամանատարն է Պողոս Տեր-Դավթյանը, երկրորդի՝ Կապարգողթի (Ղափան, Գենվազ, Գողթան)՝ հրամանատարը Գարեգին Նժդեհը եւ երրորդը՝ բուն Զանգեզուրը, այսինքն Գորիսը իր շրջակա գյուղերով:

Նշելով Զանգեզուրի առաջին եւ երկրորդ զինվորական շրջանների հրամանատարների անունները՝ Ս. Վրացյանը չի ներկայացնում երրորդ զինվորական շրջանի հրամանատարին, թեպետ Գորիսում է գտնվել գեներալ Ղազարյանի հրամանատարական կետը:

Ցուրաքանչյուր զինվորական շրջանի հրամանատարությանը կից գործել է զինվորական շտաբ, որին ենթարկվել են մարտական խմբերի հրամանատարները:Նրանց գլխավորությամբ գավառում կազմակերպվել է զորահավաք, որի արդյունքում «25-50 տարեկան բոլոր տղամարդիկ դրւած էին զէնքի տակ, երկրապահ զինուորութեան դրութեամբ, 20-25 ընտիր սպաների ղեկավարութեան տակ»[3]:

Նախորդ տարիներին Զանգեզուրում բացմիցս կրկնվող հայթուրքական զինված բախումներն ու գավառում տիրող իրական կացությունը հավաստում էին, որ Զանգեզուրը միայն տեղի մարտական ուժերով թուրք բնակչությունից մաքրելը չափազանց դժվարին խնդիր էր: ՀՀ կառավարությունը՝ հիմք ընդունելով այդ իրողությունը, Զանգեզուրի խնդիրը վերջնականապես լուծելու նպատակով եւ ի պատասխան Ադրբեջանի իշխանությունների կողմից Խոսրով-Բեկ Սուլթանովին Զանգեզուր-Արցախի գլխավոր նահագապետ նշանակելու որոշմանը, Դրոյին նշանակում է Զանգեզուր-Արցախի նահանգապետ ու մարտական ուժերի ընդհանուր հրամանատար: ՀՀ կառավարության հրահանգով, Դրոն 1919 թ. դեկտեմբերի վերջերին 600 զինվորներով հասնում է Գորիս: Նրա ժամանումով զորահավաքի ու մարտական խմբեր կազմավորելու գործընթացն ավելի է արա-

[1] Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 635:
[2] Նույն տեղում, էջ 671:

[1] Տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 371:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

գացվել, ընդ որում Զանգեզուրյան մարտական ուժերի կազմակերպման նախապատրաստական աշխատանքները կատարվել են խիստ քողարկված, հակառակորդի համար աննկատ:

Զանգեզուրի եւ Արցախի հարցի լուծումը վերջնականապես վճռելու հանձնարարությունը Դրոյին վստահելու իրողությունը պատահական չէր: Այդ շրջանների պատասխանատու գործիչների կողմից գործի ղեկավարումը ստանձնելու վերաբերյալ առաջարկություններ նրան արվել էին բազմիցս: Համաձայն Արցախի Ազգային Խորհրդի նախագահ Եղիշե Իշխանյանի հավաստման՝ այդ հանձնարարության իրագործումը Դրոյին վստահելու առաջարկության նախաձեռնողներից մեկը եղել է հենց ինքը: Առաջին անգամ նրա կողմից համանման առաջարկություն Դրոյին արվել է նույն տարվա սեպտեմբերի 16-ին, եւ նրանից ստացել է հումորով համեմված հետեւյալ պատասխանը. «Այ դարաբաղցի, Զանգեզուր-Արցախ անունով շարունակ թնդացնում եք օդը, բայց չկարողացաք մի Ադրբեջանի հախիցը գալ, վախեցաք, տեսնո՞ւմ ես՝ Սուրմալուն քրդերի հախիցը ոնց է գալիս:

Տեսնում եմ, որ Դրոն իր հումորով ինձ ձեռք է առնում, ասացի՝ «Դրո, խոսքը մէջներիս, էն ղէյրաթը, որ քո մէջ կայ, շնորհիւ քո սիւնեցի մօր արեան է, որ անցել է քեզ (Դրոյի մայրը ծնունդով Սյունեցի է՝ Սիսիանի շրջանի Մազրա գյուղից - Հ.Գ.): Այդ խեյրաթով պարտական ես Սյունիքին:

Դրօն չկարողացաւ զսպել ծիծաղը եւ մենք էլ ծիծաղեցինք:

- Լավ, հանաքը թողնենք, խնդիրը լուրջ քննութեան է առնւած, ասաց Դրօն, եւ պիտի կարգադրւի անպայման»[1]:

Այս նույն առաջարկությունը Ե. Իշխանյանը կրկնել է նաեւ իրենց հաջորդ հանդիպման ժամանակ:

«Նոյեմբերի 1-ին,- գրում է Ե. Իշխանյանը,-Դրոյի մօտ եմ, խնդրում եմ միջնորդել զինւորական նախարարի մօտ՝ Արցախի սպաներն հաշվելու իբրեւ հայկական բանակի սպաների, որոնց ցուցակը ներկայացրել է Ա. Վարդապետեանը, ապա իմ կարծիքն եմ յայտնում, որ ինքը անցնի Զանգեզուր որպէս Զանգեզուր-Արցախի ռազմական ուժերի ընդհանուր հրամանատար, օգնականներ ունենալով Ա. Շահմազեանին, որը կվարէ միաժամանակ քաղաքացիական-վարչական գործերը, եւ Գ. Նժդեհին, որը կը մնայ Ղափանում եւ Գողթնում այնտեղի ինքնապաշտպանական գործը վարելու:

[1] Իշխանեան Ե., Լեռնային Արցախ 1917-1920, Երեւան, 1999, էջ 523:

«Դրօն պատասխանում է, որ ինքը որպես զինւորական նախարարի օգնական հեշտութեամբ չի կարող հեռանալ Երեւանից, անկախ իր կամքից, սակայն խոստանում է լրջորեն զբաղվել այդ խնդրով»[1]:

Այդ նույն, Զանգեզուր եւ Արցախ մեկնելու առաջարկությունը, մեկ անգամ եւս նրան արվել է նոյեմբերի 14-ին, այս անգամ արդեն Գողթնի գավառապետ Աշոտ Մելիք Մուսյանի կողմից, բայց հարցի վերջնական լուծումը դարձյալ փոքր-ինչ ձգձգվել է:

«... Զանգեզուրից, - նշում է Ե.Իշխանյանը, - եկաւ Աշոտ Մելիք Մուսեանը, Արսէն Շահմազեանի կողմից խոսելու կառավարութեան հետ...Աշոտը բարձր տրամադրութեամբ պատմում է Զանգեզուրի կռիւների մասին մանրամասնօրէն (նկատի ունի Արսեն Շահմազյանի գլխավորությամբ գեներալ Շիխլինսկու հրամանատարությամբ ադրբեջանական զորքերի եւ Հաճի Սամլուի քրդական հրոսակախմբերի դեմ նույն տարվա նոյեմբերի սկզբներին զանգեզուրցիների հաղթական կռիվները - Հ. Գ.):

Դրօն, լսելով Աշոտի տւած տեղեկութիւնները, ոգեւորւած ասում է, որ պէտք է ստանձնած որոշ պարտականութիւնները փոխանցի ուրիշ մեկին եւ անցնի Զանգեզուր:

Աշոտը Դրօյի Զանգեզուր գնալը գտնում է անհրաժեշտ, աշխատելու այնտեղ Արսէն Շահմազեանի եւ Նժդեհի օգնութեամբ, սակայն նպատակահարմար չի գտնում Ս.Մ. Եոլչեանին ու գեներալ Ղազարովին Զանգեզուր ուղարկելը, որովհետեւ ոչ նրանք գիտեն ժողովրդին եւ ոչ էլ ժողովուրդն է նրանց ճանաչում»[2]:

Զանգեզուրցիների համար վերջապես գալիս է երկար սպասված ցանկալի պահը:

«Դեկտեմբերի 20-ին 1919 թ. Դրօն Երեւանից ժամանում է Գորիս էքսպեդիցիոն զօրամասով, որի, համաձայն Դրօյի յայտարարութեան, գլխավոր նպատակն էր զէնքի ուժով վճռելու վերջնականապէս Արցախի հարցը»[3]:

Դրոյի զորամասի կազմում էին փոխգնդապետ Թարիվերդյանի գլխավորած գումարտակը, գնդապետ Կուռո Թարխանյանի հեծյալ ջոկատը եւ պարուչիկ Արզոնովի լեռնային հրանոթների մարտկոցը: Զորամասի շտաբի(սպայակույտ)պետն էր գնդապետ Միրիմանյանը:

[1] Նույն տեղում, էջ 530:
[2] Նույն տեղում, էջ 547:
[3] ՀՀ ԲԿԱ, (Հայաստանի Հանրապետության Բոստոնի կենտրոնական արխիվ), ֆ. Ս. Վ. (Սիմոն Վրացեան), թղ. 313, գ. 13:

էքսպեդիցիոն զորամասը, որի շարքերում կային ընդամենը 500-600 զինվորներ, պետք է հանդիսանար Զանգեզուրում կազմավորվող մարտական ուժերի միջուկը[1]:

Դրոյի զորամասի թվակազմի վերաբերյալ փոքր-ինչ այլ տեղեկություններ է ներկայացնում 1922 թ. հունիսին Արցախի եւ Զանգեզուրի գործիչների մասնակցությամբ Թավրիզում տեղի ունեցած ժողովի նախագահ Գերասիմ Բալայանի եւ քարտուղար Զաքար Յոլյանի ստորագրությամբ գրված «Ղարաբաղի դէպքերի պատմութիւն» խորագիրը կրող զեկուցագիր-տեղեկագիրը: Համաձայն զեկուցագիր-տեղեկագրի՝ Դրոն էքսպեդիցիոն զորամասով Գորիս է ժամանել դեկտեմբերի 20-ին: Զորամասի մարտական ուժերն էին՝ «...հետեւակ 400 հոգի, 2 թնդանօթ, 30 գնդացիր՝ գործելու Զանգեզուրում և գլխավորապէս Ղարաբաղում»[2]:

Դժվար չէր հասկանալ, որ եթե հանրապետության զորքերը մուտք գործեին Արցախ, ապա անկասկած ծավալվելու էին պատերազմական գործողություններ, այս անգամ արդեն մյուս հարեւանի՝ Ադրբեջանի հետ, որի զավթողական մտադրությունները Արցախի նկատմամբ վաղուց ի վեր հայտնի էին: Իսկ Հայաստանի իրական կացությունը դեռեւս հանրապետության կառավարությանը չէր թելադրում կենսագործել այնպիսի քաղաքականություն, որը վերածվեր պատերազմի:

Արցախի նկատմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած ոչ այնքան վճռական, ինչ-որ առումով գուցեեւ կրավորական դիրքորոշումը պայմանավորված էր ոչ միայն հանրապետության տնտեսական ու քաղաքական իրավիճակով, այլեւ Հանրապետության կառավարության եւ Հ.Յ. Դաշնակցության, որպես իշխող կուսակցության, ղեկավար շրջաններում Արցախի հարցի նկատմամբ արմատավորված ոչ այնքան հիմնավորված մտայնությամբ: Առավելապես առաջնորդվելով հանրապետության սահմանների մեջ Արեւմտյան Հայաստանի տարածքներն ընդգրկելու հեռանկարով՝ ՀՀ կառավարությունն ու ՀՅԴ ինչ- որ տեղ ուշադրության տեսադաշտից կարծես դուրս էին թողել Արցախը:

Վկայակոչենք մի ուշագրավ տեսակետ, որն արտահայտել է ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Ռուբեն Տեր-Մինասյանը Արցախի Ազգային Խորհրդի նախագահ Եղիշե Իշխանյանի հետ Զանգեզուրի եւ Արցախի հետ կապված հարցերը քննարկելիս: Իսկ Ռուբենը այդ

[1] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 45, ց. 1, գ. 177, էջ 20:
[2] ՀՅԴ ԿԱ, թղ. 1649, գ. 1, էջ 23:

ժամանակահատվածում (1918-1920 թթ.) Հ. Յ. Դաշնակցության ղեկավար շրջանում առավել տիրական կշիռ ունեցող գործիչներից էր, եթե ոչ ամենատիրականը:

«Ռուբենը,-գրում է Ե. Իշխանյանը,-մատով քարտեզի վրայ անցնելով Զաբուղի ձորով Հագարի գետի հոսանքն ի վեր եւ ի վար, ասում է. «Մեր զինուորական շտաբը այստեղ մեր բնական սահմանն է համարում, սկսած Մինքէնդի մօտի սահմանից մինչեւ Կոռնիձոր, Էյվազլարի գլուխը: Ըստ մեր ռազմագետների, այդ սահմաններում հազիւ կը կարողանանք պահել Զանգեզուրը, դէնը գնալու հարկ չկայ: Մեր ձգտումն է դէպի Տաճկահայաստան, որտեղ շատ աւելի արգաւանդ գաւառներ ունենք, քան Արցախը, եթէ ճիշտ կուզես իմանալ, ցույց տրւած սահմանից այն կողմը գտնվող հայութիւնը վերջ ի վերջոյ պիտի գաղթէ Տաճկահայաստան»[1]:

Այս՝ որեւէ լուրջ փաստարկով չհիմնավորված եւ ինչ-որ տեղ վնասակար տեսակետը , որը ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Ռուբեն Տեր-Մինասյանը արտահայտել է 1919թ. հունիսի 21-ին ՀՅԴ կուսակցության գրասենյակում, ճիշտ եւ ճիշտ հակառակն է 1917 թ. նոյեմբեր- դեկտեմբեր ամիսներին Թիֆլիսում գումարած ՀՅԴ խորհրդաժողովում Նիկոլ Աղբալյանի կողմից առաջ քաշված առավել հիմնավորված եւ իրատեսական հետեւյալ տեսակետին. «...այսօր մենք մնացել ենք մենակ եւ պէտք է մեր յույսը մեզ վրայ դրած, ազգովին մեր գլխի ճարը գտնենք: Մենք պէտք է նախ եւ առաջ մեր տեսակետը որոշենք, որպէս մեր թիկունքի յենարանը, ամրութիւնը, մեր ուժերի շարունակական եռանդ ու կորով ներշնչողը: Իմ կարծիքով մեր միակ յենարանն է Փոքր Կովկասեան լեռնաշղթան՝ ամբողջովին հայկական, սկսած Լոռիից մինչեւ Արցախ: Մեր ամբողջ ռազմամթերքն ու պարենը պետք է կենտրոնացնենք այնտեղ, որպեսզի կարողանանք դիմադրել թշնամուն»[2]:

Եթե հաշվի առնենք ժամանակաշրջանի յուրահատկությունները եւ հայության իրական հնարավորություններն ու կարողությունները, ապա պիտի խոստովանել, որ Նիկոլ Աղբալյանի առաջադրած տեսակետը շատ ավելի հիմնավորված էր եւ իրատեսական: Իրոք, մի՞թե ավելի նպատակահարմար էր Զանգեզուրի եւ Արցախի 300000 բնակչությանը տեղահանել, ինչպես որ առաջարկել է Ռուբեն Տեր-Մինասյանը, իր չեն ու բարգավաճ բնօրրանից եւ տեղափոխել Արեւմտյան Հայաստանի արդեն ավերածությունների են-

[1] Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 471:
[2] ՀԱԱ, Ֆ. 45, ց. 1, գ. 177, էջ 20:

թարկված ու քանդված բնակավայրերը: Այս առումով կարելի է համաձայնել Եղիշե Իշխանյանի հետեւյալ պնդմանը. «...պիտի նկատի ունենալ, որ քարակոփ, տանիքը թիթեղապատ տան լուսաւոր սենեակում ապրող ղարաբաղցիները, լսելով Տաճկահայաստանի գիւղերի խղճուկ վիճակի մասին, չի լքի իրա տունը եւ գաղթի ճամփան բռնի.

... սխալ է, որ մեր ամբողջ եռանդը վատնում ենք, ձգտելով դէպի անմարդաբնակ վայրերը՝ Տաճկահայաստան, որտեղ մեկ հատիկ հայ չկայ՝ ներկայիս, մինչդեռ՝ 300 հազարից աւելի հայութիւն ունեցող մի ամբողջ նահանգ՝ Զանգեզուրը- Արցախը, հետը հաշւած նաեւ Գանձակի լեռնային մասն ու Ղազախը, անուշադրութեան ենք մատնում կամ անհրաժեշտ չափով ուշադրութեան չենք արժանացնում: Մենք պէտք է նախ ռուսահայ նահանգներին տիրանանք, ապա միւս մասերին տիրանալու մասին մտածենք»[1]:

Հետագայում հետաղարձ հայացքով եւ քննադաբար անդրադառնալով Զանգեզուր-Արցախ հիմնահարցին՝ Ռուբենը իր հեղինակութեամբ «Դրօշակի» 1926թ. թիւ 2-ում տպագրված հոդվածում Սյունիքը համարում է Հայաստանի ողնաշարը, այսինքն ընդունում է այդ հարցի վերաբերյալ նախկինում դավանած իր տեսակետի սխալականությունն ու չհիմնավորվածությունը: Զանգեզուրի եւ Արցախի հիմնահարցի վերաբերյալ աստիճանաբար փոխվում են նաեւ Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած նախկին դիրքորոշումն ու վերաբերմունքը:

Եղիշե Իշխանյանը ծանոթանալով «Դրօշակ»-ում տպագրված վերոհիշյալ հոդվածի բովանդակությանը՝Ռուբենին հասցեագրված նամակում գրում է. «Ցօղւածի թարմ տպաւորութեան տակ նամակ գրեցի Թաւրիզից Ռուբէնին և, ի միջի այլոց, ասացի՝ «Եթէ մինչև պաղլամենտի զինւորական սեկցիայի անդամ-նախագահ և զինւորական նախարար դառնալդ այդ ուսումնասիրութիւնը կատարած լինէիր, թերևս մենք այսօր այստեղ չգտւէինք, այլ մեր երկրում»[2]:

Պիտի նկատել, որ Ե. Իշխանյանի եզրահանգումն անտարակույս պատճառաբանված է եւ հեռու չէ ճշմարտությունից:

Անժխտելի է, պատմական Հայաստանի տարածքում հզոր հայկական պետականություն ստեղծելու կարեւորագույն պայմանը, Նիկոլ Աղբալյանի դիպուկ եւ պատկերավոր արտահայտությամբ. «... մեր միակ յենարանն է Փոքր Կովկասեան լեռնաշղթան՝ ամբողջովին

[1] Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 523:
[2] Նույն տեղում, էջ 474:

հայկական, սկսած Լոռիից մինչեւ Արցախ: Մեր ամբողջ ռազմամթերքն ու պարենը պետք է կենտրոնացնենք այնտեղ...» գործոնի արժեւորումն ու ճիշտ եւ նպատակասլաց օգտագործումն է:

Կարելի է աներկբա պնդել, որ եթե ժամանակին Աղբալյանի տեսակետը պատշաճ ու անհրաժեշտ ուշադրության արժանանար, եւ Արեւմտահայաստանի մի շարք վայրերում (Էրզրում, Երզնկա, Օլթի, Սարիղամիշ եւ այլն) ամբարված զենքն ու զինամթերքը, հանդերձանքն ու պարենը, ինչը ռուսական զորքերի կողմից ռազմաճակատը լքելու պատճառով անցել էր նաեւ հայերի տրամադրությանը, ժամանակին տեղափոխվեր ու խնամքով պահեստավորվեր Լոռիից մինչեւ Արցախ ձգվող տարածքում, ապա հայության ինքնապաշտպանության կազմակերպումը կլիներ առավել դյուրին եւ արդյունավետ: Արդյունքում Արցախն ու նրա հարակից հայաբնակ շրջանները կհայտնվեին միանգամայն ավելի նպաստավոր պայմաններում:

Դատելով Զանգեզուրի եւ Արցախի գործիչների հետ կայացած հանդիպումների արդյունքները լուսաբանող վավերագրությունների բովանդակությունից՝ Դրոն վերոհիշյալ հարցի կապակցությամբ առավելապես հակված է եղել առաջնորդվելու Նիկոլ Աղբալյանի, քան թե Ռուբեն Տեր-Մինասյանի տեսակետով, քանզի ընդունում էր, որ Զանգեզուրի եւ Արցախի հայ բնակչության տեղափոխությունն ու բնակեցումը Արեւմտահայաստանի գավառներում բնավ չէին նպաստելու Արեւմտահայաստանի ազատագրմանը եւ այն Հայաստանի Հանրապետության սահմաններում ընդգրկվելուն ու պահպանմանը:

Զանգեզուրում եւ Արցախում ծավալվող իրադարձություններն ու հատկապես 1919 թ. նոյեմբերին գեներալ Շիխլինսկու գլխավորած ադրբեջանական զորքերի դեմ գնդապետ Արսեն Շահմազյանի առաջնորդությամբ Զանգեզուրի մարտական ուժերի տոնած նշանակալի հաղթանակները միանշանակորեն ապացուցեցին, որ այդ խնդրի վերջնական լուծման համար անհրաժեշտ են առավել կազմակերպված, հաստատակամ եւ կտրուկ գործողություններ, ընդհուպ մինչեւ ուժային միջոցների՝ զենքի կիրառումը: Իսկ դա աներկբայորեն հավասարազոր էր պատերազմել Ադրբեջանի Հանրապետության դեմ: Որպեսզի զենքի ուժով հնարավոր լիներ վերջնականապես լուծելու Արցախի հարցը, հարկավոր էր ընտրել ու կենսագործել առավել արդյունավետ եւ կենսունակ մարտավարություն, այն է. նախ պետք էր, մեկընդմիշտ լուծել Զանգեզուրի մահմեդական

բնակչության հարցը: Ժամանակն արդեն բազմիցս ապացուցել էր եւ ապացուցում էր, որ Զանգեզուրի հայությանը ոչնչացնելու գործում տեղի թրքությունը Թուրքիայի, իսկ այժմ արդեն Ադրբեջանի հուսալի պատվարն էր ու դաշնակիցը: Այդ կենսական նշանակություն ունեցող խնդիրը լուծելու համար անհրաժեշտ էր, ինչպես հարկն է, զինել ու կազմակերպել Զանգեզուրի մարտական ուժերը:

Պիտի նկատել, որ Զանգեզուրի գրեթե բոլոր շրջաններն ունեին իրենց մարտական խմբերը, որոնք ինչպես արդեն նշվել է, մարտական մեծ փորձառություն էին ձեռք բերել մահմեդական հրոսակախմբերի եւ Ադրբեջանի Հանրապետության կանոնավոր զորամասերի դեմ մղված բազմաթիվ կռիվներում: Դրոյի գլխավորած զորամասն այն հիմնական մարտական ուժն էր, որը պիտի միավորեր եւ առաջնորդեր Զանգեզուրի զինական խմբերին:

Երկրորդ՝ անհրաժեշտ էր Զանգեզուրում կենտրոնացնել զենք ու զինամթերքի բավարար պաշարներ, որոնք առաջին իսկ հնարավորության դեպքում պիտի տեղափոխվեին Արցախ:

Երրորդ՝ հաստատել հուսալի կապ, հաղորդակցության միջոցներ Զանգեզուրի ու Արցախի միջեւ, որպեսզի Ադրբեջանի հետ պատերազմական գործողություններ սկսվելու դեպքում հնարավոր լիներ այդ ամենը անխափան եւ անկորուստ տեղափոխել Արցախ:

Մինչ այդ ամենի իրագործումը, անհրաժեշտ էր որոշակի քայլեր ձեռնարկել նաեւ Արցախի ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար: Իսկ այդ ընթացքում անգործության մատնված չէին նաեւ Արցախի գործիչները: Արցախում կազմվել էր Գաղտնի Ինքնապաշտպանական Մարմին, որը ՀՅԴ կենտրոնական կոմիտեի հետ միասին 1919 թ. հոկտեմբերի 23-ին գումարում է միացյալ ժողով, որը որոշում է «...դիմել Հայաստանի կառավարության եւ խնդրել դրամական միջոցներ կազմակերպելու եւ լուրջ հիմքերի վրայ դնելու Հայկական Ղարաբաղի ինքնապաշտպանության գործը, այլեւ ՀՅԴ Բիւրոյից խնդրել, որ Ղարաբաղ ուղարկեն մի աւտարիտետ կուսակցական ընկեր, նմանապէս մի բարձրաստիճան հեղինակաւոր զինուորական՝ գործի յաջողության համար, որոնք տեղական ընկերների հետ համերաշխօրէն առաջ կը տանին Ղարաբաղի ինքնապաշտպանության պատասխանատու գործը...Այս դիմումի հիման վրայ Բիւրօն նշանակում է Արսէն Միքայէլեանին եւ գնդապետ Զաքար Մեսեանին»[1]:

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 1649, գ. 3, էջ 2բ:

Հ. Ստեփանյանի գնահատմամբ՝ «Դժբախտաբար թէ առաջինը եւ թէ երկրորդը կ. կ-ի ուղած հեղինակաւոր անձնաւորութիւնները չէին, թէպէտ երկուսն էլ մեր համակրելի ընկերներն էին»[1]:

ՀՅԴ բյուրոյի հանձնարարությամբ Արցախ գործուղված Ա. Միքայելյանն ու գնդապետ Մեսյանը պիտի հաստատվեին ու գործեին գլխավորապես Խաչենի, ապա Վարանդայի շրջաններում, սակայն ինչ-ինչ պատճառով նրանք նախատեսվածից ավելի մնում են Գյուլիստանում եւ ժամանակին չեն մեկնում նախատեսված վայրերը: ՀՅԴ Ապառաժի կենտր. կոմիտեի ու Ինքնապաշտպանության մարմնի անդամներն՝ անհանգստանալով նրանց բացակայությունից՝ դեկտեմբերի 24-ին թվագրված նամակում Դրոյին տեղեկացնում են, որ «...Հայաստանի լիազօրները տեղ չեն հասել, եւ խնդրում են մինչեւ վերջիններիս տեղ հասնելը որոշ քանակութեամբ դրամ ուղարկել...»[2]:

Ի պատասխան Արցախի գործիչների պահանջի՝ «Դրօն իր կողմից որոշ հրահանգով Ղարաբաղ է ուղարկում կազմակերպական նպատակներով՝ Սասունցի Մանուկին, Կ. Աթանեսեանին եւ բոմբիստը Տեր-Մարտիրոսեանին, եւ զանազան թղթադրամներ 400.000 ր.: Սոքա պէտք է աշխատեն Ղարաբաղի ինքնապաշտպանության մարմնի հետ միասին, մինչեւ որ Հայաստանի լիազօրների Ղարաբաղ գալը, որից յետոյ երեք աշխատակիցները կգործեին Հայաստանի լիազօրների տրամադրության տակ»[3]:

Ս. Վրացյանի պնդմամբ՝ Դրոյի կողմից Արցախ գործուղված գործիչները, տեղական ընկերների հետ միասին պիտի կազմակերպեին արցախահայության ինքնապաշտպանությունը, մինչեւ որ կստեղծվեին քաղաքական նպաստավոր պայմաններ, զենքի ուժով Արցախը վերջնականապես միացնելու Հայաստանին[4]:

Արցախի խնդիրը զենքի միջոցով լուծելու համար նախեւառաջ անհրաժեշտ էր որպեսզի անխափան գործեին Արցախը Զանգեզուրին կապող հաղորդակցության ուղիները: Արցախը Զանգեզուրից անջրպետող գլխավոր խոչընդոտը Գորիսից դեպի հարավ 10 վերստ (10, 67 կմ) հեռավորությամբ գտնվող Էյվազլար, Շուռնուխ, Մազրա, Նավլու շրջանի թրքությունն էր, որը սեպաձեւ մտնում եւ իրարից բաժանում էր Ղափանի ու բուն Զանգեզուրի ու Սիսիանի հայությանը[5]:

[1] Նույնն տեղում:
[2] ՀՅԴ ԿԱ, թղ.1469, գ. 1, էջ 18:
[3] Նույն տեղում:
[4] ՀՀ ԲԿԱ, ֆ. Ս. Վ. (Սիմոն Վրացեան), թղ/ 313, գ. 13:
[5] Տե՛ս նույն տեղում:

«Այս հարցը,-գրում է Ս. Վրացյանը,-հերթական դառնալով, հայութեան շահերի տեսակէտից պահանջում էր իր լուծումը: Զանգեզուրի ընդհանուր կոմիսար Մելիք-Ցոլչեանը ծանօթանալով վերոյիշեալ հարցի հետ, մի քանի անգամ ժողով է հրաւիրում՝ մասնակցութեամբ զինուորական ուժերի հրամանատար Դրօի, Շրջանային խորհրդի անդամների ու զօրաւար Ց. Ղազարեանի»[1]:

Զանգեզուրում տեղի ունեցած զինվորական խորհրդաժողովում քննարկվել է «1. Ղարաբաղի հարցը, 2. Շուռնուխի հարցը, 3. Օրդուբաթի հարցը:

Ի նկատի ունենալով Ադրբէջանի ագրեսիւ քաղաքականութիւնը եւ վերջինիցս բխող գործողութիւնները, որոնք էին՝ նոյեմբերի 3-8-ը Զաբուղի վրայով Զանգեզուրի վրայ յարձակուելը (նկատի ունեն գեներալ Շիխլինսկու առաջնորդած բանակի հարձակումը-Հ. Գ.), նոյեմբերի 15-ի յարձակումը եւ նոյեմբերի 26-ին Նախիջեւանի կողմից Սիսիանի վրայ յարձակուելը: Այս գործողութիւնները ուղղուած էին Ղարաբաղի եւ Զանգեզուրի դէմ»[2]:

Զանգեզուրի իշխանության եւ զինվորական խորհրդակցության մասնակիցները հստակ գիտեին, որ իրենց առջեւ դրված վերոհիշյալ երեք գլխաւոր հարցերի դրական լուծումից էր կախված Զանգեզուրի եւ Արցախի հետագա ճակատագիրն ու ապահովությունը:

Ծանոթանալով Զանգեզուրում տիրող իրավիճակին եւ խորհրդակցելով «Վարիչների խորհուրդ» մարմնի անդամների ու տեղի ռազմական ուժերի հրամանատարների հետ՝ Դրոն վճռում է առաջին հերթին մաքրել Զանգեզուրի հայության նկատմամբ թշնամաբար տրամադրված Էյվազլար, Շուռնուխ, Մազրա, Նավլու ու նրանց մերձակա գյուղերը թուրք բնակչությունից: Թուրքաբնակ այդ գյուղերը շատ լավ կազմակերպված էին ու զինված եւ մշտապես կապի մեջ գտնվելով Ադրբեջանի իշխանությունների հետ՝ պատրաստ էին նրա առաջին իսկ հրահանգի դեպքում հարձակվել հայկական գյուղերի վրա[3]:

Թուրքական վերոհիշյալ բնակավայրերը, ինչպես արդեն նշվել է, սեպաձեւ խրվելով Ղափանի եւ Գորիսի շրջանների արանքում, Զանգեզուրի տարածքը փաստորեն բաժանել էին երկու միմյանցից անջրպետված մասերի: Հարկավոր էր վերացնել Զանգեզուրի հյուսիսային ու հարավային շրջանների կապն ու հաղորդակցության

[1] Նույն տեղում:
[2] ՀՀ ԲԿԱ, ֆ. Ս. Վ. (Սիմոն Վրացեան), թթ. 8, գ. 14, էջ 2:
[3] Տե՛ս նույն տեղում:

ուղիները արգելափակող պատնեշն ու ապահովել բնակչության անվտանգ երթեւեկությունը: Այդ գործողության կենսագործմամբ ոչ միայն Զանգեզուրը կմաքրվեր մահմեդական բնակչությունից ու անխափան կգործեին Ղափանի ու Գորիսի շրջանները միմյանց կապող հաղորդակցության ուղիները, այլեւ բացվում էր դեպի Արցախ ձգվող ճանապարհը եւ այնտեղ ռազմական գործողություններ ծավալելուց առաջ, կարելի է ասել, լուծվում էր թիկունքի անվտանգության հարցը:

Զանգեզուրի «Մաքրման» գործողությանը Դրոն մասնակից է դարձնում Դարալագյազի մարտական ուժերի հրամանատար Ցապոնին, որին հանձնարարում է գլխավոր ճակատի՝ Գորիսի զինվորական շրջանի հրամանատարությունը:

Իր հուշերում անդրադառնալով Զանգեզուրը թուրք բնակչությունից մաքրելու Դրոյի մարտավարությանը՝ Ցապոնը նշում է. «...Դրոն կանչեց ինձ իր մոտ ու ասաց, որ Զանգեզուրի Ազգային Խորհրդի համաձայնությամբ կայացուած որոշումով 1920-ի յունուարի սկզբներին պէտք է յարձակում լինի թրքական Շուռնուխի-Էյվազլար շրջանի վրայ՝ այդ շրջանի 28-ի չափ գիւղերին պարտադրելու համար, որ ընդունեն Զանգեզուրի հայկական իշխանութիւնը ու զինաթափ լինեն, քանի որ այդ շրջանը մտնում է հայկական Զանգեզուրի մէջ: Այլապէս ամբողջ բնակչութիւնը պէտք է հարկադրուի թողնել այդ շրջանը եւ հեռանալ:

... հաւանեցի Դրոյի ծրագիրը ու պատրաստակամութիւն յայտնեցի մասնակցելու արշաւանքին...»[1]:

Հանրապետության զինվորական նախկին նախարար, գեներալ Հախվերդյանն իր հուշագրությունում համառոտակիորեն անդրադառնալով նաեւ Զանգեզուրին եւ Արցախին առնչվող խնդիրների մեկնաբանմանը՝ գրում է. «Դրոյին առաջադրանք էր տրված առաջին հերթին մաքրել Զանգեզուրի հարավային եւ արեւելյան շրջաններն ու Ղափանը, ինչպես նաեւ Զանգեզուրի եւ Արցախի միջեւ ընկած գոտին թաթար բնակչությունից, որպեսզի ապահովվեր նրանց կապն ու փոխհամագործակցությունը»[2]:

Մինչ հիմնական գործողություններ սկսելը՝ Դրոն անցնում է Ղափան, ճշտում Գարեգին Նժդեհի հրամանատարությամբ գործող զորախմբերի մարտական առաջադրանքը եւ ապա վերադառնում Գորիս:

[1] «Հայրենիք» ամսագիր, 1941, յունիս, էջ 97:
[2] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ 177, թ. 19:

Դրոյի զորամասի եւ զանգեզուրյան մարտական խմբերի նախապատրաստական աշխատանքներն ու տեղաշարժերը, զուտ մարտավարական նկատառումով, կատարվել են խիստ քողարկված, հակառակորդի համար աննկատ: Որպեսզի հակառակորդին հնարավորություն չընձեռվեր տեղաշարժվելու, միմյանց օգնություն հասնելու հնարավորությունից, հայկական մարտական ուժերի հրամանատարությունը ծրագրում է թուրքաբնակ գյուղերի վրա հարձակումը ձեռնարկել միաժամանակ, սրընթաց եւ հակառակորդի համար անսպասելի:

«Գորիսում,- շարունակում է Ցապոնը,- որոշուեց ռազմական գործողութիւն սկսել յունուարի 6-ին(19)՝ նախապէս թուրք գյուղերին հպատակութեան եւ զինաթափութեան հրաւէր ուղարկելով: Թուրք գիւղերին ուղղուած հրաւէր ուղարկուեց Էյվազլարի գիւղի կոմիսարի միջոցով, որին 3 օրից յետոյ պատասխանեցին մերժումով:

- Ոչ միայն չենք ընդունում Գորիսի իշխանութիւնը, - ասել էին նրանք, - այլեւ պատրաստուում ենք գրաւելու Ադրբեջանին պատկանող ամբողջ հայկական Զանգեզուրը...»[1]:

Գեներալ Հախվերդյանի վկայությամբ՝ «... այդ բնակչությունը ադրբեջանական հրահանգիչների կողմից շատ լավ կազմակերպված էր եւ իրենից ներկայացնում էր որպես զինված զորամասեր, ապահովված նույնիսկ գնդացիրներով»[2]:

Դրոյին եւ զանգեզուրյան մարտական ուժերի հրամանատարությանն այլընտրանք այլեւս չկար: Մերժողական պատասխան ստանալուց հետո մնում էր ապավինել զենքի ուժին:

Վարդան Գեւորգյանը, իր հեղինակած «Լեռնահայաստանի գոյամարտը (1919-1921)» գրքում ներկայացնելով այդ ժամանակահատվածում Զանգեզուրում ձեռնարկված գործողության մանրամասները, «Շուռնուխի արշաւանքը» ենթագլխում հայ մարտական ուժերի հաղթանակները վերագրում է առավելապես Նժդեհին ու նրա գլխավորած Ղափանի մարտախմբին:

Հարգարժան պատմաբան Արամ Սիմոնյանն իր հեղինակած «Զանգեզուրի գոյամարտը» պատմագիտական աշխատությունում «Գարեգին Նժդեհի Շուռնուխյան ռազմական գործողությունը և նրա արձագանքները» հոդվածում նույնպես այդ գործողությունը իրականացնելու գործում առավելապես ընդգծում է Նժդեհի ու նրա գլխավորած Ղափանի մարտական ուժերի ներդրումը[3]:

---

[1] «Հայրենիք» ամսագիր, 1941, յունիս, էջ 97:
[1] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ 177, թ. 19:
[2] ՀԱԱ, Ֆ, 45, ց. 1, գ. 177, թ. 19:
[3] Տե՛ս «Բանբեր Հայաստանի Արխիվների», 2005, թիւ 2:

«1920 թ. հունվարի 19-ից,-գրում է Ա. Սիմոնյանը,- զանգեզուրցիները բուռն գրոհով մաքրեցին բուն Զանգեզուրի և Ղափանի միջև ընկած տարածությունը՝ Դոնդառլու-Շուռնուխ-Ասկալուի թուրքական շրջանը՝ մոտ 30 գյուղ: Շատ չանցած՝ զանգեզուրյան ուժերը նոր խոշոր հաղթանակ տարան՝ մարտ ամսին ջախջախեցին մուսավաթական բազմամարդ հրոսակախմբերը և գրավեցին Բարգյուշատ-Մուսուլմանլար-Ալեանչու-Ավդալար շրջանը՝ մոտ 120 գյուղերով:

Թրքությունը թողեց և հեռացավ Ադրբեջանի խորքերը:

Այդ բոլոր գործողությունների ընթացքում վճռորոշ դեր խաղացին Նժդեհի զինված ուժերը»[1]:

Հոդվածում հեղինակը մեջբերում է արշավանքի նախօրեին Դրոյին հացեագրած Նժդեհի գրությունը, որտեղ ասվում է. «Որպես հեղափոխական իմ բարոյական պարքն եմ համարում վերջին անգամ նախազգուշացնելու, որ Շուռնուխի գործողությունները շատ ծանր հետեւանքներ պիտի ունենան Ղարաբաղի եւ Գողթանի համար:

Իհարկե...իմ տեսակետը տվյալ հարցերի մասին ինձ՝ որպես զինվորականի, իրավունք չի տալիս չկատարելու ինձ տրվելիք հրամանը: Եղեք համոզված, որ տրվելիք խնդիրները իմ ուժերի կողմից կը կատարվին ամենափայլուն կերպով»[2]:

Այո, հայկական կողմը պարտավոր էր անհրաժեշտ քայլեր ձեռնարկել ու ապահովել Գողթանի հայության անտանգությունը, սակայն դժբախտաբար, նույն տարվա դեկտեմբերի վերջերին Գողթանի, հատկապես Ագուլիսի հայություն մեծ մասի կոտորածն արդեն տեղի էր ունեցել:

Գողթան գավառակը իր աշխարհագրական դիրքով, իրոք, ռազմավարական նշանակություն ուներ: Գավառակն այդ ժամանակ ունեցել է զուտ հայաբնակ 20-25 գյուղեր, որոնք գտնվելով Թուրքիայի եւ Ադրբեջանի հատման տեղում, միաժամանակ Արեւելքի(Մեղրի) շրջանի հետ Ադրբեջանն անջրպետում էին Նախիջեւանից: Գողթանի գավառակի վերացումը նշանակում էր ուղիղ ճանապարհ բացել Բաքվի, Անկարայի եւ Պոլսի միջեւ: Ահա հենց դա է եղել պատճառը, որ թուրք-ազերը համառորեն ձգտում էին գրավել ու մեջտեղից վերացնել Գողթանը, սակայն «Շնորհիւ իրենց ճկուն բնաւորութեան, գողթնեցիք կարողացան պահել «Իսլամական կառավարութեան իշխանութեան տակ»[3]:

---

[1] Սիմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը, Երևան, 2000, էջ 42:
[2] Նույն տեղում, էր 199:
[3] Տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 335:

Գողթանի գավառակում իրավիճակը փոխվում է, երբ հայկական զորքերը Դրոյի առաջնորդությամբ ու անգլիացիների միջամտությամբ 1919 թ. մայիսին գրավում են Նախիջեւանը: Գողթանը դառնում է Նախիջեւանի նահանգի երեք գավառներից մեկը՝ Ագուլիս կենտրոնով: Նահանգապետ է նշանակվում Գեւորգ Վարշամյանը, Գողթնի գավառապետ՝ Աշոտ Մելիք-Մուսյանը, իսկ միլպետ՝ Մովսես Գյուլնազարյանը: Սակայն Նախիջեւանի նահանգում եւ այդ թվում Գողթան գավառում տիրող խաղաղ կացությանը վիճակված չէր երկարատեւ կյանք ունենալու: Նահանգում դեռ նոր-նոր էր հաստատվել Գ. Վարշամյանի նահանգապետությունը, երբ նահանգի մահմեդականությունը, դիմելով զենքի, բռնազավթում է նահանգի իշխանությունը, իսկ հայկական փոքրաքանակ ուժերը անկարող լինելով դիմագրավել թուրքական ավելի քան 10.000 թվակազմ ունեցող զինուժի ճնշմանը, հարկադրված լքում են Նախիջեւանը:

Նահանգի հայ բնակչությունը հայտնվում է օրհասական իրավիճակում:

«Օգոստոսի 3-ին, Ա. Մելիք-Մուսեանն ու Մ. Գյուլնազարեանը Վերին Ագուլիսից Հայաստանի Խորհրդարանին, Հայաստանի կառավարութեան, Գորիսի, Ղափանի, Գենուազի պետական ներկայացուցիչներին, Ազգային խորհուրդներին եւ ի լուր համայն հայութեան ահազանգում են «Նախիջեւանն ընկաւ. շրջանի հայութեան բաւական խոշոր մասը սրի է քաշուած, Արաքսի մէջ նկատուած են մեծ թիւով դիակներ, ըստ Թուրքական լուրերի, կոտորածից ազատուած հայութեան մնացորդները նահանջել են Դէպի Դարալագեազ:

...Յուլ. 25-ից՝ Գողթնում ուժեղ կռիւներ են տեղի ունեցել: Վերին գիւղերում (Փոռակա-Բիստ) յաջողութիւններն առ այժմ մերոնց կողմն են:

...Թուրքերը խոշոր պատրաստութիւններ են տեսնում մաքրելու Գողթնը հայութիւնից...

...Փրկւած է Գողթնը, եթէ մօտ օրերում 400 սրտացաւ զինւոր մեզ օգնութեան հասնի»[1]»:

Թուրքերի պաշարման օղակում են հայտնվում ոչ միայն Գողթանի գյուղերը, այլեւ Վերին եւ Ներքին Ագուլիսները:

Հայաստանի Հանրապետությունը թեեւ այդ օրերին մահմեդական բնակչության ապստամբության պատճառով նույնպես գտնվում ոչ բարվոք վիճակում եւ ինքը կարիք ուներ դրսի օգնության, այնուամենայնիվ, հասցնում է նյութական միջոցներ ու պարենի պաշարներ ուղարկել Զանգեզուր՝ Գարեգին Նժդեհին, եւ նրան հանձնարարում կազմակերպել Գողթանին օգնություն հասցնելուհույժ կարեւոր գործը: Միաժամանակ, որպես զինական օգնություն ՀՀ կառավարության հանձնարարությամբ Գողթան է ուղեւորվում Ղազար Քոչարյանի գլխավորած մարտական խումբը, որը սեպտեմբերին 2-ին դուրս է գալիս Երեւանից եւ հոկտեմբերի 2-ին հասնում Գողթան: ՀՀ կառավարության հանձնարարությամբ՝ Գ. Նժդեհը եւ Ղ. Քոչարյանը գավառի պաշտպանության համար պիտի կազմեին զորամաս ու ուղարկեին Գողթան[1]:

Ըստ Ս. Վրացյանի՝ «Հայկական զօրքերի ժամանումը բարձրացրեց ժողովրդի տրամադրութիւնը: Ղազարը Մովսէս Գիւլնազարեանի եւ տեղական ուժերի գործակցութեամբ կազմակերպեց շրջանի ինքնապաշտպանութիւնը-7-8000 կռւողներ, 2 թնդանօթ, 6 գնդացիր,-եւ այնուհետեւ Գողթնը ո՛չ միայն դիմացաւ թրքական յարձակումներին, այլեւ ինքն էլ դարձաւ նախաձեռնարկ:

...Տեղի ունեցան տաք կռիւներ. թշնամին պարտւած՝ դիմեց խուճապային թախուտի՝ հայերի ձեռքը թողնելով առատ աւար, գերիներ ու մի դրօշակ»[2]:

Այսուհանդերձ, հայ մարտական ուժերը չեն զարգացրել հարձակումը եւ ինչպես հարկն է չեն կարողացել կազմակերպել Վերին ու Ներքին Ագուլիսի ինքնապաշտպանությունը եւ թուրքերին հաջողվել է վրեժխնդիր լինել Վերին Ագուլիսից:

Դեկտեմբերի 18-ին թուրք հրոսակախմբերը հարձակվում են նախ Ներքին Ագուլիսի վրա եւ սրի են քաշում քաղաքի բնակչության մեծ մասին: Կոտորածից փրկվածները փախչում են Վերին Ագուլիս:

Դժբախտաբար, Վերին Ագուլիսի բնակչությունը փոխանակ քայլեր ձեռնարկեր եւ միջոցներ գտներ կազմակերպելու ինքնապաշտպանությունը, հույս է ունեցել կաշառքի ու սիրաշահելու միջոցով արժանանալ թուրք առաջնորդների բարեկամությանը եւ նրանց օգնությամբ փրկվելու կոտորածից[3]:

Ժամանակը միանշանակ ցույց տվեց, որ ի զուր էին ագուլիսցիների փայփայած հույսերը: Թուրքական կողմը երկար սպասել չի տալիս: Ներքին Ագուլիսի անկումից հաշված օրեր անց՝ դեկտեմբերի 28-ին, թուրք հրոսակախմբերը հենց ագուլիսցիների կողմից կաշառված ու նրանց անվտանգությունն ապահովելու բազմաթիւ խոստումներ շռայլած թուրք երեւելիների առաջնորդությամբ ներխուժում են անպաշտպան Վերին Ագուլիս ու անխնա կոտորում քաղաքի բնակչությանը, ապա

[1] Նույն տեղում, 337:

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 337:
[2] Նույն տեղում, էջ 338:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 339:

թալանում ու ավերակույտերի են վերածում անգամ միջազգային ապարեզում իր հարստությամբ հանրահայտ քաղաքը:

«Ագուլիսի կոտորածը,-գրում է Ս. Վրացյանը,-մեծ հարուած էր հայ ժողովրդի համար, եւ հասկանալի է այն յուզումն ու ցասումը, որ առաջ բերեց հայկական բոլոր շրջաններում: Լուրը Երեւան հասաւ դեկ. 29-ին, Գորիսից: Երկու օր յետոյ, դեկ. 31-ին, հնդեւրոպական հեռագրագծով հեռագիր ստացուեց Թաւրիզից, թէ՝ «Քարտէսի վրա Ագուլիսն այլեւս գոյութիւն չունի. Ներսէս եպ.»:

Յուն. 4-ին Մելիք-Թանգեան եպ-ը հաղորդեց, թէ՝ «Ամենքը կոտորուած են: Մանրամասնութիւնները թոյլ չեն տալիս»»[1]:

Հարց է ծագում՝ եթե Գողթանի եւ մասնավորապես Վերին եւ Ներքին Ագուլիսների կոտորածն արդեն տեղի էր ունեցել, ապա ի՞նչ իմաստ եւ նշանակություն ուներ Նժդեհի դիմումը, որով նա առաջարկում է Դրոյին չեռնարկել Շուռնուխի գործողությունը՝ վկայակոչելով Արցախն ու Գողթանը:

Գողթանի հայության անվտանգության ապահովումը, որը չափազանց անհրաժեշտ էր, պարտավոր էին իրականացնել ՀՀ կառավարությունը, Զանգեզուրի քաղաքական ու զինվորական իշխանությունները՝ ի դեմս Մելիք-Յոլչյանի եւ գեներալ Ղազարյանի եւ անձամբ նաեւ Գարեգին Նժդեհը, որպես Կապարգողթի մարտական ուժերի հրամանատար: Զպետք է մոռանալ, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հենց Գարեգին Նժդեհին ու նրան օգնության ուղարկած Ղազար Քոչարյանին էր հանձնարարել կազմակերպելու Գողթանի գավառակի, այդ թվում Վերին ու Ներքին Ագուլիսների ինքնապաշտպանությունը:

Իսկ ինչ վերաբերում է Արցախին, ապա որևէ կասկած լինել չէր կարող, որ եթե Զանգեզուրը չմաքրվեր թուրք զինված հրոսակախմբերից, ապա դեպի Արցախ ձգվող հաղորդակցության ուղիների փակված լինելու, չգործելու պարագայում, Հայաստանի Հանրապետության համար չափազանց դժվարին կլիներ անհրաժեշտ օգնության, առաջին հերթին մարտական ուժեր, զենք ու զինամթերք ժամանակին տեղափոխել Արցախ:

Անտարակույս, Զանգեզուրը մահմեդական բնակչությունից «մաքրելու» ՀՀ կառավարության որդեգրած ռազմավարությունը պատճառաբանված էր ու անհրաժեշտ, մանավանդ երբ արդեն ստացվել էր ՀՅԴ Ապառաժի կենտրոնական կոմիտեի եւ Արցախի Գաղտնի ինքնապաշտպանական մարմնի 1919 թ. հոկտեմբերի 23-ին կայացած միացյալ ժողովի դիմումը, որտեղ ասվում է. «... դիմել

[1] Նույն տեղում,:

Հայաստանի կառավարությանը, խնդրել դրամական եւ ռազմական միջոցներ՝ կազմակերպելու եւ լուրջ հիմքերի վրայ դնելու հայկական Ղարաբաղի ինքնապաշտպանության գործը...»[1]:

Բնավ պատահական չէ, որ Զանգեզուրում, ապա նաև Արցախում ծավալվող գործողությունների ղեկավարումը հանձնարարվել է ՀՀ-ում և հատկապես զինվորականության շրջանում անառարկելի հեղինակություն ունեցող Դրոյին:

Հարկ է ընդգծել, որ Զանգեզուրը մահմեդական բնակչությունից մաքրելու գործողությունների ուսումնասիրությունն ներկա մատնանշում է, որ Շուռնուխյան ռազմական գործողությունը, այն է՝ Զանգեզուրը թուրք բնակչությունից մաքրելու ՀՀ կառավարության որոշմամբ իրականացրած գործողությունը Գ. Նժդեհին վերագրած գնահատականը այնքան էլ չի համապատասխանում իրականությանն ու չափազանցված է: Ճիշտ է, Գ. Նժդեհի գլխավորած Ղափանի մարտական ուժերը իրենց անգնահատելի ներդրումն են ունեցել գավառը թուրքերից մաքրելու չափազանց կարևոր գործողության իրականացմանը, սակայն գործել են ռազմաճակատի մեկ այլ հատվածում:

Զանգեզուրի «Մաքրման» գործողությանը, ինչպես արդեն նշվել է, Դրոն մասնակից է դարձնում իր մարտական զինակից, Դարալագյազի մարտական ուժերի հրամանատար Ցապոնին (Հովհաննես Պարոնյան), որը որպես հեծյալ վաշտի հրամանատար մասնակցել էր նրա գլխավորած 2-րդ կամավորական զորախմբի մղած բոլոր մարտերին: Քանի որ Զանգեզուրի երեք զինվորական շրջաններից՝ կենտրոնականի, այսինքն բուն Զանգեզուրի (Գորիսն իր շրջակա գյուղերով) մարտական ուժերի հրամանատարը մինչ այդ դեռևս նշանակված չէր, Դրոն հենց Ցապոնին է վստահում Շուռնուխի ճակատի հրամանատարությունը:

Այդ նույն գործողության մասնակից Արտեմ Խանզատյանի հավաստմամբ՝ «Գարեգին Նժդեհի առաջնորդած ղափանցիների մարտախմբերին հանձնարարվում է. հարձակումը սկսել Եղվարդ գյուղի տարածքից և շրջապատման մեջ վերցնել ու «մաքրել» մինչև Զեյվա գյուղի անտառապատ սարերը ընկած թուրքական բնակավայրերը»[2]:

Արտեմ Խանզատյանի վկայությամբ՝ Ցապոնի և տաթեւացի Վարդանի գլխավորած մարտախմբերին է վստահվում Զանգեզուրի ամենադժվարին ու պատասխանատու տեղամասի՝ թուրքական ա-

[1] ՀՅԴ ԿԱ, 1649, գ. 3, էջ 2ա:
[2] Ավ0, Ճշվ. աշխ., էջ 482:

մենախիտ բնակչություն ունեցող բնակավայրերի (Տանձավեր, Շուռնուխ, Մազրա, Նավլու ու նրանց հարակից գյուղերի) վրա հարձակվելու և այդ գյուղերը թուրք բնակչությունից իսպառ մաքրելու առաջադրանքը[1]:

Ա. Խանզատյանի վկայությունը հավաստում է նաև Ցապոնը:

Իր հուշերում անդրադառնալով Զանգեզուրը թուրք բնակչությունից մաքրելու Դրոյի մարտավարությանը՝ Ցապոնը նշում է.

«Նա որոշեց ինձ յանձնել ռազմական գործողության դաշտի ամենից պատասխանատու ու դժուարին ճակատը՝ Շուրնուխի կենտրոնական գիւղի վրայ քայլող Տանձաւէրի հովիտից առաջացող ճակատը...»[2]:

Այդ նույն իրողությունն անուղղակիորեն հաստատում է նաև Գ. Նժդեհը: Հարձակման նախօրեին՝ հունվարի 17-ին, իր հրամանատարությամբ գործող զինավաշտերին ուղղված ուղերձում Նժդեհը ներկայացնում է ձեռնարկվող հարձակման նպատակը ու համապատասխան խոսքերով ոգեշնչելով մարտիկներին՝ նշում է նաև իր գլխավորած մարտական ուժերի հարձակման ուղղությունը՝ «..իմ եօթն անգամ սիրած եւ քաջ զափանցիներ, յառաջ դէպի այդ բարձունքները, դէպ Քեափազ, Ային-Տաղ, դէպ Հարթիզ»[3]:

Ճիշտ է, նրա մատնանշած վայրերից Քեափազն ու Ային-Տաղը ընկած են Ղափան-Գորիս խճուղու մերձակայքում, բայց դրանցից եւ ոչ մեկը չի գտնվում ռազմաճակատի գլխավոր՝ Տանձավեր- Էյվազլար- Շուռնուխ-Մազրա-Նավլու ուղղությունում: Իսկ Հարթիզը գտնվում է Ղափանի շրջանի Եղվարդ գյուղի մերձակայքում:

. Զանգեզուրի մարտական ուժերը, համաձայն այդ կռիվների մասնակից Արտեմ Խանզատյանի (Զանգեզուրցի) վկայության, հարձակումը պիտի ձեռնարկեին հետեւյալ մարտավարությամբ. Ցապոնի եւ տաթեւացի Վարդանի գլխավորած մարտախմբերը «...Տանձաւեր բէկերի գիւղերը քարուքանդ անելէ ետք Շուռնուխ գիւղի վրայովը անցնիլ եւ արշաւանք կատարել Նաւլու մեծ գիւղի վրայ, ուր թուրքերը կանոնաւոր ուժեր էին կենտրոնացրել»[4]:

Նժդեհի առաջնորդած զափանցիների մարտախմբերին,ինչպես արդեն նշվել է, հանձնարարվում է հարձակումը սկսել Եղվարդ գյուղի տարածքից եւ շրջապատման մեջ վերցնել ու «մաքրել» մինչեւ Զեյվա գյուղի անտառապատ սարերը ընկած թուրքական բնակավայրերը:Գնդապետ Ամիրխանյանի զորախումբի մարտիկները պիտի գերիշխող դիրքեր գրավեին Խնձորեսկից մինչեւ Հագարու գետընկած բարձունքների վրա եւ թույլ չտային, որպեսզի Մաղավուզի ու Մազմազակի թուրք ու քուրդ հրոսակախմբերը օգնության հասնեին Բարգուշատի թրքությանը:

«Արտեմ Խանզատեանին եւ Եապոնացուն(նկատի ունի Սաքո-Ցապոնին- Համբարձում Սարգիսեանյան-Հ. Գ.),-շարունակում է Ա. Խանզատյանը,- հրահանգուած էր, իրենց խմբերովը Կէսօրուա հանդի բարձրութիւններիցը Մաղանջուղ գիւղի վրայովը իջնել, կտրել Բարգիւշատի ձորերի բերանին կառուցած Լալազարենց մեծ կամուրջը, այնտեղից անցնել եւ յարձակումն սկսել, վարդ ու ծաղիկներով լեցուն, սոխակների հայրենիքը համարվող Դոնդարլու Դամիրչիլար գիւղաքաղաքի վրայ»[1]:

Համաձայն վաղօրոք մշակած մարտավարության, զանգեզուրյան մարտական ուժերը թուրքական բնակավայրերի վրա հարձակումը պիտի ձեռնարկեին միաժամանակ՝ հունվարի 6-ի (19) առավոտյան: Գործողության առաջին փուլում ծրագրված էր ընդամենը երկու օրում՝ հունվարի 6-ին եւ 7-ին մահմեդական բնակչությունից մաքրել Շուռնուխ, Էյվազլար , Մազրան եւ Նավլու գյուղերն իրենց շրջակա բնակավայրերով, ապա զարգացնելով հարձակումը՝ պիտի հասնեին մինչեւ Հագարու գետը:

Հունվարի 6-ին (19), առավոտյան Դրոն իր զորամասով դուրս է գալիս Գորիսից, ապա Քարահունջ տանող ճանապարհով անցնում Բարգուշատի ձորերով և շարժվում դեպի Էյվազլար: Որպեսզի թուրքերին զրկեր լեռների ամրություններում պաշտպանվելու հնարավորությունից, հրամայում է թնդանոթներից կրակ տեղալ թուրքաբնակ գյուղերի վրա:

«Տեղատարափ կրակոցներէն,- պատմում է Արտեմ Խանզադյանը, - թուրք ժողովուրդը անակնկալի է գալիս: Այնքան անակնկալ է լինում յարձակումը, որ թուրքերը ժամանակ չունենալով որեւէ ապրանք վերցնելու, թողնում են տուն եւ տեղը եւ փախչում պատսպարուելու, գիւղերի շրջաններումը ընկած Ուզուն Մեչու (երկար Անտառ) անտառները»[2]:

Դրոյի զորամասի հարձակումը և թնդանոթներից արձակած կրակոցները ազդարարում են հարձակման սկիզբը: Զանգեզուրյան մարտական ուժերը, համաձայն մշակած մարտավարության, միաժամանակ սկսում են հարձակումը և գրոհների բոլոր ուղղություններում

---

[1] Նույն տեղում:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1941, յունիս, էջ 97:
[3] Գեորգեան Վ., նշվ. աշխ., էջ 43:
[4] Ավո, Նժդեհ, 1968, Պէյրութ, էջ 482:

[1] Նույն տեղում, էջ 481:
[2] Նույն տեղում, էջ 482:

նրանց ձեռնարկած հարձակումը ընթանում է մեծ հաջողությամբ: Էյվազլար գյուղը գրավելուց հետո, Դրոյի առաջնորդած զորախմբերը մեկը մյուսի հետևից մաքրում են Էյվազլար գյուղի մերձակայքում գտնվող մահմեդականակ մյուս գյուղերը: Նույն հաջողությամբ էին ընթանում նաև մյուս ուղղություններում հարձակվող Զանգեզուրյան մարտախմբերի գործողությունները:Ցապոնի եւ տաթեւացի Վարդանի գլխավորած զինվորական ուժերը Տանձավեր գյուղը մաքրելուց ու քարուքանդ անելուց եւ Մարքազի բարձունքը գրավելուց հետո, հարձակվում են թուրքերի գլխավոր հենակետի՝ Շուռնուխի վրա, ուր կենտրոնացել էին մեծ թվով թուրքական զինված հրոսակախմբեր:

Իր հուշերում ներկայացնելով այդ պահը՝ Ցապոնը գրում է. «...Հրաշալի է զանգեզուրցու հետ կռուի գնալը: Էդ խամ կռիւ չէ, այլ քէֆ, հերոսական մրցութիւն՝ դժուարագոյն դիրքը գրաւելու, շարքում առաջինը լինելու համար...

Լուսաբացի հետ Մարքազը մեր ձեռքումն էր:

...Այստեղից մեր թափը կրկնապատկած՝ խփեցինք ուղիղ Շուռնուխի վրայ: Թրքական այդ կենտրոնական գիւղը իր բազմաթիւ կռուողներով ու անառիկ դիրքերով հազիւ կարողացաւ մէկ ժամ դիմանալ: Առաւ ու փախաւ՝ հետը քաշ տալով շուրջն ընկած բոլոր գիւղերը...

Կէս օր չեղած, մաքրեցինք իմ զօրամասին յանձնուած ճակատի վրայ ընկած Տանձաւէր, Մաճ, Նավլու, Քոմիրլու, Շուրնախի, Մազրա գիւղերը՝ իրենց մօտիկ 3 ուրիշ գիւղերով, եւ Մարքազի բարձունքը»[1]:

Գերազանց կատարելով առաջադրանքը եւ համառ կռիվներից հետո ամբողջովին «մաքրելով» վերոհիշյալ բնակավայրերը, Ցապոնի գլխավորած զորախումբը շարժվում է Նավլու եւ միանում նույն ոգեւորությամբ մարտնչող Սաքո Ցապոնի (Համբարձում Սարգիսջանյան) եւ Արտեմ Խանզատյանի գլխավորած մարտախմբերին: Համատեղ ուժերով զարգացնելով հարձակումը՝ Զանգեզուրի մարտական ուժերը գրավում եւ ամբողջովին կրակի են մատնում թուրքաբնակ գյուղը:

Միաժամանակ, իրեն հանձնարարված Եղվարդից մինչև Զեյվա ձգվող տեղամասը թուրք բնակչությունից մաքրելուց հետո, Նավլու գյուղ է հասնում նաեւ Գարեգին Նժդեհի գլխավորած Ղափանի զորախումբը:

[1] «Հայրենիք» ամսագիր, 1941, յունիս, էջ 97:

Արտեմ Խանզատյանի վկայությամբ՝ հաջորդ օրը «Նժդեհ զափանցի կտրիճների գլուխը անցած առաւօտեան եկաւ կրակի բաժին դարձած Նաւլու գիւղը»[1]:

Եղրափակելով Զանգեզուրը թուրք բնակչությունից «մաքրելու» նպատակով ձեռնարկած գործողության նկարագրությունը, Ցապոնը նշում է. «Մազրայի գրավումով մենք լուծեցինք մեզ յանձնած ռազմական խնդիրը եւ շրջան կազմելով Էյվազլարի շրջանում կախուեցինք Որոտանի գլխին, ուր հանդիպեցի Գորիսից առաջացող մեր ոյժերին: Դրօն դեռ հեռուից ողջունեց մեզ եւ մօտենալով՝ մենք գրկախառնուեցինք: Այդ օրը ամբողջ շրջանը, որ նախապէս ծրագրած էինք, գրաւեցինք»[2]:

Դրոն Զանգեզուրում Գարեգին Նժդեհի, Հովհաննես եւ Սագո Ցապոնների, Արտեմ Խանզադյանի եւ մյուս հրամանատարների ու քաջակորով զանգեզուրցիների համագործակցությամբ ընդամենը երկու օրվա ընթացքում հրաշալիորեն է լուծում Զանգեզուրը մինչեւ Հագարու գետը թուրքերից մաքրելու անգնահատելի գործը:

Պիտի ընդգծել, որ հայ մարտական ուժերի ձեռնարկած գործողությունների անվիճելի հաղթանակն անկասկած պայմանավորված էր նաեւ այն հանգամանքով, որ Զանգեզուրի երեք զինվորական շրջանների մարտական ուժերը թեպետ գործել են յուրաքանչյուրը իրեն հատկացված տեղամասում, սակայն գործել են վաղօրոք մշակված կշռադատված ճկուն մարտավարությամբ, փոխհամաձայնեցված, մեկ միասնական հրամանատարությամբ:

Արժանի գնահատելով Զանգեզուրը թուրք բնակչությունից վերջնականապես մաքրելու իրողությունը՝ գեներալ Հախվերդյանը գրում է. «Առաջին խնդիրը, Զանգեզուրի հարավային եւ արեւելյան շրջաններն ու Ղափանը, ինչպես նաեւ Զանգեզուրի եւ Արցախի միջեւ ընկած գոտին թաթար բնակչությունից մաքրումը, կատարվեց փայլուն կերպով: Չնայած համառ դիմադրությանը՝ թաթարական բնակավայրերը հրդեհվեցին, իսկ բնակիչները դուրս քշվեցին:

Արցախի հետ կապող ուղին բացված էր»[3]:

Զարգացնելով հարձակումը, Դրոյի ընդհանուր հրամանատարությամբ գործող զանգեզուրյան մարտական ուժերը հասնում են մինչեւ Հագարու գետը եւ մահմեդական բնակչությունից լիովին մաքրում այդ շրջանների բնակավայրերը:

[1] Աւօ, Նժդեհ, էջ 483:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1941, յունիս, էջ 97:
[3] ՀԱԱ, Ֆ, 45, ց. 1, գ. 177, թ. 19:

Զանգեզուրը մահմեդական բնակչությունից մաքրելու նպատակով հայ մարտական ուժերի ձեռնարկած գործողությունը, իրոք, ընթացել է շատ արագ ու արդյունքում՝ ավելի քան արգասաբեր: Ս. Վրացյանի գնահատմամբ՝ «Այսպէս կազմակերպւած զանգեզուրցիք մի գրոհով մաքրեցին բուն Զանգեզուրի և Ղափանի միջև ընկած տարածութիւնը՝ Դոնդարլու-Շուռնուխ-Ասկիլիում թրքական շրջանը, մօտ 30 գիւղ: Մարտին գրաւեց Աւդալար-Ալեանչու-Մուսուլմանլար-Բարգիւշատ շրջանը, ուր գտնւում էին մօտ 120 թրքական գիւղեր»[1]:

Եթե ընդհանրացնենք ու ըստ էության, անաչառորեն գնահատենք 1920 թ. հունվարի սկզբներին Զանգեզուրում Դրոյի ընդհանուր հրամանատարությամբ տեղի ունեցած գործողությունը, ապա աներկբա պիտի նշել, որ փաստորեն այդ նշանավոր ու չափազանց արգասաբեր գործողության արդյունքում ոչ միայն լիովին մաքրվում է Զանգեզուրի տարածքը մահմեդական բնակչությունից, այլեւ բացվում են Արցախ տանող ուղիները: Ավելին, այն, ինչը ընդամենը երկու օրվա ընթացքում բուն Զանգեզուրում, ապա նաեւ մինչև մարտ ամսին՝ Հագարու գետով ձգվող տարածքում, իրականացրին հայկական մարտական ուժերը, անգնահատելի ու կենսական նշանակություն ունեցավ ոչ միայն Զանգեզուրի, այլեւ բովանդակ հայ ժողովրդի կյանքում:

Հարց է ծագում. ինչպիսի՞ իրավիճակում կհայտնվեր Զանգեզուրը ու տարիներ անց ինչպիսի՞ն կլիներ գավառի հայ և թուրք բնակչության քանակական հարաբերակցությունը, եթե չձեռնարկվեին վերոհիշյալ գործողությունները:

Եթե նկատի ունենանք, որ մահմեդական բնակչությունը անհամեմատ ավելի արագ է բազմանում, իսկ դա գաղտնիք չէ, ապա այդ հարցի պատասխանը դառնում է միանգամայն ակնառու, հստակ ու հասկանալի:

Զանգեզուրում ծավալված վերջին դեպքերը մեծ իրարանցում են առաջ բերում հարեւան Ադրբեջանի հանրապետությունում:

Ադրբեջանական իշխանությունների համար մեծ հարված էր տասնյակ հազարավոր այն թուրքերի կորուստը, որոնց զինական աջակցությամբ հույս ուներ լուծելու Զանգեզուրը Ադրբեջանին բռնակցելու խնդիրը: Ինչպես եւ սպասվում էր, Ադրբեջանի կառավարության վերաբերմունքը Զանգեզուրում կատարվող դեպքերի

[1] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 371:

նկատմամբ շատ բուռն էր եւ ցասկոտ, չնայած ընդամենը հազիվ երկու ամիս էր անցել այն օրերից, երբ իր կանոնավոր բանակի զորամասերը՝ թուրք-քուրդ հրոսակների համագործակցությամբ ներխուժելով Զանգեզուր, փորձում էին հնարավոր բոլոր միջոցներով մեկընդմիշտ բնաջնջել տեղի հայությանը եւ զինու զորությամբ վերջնականապես վճռել գավառը Ադրբեջանի Հանրապետության գերիշխանությանը ենթարկելու խնդիրը: Այժմ, կարծես, մոռացության մատնելով ոչ վաղ անցյալում իրենց գործադրած ոճիրներն ու վայրագությունները՝ բողոքի հեռագրերով եւ Թիֆլիսում իրենց դիվանագիտական ներկայացուցչի ներկայացրած անվերջանալի բողոք-դիմումներով հեղեղում էին հաղթող տերությունների դեսպանատներն ու պահանջում նրանցից միջամտել եւ կանխել հայկական զորքերի կողմից Զանգեզուրում մահմեդական բնակչության նկատմամբ կենսագործվող ջարդերը եւ պատժել այդ գործի գլխավոր հանցավորներին:

Իրենց պաշտոնական բողոք-դիմումագրերում ադրբեջանական կողմը Անտանտի տերությունների ներկայացուցիչներից եւ անձամբ գնդապետ Հասկելից պահանջում է Զանգեզուրից հեռացնել առաջին հերթին Դրոյին, որպես օտար պետության գործակալի (Հայաստանի հանրապետությունը Զանգեզուրի համար Ադրբեջանի գնահատմամբ որակվում էր որպես օտար պետություն - Հ.Գ.) եւ մահմեդական բնակչության նկատմամբ կենսագործված ջարդերի հիմնական կազմակերպչի[1]:

Բայց դեպքերն անդառնալի էին, Դրոն իր գործը արդեն կատարել էր, Ադրբեջանը Զանգեզուրում մեկընդմիշտ կորցրել էր իր հուսալի հենարանն ու դաշնակցին, Զանգեզուրը մաքրված էր, այնտեղ արդեն մահմեդական տարր գոյություն չուներ:

Ադրբեջանի իշխանությունները ձգտում էին փոխվրեժի եւ այդ նպատակով տենդագին պատրաստություն էին տեսնում Զանգեզուրում կորցրած արյունակից դաշնակիցների վրեժը լուծել Շարուր-Նախիջեւանում, ապա նաեւ Արցախում:

Հայոց Աշխարհի պատմական Արցախ աշխարհը իր մելիքություններով (Խամսայի մելիքություն) համաձայն ցարական Ռուսաստանի եւ շահական Պարսկաստանի միջեւ 1813 թ. կնքված Գյուլիստանի պայմանագրի, անցնելով Ռուսաստանի տիրապետությանը, միացվել էր թուրքական հարթավայրային շրջաններին ու մասն էր կազմում Գանձակի նահանգի: Ցարական իշխանությունները դիտա-

[1] Տե՛ս ՀՀ ԲԿԱ, , ֆ. Ս. Վ.(Սիմոն Վրացեան), թղ. 8, գ. 10:

վորությամբ նահանգն այնպես էին ենթարկել վարչա-տարածքային բաժանման, որպեսզի գավառներում հայերը չկազմեին բնակչության մեծամասնությունը: Դրան հակառակ, Արցախի լեռնային տարածքում, որն ընդունված է անվանել Լեռնային Արցախ(Գյուլիստան, Զրաբերդ, Խաչեն, Վարանդա, Դիզակ-Ներկայիս Շահումյանի, Մարդակերտի, Ասկերանի, Մարտունու եւ Հադրութի շրջանները) կազմում էին մի ամբողջություն, որտեղ հայությունը կազմում էր բնակչության մեծամասնությունը:

Հիմք ունենալով Դավիթ Անանունի «Հայաստանի Կոպերացիա»-յի 1920 թ. սեպտեմբերի համարում տեղ գտած տվյալները, ինչպես նաեւ Ղարաբաղ-Զանգեզուրի գործիչների, 1922 թ. հուլիսին, Թավրիզում կազմած զեկուցման նյութերն ու ՀՀ պատվիրակության եւ ՀՀ Թիֆլիսի դիվանագիտական ներկայացուցչության տվյալները՝ Ս. Վրացյանը գրում է. «Ղարաբաղի լեռնաստանում 1917 թ. տեսակներով ապրում էին՝ հայեր՝ 150.000 (70 %), մուսուլմաններ՝ 58. 000 (27%)», մնացած ազգեր ՝ 5000 (3%)»[1]:

Պիտի նկատել,որ Արցախի բնակչության թվաքանակը ներկայացնող տվյալների մեջ բացակայում է Գյուլիստանը:

Շարունակելով ներկայացնել Արցախի բնակչության իրական պատկերը՝ Ս. Վրացյանը նշում է. « Այժմ ազգությունների թվական յարաբերությունը միանգամայն փոխված է: Ուրիշ ազգերից ռուսները հեռացել են Ռուսաստան: Ապա Լեռնային Ղարաբաղի որոշ գիւղերից հեռացել են նաեւ թուրքերը: Դրա դիմաց լեռներն են ապաստանել տափաստաններում եղած հայերը (Զիվանշիր գաւառ): Այսպիսով, Հայկական Ղարաբաղում (Զրաբերդ, Խաչէն, Վարանդա, Դիզակ) հայ տարրը ամրացել է թւով: Իսկ եթե սրան աւելացնենք նաեւ, որ հին Ղարաբաղի անբաժան մասը կազմող Գիւլիստանը վերջին տարիներն անց ու դարձի մէջ վերականգնեց իր կապը նախկին միաւորի հետ եւ ընթացաւ հայկական քաղաքականութեան հունով, պատկերն աւելի կատարեալ կլինի»[2]:

Արցախում Հայաստանի Հանրապետության եւ ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Արսեն Միքայելյանը, ահազանգելով Արցախին սպառնացող իրական վտանգ, Դրոյին հետեւյալն է գրում.

«Զանգեզուրի ռազմական գործողությունները սոսկալի յուզմունք են առաջ բերում Ադրբէջանի թրքութեան մէջ: Անմիջապէս զօրքեր են տեղափոխում: Թրքութիւնը զինւում, կամաւորական

[1] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 309:
[2] Նույն տեղում, էջ 309-310:

խմբեր են կազմում եւ նախապատրաստական աշխատանքի են դիմում յարձակուելու Զանգեզուրի եւ Արցախի հարցը ընդմիշտ լուծելու համար: Ի նկատի ունենալով Շուռնուխի գործողությունների հետեւանքով Արցախում ստեղծուած դրութեան բարդութիւնը, Արցախի ներկայացուցիչները խնդրում են Դրօյին, միշտ պատրաստ լինել Ադրբէջանի յարձակման դէպքում օգնութեան հասնելու: Մինչ այդ, պահանջում են ուղարկել փամփուշտներ եւ դրամ»[1]:

Դեպքերը զարգանում եւ իրար են հաջորդում չափազանց արագ: Եթե իրոք ադրբեջանական զորքերը Հաճի Սամլուի քրդական հեծելախմբերի համագործակցությամբ ներխուժեին Արցախ, ապա ինչով եւ ինչպես կարող էր Դրոն օգնել արցախցիներին:

Ավելին, նույն օրերին Դրոն իր հանձնարարությամբ Արցախ գործուղված իր ներկայացուցիչներից ստանում է հետեւյալ ահազանգը. «Հայկական Ղարաբաղը զինուած է չափից դուրս թոյլ, իսկ ռազմամթերք կայ չնչին քանակութեամբ...»[2]:

Ի պատասխան արցախցիների դիմումի ու ՀՀ կառավարության ներկայացուցիչ Արսեն Միքայելյանի ու իր հանձնարարությամբ Արցախում գտնվող գործիչների ահազանգի, Դրոն հայտնում է հետեւյալը. «... Ինչքան հնարաւոր է, իր ուժերի սահմաններում կօգնի ձեզ: Դրօն Արցախի գործիչներին տալիս է իր ապագայ գործողութիւնների ծրագիրը- Արցախին օգնութիւն հասնելու դէպքում, եւ առաջարկում է՝ Ադրբէջանի յարձակման դէպքում Արցախի ինքնապաշտպանութեան գործողութիւնների տեղական նախագիծը ուղարկել իրեն: Դրօն յայտնում է, որ իր տրամադրութեան տակ եղած դրամի ու ռազմամթերքի պաշար շատ քիչ կայ, ուստի Գորիսից մեկնում է կարճ ժամանակով Քեշիշքենդ (Վայոց Ձոր), որտեղից ուղիղ գծով կապվելու է Հայաստանի կառավարութեան հետ՝ արագացնելու փամփուշտի եւ դրամի առաքումը Արցախի համար, եւ վերջնականապէս ստանալու կառաւարութեան հաւանութիւնը Արցախի գործողութիւնների սկսման վերաբերեալ եւ ծանօթանալու ընդհանուր քաղաքականութեան հետ »[3]:

Արցախցիների դիմումը եւ Դրոյի պատասխանն ու ձեռնարկած քայլերը մատնանշում են, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, գլխավոր ուշադրությունը բեւեռելով Զանգեզուրը թուրք բնակչությունից «մաքրելու» հույժ կարեւոր խնդրի կենսա-

[1] Տե՛ս ՀՀ ԲԿԱ,, թծ. 8, գ. 10:
[2] ՀՅՀԴ ԿԱ, թ. 1469, ֆգ. 1, էջ 24:
[3] ՀՀ ԲԿԱ,, թծ. 8, գ. 10:

գործմանը, դեռևս ինչպես հարկն է չէր նախապատրաստել անհրաժեշտ միջոցները՝ վերջնականապես լուծելու նաև Արցախի հարցը: Այդ պատճառով Դրոյի գլխավորած զորամասի մուտքը Արցախ ձգձգվում է, թեպետ այնտեղ ծավալվող դեպքերը թելադրում էին գործել ճիշտ հակառակ ուղղվածությամբ՝ առավելագույնս արագ եւ կազմակերպված:

Արցախի ներկայացուցիչներին տված խոստման համաձայն՝ Դրոն մեկնում է Վայոց Ձոր եւ այնտեղից փորձում կապվել Երեւանի հետ: Սակայն այդ ուղղությամբ նրա ձեռնարկած բոլոր փորձերն անցնում են ապարդյուն: Կապը Երեւանի եւ Վայոց Ձորի միջեւ խափանվել ու չէր գործում: Մնում էր կատարել միակ քայլը: Նա հարկադրված մեկնում է մայրաքաղաք՝ ՀՀ կառավարության հետ վերջնականապես մշակելու եւ համաձայնեցնելու Արցախում ձեռնարկվելիք գործողությունների մանրամասները: Գնալու նախօրեին Դրոն Հայաստանի Հանրապետության եւ ՀՀ կառավարության ներկայացուցիչ Արսեն Միքայելյանին հրահանգում է շարունակել ինքնապաշտպանության կազմակերպման գործը, նախահարձակ չլինել եւ ադրբեջանական ռազմական ուժերի հարձակման դեպքում ժողովրդին դաշտավայրերից տեղափոխել լեռնային մասերը եւ սպասել մինչեւ ինքը Արցախ կհասցնի հանրապետության կառավարությունից ստացած զենքն ու զինամթերքը[1]:

Փետրվարի 14-ին Դրոն Վայոց Ձորից մեկնում է Երեւան: Սյունիքի նահանգապետ Զաքար Ցոլյանը (Ալեքսանդր Աշխատունի), որը Դրոյի հետ եղել էր Զանգեզուրում, իսկ Երեւան մեկնելիս նրա ուղեկիցների թվում էր, գրում է.

«Փետրվարի 19-ին, 5-օրեայ ճամբորդությունից յետոյ հասանք Երեւան: Այստեղ ես լաւապէս ճանաչեցի Դրօյին, այդ երկաթէ մարդուն: Փետրվարի 22-ին նախարարների Խորհրդին ներկայացրինք մեր զեկոյցը Զանգեզուրի եւ Արցախի քաղաքական ու ռազմական կացութեան մասին եւ շեշտեցինք, որ անխուսափելիօրէն գարնանը խոշոր դէպքեր տեղի կունենան Արցախում:Դրօյի կողմից պահանջ դրուեց՝ զէնքեր եւ փամփուշտ առաքել Զանգեզուրի եւ Արցախի համար:

Դրօն յայտարարեց, որ ինքը գիտի գաղտնի մի պահեստ Քանաքեռում, ուր «սեւ օրուայ համար» պահում է կէս միլիոն մոսինի փամփուշտ: Դրօյին թուլատրուեց բացել այդ պահեստը եւ փամփուշտները փոխադրել Զանգեզուրի եւ Արցախի պէտքերի համար:

[1] Նույն տեղում:

Դրօն անմիջապէս գործի անցաւ, հայթայթեց փոխադրական միջոցներ եւ առաջին հերթին 200.000 փամփուշտ փոխադրեց Նոր-Բայազէտ, որտեղից հնարաւոր չէր փոխադրութիւնը շարունակել սայլերով, որովհետեւ ձիւնի խոր շերտը, որ հասնում էր 1 մետրի եւ՝ Սէլիմ-Գեադուկի փակուած լինելը, փոխադրութիւնը դէպի Դարալագեազ, դարձնում էին անհնարին»[1]:

Դյուրին գործ չէր ձմռան խստաշունչ պայմաններում զինամթերքը Երեւանից հասցնել Զանգեզուր, ապա Արցախ:Սակայն, ի պատիվ Նոր Բայազետի շրջանի բնակիչների, պիտի ընդգծել, որ հաղթահարելով ձմռան հարուցած դժվարությունները՝ նրանք 200.000 փամփուշտները շալակով հասցնում են Դարալագյազ, ապա տեղացիների օգնությամբ՝ Գորիսի ռազմական պահեստները, որտեղից պիտի տեղափոխեին Արցախ:

Նոր Բայազետի իշխանության ներկայացուցիչների հետ զենք ու զինամթերքի տեղափոխման անչափ կարեւոր ու դժվարին աշխատանքները կազմակերպելուց հետո Դրոն շտապ մեկնում է իր հայրենի Իգդիր: Դարձյալ ասպարեզում հայտնվել էին Սուրմալուի եւ նրա հարակից շրջանների քրդական հրոսակախմբերը, որոնք միավորվելով՝ շարունակաբար ասպատակում եւ թալան, ավարառություն ու անգամ սպանություններ են գործում գավառի հայկական գյուղերում: Ծանր բախումներ էին ծավալվում քրդական զինյալ հրոսակախմբերի եւ Սուրմալուի հայ ինքնապաշտպանական ջոկատների միջեւ:

ՀՀ զինվորական ուժերի հրամանատարության շտաբի՝ Հայաստանի ռազմա-քաղաքական իրավիճակը ներկայացնող համառոտ ամփոփագրում(1920թ. հունվարի 1-ից մինչեւ ապրիլի 1-ը), ի թիվս մյուս վայրերում տեղի ունեցած դեպքերի, Իգդիրի շրջանում (Սուրմալու) կատարված կռիվների մասին նշվում է.

«Մինչեւ մարտի կեսերը քրդերի հետ հաստատված խաղաղ հարաբերությունը խախտված չէր...Միայն Խուլբում Շամիլ-Բեկ Այրումլինսկին շարունակում էր մնալ թուրքերի ազդեցության տակ, որոնցից ստանում էր զենք եւ հրահանգիչներ...Բոզբուրունյան մարտերի առաջին իսկ օրից սկսած, քրդերը տրվելով դրսի ագիտացիային, կտրուկ փոխում են իրենց վերաբերմունքը:

Մարտի 25-ին Բոզբուրունի վրա ձեռնարկած հարձակմանը զուգընթաց՝ ավելի քան 3000 քրդեր գրոհում են Դաշբուրուն գյուղի վրա: Երկու օր ընթացող կռիվներում քրդերը ջախջախվել են ու հեռացել: Իգդիրի շրջանում խաղաղությունը վերականգնվել է: Հայտ-

[1] «Ալիք» բացառիկ, 1956,մայիսի 4, էջ 37:

նի է դարձել թուրք զինվորների եւ գնդացրորդների մասնակցությունը, որոնք մարտի 25-ին քրդերի մոտ էին եկել Բայազետից»[1]:

Այդ կռիվներին իր վճռորոշ մասնակցությունն է ունեցել Դրոն: Նա ոչ մեծ զորամասով հասնում է Սուրմալու եւ տեղի հայ զինված ջոկատների աջակցությամբ ջախջախում է քրդական հրոսակախմբերին, ապա արագորեն ուղեւորվում Զանգեզուր[2]:

Զաքար Ցոլյանի(Ալ. Աշխատունի) հավաստմամբ՝ Դրոն Սուրմալուի քուրդ հոսակախմբերին ջասխջախելուց հետո, Զանգեզուր է հասնում նոր միայն ապրիլի 10-ին եւ նույն օրը տեղեկանում Շուշիի հայ բնակչության կոտորածի մասին[3]:

Երեւանում գտնվելու ժամանակ Դրոն մեկ անգամ եւս փորձում է ՀՀ կառավարությունից ստանալ Նախիջեւանի, ինչպես նաեւ Շարուրի եւ Օրդուբադի շրջանները թուրքերից մաքրելու համաձայնությունը: Նրա կարծիքով այդ հարցը վաղուց արդեն հասունացել էր, եւ լուծումը ոչ մի դեպքում չպետք է հետաձգվեր: Նա, իր ներկայացուցիչներին ուղարկելով Արցախ, ցանկանում էր ժամանակ շահել, լուծել Նախիջեւանի հարցը եւ ապա նոր, ողջ ուժով ձեռնամուխ լինել Արցախի խնդրի կարգավորման աշխատանքներին:

1.Նախ, Նախիջեւանը, Շարուրն ու Օրդուբադը, իրենց թուրք բնակչության հոծ զանգվածով եւ կազմակերպվածությամբ մշտապես գտնվելով ապստամբական վիճակում, ապակայունացնում էին հանրապետության քաղաքական կացությունը եւ փաստորեն չենթարկվելով հանրապետության իշխանություններին՝ գրեթե անկախ կյանք էին վարում:

2. Նախիջեւան-Շարուրը կապող օղակ էր Թուրքիայի եւ Ադրբեջանի միջեւ: Ավելին, Նախիջեւանը թուրք գործակալների, սպաների մշտական հավաքատեղի էր, զենքի ու զինամթերքի պահեստավորման համար ամենահարմար ու ապահով վայրը: Անհրաժեշտ պահերին թուրք սպաները հենց Նախիջեւանի տարածքից էին անցնում հանրապետության թուրքաբնակ մյուս շրջաններն ու Ադրբեջան:

3.Նախիջեւանում ունենալով մարտական զգալի ուժեր՝ թուրքերը երբեմն, եթե իրավիճակը պահանջում էր, թիկունքից հարվածում էին Զանգեզուրին եւ դրանով իսկ լարվածության մեջ պահելով հայ բնակչությանը՝ մեծ օգնություն էին ցույց տալիս թուրք բնակչու-

[1] Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն, փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու), Երեւան, 2000, էջ 179:
[2] Տե՛ս ՀՀ ԲԿԱ, պ. 76, թծ. 45/7, գ. 5:
[3] Տե;ս «Ալիք», Բացառիկ, թիւ 87, էջ 87:

թյանը: Ելնելով այս հանգամանքից՝ Դրոն ուզում էր եւ բազմիցս կառավարությունից պահանջում թույլ տալ իրեն գոնե այս անգամ մեկընդմիշտ լուծել Նախիջեւանի թրքության հարցը:

Նախիջեւանի պարագայում Դրոյի տեսակետը միանշանակ էր եւ այն չէր փոխվել հանրապետության հաստատման առաջին իսկ օրից: Ինչպես արդեն նշվել է, Նախիջեւանի հարցը զինու զորությամբ վճռելու տեսակետը նա առաջ քաշեց նաեւ հանրապետության տարածքների ընդարձակման ժամանակ՝ 1919 թ. ամռանը: Սակայն Հայաստանի կառավարությունը, առաջնորդվելով խնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու սկզբունքով եւ ապավինելով անգլիացիների խոստումներին, չընդունեց նրա առաջարկությունը, եւ ինչպես արդեն հայտնի է, հետեւանքը եղան Բոյուք-Վեդիի, Կարսի, Սուրմալուի, Զանգիբասարի եւ, իհարկե, Շարուր-Նախիջեւանի արյունահեղ եւ դաժան կռիվները:

Դարձյալ լավագույն հնարավորություն էր ընձեռվել վերջնականապես լուծելու Նախիջեւանի հարցը, եւ Դրոն բնականաբար չէր կարող այլ տեսակետ ունենալ: Ավելին, իր տեսակետը՝ Նախիջեւանի ու Օրդուբադի խնդիրը զինուժի միջոցով մեկընդմիշտ լուծելու համար, Դրոն ձեռնարկում է որոշակի քայլեր: Զանգեզուր վերադառնալու հենց առաջին օրը նա իր զորամասով հարձակվում է թուրքաբնակ Զուլ մեծ գյուղի վրա, որն այդ օրերին դարձել էր թուրք զինյալ հրոսակախմբերի հավաքատեղի: Այդ հրոսակախմբերը, պարբերաբար հարձակվելով հայկական գյուղերի վրա, սպանում եւ թալանում էին հայ գյուղացիներին: Ջախջախելով ու դուրս շպրտելով այդ վայրերում բույն դրած հրոսակախմբերին՝ Դրոյի զորախումբը, կրնկակոխ հետապնդելով թշնամուն, հասնում է ընդհուպ Նախիջեւանի սահման եւ պատրաստվում ներխուժել գավառի խորքերը[1]:

Մինչ Զանգեզուրյան հունվար-փետրվարյան դեպքերը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը Նախիջեւանի ու Օրդուբադի խնդիրը լուծելու գործում առաջնորդվում է միանգամայն հակառակ չափանիշներով: ՀՀ քաղաքական եւ տնտեսական վիճակը դեռեւս շատ հեռու էր բավարար լինելուց, եւ պատերազմական գործողությունների ծավալումը, թեկուզեւ ներքին թշնամուն հնազանդեցնելու նպատակով, հանրապետության համար իրոք կարող էր ծանր հետեւանքներ ունենալ:

Երկրում խաղաղ, կայուն իրավիճակի հաստատումը ծայրահեղորեն անհրաժեշտ էր: Հունվարյան նշանավոր դեպքերից անմիջա-

[1] «Ալիք» բացառիկ, 1956,մայիսի 4, էջ 87:

պես հետո, երբ հայկական զինական ուժերը Դրոյի գլխավորությամբ վերջնականապես լուծեցին Զանգեզուրի թրքության հարցը, նա փորձում է կառավարության ուշադրությունը բեւեռել դարձյալ Նախիջեւանի ու Օրդուբադի վրա:

Հետագայում անդրադառնալով այդ հարցին՝ Ալ. Խատիսյանը խոստովանում է. «... Դրօն կը պնդէր, որ Արցախը ապստամբելուց առաջ թիկունքը ամրացնել: Եկած էր կառավարութիւնէն արտօնութիւն առնելու: Օրդուբատը եւ Նախիջեւանը Հայաստանի Հանրապետութեանը միացնելու»[1]:

Զանգեզուրը մահմեդական բնակչությունից «մաքրելուց» հետո, Հայաստանի Հանրապետության կառավարությունը վերջապես ընդունում է Օրդուբատի ու Նախիջեւանի խնդիրը զենքի ուժով մեկընդմշտ լուծելու Դրոյի կողմից բազմիցս առաջարկած ծրագիրը: ՀՀ կառավարության ընդունած կարեւորագույն այդ որոշման պատճառով փոքր-ինչ հետաձգվում է զինական ուժեր Արցախ տեղափոխելու ձեռնարկումը:

Համաձայն Գ. Բալայանի եւ Զ. Ցոլյանի ստորագրությամբ կազմված «Ղարաբաղի դեպքերի պատմութիւն» խորագիրը կրող զեկուցագիր-տեղեկագրի՝ «Մարտի սկզբներին 1920 թ. ստացում է նախարարապետ Ա. Խատիսեանի նամակ, որի մէջ գրում է, որ Ղարաբաղի հարցի լուծումը պէտք է յետաձգել եւ Զանգեզուրի ուժերի գլխաւոր ուշադրութիւնը պէտք է դարձնել Օրդուբաթի եւ Նախիջեւանի վրայ, որովհետեւ Հայաստանը մեծապէս շահագրգռուած է այդ երկու շրջաններով: Այս տեղեկութիւնները հաղորդում են Ա. Միքայելեանին, աւելացնելով, Զանգեզուրի իշխանութիւնը ներկա պայմաններում չի կարող շօշափելի օգնութիւ հասցնել Ղարաբաղին. մանաւանդ որ Օրդուբաթի վրայ պատրաստում են ռազմական գործողութիւններ»[2]:

Ճիշտ է, ՀՀ կառավարությանը համաձայնվել էր ձեռնարկել իրականացնել Օրդուբադի ու Նախիջեւանի խնդիրը վերջնականապես լուծելու գործողությունը, բայց հետագա դեպքերը ծավալվում են այլ ուղղվածությամբ:

Նախիջեւանի մահմեդականության պարագլուխները Դրոյի զորամասի ներխուժումը Նախիջեւանի տարածք կանխելու դիտավորությամբ եւ կարծես ճշգրտորեն կանխազգալով Հայաստանի Հանրապետության կառավարության խաղաղասիրական տրամադրվածությունը. «... մի պատգամաւորութիւն ուղարկեցին Երեւան գնդապետ Քերբազի խանի գլխաւորութեամբ Հայաստանի Հանրապետու-

[1] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 1649, գ. 6, էջ 3:
[2] ՀՅԴ ԿԱ, թղ. 1649, գ. 1, էջ 25:

թյան կառավարութեան հետ բանակցելու՝ Հայաստանի իշխանութեան ենթարկելու մասին: Ի վերջոյ Հայաստանի զինուորական նախարարից մի հրաման հղեց, ըստ որում, Դրօյի զօրամասը, ուր որ գտնւում է, այնտեղ էլ պիտի կանգ առնի: Դադարեցուցին ռազմական գործողութիւնները»[1]:

Նախիջեւանի թրքության պարագլուխները, այս անգամ եւս գործելով ճկուն ու նպատակասլաց, հասնում են իրենց նպատակին: Հանրապետության իշխանությունն ընդառաջում է նրանց պահանջներին, եւ Դրոն դարձյալ կորցնում է Նախիջեւանի թուրքերի հարցը զենքով լուծելու հնարավորությունը:Պատմական հիշյալ ժամանակահատվածում Արցախի ու Զանգեզուրի հարցի հետ կապված դեպքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Նախիջեւանի վրա Դրոյի զորախմբի հարձակումը չի իրականացվել ոչ միայն Նախիջեւանի թուրք պարագլուխների միջամտության հետեւանքով:

Այդ ընթացքում Արցախում դեպքերը զարգանում էին սպասվածից ավելի արագ ու ոչ հօգուտ արցախահայության:

Իր կազմավորման առաջին իսկ օրից սկսած՝ Ադրբեջանի կառարությունը, օգտվելով Հայաստանի Հանրապետության դեռեւս ոչ այնքան կայուն վիճակից եւ թուրքերի աջակցությունից, հաստատակամորեն նպատակադրվել էր բռնությամբ զավթել Արցախը եւ դրանով իսկ մեկընդմիշտ արմատախիլ անել Հայաստանին վերամիավորվելու արցախահայության ձգտումները:

Այս կապակցությամբ արտահայտելով Արցախի նկատմամբ Ադրբեջանի իշխանությունների որդեգրած քաղաքականությունը՝ Ադրբեջանի զինված ուժերի շտաբի պետ, ցարական բանակի գեներալ-լեյտենանտ Սուլկեւիչը Խոսրով Բեկ-Սուլթանովին հասցեագրած հրահանգում գրում է.«...Ադրբեջանի կառավարության գերատեսչությունից պահանջվում է ի կատար ածել պետական անհրաժեշտ մի խնդիր՝ ուժով գրավել և Ադրբեջանին միացնել Լեռնային Ղարաբաղը»:

Ավելին, Սուլթանովին հասցեագրած մեկ այլ հրանգում՝ գեներալ Սուլկեւիչը նշում է. «Գլխից հանել ու դեն շպրտել Ղարաբաղի հարցի խաղաղ լուծման վերաբերյալ հասկացողությունը»[2]:

Հստակ ներկայացնելով Արցախի խնդիրը բացառապես զենքի ուժով լուծելու Ադրբեջանի պաշտոնական դիրքորոշումը՝ Սուլկեւիչը միաժամանակ խորհուրդ է տալիս «...աբդուլհամիդյան հեծելազն-

[1] «Ալիք» բացառիկ, 1956,մայիսի 4, էջ 87:
[2] Սեյրան Վ. Շուշի, Երեւան, 1991, էջ 74:

դերի օրինակով, քրդերից կազմակերպել զինված ջոկատներ և դրանք ամենուրեք օգտագործել հայերի դեմ»[1]:

Ստանալով կառավարության հանձնարարությունն ու ֆինանսական միջոցները՝ Սուլթանովը թուրք սպաների աջակցությամբ կազմակերպում է քրդական հատուկ խմբեր, որոնք կոչվում էին ջանբազարներ (կյանքից հոգնած, հուսահատված) եւ դրանք կենտրոնացնում է Շուշիում ու Արցախի սահմանամերձ շրջաններում (Աղդամ, Ջեւանշիր, Ջեբրային): Ուշագրավ է, որ քրդական հեծելախմբերի հրամանատարությունը Սուլթանովը վստահում է իր եղբայրներին՝ Սուլթանբեկին եւ Իսկանդերբեկին[2]:

Միաժամանակ, Ադրբեջանի իշխանությունները տնտեսական շրջափակման մեջ են վերցնով Արցախը՝ ձգտում են սովամահության սպառնալիով իրենց կամքը թելադրել արցախահայությանը: 1919 թ. մայիս-հունիս ամիսներին կառավարության հրահանգով խստորեն արգելվում է արցախցիներին հացահատիկ, գյուղատնտեսական ուրիշ մթերքներ եւ այլն:Կառավարության որոշմամբ՝ կախաղան էր սպառնում բոլոր նրանց, ովքեր կհամարձակվեին խախտել հրահանգն ու որեւէ մթերք վաճառել հայերին:

Արցախի նկատմամբ կիրառած վերոհիշյալ գործողությունների հետեւանքով «Միայն Բերդաձոր, Հարար և Փարաջանց գյուղերի 5000 գաղթականներից բոյկոտի օրերին մահացան 1500 մարդ:

Ժամանակակիցների վկայությամբ Ղարաբաղի բոլոր գյուղերում սովը համաճարակի նման կոտորում հատկապես ծերերի ու երեխաներին: այսպես օրինակ, Ջամձոր գյուղում, որ ուներ ընդամենը 120 ընտանիք, երկու շաբաթվա ընթացքում սովամահ եղան 90 մարդ»[3]:

Այսուհանդերձ, արցախցիները, չհանդուրժելով մուսաֆթականների զավթողական պահանջները, բազմիցս գումարված համաժողովներում, արտահայտելով ողջ արցախահայության կամքն ու ցանկությունները, մշտապես Հայաստանի Հանրապետությանը վերամիավորվելու որոշումներ էին կայացնում: Հայոց հինավուրց Արցախ աշխարհում բազում անընդմեջ արյունալի բախումներ էին տեղի ունեցել հայերի ու թուրքերի միջեւ:

1919 թ. նոյեմբերին Զանգեզուրում կրած խայտառակ պարտությունից եւ հաջորդ տարվա հունվար-փետրվարյան դեպքերից հետո ադրբեջանական իշխանությունները եռանդով նախապատրաստու-

[1] Նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 74-75:
[3] Նույն տեղում:

թյուններ են տեսնում զենքի ուժով լուծելու Արցախի խնդիրը: Իր հերթին, Արցախը նույնպես պատրաստվում է հերթական անգամ փլուզելու Ադրբեջանի զավթողական ծրագրերը:

Հայաստանի Հանրապետության մարտական ուժերը մաքրել էին Զանգեզուրի տարածքը մահմեդական բնակչությունից եւ դեպքերի զարգացմամբ պիտի լուրջ ուշադրություն բեւեռեին Արցախի վրա: Քանի որ արդեն բացվել էին Զանգեզուրի տարածքով դեպի Արցախ տանող ուղիները, ուստի Հայաստանի Հանրապետությունը կարող էր մարտական ուժեր ուղարկել զենքի դիմած արցախահայությանը օգնության ու վերջնականապես լուծել գավառը Մայր Հայրենիքին միավորելու խնդիրը:

Մինչ այդ Հայոց Ազգային Խորհուրդը, ապա նաեւ Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս Շուշիի գումարտակի եւ ֆինանսական միջոցների, աջակցել էին Արցախին, բայց այդ օգնությունը, պիտի ասել, այնքան էլ ծանրակշիռ չէր: Այս առումով բավական խոսուն են Արցախի Ազգային Խորհրդի նախագահ Եղիշե Իշխանյանի վկայակոչած հետեւյալ տվյալները. «Հայաստանը տասը գաւառ ունի և կառավարութիւնը ամսական ծախսում է 200 միլիոն ռուբլի, իւրաքանչիւր գաւառի վրայ 20 միլիոն, ուստի Ղարաբաղին պիտի բաց թողնել երէք ամսւանը միանւագ, որպէսզի նա կարողանայ ազատ, համարձակ աշխատել և երեք ամիս յետոյ դրամ ստանալ: Մինչև մեր աքսորուելը, Ազգային Խորհուրդը դրամ է ստացել Բագուից երկու նւագով՝ 900.000 ռուբլի, Հայաստանի կառավարութիւնից միանւագ՝ Ա. Արզումանեանի միջոցով՝ 290.000 ռուբլի, Արսէն Շահմազեանից՝ երկու նւագով՝ 400.000 ռուբլի, հինգ ամսւայ ընթացքում, 1509.000 ռուբլի, որ մի կաթիլ էր ծով կարիքների դիմաց»[1]:

Արցախին տրամադրած գումարի մեծությունը ավելի որոշակիացնելու համար՝Ե. Իշխանյանը վկայակոչում է հետեւյալ համեմատությունը. «Երբ Ադրբէջանի կառավարութիւնը, կանխելով Հայաստանի կառավարութեանը, Խոսրով Սուլթանովին նշանակեց Զանգեզուր-Ղարաբաղ նահանգապետ և ուղարկեց Շուշի, 25 միլիոն ռուբլի աւանս տուին նրան և միաժամանակ պետական բանկում վարկ բաց արաւ նահանգապետարանի համար, մինչդեռ մեր կառավարութիւնը, բաւական ուշացած, մարտ ամսին Արսէն Շահմազեանին նշանակելով Զանգեզուր-Ղարաբաղի կոմիսար, կանխիկ 400.000 ռուբլի է տալիս ձեռքը: Ի՞նչ համեմատութիւն»[2]:

[1] Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 541:
[2] Նույն տեղում, էջ 541-542:

Արցախում տիրող իրական կացությունը թելադրում էր, որ այնտեղ ձեռնարկվող գործողությունները պիտի իրականացվեին լրջագույն կազմակերվածությամբ, առանց աղմուկի եւ ցուցադրական գործողությունների: Արցախում տեղի ունեցած դեպքերի ուսումնասիրությունը միանշանակորեն փաստում են, որ Արցախում բռնկված զինված ելույթները, հակառակ Դրոյի բազմաթիվ զգուշացումների, ծավալվում են առանց լուրջ նախապատրաստության եւ վաղաժամ: Ապստամբության կազմակերպիչները, ինչպես հարկն է, չեն քողարկել իրեց նախապատրաստական աշխատանքները, իսկ Ադրբեջանական իշխանությունները շատ լավ տեղյակ են եղել Արցախում ձեռնարկվող դեպքերի մասին:

Եղիշե Իշխանյանը, որն այդ ժամանակ գտնվում էր Զանգեզուրում, անդրադառնալով Արցախում տեղի ունեցած դեպքերի գնահատմանը, իր քննադատական վերաբերմունքն է արտահայտում ապստամբության կազմակերպիչների ոչ ծանրակշիռ, ցուցադրական գործողությունների նկատմամբ, եւ որպես ապացույց իր քննադատական դիտողությունների, նշում է . «Ապստամբությունից առաջ մի անգամ Դալի Ղազարի առաջարկությամբ Արցախի ձիաւոր մարտիկ ուժերի ընդհանուր ցուցադրում է կատարւում. բոլոր շրջաններից ձիաւոր մարտիկները կենտրոնանում են որոշեալ վայրում, հազարից ավելի հեծեալներ: Դալի Ղազարը չափազանց ոգեւորւում է ձիաւորներով ու բացականչում. «Այսքան ձիաւոր ուժ միատեղ հաւաքւած մեր կառաւարությունը չունի. այս ձիաւորներով կարելի է ամբողջ Մուղանի դաշտը գրաւել»[1]:

Ինչ խոսք, որ համանման ելույթները եւ Արցախի մի շարք վայրերում բազմիցս կրկնվող բացահայտ զինվորական մարզումները եւ այլ բնույթի ցուցադրական ձեռնարկումները չէին կարող չգրավել Ադրբեջանական իշխանությունների ուշադրությունը:

«Արսեն Միքայելյանը, - շարունակում է Ե. Իշխանյանը, - Դալի Ղազարը եւ Մեսեանը թերագնահատել էին Ադրբեջանի զինուորական ուժը եւ ունեցած նիւթական կարողությունը: Եւ Արցախի հայությեան հասած դժբախտությունը ամբողջովին այդ թերագնահատման արդիւնքն է»[2]:

Փետրվարի 19-ին Ադրբեջանի կառավարության կողմից Արցախում գեներալ-նահանգապետ նշանակված Խոսրով-Բեկ Սուլթանովը վերջնագիր է ներկայացնում Արցախի Ազգային խորհրդին,

[1] Նույն տեղում, էջ 614:
[2] Նույն տեղում, էջ 615:

որով պահանջում է ընդունել Ադրբեջանի գերիշխանությունը: Ի պատասխան Սուլթանովի վերջնագրին՝ փետրվարի 28-ին Շուշի գյուղում գումարվում է Արցախի 8-րդ համաժողովը, որը մեկ անգամ եւս արտահայտելով արցախահայության կամքը եւ հավատարիմ գտնվելով նախորդ վեհաժողովներին, բացառությամբ 7-րդի, որոշումներին՝ միանշանակորեն վճռում է մերժել գեներալ-նահանգապետի պահանջը եւ միաձայն արտահայտվում Հայաստանի հետ միավորվելու օգտին:

Արցախահայության նման վճռից գազազած՝ Սուլթանովը որոշում է զենքի ուժով ընկճել Արցախի դիմադրությունը եւ նոր զորահավաք անցկացնելով՝ ավելի է հզորացնում ադրբեջանական բանակը ու Արցախի վրա հարձակվելու նպատակով ռազմական ուժերը տեղաբաշխում է մի քանի հենակետերում:

Ադրբեջանական իշխանությունների ձեռնարկած միջոցառումների մասին ՀՀ կառավարության ներկայացուցիչներ Արսեն Միքայելյանն ու Կ. Աթանեյանը Զանգեզուրի իշխանությանը հասցեագրած նամակում հայտնում են, որ «Ադրբեջանը խոշոր ուժեր է կենտրոնացնում 1. Ջեբրայիլ-Զանգեզուր ուղղությամբ, 2. Նախիջեւանի եւ Օրդուբադի ուղղություններով՝ շրջափակելու Զանգեզուրը...

Միաժամանակ Ադրբեջանը խոշոր ուժեր է մտցնում Թարթառի հովիտը»[1]:

Զանգեզուրի իշխանություններին տեղեկացնելով Արցախին սպառնացող վտանգի իրողությանը՝ նրանք հուսով էին, որ ժամանակին կստանան ՀՀ մարտական ուժերի աջակցությունը:

Ստանալով նամակը՝ Ս. Մելիք-Ցոլչյանը Ա. Միքայելյանի ու Կ. Աթանեյանի հաղորդածը տեղեկացնում է ՀՀ վարչապետին ու սպարապետին եւ պատասխան նամակում գրում է «Դրօն այստեղ չէ, սպասեցեք նրա վերադարձին, որովհետեւ Ղարաբաղի գործերի ղեկավարությունը մտնում է նրա իրաւասությունների մէջ, մանաւանդ որ մեզ մօտ չկա ոչ մի փամփուշտ ու ոչ մի դրամ»:

Ս. Մելիք-Ցոլչյանը միաժամանակ նրանց հիշեցնում է Դրոյի հրահանգը. «...ինչքան կարելի է իրենց գործունեությունը տանեն գաղտնի, որ Ադրբեջանը չչղայնանա...»[2]:

Ի՞նչ պիտի արվեր. Հայաստանի Հանրապետությունն այդ պահին չէր կարող օգնություն հասցնել Արցախ: Գործի շահերը հրամայաբար պահանջում էին, որ Արցախի ապստամբության կազմա-

[1] ՀՅ ԲԿԱ, , ֆ. Ս. Վ.(Սիմոն Վրացեան), թղ. 8, գ. 10, էջ 3:
[2] Նույն տեղում:

կերպիչները գործեին սթափ, կշռադատված ու անպայման հաշվի առնեին արցախահայության հնարավորություններն ու Դրոյի կողմից իրենց տրված անաղմուկ ու առանց ցուցադրական ելույթներով գործելու խորհուրդն ու հրահանգը:

Ըստ Գ. Բալայանի եւ Զ. Ցոլյանի կազմած վերոհիշյալ զեկուցագիր-տեղեկագրի՝ Զանգեզուրից Հայաստանի Հանրապետության վարչապետ Ալ. Խատիսյանի հաղորդած «Զանգեզուրի ուժերի գլխաւոր ուշադրութիւնը պէտք է դարձնել Օրդուբաթի եւ Նախիջեւանի վրայ» տեղեկությունը ստանալուց հետո, «Ա. Միքայելեանը, Դալի Ղազարի հետ սկսում են իրենց պատասխանատուութեամբ ինքնագլուխ գործել: Ա. Միքայելեանը իր ստացած տեղեկութիւններին իրազեկ չէ անում տեղական ինքնապաշտպանութեանը գործակցող գործիչներին...»[1]:

ՀՅԴ Ապառաժի կենտր. կոմիտեի անդամ Խաչիկ Մելքոնյանի հավաստմամբ՝ Արցախում ապստամբություն սկսելու որոշումը, տեղյակ չպահելով անգամ գավառի ինքնապաշտպանական շրջանների հրամանատարներին ու առանց նրանց համաձայնության, կայացվել է Արսեն Միքայելյանի, Դալի Ղազարի եւ Դիզակի ինքնապաշտպանական շրջանի հրամանատար Հովակ Ստեփանյանի համատեղ համաձայնությամբ ու վճռով[2]:

Մարտի սկզբներին վերոհիշյալ գործիչների մասնակցությամբ տեղի է ունենում զինվորական գաղտնի ժողով, որտեղ ընտրվում է զինական ուժերի հրամանատարական կազմը եւ որոշվում՝ չսպասելով Զանգեզուրից սպասվող օգնությանը՝ սկսել մարտական գործողությունները: Հարկ է նկատել, որ ավելի քան անհասկանալի է ՀՅԴ բյուրոյի ներկայացուցչի նախաձեռնությամբ տեղի ունեցած ժողովի կայացրած՝ Արցախում տիրող կացությանը ոչ համահունչ, միանգամայն չկշռադատված ու վնասակար այդօրինակ որոշումը:

Բալայանի եւ Զ. Ցոլյանի ստորագրությամբ ՀՅԴ բյուրոյին ներկայացրած զեկուցագիր-տեղեկագրի հավաստմամբ՝ «Ա. Միքայելեանը միանգամայն ոգին և սիրտը հանդիսանալով այդ գործողութիւնների, շատ չնչին միջոցներ էր ձեռք առնում՝ Ղարաբաղի հայ զինուորութեան զէնքի քանակը լրացնելու, երկու ու կէս ամսւայ ընթացքում հազիւ յաջողել է Զանգեզուրից մօտ 50.000 փամփուշտ եւ երկու գնդացիր ստանալ, իսկ Ղարաբաղի զինուորութիւնը առանց դրսից փափուշտ ներս մուծելու, չէր կարող դիմանալ մի մեծ կռւի»[3]:

[1] Նույն տեղում, էջ 3:
[2] ՀՅԴ ԿԱ, թթ. 1649, գ. 4, էջ 22:
[3] ՀՅԴ ԿԱ, թթ. 1649, գ. 1, էջ 25:

Այդ նույն զեկուցագիր-տեղեկագրի տեղեկացմամբ, Արցախի ներկայացուցիչները՝ հիմք ունենալով Արցախում տիրող իրական կացությունը, նույն օրերին հայտնում են Դրոյին, որ «Հայկական Ղարաբաղը զինված է չափից դուրս թույլ, իսկ ռազմամթերք կա շատ չնչին քանակութեամբ, իսկ ինքնապաշտպանութեան գործը Հայաստանի ներկայացուցիչ Ա. Միքայէլեանը առաջ է տանում»[1]:

Ըստ Արցախի Ինքնապաշտպանության անդամ Խ. Մելքոնյանի՝ Արցախում թույլ կազմակերպված ապստամբության վաղաժամկետ բռնկման գլխավոր մեղսագործներից մեկը, եթե ոչ ամենագլխավորը, եղել է Դալի Ղազարը իր անխոհեմ, չկշռադատված ու ցուցադրական գործողություններով: Դալի Ղազարը, որն իր ձեռքն էր վերցրել Արցախի զինվորական գործը, փոխանակ, համաձայն իրենց տրված հրահանգի, գաղտնորեն ու անաղմուկ նախապատրաստեր մարտական ուժերը, շրջել է շրջաններում եւ հրապարակավ ու ցուցադրաբար կազմակերպել Արցախի մարտական ուժերի զորահանդեսներ[2]:

Հ. Ստեփանյանի վկայությամբ՝ «... ազատ լեռներում օդ ծծող Դալի Ղազարը, Արսէն Միքայէլեանը, Զախար Մեսեանն ու ռոտմիստր Տէր-Մարտիրոսեանը կազմակերպում են օրը ցերեկով պարատներ (զօրատես) եւ հազարաւոր զինուած հայ գիւղացիների վաշտերը թմբկահարութեամբ զինավարժութիւններ են կատարում Վարանտայում եւ Ջիւանշիրում ու Խաչէնում»[3]:

Նույն օրերին, ըստ Հ. Ստեփանյանի՝ «...փետրուարի 22-ին 1920 թւի, Խանքենտում (ներկայիս՝ Ստեփանակերտ) Ասկերանի մօտ, Շուշի-Եւլախ ամբողջ խճուղու վրայ տեղի են ունենում կազմակերպւած հայկական կոտորածներ, իսկ Թարթառի հովտում եւ Մարգուշեւան հայկական գիւղում Սուլթանովը զօրք է կենտրոնացնում եւ սպասում է զէնքի ոյժով անմիջապէս գրաւելու Զանախչին (Աւետարանոցը), Քիրսի բարձունքները, ապա Հատրութավանը եւ այլն»[4]:

Դալի Ղազարի չկշռադատված ու ցուցադրական վերոհիշյալ գործողությունների իրողությունը, ինչպես արդեն նշվել է, վկայակոչում է նաեւ Եղիշե Իշխանյանը:

Իհարկե քնած չէին Արցախում կատարվող իրադարձություններին ակնդետ հետեւող Ադրբեջանի իշխանությունները:

«...Դալի Ղազարի գալուց յետոյ,-գրում է Խ. Մելքոնյանը,- Ղարաբաղի ինքնապաշտպանական գործը այլ պատկեր է ստա-

[1] Նույն տեղում, էջ 24:
[2] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թթ. 1649, գ. 4, էջ 22:
[3] ՀՅԴ ԿԱ, թթ. 1649, գ. 3, էջ 8:
[4] Նույն տեղում:

նում: Կամաց-կամաց ռազմականի է անցնում եւ ամբողջը յայտնի է դառնում Սուլթանովին:Այն որ մինչեւ Դալի Ղազարի գալը գաղտնի էր, յետոյ յայտնի է դառնում, որովհետեւ հրապարակի վրայ էր ամէն ինչ»[1]:

Ավելին, Խ. Մելքոնյանի գնահատմամբ՝ «...խորապէս համոզված եմ, որ եթէ Դալի Ղազարը այդ օրերին չգար Ղարաբաղ, երբեք Ա. Միքայելյանը յանձն չէր առնել առանց Զանգեզուրի եւ Դրօյի կարգադրութեան այդպիսի պատասխանատու գործ սկսել, անգամ եթէ ցանկանար էլ...»[2]:

Արցախում տեղի ունեցած դեպքերը ներկայացնող նյութերի ուսումնասիրությունն աներկբա մատնանշում է, որ արցախահայության ինքնապաշտպանության գործը ընթացել է թույլ կազմակերպվածությամբ , անփույթ եւ ոչ պատշաճ մակարդակով: Արցախ գործուղված ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչներն ու ՀՅԴ Ապառաժի կենտրոնական կոմիտեի եւ Արցախի Ինքնապաշտպանական մարմնի անդամները գործել ոչ թե միասնական ու փոխհամաձայնեցված, այլ միմյանցից կտրված:Արցախում տեղի ունեցած իրադարձությունները ներկայացնող վավերագրերի հավաստմամբ՝ այդ գործում հիմնական մեղավորները Արցախ գործուղված ՀՅԴ բյուրոյի գործիչներն էին:

Նույն տարվա մարտի 23-ին ադրբեջանական բազմահազարանոց բանակը, որին միանում են Հաջի-Սամլուիի քրդական հեյալ հրոսակախմբերը, տարբեր ուղղություններով ներխուժում են Արցախ: Սկսվում են անհավասար, իսկ մի քանի ինքնապաշտպանական շրջաններում՝ հերոսական մարտերը:

Արցախում եւ մասնավորապես Շուշիում ձեռնարկած գործողություններին զուգընթաց ադրբեջանական զինվորական ուժերը հերթական անգամ հարձակում են գործել նաեւ Զանգեզուրի վրա:

Ըստ ՀՀ զինվորական նախարարության հետախուզության բաժնի պետ կապիտան Տիգրան Դեւոյանի կողմից Հայաստանի զինվորական ուժերի շտաբի պետին ներկայացրած զեկուցագրի՝ ազերի զինական ուժերը Զանգեզուրի վրա հարձակում են գործել երեք ուղղությամբ. 1. Մինքենդից դեպի Գորիս, 2. Կարլարայից Ղափանը Զանգեզուրից կտրելու նպատակավ դեպի Ալի-Ղուլի-Ուշաղի եւ Զեբրայիլի կողմից:

Զանգեզուրի մարտական ուժերը, հերթական անգամ դրսեւորելով մարտական անկոտրում ոգի եւ մարտնչելու անզուգական

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 1649, գ. 4, էջ 23:
[2] Նույն տեղում:

վարպետություն,մարտի 23-26-ին տեղի ունեցած կռիվներում ջախջախել են թնդանոթների եւ բազմաթիվ հրոսակախմբերի աջակցությամբ հարձակվող ադրբեջանական 5-րդ եւ 7-րդ գնդերին, որոնք վերջերս էին Բաքվից ու Լենքորանից եկել Զեբրայիլ[1]:

Զանգեզուրում հերթական անգամ պարտություն կրելուց հետո Ադրբեջանի իշխանությունները իրենց ողջ ուշադրությունը կենտրոնացնում են Արցախի վրա:

Պահպանվել է Արցախի դեպքերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարության ներկայացրած տեղեկատվություն-փաստաթուղթը, որը կազմվել է Թիֆլիսի Ամերիկյան հյուպատոսության պահանջով: Դատելով այդ փաստաթղթի կառուցվածքից ու բովանդակությունից՝ կարելի է պնդել, որ Հայաստանի զինվորական նախարարությունը, հետեւաբար նաեւ կառավարությունը, այդ ժամանակահատվածում լիարժեք տեղեկացված չէին Արցախում տեղի ունեցած դեպքերի մանրամասներին: Այդ պատճառով Ամերիկյան հյուպատոսության պահանջով կազմած փաստաթղթում Արցախում ծավալված դեպքերը ներկայացված են համառոտակիորեն եւ ոչ այնքան իրազեկությամբ:

Համաձայն այդ փաստաթղթի՝ Ադրբեջանի իշխանությունները, ձգտելով վերջնականապես լուծել Արցախը Ադրբեջանին ենթարկելու խնդիրը, մարտի կեսերին վերջնագիր են ներկայացնում արցախցիներին եւ պահանջում զինաթափվել, հանձնել զենքերն ու ճանաչել Ադրբեջանի գերիշխանությունը: Ադրբեջանի իշխանությունները Աղդամի, Խանքենդի եւ մյուս շրջաններում կենտրոնացնում են զինվորական ուժեր, որոնք պիտի ներխուժեին Արցախ ու սանձազերծեին հայ բնակչության կոտորածները:

Մերժելով իրենց ներկայացված վերջնագիրը՝ արցախցիները դիմում են զենքի, եւ նրանց մարտական ուժերը մարտի 22-ին գրավում են Ասկերանը եւ փորձում շրջապատել Շուշիի եւ Խանքենդի (ներկայիս Ստեփանակերտ) թուրքական կայազորները[2]:

Արցախի մարտական ուժերի ծավալած գործողությունների ուսումնասիրությունը միանշանակորեն մատնանշում է, որ դրանք, հատկապես Շուշիում, ձեռնարկվել են ոչ այնքան կազմակերպված ու փոխհամաձայնեցված եւ տեղիք են տվել մեծ ողբերգությունների ու զոհերի:

Ե. Իշխանյանի հավաստմամբ՝ Շուշիի հայ բնակչության կոտորածը կատարվել է հայ մարտախմբերից մեկի չկշռադատված եւ անմիտ

[1] Нагорный Карабах в 1918-1923 гг., Ереван, 1992, ст. 432:
[2] ՀԱԱ, Ֆ. 120, ց. 1, գ. 563, թ. 173:

ինքնագործողությունների հետեւանքով: Մարտի 24-ին երեսուն-հինգ զինյալներ Բագրատ Միքայելյանի գլխավորությամբ Երեւանյան դռներից ներս են մտնում քաղաք եւ առանց շուշեցիներին դույզն- ինչ տեղյակ պահելու՝ աննկատ մոտենում եւ շրջապատում են թուրք զինվորների զորանոցը եւ համազարկեր տեղալով՝ պահանջում այնտեղ գտնվող ավելի քան 600 զինվորներին հանձնվել:

Բնական է, որ 600 զինվորներ հենց այնպես, առանց դիմադրության չէին կատարելու իրենց ներկայացրած հանձնվելու պահանջը: Այստեղ էլ կատարվում է ամենասարսափելին ու ամենաողբերգականը. վեց հարյուր թուրք զինվորներ արագորեն դուրս են գալիս զորանոցից, հրացանազարկ անում եւ փախուստի մատնում իրենց շրջապատողներին եւ հարձակվում Շուշիի հայ բնակչության վրա[1]:

Արդյունքում. «... բացի հազարաւոր մարդկային կեանքի կորուստից, նիւթական հսկայական կորուստ ունեցանք, որ հարիւրաւոր միլիոն ռուբլու է հասնում...

Հարկաւ, եթէ քաղաքի մարդիկ տեղեակ լինէին կատարուելիք ակտին, կը կարողանային հնարաւորութեան սահմաններում խուսափել մեծ կորուստ ունենալուց եւ պաշտպանուել»[2]:

Ըստ Արցախի Ինքնապաշտպանական Մարմնի անդամ, Դիզակի ճակատի հրամանատար Հովակ Ստեփանյանի վկայության՝ Շուշիի մեծ ողբերգության պատճառը Խանքենդում նախօրեին տեղի ունեցած դեպքերն էին:

Հ. Ստեփանյանի գնահատմամբ՝ Խանքենդը, որտեղ գտնվել են զենքի պահեստներն ու թնդանոթները, համարվել է Արցախի ապստամբության կենտրոնական ճակատը, որի հրամանատարությունը հանձնարարված էր գնդապետ Մեսյանին:Նրա գլխավորությամբ մարտական ուժերը պիտի հարձակվեին Խանքենդի վրա, գրավեին այնտեղ ամբարված զենքն ու զինամթերքը, թնդանոթները, ապա առաջանային դեպի Շուշի եւ պաշտպանեին քաղաքը հակառակորդի հնարավոր հարձակումներից: Սակայն դեպքերը զարգանում են վատթարագույն ուղղվածությամբ: Այն մարտական խումբը, որը մտնում է Խանքենդ, ինչ-ինչ պատճառներով առաջնորդում է ոչ թե անձամբ գնդապետ Մեսյանը, այլ Ալեքսան դային ու սպա Լալայանը, որոնք հաջողությամբ գրավում են ավանը, բայց չեն կարողանում իրենց ձեռքում պահել: Ալեքսան դային անձնատուր եղած թուրք զինվորների վրա կրակ է բացում , իսկ թուրք զինվորներից

[1] Տե՛ս Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 612:
[2] Նույն տեղում:

մի քանիսը զենքի դիմելով, սպանում են նրան, ապա եւ սպա Լալայանին: Առաջնորդների սպանվելը վճռական ազդեցություն է գործում: Արցախցի մարտիկները, խուճապի մատնվելով, լքում են մարդաշտն ու դիմում փախուստի[1]:

Հ. Ստեփանյանի գնահատմամբ՝ «...այս դժբախտությունը պատճառ է դառնում Շուշւա մեծ տրագետիային, քանի որ Խանքենտու առատ ռազմամթերքը մնում է թշնամու ձեռքում, ինչպես եւ դաշտային թնդանոթները... ամենամեծ անյաջողությունը հէնց այդտեղ պատահեց: Միւս կողմից դրսից մեծ յաջողությամբ Շուշի մտած վարատար Ներսէս Ազբէկեանը փոխանակ անմիջապէս գրաւելու զօրանոցը, բարձրանում է Ռիզին Բախչա կոչւած վայրը եւ այնտեղից յիմարաբար համազարկեր տեղում քնած ասկեարների վրայ, որոնք զարթնելով դիմում են ինքնապաշտպանութեան, ապա եւ գնդացիրներից կրակ բաց անելով՝ զինւած հայերին փախուստի են մատնում: Գիւղացի առաջնորդները եւ զինւորները հեշտութեամբ նահանջում են՝ չմտածելով, թէ ինչ հանցաւոր քայլ են անում...

Շուշում երբ թուրքերը հաստատ լուր են առնում Խանքենտու դեպքի մասին, իսկ քաղաք մտած հայ ոյժերի անշնորք գործողութիւնն էլ աւելի երես տալիս նրանց, սկսում են կրակել տները, թալանել եւ կոտորել հայ բնակչութեանը: Հայ քաղաքացիների մեծամասնութիւնը ահաբեկւած թողնում է քաղաքը եւ նահանջող ոյժերի հետ մտնում գաւառ: Շուշում մնում են 3-4 հազար հայեր՝ Ռուբէն Շահնազարեանի յորտորներով: Դրանց մեծ մասը կոտորւում են եւ բռնաբարւում: Սպանւում է եւ թեմի առաջնորդը...»[2]:

Համաձայն Ադրբեջանի զինվորական նախարարարության տեղեկագրում տեղ գտած՝ Զանգեզուրում ու Արցախում կատարվող դեպքերին առնչվող տեղեկությունների, «Մարտի 22-ին ապստամբները գրավել են Ասկերանը եւ շրջապատել Շուշիի եւ Խանքենդի թաթարական կայազորները:

Շուշիում թաթարները պատասխանել են անխտիր կոտորածներով (մարտի 22-ին սպանվել է 8000 մարդ) եւ Զանգեզուրի վրա ձեռնարկած ընդհանուր հարձակումով...»[3]:

Ինչպիսի՞ն էր Արցախի եւ ազերի մարտական ուժերի հարաբերակցությունը:

Ըստ ՀՀ զինվորական նախարարության գլխավոր շտաբի կազմած վերոհիշյալ տեղեկագրի՝ հայկական բանակի գլխավոր շտաբը

[1] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 1649, գ. 3, էջ14, 14 բ:
[2] Նույն տեղում:
[3] Нагорный Карабах в 1918-1923 гг., Ереван, 1992, ст. 416:

Ամերիկյան հյուպատոսության ուշադրությանն է ներկայացնում Արցախի եւ ազերի մարտական ուժերի մոտավոր քանակը: Եթե հիմք ընդունենք տեղեկագրում ներկայացված տվյալները, ապա պարզվում է, որ այդ նույն ժամանակահատվածում Արցախում զինված տղամարդկանց քանակը հավասար է եղել մոտավորապես 30.000-ի: Տեղեկագրում նշված չէ, թե 30.000 զինված տղամարդկանցից որքանն է մասնակցել Արցախի տարբեր շրջաններում ընթացող ինքնապաշտպանական մարտերին[1]:

Այս առումով տեղեկագրում համեմատաբար ավելի սպառիչ ու որոշակի են ներկայացված Արցախի վրա հարձակվող ազերի զորքերի քանակի մասին տվյալները:

Արցախի վրա տարբեր ուղղություններից հարձակվող զորքերի քանակը կազմել է. «Ընդամենը. 4 հետեւակային, 3 հեծյալ գնդեր եւ ռոտմիստր Սուլթանովի քրդական 4-5 ջոկատներից բաղկացած հեծյալ դիվիզիոնը: Սովորաբար ղարաբաղյան կռիվների ժամանակ ադրբեջանական գործող կանոնավոր զորքերի գնդերի անձնակազմը առավելագույնս համալրվում էր, եւ նրանց կազմում կարելի է հաշվել 8000 սվին եւ 2000 սուր»[2]:

Եթե հիմք ընդունենք այդ տվյալները, ապա ստացվում է, որ Արցախի վրա հարձակվող 4 հետեւակային գնդերը իրենց կազմում ունեցել են 32.000, իսկ 3 հեծյալ գնդերը՝ 6000 զինվորները եւ այդ ամենին գումարած՝ ռոտմիստր Սուլթանովի քրդական 4-5 ջոկատներից բաղկացած հեծյալ դիվիզիան:

ՀՀ զինվորական նախարարության գլխավոր շտաբի կազմած տեղեկագրում ներկայացված տվյալները միանշանակորեն ցույց են տալիս, որ եթե նույնիսկ Արցախի 30.000 զինված տղամարդիկ ամբողջությամբ մասնակցեին մարտական գործողություններին, ապա դարձյալ զուտ քանակական առումով զգալիորեն զիջել էին ազերի մարտական ուժերին:

Արցախում վաղաժամ բռնկված դեպքերի ուսումնասիրությունը հավաստում է, որ ազերի բանակի ու քուրդ հրոսակախմբերի հարձակման հետեւանքով Արցախի մարտական ուժերը կռիվների առաջին օրերին հայտնվել են ծանրագույն կացությունում:

Դեպքերի մասնակից Աբրամ Կիսիբեկյանը, որն այդ օրերին գտնվում էր Դիզակի մարտական ուժերի հրամանատար Հովակ Ստեփանյանի շտաբում, իր հուշերում գրում է, որ Արցախում ստեղծված դժվարին կացությունը հրամայաբար թելադրում էր ինչ-որ ելք փնտրել ու դուրս

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Նույն տեղում, թ. 174:

գալ այդ ճգնաժամային իրավիճակից: Այդ նպատակով պիտի տեղի ունենար խորհրդակցություն, հանկարծ «... շնչասպառ ու սոսկալի թրջված, ամբողջապես ցեխի մեջ, հոգնած ու բեզարած՝ ներս մտավ կենտրոնական շտաբի պատանի սուրհանդակը: Նա գալիս էր Սարուշենից: Նա, ծոցից հանելով մի ծրար, հանձնեց Ստեփանյանին, որը բանալով ծրարը՝ նախ կարդաց մտքում և ապա բարձր ձայնով: Նա խիստ հուզված էր և այլայլված. «Շուշվա հայկական մասը մոխրակույտերի է վերածված, ամբողջ քաղաքի հայկական մասը դեռ ծխում է. բնակչության մի մասը ազատված է, մի մասը՝ կոտորված, իսկ մի զգալի մասի վիճակն էլ դեռ անորոշության մեջ է: Ասկերանը՝ Դալի Ղազարի անմիջական մասնակցությամբ ու ղեկավարությամբ, շարունակում է պաշտպանվել, սակայն երկար շարունակել այս դրությունն անհնար է:

Ինչ գնով էլ ուզում է լինի, կապվեցեք Զանգեզուրի հետ և իրազեկ դարձրեք մեր դրությանը, հապաղումը կխորտակի բոլորիս: Աշխատեցեք փամփուշտ հասցնել մեզ »»[1]:

Ա. Միքայելյանի աջակցությունը վայելող Դալի Ղազարի ինքնագործունեության համար Արցախը կարող էր շատ թանկ վճարել:

Իր հուշագրությունում հաստատելով Աբրամ Կիսիբեկյանի վերոհիշյալ տեղեկությունը՝ Հ. Ստեփանյանը գրում է. «Ա. Միքայելեանը օրական 3-4 անգամ սուրհանդակներ է ուղարկում ինձ մօտ եւ իր նամակներով ուղղակի աղաչում է ինձ փրկել Ղարաբաղը եւ իրեն:

-« Դու արիր աւելին, ո՛վ հերոս Յովակ. ի սէր մեր ընդհանուր գործի շարունակիր եռանտով եւ գնա Զանգեզուրից բեր այն ազատարար զօրքը...խեղճ Դալի Ղազարը թառել է Ասկերանի կիրճին եւ հայացքը յառել է դէպի քեզ: Ամբողջ Ղարաբաղի փրկութեան բանալին քո ձեռքին է... »[2]:

Այդ օրերին Արցախում կատարվող դեպքերի վերաբերյալ տարբեր թերթերում տեղ գտած անդրադարձներում նշվում են ոչ այնքան հավաստի տեղեկություններ, ըստ որոնց Արցախում ընթացող կռիվներին մասնակցում են նաեւ Դրոյի գլխավորած հայկական կանոնավոր զորամասերը: Վերոհիշյալ տեղեկագիրը, ժխտելով Արցախյան կռիվներին նրա մասնակցության փաստը, նշում է.«... նույնիսկ ադրբեջանական զորքերի կողմից ապրիլի 3-ին Ասկերանի գրավման ժամանակ Դրոն դեռեւս գտնվում էր Երեւանում»[3]:

Դժվար է միանշանակ պնդել, թե ինչպիսի՞ ճակատագիր էր սպասում արցախահայությանը, եթե Հայաստանի Հանրապետու-

[1] Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ. 1, Երեւան, 2011, էջ 482:
[2] ՀՅԴ ԿԱ, թծ. 1649, գ. 3, էջ16:
[3] ՀԱԱ, ֆ. 120, ց. 1, գ. 563, թ. 173:

թյունը օգնություն չցուցաբերեր Արցախին: Անհրաժեշտ էր ինչ-որ ելք գտնել, վճռական քայլեր ձեռնարկել, տրմատական բեկում մտցնել ծավալվող մարտական գործողություններում:

Հ. Ստեփանյանը Սարուշենի կենտրոնական շտաբին գրում է պատասխանը եւ այնտեղից եկած սուրհանդակին ճանապարհելուց հետո, գումարում է խորհրդակցություն: Ըստ նրա տեղեկացման՝ իրոք, ինչպես իրենց, այնպես էլ Արցախի մյուս շրջանները գտնվում են հուսահատական իրավիճակում: Նրա գնահատմամբ՝ եթե դեպքերն այդպես շարունակվեն, ապա Արցախը կենթարկվի սոսկալի ավերածության: Հիմք ունենալով Արցախում տիրող ճգնաժամային կացությունը՝ Հ. Ստեփանյանը գտնում է. «...մեզ մնում է լուծել միայն մի խնդիր՝ Զանգեզուրին իրազեկ դարձնել: Ահա այժմ թէ ինչ է պահանջվում մեզանից. ինչ գնով էլ ուզում է լինի, այս գիշեր մենք պետք է մարդ ուղարկենք Զանգեզուր: Լեռնային Ղարաբաղը կարող են ազատել անձնուրաց, քաջ, ճարպիկ և ճանապարհներին լավ ծանոթ մարդիկ»[1]:

Ո՞վ պետք է ուղեւորվեր Զանգեզուր: Այդ պահին դա էր Հ. Ստեփանյանին եւ խորհրդակցության մասնակիցներին հետաքրքրող կրեւորագույն հարցը: Արդյոք կգտնվեին արժանավոր քաջարի եւ տեղանքին քաջածանոթ մարդիկ, որոնք հանձն կառնեին մեկնել Զանգեզուր ու այնտեղից Արցախ հասցնել փրկարար օգնությունը:

Խորհրդակցության մասնակիցների թվում է եղել Տումի գյուղի բնակիչ Թեւան Ստեփանյանը[2], որը ոտքի կանգնելով՝ ասում է. «-

[1] Նույն տեղում, էջ 485:

[2] Թեւան Ստեփանյանը Արցախում տեղի ունեցած բազմաթիվ կռիվներում իրեն դրսեւորել է որպես լեգենդար հերոս:

Թեւան Ստեփանյանը ծնվել է 1892-ին ԼՂ-ի Դիզակի(Հադրութ) շրջանի Տումի գյուղում: Ուսանել է Թիֆլիսի ռազմական դպրոցում, ապա ցարական բանակի կազմում մասնակցել առաջին աշխարհամարտին: Հոկտեմբերյան հեղաշրջման հետեւանքով ռազմաճակատի քայքայումից հետո՝ 1918-ի գարնանը վերադառնում է Արցախ, հայրենի Տումի: Հադրութի շրջանում կազմում է մարտական խումբ, որը պաշտպանում էր Արցախի հարավային սահմանները ներկայիս Ֆիզուլիի կողմից պարբերաբար կրկնվող հարձակումներից: Թեւանի գլխավորած հեծյալ ջոկատը կարեւոր մասնակցություն է ունեցել 1918-ի հոկտեմբերի 18-ին Վարանդայի(Մարտունի) շրջանի Մսմնա գյուղի մոտ տեղի ունեցած հաղթական ճակատամարտում:

1920-ին ապրիլին Շուշվա հայկական կոտորածից հետո, երբ Դրոյի ղեկավարությամբ ՀՀ զինված ուժերը մուտք են գործում Արցախ, Թեւանը նշանակվում է Դիզակի հրամանատար: Նույն թվականի ապրիլի 28-ին Ադրբեջանի խորհրդայնացումից եւ մայիսի 26-ին Դրոյի հեռանալուց հետո բոլշեւիկները

ներխուժում են Արցախ: Սկսվում են ծերբակալություններ, քաղաքական հետապնդումներ: Բոլշեւիկ չեկիստները կալանավորում են Թեւանին, բայց նրան հաջողվում է բանտից փախչել ու վերադառնալ Արցախ: Հաստատվելով հայրենի եզերքում, նա ծրագրում է՝ կազմակերպել արցախահայության ապստամբությունն ու հռչակել Արցախի անկախությունը: Այդ նպատակով նա 1920 թ. նոյեմբերին մեկնում է Զանգեզուր, հանդիպում Ռուբեն Նարինյանի ու Գ. Նժդեհի հետ, ու նրանց հետ մշակում Արցախի ազատագրման ծրագիրը: Վերադառնալով Արցախ, Թեւանը ծեռք է բերում զենք ու զինամթերք եւ կազմակերպում է 800, ապա՝ 1800 մարտիկներից բաղկացած մարտական խումբ եւ բոլշեւիկներից ազատագրում է Մեծ Թաղլար, Խծաբերդ, Դրախտիկ, Սուգ, Սարուշեն, Քեշիշքենդ, Ճարտար ու նաեւ ներկայիս Ստեփանակերտը եւ Շուշին կտրում Աղդամից: Խորհրդային զորամասերը փախչում են Ջեբրայիլի կողմերը: Ազատագրելով Դիզակի ու Վարանդայի շրջանները, ինչպես նաեւ Խաչենի որոշ գյուղեր՝ Թեւանը Արցախը հայտարարում է Հայաստանի անբաժանելի մաս:

Հայաստանի փետրվարյան, ինչպես նաեւ Լենքորանի ու, Թալիշի ապստամբությունները ճնշելուց հետո Կարմիր բանակի զորամասերը անցնում են հարձակման եւ ներխուժում են նաեւ Արցախ: Թեւանի սակավաթիվ ուժերը թեպետ հերոսաբար կռվում են, սակայն չեն կարող երկարատեւ դիմադրություն ցույց տալ հակառակորդի մեծաքանակ ուժերի հարձակումներին: Կարմիր բանակի զորամասերը պաշարում են հաղորդակցության բոլոր ուղիները: Անհավասար մարտերում արցախցիները նահանջում են: 1921 թ. ապրիլի 18-ին Թեւանը 700 զինակիցների հետ կատաղի մարտերով հասնում է սյունեցիների բացած Զաբուղի միջանցքին եւ անցնում Լեռնահայաստան, ավելի ուշ՝ Պարսկաստան:

1941-ին Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Միրջաֆար Բաղիրովը Իրանում խորհրդային հետախուզության աշխատակից Էդուարդ Մարտիրոսովին հանձնարարում է գտնել ու ծերբակալել Թեւանին: Մտավախություն կար, որ նա կարող է վերադառնալ Արցախ ու հակախորհրդային գործունեություն ծավալել:

Թեւանն այդ տարիներին Պարսկաստանում աշխատել է որպես ճանապարհաշինարար: Մարտիրոսովն ու մի քանի չեկիստ, որոնցից մեկը՝ արցախցի, 1941-ի հոկտեմբերի 25-ին, համածայն նախապես մտածված ծրագրի, մեքենայով կանգ են առնում Թեւանի բրիգադի մոտ, բացում իբր խափանված մեքենայի շարժիչի խցի կափարիչը, եւ արցախցու ընդգծված բարբառով բարձրաձայնում՝ ճանապարհին մնալու, շարժիչից գլուխ չհանելու մասին: Թեւանը, լսելով հայրենակիցների ձայնը, մոտենում է եւ փորձում օգնել: Ու երբ կռանում է շարժիչը նայելու, չեկիստ, հայրենակիցները ոլորում են ծեռքերը, մտցնում մեքենա, ապա գնացքով տանում են Բաքու: Կանգառներից մեկում գնացքը վերահսկող չեկիստները բացում են խցիկի դուռն ու տեսնում, որ այն դատարկ է: Պարզվում է, որ անգամ ոտքերն ու ծեռքերը կապված վիճակում Թեւանը կարողացել է ատամներով պոկել հատակի տախտակներն ու իրեն

Պարոն Ստեփանյան, ձեր ցանկացած մարդիկ մեզ մոտ կան, որոնք և՛ քաջ են, և՛ ճարպիկ ու ճանապարհներին լավ ծանոթ, եթե թույլ տաք, իսկույն կկանչեմ նրանց:

Ստեփանյանը, մի տեսակ զարմացած և կարծես թեթեւությունն զգալով, հարցրեց.

-Ովքե՞ր են դրանք:

-Հարար գյուղացի Բախչի Պողոսյանը և Խոծաբերդ գյուղացի Մանգի Թամրազյանը...»[1]:

Այդ ժամանակ Արցախ- Զանգեզուրի կապը իրականացվում էր Խոծաբերդ-Հարար-Կոռնիձոր գծով, հիմնականում սուրհանդակների միջոցով, որոնք շատ լավ ծանոթ էին ճանապարհներին, արահետներին, զանազան անցքերին ու թաքստոցներին: Գլխավորապես հենց սուրհանդակների անմիջական մասնակցությամբ ու առաջնորդությամբ է կատարվել Զանգեզուրից զենք ու զինամթերքի փոխադրությունը Արցախ[2]:

Հաջորդ օրը՝ երեկոյան ժամը 6-ին, սուրհանդակները վերադառնում են ռազմակայան եւ Հ. Ստեփանյանին հանձնում մի ծրար, որտեղ գրված էր. «Հայկական զորքը գրավել է Հարարը, վաղ առավոտյան 200 ձի ու ջորի պետք է լինեն Հարարում՝ Զանգեզուրից ռազմամթերք տեղափոխելու համար»[3]:

Բախչի Պողոսյանի պատմածից պարզվում է, որ երբ իրենք առավոտյան հասել են Հագարու գետը, հանդիպել են սահմանապահ հայ զինվորներին, որոնք իրենց ստուգել են, ապա տարել ընդհանուր հրամանատարի մոտ: Սուրհանդակները հրամանատարին հանձնել են իրենց մոտ գտնվող նամակը եւ նրա կարգադրությամբ փորձել են փոքր-ինչ հանգստանալ, բայց ապարդյուն: Այդ պահին Հագարա-Հարար ուղղությամբ սկսել են գործել թուրքական թնդանոթները: Դեպի Արցախ ուղեւորվող հայկական զորամասերի դեմ

նետել գնացքից: Չեկիստները որոնում եւ գտնում են ուշակորույս վիճակում գտնվող Թեւանին:

Ինչպե՞ս է դասավորվել նրա ճակատագիրը. մինչ օրս այնքան էլ պարզ չէ: Հայաստանի Ազգային անվտանգության ծառայությունը պաշտոնական նամակով դիմել է Ռուսաստանի Անվտանգության դաշնային ծառայությանը՝ պարզելու նրա ճակատագիրը: Հարցման պատասխանում նշված է, որ Թեւան Ստեփանյանի մասին 1942-ի սեպտեմբերի 16-ին, ՌԴԽՍՀ քրեական օրենսգրքի 58-2, 58-6, 58-8 հոդվածներով կայացվել է գնդակահարության դատավճիռ:

[1] Կիսիբեկյան Ա., նշվ. աշխ., էջ 482:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 483:
[3] Նույն տեղում, էջ 490:

կանգնած էր ադրբեջանական կանոնավոր բանակը, որը, դիրքավորվելով Սաֆյան եւ Ղուրթճիլար թուրքական գյուղերի արանքում գտնվող խոր ու նեղ ձորակում՝ թնդանոթներից կրակ էր տեղում հայկական Կոռնիձոր գյուղի վրա:

Սուրհանդակների հավաստմամբ՝ «Մոտ մեկ ժամ տեւող թնդանոթամարտից հետո հայտնաբերելով պատսպարված թշնամուն և ոչնչացնելով նրա հրետանին՝ դադարեց դիմադրությունը, որից հետո հայկական բանակը 2-3 ժամվա ընթացքում հասավ Հարարի արեւմտյան սահմանին: Մեր սահմանապահները՝ Հարարի արեւելյան սահմանակից սարից, իսկ Զանգեզուրից հասած բանակը՝ Հարարի արեւմուտքից գրոհելով գրավեցին Հարարը»[1]:

Ճանապարհը դեպի Արցախ բաց էր: Հ. Ստեփանյանի կարգադրությամբ հայկական գյուղերը իսկույն հավաքում են պահանջված 200 ձին ու ջորին եւ հաջորդ առավոտյան ուղարկում Խոծաբերդ, ապա Կոռնիձոր, որտեղ գտնվում էին զինապահեստները:

Իրենց հետ Զանգեզուր տարած 200 ձին ու ջորիները բարձելով զենք ու զինամթերքով՝ արցախցիների քարավանը Կոռնիձոր-Հարար- Խոծաբերդ գծով վերադառնում է Արցախ, իսկ հայկական զորքը Արցախ է հասնելու փոքր-ինչ ավելի ուշ:

Հ. Ստեփանյանի տեղեկացմամբ՝ «Մարտի 28-ին վերջապէս գետն անցան հայկական զորքերը եւ ես մարտի 29-ին 300 հոգով հանդիպեցի գնդապետ Թարիվերտեանին, տուի զեկուցում, ապա խնդրեցի առանց յետաձգելու հասնել օգնութեան Ասկերանին, որ քանիցս հերոսաբար յէտ է մղել թշնամու գրոհները»[2]:

Այդ գործողությունների մասնակից Ա. Կիսիբեկյանի նկարագրությամբ՝ «Մեր քարավանը 1 կմ-ից ավելի էր ձգված: Առջևից գնում էին հարյուրյակ հեծյալներ, նրանց հետևում էր հետևակ զորքը՝ թվով 400 հոգի: Զորքի հետևից գնում էին ջորիներն իրենց ծանր քարավանը՝ բարձած ռազմամթերքով: Սրանց հետևում էին ևս երկու հարյուրյակ հետևակ զինվոր, իսկ բոլորի վերջը՝ հետևում էր մի հարյուրյակ հեծյալներ: Այսպիսով մեզ հետ գալիս էր 200 հեծյալ և 8000 հետևակ:

Մենք մեզ հետ բերում էինք Ղարաբաղ 2 թնդանոթ, 600 ռումբ, քսան չորս գնդացիր և մոտ միլիոն ու կես փամփուշտ...»[3]:

Զենք ու զինամթերքով բեռնված քարավանը գնդապետ Թարվերդյանի գլխավորած առաջապահ զորամասի պաշտպանությամբ

---

[1] Կիսիբեկյան Ա., նշվ. աշխ., էջ 490:
[2] ՀՅԴ ԿԱ, թղ.1649, գ. 3, էջ 16բ:
[3] Կիսիբեկեան Ա., նշվ. աշխ., էջ 496:

անկորուստ հասնում է Դիզակի գավառի (ներկայիս Հադրութ շրջանը մինչեւ Արաքս գետ) Մեծ Թաղլար, ապա Ներքին Թաղավար գյուղը եւ այնտեղից ուղեւորվում Վարանդայի շրջանի (ներկայիս Մարտունի) Սարուշեն գյուղը, որտեղ գտնվում էր Արցախի ինքնապաշտպանության կենտրոնական շտաբը:

«Այսպիսով,-գրում է Ա. Կիսիբեկյանը,- 1920 թ. ապրիլի սկզբներին համառ պայքարով, սոսկալի տանջանքներով ու զրկանքներով, աննկարագրելի ու գերմարդկային զոհաբերություններով Ղարաբաղի հայ ժողովուրդը կապվեց իր մայր երկրի հետ, և այսպիսով կատարվեց նրա իղձը»[1]:

Ճիշտ է, Հայաստանի կողմից Արցախին տրամադրված զինական օգնությունը շատ կարեւոր էր, սակայն մարտադաշտում տիրող իրավիճակը դեռեւս բարդ էր ու անորոշ:

Արցախի մարտական ուժերի դիմադրությունը ընկճելու եւ մարզը մեկընդմիշտ նվաճելու նպատակով Ադրբեջանի իշխանությունները կենտրոնացնում են իրենց զինական ուժերը եւ գրոհներ ձեռնարկում հետեւյալ երեք ուղղությամբ. «...1. Ասկերան-Շուշի խճուղի, 2. Խաչենի Վանք գյուղի ուղղությամբ դեպի Աղդամ, 3. դեպի Ղարաչինար, Էրքեջ եւ Գյուլիստանի շրջանները»[2]:

Գերմարդկային ջանքերի գնով արցախցիները դիմադրում եւ մի շարք կռիվներում հաղթանակներ էին տանում ազերի կանոնավոր զորագնդերի դեմ, սակայն իրավիճակը շարունակում էր մնալ չափազանց դժվար ու անորոշ: Առանձնապես դժվարին կացություն է ստեղծվում Ասկերանի ճակատում:

Մարտի 27, 28, 29-ին եւ ապրիլի 1-ին Ադրբեջանի բանակի զորամասերը մահմեդական հրոսակախմբերի աջակցությամբ բազմիցս հարձակումներ են ձեռնարկում Ասկերանի ինքնապաշտպանական ուժերի դիրքերին, բայց չեն կարողանում ընկճել քաջաբար դիմակայող արցախցի մարտիկների դիմադրությունը:

Ասկերանի ճակատի մարտիկներն անկոտրում պաշտպանությամբ հետ մղելով հակառակորդի բազմիցս կրկնվող հարձակումները՝ ժամ առ ժամ սպասում են Զանգեզուրի մարտական ուժերի ժամանմանը:

Արցախում տիրող իրավիճակի ու արցախահայության ինքնապաշտպանական ուժերի մղած կռիվների մանրամասները քննարկվել են, ինչպես արդեն նշվել է, 1922 թ. հունիսին Զանգեզուրի եւ Արցախի ՀՅԴ գործիչների մասնակցությամբ Թավրիզում կայացած ժողովի 15 նիստերում: Խորհրդաժողովի նախագահ Գերասիմ Բալայանի եւ

[1] Նույն տեղում, էջ 500:
[2] Նույն տեղում:

քարտուղար Զախար Ցոլյանի ստորագրությամբ կազմվել է զեկուցագիր-տեղեկագիր, որը ներկայացվել է ՀՅԴ բյուրոյին[1]:

Ներկայացնելով Արցախում եւ մասնավորապես Ասկերանի ճակատում տիրող կացությունը՝ զեկուցագրում նշվում է. «...Ասկերանի վրայ տեղի ունեցած յարձակումը թէեւ յետ է մղւում թշնամու համար մեծ կորուստներով, բայց առիթ տալիս Դալի-Ղազարին պահանջելու Ա. Միքայէլեանից, բերել տալ Զանգեզուրից շտապ կերպով հայկական զօրքեր, առանց որոնց հնարաւոր չէ Ասկերանի պաշտպանութիւնը:

Ա. Միքայէլեանը, նոր ըմբռնելով թէ ինչ փորձանք է բերել Ղարաբաղի գլխին, թէ առանց դրսի զգալի օգնութեան, կարճ ժամանակամիջոցում, ամբողջ Ղարաբաղը պիտի աւերւի, գրաւոր, օրը երկու-երեք անգամ անդադար սուրհանդակ ուղարկելով Դիզակի հրամանատար Ց. Ստեփանեանի մօտ, աշխատում է՝ ինչ գնով ուզում է լինի, կապ հաստատել Զանգեզուրի հետ եւ բացատրել, որ եթէ մի երկու օր էլ նոքա ուշանան, Ղարաբաղը դատապարտուած է կործանման »[2]:

Հովակ Ստեփանյանը Դիզակի (ներկայիս Հադրութի շրջան) մարտական ուժերի հրամանատարն էր: Նրա հրամանատարությամբ գործող Դիզակի ինքնապաշտպանական ուժերը իրենց քաջաբար էին դրսեւորել կռիվներում եւ բազմիցս հետ մղելով հակառակորդի հարձակումները՝ թույլ չէին տվել ազերի զորքերին՝ ներխուժել Դիզակի տարածք:

Հ. Ստեփանյանի հավաստմանբ՝ «Մարտի 23-ից մինչեւ 27-ը 1920 թ.ի, Դիզակի ճակատում իմ անմիջական հրամանատարութեամբ եւ Սասունցի Մանուկի օգնութեամբ տեղի են ունենում յանդուգն ու անհաւասար կռիւներ: Ինձ յաջողւում է մարտի 24-ին մտնել Մուսուրմանլար, գրաւել երկու թնդանոթ, 120 հրանօթ (նկատի ունի թնդանոթի արկեր-Հ.Գ.), 25 հազար փամփուշտ եւ ամբողջ կայազորի (գարնիզոն) շտաբն իր բոլոր պարագաներով...»:

Թեպետ մարտի վերջին օրերին եւ ապրիլի 1-ին տեղի ունեցած կռիվներում Դալի Ղազարի հրամանատարությամբ մարտնչող Ասկերանի մարտական ուժերը կարողացել էին հետ մղել հակառակորդի բազմիցս ձեռնարկած հարձակումները, սակայն այդ ճակատում տիրող իրավիճակը մարտական ուժերի բացարձական անհավասա-

[1] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 1649, գ. 1, էջ 34:
[2] Նույն տեղում, էջ 34:

րությանն պատճառով գնալով ավելի ու ավելի էր դառնում չափազանց ծանր ու տագնապալի:

Ապրիլի 3-ին ազերի 8-10.000 թվակազմ ունեցող մեծաքանակ զորքը եւ 6.000 զինյալներից բաղկացած հրոսակախմբերը 8 թնդանոթներից ու բազմաթիվ գնդացիրներից տեղացող կրակի աջակցությամբ վճռական գրոհ են ձեռնարկում Ասկերանի պաշտպանների դիրքերին: Կռիվը տեւում է ընդամենը երկու ժամ: Ասկերանի ինքնապաշտպանական ուժերը, սպառելով զինամթերքը, հարկադրված լքում են դիրքերն ու նահանջում: Զոհվում է Ասկերանի ճակատի հրամանատար Դալի Ղազարը[1]:

Արցախում տեղի ունեցած մարտական գործողությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ բախտորոշ իրավիճակում ավելի քան անհասկանալի ու տարօրինակ է գնդապետ Ա. Թարվերդյանի կիրառած մարտավարությունը:

Ըստ Խ. Մելքումյանի՝ ապրիլի 2-ին գնդապետ Ա. Թարվերդյանը, որի գործողություններն առավելապես աչքի են ընկել անվճռականությամբ ու դանդաղկոտությամբ, ապրիլի 2-ին Ասկերանի ճակատ է ուղարկել ընդամենը մեկ հեծյալ հարյուրյակ, այն էլ՝ ուշացած[2]:

Ա. Կիսիբեկյանը իր հուշերում նույնպես ընդգծում է, որ գնդապետ Թարվերդյանի կիրառած մարտավարությունում նկատվում էին թերացում ու անվճռականություն: Արցախում, հատկապես Ասկերանի տեղամասում ծավալվող դեպքերը հրամայաբար պահանջում էին, որ Արցախ հասած մարտական ողջ ուժերն անհապաղ շտապեին մարտադաշտ եւ օգնության հասնեին ծանրագույն իրավիճակում հայտնված Ասկերանի պաշտպաններին: Գնդապետ Թարվերդյանը պարտավոր էր գործել հենց այդ մարտավարությամբ, բայց դրա փոխարեն, ըստ Կիսիբեկյանի, Սարուշենից ընդամենը չորս գնդացիր է ուղարկել Ասկերանին օգնության: Իսկ հաջորդ օրը, երբ թնդանոթները հասնում են Հարավ գյուղը, ազերի հեծյալ գունդը հաղթահարում է Ասկերանի պաշտպանների դիմադրությունն ու ներխուժում բերդ:

Հենց այդ ժամանակ զոհվում է Ասկերանի ճակատի հրամանատար Դալի Ղազարը[3]:

Կիսիբեկյանի պնդմամբ՝ «...եթէ Թարվերդյանի փոխարեն աշխարհագրական դիրքին ծանոթ մի այլ զինվորական լիներ նա խճուղին, որտեղով անցնում էր ադրբեջանական զորքը, իր կրակի տակ առնելով, թույլ չէր տա ազատ կերպով ներխուժելու թշնամուն»[1]:

Դեպքերի թելադրանքով նույն ճակատի հրամանատարությունը ստանձնած գնդապետ Զ. Մեսյանը՝ ստեղծված կացությունը շտկելու նպատակով, հաջորդ օրը դիմում է հանդուգն ու վճռական քայլի:

Արսեն Միքայելյանի վկայությամբ, Մեսյանը, դիմելով զինվորներին ասում է. «Ես, իմ մաուզէր ատրճանակիս մէջ ունիմ միայն 8 փամփուշտ: Կա՞ն ձեր մէջ տղաներ մի քանի փամփուշտներով, որոնք կամենում են մեռնել ինձ հետ:

- Մենք բոլորս պատրաստ ենք, - պատասխանում են:

- Հետեւեցէք ինձ, ուրեմն:

Եվ նրանք՝ այդ կտրիճները, գիշերուայ մթութեան մէջ առաջ են շարժւում եւ հասնում Սզնէքի բարձունքներին վրայ պառկած զինուորների դիրքերին: Գաղտագողի կերպով նրանք մօտենում են թշնամուն, թուով մի քանի հարիւր, եւ «ուռաներով»,- «Դրօն եկել է», «Հայկական զօրքը հասել է» աղաղակներով յարձակւում են նրանց վրայ, ջարդում նրանց եւ խլում բաւականաչափ փամփուշտներ եւ մէկ գնդացիր:Գիշերային եւ յուսահատական այդ յարձակումը անակնկալի է բերում թշնամուն, որ նահանջում է դէպի խճուղին եւ դէպի Շուշի»[2]:

Թեպետ Ասկերանի ուղղությամբ գնդապետ Զ. Մեսյանի գլխավորած զորաջոկատին հաջողվում է փախուստի մատնել եւ դուրս պրծնել շրջապատումից, այնուամենայնիվ, ադրբեջանական բանակի հրամանատարությունը կարողանում է լրացուցիչ մարտական ուժեր նետել մարտադաշտ եւ ապրիլի 3-ին գրավել Ասկերանը:

Ապրիլի 7-ին ազերը հարձակման են անցնում նաեւ Շուշի հենակետից եւ գրավելով մի քանի հայկական գյուղեր՝ ապրիլի 12-ին հասնում մինչեւ Քեշիշքենդ եւ Սխնախ: Հայկական մարտական ուժերը համառ պաշտպանությամբ կարողանում են կասեցնել հակառակորդի հարձակումը: Այս անգամ դարձյալ իր վճռորոշ խոսքն է ասել նախորդ կռիվներում աչքի ընկած գնդապետ Մեսյանը: Շնորհիվ նրա կազմակերպած հուժկու հակահարվածի՝ ադրբեջանական զորքերը, մարտադաշտում թողնելով բազմաթիվ սպանվածներ ու վիրավորներ, դիմում են փախուստի:

ՀՅԴ բյուրոյին ներկայացրած վերոհիշյալ զեկուցագիրը՝ ներկայացնելով նաեւ Ասկերանի ճակատում եւ մասնավորապես գնդապետ Մեսյանի գլխավորությամբ տեղի ունեցած ունեցած վերոհիշյալ մարտերը՝ նշում է. «...գնդապետ Զ. Մեսեանի մի փոքր

---

[1] Տե՛ս նույն տեղում, գ. 1, էջ 37:
[2] ՀՅԴ ԿԱ, թղ. 1649, գ. 4, էջ 36:
[3] Տե՛ս Կիսիբեկյան Ա, նշվ. աշխ., էջ 500:

---

[1] Նույն տեղում, էջ 500:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1923, հոկտեմբեր, էջ 123:

յարձակումը թշնամու վրայ բաւական եղաւ, թշնամուն յետ մղել մինչեւ Շուշու պարիսպների տակ...»[1]:

Ազերի զինական ուժերը թեեւ չեն կարողանում գրավել Խաչենի շրջանն ամբողջությամբ, սակայն հասցնում են քանդել եւ ավարառության ենթարկել Ասկերանից մինչեւ Աղդամ ձգվող տարածքում գտնվող մի շարք հայկական բնակավայրեր:

Պատկերը ավելի ողբերգական է եղել Գյուլիստանի շրջանում:

Համաձայն Հայաստանի զինվորական նախարարության գլխավոր շտաբի կազմած վերոհիշյալ տեղեկագրի, «... բոլոր հայկական գյուղերը, ներառյալ Ազատը արեւմուտքում եւ Գյուլիստանը հարավում, հիմնավորապես ավերված են, իսկ բնակչությունը կոտորածից հաջողվել է փրկվել անտառներում ու սարերում պատսպարվելու շնորհիվ...»[2]:

Ասկերանի անկումից 2-3 օր անց Ադրբեջանի զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ Մեհմենդարովը Սարուշեն է ուղարկում բանագնացների՝ Քրիստափոր Փիրիջանյանին եւ Եղիշե քահանա Թարխանյանին ու նրանց միջոցով հայկական կողմին ներկայացնում անձնատուր լինելու վերջնագիր: Չնայած Արցախի ինքնապաշտպանական ուժերը գտնվում էին ծանրագույն իրավիճակում, սակայն մերժում են իրենց ներկայացված վերջնագիրն ու շարունակում են պայքարը: Մերժումը ստանալուց հետո թուրքական կողմն ավելի է ուժեղացնում գրոհները: Վերջանում էին հայ մարտիկների փամփուշտները: Երկուստեք հիմնականում գործել է հրետանին: Ազերի հրամանատարությունը թնդանոթները տեղադրում է Շուշիի եւ Խանքենդի բարձունքներում ու կրակ տեղում հայ ինքնապաշտպանական ուժերի դիրքերին: Հայկական կողմից գործել է ընդամենը երկու թնդանոթ: Զինամթերք ձեռք բերելու ու կռիվը շարունակելու նպատակով Արցախի քաջարի մարտիկները հարկադրված գիշերով հարձակվում էին հակառակորդի զինվորների վրա եւ դիմելով սվինամարտի՝ փախուստի էին մատնում նրանց եւ նրացից վերցրած ռազմամթերքով ցերեկը շարունակում համառորեն ու աննահանջ մարտնչել[3]:

Այսուհանդերձ, Արցախի ինքնապաշտպանական ուժերի վիճակը գնալով ավելի սպառնալի է դառնում: Չնայած գիշերային հարձակումների շնորհիվ կարողացել են հակառակորդից բռնագրավել

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 1649, գ. 1, էջ 38:
[2] ՀԱԱ, ֆ. 120, ց. 1, գ. 563, թ. 173:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 501:

զինամթերք, սակայն դա բավարար չէր հուսալիորեն պաշտպանելու դիրքերը: Նրանց դիրքերն ավելի է թուլացնում գնդապետ Թարվերդյանի կատարած անսպասելի ու անհասկանալի վճիռը: Ճակատում տիրող իրավիճակը հրամայաբար թելադրում էր, որ նա իր զորախմբով Արցախի մարտական ուժերի համագործակցությամբ շարունակեր աննահանջ պաշտպանել դիրքերը մինչեւ օգնական ուժերի տեղ հասնելը: Դրա փոխարեն գնդապետը կատարում է ճիշտ հակառակը: Նա թնդանոթները բարձել է տալիս ջորիների վրա ու առաջնորդելով իր հրամանատարությամբ գործող զորքը՝ փորձում է թողնել Արցախի տարածքն ու անցնել Զանգեզուր: Զորքի անակնկալ հեռանալը խուճապ է առաջացնում, եւ բնակիչներից շատերը, հետեւելով հեռացող զինվորներին, բռնում են գաղթի ճանապարհը:

Այն պահին, երբ գնդապետ Թարվերդյանը թնդանոթներով ու զորքով հասնում է Արցախի սահմանագլուխը, մի խումբ զինակիցներով նրա առաջ դուրս է գալիս Թեւանն ու ասում. «Ղարաբաղը չի գաղթելու, Ղարաբաղի ժողովուրդը թուրքի առաջ չի փախչի, նա ավելի շուտ պատվով կմեռնի: Դուք եթե ցանկանում եք մեզ հետ միասին կռվել, հետ դառեք, իսկ եթե չէ, մենք ձեզ չենք ստիպում, կարող եք գնալ, միայն թողեք ձեր զենքերն ու թնդանոթները

...Թարվերդյանը ստիպված եղավ վերադառնալ»[1]:

Ճիշտ է, գնդապետ Թարվերդյանը իր զորախմբով մնում է Արցախում, սակայն առանց լուրջ օգնության չափազանց դժվար կլիներ դիմակայել ազերի զորքերի անընդմեջ շարունակվող հարձակումներին:

Մի քանի օր հետո՝ ապրիլի 15-ին, Դրոն իր զորամասով հասնում է Արցախ: Նրա զորամասի կազմում էին իր վաղեմի մարտական ընկերներ Գարեգին Նժդեհը՝ Ղափանի զորախմբով եւ Բաշգառնեցի Մարտիրոսն ու գնդապետ Կուռո Թարխանյանը: Զորամասի շտաբի պետն էր գնդապետ Միրիմանյանը:

Զանգեզուր-Արցախի կապն ու հաղորդակցության ուղիների պահպանությունը հանձնարարվում է Յապոնին:

Հասնելով Զանգեզուր, Դրոն մինչ Արցախ մեկնելը, նախ հետաքրքրվում ու ծանոթանում է իր բացակայության օրերին Զանգեզուրում, ինչպես նաեւ Արցախում տեղի ունեցած իրադարձություններին ու այնտեղ տիրող կացությանը:

ՀՅԴ պառլամենտական ֆրակցիային Արսեն Միքայելյանի ներկայացրած զեկուցագրից պարզվում է, որ Դրոն ծանոթ լինելով Զանգեզուրում տեղի ունեցած դեպքերին, միաժամանակ հետա-

[1] Նույն տեղում, էջ 502:

քրքրվում ու լավագույնս տեղեկանում է գեներալ Ղազարյանի եւ Ս. Մելիք-Ցոլչյանի գործունեությանը, որոնք օգտվելով իր բացակայությունից, խիստ թերի էին նախապատրաստել արցախահայության ապստամբությունը կազմակերելու գործողությունները, ինչպես նաեւ աննպատակ ու ավելորդ տեղը գործածել այն 200.000 փամփուշտը, որը Զանգեզուր էր տեղափոխվել ու պահվում էր բացառապես Արցախի համար[1]:

Ա. Միքայելյանի հավաստմամբ՝ Դրոն «...իր անձնական պատասխանատուությամբ ձերբակալեց եւ հսկողության տակ Երեւան ուղարկեց գեներալ Ղազարեանին-դէպք մը, որ կապուած է նաեւ Ղարաբաղի դէպքերի հետ»[2]:

Հարկ է նշել, որ մինչ այդ Հայաստանի Հանրապետության կառավարությունը Արցախի հարցի վերջնական լուծման ուղղությամբ, ելնելով հանրապետության աշխարհաքաղաքական, տնտեսական աղետալի, ոչ այնքան կայուն իրավիճակից, դեռեւս չէր կարողացել ձեռնարկել որեւէ վճռական քայլ: Սակայն գիտակցելով Արցախի հարցի լուծման կարեւորությունը՝ դեռեւս 1919 թ. սկզբներին փոխգնդապետ Շահնազարովի գլխավորությամբ ստեղծել էր Արցախի զորախումբ, կամ ինչպես գեներալ Մովսես Սիլիկյանն է անվանում՝ գումակ[3]:

Հայաստանի Հանրապետության խորհրդարանի որոշմամբ՝ որպես օգնություն Արցախին հատկացվում է 8 մլն ռուբլի: Այդ գումարից 1,5 մլն. տրամադրում են Արցախի զորախմբին, որը կազմված էր մեկ գումարտակից, 54 հեծյալներից եւ 2 լեռնային հրանոթից[4]:

Արցախյան զորախումբն իր սկզբնավորման առաջին իսկ շրջանում ենթարկվել է դաժան փորձությունների: Զորախմբի հիմնական խնդիրը սկզբնական շրջանում Արցախ եւ Զանգեզուր անհրաժեշտ բեռներ տեղափոխելն էր:

1919 թ. գարնանը այդ գումակը կամ զորախումբը, թվով 200 հոգի, ստանում է առաջին հանձնարարությունը. «Նախատեսված էր,- գրում է գեներալ Սիլիկյանը,-որ զորախումբը Դիլիջանից Սեմյոնովկայի լեռնանցքով, Ջիբուխլու եւ Ելենովկա գյուղերով պետք է հասներ Նոր-Բայազետ:Զորախումբը պետք է Զանգեզուր եւ Արցախ հասցներ զենք, զինամթերք, հանդերձանք եւ պարեն: Այդ գումակը պետք է անցներ թաթարներով բնակեցված բնակավայրերով (Սեւանի ափին եղել են 4 գյուղեր):Թաթարները հարձակվել են գումակի վրա եւ պահակախմբի անդամներին փախցնելով՝ թալանել ու տարել են զենքը, զինամթերքն ու պարենը: Ձախջախված գումակի մնացորդները հասել են Նոր-Բայազետ, որտեղ որոշ ժամանակ մնալուց հետո վերակազմավորվել են:

... Այս գումակը կազմավորվել եւ ուղարկվել է ինչ-որ մեկի կարգադրությամբ, առանց իմ համաձայնության եւ իմ շտաբի իմացության եւ մասնակցության»[1]:

Այս անկազմակերպ եւ արդյունքում ողբերգական դեպքերից հետո Հայաստանի Հանրապետության իշխանությունները՝ իրենց ուշադրության դաշտից չհեռացնելով Արցախյան զորախմբի կազմավորման հարցը, ավելի մեծ վճռականություն են դրսեւորում այդ խնդրի իրագործման ուղղությամբ: Հայոց Խորհրդարանի զինվորական խմբակցության պահանջով Արցախ ուղարկելու նպատակով, ՀՀ զինվորական նախարարության եւ անձամբ գեներալ Մ. Սիլիկյանի որոշմամբ, կազմավորվում է նոր զորախումբ գեներալ Դանիել Բեկ Փիրումյանի գլխավորությամբ:

«Մնալով Նոր-Բայազետում, -շարունակում է գեներալ Մ. Սիլիկյանը, -2-3 ամիս Դանիել Բեկ Փիրումովը չի կարողացել կազմավորել զորախումբը եւ հարկադրված հետ է վերադարձել: Այդ ամենից հետո զորախումբը կազմավորվել է Դրոյի գլխավորությամբ... Զորախումբը բաղկացած էր 4 վաշտերից, հեծյալ զորաջոկատ Թարխանովի հրամանատարությամբ եւ կապիտան Խաչիկյանի լեռնային մարտկոցը:

1919 թ. դեկտեմբերին կամ 1920 թ. հունվարին նա Նոր-Բայազետից անցնում է Ղարանլուխ, Սելիմի լեռնանցքով Քեշիշ-Քենդ, Ղուշչի, Բելյակ, Բազարչայ եւ հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ՝ ուղեւորվում է Գորիս, իսկ այնտեղից Արցախ»[2]:

Արցախի կամ Շուշվա գնդի մասին փոքր-ինչ այլ տեղեկություն է հաղորդում այդ նույն գնդի 1-ին գումարտակի հրամանատար, վերոհիշյալ Հովակ Ստեփանյանը[3]:

Համաձայն նրա վկայության՝ Շուշիի գունդը Արցախ պիտի մեկներ, նշանավոր պատմաբան, գրող Լեոյի (Առաքել Բաբախանյան) խորհրդով գծագրված երթուղիներով, որոնք գործել էին նախկինում:

Լեոյի խորհրդով «...Շուշվա գունդը պէտք է մտնէր Արցախ՝ Մելիքների գնացած ճանապարհով, այսինքն՝ Սեւանայ լճի ափե-

---

[1] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 1649, գ. 2, էջ 5:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 35, թ. 17-23:
[4] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, թ. 132:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Տես «Հայրենիք» ամսագիր, 1934, թիւ 1, 2, 1935,թիւ 3, 4, 5, 6, 7:

րով, Բայազէտ-Բասարգեչար խճուղիով, անցնելով Տաք ջրի մօտով, Զօղի լեռնանցքի փէշերով ուղիղ Թարթառի հովիտը, ուր գտնվում են Զափար, Վանք եւ Հաթերք գիւղերը, Խոթայ, ապա հուչակաւոր Գանձասար վանքերը...»[1]:

Ղարաքիլիսայից իրենց շարքերը համալրելով եւս 100-150 մարդկանցով՝ գունդը, առաջ շարժվելով, հասնում է Սեւան եւ փորձում լճի ափերով մարտի 9-ին ուղեւորվել Նոր Բայազետ[2]:

Ըստ Հ. Ստեփանյանի. «Այդ օրը կարողացանք մէկէն փոխադրել 40 ֆուրգոն ռազմամթերք, խոհանոցները եւ 400 զինուոր: Կային եւ մօտ հարիւր հոգի տուն գնացող զինուորներ, որոնք մերոնց հետ խառն էին»[3]:

Ծովափնյա թուրքական գյուղերի տարածքով անցնելու ժամանակ արցախցի մի քանի զինվորներ կրակ են բացում ջրում լողացող բաղերի վրա: Պարզվում է, որ դրանցից մի քանիսին արդեն խփել էին թուրքերը, որոնք տեսնելով ֆուրգոնները՝ հարձակվում են գնդի վրա:

«Թիւրք գիւղացիները,-գրում է Հ. Ստեփանյանը,-մանաւանդ Հաջի Մուխանցիք, կրակ են բաց անում իրենց քարքարոտ ամուր դիրքերից, սպանում են ճանապարհով խաղաղ անցնող մի քանի տասնեակ զինուորների եւ փորձում խլել ֆուրգոնների միջի ռազմամթերքը, սակայն դա չի հաջողւում»:

Ըստ գեներալ Սիլիկյանի պնդման, թուրքերին հաջողվել է փախցնել պահակախմբի անդամներին եւ թալանել ու տանել զենքը, զինամթերքն ու պարենը:

Այդ դեպքերի մասնակից, արդեն բազմիցս հիշատակված Հ. Ստեփանյանի վկայությամբ՝ «Մերոնք ուժեղ դիմադրելով յետ են նահանջում եւ ֆուրգոնները հասցնում Ելենովկա»[4]:

Այդ դեպքերի մեկ այլ մասնակիցի՝ Զանգեզուրի ռազմական ուժերի նախկին հրամանատար գնդապետ Խաչատուր Մալինցյանի տեղեկացմամբ՝ «Մարտ ամսում 1918 թ. Սեւան կղզիի ափին Գատժի Մուխան թրքական գիւղում, գնտի փոխադրութեան միջոցին թուրքերը յարձակւում են մեր զինուորների վրան. 14 հոգի սպանում, 22 հոգի վիրաւորում, 7 սայլ փամփուշտ եւ այլ իրեր թալանում»[5]:*

---

[1] «Հայրենիք» ամսագիր, 1934, թիւ 2, էջ 83:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 89:
[3] ՀԱԱ, Ֆ. 199, ց. 1, գ. 14, , թ. 132:
[4] «Հայրենիք» ամսագիր, 1934, թիւ 2, էջ 89:
[5] ՀՅԴ ԿԱ, թղ. 160, գ. 59, էջ 2:
*Գնդապետ Խաչատուր Մակինցյանը Փարիզում հանգրվանած Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության նախագահին

Ի տարբերություն գեներալ Մ. Սիլիկյանի ու Հ. Ստեփանյանի, Խ. Մալիցյանը նշում է, որ այդ դեպքից հետո, իրենք կարողացել են Մաղկաձորի գյուղի կամավորներից կազմակերպել մարտական խմբեր եւ 1918 թ. մարտ ամսին հարձակվելով թուրքական գյուղերի վրա՝ գրավել են թուրքաբնակ Բեղլու, Էփինտիկինտ, Գատժի Մուխան, Աղչիբիր ու Հայրվանք գյուղերը[1]:

Շուշիի գնդի հետ պատահած դեպքերը ցույց տվեցին, որ դեպի Արցախ տանող Լեոյի մատնանշած մելիքների պատմական ճանապարհը, այն է՝ Զոդ-Գանձասար, Սելիմի լեռնանցքով դեպի Դարալագյազ, ապա Սիսիան, Զանգեզուր, Արցախ, այլեւս հարմար ու ապահով չէր, հարկավոր էր ընտրել ավելի բանուկ երթուղի: Տեղի ունեցած դեպքերը ցույց են տալիս, որ մինչ այդ շատ թույլ է գործել, կամ գրեթե չի գործել Երեւան-Զանգեզուր-Արցախ կապը:

Զանգեզուր-Արցախ վերոհիշյալ կապը խափանվել ու չէր գործում մինչ այդ տեղի ունեցած մեկ այլ դեպքի հարկադրմամբ:

Գերասիմ Բալայանի եւ Զախար Ցոլյանի ստորագրությամբ գրված «Ղարաբաղի դէպքերի պատմութիւն» խորագիրը կրող տեղեկագրի տեղեկացմամբ՝ Բաքվի անկումից հետո (1918 թ. սեպտեմբեր), երբ Զամիլ բեյի գլխավորած թուրքական զորամասը, տեղացի թուրք բեկերի առաջնորդությամբ ճանապարհին հանդիպած հայկական բնակավայրերը ոմբակոծելով՝ ներխուժում է Շուշի «...նույն օրում, օգոստոսի վերջերին 1918 թ. տաճկա-թրքական հօրտաները ոչնչացրին Շուշուց դէպի Զանգեզուր տանող խճուղու վրայ իշխող Ղարաղշլաղ հայկական մեծ գիւղը, որը կապում էր Զանգեզուրը Ղարաբաղի Հետ»[2]:

Տեղեկագրի գնահատմամբ՝ «Ղարաղշլաղի աւերումը ռազմական տեսակետից ճակատագրական նշանակութիւն ունեցաւ Ղարաբաղի եւ Զանգեզուրի հայութեան համար»[3]:

ներկայացրած կենսագրականում գրում է , որ ինքը «1916 թ. ապրիլ ամսից շարունակ մինչեւ 1918 թ. իբրեւ սպայ ծառայել եմ միշտ Հայկական առաջին հրածգային գումարտակի մեջ: Յունուար ամսից 1918 թ. Սիւնեաց Զանգեզուրում, իբրեւ առանձին գումարտակի պետ, համածայն հրամանին Հայկական բանակի սպարապետ զօր. Նազարբէկեանի, իսկ մայիս 1918 թ., որպէս Զանգեզուրի ռազմական ուժերի հրամանատար, համածայն Զանգեզուրի կենտրոնական խորհրդի հրահանգին , միաժամանակ իբրեւ ներքին գործերի գործավար լայն իրաւունքներով, ունենակով թէ գաւառական հետեւակ միլիցեան եւ թէ առանձին հիմնադիր գունտի հրամանատարութիւնը մինչեւ 24 նոյեմբերի 1919 թ.: Իսկ յունվար ամսից մինչեւ 1920 թ. 30 մայիս որպէս Սիսեանի զօրաբաժնի հրամանատար Ղարաբաղի արշավանքի ժամանակ» (ՀՅԴ ԿԱ, թղ. 160, գ. 59, էջ 2):
[1] Տե՛ս նույն տեղում:
[2] ՀՅԴ ԿԱ, թղ.1649, գ. 1, էջ 4-5:
[3] Նույն տեղում, էջ 5:

Արցախ հասնելու համար անհրաժեշտ էր ընտրել նոր, համեմատաբար առավել հուսալի եւ անվտանգ երթուղի:

Հ. Ստեփանյանի հավաստմամբ՝ «Մեր քաջարի Դրօն, որին վիճակուեց 1920 թուին զօրամասով մտնել Ղարաբաղ եւ ապա ճախորդ պայմանների պատճառով յետ նահանջել, եկաւ այն եզրակացութեան, որ սխալ է միանգամայն Երեւանից զօրքը փոխադրել Շարուր-Զանգեզուր, եւս առաւել Նոր-Բայազէտ-Դարալագեազ-Զանգեզուրի վրայով Ղարաբաղ, երբ ամենակարճ եւ բնական ճանապարհն Երեւան-Բայազէտ- Զօղը: Վերջին ճանապարհով 90 տոկոս հայ բնակչութիւն ունեցող Նոր-Բայազէտի գաւառն անմիջապէս միանում է Զրաբերդ-Խաչէն-Վարանդա-Դիզակ, միւս կողմից Գիւլիստան եւ Լեռնային Գանձակի հայաշատ գաւառների հետ: Այդ ճանապարհով Երեւանից Ղարաբաղ կարելի է հասնել 3-4 օրում, իսկ միւս ճանապարհներով 6-8 օրում...»[1]:

Դրոյի առաջնորդած զորամասն Արցախ է ուղեւորվել Բայազետ-Զոդ-Դիզակ-Վարանդա երթուղիով: Տվյալ ժամանակահատվածում նրա առաջնորդած զորամասի մուտքը Արցախ անտարակույս փրկարար նշանակություն ուներ: Դժվար չէր գուշակել, թե ինչպիսի հրեշավոր վայրագություններ կարող էին գործել ադրբեջանական զինական ուժերը, եթե արցախահայությանը , թեկուզ եւ ուշացումով, օգնության չհասնեին Դրոյի գլխավորած Հայաստանի Հանրապետության զորքերը:

Հովակ Ստեփանյանը իր հուշագրությունում մեջբերում է Սուլթանովի ձեռքով ռուսերեն գրված «Ցոյժ չտապ եւ գաղտնի» հրամանագիրը, որտեղ գրված է. «Հրամայում եմ հէնց այժմ, գրութիւնս ստանալուն պէս հօգալ բարձրացնելու թնդանօթները Քիրսի եւ գրաւել Ջիրիշլուի սարը, այնտեղից կատարել հետախուզութիւն դէպի Տումի, Խծաբերտ եւ Զանախչի, ուսումնասիրել բոլոր անցքերը, որպէսզի մարտի 25-ին այտ հայկական գիւղերը ջնջեն աշխարհի երեսից եւ այդպիսով մեծ վիհ բացի Ղարաբաղի եւ Զանգեզուրի միջեւ, կտրի երկու հատվածների հայերի կապը...Նույն հրամանը աւելի մանրամասնօրեն գրուած էր թուրքերէն...»[2]:

Բարեբախտաբար, ռուս զինվորները, որոնց հանձնարարված էր թնդանոթներն ու գնդացիրները բարձրացնել Ջիրիշլու եւ Քիրս, չեն կատարում Սուլթանովի հրամանը՝ պատճառաբանելով, որ «...անհնարին է այժմ ոտով բարձրանալ Ջիրիշլու եւ Քիրս, ուր մնաց թէ թնդանօթները

[1] «Հայրենիք» ամսագիր, 1935, թիւ 3, էջ 103:
[2] ՀՅԴ ԿԱ, թԺ. 1649, գ. 3, էջ 15 բ:

բարձրացնել. ձիւնը մարտու հասակով ծածկել է ճանապարհները: Սպասում ենք Ձեր կարգադրութեանը»[1]:

Ադրբեջանական զորախմբի հրամանատար Զեյնալովը Ադրբեջանի զինվորական-ծովային կոմիսարին հասցեագրած զեկուցագրում (1920թ. մայիսի 9), հայտնելով Արցախում Դրոյի գլխավորած զորամասի հայտնվելու իրողությունը, նշում է. «... Ադրբեջանական զորքերի կողմից Ասկերանի գրավումից հետո, Արցախի բոլոր հայերը որոշել էին հանձնվել: Այդ պահին հայտնվեց գեներալ Դրոն, որը հայտարարեց 23-25 տարեկան հայերի զորահավաք...»[2]:

Բագրատ Ուլուբաբյանի գնահատմամբ՝ Դրոն Արցախ է հասնում այն ժամանակ «...երբ կործանված էին Շուշին ու տասնյակ ուրիշ բնակավայրեր, թշնամին կարող էր կոտրել էր հայոց դիմադրության ողնաշարը:

Դրոն իր հետ բերել էր փոքրիկ մի զորաջոկատ: Սակայն դա էլ բավական էր, մանավանդ հրամանատարի հմուտ ու անվեհեր վրիժառու անունը, որպեսզի Արցախը վերստին փարի փոքր-ինչ սասանված իր հավատին:

Դրոն իր նստավայրը դարձրեց Վարանդայի Ղարաբուլախ գյուղը...»[3]:

Արցախ հասնելու հենց առաջին օրը, Դրոն գնդապետ Զ. Մեսյանի ուղեկցությամբ անհապաղ ուղեւորվում է Սարուշեն, որտեղ գտնվում էր Դիզակի ինքնապաշտպանական ուժերի շտաբը:

Արցախում Դրոյի եւ նրա գլխավորած զորամասի ծավալած գործողությունները իրենց հուշագրությունում ներկայացրել են Հ. Ստեփանյանը, Ա. Միքայելյանը, Արցախի Ինքնապաշտպանական Մարմնի անդամ Խաչիկ Մելքումյանն ու այլոք: Դրոյի արցախյան գործունեությունը ներկայացված է նաեւ Արցախի եւ Զանգեզուրի գործիչների մասնակցությամբ 1922 թ. հունիսին Թավրիզում տեղի ունեցած խորհրդաժողովի մասնակիցներ՝ ժողովի նախագահ Գերասիմ Բալայանի եւ քարտուղար Զաքար Ցոլյանի ստորագրությամբ կազմած վերոհիշյալ տեղեկագրում:

Այսուհանդերձ, այդ մասին առավել մանրամասն իր հուշագրությունում անդրադարձել է Ա.Կիսիբեկյանը, որն այդ օրերին գտնվում էր Սարուշենում: Որպես դեպքերի ականատես ու մասնակից՝ Ա. Կիսիբեկյանը գրում է. «...Հայկական բանակի գլխավոր

[1] Նույն տեղում:
[2] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 36, գ. 8:
[3] Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը, Երեւան, 1994, էջ 129:

ուժերը գեներալ Դրոյի հրամանատարությամբ Զանգեզուրից մտան Ղարաբաղ և բռնեցին ամբողջ ռազմաճակատը, որպիսի հանգամանքը չէր կարող հայտնի լինել Թշնամուն:

Դրոն գնդապետ Զ. Մեսյանի հետ մտավ Սարուշեն:

Դրոն բոլորին բարևելուց հետո անցավ գործի: Սենյակի մուտքի մոտ՝ հատակի վրա, փռեցին մի գորգ, որի վրա նստեցին այդտեղ գտնվողները, իսկ սենյակի վերին մասում՝ փոքրիկ սեղանի վրա, փակցր-ծին Ղարաբաղի քարտեզը:

Գնդապետն սկսեց գեներալին ծանոթացնել ռազմաճակատների հետ: Երբ գնդապետը մատիտը սահեցնում էր քարտեզի վրայով, Դրոն նրան կանգնեցրեց:

-Սա ի՞նչ գյուղ է,-հարցրեց նա:

-Սա ադրբեջանական Ավդալ-Գյուլափլու գյուղն է և խիստ ամրացած է ու այդտեղ մեծ ուժեր են գտնվում,-պատասխանեց գնդապետը:

-Ուրեմն նրանց հաջողվել է ձեր ռազմաճակատը մի քանի կիլոմետրով երկարացնել,-ասաց Դրոն:

-Սա էլ ադրբեջանական Մալիբեյլի գյուղն է, որը խիստ ամրացված է,-պատասխանեց գնդապետը:

Մեսյանը շարունակեց.

-Ահա և Շուշին՝ Ղարաբաղի կենտրոնը:

Դրոն խիստ ջղայնացավ ու խիստ կարմրելով, ձեռքը մեկնելով դեպի Արսեն Հովհաննիսյանը (նկատի ունի ՀՀ կառավարության ներկայացուցիչ Արսեն Միքայելյանին -Հ.Գ.)՝ ասաց.

-Դուք բոլորդ՝ փոքրից մինչև մեծը, երեխաներ եք, ուրիշ ոչինչ: Ի՞նչ եք մտածել, որ մտել եք Ասկերանի փոսի մեջ, և անուշադրության մատնելով՝ Շուշին թողել անտեր ու անտիրական: Մի՞թե դուք այդքանը չեք հասկանում, որ Շուշին ում ձեռքին է գտնվում, նա էլ Ղարաբաղի տերն է: Ի՞նչ եք արել դուք, դուք ձեր դեմ փակել եք Թշնամու բոլոր դռները և նրանց հարկադրել կռվելու ձեր դեմ: Դուք Ասկերանում ոչինչ չունեք անելու:

Այնուհետև նա հեգնորեն ասաց.

-Ասկերանի բերդի միջին Համազասպը պանծալի...և շարունակեց,-Դուք ձեր բոլոր ուժերը պետք է կենտրոնացնեիք հենց Շուշվա վրա և այնտեղ մաքրեիք Թշնամուց, որից հետո Թշնամին Ղարաբաղի որևէ կետում չէր կարող կանգնել»[1]:

[1] Կիսիբեկյան Ա., , նշվ., աշխ., էջ 503-504:

1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումների ժամանակ, լինելով Վարանդայի ու Դիզակի շրջանների ինքնապաշտպանական ուժերի հրամանատարը, Համազասպը հռչակվել էր հատկապես Ասկերանի կռիվների ժամանակ: Հեգնանքով մտաբերելով Ասկերանի հերոս Համազասպին ձոնված երգը՝ Դրոն դրանով ապստամբության կազմակերպիչներին հայտնել է իր դժգոհությունը եւ հասկացրել, որ նրանք ռազմավարական ու մարտավարական առումով մեծագույն սխալ են գործել՝ անուշադրության մատնելով Արցախի համար ռազմավարական նշանակություն ունեցող Շուշին՝ մարտական ուժերը կենտրոնացնելով Ասկերանի կիրճում ու բերդում: Համանման մարտավարությունը կարող էր հանգեցնել անկանխատեսելի ծանրագույն հետեւանքների, ինչը իրականում կատարվել էր: Այստեղ է, որ նա արտասանում է «Ով տիրում է Շուշիին, տիրում է նաեւ Արցախին...» թեւավոր խոսքը[1]:

Հասնելով Արցախ՝ Դրոն արցախահայությանն է դիմում հետեւյալ կոչով. «Ղարաբաղի հայ ազգաբնակչության, ես մտա Ղարաբաղ ամսույս 24-ին, այն ժամանակ, երբ արդեն հրդեհը սկսած էր և երբ բավական հայ գյուղեր ավերի մատնված էին Թշնամու կողմից և երբ Ղարաբաղի գյուղացիությունը, հերոսաբար դիմադրելուց հետո, նորից մնացել էր իր դիրքերում՝ կուրծքը դեմ տված Թշնամու գնդակներին:

Դու պիտի ըմբռնես, Ղարաբաղի հայ ժողովուրդ, որ Ադրբեջանի ծրագիրն է վերացնել հայ բնակչությանը, շարունակել իրականացնել տաճկական փաշաների որոշումը, տիրել Ղարաբաղին, ոտքի տակ տալ Զանգեզուրը և ոչնչացնել Հայաստանի Հանրապետությունն ու, այդպիսով, վերացնել մահմեդական աշխարհի մեջ ընկած այդ քաղաքակրթված ժողովուրդը:

Ես եկել եմ ձեր մեջ այն խորին համոզումով և հաստատ որոշումով, որ հենված ձեր վճռականության վրա և միացած ձեր քաջարի զինվորների հետ, պետք է հաղթենք Թշնամուն: Ես վճռել եմ մնալ ձեր մեջ, կռվել ձեր հետ միասին և ազատությունն ու հաղթանակը տոնել այստեղ:

Հիշեցեք, որ պետք է միայն մի քանի հարյուր զոհ՝ վճռականորեն փրկելու Ղարաբաղը:

Ղարաբաղը միշտ հերոսներ է տվել Ռուսական մեծ բանակին և հայ ազատագրությանը, որոնք կռվել են բոլոր ճակատամարտերում:

Այսօր մենք բոլորս, ձեզ հետ միասին ձեռք ձեռքի տված, պիտի շարունակենք կռիվը մինչև վերջնական հաղթանակ:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 36, գ. 8:

Ամուր կաց, Ղարաբաղի հայ գյուղացիություն: Միշտ դիրքերի մեջ ու պատրաստ՝ թշնամուն ետ շպրտելու և մեր ազատությունը ձեռք բերելու:

Զանգեզուր-Ղարաբաղի հրամանատար Դրո

26-ին ապրիլի 1920 թ.»[1]:

Նույն օրը՝ ապրիլի 26-ին արցախի Դիզակի շրջան է հասնում Գ. Նժդեհի գլխավորած Ղափանի զորախումբը՝ վնասազերծելով Դրոյի զարամասի աջ թեւին սպառնացող վտանգը:

Վ. Գեւորգյանը իր հեղինակած Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921) գրքում նշում է, որ Դրոն այդ կապակցությամբ շնորհավորում է Արցախ մուտք գործած զանգեզուրցիներին եւ նրանց հղում հետեւյալ ուղերձը. «Շնորհաւորում եմ եմ քաջարի զանգեզուրցիների մուտքը Ղարաբաղ, որ ցանկալի պոպէին նոքա օգնութեան հասան հարազատ Ղարաբաղին: Իւրաքանչիւր զանգեզուրցի թող յիշէ, որ կուելով պատմական Ղարաբաղի լեռներուեմ, դորանով նա կուում է ամբողջ Հայաստանի եւ մասնաւորապէս Զանգեզուրի ազատութեան եւ խաղաղութեան համար: Վստահ եմ, սպաներ եւ զինվորներ, առաջնորդութեամբ ձեր արժանաւոր հրամանատար փոխ-գնդապետ Նժդեհի, քաջարի տեղացիների հետ, որ ահա ամբողջ ամիս կուում են, ոչ միայն կթեթեւացնէք Ղարաբաղի հայերի վիճակը, այլ եւ ձեր կրովի ասպետական գործողութիւններով կը հանդիսանաք Ղարաբաղի հայ ժողովրդի բախտաւորութեան եւ ազատ գոյութեան ապագայի գրաւականը»[2]:

Շուշի կոտորածի ժամանակ, թուրքերը գերի էին վերցրել բազմաթիվ հայերի: Անկասկած նրանց մահ էր սպառնում, եթե ժամանակին չձեռնարկվեին համապատասխան քայլեր: Անհրաժեշտ հայ գերիներին փրկել անխուսափելի կործանումից:

Ե. Իշխանյանի տեղեկացմամբ՝ երբ Դրոն հասնում է Դրնվազ գյուղ, անմիջապես վերջնագիր է ներկայացնում Շուշիի թուրքերին, որ ազատ արձակեն հայ գերիներին, միաժամանակ «զինուորականի պատուոյ խօսք է տալիս, իրենց ձեռք չտալ ու չանհանգստացնել: Թուրքերը Համեստին (Համեստը՝ Ե. Իշխանյանի քույրն է - Հ. Գ.) ուղարկում են Դրոյի մօտ՝ յայտնելու, որ համաձայն են և բաց են թողնում բոլոր գերիներին»[3]:

Որպեսզի զենքի ուժով վերջնականապես լուծվեր Արցախը Հայաստանին վերամիավորելու հարցը, վերոհիշյալ Արսեն Միքայելյանի վկայությամբ, Դրոն պիտի կենսագործեր երեք առաջնահերթ նշանակություն ունեցող խնդիրներ.

1. Վերակազմել եւ ուժեղացնել Արցախի դիմադրական ուժը:

2. Գրավեր ամբողջ Արցախը:

3. Արցախը միացնել Հայաստանի Հանրապետությանը եւ քաղաքի (նկատի ունի թուրքերի կողմից կործանված Շուշին-Հ.Գ.) եւ գյուղերի ավերածությունների, կոտորածների փոխվրեժը լուծեր թուրքերից»[1]:

Նրա անմիջական նախաձեռնությամբ ստեղծվում է Արցախը ղեկավարող «Վարիչների խորհուրդ», որը ստանձնելով մարզը ղեկավարելու լիազորությունները՝ հաջորդ օրը հայտարարում է զորահավաք:

Ապրիլի 18-ին Դրոյի նախաձեռնությամբ Ներքին Թաղավարդ գյուղում տեղի է ունենում Դիզակի եւ Վարանդայի հայ բնակչության ներկայացուցչական ժողով, որտեղ մարզում տիրող կացության եւ հրատապ խնդիրների վերաբերյալ զեկուցումով հանդես են գալիս մարզի թիկունքային գործերը ղեկավարելու նպատակով Արցախի ընդհանուր զորահրամանատարի կողմից նշանակված կոմիսար- վարիչները:

Ներքին գործերի կոմիսար Աստուր Ավետիսյանը ժողովականներին տեղեկացնում է, որ Դիզակը եւ Վարանդան բաժանված են շրջանային վարչական կոմիսարիատների, եւ արդեն նշանակված են տեղամասերի կոմիսարները:

Հարց է ծագում. Ինչո՞ւ է Արցախի հայ բնակչության ներկայացուցչական առաջին ժողովը հրավիրվել միայն Դիզակի եւ Վարանդայի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Դրոն, հասնելով Արցախ, հաստատվում է Դիզակում եւ Վարանդայում եւ այդ պատճառով առավել ուշադրություն է դարձնում նախ եւ առաջ կազմակերպելու ու ամրապնդելու հենց այդ շրջանները, որոնք պիտի դառնային յուրօրինակ ուժեղ հենակետեր՝ ձեռք բերած հաղթանակը առավելագույնս զարգացնելու գործում :

Ապրիլի 14-ին Դրոյի մասնակցությամբ տեղի է ունենում Դիզակի եւ Վարանդայի հայ բնակչության ներկայացուցչական ժողովը, ուր բացի ներքին գործերի կոմիսարից, զեկուցումով հանդես են եկել նաեւ պարենային մատակարարման, աշխատանքի եւ հողաշինության, սանիտարա-բժշկության եւ դատական գործերի վարչությունների կոմիսարները:

[1] Սիմոնյան Ա., նշվ. աշխ., էջ 43-44:
[2] Գէորգեան Վ., նշվ. աշխ., էջ 59:
[3] Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 615:

[1] «Հայրենիք» ամսագիր, 1923, հոկտեմբեր, էջ 123:

Կոմիսարների զեկուցումներից հետո ներկայացուցչական ժողովում ելույթ է ունենում Դրոն եւ ժողովականներին կոչ անում «.. հենարան լինել իրեն եւ իր կողմից նշանակված զեկավարներին, միասնական ուժերով պայքարել ընդհանուր թշնամու դեմ ու ամեն ինչ անել թիկունքը կարգավորելու եւ կազմակերպելու համար: Հրամանատարի խոսքը ժողովը ընդունել է ընդհանուր ոգեւորությամբ եւ ծափահարություններով: Ասատուր Ավետիսյանը (ներքին գործերի կոմիսար) Դրոյին գիմավորեց ճառով, որը ժողովն ընդունեց ծափահարություններով

... Զանգեզուր - Արցախ զինված ուժերի հրամանատար պ. Դրոյի հրավիրած Վարանդայի եւ Դիզակի հայ բնակչության ներկայացուցչական ժողովը, լսելով հրամանատարի կողմից նշանակված վարիչների զեկուցումները, որոշում է.

1. Ճանաչել հրամանատարի կողմից նշանակված վարիչների լիազորությունները եւ ընդունել կազմակերպության այդ ձեւը:

2. Հնարավոր միջոցներով սատարել հրամանատարին եւ նրա նշանակած վարիչներին, ռազմաճակատում ընթացող կռիվներում հաղթելու եւ թիկունքում կարգապահություն հաստատելու գործում»[1]:

Կարճ ժամանակահատվածում Դրոյի հրամանատարությամբ կազմակերպվում է ավելի քան 3000 թվակազմով զորագունդ: Արցախի տարբեր շրջանների, ինչպես նաեւ Զանգեզուրի միջեւ ստեղծվում է հեռախոսային հուսալի կապ:

Իր հուշերում անդրադառնալով նաեւ Արցախյան դեպքերի վերլուծությանը՝ գեներալ Սիլիկյանը նշում է. «Տեղերում նա (Դրոն) ի հաշիվ տեղացի բնակիչների կազմավորում է հետեւակային եւ հեծյալ զորամասեր: Զանգեզուրում էլ մինչեւ այդ ջոկատի գալը զինվորական կազմավորումները ղեկավարում էր նահանգապետ Մելիք-Յոլչյանը եւ գեներալ-մայոր Ղազարովը, որոնց գործողություններն անբավարար էին ճանաչվել, առավել եւս, որ հետո էլ նրանք, օգտվելով Կանայան Դրոյի բացակայությունից, ապստամբություն բարձրացրին Շուշիում եւ նրա շրջաններում, որը ծայրահեղ անհաջող ավարտ ունեցավ: Դրոյի պնդմամբ Մելիք-Յոլչյանը եւ Ղազարովը հետ կանչվեցին»[2]:

Արցախում հանգրվանելու առաջին իսկ օրից նրա գլխավոր մտահոգություններից մեկը, եթե ոչ ամենագլխավորը, մարզի մարտական ուժերի կազմավորումն էր: Իսկ մարտունակ զորամասեր կազ-

[1] Նույն տեղում:
[2] ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 35, թ. 6:

մավորելու համար նախեւառաջ անհրաժեշտ էին փորձառու եւ բանիմաց զինվորականներ: Վերոհիշյալ Զեյնալովը, իր զեկուցագրում անդրադառնալով Արցախի մարտական ուժերի կազմավորման խնդիրներին, նշում է. «...գեներալ Դրոն հրամանատարական կազմում ընդգրկում է նախկին, փորձառու սպաների: Զինվորներին զինելու համար օգտագործում են գյուղերում գտնվող եւ Զանգեզուրից բերած զենքերը...

Գեներալ Դրոյի շտաբը գտնվում է Շուշիից ինը վերստ հեռավորության վրա գտնվող Քեշիշքենդ գյուղում...»[1]:

Ադրբեջանի զինվորական-ծովային կոմիսարին հասցեագրած մեկ այլ զեկուցագրում (1920թ. մայիսի 13, Զեյնալովը ուշագրավ տեղեկություններ է հաղորդում հայկական զորամասերում ընդգրկված ռուս սպաների մասին, որոնք նախկինում ծառայել էին գեներալ Դենիկինի գլխավորած Կամավորական բանակում:

Ըստ Զեյնալովի տեղեկության՝ մայիսի 3-ին Մալիբեկլու գյուղում իրենց կողմից գերի վերցված Կամավորական բանակի սպա Վլադիմիր Կովալեկը հայտնել է, որ ինքը Դենիկինի բանակի մի քանի սպաների հետ հասել է հայկական Զայքենդ գյուղ, ուր իրենց են միացել եւս 40 սպաներ:

«Այդ բոլոր սպաները, հայտնել է Վ. Կովալեկը, ուղեւորվել եւ ներկայացել են գեներալ Դրոյին, որը նրանց բոլորին հրավիրել է ծառայության: Կովալեկի խոսքերով՝ բացի այդ սպաներից հայերի մոտ պետք է լինեն նաեւ ոչ պակաս 200 մարդ Կամավորական բանակից...

...Գանձայի եւ Արցախի շրջանների բոլոր գյուղերում հայտարարվել է գեներալ Դրոյի հրամանը, համաձայն որի Դենիկինյան բանակի սպաներին պիտի ցույց տրվի բոլոր կարգի օգնություն եւ աջակցություն»[2]:

Համաձայն Դենիկինյան բանակի սպայի վկայության՝ թեպետ տասնյակ նախկին սպաներ ներկայացել եւ ցանկություն էին հայտնել ծառայելու հայկական բանակում, բայց նրանք Արցախում տեղի ունեցած մարտական գործողություններին չեն մասնակցել: Ավելին, նրանք կամավոր հեռացել են՝ «...տեղեկանալով Խորհրդային Ռուսաստանի եւ Խորհրդային Ադրբեջանի դաշինքի մասին եւ հայկական կողմի ձեռնարկումը համարելով անհույս ավանտյուրա»[3]:

Դրոն հայտարարվում է Արցախ-Զանգեզուրի գլխավոր նահանգապետ-հրամանատար: Նրա մասնակցությամբ արցախահայության

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 36, գ. 8:
[2] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 38, գ. 1:
[3] Նույն տեղում:

ընտրյալ ներկայացուցիչները նույն ամսին գումարում են հերթական՝ Գ-րդ համաժողովը եւ մեկ անգամ եւս վճռականորեն հայտարարում Հայաստանին վերամիավորվելու որոշումը:

«Դրան,- կարդում ենք «Հ.Յ.Դ. գերագույն դատական ատեանին» հասցեագրված Արցախի վերջին դեպքերի մասին պատմող զեկուցագրում, - ժամանակաւոր կառավարութիւն կազմող վարիչների միջոցով ապրիլի 22-ին Թաղավարդ գյուղում հրաւիրում է արցախահայութեան Գ-րդ համագումար՝ ժողովրդի կարծիքը իմանալու, զինուորական գործողութիւններ սկսելու եւ պարէնաւորման հարցը կարգաւորելու համար:

Համագումարը, բացառութեամբ մի բոլշեւիկի, 44 ձայնով որոշում է, ինչ գնով էլ լինի, զինուորական գործողութիւնները սկսել՝ շտապ կարգով Հայկական Արցախից (նկատի ունի Արցախի դաշտային մասի դեռեւս ազերի վերահսկողության տակ գտնվող շրջանները - Հ.Գ.) արտաքսելու Ադրբեջանի զօրքերը, նկատի ունենալով այն բարեյաջող պայմանները, որ տեսակէտից մենք աւելի կազմակերպուած ենք, քան Ադրբեջանը»[1]:

Ադրբեջանական իշխանությունները, իրենց զորքերի անհաջողությունների հարկադրանքով թողնելով Արցախի տարածքը, շարունակում են պատրաստվել եւ ռազմական ամուր հենակետեր ստեղծել Արցախին սահմանամերձ շրջաններում: Այդ հենակետերից էին Ասկերանի եւ Վարանդայի շրջանների սահմանակից Աբդալ, Գյուլաբլի գյուղերը, որտեղ ազերի հրամանատարությունը պահեստավորել էր մեծ քանակության զենք ու զինամթերք: Արցախում տիրող իրավիճակը թելադրում էր անհապաղ հարձակում ձեռնարկել ու վնասազերծել այդ հենակետերը:

«Դրոյի կարգադրութեամբ,-կարդում ենք «ՀՅԴ գերագույն դատական ատեանին» ուղարկված մեկ այլ զեկուցագրում, - ապրիլի վերջերին հայերը յարձակւում են Աբդալ-Գիւլաբլու թրքական գիւղերի վրայ եւ հիմնովին աւերում»[2]:

Ա. Կիսիբեկյանի հավաստմամբ՝ Սարուշեն հասնելու հաջորդ օրը « ...Դրոն անձամբ դիտեց ֆրոնտը: Նա այցելեց Ղզղալա, Նորշեն, Ավդուռ, Մյուրիշեն, Ասկերան և այլն:

Հասարակությունը ամենուրեք ցնծությամբ էր դիմավորում նրան: Ղզղալայում և Նորաշենում կանգնած էին հաղթական կամավորներ: Դրոն Ղարաբաղ մտնելուց 3-4 օրվա ընթացքում գրավեց Ասկերանը, Ավդալ-Գյուլափլուն, ուղղվեցին բոլոր սահմանները, և Շուշին առնվեց նեղ օղակի մեջ»[3]:

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 1949-4, գ. 42:
[2] Նույն տեղում:
[3] Կիսիբեկյան Ա., նշվ. աշխ., էջ 504:

Կարծես թե ամեն ինչ ընթանում էր շատ լավ, եւ դժվարություններն արդեն հետեւում էին մնացել, բայց իրականում ամենասարսափելին դեռեւս առջեւում էր:

Այդ նույն ժամանակահատվածում Կովկասյան ռազմաճակատում կատարվում են այնպիսի արմատական տեղաշարժեր, որոնք ճակատագրական նշանակություն են ունենում ոչ միայն Արցախի, այլեւ Հայաստանի հանրապետության համար: 1920 թ. ապրիլին Միխայիլ Տուխաչեւսկու հրամանատարությամբ խորհրդային բանակը, որի ռազմական խորհրդի անդամն էր Սերգո Օրջոնիկիձեն, Հյուսիսային Կովկասում պարտության է մատնում դենիկինյան զորքերին եւ պատրաստվում ներխուժել Հարավային Կովկաս, այն է՝ Ադրբեջան, Հայաստան եւ Վրաստան: Կովկասյան անկախ հանրապետությունները նվաճելուց հետո, խորհրդային զորքերը պիտի շարունակեին իրենց հաղթարշավը դեպի հարավ, ապա կապեր հաստատեին քեմալական Թուրքիայի հետ ու համատեղ ուժերով Մերձավոր ու Միջին Արեւելքից դուրս մղեին «Միջազգային իմպերիալիզմ»-ը ներկայացնող տերություններին: Խորհրդային Ռուսաստանի բոլշեւիկյան իշխանություններն առաջնորդվելով ծավալապաշտական քաղաքականությամբ՝ ձգտում էին վերականգնել Ռուսական կայսրության նախապատերազմական սահմանները:

Նույն տարվա ապրիլի 28-ին կարմիր զրահագնացքը առանց որեւէ արգելքի մուտք է գործում Բաքու եւ մուսաֆաթական Ադրբեջանի Հանրապետությունը հռչակում է խորհրդային: Ապրիլի 30-ին Ադրբեջանի հեղկոմը, ի դեմս Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության արտաքին գործերի կոմիսարի տեղակալ Միրզա Հուսեինովի, Հայաստանի կառավարությանն է ներկայացնում հետեւյալ վերջնագիր-նոտան.

«Ադրբեջանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության բանվոր-գյուղացիության կառավարությունը, ի դեմս Հեղափոխական կոմիտեի, պահանջում է. 1. Ձեր զորքերից մաքրել Զանգեզուրն ու Արցախը: 2. Հետ գնացեք ձեր սահմանները: 3. Դադարեցրեք ազգամիջյան կոտորածները: Հակառակ դեպքում Ադրբեջանի Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը իրեն պատերազմական դրության մեջ կհամարի Հայաստանի Հանրապետության հետ»[1]:

Ադրբեջանի հեղկոմը իր վերջնագրի պատասխանը ստանալու համար Հայաստանի Հանրապետությանը տալիս է ընդամենը երեք

[1] ՀԱԱ, ֆ.278, ց.1,գ.38, թ.84

օր ժամանակ եւ որպես զգուշացում՝ պահանջը չկատարելու պարագայում սպառնում պատերազմով:

Կապի բացակայության պատճառով Հայաստանի կառավարությունը առաջին օրերին չի կարողացել Արցախի ժամանակավոր կառավարությանն ու Զանգեզուր-Արցախ զորախմբի հրամանատարությանը տեղեկացնել Խորհրդային Ադրբեջանի կողմից իրեն ներկայացված վերջնագրի մասին: Այսուհանդերձ, Ադրբեջանի հեղկոմի կողմից Հայաստանի կառավարությանը ներկայացված վերջնագիրը Դրոյի եւ արցախահայության համար, այնուամենայնիվ, չէր կարող գաղտնիք լինել: Տարբեր աղբյուրներից նրանց հայտնի է դառնում մուսաֆաթական Ադրբեջանում խորհրդային կարգերի հռչակման իրողությունը:

Այդ նույն օրերին Դրոյի եւ Զանգեզուր-Արցախ զորախմբի շտաբի պետ Միրիմանյանի ստորագրությամբ Ադրբեջանում տեղի ունեցած արմատական փոփոխությունների մասին Գ. Նժդեհին ուղարկում են մի գրություն, որը, կարելի է ասել, ինչ-որ իմաստով մատնանշում է նրանց ապագա ձեռնարկումների ուղղվածությունն ու մարտավարությունը:

«Հարավային Արցախյան ջոկատի պետ, փոխգնդապետ Նժդեհին.

Ադրբեջանում բոլշեւիզմի եւ Բաքուն գրավելու մասին լուրերը հաստատվում են...

Շուշիից եկած հայուհին եւ թաթարները հաղորդում են, որ սպաները հանել են իրենց ուսադիրները, նետել զենքերը, Սուլթանովը կապել է կարմիր ժապավեն եւ այլն: Թեեւ բոլշեւիզմը ակնհայտ է, բայց առայժմ, ինչպես տեսնում եք, թաթարներին առաջնորդում են Սուլթանովը, Նուրի փաշան եւ այլոք: Ուստի մենք պետք է խիստ զգույշ լինենք: Գտնում եմ, որ ինչպես միշտ, Ադրբեջանում առաջին շրջանն անցնում է անցավագին, բայց, հավանաբար, շուտով կսկսվի բանակի քայքայումը:

Մեզ անհրաժեշտ է այժմ հակառակորդին հնարավորություն տալ ինչպես հարկն է կազմալուծվելու եւ ձեռնպահ մնալ ամեն մի ելույթից, քանզի դա կարող է նրանց ստիպել ինքնակազմակերպվելու: Մինչեւ բոլշեւիզմի բնույթի պարզելը պետք է սպասողական դիրք գրավենք:

Սպասում ենք տեղեկությունների Երեւանից եւ Ջիվանշիրից:

Մի՛ ձեռնարկեք հարձակողական գործողություններ եւ կազմակերպեցե՛ք Ձեզ վստահված շրջանի համար պաշտպանությունը...»[1]:

[1] Սիմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ, Երեւան, 2000, էջ 57:

Թեպետ Նժդեհին հասցեագրած գրությունում Դրոն եւ Միրիմանյանը նրան հրահանգում են չձեռնարկել հարձակողական գործողություններ, բայց քանի որ Ադրբեջանում տեղի ունեցած արմատական փոփոխություններն արդեն իրողություն էին, ուստի անհրաժեշտ էր քննարկել ստեղծված կացությունը եւ որդեգրել տիրող կացությանը համահունչ մարտավարություն:

Ի պատասխան Ադրբեջանի հեղկոմի վերջնագրի՝ Արցախի ժամանակավոր կառավարությունը 1920 թ. մայիսի 14-ին Դիզակի (ներկայիս Հադրութի շրջան) Տող գյուղում ՀՀ կառավարության ներկայացուցիչ Արսեն Միքայելյանի նախաձեռնությամբ գումարում է Դիզակի շրջանի բոլոր գյուղերի ներկայացուցիչների համագումար, ուր քննարկվել են հետեւյալ հարցերը.

«1. Քաղաքական կացություն

2. Ընթացիկ հարցեր

Ժողովում նախ եւ առաջ քննարկել են քաղաքական ներկա կացությունը. ինչպես է Արցախի ժողովուրդը վերաբերվում Արարատյան կառավարությանը (նկատի ունեն Հայաստանի Հանրապետությունը-Հ.Գ.) ներկայացված ադրբեջանական վերջնագրին: Այդ հարցի կապակցությամբ տեղի է ունեցել մտքերի փոխանակություն: Երկար քննարկումներից հետո ժողովը հանգել է միասնական եզրահանգման. ադրբեջանական վերջնագիրը համարել ընդամենը նոր պատրվակ հայերին նոր դժբախտություններ պատճառելու եւ Արարատյան կառավարությունը ընդունել որպես հարազատի ու Զանգեզուրի հետ միասին մտնել Արարատյան Հանրապետության կազմում...»[1]:

Եթե Արցախի մարտական ուժերի ու այնտեղ գտնվող Դրոյի զորամասին դիմակայողը լիներ միայն Ադրբեջանը, թեկուզեւ իր ռազմական ողջ կարողությամբ, ապա որեւէ կասկած լինել չէր կարող, որ Արցախում ծավալվող դեպքերը կգարգանային բոլորովին այլ ուղղվածությամբ: Մանավանդ որ Արցախում գտնվող ազերի մարտական ուժերը Դրոյի զորամասի հարվածների հետեւանքով լքել էին իրենց նախկին դիրքերը եւ պատսպարվելով Շուշիում՝ կտրվել էին արտաքին աշխարհից ու հայտնվել շրջափակման մեջ:

Սակայն, ի դժբախտություն արցախահայության, այդ ժամանակահատվածում նրան դիմակայող հիմնական եւ վճռորոշ ուժն արդեն ազերիները չէին:

«Միջազգային իմպերիալիզմի» դեմ պայքարող, իրեն «համաշխարհային հեղափոխության» առաջնորդ ու դրոշակակիր հռչակած

[1] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 461, թ. 90-91:

Խորհրդային Ռուսաստանը եւ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (մեջլիս) նախագահ Մուսթաֆա Քեմալը հանուն «համաշխարհային հեղափոխության», բայց իրականում հանուն իրենց քաղաքական շահերի, խորհրդայնացնելով՝ զոհաբերեցին ադրբեջանական անկախ հանրապետությունը:

Հայրենական պատմաբաններից Է. Զոհրաբյանը իր հեղինակած «1920 թ. Թուրք-հայկական պատերազմը եւ տերությունները» աշխատությունում հավաստի փաստերի վերլուծությամբ հաստատում է, որ թեպետ այդ ժամանակահատվածում Քեմալն ու նրա համախոհները պանթուրքիստական ընդարձակ ծրագրեր դեռեւս չէին կարող կենսագործել, սակայն «...իրագործման ճանապարհին որպես քար ընկած էր Հայաստանի Հանրապետության ոչնչացումը, որը միշտ էլ պանթուրքիստների առաջնահերթ խնդիրն է հանդիսացել, ստեղծված պայմաններում նրանց իրագործելի էր թվում: Այս տեսակետից չի բացառվում, որ նրանք կարող էին համաձայնել, ավելի ճիշտ, չընդդիմանալ՝ չնայած մուսաֆաթիստների հետ կնքած պայմանագրին, Ադրբեջանի խորհրդայնացմանը, եթե դա պայմանավորվեր Հայաստանի ոչնչացումով, եթե բոլշեւիկյան կառավարությունը համաձայներ ձեռքերի ազատություն տալ նրանց Հայաստանի հարցում...»[1]:

Որպես ապացույց իր եզրահանգումների՝ Է. Զոհրաբյանը մեջբերում է Քեմալի հետեւյալ խոսքերը. «Թուրքական կառավարությունը իր վրա է վերցնում պատերազմական գործողությունները իմպերիալիստական Հայաստանի դեմ եւ պարտավորվում է ստիպել Ադրբեջանի հանրապետությանը մտնելու խորհրդային պետությունների շրջանակի մեջ»[2]:

«Համաշխարհային հեղափոխության» առաջնորդ ու դրոշակակիր Խորհրդային Ռուսաստանը, առաջնորդվելով արեւելքի ճնշված ժողովրդին «Միջազգային իմպերիալիզմի լծից ազատագրելու» եւ արեւելքի երկրներում խորհրդային կարգեր հաստատելու միջոցով նրանց ազատագրելու շինծու ու խորապես կեղծ լոզունգներով եւ կարգախոսներով, ձգտում էր արեւելքի ժողովուրդների վրա հաստատել իր գերիշխանությունը ու նրանց աջակցությամբ մերձավոր եւ միջին արեւելքից դուրս մղել «Միջազգային իմպերիալիզմի», այն է՝ Անտանտի տերություններին:

Խորհրդային Ռուսաստանի իշխանությունների «ազատագրական եւ հումանիստական» առաքելության ու նպատակների կենսագործման գլխավոր խոչընդոտը «Միջազգային իմպերիալիզմն» էր եւ նրա դաշնակից Հայաստանի Հանրապետությունը: Մերձավոր եւ միջին արեւելքում իր գերիշխանությունը հաստատելու համար Խորհրդային Ռուսաստանին անհրաժեշտ էր դաշնակից ու հենարան: Հանձին իրեն «կարմիր հեղափոխական» հորջորջող Մուստաֆա Քեմալի, որի պայքարի սլաքը նույնպես ուղղված էր «Միջազգային իմպերիալիզմի» դեմ, Խորհրդային Ռուսաստանը գտավ իր հուսալի եւ «գաղափարակից» դաշնակցին: Խորհրդային Ռուսաստանի եւ Քեմալական Թուրքիայի շահերը փոխադարձաբար համընկնում ու ներդաշնակում էին: Նորաթուխ դաշնակիցների համար «Միջազգային իմպերիալիզմի» դաշնակից Հայաստանի Հանրապետությունը դիտվում էր որպես թշնամի, իրենց նպատակների կենսագործման ճանապարհին կանգնած խոչընդոտող ուժ: Այս առումով ուշագրավ է Խորհրդային մեծ հանրագիտարանում Հայաստանի Հանրապետությանը տրված հետեւյալ որակավորումը. «1920թ. սկսած Խորհրդային Ռուսիայի եւ Անկարայի բարեկամական հարաբերությունները բախվում էին այդ երկու պետությունների (այդ ժամանակ քեմալական Թուրքիան որպես անկախ պետություն դեռեւս որեւէ տերության կողմից ճանաչված չէր-Հ.Գ.) միջեւ ընկած որպես թշնամի ուժ, Հայաստանի ընդդիմությանը»[1]:

Սիմոն Վրացյանի պնդմամբ՝ բոլշեւիկների ու Թուրքերի միջեւ գոյություն ունեին շատ սերտ բարեկամություն եւ համագործակցություն: Իր պնդումը հիմնավորելու համար նա մեջբերում է բոլշեւիկ-քեմալական-ադրբեջանյան համագործակցությունը հավաստող երկու փաստարկ.

1. Ադրբեջանի զինվորական նախարարի օգնական գեներալ Ալի Աղա Շեխլինսկու եւ Թուրքական բանակի հրամանատար Քեազիմ Կարաբեքիր փաշայի 1920 թ. ապրիլի 15-ին Էրզրումում կայացած հանդիպումն ու կնքված համաձայնագիրը:

Համաձայն այդ համաձայնագրի 5-րդ կետի՝ «Ազրբէջանի կառավարությունը խոստանում է շարունակել նպաստել Խորհրդ. Ռուսաստանի «Անատոլիայի ու Ռումելիայի իրաւունքների պաշտպանութեան կոմիտէ» միջեւ մերձեցումն իրականացնելու: Անհրաժեշտութեան դէպքում ինքն էլ է յարում այդ միութեանը»[2]:

Իսկ ըստ համաձայնագրի 7-րդ կետի՝ Անատոլիայի ու Ռումելիայի իրավունքների պաշտպանության կոմիտեն պարտավորվում է «...երբ Հայաստանը յարձակում գործէ Ադրբէջանի վրա, եւ

---

[1] Զոհրաբյան Է, նշվ. աշխ., էջ 27:
[2] Նույն տեղում:

[1] Большая Советская Енциклопедия, 1926, т. 3, ст. 438.
[2] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 448:

Ադրբէջանի կառավարութիւնը վճռականօրէն խոստանում է, որ այդ դէպքում, երբ Թիւրքիայի արեւելեան շրջանները կը տրուեն եւ կը միացուեն Հայաստանին,-այս երկու դէպքում էլ համաձայնութեան երկու կողմերն էլ պաշտպանելու եմ միմիանց շահերը եւ գործելու են որպէս միացած բանակ»[1]:

Ուշագրաւ է այդ համաձայնագրի կապակցութեամբ իր նամակներից մեկում Կարաբեքիր փաշայի ներկայացրած հետեւեալ փաստերը. «Մեր, Ազրբէջանի եւ բոլշեւիկների միջեւ կնքւած պայմանների հիման վրա, մեծ թիւ մեր սպաների, բժիշկների եւ պաշտօնեաների գնացել են Ազրբէջան: Բոլշեւիկները մեզ առաջարկեցին անյապաղ պատերազմական գործողութիւններ սկսել հայկական սահմանների վրա, հայերի դէմ...

Ազրբէջանեան զօրքերը պէտք է ցոյց տան կեղծ-խաբուսիկ դիմադրութիւն, որպէսզի կարողանան իրենց արդարացնել դաշնակիցների հանդէպ: Միանալով կանաչ բանակին՝ ազրբէջանեան զօրքերը պէտք է առիթ որոնեն ընդհարուելու Հայաստանի հետ եւ Անատոլիայում գտնուող Թիւրք զօրքերի հետ միասին անցնեն Հայաստանի սահմանները ու սկսին զինուորական գործողութիւններ Հայոց Հանրապետութեան դէմ»[2]:

Ըստ Ս. Վրացյանի վկայակոչած 2-րդ փաստաթղթի՝ «...յայտնի կոմունիստ Սուլթան Գուլիեւը 1920 թւի մայիսին գրում էր «Իզվեստիա»-յում. «Միլլի կազմակերպութիւնը Դենիկինի Մոսկւայի վրա գործած յարձակման ժամանակ նրա թիկունքում առաջացրեց ապստամբութիւն եւ ստիպեց կուի վճռական րոպէներին նրա բանակից մի քանի զօրամասեր ուղղել դէպի յետ՝ ճնշելու համար ապստամբութիւնը: Այդ ձեւով է աշխատել «Միլլի կազմակերպութիւնը եւ Բաթումիի, Կարսի, Արդահանի շրջաններում: Ազրբէջանի բանակում աշխատող տաճկական սպաները գաղտնի քարոզչութիւն են անում միանալու Խորհրդային Ռուսաստանի հետ»[3]:

Կարելի է ասել, որ մեկնաբանութիւններն ավելորդ են:

Կարաբեքիր փաշայի արտահայտած «ազրբէջանեան զօրքերը պէտք է առիթ որոնեն ընդհարուելու Հայաստանի հետ» ցանկութիւնը, հանձին վիճելի տարածքներ համարվող Արցախի, Զանգեզուրի եւ Նախիջեւանի, ներկայացվել էր:

[1] Նույն տեղում, էջ 448-449:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

[illegible]

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 449-450:

թյամբ ապակողմնորոշել ու սիրաշահել ժողովրդին եւ տեղերում հաստատել խորհրդային իշխանության կառույցներ՝ հեղկոմներ:

Որոշակիորեն տեղյակ լինելով Զանգեզուրի եւ Արցախի նկատմամբ Խոսրով Բեկ-Սուլթանովի գործած չարագործություններին ու զավթողական տրամադրվածությանը՝ Ադրբեջանի նորանշանակ բոլշեւիկյան իշխանությունը՝ հեղկոմը, ապրիլի 29-ի որոշմամբ նրան է վստահում Արցախի հեղկոմի ղեկը: Առաջնորդվելով խորհրդային իշխանությունների կենսագործած քաղաքականությամբ՝ Խոսրով Բեկ-Սուլթանովը նրանց գործուն աջակցությամբ սկսում է հեղկոմներ հիմնել նաեւ Արցախի շրջաններում[1]:

Զբաղարարվելով այդ ամենով՝ Սուլթանովը Շուշիի փրկված հայերի միջոցով հայտնում է Արցախի ղեկավարությանը, որ «Կարմիր Բանակը գրավել է Բաքուն և Շուշիում կազմված է Հեղափոխական կոմիտե (Ռևկոմ)՝ իր նախագահությամբ, և առաջարկում է դադարեցնել հարձակողական գործողությունները»[2]:

Սուլթանովի առաջարկությունը, կարելի է ասել, հավասարազոր է գրեթե վերջնագրի: Ավելին, իր իշխանությունն Արցախում հաստատելու նպատակադրությամբ Սուլթանովը խաղաղության եւ համերաշխության է կոչում Արցախի բնակչությանը, ընդամին ժողովրդին ապակողմնորոշելու եւ նրա համակրանքը շահելու նպատակով մինչ այդ տեղի ունեցած ազգամիջյան ջարդերի ողջ մեղքն ու պատասխանատվությունը բարդում է դաշնակցականների եւ իր նախկին կուսակիցների՝ մուսաֆաթականների վրա: Սուլթանովը թեպետ փորձում է կիրառել զանգվածներին մոլորեցնելու եւ սիրաշահելու բոլշեւիկների, իհարկե նրանց իսկ թելադրությամբ, գործադրած մարտավարության ձեւերն ու միջոցներն, սակայն նրա ջանքերն ապարդյուն էին: Արցախահայությունը, քաջատեղյակ լինելով նորաթուխ բոլշեւիկի հակահայ գործունեությանն ու տրամադրվածությանը, բնականաբար չէր կարող հավատ ընծայել նրա քարոզչությանն ու խոստումներին:

Արցախահայությունը, միանշանակորեն իր անվստահությունն ու բացասական տրամադրվածությունն արտահայտելով Սուլթանովի եւ նրա ձեռնարկումների նկատմամբ, մայիսի 7-ին Լենինին եւ Ադրբեջանի հեղկոմի նախագահ Նարիմանովին (պատճեն) հասցեագրած հեռագրում ներկայացնում է Արցախում տիրող իրավիճակը, միաժամանակ հայտնում, որ «...Արցախի 360 հազար գիւղացիությունը ներկայումս էլ հարկադրված է լինել մարտաշարքերում, որովհետեւ Շուշիի հեղկոմից ծանուցագիրը նա ստացել է այն պահին, երբ գնդացիրների ու հրանոթների որոտը չարունակում է ոչնչացնել խաղաղ հայ բնակչությանը...

Շուշիի հեղկոմի առաջարկությանը մենք չենք հավատում...[1]:

Այդ նույն հեռագրում իր հավանությունը արտահայտելով խաղաղություն հաստատելու հեղկոմի կոչի նկատմամբ՝ արցախահայության անունից հանդես եկող Արցախի գյուղացիության պաշտպանության կոմիտեն հայտնում է. «Արցախի 360 հազար հայ գյուղացիությունը երեք տարի շարունակ պայքարել է թուրքական ռեակցիայի եւ խան-բեկական Ադրբեջանի Հանրապետության դեմ: Կրկնապատկված եռանդով նա կշարունակի պայքարը ռեակցիայի դեմ, քանի դեռ Խորհրդային Ռուսաստանի հեղափոխության հավատարիմ զավակները չեն մտել Լեռնային Արցախի սահմաններ»[2]:

Այդ հեռագրում արցախահայության արտահայտած Խորհրդային Ռուսաստանի հեղափոխության հավատարիմ զավակներին Արցախում տեսնելու ցանկությունը շատ շուտով իրականանում է:

Մայիսի 1-ին Ադրբեջանի տարածքում գտնվող 11-րդ կարմիր բանակի հրամանատարությունը Օրջոնիկիձեի, Կիրովի ստորագրությամբ՝ խորհրդային իշխանության անունից, պատերազմ հայտարարելու սպառնալիքով նոր վերջնագիր է ներկայացնում Հայաստանի կառավարությանը եւ առանց պատասխանի սպասելու կարմիր բանակի զորագնդերը շարժում Արցախ: Պահանջում են Դրոյից հայ զինական ուժերը դուրս բերել Արցախի տարածքից: Եթե չընդունվեին Կարմիր բանակի պահանջները, ապա հանրապետությունը ստիպված կլիներ պատերազմել ոչ միայն «խորհրդային մուսաֆաթի», այլեւ հենց Խորհրդային Ռուսաստանի դեմ: Բացի դրանից, խորհրդային իշխանության հետ բանակցությունները վարելու առաքելությամբ Մոսկվա ուղեւորվող Լեւոն Շանթի պատվիրակությունն արդեն ճանապարհին էր, եւ Հայաստանի կառավարությունը հույս ուներ բանակցությունները վարել մեծ տերության հետ:

Մայիսի 5-ին Դրոյի հետ բանակցելու համար Արցախ են ժամանում Ս. Օրջոնիկիձեի ներկայացուցիչներ Սահակ Տեր-Գաբրիելյանն ու Լեւանդովսկին եւ խորհրդային իշխանության անունից պահանջում հայկական զորքերը դուրս բերել Արցախի տարածքից եւ անցնել Զանգեզուր:

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, թ. 57:
[2] Կիսիբեկյան Ա., Հուշերը, հ. 1, էջ 507:

[1] Հարությունյան Հ, Լեռնային Արցախը 1918-1921, Երեւան, 1996, էջ238:
[2] Նույն տեղում:

«Դրօն,- շարունակում է Արսեն Միքայելյանը,-պատասխանում է, որ ինքը զինուորական է, ներս է մտել Արցախ իր կառավարութեան հրահանգով եւ այն ժամանակ միայն, երբ Ադրբեջանը սկսել է կոտորել Շուշի քաղաքի անզէն բնակչութիւնը եւ աւերել հայկական գիւղերը, կը հեռանայ միայն այն ատեն, երբ համապատասխան հրաման ստանայ Հայաստանի Հանրապետութիւնից»[1]:

Խորհրդային իշխանության ներկայացուցիչները Դրոյին համոզելու նպատակով դիմում են կեղծիքի ու խաբեության.

«Բայց Հայաստանի նախկին կառավարութիւնն այլեւս գոյութիւն չունի, եւ մայիսի 2-ին Հայաստանի մէջ հաստատուած է Խորհրդային իշխանութիւն(Հայաստանի կառավարության հետ կապի բացակայության պատճառով Դրոն դեռեւս տեղեկություն չուներ հանրապետությունում բոլշեւիկների սանձազերծած մայիսյան խռովությունների մասին-Հ. Գ.),- յայտարարում են նրանք:

- Ես զինուորական եմ, ես կը սպասեմ իմ կառաւարութեան հրահանգին, այդ կըլլայ հին թէ նոր,- լինում է Դրոյի պատասխանը:

Այն ժամանակ Օրջոնիկիձէի ներկայացուցիչներն առաջարկում են Վարիչների խորհրդի իշխանութիւնը տարածել միայն Վարանդայի եւ Դիզակի վրայ:

Դրօն միեւնոյն պատասխանն է տալիս»[2]:

Դրոյի մերժողական պատասխանը, ինչը հստակորեն ապացուցեց ժամանակը, խորհրդային իշխանության ներկայացուցիչների համար լուրջ խոչընդոտ չէր կարող ծառայել: Կարմիր Բանակը մուտք էր գործել Անդրկովկաս, իսկ տվյալ պարագայում՝ Արցախ, հստակ առաջադրանքով եւ նպատակադրվածությամբ, ու այն պետք է կենսագործվեր: Առաջին հանդիպումից չանցած երկու շաբաթ մայիսի 20-ին, խորհրդային իշխանության ներկայացուցիչները նույն պահանջը իրականացնելու նպատակով դարձյալ հանդիպում են Դրոյին:

«Մայիսի 21-ին,- հաղորդվում է Բաթումի Հայաստանի Հանրապետության հյուպատոսի կողմից Հայաստանի արտաքին գործերի նախարարին հասցեագրված զեկուցագրում,- Դրօն հեռագրել է Արցախից, հայտնելով, որ Շուշիից իր մոտ եկել են Կովկասեան բանակի ռազմական խորհրդի նախագահ Օրջոնիկիձեի ներկայացուցիչներ Սահակ Տեր- Գաբրիելեանը, Կայդալովը եւ Պարանկինը, որոնք Օրջոնիկիձեի անունից Դրոյին հաղորդել են, որ ռուսական

[1] «Հայրենիք» ամսագիր, 1923, հոկտեմբեր, էջ 125:
[2] Նույն տեղում:

կարմիր զորամասերը մտադիր են խորհրդային իշխանութիւն հաստատել Արցախում..

Դրօն պատասխանել է, թէ հարցի այդօրինակ լուծման համար անհրաժեշտ է դիմել Հայաստանի կառավարութեանը, քանի որ ինքը բանակցութիւնների համար չունի լիազորութիւններ»[1]:

Խորհրդային Ռուսաստանի զորքերը առանց Արցախի օրինական իշխանության՝ «Վարիչների խորհրդի» եւ Դրոյի համաձայնության, արդեն մինչեւ մայիսի 20-ը հայ բոլշեւիկների առաջնորդությամբ մուտք են գործում Արցախի մի շարք շրջաններ եւ ամենուրեք հաստատում խորհրդային կարգեր: Արցախը գրավելու ամենահարմար եւ «անարյուն», «մարդասիրական» միջոցը տեղի բնակչությանը շլացուցիչ խոստումներով ու կեղծ գաղափարներով խաբելն էր: Իսկ «խաղաղություն», «հավասարություն», «եղբայրություն» գրավիչ կարգախոսներով առաջնորդվող բոլշեւիկներին դժվար չէր մոլորեցնել ադրբեջանական զորքերի մշտական սպառնալիքի տակ ապրող եւ իրենց բազմամյա պայքարով դեռեւս բաղձալի նպատակին չհասած արցախցիներին:

Մի հատված զարաբաղցիների հետ հանդիպման ժամանակ Սահակ Տեր-Գաբրիելյանի արտասանած քարոզչությունից. «... Ռազմահեղափոխական խորհրդի ներկայացուցիչ ընկեր Գաբրիելյանը ասում էր, որ Կարմիր բանակը եկել է Անդրկովկաս ոչ թե նվաճելու, այլ խորհրդային իշխանություն, խաղաղություն եւ հանգիստ կյանք հաստատելու:

... Կարմիր բանակը հզոր է եւ արդեն ջախջախել է աշխատավոր ժողովրդի բոլոր թշնամիներին՝ Ցուդենիչին, Կոլչակին եւ Դենիկինին: Խորհրդային իշխանությունը վերցնում է հողը կալվածատերերից, ֆաբրիկաները ֆաբրիկատերերից եւ այդ բոլորը տալիս է բանվորներին եւ գյուղացիներին»[2]:

Աստիճանաբար տարածվելով Արցախի տարածքում, բոլշեւիկները տեղերում ստեղծում են հեղափոխական կոմիտեներ (հեղկոմ) եւ նրանց միջոցով ակտիվ քարոզչական գործունեություն ծավալում գյուղացիության շրջանում: Մայիսի սկզբներին Շուշիում հիմնված հեղափոխական կոմիտեն տարածում է հետեւյալ գրությունը. «... Գրութիւնն ուղղուած էր Լեռնային Արցախի հայ գիւղացիութեան...

Ցայտնելով, որ Բագուն, Գանձակը եւ Շուշին գրաւուած են բոլշեւիկների կողմից, որ ամբողջ Ադրբեջանում բոլշեւիկեան իշխանու-

[1] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 1649, գ. 1, էջ 40-41:
[2] Нагорный Карабах в 1918-1923 гг., Ереван, 1992, стр. 267:

թիւն է եւ մուսաֆթականները տապալուած են, Շուշւայ յեղկոմը կոչ է ուղղում հայ գիւղացիութեան՝ տապալելու հայկական մուսաֆթի «դաշնակների» իշխանութիւնը եւ միանալու իրենց, եղբայրական ձեռք մեկնելու իրենց»[1]:

Խորհրդային կոմիսարները ճիշտ էին հասկացել ժամանակի նրբությունը: Արցախի նվաճման լավագույն երաշխիքը բնակչությանը հմայելու ու մոլորեցնելու միջոցով նրա բոլշեւիկացումն էր ու խորհրդայնացումը: Բոլշեւիկյան ժանտախտը արագորեն տարածվում է Արցախի բնակչության շրջանում: Հայ բոլշեւիկների ջանքերով բազմաթիվ գյուղեր հոժարակամ ընդունում են խորհրդային իշխանությունը:

Ստեղծված իրավիճակում Դրոն այլընտրանք չուներ. կամ պետք է զենքի ուժով հարկադրեր Կարմիր բանակին թողնել Արցախի տարածքը, որը միանշանակորեն նշանակում էր պատերազմական գործողություններ սկսել Խորհրդային Ռուսաստանի դեմ, կամ չխոչընդոտել Կարմիր բանակին Արցախի խորհրդայնացման գործում, որն էլ հավասարազոր էր համակերպվել Արցախը առայժմ Խորհրդային Ադրբեջանի կազմում թողնելու իրողությանը:

Արցախի գործիչներից ոմանք հակված էին հարցը զենքի ուժով լուծելու տեսակետին եւ այդ պատճառով, երբ Դրոն, այնուամենայնիվ, որոշում է, առանց մարտական գործողություններ վերսկսելու, խաղաղ ճանապարհով իշխանությունը Արցախում հանձնել հայ բոլշեւիկներին: Արցախի այն գործիչները, որոնք համաձայն չէին իշխանությունը բոլշեւիկներ խաղաղ ճանապարհով հանձնելու իրողությանը, մասնավորապես, Դիզակի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարներից Հովակ Ստեփանյանը «Հ.Յ.Դ. դատական գերագույն ատեանին» ուղղված իրենց զեկուցագրերում, նկարագրելով Արցախում տեղի ունեցած վերջին իրադարձությունների մանրամասները, գտնում են, որ անհրաժեշտ էր մնալ Արցախում եւ բոլոր հնարավոր միջոցներով պայքարել ու թույլ չտալ, որպեսզի բոլշեւիկները կարողանային խորհրդայնացնելու ճանապարհով Արցախը մտցնել Ադրբեջանի կազմում[2]:

Իրոք, դժվար էր երկարատեւ ու արյունալի պայքարից ու կռիվներից հետո հաշտվել Արցախը դարձյալ Հայաստանի Հանրապետության կազմում չտեսնելու իրողությանը: Արցախյան հարցի լուծման նման վերջաբանը անառարկելիորեն ծանր է եղել նաեւ Դրոյի համար: Այդպիսի իրավիճակը աննախադեպ էր նրա մարտական հա-

[1] ՀՀ ԲԿԱ, ֆ. Ս. Վ., տուփ 2, «Տեր Յակոբեանի յուշերը», էջ 1:
[2] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թ. 1649, գ. 1, 3, 6:

բուստ կենսագրությունում: Նա գլխավորապես ռազմի մարդ էր եւ Արցախի համար գուցե եւ ճակատագրական նշանակություն ունեցող վճիռ կայացնելու համար, տվյալ պարագայում նրանից պահանջվում էր խորագետ քաղաքագետի նրբին միտք, հավասարակշռված կողմնորոշում ու սթափ մոտեցում: Անբասիր ռազմագետի ու քաջ զինվորի անուն վաստակած Դրոյին, այս դեպքում, պետք է փոխարիներ քաղաքագետ Դրոն, որին վիճակված էր լուծելու չափազանց դժվարին ու պատասխանատու խնդիր: Որպեսզի ստեղծված կացությանը համապատասխան ու ճիշտ քայլեր ձեռնարկվեին, անհրաժեշտ էր անպայմանորեն հաշվի առնել հետեւյալ հանգամանքները.

1) Արցախը եւ բնականաբար Հայաստանի Հանրապետությունը, արդյոք ի զորու էին եւ պատրաստ պատերազմելու հյուսիսի հզոր հարեւանի՝ Խորհրդային Ռուսաստանի դեմ:

Դատելով Հայաստանի Հանրապետության ներքին եւ արտաքին քաղաքական կյանքում տեղի ունեցող դեպքերի ընթացքից՝ աներկբա կարելի է պնդել, որ Հայաստանի կառավարության համարման ճակատագրական որոշում կայացնելու համար ժամանակը եւ հնարավորությունները չափազանց աննպաստ էին եւ գրեթե անհնարին: Իսկ Արցախում հայտնված խորհրդային զորքեր դեմ պատերազմելը, որը հավասարազոր է Խորհրդային Ռուսաստանին պատերազմ հայտարարելուն, պատմական այդ ժամանակաշրջանում բնավ չէր կարող տեղ գտնել ՀՀ կառավարության քաղաքական ու առավել եւս ռազմական ծրագրերում:

Նախ, Հայաստանի կառավարությանը դեռեւս նոր էր հաջողվել ճնշել հանրապետության մի շարք շրջաններում բռնկված բոլշեւիկների գլխավորած մայիսյան խռովությունները, որից հետո «... իրերի տրամաբանական թելադրանքով, կառավարության առջեւ եկաւ թրքաբնակ վայրերի գրաւման հարցը: Մի շարք շրջաններ՝ Զանգիբասարում, Վեդիբասարում, Ջուլ, Կողբ եւ այլն, էլ չենք խոսում Շարուր-Նախիջեւանի մասին, որոնք մնում էին Հայաստանի իշխանության նկատմամբ ապստամբ վիճակում, ոչ միայն չէին ճանաչում նրան, այլեւ անվերջ յարձակումներով, սպանութիւններով դժուարացնում էին Հայաստանի կազմակերպման եւ վերաշինության գործը»[1]:

Հայրենական պատմաբաններից Հ. Հարությունյանը իր «Լեռնային Արցախը 1918-1921» պատմագիտական աշխատությունում, վերլուծելով խորհրդային զորամասերի հայտնվելու պատճառով

[1] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 915:

Արցախում տիրող իրավիճակը, գտնում է. «Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության կառավարության դիրքին, ապա նա հնարավորություն չուներ զինուժով օգնություն ցույց տալ, քանի որ հայկական բանակը ներքաշվել էր քեմալական Թուրքիայի պարտադրած պատերազմի մեջ[1]:

Որպես փաստարկ իր եզրահանգման, Հ. Հարությունյանը վկայակոչում է մայիսի 2-ին Սարուշենում կայացած Արցախի ժամանակավոր կառավարության նիստում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Հակոբ Տեր-Հակոբյանի կողմից արված հետեւյալ հայտարարությունը. «...երկու ճակատի վրա մենք չենք կարող կռվել, որովհետեւ մեր ամբողջ ուժերը պետք է կենտրոնացնենք տաճիկների դեմ: Արցախին մենք կօգնենք ոչ թե կենդանի ուժերով, այլ ռազմամթերքով եւ դրամով»[2]:

Բ) Լեւոն Շանթի գլխավորած Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը դեռեւս գտնվում էր Մոսկվայում, եւ Հայաստանի կառավարությունը հույս ուներ բանակցությունների միջոցով Խորհրդային Ռուսաստանին ճանաչել տալու ոչ միայն Հայաստանի Հանրապետությունը, այլեւ խաղաղ ճանապարհով լուծելու Արցախի եւ Զանգեզուրի հարցը:

Մայիսի կեսերին Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչները արդեն հասել էին Արցախ եւ Դրոն նրանց պատմածներից որոշակիորեն տեղյակ էր Հանրապետության ներքին եւ արտաքին քաղաքական կյանքում տիրող վերոհիշյալ իրադարձություններին[3]:

Գ). Մայիսի 29-ին ստանալով Դրոյի կողմից դեռեւս մայիսի 21-ին ուղարկված հեռագիրը, որով տեղեկացվում էր Օրջոնիկիձեի ներկայացուցիչների եւ Կարմիր զորամասերի կողմից Արցախում կենսագործվող ձեռնարկումների մասին՝ Հայաստանի Հանրապետության վարչապետ Համո Օհանջանյանը հաջորդ օրը եւեթ բողոքի նոտա է հղում Մոսկվա, արտաքին գործերի ժողկոմ Չիչերինին՝ հայտնելով. «... ապրիլի 20-ին Արցախի գյուղացիությունը 9-րդ համագումարում հաստատել է նախորդ համագումարներում ընդունած Հայաստանի Հանրապետությանը միավորվելու իր որոշումը: Այդ նույն համագումարում խիստ կերպով մերժվել է Ադրբեջանի իշխանությունը ճանաչելու հնարավորությունը, նույնիսկ քաղաքական հեղաշրջման եւ այնտեղ խորհրդային իշխանություն հաստատելու դեպքում:

... Հայաստանի Հանրապետության կառավարությունը չցանկանալով Արցախի բնակչությանը պատճառել նոր թշվառություններ՝ բազմիցս առաջարկել է Ադրբեջանի կառավարությանը, որը ձգտում է զենքի ուժով Արցախի բնակչությանը պարտադրել իր իշխանությունը, հարցը լուծել խաղաղ ճանապարհով՝ երկու հանրապետությունների փոխհամաձայնությամբ:

Այս պահին, երբ երկու պետությունների՝ Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ բարեկամական հարաբերություններ հաստատելու նպատակով իմ կառավարության պատվիրակությունը գտնվում է Մոսկվայում, կոմիսար Օրջոնիկիձեի այն պահանջը, ըստ որի Արցախի բնակչությունը, հակառակ պարզ ու որոշակիորեն արտահայտած իր կամքի, համարվի Ադրբեջանի մասնիկը՝ բոլորովին անհասկանալի է:

... Այժմ դարձյալ արտահայտելով իմ կառավարության բարի ցանկությունը, խնդրում եմ Արցախի բնակչության կամքի ազատ արտահայտվելու հնարավորություն ընձեռելու նպատակին ծառայող հարցերը մեր պատվիրակության հետ քննարկել Մոսկվայում եւ խորհրդային զորքերի կողմից այդ երկրամասը բռնի ներխուժելու դեպքում, նրա բնակչությանը փրկել արյունահեղությունից»[1]:

Դ) Խորհրդային Ռուսաստանի դեմ պատերազմական գործողությունների վերաբերյալ Հայաստանի կառավարությունը Դրոյին հստակ հրահանգ չի տվել եւ չէր կարող տալ, որովհետեւ հայ-ռուսական պատերազմը իր անկանխատեսելի հետեւանքներով ոչ միայն կարող էր վերջնականապես «լուծել» վիճելի տարածքների՝ Արցախի, Զանգեզուրի եւ Նախիջեւանի խնդիրը, այլեւ հարցականի տակ դնել նույնիսկ Հայաստանի Հանրապետության գոյությունը:

2. Ինչպիսի՞ն կլիներ Հայաստանի Հանրապետության կառավարության վերաբերմունքը Դրոյի նկատմամբ, եթե նա, կապի եւ հաղորդակցության միջոցների բացակայության պայմաններում, փորձեր սեփական նախաձեռնությամբ սկսել պատերազմական գործողություններ ընդդեմ ռուսական զորքերի: Չէ՞ որ անհաջողության դեպքում պատասխանատվությունը իր ողջ ծանրությամբ կընկներ Դրոյի վրա: Իսկ անհաջողությունը, չնայած Դրոյի՝ անպարտելի զորապե-

[1] Հարությունյան Հ., նշվ. աշխ., էջ 273:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 1649, գ. 1, էջ 40-41:

[1] ՀԱԱ, ֆ. 368, ց. 1, գ. 5, թ. 182:

տի համբավին, բացառված չէր, քանի որ Կարմիր բանակը, պատերազմը փոքր-ինչ երկարաձգվելու դեպքում, կարող էր իր մարտաշարքերը համալրել ոչ միայն ի հաշիվ ռուսական զորագնդերի, այլեւ առաջին հերթին հենց «Կարմիր Ադրբեջանի» զինական ուժերի:

Ըստ Արամ Սիմոնյանի «Զանգեզուրի գոյամարտը 1918-1921 թթ.» պատմագիտական աշխատությունում տեղ գտած տվյալների՝ մինչեւ խորհրդային կարգերի հաստատումը մուսաֆաթական Ադրբեջանի 30.000 հետեւակ եւ հեծյալ մարտիկներից բաղկացած բանակը ուներ. « ա. մեկ հետեւակային դիվիզիա, որի կազմում կար հինգ գունդ՝ մինչեւ 12.000 սվինով.

բ. երկու գնդերից կազմված մեկ հեծյալ բրիգադ՝ մինչեւ 2800 սրով: Դերբենդի ուղղությամբ՝ Ադրբեջանի եւ Դաղստանի սահմանի վրա, ինչպես նաեւ Կուսարի եւ Կուբայի շրջաններում մուսաֆաթական բանակն ուներ զորքերի անկանոն ջոկատներ, որոնցում հաշվվում էր 8000 մարդ: Բանակն ուներ նաեւ զորքերի այլ տեսակներ.

ա. Անմիջականորեն սահմանի վրա կանգնած էր ժանդարմական դիվիզիոնը:

բ. Բաքվում տեղակայված էր հետեւակային մի գունդ:

գ. Այստեղի յունկերական ուսումնարանն ուներ մինչեւ 500 մարդ:

դ. Քաղաքում կար ոստիկանական պահեստային մի գումարտակ՝ 2000 մարդով»[1]:

Մուսաֆաթական Ադրբեջանի 30.000 թվակազմ ունեցող բանակի գլխավոր ուժերը՝ 20.000 մարտիկներ, կենտրոնացած էին ոչ թե Բաքվի ուղղությամբ, այլ Արցախ-Զանգեզուր հատվածում[2]:

Ադրբեջան ներխուժած Մ. Լեւանդովսկու 11-րդ Կարմիր բանակը բաղկացած էր հետեւյալ զինական ուժերից. «2-րդ հեծյալ կորպուսը(հրամանատար՝ Վոդոպյանով), 32-րդ հրաձգային դիվիզիան (հրամանատար՝ Շտեյգեր), 28-րդ հրաձգային դիվիզիան (հրամանատար՝ Նեստերովսկի) եւ 20-րդ հրաձգային դիվիզիան (հրամանատար՝ Վելիկանով) եւ երկաթուղային մարտական տեղամասը»[3]:

Դրան հակառակ, Դրոն պետք է ապավիներ միմիայն Արցախում գտնվող ուժերին, քանի որ Հայաստանի կառավարությունը, գլխավորապես զբաղված լինելով ներքին թշնամու՝ մայիսյան խռովության, ապա նաեւ հանրապետության թուրքաբնակ շրջանների «խաղաղեցման ու մաքրման» գործերով, դժվար թե կարողանար անհրաժեշտ պահին որեւէ շոշափելի ռազմական օգնություն հասցնել Արցախ:

3. Արդյո՞ք արցախահայությունը պատրաստակամ էր մինչեւ վերջ, զենքը ձեռքին կռվելու Կարմիր բանակի դեմ, որին միացել էին խորհրդային Ադրբեջանի զորքերը: Պատերազմական նախորդ գործողությունները ապացուցեցին, որ արցախահայության մարտունչելու ձգտումն ու մարտական որակները վեր էին ամեն մի գովասանքից: Բայց պատմական ներկա ժամանակահատվածում, երբ բացի թուրքից, ասպարեզում էին հայտնվել հայ բոլշեւիկների կողմից եւ հզոր կարգախոսով առաջնորդվող ռուսական կարմիր զորամասերը, իրավիճակը բոլորովին այլ իմաստ էր ձեռք բերում:

Դրոյի՝ Արցախից հեռանալու կապակցությամբ ՀՀ վարչապետ Հ. Օհանջանյանին, ներքին ու զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանին եւ արդարադատության նախարար Աբ. Գյուլխանդանյանին հասցեագրած հեռագրում(հունիսի 7), իր բողոքն ու անհամաձայնությունն է արտահայտել Զանգեզուրի գեներալ-կոմիսար Ս. Մելիք-Յոլչյանը

«Հունիսի 1-ին,- գրում է,- Մելիք-Յոլչյանը, Դրոն իր ամբողջ ջոկատով թողել է Ղարաբաղը եւ անցել Զանգեզուր: Պատճառը խորհրդավոր է եւ բոլորովին անհասկանալի մեզ: Ղարաբաղում վիճակը անորոշ է: Մեր ձեռքով մենք կործանել ենք Ղարաբաղը: Դրոն անձամբ է իշխանությունը հանձնել բոլշեւիկներին:Ինչպես հայտնում է հենց նոր Ղարաբաղից եկած գնդապետ Մեսյանը, այնտեղ չկան ռուսական բոլշեւիկներ եւ ժողովուրդը տատանվում է: Դրոյի եւ նրա ջոկատի խուճապահար փախուստը Ղարաբաղից Զանգեզուրում ստեղծել է որոշ հուսալքում...»[1]:

Մելիք-Յոլչյանը թեպետ Դրոյի մորաքրոջ որդին էր, բայց նրանց հարաբերությունները միշտ եղել են անսիրալիր ու լարված: Դրոն չի համակրել իր մորաքրոջ տղային, նրան անվանել է անպտուղ, անբան ու դատարկամիտ: Երբ Մելիք-Յոլչյանին նշանակել են Զանգեզուրի գեներալ-նահանգապետ, իսկ գնդապետ Ղազարյանին շնորհելով գեներալ մայորի աստիճան՝ գավառի մարտական ուժերի հրամանատար, Դրոն, ինչպես նաեւ Նժդեհը, խիստ ընդդիմացել ու պահանջել են նրանց՝ որպես անտաղանդ ու անաժան գործիչների, հեռացնել զբաղեցրած պաշտոններից[2]:

Ճիշտ է, Դրոն հեռանում է Արցախից, ինչպես նշում է Մելիք-Յոլչյանը, բայց նրա հաղորդածը, կարելի ասել, ուռճացած է:

---

[1] Սիմոնյան Ա., նշվ. աշխ., էջ 46:
[2] Նույն տեղում, էջ 74:
[3] Նույն տեղում:

---

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 51, թ. 3:
[2] Տե՛ս Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 671:

Նախ, նա իր զորամասով Արցախից չի հեռացել խուճապահար:

Ճիշտ է, Ադրբեջանում արդեն հաստատվել էր խորհրդային իշխանություն, եւ բոլշեւիկները ժողովրդին սիրաշահելու նպատակով շարունակում էին խաղաղություն պահպանելու բազմաթիվ շռայլ խոստումներ տալ, բայց, այնուամենայնիվ, հայերի եւ ազերիների միջեւ խաղաղ եւ կայուն փոխհարաբերություններ հաստատելու համար որեւէ իրական երաշխիք դեռեւս գոյություն չուներ: Անհրաժեշտ էր արցախահայության ինքնապաշտպանությունն ապահովելու համար որոշակի քայլեր ձեռնարկել: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ Դրոն որոշում է Արցախում հայ բոլշեւիկների տնօրինությանը հանձնել զենքի եւ զինամթերքի որոշակի պաշար: Այդ մասին հետագայում 1921 թ. հունվարի 26-ին թվագրված նամակներից մեկում խոստովանում է Գ.Նժդեհը. «Արցախից հաղորդում են ինձ. «Քշեցինք թշնամուն Տողայ, Տումայ, Թաղլարու, Թաղավարդու, Ջանախչու եւ Սարգիսաշենի շրջաններից (խոսքը 1921 թ. խորհրդային բանակի դեմ Արցախի Դիզակի շրջանի (Հադրութ) հայության Թեւանի գլխավորած ապստամբության մասին է - Հ.Գ.):

Վերցրինք Դրոյի թողած 7 գնդացիրները, աւելի քան 100.000 փամփուշտը, 2 թնդանոթ, շատ սնարիադ (արկ) եւ անցնելով յարձակման՝ վերցրինք 100 աւելի գերի... »[1]:

2. Գնդապետ Մեսյանը չէր կարող ասել, որ Արցախում չկան ռուսական բոլշեւիկներ, քանի որ մայիսի 21-ին հազիվ է կարողացել փրկվել կարմիր բանակի հարյուրյակի ու նրան միացած հայ բոլշեւիկների հարձակումից:

Հայաստանի Հանրապետության արտաքին գործոց նախարարությանն ուղղված զեկուցագրում նշվում է. «Արցախից մայիսի 23-ին ստացված տեղեկատվությունում ասվում է, որ բոլշեւիկները ուժեղացրել են իրենց գործունեությունն ու քարոզչությունը: Խաչենի, Ջիվանշիրի եւ Գյուլիստանի շրջաններում, ուր մուտք են գործել ռուսական զորամասերը, հաստատվել է խորհրդային իշխանություն: Համաձայն այդ նույն տեղեկության՝ Վարանդան եւ Դիզակը նույնպես մտադիր չեն դիմադրելու ռուսական զորքերին»[2]:

«Մայիսի 18-ին, - նշում է Արսեն Միքայելյանը,- Դրոյի հրահանգով մի քանի սպաներ անցնում են Վանք՝ Զ. Մեսեանին օգնելու եւ այդ շրջանը ուժեղացնելու, բայց դեռ Խաչէնը չհասած վերադառնում են, լուր ստանալով, որ Խաչէնի շրջանը բոլշեւիկացել է:

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 46, գ. 2:
[2] ՀԱԱ, ֆ. 368, ց. 1, գ. 5, թ. 182:

Մայիսի 21-ին Ջիւանշիրի հայ բոլշեւիկները՝ միացած ռուս կարմիր բանակի մի հարիւրեակ ձիաւորների հետ, յարձակւում են Վանք գիւղի վրայ՝ գնդապետ Զ. Մեսեանին ձերբակալելու, բայց չեն կարողանում:

Այդ ժամանակամիջոցում ռուսական որոշ զօրամասեր են տեղափոխում դէպի Շուշի եւ Զանգեզուր:

Եվ այդպիսով, հակառակ Դրոյին եւ Վարիչներու խորհրդի թափած աշխատանքներուն եւ կազմակերպած բանակին, Արցախը դրւում է նոր անակնկալի առջեւ»[1]:

Հանրապետության կառավարության հետ կապի բացակայությունն ավելի է ծանրացնում առանց այդ էլ անորոշ ու անելանելի իրավիճակը: Մայիսի 24-ին Արցախում տիրող կացության վերլուծության եւ հետագա անելիքները ճշտելու նպատակով Դրոն Ջանախչի գյուղում հրավիրում է խորհրդակցություն:

Պատմում է խորհրդակցության մասնակից վերոհիշյալ Արսեն Միքայելյանը.

«Ջանախչի գիւղի մէջ տեղի է ունենում Հայաստանից եկած պաշտօնեաներու՝ Դրօյի, Նժդեհի, գնդապետ Միրիմանեանի եւ Ա. Միքայելեանի (այս տողերի հեղինակը - Հ.Գ.) խորհրդակցութիւնը, որի մէջ պարզւում է.

Ա) Որ Արցախի ժողովրդի տրամադրութիւնները զգալապէս փոփոխութեան ենթարկուած եւ աստիճանաբար կարող են վերածուել թշնամութեան.

Բ) Որ մայիսի 12-ից սկսեալ Հայաստանի կառավարութենէն հակառակ բազմիցս եղած դիմումների, ոչ մի տեղեկութիւն չի ստացուել, ապա ուրեմն Հայաստանի Հանրապետութիւնը գտնւում է օրհասական վտանգի մէջ:

Գ) Որ Նժդեհի Ղափանի զօրամասը չի կարող երկար մնալ Արցախում, որովհետեւ բոլորն էլ գիւղացիներ են եւ կամաւոր ու կը կամենան վերադառնալ դաշտային աշխատանքներու լծուելու:

Դ) Որ ռուսական բանակի որոշ զօրամասեր, խճուղու վրայով, գրաւում են կարեւոր դիրքեր, որով կտրում են Արցախի հայկական զօրամասի նահանջի ճամբան»[2]:

Այս բոլոր հանգամանքները նկատի առնելով՝ խորհրդակցության մասնակիցները որոշում են իշխանությունը հանձնել հայ բոլշեւիկներին եւ մայիսի 26-ին անցնեն Զանգեզուր:

[1] «Հայրենիք» ամսագիր, 1923, հոկտեմբեր, էջ 126:
[2] Նույն տեղում:

Արցախից Դրոյի հեռանալուն իր հուշագրքում անդրադարձել է նաեւ Ա. Կիսիբեկյանը՝ ընդամին չեշտելով այդ գործում արցախահայության դրսևորած վերաբերմունքն ու տրամադրվածությունը:

Նրա հավաստմամբ՝ «Կարմիր բանակի ներկայացուցիչների Ղարաբաղում երևալը և այն, որ շուտով Կարմիր բանակը Ղարաբաղ պիտի մտնի, կայծակի արագությամբ տարածվելով՝ մեծ ոգևորություն ու խանդավառություն առաջ բերավ Ղարաբաղի ողջ աշխատավորության մեջ:

Գեներալ Դրոն, տեսնելով ու զգալով Լեռնային Ղարաբաղի ժողովրդի տրամադրությունը, որոշեց իր բռնելիք դիրքը. նա շատ լավ հասկացավ իրերի դրությունը, որոշեց իր բանակով ու գործիչներով հեռանալ Ղարաբաղից»[1]:

Ա. Կիսիբեկյանի գնահատմամբ՝ Կարմիր բանակի մուտք գործելուց հետո Դրոն կամ պիտի կամովին զինաթափվեր, կամ պիտի սկսեր եղբայրասպան քաղաքացիական կռիվ, որին «նա դեմ էր՝ հոգով ու համոզմունքով:

Բավական երկար խորհելուց հետո Ղարաբաղի իշխանությունը հանձնեց բոլշևիկյան կազմակերպության ղեկավար բժիշկ Համբարձումյանին ու ինքն իր բանակով ու տեղի գործիչներով հեռացավ Ղարաբաղից»[2]:

Հայաստանի Հանրապետության արտաքին գործոց նախարարությանը հասցեագրված զեկուցագրում անդրադառնալով այս հարցին՝ նշվում է. «Քաղաքական հետագա իրադրությունը դասավորվեց այնպես, որ Դրոն ստիպված Արցախից անցել է Զանգեզուր:

Մայիսի 28-ին նա մուտք է գործել Գորիս»[3]:

Իր «Լեռնային Արցախը 1918-1921» աշխատությունում անդրադառնալով Արցախից Դրոյի գլխավորած զորամասի դուրս գալու իրողությանը՝ պատմագիտության դոկտոր Հ. Հարությունյանը, ի թիվս մի շարք էական գործոնների, առանձնապես կարեւորում է արցախահայության դիրքորոշումն ու վերաբերմունքը:

Հիմք ունենալով նաեւ «Մայիսի 23-ին Արցախից Հայաստանի կառավարությունը տեղեկություն ստացավ այն մասին, որ Խաչենը, Ջիվանշիրը եւ Գյուլիստանը (ներկայիս Ասկերանի, Մարդակերտի եւ Շահումյանի շրջանները-Հ.Գ.), ուր մտել են ռուսական զորքերը, իրենց հռչակել են խորհրդային» եւ «Համաձայն նաեւ լուրերի, Վարանդան եւ Դիզակը նույնպես տրամադրված չեն դիմադրություն

[1] Կիսիբեկյան Ա., Հուշերը, հ. 1, էջ 508-509:
[2] Նույն տեղում:
[3] ՀԱԱ, ֆ. 368, ց. 1, գ. 5, թ. 182:

ցույց տալու ռուսական զորքերին » փաստերը՝ Հ. Հարությունյանը գրում է. «Արցախցին բարեհամբույր գտնվեց ռուս զինվորի նկատմամբ: Նա հույս էր տածում, թե Արցախի խորհրդայնացումը հնարավորություն կտա վերամիավորվել մայր հայրենիքի հետ»[1]:

Արցախում տիրող կացության վերլուծությամբ Հ. Հարությունյանը հանգում է հետեւյալ եզրահանգման. «...քաղաքական հանգամանքները դասավորվեցին այնպես, որ Դրաստամատ Կանայանը ստիպված էր բավարարել կարմիր բանակի հրամանատարության պահանջը՝ հեռանալ Արցախի սահմաններից: Կրկնում ենք՝ Արցախի ներքին վիճակը անկայուն էր: Գյուղացիությունը բարոյալքվել էր, չէր պայքարում օտարի սպառնացող վտանգի դեմ...»:

Ավելին, նրա համոզմամբ, եթե Դրոն չհեռանար Արցախից, ապա պատերազմը Խորհրդային Ռուսաստանի հետ դառնալու էր անխուսափելի, իսկ այդ պարագայում «...դժվար չէր պատկերացնել, թե Ռուսաստանի հետ զինված առճակատումը ինչ աղետալի հետեւանքներ կարող էր ունենալ Արցախի եւ Հայաստանի Հանրապետության համար»[2]:

Ուշագրավ է ՀՀ զինվորական ուժերի հրամանատարության շտաբի պետ, գնդապետ Վեքիլովի եւ գլխավոր շտաբի աշխատակից, գնդապետ Գրիտոմանովի պատրաստած Հայաստանի ռազմաքաղաքական իրավիճակը (1920թ. հունվարի 1-ից մինչեւ ապրիլի 1ը) ներկայացնող տեղեկագիրը: Այդ փաստաթղթում նրանք համառոտակի վերլուծում են Հայաստանում, մասնավորապես Կարսի նահանգում, Շարուր-Նախիջեւանի, Սուրմալուի շրջաններում, ինչպես նաեւ Զանգեզուրում ու Արցախում տիրող իրավիճակը, եւ վերջում որպես ընդհանրացնող եզրահանգում՝ նշում են. «Ինչպես որ սպասվում էր, գարնան գալու հետ միասին, կացությունը Հայաստանում անհամեմատ բարդացել է: Զանգեզուրում ու Արցախում տեղի ունեցող իրադարձությունները սպառնում են Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ վերածվել բացահայտ առճակատման...

Կարսի նահանգից եկող տագնապալի տեղեկությունները հաստատում են Հայաստանի Հանրապետության սահմանների մոտ թուրքական զորքերի կենտրոնացման եւ դեպի Մարդենեկի ու Սարիղամիշի շրջանները շարժվող սահմանամերձ քոչվոր ցեղախմբերի գործողությունների մասին: Նախիջեւանում, Շարուրում եւ Իգդիրում հենց վերջերս կրած պարտությունները զրկել են մահմեդա-

[1] Հարությունյան Հ., նշվ. աշխ., էջ 273:
[2] Նույն տեղում:

կաններին գործուն կերպով ադրբեջանական կառավարությանը աջակցելու հնարավորությունից: Իսկ Ադրբեջանը ձգտում է զավթել հայկական վաղնջական հողերը եւ այդ տարածքներով միավորվել Թուրքիայի հետ:

Հայաստանը ոչ միայն չի կարող ձեռնամուխ լինել ավերված երկրի վերաշինությանը, այլ պետք է նորից իր ողջ ուժերը պահպանի, որպեսզի խուսափի թշնամու դուրս քաշած սրի հարվածներից:

Միայն Դաշնակիցների զորքերի իրական օգնությունը կարող է կասեցնել հայ ժողովրդի գոյությանը սպառնացող մուսուլմանների ոտնձգությունները»[1]:

Վեքիլովի եւ Պրիտոմանովի ստորագրությամբ Հայաստանի իրավիճակը ներկայացնող փաստաթղթում տեղ գտած եզրահանգումները միայն նրանց կարծիքը չէ: Անկասկած, փաստաթուղթ ստորագրողները գուցե ոչ ամբողջությամբ, այլ գոնե մասամբ ներկայացնում են ՀՀ զինվորական նախարարության գլխավոր շտաբի տեսակետը: Քանի որ այդ ժամանակահատվածում Խորհրդային Ռուսաստանը դեռեւս չէր ներխուժել Անդրկովկաս, ուստի այդ փաստաթղթում խոսք անգամ չկա Հայաստանի նկատմամբ ապագայում հյուսիսից սպասվող սպառնալիքների ու ոտնձգությունների մասին: Իսկ այժմ արդեն հայտնվել էր հյուսիսային հզոր տերությունը՝ Խորհրդային Ռուսաստանը եւ վերջնագիր ներկայացրել Հայաստանի Հանրապետությանն ու Արցախին:

Ինչ խոսք, որ այդ ամենին քաջատեղյակ էր նաեւ Դրոն:

Այո՛, որեւէ կասկած լինել չի կարող, որ այդ ժամանակահատվածում Խորհրդային Ռուսաստանի դեմ պատերազմելը կարող էր անկանխատեսելի ծանրագույն հետեւանքներ ունենալ Արցախի եւ Հայաստանի Հանրապետության համար: Դրոն չէր կարող իր վրա վերցնել եւ չվերցրեց համանման պատասխանատվություն, որը կարող էր ճակատագրական նշանակություն ունենալ Հայաստանի ու ողջ հայության գոյության պահպանման եւ ապագայի համար:

Դրոյի՝ Արցախից հեռանալու մասին յուրօրինակ բացատրություն է տալիս Կ. Սասունին: Նրա գնահատմամբ՝ մայիսյան ապստամբության ժամանակ ապստամբների կողմից Ալեքսանդրապոլի, Կարսի, Նոր Բայազետի գրավման լուրը «...կայծակի արագությամբ հասած էր Զանգեզուրէն Արցախ, ուր թէ՛ Դրօն եւ թէ՛ տեղական ազգաբնակչութեան մեծ մասը հաւատացած են, որ ամբողջ Հայաստանը անցած է բոլշեւիկներու ձեռքը: Ուրեմն, կրկնակի պատճառներ ստիպեցին Դրօն, որ Մայիսի 10-17-ին ձգէ Հայկական Արցախը եւ գործերն ու ռազմամթերքը յանձնէ բոլշեւիկ ղեկաւարներ՝ Սահակ Տէր Գաբրիելեանին եւ Համբարձումեանին...»[1]:

Արցախից Դրոյի զորամասի հեռանալու օրերին Թուրքիայի զինվորական նախարար Էնվեր փաշայի եղբոր՝ Նուրի փաշայի գլխավորությամբ Գանձակում ընդդեմ խորհրդային իշխանության բունկվում է ապստամբություն: Նուրի փաշայի գլխավորած մուսավաթական հրոսակախմբերը շրջապատում են Գանձակում գտնվող Կարմիր բանակի զորամասերին եւ սպառնում ոչնչացնել պաշարման մեջ հայտնված խորհրդային զորքերին: Այդ ճակատագրական պահին պաշարված խորհրդային զորքերին անխուսափելի կոտորածից փրկում են հայ մարտական ուժերը: Գյուլիստանի եւ Բանանցի մարտական ուժերը գնդապետ Եգոր Տեր-Ավետիքյանի ընդհանուր հրամանատարությամբ Գանձակի Բաղմանլարի ուղղությամբ սրընթաց հարձակում են ձեռնարկում Նուրի փաշայի գլխավորած թուրքական զորքերի վրա ու գլխովին ջախջախելով նրանց՝ փրկում են շրջափակման մեջ հայտնված Կարմիր բանակի զորամասերը[2]:

Ա. Կիսաբեկյանի հավաստմամբ՝ Գանձակում բռնկված մուսավաթական ապստամբությունը խիստ մտահոգել է բժիշկ Համբարձումյանին, որին Դրոն հանձնել էր Արցախի իշխանությունը: Նրան մտահոգել է այն հանգամանքը, որ ապստամբությունը կարող էր ծավալվել ու խորանալ, եւ թուրքերն օգտվելով այդ իրավիճակից՝ կարող էին հարձակվել անպաշտպան Արցախի վրա:

Առաջնորդվելով այդ մտավախությամբ՝ բժիշկ Համբարձումյանը հարկադրված «Շուշվա Ղուկասյան դպրոցի ուսուցիչ Գրիգոր Ղարագյոզյանին ուղարկում է Զանգեզուր՝ Դրոյին խնդրելու, որ Զանգեզուրից չհեռանա մինչեւ Կարմիր բանակը Ղարաբաղ մտնելը: Նա ասում է. «Միգուցե Ձեր վերադարձը նորից Ղարաբաղ անհրաժեշտություն է դառնում»[3]:

Իզուր էին բժիշկ Համբարձումյանի տագնապն ու մտավախությունը: Գնդապետ Եգոր Տեր-Ավետիքյանի գլխավորած հայ մարտական ուժերի աջակցությամբ ազատվելով շրջափակումից, Կարմիր բանակի զորամասերը ճնշում են Գանձակում բռնկված Նուրի փաշայի գլխավորած ապստամբությունը, ապա մուտք են գործում Արցախ:

---

[1] Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն, փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու), էջ 180:

[1] Սասունի Կ., «Մայիսեան խռովութիւնները եւ թաթարական ապստամբ շրջանները», 1968, էջ132:

[2] Տե՛ս Կիսիբեկյան Ա., Հուշերը, հ. 1, էջ 509:

[3] Նույն տեղում, էջ 509:

Հանրահայտ իրողություն է. արցախահայությունը որոշակի հավատ է ընծայել Ռուսաստանի նկատմամբ եւ այդ հավատը շարունակվում էր պահպանվել անկախ Ռուսաստանի կարգավիճակից՝ ցարական է, թե խորհրդային:

Արցախահայությունը, ըստ Կիսիբեկյանի վկայության՝ Արցախ մուտք գործած զորամասերին դիմավորում է «... մի մարդու պես՝ մեծ սիրով ու խանդավառությամբ՝ համոզված լինելով, որ եկել է իր ամենաազնիվ բարեկամը, իր իղձերի իրականացնողը»[1]:

Ինչպե՞ս բացատրել Արցախ մուտք գործած Կարմիր բանակի զորամասերի նկատմամբ արցախահայության դրսեւորած ջերմ ու խանդավառ վերաբերմունքը: Ի՞նչ հանգամանքներով էր պայմանավորված արցախահայության համանման վերաբերմունքը:

Ա. Կիսիբեկյանի գնահատմամբ՝ արցախահայությունը համոզված էր, որ «...իր հայրենիքի հետ միացումը վերջնականապես ապահովված է և դաժան թշնամին զրկված կլինի հնարավորությունից շարունակելու իր դավադիր գործողությունները:

...առանց որևէ կասկածի համոզված էր, որ եկել է իր իսկական բարեկամը, իր արդար դատավորը, մարդկային ու ազգային իրավունքների ամենամեծ ու հավատարիմ պաշտպանը և որ միանգամայն ապահովված կլինի բազմաթիվ զոհաբերություններով ու զրկանքներով ձեռք բերած իր ազատությունը:

Իսկ թե որքանո՞վ կարդարանան այդ մի բուռ ժրաջան, քրտնաջան, կենսունակ, ազատասեր ու հայրենասեր ժողովրդի հույսերը, որքանո՞վ կապահովվեն նրա մարդկային ու ազգային տարրական իրավունքները, դա ցույց կտա մոտիկ ապագան...»[2]:

Շատ շուտով պարզվում է Արցախ մուտք գործած խորհրդային Կարմիր բանակի հրամանատարության իրական նպատակը: Զբավարարվելով Արցախը «խորհրդայնացման» ճանապարհով նվաճելուց՝ Կարմիր բանակի զորամասերն աստիճանաբար ներխուժում են նաեւ Զանգեզուր, եւ այնտեղ հանգրվանած Դրոյի զորամասը դարձյալ հայտնվում է դժվարին իրավիճակում:

Այդ օրերին հայկական զորաբանակի թիկունքում՝ Կարմիր բանակին օգնելու նպատակով, հայ բոլշեւիկները գործուն աշխատանք էին ծավալել ոչ միայն Արցախում, այլ նաեւ Զանգեզուրում: Հետագայում խորհրդահայ որոշ պատմաբաններ հայ բոլշեւիկների կողմից Զանգեզուրում ծավալած գործունեությունն արդարացնելու դիտավորությամբ իրենց աշխատություններում փորձել են Հայաստանի Հանրապետության զորամասի դեմ Զանգեզուրում այդ օրերին ձեռնարկած գործողությունները որակել որպես համաժողովրդական շարժում, եւ այդ հողի վրա անարգանքի սյունին գամել Դրոյին ու նրա զինակիցներին:

«ՌԿ (բ) Կ Կենտկոմը եւ սովետական կառավարությունը, - գրում է Ք. Ա. Խուդավերդյանը «Զանգեզուր» գրքում, - ընդառաջելով տեղական բնակչության ցանկությանը, նպատակահարմար գտան ազատագրել Լեռնային Արցախի, Զանգեզուրի եւ Նախիջեւանի երկրամասերը»[1]:

Ծանոթանալով այս տողերին՝ կարելի է մտածել, որ այդ օրերին հիշյալ երկրամասերի բնակչության շրջանում հանրաքվե է անցկացվել, որի արդյունքում ժողովուրդը միանշանակ պահանջել է հրավիրել Կարմիր բանակին՝ «ազատագրելու» իրեն Հայաստանի Հանրապետության իշխանությունների լծից:

Իրականում բոլշեւիկյան իշխանությունը իր երկրամասում տեսնելու ժողովրդի պահանջն ու ցանկությունը արտահայտող որեւէ փաստաթուղթ գոյություն չունի, չհաշված բոլշեւիկյան տեղական կազմակերպությունների կողմից գաղտնաբար տարածվող թռուցիկների, որոնց միջոցով աշխատում էին կեղծ քարոզչությամբ խաբել գյուղացիներին եւ ապակայունացնելով իրավիճակը՝ հեշտացնել խորհրդային զորքերի առաջխաղացումը:

Դրոյի զորաբանակի դեմ զանգեզուրցիներին տրամադրելու նպատակով Զանգեզուրի բոլշեւիկյան գավառային կոմիտեն տարածում է հետեւյալ կոչը.

«Ժողովրդական ապստամբությունը Զանգեզուրում եւ նրա շրջակա գյուղերում արդեն սկսված է: Շարժումը ուղղված է Արցախից դարձող հրոսակապետեր Դրոյի եւ Նժդեհի բանակների դեմ...

Խնձորեսկն արդեն ապստամբել է եւ խորհրդային իշխանություն հաստատել, նույնը պատրաստվում են անել շրջակա մի քանի գյուղերը... Ապստամբությունը ընդհանուր դարձնելու համար Սիսիանի բոլոր ընկերներն ու ամբողջ մասսաները պետք է ապստամբության դրոշ պարզեն եւ պատկառելի ուժերով շարժվեն դեպի Գորիս՝ մեզ օգնության հասնելու, որպեսզի գազանը հենց ճանապարհին (իսկ այժմ Կոռնիձոր է հաստատված, ուզում է ամրանալ Տեղ գյուղում) սպանվի...»[2]:

Այս կարգի իմաստազուրկ, կեղծ ու մտացածին կոչերով չափազանց դժվար էր ապակողմնորոշել ու մոլորեցնել զանգեզուրցինե-

[1] Նույն տեղում, էջ 509-510:
[2] Նույն տեղում, էջ 512:

[1] Խուդավերդյան Ք., Զանգեզուր, Երեւան, 1958, էջ 68:
[2] Սողոմոնյան Ա., Քաղաքացիական կռիվները Զանգեզուրում, Երեւան, 1958, էջ 41-42:

ին, որոնք քաղաքացիական էին, որ բոլշևիկների կողմից «հրոսակապետեր», «գազան» հորջորջվողը հենց Դրոն եւ Նժդեհն էին, որոնք ընդամենը մի քանի ամիս առաջ կազմակերպեցին եւ ղեկավարեցին Զանգեզուրն իրենց դարավոր թշնամուց մաքրելու անգնահատելի գործողությունները:

Այնուամենայնիվ, դյուրահավատներ եւ մոլորվածներ միշտ էլ գտնվում են:Արցախից Զանգեզուր ձգվող ճանապարհին հայկական զորագնդին հարկ է լինում հաղթահարել մի չսպասված խոչընդոտ:

Խնձորեսկ գյուղում կեղծ խոստումներով ու ստերով մոլորեցնելով տեղի բնակիչներին՝ բոլշևիկները կազմում են մի քանի խմբեր եւ դիրքեր գրավելով գյուղի շրջակա բլուրների հետեւում նպատակադրվում են անակնկալ հարձակումով զինաթափել ու ձերբակալել Դրոյին, Նժդեհին ու մյուս հրամանատարներին:

Զանգեզուրի բոլշևիկյան գավառային կոմիտեի անդամ Նիկոլայ Արզումանյանի «Հիշողություններ Զանգեզուրի քաղաքացիական կռիվների...» խորագիրը կրող գրառումներից պարզվում է, որ Խնձորեսկի բոլշևիկները մինչեւ առավել մեծ ծավալի գործողություններ ձեռնարկելը, մայիսի 28-ին ձերբակալում են դաշնակցության ներկայացուցիչներին, գրավում նրանց շտաբը եւ ոգեւորված ձեռք բերած «հաջողությունից», զենքերը ցած դնելու, այսինքն զինաթափվելու ու հանձնվելու պահանջով վերջնագիր են ներկայացնում Արցախից նոր-նոր վերադարձած Դրոյին եւ Նժդեհին[1]:

Միանգամայն պարզ եւ հասկանալի է Խնձորեսկում բույն դրած մի քանի բոլշևիկների զավեշտալի ու ամոթալի վերջնագրի նկատմամբ Դրոյի եւ Նժդեհի դրսեւորած վերաբերմունքը: Բնականաբար չստանալով որեւէ պատասխան, հայ բոլշևիկները փորձում են ծուղակ պատրաստել: Խնձորեսկին մոտենալու պահին հայկական զորագնդի վրա է թափվում նրանց զինախմբերի մրրկային կրակը: Դրոն եւ Նժդեհը, ակնթարթորեն կողմնորոշվելով, շրջանցում են բլուրներն ու կարճատեւ հարվածներից հետո փախուստի են մատնում Ղարագոզյանի խմբերին եւ ապա առանց որեւէ դիմադրության մուտք գործում Խնձորեսկ:

«Դրոն եւ Նժդեհը, - գրում է Արտեմ Խանզատյանը,-իրենց ուժերով պաշարում են Խնձորեսկ գիւղը եւ պահանջում ապստամբների ղեկավարներին, սպառնալով գիւղը աւերակի վերածել:

Միւս առաւօտեան, խնձորեսկցիները բերում են Մկրտիչ Ղարագյոզեանին, եւ երկու ուրիշներին, որոնք գնդակահարուեցան»[2]:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, ց. 4, գ. 73, թ. 41:
[2] Աւօ, Նժդեհ, Պէյրութ, 1968, էջ 485:

Ն. Արզումանյանը խտացնելով ու գունազարդելով Խնձորեսկում կազմակերպած իրենց թույլ ձեռնարկումները եւ այն արդարացնելու միտումով նշում է. «...Խնձորեսկի բոլշևիկները, իհարկե, խիզախ եւ անձնազոհ քայլի դիմեցին: բայց նրանք մնացին միայնակ, չստացան պատշաճ ղեկավարություն, չկարողացան համախմբել բոլոր ուժերը: Դաշնակցության մեծաթիվ զորքերի դեմ հանդիման միայնակ մնալով, Խնձորեսկի բոլշևիկները ստիպված եղան նահանջել, ընդհատակ անցնել կամ Ադրբեջան գնալ: Մայիսի 29-ին Խնձորեսկում արդեն դաշնակներն էին իշխում:

Այդ ապստամբության հիմնական պատճառն այն էր, որ Խնձորեսկը մնաց միայնակ, օգնություն չստացավ»[1]:

Զանգեզուրի գավառային կոմիտեի անդամի խոստովանությունը լավագույն ապացույցն է այն իրողության, որ այդ ժամանակահատվածում բոլշևիկյան կառույցները Զանգեզուրում դեռեւս չէին հասցրել տարածվել ու արմատավորվել եւ շատ թույլ էին: Եւ հենց դա էր այն հիմնական պատճառը, որ, համաձայն Ն. Արզումանյանի բնորոշման՝ «Խնձորեսկը մնաց միայնակ ու օգնություն չստացավ»:

Խորհրդահայ պատմաբան Ս. Վարդապետյանը, առավելագույնս ուռճացնելով այդ իրողությունը եւ Դրոյին վարկաբեկելու եւ նրա գործունեությունը հանիրավի խեղաթյուրելու նպատակով, գրում է. «Մայիսի 27-28-ին դաշնակցական զինված բանդաները Դրոյի հրամանատարությամբ մտան Խնձորեսկ: Թեպետեւ Ռազմա-ռեւոլյուցիոն կոմիտեի ջոկատները ուժեղ դիմադրություն ցույց տվեցին թշնամուն, բայց ուժերը անհավասար էին, եւ, ի վերջո, ապստամբները թողեցին գյուղն ու հեռացան:Դաշնակ Դրոն իր ջոկատներով շտապեց դեպի Սիսիան, ճնշեց այնտեղի ապստամբությունը եւ տանջամահ արեց գյուղացիներին, հատկապես ձերբակալեց կոմունիստներին»[2]:

Խնձորեսկի դեպքերին իր հեղինակած «Զանգեզուրյան դրվագները 1917-1921 թթ.» գրքույկում անդրադարձել է նաեւ Ա. Լալայանը: Համաձայն նրա տվյալների, Խնձորեսկի ռազմա-հեղափոխական կոմիտեի վերջնագիրը Կոռնիձոր-Խնձորեսկ ճանապարհին, Կուրաթի գետի մոտ Դրոյին հանձնել է Բախչի Առուշանյանը: Ստանալով վերջնագիրը՝ ըստ Ա. Լալայանի, «Նա կատաղում է: Նրա հրամանով գնդապետ Թարխանովի գլխավորած հեծելազորը սրընթաց հարձակվում է գյուղի վրա...

[1] ՀԱԱ, ֆ. 1021, ց. 4, գ. 73, թ. 41:
[2] Վարդապետյան Ա., Հայաստանի Կարմիր բանակը քաղաքացիական կռիվներում 1920-1921 թթ., Երեւան, 1960, էջ 15:

Խմբապետ Դրոյի հրոսակները մայիսի 28-ին առանց որևէ դիմադրության մտնում են Խնձորեսկ և հրապարակորեն գնդակահարում ռազմա-հեղափոխական կոմիտեի անդամ Իսկանդար Էքստիբարյանին ու Արմենակ Ղարագյոզյանի հորը՝ անկուսակցական Մակիչ Ղարագյոզյանին»[1]:

Ըստ Ա. Լալայանի հեղինակած վերոհիշյալ գրքույկում տեղ գտած չինծու տվյալների՝ բոլշևիկյան շարժումը ծավալվել է նաև Սիսիանի շրջանում, որտեղ կոմունիստների զինված խմբերը կարողանում են ձերբակալել Հ.Յ.Դաշնակցության տեղական իշխանության ներկայացուցիչներին, որոնց թվում նաև Սիսիանի մարտական ուժերի հրամանատար Պողոս Տեր-Դավթյանին: Ա. Լալայանի պնդմամբ՝ հեղափոխական կոմիտեի հրավերով բանակցություններ վարելու նպատակով, Դրոն ընդամենը յոթ զինվորների ուղեկցությամբ մեկնում է Բռնակոթ: Ա. Լալայանի գնահատմամբ՝ ընդամենը յոթ զինվորի ուղեկցությամբ Բռնակոթ մեկնելը Դրոյի կողմից մտածված խորամանկ քայլ էր: Իսկ ապստամբության զինված ջոկատների ընդհանուր հրամանատար Եղո Իսկանդարյանն՝ անտեղյակ Բռնակոթում կատարվող դեպքերից, իր գլխավորած մարտիկներով դարանակալած սպասում էր հեղափոխական կոմիտեի կարգադրությանը՝ սկսելու մարտական գործողությունը:

«Բանակցությունները վերջանալուց հետո,-գրում է Ա. Լալայանը,- խմբապետ Դրոյին հաջողվում է ապստամբության զինված ջոկատների ընդհանուր հրամանատար Եղո Իսկանդարյանին հանձնարարությամբ ուղարկել Երևան, որտեղ 1920 թվականի օգոստոսի 18-ին դաշնակցականները գնդակահարում են նրան...»[2]:

Ն. Արզումանյանը իր գրառումներում նույնպես նշում է, որ Դրոն գլուխ բարձրացրած բոլշևիկյան շարժումը ճնշելու նպատակով արշավել է մյուս շրջաններ, այդ թվում նաև Սիսիան: Թեպետ նա խիստ ուռճացած է ներկայացնում Դրոյի գլխավորած զորամասի զինվորների քանակը՝ 1500-2000, բայց ի տարբերություն այլ ձեռնարկումները եւ այն արդարացնելու միտումով նշում է. «... Խնձորեսկի բոլշևիկներն, իհարկե, խիզախ ու անձնազոհ քայլի դիմեցին: Բայց նրանք մնացին միայնակ, չստացան պատշաճ ղեկավարություն, չկարողացան համախմբել բոլոր ուժերը: Դաշնակցության մեծաթիվ զորքերին դեմ հանդիպման միայնակ մնալով, Խնձորեսկի բոլշևիկները ստիպված եղան նահանջել, ընդհատակ անցնել կամ

[1] Լալայան Ա, «Զանգեզուրյան դրվագները 1917-1921 թթ.», Երեւան, 1985, էջ 47::
[2] Նույն տեղում:

Ադրբեջան գնալ: Մայիսի 29-ին Խնձորեսկում արդեն դաշնաբետ նա խիստ ուռճացած է ներկայացնում Դրոյի գլխավորած զորամասի զինվորների քանակը՝ 1500-2000, բայց ի տարբերություն Ս. Վարդապետյանի, չի նշում Սիսիանի հայ գյուղացիների նկատմամբ «Դաշնակ Դրո»-ի գործած բռնությունները: Եթե իրականում նրա եւ Նժդեհի զորամասերի մարտիկները Զանգեզուրում եւ Սիսիանում փոքր-ինչ բռնություններ գործադրեին հայ գյուղացիների նկատմամբ, ապա բոլշևիկյան գավառային կոմիտեի անդամ՝ Ն. Արզումանյանը, երբեք չէր զլանա ու ձեռքից բաց թողներ նրանց գործած «մեղսագործություններն ու բռնությունները» բազմապատիկ անգամ առավել գունազարդված ներկայացնելու պատեհ հնարավորությունը[1]:

Շարունակելով ոչ մի սկզբնաղբյուրով չփաստարկված մտացածին պատմությունը՝ Ա. Վարդապետյանը գրում է. «Մայիսի 28-ին զինված ապստամբություն բռնկվեց Խնձորեսկում: Ապստամբությունը հաջող ավարտելու համար Զանգեզուրի գավառային կոմիտեն հատուկ նամակով դիմեց Ադրբեջանում գտնվող 11-րդ բանակի շտաբին, խնդրելով օգնություն»[2]:

Դժվար չէ հասկանալ, որ խորհրդահայ պատմաբանների այս կարգի դատողությունների բուն միտումն ու նպատակը հայ բոլշևիկների կողմից Խորհրդային Ռուսաստանի Կարմիր բանակի զորամասերին աջակցելու, հանրապետության դեմ պայքարելու իրողության արդարացումն է: Իրականում Խնձորեսկի միջադեպն իր ընդգրկումներով այնքան էլ ծավալուն չի եղել, այն բոլշևիկների համար պարզապես հարմար առիթ էր կարմիր բանակի զորամասերին Հայաստան «հրավիրելու» եւ նրանց զինու աջակցությամբ իշխանությունը նվաճելու համար:

Խնձորեսկի միջադեպն արագորեն հարթելուց հետո Դրոն իր զորամասով գալիս է Գորիս, ապա մի փոքր անց տեղափոխվում Դարալագյազ, իսկ Նժդեհը՝ Ղափան:

Արցախը խորհրդայնացման ճանապարհով գրավելուց հետո Կարմիր բանակի մի քանի զորագնդեր հայ բոլշևիկների առաջնորդությամբ հուլիսի 1-ին մուտք են գործում Զանգեզուր: Շարունակելով առաջխաղացումը, Կարմիր բանակի զորամասերը հուլիսի 4-ին գրավում են Գորիսը, բանտարկում են գավառի «Վարիչների խորհրդի» մի շարք անդամների եւ մեկ օր անց՝ հուլիսի 5-ին Հակոբ Կամարու

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, ց. 4, գ. 73, թ. 41-42:
[2] Վարդապետյան Ա., Հայաստանի Կարմիր բանակը քաղաքացիական կռիվներում 1920-1921 թթ., Երեւան, 1960, էջ 15:

նախագահությամբ հիմնում են գավառային ռազմա-հեղափոխական կոմիտե (հեղկոմ)[1]:

Ինչպես արդեն նշվել է, խորհրդային զորամասերի Զանգեզուր ներխուժումն ուղեկցվում էր ժողովրդի շրջանում տարածվող բոլշեւիկյան զանգվածային քարոզչությամբ: Զանգեզուրի տարբեր շրջաններում ծավալելով հակապետական քարոզչություն՝ բոլշեւիկներն ամեն կերպ ջանում էին ժողովրդին տրամադրել Դրոյի եւ նրա գլխավորած զորամասի դեմ եւ դրանով իսկ ավելի հեշտացնել ու ամրապնդել Զանգեզուրում խորհրդային զորքերի հաստատումը: Այս առումով ուշագրավ է Ցապոնի վկայությունը, որը Դարալագյազից տեղափոխվել էր Զանգեզուր, եւ այդ օրերին Տեղ-Կոռնիձոր ճակատի հրամանատարն էր. «...հազիւ մէկ շաբաթ էր, որ ընդունել էի Տեղ-Կոռնիձոր ճակատի պաշտօնս, եւ արդէն նկատեցի, որ այդ շրջանի մէջ զօրաւոր «կարմիր» պրոպագանդա է առաջ տարուում՝ ապստամբեցնելու համար Զանգեզուրը, որպէսզի Դրոյի «իմպերիալիստական» զօրամասը ոչնչանա «յեղափոխականացուած» Ադրբեջանի ճանկերի մէջ»[2]:

Խորհրդային բանակի հրամանատարությունն օգնում եւ ուղղություն էր տալիս հայ բոլշեւիկների գործունեությանը ու սիրահոժարաբար ընդունում նրանց ծառայությունները:

Մուտք գործելով Զանգեզուր՝ խորհրդային Կարմիր բանակի 32-րդ դիվիզիայի հեծյալ բրիգադը եւ հեծյալ-լեռնային մարտկոցը հայկական զորքերի մուտքը Նախիջեւանի տարածք խոչընդոտելու դիտավորությամբ՝ Գորիսի շրջանից Շաքի-Զուկար-Ղարամալինովկա ուղղությամբ արագորեն տեղափոխվում են Նախիջեւան եւ կապ հաստատում այնտեղ գտնվող թուրքական բայազետյան դիվիզիայի զորամասերի հետ[3]:

Նույն թվականի հունիսի 16-ին 11-րդ Կարմիր բանակի հրամանատար Ռեմեզովի՝ իր զորքերին տրված հրամանում ասվում է.

«1. Մեր զորամասերի կողմից Գորիսի շրջանը նվաճելուց հետո գեներալ Դրոյի ոչ մեծաքանակ զորախմբերը նահանջել եւ կենտրոնանում են Քազարքենդում:

2. Մեր տեղաբաշխման վայրն է ներկայացել Ջուլֆա-Օրդուբատ-Նախիջեւան շրջանում գտնվող թուրքական Բայազետյան դիվիզիայի ներկայացուցիչը եւ թուրքական հեղափոխական հրամանատարության անունից դիմելով ռուսական Կարմիր բանակի հրամանատարությանը՝ խնդրում է ամուր կապ հաստատել թուրքական հեղափոխական զորքերի եւ Կարմիր բանակի զորամասերի միջեւ»[1]:

Թուրքական ներկայացուցչի դիմումին անմիջականորեն հետեւում է խորհրդային 11-րդ բանակի հրամանատարության որոշումը.

«28-րդ դիվիզիայի փոխհրամանատար ընկ. Լիտվինենկոյին. Հունիսի 17-ի լուսաբացին 33-րդ դիվիզիայի հեծյալ բրիգադն ու հեծյալ-լեռնային մարտկոցը Գորիսի շրջանից Շաքի-Զուկար- Ղարամալինովկա ճանապարհով շարժել Նախիջեւան, ընդ որում Զուկար-Շաչար-Էնեգելյուրտ շրջանում հրետանային դասակի հետ թողնել մեկ գունդ... մյուս գունդը հրետանային դասակով ուղարկել Նախիջեւան թուրքական զորքերի հետ կապ հաստատելու համար: Գունդը պետք է Նախիջեւան հասնի հունիսի 21-ից ոչ ուշ: Գորիսի կայազորում թողնել մեկ գունդ 28-րդ դիվիզիայից»[2]:

Խորհրդային հրամանատարության ձեռնարկած այդ շտապողական քայլերը պատահական չէին, դրանք վաղօրոք մտածված էին ու ծրագրված:

1. Նախ, Նախիջեւանը քեմալական «հեղափոխական» Թուրքիային Խորհրդային Ռուսաստանին «խորհրդային» Ադրբեջանի միջոցով կապող ցամաքային միակ ճանապարհն էր, որը դեպի արեւելք ձգտող Ռուսաստանի համար ռազմավարական կարեւոր նշանակություն ուներ: Խորհրդային զորքերը պետք է ապահովեին այդ ճանապարհի անխափանությունը ու պաշտպանեին տեղի թուրք բնակչությանը հայկական զորքերի հնարավոր հարձակումներից:

2. Իր զորքերը տեղաբաշխելով նաեւ Նախիջեւանում, խորհրդային հրամանատարությունը «հեղափոխական» թուրքերի համագործակցությամբ փաստորեն աքցանի մեջ էր վերցնում Հայաստանի Հանրապետությունը եւ դրանով իսկ իրական, ազդեցիկ նախադրյալներ ստեղծում ավելի հեշտ միջոցներով իր կամքն ու նպատակները Հայաստանի կառավարությանը թելադրելու: Եվ այդ ամենը կատարվում է Անկարայի աջակցությամբ եւ թելադրանքով:

Մինչ խորհրդային իշխանությունները «խաղաղ» ճանապարհով կփորձեին իրականացնել իրենց նպատակները, ճիշտ եւ ճիշտ նույն օրերին Հայաստանի Հանրապետության կառավարությունը ձեռնարկում է իրականացնել Հայաստանի եւ հայության ապագայի համար չափազանց կարեւորագույն նշանակություն ունեցող՝ Հայաստանի տարածքը թուրքերից վերջնականապես մաքրելու կարեւորագույն գործողությունը:

---

[1] Տե՛ս Լալայան Ա, «Զանգեզուրյան դրվագները 1917-1921 թթ.», էջ 57-58:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1941, թիւ 9, էջ 114:
[3] Տե՛ս Нагорный Карабах в 1918-1923 гг., стр. 538:

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

Ինչպես արդեն նշվել է, Հայաստանի մի շարք շրջաններում Կարսի նահանգում, Զանգիբասար, Վեդիբասար, Շարուր-Նախիջեւան, Կողբ եւ այլն, բնակվող թուրքերը Հայաստանի իշխանությունների դեմ մշտապես գտնվելով ապստամբ վիճակում պարբերաբար զինված հարձակումներ էին գործում հայկական բնակավայրերի, հաղորդակցության ուղիների վրա եւ սպանություններով, թալանով ու ավերումներով ապակայունացնում եւ խոչընդոտում էին հանրապետության վերակառուցման ու խաղաղության հաստատմանը նպատակաուղղված աշխատանքները:

Վերլուծելով հանրապետության տարածքում թուրք զանգվածների հակապետական գործողությունների հետեւանքով ստեղծված իրավիճակը՝ Ս. Վրացյանը գրում է. «Շարուր-Նախիջեւանում իշխանությունը փաստորէն անցել էր Անգորայի զինուորական գործակալ Խալիլ-բէյի ձեռքը: Սրա ազդեցությունը տարածւում էր Վեդիբասարի ու Զանգիբասարի վրայ, որոնք ամրացուած էին ոչ միայն տեղական, այլեւ թիւրք ասկերներով: Զանգիբասարում փորուած էին անառիկ դիրքեր: Իլխի-Ղորալի գիւղերում դրուած էր թնդանօթ: Ռազմավարական կարեւոր դիրքերը բռնուած էին զօրամասերով ու գնդացիրներով: Գլխաւոր կէտերը միացած էին իրար հետ հեռախոսով: Թիւրքիայից ստացւում էր մեծ քանակութեամբ փամփուշտ ու ռազմամթերք: Զինուորական տեսակէտից, շատ լաւ կազմակերպուած ու ամրացուած էր Բէոյիւք Վեդին: Այս բոլոր շրջանները միասին կազմում էին «Հարաւ-Արեւմտեան Ազրբէջան»-ը, ուր իշխանութիւնը խառն էր՝ թիւրք-ազրբէջանեան»[1]:

Քանի որ Անկարայի կողմից ղեկավարվող Հայաստանի տարածքում բնակվող թուրք բնակչությունն իր ռազմատենչ գործողություններով արդեն բազմիցս ապացուցել էր հանրապետության կառավարությանը չենթարկվելու եւ իրենց բնակության շրջանները Հայաստանից անջատելու անբեկանելի ձգտումները, ապա հանրապետության իշխանություններին ստեղծված կացությունում այլ ելք ու միջոց այլեւս չէր մնում:

Մայիսյան խռովությունները ճնշելուց հետո Հայաստանի իշխանությունները ժամանակաշրջանի եւ ստեղծված իրավիճակի թելադրանքով վճռում են վերջնականապես լուծել հանրապետության համար կենսական նշանակություն ունեցող այդ հարցը:

Այդ նույն օրերին Դրոն իր զորամասով գտնվում էր Դարալագյազում: Ելնելով այն իրողությունից, որ Զանգեզուր ներխուժած

[1] Տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 415:

խորհրդային զորքերը թուրքական զորագնդին միացած մուտք են գործել Նախիջեւան եւ դրանով իսկ իրական վտանգ ստեղծել հանրապետությունը շրջապատման մեջ վերցնելու ուղղությամբ՝ նա Հայաստանի իշխանություններին առաջարկում է նախ եւ առաջ լուծել Նախիջեւանի հարցը:

Դրոյի մշտական ուղեկից, արդեն բազմիցս հիշատակված Մարտիրոսը, անդրադառնալով այդ խնդրի լուսաբանմանը՝ գրում է. «Քեշիշքենդ (Եղեգնաձոր) ժամանեց զինուորական նախարար Ռուբէն Տեր-Մինասեանը...

Այդ գիշեր երկար խոսակցութիւն տեղի ունեցաւ զինուորական նախարարի եւ Դրօյի միջեւ: Դրօն ուզում էր իր ուժերը միացնել Զօր.Շելկովնիկեանի ուժերին եւ արագ կերպով գրաւել Նախիջեւանը, Դարալագեազի տեղական ոյժերին ամրացնել Շարուրում, Արազի ափին, Սիսիանի տեղական ուժերն ամրացնել Նախիջեւանում, Արազի ափին, ապա խճուղով յարձակման անցնելով Բիչանակ մալականների գիւղով... բոլշեւիկներից վերցնել Զանգեզուրը, Գորիսը եւ ամրացնել Զաբուղի բարձունքը»[1]:

Տվյալ պարագայում դա բավականին համարձակ, իսկ Նախիջեւանի հարցում, ինչը եւ ապացուցեց ժամանակը, շատ խելամիտ ու օգտակար ծրագիր էր: Հայաստանի իշխանությունները, ի դեմս ՀՀ զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանի, որն այդ ժամանակ Նախիջեւանի եւ Զանգեզուրի հարցը տեղում ուսումնասիրելու ու ձեռնարկվելիք քայլերը որոշակիացնելու նպատակով ժամանել էր Քեշիշքենդ (Եղեգնաձոր), վերջապես ընդունում է Դրոյի՝ արդեն բազմիցս արված առաջարկությունը:

Հունիսի 23-ին եւ 24-ին Դրոյի, Ռուբեն Տեր-Մինասյանի, գեներալ Սիլիկյանի եւ այլոց մասնակցությամբ Քեշիշքենդում կայանում է զինվորական խորհրդակցություն:

«Ռուբէնը, - գրում է այդ խորհրդակցության մասնակից Ե. Իշխանյանը, - զրահապատ գնացքով մինչեւ Նախիջեւան հետախուզել եւ ստուգել էր, որ թուրքերը տեղահան են եղել, փախել Պարսկաստան»[2]:

Հետաքրքիր եւ զարմանալի իրավիճակ է ստեղծվում: Նախիջեւանի մահմեդականությունը, որը մինչ այդ երբեւէ չէր ցանկանում ճանաչել Հայաստանի Հանրապետության իշխանությունը եւ առաջին իսկ հնարավորության դեպքում ապստամբում ու զենքի էր դիմում, հանկարծ ինքնակամ լքում է իր բնակավայրերն եւ անց-

[1] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, նշվ. աշխ., էջ 161:
[2] Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 635:

նում Պարսկաստան: Ի՞նչն էր նրան հարկադրել դիմելու նման ծայրահեղ միջոցի: Նախիջևանի թրքությանը, անշուշտ, ահ ու սարսափի էին մատնել հանրապետության մահմեդական բնակչության նկատմամբ կառավարության կողմից ձեռնարկված վճռական գործողությունները:

1920 թ. հունիս-հուլիս ամիսներին հանրապետության զինված ուժերը, ընդամենը մեկ ամսվա ընթացքում, գերազանց կատարելով Հայաստանի իշխանությունների առաջադրած հանձնարարությունը, վերջնականապես մաքրում են հանրապետության տարածքը թուրք զանգվածից, բացառությամբ Շարուր-Նախիջևանի շրջաններից: Հայկական զորքերի հարձակումը կանգնեցնելու եւ ժամանակ շահելու դիտավորությամբ Նախիջևանի Մահմեդական Ազգային Խորհուրդը մի պատվիրակություն է ուղարկում Երեւան եւ փորձում հաշտության եզրեր գտնել ՀՀ կառավարության հետ:

«Կառավարությունը, գրում է Ս. Վրացյանը, - զինվորական նախարարի միջոցով, ներկայացրեց խիստ, ծանր պայմաններ... Պատգամաւորութիւնը ետ գնաց՝ զեկուցանելու համար Ազգ.Խորհրդին եւ այլեւս չվերադարձաւ: Յուլ. 22-ին կռիւները վերսկսեցին: Թուրքերը 3 օր ցույց տուին յուսահատ դիմադրութիւն: Յուլ. 25-ին մերոնք գրաւեցին Շահթախտը: Թուրքերը փախան դեպի Մակու ու Պարսկաստան՝ ազատելով ամբողջ շրջանը մինչեւ Նախիջեւան»[1]:

Ելնելով ընձեռված հրաշալի հնարավորությունից՝ Ռուբենը գեներալ Մելիք-Մուրադյանի հետ խորհրդակցելուց հետո, վճռում է օգտագործել հարմարավետ պահը եւ անհապաղ գրավել թուրքերի կողմից լքված շրջանները:

«Նույն եզրակացութեան է յանգում, - նշում է Ե. Իշխանյանը, - նաեւ Քեշիշքենդի խորհրդակցութիւնը Դրոյի մասնակցութեամբ. ուստի որոշում է կայացնում, որ Դրոյի զօրամասը եւ Վայոց Ձորի Զօր. Մելիք-Մուրադեանին ենթակայ ուժերը շարունակեն յառաջխաղացումը, գրաւեն Նախիջեւանն ու շրջանը եւ շարժվեն առաջ, ամբողջականացնելով Նախիջեւանի գաւառի լրիւ գրաւումը: Որոշումը կայացնելուց յետոյ, հենց նոյն օրը զօրաւար Սիլիկեանը, Ռուբենը եւ Ա.Մելիք-Ցոլչեանը մեկնում են Երեւան»[2]:

Զինվորական խորհրդակցությունում ճշտվում են Նախիջեւանը գրավելու գործողությունների մանրամասները, եւ որոշվում է հարձակումը սկսել հունիսի 25-ին: Համաձայն այդ նույն խոր-

[1] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 418:
[2] Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 635:

հրդակցությունում կայացած որոշման, Դրոյի եւ գեներալ Մելիք-Մուրադյանի գլխավորած զորամասերը գործողության առաջին փուլում պետք է գրավեին Նախիջեւանը, ապա նոր միայն ձեռնամուխ լինեին խորհրդային զորքերից Զանգեզուրի ազատագրմանը: Որպեսզի նախատեսված գործողությունները զանգեզուրցիների կողմից ստանային անհրաժեշտ օգնություն ու աջակցություն, Զանգեզուրի տարբեր շրջաններ են գործուղվում քարոզիչների խմբեր, որոնք բնակչության մեջ պետք է բացատրական աշխատանքներ իրականացնեին:

Թվում էր, թե ամեն ինչ խնամքով ծրագրված ու կազմակերպված էր, բայց իրականում դեպքերը զարգանում են բոլորովին այլ ուղղվածությամբ: Այն պահին, երբ Դրոն պատրաստվում է իր զորամասով արշավել Նախիջեւան, ստանում է ՀՀ զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանի անսպասելի ու կտրուկ հրամանը. « Զինուորական նախարարը,- նշում է Մարտիրոսը, - նկատի ունենալով այն պարագան, որ Արցախից Գորիս անցած բոլշեւիկեան հեծեալ մի գունդ Նախիջեւան էր գնացել թուրքերին օգնութեան, որպեսզի Հայաստանը չգրաւի Նախիջեւանը, գտնում էր, որ այդպէս շարժւելը նշանակում էր պատերազմ յայտարարել Ռուսաստանին, ինչ-որ անխոհեմութիւն է»[1]:

Հայաստանի Հանրապետության զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը կասեցնում է Նախիջեւանի եւ Օրդուբադի գրավումը, բայց կարգադրում է հարձակում գործել միայն Զանգեզուրի վրա, որը պետք է իրականացվեր Ղուշչի Բելանի եւ Գնդեվազի կողմից: Դարձյալ ձեռքից բաց է թողնվում Նախիջեւանի հարցը վերջնականապես լուծելու բացառիկ նպաստավոր հնարավորությունը եւ հիմնական պատճառը Կարմիր բանակի ընդամենը 400 հեծյալներից բաղկացած հեծելագունդն էր, որը ձեռնարկվելիք գործողության նախօրեին հասցնում է տեղափոխվել Նախիջեւան: Ավելի քան տարօրինակ էր ՀՀ պաշտպանության նախարարի որոշումը: Ընդամենը 400 հեծյալների առկայությունը խոչընդոտում է հայկական զորքերին իրականացնելու Նախիջեւանի գրավումը, որը Զանգեզուրը ազատագրելու նախօրեին անկասկած կոգեւորեր եւ կքաջալերեր զորքին եւ բնակչությանը:

Դրոն, անդրադառնալով Հայաստանի Հանրապետության զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանի այդօրինակ որոշմանը՝ ասել է. «Կենտրոնն այն կարծիքին է, որ եթէ գրաւէինք Նա-

[1] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, նշվ. աշխ., էջ 161:

խիջեւանն ու Օրդուբադը, չպիտի կարողանայինք այն մեր ձեռքում պահել, թեեւ ամբողջ թրքութիւնը փախել էր Պարսկաստան եւ ամսոյս 21-ից մինչեւ 26-ը բոլորովին լքված է եղել Նախիջեւանի ամբողջ շրջանը: Ռուբենը զրահապատով գնացել է Նախիջեւան, որը լքված ու ամայի էր գտել: Կենտրոնի կարծիքով եթէ Նախիջեւանն ու Օրդուբադը գրավեինք, սահմանագիծը շատ կերկարէր եւ չէինք կարողանայ պահել»[1]:

Կարելի է պատկերացնել Դրոյի եւ նրա զինակիցների հիասթափութիւնն ու զարմանքը: Համանման հրահանգ ստանալուց հետո նրանց այլեւս ոչինչ չէր մնում անել, քան համակերպվել ստեղծված կացութեանն ու ձեռնամուխ լինել Զանգեզուրը խորհրդային զորքերից ազատագրելու ՀՀ զինվորական նախարարի հրամանի կատարմանը: Չէր բացառվում նաեւ հակառակ տարբերակը՝ շրջանցել եւ չկատարել կենտրոնի հրամանը: Մ՞րն էր ելքը:

Ադրբեջանի հանրապետությունն ու Արցախը զավթած խորհրդային զորքերի զգալի մասը այդ ժամանակ արդեն գտնվում էր Զանգեզուրում եւ անհրաժեշտության դեպքում, յուրաքանչյուր պահի կարող էր համալրվել նոր զորագնդերով: Դրոյի զորամասը իր թվակազմով զգալիորեն զիջում էր Զանգեզուր ներխուժած խորհրդային զորքերին եւ տեւական կռիվների ընթացքում, առանց օգնական ուժերի, համալրման, դժվար թե կարողանար երկարատեւ դիմադրություն ցույց տալ հակառակորդի գերակշռող ուժերին: Իսկ առանց բավարար մարտական ուժերի եւ լուրջ պատրաստվածության անիմաստ էր ու անօգուտ ձեռնարկել Զանգեզուրը խորհրդային զորքերից ազատագրելու կենտրոնից ստացած հրաման: Սթափ գնահատելով այդ հանգամանքը՝ Դրոն հեռագրով կենտրոնից պահանջում է ուղարկել օգնական ուժեր, ընդամենը 1500 մարտիկներից բաղկացած մի գունդ, բայց նույն օրն եւեթ ստանում է մերժողական պատասխան: Ի՞նչ պետք է արվեր, ձեռնարկել հարձակումը, թե՞ հրաժարվել կատարել կենտրոնի հրամանը: Իրենց հետագա անելիքները վերջնականապես ճշգրտելու եւ որոշելու նպատակով՝ Դրոն գումարում է զինվորական խորհրդակցություն:

«Երեկոյան,- վկայում է այդ զինվորական խորհրդակցության մասնակից Ե. Իշխանյանը,- ժամը 11-ին Դրոն մեզ կանչում է իր մօտ, ներկայ էին Կուռոն, խմբապետ Մարտիրոսը եւ Պողոս Տեր-Դավթեանը: Դրոն հարց է դնում, ինչպես վարել: Ես կրկնեցի առաւօտեան ասածս, որի վրայ պնդեց Պողոսը, թէ չպիտի կարողանանք պահել Զանգեզուրը, ուստի պետք չէ յարձակում գործենք»[1]:

Համաձայն Ե. Իշխանյանի հավաստման, զինվորական խորհրդակցության մասնակիցների տեսակետը միանշանակ էր. մարտական ուժերի սահմանափակ լինելու պատճառով չձեռնարկել հարձակում, այսինքն հրաժարվել կատարել կենտրոնի հրամանը: Հարցի վերջնական վճիռը կայացնում է Դրոն:

«- Սակայն արժանապատուութեան խնդիր է դարձած այժմ ինձ համար,- ասում է Դրոն: Կենտրոնում թյուրիմացաբար պիտի կարծեն, թէ վախեցայ եւ այդ պատճառով յարձակում չգործեցի»[2]:

Իրոք ստեղծվել էր չափազանց դժվարին եւ ինչ-որ իմաստով անհասկանալի ու գուցեեւ անելանելի իրավիճակ: Եթե հայկական զորքերը, ինչպես ծրագրված էր, մաքրեին Նախիջեւանը, ապա միանգամայն կբացառվեր թիկունքից սպառնացող վտանգը եւ ավելի հեշտ ու ապահով կլիներ կատարել Զանգեզուրը ազատագրելու առաջադրանքը: Իսկ առանց Նախիջեւանը մաքրելու, Դրոյի զորամասը անխուսափելիորեն կհայտնվեր Զանգեզուրի եւ Նախիջեւանի տարածքներից խորհրդային զորքերի կողմից տեղացող հանդիպակաց հարվածների խաչմերուկում:

Կենտրոնի որոշման կապակցությամբ արտահայտելով իր անհամաձայնությունն ու զայրույթը՝ Սիսիանի մարտական ուժերի հրամանատար Պողոս Տեր-Դավթյանը նշել է. «Պարզապես չտաքում նստածներից ոչ մեկը գաղափար չունի Զանգեզուր- Արցախի մասին, եւ ոչ մեկը չի կարողանում պատկերացնել մեր շրջանի իրական կացութիւնը: Եթէ Նախիջեւանը գրված լիներ, կարելի կը լիներ վստահ առաջ շարժուել, իսկ այժմ, երբ գնանք, թիկունքից թշնամին միշտ կարող է զարկել մեզ»[3]:

Իրոք, Դրոյի զորամասի թիկունքից, այն էլ երկու՝ Նախիջեւանի եւ Հաճի Սամլուի ուղղություններից հակառակորդի կողմից միաժամանակյա սպառնացող հանդիպակաց հարվածները միանգամայն հնարավոր էին, բայց, այնուամենայնիվ, անհրաժեշտ էր ինչ-որ գործողություն ձեռնարկել:

«Դրոն,- վկայում է Ե. Իշխանյանը,- շատ մտածկոտ, ծանրակշիռ խնդիրներ լուծող կենտրոնացած մարդու դէմք ունէր: Երկընտրանքի մէջ էր: Իր կարծիքը պարզ էր եւ որոշ յայտնել էր, եւ իր հետ հա-

[1] Նույն տեղում:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

մաձայն էին տղաները, որոնք շատ լաւ հասկանում էին խնդիրը, նույնիսկ ոչ զինուորականներս համամիտ էինք Դրոյին, որ առանց բաւարար ուժեր ունենալու հնարաւոր չէ Զանգեզուրը պահել մեր ձեռքում, գտնուելով թշնամու երկու բանակների՝ Նախիջեւանի եւ Հաճի Սամլուի խաչաձեւ կրակի տակ: Բոլորիս մէջ նույն դժգոհութիւնն էր բորբոքվում, թէ ինչու զինուորական շտաբը կասեցրեց Նախիջեւանի գործողութիւնը»[1]:

Խորհրդաժողովի ժամանակ Դրոյի զինակիցները, բազում փաստարկներ վկայակոչելով, աշխատել են համոզել նրան, որպեսզի չկատարեն կենտրոնի հրամանը, չձեռնարկեն հարձակում մինչեւ օգնական ուժերի ժամանումը, սակայն նա կրկին անգամ հաշվարկելով բոլոր դեմ եւ թեր կողմերը՝ ասել է. «...Ես կարգադրութեան մարդ եմ, օգնական ուժ պահանջել եւ մերժում եմ ստացել, արշաւանքը կը սկսեմ եւ, ինչպես յայտնել եմ Կենտրոնին, շտաբին, վերջինիս վրայ կընկնի հետեւանքի պատասխանատուութիւնը: Ոչ մի դժուարութիւն չկայ Զանգեզուրը գրաւելու, բայց եթէ չկարողանանք պահել, դրա մեղքը կընկնի Կենտրոնի վրայ: Այլեւս երկար ու բարակ մտածելու պէտք չկայ: Պողոս, անմիջապէս կարգադրիր տղաներին, պատրաստ լինեն մինչեւ մի ժամ, բռնելու արդէն որոշած ելակէտերը»[2]:

Որոշումն արդեն կայացած էր, եւ Դրոն իր զորամասով ձեռնամուխ է լինում կենսագործելու Զանգեզուրը խորհրդային զորքերից մաքրելու ՀՀ զինվորական նախարարության հրամանը:

Կարմիր բանակի զորամասերը, խորանալով Զանգեզուրի տարածքը, գրավում են Գորիսը եւ բանտարկում ՀՀ իշխանության ներկայացուցիչներին: Շնհերի մի քանի գյուղացիների հաջողվում է Սիսիանի տարածքով հասնել Դարալագյազ ու Դրոյին հաղորդել խորհրդային զորքերի կողմից Գորիսի գրավման եւ Հայաստանի խորհրդարանի անդամներ Վահան Խորենու, Արշակ Շիրինյանի ու բազում այլ անվանի գործիչների ձերբակալման լուրը:

1920 թ. Օգոստոսի 1-ին Դրոն իր զորամասով արշավում է «դիմավորելու» խորհրդային զորքերին եւ միաժամանակ հրահանգ է ուղարկում Ղափանի զորախմբի հրամանատար Գարեգին Նժդեհին՝ նույնպես անհապաղ շարժվելու Գորիս:

Այդ գործողության ծավալումից օրեր առաջ Գորիսից դեպի Նախիջեւան պիտի մեկներ Կարմիր բանակի 1-ին հեծյալ գունդը: Հանրապետության զորքերի հնարավոր հարձակումներից հեծյալ

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

գնդի պաշտպանությունն ու նրա անվտանգության ապահովության պատասխանատվությունը հանձնարարվում է Սիսիանի շրջանում գտնվող 32-րդ բրիգադին: Այդ նույն երթուղով Նախիջեւան պիտի անցնեին Խալիլ փաշան եւ խորհրդային պատվիրակության անդամները, որոնք իրենց հետ պիտի տանեին մեծ արժեք ներկայացնող գույք ու տարբեր տեսակի իրեր:

Տեղեկանալով այդ մասին՝ Դրոն որոշում է հարձակվել Նախիջեւան ուղեվորվող խորհրդային զորամասի ու պատվիրակության անդամների վրա ու բռնագրավել նրանց մոտ գտնվող արժեքավոր գույքն ու իրերը: Հարձակման ժամանակ Դրոյի զորամասը Նախիջեւան ուղեւորվող խորհրդային պատվիրակներից որպես ռազմավար բռնագրավում է ավելի քան 200,6 կիլոգրամ ոսկու ձուլածոներ: Հակառակորդի ձեռնարկած բոլոր փորձերը հետ վերցնելու կորցրածը՝ անցնում են ապարդյուն[1]:

Օգոստոսի 1-ին Դրոյի հրամանով գնդապետ Կուռո Թարխանյանի գլխավորած զորամասը գրոհում է Բազարչայ գյուղում հանգրվանած խորհրդային զինվորների վրա եւ խորտակելով նրանց դիմադրությունը՝ շարժվում Գորիս: Այդ օրը 11-րդ բանակի շտաբը Զանգեզուրյան ռազմաճակատից ստանում է հետեւյալ տագնապալի հեռագիրը. «Դրոն Զուլի կողմից հարձակվում է Էնգելյուրտի վրա...8 հրանոթների աջակցությամբ 400 թրերի եւ 40 սվիններ ունեցող հրաձգային դիվիզիայի 32-րդ բրիգադը թողել է Բազարչայը»[2]:

Միաժամանակ, Պողոս Տեր-Դավթյանի գլխավորած զորաջոկատները հարձակվում են Սիսիան ներխուժած բոլշեւիկների զորամասի վրա ու պարտության մատնելով նրանց՝ ստիպում նահանջել դեպի Գորիս:

Դրոյի զորախմբի հարձակումը կանգնեցնելու համար Կարմիր բանակի հրամանատարությունը հրամայում է 84-րդ, 32-րդ եւ հեծյալ բրիգադների հրամանատարներին վճռական հարվածով ջախջախել Դրոյի դաշնակների հարձակումը եւ վերականգնելով նախկին դրությունը՝ ապահովել Գորիս-Էնգելյուրտ-Կարամալինովկա, Նախիջեւան ուղին[3]:

Նույն հրամանով հանձնարարվում է հսկել նաեւ Ղափանի կողմից Նժդեհի զորախմբի կողմից սպասվելիք հարձակմանը եւ թույլ չտալ, որպեսզի նա աջակցի Գորիսի վրա հարձակվող Դրոյին[4]:

[1] Տե՛ս Սիմոնյան Արամ, նշվ. աշխ., էջ 138:
[2] Բանբեր Հայաստանի արխիվների, 1978, թիւ 1(50), էջ 40-41:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Տե՛ս նույն տեղում:

Օգոստոսի 1-ին Դրոյի զորամասերի հարձակումը կասեցնելու նպատակով կարմիր զորագնդերի ձեռնարկած գործողությունները ոչ մի արդյունք չեն տալիս: Մի քանի ուղղություններում խորտակելով խորհրդային զորքերի դիմադրությունը՝ Դրոն ավելի է մոտենում Գորիսին:

Նույն օրը, Կարմիր Բանակի 28-րդ դիվիզիայի հրամանատար Նեստերովսկին, իր զինվորների տված հրամանում հայտնում է. «Դաշնակները գեներալ Դրոյի հրամանատարությամբ շարունակում են հարձակումը Էնգելյուրտ-Ղարաքիլիսայի (Սիսիան) շրջաններում տեղաբաշխված մեր զորքերի վրա: Հակառակորդի գերակշռող ուժերի ճնշման տակ 32-րդ հեծյալ բրիգադի կողմից թողնվել է Էնգելյուրտ գյուղը եւ նահանջել Շեկի, որը գտնվում է Էնգելյուրտից արեւելք 4 վերստ հեռավորության վրա... Փոխգնդապետ Նժդեհի հրոսակախմբերը Գորիսից 40-50 վերստ հեռավորության վրա գտնվող Կատարյան գործարանի շրջանից, համաձայն հետախուզության տվյալների, պատրաստվում են պաշտպանել դեպի Գորիս-Տեղ հարձակվող դաշնակներին»[1]:

Իր գլխավորած զորամասերին տեղեկացնելով հայկական զորքերի հարձակման հետեւանքով իրենց սպառնացող վտանգավոր իրավիճակի մասին՝ Նեստերովսկին դիվիզիայի զորամասերի հրամանատարներին տալիս է անհրաժեշտ հրահանգներ՝ կասեցնելու հակառակորդի հարձակումը:

Կարմիր զորամասերի հրամանատարները, բանակի շտաբին հասցեագրած իրենց հեռագրերում հաղորդելով Դրոյի զորքերի հարձակման մասին՝ միշտ շեշտում են հակառակորդի գերակշռող ուժերի մասին: Իրականում Դրոյի զորամասը հակառակորդի համեմատ թվաքանակով ավելի փոքրաքանակ է եղել: Կարմիր զորագնդերի հրամանատարները, ուռճացնելով նրա զորամասի քանակական գերակշռությունը, պարզապես իրենց անհաջողությունները քողարկելու ու արդարացնելու պատրվակներ են հորինել:

Ըստ Մարտիրոս Աբրահամյանի տվյալների՝ Դրոյի զորամասը բաղկացած է եղել հետեւյալ զորաջոկատներից. «... Ասիկի գումարտակը՝ 126 հոգի, Կուռոյի ձիաւորները՝ 150-160, Նժդեհի դափանցիները՝ 125-150 հոգի, իմ ուժերը՝ 180 հոգի»[2]:

Թվարկված ուժերին պետք է ավելացնել վերոհիշյալ ռազմական գործողությունների մասնակից Պողոս Տեր-Դավթյանի գլխավորած

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 441, թ. 158:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1934, մարտ, էջ 123:

սիսիանցիների եւ Ցապոնի հրամանատարությամբ գործող Դարալագյազի մարտական ուժերը: Ընդսմին, Դրոյի զորամասի վերաբերյալ վերոհիշյալ տվյալները հաստատում են Կարմիր բանակի՝ Զանգեզուրում գտնվող զորագնդերի հրամանատարների հեռագրերում ամրագրած փաստերը:

Օգոստոսի առաջին օրերին Զանգեզուրյան զորախմբի հարձակումը զարգանում է մեծ հաջողությամբ:

«... պառլամենտի անդամ Արշակ Հավհաննիսյանի անունով,- իր հուշերում գրում է Սեպուհի զորամասի շտաբի ծառայողներից մեկը,- ստացվեց մի հեռագիր, որով հաղորդվում է, որ Դրոն Սիսիանում ջարդելով բոլշեւիկյան երկու էշելոն (երեւի զորասյուն) գրավել է Անգեղակոթը, Բազարչայ եւ Բորիսովկա գյուղերը, այսպիսով նա կտրել է Նախիջեւանում գտնվող սովետական գնդի ճանապարհը: Կարմիրները, Խալիլ բեյի ջարդված բանակի հետ միանալով, վերջնագիր են ներկայացրել մեր հրամանատարությանը, որ անմիջապես պարպենք Շարուր-Նախիջեւանի ամբողջ գավառը...

Սովետական նենգավոր իշխանությունը կամաց-կամաց իր ժանիքները բաց է անում:

... Մխիթարականն այն է, որ Դրոյի կողմն են անցել հայ գյուղացիները, որոնք շատ կարճ ժամանակում ճաշակեցին «կոմունիստ» տարրերի բռնակալական լուծը»[1]:

Զանգեզուրում ծավալվող մարտերում, հատկապես Սիսիանի շրջանում, գերազանց է գործում Դրոյի կողմից այնտեղ գործուղված Պողոս Տեր-Դավթյանը, որը տեղացի ուժերի գլուխն անցած՝ ջախջախում է այդ վայրերում հայտնված բոլշեւիկյան զորամասը, գրավում է Սիսիանը եւ զարգացնելով հարձակումը՝ Գորիսի մոտակայքում միանում է Դրոյին[2]:

Կարմիր բանակի հրամանատարության համար ինչ-որ չափով անակնկալ էր հայկական զորքերի սրընթաց հարձակումն ու իրենց զորքերի հապճեպ նահանջը:Հարձակման հենց առաջին օրը՝ օգոստոսի 1-ին, Զանգեզուրում կենտրոնացած 28-րդ դիվիզիայի հրամանատար Նեստերովսկին, հայկական զորքերի հարձակումը դադարեցնելու նպատակով դիմում է Դրոյին: Նեստերովսկին նախ իր դժգոհությունն է հայտնում այն կապակցությամբ, որ հայկական զորքերն առանց Կարմիր բանակի հրամանատարությանը տեղյակ

[1] Ազատ, անկախ եւ միացյալ Հայաստանի վերջին օրերը, Երեւան, 1993, էջ 65-66:
[2] Տե՛ս նույն տեղում:

պահելու հարձակում են գործում իրենց զորամասերի վրա: Նրա գնահատմամբ, նմանօրինակ գործողությամբ հայկական կողմը սկիզբ եւ հիմքեր է դնում Հայաստանի եւ Խորհրդային Ռուսաստանի բարիդրացիական հարաբերությունների խզմանն ու չհաստատմանը: Նեստերովսկին հայտնում է նաեւ, որ Կարմիր բանակի զորամասերը մուտք են գործել Զանգեզուր ու Նախիջեւան ոչ թե նվաճելու, այլ դադարեցնելու եւ վերջ դնելու հայ- թաթարական բախումներն ու միմյանց կոտորելը, նրա խնդիրը ավազակներին եւ հրոսակներին ոչնչացնելն է ու խաղաղություն հաստատելը:

Ըստ 28-րդ դիվիզիայի հրամանատարի, Կարմիր բանակը հայկական բանակի վրա հարձակվելու խնդիր չունի: Այսուհանդերձ, Նեստերովսկին Դրոյին զգուշացնում է. « ...Միայն Ձեր հրամանատարությամբ գործող զորքերի, կամ Հայաստանի մեկ այլ զորամասերի կողմից թշնամական գործողությունների ձեռնարկման դեպքում, Կարմիր բանակը կդիմի վճռական գործողությունների եւ յուրաքանչյուր հարվածին կպատասխանի տասնապատիկ անգամ առավել հզոր հարվածներով...»[1]:

Դրոյին հասցեագրած այդ նույն ուղերձում Նեստերովսկին վերջնագրի կարգով պահանջում է 48 ժամվա ընթացքում հայկական զորքերը վերադարձնել նախկին՝ ելման դիրքերը, եւ միաժամանակ զգուշացնում, որ վերջնագրի պահանջները չկատարելու դեպքում Կարմիր բանակը կդիմի հարձակողական գործողությունների[2]:

Զանգեզուրում ծավալվող հետագա դեպքերը մատնանշում են, որ Դրոն եւ նրա զինակիցները որեւէ լուրջ ուշադրության չեն արժանացրել խորհրդային 28-րդ դիվիզիայի հրամանատարի կողմից իրենց ներկայացրած վերջնագրին: Հայաստանի Հանրապետության զորամասերի Զանգեզուրում ձեռնարկած առաջին ռազմական գործողությունը առանց դադարի շարունակվում է եւ ընթանում է հաջողությամբ: Դրոյի զորամասը ընդհուպ մոտենում է Գորիսին: Միաժամանակ Գորիս է հասնում Գարեգին Նժդեհի առաջնորդած Ղափանի եւ Պողոս Տեր-Դավթյանի զորագնդերը: Առանց ժամանակ վատնելու՝ Դրոն հարձակվում է Գորիսում կենտրոնացած խորհրդային զորքերի վրա եւ տարբեր ուղղություններից գրոհող զանգեզուրյան զորագնդերի համագործակցությամբ ջախջախում է հակառակորդի ուժերը, գրավում Գորիսը եւ հետապնդելով դուրս վռնդում Զանգեզուրի տարածքից:

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 8:
[2] Տե՛ս նույն տեղում:

Վերոհիշյալ հուշագրությունում հեղինակը, շարունակելով նկարագրել Դրոյի զորախմբի հարձակման մանրամասները, գրում է. «Գլխավոր շտաբի օգոստոսի զորաշարժականը ասում է, որ մեր շեշտակի հարվածի տակ Բուղդա թափայից եւ Էլի թափայից, Մինքենդի կողմից քոչվոր թուրքերը ջարդված են ու շպրտված: 16 ժամին զորայունը մոտեցավ Արփա-Գյադուկի գծին՝ գրավելով Էանթափա, Դաշթափա, Ալիաթափա եւ Ուզթայ: Մինչեւ 20 ժամին հրացանային, թնդանոթային ու գնդացրային ուժեղ կռիվ է եղել: 24 ժամին մեր շեշտակի ճնշումով, որն արեց Թարխանովի հեծելազորը, թշնամին ջարդվեց: Թշնամուն հետապնդող Թարխանյանի (նկատի ունի Թարխանովին-Հ.Գ.) հեծելազորը թշնամուց վերցրել է գնդացիրներ: Երեկոյան ժամը վեցին մեր զորամասերը հաղթականորեն գրավել են Գորիս քաղաքը...»[1]:

Ջախջախելով Զանգեզուրի Գորիսի եւ Սիսիանի շրջանները ներխուժած խորհրդային զորամասերին՝ Դրոյի զորախումբը խորհրդային հիմնական ուժերից մեկուսացնում է Նախիջեւանում բույն դրած թուրքական զորամասը եւ իրական հնարավորություն ստեղծում այն վերջնականապես ոչնչացնելու: Դրոն, իհարկե, հասկանում էր, որ Գորիսի ազատագրումն ու Զանգեզուրից խորհրդային զորքերին դուրս վռնդելը դեռեւս վերջնական հաղթանակ չէր ու բնավ չէր նշանակում, որ դրանով Զանգեզուրը ձերբազատվել էր Կարմիր բանակի հարձակումներից:

Դժվար չէր հասկանալ, որ Կարմիր բանակի հրամանատարությունը չէր կարող հրաժարվել խորհրդայնացման ճանապարհով Կովկասյան հանրապետությունները, այդ թվում նաեւ Հայաստանը նվաճելու եւ դեպի Արեւելք ծավալվելու իր ռազմավարական ծրագրերից, եւ անտարակույս հետեւելու էր Կարմիր բանակի նոր ու ավելի հզոր հարձակումը:

Դրոյի հրամանատարությամբ գործող զորախումբն այդ պահին բաղկացած էր ընդամենը 770 մարտիկներից, որոնցից 300-ը՝ իր առաջնորդած ջոկատումն էր, 300-ը՝ Գ. Նժդեհի, 120-ը՝ Սիսիանի մարտական ուժերի հրամանատար Պողոս Տեր-Դավթյանի եւ 50 հոգի՝ 3-րդ գնդից[2]:

Եթե Զանգեզուրի վրա հակառակորդի կողմից հետեւեին նոր հարձակումներ, որը կասկած չէր հարուցում, ապա չափազանց դժվար կլիներ վերոհիշյալ սահմանափակ ուժերով հաջողությամբ

[1] Ազատ, անկախ եւ միացյալ Հայաստանի վերջին օրերը, Երեւան, 1993, էջ 66:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 441, թ. 156:

դիմակայել Կարմիր բանակի հարվածներին ու արգելափակել նրանց մուտքը գավառի տարածք: Նվաճած հաղթանակն ամրապնդելու ու զարգացնելու համար, անհրաժեշտ էր զինական աջակցություն: Այդ նպատակով գեներալ Սիլիկյանին հասցեագրած օգոստոսի 6-ի հեռագրում՝ Դրոն նախ հայտնում է Գորիսն ազատագրելու իրողությունը, ապա խնդրում օգնական ուժեր[1]:

Օգոստոսի 3-ին, Զանգեզուրյան զորախմբի կողմից Գորիսի գրավման վերաբերյալ Կարմիր բանակի հրամանատարությունը ստանում է հետևյալ հեռագիրը.«... Զանգեզուրի գավառում Դրոն կենտրոնացնելով նշանակալի ուժեր՝ հարձակվել ու գրավել է Գորիսը: 28-րդ դիվիզիայի հեծյալ գունդը անցել է Նախիջևան: Մեր դիվիզիայի առաջավոր զորամասերը օգոստոսի 4-ի դրությամբ զբաղեցնում են Նովրուզլու-Արավուս-Տեղ բնագիծը...»[2]:

Հետապնդելով ջախջախված նահանջող կարմիր զորամասերին՝ Դրոյի Զանգեզուրյան զորախմբի ավանգարդում ընթացող զորամասերը գնդապետ Կուռո Թարխանյանի եւ Գարեգին Նժդեհի հրամանատարությամբ հասնում են մինչեւ Հագարու գետ:

Խուճապահար փախչելով՝ բոլշեւիկներն այնուամենայնիվ հասցնում են իրագործել իրենց սեւ գործը: Գնդակահարում են ձերբակալված բազմաթիվ անվանի զանգեզուրցի գործիչների, որոնց թվում նաեւ Հայաստանի խորհրդարանի անդամներ Վահան Խորենուն եւ Արշակ Շիրինյանին:

Գորիսը գրավելու հենց նույն օրը՝ օգոստոսի 3-ին, Դրոն երկու ուղերձ է հղում խորհրդային 28-րդ եւ 32-րդ դիվիզիաների հրամանատարներին ու զինկոմներին:

Ուղերձներից մեկում, արտահայտելով իր վրդովմունքը խորհրդային զինվորների կողմից Հայաստանի խորհրդարանի անդամներ Վահան Խորենու եւ Արշակ Շիրինյանի եղերական սպանության եւ Զանգեզուրի հայ բնակչության նկատմամբ գործադրած բռնությունների կապակցությամբ, Դրոն նշում է. «Կատարվել է այն, ինչից մենք խուսափում էինք: Հայկական աշխատավոր գյուղացիության եւ ռուսական դեմոկրատիայի միջեւ, որին, հակառակ նրա կամքին ու ցանկությանը, դուք Հայաստանի դեմոկրատական հանրապետության տարածքները զավթելու նպատակով օգտագործում եք հանուն Ձեր իմպերիալիստական նկրտումների, սկսվել են ռազմական գործողություններ: Զինկոմների եւ հեղկոմների չորսշաբաթյա գործունեությունը Զանգեզուրում եւ Սիսիանում, որն ուղեկցվում է խաղաղ աշխատավոր գյուղացիության նկատմամբ գործադրած բռնությամբ ու թալանով, ավարտվեց մեծագույն հանցագործությամբ, պառլամենտի անդամներ Վ. Խորենու եւ Ա. Շիրինյանի գազանային սպանությամբ:

... Այդ գազանային արարքը եւ հայ գյուղացիության արյունարբու դահիճ Խալիլ փաշայի հետ ունեցած դաշինքը, լավագույնս են մատնանշում ձեր զավթողական նպատակները, որին դուք քողարկում եք Կոմունիզմի կարմիր շղարշով...

Հայտնում եմ Ձեզ. հեռու տարեք արյունոտ ձեռքերը, հեռացեք ձեր կողմից զավթած Հայաստանի տարածքից:

Մի սանձազերծեք արյունահեղություն, հակառակ պարագայում հայ եւ ռուս երկու եղբայրական ժողովուրդների թափած արյան ողջ պատասխանատվությունը համայն աշխարհի աշխատավորության առջեւ, ընկնելու է Ձեր վրա...»[1]:

Խորհրդային զորքերի հրամանատարներին հասցեագրած Դրոյի երկրորդ ուղերձը յուրօրինակ պատասխան է 28-րդ դիվիզիայի հրամանատար Նեստերեվսկու ներկայացրած վերջնագրի:

«28-րդ եւ 32-րդ կարմիր դիվիզիաների հրամանատարներին.

Ստանալով իմ կառավարության կողմից Զանգեզուրը բոլշեւիկյան նվաճողներից մաքրելու հանձնարարությունը, առաջարկում եմ Ձեզ, ձեր զորքերը հեռացնել Զանգեզուրի հին սահմաններից այն կողմ, որն անցնում է Արցախյան լեռնանցքով:

Իմ կողմից զորքերին տրվել է Հագարու գետի ուղղությամբ պաշտպանական բնագծերում ամրանալու հրաման: Ձեզ տրվում է 24 ժամ ժամանակ, այդ տարածքները մաքրելու համար:

Ձեր կողմից ակտիվություն նկատվելու դեպքում, ամբողջ ռազմաճակատով անցնելու ենք վճռական հարձակման... Մինչեւ իմ կառավարության կողմից նոր, հատուկ հանձնարարության ստանալը, դիմակայության գիծը համարվում է Հագարու գետն ու Արցախյան լեռնանցքը»[2]:

Այդ ժամանակահատվածում խորհրդային զորքերի մուտքը Զանգեզուր դեռեւս ծավալվող գործողությունների սոսկ նախերգանքն էր, հիմնական գործողությունները տեղի էին ունենալու փոքր-ինչ անց:

Հարկ է ընդգծել, որ Դրոյի զորամասի հարձակումն առաջին լուրջ խոչընդոտն էր դեպի արեւելք «համաշխարհային հեղափոխություն» տարածող, եւ այդ ռազմավարությամբ արեւելքի ճնշված ազգերին «ազատագրելու» առաքելությունը ստանձնած բոլշեւիկ-

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Բանբեր Հայաստանի արխիվների, 1978, թիւ 1(50), էջ 44:

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 111, գ. 1:
[2] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 112:

ներ առաջնորդած խորհրդային զորքերի ճանապարհին: Մի՞թե արեւելքի ճնշված ազգերին «ազատագրելու» առաքելությունը ստանձնած խորհրդային զորքերը կհանդուրժեին հայ մարտական ուժերի հարուցած խոչընդոտը:

Մի քանի օր անց ջախջախված բոլշեւիկյան զորամասերին փոխարինելու են գալիս նոր զորամասեր:

Խորհրդային Ադրբեջանը պաշտպանելու, բայց իրականում ՀՀ Զանգեզուրյան զորախմբի դիմադրությունը ընկճելու, ինչպես նաեւ Զանգեզուրում իր ջախջախված զորամասերը համալրելու եւ վերախմբավորելու նպատակով Կարմիր բանակի հրամանատարությունը ձեռնարկում է վճռական քայլեր: Համաձայն ձեռնարկած քայլերի, Դրոյի զորախմբի դեմ գործելու եւ նրա դիմադրությունը խորտակելու նպատակով 11-րդ բանակի հրամանատարությունը կազմավորում է երկու զորախումբ.

1-ին հարվածային զորախումբը՝ 18-րդ հեծյալ, 20-րդ եւ 28-րդ դիվիզիաների 250, 251, 299-րդ գնդերի ու 83-րդ բրիգադի ուժերից եւ հրետանուց:

2-րդ օժանդակ զորախումբը՝ 248 եւ 249-րդ գնդերի ու հրետանու երկու մարտկոցների ուժերով [1]:

Հակառակորդի վերոհիշյալ զորամասերին դիմակայող ՀՀ զանգեզուրյան զորախումբը, ըստ Կարմիր բանակի հրամանատարության տվյալների բաղկացած էր հետեւյալ մարտական ուժերից՝ Դրոյի զորաջոկատը՝300, Նժդեհինը՝ 300, Պողոս Տեր-Դավթյանի գլխավորած Սիսիանի զորաջոկատը՝120 եւ 3-րդ գնդից 300 հոգի[2]:

Կարմիր բանակի հրամանատարության ներկայացրած այս տվյալները գրեթե համընկնում են իրենց զորախմբի վերաբերյալ Բաշգառնեցի Մարտիրոսի հիշատակած թվերին:

Դատելով ՀՀ զանգեզուրյան մարտական ուժերի թվակազմը ներկայացնող տվյալներից, դժվար չէ նկատել, որ այն միանգամայն անհամեմատելի է լիովին համալրված զորամասերից եւ հրետանային մարտկոցներից բաղկացած խորհրդային բանակի ուժերին: Մի էական հանգամանք եւս. Դրոյի զանգեզուրյան զորախումբը ընթացող մարտերում կրել էր որոշակի կորուստներ եւ այդ ընթացքում կենտրոնից որեւէ օգնություն չէր ստացել ու հույս էլ չկար, որ կարող էր ստանալ անգամ կռիվները շարունակելու պարագայում:

Կենտրոնացնելով զանգեզուրյան զորախմբին բազմիցս գերակշռող ուժեր՝ Կարմիր բանակի զորամասերը առաջին հարվածը հասցնում են ռազմաճակատի սուր ծայրում գտնվող գնդապետ Կուռո Թարխանյանի ու Գարեգին Նժդեհի զորաջոկատներին, որոնք, հերոսաբար դիմադրելով, բայց հարկադրված տեղի տալով գերակշռող ուժերի անընդմեջ կրկնվող հարձակումներին, սկսում են կանոնավոր զորաշարքերով քայլ առ քայլ նահանջել:

Կարմիր բանակի զորամասերի հարձակմանը զուգընթաց, իրենց գործողություններն են ակտիվացնում Զանգեզուրի բոլշեւիկյան կազմակերպությունները, որոնց զինված ջոկատները սկսում են թիկունքից հարվածներ հասցնել խորհրդային զորամասերին դիմակայող Դրոյի զորախմբին: Խորհրդահայ պատմաբան Ք. Խուդավերդյանը, ելակետ ունենալով խորհրդային զորքերի, կոմունիստների գործողությունները արդարացնելու ու դրականորեն արժեւորելու սկզբունքը, իր «Զանգեզուր» գրքում, անդրադառնալով այդ ժամանակահատվածում Զանգեզուրում տեղի ունեցած կռիվներին, գրում է. «Հարվածող խմբին (նկատի ունի Զանգեզուր ներխուժած խորհրդային զորամասերին-Հ.Գ.)միացան Զանգեզուրի կոմունիստական ջոկատները: Մշակվեց հակահարձակման հատուկ պլան, որի համաձայն օգոստոսի 7-ին՝ լուսաբացին սովետական զորքերն անցան հարձակման: Գերազանցապես Անգեղակոթի, Շագաթի, Մազրայի կոմունիստներից բաղկացած մի ջոկատ առաջադրանք ստացավ Հագարու գետի հոսանքով բարձրանալ Իշխանասար եւ մտնել Սիսիանի շրջան, ամրանալ Անգեղակոթ գյուղի մոտ եւ թիկունքից հարվածել հակառակորդին: Կոմունիստական ջոկատը հաջողությամբ կատարեց առաջադրանքը եւ արագացրեց թշնամու փախուստը»[1]:

Մի փոքր, բայց էական ճշտում: Խորհրդահայ պատմաբանի կողմից «թշնամի» անվանվող Հայաստանի Հանրապետության զանգեզուրյան զորախումբը ոչ թե փախուստի է դիմել, այլ, ինչպես արդեն նշվել է, պատերազմական գործողություններում ընդունված օրենքներին ու չափանիշներին համապատասխան, հակառակորդի գերակշռող ուժերին անմիջականորեն բախվելուց խուսափելու նպատակով, կանոնավոր զորաշարքերով նահանջել:

Որքան էլ ցավալի է հիշատակել, Դրոյի զանգեզուրյան զորախմբի նահանջին նպաստել են նաեւ Կարմիր բանակին օգնելու նպատակով հայ բոլշեւիկների նախաձեռնությամբ կազմակերպված մարտական ուժերի գործողությունները: Այդ իրողությունը, հիշատակած աշխատությունում փաստելով՝ Ա. Վարդապետյանը գրում է.

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 441, թ. 158:
[2] Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1934, մարտ, էջ 123:

[1] Խուդավերդյան Ք., Զանգեզուր, Երեւան, 1988, էջ 88-89:

«Այդ ժամանակ Հայաստանի հարավային շրջաններում (Գորիս, Սիսիան, Ղափան) կոմունիստական կազմակերպությունների գլխավորությամբ կազմակերպվեցին պարտիզանական ջոկատներ, որոնք մեծ օգնություն ցույց տվեցին հայ ժողովրդի ազատագրության համար մարտնչող կարմիր բանակի մարտիկներին»[1]:

Զանգեզուրի հայ բոլշևիկների մարտական ուժերի «հերոսական» գործողությունների մասին հիշատակում է նաև Բաշգառնեցի Մարտիրոսը. «Կուռոն եւ Նժդեհը յարձակուեցին գրաւելու Զաբուղը, բայց թշնամու գերազանց ուժերի դէմ երկու օր (48 ժամ) դիմադրելուց յետոյ՝ ստիպուած եղան նահանջել, որովհետեւ Խնձորեսկից էլ տեղացի բոլշեւիկները խփել էին մերոնց թիկունքից: Մերոնք նահանջեցին ու բռնեցին Գորիսի բարձունքը»[2]:

Զանգեզուր ներխուժած Կարմիր բանակի դեմ արդյունավետ գործողություններ ծավալելու համար Դրոյին անհրաժեշտ էին.

1. Համալրել ու վերախմբավորել զանգեզուրյան զորախումբը: Զանգեզուրում տեղի ունեցած մարտական գործողությունները արդեն պարզորոշ ցույց էին տվել, որ Կարմիր բանակի զորամասերի դեմ անմիջականորեն ճակատելու,առավել եւս հաղթանակներ ակնկալելու համար Զանգեզուրում գտնվող ռազմական ուժերը բացարձակապես անբավարար էին, իսկ ժողովուրդը, որն իրեն հերոսաբար էր դրսեւորել մամեդական հրոսակախմբերի ու ազերի կանոնավոր զորամասերի դեմ մղվող պայքարում, դեռեւս պատրաստ չէր ըստ ամենայնի պայքարելու խորհրդային ռուս զորամասերի դեմ: Իսկ տվյալ ժամանակահատվածում, բացի Դրոյի ընդհանուր հրամանատարությամբ գործող զորախմբից, Զանգեզուրում կազմակերպված ու պատրաստ վիճակում գտնվող մեկ այլ մարտական ուժ դեռեւս գոյություն չուներ: Զանգեզուրյան մարտական ուժերը կազմակերպելու եւ մարտադաշտ առաջնորդելու համար ժամանակ էր պահանջվում: Իսկ այդ պարագայում որեւէ երաշխիք չկար, որ կռիվները շարունակելու դեպքում կենտրոնը, այսինքն Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարությունը լրացուցիչ ուժեր կուղարկեր ու կհամալրեր նրա հրամանատարությամբ գործող զանգեզուրյան զորախումբը:

2. Ժողովրդի կազմակերպված եւ գործուն աջակցությունն ու զինված ելույթները: Նրա կարծիքով խորհրդային զորամասերի դեմ

[1] Վարդապետյան Ա., Հայաստանի կարմիր բանակը քաղաքացիական կռիվներում 1920-1921 թվականներին, Երեւան, 1960, էջ 29:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1934, մարտ, էջ 123:

մղվող պայքարին անհրաժեշտորեն պետք էր հաղորդել համաժողովրդական բնույթ եւ ուղղվածություն: Իսկ դրա համար մի փոքր ժամանակ էր պետք, որպեսզի զանգեզուրցիները խորապես հասկանային խորհրդային զորամասերին առաջնորդող բոլշեւիկյան կոմիսարների քարոզչության ու խոստումների սնամեջությունն ու կեղծիքը[1]:

Մի ուշագրավ փաստ: Նկատի ունենալով հենց վերոհիշյալ հանգամանքը՝ Դրոն Գորիսից նահանջելիս արտահայտել է հետեւյալ միտքը.«... լաւ կլինի, ժողովուրդը ճաշակէ բոլշեւիկների համն ու հոտը՝ թէկուզ ժամանակաւոր եւ ճիշտ կողմնորոշուէ...»[2]:

Արտեմ Խանզատյանի վկայությամբ, Դրոն այդ նույն միտքը. «... լաւ կլինի, ժողովուրդը ճաշակէ բոլշեւիկների համն ու հոտը՝ թէկուզ ժամանակաւոր...», արտահայտել է դեռեւս հունիսի կեսերին, երբ Կարմիր բանակի զորամասերը առաջին անգամ էին հայտնվել Զանգեզուրում [3]:

Նա, սկսած 1905-1906 թթ. Անդրկովկասում բռնկված հայ-թուրքական(թաթարական) կռիվների ժամանակաշրջանից, քաջատեղյակ էր Սեբաստացի Մուրադի ընդհանուր հրամանատարությամբ զանգեզուրցիների մղած ինքնապաշտպանական հերոսամարտերին ու մարտական անքասիր կարողություններին ու շատ լավ էր պատկերացնում, թե մարտական ինչպիսի ուժ եւ հզորություն կարող էին ներկայացնել զանգեզուրցիները, եթե նրանք «... բոլշեւիկների համն ու հոտը՝ թէկուզ ժամանակաւոր...» ճաշակելուց հետո, կազմակերպված միասնական ուժերով հանդես գային ընդդեմ կարմիր զորամասերի: Ժամանակը ցույց տվեց, որ իրոք, ամիսներ անց Գարեգին Նժդեհի գլխավորությամբ հռչակելով Զանգեզուրի՝ Ինքնավար Սյունիք, ապա Լեռնահայաստանի անկախությունը, Զանգեզուրի քաջակորով ժողովուրդը հրաշալիորեն դրսեւորեց մարտնչելու իր անհողդողդ կամքն ու պատրաստակամությունը:

3. Զանգեզուր-Արցախ զրախմբի ընդհանուր զորհրամանատար

Զանգեզուրում Կարմիր բանակի դեմ մարտական գործողությունների հետագա շարունակումը նշանակում էր անխուսափելի պատերազմ Հայաստանի Հանրապետության եւ Խորհրդային Ռուսաստանի միջեւ: Դրոն ներկայացնում էր Հայաստանի Հանրապետությունը եւ նրա համար առանց Հայաստանի կառավարության համաձայնության չափազանց դժվար էր ու խիստ պատասխանատու

[1] Տե՛ս ՀՀ ԿԱ, պ. 5, թթ. 3, գ. 2, էջ 3:
[2] Նույն տեղում:
[3] Անդ, Նժդեհ, էջ 485:

Խորհրդային Ռուսաստանի զորքերի դեմ ձեռնարկել գործողություններ, որոնք կարող էին ճակատագրական նշանակություն ունենալ Հայաստանի եւ ողջ հայության համար:

Նրա հրամանատարությամբ գործող մարտական ուժերի հնարավորությունները սահմանափակ էին: Կարմիր բանակի դեմ մարտական գործողություններ ծավալելու համար անհրաժեշտ էր Հայաստանի Հանրապետության կառավարության հրահանգը եւ զինական օգնությունը:

Իսկ նույն ժամանակահատվածում Մոսկվայում գտնվող Լեւոն Շանթի գլխավորած Հայաստանի Հանրապետության պատվիրակության եւ Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմ Չիչերինի միջեւ ընթացող բանակցություններն առանց որեւէ արդյունքի եւ համաձայնության ձեռքբերման ընդհատվել էին: Բանակցող կողմերի համաձայնությամբ բանակցությունները պիտի շարունակվեին Անդրկովկասում եւ Երեւանում:

«Յուլ. 20-ին,-գրում է Ս. Վրացյանը,- Խալիլ փաշայի ընկերակցությամբ, Լեգրանը (Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ-Հ.Գ.) հասավ Բագու եւ Ադրբեջանի կոմունիստների հետ խորհրդակցելուց յետոյ անցաւ Թիֆլիս, ուր օգոստոսի սկզբին Զանգեզուրում, Նախիջեւանում եւ Ղազախում տեղի ունեցող հայ-բոլշեւիկեան կռիւները դադարեցնելու նպատակով գումարուեց խորհրդաժողով Հայաստանի ներկայացուցիչներ՝ Ա. Ջամալեանի ու Ա. Բաբալեանի եւ Լեգրանի միջեւ եւ օգոս. 10-ին ստորագրուեց հաշտութեան համաձայնագիր, որով օգոստոսի 10-ին ժամը 12-ից սկսած վերջ էին գտնում պատերազմական գործողութիւնները Հայաստանի եւ Խորհրդային Ռուսաստանի միջեւ: Հայաստանի զօրքերը գրաւելու էին Շահթախթ-Խոկ-Ազնաբերդ-Սուլթանբէգ եւ ապա Քիրիից հիւսիս եւ Բազարչայից արեւելք անցնող գիծը, իսկ Ղազախի շրջանում այն գիծը, որ բռնում էին յուլիսի 30-ին: Խորհրդային Ռուսաստանի զօրքերը պիտի գրաւէին Արցախ, Զանգեզուր, Նախիջեւան շրջանները: Այս գրաւումով չէր որոշւում այդ գաւառների վերջնական պատկանելիութիւնը. այդ հարցը պիտի որոշուէր Հայաստանի Հանրապետության եւ Խորհրդային Ռուսաստանի միջեւ կնքելիք դաշնագրով»[1]:

Դրոն, մինչեւ Թիֆլիսում օգոստոսի 10-ի կնքված համաձայնագիրը, իր զորամասով գտնվում էր Դարալագյազում եւ հնարավոր միջոցներով պահելով կապը Զանգեզուրի մյուս շրջանների եւ Հայաստանի կառավարության հետ, հետեւում էր խորհրդային զորքերի տեղաշարժերին:

Օգոստոսի 10-ին Հայաստանի Հանրապետության եւ Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչների միջեւ կնքվում է պատերազմական գործողությունները դադարեցնելու համաձայնագիր: Նույն օրը Խորհրդային Ռուսաստանի պատվիրակության ղեկավար Լեգրանը զինադադարի մասին Կովկասյան բանակի ռազմա-հեղափոխական խորհրդի նախագահ Ս. Օրջոնիկիձեին հայտնում է հետեւյալը. «Այսօր, ես Հայաստանի Հանրապետության կառաւարության ներկայացուցիչներին տվեցի իմ համաձայնությունը պատերազմական գործողությունների դադարեցման վերաբերյալ հետեւյալ պայմաններով. հայկական կառավարությունը իր զորքերը հետ է քաշելու Զանգեզուրից եւ Նախիջեւանից մինչեւ Հանքեր:

Հետ քաշվող զորամասերի սահմանը նշված է այնպես, որպեսզի Նախիջեւան- Ղարաքիլիսա- Էնգելյուրտ ողջ ուղին դուրս մնա հայերի ազդեցությունից: Բազարչայի շրջանում հայերն իրենց զորքերը դուրս են բերելու Ղիսիրսարի լեռնաշղթայի շրջան (նկատի ունի Դրոյի զորամասը-Հ. Գ.):

Հայաստանի Հանրապետության կառավարությունը պաշտոնական համաձայնություն է տվել մեր զորքերի կողմից Նախիջեւան-Զանգեզուր - Էնգելյուրտ ուղիների եւ Բազարչայի շրջանը գրավելու վերաբերյալ»[1]:

Այս համաձայնագրի հաստատումը դեպի արեւելք ձգտող Խորհրդային Ռուսաստանի քաղաքականության կարեւոր նվաճումներից էր: Փաստորեն, խորհրդայնացնելով Ադրբեջանի Հանրապետությունն ու խորհրդային զորքերը հաստատելով Արցախում, ապա նաեւ Զանգեզուրում եւ Նախիջեւանում՝ Խորհրդային Ռուսաստանը նվաճում ու վերացնում է դեպի արեւելք տարածվելու եւ «հեղափոխական» Թուրքիայի հետ անմիջականորեն հաղորդակցվելու ճանապարհին գտնվող առաջին խոչընդոտները: Հաջորդը Հայաստանի եւ Վրաստանի Հանրապետություններն էին: Նույն համաձայնագրով իր զորքերը տեղաբաշխելով Արցախում, Զանգեզուրում եւ Նախիջեւանում, Խորհրդային Ռուսաստանը փաստորենշրջափակում է Հայաստանի Հանրապետությանը եւ անհրաժեշտ հող նախապատրաստում հետագա գործողությունների ծավալման համար:

[1] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 457:

[1] Բանբեր Հայաստանի արխիվների, 1978, 1(50), էջ 46:

Բոլշեւիկյան զորքերը, հաստատվելով Զանգեզուրի շրջանում, շատ շուտով սկսում են թալանն ու ավերածությունները, իսկ երբեմն նաեւ բռնությունները: Գավառում իրենց ծավալած հակաժողովրդական գործողությունները շարունակելու ու արդարացնելու նպատակով բոլշեւիկները «հակահեղափոխական դաշնակներին» վնասազերծելու շինծու պատրվակով ձերբակալում են բազմաթիվ խաղաղ բնակիչների: Բնական է, որ այդ ամենը չէր կարող չհարուցել բնակչության դժգոհությունը:

Բոլշեւիկների գործողությունները եւ տեղի բնակչության նկատմամբ դրսեւորված դաժան արարքները միանշանակորեն հաստատում էին, որ Զանգեզուրում տիրող այդօրինակ կացությունը երկար շարունակվել չէր կարող: Զանգեզուրցիներն աստիճանաբար սկսում են, ինչպես արտահայտվել էր Դրոն՝ բոլշեւիկների համն ու հոտը առնել: Իր հերթին, խորհրդային զորամասերի հրամանատարությունը իր գործակալների եւ ընդհատակում գործող հայ բոլշեւիկների աջակցությամբ ուշի ուշով հետեւում էր Դարալագյազում եւ Զանգեզուրի շրջանում տեղաբաշխված Դրոյի եւ Գարեգին Նժդեհի գլխավորած զորախմբերի տեղաշարժերին:

11-րդ Կարմիր բանակի շտաբին հասցեագրվածէ օգոստոսի 26-ին թվագրված զեկուցագրում Զանգեզուրում տիրող իրավիճակի վերաբերյալ հաղորդվում է. «Օգոստոսի 24-ին առավոտյան, հակառակորդը չպարզված ուժերով Ջազրիի շրջանում դիմել է հարձակման, բայց հեծյալ գնդի զորամասերի կողմից հետ է մղվել ելման դրություն: Դրոն, մնալով նախկին դիրքերում, ուժեղացրել է Ղիսիրսարի լեռնաշղթայի պահպանությունը, բայց առայժմ ակտիվություն չի ցուցաբերում: Նժդեհի հրոսակախմբերը, պահպանելով իր մշտական կապը Դրոյի հետ, սպառնում են մեր թիկունքին եւ այդ սպառնալիքը առավել ցայտուն դրսեւորվեց Դրոյի վերջին հարձակման ժամանակ (նկատի ունեն օգոստոսի սկզբների հարձակումը-Հ. Գ.)[1]:

Զանգեզուրում դեպքերը նոր-նոր սկսում էին ծավալվել, իսկ Դրոն, չնայած Կարմիր բանակի հրամանատարության ամփոփագրերում դեռեւս նշվում էր նրա անունը, իրականում նա այդ ժամանակ արդեն Զանգեզուրում չէր:

Հայաստանի Հանրապետության եւ Խորհրդային Ռուսաստանի միջեւ կնքվել էր կռիվները դադարեցնելու օգոստոսի 10-ի համաձայնագիրը: Դրոն ներկայացնում էր Հայաստանի Հանրապետու-

[1] Նույն տեղում, էջ 49:

թյունը, իսկ դա նշանակում էր, որ նա առանց ՀՀ կառավարության համաձայնության ու հրահանգի իրավունք չուներ անձնական նախաձեռնությամբ մարտական գործողություններ ձեռնարկել ընդդեմ խորհրդային զորքերի:

Քանի որ Հայաստանի Հանրապետության եւ Խորհրդային Ռուսաստանի միջեւ օգոստոսի 10-ին կնքվել էր կռիվները դադարեցնելու համաձայնագիրը, ուստի Դրոն Զանգեզուրում այլեւս անելիք չուներ: Սեպտեմբերի սկզբներին նա Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ Զանգեզուրից տեղափոխվում է Երեւան եւ շատ շուտով հայտնվելով կռիվների ռազմաբեմում՝ հայրենի հողի վրա մղելու էր իր վերջին ու դարձյալ հաղթական ճակատամարտը[1]:

Հեռանալիս, երբ բաժանվում էր Գարեգին Նժդեհից, նա տալիս է իր վերջին հրահանգը: Ըստ Մարտիրոսի վկայության՝ «Երբ Նժդեհը Լեռնահայաստան էր շարժում իր ուժերով, Դրոն ասաց նրան.

-Աշխատիր ժողովրդին լաւ կապել քեզ հետ եւ ձեռքիցդ չտալ Լեռնահայաստանը, որովհետեւ հետագային շատ դժուար կը լինի վերցնել այն ... կրկին»[2]:

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 55:
[2] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, նշվ. աշխ., էջ 465-466:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ

5.1. ՍՈՒՐՄԱԼՈՒԻ ՀԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Քեմալական Թուրքիան՝ Խորհրդային Ռուսաստանի հետ օգոստոսի 24-ին կնքված պայմանագիր ով, ստանալով խորհրդային իշխանության համաձայնությունը, պատերազմ է սկսում Հայաստանի Հանրապետության դեմ: Պատերազմի առաջին իսկ օրերին հայ-թուրքական ռազմաճակատում ծավալված մարտական գործողությունները հստակորեն մատնանշում են, որ Հայաստանի Հանրապետությունը ինչպես հարկն է չէր նախապատրաստվել դիմագրավելու քեմալական Թուրքիայի հարձակմանը:

Եթե Հայաստանի Հանրապետությունը գոյատեւել է ընդամենը երկու եւ կես տարի, ապա որեւէ տարակույս լինել չի կարող, որ ՀՀ կառավարությունը իր գործունեության ժամանակահատվածում, ներքին ու արտաքին քաղաքականության մեջ ունեցել է օբյեկտիվ եւ սուբյեկտիվ սխալներ ու բացթողումներ: Օրինակ, հարց է ծագում. կարող էր ՀՀ կառավարությունն անհրաժեշտ քայլեր ձեռնարկել բարիդրացիական հարաբերություններ հաստատելու քեմալական Թուրքիայի հետ ու կանխել թուրքական զորքերի հարձակումը: Հայաստանի Հանրապետության անկումից հետո քիչ չեն այն քաղաքական գործիչներն ու պատմաբանները, որոնց մի մասը, առաջնորդվելով զուտ կուսակցական նկատառումներով, իսկ մի մասն էլ՝ պատմական ճշմարտությունը բացահայտելու մղումով, քննադատել ու դատապարտել են եւ չի բացառվում, որ հետայսու դարձյալ շարունակեն քննադատել ու դատապարտել ՀՀ կառավարության կենսագործած քաղաքականության սխալներն ու բացթողումները: Առաջ ացնելով՝ նշենք.

1. Այո, ՀՀ կառավարությունը կարող էր խուսափել պատերազմից, եթե անվերապահորեն ընդուներ եւ կատարեր քեմալական Թուրքիայի առաջադրած պայմանները, որն աներկբայորեն հավասարազոր էր համակերպվել Հայաստանին պարտադրվող մեծագույն կորուստների եւ զոհողությունների իրողությանը:

Ալ. Խատիսյանի մեկնաբանմամբ քեմալական Թուրքիայի կողմից Հայաստանին պարտադրվում էին հետեւյալ զոհաբերությունները. «... Թուրքերը առաջարկած էին Հայաստանի կառաւարութեանը հրաժարիլ Սեւրի դաշնագրէն եւ ընդունիլ Բաթումիի դաշնագիրը, այսինքն՝ փոխանակ 180,000 քիլոմեթրի, ստանալ 9000»[1]:

Որեւէ տարակույս լինել չէր կարող, որ քեմալական Թուրքիայի կողմից Հայաստանին առաջադրված համանման պահանջների պատասխանը միանշանակորեն պիտի լիներ հետեւյալը. «Հայաստանի կառաւարութիւնը բացարձակորեն մերժած էր այդ պահանջը: Յետոյ Թուրքերը պահանջած էին հաւաքուիլ խորհրդաժողովի՝ ընդունելով իբրեւ հիմք Բաթումիի դաշնագիրը: Հայկական կառաւարութիւնը պատասխանած էր, որ Սեւրի դաշնագիրը ստորագրուելէն յետոյ անկարելի է մտածել Բաթումի դաշնագրի մասին»[2]:

Հայաստանի Հանրապետության առաջին վարչապետ Հովհ. Քաջազնունին, նույնպես անդրադառնալով այդ հարցի մեկնաբանմանը՝ տալիս է գրեթե համանման պատասխան. «Ի՞նչ պիտի առաջարկէին մեզ Թուրքերը, եթե ընդունէինք բանակցելու հրաւէրը:

Հաւանականօրէն պիտի սկսէին Բաթումիից ու Բրեստ-Լիտովսկից եւ ապա՝ աստիճանաբար զիջելով հասնէին մինչեւ 1914 թւականի սահմանները. գուցէ մի քայլ ետ գնային, հրաժարուէին նաեւ Բայազետից ու Ալաշկերտից: Անհաւանական է, որ սրանից աւելի զիջող լինէին- նոյնիսկ 1920թ. սեպտեմբերին: Փոխարենը կպահանջէին, իհարկէ, որ Հայաստանի կառաւարութիւնը հրաժարուէր Սեւրի դաշնագրով նախատեսւած իրաւունքներից:

Ի՞նչպէս կընդունէր մի այդպիսի առաջարկ Հայաստանի կառաւարութիւնը:

Կմերժէր անկասկած...

Եւ այդպես կանէր ոչ միայն դաշնակցական Բիւրո- Կառաւարութիւն, այլեւ ամէն մի ուրիշ հայ կառաւարութիւն»[3]::

Կարմիր բանակի կողմից Արցախի գրավումով ու Զանգեզուրի վրա ձեռնարկած հարձակումներով իրականում արդեն դրվել էր խորհրդային իշխանության կողմից իրականացվող «համաշխարհային հեղափոխությանն» արգելափակող Հայաստանի Հանրապետու-

---

[1] Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, «Համազգային», 1968, էջ 254:
[2] Նույն տեղում:
[3] Քաջազնունի Հովհ., Հ.Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս, Երեւան, 1994, էջ 33:

թյան նվաճման հիմնաքարը: Թուրքական զորքերի հարձակումով հանրապետությունը հայտնվում է Հայաստանի անկախությունը կորցնելու եւ այն բռնազավթելու դիտավորությամբ հյուսիսից ու հարավից տեղացող հարվածների աքցանում: Բոլշեւիկյան Ռուսաստանի եւ քեմալական Թուրքիայի փոխհամաձայնությամբ իրականացվող գործողությանը ճանապարհ էին հարթելու Հայաստանում բույն դրած հայ բոլշեւիկները, որոնք հայկական զորաբանակի եւ բնակչության շրջանում ծավալած իրենց ազդադավ ու քայքայիչ գործունեությամբ հող նախապատրաստեցին Հայոց անկախ պետականության կործանմանը:

Հայաստանի վրա Թուրքիայի հարձակման նախօրեին, ՀԿԿ ԿԿ-ն, որը 1920թ. մայիսյան դեպքերից հետո հանգրվանել ու գործում էր Բաքվում, սեպտեմբերի 20-ին գաղտնի հրահանգ է տալիս Հայաստանում, մասնավորապես հայկական բանակում, գործող իր բոլոր կառույցներին, որով հանձնարարվում է լայն քարոզչական աշխատանք ծավալել ընդդեմ պատերազմի, ընդամին ընդգծելով.

«... 1. Թուրքիան այլեւս նախկին Թուրքիան չէ եւ Հայաստանի նկատմամբ ագրեսիվ նպատակներ չունի.

2. Քեմալական Թուրքիան Խորհրդային Ռուսաստանի դաշնակիցն է եւ պայքարում է իր ազգային-ազատագրության համար՝ ընդդեմ իմպերիալիզմի (Անգլիայի, Ֆրանսիայի, Հունաստանի):

3. Հանրապետական Հայաստանի հաղթանակը Թուրքիայի նկատմամբ կնշանակի իմպերիալիզմի ուժեղացումը Մերձավոր Արեւելքում եւ դրանով իսկ կվտանգվի հեղափոխության հաղթանակը Անդրկովկասում, ապա նաեւ Արեւելքի խորհրդայնացումը:

4. Հայ բոլշեւիկ կոմունիստների խնդիրը պետք է լինի՝ արագացնել հանրապետական Հայաստանի պարտությունը, որով եւ կարագացվի Հայաստանի խորհրդայնացումը: Այս նպատակի համար պետք է.

ա. Կազմալուծել հայկական կռվող բանակը բոլոր միջոցներով, այն է՝

բ. կազմակերպել դասալքություն եւ ամեն կերպ խանգարել զորահավաքին,

գ. ռազմաճակատներում հասկացնել զինվորներին, որ նրանք չկրակեն առաջացող Թուրքական զինվորների վրա, այլ լքելով դիրքերը՝ վերադառնան թիկունք,

դ. չենթարկվել սպաների հրահանգներին եւ հարկ եղած դեպքում ոչնչացնել նրանց:

ե. Այս ամենի հետ ամենաէականն է հասկացնել հանրապետական Հայաստանի զինվորներին, որ հաղթող Թուրքական ասկյարը հեղափոխական ասկյար է...»[1]:

Բաքվից առաքված այս «հույժ գաղտնի» հրահանգի վերջում հանձնարարվում է «... գրությունը կարդալ սահմանափակ ժողովներում եւ կարդալուց հետո անմիջապես այրել»:

«Հույժ գաղտնի» հրահանգի տակ ստորագրել են Ս. Կասյանը, Ա. Մռավյանը, Ա.Նուրիջանյանը, Ամիրխանյանը, Դովլաթյանը եւ Ա. Հովհաննիսյանը[2]:

Եւ պատահական չէ, որ հետագայում խորհրդահայ պատմաբաններն ու քաղաքական գործիչները, անդրադառնալով 1920 թ. հայ-թուրքական պատերազմի գնահատմանը, աշխատել են իրենց աշխատություններում ու ելույթներում վարկաբեկել եւ պատերազմի բռնկման ու նրա պատճառած ողջ արհավիրքների մեղքը բարդել բացառապես Հայաստանի Հանրապետության կառավարության եւ իշխող կուսակցության՝ Հ.Յ.Դաշնակցության վրա:

Մի փոքր, բայց խոսուն փաստարկ- վկայություն:

1920 թ. հայ-թուրքական պատերազմին տրված գնահատականներում առաջնորդվելով միմիայն նեղկուսակցական եւ հակադաշնակցական սկզբունքներով՝ ակադեմիկոս Մ. Ներսիսյանը, խոսելով պատերազմի պատճառների մասին, հանգում է իր դավանած գաղափարախոսությանն ու ապրած ժամանակի ոգուն եւ պահանջներին համահունչ, կարելի է ասել, հակահայ հետեւյալ հետեւությանը. «Հավատարիմ իր բուրժուական հակահեղափոխական էությանը, դաշնակցական կառավարությունը 1920 թ. սկսել էր մի նոր ավանտյուրիստական պատերազմ ազգային-ազատագրական պայքարի բովում գտնվող Տաճկաստանի դեմ»[3]:

Հայ պատմաբանի կողմից Թուրքիայում ծավալված քեմալական շարժումը որպես ազգային-ազատագրական պայքար ներկայացնելը եւ հայ-թուրքական պատերազմի բռնկման մեղքը դաշնակցական կառավարության «ավանտյուրիստական» ձգտումներին վերագրելը, կարծում եմ, որեւէ մեկնաբանության կարիք չունի, այսպիսի գնահատականի ու բնորոշման կնախանձեն եւ կողջունեն անգամ թուրք պատմաբանները:

---

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 275, թ. 1:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Ներսիսյան Մ., Նոյեմբերյան հեղափոխությունը Հայաստանում, Երեւան, 1935, էջ 115:

Իրականում, քեմալական Թուրքիայի կողմից Հայաստանի Հանրապետության վրա ձեռնարկվելիք հարձակումը նախապատրաստվում էր դեռեւս 1919 թվականից, Թուրքիայում Մուստաֆա Քեմալի առաջնորդած ազգայնական շարժման ձեւավորման ժամանակաշրջանից, եւ ինչպես իրավացիորեն նշում է Ս. Կարապետյանը. «...պանթուրքական պետություն ստեղծելու իր դիվային պլանները կենսագործելու նպատակով...»[1]:

Այս իրողությանը պետք է ավելացնել այն, որ Թուրքերը երբեք չէին կարող համակերպվել Հայոց անկախ պետականության գոյությանը եւ առաջին իսկ հնարավորության դեպքում պատրաստ էին կործանելու Հայաստանի Հանրապետությունը: Խորհրդային Ռուսաստանի հետ ձեռք բերած դաշինքը նրանց հրաշալի հնարավորություն էր ընձեռում ծնկի բերելու Հայաստանը, եւ Թուրքերն, իհարկե, չէին կարող չիրագործել այդ հնարավորությունը:

Եւս մի կարեւոր փաստարկ. 1920 թ. օգոստոսի 10-ին արդեն կնքվել էր Սեւրի դաշնագիրը, որի համաձայն Թուրքիայի կառավարությունը նույնպես համաձայնվել եւ իր ներկայացուցիչների ստորագրությամբ վավերացրել էր ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնի եւ մյուս տերությունների ներկայացուցիչների կողմից, Տրապիզոն նավահանգստով ելք դեպի Սեւ ծով Հայաստանի Հանրապետության տարածքների սահմանները հաստատող համաձայնագիրը:

Քեմալական Թուրքիան, որպեսզի ձերբազատվեր Սեւրի դաշնագրի պահանջներն իրագործելուց, պետք է ասպարեզից հեռացներ եւ հնարավորության դեպքում մեկընդմիշտ վերացներ այդ համաձայնագրի իսկական իրավատիրոջը՝ Հայաստանի Հանրապետությունը: Քանի գոյություն ուներ Հայաստանի Հանրապետությունը, Թուրքիայի համար իրողություն եւ սպառնալիք էր Սեւրի դաշնագիրը, իսկ եթե չէր լինի Հայաստանի Հանրապետությունը, ապա բնականաբար չէր լինի նաեւ Սեւրի դաշնագիրը:

Քեմալական Թուրքիայի կողմից առանց պատերազմ հայտարարելու Հայաստանի Հանրապետության վրա հարձակվելը նախ եւ առաջ հետապնդում էր նաեւ Սեւրի դաշնագիրը արժեզրկելու եւ նրա պահանջների կատարումը վերացնելու նպատակ:

Հայ-թուրքական պատերազմի բռնկման պատճառների մասին հետաքրքիր բացատրություն է տալիս Հ.Քաջազնունին. «1918

[1] Կարապետյան Ս., 1920 թ. հայ-թուրքական պատերազմը եւ Սովետական Ռուսաստանը, Երեւան, 1965, էջ 24:

թվականին ջախջախուած Թիւրքիան երկու տարի ձգտում էր հանգիստ...

Այդ երկու տարուայ ընթացքում Թուրքերը չունչ քաշեցին, կազդուրուեցին: Հանդէս եկան երիտասարդ, ձեռներէց ու հայրենասէր զինուորականներ, որոնք Անատոլիի խորքերում սկսեցին արագօրէն վերակազմել բանակը: Թուրքերի մէջ ուժգնօրէն արթնացել էր ազգային գիտակցութիւնը ու ինքնապաշտպանութեան բնազդը: Սեւրի դաշնագրին պէտք է հակադրէին ռազմական ոյժ, որպէսզի ապահոված լինէին իրենց ապագան գոնէ Փոքր Ասիայում: Պարզ է, որ այդ հակադրութիւնը պէտք է հանդէս բերուէր ոչ այնքան հիւսիս-արեւելքում, որքան հարաւ-արեւմուտքում (նկատի ունի Հունական ճակատը -Հ.Գ.): Բայց այնտեղ կենտրոնանալու ու Հունաստանի դէմ ճակատ պահելու համար պէտք էր կանխապէս ապահովէին իրանց թիկունքը հայկական սահմանի վրայ: Գուցէ կարիք ունէին զէնքի ու զինամթերքների, որ մենք ամբարել էինք Ղարսի ու Ալեքսանդրապոլի պահեստներում: Գուցէ եւ այն, որ պահանջ էին զգում փորձելու իրանց ոյժերը նախ թոյլ հակառակորդի վրայ, որպէսզի ինքնավստահութիւն ձեռք բերէին՝ աւելի մեծ ու դժուար ձեռնարկի համար»[1]:

Հայրենական պատմաբաններից պրոֆեսոր Է. Զոհրաբյանը իր հեղինակած «1920 թ. Թուրք-Հայկական պատերազմը եւ տերությունները» աշխատությունում, վերլուծելով պատերազմի նախօրեին տարածաշրջանում տիրող իրադրությունը, մեջբերում է Թուրք պատմաբան Ջեվդեթ Քերիմի հետեւյալ՝ «Անատոլիայի ղեկավարները քաղաքական եւ ռազմական տեսակետից դրությունն Արեւելքում ավելի լուրջ էին համարում: Քանի որ հույների եւ ֆրանսիացիների դեմ սկզբնական շրջանի համար պաշտպանական խնդիրներ էին դրված, ապա այդ ճակատներում մենք ձգտում էինք աննշան ուժերով խանգարել հակառակորդի հետագա առաջխաղացմանը. Իսկ գլխավոր ուշադրությունը Արեւելյան ճակատի վրա էր դրված ...» խոստովանությունը, որը լավագույնս է հաստատում Հ. Քաջազնունու վերոհիշյալ գնահատականը: Թուրք պատմաբանը նաեւ փաստարկում է, թե ինչով էր պայմանավորված իրենց գլխավոր ուշադրությունը Արեւելյան ճակատի վրա կենտրոնացնելու ռազմավարությունը:

«...Հաջողությունը,-գրում է Ջեվդեթ Քերիմը,- այստեղ պետք է ոչնչացներ հայկական բանակը եւ հայկական պետությունը, որը

[1] Քաջազնունի Հովհ., նշվ. աշխ., էջ 33:

թարախապալարի նման դեռ պահպանվել էր մեր երկրի մարմնի վրա, քանդեր այն ծուղակը, որ անգլիացիները ուզում էին ստեղծել մեզ համար Արեւելքում, արագացներ բոլշեւիկների հետ հաստատումը եւ արդյունքում ստեղծեր նպաստավոր նախադրյալներ մեր ներքին ու արտաքին քաղաքականության համար»[1]:

Սեւրի դաշնագրի ստորագրումից հետո Հայաստանի Հանրապետության իշխանություններն ավելի քան համոզված էին, որ դաշնագիրը ստորագրող տերություններն այս անգամ անպայմանորեն հետամուտ կլինեն ու կհարկադրեն Թուրքիային կատարելու ստորագրած համաձայնագրերը, եւ Հայաստանի Հանրապետությունը տեր կդառնա դաշնագրով սահմանված տարածքին:

«...Հայաստանը,- նշում է Ալ. Խատիսյանը,- այնուամենայնիւ, դեռ չէր կտրած յոյսը Եւրոպայեն, Դաշնակիցներէն, Փարիզի Խորհրդաժողովէն, Ամերիկայէն: Ատով պէտք է բացատրել, որ ան առանձին անհրաժեշտութիւն չէր տեսած անմիջական բանակցութիւններու մէջ մտնել Թուրքերու հետ որեւէ համաձայնութեան եզր գտնելու համար: Մեծ պետութիւններու կողմէ ստորագրուած դաշնագիրը, որ կու տար Հայաստանին Կարինը, Մուշը, Վանը, Տրապիզոնը, չէր կարելի վերաքննութեան ենթարկել միայն հայերու եւ Թուրքերու միջոցով: Այդպէս էր հոգեբանական եւ իրական դրութիւնը»[2]:

Եթե ընդունենք, որ, իրոք, Հայաստանի իշխանությունները վերոհիշյալ պատճառաբանությամբ ի զորու չէին կանխել Թուրքական զորքերի հարձակումը, ապա անհրաժեշտաբար պիտի ձեռնարկեին հնարավոր բոլոր միջոցները ՀՀ բանակը ըստ ամենայնի հզորացնելու եւ պատրաստ լինեին ցանկացած պահի հաջողությամբ դիմագրավելու թշնամու հարձակմանը, մանավանդ, որ տեղյակ էին քեմալական շարժմանը ու նրա պայքարի նպատակին:

Ս. Վրացյանի գնահատմամբ՝ Հայաստանը «...բոլորովին պատրաստ չէր այդ պատերազմին: Դեռ նոր էր դուրս եկել ներքին քաղաքացիական կռիւների շրջանից: Մայիսեան բոլշեւիկեան շարժումները գրեթէ կազմալուծել էին նրա բանակը. թիւրքական շրջանների նւաճման գործողութիւնները աւելի եւս թուլացրել էին երկրի մարտական ուժերը:

...Թուրքերի ընդհանուր հարձակումը յանկարծակիի բերեց հայկական բարձր հրամանատարութեան...»[3]:

[1] Զոհրաբյան Է., 1920թ. Թուրք-Հայկական պատերազմը եւ տերությունները, Երեւան, 1997, էջ 18-19:
[2] Խատիսեան Ալ., նշվ. աշխ., էջ 253:
[3] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 476:նշվ.

ՀՀ վերջին վարչապետի, որն այդ ժամանակ կառավարությունում զբաղեցնում էր երկրագործության նախարարի պաշտոնը, հավաստմամբ՝ Թուրքական զորքերի հարձակումը Հայաստանի վրա «յանկարծակիի բերեց հայկական բարձր հրամանատարութեան...», այսինքն այն Հայաստանի Հանրապետության իշխանությունների համար անակնկալ էր:

Պատմական այդ ժամանակահատվածի ուսումնասիրությունն ու անկողմնակալ վերլուծությունը բավարար հիմք են տալիս պնդելու, որ Հայաստանի իշխանությունների համար չէին կարող գաղտնիք լինել Թուրքիայում Մուստաֆա Քեմալի գլխավորած ազգայնական շարժման իրողությունը եւ նրա հետապնդած նպատակների իրական բովանդակությունը: Իսկ քեմալական շարժումը կարճ ժամանակահատվածում ավելի եւ ավելի էր ծավալվում ու ամրապնդվում: Հայաստանի իշխանությունների համար չէր կարող գաղտնիք լինել նաեւ քեմալական Թուրքիայի իրական վերաբերմունքն ու զավթողական նկրտումները իր հարեւան տերության՝ Հայաստանի Հանրապետության նկատմամբ:

Ռուբեն Տեր-Մինասյանի խոստովանությամբ, Թուրք-բոլշեւիկյան կապերի ու Հայաստանի նկատմամբ նրանց ծրագրած նպատակների մասին իրենց հայտնի էր մինչեւ պատերազմ բռնկվելը, դեռեւս «...1919 թ. վերջերը, երբ հաստատ է դառնում այն լուրը, թէ բոլշեւիկ- Թուրք համաձայնութիւններ կան: Բոլշեւիկների դիրքը ճշտելու նպատակով էր, որ Բիւրոն, համարեա ամբողջ կազմով, գնում է Թիֆլիս եւ Վրացեանի միջոցով տեսակցութիւն ունենում Նազարէթեանի (ՌԿԲԿ Կովկասյան բյուրոյի քարտուղար-Հ.Գ.) հետ. պարզւում է մեզ համար, թէ բոլշեւիկների եւ Թուրքերի համաձայնութեան շնորհիւ՝ պիտի զոհաբերուի Հայաստանը»[1]:

Ավելին, հայրենական պատմաբաններից Ա. Հակոբյանի «Հայաստանի խորհրդարանը եւ քաղաքական կուսակցությունները (1918-1920)» աշխատությունում հեղինակի կողմից մեջբերված ՀՀ ռազմական նախարարության գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի պետ, կապիտան Մուրադյանի գաղտնի ամփոփագրերից մեկը հավաստում է. «Ստացված լուրերի համաձայն՝ բոլշեւիկների եւ Թուրքերի միջեւ կայացել է նոր համաձայնություն, որի համաձայն մինչեւ Արփաչայը (Ախուրյան գետը) տրվում է Թուրքերին, իսկ վերջիններս դրա դիմաց պարտավորվում են Ադրբեջանի հետ միասին ուժեր հատկացնել կամավորների (Դենիկինի) դեմ կռվելու հա-

[1] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 7, էջ 321-322:

մար: Բոլշեւիկները զենք են մատակարարում ինչպես Թուրքիային, այնպես էլ Ադրբեջանին»[1]:

Հայրենական պատմաբաններից Վ. Վիրաբյանը իր «Հայկական հետախուզությունը առաջին հանրապետության տարիներին (1918-1920 թթ.)» աշխատությունում բազմաթիվ փաստեր է վկայակոչում ՀՀ հետախուզության ծառայության աշխատակիցների հաղորդած տեղեկություններից, որոնք հստակորեն մատնանշում են ոչ միայն քեմալականների ձեռնարկած բազմապիսի արգասաբեր գործողությունների իրողությունը, այլեւ բանակի կազմավորման գործում ձեռքբերած նվաճումները, կազմավորված զորամասերի թվակազմն ու տեղաբաշխման վայրերը: Վ. Վիրաբյանի վերոհիշյալ աշխատությունում տեղ գտած հայկական հետախուզության աշխատակիցների հաղորդած տեղեկությունները կրկին անգամ հավաստում են, որ քեմալական Թուրքիայի զավթողական նկրտումներն ու ըստ այդմ նրա հարձակումը Հայաստանի Հանրապետության վրա Հայաստանի իշխանությունների համար չէր կարող անակնկալ լինել[2]:

Այսուհանդերձ, Հայաստանի իշխանություններն առավել ճշգրտված եւ արժանահավատ տվյալներ չեն ունեցել քեմալականների մարտական ուժերի մասին եւ քանի որ խորապես հավատացել են անհրաժեշտ պարագայում դաշնակիցներից սպասվելիք օգնությանն ու աջակցությանը, ոչ իրատեսորեն ու սխալ են գնահատել ինչպես իրենց, այնպես էլ քեմալականների կարողություններն ու իրական հնարավորությունները:

Անդրադառնալով ՀՀ ղեկավար մարմիններում արմատավորված այդ սխալ համոզմունքին ու մտայնությանը՝ Հ. Տերտերյանը խոստովանում է. «Մեր պետական եւ կուսակցական որոշ շրջաններում այն կարծիքն էր տիրում, որ քեմալական ուժերի հետ բախման պարագային հայկական զորամասերը հեշտությամբ կարող են գրաւել Էրզրումը...»[3]:

Պիտի նկատել, որ բացի հայկական հետախուզության աշխատակիցների հաղորդած տեղեկություններից, արդեն 1920 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներից սկսած պարբերաբար բախումներ էին տեղի ունենում հայկական սահմանապահ զորքերի եւ Թուրքական զորամասերի միջեւ: Սահմանապահ զորամասերի հաղորդագրություն-

[1] Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը եւ քաղաքական կուսակցությունները (1918-1920, Երեւան, 2005, էջ 85:
[2] Վիրաբյան Վ., Հայկական հետախուզությունը առաջին հանրապետության տարիներին(1918-1920 թթ., Երեւան, 2003, էջ 135-145:
[3] «Հայրենիք» ամսագիր, 1954, էջ 6:

ը միանշանակորեն մատնանշում են, որ մշտապես նախահարձակ են եղել Թուրքերը, որոնք հաճախակի խախտել են հանրապետության սահմանների տարածքային անձեռնմխելիությունը: ՀՀ սահմանամերձ շրջանների վրա Թուրքական զորքերի կատարած հարձակումների մասին Հայաստանի Հանրապետության արտգործնախարարությունը մշտապես տեղեկացրել է Թիֆլիսում իր լիազոր ներկայացուցիչ Տ. Բեկզադյանին: Այդ հեռագրերից մեկում հաղորդելով Օլթիի եւ Սարիղամիշի ուղղությամբ սեպտեմբերի 13-ի վաղ առավոտյան Թուրքական զորքերի ձեռնարկած հարձակման մասին, ՀՀ արտգործնախարարությունը Տ. Բեկզադյանին հանձնարարում է. «...այդ մասին անհապաղ հաղորդել դաշնակցային բոլոր ներկայացուցիչներին Թիֆլիսում, ինչպես նաեւ Կոստանդնուպոլսում ու Փարիզում եւ բողոքել Թուրքերի գործողությունների դեմ, որոնք խախտում են Թուրքիայի կողմից ստորագրված հաշտության պայմանագրի բուն հիմքերը»[1]:

Քեմալական Թուրքիան, Խորհրդային Ռուսաստանի օգնությունն ու աջակցությունը ստանալուց հետո, հեշտությամբ չէր հրաժարվելու իր ծրագրերից ու նպատակներից : Իսկ Հայաստանի կառավարությունը դեռեւս հույսեր է փայփայել, որ կարելի էր բողոքելով եւ դաշնակիցների միջամտությամբ «կարգի հրավիրել» քեմալական Թուրքիային, որը չէր ընդունում ու չէր ճանաչում առաջին աշխարհամարտում պարտված Թուրքիային եւ հետեւաբար նրա ստորագրած պայմանագիրը:

Սեպտեմբերի 23-ին Թուրքական զորաբանակը Քեազիմ Կարաբեքիր փաշայի գլխավորությամբ ներխուժում է Հայաստան:

Պատերազմը սկսվում է: Ինչպե՞ս էին գնահատում Հայաստանի իշխանություններն ու ղեկավար գործիչները պատերազմ բռնկվելու պարագայում Հայաստանի Հանրապետության եւ քեմալական Թուրքիայի զինված ուժերի իրական վիճակն ու հնարավորությունները:

Պիտի ընդգծել, որ Հայաստանի Հանրապետության եւ քեմալական Թուրքիայի կացությունը, մարտական ուժերի իրական վիճակը, կարողություններն ու հնարավորությունները գնահատելիս Հայաստանի իշխանությունների եւ ղեկավար գործիչների դիրքորոշումները մեծապես պայմանավորված էին հետեւյալ հանգամանքներով.

1. Հայաստանի Հանրապետության տարածքը ՀՀ կանոնավոր զորամասերի ձեռնարկած մարտական գործողությունների շնորհիվ

[1] ՀԱԱ, ֆ. 200, g. 486, գ. 5, թ. 226:

ամբողջովին «մաքրվել էր» մահմեդական տարրերից, որոնք Թուրքիայի, ապա նաեւ Ադրբեջանի հանրապետության աջակցությամբ ու դրդումով պարբերաբար ապստամբում էին: Հայաստանի Հանրապետության տարածքում Թուրքիան եւ Ադրբեջանի հանրապետությունը, հանձինս իրենց արյունակիցների եւ հավատակիցների, այլեւս չունեին հուսալի ու աջակից դաշնակիցներ:

2. Հայաստանի Հանրապետության բանակը շատ լավ զինված էր, հանդերձավորված եւ ապահովված բոլոր անհրաժեշտ պարագաներով: Հանրահայտ փաստ է, որ Հայաստանը պատերազմի նախօրեին զգալի ռազմական եւ նյութական օգնություն է ստացել դաշնակիցներից, մասնավորապես Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարություններից, որոնք ՀՀ զինված ուժերին էին տրամադրել համապատասխանաբար 40.000 եւ 10.000 թվակազմ բանակ զինելու համար անհրաժեշտ քանակության զենք, զինամթերք եւ հանդերձանք:

Այս առումով չի կարելի համաձայնել Ս. Վրացյանի հետեւյալ պնդմանը. «...Ստալինի եւ Մոսկվայի անմիջական հաւանությամբ եւ դրամական ու ռազմական աջակցությամբ Քեազիմ Կարաբեքիրի բանակը ազատություն ստացաւ յարձակվելու անպաշտպան Հայաստանի վրայ»[1]:

Այո, թուրքական կողմը ստացել էր Ստալինի ու Մոսկվայի աջակցությունն ու համաձայնությունը, բայց Հայաստանը բոլորովին էլ անպաշտպան չէր: ՀՀ բանակը քանակական առումով ու զինվածությամբ գերազանցում էր հակառակորդին եւ թուրքական զորքերի հարձակման դեպքում ի զորու էր ու պարտավոր հաջողությամբ պաշտպանել հանրապետության սահմանները, եթե պատշաճ բաձրության վրա գտնվեին՝ ՀՀ կառավարությունը, իսկ մարտական ոգու ու զինվորական կազմակերպվածության առումով՝ ՀՀ բանակի հրամանատարությունը եւ նրա առաջնորդությամբ ռազմաճակատում մարտնչող զինվորները:

3. Ինչպես արդեն նշվել է, Սեւրի դաշնագրի ստորագրումից հետո Հայաստանի Հանրապետության իշխանություններն ավելի քան համոզված են եղել, որ դաշնագիրը ստորագրող տերություններն այս անգամ անպայմանորեն հետամուտ կլինեն ու կհարկադրեն Թուրքիային կատարելու ստորագրած համաձայնագրերը: Այսինքն դարձյալ առաջին պլանի վրա էր եւ առավելապես գերիշխող՝ երրորդ ուժին ապավինելու սկզբունքը: Հանրապետության ղեկավար շրջաններում գերիշխում էր այն մտայնությունը, որ պատմական Հայաստանի տարածքի վրա Սեւրի դաշնագրով սահմանված հայկական հզոր պետականության, այն է՝ Ազատ, Անկախ եւ Միացյալ Հայաստանի հիմնադրմանն ու կառուցմանը պիտի մեծապես օգնեին ու աջակցեին Սեւրի դաշնագիրը ստորագրած, առաջին հերթին Անտանտի տերությունները:

[1] Վրացեան Ս., Մրրկածին Դրոն, էջ 127:

«Սեւրի դաշնագրի,- նշում է Ս. Վրացյանը,- ստորագրությունից յետոյ, Հայաստանում եւ բովանդակ հայութեան մէջ տիրում էր արտասովոր խանդաւառութիւն: Մայիսեան հակապետական ընդվզումները հաշուեյարդարի ենթարկուեցին եւ Զանգեզուրի ձեռնարկի առթիւ հասարակութեան որոշ խաւերում եւ Բիւրօ- կառաւարութիւնից ներս ծագած դժգոհութիւնները մոռացութեան տրուեցին(նկատի ունի Զանգեզուրում խորհրդային զորքերի հաստատման կապակցությամբ ժողովրդի եւ կառավարության մեջ առաջացած դժգոհությունը-Հ.Գ.): Ամէնքը ոգեւորուած էին ապագայ լաւատեսութեամբ»[1]:

Այս հարցում Դրոն չի կիսել ՀՀ Բյուրո-կառավարության տեսակետը: Այդ նույն ՀՀ Բյուրո-կառավարության անդամ Ս. Վրացյանի գնահատմամբ՝ «..Դրոն չէր հաւատում դաշնակից ներկայացուցիչների (նկատի ունի Անտանտի տերություններին-Հ.Գ.) խոստումներին: Եւրոպան կամ Ամերիկան շատ հեռու էին հայութիւնից եւ չէին կարող օգնութեան հասնիլ: Փոխանակ հեռաւոր սուրբից օգնութիւն սպասելու, աւելի խելացիութիւն էր մօտաւոր սուրբին ապաւինելու: Մօտաւոր սուրբը ռուսն էր ու Ռուսաստանը՝ ճերմակ թէ կարմիր՝ միեւնոյնն է: Որոշ ժամանակ պէտք է անցնէր, որպէսզի այդ սուրբից էլ հիասթափուէր ու հրաժարուէր»[2]:

Բնական է, որ վերոհիշյալ հանգամանքներն ու մտայնությունը անպայմանորեն իրենց կնիքը պիտի թողնեին պետական եւ ռազմական գործիչների դավանած դիրքորոշումների եւ տիրող կացությունը գնահատելու վրա: Պետական եւ ռազմական գործիչների մի մասը, առավելապես առաջնորդվելով Անտանտի տերությունների զորակցությանն ու աջակցությանն ապավինելու մտայնությամբ եւ կարծես անտեսելով քեմալական Թուրքիայի սպառնալիքը, ապագայի նկատմամբ տրամադրված է եղել լավատեսությամբ:

Ս. Վրացյանը՝ անդրադառնալով նաեւ այդ հարցի լուսաբանմանը, նշում է. «Զարմանալի չէ, ուրեմն, թրքական ու բոլշեւիկեան գործօնը, Անգարայից ու Բաքուից հասնող սպառնալիքները այն տպաւորութիւնը չգործեցին՝ ինչ որ պիտի գործէին ուրիշ պայման-

[1] Վրացեան Ս., Մրրկածին Դրոն, էջ 129:
[2] Նույն տեղում, էջ 127-128:

ներում: Զինուորական նախարար Ռուբեն Տէր Մինասեանը բարձրաձայն խոսում էր Էրզրումը գրաւելու մասին, իսկ զինուորական նախարարը պէտք է ծանօթ լինէր Թշնամու ուժերին եւ Հայաստանի բանակի մարտունակութեանը: Այդպէս էր դատում հասարակութիւնը՝ վարակուած կառաւարութեան լաւատեսութիւնից»[1]:

Ավելին, ՀՀ զինվորական նախարարը խորապես համոզված է եղել, որ հայկական բանակը ոչ միայն ի զորու էր ջախջախելու հանրապետության տարածքը ներխուժած թուրքական բանակը, այլեւ կարճ ժամանակահատվածում ազատագրելու Արեւմտյան Հայաստանի այն տարածքները, որոնք Սեւրի դաշնագրի համաձայն պիտի մասն կազմեին Հայաստանի Հանրապետությանը: Որպես ասվածի խոսուն ապացույց, Ս. Վրացյանը վկայակոչում է հետեւյալը. «Ինձ ու բժ. Ա. Բաբալեանին բաժին ինկաւ Կարս-Սարիղամիշ ռազմաճակատը: Ռուբէնը մեզ ճանապարհ ձգեց ճառով Աբովեան պողոտայի վրայ. «Ցտեսութիւն Կարինում» եղաւ մեզ նրա վերջին խօսքը- այնքան վստահ էր, որ պիտի յաղթենք»[2]:

Անժխտելի է, որ հանրապետության ներքին եւ արտաքին կյանքում առկա էին դեռեւս չլուծված կենսական նշանակություն ունեցող բազմաթիվ խնդիրներ, որոնք խանգարում եւ խոչընդոտում էին հանրապետության բնականոն զարգացմանը: Հաշվի առնելով ու արժեւորելով հանրապետության ներքին եւ արտաքին կյանքում գոյություն ունեցող դեռեւս չլուծված բազում խնդիրներն ու դժվարությունները, այնուամենայնիվ, պիտի նշել, որ, այսուհանդերձ, հանրապետության կառավարությունն անհրաժեշտաբար պետք է իր ուշադրությունն ու գործունեությունը գլխավորապես բեւեռեր ամենակարեւորի՝ ՀՀ զինված ուժերի կազմակերպման եւ հզորացման վրա, շատ լավ իմանալով Հայաստանի նկամամբ իր հարեւանի՝ քեմալական Թուրքիայի զավթողական նկրտումները: Մի՞թե Հայաստանի ու հայության վիճակը բազմապատիկ անգամ ավելի ծանր ու անելանելի չէր 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի նախօրեին, երբ Մեծ Եղեռնի ահավոր սարսափներն ապրած հայության վերջին բեկորները, խմբված Արարատյան աշխարհի փոքրիկ հողակտորի վրա, մենմենակ հերոսական պայքար էին մղում իրենց գոյությունը պահպանելու համար: Այդ ճակատագրական ու ծանրագույն ժամանակահատվածում հայ ժողովուրդը, ապավինելով միմիայն իր սեփական ուժերին, կարողացավ ստեղծել կանոնավոր եւ մարտունակ բանակ ու նվաճել կենսական նշանակություն ունեցող հաղթանակներ: Մայիսյան հերոսամարտերը հայ ժողովրդի ազատաբաղձ ձգտումների, միասնականության եւ մարտական ոգու բարձրագույն դրսեւորումներն են, որի արդյունքում ծնվեց Հայոց անկախ պետականությունը՝ Հայաստանի Հանրապետությունը:

Թեպետ 1920 թ. Հայաստանի եւ հայ ժողովրդի կացությունը բնավ համեմատելի չէր 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի նախօրեին Արարատյան աշխարհի փոքրիկ հողակտորում հանգրվանած, գոյապայքար մղող հայության վերջին բեկորների կացությանը, բայց հայրենի հողի, ազատության համար միասնական ու կազմակերպված պայքար մղելու ու մարտական անընկճելի ոգի դրսեւորելու առումով 1920 թ-ը ճիշտ եւ ճիշտ հակապատկերն էր 1918 թ.: Եթե անաչառորեն ներկայացնենք պատմական այդ ժամանակահատվածում հայության կյանքում տեղի ունեցած արմատական, կենսական նշանակություն ունեցող երեւույթների ճշմարիտ գնահատականը, ապա պիտի նշել, որ անտարակույս «Հայաստանում եւ բովանդակ հայութեան մէջ տիրում էր արտասովոր խանդաւառութիւն»-ը, հակառակորդի ուժերի թերագնահատումն ու ամենագլխավորը՝ ոչ թե սեփական, այլ երրորդ ուժին, այն է՝ Սեւրի դաշնագիրը ստորագրած տերությունների աջակցությանը ապավինելու տրամադրվածությունը: Պիտի փաստել, որ այդ հավատն ու համոզմունքն էր այն էական գործոններից մեկը, եթե ոչ ամենաէականը, որը պատճառ հանդիսացավ Հայաստանի Հանրապետության պարտությանն ու անկմանը:

Հարկ է նշել, որ ոչ բոլոր պետական եւ ռազմական գործիչներն էին խանդավառված Հայաստանին պարգեւած Սեւրի դաշնագրի շնորհներով եւ հանրապետության իրական կացությամբ:

Օրինակ, Դրոն չի կիսել զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանի եւ Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք անդամների լավատեսությունն ու խանդավառությունը: Հայաստանը, ըստ նրա գնահատման, պատրաստ չէր պատերազմելու, իսկ նման պայմաններում պատերազմելը կարող էր անկանխատեսելի ծանր հետեւանքներ ունենալ: Պատերազմի վերաբերյալ համանման դիրքորոշում են ունեցել նաեւ ՀՀ բանակի սպարապետ Նազարբեկյանն ու գեներալ Սիլիկյանը:

«Ծերունի սպարապետը,- գրում է Ս. Վրացյանը,- թէեւ ենթարկւում էր զինուորական նախարարի հրահանգներին, բայց սրտով ու գիտակցութեամբ Դրօյի հետ էր, նոյնպէս զօր. Սիլիկեանը եւ բանակի բարձր հրամանատարութեան լուրջ մասը, պատերազմը աղէտ էր

[1] Նույն տեղում, էջ 129:
[2] Նույն տեղում, էջ 131:

նրանց աչքին. ամէն գնով պէտք էր խուսափել պատերազմից, որ անհրաժեշտօրէն լինելու էր երկու ճակատի վրայ- հարաւից ու հիւսիսից- եւ գերազանց ուժերի դէմ»[1]:

Դրոյին, ինչպես նաեւ գեներալներ Նազարբեկյանին ու Սիլիկյանին մտահոգողը միայն այն չէր, որ հայկական բանակը հարկադրված էր լինելու պատերազմելու «երկու ճակատի վրայ- հարաւից ու հիւսիսից- եւ գերազանց ուժերի դէմ»: Ինչ խոսք, նրանք անշուշտ քաջատեղյակ էին ՀՀ զինված ուժերի թվակազմին ու զինվածությանը: Բայց որպես փորձառու, բազում կռիվների բովում թրծված զինվորականներ, նրանց քաջ հայտնի էր, որ պատերազմում հաղթանակներ նվաճելու գործում վճռորոշ չէին կարող լինել միայն զորքի քանակն ու զինվածությունը: Հաղթանակներ նվաճելու գործում չափազանց կարեւոր են զորքի բարոյա-հոգեբանական պատրաստվածությունն ու մարտունակությունը: Պիտի ընդգծել, որ այդ ժամանակահատվածում, հայկական լավ զինված բանակը, ինչը միանշանակորեն ապացուցեց ժամանակը, աչքի չէր ընկնում իր կազմակերպվածությամբ ու մարտունակությամբ: Մի՞թե այնպիսի բազմափորձ զորապետերի համար, որպիսիք էին Դրոն եւ Թ. Նազարբեկյանն ու Մ. Սիլիկյանը, կարող էին գաղտնիք լինել հայկական բանակի բարոյա-հոգեբանական անմիջական իրավիճակն ու թույլ կազմակերպվածությունը:

Հայկական բանակին սպառնացող բարոյալքությունն ու անմարտունակությունը Դրոն կանխագուշակել էր հայկական կանոնավոր զորամասերի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքը 1920 թ. բոլշեւիկյան մայիսյան խռովությունից հետո մահմեդական բնակչությունից «մաքրելու» նպատակով ձեռնարկված մարտական գործողությունների նախօրեին:

Այդ հարցում որոշակի տարաձայնություններ են եղել նրա ու Բյուրո-կառավարության անդամների, հատկապես, Բյուրո կառավարության, կարելի է ասել, ամենաազդեցիկ անդամի՝ զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանի միջեւ:

Դրոն, ինչ խոսք, կողմնակից էր, որպեսզի Հանրապետության տարածքը վերջնականապես ու մեկընդմիշտ մաքրվեր մահմեդական տարրերից: Ավելորդ չէ կրկին անգամ նշել, որ մինչ այդ մահմեդական բնակչության զինված ելույթները «խաղաղացնելու» գլխավոր կազմակերպիչը եղել էր հենց ինքը՝ Դրոն: Բայց այս անգամ նա կտրականապես դեմ է եղել, որ մահմեդական բնակավայրերի «մաքրման» գործողություններն իրականացվեին կանոնավոր զորամասերի մասնակցությամբ: Բանակը կոչված է պայքարելու արտաքին թշնամու դեմ եւ նրան պետք է հեռու պահել քաղաքացիական կռիվներից:

Հայաստանի ու հայության համար հույժ կենսական նշանակություն ունեցող Հանրապետության տարածքը մահմեդական բնակչությունից մաքրելու գործողությունները նրա համոզմամբ, անհրաժեշտ էր, իրականացնել ոչ թե ՀՀ կանոնավոր բանակի, այլ հատուկ նշանակության զորամասերի ուժերով: Համաձայն Ս. Վրացյանի վկայության՝ «Նա անուիճելի փաստերով եւ իրատեսությամբ աշխատում էր համոզել, որ բանակի մասնակցությունը քաղաքացիական կռիւներում, անխուսափելի կերպով կը խախտէ զինուորութեան կարգապահական ոգին, կը բարոյալքէ ու կը տկարացնէ մարտունակութիւնը:

Այդպէս էլ տեղի ունեցաւ...մահմեդական գիւղերի մաքրագործման մասնակցող զօրամասերն էլ բարոյալքուեցին ու գրեթէ կազմալուծուեցին: Մաքրագործումը անխուսափելի կերպով կապած էր թալանի եւ հարստահարութիւնների հետ..)»[1]:

Հայկական բանակին համանման գնահատական է տալիս նաեւ Հայաստանի Հանրապետության առաջին վարչապետ Հովհ. Քաջազնունին: Նրա բնորոշմամբ՝ «Բանակը բարոյալքված էր ներքին կռիւների շրջանում (նկատի ունի ՀՀ զինված ուժերի կողմից Հայաստանի Հանրապետության մահմեդական բնակավայրերը «մաքրելու» նպատակով իրականացրած մարտական գործողությունները-Հ.Գ.) անմիտ աւերումների ու անպատիժ թալանների շնորհիւ: Բանակը բարոյալքված էր ու հոգնած»[2]:

Դրոն, շատ ճիշտ արժեւորելով թալանին եւ հարստահարություններին տրվելու հետեւանքով զինվորին անխուսափելիորեն սպառնացող բարոյալքումն ու անմարտունակությունը, թույլ չի տվել, որ իր անմիջական հրամանատարությամբ գործող զորամասերը մասնակցեին մահմեդական բնակավայրերի մաքրագործման գործողություններին: Հետագա դեպքերը միանշանակորեն ապացուցեցին, որ նրա դիրքորոշումը շատ ճիշտ էր: Փոքր-ինչ առաջ ընկնելով կարելի է ասել, որ հայ-թուրքական պատերազմի ընթացքում իրենց անբասիր մարտական որակները լավագույնս դրսեւորել են հենց այն զորամասերն ու զինվորները, որոնք չէին մասնակցել մահմեդական

[1] Նույն տեղում, էջ 130:

[1] Նույն տեղում, էջ 125:
[2] Քաջազնունի Հովհ., նշվ. աշխ., էջ 34:

բնակավայրերը «մաքրելու», հետեւաբար, թալանի ու ավարառության գործողություններին:

Ս. Վրացյանի խոստովանությամբ՝ «Դրոն գիտեր այս եւ թույլ չտեւեց, որ իրեն ենթակա զօրամասերը մասնակցին Զանգիբազարի (Զանգիբասար-ներկայիս Մասիսի շրջանը-Հ. Գ.) գործողության: Եւ հետագայ դէպքերը ցոյց տուին, թէ որքան իրաւացի էր Դրոն, երբ միայն Սուրմալուի ճակատի վրայ, ուր գործում էին Դրոյի զորամասերը, հայ բանակը ընդունակ եղաւ վճռական հակահարուած հասցնելու թշնամուն)»[1]:

1920 թ. հունիսին Հայաստանի Հանրապետության տարածքում մեծ հաջողությամբ կենսագործած մարտական գործողություններից, այն է՝ թուրքական բնակավայրերը «մաքրելուց» հետո, ինչպես որ սպասվում էր, ՀՀ կառավարությունը հարկադրված զորացրում է այդ գործողություններին մասնակցած՝ թալանին ու ավարառությանը տրվելու հետեւանքով բարոյալքված զինվորներին, որոնք այլեւս չէին ենթարկվում զինվորական կարգապահությանն ու հրամանարարությանը եւ պատերազմի նախօրեին հայտարարում է նոր զորահավաք, որի արդյունքում բանակի շարքերն են համալրում զենքի հետ երբեւէ առնչություն չունեցող մարտական որակներից զուրկ բազմահազար նորակոչիկներ: Այսինքն կատարվեց այն, ինչը ժամանակին կանխատեսել ու բազմիցս զգուշացնում էր Դրոն:

Հովհ. Քաջազնունու գնահատմամբ ՀՀ կառավարությունը ճակատագրական սխալ էր գործում, երբ «...զօրքերի թիւը աւելացնելու նպատակով, նոր ու նոր զինակոչներ էր անում, զէնքի տակ առնում հասակաւոր, յոգնած, ընտանեկան ու տնտեսական հոգսերով ծանրաբեռնուած մարդկանց...

Պատրաստի դեզերտէօրներ (դասալիք) էին սրանք, որ մի աւելորդ բարոյալքում ու կազմալուծում էին մտցնում զօրական շարքերի մէջ»[2]:

Ընդհանրացնելով իր վկայակոչած փաստարկները՝ ՀՀ առաջին վարչապետը գտնում է, որ կառավարության գործած այդ սխալներով է գլխավորապես պայմանավորված այն ցավալի իրողությունը, որ «Բանակի դաստիարակութիւնը, ռազմական ոգին, կուռ կազմակերպութիւնն ու կարգապահութիւնը- ուրեմն եւ ընդդիմադրական ոյժը- թուլացած էին ծայր աստիճանի ու դա անակնկալ էր

[1] Վրացեան Ս., Սրրկածին Դրոն, էջ 125:
[2] Նույն տեղում:

կառաւարութեան համար: Կառաւարութիւը եւ ինքը զինուորական մինիստրը՝ չէին ճանաչում բանակը»[1]:

Պատերազմն արդեն սկսվել էր, եւ ինչպիսին էլ լինեին հայկական բանակի վիճակն ու հնարավորությունները, ՀՀ կառավարությունը պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկեր հանրապետության բնակչությանն ու ռազմաճակատները կազմակերպելու եւ հակառակորդի հարձակումը դիմակայելու ուղղությամբ:

Ի՞նչ պետք է արվեր:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախ եւ առաջ պետք է լուծեր տվյալ ժամանակահատվածի համար առաջնահերթ կարեւորագույն նշանակության երկու հարց.

1. Ամրապնդել հանրապետության պաշտպանունակությունը ի հաշիվ ներքին ուժերի ու միջոցների եւ հզոր-կազմակերպված հակահարվածներով խոչընդոտեր թուրքական զորքերի առաջխաղացումը ու աշխատելդիվանագիտական միջոցներով կասեցնել խորհրդային ուժերի հարձակումը Ղազախի ուղղությունից[2]:

Հանրապետության պաշտպանունակությունը ամրապնդելու համար նախ եւ առաջ անհրաժեշտ էր համալրել ու ուժեղացնել բանակը: Այդ նպատակով հանրապետության կառավարությունը հայտարարում է մինչեւ 37 տարեկան բնակչության զորահավաք եւ ընդամենը երկու շաբաթվա ընթացքում հաջողվում է Իգդիրից մինչեւ Մերդենեկ ձգվող ճակատներում կենտրոնացնել բոլոր անհրաժեշտ պարագաներով հագեցված մինչեւ 25.000 թվակազմ ունեցող զորաբանակ[3]:

Այս հարցում գործերը կարծես թե լավ էին ընթանում:

2. Հյուսիսից եւ հարավից միաժամանակ տեղացող հարվածներին հաջողությամբ դիմագրավելու համար հարկավոր էր ստանալ դաշնակիցների (Անգլիա, Ֆրանսիա, ԱՄՆ) եւ Վրաստանի զինական ու ֆինանսական օգնությունը:

Այդ նպատակով Հայաստանի կառավարությունը դիմում է դաշնակիցների Թիֆլիսի ներկայացուցիչներին եւ արդյունքում ստանում է միայն դատարկ խոստումներ եւ հիասթափություն:

«Ոչ մէկ ուրիշ օգնութիւն, - գրում է Ալ. Խատիսյանը, - եվրոպական իշխանութիւնները Կովկասի մէջ ցոյց չտուին Հայաստանին:

Մեծ պետութիւններուն Փարիզի մէջ կատարուած դիմումը առաջ բերաւ վիճաբանութիւններ Ազգերու Լիկայի մէջ, ուր հիանալի ճա-

[1] Նույն տեղում:
[2] Տե՛ս ՀՀ ԲԿԱ, թթ. 121, գ. 97 («Հայաստանի վերջին անցքերը», էջ 21):
[3] Նույն տեղում, էջ 1-2:

ռեր արտասանեցին դր. Նանսէնը, անգլիական ներկայացուցիչ Բալֆոտը, ֆրանսիական նախարար Վիվիանին, ընտրուեցաւ միջազգային յանձնաժողով մը հայ-թրքական կռիւը խաղաղացնելու համար՝ բաղկացած առաջնակարգ եվրոպական գործիչներէ եւ Պոլսոյ ամերիկեան նախկին դեսպան Մորկենթօ պէտք է երթար այդ նպատակով Հայաստան: Բայց մինչ յանձնաժողովը կը պատրաստուէր այդ քայլ ընել, Հայաստանի մէջ ամէն ինչ վերջացաւ»[1]:

Հայաստանի համար բախտոր նշանակութիւն ունեցող ժամանակում Ազգերի լիգան մերժում է իր կազմում ընդգրկել Հայաստանն ու Վրաստանը, որպեսզի հարկադրված չլինի նրանց ցույց տալ գործնական զինակցութիւն ու օգնութիւն: Ավելին, անգլիայի ներկայացուցիչ Կ. Ստոքսը իր կառավարության անունից ՀՀ կառավարությանը հաշտություն կնքել թուրքերի հետ, այն է՝ Մուստֆա Քեմալի գլխավորած իշխանության հետ, որի օրինակությունը որեւէ տերություն, այդ թվում նաեւ Անգլիան, դեռեւս չէր ճանաչել:

Վրաստանի Հանրապետության հետ փոխօգնության հարաբերություններ հաստատելու առաքելությամբ հոկտեմբերի 18-ին Թիֆլիս է ուղեւորվում Հայաստանի Հանրապետության զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը: Վրաստանի Հանրապետության կառավարության դիրքորոշումը, ի տարբերություն դաշնակիցների, ավելի որոշակի ու հասկանալի էր, բայց դարձյալ ժխտողական: Վրաց իշխանությունները Հայաստանի Հանրապետության եւ ողջ հայության համար բախտորոշ, ճակատագրական նշանակություն ունեցող ժամանակահատվածում դարձյալ ավելի են կարեւորում ու նախապատվություն տալիս քեմալական Թուրքիայի հետ հաստատվելիք դաշինքին ու հարաբերությանը եւ կտրականապես մերժելով Հայաստանի Հանրապետության հետ համագործակցելը՝ հայտնում են. «... որ տաճիկների դէմ չեն կարող կռուել, որովհետեւ իրենց չեզոքությունը ապահովուած է...

Այսպիսով, Հայաստանը իրապէս ոչինչ չստացաւ ոչ դաշնակիցներից եւ ոչ էլ վրացիներից իր գոյութեան համար ճակատագրական պայքարի ընթացքում»[2]:

Թուրքերը մինչեւ Հայաստանի Հանրապետության վրա հարձակվելը կարողացել էին ի նպաստ Թուրքիայի չեզոքացնել Վրաստանին, որն ինչ-որ տեղ դիտվում էր Հայաստանի հնարավոր դաշնակիցը: Իր պատվիրակներին առաքելով Թիֆլիս՝ Անկարայի իշխանությունները կարողացան բանակցությունների միջոցով եւ որոշակի խոստումներով Վրաստանի կառավարությունից կորզել պատերազմական գործողություններ սկսելու դեպքում չեզոքություն պահպանելու համաձայնությունը: Եվ պատահական չէ այն իրողությունը, որ թուրքական զորաբանակի Կարսի բերդաքաղաքին մոտենալուն պես վրացական զորքերը ներխուժում են չեզոք գոտի՝ Լոռի եւ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Ջալալ-Օղլի եւ Շահանլիի շրջանները:

Հայաստանի զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանի՝ Վրաստանում ունեցած անարդյունք առաքելությունից հետո խորտակվում է դրսից օժանդակություն հայցելու վերջին հույսը եւ բոլորի կողմից լքված ու մեկուսացված Հայաստանը մեն-մենակ հայտնվում է ընդդեմ թուրքական հարձակման:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ժողովրդին ոգեշնչելու ու նրա պայքարին վճռականություն ու կազմակերպվածություն հաղորդելու նպատակով ամենուրեք տարածում է հետեւյալ մարտակոչը.

«Հայաստանի քաղաքացիներին.

Քաղաքացիներ, Հայաստանը նոր փորձութիւնների առաջ է կանգնած: Տաճիկ փաշաները չեն ուզում հանգիստ թողնել մեզ, նրանք ձգտում են քար ու քանդ անել մեր երկիրը, բնաջնջել հայ ժողովուրդը:

Սեպտեմբերի կէսերին կենտրոնանալով Մերդենեկի եւ Բարդուսի շրջաններում՝ տաճիկ զօրքերը յարձակման դիմեցին: Դաշտային աշխատանքների պատճառով մեր զինուորների մի մասը իրենց տները ցրուած լինելով՝ մեր զօրամասերը, յամառ կռուից յետոյ, ստիպուած եղան նահանջել եւ գրաւել ռազմագիտական նոր գիծ, որով ածխահանքերի շրջանը անցաւ թշնամու ձեռքը...:

...Քաղաքացիներ, տեղեկացնելով ձեզ այս մասին՝ Հանրապետութեան կառավարութիւնը յայտնում է, որ ինքը ձեռք է առնում ամէն միջոց՝ պետութեան անվտանգութիւնը ապահովելու համար եւ վստահ է, որ նենգ թշնամին շուտով դուրս կը շպրտուի մեր երկրից: Այն ժողովուրդը, որ կարողացաւ ձեռք բերել իր ազատութիւնը, որ դեռ նոր ճնշեց բոլշեւիկեան խռովութիւնները՝ թոյլ չի տայ, որ տաճկական փաշաներին յաջողուի իրագործել իրենց դիւային ծրագրերը: Հայաստանի կառավարութիւնը, իր հետ ունենալով յեղափոխական ժողովրդի կամքն ու վստահութիւնը, կանէ այն, ինչ որ իրենից պահանջում է պատմական վայրկեանը: Սակայն, ժողովուրդն

[1] Խատիսեան Ալ., նշվ. աշխ., էջ 265:
[2] ՀՅ ԲԿԱ, թղ. 121, գ. 97 («Հայաստանի վերջին անցքերը», էջ 21), էջ 1-2:

եւս պէտք է լարէ իր բոլոր ուժերը: Տաճիկ զօրքերի առաջ մէկ անելիք է մնում մեզ- յաղթել կամ մեռնել: Մենք պէտք է յաղթենք:

Քաղաքացիներ, որքան եւ աննպաստ լինեն պայմանները, թողէք ձեր անձնական գործերը: Ամէն ոք եւ ամէն ինչ պէտք է յատկացուի ֆրոնտին... Ամէն ինչ զօրքի համար: Գիւղացի, բանուոր, մտաւորական, պաշտոնեայ, ուսանող, կանայք- բոլորդ պէտք է նպաստէք մեր բանակի, որովհետեւ միայն ամէնքիս միահամուռ ջանքերով կը խորտակուի փաշաների գարշելի բռնակալութիւնը, եւ Հայաստանը բոլորովին ազատ կլինի տաճիկ չովինիստների մղձաւանջից:

Ոտքի ժողովուրդ:

Կեցցէ Միացեալ եւ Անկախ Հայաստանը:

Հայաստանի Հանրապետութեան կառաւարութիւն»[1]:

Համաձայն Ս. Վրացյանի տվյալների, թուրք հրամանատարությունը Հայաստանի Հանրապետության վրա հարձակվելու ժամանակ իր տրամադրության ներքո ունեցել է հետեւյալ զինական ուժերը. «Թանի»-ի զինուորական թղթակցի ասելով, 1920թ ամառուայ վերջը, արեւելեան նահանգներում թիւրքերը ունէին 3-րդ, 12-րդ եւ 15-րդ կորպուսները, ընդամենը՝ 50000 հետեւակ, 2600 այրուձի եւ 306 հին ձեւի թնդանօթ: Ուրիշ զինուորական հեղինակութիւններ Հայաստանի դէմ գործող թիւրք բանակը ցոյց էին տալիս՝ 3-րդ, 9-րդ, 11-րդ, 12-րդ եւ խառը դիւիզիաները, երկու աշիրէթական գնդեր, մի բրիգադ այրուձի, այսպէս կոչուած ազրբէջանական ձիաւոր հարիւրակը, թրքական եւ քրդական հրոսակախմբերը եւ այլն: Զօրքը պարէնաւորուած էր շատ լաւ, ունէր առատ ռազմամթերք, տաք հագուստ, որ ստանում էր իտալացիներից, ֆրանսիացիներից եւ Խորհրդ. Ռուսաստանից»[2]:

Կարելի է ասել, որ թուրքական զորքերի թվաքանակը ներկայացնող վերոհիշյալ տվյալները վերաբերում են ոչ թե 1920 թ. սեպտեմբերին Հայաստան ներխուժած բանակին, այլ Թուրքիայի տարբեր շրջաններում Մուստաֆա Քեմալի ու Կարաբեքիրի դրոշի տակ գտնվող մարտական ուժերին:

Հայաստանի վրա հարձակվող թուրքական բանակի թվակազմի վերաբերյալ արժանահիշատակ տվյալներ է հաղորդում Վ. Արծրունին: Նրա հավաստմամբ՝ իր վկայակոչած տվյալները հայկական բանակի հրամանատարությանն է հաղորդել Կարսի ճակատում գերի ընկած մի թուրք վաշտապետ: Համաձայն թուրք սպայի տեղեկու-

[1] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 468-469:
[2] Նույն տեղում:

թյան, «Մեր կռուող բանակն (նկատի ունի Կարսի ճակատում գտնվող թուրքական զորքերը-Հ.Գ.) ունի 12,000 կանոնաւոր զօրք, 300 աղրբէյջանցի ձիաւոր, 500 լազ, 1000 քիւրդ ձիաւոր եւ մօտ 6000 կամաւորներ, ընդամենը՝ 20,000 չունչ»[1]:

Հայաստանի զինական ուժերը տեղաբաշխված էին չորս (Սարիղամիշ-Կարս, Սուրմալու, Նախիջեւան, Դիլիջան-Ղազախ) ճակատներում: Համաձայն ՀՀ զինվորական նախարար Ռուբեն Տեր- Մինասյանի պատրաստած տեղեկագրի, որը Ալ. Խատիսյանը ներկայացրել է դաշնակիցներին, պատերազմի սկզբին վերոհիշյալ «...չորս ուղղություններ վրա մենք ունենք ընդամենը 16,700 սվին, բացի դրանցից, Զանգեզուրում գտնվում է 800 սվին, ուրեմն վերոհիշեալի հետ 17,500 սվին:

Երեւանում պահեստում մնում է 10-րդ գունդը (Հալապեանի)- 1500 սվին, ընդամենը, ուրեմն, 19,000 սվին:

Ընդունելով եւ միւս տեսակի զէնքերը՝ 6000 հոգի- ուրեմն, գործող բանակում կանոնաւոր մարտական ուժեր կան 25,000 հոգի:

Աւելացնելով դրանց վրա նաեւ թիկունքում ծառայողներին, ... ընդհանուր թւի 30 տոկոսը, կը ստանանք բանակի ամբոջ կազմը 34,000 հոգի, խմբերի հետ միասին 40,000 հոգի»[2]:

Հանրապետության բանակի 40,000 թվակազմը ընդունում է նաեւ Վ. Արծրունին: Ըստ նրա հավաստման՝ «Փաստական վաւերաթղթեր չկան հայկական զօրքի թուի մասին, բայց ինչպէս նկատեր եմ, ընդհանրապէս ընդունուած փաստ կը համարուի, թէ հայ-թրքական պատերազմի ընթացքին զինուորական նախարարութիւնը բաց կը թողուր 40000 զօրքի պարէն: Զօրքին մեծ մասը բանակին մէջ առնուած էր Բիւրօ- կառավարութեան օրոք եւ, մասնաւորապէս՝ պատերազմը սկսուելէն յետոյ»[3]:

Ըստ Վ. Արծրունու վկայակոչած գերի թուրք սպայի տեղեկության, « Մեր հրամանատարութիւնը շատ առաջ հաշուեր էր, որ հայկական կառաւարութիւնը իր դէմ պիտի բերէ 20-26,000 զօրք»[4]:

Բացի թվարկված ուղղություններից, հայկական զորքերը պատմական որոշակի հանգամանքների թելադրանքով տեղաբաշխված էին նաեւ ռազմավարական նշանակություն ունեցող սահմանամերձ մի քանի շրջաններում: Այսպես. քանի որ հյուսիսից՝ Ղազախի շրջանից, խորհրդային զինական ուժերը արդեն բազմիցս գործնա-

[1] Վահե Արծրունի, «Հայ-տաճկական պատերազմը, հայ սպայությունը, Շատախ», Երեւան, 2002, էջ 290-291:
[2] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 484:
[3] Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 31:
[4] Նույն տեղում, էջ 291:

կան քայլեր էին ձեռնարկում ներխուժելու Հայաստանի տարածքը, այդ պատճառով Հանրապետության կառավարությունը հյուսիսի սպառնալիքին դիմագրավելու նպատակով սահմանամերձ շրջանում հարկադրված պահում էր սահմանապահ զորամաս՝ Սեպուհի բրիգադը: Նույն նպատակով, Զանգեզուրի ու Նախիջևանի տարածքներից սպառնացող հնարավոր հարձակումները դիմագրավելու համար Բասարգեչարի եւ Նոր-Բայազետի շրջաններում տեղակայված էին գեներալներ Շելկովնիկյանի եւ Մելիք Մուրադյանի գլխավորած մարտական ուժերը:

«Վերջին անցքերը Հայաստանում» վերնագրված վավերագրում, հեղինակը, ներկայացնելով Հանրապետության զորքերի տեղաբաշխման վայրերը, գրում է. «Հայաստանը մի երկիր էր, որ ունէր բազմաթիւ ճակատներ, որոնցից իւրաքանչիւրում կարեւոր էր ոյժեր կենտրոնացած պահել անակնկալների չհանդիպելու համար: Նրա գլխաւոր ճակատներն էին. Արտահան, Օլթի, Կարս, Կողբ, Իգդիր, Նախիջեւան, Զանգեզուր, Արցախ, Բասարգեչար եւ Ջէզոք գոտի (նկատի ունի Լոռին-Հ.Գ.), որտեղ սահմանապահ գնդեր էին պահում: Այդ ճակատների առանձնահատկութիւնն այն էր, որ դրանցից բոլորը, բացի Վրացականը, գտնւում էր մեր անմիջական թշնամիների՝ Ադրբեջանի, Սովետական Ռուսաստանի եւ Անգորայի սահմաններին կից, որոնք գործում էին համաձայնեցուած եւ իրենց աշխարհագրական դիրքով օղակում էին Հայաստանը»[1]:

Առավել որոշակի, ըստ Ռ. Տեր-Մինասյանի ներկայացրած վերոհիշյալ տեղեկագրի, պատերազմի առաջին օրերին հայկական զինական ուժերը, բացի Կարսի եւ Սուրմալուի ճակատներից, տեղաբաշխված էին հետեւյալ ուղղություններում.

«Նախիջեւանի ուղղութեամբ կանգնած են՝ 3-րդ գունդը-2000 սւին, 2-րդ գունդը(երկու բատալիոն)-1000 սւին, ընդամենը 3000 սւին:

Դիլիջան-Ղազախի ճակատում գտնւում էր 6-րդ գունդը (գնդապետ Մանիեւի գլխավորած այդ գունդը պատերազմի նախօրեին գործել է Սեպուհի հրամանատարությամբ-Հ.Գ.)-2000 սւին»[2]:

Հայկական զորաբանակի հրամանատարությունը, ելնելով ռազմաճակատում տիրող իրական կացությունից, մարտական ուժերը, ինչպես արդեն նշվել է, գլխավորապես կենտրոնացնում է Կարսի եւ Սուրմալուի ուղղություններում, ընդսմին, առավելագույն ուշադրությունը բեւեռում է Կարսի ճակատի վրա:

«Այս պայմաններուն մէջ, - նշվում է «Ճակատամարտ» թերթում զետեղված ռազմական ամփոփագրում, - սպայակոյտը (նկատի ունի ՀՀ ռազմական ուժերի գլխավոր շտաբը-Հ.Գ.) որոշեց Իգդիրի ուղղութեամբ թրքական յարձակողականը նկատել կեղծ, ուժերը կեդրոնացնել Կարսի ուղղութեան վրայ, նահանջել մինչեւ Պէկլի Ահմէտ, զօրացնել Կարսի աջ թեւը, իբրեւ հոծ թրքաբնակ վայրեր եւ թրքական ծանր ճնշումի իբրեւ հաւանական գիծ, կռիւ մղել Նովօ Սէլիմի դաշտին վրայ, ի հարկին կանխելով թրքական ընդհանուր յարձակողականը եւ ժամանակ շահել ուժերը համախմբելու համար»[1]:

Համաձայն ՀՀ զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանի պատրաստած տեղեկագրի. «Կարս-Ալեքսանդրապոլի ճակատում կանգնած են հետեւյալ զօրամասերը....առաջին գունդը (Մազմանեան)- 1000 սւին եւ 7-րդ գունդը(մի բատալիոն)-1500 սւին, 4-րդ գունդը (Միրիմանեան)- 2000 սւին, 5-րդ գունդը (Շաղուբաղեան)-800 սւին, 7-րդ գունդը (մի բատալիոն)-700 սւին, 6-րդ գնդի մի բատալիոն- 700 սւին (Իշխանեան- Գնդունի)- 8000 սւին եւ 8-րդ գունդը (Տիգր. Բաղդասարեան)-1500 սւին, ընդամենը 7200 սւին, բացի դրանցից կան նաեւ Սմբատի խմբերը:

Սուրմալուի ճակատում(Դրօյի մօտ) կան՝ 9-րդ գունդը-2000 սւին, 8-րդ գունդը (մի բատալիոն)-1000 սւին (Տ. Բաղդասարյանի գլխավորած 8-րդ գունդը պատերազմի առաջին օրերին տեղափոխվել է Կարսի ճակատ-Հ.Գ.) եւ 7-րդ գունդը (մի բատալիոն)-700 սւին, Արցախի առանձին զօրամասը(Կուռօ)-800 սւին, ընդամենը՝ 4500 սւին եւ փոքրիկ եզդիական զօրամաս»[2]:

ԵՐՊՀ-ի հրատարակած բուհերի համար նախատեսված «Հայոց պատմություն» դասագրքում այս հարցի կապակցությամբ նշվում է, «Սուրմալուի ռազմաճակատը գլխավորում է Դրոն: Սկզբում նա ուներ շուրջ 25000 զինվոր, ավելի ուշ այդ թիվն անցավ 4500-ից»[3]:

Ճիշտ հակառակը, պատերազմի սկզբում Սուրմալուի ռազմաճակատում կենտրոնացած զորամասերի կազմում եղել են 4500 զինվորներ, իսկ Տ. Բաղդասարյանի 8-րդ գունդը(1500 զինվոր) Կարսի ուղղություն տեղափոխելու հետեւանքով ռազմաճակատում մնացել են ընդամենը 3000 հետեւակ զինվոր(4500-1500) եւ Ջհանգիր աղայի 200 հեծյալ կամավորները:

Սուրմալուի ռազմաճակատի զինվորների այդ նույն թվակազմը հաստատում է նաեւ Վ. Արծրունին[4]:

---

[1] ՀՀ ԲԿԱ, թԿ. 121, գ. 97 («Հայաստանի վերջին անցքերը», էջ 21), էջ 3:
[2] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 484:

[1] «Ճակատամարտ», 1921, փետրվարի 1:
[2] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 484:
[3] «Հայոց պատմություն», Երեւան, 2012, էջ 608:
[4] Արծրունի Վ., նշվ. աշխ., էջ 198:

Պիտի նկատել, որ ՀՀ զինվորական նախարարի ներկայացրած թվերը պայմանական են: Սարիղամիշ-Կարս ճակատը, ինչպես արդեն նշվել է, դիտելով որպես գլխավոր եւ առավել կարեւոր ուղղություն, ՀՀ զինված ուժերի սպարապետությունը (սպարապետ գեներալ Թ. Նազարբեկյան) եւ զինված ուժերի գլխավոր շտաբը հենց այդ ռազմաճակատում են կենտրոնացնում ՀՀ բանակի զորամասերի մեծ մասը, որոնց գլխավորում էին Հայաստանի զինված ուժերի կազմում գործող ամենաանվանի զորապետերի ու սպաների մեծ մասը, որոնց թվում գեներալներ Մ. Սիլիկյանը, Դանիել Բեկ-Փիրումյանը եւ Հովսեփյանը: Քանի որ Սարիղամիշ-Կարս ճակատն էր դիտվում որպես գլխավոր ուղղություն, ուստի հենց այդ պատճառով պատերազմի առաջին իսկ օրից Սարիղամիշ-Կարս ուղղությունը պարբերաբար համալրվել ու ուժեղացվել է ի հաշիվ մյուս ռազմաճակատների:

Սարիղամիշ-Կարս ուղղությունում գործող զորքերի ընդհանուր հրամանատարն էր գեներալ Սիլիկյանը, Կարսի բերդապետը՝ գեներալ Դանիել Բեկ Փիրումյանը: Կարսի ճակատում կենտրոնացած վերոհիշյալ թվարկված զորամասերը մասն են կազմել գեներալ Հովսեփյանի եւ Սեպուհի հրամանատարությամբ գործող բրիգադների: Գեներալ Հովսեփյանի գլխավորած բրիգադը(գնդապետ Մազմանյանի 1-ին գունդը, գնդապետ Միրիմանյանի 4-րդ գունդը, գնդապետ Շաղաբաղյանի 5-րդ գունդը), եւ Սեպուհի հրամանատարությամբ գործող բրիգադը (գնդապետ Իշխանյանի 7-րդ գունդը, գնդապետ Տ. Բաղդասարյանի 8-րդ գունդը, գնդապետ Ղորղանյանի ձիավոր բրիգադը եւ Սմբատ Բորոյանի (Մախլուտո), Փիլոսի, Մուրադյանի կամավորական խմբերը)[1]:

Բայց ռազմաճակատների եւ այնտեղ տեղաբաշխված զորամասերի հրամանատարների ընտրության հարցում Հայաստանի ղեկավար շրջանները, հաշվի չառնելով մի շարք էական գործոններ, թույլ էին տվել որոշակի սխալներ: Ամենակարեւորը, ինչպես ցույց տվեց ժամանակը, չեն կարեւորել հրամանատարների իրական կարողություններն ու փոխհարաբերությունները: Ցավոք, պատշաճ բարձրության վրա չեն գտնվել Կարսի նահանգի եւ քաղաքի քաղաքական ու ռազմական ղեկավարության, ինչպես նաեւ ռազմաճակատի մի քանի բարձրաստիճան հրամանատարների փոխհարաբերությունները :

Գնդապետ Տ. Բաղդասարյանը իր հուշերում գնահատելով նաեւ այդ հանգամանքը՝ նշում է. «Կարսի ճակատամարտի հրամանատար նշանակուած էր զօր. Ցովսէփեանը:

[1] Տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 479:

...երբ Դրոյի կամաւորական գունդը Շատախ մտաւ, անիկա Դրոյին կընկերանար իբրեւ խորհրդական սպայ պարզապէս:

Կընդունիմ, որ հայկական բանակին մէջ երիտասարդ ուժերու եւ աստիճանաւորներու մեծ պահանջարկ կար, սակայն անհրաժեշտ էր որոշ չափ ու կշիռ դնել: Վերջին ամիսներուն Ցովսէփեանի մասին շատ աննպաստ տեղեկութիւններ շրջան կընէին, Ցովսէփեանը եւ բերդի հրամանատարը(նկատի ունի Կարսի բերդաքաղաքի զինվորական ուժերի հրամանատար գեներալ Դանիել Բեկ-Փիրումյանին-Հ.Գ.) գժտուած էին: Լաւ չէին յարաբերութիւնները նոյնպէս Կարսի քաղաքային եւ զինուորական շրջանակներու միջեւ: Մի՞թե կարելի էր ներքնապէս այդպէս պառակտուած վիճակով դիմագրաւել արտաքին վտանգը...»[1]:

Այնուամենայնիվ, ու՞մ պիտի վստահեին Կարսի եւ Սուրմալուի ռազմաճակատներ հրամանատարությունը

Ռազմաճակատների հրամանատարների ընտրությունների հարցում ՀՀ կառավարության եւ զինվորական ուժերի վերին հրամանատարության, մասնավորապես գեներալներ Նազարբեկյանի ու Սիլիկյանի տեսակետները միանշանակ չեն եղել:

Դրոյին Սուրմալուի ռազմաճակատի հրամանատար նշանակելու կապակցությամբ ՀՀ կառավարության ու բանակի հրամանատարության շրջանում եղել են տարբեր տեսակետներ: Պիտի նկատել, որ պատերազմի նախօրեին Արցախում, Զանգեզուրում ու Նախիջեւանում խորհրդային զորքերի հաստատման պատճառով նկատելիորեն ընկել էին ոչ միայն ՀՀ կառավարության, այլ նաեւ մինչ այդ ժողովրդի եւ զինվորականության շրջանում անառարկելի հեղինակություն ունեցող Դրոյի նկատմամբ ՀՀ բնակչության տածած հարգանքն ու վստահությունը:

«...իր մասին(նկատի ունի Դրոյին-Հ. Գ.),- գրում է Հայաստանի Հանրապետության կառավարության ներգաղթի բաժնի վարիչ Վահե Արծրունին, որը կռիվների ողջ ընթացքում գտնվում էր Կարսի ճակատում,- որոշ եւ ամենէն կարեւոր շրջանակներուն մէջ կը տիրէր բացասական, եթէ ոչ աւելի վատ տրամադրութիւն՝ հրաւիրուեցաւ ստանձնել վտանգաւոր ճակատի մը հրամանատարութիւնը»[2]:

Բայց Թուրքական զորքերի հարձակման հետեւանքով ծանրագույն իրավիճակում հայտնված Հայաստանի կառավարության ու

[1] Մատենաշար «Ռազմիկ», թիւ 1, «Հայաստանի Հանրապետութեան վերջալոյսին», գրեց Տ. Բաղդասարեան, Փարիզ, 1937, էջ 235:
[2] Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 198:

ինչպես նաեւ բնակչության համար տվյալ պարագայում այլընտրանք այլեւս գոյություն ունենալ չէր կարող: Բնական է, որ Դրոն այն եզակի ռազմական գործիչներից էր, որին ուղղվելու էին հանրապետության ղեկավար շրջանների ու բնակչության հայացքն ու ուշադրությունը:

Պետական եւ ռազմական գործիչներից ոմանք, ելնելով հանրապետության պաշտպանության գործում Կարսի բերդաքաղաքի բացառիկ ռազմավարական նշանակությունից, պահանջում էին, որպեսզի Դրոն ստանձներ ոչ թե Սուրմալուի, այլ Կարսի ռազմաճակատի հրամանատարությունը: Դրոյին Սուրմալուի ռազմաճակատի հրամանատար նշանակելու տեսակետի ջերմեռանդ պաշտպաններից էին հանրապետության երկրագործության(գյուղատնտեսության) նախարար Սիմոն Վրացյանն ու խնամատարության նախարար բժ. Արտաշես Բաբալյանը, որոնք ռազմաճակատում տիրող կացությունը ուսումնասիրելու, հրամանատարությանը օգնություն ցույց տալու եւ կառավարությանը համապատասխան տեղեկություններ հաղորդելու նպատակով՝ կառավարության հանձնարարությամբ այդ օրերին գտնվում էին Կարսի ճակատում: Նրանք, ժամանելով Կարս, լինում են ռազմաճակատի տարբեր հատվածներում տեղաբաշխված զորամասերում, ապա զորքերում տիրող իրական կացությունը առավել խորությամբ պարզաբանելու եւ անհրաժեշտ եզրահանգումներ կատարելու նպատակադրությամբ գումարում են խորհրդակցություն, որին մասնակցում են նահանգի քաղաքական ղեկավարությունն ու այդ ուղղությունում կենտրոնացած զորքերի բարձրաստիճան հրամանատարները:

Կարսի բերդաքաղաքի վերջին օրերի կացությունը ներկայացնող վավերագրերից մեկում այդ առնչությամբ նշվում է. «Կենտր. կոմիտէի նիստում, որ մասնակցում էին նահանգապետը եւ ուրիշ բարձրաստիճան պաշտոնեաներ, Փիրումեանը յայտարարեց, որ բերդը եւ նահանգը մատնուած է պարպման, որովհետեւ Ֆռօնտի դրութիւնը կատաստրոֆիկ է եւ «միմիայն հրաշքը կարող է մեզ փրկել»: Այդ յայտարարութեան շնորհիւ տեղի ունեցաւ խուճապ, որի մասին տեղեկութիւնը ուղարկուեց կենտրոնական կառաւարութիւն: Կառաւարութիւնը նշանակեց նախարարներ Վրացեանին եւ Բաբալեանին Կարս, որոնք իրենց մէջ կենտրոնացնում էին կենտր. կառաւարութեան բոլոր ֆունկցիաները եւ կարողացան իրենց հեղինակութեամբ յարդարել քաղ. եւ զինուորական իշխանութիւնների մէջ տեղի ունեցող անարդարութիւնները:

Երկու նախարարների ներկայութիւնը բաւականին ազդում էր ընդհանուր տրամադրութեան վրայ եւ թէ քաղաքացիք եւ թէ

պաշտօնեաները իրենց այնպէս անտէր ու լքուած չէին զգում, ինչպէս առաջ...»[1]:

Ս. Վրացյանն ու Ա. Բաբալյանը ռազմաճակատի տարբեր հատվածներում հաղորդակցվելով զինվորների, ինչպես նաեւ ազգաբնակչության հետ եւ մոտիկից ծանոթանալով ու առավել հստակ եւ որոշակի կարծիք կազմելով Կարսի ուղղությունում տեղաբաշխված զորամասերում տիրող իրավիճակին՝ համապատասխան զեկուցագիր-տեղեկագիր են հղում հանրապետության կառավարությանը:

«Մենք,- գրում է Ս. Վրացեանը,- տեղեկագրում գրել էինք մի շարք պահանջներ, որոնցից յիշում եմ հետեւյալ կետերը:

Արագ եւ կտրուկ միջոցներ ձեռք առնելէ մաքրելու համար զօրամասերը անբաղձալի տարրերից, յատկապես թաքուն բոլշեւիկներից:

Պաշտօնից հեռացնել Դանիէլ Բէկ-Փիրումեան(Կարսի բերդապետ գեներալ Փիրումյանը պատերազմի նախօրեին ավտովթարի ենթարկվելով՝ կոտրել էր ոտքը եւ դժվարանում էր ինչպես հարկն է ղեկավարել բերդաքաղաքի պաշտպանական գործողությունները- Հ.Գ.) եւ Ցովսեփեան զօրաւարներին եւ նրանց տեղերը նշանակել աւելի եռանդուն ու հաւատաւոր հրամանատարներ»[2]:

Ամենակարեւորը, անկասկած, ռազմաճակատի հրամանատարի հարցն էր: Ու՞մ պետք է վստահել պատերազմի կարեւորագույն ուղղության՝ Կարսի ռազմաճակատի հրամանատարությունը:

Հանրապետության կառավարությանը հղած վերոհիշյալ զեկուցագրում անդրադառնալով նաեւ այդ հարցին՝ Ս. Վրացյանն ու Ա. Բաբալյանը առաջարկում են. «Դրոյին Սուրմալուի ճակատից փոխադրել Կարսի ճակատ: Սուրմալուի ուղղությունում դեռ տաք կռիւներ էին տեղի ունենում, բայց մեզ թւում էր, որ Կարսի ճակատը աւելի էր վտանգուած: Մեր համոզումով թշնամին այստեղից պիտի հասցնէր վճռական հարուածը, հետեւաբար, անյետաձգելի անհրաժեշտութիւն էր ուժեղացնել ռազմաճակատը՝ Դրոյի նմա բացառիկ ժողովրդականութիւն վայելող մարտական մի ուժով: Բաբալեանը առանձնապես պնդում էր այս պահանջի վրայ: Հետաքրքիր էր, որ Դանիէլ Բեգն էլ (նկատի ունի գեներալ Դ. Փիրումյանին- Հ.Գ.) ցանկալի է համարում Դրոյի տեղափոխութիւնը»[3]:

Այս անգամ չի կրկնվում այն, ինչ տեղի ունեցավ 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի ժամանակ: Այն ժամանակ, ինչպես արդեն

---

[1] ՀՀ ԲԿԱ, թթ. 10/10, գ. 65:
[2] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, 1960, հ. Բ, էջ 3:
[3] Նույն տեղում:

նշվել է, հայկական բանակի հրամանատարությունը, սթափ գնահատելով Սուրմալուի ճակատում ստեղծված ծանրագույն իրավիճակը, ճիշտ ժամանակին կատարեց ռազմաճակատի հրամանատարի փոփոխությունը, եւ Սուրմալուի ռազմաճակատի հրամանատար Դանիել Բեկ-Փիրումյանին փոխարինեց Դրոն: Բայց այս անգամ իրադարձությունները զարգանում են բոլորովին այլ ուղղվածությամբ:

Կարսի ճակատում եւ բուն բերդաքաղաքում տիրող կացության ու իրենց առաջարկությունների վերաբերյալ կառավարության ներկայացուցիչների կողմից Երեւանին հասցեագրած զեկուցագիր-տեղեկագիրը անհետեւանք չի մնում: Կառավարության ներկայացուցիչների կողմից առաջ քաշած հարցերն ու առաջարկությունները տեղում քննարկելու եւ համապատասխան վճիռներ կայացնելու նպատակով ՀՀ զինվորական նախարարության հանձնարարությամբ իր օգնականներով Կարս է գալիս Սարիղամիշ-Կարս ռազմաճակատի ընդհանուր զորահրամանատար գեներալ Սիլիկյանը(Սարիղամիշ-Կարս ռազմաճակատի հրամանատարական կետն ու շտաբը գտնվում էին Ալեքսանդրապոլում-Հ.Գ.):

«Բոլոր պաշտոնական տեսակցությունների եւ արարողությունների յետոյ,- շարունակում է Ս. Վրացյանը,- Զօր. Սիլիկեանը, Ա. Բաբալեանը եւ ես, երեքով ունեցանք մտերիմ խօսակցութիւն զօրաւարի սալոն վագոնում: Ներկայ էր եւ զօրաւարի շտաբի պետը (գնդապետ Վեքիլեան:) Սիլիկեան դրեց մեր առջեւ Երեւան ուղարկած մեր տեղեկագիրը, որ զինուորական նախարարութիւնը փոխադրել էր նրան հեռագրով եւ ասաց.

- Գոլուբչիկի(սիրելիներ), այս բոլորը, որ դուք հեռագրել էք, ինձ ծանօթ է, բայց ասացէք, խնդրեմ, ես ի՞նչ կարող եմ անել: Ի՞նչ կարող են անել զինուորական նախարարը կամ սպարապետը: Ուզում էք Դրոյին բերել այստեղ- ես էլ եմ ուզում- բայց ո՞վ պիտի բռնի նրա տեղը: Եթէ Երեւանը անցնի թշնամու ձեռքը, ի՞նչ արժէք կունենայ Կարսի ճակատը:

Ասում էք պաշտօնից հեռացրէք Դանիէլ Բէգին կամ Յովսէփեանին: Շատ բարի, նրանց տեղը ո՞ւմ դնենք: Մեր երիտասարդ ու գործօն ուժերը կապուած են ռազմաճակատի հետ, թիկունքում մնացել են կամ ծերունիները կամ յիմարները...»[1]:

Գեներալ Մ. Սիլիկյանի փաստարկները նույնպես տրամաբանական էին՝ թելադրված ու հիմնավորված ստեղծված կացությամբ:

[1] Նույն տեղում:

Իրոք, չափազանց ծանր էր տվյալ իրավիճակում մարտական ուժերի, հատկապես բանիմաց, կարող հրամանատարական կազմի ճիշտ եւ համապատասխան ընտրություն ու տեղաբաշխում կատարել: Նույնիսկ այնպիսի փորձառու զորապետեր, ինչպիսիք էին գեներալներ Թ. Նազարբեկյանը, Հախվերդյանը (հանրապետության բանակի շտաբի պետ), Մ. Սիլիկյանը, իսկ հանրապետության զինված ուժերում նրանցից առավել խորագետ ու փորձառու զինվորականներ չկային, ի զորու չէին երբեմն ամենաարդյունավետ վճիռներ կայացնել ու հրամանատարական կազմի ամենաճշգրիտ ընտրություն կատարել, քանի որ այդ նույն օրերին ռազմաճակատի գրեթե բոլոր ուղղություններից պահանջում էին համալրում ու օգնական ուժեր, իսկ ՀՀ զինված ուժերի հրամանատարության տրամադրության ներքո գտնվող մարտական ուժերը, հատկապես հրամանատարական կազմը, քանակական եւ առավելապես որակական առումով սահմանափակ էին:

Հանրապետության վերջին իրադարձությունների վերլուծությանը նվիրված փաստաթղթերից մեկում այս հարցի լուսաբանման առնչությամբ նշվում է. «Հրամանատարական կազմի թուլութիւն: Այդ պակասը շատ մեծ էր եւ ամէն քայլափոխում զգացւում էր: Ռուսական բանակում երկրորդական պաշտօններ վարող զինուորականները, որոնք լաւ ստորադրեալներ էին մեծ բանակում, շուտափոյթ կերպով աստիճանի բարձրացում ստացան եւ իրենց նոր պաշտօններին անհամապատասխան լինելով՝ վճռական րոպէին երեւան հանեցին իրենց թուլութիւնն ու անկարողութիւնը...

Սպայութեան պակաս. Հայաստանի Հանրապետութիւնը իր գոյութեան կարճ ժամանակամիջոցում հնարաւորութիւն չունեցաւ ստեղծելու սպայութեան թարմ եւ նոր կազմ ու հայկական զօրաբանակը կառաւարւում էր ռուսական բանակից մնացած հայ սպաներով: Վերջին երկույ տարուա ընթացքում բազմաթիվ կռիւների շնորհիւ այդ սպայութիւնը նուազեց, պակասեց եւ զօրամասերը մնացին աւելի քիչ թւով կամ նոր նշանակուած սպաների ձեռքը...»[1]:

Անժխտելի է, որ պատերազմական իրավիճակում հրամանատարությունն անհրաժեշտորեն պարտավոր է, առանց որեւէ բացառության, կարեւորել բոլոր ճակատները: Բայց հայ- թուրքական պատերազմում ՀՀ զինված ուժերի հրամանատարությունը, այնուամենայնիվ, պարտավոր էր Սարիղամիշ- Կարս ուղղության վրա առաձնահատուկ ուշադրություն դարձնել, քանի որ այնտեղ էին կենտրո-

[1] ՅՅ ԲԿԱ, թթ. 121, գ. 97 («Հայաստանի վերջին անցքերը», էջ 21), էջ 4:

նացված հակառակորդի հիմնական ուժերը, եւ հետեւաբար այնտեղ էին ընթանալու պատերազմական հիմնական գործողություններն ու, ինչպես ցույց տվեց ժամանակը, հենց այդ ուղղությունում էր վճռվելու Հայաստանի Հանրապետության ճակատագիրը:

Դրոյին Կարսի ռազմաճակատ տեղափոխելու կողմնակիցներից մեկի՝ գնդապետ Տիգրան Բաղդասարյանի վկայություններից պարզվում է, որ նրան հայկական բանակի եւ անձամբ սպարապետ գեներալ Թ. Նազարբեկյանի կողմից Կարսի ուղղություն տեղափոխվելու առաջարկություն, այնուամենայնիվ, եղել է: Այդ նույն վկայությունները նաեւ հավաստում են, որ Դրոն նախապատվություն տալով Սուրմալուին՝ չի համաձայնվել ընդունել Կարսի ռազմաճակատի հրամանատարությունը:

«Զօրավար Նազարբէկեանը,- գրում է Ս. Վրացյանը,- առաջարկեց Դրոյին ստանձնել Կարս-Սարիղամիշ ճակատի հրամանատարութիւնը, Դրոն գերադասեց ընդունել Սուրմալուի ռազմաճակատի պաշտպանութիւնը...»[1]:

Գնդապետ Տիգրան Բաղդասարյանը նույն հարցի կապակցությամբ նշում է հետեւյալը. «Գիշէր մը Դրոյի հետ Իգդիր, բրիգադի շտաբն ենք: Ուղիղ հարաբերութեան մէջ է սպարապետութեան հետ: Զօր. Նազարբէկեան կը յայտնէ թէ եղած կարգադրութեան համաձայն Դրօն պէտք է պատրաստուի անմիջապէս մեկնելու Կարսի ճակատը առանձին զօրամասով մը: Դրօն գոհ չմնաց այդ կարգադրութիւնէն եւ խնդրեց սպարապետէն, որ իրեն արտօնուի գիշերով Երեւան հանդիպել եւ վերադառնալ:

Դրօն գնաց եւ եկաւ: Հրամանը փոխուած էր: Դրօն կը մնար Սուրմալու, մեր գունդը կը մեկնէր Կարս (նկատի ունի իր գլխավորած 7-րդ գունդը, որը մինչ այդ գտնվում էր Սուրմալուի ճակատում-Հ.Գ.)»[2]:

Ռազմաճակատների հրամանատարության ընտրության հարցում ներկայացնելով նաեւ Դրոյի դիրքորոշումը՝ գնդապետ Տ. Բաղդասարյանը դատապարտելով հայկական հրամանատարության այդ սխալ եւ վնասակար որոշումը՝ պնդում է. «Իմ կարծիքով առաջին մեծ սխալներէն մէկը եղաւ այս, զոր գործեց սպարապետութիւնը, կռիւներու սկզբնական շրջանին, ատոր հետեւանքները յետագային պիտի կրէինք դառնօրէն...»[3]:

[1] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Բ, էջ 4:
[2] Մատենաշար «Ռազմիկ», թիւ 1, «Հայաստանի Հանրապետութեան վերջալոյսին», գրեց Տ. Բաղդասարեան, Փարիզ, 1937, էջ 234:
[3] Նույն տեղում:

Ռազմաճակատների հրամանատարների փոփոխություն տեղի չի ունենում: Հայկական բանակի հրամանատարությունը, վստահ իր զորամասերի մարտունակությանն ու կարողությանը, լրջորեն նախապատրաստվում է հոկտեմբերի 14-ին ընդհանուր եւ վճռական հարձակում ձեռնարկել Կարսի ճակատում: Ծրագրած գործողությունը հաջողությամբ կենսագործելու պարագայում հրաշալի հնարավորություն էր ընձեռվում ոչ միայն թուրքական զորքերին մեկընդմիշտ դուրս շպրտել Հայաստանի տարածքից, այլեւ զարգացնել հարձակումը եւ շարժվել դեպի Էրզրում ու Արեւմտյան Հայաստանի խորքերը:

Ներկայացնելով Կարսի ճակատի հրամանատարության տրամադրվածությունը, Կարո Սասունին, որն այդ ժամանակ, որպես Ալեքսանդրապոլի նահանգապետ, գտնվում էր ռազմաճակատի ընդհանուր զորահրամանատարի շտաբում, նշում է , որ հայկական բանակի հաղթանակին չէին կասկածում գեներալ Սիլիկյանն ու նրա գլխավորած շտաբը: Ավելին, իսկ նրա շտաբի պետ գնդապետ Վեքիլյանը «...շատ արհամարհական վերաբերմունք մը ունէր թրքական ուժերու հանդէպ. նա ոչ մէկ կասկած ունէր, որ մեր զօրքերը հոկտեմբերի 14-ի յարձակողականի յաջորդ օրն իսկ՝ ետ պիտի գրաւեն Սարիղամիշը»[1]:

Ս. Վրացյանը, որն այդ նույն օրերին Արտաշես Բաբալյանի ընկերակցությամբ դեռեւս գտնվում էր Կարսի ուղղությունում, անդրադառնալով հայկական հրամանատարության կողմից շատ թույլ կազմակերպված հոկտեմբերկի 14-ի ծ հարձակմանը, գրում է. «Մեր աշխարհը Կարսն էր: Մեր մտասեւեռումը՝ Հոկտեմբերի 14-ը: Անքուն գիշերներ: Ամէն ինչ հոկտեմբեր 14-ի համար: Սրտատրոփ սպասում էինք վճռական ժամին...Մեր թախանձագին խնդրանքը, գոնէ Հոկտ. 14-ի օրերին, Դրոյին ուղարկել Կարսի ճակատ՝ մնաց անլսելի: Սուրմալուի ճակատը կայունացել էր, եւ Երեւանին անմիջապէս վտանգ չէր սպառնում. Դրոյի ներկայութիւնը Հոկտ. 14-ի ընդհանուր յարձակման վրայ անկասկած բարերար դեր կը կատարէր:

Մեր խնդրանքը, որ գոնէ զինուորական նախարարը կամ նախարարապետը Հոկտ. 14-ից առաջ այցելեն Կարսի ճակատը, նոյնպէս դրական հետեւանք չունեցաւ...»[2]:

Ճակատամարտի նախօրեին՝ հոկտեմբերի 13-ին, Ս. Վրացյանն ու Ա. Բաբալյանը բարձրացել են բերդ, ապա գնացել են առաջավոր դիրքերը, տեսել են ամրություններն ու հանդիպել Կարսի նահան-

[1] «Հայրենիք» ամսագիր, 1926, ապրիլ, էջ 82:
[2] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. 2, Պէյրութ, 1960, էջ 248:

գապետ Ղորղանյանին ու զրուցել են զինվորների ու զորամասերի հրամանատարների հետ:

«... Ամէն ինչ,-գրում է Ս. Վրացյանը,- լաւ էր երեւում: Հրամանատարները առանձին դժգոհութիւն ցոյց չէին տալիս: Զինուորները երեւում էին հանգիստ: Գիտէ՞ր թշնամին, թէ ի՛նչ հարուած էր պատրաստւում իր դէմ...

...Ինձ այնպես էր թւում, որ յաջորդ օր, հոկ. 14-ին, պիտի որոշուէր Հայաստանի Հանրապետութեան բախտը»[1]:

Հարկ է ընդգծել, որ ճակատամարտի նախօրեին հայկական զորքերը թվաքանակով ու հատկապես զինվածությամբ զգալիորեն գերազանցել են թուրքական զորքին: Հավանաբար այդ հանգամանքն էր հաղթանակի հանդեպ վստահություն ներշնչում հայկական զորքերի հրամանատարությանը:

Այս անգամ Ս. Վրացյանի ներքին զգացողությունը նրան չէր խաբում: Իրոք, հոկտեմբերի 14- ին տեղի ունեցած ճակատամարտը մեծապես պայմանավորեց ոչ միայն Կարսի եւ Դրոյի գլխավորած Սուրմալուի ռազմաճակատներում ծավալվող մարտական գործողությունների հետագա ընթացքը, այլ նաեւ Հայաստանի Հանրապետության բախտը:

Հոկտեմբերի 14-ի վճռորոշ ճակատամարտի ընթացքի, ճակատամարտող կողմերի մարտական ուժերի հարաբերակցության վերաբերյալ պահպանվել են խիստ ուշագրավ, նաեւ իրարամերժ տեսակետներ: Կ. Սասունու հավաստմամբ՝ հայկական կողմից հոկտեմբերի 14-ի հարձակմանը մասնակցել են «...Արտահանեն մինչեւ Հաճի-Խալիլ երկրորդ ճակատի վրայ գործող բանակի թիւը կը հասնէր 14 գումարտակի, մօտ 12000 զինուորներով, իսկ Ալեքսանդրապոլէն մինչեւ Կարս ընդհանուր պահեստի ուժերը կը հաշուին 4000 սուին»[2]:

Ներկայացնելով հակառակորդի մարտական ուժերի քանակը՝ Կ. Սասունին նշում է, որ ըստ Կարսի ռազմաճակատի հրամանատարության տվյալների «...թրքական բանակի զինուորներու թիւը 4000 - էն վեր չէ: Իրոք, այդ գիշերուայ Կարսէն եկած զեկույցը կը յայտնէր, թէ թուրքերը ճակատի վրայ կեդրոնացուցած են 9 գումակ, ամենէն շատը 4000 զինուորով»[3]:

Եթե այդ ամենին, ըստ Կ. Սասունու, գումարենք պահեստի ուժերը, ապա ստացվում է, որ հայկական 15000 մարտիկներից բաղկացած զորաբանակին դիմակայելու էր թուրքական ընդամենը 5000 թվակազմ ունեցող զորքը, որին աջակցում էին քրդական հեծյալ զինախմբերը[1]:

Ինչպիսին էլ լիներ հակամարտող կողմերի զինական ուժերի քանակական հարաբերակցությունը, ուշագրավն այն է, որ ճակատամարտում հայկական զորքերը կարողացել են մինչեւ երեկո հաջողությամբ զարգացնել հարձակումը, սակայն, այնուամենայնիվ, արդյունքում մատնվել են անհաջողության եւ դիմել անկանոն նահանջի: Ինչո՞ւ հայկական զորքերի հարձակումը, որի հաջողությանը ՀՀ կառավարությունը, բանակի եւ Կարսի ճակատի հրամանատարությունը չէր կասկածում, մատնվեց անհաջողության:

Պիտի նկատել, որ չեն պայհպանվել կամ ընդհանրապես գոյություն չունեն ռազմաճակատում ընթացող մարտական գործողությունների, մասնավորապես Հոկտեմբերի 14-ի հարձակման մանրամասները ներկայացնող ռազմական ամփոփագրե: Հոկտեմբերի 14 - ի հարձակման անհաջողության լուսաբանմանը, ըստ իս, ոչ այնքան հիմնավոր եւ մանրամասնությամբ անդրադարձել են Ս. Վրացյանը, Կ. Սասունին եւ Իրազեկը, որոնք այդ օրերին գտնվում էին Կարսի ռազմաճակատում: Առանձնապես ուշագրավ է եւ ինչ - որ տեղ առեղծվածային ու փոքր-ինչ անհավատալի է Ս. Վրացյանի հետեւյալ նկարագրությունը. «...Ճիշտ նշանակուած ժամին, ռազմաճակատի ամբողջ երկայնքի վրայ սկսուեց ընդհանուր յարձակումը: Որոտացին թնդանօթները: Հեռուից ու մօտից լսուեցին հրացանի համազարկերի եւ գնդացիրների տրաքտրաքոցը: Ուռա՜, կեցցէ՛...

Թշնամին, յանկարծակիի եկած, սկսեց յետ քաշուել:

...Թւում էր, թէ ամէն ինչ անցնում է առանց խոչընդոտի, ըստ ծրագրի... Մէկ էլ ի՞նչ պատահեց ձախ թեւում: Ինչ որ անորոշ աղմուկ, հեռուից հետզհետէ մօտեցող համազարկեր: Ճակատի հրամանատարի դէմքին ջղային անհանգստութիւն: Ի՞նչ է պատահել:

...Յիշում եմ միայն հրամանատարի խռպոտ ձայնը, որ աշխատում էր կեցնել սարսափահար փախչող զինուորներին, որոնց ալիքը ինձ էլ քշեց տարաւ հետը...»[2]:

Կ. Սասունին նույնպես վկայում է, որ մինչեւ երեկո ճակատամարտը ծավալվում էր հայկական բանակի առավելությամբ ու թեւադրանքով: Սակայն երեկոյան տեղի է ունենում անսպասելի արմատական բեկում: Թուրքական զորքերը պաշտպանությունից անց-

---

[1] Նույն տեղում, էջ 249:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1926, ապրիլ, էջ 82:
[3] Նույն տեղում:

---

[1] Տե՛ս Նույն տեղում, էջ 93:
[2] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Բ, էջ 250:

նում են հարձակման, եւ հայկական զորամասերը, առաջին հերթին 5-րդ եւ 7- րդ գնդերը, խուճապի մատնվելով՝ սկսում են անկազմակերպ նահանջել[1]:

Իրականում ի՞նչ կարող էր կատարվել, որը ստիպել էր հաջողությամբ հարձակվող հայկական զորքին մատնվել խուճապի եւ անկանոն նահանջել: Հայկական զորքերի այդ, հիրավի, առեղծվածային նահանջի մասին Ս. Վրացյանը տալիս է հետեւյալ բացատրությունը. «Երեկոյան, երբ յոգնած ու ջարդուած հաւաքուել էինք Բժ. Գազանջեանի տանը, յայտնի եղաւ, որ մեր զօրքի յառաջխաղացման ընթացքում, ձախ թեւի թշնամու կողմից լսուել են հայերէն ձայներ. «Ընկերնե՛ր, մի՛ կռուէք մեր դէմ. մենք ձեր ընկերներն ենք... Անցկի՛ դաշնակների իշխանութիւնը»:

Բոլշեւիկեան բացականչութիւնները լսուել են ոչ միայն թուրքական բնակում, այլեւ մեր զինուորների մէջ գտնվող հայ բոլշեւիկների կողմից եւ այդ հանգամանքը առաջ է բերել իրարանցում ու անորոշություն: Թշնամին կենտրոնացրել է կրակը այդ թեւի վրայ, որտեղից սկսուել է փախուստը: Ձախ թեւի փլուզումը անդրադարձել է եւ ճակատի միւս մասերի վրայ»[2]:

Ճակատամարտի մանրամասները ներկայացնող հեղինակների հավաստմամբ, հայկական զորքերի անկազմակերպ նահանջը անակնկալ էր ոչ միայն հայկական կողմի, այլ նաեւ թուրք հրամանատարության համար: Ըստ նրանց գնահատման, հենց այդ հանգամանքն է նպաստել, որ թուրքական զորքերը չեն շարունակել ինչպես հարկն է հետապնդել խուճապի մատնված անկազմակերպ նահանջող հայկական զորամասերին[3]:

Կարելի է եզրակացնել, որ ճակատամարտում տեղի ունեցածը թուրք հրամանատարության եւ նրանց համագործակցող ու աջակցող հայ բոլշեւիկների կողմից նախատեսվել ու մշակվել էր վաղօրոք, այլապես ինչպե՞ս բացատրել այն խայտառակությունը, ինչ կատարվել է ճակատամարտում:

Ըստ Կ. Սասունու հավաստման, կռվի ամենավճռական պահին հայկական զորքերի կենտրոնում գտնվող 5-րդ(մայիսյան դեպքերից հետո այդ գունդը գտնվել է բոլշեւիկների ազդեցության տակ –Հ. Գ.), 7-րդ գնդերը եւ գնդապետ Մազմանյանի գլխավորած 1-ին գնդի երկու վաշտերը անսպասելիորեն լքում են մարտադաշտը:

[1] Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1926, ապրիլ,էջ 82:
[2] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Բ, էջ 250:
[3] Նույն տեղում:

Ճակատամարտի վճռական պահին այդ զորամասերի անկանոն հեռանալը իր բացասական ազդեցությունն է գործում ճակատի մյուս տեղամասերում մարտնչող զորքերի մարտական տրամադրվածության վրա: Հայկական զորքերը խուճապի են մատնվում եւ հարկադրված նահանջում[1]:

Քանի որ բացակայում են հոկտեմբերի 14-ի ճակատամարտի այդ բախտորոշ պահը, այն է՝ մարտադաշտից հայկական զորքերի անհասկանալի հեռանաու պատճառը փաստարկող մեկ այլ սկզբնաղբյուր, ապա դժվար է միանշանակորեն ընդունել կամ ժխտել Ս. Վրացյանի եւ Կ. Սասունու նկարագրածի իսկությունը:

Եթե ընդունենք, որ իրոք հայկական զորքերի շարքերում առաջացած խուճապը պայմանավորված է Ս. Վրացյանի ներկայացրած իրողությամբ, ապա հարց է ծագում. մի՞թե հայկական զորքերն առաջնորդող հրամանատարներն ի զորու չէին վճռական քայլեր ձեռնարկել կանխելու զինվորների մեջ տարածված խուճապային տրամադրությունն ու շտկել ստեղծված իրավիճակը: Համանման քաոսային եւ լարված կացությունում հրամանատարը պարտավոր է դրսեւորել իր մարտական ողջ կարողություններն ու անձնական օրինակով եւ խիզախությամբ ոգեշնչեր ու առաջնորդեր զինվորներին: Կարելի է ասել, որ հոկտեմբերի 14-ի ճակատամարտի վճռական պահին հայկական զորքերն առաջնորդող հրամանատարների մեջ հավանաբար չի գտնվել մեկը, որը կարողանար ճակատագրական պահին դրսեւորեր բարձրակարգ հրամանատարին բնորոշ մարտական որակներ եւ անհրաժեշտ ու վճռորոշ քայլեր գործադրեր՝ բեկում մտցնելու ծավալվող գործողություններում:

Այս առումով ուշագրավ է Վահե Արծրունու հետեւյալ գնահատականը. «Հայկական իրականութեան մէջ ո՞ր հրամանատարը վտանգի պահուն ինքզինք նետեց կրակին մէջ՝ փրկելու իր եւ իր զօրքի պատիւը. չկորցնելու ճակատամարտ մը ու առիթ չտալու, որ խուճապի հոգեբանութիւն մտնէր շարքերուն մէջ»[2]:

Մի էական հանգամանք եւս. ինչպիսի՞ն էին հայկական բանակի բարձրաստիճան հրամանատարների պատերազմական գործողություններ վարելու ռազմավարությունն ու մարտավարությունը : Հանրապետության զինված ուժերի սպարապետ, գեներալ Թ. Նազարբեկյանի հրամանատարական կետը, անգամ մարտական

[1] Տե՛ս Սասունի Կ., Հայ-թրքական պատերազմը (1920-ին), էջ 75-76:
[2] Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 374-375:

գործողությունները ղեկավարելիս, որպես կանոն գտնվել է ռազմաճակատից հեռու: 1920թ. հայ - թուրքական պատերազմի ժամանակ նա գրեթե մշտապես եղել է մայրաքաղաքում եւ հազվադեպ է հայտնվել ռազմաճակատում: Կարսի ռազմաճակատի ընդհանուր զորահրամանատար, գեներալ Մովսես Սիլիկյանի հրամանատարական շտաբը, Ալեքսանդրապոլում էր, եւ նա նույնպես մարտական գործողությունները ղեկավարել է՝ գտնվելով ճակատամարտի դաշտից զգալի հեռավորության վրա: Կռիվներ վարելու նույն մարտավարությունն են դավանել նաեւ գեներալներ Հովսեփյանն ու Դանիել Բեկ-Փիրումյանը, որը ոտքի վնասվածքի պատճառով ընդհանրապես որեւէ անգամ չի եղել մարտադաշտի առաջավոր բնագծերում:

Անժխտելի իրողություն է. մարտական անբասիր կարողություններով օժտված հրամանատարը կռիվների ժամանակ, որպես օրենք, երբեք հեռու չի գտնվում իր զորքից: Նա պետք է գտնվի իր զինվորների կողքին եւ պատրաստ լինի յուրաքանչյուր պահին, հատկապես ճգնաժամային, սառնասրտորեն ու սթափ գնահատել իրավիճակն ու կայացնելով ստեղծված կացությանը համահունչ որոշում՝ համարձակորեն առաջնորդել զինվորներին:

Որեւէ կասկած լինել չի կարող, որ այդ ճակատամարտում հայկական զորքերի պարտության հիմնական պատճառը եղել է որ միայն Ս. Վրացյանի վկայակոչած իրողությունը, այլեւ Սարիղամիշ-Կարս ռազմաճակատի հրամանատարության թուլությունն ու կռիվներ վարելու նրանց դավանած ոչ կենսունակ, ստեղծված կացությանն անհարիր մարտավարությունը:

Համաձայն Կ. Սասունու վկայության, սպարապետ Նազարբեկյանն ու գեներալ Սիլիկյանը հոկտեմբերի 18-ին եկել են Կարս ու զորքերի հրամանատարությանն անհրաժեշտ հրահանգներ տալուց հետո, վերադարձել Ալեքսանդրապոլ[1]:

Հայաստանի Հանրապետության զինվորական նախարար, գեներալ Հ. Հախվերդյանի գնահատմամբ՝ «Գեներալ Փիրումովը ո՛չ իր ռազմական գիտելիքների, ո՛չ ընդհանուր զարգացվածության եւ ո՛չ էլ խելքի առումով ամենեւին չէր համապատասխանում ամրոցի պարետի պաշտոնին»[2]:

Հայրենական պատմաբաններից Ա. Հակոբյանը, վերլուծելով հայ-թուրքական պատերազմի ժամանակ հայկական զորքերի կրած պարտության պատճառները, գեներալներ Փիրումյանի եւ Հովսեփյանի գործունեությանը տալիս է հետեւյալ գնահատականը. «Բացի ռազմական գործի ձախողումներից վերջիններս առանձնապես աչքի չեն ընկել նաեւ բարոյական կայունությամբ եւ անձնական համեստ կյանքով: Նրանք, պատերազմի թեժ շրջանում իրենց անձնական շահը վեր դասելով հայրենիքի պաշտպանության եւ անվտանգության շահից, ավելի շատ մտահոգված էին ոչ այնքան Կարսի դիրքերը պահելու, որքան իրենց թալանած նախիրները եւ կահկարասիքը անվնաս թիկունք փոխադրելու»[1]:

Գեներալներին տրված Ա. Հակոբյանի որակումը առավելապես վերաբերվում է Հովսեփյանին, որը թուրքական զորքերի Կարսի բերդաքաղաքին մոտենալու ժամանակ, վրացի առեւտրականների հետ զբաղված է եղել կովերի առք ու վաճառքով: Որպես ապացույց գեներալներին տված իր վերոհիշյալ գնահատականի, Ա. Հակոբյանը մեջբերում է Կարսի նահանգապետ Գ. Զալխուշյանի հետեւյալ վկայությունը. «...զորավար Ա. Հովսեփյանը, փոխանակ զորքին ինքնաշարժերով փամփուշտ հասցնելու, դրանցով իր կահ կարասիքը եւ կաթնատնտեսության գործիքները ապահով փոխադրում էր Ալեքսանդրապոլ»[2]:

Ի դեպ, հոկտեմբերի 14-ի ճակատամարտում հենց գեներալ Հովսեփյանի գլխավորած զորամասերն են առաջինը մատնվել խուճապի եւ դիմել անկանոն նահանջի, ավելի ստույգ՝ փախուստի:

Պիտի ընդգծել, որ համանման իրավիճակում արդարացի են բոլոր նրանք, ովքեր պահանջում էին Դրոյին տեղափոխել Կարսի ճակատ: Դրոն, ի տարբերություն վերոհիշյալ զորապետերի, կռիվները վարելիս առաջնորդվել է ճիշտ հակառակ մարտավարությամբ: Որպես օրենք, կռիվների ողջ ընթացքում նա մշտապես գտնվել է շարժման մեջ եւ գերադասել է առավելապես լինել մարտադաշտում, զինվորների կողքին: Բազմաթիվ են դեպքերը, երբ նա, ամենաճգնաժամային պահին հայտնվելով մարտադաշտի ամենադժվարին տեղամասում, կարողացել է ակնթարթորեն ճիշտ կողմնորոշվել եւ իր անձնական օրինակով ոգեշնչել ու մարտի առաջնորդել խուճապի մատնված զինվորներին:

Կարելի է վստահորեն պնդել, որ եթե Դրոն այդ պահին լիներ մարտադաշտում, անպայմանորեն կհայտնվեր ճակատամարտի ամենաշիկացած կետում, իր զինվորների կողքին եւ իր անձնական օրինակով կոգեւորեր ու կառաջնորդեր նրանց դեպի հաղթանակ:

[1] Տե՛ս Սասունի Կ., Հայ-թրքական պատերազմը (1920-ին), էջ 83:
[2] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 12:

[1] Հակոբյան Ա., 1920 թ. Թուրք-հայկական պատերազմի փորձն ու դասերը, Երեւան, 2004, էջ 19:
[2] Նույն տեղում:

Մի պերճախոս վկայություն Դանիել Բեկ- Փիրումյանի հուշերից, որը լավագույն բնութագիր է Դրոյի մարտական կարողություններ-ի ու դավանած մարտավարության:

«Դրոյի հետ, - վկայում է Դանիել Բեկ-Փիրումյանը, - Իգդիր ճակատում կռվում էինք տաճիկների դէմ: Մի օր, Արաքս գետի ձախ ափում, նստած ճաշում էինք մի քանի բարձրաստիճան զինուորականների հետ, մէկ էլ տեսնենք Արաքսի միւս ափից մեր զինուորները փախչում են:Դրօն անմիջապէս տեղից վեր ցատկեց, մեզ մօտ արածում էր մի ձի, իրեն գցեց ձիու վրայ եւ քշեց գետի մէջ, անցաւ միւս ափը, կանչելով. « Տղերք ջան, ես ձեզ մատաղ հլնեմ, ո՞ւր էք փախչում, յետ դարձէք, պարոն Դրօն է: Զօրքը շունչ ու հոգի առած, յետ դարձաւ, մի լաւ ջարդ տալով տաճիկներին, բաւականի տեղ յետ գրաւեց: Եթէ մենք լինէինք, քարտէզին պիտի դիմէինք: Հետախուզութիւն կատարէինք, մինչ այն մեր բանակը կանցնէր Արաքս գետը: Դրօյի մեծութիւնը դրանում էր եւ հաջողութիւնն էլ նման երեւոյթների մէջ էր»[1]:

Հոկտեմբերի 14 -ի հարձակողական գործողությունից հետո ռազմաճակատում ժամանակավորապես տիրում է հարաբերական հանգիստ իրավիճակ:

Ս. Վրացյանը Կարսի բերդաքաղաքից վերադառնում է մայրաքաղաք եւ իր նկատառումներն ու առաջարկություններն է ներկայացնում հանրապետության կառավարության քննությանը: Հոկտեմբերի 21-ին տեղի է ունենում Հայաստանի կառավարության նիստը, որին մասնակցելու համար ճակատից մայրաքաղաք են կանչում նաեւ Դրոյին: ՀՀ կառավարության նիստում բազում այլ հարցերի թվում քննարկվում են Կարսի ռազմաճակատին վերաբերող հարցերը եւ նախարարներ Ս. Վրացյանի ու Ա. Բաբալյանի ներկայացրած առաջարկությունները:

«Ժամը 3-ին,- գրում է Ալ. Խատիսյանը, որը նախորդ օրն էր վերադարձել արտասահմանյան գործուղումից,- ներկայ գտնուեցայ կառաւարութեան նիստին, որուն կը մասնակցէին նաեւ զինուորական հրամանատարութեան ներկայացուցիչները եւ խորհրդարանի նախագահը (նկատի ունի Հովհ. Քաջազնունուն-Հ.Գ.):

...Նիստին ներկայ էր Կարսէն նոր վերադարձած երկրագործութեան նախարար Ս. Վրացեանը: Քննութեան էր դրուած՝ թուրքերու դէմ պատերազմը շարունակելու լաւագոյն եղանակի խնդիրը: Զօրաւարներ Նազարբէկեան եւ Ցովսեփեան իրենց կողմէն տեղեկութիւն տուին, որ թէեւ հոկտեմբերի 14-ի յարձակողականը չէ յաջողած, բայց հայ բանակի պաշտպանողական ուժը բաւարար է: Սիմոն Վրացեան բերած էր Կարսէն անձնական տպաւորութիւններ, որոնք կը վկայէին զօրքերու բաւական լաւ եւ ամուր տրամադրութեան, բայց հրամանատարական կազմի թուլութեան եւ ղեկավարող ձեռքի բացակայութեան մասին:

... Խորհրդակցութիւնը հաւանութիւն տուաւ շարք մը վարչական կարգադրութիւններուն, որոնցով կառաւարութիւնը կուժեղացնէր երկրի պաշտպանողական ուժը եւ ցրուեցաւ բաւական լաւ տրամադրութեան տակ»[1]:

Խորհրդակցությունում ներկայացնելով նաեւ ռազմաճակատներում տեղի ունեցած մարտական գործողություններից հետո հայկական եւ թուրքական զորամասերի զբաղեցրած դիրքերն ու պաշտպանական բնագծերը՝ մասնակիցները նշել են. «...Սուրմալուի ճակատը Դրոյի զօրամասերը կը պահէին թշնամիին, իսկ Կարսի ուղղությամբ թուրքերը բռնած էին Կարսի առջեւ գտնուած դիրքերը»[2]:

Այս հաղորդագրությունը փաստում է, որ Հայաստանի կառավարությունը քաջատեղյակ էր ռազմաճակատներում հետեւյալ իրողությանը. եթե հոկտեմբերի 21-ի դրությամբ Սուրմալուի ճակատում հայկական զորքերը հաջողությամբ իրենց տնօրինության տակ էին պահում պաշտպանական բնագծերը, ապա Կարսի ուղղությունում թուրքական զորքերին հաջողվել էր ընդհուպ մոտենալ բերդաքաղաքի մատույցներին:

Եթե առաջնորդվենք Ալ. Խատիսյանի ներկայացրած տեղեկություններով, ապա պիտի խոստովանել , որ ավելի քան անհասկանալի է կառավարության նիստերում ռազմաճակատի կացության վերաբերյալ Ս. Վրացյանի պաշտպանած տեսակետը: Ճիշտ է, նա բացասական գնահատականներով է ներկայացնում Կարսի ռազմաճակատի հրամանատարների կարողությունները, բայց չեշտում է «զօրքերու բաւական լաւ եւ ամուր տրամադրութեան» մասին, թեեւ օրեր առաջ ՀՀ կառավարությանը հասցեագրած զեկուցագրերում զորամասերում տիրող իրավիճակը ներկայացրել էր ճիշտ հակառակ ուղղվածությամբ:

Վ. Արծրունին, իր հուշերում մանրակրկիտ կերպով անդրադառնալով Կարսի ռազմաճակատում հայկական զորքերի պարտության պատճառների վերլուծությանը, իրավացիորեն իր զարմանքն է հայտնում ՀՀ կառավարության վերոհիշյալ նիստերում Ս. Վրա-

[1] «Հայրենիք» օրաթերթ, 1956, ապրիլի 24:

[1] Խատիսեան Ալ., նշվ. աշխ., էջ 270:
[2] Նույն տեղում:

ցյանի արտահայտած «զօրքերու բաւական լաւ եւ ամուր տրամադրութեան» տեսակետի կապակցութեամբ: Նա խստորեն քննադատելով Կարսի ռազմաճակատի մի շարք հրամանատարներին, գրում է. «Աշխարհ գիտէ, թէ զօրաւարներ Բէկ Փիրումեան (Դանիէլ) եւ Ցովսէփեան իրենց գործի մարդիկը չէին, բայց, փոխադարձ փափկանկատութեան մը շնորհիւ մինչեւ վերջ անոնք մնացին իրենց ռազմական ընդունակութիւններուն անհամապատասխան պաշտօնին գլուխը»[1]:

Հաշվի առնելով ՀՀ զինվորական նախարարության տնօրինության ներքո գտնվող սպայական կազմի իրական հնարավորությունները, բանակի հրամանատարության կարծիքն ու ռազմաճակատի տարբեր ուղղությունների ռազմավարական նշանակությունը՝ հանրապետության կառավարությունը նպատակահարմար չի գտնում կատարելու նախարարներ Ս. Վրացյանի եւ Ա. Բաբայյանի կողմից Կարսի ռազմաճակատի հրամանատարությանը փոխելու առաջարկությունը, եւ Դրոյին հանձնարարվում է շարունակել ղեկավարել Սուրմալուի ռազմաճակատը: Ինչ խոսք, ՀՀ կառավարության ու բանակի հրամանատարության այդօրինակ որոշումը չէր կարող պայմանավորված չլինել Դրոյի դիրքորոշմամբ:

Հարց է ծագում. ինչու՞ Դրոն, այնուամենայնիվ, նախընտրել է ստանձնել Սուրմալուի, այլ ոչ թե Կարսի ռազմաճակատի հրամանատարությունը:

1. Ամենայն հավանականությամբ՝ Սարիղամիշ-Կարս ուղղությունում կենտրոնացած զորամասերում տիրող անմխիթար իրավիճակն ու հրամանատարական կազմի շրջանում հաստատված ոչ այնքան բարյացակամ հարաբերությունները:

ՀՀ 1-ին վարչապետ Հովհ. Քաջազնունու կողմից հայկական բանակին տրված գնահատմամբ. «Խմբային ու խմբապետական սիստեմը, որ մասնաւորապէս խրախուսել էր Բիւրօ-Կառաւարութեան կողմից, քանդել էր զինուորական կազմի ամբողջութիւնը, միութիւնը: Բանակի դաստիարակութիւնը, ռազմական ոգին, կուռ կազմակերպութիւն ու կարգապահութիւնը- ուրեմն եւ ընդդիմադրական ոյժը- թուլացած էին ծայր աստիճանի ու դա անակնկալ էր կառաւարութեան համար. կառաւարութիւնը եւ ինքը զինվորական մինիստրը՝ չէին ճանաչում բանակը»[2]:

Հայկական բանակին տրված Հովհ. Քաջազնունու այս գնահատականը, կարելի է ասել, վերաբերում է նաեւ Սարիղամիշ-Կարս

[1] Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 37:
[2] Քաջազնունի Հովհ., նշվ. աշխ., էջ 34:

ուղղությունում կենտրոնացած զորամասերին, որոնցում տիրող կացությունը չէր կարող ծանոթ չլինել Դրոյին:

2. Սուրմալուն նրա ծննդավայրն էր, առավել հարազատ միջավայր: Նա հրաշալի ծանոթ էր գավառի բնակչությանն ու բնակավայրին: Մինչ 1920 թ. հայ- թուրքական պատերազմը, նա իր հայրենակից սուրմալեցիների համագործակցությամբ բազմաթիվ հաղթական կռիվներ էր մղել ընդդեմ թուրքական զորքերի եւ քուրդ հրոսակախմբերի:

Մի փոքրիկ, բայց խոսուն վկայություն Սեպուհի զորամասի ծառայողներից մեկի հուշագրությունից. «Իգդիրի շրջանում թուրքերն ու քրդերը գլուխ են բարձրացրել, նրանք նույնիսկ հարձակման են դիմել այսօր(թվագրված է 6-ը հոկտեմբերի-Հ. Գ.): Այնտեղ հիմա գործում է Դրոն, այն մարդը, որն անցյալ տարի 250 ձիավորներով Իգդիրից դուրս քշեց 5000-ից ավելի քուրդ խուժանին, որոնք ուզում էին կտրել մեր զորքերի ճամփան եւ տիրել նրանց:

Դրոն իր հայրենիքում է եւ այնտեղ յուրաքանչյուր քարն ու թուփը նրան քաջածանոթ է»[1]:

Սուրմալուի հայ բնակչությունը, քաջատեղյակ լինելով իր նշանավոր հայրենակցի հեղինակությանը, մարտական նշանակալի կենսագրությանն ու հրամանատարական կարողություններին, մեծագույն հարգանք եւ վստահություն է տածել նրա նկատմամբ: Բնական է, Դրոյի համար ավելի դյուրին կլիներ ու նախապատվելի մարտնչել իրեն առավել հարազատ միջավայրում:

3. Պիտի ընդգծել, որ Սուրմալուի ճակատում գործող զորամասերը նախկինում մեծամասամբ գործել էին նրա հրամանատարությամբ ու հիմնականում պահպանել էին իրենց մարտական կազմը եւ հետեւաբար նաեւ մարտական որակները: Սուրմալուի ճակատի զորամասերի հրամանատարներից շատերը, օրինակ գնդապետներ Լալայանցը, Խուդաբաշյանը, Մամաջանյանը, Կուռո Թարխանյանն ու խմբապետ Բաշգառնեցի Մարտիրոսը, անգամ մինչեւ Հայաստանի Հանրապետության հռչակումը, գրեթե մշտապես ծառայել էին Դրոյի գլխավորած զորամասերում: Կարելի է վստահորեն ասել, որ նա քաջատեղյակ էր ու հավատում էր Սուրմալուի ճակատում մարտնչող զորամասերի եւ նրանց հրամանատարների մարտական կարողություններին ու նվիրվածությանը:

4. Եթե Դրոյին, այնուամենայնիվ, տեղափոխեին Կարսի ուղղություն, ապա նա այդ դեպքում ստանձնելու էր ոչ թե Սարիղա-

[1] «Ազատ, անկախ եւ միացյալ Հայաստանի վերջին օրերը», Երեւան, 1993, էջ 89:

միշ-Կարս ռազմաճակատի հրամանատարությունը, այլ պիտի փոխարիներ գեներալ Հովսեփյանին կամ ավելի ստույգ՝ Կարսի բերդապետ, գեներալ Դանիել Բեկ- Փիրումյանին: Սարիղամիշ-Կարս ռազմաճակատի ընդհանուր զորահրամանատարը գեներալ Սիլիկյանն էր: Տեղափոխվելով Կարսի ուղղություն, Դրոն, բնականաբար, պիտի գործեր գեներալ Սիլիկյանի անմիջական հրամանատարությամբ: Սուրմալուի ուղղությունը ինքնուրույն գործող ռազմաճակատ էր, իսկ նրա հրամանատարը ուղղակիորեն ենթարկվում էր միայն Հայաստանի Հանրապետության բանակի սպարապետ գեներալ Նազարբեկյանին: Անկասկած Դրոյի համար առավել նախապատվելի էր օժտված լինել ինքնուրույն գործելու իրավունքով ու հնարավորությամբ, քան գործել որեւէ մեկի, թեկուզեւ գեներալ Սիլիկյանի հրամանատարությամբ: Բացի դրանից, նա քաջատեղյակ էր իր հայրենի Սուրմալուի տեղանքին:

Այսուհանդերձ, Դրոն չէր կարող հրաժարվել ստանձնելու Կարսի ռազմաճակատի հրամանատարությունը, եթե ՀՀ կառավարությունը, զինվորական նախարարությունն ու բանակի հրամանատարությունն այս հարցում կայացնեին համապատասխան որոշում:

Սուրմալուի ուղղությունը, անշուշտ, ուներ իր առանձնահատկությունն ու բացառիկ կարեւոր նշանակությունը:

1. Սուրմալուի ռազմաճակատը, ի տարբերություն Սարիղամիշ-Կարս ուղղության, որը հանձին հարյուրավոր հրանոթներով ու գնդացիրներով զինված Կարսի հզոր բերդաքաղաքի, ինչպես նաեւ այդ ուղղությունում գործող զրահագնացքի, չուներ պաշտպանության այդօրինակ հզոր միջոցներ եւ անգամ մարտական բավարար ուժեր:

Բայց Դրոն իր հարուստ մարտական կենսափորձով խորապես տիրապետում էր ռազմավարության մեջ գերիշխող այն ճշմարտությանը, որ որեւէ ճակատամարտում հաղթելու անհրաժեշտ նախադրյալը նախ եւ առաջ պայմանավորված է ոչ թե տեղանքի ու զինվածության առավելությամբ, այլ առավելապես մարտունակ, կարգապահ ու բանիմաց հրամանատարների եւ զինվորների անբասիր գործունեությամբ: Սուրմալուի ռազմաճակատի հրամանատարությունը ստանձնելիս՝ նա գլխավորապես առաջնորդվել է հենց այդ հանգամանքով, եւ ինչպես վկայում է Կարո Սասունին. «...կարողացած էր իր մօտ հաւաքել լաւագոյն հայ սպաներ, որոնց կազմած զօրամասերը հայկական բանակի ընտրանին էին: Զօրքերը եւ ժողովուրդը շատ կը սիրեին Դրօն, որուն շուրջը համախմբուած էին»[1]:

[1] «Հայրենիք» ամսագիր, 1926, ապրիլ, էջ 96:

3. Դրոն, չթերագնահատելով Սարիղամիշ-Կարս ուղղության կարեւորությունը, հանրապետության պաշտպանության գործում մեծապես գնահատել ու կարեւորել է նաեւ Սուրմալուի ռազմաճակատի նշանակությունը:

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ կառավարությունն ու հայկական բանակի գլխավոր հրամանատարությունը Կարսի ճակատն էր ընդունում որպես գլխավոր ուղղություն, այնուամենայնիվ, Սուրմալուն իր աշխարհագրական դիրքով եւ ռազմավարական նշանակությամբ պակաս կարեւորություն չէր ներկայացնում: Նախ, Սուրմալուի ռազմաճակատը ավելի մոտ է գտնվում հանրապետության մայրաքաղաք Երեւանին ու Հայաստանի ամենախիտ բնակեցված շրջանին՝ Արարատյան դաշտին: Եթե թուրքական զորքերին հաջողվեր խորտակել Սուրմալուի ռազմաճակատում մարտնչող զորամասերի դիմադրությունը, ապա նրանք կարող էին հաջողությամբ գետանցել Արաքսը եւ հաշված ժամերի ընթացքում հայտնվել Արարատյան դաշտում, ապա նաեւ մայրաքաղաք Երեւանում: Իսկ մարտական գործողությունների այդօրինակ զարգացումն անխուսափելիորեն հարցականի տակ կդներ ոչ միայն հանրապետության մայրաքաղաք Երեւանի, այլեւ ողջ Հայաստանի գոյությունը: Ահա այդ կործանարար հանգամանքն է նկատի ունեցել գեներալ Սիլիկյանը, շեշտելով. «...եթե Երեւանը անցնի թշնամու ձեռքը, ի՞նչ արժէք կունենայ Կարսի ճակատը»:

Դրոյի համոզմամբ՝ «Սուրմալուն կորցնել, նշանակում էր Հայաստանը կորցնել»[1]:

4. Սուրմալուի ռազմաճակատում, բացի կանոնավոր զորամասերից, գործում էին նաեւ 6000 զինյալներից բաղկացած քրդական հրոսակախմբերը, որոնք քանակական առումով ավելին էին քան Կարսի ուղղությունում գտնվող քուրդ զինյալները: Քուրդ հրոսակախմբերի շարքերը պարբերաբար համալրել են Բագրեւանդի, Աբաղայի, Դիադինի, Դոմպանդի եւ հարակից այլ շրջանների քրդերը: Սուրմալուի ճակատում կենտրոնացած քրդական հրոսակախմբերն անկասկած տեղյակ էին,որ իրենց շրջանների քրդերի զգալի մասին կոտորել էր հենց Դրոյի գլխավորած պատժիչ արշավախումբը, 1915 թ. ձեռնարկված նշանավոր «Աբաղայի արշավանք»-ի ժամանակ: Կարելի է պատկերացնել, թե ինչպիսի ահավոր սպանդ ու ավարառություն կիրականացնեին այդ հրոսակախմբերը Արարատյան դաշտում եւ մայրաքաղաքում, եթե նրանց հաջողվեր թուրքական զոր-

[1] Վրացեան Ս., Մորկածին Դրոն, էջ 131:

քերի համագործակցությամբ հաղթահարել հայկական զորքերի դիմադրությունն ու գետանցելով Արաքսը՝ խորանալ հանրապետության տարածքը:

Դրոն մարտադաշտում եւ այլ պայմաններում բազմիցս առնչվել էր քուրդ հրոսակներին ու գերազանց գիտեր հայության նկատմամբ նրանց տրամադրվածությունը: Նա, խորապես գիտակցելով ու արժեւորելով Սուրմալուի ռազմաճակատի դժվարությունները եւ նրա դերն ու նշանակությունը Հայաստանի Հանրապետության պաշտպանության եւ գոյատեւման գործում, հայկական բանակի հրամանատարությունից պահանջում է իրեն վստահել Սուրմալուի, այլ ոչ թե Կարսի ռազմաճակատի հրամանատարությունը:

Ի տարբերություն 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի, հայկական բանակի հրամանատարությունը 1920 թ. հայ- թուրքական պատերազմի ժամանակ անբացատրելի պատճառով չի կիրառում հետեւյալ մարտավարությունը: 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի ժամանակ Սուրմալուի ռազմաճակատի զորքերը, որոնց հրամանատարը դարձյալ Դրոն էր, թուրքական զորքերի գրոհները կասեցնելուց հետո կազմակերպում են գավառի հայ բնակչության տեղափոխությունը եւ այրելով Մարգարայի եւ Կարակալայի կամուրջները, գետանցում Արաքսն ու կանոնավոր զորաշարքերով տեղափոխվում Արարատյան դաշտ: Շնորհիվ այդ մարավարության, թուրքական մի ամբողջ դիվիզիա գամված մնում է տեղում՝ Արաքսի հակադիր ափին եւ զրկվում մարտական հիմնական գործողություններին մասնակցելու հնարավորությունից, իսկ հայկական զորամասերը, Սուրմալուի ճակատից տեղափոխվելով Արարատյան դաշտ, մեծ հաջողությամբ մասնակցում են Սարդարաբատի եւ Բաշ-Աբարանի ճակատամարտերին:

Այս անգամ հայկական բանակի հրամանատարությունը անհասկանալի պատճառով չի կիրառում այդ մարտավարությունը, որը հույժ կարեւոր նշանակություն ունեցավ Մայիսյան հերոսամարտերում հայության նվաճած հաղթանակներում: Անհասկանալի է թե ինչու՞, ի՞նչ պատճառաբանությամբ հայկական զորքերի վերին հրամանատարությունը Սուրմալուի ճակատից Արաքս գետի հակադիր ափը տեղափոխված զորամասեր չի տեղափոխել Կարսի ուղղություն:

Սուրմալուի ռազմաճակատում ավելի քան 10,000 զինյալներից բաղկացած թուրքական կանոնավոր զորամասերի ու քրդական հեծելախմբերի դեմ, որոնք կռիվների ընթացքում պարբերաբար համալրվում էին, դիմակայում էին ընդամենը «...9-րդ գունդը՝ 1200 հետեւակ, 25 ձիաւոր, 16 գնդացիր, հրամանատար գնդապետ Խուդաբաշեան, 8- րդ գունդը՝ 600 հետեւակ, 40 ձիաւոր, 8 գնդացիր, հրամանատար գնդապետ Տ. Բաղդասարեան, էքսպեդիցիոն զօրամասը՝ 5 վաշտ՝ 500 հետեւակ, 16 բեռնակիր եւ 8 գնդացիր. Կուռո Թարխանեանի այրուձին՝ 260 ձիաւոր, 6 գնդացիր:

Հոկտեմբերի 1-ին 8-րդ գունդը փոխադրուեց Կարսի ճակատ, որ Սեպուհի բրիգադի մի մասն էր. դրա փոխարէն նոր լրացումներ եղան, որով ամբողջ Սուրմալուի զօրամասի թիւը հասաւ 2000 հոգի», եւ 1000 կամաւոր աշխարհազորայիններ[1]:

Հետաքրքիր է ծանոթանալ Դրոյի գլխաւորած զորամասերի հրամանատարների բնութագրերին՝ Վարդգես Ահարոնյանի մեկնաբանությամբ, որը պատերազմի ժամանակ լինելով Սուրմալուի ճակատում, շատ լավ ծանոթ էր զորամասերի ու նրանց հրամանատարների մարտական ուղուն եւ որակներին:

«...Իրոք,-գրում է Վ. Ահարոնյանը,- այստեղ բոլոր աչքի ընկնող եւ պատասխանատու դիրքեր գրավող սպաները երիտասարդներ են: Ահա, ծանրախոհ, քրդական հաւասարակշռուած գնդապետ Խուդաբաշեանը, որ հազիւ 30 տարեկան է: Ահա նրան հասակակից անւրդով եւ առիւծասիրտ փոխգնդապետ Հալաբեանը: Մռայլ, սակաւախոս Թարխանեանը, որի արտաքինն իսկ ասես մի սեղմուած բռունցք լինի միշտ պատրաստ թշնամու գլխին իջնելու, ընդամենը 26-27 տարեկան, հաստատակամ ու վճռական Թարիւերդիեանը, 26 տարեկան, շրջահայց, զգոյշ, հոտառու Շահբազեանը, 26 տարեկան եւ վերջապէս կրակ ու բոց Մամաջանեանը միայն 24 տարեկան»[2]:

Վ. Ահարոնյանի բնութագրած արժանացած սպաները թեպետ շատ երտասարդ էին, բայց բազում կռիվների բովում կոփված եւ զինվորների ու վերին հրամանատարության շրջաններում անառարկելի հեղինակություն վայելող հրամանատարներ էին:

«Այդպէս են,- շարունակում է Վարդգես Ահարոնյանը,- այն զօրաբանակի սպաները, որոնցից ամէն մէկի թիկունքում իբրեւ անբաժան ստուեր կանգնած է ինքը՝ զօրաբանակի ընդհանուր հրամանատարը՝ Դրօն:

Ինչպէս իր ձագուկներին թռչել սովորեցնող արծիւ՝ տարածել է նա իր թեւերը բոլորի վրայ, ամէն մէկի համար ունի խրախուսանքի մի խօսք, քաջալերանք ու յորդոր:

[1] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 478:
[2] «Յառաջ», 1920, նոյեմբերի 17:

Եւ չկա որեւէ այն թէկուզ վախկոտ զինուորը կամ սպան, որ Դրոյի խօսքով բաց աչքերով, առանց տատանուելու դէպի մահը չի քայլի: Որը նրա ենթակայ ռազմիկներից կյանդգնի խնայել իր կյանքը այն ժամանակ, երբ ինքը ընդհանուր հրամանատարը չի խնայում իր կյանքը հասարակ զինուորի պէս»[1]:

Համաձայն Վահե Արծրունու տվյալների՝ Սուրմալուի ճակատում գործում էին հետեւյալ զորամասերը. «...9-րդ, 10-րդ եւ 11-րդ գունդերը, Երեւանի պահեստի ոստիկանութիւնը, սասունցի ձիաւորները, Սուրմալուի եւ Վասպուրականի կամաւորները, ինչպես նաեւ եզիտներու 200 կամաւորները՝ Ջեանգիր աղայի ղեկավարութեամբ, ընդամենը՝ մօտ 3000 չունէ...»[2]:

Սուրմալուի ճակատում գրեթե եռակի անգամ գերակշռող ուժեր ունեցող հակառակորդի դեմ մարտնչող հայ զինվորների քանակը երկու վկայութիւններում նույնն է: 3000 մարտունակ եւ իրենց հայրենիքին նվիրված քաջակորով մարտիկներն ու նրանց անպարտելի հրամանատարն ավելի քան բավական էին թշնամուն ջախջախելու համար:

Մինչեւ հոկտեմբեր ամիս տեղի ունեցած վճռական ճակատամարտերը՝ Դրոյին հարկ է լինում հաղթահարելու կարեւոր նշանակություն ունեցող մի քանի արգելքներ, որոնք զուտ ռազմավարական առումով անհրաժեշտ էին հետագայում հակառակորդի դեմ արդյունավետ գործողություններ ծավալելու համար:

1920 թ. ամռանը հայկական զորքերի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքը մահմեդական բնակչությունից մաքրելուց հետո, թուրքերը Հայաստանում կորցնելով իրենց արյունակից դաշնակիցներին եւ այդ բացը մասամբ լրացնելու նպատակով, ձեռնարկում են որոշակի պատասխան գործողություններ:

Թուրքական հրամանատարությունը՝ հիմնական մարտական գործողություններ ծավալելու նախօրեին, որպես ապագա արշավանքի հաջողության գրավական, ձգտում էր Հայաստանի մի շարք սահմանամերձ շրջանները, այդ թվում նաեւ Սուրմալուի թուրքաբնակ եւ քրդաբնակ բնակավայրերը, հատկապես Կողբի աղահանքերը, վերածել ռազմական ամրակուռ հենակետերի:

«Անոնց շարժումը,- նշում է Վ. Արծրունին,- Օլթիէն մինչեւ Կաղզուան, Կողբ եւ Շահթախթի եղաւ աստիճանական, սիստէմաթիք եւ ներդաշնակ: Գնդապետ Շաղուբաթեանի Կաղզուան թողնելէն հաղիւ շաբաթ մը վերջ, Օրկօֆի ուղղութեամբ նախ՝ քրդական եւ, ապա՝ թրքական կանոնաւոր շարժումներ նկատուեցան»[1]:

Քեմալականներին հաջողվում է զգալի մարտական ուժեր կենտրոնացնել Կողբի աղահանքերում: Եթե հայկական բանակի հրամանատարությունը ժամանակին չձեռնարկեր համապատասխան քայլեր, ապա Կողբի տարածքը, ապագա արշավանքի նախօրեին , փաստորեն, կարող էր դառնալ այն հարմարավետ հենակետը, որտեղից թուրքական զորքերը ամենակարճ ճանապարհով կարող էին հարձակում գործել Երեւանի վրա: Որպեսզի Սուրմալու գավառում եւ նրա հարակից շրջաններում պահպանվեր կայուն, անվտանգ իրավիճակ, անհրաժեշտ էր նախ եւ առաջ վերացնել Կողբի թուրքական հենակետն ու թույլ չտալ, որպեսզի հակառակորդն առավելագույնս ամրապնդվեր այդ տարածքում:

Դրոն, ստանձնելով Սուրմալուի ուղղությունում տեղաբաշխված զորքերի հրամանատարությունը, պիտի վնասազերծեր Կողբի թուրքական հենակետերը: Դրվատելով Դրոյի կողմից հանրապետության սահմանամերձ տարածքը պաշտպանող զորքերի հրամանատարությունը ընդունելու իրողությունը, Վ. Արծրունին գրում է. «Ես նրան տեսայ Կողբի ճակատի վրայ, ուր իր անակնկալ երեւումը, կիսամերկ ու կիսաքաղց մեր զօրքի մէջ, առաջ բերաւ պաշտամունքի տանող խանդաւառութիւն: Ես նրան տեսայ իր հայրենիքի յարկի տակ, շրջապատուած բարձրագոյն կրթութիւն ստացած եւ ռազմական փառք վաստակած սպաներով, որոնք ո՛չ միայն սիրում էին նրան, որպէս մարդու, այլեւ արտանց, այո՛, անվերապահորեն արժէք էին տալիս նրա ռազմական կարողութիւններին»[2]:

ՀՀ զինված ուժերի հրամանատարությունից ստանալով համապատասխան առաջադրանք՝ Սուրմալուի ռազմաճակատի հրամանատարությունը դեռեւս նոր-նոր ստանձնած Դրոն վճռում է նախահարձակ լինել եւ ջախջախել Կողբի աղահանքերում կենտրոնացած թուրքական զորքերին ու նրանց սատարող քրդական զինախմբերին: Մշակված հարձակողական գործողության կենսագործման համար նրա հրամանատարության ներքո տվյալ ժամանակահատվածում եղել են հետեւյալ մարտական ուժերը. «...Ա. Զախ թեւէն՝ գնդ. Մամաջանեան 450 զօրքով, 2 լեռնային թնդանօթով, 4 գնդացիրով եւ 30 ձիաւոր հետախոյզներով, Բ. կեդրոնէն՝ գնդ. Բէգ. Զուրաբեանը 450 զօրքով, 2 թնդանօթ, 4 գնդացիր, 30 ձիաւորներով Գ. աջ

[1] Նույն տեղում:
[2] Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 198:

[1] Նույն տեղում, էջ 197:
[2] «Ալիք», բացառիկ, 1956, ապրիլ, էջ 194:

թեւէն՝ Սասունցի Մանուկն իր ձիաւոր զօրամասով, գնդապետ Փիրումեանը Սարդարաբատի գումարտակով, 2 թնդանօթ, 4 գնդացիր, ընդամենը 500 զօրքով: Այսպիսով, Կողբի վրայ շարժուող բանակը 1500 սուին ունէր»[1]:

Սեպտեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը Սուրմալուի ճակատում տեղաբաշխված մարտական ուժերը Դրոյի հրամանատարությամբ, առանց որեւէ առանձնահատուկ նախապատրաստության հարձակվում են Կողբի աղահանքերում դիրքավորված հակառակորդի վրա: Քանի որ հայկական զորքերը մինչ այդ այնքան էլ չէին դրսեւորել հարձակումներ ձեռնարկելու տրամադրվածություն, ուստի հակառակորդը անակնկալի է մատնվում եւ չի կարողանում լուրջ դիմադրություն ցույց տալ: Հայկական զորամասերն անկասելի հարվածներով ջախջախում են Կողբի աղահանքերում դիրքավորված թուրքական զորքերին ու քրդական զինախմբերին եւ դուրս շպրտում Հայաստանի Հանրապետության սահմաններից:

Կողբի աղահանքերի գրավումը Դրոյի հրամանատարությամբ իրականացրած առաջին հարձակողական գործողությունն էր Սուրմալուի ռազմաճակատում, որն ավարտվում է հայկական զորքերի փայլուն հաղթանակով: Ընդսմին, նա, խելամտորեն հաշվի առնելով կամավոր- աշխարհազորայինների ոչ այնքան մարտունակ կարգավիճակը, հակառակորդի դիրքերի վրա գրոհները ձեռնարկել է միայն կանոնավոր զորամասերի ուժերով:

Արժանվույնս գնահատելով այդ ճակատամարտում Դրոյի կենսագործած խելամիտ ու արդյունավետ մարտավարությունը՝ Վ. Արծրունին նշում է. «...Դրո թոյլ չտուաւ, որ կամաւորները մասնակցէին կռիւներուն, ուր զանոնք գործածեց իբրեւ պահեստի ուժեր, թիկունքը պահողներ: Այս քայլը գեղեցիկ հակադրութիւն մըն է Կարսի ճակատի դրութեան հետ, ուր կամաւորներն ու կանոնաւորները միշտ քով- քովի մնացին՝ տալով այն ցաւալի արդիւնքը, որը շատերը կը վերագրեն այդ իսկ ձախորդ քաղաքականութեանը»[2]:

Այս հաղթական գործողությունից հետո Սուրմալուի ուղղությունում ժամանակավորապես հաստատվում է կայուն իրավիճակ, որն էլ ՀՀ զինված ուժերի հրամանատարությանը հնարավորություն է ընձեռում ի հաշիվ Սուրմալուի ռազմաճակատի թուլացման՝ գնդապետ Տ. Բաղդասարյանի գլխավորած 8-րդ գունդը տեղափոխել Կարսի ուղղություն: Իհարկե, մի ամբողջ գնդի տեղափոխությունը շոշափելի կորուստ էր, մանավանդ այն պահին, երբ ռազմաճակատում հիմնական եւ առավել ծանր մարտական գործողությունները դեռեւս նոր էին ծավալվելու:

8-րդ գունդը Կարսի ուղղություն տեղափոխելուց հետո, ինչպես որ սպասվում էր, Սուրմալուի ռազմաճակատում ստեղծվում է բավականին անախորժ իրավիճակ: Դրոն, ռազմաճակատում առաջացած ճեղքվածքը փակելու նպատակով, հարկադրված, Տ. Բաղդասարյանի 8-րդ գնդի տարածքի պաշտպանությունը հանձնարարում է գնդապետ Խուդաբաշյանի գնդին, որն այդ ժամանակ զբաղեցնում էր Կողբի պաշտպանական բնագիծը:

«Նոր գրաւուած դիրքերը,- գրում է Վ. Արծրունին,- կը պահուէին հետեւեալ կերպով. աջ եւ հիւսիսային թեւը՝ սասունցի ձիաւորները Թաքալթուի բարձունքները, կեդրոն՝ մէկ վաշտ 9-րդ գնդէն՝ Ագարակ եւ Գամիշլու գիւղերուն մէջ, ձախ եւ հարաւցիները՝ 2 վաշտ նոյն գնդէն՝ Փիրսախի բարձունքները: Այս ճակատը, որը կը հաշուէր 25-30 վերստ, կը պահէր գլխապետ Արամ Պատումեան, իր տրամադրութեան տակ ունենալով 225 սուին, 3 գնդացիր եւ 2 լեռնային թնդանօթ»[1]:

Ակնհայտ է, որ նշված ուժերով չափազանց դժվար կլիներ հուսալիորեն պաշտպանել նոր դիրքերը: Տ. Բաղդասարյանի 8-րդ գնդի բացակայությունը կարող էր խիստ բացասաբար անդրադառնալ Սուրմալուի ռազմաճակատում ծավալվող իրադարձությունների հետագա ընթացքի վրա: Բայց ուրիշ ելք չկար:

«Երեւանից մեկնելուց առաջ,- գրում է Ս. Վրացյանը,- ես տեսնուեցի Դրոյի հետ: Նա մռայլ գույներով նկարագրեց կացութիւնը եւ ցաւ հայտնեց, որ ես հեռանում եմ մայրաքաղաքից: Նա լաւատեղեակ էր Կարսի զօրամասերի հոգեբանական վիճակին, մանաւանդ հրամանատարական կազմի թուլութեան: Վրդովուած էր, որ զինուորական նախարարութիւնը հրամայել էր Սուրմալուի ճակատի լաւագոյն զօրաբաժինների մի մասը (խոսքը գնդապետ Տ. Բաղդասարյանի 8-րդ գնդին է վերաբերում - Հ.Գ.) փոխադրել Կարսի շրջան: Նա չէր ժխտում Կարսի ճակատը ուժեղացնելու անհրաժեշտութիւնը, բայց ոչ Սուրմալուի տկարացման գնով: Սուրմալուն կորցնել, նրա կարծիքով, նշանակում է Հայաստանը կորցնել»[2]:

Հարկավոր էր համակերպվել ստեղծված իրողության հետ ու ապավինելով եղած ուժերին՝ պաշտպանել ռազմաճակատը եւ թույլ չտալ թուրքական զորքերին գրավելու Սուրմալուն ու գետանցել Արաքսը:

---

[1] «Հայրենիք» ամսագիր, 1926, ապրիլ, էջ 94:
[2] Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ198:

[1] Նույն տեղում:
[2] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Բ, 1965, էջ 250:

Չնայած այն հանգամանքին, որ Սուրմալուի ուղղությամբ սեպտեմբեր ամսին արդեն գործում էին թուրքական մեծաքանակ զորքեր ու քրդական հեծելախմբեր, սակայն թուրք հրամանատարությունը, նպատակադրվելով ավելի արագացնել այդ տեղամասում մարտնչող հայկական զորամասերի ջախջախումը, հոկտեմբերի սկզբներին Իգդիրի հատվածում մարտադաշտ է նետում նաեւ Բայազետի զորախումբը, եւ նույն ամսի 4-ին առաջապահ ջոկատներով գրավում Արհաջ գյուղը: Միաժամանակ, օգտվելով ճակատի կողմի հատվածի մերկացումից, թուրքական զորքերը հոկտեմբերի 3-ի լույս 4-ի գիշերը վերսկսում են հարձակումը եւ չհանդիպելով լուրջ դիմադրության, գրավում Կողբը եւ զարգացնելով հարձակումը՝ փորձում են մոտենալ Արաքսի Կարակալա կամրջին: Ռազմաճակատի այդ հատվածում դիրքավորված գնդապետ Խուդաբաշյանի գունդը ստիպված էր պաշտպանել Դալիկ-Դաշից մինչեւ Արհաջ ընկած տարածքը:

Նկարագրելով այդ օրը Սուրմալուի ճակատում տեղի ունեցող ճակատամարտի մանրամասները՝ Վ. Արծրունին նշում է. «...թուրքերն աննկատ կերպով մօտեցան Թաքալթուի բարձունքներուն եւ կրակի տարափ մը տեղացին մեր ծայրագոյն աջ թեւի ուժերուն վրայ: Կէս ժամ չանցած յարձակում սկսաւ նաեւ Փիրսախի(ձախ) բարձունքներուն վրայ: Երկու թեւերուն հրամանատարներն ալ անմիջապես հեռախօսեցին տեղակալ Պուտումեանին... Վերջինս մէկ կողմէ՝ խստիւ հրահանգեց իր թեւերուն ամէն գնով պահել իրենց դիրքերը, եւ միւս կողմէ՝ մեծ դժարութեամբ կացութիւնը հաղորդեց գնդապետ Խուդաբաշեանին...»[1]:

Եթե Թաքալթուի եւ Փիրսախի բարձունքներում դիրքավորված մարտիկները չկարողանային անառիկ պահել իրենց վստահված պաշտպանական բնագծերը, ապա հարձակվող ուժերը կարող էին թեւանցել նրանց, ամբողջովին մեկուսացնել ռազմաճակատի Կողբի հատվածը թիկունքից եւ զարգացնելով հարձակումը՝ առաջանալ դեպի Կարակալայի կամուրջը: Իսկ դա նշանակում էր, որ կարող էր շրջապատման մեջ հայտնվել գնդապետ Խուդաբաշյանի գունդը:

Տեղակալ Պուտումյանն ու գնդապետ Խուդաբաշյանը, մեծ ջանքեր գործադրելով, փորձում են իրենց հրամանատարությամբ մարտնչող սակավաթիվ ուժերով ու անսպասելի հակահարվածներով կասեցնել թշնամու հարձակումը եւ թույլ չտալ նրան մոտենալու Կարակալայի կամրջին: Թեպետ Տեղակալ Պուտումյանն ու գնդապետ Խուդաբաշյանը եւ նրանց հրամանատարությամբ մարտնչող մարտիկները մեծ ջանքեր են գործադրում, բայց ուժերի խիստ սահմանափակ լինելու պատճառով չեն կարողանում կասեցնել հակառակորդի հարձակումը: Թուրքերի առաջխաղացումը շատ վտանգավոր էր: Եթե նրանց հաջողվեր հաղթահարել հայ մարտիկների դիմադրությունը, ապա կարող էին գրավել Կարակալայի կամուրջն ու հայտնվել Արարատյան դաշտում, իսկ դա չպետք էր որեւէ կերպ թույլ տալ:

Ճակատամարտը ղեկավարող գնդապետ Խուդաբաշյանը, սթափ գնահատելով մարտադաշտում ստեղծված իրավիճակն ու հաշվի առնելով Կարակալայի կամուրջի ռազմավարական կարեւորությունը, մեկնում է դեպի Կարակալայի կամուրջը եւ թշնամու գրոհները դիմակայելու այլ ելք չտեսնելով «...գնդապետ խնդրեց, որ Դրօ եւս աճապարէր նոյն տեղը, խորը համոզուած, որ շուտով տեղի պիտի ունենային ճակատագրական պայքարներ, որոնք տուեալ պայմաններուն մէջ մեզ համար աննպաստ հետեւանքներ պիտի ունենային, եթէ Դրօյի ներկայութիւնը զգալի չըլլար հոն»[1]:

Գնդապետ Խուդաբաշյանը ճիշտ էր գնահատել կացությունը: Այդ ճակատագրական պահին Կարակալայի կամրջի մոտ Դրոյի ներկայությունն ավելի քան անհրաժեշտ էր:

Ճակատագրական պահ էր, մարտադաշտում ստեղծված ծանրագույն կացությունը հրամայաբար թելադրում էր գործել արագ, կշռադատված, ուժերի գերագույն լարումով ու վճռական:

Դրոն անհապաղ ուղեւորվում է մարտադաշտի ամենավտանգված եւ կարեւորագույն՝ Կարակալայի կամրջի տեղամասը: Թշնամուն պարտության մատնելու համար նախ եւ առաջ հարկավոր էր հուսալիորեն ապահովել Կարակալայի կամրջի պաշտպանությունը եւ դրանով իսկ խափանել Արարատյան դաշտ ներխուժելու թուրքական զորքերի փորձերը:

Քանի որ մշտապես կապի մեջ էր գտնվում գնդապետ Խուդաբաշյանի հետ եւ քաջատեղյակ էր մարտադաշտում տիրող կացությանը, անհապաղ կայացնում է ճակատամարտը շարունակելու հետեւյալ վճիռը. «...Դրօն գնդապետ Խուդաբաշեանի սպայակոյտը հաստատեց Քեալակարխ գիւղը, գնդապետ Բէկ- Զօհրաբեանին

[1] Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 199:

[1] Նույն տեղում, էջ 201:

յանձնարարեց կամուրջին պաշտպանությունը՝ երկու ափերը տեղավորելով»[1]:

Մարտադաշտում նրա անմիջական ներկայությունն ու ձեռնարկած քայլերը ճիշտ ժամանակին էին:Հուսալիորեն ապահովելով Կարակալայի կամրջի պաշտպանությունը՝ Դրոն ձեռնամուխ է լինում կազմակերպելու հայկական զորքերի հակահարձակումը: Գնդապետներ Խուդաբաշյանի եւ Բէկ- Զօհրաբեանի գլխավորած մարտիկների դիմադրությունն աներեր էր: Թուրքական զորքերի ձեռնարկած բոլոր գրոհները՝ խորտակելու հայ մարտիկների դիմադրությունն ու գետանցելու Արաքս գետը, անցնում են ապարդյուն:

Կարակալայի կամրջի պաշտպանության հուսալիության ապահովումը դեռեւս լիակատար հաղթանակ չէր: Ռազմաճակատի հրամանատարությունը, կանխատեսելով դեպքերի հետագա զարգացման հնարավորությունները, ճիշտ է գնահատել հետեւյալ հանգամանքը. եթե թուրք հրամանատարությունը լրացուցիչ ռազմական ուժերով կարողանար ամրապնդվել այդ հատվածում, որը միանգամայն սպասելի էր, ապա ռազմաճակատի այդ տեղամասում զորքերի քանակական ու դիրքային հաշվեկշիռը արմատապես կարող էր փոխվել, եւ Սուրմալուի պաշտպանների մարտնչելու ու հաղթելու հնարավորությունները կարող էին հասնել վատթարագույնի: Հարկավոր էր հակառակորդին թույլ չտալ իր զորքերը կենտրոնացնելու եւ նախաձեռնությունը իր ձեռքը վերցնելու հնարավորություն: Դրոն, խորամտորեն գնահատելով տիրող կացությունը, առանց վրանելու հրամայում է գրավել Արհաջ գյուղը: Հայ զինվորների գրոհն անկասելի էր: Սուրմալուի պաշտպանները, զարգացնելով հարձակումը, հուժկու հարվածով հետ են շպրտում թշնամուն նաեւ Սուրմալու, Պիրլու եւ մյուս բնակավայրերից եւ ստիպում հակառակորդին նահանջել: Թուրքական պարտված զորքերը հետ են շպրտվում մինչեւ Մասիսի ստորոտը:

Նույն օրը հայկական զորքերը սրընթաց հարձակումով գրավում են նաեւ Պիրլ եւ Խոզբալ բնակավայրերը, սակայն հակառակորդի՝ մարտադաշտ հասած նոր զորախմբերի դիմադրությունն ու գիշերային խավարը խոչընդոտում են զարգացնելու ձեռք բերած հաջողությունը: Այդ օրվա մարտերի վերաբերյալ հայկական զորաբանակի շտաբը ստանում է հետեւյալ հեռագիրը. «Հոկտեմբերի 4-ի կեսօրվան,-նշվում է ռազմաճակատից առաքված ամփոփագրերից մեկում, - հակառակորդին հաջողվում է գրավել Պիրլ գյուղը եւ Խուլբ բնակավայրը: Մեր զորամասերը հետ են քաշվել մինչեւ Կարակալայի կամուրջը: Մոտավորապես ժամը 15-ին Իգդիրի կողմից հասցված հակահարվածով մեզ հաջողվում է գրավել Պիրլ գյուղը, բայց Կամիշլու գյուղի մոտակայքում թուրքերի եւ քրդերի զգալի ուժերի (մոտ 1000 մարդ երկու գործող հրանոթներով) կուտակման եւ մութն ընկնելու հետեւանքով մեր հարձակումը կանգ է առել:

Իգդիրի շրջանում հոկտեմբերի 4-ի երեկոյան Խալֆալ եւ Խոշքաքար գյուղերը գրաված քրդերի հետ ունեցել ենք փոխհրաձգություն: Հոկտեմբերի 5-ի առավոտյան մեր հետախույզները գրավել են նշված գյուղերը եւ Արհաջ գյուղը[1]:

Սուրմալուի ռազմաճակատում հոկտեմբերի 4-ին եւ 5-ին տեղի ունեցած կռիվները լուսաբանող մեկ այլ մեկնաբանությունում նույնպես արձանագրելով հայկական զորքերի հաղթանակը՝ հեղինակը նշում է. «Թշնամին, տեսնելով հայ զօրքերու ուժեղ յարձակողականը, թոյլ դիմադրութիւն մը ցոյց տուաւ եւ քաշուեցաւ Մասիսի լանջերը: Այս կռիւներու ժամանակ օգնութիւն էր հասած գնդ. Զհանգիր Բէգը (եզդի) իր 80 զինուորներով: Դրօյի կարգադրութեամբ հայ զօրքը իր նախկին դիրքերը կը վերադառնար ու հոն կ՚ամրանար»[2]:

Սեպտեմբերյան հաղթական կռիվներից ճիշտ մեկ տարի առաջ, երբ Դրոն մի փոքրաթիվ ջոկատով գտնվում էր Իգդիրում, թուրք-քրդական 3000- անոց հրոսակախմբերը, իջնելով Բարդողյան լեռներից, ներխուժում են Իգդիր եւ հանկարծակիի բերում քաղաքը պաշտպանող պահակազորին:Իգդիրում Դրոյի մղած այդ կռիվը կարծես հրաշքի է նմանվում: Նա, բնավ չերկնչելով թշնամու բազմապատիկ գերակշռող ուժերից, Կուռո Թարխանյանի ընկերակցությամբ ընդամենը 160 զինվորներով այնպիսի հուժկու հարված է հասցնում թուրք-քրդական հրոսակախմբերին, որ նրանք գլխիկոր լքում են մարտադաշտը՝ թողնելով հարյուրավոր սպանվածներ ու վիրավորներ[3]:

Այդ հաղթական կռվից մեկ տարի անց հայկական մարտական ուժերը, նրա հրամանատարությամբ նվաճելով եւս մի կարեւոր հաղթանակ, խափանում են Հայաստանի տարածքը ներխուժելու նպատակով թշնամու ձեռնարկած հարձակումները:

Եզրափակելով այդ կռիվների նկարագրությունը, Վ. Արծրունին որպես գնահատականի խոսք, նշում է. «Տաճիկներն արդէն հասկա-

[1] Նույն տեղում:

[1] ՀՀ ԲԿԱ, թծ. 17/17, գ. 3, էջ 3:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1926, ապրիլ, էջ 95:
[3] Տե՛ս «Յառաջ», 1920, նոյեմբերի 17:

ցան, թէ Սուրմալուի ճակատն արդէն ունէր բաւական տարբեր մատաղ, քան այն, ինչ որ իրենք գտեր էին Կարսի ռազմաբեմին վրայ: Անկախ վերջնական յաղթանակէն յետոյ յարակրկնած իրենց թրքաւայել մեծխօսիկութենէն, անոնք միշտ ալ ակնածանքով վարուեցան դէպի հայկական զօրքը...»[1]:

Ռազմաճակատում ծավալվող մարտական գործողություններին զուգընթաց նշանակալի իրադարձություններ էին տեղի ունենում նաեւ հանրապետության քաղաքական կյանքում:

Հոկտեմբերի 11-ին Երեւան է ժամանում Լեգրանի գլխավորած Խորհրդային Ռուսաստանի պատվիրակությունը եւ Հայաստանի կառավարությանը ներկայացնում հետեւյալ վերջնագիրը.

1. Հրաժարուել Սեւրի դաշնագրից:

2. Թոյլ տալ խորհրդային զորքերին իրենց ռազմամթերքով անցնիլ Հայաստանի երկաթուղիներով միանալու համար Մուսթաֆա Քեմալի զօրքերին՝ դաշնակիցներու դէմ կռուելու համար:

3. Հայաստանի եւ հարեւանների միջեւ գոյութիւն ունեցող սահմանային վէճերի լուծումը յանձնել Խորհրդային Ռուսաստանի իրաւասութեանը եւ մի շարք երկրորդական առաջարկներ[2]:

Լեգրանի պատվիրակությանը Հայաստանի Հանրապետության կառավարությանը պատասխանի համար տրվում է 48 ժամ: Նույն օրը հրավիրվում է նախարարների խորհրդի արտակարգ նիստ, որին, բացի կառավարության անդամներից, մասնակցում էին Մոսկվայից վերադարձած հանրապետության պատվիրակության անդամներ Լեւոն Շանթը, Համբարձում Տերտերյանը, Լեւոն Զարիֆյանը, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության նախկին վարչապետ Հովհաննես Քաջազնունին:

Լեգրանի առաջարկած պայմաններն ընթերցելուց ու համակողմանիորեն քննարկելուց հետո խորհրդակցության մասնակիցները, գալով ընդհանուր համաձայնության, մշակում են իրենց միասնական տարբերակը եւ այն ներկայացնում Խորհրդային Ռուսաստանի պատվիրակությանը:

Հոկտեմբերի 13-ին սկսվում են բանակցությունները Խորհրդային Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Լեգրանի, նրա խորհրդականներ Սահակ Տեր-Գաբրիելյանի, Սիլինի եւ հայկական կողմի՝ Լ. Շանթի, Հ. Տերտերյանի, Լ. Զարիֆյանի միջեւ: Բանակցու-

[1] Վահե Արծրունի, Նշվ. աշխ., էջ 202:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1926, մայիս, էջ 6-7:

թյունները շարունակվում են մինչեւ հոկտեմբերի վերջերը եւ Կարսի անկման նախօրեին երկուստեք ստորագրում են համաձայնագիր, որի գլխավոր կետերն են.

1. Ռուսաստանը հրաժարվում է Հայաստանի օգտին ամբողջ Երեւանի նահանգից, Ղարսի նահանգից, Զանգեզուրից, Ղազախից եւ Լոռիից:

2. Տաճկական զորքերը դատարկում են ամբողջ Ռուսահայաստանը մինչեւ 1914 թ. սահմանը:

3. 1914 թ. սահմանագծից մինչեւ Տրապիզոն, Էրզրում, Մուշ գիծէն քաշւում են տաճկական զորքերը եւ թողնում է միայն ադմինիստրացիան, որից յետոյ Ռուսաստանի օժանդակությամբ ու աջակցությամբ սկսում են բանակցությունները Անգորայի եւ Հայաստանի միջեւ, սահմանների վերջնական մշակման խնդիրը լուծելու նպատակով:

4. Դրա փոխարէն Հայաստանը նրանց զիջում է տրանզիտ զէնքի, ռազմամթերքի, որից 300 առ հարիւրը թողնում է Հայաստանին, իսկ մնացածը անց է կացւում պարագրաֆ 3-ի մէջ յիշատակուած գծից արեւմուտք (նկատի ունի Թուրքիա-Հ.Գ.)...

5. Խորհրդային Ռուսաստանը պէտք է վճարէր Հայաստանին երկու եւ կէս միլիոն ոսկի ռուբլի, պէտք է բանար նաւթային ճանապարհ, տար երկրագործական գործիքներ, յանձնէր Մոսկուայում գտնուող էջմիածնական գրքերը, դիւրութիւններ տար Ռուսաստանի մի քանի կենտրոններում հաւաքուած հայ գրենական եւ գեղարուեստական երկերը Հայաստան փոխադրելու, արտօնէր եւ աջակցէր հայ գաղթականների վերադարձին եւ այլն»[1]:

Այս նախնական համաձայնագիրը ստորագրելուց հետո Մոսկվայի հետ կապվելու եւ նրա համաձայնությունը ստանալու նպատակով Լեգրանը մեկնում է Բաքու: Եթե Մոսկվան հավանություն տար այդ համաձայնագրի նախագծին, ապա Լեգրանը անհապաղ պետք է վերադառնար Երեւան, եւ Հայաստանի Հանրապետության եւ Խորհրդային Ռուսաստանի միջեւ կնքվեր «Խաղաղության եւ բարեկամության» համաձայնագիր: Սակայն ժամանակը միանշանակորեն ցույց տվեց, որ իզուր էին Խորհրդային Ռուսաստանի աջակցությամբ պատերազմը դադարեցնելու եւ Թուրքական զորքերին հարկադրելու մինչեւ 1914 թ. սահմանը նահանջելու Հայաստանի Հանրապետության կառավարության փայփայած հույսերը: Խորհրդային իշխանություններն,

[1] Նույն տեղում:

առաջնորդվելով իրենց որդեգրած վաղօրոք մշակված սկզբունքներով եւ քաղաքական նպատակներով ու շահերով, տվյալ ժամանակահատվածում որեւէ նպատակ չունեին անհապաղ կյանքի կոչելու համաձայնագիրը եւ օգնության ձեռք մեկնելու ծանր կացությունում հայտնված Հայաստանի Հանրապետությանը:

Այս հարցի լուծման կապակցությամբ «Հայկական սովետական հանրագիտարան»-ը տալիս է իրականությանը ոչ համահունչ, ճիշտ հակառակ մեկնաբանությունը.

«1920-ի սեպտեմբերին, երբ Թուրքիան պատերազմ սկսեց Հայաստանի դեմ, Լ.պ. (Լեգրանի պատվիրակություն) առաջարկեց իր միջնորդությունը պատերազմը դադարեցնելու համար, սակայն Հայաստանի դաշնակցական կառավարությունը հապաղեց ընդունել առաջարկությունը...

Հոկ. 28-ին Լ.պ-յանը հաջողվեց դաշնակցական կառավարության հետ կնքել նախնական պայմանագիր, որով Սովետական Ռուսաստանը ճանաչում է Հայաստանի անկախությունը, հրաժարվում է նրա նկատմամբ նախկինում ունեցած բոլոր իրավունքներից, խոստանում օգնել միացնելու հայկ. մարզերը, անվերադարձ տալ 2,5 մլն. ռ. ոսկով, ապահովել Թուրք բանակի ետ քաշվելը մինչեւ 1914-ի սահմանները: Սակայն Թուրք. բանակի առաջխաղացումը խանգարեց պայմանագրի վավերացմանը եւ այն ուժի մեջ չմտավ»[1]:

Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Լեգրանի պատվիրակության միջեւ նախնական պայմանագիրը, ինչպես արդեն նշվել է, իրոք, կնքվել է, բայց թե ինչո՞ւ այն Մոսկվայի կողմից չվավերացվեց, բոլորովին այլ հարց է: Որպեսզի առավել հավաստի ու պարզորոշ լինի, թե ինչու Մոսկվայի կողմից չվավերացվեց նախնական պայմանագիրը, վկայակոչենք այդ հարցին անմիջականորեն վերաբերող երկու պերճախոս փաստաթղթեր.

1. Նոյեմբերի 4-ին Բաքվում «Հայաստանի իրավիճակի մասին» օրակարգով տեղի է ունենում Խորհրդային Ռուսաստանի Կովկասյան Բյուրոյի (Կավ Բյուրո) եւ Ադրբեջանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի բյուրոյի համատեղ խորհրդակցություն, ուր. «Լսեցին. Լեգրանի որոշումը Հայաստանի իրավիճակի մասին: Որոշեցին.

Ա. Հայաստանի կողմից առաջադրված պայմանագրի մասին վերջնական որոշումը չընդունել՝ մինչեւ այդ հարցով բանակցությունները չընթանան ՌԿԿ ԿԿ-ի հետ, որի վարումը հանձնարարել ընկեր Ստալինին:

Բ. Միաժամանակ հայտնել Քաղբյուրոյի կարծիքը, որ համաձայնագրով նախատեսված Նախիջեւանն ու Զանգեզուրը Հայաստանին հանձնումը ձեռնտու չէ թե քաղաքական եւ թե ռազմավարական առումով...»[1]:

2. Առաջնորդվելով հենց այդ որոշմամբ՝ Ստալինը եւ Օրջոնիկիձեն, հաջորդ օրն եւեթ՝ նոյեմբերի 5-ին Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործոց կոմիսար Չիչերինին են ուղարկում հետեւյալ հեռագիրը.

«Ժամանել է Լեգրանը համաձայնագրի նախագծով, նրա կողմից Հայաստանի կառավարությանը ոչ մի վերջնագիր չի ներկայացվել: Համաձայնագրի նախագիծը նախատեսում է Նախիջեւանը եւ Զանգեզուրը հանձնել Հայաստանին, մենք ստանում ենք զենք եւ այլն Թուրքիա տեղափոխելու իրավունք, եթե Թուրքերը մեր ճնշման տակ նահանջեն մինչեւ 1914 թ. սահմանը: Նախագիծը չի կարելի շտապ հաստատել, այն կարիք ունի համակողմանի եւ էական քննարկման ու փոփոխման (այս հեռագրի պատճենն ուղարկվել է Լենինին -Հ.Գ.)»[2]:

Մինչ Հայաստանում սրտատրոփ սպասում էին Խորհրդային Ռուսաստանի պատասխանին, ռազմաճակատներում ռազմական գործողությունները շարունակվում էին, իսկ Կարսի ուղղությունում Թուրքական զորքերի ձեռք բերած նվաճումներն արդեն ակնառու էին: Հոկտեմբերի 14-ին Կարսի ռազմաճակատում հայկական զորքերի կրած անհաջողությունը թեպետ իր բացասական ազդեցությունն է թողնում նաեւ Սուրմալուի ռազմաճակատում ընթացող գործողությունների վրա, սակայն Դրոյի առաջնորդած մարտիկների ոգին ու վճռականությունն անսասան էին:

Պատերազմում վերջնական հաղթանակ նվաճելու համար Թուրք հրամանատարությունն անհրաժեշտաբար պիտի վճռական քայլեր ձեռնարկեր ու բեկում մտցներ նաեւ Սուրմալուի ուղղությունում, ուր դեռեւս միայն պարտություններ էր ճաշակում: Սուրմալուի ճակատում մարտնչող հայկական զորքերի դիմադրությունը խորտակելու համար Թուրք հրամանատարությունը համալրում եւ վերախմբավորում է ռազմաճակատի այդ հատվածում կենտրոնացած զորամասերը:

[1] Հայկական սովետական հանրագիտարան, հ. 4, էջ 512:

[1] Բանբեր Հայաստանի արխիվների, 1993, թիւ 1-2, էջ 314:
[2] Նույն տեղում, էջ 315:

Սուրմալուի ռազմաճակատը, համաձայն ռազմական ամփոփագրի, «... կազմում էր մի եռանկյունի, որի կատարը գտնվում էր Իգդիրում, երկու կողմերը կազմում էին Իգդիր-Մարգարա եւ Իգդիր-Կարակալա գծերը, իսկ հիմքը՝ Արաքս, Կարակալայի եւ Մարգարայի կամուրջները»[1]:

Հոկտեմբերի կեսերին զգալի ռազմական ուժեր կենտրոնացնելով Դաշբորունի եւ Դալիկ-Դաշ գյուղերի ուղղությամբ՝ թուրք հրամանատարությունը ծրագրում է կենտրոնացված, խոյահարիչ հարվածներով ճեղքել հայկական զորամասերի պաշտպանությունն ու գրավել Արաքսի Մարգարայի եւ Կարակալայի կամուրջները եւ դուրս գալ Երեւան-Իգդիր խճուղին, ապա խորանալ Արարատյան դաշտ եւ իհարկե առաջանալ դեպի ՀՀ մայրաքաղաք՝ Երեւան:

Մարտական գործողությունները հաջողությամբ զարգացնելու դեպքում թուրք հրամանատարությունը նպատակադրվում է կտրել Երեւան- Ալեքսանդրապոլ հաղորդակցության ուղիները եւ աքցանի մեջ վերցնել Սարիղամիշ- Կարս ռազմաճակատն ու բերդաքաղաքը: Վերոհիշյալ հանգամանքների առկայության շնորհիվ Սուրմալուի ռազմաճակատը ձեռք է բերում արտակարգ կարեւորագույն նշանակություն:

Հանրապետության ղեկավարությունն ու ժողովուրդը սրտատրոփ եւ մեծագույն հույսով ու հավատով ակնկալում էին Սուրմալուի ճակատում հայկական զորքերի նվաճած հաղթանակի ավետիսին: Իսկ ժողովուրդը եւ այս անգամ եւս ՀՀ կառավարությունը նույնպես, իր ակնկալիքների ու վստահության մեջ չէր սխալվում. այնտեղ իր քաջակորով մարտիկներով մարտնչում էր Դրոն:

«Իր անձնական քաջությամբ,- գրում է Ալ. Խատիսյանը,- Դրոն դարձած էր հայ զինուորի կուռքը եւ այդ պատճառով՝ ընդունակ էր հրաշքներ գործելու անոր հետ»[2]:

Այո՛, ժողովուրդը չէր սխալվում. Դրոն եւ նրա առաջնորդած մարտիկները գործելու էին հերթական հրաշքը:

Գլխավոր ռազմակայանից, նույնիսկ այդ ճակատագրական, բախտորոշ պահին, Սուրմալուի ռազմաճակատի զորամասերի մարտաշարքերը համալրելու համար չեն առաքվել որեւէ լրացուցիչ մարտական ուժեր: Հանրապետության կառավարությունն ու հայկական բանակի հրամանատարությունը ավելի քան վստահ էին, որ թեպետ զորքերի քանակական առումով իր սահմանափակ հնարավորությանը, Սուրմալուի ուղղությամբ դեպի Արարատյան դաշտ եւ

[1] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Բ, 1965, էջ 196:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1925, թիւ 9, էջ 106:

մայրաքաղաքի դարպասները ձգվող ուղիներն անառիկ են ու հուսալիորեն պաշտպանված:

Արարատյան դաշտի եւ մայրաքաղաքի բնակչությունը սիրահոժար օգնում եւ ոգեւորում էր մարտադաշտում մարտնչող իր զավակներին, որոնք արդեն նախորդ մարտերում դրսեւորած հերոսականությամբ իրավամբ վաստակել էին հայության սերն ու վստահությունը: Սուրմալուի ռազմաճակատի թիկունքը գործում էր անխափան: Այդ օրերին կարծես մայիսյան հերոսամարտերի ոգին էր վերստին արթնացել ռազմաճակատին սատարող Արարատյան դաշտի հայության շրջանում:

Հոկտեմբերի 24-ին Սուրմալուի ճակատում կենտրոնացած թուրքական զորքերի զորամասերն ու քրդական հրոսակախմբերը անհրաժեշտ վերախմբավորում եւ նախապատրաստական քայլեր կենսագործելուց հետո վերսկսում են մարտական գործողություններն ու մեծ ուժերով հարձակվում Մարգարայի ու Կարակալայի կամուրջների մերձակայքում պաշտպանական դիրքեր գրաված հայկական զորավաշտերի վրա: Արաքսի երկու կամուրջները չափազանց կարեւոր ռազմավարական նշանակություն ունեցող հանգույցներ էին: Փաստորեն Մարգարայի ու Կարակալայի կամուրջներն այն հիմնական հաղորդակցության միջոցներն էին, որոնք Սուրմալուի ամբողջ գավառը կապում էին Արարատյան աշխարհի հետ:

Կարելի է ասել, որ այդ երկու կամուրջները Հայաստանի Հանրապետության յուրօրինակ դարպասներն էին: Ահա թե ինչու թուրք հրամանատարությունը հայկական ողջ զորաբանակը օղակի մեջ վերցնելու ու ջախջախելու նպատակով ձգտում էր նախ եւ առաջ գրավել կամուրջները եւ անգամ ուշադրության չարժանացնելով զոհերն ու կորուստները, ամենակատաղի եւ հզոր հարվածներ տեղում էր հենց այդ հատվածներում պաշտպանվող զորամասերի վրա:

«...Հոկտեմբերի 23-ի լույս 24-ի գիշերը,- պատմում է Վ. Արծրունին,- ամենակատաղի յարձակում մը փորձեցաւ Գարակալայէն մինչեւ Դաշբօռուն: Պայքարը սուր էր: Թշնամին կը մտածէր ուժգին գրոհով մը հասնիլ Գարագալա եւ Մարգարա կամուրջները եւ, սպառնալով Երեւանի գոյութեանը, ստիպել Կարսի պարպումը: Այդ բանին մէջ թուրքերը սխալ հաշիւ էին ըրեր: Հին Սարդարաբատի յիշողութիւնները դեռ շա՜տ թարմ էին իրենց մայրենի հողը պաշտպանող հայ ռազմիկներու սրտի մէջ»[1]:

[1] Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 203:

Սուրմալուի ռազմաճակատի հրամանատարության համար չէր կարող գաղտնիք լինել թուրք հրամանատարության մարտավարությունը: Նախորդ կռիվների փորձն արդեն մատնանշում էր, որ այս անգամ եւս թուրք հրամանատարությունը առաջին հերթին գրոհներ կգործի հենց այդ կամուրջների ուղղությամբ: Հայկական կողմը, շատ լավ գնահատելով այդ իրողությունը, իր հերթին համապատասխան քայլեր է ձեռնարկում դիմագրավելու այդ ուղղությունից տեղացող հարձակումները:

«Երբ սկսուել են կռիւները այդ կամուրջի շուրջը, շտաբում շատերին հետաքրքրել է այն հարցը, թէ ո՞վ է պաշտպանում այդ կարեւոր կետը.

- Գնդապետ Լալաեանը (45 տարեկան) :

- Եթէ նա, կարելի է ապահով լինել: Եթէ թիւրքերն անգամ նրա միսը քրքրեն ատամներով, նա տեղից չի շարժուի...»[1]:

Դրոն, որպես կանոն, շատ լավ տիրապետել է իր հրամանատարությամբ մարտնչող յուրաքանչյուր զորամասի եւ հրամանատարի մարտական որակներին ու կարողություններին, որը նրան հնարավորություն է ընձեռել անհրաժեշտ պահին կատարել ուժերի ճիշտ եւ համապատասխան տեղաբաշխում: Կռիվների ժամանակ նրա տարերքը շարժումն էր, մարտադաշտի ամենաշիկացած կետերում հայտնվելն ու անձնական օրինակով մարտիկներին ոգեւորելն ու սխրանքի կոչելը: Այս կռիվների ժամանակ նա դարձյալ եղել է իր տարերքի մեջ: Կռիվների ողջ ընթացքում ռազմաճակատում զորամասի եւ հրամանատարի հետ անխափան, որը շատ կարեւոր է, գործել է կապը: Զորագնդերի հրամանատարներին Դրոյի կողմից տրվող հրամանը միակն էր. զոհվել, բայց պաշտպանել Արաքսի գետանցումները եւ ոչ մի պարագայում թույլ չտալ թշնամուն անցնելու գետն ու ներխուժելու Արարատյան դաշտ:

Ճակատամարտի ընթացքում կամուրջների ուղղությամբ թուրքական զորքերի ձեռնարկած մեկ գրոհը հաջողել է մյուսին: Ռազմաճակատի այդ տեղամասում կենտրոնացած գնդապետներ Լալայանի, Բեկ- Զուրաբյանի, Հալաբյանի եւ Բաշգառնեցի Մարտիրոսի եւ այլոց գլխավորած հայկական գրեթե քառապատիկ փոքրաթիվ ուժերի պաշտպանությունը ժայռի նման անսասան էր:

Ճակատամարտում Դրոն կիրառել է շատ հետաքրքիր, միանգամայն կշռադատված, իսկ հակառակորդի համար անսպասելի մարտավարություն: Եթե ճակատի մի հատվածում նրա գլխավորած մարտական ուժերը աննահանջ դիմադրությամբ պաշտպանում էին Արաքսի գետանցումները, ապա մեկ այլ հատվածում, նախահարձակ լինելով, գրոհներ էին ձեռնարկում թուրքական զորամասերի վրա: Այդ օրը իրենց հարձակողական գործողություններով հատկապես աչքի են ընկել գնդապետներ Խուդաբաշյանի եւ Մամաջանյանի գլխավորած զորագնդերը: Զսպելով գնդապետ Խուդաբաշյանի առաջնորդած զորագնդի հարձակմանը, թուրքերը թողնում են Քյուլիկի իրենց զբաղեցրած բնագծերը եւ շարժվելով դեպի Կարակալայի կամուրջը, ձգտում են միանալ այդ տեղամասում գտնվող իրենց զորքերին:

Ներկայացնելով ճակատամարտի այդ պահը՝ Վահե Արծրունին նշում է. «...Հոն եւս սխալուեցան: Մեր հրետանիին կրակը գետի երկու ափերէն եւ Քեալակարիսի առաջաւոր դիրքերու բարձունքներէն ստիպեց տաճկական կատաղած ալիքները՝ իրենք իրենց վրայ գալարուելով, ետ երթալու: Գնդապետ Խուդաբաշեան, հանգիստ չտալով թշնամիին, վերջինիս ստիպեց լքել նաեւ Քիթիկ(Գետիկ) եւ նահանջել դէպի Գամիշլուի եւ Սէօգիւթլիի բարձունքները: Աւելի դէպի ձախը՝ խմբապետ բաշգառնեցի Մարտիրոսի յաջող դիմադրութեամբ մը Խօշխաբարէն մինչեւ Եայջի երթալով, միացաւ գնդապետ Մամաջանեանի թեւին»[1]:

Անհաջողության մատնվելով ռազմաճակատի վերոհիշյալ հատվածներում թուրք հրամանատարությունը, կենտրոնացնելով առավել մեծաքանակ մարտական ուժեր, գրոհը զարգացնում է Դաշբուռունի եւ Դալիկ- Դաշի ուղղությամբ: Թուրքական զորամասերը քրդական հեծելախմբերի գործուն աջակցությամբ կարողանում են ուժգին հարձակումով գրավել Դաշբուռուն գյուղը, այնուհետեւ հարձակումը զարգացնել Իգդիր-Մարգարա խճուղու ուղղությամբ: Հաղթահարելով այդ հատվածում մարտնչող հայկական սակավաթիվ ուժերի դիմադրությունը՝ թուրքերը նույն օրը գրավում են Ղալջար-Թոխանլու, Կարակոյինլու գյուղերը եւ հասնում մինչեւ Դալիկ-Դաշ, որը մարտավարական առումով կարեւոր դիրք ուներ: Դալիկ-Դաշի գրավումը հակառակորդին մեծ հնարավորություն կընձեռեր հարձակումը զարգացնելու Մարգարայի կամրջի ու Իգդիրի ուղղությամբ եւ հաջողության դեպքում փակելու Սուրմալուի հայ բնակ-

[1] «Յառաջ», 1920, նոյեմբերի 17:

[1] Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 203:

չության ու զորքի նահանջի ուղիները,զրկել նրանց Արաքսը գետացնելու հնարավորությունից :

Ամբողջ օրը հակառակորդի ուժերի դեմ հերոսաբար մարտնչող զորախմբերը, այլևս անկարող լինելով դիմադրելու դեպի Արաքսի կամուրջները ձգտող թշնամու մեծաքանակ ուժերի գրոհներին, քայլ առ քայլ նահանջում են: Ռազմաճակատում շատ վտանգավոր կացություն է ստեղծվում: Եթե հայ մարտիկները չկարողանային կասեցնել թուրքերի եւ քրդական հրոսակախմբերի առաջխաղացումը, ապա նրանք կարող էին գրավել կամուրջներն ու ներխուժել Արարատյան դաշտ:

Ներկայացնելով հայ մարտիկների համար ստեղծված այդ ծանրագույն պահը՝ Մարտիրոսը նշում է. «Երբ տաճիկները անցնում էին մեր ոյժերի թիկունքը, Դրօն կարգադրել էր, որ առաջին գծից ոչ ոք չնահանջի եւ բոլորը մնան իրենց տեղերում»[1]:

Թեպետ Դրոյի հրամանատարությամբ մարտնչող զինվորները, որպես օրենք, նրա հրամաններն անառարկելիորեն կատարում էին, սակայն ռազմաճակատում ստեղծված տագնապալի իրավիճակը հրամայաբար թելադրում էր վճռական քայլեր ձեռնարկել ու հուսալիորեն պաշտպանել Արաքսի գետանցումները: Սթափ գնահատելով կացությունը՝ Դրոն կապվում է Երեւանի հետ եւ պահանջում, որ գնդապետ Կ. Թարխանյանը, որն այդ ժամանակ գտնվում էր Երեւանում, իր հրամանատարության տակ գտնվող ուժերով անհապաղ օգնության շտապեր Սուրմալուի պաշտպաններին: Ստանալով Դրոյի տագնապալի հրամանը՝ Կուռո Թարխանյանը անմիջապես իր հրամանատարության տակ գտնվող «...7 հատ խեղճ ու կրակ ինքնաշարժերով, 6 գնդացիրով սպառազինուած եւ 180 մարդով դուրս եկաւ Քանաքեռէն ժամը 4-ին...եւ հասաւ Մարգարա ժամը 6-ին»[2]:

Հասնելով մարտադաշտ՝ գնդապետ Կուռոն երկու բեռնատար ներ ուղարկում է Դաշբուռունի պաշտպաններին օգնության, իսկ ինքը շտապում է Իգդիր, ուր այդ պահին գտնվում էր Դրոն: Պարզվում է, որ Մարգարայից Իգդիր ձգվող մայրուղին ամբողջովին բռնված է թշնամու զինվորներով եւ առաջ գնալու հնարավորություն չկար: Տվյալ իրավիճակում այլընտրանք գոյություն չուներ: Այն, ինչ ձեռնարկում է Կուռոն, անտարակույս պահանջում է, որպեսզի զինվորականը օժտված լինի ընդգծված արիությամբ եւ վճռականությամբ: Ի՞նչ պետք է արվեր:

[1] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, նշվ. աշխ., էջ 470:
[2] Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 204:

«...Առանց երկար մտածելու՝ Կուռոն դասաւորում է զինուորներին ինքնաշարժերի վրայ, ինքը նստում է առաջին ինքնաշարժի վարիչի մօտ եւ չորս ինքնաշարժերը իրարից յիսուն քայլ հեռու, արագութեամբ քշել է տալիս խճուղիով, միաժամանակ, գնդացիրներից սաստիկ կրակ բանալով ճանապարհի երկու կողմով: Տալով զինուոր վիրաւոր եւ գնդացրային մասի պետ հերոս Մալաղկիին սպանուած՝ Կուռոն ճեղքում է թշնամու շղթան եւ հասնում օրհասական դիմադրութիւն ցոյց տուող Դալիգդաշին օգնութեան»[1]:

Հարկ է ընդգծել, որ բեռնատարներով թշնամու վրա գնդապետ Կուռոյի ձեռնարկած հարձակումն ու նրանց մարտաշարքերը ճեղքելու հաջողությունը արմատական բեկում են մտցնում այդ օրն ընթացող ճակատամարտում:

Գնդապետ Կուռո Թարխանյանի կենսագործած այդ խիզախ եւ վճռորոշ գրոհի իսկությունը վկայում է նաեւ բաշգառնեցի Մարտիրոս Աբրահամյանը[2]:

Վ. Արծրունին, նույնպես արժանվույնս գնահատելով գնդապետ Կուռոյի կիրառած մարտավարությունը, միաժամանակ գտնում է, որ գնդապետ Կուռոյի այդ վճռորոշ մարտավարությունը «...կարելի է աւելի շուտ վերագրել Կուռոյի հոգեբանական վիճակին, քան ռազմագիտական հեռատեսության: Լինելով մէկը Դրոյի հիացողներէն՝ նա այժմ աւելի շատ կը մտածէր իր սիրելի հրամանատարը փրկելու, քան թէ յաղթանակ շահելու մասին»[3]:

Ինչպիսի հանգամանքով էլ պայմանավորված լիներ գնդապետ Կուռոյի՝ հիրավի հիացմունքի արժանի մարտավարությունը՝ ճակատամարտում կտրուկ կերպով փոխվում է իրավիճակը: Գնդապետ Կուռո Թարխանյանը, իր ուժերին միացնելով Ջհանգիր աղայի եզդիների հեծելազորը, ջախջախում է Դալիկ-Դաշը պաշարած հակառակորդի ուժերը, ապա հաղթահարում մինչեւ Իգդիր դիրքավորված հակառակորդի դիմադրությունն ու բացում է Մարգարա-Իգդիր խճուղին եւ հաղթականորեն ներկայանում հրամանատար Դրոյին:

Մարտիրոսը, իր հուշերում համառոտ ներկայացնելով Սուրմալուի ճակատում ընթացող կռիվների մի քանի ուշագրավ դրվագներ, գրում է, որ գրոհներից մեկի ժամանակ թուրքերին քրդերի համագործակցությամբ հաջողվել է թափանցել նույնիսկ Իգդիր: Դատելով նրա ներկայացրած փաստերից, պարզվում է, որ Դրոյին հաջողվել է

[1] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 478-479:
[2] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, նշվ. աշխ., էջ 470:
[3] Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 204:

Իգդիրը թշնամու ուժերից մաքրել գնդապետ Կուռոյի նշանավոր ճեղքումն իրականացնելուց հետո միայն:

«Կուռոյի ուժերի գլուխն անցած,- գրում է Մարտիրոսը,- Դրօն դուրս է գալիս քաղաքից եւ վերադառնալով՝ յարձակւում է նրանց վրայ: Քրդերն ու տաճիկները մեծ թւով դիակներ թողնելով Իգդիրի բուլւարում ու փողոցներում, դիմում են փախուստի»[1]:

Կուռոյին հանձնարարելով Արաքսի գետանցումների պաշտպանությունը՝ Դրոն, համախմբելով ուժերը, վճռական հարձակում է ձեռնարկում բազմաթիվ ապարդյուն գրոհներից արդեն հոգնած ու հուսալքված հակառակորդի վրա: Թուրքական զորամասերն ու քրդական հրոսակախմբերը, կորցնելով զգալի քանակության սպանվածներ ու վիրավորներ, նահանջում են մինչեւ ելման դիրքերը:

Ընդհանրացնելով հոկտեմբերի 24-ի ճակատամարտի արդյունքները, կարելի է ասել, որ գերակշռող ուժերով ձեռնարկած հարձակումները թուրք հրամանատարությանը որեւէ շոշափելի արդյունք ու առավելություն չեն տվել, նրա կողմից կենսագործած բազում գրոհները ապարդյուն են անցնում: Դրոյի զինվորները հրաշալի քննություն են բռնում: Ինչպես նախորդ, այնպես էլ այդ օրն ընթացող լարված ու դժվարին կռիվներում նրանք ոչ մի անգամ տեղի չեն տվել թշնամու անընդմեջ կրկնվող հարձակումներին եւ չեն լքել իրենց դիրքերը:

«Ճակատամարտ» լրագրի թղթակիցը այդ կռիվների վերաբերյալ մայրաքաղաքից խմբագրություն է ուղարկում հետեւյալ հաղորդագրությունը.

«Թուրքերը յարձակում կը գործեն Իգդիրի վրայ, որ Երեւանէն 45 քիլոմեթր հեռու է: Այդ կռուին թնդանօթի ձայներն են, որ կը լսուին հիմա: 80 ժամէ ի վեր կատաղի եւ անընդհատ կռիւ կը մղուի այդ ճակատին վրայ գիշեր ու ցերեկ: Երկու կողմերն ալ կը կռուին կատաղօրէն: Գաղափար մը տալու համար ըսեմ, թէ այդ շրջաններուն մէջ գիւղեր եղան, որոնք ինն անգամ թշնամիին եւ մեր ձեռքն անցան յաջորդաբար: Մոտ 4 հազար թրքական կանոնաւոր զօրք եւ 10 հազար քիւրտ եւ թուրք խուժան կը մասնակցէին յարձակումին, իրենց դէմ ունենալով հայկական հերոս բանակը, որուն թիւը կը հասնի 4 հազարի...

Թրքական կորուստները շատ մեծ են եւ կը հասնին հազարի, մինչ մեր զօհերը կըլլան 50 հոգի...

[1] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, նշվ. աշխ., էջ 470:

Իգդիրի ճակատը կը պաշտպանէ Դրօն»[1]:

Հոկտեմբերի 24-ի մարտերը, կարելի է ասել, ծավալվող գործողությունների միայն սկիզբն էին: Մարտերի արդյունքը անակնկալ էր, եւ իհարկե, բացարձակապես չէր կարող բավարարել շուտափույթ հաղթանակի ակնկալիքներ ունեցող թուրք հրամանատարությանը:

Հոկտեմբերի 25-ը խաղաղ է անցնում, բայց միանգամայն պարզ ու հասկանալի էր, որ այդ խաղաղությունը խաբուսիկ էր: Հակառակորդին ըստ ամենայնի նախապատրաստվելու համար մի փոքր ժամանակ էր պետք, որպեսզի առավել մեծ ծավալով ու ուժգնությամբ վերսկսի հարձակումները: Հայկական կողմը նույնպես պատրաստվում է նոր գոտեմարտերի: Հակառակորդի հրամանատարությունը, վերախմբավորելով ու համալրելով մարտական ուժերը, հոկտեմբերի 26-ին դարձյալ դիմում է լայնածավալ հարձակման, այն էլ մի քանի ուղղությամբ:

Հոկտեմբերի 26-ի ճակատամարտը, որը զգալիորեն տարբերվում էր նախորդներից, Սուրմալուի ռազմաճակատում մղվող կռիվներից ամենավճռականն էր: Նախորդ կռիվներում իրենց կրած պարտություններից ու ծրագրերի փլուզումից հետո թուրք հրամանատարությունը որոշում է ձեռնարկել առավել ուժգին եւ մեծածավալ ընդգրկումներով մարտական գործողություններ:

Այդ օրը հակառակորդի ձեռնարկած հարձակողական գործողություններին մասնակցել են ճակատում կենտրոնացած բոլոր զորամասերը, բազմաթիվ քրդական հեծելախմբեր, մեծ քանակությամբ հրետանի եւ գնդացիրներ:Թուրք հրամանատարությունը, մեծաքանակ ուժեր կենտրոնացնելով ռազմաճակատի մի քանի հատվածներում, ծրագրում է հաջորդաբար գրավել գավառի կենտրոնը՝ Իգդիրը, նրան շրջափակող գյուղերը եւ պաշարման շղթայի մեջ վերցնել հայկական բանակի հիմնական խմբավորումն ու հրամանատարական կետը, որոնք գտնվում էին Իգդիրում: Զուգահեռաբար, թուրքական զորքերը ուժգին գրոհներ պիտի ձեռնարկեին Մարգարա եւ Կարակալա կամուրջների ուղղությամբ: Թուրք հրամանատարությունը, տեղյակ լինելով իրենց զորամասերին դիմակայող հայկական մարտական ուժերի սակավության իրողությանը, ձգտում է հզոր հարվածներ ձեռնարկել մի քանի ուղղություններում միաժամանակ, հույս ունենալով, որ հայկական փոքրաքանակ ուժերը ի զորու չէին լինի նույն հաջողությամբ պաշտպանել հարձակման ենթարկվող բոլոր հենակետերը:

[1] «Ճակատամարտ», 1920, դեկտեմբերի 2:

Մրագրած գործողություններն իրագործելու նպատակադրությամբ թուրքական կանոնավոր զորագնդերը քրդական հեծելախմբերի համագործակցությամբ անցնելով Զնդի լեռնանցքը, կենտրոնանում են Օրգով եւ Արհաջ գյուղերի մերձակայքում: Հակառակորդի ուժերի մի մասը՝ Բաշգառնեցի Մարտիրոսի վկայությամբ «...գիշերով անցան Օրգովից եւ Մեծ Մասսի փէշերով» դուրս եկան Իգդիրի թիկունքը՝ գրաւելով Մալաքլուն ու Դալիքդաշը, նպատակ ունենալով կտրել Մարգարայի Կամուրջը»[1]:

Այդ օրը հակառակորդի կողմից կիրառվել է նաեւ հետեւյալ մարտավարությունը: Իր զորքերի թվական գերակշռությամբ ոգեւորված թուրք հրամանատարությունը, հայկական զորքերի պաշտպանությունը արագորեն խորտակելու դիտավորությամբ, հոգեբանական գրոհ է ձեռնարկում հայ զինվորների վրա: Նվագախմբի եւ թմբուկների զարկերի ուղեկցությամբ թուրքական զորաջոկատները մարտաշարքերով եւ խրոխտ քայլերով մոտենում են հայ մարտիկների դիրքերին: Սակայն խզուր էր թուրքական հրամանատարության փորձը՝ հոգեբանական գրոհների սարսափազդու տեսարաններով ահաբեկել Սուրմալուի պաշտպաններին: Դրոյին եւ նրա զինվորներին անհնարին էր վախեցնել ու ահաբեկել այդօրինակ, թեկուզեւ հոգեբանական գրոհներով ու սարսափազդու գործողություններով:

Հոգեբանական գրոհներին հաջորդում է թնդանոթային մարտկոցների փոթորկալի կրակը, որի պաշտպանությամբ թուրքական զորամասերը եւ քրդական հեծելախմբերը նետվում են Սուրմալուի պաշտպանների հենակետերի վրա:

Նախորդ օրվա հաղթական կռիվները թեւավորել ու ոգեշնչել էին հայ զինվորներին ու հրամանատարներին:

Զնայած հայկական զորամասերում տիրող մարտնչելու տրամադրվածությանը, այնուամենայնիվ, շատ ծանր իրավիճակ է տիրել ռազմաճակատի ամբողջ տարածքում: Թուրք հրամանատարությունը, հաշվի չառնելով կորուստները, անընդհատ պահեստային նորանոր ուժեր նետելով մարտադաշտ, ձգտում է ամեն գնով ընկճել հայ զինվորների դիմադրությունը եւ մոտենալ Արաքսի գետանցումներին: Մի շարք բնակավայրեր մի քանի անգամ ձեռքից ձեռք են անցնում:

«Այս, - շարունակում է Վ. Ահարոնյանը, - վերջին կռիւների ընթացքում եղել են վայրկեաններ, երբ չորս կողմից անդադար յարձակումների ենթարկուած մեր զօրամասերից ոմանք ընկած են եղել չափազանց ծանր դրութեան մէջ: Կորցրած նահանջի ճամբան, որը

[1] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, Նշվ. աշխ., էջ 470:

գրաւուած է եղել թշնամու կողմից, ճակատից կատաղի յարձակումների ենթարկուած մեր զօրամասերից մէկի պետը հեռախոսով դիմում է Դրոյին (բարեբախտաբար ամբողջ կռիվների ընթացքում ճակատում հեռագրային եւ հեռախոսային կապը ոչ մի վայրկյան չի ընդհատվել - Հ.Գ.), խնդրելով հրահանգներ ստեղծուած ծանր կացութեան վերաբերմամբ:

- Ինչպէս էք հրամայում վարուել, հարցնում է զօրամասի պետը:

- Հրամայում եմ բոլորիդ մեռնել, ոչ մի քայլ յետ,- հրամայում է Դրօն:

- Լսում եմ, պ. հրամանատար, - լինում է զօրամասի հրամանատարի պատասխանը»[1]:

Դրոյի հրամանը անառարկելիորեն պիտի կատարվեր: Նրա հատու պատասխանից կրկնակի անգամ զգաստացած հրամանատարը վարպետորեն է կազմակերպում զորամասի պաշտպանությունը եւ մարտի մեջ մտցնելով տեղ հասած օգնական ուժերը՝ հուժկու հակահարվածով ջախջախում է թշնամու օղակող զորամասերն ու վերականգնում դրությունը: Կռիվների ողջ ընթացքում ռազմաճակատի հրամանատարը անընդհատ շարժման մեջ էր եւ ինչպես միշտ զինվորների կողքին՝ ամենաչիկացած կետերում:

«Կռուի ընթացքում,-գրում է Վ. Ահարոնյանը,-Դրօն ամէն տեղ է: Չի մնում ոչ մի դիրք,որ նա չայցելի, չի մնում ոչ մի զօրամաս, որի թիկունքում, նա գէթ մի քանի րոպէով չերեւայ: Մէկին խրախուսել, միւսին քաջալերել, երկրորդի սխալն ուղղել կամ նոր հրահանգներ տալ ստեղծուած կացութեան հանդէպ, ահա թէ ինչ է անում նա կռուի ընթացքում: Նրան ենթակայ զօրամասերը միշտ զգում են նրա անմիջական ներկայութիւնը: Մի հանգամանք, որ չի կարող չանդրադառնալ նրա զօրաբանակի բարձր ռազմական տրամադրութեան վրայ»[2]:

Թեպետ Սուրմալուի մարտական ուժերի նկատմամբ ունեցած գրեթե եռապատիկ գերակշռությանը, հակառակորդի ձեռնարկած գրոհները անհաջողության են մատնվում ռազմաճակատի բոլոր հատվածներում: Գրոհներից մեկի ժամանակ թշնամուն հաջողվում է գրավել Խանֆանլուն, բայց այդ հաջողությունը խիստ կարճատեւ էր: Այդ տեղամասում մարտնչող մարտիկները գնդապետ Մամաջանյանի գլխավորությամբ անցնում են հարձակման եւ խորտակելով հակառակորդի դիմադրությունը՝ հետ են վերցնում Խանֆանլուն:

[1] «Յառաջ», 1920, նոյեմբերի 17:
[2] Նույն տեղում:

Նույն իրավիճակն էր տիրում նաեւ պաշտպանության այն հատվածներում, որտեղ հայ մարտիկները գործում էին գնդապետներ Խուդաբաշյանի եւ Թարվերդյանի գլխավորությամբ:

Թուրք հրամանատարությունը զուգահեռաբար գրոհներ է ձեռնարկում նաեւ Իգդիրի ուղղությամբ: Կենտրոնացնելով զգալի քանակության մարտական ուժեր՝ թուրքերն ու քրդական հեծելախմբերը հարձակվում են Քիթիկի ու Քյուլիկի պաշտպանական տեղամասերում դիրքավորված հայկական զորամասերի վրա: Հայ մարտիկները, տեղի տալով հակառակորդի ուժեղ ճնշմանը, նահանջում են Իգդիրի ուղղությամբ: Սակայն այդ հաջողությունը նույնպես վաղաժամ էր:

«...Պահեստի ոստիկաններու պետ Մարտիրոս, ետեւէն հասնելով, ո՛չ միայն արգելեց մերիններուն նահանջը, այլեւ Զարուխչիէն մինչեւ Քիւլիկ երեք անգամ տալէ եւ առնելէ յետոյ պահեց նոր նախկին դիրքերը...»[1]:

Չնայած այն հանգամանքին, որ մարտերը ծավալվում էին ռազմաճակատի գրեթե բոլոր հատվածներում , այնուամենայնիվ թուրք հրամանատարության հարվածի գլխավոր ուղղությունը եղել ու մնում էին Արաքսի երկու՝ Մարգարա եւ Կարակալայի կամուրջները:

Մարգարայի կամրջի տեղամասի պաշտպանությունը՝ Դրոյի հանձնարարությամբ, իրականացրել են գնդապետներ Թարվերդյանի եւ Հալաբյանի գլխավորած զորագնդերը, որոնք հրաշալիորեն կատարել են հրամանատարի առաջադրանքը: Որպեսզի հաջողվեր մոտենալ Մարգարայի կամրջին, նախ եւ առաջ անհրաժեշտ էր գրավել Դաշքոռունն ու Դալիկ-Դաշը: Գնդապետներ Թարվերդյանի եւ Հալաբյանի գլխավորած զորագնդերը, որպեսզի հակառակորդին անջրպետեին Մարգարայի կամրջից, դիրքեր են գրավում Դաշքոռունն ու Դալիկ-Դաշ գյուղերի մերձակայքում եւ մեծ հաջողությամբ հետ մղում դեպի գետանցումները ձգտող թշնամու հարձակումները:

Գնահատելով այդ օրն ընթացող ճակատամարտում հայ մարտիկների դրսեւորած մարտական որակները՝ Մարտիրոսը նշում է. «Այդ օրերին Սուրմալուն պաշտպանող բոլոր զօրախմբերը կուռում էին հիանալի կերպով»[2]:

Եթե Մարգարայի կամրջի ուղղությամբ թուրքերի ձեռնարկած բոլոր գրոհները, հայ մարտիկների անկոտրում պաշտպանության հետեւանքով, ապարդյուն էին անցնում, ապա Կարակալայի հատվածում մարտերը ծավալվում են բոլորովին այլ ուղղվածությամբ: Այդ ուղղությամբ առաջացող թուրքական զորքն ու քրդական հեծելախմբերը հաջողությամբ զարգացնում են հարձակումը, հասնում են մինչեւ կամուրջը եւ հարձակվելով պաշտպանության այդ հատվածում դիրքավորված հայ մարտիկների վրա, գրավում են կամուրջն ու գետանցում Արաքսը: Ռազմաճակատում ստեղծվում է չափազանց վտանգավոր եւ տագնապալի դրություն: Եթե թշնամու տնօրինությանը թողնվեր եւ անհապաղ հետ չվերցվեր կամուրջը, ապա այդ իրավիճակը անխուսափելիորեն խուճապ կառաջացներ զորքերի շարքերում: Իսկ դա աներկբա նշանակում էր, որ հայկական զորքերն ու բնակչությունը լիովին կկտրվեին Արարատյան դաշտից, եւ նրանց վրա անխուսափելիորեն ծառանալու էր շրջափակման ու ոչնչացման սպառնալիքը: Այդ բախտորոշ եւ, թվում է, անելանելի իրավիճակում իր խիզախ ու վճռական քայլն է կատարում ռազմաճակատում կատարվող գործողություններին ուշի ուշով հետեւող Դրոն:

Ներկայացնելով Սուրմալուի ճակատամարտում ստեղծված այդ ճակատագրական ու ճգնաժամային պահը՝ Վ. Արծրունին նշում է. «Գարագալա կամուրջին գրաւումն աւելի կարեւոր էր եւ, եթէ չվերագրաւուէր՝ անկարելի պիտի ըլլար Արաքսի աջ ափը մնալ: Դրօն հասաւ կայծակի արագութեամբ, միաժամանակ հրամայելով Կուռոյին ու Մարտիրոսին աճապարել իր մօտ՝ Գէչարլու գիւղը[1]»:

Հասնելով մարտադաշտ, Դրոն անմիջապես Գեչարլու գյուղում գումարում է զինվորական խորհրդակցություն, ուր ստեղծված կացությունը փոքր-ինչ քննարկելուց ու գնահատելուց հետո, որոշվում է անհապաղ դիմել հարձակման եւ վերագրավել կորցրած դիրքերը: Շատ կարեւոր էր, որպեսզի կորցրած դիքերն ու մասնավորապես Կարակալայի կամուրջը մեր զորքերի կողմից վերգրավվեին հնարավորինս արագ, քանի դեռ թշնամու ձեռք բերած հաջողության լուրը չէր հասել ռազմաճակատի մյուս զորամասերին, գավառի բնակչությանը եւ Երեւանին:

Գնդապետ Բեկ-Զոհրաբյանի փոխարեն Կարակալայի պաշտպանական հատվածում մարտնչող զորամասի հրամանատարությունը վստահելով գնդապետ Կուռո Թարխանյանին, Դրոն նրան հանձնարարում է Ջաֆարաբատ-Քյալակարխ - Կարակալա ուղղությամբ անհապաղ անցնել հարձակման:

---

[1] Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 206:
[2] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, նշվ. աշխ., էջ 470:

[1] Վահե Արծրունի , նշվ. աշխ., էջ 206-207:

«Դրոյի յանձնարարութիւնը,-գրում է Վ. Արծրունին,-անմիջապէս մագնիսացուց զօրքն ու սպայութիւնը, եւ ամէնքը հավասարապէս փորձեցին իրենց գերագոյնը»[1]:

Հայ մարտիկները փայլուն կերպով են կատարում ռազմաճակատի հրամանատարի հանձնարարությունը: Սրընթաց հարձակումով ջախջախելով Կարակալայի հատվածում հաստատված թուրք-քրդական զորախմբերին՝ հայկական մարտական ուժերն ամբողջովին վերագրավում են կորցրած տարածքներն ու ամենակարեւորը՝ Կարակալայի կամուրջը: Թուրք հրամանատարությունը, չհամակերպվելով կորցրածով, կենտրոնացնում է լրացուցիչ զինական ուժեր եւ լույսը բացվելուն պես դիմում հարձակման:

«Առաւօտ կանուխ,-շարունակում է Վ. Արծրունին,- տեղի ունեցաւ 5 ժամ տեւող կատաղի կռիւ մը՝ վերջիվերջոյ յաղթանակը մնալով հայկական զօրքին: Դիրքերու եւ, յատկապէս, կամուրջի քարուքանդումին շնորհիւ, նոր դիրքերը շատ անապահով էին: Այդ պատճառով գնդապետ Կուռօ թշնամին երեք վերստ ետ քշելէ յետոյ կամուրջի մօտերը գետն ականներով եւ շարժական ցանցերով ծածկեց ու երկու ափերուն վրայ հաստատեց զօրաւոր պահակախումբ»[2]:

Ճակատամարտի մեկ այլ հատվածում թուրքերը գրավում են Իգդիրից ընդամենը 3-4 կմ հեռավորության վրա գտնվող Սուլթանաբադ գյուղը: Սուլթանաբադ եւ Ալիգամար գյուղերի ուղղությամբ մարտնչող 10-րդ գունդը համառ պաշտպանությամբ կասեցնում է թուրքական զորամասի ու քրդական հեծելախմբերի առաջխաղացումը:

Նույն ժամանակահատվածում առավել ուժեղ եւ համառ կռիվներ տեղի են ունեցել գնդապետ Թարվերդյանի ճակատամասում, ուր հայ մարտիկները դարձյալ մեծագույն ջանքերի գործադրմամբ կարողացել են դիմագրավել թշնամու գրոհները[3]:

Ռազմաճակատի ամբողջ տարածքում հայկական զորախմբերն անպատմելի խիզախումներով կասեցնում են թշնամու՝ միմյանց հաջորդող հարձակումները: Թուրքական զորաբանակի հարձակողական նախկին ուժն ու հզորությունը ի չիք են դառնում՝ բախվելով հայ մարտիկների աներեր ու անխորտակ պաշտպանությանը: Սակայն սոսկ պաշտպանությունն ու հակառակորդի գրոհներին դիմակայելը Դրոյի տարերքն ու նախընտրելի մարտավարությունը

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, նշվ. աշխ., էջ 471:

չէր: Ռազմաճակատում ստեղծված կացությունը թելադրում էր գործել առավելագույնս արագ ու վճռական, մանավանդ որ Սուլթանաբադի հակառակ ուղղությամբ թուրքերին հաջողվում է գրավել Ալիգամար գյուղն ու ներխուժել Իգդիրի գերեզմանոցը: Իսկ քրդական հեծելախմբերն արագ տեղաշարժերով կարողանում են անցնել ռազմաճակատի թիկունքն ու հարձակվել Դալիկ-Դաշի վրա: Պաշտպանության այդ հենակետը պաշտպանող եզդի կամավորների զորախումբը, անկարող լինելով դիմակայել քրդական հեծելախմբերի հարձակումներին, թողնում է դիրքերն ու նահանջում: Տեղեկանալով ռազմաճակատի թիկունքում քրդական հեծելախմբերի հայտնվելու եւ նրանց վտանգավոր տեղաշարժերի մասին, Դրոն իգդիրցիների զորախմբով, որը կռիվների ողջ ընթացքում մշտապես գործել է նրա անմիջական հրամանատարությամբ, գնդապետ Կուռոյի զինակցությամբ անհապաղ ուղեւորվում է դեպի Դալիկ-Դաշի վտանգված հատվածը:

«Անմիջապես,-գրում է Մարտիրոսը,-վրայ է հասնում Դրօն՝ Կուռոյի ուժերով, յետ դարձնում եզդի կամաւորներին... իրենց ղեկաւար Ջհանգիր Բէկի հետ եւ նրանց հետ գրոհում են քրդերի վրայ ու մի լաւ ջարդ տալով, փախցնում են նրանց»[1]:

Ռազմաճակատի՝ հարձակման ենթարկված բոլոր հենակետերում թշնամու գրոհները չեզոքացնելուց եւ թիկունքն անցած քրդական հեծելախմբերի սպառնալիքը վնասազերծելուց հետո արդեն հասունանում է պաշտպանությունից հարձակման անցնելու պահը:

Քանի որ հակառակորդի ուժերը երեք անգամ հարձակվել էին գնդապետ Մամաջանյանի եւ նրա հարեւանությամբ մարտնչող Մարտիրոսի զորամասերի պաշտպանական դիրքերի վրա եւ յուրաքանչյուր անգամ պարտվելով ու մեծ զոհեր տալով նահանջել, Դրոն որոշում է զարգացնել այդ հենակետերում ձեռք բերած հաջողությունն ու հարձակումը սկսել հենց այդ տեղամասից: Նրա հրամանով գնդապետ Մամաջանյանը իր հրամանատարությամբ գործող գնդի 1-ին գումարտակի գլուխն անցած՝ անակնկալ ու սրընթաց գրոհով դուրս է շպրտում հակառակորդի ուժերը Սուլթանաբադի մոտակայքից եւ արագությամբ զարգացնելով հարձակումը՝ գրավում է Ալիգամար ու Ցաղջի գյուղերը: Ճակատամարտում ընդհանուր հարձակում ձեռնարկելու առաջին կայծը բռնկված էր, անհրաժեշտ էր այն արագորեն զարգացնել:

[1] Նույն տեղում:

Դրոն, կենտրոնացնելով մի քանի զորախմբեր, վճռական հարձակում է գործում անընդմեջ ապարդյուն գրոհներից թուլացած ու հուսալքված թուրքական զորքի ու նրանց աջակցող քրդական հրոսակախմբերի վրա: Անկասելի ու անձնուրաց գրոհներով խորտակելով հակառակորդի դիմադրությունը՝ հայ մարտիկները ջախջախում են թշնամու մարտական ուժերի մարտաշարքերը, եւ «... թշնամին անհամար դիակներ թողնելով՝ դիմեց փախուստի, մինչեւ Բարթողյան լեռների միւս կողմը»[1]:

Հաղթությունը կատարյալ էր, ճակատամարտի հաղթական ավարտին մեծ հավատով եւ սրտատրոփ սպասող մայրաքաղաքի ու Արարատյան դաշտի բնակչությունը ցնծության մեջ էր: Սուրմալուի ուղղությունից մայրաքաղաքի ու Արարատյան դաշտի վրա ծառացած մահասարսուռ ուժերը խորտակվում են՝ բախվելով հայ զինվորների ու նրանց առաջնորդող զորահրամանատարների անկոտրում կամքին ու խիզախությանը:

Միանգամայն իրավացի է Կարո Սասունին, նշելով. «Երեւանյան բանակը յաղթական էր: Այն ոչ միայն մայրաքաղաքն իր շրջաններով վտանգէ ազատած էր, այլ իր փայլուն հաջողութիւններով այդ ճակատի վրայ յաղթական էր»[2]:

Որպես վկայություն Սուրմալուի ռազմաճակատում հայկական զորքերի նվաճած հաղթանակի, վկայակոչենք արդեն հիշատակված Սեպուհի զորամասի շտաբի ծառայողներից մեկի հուշերի հետեւյալ տողերը. «Ամսի 26-ին Իգդիրի ճակատում մեր զորասյունը Դրոյի ղեկավարությամբ ետ է գրավել այն բոլոր գյուղերը, որոնք խլված էին թշնամու կողմից: Թուրքերը այստեղ կատարյալ պարտություն են կրել»[3]:

Ճակատամարտի հաղթանակը հավաստող եւս մի վկայություն. «Տաճիկների յամառ յարձակումները, նշվում է Հայաստանի Հանրապետության վերջին անցքերի լուսաբանմանը նվիրված վավերագրերից մեկում,- չորս օր շարունակ անյաջողութիւն էին ունեցել Իգդիրի ճակատում, ուր Դրոյի հրամանատարութեամբ մեր զօրամասերը ցոյց էին տուել հերոսական դիմացկանութիւն եւ յամառութիւն»[4]:

Պիտի փաստել, որ Սուրմալուի ճակատամարտի հաղթանակի կարեւորագույն նախադրյալներից էր նաեւ Դրոյի գլխավորած

[1] «Հայրենիք» ամսագիր, 1956, հոկտեմբեր, էջ 23:
[2] Նույն տեղում:
[3] «Ազատ, անկախ եւ միացյալ Հայաստանի վերջին օրերը», էջ, 91:
[4] ՀՀ ԲԿԱ, թթ. 121, գ. 97, «Հայաստանի վերջին անցքերը», էջ 2-3:

զորամասերի մարտական պատրաստվածությունն ու բարոյա-հոգեբանական կայուն վիճակը:

Ինչպես արդեն նշվել է, նա կտրականապես դեմ էր ու իրավացիորեն գտնում էր, որ բանակի կանոնավոր զորամասերը չպետք է մասնակցեին Հայաստանի տարածքը մահմեդական բնակավայրերից «մաքրման» գործողություններին: Նա իր հարուստ մարտական փորձառությամբ շատ լավ գիտեր, որ թուրքական բնակավայրերի գրավումը անխուսափելիորեն նշանակում էր տրվել թալանի ու ավարառության, որը հավասարազոր էր բարոյալքության եւ անկազմակերպվածության: Դրոն թույլ չի տվել, որ իր հրամանատարությամբ գործող զորամասերը մասնակցեին «մաքրման» գործողություններին:

Իսկ դա նշանակում է, որ Սուրմալուի ռազմաճակատի զորամասերը չմասնակցելով «մաքրման» գործողություններին, չէին տրվել թալանի ու ավարառության ու պահպանել էին իրենց մարտունակությունն եւ բարոյահոգեբանական կայուն վիճակը:

Դրոն մեկ անգամ եւս ապացուցեց, իզուր չէ, որ վաստակել է անպարտելի զորավար անունը:

Բազմիցս հիշատակված Վահե Արծրունին, որը իր հեղինակած «Հայ- Տաճկական պատերազմը» արժեքավոր գրքում իր քննադատական վերաբերմունքն ու անհամաձայնությունն է արտահայտում Դրոյի Արցախյան գործունեությանը, նկարագրելով Սուրմալուի ռազմաճակատում Դրոյի հրամանատարությամբ մարտնչող զորամասերի մղած կռիվների մանրամասներն ու վերլուծելով պատերազմում հայկական զորքերի պարտության պատճառները, տալիս է հետեւյալ ուշագրավ եզրահանգումն ու գնահատականը. «Հայկական զօրքի պարտութեան պատճառները շատ էին եւ պարզ, եթէ մենք քաջութիւն ունենանք տեսնելու եւ, մանաւանդ՝ խոստովանելու զանոնք: Այս տողերը փակելէ առաջ անհրաժեշտ կը համարիմ ըսել, թէ այս բոլորը չեմ տարածիր Սուրմալուի հրամանատար Դրոյի վրայ, որուհետեւ ան, իրո՛ք, իր անձնական հմայքով եւ մասնակցութեամբ՝ փրկեց նոյնքան վտանգաւոր ճակատ մը եւ, հաւանաբար, նաեւ այն, ինչ որ այժմ ունինք՝ փոքրիկ Հայաստանը»[1]:

Չնայած նրա անզուգական հրամանատարությամբ Սուրմալուի ռազմաճակատում ձեռք բերած փայլուն հաղթանակին, դժբախտաբար, Հայաստանի Հանրապետությունը արդեն պարտվել էր: Կարսի ռազմաճակատն, ի տարբերություն Սուրմալուի, ունենալով պաշտպանության հզոր միջոցներ, անգամ զրահագնացք ու մի քանի ինքնաթիռ, անկարող է լինում դույնզ-ինչ դիմադրել թուրքական զոր-

[1] Վահե Արծրունի , նշվ. աշխ., էջ 37:

քերի հարձակումները եւ առանց որեւէ դիմադրության հզոր բերդաքաղաքը հանձնում է հակառակորդին:

«Հոկտեմբերի 31-ին,-գրում է Ալ. Խատիսյանը,- ժամը երկուքի մօտ էր, երբ ես նկատեցի, որ Երեւան քաղաքի վրայ կը սլանա սաւառնակ մը: Անոր թռիչքի աղմուկը պարզ կը լսուէր քաղաքին մէջ: Սաւառնակը իջաւ գետին: Ոչ ոք չէր կրնար ենթադրել, թէ ան բերած է սարսափելի լուր մը- Հոկտեմբերի 30-ին, առաւօտեան Թուրքերը գրաւած էին Կարսը:Ժամը երեքին ես հրաւէր ստացայ երթալ կառաւարութեան ժողովի: Նիստը բանալով՝ նախագահը զեկուցեց ժողովին, որ լուր է ստացած Կարսի անկման մասին:

... Սաւառնակով եկած սպան կը յայտնէր, որ ինք անձամբ տեսած է , թէ ինչպէս կայարանին կողմէ քաղաք կը մտնէին Թուրք ասկեարները եւ թէ ինչպէս կը փախչէին քաղաքէն հայ զինուորները եւ ազգաբնակչութիւնը:

... միւս օրը, երբ Կարսի անկման ականատեսները հասան Երեւան, պարզուեցաւ, թէ Թուրքերը քաղաք էին մտել գրեթէ առանց գնդակ արձակելու»[1]:

Կարս բերդաքաղաքի՝ մարտունակութիւնից զուրկ եւ անկազմակերպ զինվորները, նաեւ հայ բոլշեւիկների քարոզչութիւնից մթագնած, իրենց «եղբայր կարմիրներին» արժանիորեն ու եղբայրաբար դիմավորելու համար, առանց դուլզն- ինչ դիմադրություն ցույց տալու, հոկտեմբերի 30-ին հզոր բերդաքաղաքը հանձնում են Թուրքերին: Հերոս գնդապետ Մազմանյանը հայ զինվորների բարոյալքված ու խաբված վիճակից շանթահար՝ ինքնասպանություն է գործում:

Ազգային գաղափարներից եւ արժանապատվությունից սնանկ հայրենազուրկ հայ բոլշեւիկները կատարեցին իրենց սեւ գործը: Զանցած մի քանի օր նույն բախտին է արժանանում նաեւ Ալեքսանդրապոլը: Եթե հայկական զորքերը շարունակեին նույն ոգով ու կազմակերպվածությամբ դրսեւորել իրենց, ապա որեւէ կասկած լինել չէր կարող, որ շատ շուտով Թուրքական զորքերը կներխուժեին Արարատյան դաշտ ու կհասնեին Երեւան:

Ալեքսանդրապոլի անկումից հետո հայկական զորքերը նահանջում են բերդաքաղաքից հյուսիս-արեւելք՝ Ջաջուռ եւ հարավարեւելք՝ Աղին կայարանի ուղղությամբ:

Կարս-Ալեքսանդրապոլ ռազմաճակատի կազմալուծման ու քայքայման, հայկական զորքերի բարոյալքման եւ չկռվելու տրամադրություններ սերմանելու գործում իր նշանակալի ավանդն ու ներդրումն է ունեցել Ալեքսանդրապոլում բույն դրած՝ նախկինում ընդհատակում, իսկ քաղաքը թշնամու կողմից զավթելուն պես բացահայտ գործող բոլշեւիկյան կոմիտեն, որն այդ օրերին իրեն հայտարարել էր Հայաստանի հեղափոխական կոմիտե[1]:

«Հայաստանի այդ յեղափոխական կոմիտէն,- կարդում ենք «Ալեքսանդրապոլի բանակցութիւնները» խորագիրը կրող վավերագրում,- Կարաբեկիր փաշայի կամակատարն էր, առաջարկում էր նրան թէ զէնք եւ թէ գործունէութիւն ի վնաս Հայաստանի: Ալեքսանդրապոլի յեղ. կոմիտէն էր, որ հաւաքեց 20-40 տարեկան բոլոր երիտասարդներին Կարաբեքիրի հրամանով, որոնց վագոններով տանում էին դէպի Կարս եւ Սարիղամիշ իբր ինչ-որ աշխատանքների համար: Այդ կոմիտէն էր, որ թռուցիկներ եւ պրոպագանդիստներ էր դրել հայ գիւղերը եւ զինուորների մէջ, որ չկռուեն Թուրքերի հետ, այլ ընդհակառակը ամէն կերպ նպաստեն նրանց զէնքի հաջողութեանը: Այդ կոմիտէն էր, որ «կուսակցական» կրքից կուրացած, Թրքական խժդժութիւններն ու ապիկարութիւնները հերքում էր եւ յայտարարում, որ այդ թալաններն ու ապիկարութիւնները կատարել են Սեպուհի խմբերը... »[2]:

Պահպանվել է Թուրքական զորքերի կողմից Ալեքսանդրապոլի գրավման կապակցությամբ Ստալինին հասցեագրած՝ Կովկասյան ռազմաճակատի ռազմահեղափոխական խորհրդի անդամ Ս. Օրջոնիկիձեի հեռագիրը, որը ուշագրավ տեղեկություններ է պարունակում հայ բոլշեւիկների ու քեմալականների փոխհարաբերությունների եւ Հայաստանի «իմպերիալիստական» նկրտումների մասին:

Այդ հեռագրով Ս. Օրջոնիկիձեն Ստալինին տեղեկացնում է, որ համաձայն Կասյանի, Բեկզադյանի, Նուրիջանյանի հաղորդածի, դաշնակները Թուրքերի հարձակման ժամանակ լքել են քաղաքը: Օգտվելով այդ հանգամանքից՝ քաղաքում գտնվող բոլշեւիկները բանտից ազատել են իրենց բանտարկված ընկերներին, կազմել են հեղկոմ եւ հանդես են եկել կոչով:

«Սեպուհի(դաշնակ) զորախումբը, - հայտնում է Ս. Օրջոնիկիձեն,- տեղեկանալով այդ մասին, հետ է վերադարձել եւ նորից գրավել Ալեքսանդրապոլը: Հեղկոմը, չունենալով մարտական ուժեր, կարմիր դրոշներով գնացել է դիմավորելու քեմալականներին...

Բանակ գրեթե գոյություն չունի: Դաշնակները խոստովանում են, որ բոլշեւիկ - քեմալական դաշինքի մասին մեր քարոզչությունը առաջ է բերել Քեմալի դեմ չկռվելու տրամադրություն...»[3]:

---

[1] Խատիսեան Ալ., նշվ. աշխ., էջ 278-279:

[1] Տե՛ս ՀՀ ԲԿԱ, թթ. 121, գ. 98, «Ալեքսանդրապոլի բանակցութիւնները», էջ 2:
[2] Նույն տեղում:
[3] «Հայաստանի Հանրապետ-ը 1918-1920թթ.», Երեւան, 2000, էջ 349:

Հայկական զորքերի պարտության գործում բոլշեւիկների քայքայիչ գործունեության ու վճռոշ ազդեցության փաստը շեշտում է նաեւ ՀՀ բանակի սպարապետ, գեներալ Թ. Նազարբեկյանը:

Սպարապետ Թ. Նազարբեկյանի գնահատմամբ՝ «Մենք մեծ սխալ գործեցինք, որ զորահավաք հայտարարեցինք ամբողջ Կովկասում եւ դրանով առիթ տվեցինք հայության ոխերիմ թշնամի հայ համայնավարներին իբր կամավորներ ներս սողոսկելու մեր բանակի մեջ ու այլասերելու, պարտության ոգի ներշնչելու նրան: Եթե մենք բավարարվեինք Հայաստանում մեր ունեցած գնդերով, ես համոզված եմ, որ մեր զորքերը մեծ դիմադրություն պիտի ցույց տային Կարաբեքիրի բանակին եւ պիտի կասեցնեին նրա առաջխաղացումը: Դժբախտաբար, հայ համայնավարները կերան մեր զինվորական ուժի արմատներն ու քայքայեցին, ջլատեցին, անզոր դարձրին նրա որեւէ դիմադրությունը...»[1]:

Հայ բոլշեւիկների «հերոսական արարքները» ներկայացնող մեջբերումները բոլորովին չպետք է ամրագրեն, որ տողերիս հեղինակը կիսում է այն տեսակետը, թե հայկական զորքերի պարտությունն ու առանց որեւէ դիմադրության Կարսի բերդաքաղաքը թշնամուն հանձնելը գլխավորապես պայմանավորված էր հայ բոլշեւիկների ազգադավ գործունեությամբ:

Շեշտելով ՀՀ բանակի պարտության պատճառները, գեներալ Նազարբեկյանն այդ գործում անարդարացիորեն անտեսելով հրամանատարության դերակատարությունը, առավելապես ընդգծում է զինվորների թուլությունը, բոլշեւիկների քարոզչությանն անվերապահորեն տրվելու ու հավատալու իրողությունը:

«Ի՞նչ կարող էիր ասել,-նշում է գեներալ Նազարբեկյանը,- ի՞նչպես կարող էիր հակաճառել, երբ մեր զինվորի գլուխը համայնավարները հաջողությամբ մտցրել էին այն միտքը, թե հյուսիսից գալիս է ամենազոր Ռուսաստանը, Լենինի եւ Տրոցկու բանակը...Ոչ ոք գաղափար անգամ չուներ, թե դա նախկին ցարական բանակը չէր, լավ հագնված, կանոնավոր մարզանք ստացած եւ կուշտ զինվորը, այլ ռուս ժողովրդի զավակների թափթփուք, ծարավ, ոտաբոբիկ ու ցնցոտիներով ծածկված բոլշեւիկ Ռուսաստանը...

Իսկ մյուս կողմից՝ եկողը «ընկեր» Քեմալը չէր, այլ արյունառուշտ եւ հայակեր թուրքը, որ գալիս էր թալանելու, առեւանգելու, հոշոտելու մեր ժողովուրդը, բռնաբարելու եւ լկելու մեր մատաղ սերունդը...»[2]:

[1] «Հայրենիք», ամսագիր, 1954, թիւ 7, էջ 28:
[2] Նույն տեղում:

Պարտությունը պայմանավորված էր մի շարք էական պատճառներով, որոնցից մեկը, անկասկած, հանրապետության տարածքում եւ բանակում հայ բոլշեւիկների ծավալած վնասակար ու քայքայիչ գործունեությունն է: Այս առումով հետաքրքիր եւ ծանրակշիռ փաստարկներ կան վերոհիշյալ թուրք սպայի տեղեկություններում: Համաձայն նրա վկայած փաստարկների, թուրքական կողմը հաղթանակին վստահ էր ու հավատացած՝ հիմք ունենալով հետեւյալ հանգամանքները. «... Ամիսներ առաջ վրացիներն Անգորա գացած լոյալութիւն էին յայտներ՝ խոստում ստանալով Արտահանի շրջանէն որոշ, հողամաս մը իրենց թողուլ:

... Մենք կանոնաւոր կապ ունէինք Հայաստանի թուրք, մալական եւ հայ կարմիրներու հետ: Դաշն էր կապուած մեր կառաւարութեան եւ Բագուի բոլշեւիկներին միջեւ, որով վերջինները կը խոստանային, ի պահանջել հարկին իրենց ուժերը փոխադրել Գանձակի շրջանը եւ թիկունքէն հարուածել հայկական զօրքը: Մեր հրամանատարութեան երրորդ հիմքն այն էր, որ ձեր զօրքը ո՛չ թէ չէր կրնար դիմանալ մեզ, այլ պիտի չկռուէր մեր դէմ: Հայաստանի հակահայկական մեր կոմիտէներու գաղտնի խոստումները մեծ գրաւական էին այս մասին»[1]:

Ըստ գեներալ Թ. Նազարբեկյանի, Հայաստանի պարտության գլխավոր պատճառը պայմանավորված չէր միայն համայնավարների ծավալած հակահայ քայքայիչ գործունեությամբ: Նրա գնահատմամբ՝ «Եւ, որ գլխավոր է, այս ահավոր պայքարի մեջ հայը բացարձակապես միայնակ էր եւ մեր դաշնակից պետությունները՝ Անգլիան եւ Ֆրանսիան մատը մատին անգամ չտվին, մեզ օգնելու համար...»[2]:

Հայկական զորքերի պարտության գործում գլխավորապես մեղադրելով բոլշեւիկներին ու ՀՀ դաշնակիցներ Անգլիային ու Ֆրանսիային, սպարապետ Թ. Նազարբեկյանը չի նշում այն գլխավոր պատճառը, որի թելադրանքով ՀՀ կառավարությունը նոր զորահավաք է հայտարարել ամբողջ Կովկասում: Իսկ գլխավոր պատճառը թուրքական բնակավայրերի «մաքրման» հետեւանքով թալանին ու ավառությանը տրված այդ գործողություններին մասնակցած զորամասերի զինվորներն էին, որոնք կորցրել էին մարտունակությունն ու այլեւս չէին ենթարկվել զինվորական կարգապահությանն ու իրենց հրամանատարներին:

[1] Վահե Արծրունի, նշվ.աշխ., էջ 291:
[2] «Հայրենիք», ամսագիր, 1954, թիւ 7, էջ 28:

Այս հարցում, ինչպես արդեն ասվել է, տարաձայնություններ կային Դրոյի ու ՀՀ զինվորական նախարարության ղեկավարության դավանած տեսակետների միջև: Իսկ ժամանակը միանշանակորեն ապացուցեց Դրոյի տեսակետի կենսունակությունը:

Սպարապետ Թ. Նազարբեկյանը՝ ՀՀ պարտության գործում մեղադրելով դաշնակիցներին, չի նշում Անգլիայի ու Ֆրանսիայի կողմից Հայաստանի բանակին հանձնած ահռելի ռազմական օգնությունը(ավելի քան50.000 թվակազմ ունեցող բանակին զինելու ու հանդերձավորելու համար անհրաժեշտ բոլոր պարագաներն ու միջոցները) : Հարց է ծագում. միթե՞ այդքան զենք ու զինամթերք հայկական բանակին տրամադրելուց հետո Անգլիան ու Ֆրանսիան զորք պիտի ուղարկեին Հայաստան՝ դիմագրավելու թուրքերի հարձակումն ու պաշտպանելու ՀՀ սահմանների անվտանգությունը:

Պիտի աներկբա ընդունել, որ Սարիղամիշ-Կարս-Ալեքսանդրապոլ ճակատում հայկական զորքերի պարտության գործում իրենց մեղքի մեծ բաժինն ունեին ՀՀ կառավարությունն ու բանակի հրամանատարությունը: Հայ-թուրքական պատերազմի հպանցիկ ուսումնասիրությունն անգամ մատնանշում է, որ ՀՀ կառավարությունն ու բանակի հրամանատարությունը չեն գտնվել պատշաճ բարձրության վրա եւ գործել են չափազանց թույլ: Անտարակույս, նաեւ նրանց թուլության ու անկազմակերպվածության հետեւանքով պիտի բացատրել հայկական զորքերի պարտությունը:

ՀՀ առաջին վարչապետ Հովհ. Քաջազնունու գնահատմամբ՝ «Պատերազմը վերջացավ մեր կատարյալ պարտությունով: Մեր բանակը, որ կուշտ էր, լաւ զինուած ու լաւ հագնուած, չկուեց. զորքերը շարունակ նահանջում էին կամ դիրքերը լքում, զենքերը թափում ու ցրւում՝ գիւղերը:

Բանակը բարոյալքուած էր ներքին կռիւների շրջանում, անմիտ աւերումների ու անպատիժ թալանների շնորհիւ: Բարոյալքուած էր ու յոգնած: Խմբային ու խմբապետական սիստեմը, որ մասնաւորապէս խրախուսւել էր Բիւրօ-կառաւարութեան կողմից, քանդել էր զինվորական կազմի ամբողջութիւնը, միութիւնը: Բանակի դաստիարակութիւնը, ռազմական ոգին, կուռ կազմակերպութիւնն ու կարգապահութիւնը - ուրեմն եւ ընդդիմադրական ոյժը- թուլացած էին ծայր աստիճանի ու դա անակնկալ էր կառավարութեան համար. կառավարութիւնը եւ ինքը զինուորական մինիստրը՝ չէին ճանաչում բանակը:

Դասալքության խնդիրը դժվարին ու խրթին խնդիր էր, և երբեմն դատելով փաստերից, տպավորություն է առաջանում, որ Առաջին Հանրապետությանը և նրա ղեկավարներին այդպես էլ

չհաջողվեց արմատապես լուծել այդ խնդիրը, ինչքան էլ որ Ներքին Գործերի և Զինվորական Նախարարությունները ջանքեր չգործադրեցին»[1]:

Կարելի է հաստատապես պնդել, որ ՀՀ բանակին վերագրված Հովհ. Քաջազնունու վերոհիշյալ գնահատականը հաստատում է այս հարցում Դրոյի դավանած տեսակետի ճշմարտացիությունը:

Ավելորդ չէ նշել, որ եթե հայկական զորքերը Կարսի ճակատում կռվեին այնպիսի համառությամբ ու հերոսականությամբ, ինչպես Սուրմալուի ճակատում, իսկ ճակատի հրամանատարությունը իրեն դրսեւորեր նույնպիսի վարպետությամբ ու հաստատակամությամբ, ինչպիսին ճակատամարտի ողջ ընթացքում դրսեւորեցին Դրոն ու նրա գլխավորած սպաները, ապա անտարակույս հայկական բանակը պարտություն չէր կրի, եւ Հայաստանի Հանրապետությունը չէր կանգնի կործանման եզրին:

Հայկական զորքերի արագ պարտության պատճառով, կարելի է ասել, ՀՀ կորցրեց իր կշիռն ու արժեքը: Հայաստանի դաշնակից տերությունները Հայաստանն այլեւս չէին դիտում որպես հուսալի հենարան այդ տարածաշրջանում: Իսկ եթե Հայաստանի Հանրապետությունը, այնուամենայնիվ, հաղթանակով դուրս գար պատերազմից, ապա չէր բացառվում, որ բոլորովին այլ կլիներ դաշնակիցների, այն է՝ Անտանտի տերությունների վերաբերմունքը:

Պիտի ընդունել, որ եթե Հայաստանի Հանրապետությանբանակը հաղթեր քեմալական զորքերին, սակայն նվաճվեր Խորհրդային Ռուսաստանի կողմից, ապա Հայաստանն այսօր անտարակույս կունենար անհամեմատ ավելի մեծ տարածք Խորհրդային Միության կազմում եւ միջազգայնին ասպարեզում ավելի ծանրակշիռ դիրք ու հեղինակություն:

Կարսի բերդաքաղաքի անփառունակ վախճանը կատարյալ անակնկալ էր Սուրմալուի ուղղությամբ մարտնչող զինվորների համար: Կարսի ռազմաճակատում ծավալվող աննպաստ մարտական գործողությունների թելադրանքով Սուրմալուի ռազմաճակատի հաղթական զորքերը հարկադրված թողնում են պաշտպանության իրենց բնագծերը եւ ապահովելով գավառի հայ բնակչության անվտանգ տեղափոխությունը Արարատյան դաշտ, այրում են կամուրջները ու գետանցում Արաքսը: Սուրմալուի ճակատամարտի հաղթա-

[1] Յովհ. Քաջազնունի, Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլ եւս, էջ 497:

կան զորամասերը այժմ արդեն պիտի պաշտպաններին Արաքսի գետանցումներն ու թույլ չտային թուրքական զորքերին ու քրդական հրոսակախմբերին ներխուժել Արարատյան դաշտ:

Անդրադառնալով Սուրմալուի ճակատը իրենց զորքերի կողմից պարպելու իրողությանը՝ Մարտիրոսը գրում է. «Տաճիկների բոլոր փորձերը գրաւելու Սուրմալուն եւ առաջանալու Երեւան՝ անցան ապարդիւն, մինչեւ որ Կարսի ճակատի զօրամասը տեղի տուաւ տաճիկների ուժերին: Այս ամոթալի դէպքից յետոյ Սուրմալուի զօրամասը ստիպուած եղաւ թողնել իր դիրքերը, այրել Մարգարայի եւ Կարակալայի կամուրջները եւ ճակատ ընդունել Արաքսի երկայնութեամբ մինչեւ Կարակալայի կամուրջը, այդտեղից էլ մինչեւ Ալագեազ կայարանը»[1]:

Կարսի, ապա նաեւ Ալեքսանդրապոլի անկման պատճառով Դրոյի զորագնդերի կողմից Սուրմալուի տարածքը հարկադրաբար պարպելու իրողությունը արձանագրում է նաեւ Կարո Սասունին:

«Մինչ այդ թեականը, - նշում է Կարո Սասունին, - Դրոյին յանձնուած ճակատը կը մնար ամուր եւ թուրքերի փորձած վերջին յարձակողականներն ալ կը ձախողէին առաջիններու պէս: Բայց Ալեքսանդրապոլի անկումը կը ստեղծէր նոր զինուորական կացութիւն մը, որու պատճառով Իգդիրի եւ շրջանի հայ ազգաբնակչութիւնը իր բոլոր ունեցուածքով եւ կանոնաւոր նահանջով մը կը փոխադրուէր Մարգարա կամուրջէն էջմիածին եւ Երեւանի շրջանները: Հայ զօրքերը կու գային ամրանալու Մարգարա գիւղի մէջ, այրելով համանուն կամուրջը»[2]:

Թողնելով Իգդիրը՝ Դրոն նույնպես տեղափոխվում է Արաքսի մյուս ափը եւ իր հրամանատարական կետը հաստատում Մարգարա գյուղում:Նրան այլեւս երբեք բախտ չէր վիճակվելու լինել իր հայրենի Իգդիրում:

Կարս-Ալեքսանդրապոլ ուղղությունում հանրապետության զորքերի կրած պարտությունների եւ ռազմաճակատում ստեղծված ծանրագույն կացության հարկադրանքով Հայաստանի կառավարությունը զինադադար կնքելու առաջարկությամբ դիմում է թուրքական զորքերի հրամանատարությանը:Նոյեմբերի 6-ին թուրք հրամանատարությունը, ի պատասխան Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկության, ներկայացնում է զինադադարի հետեւյալ պայմանները.

[1] «Հայրենիք» ամսագիր, 1934, թիւ 5, էջ 126:
[2] Նույն տեղում, 1926, թիւ 9, էջ 111:

«Հայաստանին կը պարտադրուէր յանձնել հազարներով ջորիներ, փամփուշտներ, թնդանօթի ռումբեր, հրացաններ, որոշ թիւով թնդանօթներ, գնդացիրներ եւ ռազմական նոր կէտերու գրաւումներ»[1]:

Չնայած ակնհայտորեն ծանր էին թուրք հրամանատարության ներկայացրած պայմանները, այնուամենայնիվ, ՀՀ կառավարությունը պատրաստակամություն է հայտնում ընդունել հակառակորդի առաջադրած պայմաններն ու գնալ բանակցությունների: Սակայն նույն օրերին ռազմաճակատում հայկական զորքերի դրսեւորած թուլության եւ անկազմակերպվածության պատճառով, իրենց զորքերի ձեռք բերած նոր նվաճումների թելադրանքով, փոխվում է թուրք հրամանատարության տրամադրվածությունը եւ նրանք հայկական կողմին պարտադրում են ավելի ծանր պայմաններ: Ստանալով թուրքական կողմի առաջադրած նոր պայմանները, հանրապետության կառավարությունը նոյեմբերի 9-ի՝ ժողովրդին ուղղված իր հերթական հաղորդագրությունում նշում է հետեւյալը. «...մեր երկրի շահը եւ խաղաղութեան պահանջը ժողովրդի մէջ հարկադրեցին մեզ ընդունել, մանաւանդ Անգօրայի կառավարութիւնը իր նոյեմբերի 2-ին գրած պաշտօնական դիմումով առաջարկում էր մեզ սկսել հաշտութեան բանակցութիւններ:

Այն ժամանակ, երբ նոյեմբերի 7-ի զինադադարի պայմաններն արդէն իրագործուած էին, եւ մենք պատրաստում էինք հաշտութեան պատուիրակութիւն ուղարկել, նոյն Անգօրայի կառավարութիւնը իր նոյեմբերի 8-ի հեռագրով յայտնում է, թէ ինքը փոխում է կնքուած զինադադարը...»[2]:

Թուրք հրամանատարության անհագուրդ պահանջներին մեծ լիցք էին հաղորդում ռազմաճակատում իրենց զորքերի ձեռք բերած դյուրին ու ակնառու հաղթանակները եւ հայկական բանակում տիրող զանգվածային դասալքումներն ու անկայուն իրավիճակը: Մարտադաշտում տիրող կացության փոփոխությանը զուգընթաց փոխվում էին նաեւ թուրքերի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությանը ներկայացվող պահանջները:

Նոյեմբերի 8-ին թուրք հրամանատարությունը հաշտություն կնքելու առաջարկով հայկական կողմին թելադրում է հետեւյալ առավել ծանր պայմանները. «... 24 ժամուայ ընթացքում հայկական զօրքերը պարտաւոր են նորից յետ քաշուել եւ այս անգամ բռնել Սուրմալու-Արաքս կայարան-Գրզրլ Զիարէթ- Արագած լերան լանջը- Տանագիրմազ Նօվօ-Միխայլովկա-Լօռիքէնդ-Շերմուտ-Եալանն-

[1] «Ճակատամարտ», 1920, դեկտեմբերի 2:
[2] ՀՀ ԲԿԱ, ֆ. Ս. Վ.(Սիմոն Վրացեան), թթ. 29, գ. 15:

դաշ գծից արեւելք: Այսինքն այժմ եւեթ զիջել Հայաստանի կէսից աւելին: Հայաստանի կառավարութիւնը պէտք է յանձնէ տաճիկներին Ալեքսանդրապոլում 2000 հրացան, 60 գնդացիր սարքով եւ գրաստներով, 12 թնդանօթ, 4000 ջորի, 1000 սնդուկ փամփուշտ, 6000 թնդանօթի ռումբ, 2 շոգեմեքենայ, 50 վագոն:

Զինադադարի կնքումից անմիջապէս յետոյ Սանահին-Ալեքսանդրապոլ յերկաթուղագծի վրայ պիտի դադարի ռազմամթերքի տեղափոխութիւնը եւ մի քանի ուրիշ պահանջներ»[1]:

Թուրքերի առաջադրած պահանջները չափազանց ծանր էին ու անընդունելի: Հայաստանի կառավարությունը մերժում է ընդունել թուրքերի կողմից առաջադրված զինադադարի պայմանները: Իսկ դա նշանակում էր շարունակել պատերազմը, բայց ինչպե՞ս, ի՞նչ ուժերով:

«Ընդհանուր յուսալքման այս շրջանին,-նշում է Վ. Արծրունին,- մեր ղեկավար շրջանակի աչքերը դարձան դէպի Սեպուհ եւ Դրօ: Սպայութիւնը կորսնցուցած էր մարտունակութիւնը: Միակ երկու անձինքը, որոնք դեռ կարող էին կռուողներ հաւաքել իրենց շուրջը, այս երկու հին խմբապետներն էին: Զինուորական նախարարութիւնը, զանազան նկատառումով, ստեղծուած նոր ճակատը բաժանեց երկու մասի՝ մէկի հրամանատարութիւնը յանձնելով Սեպուհին, իսկ միւսը՝ Դրօին»[2]:

ՀՀ զինվորական նախարարության հրահանգով ռազմաճակատի հրամանատարության կազմում կատարվում են փոփոխություններ: Հետ է կանչվում Կարս- Ալեքսանդրապոլ ռազմաճակատի ընդհանուր զորահրամանատար, գեներալ Մ. Սիլիկյանը:

Եթե անաչառ գնահատենք գեներալ Սիլիկյանի գործունեությունը 1920 թ. հայ-թուրքական պատերազմում, ապա պիտի փաստել, որ նա փայլուն կերպով իրեն դրսեւորելով 1918 թ. Մայիսյան հերոսամարտերում, այս անգամ շատ թույլ է դրսեւորել իր հրամանատարական կարողությունները, իսկ Հայոց բանակի սպարապետ, գեներալ Թ. Նազարբեկյանի դերակատարությունը, կարելի է ասել, ավելի քան աննկատ է ու անհասկանալի:

ՀՀ զինվորական նախարարության որոշմամբ՝ Զաջուռի ճակատի հրամանատարությունը ստանձնում է Սեպուհը, իսկ Դրոն մեկնում է Աղին-Ալագյազի ճակատ՝ ընդունելու այդ ուղղությունում մարտնչող զորամասերի հրամանատարությունը:

[1] Նույն տեղում:
[2] Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 283:

Պիտի նկատել, որ ռազմաճակատի հրամանատարության կազմում կատարած փոփոխությունները, ինչը միանշանակորեն ցույց տվեց ժամանակը, արդեն ուշացած էին, եւ դրանք այլեւս ի զորու չէին փոխելու ռազմաճակատում տիրող ընդհանուր կացությունը:

Հարց է ծագում. ինչո՞ւ ժամանակին չկատարվեցին այդ փոփոխությունները, ինչո՞ւ ՀՀ ռազմական նախարարությունն ու սպարապետությունը Սուրմալուի հաղթանակից անմիջապես հետո Դրոյին եւ նրա գլխավորած զորամասերի մի մասը չտեղափոխեցին Կարսի ուղղություն:

Ավելին, Սուրմալուի ճակատամարտի ավարտին, երբ հայկական զորքերի հաղթանակի հետեւանքով վերացվել էր այդ ուղղությունից թուրքական զորքերի ու քուրդ հրոսակախմբերի Արարատյան դաշտ ներխուժելու սպառնալիքը, Դրոն՝ հիմք ունենալով գնդապետ Կուռո Թարխանյանի առաջարկությունը, ՀՀ բանակի հրամանատարության ուշադրությանն է ներկայացնում պատերազմը շարունակելու հետեւյալ ռազմագրավ մարտավարությունը:

Ըստ նրա առաջարկության՝ 800 մարտիկներից բաղկացած հեծելախումբը Կուռոյի առաջնորդությամբ պիտի անցներ Նախիջեւանի եւ Անիի մեջտեղից ու թիկունքից սրընթաց ու անսպասելի հարվածներ հասցներ Կարսը պաշարող զորքին: Դժվար է պնդել, թե ինչպիսի ուղղվածությամբ կզարգանային ռազմաճակատում ծավալվող կռիվները, եթե ընդունվեր այդ ծրագիրը: Չէր բացառվում, որ եթե գնդապետ Կուռոյի գլխավորած հեծելախումբը կարողանար արագ տեղաշարժերով թիկունքից հարվածներ հասցնել Կարսը պաշարող թուրքական զորքին, ապա դրանով ոչ միայն կսահմանափակեր նրան ազատ տեղաշարժվելու ու վերախմբավորվելու եւ որեւէ ուղղությամբ մարտավարական առումով գերակշռություն ձեռք բերելու հնարավորությունը, այլեւ կոգեշնչեր ու մարտական տրամադրություն կհաղորդեր այդ ուղղությամբ մարտնչող հայ զինվորներին:

Դրոն եւ Կուռո Թարխանյանը, կարելի է որակել, փաստորեն առաջարկում էին ճակատային գործողություններին համատեղ ձեռնարկել նաեւ զուգորտված պարտիզանական կռիվներ:

Սպարապետ գեներալ Թ. Նազարբեկյանն ու նրա գլխավորած շտաբը՝ առաջնորդվելով ինչ-ինչ նկատառումով՝ կտրականապես մերժել են ընդունել այդ մարտավարությունը[1]:

Հայ պետական եւ զինվորական գործիչները, անգամ Ս. Վրացյանն ու Հովհ. Քաջազնունին, որոնք անդրադարձել են հայ-թուրքա-

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 224:

կան պատերազմի լուսաբանմանը, այս հարցերին չեն տալիս սպառիչ բացատրություն:

Կ. Սասունին, այնուամենայնիվ, հայտնում է իր տեսակետը: Ընդգծելով Սուրմալուի ճակատամարտի հաղթանակի հետեւանքով ժողովրդին համակած ոգեւորության իրողությունը՝ նա նշում է. «Դրոյի ազդեցությունը բարձրացած էր, որու վրայ սկսան յառիլ բոլոր աչքերը: Իր այս յաղթանակէն յետոյ, Դրօն դարձաւ թեկնածու ընդհանուր հրամանատարութեան կամ Կարսի ճակատի հրամանատարութեան համար, պետական եւ հասարակական ազդեցիկ շրջանակներու մէջ: Այս խօսակցութիւնները անպաշտօն բնոյթ կը կրէին, եւ սպարապետութիւնը իր նախկին սարքով կը շարունակէր պատերազմը: Բայց դէպքերը գահավէժ կերպով կընթանային»[1]:

Այսուհանդերձ, նրա գնահատմամբ ՀՀ բանակի հրամանատարությունը Դրոյին ու Սուրմալուի ճակատից մարտական ուժերի մի մասը Կարսի ուղղություն չի տեղափոխել, քանի որ «Այդ տեղէն զօրք փոխադրելու մասին մտածող չկար, որովհետեւ Կարսի զինուորներու թիւը բաւարար կը նկատուէր...»[2]:

Կարելի է եզրակացնել, որ պատերազմը շարունակելու Դրոյի առաջարկած մարտավարության չընդունումը, հնարավոր է, որ պայմանավորված լիներ ՀՀ բանակի հրամանատարության այն համոզմամբ, որը, ըստ Կ. Սասունու գնահատման՝ «Կարսի զինուորներու թիւը բաւարար կը նկատուէր...»:

1920 թ. հայ-թուրքական պատերազմի ժամանակ հայկական զորքերի հրամանատարության չկշռադատված եւ վնասակար համանման կեցվածքն ու որոշումը նորություն չէր: 1918 թ., երբ Սարիղամիշի ճակատում գեներալ Արեշյանի հրամանատարությամբ մարտնչող հայկական զորքերի գործողությունները մատնված էին անհաջողությունների, ռազմաճակատում համանման մարտավարություն կիրառելը հայկական բանակի հրամանատարությանը առաջարկել էին Հայոց ազատամարտի ականավոր գործիչներ Սեբաստացի Մուրադն ու Սեպուհը: Դժբախտաբար, ինչպես 1918 թ., Սեբաստացի Մուրադի եւ Սեպուհի, իսկ 1920 թ. Դրոյի եւ Կուռո Թարխանյանի առաջարկած միանգամայն կշռադատված ու կենսունակ մարտավարությունը, որը պայմանավորված էր ռազմաճակատներում ծավալվող գործողությունների յուրահատկությամբ, չընդունվեց հայկական զորքերը ղեկավարող արհեստավարժ, կադրային զինվորական-

[1] «Հայրենիք» ամսագիր, 1926, թիւ 6, էջ 97:
[2] Նույն տեղում:

ների կողմից, որոնք շատ թույլ էին գնահատում ու պատշաճ ուշադրության չէին արժանացնում ոչ կադրային զինվորականների կողմից ներկայացված առաջարկությունները, թեեւ հայ բարձրաստիճան զինվորականները՝ գեներալներ Թ. Նազարբեկյանը, Մ. Սիլիկյանը եւ մյուսները բարձր են գնահատել Դրոյի հրամանատարական կարողությունները: Իսկ հայ-թուրքական ռազմաճակատում ընթացող մարտական գործողությունների արդյունքը, ինչպես հայտնի է, ավելի քան ճակատագրական էր ու հղի անկանխատեսելի վնասակար ու գուցեւ կործանարար հետեւանքներով:

Ելակետ ունենալով երկու՝ Կարսի եւ Սուրմալուի ռազմաճակատներում տեղի ունեցած մարտերում հայ առավել հայտնի ռազմական գործիչների՝ հայ ազգային-ազատագրական պայքարի բովով անցած զորապետների՝ Դրոյի, Սեպուհի եւ կադրային զինվորականների՝ գեներալներ Ա. Հովսեփյանի, Դ. Բեկ-Փիրումյանի դրսեւորած մարտական որակները, ներդրած ծառայություններն ու վաստակը՝ Ա. Հակոբյանը կատարում է հետեւյալ ուշագրավ եզրահանգումը. «Հայկական բանակի բարձրագույն հրամկազմում բարոյահոգեբանական կայունության, հայրենիքին նվիրվածության եւ ռազմական տաղանդի տեսակետից կարելի է առանձնացնել առավել տիպական ու իրար հակապատկեր երկուական ներկայացուցիչ. մի կողմում Դրոն եւ Սեպուհը՝ որպես հայրենիքին նվիրվածության, կամային եւ հրամանատարական բարձր հատկանիշներով օժտված զորապետներ, իսկ մյուս կողմում՝ ռազմական կանոնավոր կրթություն ստացած, սակայն մարտական գործը առավել ձախողած, բարոյակամային ցածր որակներ ցուցաբերած ու շահասեր զորավարներ Ա. Հովսեփյանը եւ Դ. Բեկ-Փիրումյանը»[1]:

Նկարագրելով այդ նույն ժամանակահատվածում Կարս-Ալեքսանդրապոլ ռազմաճակատում տիրող չափազանց ծանր իրավիճակը՝ ՀՀ Ազգային Ժողովի առաջին քարտուղար Հակոբ Տեր Հակոբյանը (Իրազեկ), որը նույն օրերին գտնվում էր հենց այդ ռազմաճակատում, գրում է. «Երկրի սրտին՝ Արարատեան աշխարհին տաճկական վտանգը սպառնում էր գլխաւորապէս նորից երեք ճակատներից՝ Ղարաքիլիսա, Աբարան եւ Երկաթուղագիծ: Ուստի մեր լաւագոյն, վստահելի ու քաջ մարտիկներից նշանակում են հրամանատարներ՝ Սեպուհը՝ Ղարաքիլիսայի, Դրօն՝ Երկաթուղագծի եւ Աբարանի»[2]:

Ռազմաճակատի հրամանատարության կազմում կատարելով համապատասխան փոփոխություններ՝ ՀՀ կառավարությունն ու զին-

[1] Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 20:
[2] Իրազեկ Յ., Մոտիկ անցեալից , էջ 81:

վորական նախարարությունը դեռևս որոշակի հույսեր էին փայփայում բեկում մտցնել մարտադաշտում ընթացող մարտական գործողություններում ու շտկել իրավիճակը:

Բնակչության մեջ ծայր առած խուճապային տրամադրությունը վերացնելու եւ զինվորի մարտական ոգին ու պատասխանատվությունը բարձրացնելու նպատակով նոյեմբերի 9-ի հաղորդագրությունում արվում է հետեւյալ կոչը. «...այսօր, երբ թշնամին սպառնում է ոչ միայն քո ազատութեան, այլեւ կեանքիդ, պէտք է սթափուես, քանի դեռ ուշ չէ: Թշնամին գալիս է փոքր ոյժերով, նրա յաջողութիւնը քո թուլութեան մէջն է: Եթէ կռուես, նա ոչ միայն անզօր կլինի ոչնչացնելու քեզ, այլեւ պարտութեան մատնուած՝ ձեռ կը քաշի իր դիւային ծրագրերից:

Քաղաքացիներ, Հայաստանի կառավարութեան անյողդողդ որոշումն է կռուել թշնամու դէմ, որը ձեր դիակների վրայ է կամենում իր երջանկութիւնը: Անողոք եւ վճռական կռիւ, մինչեւ որ թշնամին առաջարկէ մեզ հաշտութեան ընդունելի պայմաններ: Ուրիշ ելք չկայ, ոտքի՛ ել, հայ ժողովուրդ: Վերջին օրհասական կռիւն է այս»[1]:

Հանրապետության կառավարության գործադրած որոշակի միջոցառումները, դժբախտաբար, դրական ու ցանկալի արդյունք չեն տալիս: Ռազմաճակատում տիրող կացությունն արդեն անդառնալի էր:

Միեւնույն ժամանակահատվածում մարտեր են ծավալվել նաեւ ռազմաճակատի մյուս ուղղություններում: Նոյեմբերի 10-ին եւ 14-ին թուրքերը Կարակալայի կամրջի ու երկու՝ Արաքս կայարանի եւ Ջաջուռ-Քյափանակ ուղղություններով հարձակում են գործել հայ մարտիկների դիրքերի վրա: Նոյեմբերի 10-ին թուրքական զորքերը երեք գումարտակի ուժերով, թնդանոթների ու գնդացիրների աջակցությամբ գրոհում են Դրոյի գլխավորած զորամասի վրա: Ինչպես եւ նախորդ մարտերում, այս անգամ եւս նրա առաջնորդած զորամասի գնդապետ Կուռո Թարխանյանի եւ Մարտիրոս Աբրահամյանի գլխավորած զորաջոկատները հուժկու հակահարվածներով ջախջախում են թուրքական զորախմբերի գրոհները եւ խափանում դեպի Երեւան շարժվելու թուրք հրամանատարության փորձերը:

«Մեր զինուորները, - պատմում է Մարտիրոսը, - սաստիկ վրդովուած էին ու իրենց մէջ խօսում էին ու ասում.

- Սպասէք եւ կը տեսնէք, թէ ինչպիսի դաս կը տանք ձեզ: Մի կարծէք, թէ Կարսի զինուորները ձեզ երես տուեցին, դուք էլ անպատկառօրէն պատրաստ էք զգում ձեզ առաջանալու: Մենք ցոյց կը տանք ձեզ, թէ ինչպէս հայ զինուորը գիտի պաշտպանել իր հայրենիքի, զէնքի ու հրամանատարի պատիւը»[1]:

Նոյեմբերի 12-ին՝ կրկին անգամ փորձելով թափանցել Արարատյան դաշտ, հարձակում են գործում Կարակալա կամրջի ուղղությամբ: Սուրմալուի ճակատի մարտիկները, դիրքեր գրավելով Արաքսի մյուս ափին, արդեն հասցրել էին, ինչպես հարկն է, ամրացնել իրենց զբաղեցրած հենակետերը: Նրանց համար այլեւս անակնկալ եւ սարսափելի չէր թշնամու ձեռնարկած որեւէ հարձակում: Նոյեմբերի 12-ին տեղի ունեցած կռիվների ժամանակ գետանցումների պաշտպանները «...թոյլ չտալով, որ հակառակորդները գետը մտնեն անւախ ու անկասկած: Դեռ գետը չկտրած՝ Կուռոյի 4 գնդացիրներն ահեղ տեղատարափ մը լեցուցին անոնց վրայ, որոնք, կարճ դիմադրութենէ մը յետոյ, փախան՝ Արաքսի ալիքներուն յանձնելով 3-400 զոհեր՝ առանց որեւէ փոխարինութեամբ»[2]:

Դրոյին հանձնարարված ճակատում տեղի ունեցած առաջին օրվա կռիվները հուսադրող էին, թուրքերի ձեռնարկած բոլոր փորձերը՝ գրավելու Աղին կայարանը, անցնում են ապարդյուն: Սակայն ռազմաճակատի մյուս հատվածներում մարտնչող զորամասերի հետ անհրաժեշտ կապ ու հաղորդակցություն չունենալու պատճառով Դրոյի զորավարները, նաեւ զուտ մարտավարական նկատառումներով, նահանջում են եւ դիրքեր գրավում Արաքս կայարանի մերձակայքում:

Մի էական նկատառում եւս: Ի տարբերություն Սուրմալուի, Կարսի ռազմաճակատում մարտնչող հայկական զորամասերի միջեւ շատ հաճախ բացակայել են կապն ու հաղորդակցության միջոցները, որն, անշուշտ, իր բացասական ազդեցությունն է գործել մարտական արդյունավետ գործողություններ ծավալելու վրա: Դրոն անմիջապես նկատել ու իրեն հանձնարարված ճակատում շտկել է այդ բացը:

«Սուրմալուի ճակատը,-գրում է Վ. Արծրունին,- Արաքսի ձախ ափը փոխադրուելէ յետոյ, Դրօ կարգադրեց, որ 9-րդ գունդը՝ հրամանատարութեամբ գնդապետ Թարվերդեանի, առաջնար եւ կապ մանատարութեամբ գնդապետ Ղորղանեանի հեծելազորաց բրիգադայի հետ հաստատէր գնդապետ Ղորղանեանի հեծելազորաց բրիգադայի հետ (Ղորղանյանի զորամասը մարտնչել է Կարսի ճակատում-Հ. Գ.): Եւ, իրօ՛ք, առաջին անգամն էր, որ ծայրագոյն հարաւ- արեւելյան անկեան բացառութեամբ, հայկական զօրքը կանոնաւոր շղթայով մը կընդգրկէր տաճկական ճակատը»[3]:

[1] «Ճակատամարտ», 1920, դեկտեմբերի 2:

[1] «Հայրենիք» ամսագիր, 1934, թիւ 5, էջ 125:
[2] Վահե Արծրունի, Նշվ. աշխ., էջ 294:
[3] Նույն տեղում:

Թուրքերը, կրնկակոխ հետապնդելով հայկական զորամասերին, հարձակվում են Արաքս կայարանի վրա: Դրոն, այս անգամ եւս իրեն յուրահատուկ եռանդով ու կազմակերպվածությամբ առաջնորդելով ճակատի ուժերը, հետ է մղում հակառակորդի գրոհները:

«Նոյեմբերի 14-ին, - գրում է Իրազեկը (Հակոբ Տեր-Հակոբյան), - տաճիկները յարձակուեցին մեզ վրայ երկու ուղղութեամբ-աջ թեւով Արաքս կայարանի վրայ, որ մեր զօրքերի ձեռքին էր, ձախով՝ մեր Ջաջուռ-Քեափանակ գծի վրայ: Արաքսը հերոսաբար դիմադրեց, իսկ Ջաջուռ-Քեափանակում մենք չարաչար պարտուեցինք»[1]:

Արաքս կայարանի ուղղությամբ Դրոյի գլխավորած զորախմբի ձեռք բերած մասնակի հաջողությունն արդեն ոչնչով չէր կարող փոխել ընդհանուր կացությունը, մանավանդ նույն ժամանակահատվածում Արագածում ընթացող մարտերում թուրքական առավել փոքրաքանակ ուժերից պարտություն է կրում գեներալ Հովսեփյանի գլխավորած զորամասը[2]:

Անթաքույց դառնությամբ պատմելով Կարսի ուղղությամբ տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների մանրամասներն ու վերլուծելով հայկական զորքերի պարտության պատճառները՝ գնդապետ Տիգրան Բաղդասարյանը (Այդ ժամանակ նրա գլխավորած 8-րդ գունդը Սուրմալուից տեղափոխվել ու մարտնչում էր Կարսի ճակատում - Հ.Գ.) նշում է. «Պէտք չէ մոռանալ, թէ զին. կարգապահութիւնը դեռ ամրացած չէր հայկական բանակին մէջ: Կամաւորական եւ հայդուկային հասկացութիւնը, հին անձնական կապերը, այս կամ այն անհատի հեղինակութիւնը շատ աւելի մեծ ազդեցութիւն ունէին հայ զինուորի իւրահատուկ նկարագրի վրայ: Ժամանակը միայն պիտի սրբագրէր բոլոր այն թերի կողմերը, իսկ ժամանակը չը շնորհեցաւ մեզի: Կուզէի, որ ընթերցողը հանգիստ խղճով համաձայնի ինձ հետ, թէ բոլորովին ուրիշ կերպ կը դասաւորուէին դէպքերը, եթէ Դրօն անձամբ գտնուէր Կարսի ճակատին վրայ: Անոր համեստութիւնը շոյելու բնաւ պէտք չունիմ, սակայն մենք արդէն նախընթացներ ունէինք, ինչպէս Բաշ-Աբարան, Սուրմալու եւ ուրիշ դէպքերը»[3]:

Համանման տեսակետ արտահայտելով զինվորի կողմից հրամանատարի նկատմամբ դրսեւորած հարգանքի ու վստահության վերաբերյալ՝ Վ. Արծրունին նշում է. «Հայ- տաճկական պատերազմի օրերին մօտ լինելով մեր ճակատին(Կարսի) եւ պանդխտության

[1] Իրազեկ Յ., Մօտիկ անցեալից , էջ 81:
[2] Տե՛ս Վահե Արծրունի, Նշվ. աշխ., էջ 293-300:
[3] Մատենաշար «Ռազմիկ», թիւ 1, Փարիզ, 1937, էջ 235-236:

բազմամեա կարօտը դեռ սրտումս(նկատի ունի ԱՄՆ-ում երկարատեւ, ապա Փարիզում կարճատեւ ժամանակահատվածում գտնվելու եւ նոր-նոր Հայաստան վերադառնալու հանգամանքը-Հ.Գ.), ես ուշի-ուշով հետեւում էի մեր ճակատների հրամանատարների ռազմավարական ընթացքին:

... Եւ հէնց այդ թարմ ու յստակ տրամադրութեան տակ, սրանից երեք տասնեակ տարիներ առաջ աշխատասիրած իմ անտիպ «Հայ-տաճկական պատերազմը» անունը կրող հատորին մէջ արձանագրեցի. «Եթէ այդ ճակատագրական օրերին Դրօն Կարսում լինէր, թերեւս մեր ճակատագիրը մի տարբեր բան դուրս գար»[1]:

Ջաջուռի ուղղությամբ կռիվները շարունակվում են եւս մի քանի օր, եւ չնայած Սեպուհի ու մի քանի փոքրաքանակ զորամասերի հերոսական դիմադրությանը, հայ զինվորների մի մասը լքում է մարտադաշտը եւ թուրքերին հնարավորություն ընձեռում անցնելու հայկական զորամասերի թիկունքը: Սեպուհը համառ դիմադրություն է ցույց տալիս, սակայն մարտական ուժերի սակավության եւ զինվորների զանգվածային դասալքության պատճառով մեծ դժվարությամբ է կարողանում դիմադրել:

Մի փոքրիկ, բայց ուշագրավ հատված այդ դեպքերի մասնակից, Սեպուհի զորամասի շտաբի ծառայողներից մեկի՝ արդեն հիշատակված հուշագրությունից. «Դասալքությունը սարսափելի չափերի է հասել: Գիշերները զինվորները հարյուրներով են փախչում: Զորքի բարոյական կորովը բավականին ընկած է. զորավարներից սկսած մինչեւ հասարակ զինվոր ոչ միայն դիմադրելու, առաջխաղալու հույս չունեն, այլեւ հավատացած են, որ այլեւս ամեն բան վերջացել է: Բաբելոնյան խառնվածություն է տիրում: Մեր բանակը բոլորովին չի կռվում եւ օր առաջ շտապում է տուն հասնել, որպեսզի թշնամուն չհանդիպի»[2]:

Ռազմաճակատի այս անմխիթար վիճակը ներկայացնող վկայությունը թվագրված է՝ 31 հոկտեմբերի: Համանման ողբերգական իրավիճակը պահպանվել եւ ավելի է խորացել նաեւ հաջորդ՝ նոյեմբեր ամսին:

Ցավալի եւ պատմական տարբեր ժամանակահատվածներում կրկնված եւ ինչ-որ տեղ անբացատրելի իրողություն. հայ զինվորը ընդունակ է եւ ի զորու երբեմն սխրանքներ ու անգամ հրաշքներ գործել՝ եւ հաղթանակով ու արժանապատվությամբ դուրս գալ ամենածանր, անելանելի թվացող իրավիճակներից, իսկ երբեմն էլ,

[1] Վահե Արծրունի, Նշվ. աշխ., էջ 32:
[2] «Ազատ, անկախ եւ միացյալ Հայաստանի վերջին օրերը», էջ, 109:

անգամ առանց դույզն- ինչ մարտնչելու՝ պարտվել եւ թշնամու տնօրինությանը հանձնել հսկայական տարածքներ ու նույնիսկ պաշտպանական առումով ամրակուռ շրջաններ, անգամ անմատչելի բերդաքաղաքներ:

1920 թ. հայ-թուրքական պատերազմում Սուրմալուի եւ Կարսի ռազմաճակատներում միաժամանակ ընթացող ու միանգամայն հակադիր վերջաբանով ավարտված մարտական գործողությունները վերոհիշյալի խոսուն եւ իրական փաստարկներն են ու օրինակը:

Հայրենական պատմաբաններից Սուրմալուի ճակատամարտի լուսաբանմանն անդրադարձել է պատմագիտության դոկտոր Հայկազ Հովհաննիսյանը: Համադրելով Կարսի եւ Սուրմալուի ռազմաճակատներում տեղի ունեցած մարտերի արդյունքները՝ Հ. Հովհաննիսյանը տալիս է հետեւյալ գնահատականը. «1920 թվականի թուրք-հայկական պատերազմի գլխավոր օջախներից մեկն էլ Սուրմալուն էր, որը հերոսաբար դիմադրեց թշնամուն մինչև վերջին օրերը: «Սուրմալուի ճակատում», այսպիսի վերնագիր ունեին Սուրմալուի մասին պատմող վերջին ակնարկները: Եվ վստահաբար կարելի է ասել, որ եթե մյուս ռազմաճակատներում կռվեին այնպես, ինչպես Սուրմալուի ճակատում, հարցը այդքան չէր խորանա և միգուցե այդ դիմադրության արդյունքում պահեինք հենց Սուրմալուն: Ավաղ, Կարսի անկումը ոչ միայն բարոյական մեծ վնաս հասցրեց հայ ժողովրդին, այլև կորստաբեր եղավ մյուս ռազմաճակատներում կռվող մեր զինվորների մարտունակության վրա»[1]:

[1] «Հայկական Բանակ», 2007, թիւ 2, էջ 103:

5. 2. ԴՐՈՆ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԿԻ ԱՌԱՋԻՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

Ռազմաճակատում տեղի ունեցող իրադարձությունները միանշանակորեն մատնանշում էին, որ բանակն ըստ էության արդեն գոյություն չուներ: Համանման իրավիճակում ապավինել հուսալքության, խուճապային տրամադրության եւ անկազմակերպվածության գիրկն ընկած զինվորներին ու հուսալ, որ նրանք ի զորու կլինեին զգաստանալ, համախմբվել եւ վճռական գործողություններ ձեռնարկել, անիմաստ էր ու անհույս: Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետության իշխանությունները կրկին դիմում են վերջին եւ ոչ այնքան հուսադրող քայլի: Թուրքական զորքերի հարձակումը կանգնեցնելու ու հաշտություն կնքելու նպատակով Հայաստանի կառավարությունը փորձում է օգտվել դաշնակից տերությունների աջակցությունից ու նրանց միջոցով ճնշում գործադրել թուրք հրամանատարության վրա:

«Եւ Ալ. Խատիսեանը,- գրում է Իրազեկը,- այդ առաքելությամբ ուղարկւում է Թիֆլիս դաշնակից պետությունների ներկայացուցիչների մօտ: Թէ ի՞նչ անցուդարձ տեղի ունեցաւ Թիֆլիսում եւ ներկայացուցիչները ինչ խոստումներ տուին Հայաստանի պատւիրակին, մեզ յայտնի չէ: Սակայն մի բան պարզ է, որ Խատիսեանի առաքելութիւնը որեւէ իրական արդիւնք չունեցաւ, որովհետեւ դրութիւնը չփոխուեց եւ տաճիկները շարունակեցին իրենց յառաջխաղացումը»[1]:

Հայաստանի նկատմամբ դաշնակից տերությունների դրսեւորած ժխտողական տրամադրվածության ու կեցվածքի վրա, անկասկած, չէին կարող իրենց նշանակալի եւ որոշիչ ազդեցությունը չգործել ռազմաճակատում հայկական բանակի կրած պարտություններն ու դրա հետեւանքով ծանրագույն կացությունում հայտնված հանրապետության իրավիճակը : Առաջնորդվելով իրենց աշխարհաքաղաքական շահերով՝ դաշնակից տերությունները, հանձին Հայաստանի Հանրապետության, այլեւս չէին տեսնում այն ուժը, որը կարող էր իրենց հուսալի գործընկերն ու հենակետը լինել այդ տարածաշրջանում: Որեւէ տարակույս լինել չի կարող, որ Հայաստանի նկատմամբ միանգամայն այլ կլիներ դաշնակից տերությունների

[1] Իրազեկ Յ., նշվ. աշխ., էջ 82:

վերաբերմունքը, եթե հայկական բանակը կարողանար արժանիորեն դրսեւորել իրեն եւ գոնե մի երկու շաբաթ աննահանջ դիմադրեր ու Կարսի բերդաքաղաքը գրեթե առանց կրակոցի չհանձներ թշնամուն:

Հայաստանի իշխանությունները գուցեեւ որոշակի հույսեր եւ ակնկալիքներ փայփայել են՝ դիմելով դաշնակից տերությունների աջակցությանը, սակայն Դրոն դաշնակիցներից որեւէ սպասելիք չուներ եւ չէր կարող ունենալ: Նա դաշնակիցների նկատմամբ ունեցած իր դիրքորոշումն ու վերաբերմունքը հստակորեն արտահայտել էր դեռեւս մայիսի 20-ին՝ Արցախում խորհրդային իշխանության ներկայացուցիչների՝ Սահակ Տեր-Գաբրիելյանի, Պարանկինի եւ Կայդալովի հետ ունեցած հանդիպման ժամանակ:

«...Ոչ միայն Անգլիան ու Ամերիկան,-ասել է Դրոն,-այլ նաեւ կամավորական բանակը (նկատի ունի գեներալ Դենիկինի գլխավորած բանակը, որի հետ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ունեցել է որոշակի կապեր-Հ.Գ.) մեր բարեկամները չեն եղել: Մենք հարկադրված էինք դիմել նրանց օգնության, քանի որ Թուրքիան եւ Ադրբեջանը մեզ վրա հարձակվելով երկու կողմից, ձգտում էին ոչնչացնել Հայաստանը»[1]:

Դաշնակից տերություններին ուղղված հայցադիմումները ոչ միայն որեւէ դրական արդյունք չեն տալիս, այլեւ ընդհակառակը, ունենում են բացասական հետեւանքներ:

«Ճիշտ նույն օրերին,-գրում է Ալ. Խատիսեանը,- ժընեւ գումարուած է առաջին Ազգերու Լիկան եւ այնտեղ հարց էր դրուած Հայաստանն ու Վրաստանը ընդունելու մասին Ազգերու Լիկայի կազմի մէջ: Հայաստանի ծանր վիճակի մասին նոր ստացած տեղեկութիւնները ստիպած էին անգլիական, ֆրանսիական եւ իտալական ներկայացուցիչներուն՝ ժընեւ չընդունել Հայաստանն ու Վրաստանը Ազգերու Լիկայի կազմի մէջ, որպեսզի Լիկայի 10-րդ յօդուածի համաձայն ստիպուած չըլլային օգնութիւն հասցնել Հայաստանին եւ Վրաստանին: Այսպէսով, ամէնատագնապալի եւ ծանր րոպէին Հայաստանը լքուեցաւ եւ գիտակցաբար ձգուեցաւ մինակ: Թուրքերը տեսան այդ, եւ բոլոր եզրակացութիւնները բերին յօգուտ իրենց եւ ի վնաս Հայաստանի»[2]:

Տվյալ իրավիճակում դաշնակից տերությունների անտարբերությունն ու ժխտողական կեցվածքը խորտակում է թուրքական զորքերի հարձակումը կասեցնելու եւ հաշտություն կնքելու Հայաստանի իշխանությունների փայփայած վերջին հույսը: Իսկ ռազմաճակատում թուրքական զորքերի հարձակումը անկասելիորեն շարունակվում էր, եւ նրա հետագա զարգացումը կարող էր կործանարար ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության եւ ողջ հայության համար: Ստեղծված կացությունում այլընտրանք այլեւս գոյություն չուներ, ՀՀ կառավարությունը հարկադրված ընդունում է թուրքերի առաջադրած զինադադարի պայմանները եւ սկսում բանակցությունները Կարաբեքիր փաշայի հետ:

Ալ. Խատիսյանը Թիֆլիս էր մեկնել բանակցելու դաշնակից պետությունների՝ Անգլիայի եւ Ֆրանսիայի ներկայացուցիչների հետ նոյեմբերի 19-ին եւ նույն ամսի 21-ին արդեն Երեւանում էր: Հետաքրքիր «զուգադիպությամբ» նույն օրը՝ նոյեմբերի 21-ին, վերջապես Երեւան է ժամանում Խորհրդային Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Լեգրանի գլխավորած պատվիրակությունը եւ որեւէ ձեւով չանդրադառնալով ու անգամ դույզն- ինչ չհիշելով Հայաստանի կառավարության հետ հոկտեմբերի 21-ին կնքված նախնական համաձայնագրի գոյությունը՝ Հայաստանի իշխանություններին է ներկայացնում բոլորովին այլ պահանջներով հագեցած առաջարկություն-վերջնագիր:

«...Լեգրանը, - գրում է Իրազեկը, - արդէն վերադարձել էր (նոյեմբերի 21-ին) իր ճանապարհորդութիւնից- Մոսկուա, Բագու եւ այլն- փոխանակ իր յանձն առած ռուսական օգնութեան աւետիսը բերելու, այժմ բոլորովին այլ երգ էր երգում: Օգտուելով Հայաստանի եւ հայութեան յուսահատական դրութիւնից՝ նա առաջարկում է որպէս ելք- խորհրդայնացնել Հայաստանը եւ Խորհրդ. Ռուսաստանի իշխանութիւնը ընդունել»[1]:

Եթե փորձենք իմաստավորել ու գնահատել Խորհրդային Ռուսաստանի եւ քեմալական Թուրքիայի փոխհարաբերությունները եւ Հայաստանի Հանրապետության նկատմամբ նրանց դրսեւորած ձեռնարկումները, ապա պարզորոշ նկատվում են որոշակի ուշագրավ զուգադիպություններ.

1. Ադրբեջանի խորհրդայնացումից հետո Խորհրդային Ռուսաստանի զորքերը մուտք են գործում Արցախ, ապա՝ Զանգեզուր, Նախիջեւան եւ Հայաստանի կառավարությանը հարկադրում օգոստոսի 10-ին, ճիշտ եւ ճիշտ Սեւրի դաշնագրի ստորագրման օրը Թիֆլիսում

[1] Нагорный Карабах в 1918-1923 гг., ст. 468-469:
[2] Խատիսեան Ալ., նշվ. աշխ., էջ 291:

[1] Իրազեկ Յ., նշվ. աշխ., էջ 82-83:

կնքել մի համաձայնագիր, որով խորհրդային զորքերին, որպես խաղաղարար ուժերի, թույլատրվում է տեղաբաշխվել Արցախում, Զանգեզուրում եւ Նախիջեւանում: Այդ քայլով Խորհրդային Ռուսաստանը փաստորեն ոչ միայն իրագործում է Հայաստանի Հանրապետությունը շրջափակելու առաջին կարեւորագույն քայլը, այլեւ բացում դեպի արեւելյան երկրներ, մասնավորապես Թուրքիա տանող մայրուղին:

2. Այս արգասաբեր հաղթարշավից հետո, օգոստոսի 24-ին Խորհրդային Ռուսաստանի եւ քեմալական Թուրքիայի միջեւ կնքվում է մի համաձայնագիր, որով խորհրդային իշխանությունները պարտավորվում են ոչ միայն ֆինանսական եւ զինական աջակցություն ցույց տալ Թուրքիային, այլեւ խոստանում լրիվ ազատություն շնորհել նրա գործողություններին: Ինչ խոսք, որ Թուրքիայի գործողություններին Խորհրդային Ռուսաստանի շնորհած ազատությունը նախ եւ առաջ վերաբերում է Հայաստանի վրա ձեռնարկվող հարձակմանը:

3. Ձեռք բերելով Խորհրդային Ռուսաստանի համաձայնությունը՝ քեմալական Թուրքիան առանց պատերազմ հայտարարելու հարձակվում է Հայաստանի վրա: Այդ նույն օրերին Երեւան է ժամանում Լեգրանի գլխավորած Մոսկվայի պատվիրակությունը եւ Հայաստանի իշխանություններին հանձնում Սեւրի դաշնագրից հրաժարվելու վերջնագիրը, որից հետո հանրապետության կառավարության ներկայացուցիչների հետ բանակցելով՝ ստորագրում է նախնական համաձայնագիր եւ մեկնում Բաքու: Ադրբեջանի մայրաքաղաքից Լեգրանը պետք է կապվեր Մոսկվայի հետ եւ այնտեղի համաձայնությունը ստանալուն պես անհապաղ վերադառնար Երեւան ու Հայաստանի կառավարության հետ կնքեր «Խաղաղության եւ համագործակցության» պայմանագիր: Սակայն, ինչպես արդեն նշվել է, Լեգրանի առաքելությունը ձգձգվում է եւ մինչեւ նրա վերադարձը դաշնագրի մասին որեւէ հիշատակություն ու խոսք անգամ չի լինում:

4. Ռազմաճակատում իրենց զորքերի ձեռք բերած նվաճումներից, Կարս բերդաքաղաքի, ապա նաեւ Ալեքսանդրապոլի անկումից հետո Թուրք հրամանատարությունը հաշտություն կնքելու նպատակով Հայաստանի կառավարությանն է ներկայացնում ծանրագույն պահանջներ: Հայտնվելով անելանելի իրավիճակում՝ Հայաստանի իշխանությունները հարկադրված ընդունում են հակառակորդի առաջադրած պայմանները եւ նույն օրերին էլ, կարծես վաղօրոք գրված

սցենարի համաձայն, երկարատեւ ընդմիջումից հետո Երեւան է ժամանում Լեգրանը ու վերջնագրի տեսքով հանրապետության կառավարությունից պահանջում՝ խորհրդայնացնել Հայաստանն ու ընդունել Խորհրդային Ռուսաստանի գերիշխանությունը:

Միամտություն եւ անգիտություն կլինի կարծել, որ թվարկված զուգադիպությունները կարող էին պատահականորեն համընկնել: Զուգադիպությունները պատահական լինել չէին կարող. դրանք Խորհրդային Ռուսաստանի եւ Թուրքիայի կողմից վաղօրոք խնամքով ծրագրված ու համաձայնեցված էին: Իսկ նպատակը մեկն էր՝ խորհրդայնացման ճանապարհով բռնազավթել Հայաստանը եւ այն բաժանել միմյանց միջեւ: Հայաստանի իշխանությունների համար Լեգրանի վերջնագիրը ոչ միայն անսպասելի էր, այլեւ հուսահատեցնող ու ապակողմնորոշող: Չէ՞ որ Խորհրդային Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցչից, որի հետ կնքել էին նախնական համաձայնագիր, իրենք սպասում էին բոլորովին այլ վերաբերմունք եւ առաջարկություններ:

Ինչո՞ւ Խորհրդային Ռուսաստանը, որը խոստանում էր խաղաղարարի դեր ստանձնել տարածաշրջանում եւ միջոցներ ձեռնարկել Թուրքերի հարձակումները կասեցնելու ու նրանց զորքերը Հայաստանի տարածքից դուրս բերելու ուղղությամբ, հանկարծ տեւական լռությունից հետո կտրուկ կերպով փոխում է արդեն նախապես համաձայնեցված տեսակետը եւ հանրապետության կառավարությանը ներկայացնում տվյալ իրավիճակում թերեւս ամենադժվարին ընդունելի, այն է՝ Հայաստանը խորհրդայնացնելու առաջարկությունը:

«Լեգրանը, - գրում է Հ. Տերտերյանը, - վերադարձաւ, բայց այլեւս ո՛չ մեր կողմից եւ ոչ էլ Լեգրանի կողմից խօսք բացուեց ստորագրուած դաշնագրի մասին: Մեզ համար պարզ է, որ Լեգրանը եւ իր ընկերները մտածում էին Հայաստանը օր առաջ խորհրդայնացնելու ձեւի մասին:

Շատ հատկանշական էր Լեգրանի պատուիրակութեան զինուորական կցորդ՝ ցարական զօրավար Բոբրիշեւիչի հետեւեալ արտայայտութիւնը, որ նա արաւ իմ ներկայութեան ընկ. Դրօյի տանը: Երբ վերջինս հարց տուեց Թուրքերին զգաստութեան կոչելու համար Ռուսաստանի միջնորդութեան մասին, զօրավար Բոբրիշեւիչը հարբած վիճակում յայտարարեց. «Դիակը չի կարելի կենդանացնել»[1]:

Բոլորովին զարմանալի չէ ռուս գեներալի արտահայտությունը, Խորհրդային Ռուսաստանը հասել էր իր նպատակին, նրա գործուն

[1] «Հայրենիք» ամսագիր, 1954, թիւ 5, էջ 10:

աջակցությամբ պարտված Հայաստանի Հանրապետությանն արդեն կարելի էր որակել «Դիակը չի կարելի կենդանացնել» արտահայտությամբ:

«Խորհրդային Ռուսաստանը, - շարունակում է Հ.Տերտերյանը,- մէկ կողմից քաջալերեց ու խրախուսեց Թուրքերի ազգայնական ախորժակները, ցոյց տուեց նրանց ռազմական ու տնտեսական օժանդակութիւն եւ «արեւելեան ազգերի» Բագուի համագումարի հրաւիրումով արագացրեց քեմալական Թիւրքիայի յարձակումը Հայաստանի Հանրապետութեան վրայ: Միւս կողմից էլ՝ իր գործակալ հայ բոլշեւիկների միջոցով բարոյալքեց հայ զինուորին ու դրանով նպաստեց Թուրքերի էժանագին յաղթանակներին:

... Խորհրդային կառավարութեան պատուիրակութիւնը, անկախ Հայաստանը դիակ համարելով, մտածում էր օր առաջ Հայաստանը խորհրդայնացնելու մասին, իսկ Հայաստանի կառավարութիւնը մտածում էր օր առաջ Թուրքերի հետ հաշտութիւն կնքել՝ Հայաստանը խորհրդայնացումից փրկելու նպատակով»[1]:

Մի՞թե դյուրին է հարյուրամյակներ շարունակ պետականությունից զրկված, բազում մաքառումների, արհավիրքների, զոհաբերությունների եւ հերոսական պայքարի բովով անցած հայությանը՝ հրաժարվել իր անկախությունից ու դառնալ մեկ այլ, օտար պետության, թեկուզ եւ Ռուսաստանի, բաղկացուցիչ մասերից մեկը: Իրո՛ք, դժվար է բնութագրել բազմաթիվ հարցականներով եւ անակնկալներով հագեցած այն ծանրագույն կացությունը, որում թե՛ քաղաքական, թե՛ բարոյական եւ թե՛ հոգեբանական առումով հայտնվում է հանրապետության կառավարությունը:

Մեկը մյուսին հաջորդող՝ գահավեժ արագությամբ ընթացող չարաղետ դեպքերի թելադրանքով հայտնվելով, Սիմոն Վրացյանի պատկերավոր արտահայտությամբ. «Բոլշեւիկյան մուրճի եւ թիւրքական սալի» միջեւ, Հայաստանի կառավարությունը փորձում է իրավիճակից դուրս գալու ելքեր որոնել:

«... Ճարահատեալ, - գրում է Իրազեկը, - նա (նկատի ունի Հանրապետության կառավարությունը - Հ.Գ.) նորից իր հայեացքը դարձնում է դէպի Տաճկաստանը, փորձում է նորից բանակցութիւններ սկսել նրա հետ - գէթ վտանգը ձգձգելու եւ ժամանակ շահելու մտադրութեամբ: Իսկ ժամանակը յաճախ թոյլերի դաշնակիցն է...»[2]:

[1] Նույն տեղում:
[2] Իրազեկ Յ., նշվ. աշխ., էջ 83:

Քանի որ Խորհրդային Ռուսաստանի եւ Քեմալական Թուրքիայի ներկայացուցիչները պատշաճ վերաբերմունք չէին տածում Հայաստանի կառավարության նկատմամբ, իսկ ծայրահեղ հուսալքության գիրկն ընկած ժողովուրդը հույսով սպասում էր մեկ այլ կարող ուժի՝ նոր իշխանության գալստյանը, որոշվում է կազմավորել նոր կառավարություն: Նոյեմբերի 23-ին իր գլխավորած վարչակազմով հրաժարական է տալիս Համո Օհանջանյանը եւ Սիմոն Վրացյանի նախագահությամբ ընտրվում է նոր կառավարություն: Դրոն նորընտիր կառավարությունում ստանձնում է զինվորական նախարարի պաշտոնը: Այլընտրանք լինել չէր էլ կարող, հայ-թուրքական դեռեւս շարունակվող կռիվներում նա թերեւս միակ հաղթանակած հրամանատարն էր եւ բնականաբար այդ օրերին հայ զինվորական ու պետական գործիչների շրջանում ամենամեծ հեղինակությունն ու ժողովրդականությունն վայելող գործիչը:

Նորընտիր կառավարության գերխնդիրն էր հնարավոր բոլոր միջոցների կենսագործմամբ փրկել Հայաստանի Հանրապետությունը, ժողովրդին՝ կործանումից եւ բարեկամական հարաբերություններ հաստատել Խորհրդային Ռուսաստանի հետ:

Հայության ֆիզիկական գոյությունը պահպանելու կարեւորագույն երաշխիքը պատերազմի դադարեցումն էր, Թուրք հրամանատարության հետ, թեկուզեւ նրա առաջադրած պայմանների ընդունման միջոցով, հաշտություն կնքելը: Ռազմաճակատում ընթացող պատերազմական գործողություններն ու հայկական բանակի իրավիճակը միանշանակորեն Հայաստանի իշխանություններին նպատակաուղղում էին ընտրելու հենց այդ ուղին:

Ս. Վրացյանի գլխավորած կառավարությունը դիմում է «... Թիւրքիայի Ազգային մեծ ժողովին հաշտութեան բանակցութիւններ սկսելու համար: Ս. Վրացեանի կառավարութիւնը դեռ աղօտ յոյս ունէր, որ Քեմալական Թիւրքիայի հետ հնարաւոր էր հաշտութիւն կնքել եւ այդպիսով Հայաստանը փրկել խորհրդայնացումից»[1]:

Թուրքիայի ազգային մեծ ժողովն ընդունում է Հայաստանի կառավարության առաջարկությունը, եւ նոյեմբերի 18-ին ՀՀ կառավարությունը Թուրք հրամանատարության հետ կնքում է պատերազմական գործողությունները դադարեցնելու զինադադար:

Նոյեմբերի 20-ին ՀՀ կառավարությունը Թուրքերի հետ զինադադար կնքելու եւ հաշտության բանակցություններ սկսելու վերաբերյալ հրապարակում է հետեւյալ հաղորդագրությունը.

[1] «Հայրենիք» ամսագիր, 1954, թիւ 5, էջ 10:

«Նոյեմբերի 18-ին մեր եւ տաճիկների միջեւ կնքված է զինադադար եւ այն օրից զինվորական գործողությունները կանգ են առել: Ըստ այդ զինադադարի պայմանների՝ թշնամու զորքերը բռնում են Ալագյոզ-Կրմզլի- Նալբանդ- Վորոնցովկա գիծը, իսկ հայ զորքերը՝ Սուրմալու-Արաքս կայարան-Ղզըլ-Զիարեթ-Արագած-Տանագիրմազ-Բոզիքենդ-Շերմուտ-Յալվանդուզ գյուղը: Միջին տարածությունը պիտի մնա չեզոք, հայկական ադմինիստրացիայով: Իբրեւ զինադադարի պայման, տաճիկներին տրվում է որոշ քանակությամբ զենք, ռազմամթերք եւ երկաթուղային ստացվածք: Զինադադարի վերջին օրն է նոյեմբերի 25-ի երեկոյան ժամի 6 եւ 45 րոպեն:

Նոյեմբերի 24-ի երեկոյան պիտի սկսվեն հաշտության բանակցությունները: Տաճիկ պատգամավորությունն արդեն Ալեքսանդրապոլում է, իսկ հայկական պատվիրակությունը պատրաստ է մեկնելու...»[1]:

Ալեքսանդրապոլում սկսվում են հաշտության բանակցությունները: Թուրքական կողմից բանակցություններին մասնակցում է Հայաստան ներխուժած զորքերի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշան, իսկ հայկական կողմից՝ Ալ.Խատիսյանը, Աբր. Գյուլխանդարյանը, Վահան Մինախորյանը եւ Կարսի նահանգապետ գեներալ Ղորղանյանը:

Բացի վերոհիշյալ ձեռնարկումներից, Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ Խորհրդային Ռուսաստանի օժանդակությունն ու բարեկամությունը ձեռք բերելու նպատակով շարունակում է բանակցությունները Լեգրանի գլխավորած պատվիրակության հետ: Հանրապետության կառավարության հիմնական պահանջը Խորհրդային Ռուսաստանից մեկն էր՝ կանգնեցնել թուրքական զորքերի հարձակումը եւ օգնել Հայաստանին դուրս գալու ստեղծված կացությունից:

Ի պատասխան հայկական կողմի առաջադրած պայմաններին, Խորհրդային Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Լեգրանը Հայաստանի կառավարությունից պահանջում է դադարեցնել թուրքերի հետ սկսած բանակցությունները, հայկական պատվիրակությանը հետ կանչել Ալեքսանդրապոլից եւ Կարմիր բանակի զորամասերը մտցնել Հայաստան: Եթե հայկական կողմը համաձայնվեր Լեգրանի առաջադրած պահանջներին եւ ընդհատեր թուրքերի հետ սկսած բանակցություններն ու պատվիրակությանը հետ կանչեր Ալեքսանդրապոլից, ապա ո՞վ կարող էր տալ այն կա-

[1] Հայաստանի Հանրապետությունը 1918 -1920 թթ. (քաղաքական պատմություն, փաստաթղթերի, նյութերի ժողովածու), Երեւան, 2000, էջ 348:

յուն, իրական երաշխիքը, որ թուրքերը չէին վերսկսելու հարձակումները եւ օգտվելով հայկական զորքերի թույլ, անկազմակերպ վիճակից՝ հաշված օրերի ընթացքում ներխուժել Արարատյան դաշտ եւ Երեւան, ինչն անվերապահորեն հղի էր կործանարար հետեւանքներով: Ահա այս էր Հայաստանի կառավարության համար այն կարեւորագույն, առաջնահերթ նշանակություն ունեցող հարցը, որն ընթացող բանակցություններում ուղղվում է Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչին:

«... Լեգրանը պատասխանում է, թէ թուրքերը այդպիսի քայլ չեն առնի: Վրացեանը ցոյց է տալիս Լեգրանին, որ մինչեւ որ ռուսները կարողանան շոշափելի ոյժ հասցնել Երեւան, առնուազն մէկ շաբաթ պիտի պահանջուի, միչդեռ թուրք բանակը կանգնած էր Արաքսի ափին, Մարգարայի կամուրջի մօտ, հազիւ 20-25 մղոնի վրայ Հայաստանի մայրաքաղաքից: Եթէ կառավարութիւնը խզէ բանակցութիւնները, այդ պիտի նշանակի պատերազմի վերսկսում. ի՞նչ ոյժ կարող էր արգելել թիւրքերին Հայաստանի մնացած մասն էլ գրաւելու: Խորհրդային իշխանութեան խօ՞սքը: Ի՞նչ երաշխիք, որ թուրքերը կարեւորութիւն կը տան այդ խօսքին:

... Եթէ, համոզում էր Վրացեանն Լեգրանին, Խորհրդային իշխանութիւնը վստահ էր, որ թուրքերը խորհրդային իշխանութեան հակառակ քայլ չէր առնի, ուրեմն, նրանց խօսքն էլ բաւական պիտի լինէր որպէսզի թուրքերը ծայրահեղ պահանջներ չը դնէին Հայաստանին: Իսկ եթէ Խորհրդային կառավարութիւնը կարծում էր, թէ թուրքերը իրենց խօսքին ականջ չէին դնի, նշանակում էր մի քանի հարիւր ռուս զինուորների մուտքն էլ Հայաստանի սահմաններից ներս արգելք չէր լինի թուրքերին վերջնականապէս մաքրելու իրենց հաշիւը հայերի հետ, մանաւանդ որ թուրքերի գլխաւոր մեղադրանքը հայերի դէմ այն է, թէ նրանք գործիք են ռուսների ձեռքին»[1]:

Թուրքերի հետ արդեն ընթացող բանակցություններն արժեւորելիս հայկական եւ ռուսական կողմերը առաջնորդվում էին միանգամայն տարբեր չափանիշներով ու սկզբունքներով: Հայաստանի կառավարության համար, բնականաբար, գերխնդիրը հայության ֆիզիկական գոյությունը կործանումից փրկելու անհրաժեշտությունն էր: Խորհրդային Ռուսաստանի եւ ցավալիորեն նրան, ինչպես նաեւ թուրքերի հարձակմանը աջակցող հայ բոլշեւիկների համար կա-

[1] Վրացեան Ս. Հայաստանի Հարապետութիւն, էջ 491:

բեւորագույնը ոչ թե հայ ժողովրդի փրկությունն էր, առավել եւս պետականության պահպանումը, այլ Հայաստանն օր առաջ խորհրդայնացնելը եւ ապա դեպի արեւելք առաջ շարժվելը:

Զգտելով Հայաստանի Հանրապետությունը տեսնել օր առաջ խորհրդայնացած՝ Խորհրդային իշխանությունների շրջանում այն մտավախությունն էր արմատավորված, որ իրենց հապաղելու դեպքում թուրքերը արագորեն կարող էին նվաճել Հայաստանը եւ շարժվել դեպի Բաքու, ուր նրանց հայտնվելը անտարակույս կոգեւորեր տեղի մահմեդական բնակչությանը եւ նոր դժվարությունների առջեւ կկանգնեցներ բոլշեւիկներին: Այսպիսի մտավախության համար Մոսկվան որոշակի հիմքեր ուներ, չէ որ հենց ինքն էր օգոստոսի 24-ին կնքված համաձայնագրով թուրքերին ընձեռել գործելու ազատություն եւ պարտավորվել աջակցել նրանց ձեռնարկումներին, իսկ Բաքվում թուրք ազգայնականները պատրաստ էին առաջին իսկ հնարավորության դեպքում ապստամբել խորհրդային իշխանության դեմ:

Տվյալ իրավիճակում Հայաստանի իշխանությունների համար միանգամայն միամտություն եւ անպատասխանատու ու հանցավոր քայլ կլիներ ապավինել Լեգրանի այն հավաստմանը, թե թուրքերը կլսեն իր խոսքը եւ զորքերով չեն շարժվի Հայաստանի Հանրապետության խորքերը: Բացարձակապես չկար այն հաստատ եւ հավատ ներշնչող երաշխիքը, որն իրոք ստիպեր թուրքերին անվերապահորեն ընդունել Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչի պահանջն ու չվերսկսել պատերազմական գործողությունները:

«Ուրիշ խնդիր,- նշում է Ս. Վրացյանը,- եթէ ռուսները խոշոր բանակ ունենային Հայաստանի մոտ եւ պահանջուած վայրկեանին կարողանային բաւարար ոյժ հասցնել, այն ժամանակ, հաւանական էր, թուրքերը չէին համարձակուի առաջ շարժուելու, բայց բոլշեւիկները այդպիսի բանակ չունէին մերձակայ վայրերում»[1]:

Հայաստանի կառավարության եւ Լեգրանի գլխավորած պատվիրակության միջեւ ընկած բանակցություններն ընդհատվում են առանց որեւէ դրական արդյունքի. «... կառավարութիւնը վախենում էր, որ եթէ Կարմիր բանակը Հայաստան մտնէր հիւսիսից, թուրքերը առաջ կը շարժուէին հարաւից եւ ռուսների հասնելուց շատ առաջ կը գրաւէին Երեւանը: Այդ պատճառով, կառավարութիւնը աշխատում էր Ալեքսանդրապոլի բանակցութիւնները չխզել եւ հաշտութեան հարցը հասցնել իր տրամաբանական վախճանին»[2]:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

Բանակցություններում չհասնելով իրենց հետապնդած նպատակին՝ Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչները դիմում են առավել զորեղ ու ազդու միջոցի՝ զենքի ուժի:

«Հայաստանի Հանրապետութեան, - գրում է Հ. Տերտերյանը, - այդ ծանր ու բախտորոշ օրերին հայ բոլշեւիկները Բագուի Կարմիր զօրամասերի օգնութեամբ դաւադրօրէն խփել էին մեր թիկունքից եւ նոյեմբերի 29-ին մտել Ղազախ գաւառի Իջեւան գիւղը»[1]:

Հաշվարկը շատ պարզ էր, եթե Հայաստանի Հանրապետության կառավարությունը չէր համաձայնվում խորհրդայնացման ճանապարհով կամովին հանձնել իշխանությունը, ապա հայտնվելով հարավից ու հյուսիսից միաժամանակ տեղացող հարվածների կիզակետում եւ կորցնելով պաշտպանվելու հնարավորությունը՝ անհերքայորեն հարկադրված կլինի ընդունել իրեն ներկայացրած ամենածանր պայմանները:

Կարմիր բանակի զորամասերի մուտքը հանրապետության տարածք բուռն վրդովմունք է հարուցում Հայաստանի կառավարությունում, վարչապետ Ս. Վրացյանը խիստ բողոք է հայտնում Լեգրանին եւ պահանջում խորհրդային զորքերը դուրս բերել հանրապետության տարածքից: Ինչպես պարզվում է մի փոքր ավելի ուշ, Լեգրանը երկակի խաղ էր խաղում: Ցույց տալով, որ խորհրդային զորքերի մուտքը Իջեւան սոսկ ցավալի թյուրիմացության արդյունք է, «... անմիջապէս գրաւոր ներողութիւն է խնդրում կատարուածի համար եւ ռադիոյով հրահանգում է Բագու, որ մտած զորքը յետ քաշուի դէպի նախկին դիրքը: Որոշում է միաժամանակ, որ Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչը (գնդապետ Մանիեւ) միասին Իջեւան գնան լիգուիդացիայի ենթարկեն այդ միջադէպը»[2]:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, չբավարարվելով վերոհիշյալ ձեռնարկմամբ, միաժամանակ հրահանգ է տալիս Ղազախ-Դիլիջան հայկական զորախմբին առաջանալ դեպի Իջեւան եւ, եթե խորհրդային զորքերը հոժարակամ չհամաձայնվեին պարպել հանրապետության տարածքը, ապա դիմել զենքի ուժի: Պարզվում է, որ խորհրդային զորքերը հանրապետության տարածքից անհապաղ դուրս բերելու Լեգրանի տված խոստումն ու ձեռնարկած քայլերը կեղծ էին:

«... թէպէտ Լրկրանը խոստանում էր Հայաստանի սահմաններից հեռացնել ռուսական զօրքերին, բայց գաղտնի հրահանգել էր ա-

[1] «Հայրենիք» ամսագիր, 1954, թիւ 9, էջ 11:
[2] ՀՀ ԲԿԱ, թծ. 121, գ. 97 «Հայաստանի վերջին անցքերը», էջ 8:

առաջ շարժուել: Այս հաւանական ենթադրութիւնը հիմնուած է հետեւեալ փաստի վրայ. Ալեքսանդրապոլում Մդեւանին (Ալեքսանդրապոլի բանակցութիւններում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչը - Հ.Գ.) դելեկացիային յայտնեց, որ թէպէտ ռուսական զօրքերին հրահանգուած է թողնել Հայաստանը, բայց նա չի թողնի եւ ներս կը խուժի»[1]:

Խորհրդային իշխանութեան կենսագործած վերոհիշեալ ձեռնարկումները վաղօրոք ծրագրված եւ խնամքով հաշվարկված էին: Բոլշեւիկյան զորամասերը հանրապետության տարածքը ներխուժելու հենց հաջորդ օրը Լեգրանը Հայաստանի իշխանություններին է ներկայացնում Հայաստանի Հանրապետությունը խորհրդայնացնելու վերջնագիրը: Խորհրդային Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցչի կենսագործած գործողությանը մեծապես օգնում է հայկական զորամասերի անկայուն եւ թույլ վիճակը: Հանրապետության կառավարության հանձնարարությամբ Ղազախ-Դիլիջան հայկական զորամասին տրված՝ խորհրդային զորքին զենքի ուժով գրավյալ տարածքից դուրս հանելու հրահանգը չի կատարվում:

«Տեսնելով, որ ռուսները չեն հեռանում հայկական հողամասից, հայ զօրքը առաջ է շարժուում: Ընդհարման միջոցին պարզուում է, որ հայկ. մի քանի հարիւր զինուորների հանդէպ կանգնած է վեց հազար զօրք, համապատասխան հրետանիով եւ մեծաքանակ գնդացիրներով, այնպէս որ հայկ. ոյժերին մնում է միայն անձնատուր լինել: Ներբակալուում է նաեւ հայկ. գնդապետ Մանիեւը իր օգնականով միասին, որը մի քանի ժամից յետոյ կարողանում է փախուստ տալ գերութիւնից եւ տեղեկացնում եղելութիւնը: Երեւանի ռուսական միսիան (նկատի ունի Լեգրանի գլխավորած պատվիրակությանը - Հ.Գ.) ապահովաբար տեղեակ էր այդ բոլորին»[2]:

Այն, ինչ այդ օրերին Հայաստանի նկատմամբ իրականացնում էին բոլշեւիկները, տեղյակ էին նաեւ Հայաստանի իշխանությունները: Միանգամայն պարզ եւ հասկանալի է, որ Կարմիր բանակի մուտքը հանրապետության տարածք եւ Լեգրանի վերջնագիրը ավելի է շիկացնում ու տագնապալի դարձնում Հայաստանի կառավարությունում առանց այդ էլ տիրող լարված եւ քաոսային մթնոլորտը: Հայտնվելով օրհասական իրավիճակում՝ Ս. Վրացյանի գլխավորած հանրապետության կառավարությունը, բնականաբար, պետք է կացությունից դուրս գալու ուղիներ որոներ:

[1] Նույն տեղում, էջ 9:
[2] Նույն տեղում:

Լեգրանի վերջնագիրը ստանալու հենց նույն օրը գումարվում է արտակարգ խորհրդակցական ժողով, որին մասնակցում էին հին եւ նոր կառավարության նախարարները, խորհրդարանի դաշնակցական խմբակցության, Հ.Յ.Դաշնակցության եւ այլ կուսակցությունների ղեկավար գործիչներ եւ այլք, մոտավորապես 40 հոգի: Խորհրդակցական ժողովին, բնականաբար, մասնակցում էր նաեւ Դրոն, որի խոսքը, որպես ռազմական նախարարի, այդ օրերին առանձնահատուկ կշիռ եւ նշանակություն ուներ: Ժողովի հիմնական օրակարգը բոլշեւիկների ներկայացրած վերջնագրի քննարկումն էր, միաժամանակ ժողովականները սպասում էին Ալեքսանդրապոլում ընթացող բանակցություններից ստացվող լուրերին: Ինչպես եւ սպասվում էր, բուռն բանավեճ է ծավալվում ժողովականների միջեւ քննարկվող օրակարգի կապակցությամբ:

«Ժողովականների, - նշում է այդ ժողովի մասնակից Հ.Տերտերյանը (նա նոր կառավարությունում եկեմտական (ֆինանս.) նախարարն էր - Հ.Գ.), - մեծամասնութեան կարծիքը հակաբոլշեւիկեան էր, միայն թէ տաճիկների կողմից մեր ամենանուազագոյն պահանջները յարգուած լինէին, մենք պատրաստ էինք զիջելու Կարսի ամբողջ շրջանը: Ժողովի կէսին Ալ.Խատիսեանից ստացանք ծածկագրով մի հեռագիր - տաճիկների վերջնական պայմանները, որով ո՛չ միայն պահանջում էին Կարսի շրջանը, այլ նաեւ Սուրմալուն, Շարուր-Նախիջեւանը մնում էին Հայաստանից դուրս եւ Զանգեզուրն ու Արցախը թէական»[1]:

Խորհրդակցական ժողովը, որը շարունակվում է մինչեւ դեկտեմբերի 1-ը, իր ընդունած որոշումներով հիրավի պատմական նշանակություն ուներ:

Նախ, պետք էր պատասխանել Ալ. Խատիսյանի հեռագրին, Քյազիմ Կարաբեքիր փաշան սպառնում էր իրենց պատվիրակությանը առաջադրած պահանջները չկատարելու դեպքում ընդհատել բանակցությունները եւ անհապաղ վերսկսել պատերազմական գործողությունները:

«Թուրքերը, - գրում է Ալ. Խատիսյանը, - վերջնագրի ձեւով ներկայացուցին իրենց արդէն պատրաստուած դաշնագիրը՝ պահանջելով անվերապահօրէն ընդունիլ զայն, հակառակ պարագային կը սպառնային, որ թրքական զօրքերը անմիջապէս շարժին Երեւանի վրայ:

[1] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Զ, «Հ. Տերտերեանի յուշերը», Պէյրութ, 1967, էջ 309:

Մենք առարկութիւններ ըրինք Թուրքերուն եւ որոշեցինք, որ յամենայն դէպս, պէտք է դաշնագրի գլխաւոր կէտերը հաղորդենք Երեւան եւ սպասենք հրահանգներ մեր կառաւարութենէն: Ժամը չորսուկէսին հաղորդեցինք Երեւան Թուրքերու վերջնագրի պայմանները եւ խնդրեցինք պատասխանել շտապ կարգով»[1]:

Թուրքերն իրենց հերթին նույնպես շտապում էին եւ աշխատում էին ինչքան հնարավոր է շատ տարածքներ կորզել հայերից: Խորհրդային զորքերի առաջխաղացումը կարող էր նրանց զրկել Հայաստանի տարածքում առավելապես ընդարձակվելու հնարավորությունից: Այդ պատճառով պատերազմական գործողությունները վերսկսելու սպառնալիքով նրանք ձգտում էին Հայաստանի իշխանություններին հարկադրել շուտափույթ ընդունել իրենց առաջադրած պայմանները, քանի դեռ խորհրդային զորքերը չէին թափանցել ու խորացել հանրապետության տարածք:

Ժողովի մասնակիցներին շատ լավ հայտնի էր, որ բացառությամբ Արաքս կայարանը եւ Արաքսի գետանցումները պաշտպանող Դրոյի փոքրաքանակ զորամասերի, Թուրքական զորքերին դիմակայող այլ ռազմաճակատ եւ մարտական ուժեր գրեթե գոյություն չունեին: Թուրքերի առաջխաղացումը, անտարակույս, նշանակում էր տարածքների կորուստներ, նոր կոտորածներ եւ դաժան փորձություններ, որին պարտված Հայաստանի Հանրապետությունը դժվար թե կարողանար դիմանալ: Ելնելով հանրապետությունում տիրող անասելի դժվարագույն կացությունից եւ առաջնորդվելով ժողովրդի ֆիզիկական գոյությունը փրկելու անհրաժեշտությունից՝ ժողովականները որոշում են ընդունել Թուրքերի առաջադրած պայմանները եւ հեռագրելով Ալ. Խատիսյանին, արտոնում են նրան կնքել պայմանագիրը:

«Դիշերը, - շարունակում է Ալ. Խատիսյանը, - ստացուեցաւ հեռեւեալ պատասխանը Վրացեանէն.

«Կառավարութիւնը հրաժարական տուեց: Դիլիջանում եւ Քարվանսարայում մեր զօրքերը առանց կռուի հանդիպեցին բոլշեւիկեան զօրքերի հետ: Կազմւում է կոալիցիոն կառավարութիւն բոլշեւիկների հետ, մասնակցութեամբ Դրոյի եւ Տերտէրեանի՝ Դաշնակցութեան կողմից: Թուրքերի պայմանները ստիպուած ենք ընդունել: Դուք լիազօրուած էք ստորագրել դաշինքը»[2]:

Համաձայն Հ. Տերտերյանի վկայության, իրենք Թուրքերի առաջադրած ծանր պայմանները ընդունելու, նրանց հետ հաշտության

[1] Խատիսեան Ալ., նշվ. աշխ., էջ 309:
[2] Նույն տեղում:

պայմանագիրը ստորագրելիս՝ առաջնորդվել են երկու հիմնական նկատառումներով.

1. «Ընդունելով խորհրդայնացումը եւ Տաճիկների հետ հաշտութեան դաշինք չկնքելով, մենք նրանց իրաւունք տուած կը լինէինք շարունակել իրենց արշաւանքը, նորանոր գաւառներ գրաւել Հայաստանից եւ մտնել Երեւան: Մենք գիտէինք, որ ռուսները Հայաստան էին բերում ամենաշատը 3000 զինուոր, իսկ մինչեւ օգնական ուժեր ստանային՝ տաճիկները Հայաստանում քարը քարի վրայ չէին թողնելու: Պէտք էր փրկել հայութեան եւ Հայաստանի վերջին բեկորները...»[1]:

Թուրքերի հետ դաշինքի կնքման կարեւորագույն պատճառը միակն է՝ փրկել Հայաստանն ու հայությունը:

2. «Մենք, - շարունակում է Հ. Տերտերյանը, - նայում էինք հեռուն, եթէ մենք դաշինք չստորագրէինք եւ քաղաքական հանգամանքների բերումով ռուսները ստիպուած լինէին հեռանալու Հայաստանից, տաճիկները մեզ համարելով պատերազմական վիճակի մէջ իրանց հանդէպ՝ կարող էին վերսկսել իրենց արշաւանքը, այնինչ՝ դաշինք ունենալու դէպքում հայ ժողովուրդն այդ վտանգից առժամապէս զերծ կը մնար, ինչպէս որ եղաւ իրօք հետագայ յեղաշրջման ժամանակ...»[2]:

Արտոնելով Ալ. Խատիսյանին Թուրքերի հետ կնքելու հաշտության պայմանագիրը՝ խորհրդակցական ժողովը անդրադառնում է մյուս կարեւորագույն՝ Հայաստանի Հանրապետությունը խորհրդայնացնելու, այն է՝ իշխանությունը բոլշեւիկներին հանձնելու Լեգրանի վերջնագրի քննարկմանը: Այս խնդրի կապակցությամբ ժողովի մասնակիցների շրջանում տիրապետել է երկու հիմնական տեսակետ.

1. Ժողովականների մեծամասնությունը, որոնց թվում նաեւ Դրոն, գտնում էր, որ անհրաժեշտ է ընդունել Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Լեգրանի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետությունը հռչակել անկախ խորհրդային հանրապետություն, եւ ռուսների զինու աջակցությամբ դուրս քշել Թուրքերին եւ փրկել հայությանը ֆիզիկական ոչնչացումից:

Այս տեսակետը պաշտպանողները, որոնց մեջ առանձնահատուկ դեր ու կշիռ ուներ Դրոն, առաջնորդվում էին հետեւյալ հիմունքներով ու պատճառաբանությամբ.

[1] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Զ, «Հ. Տերտերեանի յուշերը», Պէյրութ, 1967, էջ 297:
[2] Նույն տեղում:

«ա. Ժողովուրդը ընդհանրապէս (մի շարք պատճառներով) դժգոհ է մեր կառավարութիւնից եւ հետեւաբար մենք զրկուած ենք բոլշեւիկների դէմ կռուելու ամենակարեւորագոյն զէնքից, որովհետեւ ժողովուրդը մեզ հետ չէ:

բ. Ժողովրդի ընդհանուր համակրանքը բոլշեւիկների կողմն է, որովհետեւ նախ նրա լուծը դեռեւս չճաշակած, բազմաթիւ ակընկալութիւններ ունի նրանից եւ երկրորդ՝ բոլշեւիկները կարող էին քշել տաճիկներին եւ իրենց կոտորածից փրկել:

գ. Զօրքը մեզ հետ չէ, նա չի կռուի մեզ համար»[1]:

2. Ժողովի փոքրամասնությունը, որոնց թվում էին ՀՀ նախկին վարչապետ Համո Օհանջանյանը, Վահան Նավասարդյանը, Հակոբ Տեր-Հակոբյանը (Իրազեկ), Սարգիս Արարատյանը, Արշակ Հովհաննիսյանը եւ այլք, գտնում էին, որ անհրաժեշտ է շուտափույթ խաղաղության դաշինք կնքել թուրքերի հետ եւ ողջ մարտական ուժերը ուղղել խորհրդային զորքերի դեմ եւ զենքի ուժով նրանց դուրս քշել հանրապետության տարածքից: Այս տեսանկյունից առավել կարծր դիրքորոշում է ունեցել Արշակ Հովհաննիսյանը, որը առաջարկել է ոչ միայն նոր զորահավաք կազմակերպել ու բոլոր հնարավոր միջոցներով դիմադրել խորհրդային զորքերին, այլեւ ձերբակալել Լեգրանին[2]:

Լեգրանի վերջնագիրը չընդունելու տեսակետը պաշտպանողների գլխավոր փաստարկներն էին.

ա. Երկիրը յանձնել բոլշեւիկներին կը նշանակի՝ խաչ քաշել Հայաստանի անկախութեան վրայ եւ ջուրը գցել այդ գաղափարի համար մինչեւ այժմ մեր ժողովրդի գործադրած բոլոր ջանքերը եւ տուած զոհաբերութիւնները:

բ. Երկիրը բոլշեւիկներին յանձնել կը նշանակի՝ քայքայել ու թալանի մատնել մեր ժողովրդի առանց այն էլ շատ քայքայած տնտեսութիւնը, ստեղծել երկրում կացինների ու տեռորի մի ռէժիմ, ինչպիսին գոյութիւն ունի Ադրբէջանում եւ խորհրդային Արցախում:

գ. Սխալ է ու չափազանցուած այն տեսակէտը, թէ մեր ժողովրդի եւ մանաւանդ զօրքի համակրութիւնը մեր կողմը չէ: Մեզ վրայ եկող բոլշեւիկների ուժերը չնչին են (համաձայն արդեն հիշատակված տվյալների՝ Հայաստանի Հանրապետության տարածքը ներխուժած խորհրդային զինվորների թիվը հավասար է եղել 3000-ից մինչեւ 6000-ի - Հ.Գ.):

դ. Ներկայ դէպքում, երբ կռիւը Ռուսաստանի դէմ է, այն էլ բոլորովին վարկաբեկուած ու քայքայուած Ռուսաստանի դէմ, մենք կարող ենք մի ընդհանուր լեզու գտնել տաճիկների հետ, թէկուզ առաւելագոյն զիջումների ճանապարհով, որովհետեւ մեր եւ նրանց քաղաքական շահերը զուգադիպում են ներկայումս»[1]:

Այս հարցի վերաբերյալ ծավալված բուռն վիճաբանություններից ու քննարկումներից հետո որոշվում է հարցը վճռել քվեարկությամբ: Ժողովականների ձայների 21 կողմ եւ 7 դեմ հարաբերակցությամբ որոշվում է ընդունել Լեգրանի վերջնագիր-առաջարկությունը եւ Հայաստանի Հանրապետությունը հռչակելով Հայաստանի Խորհրդային Հանրապետություն՝ իշխանությունը խաղաղ ճանապարհով հանձնել բոլշեւիկներին:

Եթե ընդհանրացնենք նոյեմբերի 30-ից մինչեւ դեկտեմբերի 1-ը Երեւանում գումարված արտակարգ խորհրդաժողովի արդյունքները, ապա պետք է ընդգծել, որ ընդունվել են Հայաստանի եւ հայության ապագայի համար կարեւորագույն նշանակություն ունեցող հետեւյալ որոշումները.

1. Լիազորվում է Ալ. Խատիսյանին ստորագրել թուրքերի հետ հաշտության պայմանագիր, ինչի մասին վարչապետ Ս. Վրացյանը հեռագրում է Ալեքսանդրապոլ:

2. Որոշվում է ընդունել Խորհրդային Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Լեգրանի ներկայացրած վերջնագիրն ու Հայաստանը հռչակել խորհրդային անկախ հանրապետություն:

«Բիւրոն, - նշվում է խորհրդաժողովի ընդունած փաստաթղթերից մեկում,- Ֆրակցիան (ՀՀ խորհրդարանի Հ.Յ.Դաշնակցության խմբակցություն - Հ.Գ.), կառավարությունը որոշեցին ընդունել կարմիրների առաջարկը սովետիզացիայի մասին: Դրեցին որոշ պայմաններ, ճանաչել Հայաստանի անկախությունը, հաշտություն կնքել տաճիկների հետ, թոյլ չտալ քաղաքացիական կռիւ, մտցնել կառավարության մէջ մերոնց»[2]:

3. Քանի որ խորհրդաժողովում ընդունվում է Լեգրանի վերջնագիրը, ապա բնականաբար պետք է վճռվեր նաեւ իշխանության հարցը: Բնական է, որ վարչապետ Ս. Վրացյանի գլխավորած կառավարությունը հարկադրված պետք է հրաժարական տար: Իսկ Լեգրանի

[1] ՀՀ ԲԿԱ, ֆ. Ս. Վ., թղ. 2, գ. 5, «Յակոբ Տէր Յակոբեանի յուշերը», էջ 16:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1923, էիւ 1, էջ 70:

[1] ՀՀ ԲԿԱ, ֆ. Ս. Վ., թղ. 2, գ. 5, «Յակոբ Տէր Յակոբեանի յուշերը», էջ 16:
[2] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 284, թ. 1:

հետ ընթացող բանակցությունները դեռևս չէին ավարտվել: Հայաստանի նախկին կառավարության կողմից ո՞վ պետք է վարեր բանակցությունները:

«...Նոյն ժողովը, - նշում է Հ. Տերտերյանը, - որոշեց, որ Լեգրանի հետ պէտք է բանակցեինք ես եւ Դրօն»[1]:

Հաջորդ օրը ներկայացնելով իր հրաժարականը՝ Հանրապետության նախարարների խորհուրդը կայացնում է հետեւյալ որոշումը.

«Ի նկատի ունենալով արտաքին հանգամանքների շնորհիւ յերկրում ստեղծուած կացութիւնը, Հայաստանի Հանրապետության կառավարութիւնը իր 1920 թ.ի դեկտեմբեր 2-ի նիստում որոշեց՝ հրաժարուել իշխանութիւնից եւ հանձնել Զինուորական եւ Քաղաքացիական բովանդակ իշխանութիւնը զօրաբանակի ընդհանուր հրամանատարին, որպիսզի պաշտօնում նշանակել ռազմական նախարար Դրօյին:

Նախարարների խորհրդի նախագահ՝ Ս. Վրացեան
Նախարարներ՝ Ա. Յովհաննիսեան, Ա. Խոնդակերեան,
Հ. Տերտերեան, Դ. Կանայեան»[2]:

Նույն օրը եւեթ Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Բեկզադյանը ստանում է կառավարության առաքած շտապ հեռագիրը.

«Ի նկատի ունենալով յերկրի համար ստեղծուած հանգամանքները, կառավարութիւնը որոշեց հրաժարուել իշխանութիւնից եւ զինուորական ու քաղաքական իշխանութիւնը յանձնել Դրօյին: Լեգրանի հետ կնքուած պայմանագրով Հայաստանը հայտարարուում է անկախ խորհրդային հանրապետութիւն: Ռուսաստանը պարտաւորուում է պաշտպանել Հայաստանի սահմանները, որոնց մէջ մտնում են նաեւ Նախիջեւանը եւ Զանգեզուրը...[3]:

Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած արմատական հեղաշրջման մասին զեկուցելով Լենինին եւ Ստալինին՝ Սերգո Օրջոնիկիձեն նրանց հասցեագրած դեկտեմբերի 2-ի հեռագրում հաղորդում է. «Հենց նոր ստացվել է հեռագիր Երեւանից: Հին իշխանությունը հեռացվել է, Երեւանում հաստատվել է Խորհրդային իշխանություն: Մինչեւ Հեղկոմի գալը, ամբողջ իշխանությունը հանձնվել է զինվորական հրամանատարությանը, Դրոյի գլխավորությամբ: Հայաստանի զինվորական կոմիսար է նշանակվել Սիլինը: Զորամասերին տրվել է Հեղկոմի տնօրինությանը անցնելու հրաման...

[1] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Զ, էջ 279:
[2] ՀԱԱ, ֆ. 199, ց. 14, գ. 284, թ. 4:
[3] Նույն տեղում, թ. 3:

...Հեղկոմը ստացել է շնորհավորական հեռագիր Թուրքական ճակատի հրամանատար Կարաբեքիրից եւ Թուրքիայի նախագահ Քյազիմ-Բեյից(նկատի ունի Քեմալ Աթաթուրքին-Հ.Գ.)...

Ալեքսանդրապոլից ժամանած ընկերները պատմում են, որ քեմալիստ զորքերի տրամադրվածությունը մեր նկատմամբ չափազանց բարեկամական է: Զորքերը կրում են կարմիր կրծքանշաններ եւ իրենց համարում են կարմիրբանակայիններ...»[1]:

Հայաստանի համար ամենաճակատագրական պահին նրա բախտն ու ապագան վստահվում է Դրոյին: Պատմական տվյալ ժամանակահատվածում՝ մեծապես նաեւ նրա ընդունած վճիռներից, վճռականությունից եւ հաստատակամությունից էր կախված Հայաստանի եւ հայության ճակատագիրը: Նույն օրերին Դրոյի ընդունած ոչ հավասարակշռված ու ծայրահեղ, ժամանակի ոգուց ու հնարավորություններից չբխող վճիռները միանշանակորեն կարող էին վատթարագույն եւ անկանխատեսելի ազդեցություն գործել Հայաստանի եւ համայն հայության ճակատագրի վրա եւ տեղի տալ ծանրագույն հետեւանքների: Այդ պատճառով նա պետք է գործեր առավելապես կշռադատված ու սառնասրտորեն:

Հայ-ռուս փոխհարաբերությունների լուսաբանմանը նվիրված վավերագրերը եւ մասնավորապես Հ. Տերտերյանի, Ս. Վրացյանի, Հ. Տեր-Հակոբյանի (Իրազեկ) վկայությունները ցույց են տալիս, որ Հայաստանի Հանրապետության անարյուն խորհրդայնացման եւ իշխանությունը խաղաղ ճանապարհով բոլշեւիկներին հանձնելու գործում վճռական նշանակություն է ունեցել Հայաստանի զինվորական նախարար Դրոյի դիրքորոշումը:

«... Ինձ համար, - գրում է Հ. Տերտերյանը, - ինչպէս եւ շատ շատերի համար, այս խնդրի լուծման մէջ կարեւորութիւն ուներ երկու զինուորական ուժերի կարծիքը՝ նախկին կաբինետի զօրական մինիստր Ռուբէնի եւ մեր կաբինետի զօրական մինիստր Դրօյի: Երկուսն էլ այն իմաստով արտայայտուեցին, թէ Հայաստանն ի վիճակի չէ դիմադրաւելու բոլշեւիկներին եւ որ պէտք է համաձայնել Երկիրը խորհրդայնացնելու»[2]:

Իսկ Հ. Տեր-Հակոբյանը, նույնպես անդրադառնալով Հանրապետությունը խորհրդայնացնելու հանգամանքների եւ այդ գործում

[1] Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն, փաստաթղթերի, նյութերի ժողովածու), Երեւան, 2000, էջ 385:
[2] ՀՀ ԲԿԱ, ֆ. Ս. Վ., թթ. 2, գ. 5, «Հ. Տերտերեանի յուշերը», էջ 16:

Դրոյի ավանդի լուսաբանմանը, նշում է. «... նա, այդ զանգուածը (նկատի ունի հայկական բանակը -Հ.Գ.) տրամադիր էլ չէր բոլշեւիկների վրայ մի գնդակ անգամ արձակելու - ինչպէս յայտարարում էր Դրօն, կուսակցութեան եւ կառավարութեան ամենամեծ վստահութիւնը վայելող միակ զինուորական ընկերը»[1]:

Ոմանք, մասնավորապես վերոհիշյալ Հ. Տեր-Հակոբյանը (Իրազեկ) Դրոյին մեղադրում էին, որ նա իր հրամանատարության ներքո ունենալով 1200-1500 մարտունակ զինվորներ, կարող էր վճռականորեն պայքարել խորհրդային զորքերի դեմ եւ թույլ չտալ Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումը:

Պատմական տվյալ ժամանակաշրջանը բնութագրող փաստաթղթերի ուսումնասիրությունը հստակորեն մատնանշում է, որ իրոք հայ պետական եւ զինվորական գործիչների շարքում Դրոն, մանավանդ Սուրմալուի ճակատամարտում հաղթանակ նվաճելուց հետո, թերեւս, ամենահեղինակավոր եւ վստահություն վայելող մարդն էր: Հայաստանի եւ հայության համար ճակատագրական ու օրհասական ժամանակամիջոցում, հանգամանքների թելադրանքով, դարձյալ հայտնվելով պատմական իրադարձությունների կիզակետում՝ Դրոն պիտի հանձներ չափազանց պատասխանատու եւ բախտորոշ մի քննություն եւս, այս անգամ արդեն ոչ թե ռազմադաշտում, այլ քաղաքական ասպարեզում:

Պատմությունը կարծես կրկնվում է. դարձյալ նույն իրավիճակն է ստեղծվում, ինչ 1918 թ.: Թուրքական զորքերը, առանց լուրջ դիմադրության եւ առանց կրակոցի գրավելով Կարսն ու Ալեքսանդրապոլը, սպառնում են ներխուժել երկրի խորքերն ու սրի մատնել հայության վերջին բեկորները: Նախորդ ժամանակաշրջանում թուրքական զորքերին դիմակայող հայկական բանակը շատ ավելի կազմակերպված էր, մարտունակ ու նպատակասլաց, իսկ այս անգամ Հայաստանի Հանրապետության բանակը, մատնվելով խուճապի եւ բարոյալքվելով, որեւէ լուրջ մարտական ուժ չէր ներկայացնում: Թուրքական սարսափներին գումարվում են նաեւ հայոց անկախ պետականության վերացմանը նպատակաուղղված Խորհրդային Ռուսաստանի նվաճողական գործողությունները: 1918 թ.՝, ի դեմս հայ ականավոր ազգային գործիչների, որոնց շարքերում էր նաեւ Դրոն, հայությունը կարողացավ իրեն արժանապատվությամբ դրսեւորել թշնամու դեմ մղվող գոտեմարտում. արդյունքում Հայաստանի Հանրապետության ծնունդն էր ու կազմավորումը:

[1] ՀՀ ԲԿԱ, ֆ. Ս. Վ., թղ. 2, գ. 5, «Յակոբ Տէր Յակոբեանի յուշերը», էջ 16:

1920 թ. դժնդակ, քառասային ժամանակահատվածում հայ պետական, զինվորական գործիչների շրջանում անառարկելի հեղինակություն ու կշիռ ունեցող, բազմաթիվ հաղթանակների դափնիներ նվաճած Դրոն մղելու էր դուցեեւ իր համար ամենաանսովոր ու դժվարագույն ճակատամարտը: Ժողովուրդը, իշխանության ներկայացուցիչներն ու զինվորականությունը, մեծ հավատ ու վստահություն ունենալով նրա նկատմամբ, առավելապես հակված էին կատարելու նրա խոսքն ու վճիռները: Դրոն իրավունք չուներ դույզն- ինչ սխալվելու եւ տրվելու անձնական պատվախնդրության, արկածախնդրության, չմտածված ու անհավասարակշիռ քայլերի, որոնք կարող էին Հայաստանի եւ հայության համար նոր ողբերգությունների պատճառ դառնալ:

Այսպես. ենթադրենք, Դրոն մերժում է Լեգրանի առաջարկությունը-վերջնագիրը եւ պատերազմական գործողություններ է սկսում խորհրդային զորքերի դեմ, ինչն անտարակույս հավասարազոր է Խորհրդային Ռուսաստանին պատերազմ հայտարարելու:

Ինչպիսի՞ ուժերի կարող էր ապավինել Դրոն եւ ի՞նչ կստացվեր արդյունքում:

1. Խորհրդայնացման դեմ վճռականորեն տրամադրվածները առաջին հերթին մատնանշում են նրա գլխավորած 1200-1500 զինվորները, որոնք գլխավորապես տեղաբաշխված էին մայրաքաղաքի մերձակայքում եւ պաշտպանում էին Արաքսի գետանցումները: Պիտի նկատել, որ նախ, այդ ուժերը բացարձակապես անբավարար էին խորհրդային զորքերի դեմ արդյունավետ մարտական գործողություններ ծավալելու համար: Բացի դրանից, հայ զինվորը զուտ բարոյահոգեբանական առումով դեռեւս որոշակի համակրանք ուներ ու թշնամաբար տրամադրված չէր ռուսի նկատմամբ:

Սպարապետ Թ. Նազարբեկյանի, կարելի է որակել, անկողմնակալ բնութագրմամբ՝ «...մեր զինվորի գլուխը համայնավարները հաջողությամբ մտցրել էին այն միտքը, թե հյուսիսից գալիս է ամենազոր Ռուսաստանը, Լենինի եւ Տրոցկու բանակը...իսկ ոչ ոք գաղափար անգամ չուներ, թե դա նախկին ցարական բանակը չէր, լավ հագնված, կանոնավոր մարզանք ստացած եւ կուշտ զինվորը, այլ Ռուս ժողովրդի զավակների թափթփուկ, ծարավ, ոտաբոբիկ ու ցնցոտիներով ծածկված բոլշեւիկ Ռուսաստանը...»[1]:

Երկրորդ՝ չէր կարելի լիարժեքորեն հավատ ընծայել թուրքերին ու թողնել անպաշտպան Երեւանի դարպասներն ու Արաքսի գետան-

[1] «Հայրենիք» ամսագիր, 1954, թիւ 7, էջ 28:

ցումները: Այս առումով ուշագրավ է Հայաստանի Հանրապետության վրա հյուսիսից հարձակվող թուրք զինվորին տված սպարապետ Թ. Նազարբեկյանի հետևյալ բնութագիրը. «Իսկ մյուս կողմից՝ եկողը «ընկեր» Քեմալը չէր, այլ արյունառուշտ եւ հայակեր թուրքը, որ գալիս էր թալանելու, առեւանգելու, հոշոտելու, մեր ժողովրդին բռնաբարելու ու լկելու մեր մատաղ սերունդը...»[1]:

Իսկ եթե սպարապետի բնութագրած թուրքերը հանկարծ դրժեին իրենց խոստումն ու չարժվեին դեպի մայրաքաղաք, այդ դեպքում հայերը ի՞նչ ուժերով պիտի կանգնեցնեին նրանց առաջխաղացումը: Իհարկե, չպետք է նաեւ անտեսել այն իրողությունը, որ Խորհրդային Ռուսաստանը ի վերջո ոչ թե Հայաստանի, այլ քեմալական Թուրքիայի դաշնակիցն էր:

2. Համաձայն ժողովականների փոքրամասնության կարծիքի, սխալ է եւ չափազանցված այն տեսակետը, թե հայկական զորքի համակրությունը մեր կողմը չէ եւ մեղադրում են Դրոյին նրա այն պնդման համար, որ «... ինքը զորք չունի բոլշեւիկների դէմ կռուելու համար, որովհետեւ մեր զորքերի համակրությունը բոլշեւիկների կողմն է եւ նրանք գնդակ չեն արձակի բոլշեւիկների վրայ»[2]:

Հարց է ծագում՝ եթե օրեր առաջ հայկական զորքերն առանց դիմադրության թուրքերին էին հանձնում հզոր բերդաքաղաքները՝ Կարսն ու Ալեքսանդրապոլը եւ խուճապի մատնվելով զանգվածաբար լքում մարտադաշտը, ապա ի՞նչ երաշխիք կարող էր լինել, որ նրանք այս անգամ հերոսաբար կկռվեին ընդդեմ Կարմիր բանակի: Մի՞թե իրենց դարավոր թշնամու՝ թուրքերի դեմ չկռվող զորքը կկռվեր ընդդեմ ռուսների: Իսկ մի քանի օրում նոր մարտունակ բանակ կազմավորել բացարձակապես անհնարին էր եւ ցնորք էր այդ մասին հույսեր փայփայելը:

Անկասկած իրավիճակը բոլորովին այլ կլիներ, եթե հայկական զորքերը եւ նրանց հրամանատարները Կարսի ուղղությամբ եւ բերդաքաղաքը պաշտպանելիս իրենց դրսեւորեին նույնպիսի արժանապատվությամբ ու հերոսականությամբ, ինչպիսին էին Դրոյի գլխավորած զորագնդերը եւ նրանց հրամանատարները Սուրմալուի ռազմաճակատում : Ավելին, եթե Դրոյի գլխավորած զորամասերի նման հայկական զորքերը կարողանային հաղթել նաեւ Կարսի ռազմաճակատում, ապա ոչ թե թուրքն ու բոլշեւիկը կլիներին հային ստորացուցիչ պայմաններ թելադրողը, այլ հակառակը՝ հայը

[1] Նույն տեղում:
[2] ՀՀ ԲԿԱ, Ֆ. Ս. Վ., թղ. 2, գ. 5, «Յակոբ Տէր Յակոբեանի յուշերը», էջ 16:

կլիներ դրության տերը եւ ինքը հակառակորդին կթելադրեր իր պայմաններն, ու այսօր արդյունքում կունենայինք ոչ թե մասնատված, թույլ ու փոքրիկ Հայաստան, այլ գուցե Սեւրի դաշնագրով սահմանված Հայաստան: Հաղթանակի դեպքում, եթե նույնիսկ Հայաստանը խորհրդայնացվեր, ապա անկասկած Խորհրդային Հայաստանի սահմաններն ու տարածքն անտարակույս անհամեմատ ավելի մեծ կլինեին:

Վկայակոչենք հենց Դրոյին մեղադրողներից մեկի՝ արդեն բազմիցս հիշատակված, Հայաստանի խորհրդարանի անդամ Հակոբ Տեր-Հակոբյանի վկայությունները:

Նկարագրելով Կարսի ռազմաճակատում տիրող անմխիթար ու անկառավարելի իրավիճակը՝ նա նշում է. «Մերոնք փախչում էին խելակորույս՝ յաճախ իրենց վրայից ձգելով ամեն ինչ, որպէսզի աւելի թեթեւ փախչեն: Ձգում էին ե՛ւ հրացան, ե՛ւ սուին, ե՛ւ փամփուշտ, անգամ գօտի ու կօշիկներ, որովհետեւ անգլիական գօտին ու կօշիկները բաւական ծանր լինելով, արգելք էին լինում արագ փախչելուն»[1]:

Մի վկայություն եւս.

«Սրանք էլ (նկատի ունի խորհրդային զորամասերին - Հ.Գ.),Ֆ-12 թնդանօթներով սկսում են առաջ շարժուիլ ու նուաճումներ կատարել երեք ուղղութեամբ - մէկ թեւը դէպի Բարաւա աւանը, երկրորդը՝ դէպի Ղարաղոյլիի ձորը, իսկ երրորդը՝ դէպի Դիլիջան:

Այդ կէտերում գտնուող հանրապետական զօրքերը, բացի Ղարաղոյլիի ձորից, որեւէ դիմադրութիւն ցոյց չեն տալիս, որովհետեւ բոլշեւիկեան քարոզչութիւնն արդէն բարոյալքել էր նրանց, մանաւանդ եկողը բարեկամ ռուսն էր: Ղարաղոյլիի ձորում միայն դիմադրեցին բաւականին երկար, բայց նորից զէնքերը վայր դրեցին»[2]:

Կարելի է վկայակոչել համանման բազմաթիվ փաստեր:

Ընթերցելով Հ. Տեր-Հակոբյանի արձանագրած փաստերը՝ կարելի է միայն զարմանալ, որ նման վկայությունների հեղինակը կարող է ապավինել իր իսկ նկարագրությամբ խուճապի մատնված եւ հուսալքության ու դասալքության գիրկն ընկած բանակին եւ առաջարկել եղած թույլ ու անկայուն մարտական ուժերն ուղղել ընդդեմ Խորհրդային Ռուսաստանի զորամասերի:

Ծանոթանալով տվյալ ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած առավել նշանակալի իրադարձություն-

[1] Իրազեկ Յ., Մօտիկ անցեալից, էջ 81:
[2] Նույն տեղում:

ներին վերաբերվող փաստաթղթերին ու հուշագրություններին՝ կարելի է պնդել, որ Դրոյին մեղադրողները առաջնորդվում էին առավելապես հակաբոլշևիկյան տրամադրվածությամբ եւ իշխանությունը կորցնելու ցավով, քան իրական կացության անաչառ եւ սթափ վերլուծությամբ ու գնահատմամբ, չնայած հանուն ճշմարտության պիտի շեշտել, որ իրոք չափազանց դժվար է համակերպվել Հայաստանի Հանրապետության անկախությունը կորցնելու իրողությանն ու գաղափարին: Իսկ մի՞թե հայոց անկախ պետականության կորուստը ավելի ծանր չէր Դրոյի եւ նրա համախոհների համար: Մի՞թե կյանքի մեծագույն մասն անհամար կռիվների հորձանուտում անցկացրած եւ իր կյանքն անգամ հանուն հայրենիքի եւ ազգի ազատագրությանը զոհաբերելու պատրաստակամությունն անվերապահորեն ապացուցած Դրոն ընդունակ էր եւ ի զորու, առանց կռվի ու դիմադրության, օտար ուժերի տնօրինությանը հանձնել իրենց տքնաջան եւ հերոսական պայքարի հետեւանքով ձեռք բերած գլխավոր նվաճումը՝ Հայաստանի Հանրապետությունը: Եթե Դրոն եւ իր զինակիցները պատմական տվյալ ժամանակահատվածում համաձայնվում են Հայաստանի ապագան հոժարակամ հանձնել բոլշեւիկներին, ապա անտարակույս նման պատասխանատու քայլի համար ունեցել են որոշակի լուրջ եւ հիմնավոր պատճառներ:

ա. Ամենակարեւորը՝ բանակն այլեւս գոյություն չուներ:

բ. Թուրքական զորքերը Ալեքսանդրապոլը գրավելուց հետո հասել էին Արաքսի կայարան եւ գտնվում էին մայրաքաղաքից ընդամենը 7-8 կմ հեռավորության վրա: Ռազմաճակատում թշնամուն դիմակայող հայկական զորքերը դասալքության հետեւանքով չափազանց թույլ էին եւ անկազմակերպ: Եթե թուրքերը զարգացնեին հարձակումը, ապա չէր բացառվում, որ կարճատեւ ժամանակահատվածում ներխուժեին Երեւան:

Կարմիր բանակի զորամասերը մուտք էին գործել Արցախ, Զանգեզուր, Նախիջեւան, իսկ այժմ արդեն Ղազախ-Իջեւան եւ սպառնում էին ներխուժել հանրապետության խորքերը: Այդ ուղղությամբ տեղաբաշխված հայկական զորքերը առանց դիմադրության հանձնվում էին բոլշեւիկների ողորմածությանը:

Ռազմաճակատներում, բացառությամբ Արաքս - Արագած ուղղությամբ մարտնչող Դրոյի գլխավորած զորախմբի եւ Զանգեզուրում խորհրդային զորքերին դիմակայող Գարեգին Նժդեհի զանգեզուրյան մարտական ուժերի, փաստորեն մարտունակ զորամասեր արդեն չկային: Հարց է ծագում. ինչպիսի՞ ուժերի զորակցությանը

կարող էր ապավինել հանրապետության զինվորական նախարար Դրոն, եթե մերժեր Լեգրանի վերջնագիրն ու սկսեր պատերազմական գործողությունները խորհրդային զորքերի դեմ:

Եթե Դրոն, այնուամենայնիվ, համաձայնվեր փոքրամասնության առաջարկությանը եւ իրեն հավատարիմ ու մարտունակ զորամասի գլուխն անցած կարողանար պարտության մատնել հանրապետության տարածքը ներխուժած խորհրդային զորքերին եւ նրանց դուրս վանել Հայաստանից, որը խիստ կասկածելի էր, ապա դա արդյո՞ք կտար որեւէ հուսալի երաշխիք, որ բոլշեւիկները կհամակերպվեին կատարված իրողությանն ու կհրաժարվեին Հայաստանը խորհրդայնացնելու մտադրությունից: Ժամանակը հստակորեն ապացուցում է, որ Խորհրդային Ռուսաստանը ավելի քան հաստատակամորեն էր տրամադրված նվաճելու անդրկովկասյան հանրապետությունները եւ ոչ մի պարագայում մտադիր չէր հրաժարվելու իր մտադրությունից: Այդ դեպքում Հայաստանը կներքաշվեր Խորհրդային Ռուսաստանի դեմ պատերազմի մեջ, եւ դեռ հարց էր, թե արդյոք խարխլված, չափազանց թույլ տնտեսություն, բազմահազար գաղթականություն ունեցող ու տարածքների մի մասը թուրքերին զիջած Հայաստանի Հանրապետությունը կկարողանար դիմակայել խորհրդային հսկա տերությանը եւ «ողջ-առողջ» ազատվել նրա ճանկերից: Խորհրդային Ռուսաստանի նկատմամբ հարաբերությունները մշակելիս անպայմանորեն անհրաժեշտ էր հաշվի առնել այդ հանգամանքը եւս:

Ոմանք հակված են կարծելու, որ Հայաստանի խորհրդայնացման դեպքում պակաս դեր չի խաղացել Դրոյի ռուսական կողմնորոշումը, նրա մեծ հավատն ու համակրանքը Ռուսաստանի նկատմամբ: Չպետք է մոռանալ, որ երբ անհրաժեշտ էր, այդ նույն Դրոն էր, որն ահաբեկում էր ռուս գեներալ - նահանգապետերին ու ոստիկանապետերին: Իսկ հայության համար բախտորոշ ժամանակաշրջանում նրա ռուսական կողմնորոշումը սոսկ կույր հավատի եւ զգացմունքի արդյունք չէր, այն անպայմանորեն պայմանավորված էր որոշակի օբյեկտիվ նախադրյալներով ու գործոններով: Նախ եւ առաջ Դրոյի ռուսական կողմնորոշումը պայմանավորված էր ժամանակաշրջանի եւ հայության իրական կացության յուրահատկությամբ: Հայտնվելով Խորհրդային Ռուսաստանի եւ Քեմալական Թուրքիայի ձեռնարկած միաժամանակյա գործողությունների խաչմերուկում՝ Հայաստանի զինվորական նախարարը պետք է սառնասրտորեն գնահատեր ստեղծված իրավիճակը եւ, չտրվելով ավելորդ ու չպատճառաբանված զգացումներին, ճիշտ ընտրություն կատարեր:

«Ռուսաստանը,- վկայում է Ս. Վրացյանը,- նա ըմբռնում էր երկու իմաստով, նախ՝ իբրեւ Հայաստանի մօտիկ մեծ պետութիւն եւ երկրորդ՝ որպէս ժողովուրդ: Նրա տրամաբանութիւնը պարզ էր եւ, եթէ ուզում եք, տարրական. մէկ կողմից մահմեդական թրքութիւն, որ պատմականօրէն թշնամի էր քրիստոնէութեան ու հայութեան, միւս կողմից ծովածաւալ քրիստոնեայ կայսրութիւն, որ պատմականօրէն թշնամի էր մահմեդականութեան»[1]:

Բնական է, որ Ռուսաստան - Թուրքիա երկընտրանքում նա անվերապահորեն պետք է նախապատվությունը տար քրիստոնյա Ռուսաստանին:

1.Դրոյի ռուսական կողմնորոշումը պայմանավորված էր Ռուսաստանի նկատմամբ հայության դրսեւորած վերաբերմունքով:

«Մեր ժողովրդի համոզմամբ տաճիկը իր դարաւոր թշնամին է, իրեն բնաջնջողը, հետեւապէս իր եւ նրա մէջ խաղաղ համակցութեան որեւէ գրաւական լինել չի կարող: Մասնաւորապէս մեր արեւմտահայ հատուածը, որ դարերի փորձ ունի եւ շատ լաւ է ճանաչում տաճիկներին...

...փոխ դէպի ռուսները, այս դէպքում դէպի բոլշեւիկները - ընդհակառակը: Մեր բովանդակ ժողովուրդը համակրանքի մի խոր զգացում ունի իր սրտում:

Ներկայ դէպքում նա անպայմանօրէն հաւատացած էր, որ ռուսները (բոլշեւիկները) ոչ միայն իրենց չեն կոտորի, այլեւ տիրելով Հայաստանին, կքշեն տաճիկներին»[2]:

2. Դրոն իրոք հավատում էր ռուսներին: Գուցեեւ նրա կողմից մի փոքր միամտություն էր, բայց նա անկեղծորեն հավատում էր ռուսներին, անկախ նրանից, թե նրանք ինչ գույնի էին՝ կարմիր, թե սպիտակ:

«... Նա,- վկայում է Իրազեկը,- հաւատացած էր, որ ռուսական զօրքերի գլուխ անցած ջարդելու է տաճիկներին եւ քշելու Հայաստանից: Դեռ աւելին, նա ուղղակի յայտարարում էր, թէ փրկութիւնը միմիայն Ռուսաստանին ապաւինելու մէջ է...»[3]:

Պետք է մոռանալ, որ որպես կամավորական զորախմբի հրամանատար ռուսների հետ կողք- կողքի բազմաթիվ անգամ մարտնչել էր թուրքերի դեմ եւ մեկ անգամ չէ, որ ակնատես է եղել ռուս զինվորի խիզախությանն ու հայասեր վերաբերմունքին: Մինչեւ իր

[1] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Զ, էջ 278:
[2] Նույն տեղում:
[3] ՀՀ ԲԿԱ, Ֆ. Ս. Վ., թղ. 2, գ. 5, «Յակոբ Տէր Յակոբեանի յուշերը», էջ 16:

մղած վերջին կռիվները, նրա անմիջական ընկերակցությամբ ու հրամանատարությամբ հայկական բանակում արժանապատվորեն ծառայում էին բազմաթիվ ռուս սպաներ, որոնցից շատերը՝ գնդապետներ Կորոլկովը, Պերեկրյոստովը, Սիլինը եւ ուրիշներ, իրենց արժանի ավանդը ներդրեցին Հայաստանի Հանրապետության կայացման գործում:

Պատմական տվյալ ժամանակահատվածում Դրոյի զգուշավոր գործելակերպը եւ հատկապես՝ Խորհրդային Ռուսաստանի կողմից Հայաստանին ներկայացված պահանջների հանդեպ դրսեւորած հանդուրժողականությունն ու զիջողականությունը պայմանավորված չէին սոսկ անձնական մղումներով ու ռուսական կողմնորոշմամբ: Նրա հայրենասիրության եւ մարտերում ցուցաբերած խիզախության մասին, որի վառ ու խոսուն վկան եւ ապացույցը նրա մրրկածուփ կենսագրությունն է, չեն կարողացել չխոստովանել նույնիսկ նրան չսիրողներն ու չընդունողները: Դրոյին մտատանջողը եւ նրա գործունեությունն ու կատարած քայլերը, պայմանավորող եւ առաջ մղող ուժը իր հարազատ ազգին ու հայրենիքին բաժին ընկած դաժան ճակատագիրն է:

Մայիսի 20-ին Արցախում Սահակ Տեր-Գաբրիելյանի հետ կայացած բանակցությունների ընթացքում, նույն հանդիպման մասնակից, 281-րդ հետեւակային գնդի հրամանատարի օգնական Պարանկինի՝ հրամանատարությանը ուղղված զեկուցագրում նշվում է. «Դրոն վախենում է, որ հանկարծ համաշխարհային հեղափոխությունը երկրի երեսից չջնջի հայերին»[1]:

Իսկ այդ մտավախության իրականացումը Հայաստանի Հանրապետության իշխանությունների եւ հատկապես Դրոյի չկշռադատված ու չմտածված գործողությունների եւ քայլերի դեպքում, բնավ բացառված չէր:Համաձայն արտակարգ խորհրդաժողովի եւ Հանրապետության նախարարների խորհրդի որոշման՝ իշխանության արտակարգ իրավունքներ ստանձնած Դրոն, Հ. Տերտերյանի ընկերակցությամբ պետք է շարունակեր եւ ավարտեր Լեգրանի հետ ընթացող բանակցությունները:

«Բանակցությունների համար, - գրում է Հ.Տերտերյանը, - մեզ տուել էին հետեւեալ հիմունքները.

1) Հայաստանը պէտք է ճանաչուի եւ յայտարարուի իբր անկախ սոցիալիստական խորհրդային հանրապետութիւն:

2) Անվիճելիօրեն Հայաստանի անբաժան մասը պիտի համարուեն Երեւանի նահանգն ամբողջովին, Կարսի շրջանի մի մասը, Զանգեզուրը, Արցախ գաւառից այն մասը, որ մեզ էր անցնում բոլշեւիկների

[1] Нагорныи Карабах в 1918-1923 гг., ст. 468-469:

հետ նոյն 1920 թ. օգոստոսի 10-ին ունեցած համաձայնութեամբ, Թիֆլիսի նահանգի այն մասը, որ մեր տիրապետութեան տակ էր մինչեւ 1920 թ. սեպտեմբերի 28-ը, այսինքն մինչեւ հայ-տաճկական պատերազմի սկիզբը: Սա մեր նուազագոյն հողային պահանջն էր:

3) Որ ո՛չ մի սոցիալիստական քաղաքական կուսակցութիւն պէտք չէ հալածանքի ենթարկուի, ինչպէս եւ չպէտք է հալածուեն նրանք, որ մասնակցել են բոլշեւիկեան շարժման ճնշմանը, 1920 թ. մայիս ամսին»[1]:

Դեկտեմբերի 1-ի երեկոյան Դրոն եւ Հ. Տերտերյանը, ստանալով հանրապետության կառավարության որոշումը, ներկայանում են Լեգրանին եւ հայտնում հետեւյալը.

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը համաձայն է երկրի խորհրդայնացմանը, եւ միաժամանակ նրան են ներկայացնում կառավարության կողմից առաջադրված սկզբունքները, որոնց հիման վրա պետք է իրականացվեր հանրապետության խորհրդայնացումը:

2. Հայաստանի հեղափոխական կոմիտեն (հեղկոմ) պետք է կազմավորվի կոալիցիայի հիմունքով եւ նրա կազմում պետք է ընդգրկվեն նաեւ Հ.Յ.Դաշնակցության ներկայացուցիչները[2]:

Ծանոթանալով Դրոյի եւ Հ. Տերտերյանի միջոցով ներկայացված հանրապետության նախարարների խորհրդի կողմից մշակված սկզբունքներին՝ Լեգրանը նույնպես ներկայացնում է իրենց տեսակետներն ու հայտնում իր անհամաձայնությունը որոշ կետերի վերաբերյալ: Օրինակ, նա հավանություն չի տալիս կոալիցիոն հեղափոխական կոմիտե կազմավորելու եւ նրանում Հ.Յ.Դաշնակցության մասնակցության սկզբունքին: Իհարկե, պետք չէր սպասել, որ Լեգրանը այս հարցի կապակցությամբ կարող էր որեւէ դրական վերաբերմունք ունենալ, քանզի բոլշեւիկները երբեք պատրաստակամ չեն եղել մեկ այլ որեւէ քաղաքական կուսակցության հետ կիսել իշխանությունը:

Այս պարագայում եւս. «Առարկելով կոալիցիային՝ Լեգրանը կողմնակից էր անհատական մասնակցության՝ յատկապէս մատնանշելով ինձ (Հ. Տերտերյան - Հ.Գ.) եւ Դրոյին»[3]:

Ուսումնասիրելով Դրոյի եւ Համբարձում Տերտերյանի ներկայացրած դրույթները՝ Լեգրանը նրանց ուշադրությանն է ներկայացնում յոթ կետից բաղկացած իրենց կազմած հաշտության համաձայնագրի նախագիծը: Ծանոթանալով Լեգրանի ներկայացրած նախագծին՝ Դրոն եւ Համբարձում Տերտերյանը հիմնականում հավանություն են տալիս համաձայնագրի դրույթներին, բայց առաջարկում են փոխել նախագծի 5-րդ կետը, ըստ որի «Դաշնակցության կուսակցության անդամները պէտք չէ ենթարկուէին հալածանքի, իսկ Խորհրդ. Ռուսաստանի եւ կոմունիստական կուսակցության դէմ պայքարողներին խոստացում էր կեանքի ապահովութիւն: Ես եւ Դրօն ուժգնօրէն բողոքեցինք այդ կէտի դէմ եւ առաջարկեցինք երկու ուղղում. առաջին՝ որ հալածանքի չեն ենթարկուելու ո՛չ միայն դաշնակցականները, այլեւ բոլոր սոցիալիստական կուսակցութեանց պատկանողները, եւ երկրորդ՝ որ հալածանքի չեն ենթարկւում նաեւ նրանք, որ մասնակցել են բոլշեւիկների դէմ վարած կռուին»[1]:

Այս կետի վերաբերյալ եւս համապատասխան համաձայնություն կայացնելով՝ Դրոն եւ Հ. Տերտերյանը Լեգրանի ներկայացրած համաձայնագիրը ներկայացնում են կառավարության եւ Հ.Յ.Դաշնակցության կողմից գումարված համատեղ նիստի քննարկմանը:

«Եւ ահա, - վերհիշում է Հ. Տեր-Հակոբյանը, - դեկտեմբերի 1-ի երեկոյեան (լոյս 2 դեկտեմբեր) ժողովի է հաւաքւում պառլամենտի դաշնակցական հատուածը, որը փաստօրէն երկրի բարձրագոյն իշխանութիւնն էր - լուծում տալու համար իր առջեւ դրուած ճակատագրական հարցին: Նիստը դռնբաց է, որին ներկայ են ո՛չ միայն դաշնակցական ֆրակցիայի ու կառավարութեան անդամները, այլեւ բազմաթիւ կողմնակի անձինք, գուցէ եւ մեծամասնականները:

...Այստեղ էլ նոյն տեսակէտներն են արտայայտւում, ինչ որ ժողովրդի մէջ: Այստեղ էլ ձայների ջախջախիչ մեծամասնութիւնը յօգուտ Խորհրդային Ռուսաստանի է խօսում եւ որոշում է իշխանութիւնը առանց կռուի յանձնել մեծամասնականներին ու հեռանալ»[2]:

Նիստը հավանություն է տալիս Լեգրանի ներկայացրած նախագծին եւ լիազորում Դրոյին եւ Հ. Տերտերյանին Խ. Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչների հետ ստորագրելու համաձայնագիրը:

Դեկտեմբերի 2-ին, ժամը 13-ին հանրապետության արտաքին գործոց նախարարության շենքում սկսվում են բանակցությունները Խորհրդային Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Լեգրանի, նրան ընկերակցող գեներալ Բոբրիշչեւի եւ Հայաստանի կառավարության լիազոր ներկայացուցիչներ Դրոյի եւ Հ. Տերտերյանի

[1] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Զ, «Հ. Տերտերեանի յուշերը», էջ 279:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 280:

[1] Նույն տեղում:
[2] Իրազեկ Յ., նշվ. աշխ., էջ 87:

միջեւ: Համաձայնագրի նախագիծը նրանց կողմից արդեն ուսումնասիրվել ու քննարկվել էր, եւ այդ պատճառով կողմերը առանձնակի հարցերի վերաբերյալ մի փոքր վիճաբանելով՝ գալիս են ընդհանուր համաձայնության ու նույն օրը՝ դեկտեմբերի 2-ին, ստորագրվում է հետեւյալ համաձայնագիրը. ՌԽՍՀ լիազոր ներկայացուցիչ Լեգրանի եւ Հայաստանի Հանրապետության լիազոր ներկայացուցիչներ Դրոյի, Հ. Տերտերյանի կողմից ստորագրվում է հետեւյալ համաձայնագիրը.

1. Հայաստանը յայտարարւում է անկախ սոցիալիստական խորհրդային հանրապետութիւն:

2. Մինչեւ Հայաստանի խորհուրդների համագումարի հրաւիրումը կազմւում է ժամանակաւոր Ռազմա - Յեղափոխական կոմիտէ, որին կանցնի բովանդակ իշխանութիւնը Հայաստանում:

3. ...Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան հողերի մէջ անվիճելի կերպով մտնում են Երեւանի նահանգն իր բոլոր գաւառներով, Կարսի նահանգի մի մասը, որը զինուորական տեսակէտից կապահովէ երկաթուղագծի տիրապետութիւնը՝ Ջաջուռ կայարանից Արաքս կայարանը, Գանձակ նահանգի Զանգեզուր գաւառը եւ Ղազախ գաւառի մի մասը, օգոստոսի 10-ի համաձայնութեան սահմաններում եւ Թիֆլիսի նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի տիրապետութեան տակ էին գտնւում մինչեւ 1920 թ. սեպ. 28-ը:

4. Հայկական բանակի հրամանատարութիւնը չի ենթարկւում պատասխանատուութեան...

5. Դաշնակցութեան եւ ուրիշ սոցիալիստական կուսակցութիւնների անդամները ոչ մի հալածանքի չպիտի ենթարկուեն...

6. Ռազմա - Յեղափոխական կոմիտէի մէջ մտնում են հինգ անդամներ կոմունիստական կուսակցութեան կողմից նշանակուած եւ երկու անդամ ձախ - դաշնակցականների խմբակից՝ համաձայնելով կոմունիստական կուսակցութեան հետ:

7. Ռուսաստանի Խորհրդային կառավարութիւնը միջոցներ է ձեռք առնում անմիջապէս կենտրոնացնելու Հայաստանի սոցիալիստական խորհրդային հանրապետութեան անհրաժեշտ զինուորական ուժեր:

8. Սոյն համաձայնագիրը ստորագրելուց յետոյ, Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը քաշւում է իշխանութիւնից: Իշխանութիւնը ժամանակաւոր կերպով, մինչեւ Յեղափոխական կոմիտեի գալը, անցնում է զօրաբանակի հրամանատարութեան, որի գլուխն է կանգնում Դրօն: ՌՍՖՍՀ-ի կողմից Հայաստանի զօրահրամանատարութեան կից կոմիսար է նշանակւում ընկ. Սիլինը:

ՌՍՖՍՀ-ի լիազոր ներկայացուցիչ՝ Լեգրան
Հայաստանի Հանրապետության կառավարության
լիազորությամբ՝ Դրո, Տերտերեան»[1]:

Յուրովի գնահատելով Հայաստանի Հանրապետության խորհրդայնացման իրողությունը՝ Հովհ. Քաջազնունին նշում է. «Բոլշեւիկները մտան Հայաստան առանց որեւէ ընդդիմության հանդիպելու: Մեր կուսակցության որոշումն էր սա:

Երկու պատճառ ունէինք այդպես վարւելու: Մէկ որ չէինք կարող ընդդիմադրել, եթէ նոյնիսկ ցանկանայինք - պարտւած էինք, ուժասպառ, երկրորդ, յոյս ունէինք թէ Խորհրդային իշխանութիւնը՝ յենւած Ռուսաստանի վրայ՝ թերեւս կարողանայ կարգաւորել մի քիչ պետական կեանք - մի բան, որ մենք ինքներս, մենակ մնացած, չէինք կարողացել անել ու պարզ էր արդէն՝ չպիտի կարողանայինք այլեւս:Մեր ցանկութիւնն էր. թողնել որ բոլշեւիկները անարգել կառավարեն երկիրը. մնալ լոյալ նոր իշխանության հանդէպ. գործակցել նրա շինարար աշխատանքներին»[2]:

Այդպիսով, կենսագործվեց Հայաստանի Հանրապետությունը խորհրդայնացման ճանապարհով նվաճելու վաղօրոք ծրագրված ու մշակված քաղաքականությունը:

Կարճատեւ, ընդամենը երկուսուկես տարվա կենսագրություն ունեցավ հայ ժողովրդի արյունով, տառապանքով եւ բազմամյա պայքարով նվաճած Հայաստանի Հանրապետությունը: Քեմալական Թուրքիայի զինու զորությամբ եւ «համաշխարհային հեղափոխության» ու ինտերնացիոնալիզմի սայլին լծված հայ բոլշեւիկների համագործակցությամբ Խորհրդային Ռուսաստանը բռնազավթեց Հայաստանի Հանրապետությունը եւ նրա տարածքը մի քանի ամիս անց՝ 1921 թ. մարտին «եղբայրաբար» եւ հավասարության սկզբունքով բաժանեց իր եւ Թուրքիայի միջեւ:

Պատմական երեւույթներն ու իրադարձություններն իրենց յուրահատկությամբ, հետաքրքրությամբ եւ ուսանելիությամբ շատ հաճախ նաեւ անկանխատեսելի են ու զարմանալի: Հայ ազգային - ազատագրական պայքարի ականավոր գործիչ, Հայաստանի Հանրապետության զինվորական նախարար Դրոն փաստորեն դառնում է Խորհրդային Հայաստանի զինված ուժերի առաջին գլխավոր հրամանատարն ու ժամանակավոր իշխանության ղեկավարը միջեւ խորհրդային իշխանության մարմինների հաստատումը:

---

[1] «Հայրենիք» ամսագիր, 1954, թիւ 5, էջ 11:
[2] Քաջազնունի Հովհ., նշվ. աշխ., էջ 36:

Փոքր-ինչ առաջ անցնելով նշենք, որ ստանձնելով Խորհրդային Հայաստանի զինված ուժերի հրամանատարությունը՝ Դրոն կոմիսար Սիլինի հետ համատեղ, դեկտեմբերի 2-ից սկսած ստորագրում է Խորհրդային Հայաստանի նոր կազմավորվող բանակին վերաբերող հրամաններն ու որոշումները: Հետաքրքիր է. Հայաստանի Հանրապետության զինվորական վերջին նախարարը դառնում է Խորհրդային Հայաստանի բանակի առաջին հրամանատարը, եւ նրա հրամանով խորհրդային բանակում իրականացվում են առաջին կառուցվածքային փոփոխությունները: Ըստ նրա եւ Սիլինի համատեղ ստորագրած հրամանի՝ Խորհրդային Հայաստանի նոր կազմավորվող բանակի կառուցվածքում կատարվում են մի շարք փոփոխություններ.

1. Վերանում են նախկին սպայական աստիճանները, բայց հրամանատարները մնում էին իրենց զբաղեցրած պաշտոններում:

2. Բացի Կարմիր Դրոշի շքանշանից, որը համարվում էր զինվորական բարձրագույն պարգեւը, արգելվում էր որեւէ շքանշան կրելը:

3. Զինվորական մասերում նշանակվում էին կոմիսարներ: Զորամասերի հրամանատարների հրամանները կարող էին գործնականում կիրառվել միայն այն դեպքում, եթե ստորագրված լինեին, այսինքն՝ հաստատվեին կոմիսարների կողմից:

4. «... բոլոր զորամասերը մնում էին իրենց տեղերում եւ առանց համապատասխան կարգադրության չէին կարող ուրիշ վայրեր տեղափոխվել»[1]:

Մինչեւ Հայաստանում բոլշեւիկների իշխանության իրական հաստատումը՝ Դրոյին հանձնարարվում է Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչների հետ ընդհանուր համաձայնություն կայացնել երեք առաջնահերթ խնդիրների վերաբերյալ.

«Առաջին՝ որ երկրի կառավարության մեջ բոլշեւիկների հետ միասին տեղ ունենան նաեւ ոչ - բոլշեւիկ տարրերը, որպէսզի այդպիսով առաջն առնուէր բոլշեւիկեան սովորական բռնութիւնների ու հալածանքների...

Երկրորդ՝ որ պաշտպանուեն հայ ժողովրդի գէթ ամենակենսական շահերը, որոնց շարքում առաջին հերթին Հայաստանի անկախութիւնը:

Երրորդ՝ որ հեռանային տաճիկները Հայաստանից եւ երկրի սահմաններն ընդարձակուէին գոնէ այն չափով, որ ժողովուրդը չխեղդուէր սահմանների նեղութիւնից եւ սակաւահողութիւնից»[2]:

Բոլշեւիկների հետ հարաբերությունները կարգավորելուց բացի, մնացել էր լուծելու եւս մի կարեւորագույն խնդիր: Ալեքսանդրապոլում հանրապետության կառավարության եւ թուրքական պատվիրակությունների միջեւ ընթացող բանակցությունները փոքրիկ ընդհատումներով շարունակվում էին: Չնայած Ա. Խատիսյանը, ինչպես արդեն նշվել է, Հայաստանի կառավարությունից ստացել էր համաձայնագիրը ստորագրելու լիազորությունը սակայն բանակցող կողմերը տակավին չհանգելով ընդհանուր համաձայնության, դեռեւս չէին կնքել հաշտության պայմանագիրը: Ալեքսանդրապոլում հայ պատվիրակությունը սպասում էր նոր հրահանգների: Թուրքիայի առաջադրած պայմաններն ավելի քան ծանր էին, եւ բացառված չէր, որ երկրում հաստատված նոր իշխանությունը բանակցությունների եւ կնքվելիք համաձայնագրերի վերաբերյալ դրսեւորեր բոլորովին այլ վերաբերմունք: Այստեղ, իրոք, վճռական է դառնում Դրոյի դերը. նա Սիլինի հետ արդեն ներկայացնում էր նոր իշխանությունը եւ կարող էր արգելք հանդիսանալ դաշնագրի ստորագրմանը:

Ի՞նչ ուժերի զորակցությանը կարող էր ապավինել Դրոն, եթե արգելեր հայ պատվիրակությանը չընդունելու եւ չստորագրելու թուրքերի առաջադրած պայմաններն ու հաշտության պայմանագիրը: Հայաստանի Հանրապետության համար ամենաօրհասական պահին նրան լքած եւ որեւէ ձեւով անգամ դույզն- ինչ օգնության ձեռք մեկնելու պատրաստակամություն չդրսեւորած դաշնակից տերությունների աջակցությա՞նը: Իհարկե, ոչ:

Բանակի՞, դարձյալ ոչ:

«Պատերազմը, - գրում է Հ. Քաջազնունին, - վերջացաւ մեր կատարեալ պարտութիւնով: Մեր բանակը, որ կուշտ էր, լաւ զինուած եւ լաւ հագնուած, չկուեց. զօրքերը շարունակ նահանջում էին կամ դիրքերը լքում, զէնքերը թափում ու ցրւում գիւղերը:

...Բանակի դաստիարակութիւնը, ռազմական ոգին, կուռ կազմակերպութիւնն ու կարգապահութիւնը - ուրեմն եւ ընդդիմադրական ոյժը - թուլացած էին ծայր աստիճանի ու դա անակնկալ էր կառավարութեան համար, կառավարութիւնը եւ ինքը՝ զինուորական մինիստրը, չէին ճանաչում բանակը»[1]:

Խորհրդային Ռուսաստանի զինական եւ առավել եւս դիվանագիտական աջակցությունը տվյալ պահին բացառվում էր:

Օրինակ, Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Բուդո Մդիվանուն, որն Ալեքսանդրապոլում էր գտնվում Հայաստանին իր օգնելու եւ բանակցող կողմերի միջեւ միջնորդ լինելու առաքելու-

---

[1] Սիմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ. էջ 351:
[2] Իրազեկ Յ., նշվ. աշխ., էջ 87:

[1] Քաջազնունի Հովհ., նշվ. աշխ., էջ 34:

թյամբ, թուրքերը որեւէ ուշադրության չէին արժանացնում եւ նույնիսկ չէին թույլատրում ներկա գտնվել բանակցություններին:

«Այս առթիւ, - նշում է Ալ. Խատիսյանը, - հարկ կը համարեմ վճռականապէս յայտարարել, թէ ան աւելի շատ խանգարեց մեզ, քան թէ օգնեց: Խանգարեց այն բանով, որ ինչպէս Ալեքսանդրապոլի մէջ, այնպէս եւ Կարս կը կազմէր միտինգներ, ճառեր կ'արտասաներ մեր դէմ, կը պախարակէր Հայաստանի կառավարութիւնը եւ պատուիրակութիւնը, կը քարոզէր բոլշեւիկեան ծրագիրներ եւ այսպէսով ցոյց կու տար թուրքերուն, թէ ան իրօք մեր դէմ է եւ ոչ թէ մեզ հետ»[1]:

Թուրքերի կողմից արհամարհված եւ ուշադրության չարժանացած Մդիվանին, անգամ այս պայմաններում, անթաքույց վերաբերմունքով արտահայտելով իր հակահայ տրամադրվածությունը՝ ասել է. «... ռուսական եւ թրքական կապերն այնքան սերտ են, որ եթէ անհրաժեշտ լինի դրա համար զոհաբերել ամբողջ Հայաստանը, մենք կանենք այդ»[2]:

Ի դեպ, Մդիվանին առաջին անգամ չէ, որ դրսեւորում էր իր հակահայ տրամադրվածությունը: Այդ ամենը Հայաստանի կառավարությանը, Ալեքսանդրապոլի հայկական պատվիրակությանը եւ, իհարկե, նոր իշխանությունը ներկայացնող Դրոյին հայտնի էին, ու նաեւ այդ պատճառով հավատ չընծայելով Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչներին՝ աշխատում էին հնարավոր, անգամ ծայրագույն միջոցները ի սպաս դնելով, կանխել ժողովրդին սպառնացող աղետը:

«Վաղ առաւօտեան, - գրում է Ալ. Խատիսյանը, - դեկտեմբերի 2-ին մենք իմացանք, որ բոլշեւիկեան հրամանատարը Քարւանսարայէն ուղարկած է Կարաբեքիր փաշային հետեւեալ շնորհաւորական հեռագիրը. «Ռուսաստանի պրոլետարիատից ողջոյն թուրքական պրոլետարիատին»:

Մենք կը սպասենք հեռագրի, Հայաստանի նոր կառաւարութենէն»[3]:

Ի՞նչ պետք է արվեր, ո՞րն էր ելքը: Նկարագրելով ու վերլուծելով այդ ճգնաժամային ժամանակաշրջանում Հայաստանում տեղի ունեցող պատմական իրադարձությունների ընթացքն ու նրանում Դրոյի ներդրած ավանդը՝ Ս. Վրացյանը նշում է. «Ուրիշ ելք չկար, կամ պէտք է ընդունուէր Քեազիմ Կարաբէքիրի վերջնագիրը, կամ

[1] Խատիսեան Ալ., նշվ. աշխ., էջ 302:
[2] ՀՀ ԲԿԱ, թթ. 121, գ. 98, «Ալեքսանդրապոլի բանակցութիւնները», էջ 2:
[3] Խատիսեան Ալ. նշվ. աշխ., էջ 310:

Երեւանն էլ պիտի գրաւուէր թուրքերի կողմից. կարմիր բանակը հեռու էր եւ անզօր թուրքերի յառաջխաղացումը արգելելու:

...Դրօն գիտակցում էր, որ եթէ ասէր «ստորագրեցէք»՝ պատասխանատու պիտի մնար սովետական կառավարութեան առջեւ, եթէ արգելէր, թուրքերը անմիջապէս պիտի խախտէին զինադադարը եւ Մարգարայի կամուրջով շարժուէին դէպի Երեւան: Ռուսները անզօր էին նրանց առաջն առնելու»[1]:

Դրոն, բազմակողմանիորեն քննելով ու գնահատելով ստեղծված կացությունը եւ վճռականորեն իր վրա վերցնելով ահռելի պատասխանատվությունը, կայացնում է Հայաստանի ու հայության համար, հիրավի, պատմական նշանակություն ունեցող վճիռ, որի համար հետագայում շատ-շատերը միտումնավոր եւ ոչ միտումնավոր կերպով պիտի բազմիցս քննադատեին ու դատապարտեին նրան ու նրա կայացրած որոշումը:

«Երեկոյեան, - գրում է Ալ. Խատիսյանը, - ժամը 6-ին ինձ հրաւիրեց ուղղակի հեռագրաթելի մօտ Դրօն, որը ըսաւ հետեւեալը.

- Յեղափոխական կառավարութեան անունից յայտնում եմ Ձեզ, որ Դուք ազատ էք ստորագրել դաշնագիրը կամ ոչ:

Լաւ գիտակցելով ստորագրելու կամ մերժելու ամբողջ պատասխանատուութիւնը, ես երկրորդ անգամ հարցուցի.

- Արդէօք կառավարութիւնը ստորագրելո՞ւ կողմն է, թէ մերժելու: Մենք սպասում ենք որոշ եւ պարզ հրահանգների:

Դրօն պատասխանեց.

- Ես Ձեզ ասացի արդէն: Գործեցէք համաձայն Ձեր հասկացողութեան: Ես խօսում եմ ընկեր Սիլինի եւ իմ անունից:

Սիլինը բոլշեւիկների ներկայացուցիչն էր»[2]:

Անդրադառնալով Դրոյի եւ Ալ. Խատիսյանի երկխոսությանը՝ Ս.Վրացյանը տալիս է հետեւյալ գնահատականը. «Դրոյի պատասխանը եղաւ «դիվանագիտական» եւ Խատիսեանը հասկացաւ, թէ ինչ էր ուզում ասել նա...»[3]:

Դրոյի հետ կայացած խոսակցության ավարտից հետո Ալ. Խատիսյանը հրավիրում է պատվիրակության անդամների եւ խորհրդականների ընդհանուր նիստ եւ հաղորդում. «Պարոններ, յեղափոխական կառավարութիւնը մեզ վրայ է դնում ամբողջ պատասխանատուութիւնը: Մենք պարտաւոր ենք ստանձնել այդ պատասխանա-

[1] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Դ, էջ 197-198:
[2] Խատիսեան Ալ. նշվ. աշխ., էջ 310:
[3] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Դ, էջ 197-198:

տությունը մեր ժողովրդի առաջ, խնդրում եմ իւրաքանչիւրին ձեզանից յայտնել իր կարծիքը:

Բոլորը միաձայնութեամբ արտայայտուեցան յօգուտ դաշնագրի ընդունելուն եւ ստորագրելուն»[1]:

Դաշնագիրը ստորագրվում է դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը, ժամը 2-ին, եւ նույն օրն եւեթ դեկտեմբերի 3-ին, Հայաստանի պատվիրակության անդամները գնացքով ժամանում են Երեւան, ներկայանում են կառավարության տուն, ուր նրանց ընդունում են Դրոն եւ Սիլինը:

Պատվիրակության ղեկավար Ալ. Խատիսյանը, համակողմանիորեն ներկայացնելով Ալեքսանդրապոլի բանակցության արդյունքներն ու ստորագրված դաշնագրերը, սպասում է իրենց կատարած աշխատանքների գնահատականին:

«Դրօն, - նշում է Ալ. Խատիսյանը, - մեզի ըսաւ, թէ գործած ենք շատ ճիշտ, ստորագրելով դաշնագիրը, եւ թէ իր խուսափողական պատասխանը ինձ դաշնագիրը ստորագրելու մասին (երբ Ալեքսանդրապօլէն անոր հետ կը խօսի հեռագրով) պէտք էր հասկանալ այնպէս, ինչպէս որ մենք հասկացած էինք: Պարզ էր, որ յեղափոխական նոր իշխանութիւնը չէր ուզեր իր վրայ վերցնել պատասխանատուութիւնը դաշնագիրը ստորագրելու համար ո՛չ Թուրքերու եւ ո՛չ ալ հայ ժողովուրդի առջեւ:

Երեւանի նոր իշխանութիւնը կուզէր, որ դաշնագիրը ստորագրուէր, բայց մեր եւ ոչ իր ձեռքով»[2]:

Ինչո՞վ էին պայմանավորված Դրոյի ոչ հստակ, խուսափողական պատասխանի իրական իմաստն ու նպատակը:

Դաշնագիրը ստորագրելու նախօրեին, Ալ. Խատիսյանի հետ հեռագրով խոսելու պահին, Դրոյի համար առաջնահերթ գլխավոր խնդիրը, ինչպես այդ մասին արդեն նշվել է, այն էր, որպեսզի թույլ չտրվեր թուրքական զորքերին վերսկսելու հարձակումները եւ ներխուժելու երկրի խորքերն ու Երեւան: Քանի որ չկային բավարար մարտական ուժեր դիմակայելու թուրքական զորքերի հնարավոր հարձակումները, այդ պատճառով համաձայնագիրը պետք է ստորագրվեր: Սակայն նաեւ հարց էր. ո՞ւմ ձեռքով ու պատասխանատվությամբ: Եթե համաձայնագիրը կնքվեր նոր իշխանության, որի ներկայացուցիչները Դրոն եւ Սիլինն էին, պատասխանատվությամբ ու համաձայնությամբ, ապա ինքնըստինքյան կստեղծվեին ավելի

[1] Խատիսեան Ալ. Նշվ., աշխ., էջ 310:
[2] Նույն տեղում, էջ 312:

հիմնավոր նախադրյալներ այն վավերացնելու եւ բնականաբար, դրանում նախանշված կետերը ապագայում կենսագործելու համար: Այդ պատճառով խուսափելով դաշնագիրը ստորագրելու պատասխանատվությունն անմիջականորեն իր եւ Սիլինի, այսինքն նոր իշխանության վրա վերցնելու պատասխանատվությունից, Դրոն ամենայն հավանականությամբ հետապնդում էր այն հետագայում ավելի դյուրությամբ չեղյալ հայտարարելու նպատակը, մանավանդ որ, ինչպես խոստովանում է Հ. Տերտերյանը. «... Այդ դաշնագիրը մենք համարում էինք ժամանակաւոր մի ակտ, եւ մեծ կարեւորութիւն չէինք տալիս նրան...»[1]:

Դրոյի եւ նրա համախոհների ու այդ պայմանագրի կնքման կողմնակիցների վերոհիշյալ համոզմունքը բխում էր նաեւ Լեգրանի հետ կնքած պայմանագրի 7-րդ կետի պահանջներից. «Ռուսաստանի խորհրդային կառավարությունը միջոցներ է ձեռք առնում անմիջապէս կենտրոնացնելու Հայաստանի սոցիալիստական խորհրդային հանրապետության պաշտպանության համար անհրաժեշտ զինուորական ուժեր»[2]:

Եթե վավերացվեր այդ պայմանագիրը, ապա համաձայն 7-րդ կետի պահանջների՝ խորհրդային զորքերը պիտի պաշտպանեին Հայաստանի այն տարածքը, որը սահմանված էր դաշնագրով:

Խորհրդահայ պատմագիտությունը միանշանակորեն ժխտում է Ալեքսանդրապոլի դաշնագրի ստորագրման անհրաժեշտությունը եւ այն համարելով ստորացուցիչ, այդ հողի վրա դատապարտում ու քննադատում նրա ստորագրողներին:

Վատթարագույն երանգներով ներկայացնելով այդ պայմանագիրն ու նրա ստորագրողներին՝ այդ հարցին անդրադարձող պատմաբանները զլանում եւ խուսափում են նշել, որ Ալեքսանդրապոլի դաշնագիրն իրավական ոչ մի ուժ եւ արժեք չներկայացնող փաստաթուղթ է, քանի որ այն համաձայն նրա 14-րդ կետի, «Այս պայմանագիրը պէտք է ենթարկուի ռատիֆիկացիայի Հայաստանի պառլամենտի եւ Անգորայի ազգային մեծ ժողովի կողմից մի ամսուայ ընթացքում», չի վավերացվել ո՛չ Հայաստանի պառլամենտի, որն այլեւս գոյություն չուներ, եւ ո՛չ էլ Թուրքիայի ազգային մեծ ժողովի կողմից[3]:

Այսպես, խորհրդային իշխանությունները, ցանկության եւ անհրաժեշտության դեպքում, կարող էին բացարձակապես ուշա-

[1] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Զ, էջ 297:
[2] «Հայրենիք» ամսագիր. 1954, թիւ 5, էջ 11:
[3] ՀՀ ԲԿԱ, թ. 121, գ. 98, «Ալեքսանդրապոլի բանակցութիւնները», էջ 2:

դրության չարժանացնել որեւէ այլ իշխանության կողմից չվավերացված, ուրիշների ձեռքով ստորագրված եւ իր հետ բնավ առնչություն չունեցող համաձայնագիրը:

«Ալեքսանդրապոլի դաշնագիրը, - նշում է Ս. Վրացյանը, - սարսափելի էր եւ բոլշեւիկեան տեսակէտից ապօրինի, բայց այդ օրերի համար անհրաժեշտ էր ու անխուսափելի: Ահա թէ ինչու բոլշեւիկները քաջութիւն չունեցան մերժելու եւ պատասխանատուութեան ենթարկելու Դրոյին կամ նախորդ կառավարութեան անդամներին...»[1]:

Եթե ընդհանրացնենք եւ փորձենք անաչառորեն արժեւորել Դրոյի գործունեության այս վերջին, թերեւս ամենաբարդ ու դժվարագույն շրջաններից մեկը, եթե ոչ ամենադժվարագույնը, ապա անվերապահորեն պետք է խոստովանել, որ նա իր հավասարակշռված, խելամիտ եւ խիստ հաշվարկված գործելակերպով կարողացավ ըստ ամենայնի ճշմարտացիորեն ու սառնասրտորեն գնահատել ժամանակաշրջանի յուրահատկություններն ու հնարավորությունները, եւ չտրվելով ավելորդ զգացմունքայնության ու զերծ մնալով վտանգավոր, չկշռադատված արկածախնդրությունից՝ կյանքի կոչեց այնպիսի քայլեր, որոնք իրավամբ նշանակալիորեն պայմանավորեցին անդունդի եզրին հայտնված Հայաստանի ու հայ ժողովրդի փրկությունն ու գոյատեւումը:

«Դրոն,- շարունակում է Ս. Վրացյանը,- դարձաւ քաւութեան նոխազ ուրիշի մեղքերի համար: Ի հարկէ, նա կարող էր խուսափել այդ պարտականութիւնից, թողնել ու հեռանալ Հայաստանից, ինչպէս ուրիշները արին, բայց հայրենասիրութեան եւ պարտականութեան զգացումը նրա մէջ այնքան ուժեղ էր, որ նա չէր կարող այդպէս վարուել: Մնաց երկրում, ժողովրդի մէջ եւ չվախեցաւ պատասխանատուութիւնից յանուն հայրենիքի եւ հայ ժողովրդի փրկութեան»[2]:

Համաձայն Խորհրդային Ռուսաստանի պատվիրակության հետ կնքված պայմանագրի 6-րդ կետի՝ Հայաստանի հեղափոխական կոմիտեի կազմում պետք է ընդգրկվեին հինգ կոմունիստներ եւ երկու դաշնակցականներ: Բանակցությունների ընթացքում Լեգրանն արդեն ներկայացրել էր ռազմա - հեղափոխական կոմիտեի (հեղկոմ) հինգ կոմունիստ անդամների անունները՝ Սարգիս Կասյան, Ավիս Նուրիջանյան, Սահակ Տեր-Գաբրիելյան, Դովլաթյան, Բեկզադյան: Հ.Յ.Դաշնակցություն կուսակցությունից կոմիտեի կազմում ընդգրկվելու էին Դրոն եւ Հ. Տերտերյանը:

[1] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Դ, էջ 199:
[2] Նույն տեղում, էջ 197:

«Երբ ես, - գրում է Հ. Տերտերյանը, - հրաժարուեցի Ցեղկոմի անդամութիւնից, պատճառաբանելով, թէ ըստ իս, մեր մասնակցութիւնը ոչ թէ իր (նկատի ունի Լեգրանին - Հ.Գ.) հրաւէրով պէտք է լինի, այլ մեր կուսակցութեան ցուցումով, նա առարկում էր, թէ կուսակցական կոալիցիա չէ որ ընդունում են իրենք, այլ դաշնակցական անհատների գործակցութիւն եւ որ իմ թեկնածութիւնը, բացի իրանից, առաջարկուած է ե՛ւ Բագուից, Օրջոնիկիձէի կողմից եւ ընդունած է բոլշեւիկների անդրկովկասեան կենտրոնի կողմից, իսկ Դրոյի թեկնածութիւնը առաջարկել է ինքը:

- Օրջոնիկիձէին ես ճանաչում էի Ռոստովից եւ բարեկամ էինք իրար»[1]:

Այսպիսով, Դրոն եւ Հ. Տերտերյանը ընդգրկվում են Հայաստանի նոր իշխանության ղեկավար կազմում:

Թեպետ համաձայն կնքված դաշնագրի ամրագրվում է, որ. « 4. Հայկական բանակի հրամանատարութիւնը չի ենթարկւում պատասխանատուութեան...

5. Դաշնակցութեան եւ ուրիշ սոցիալիստական կուսակցութիւնների անդամները ոչ մի հալածանքի չպիտի ենթարկուեն... », սակայն դա դեռեւս կայուն երաշխիք չէր լիովին ապավինել եւ հավատ ընծայել բոլշեւիկների խոստումներին:

ՀՀ կառավարության հետ կնքված համաձայնագրի օրը, Ս. Օրջոնոկիձեին հասցեագրած հեռագրում(1920թ. դեկտեմբերի 2) Լեգրանը հաղորդում է . «Հայաստանում հռչակվել է խորհրդային իշխանություն, կառավարությունը հանձնել է իր իրավասությունները: Մինչ հեղկոմի գալը մեր կողմից իշխանությունը փոխանցվում է Դրոյին, որի մոտ որպես կոմիսար լինելու է մեր ընկեր Սիլինը:

... Բանակի հրամանատարական կազմի, նաեւ դաշնակցականների, բացառութեամբ այն անձանց, որոնք պատասխանատու են Օհանջանյանի մինիստրության քաղաքականության համար, անվտանգությունն երաշխավորված է: Նրանց ձերբակալելու հրամանը իմ կողմից արդեն տրված է...»[2]:

Թեպետ Ս. Օրջոնիկիձեին հասցեագրված Լեգրանի հեռագրի բովանդակությունն այդ օրերին դեռեւս հայտնի չէր ոչ ՀՀ կառավարությանը եւ ոչ էլ ՀՅԴ բյուրոյին, սակայն նրանց որոշմամբ պետական, քաղաքական եւ կուսակցական առավել հայտնի գործիչների մի մասը, որոնց նկատմամբ բոլշեւիկներն առանձնապես

[1] Նույն տեղում, հ. Զ, «Հ. Տերտերեանի յուշերը», էջ 283:
[2] Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմության, փաստաթղթերի, նյութերի ժողովածու), էջ 386:

բացասաբար էին տրամադրված պետք է շուտափույթ հեռանային Հայաստանի տարածքից: ՀՀ կառավարության եւ խորհրդարանի նախկին անդամներին, ինչպես նաեւ կուսակցական առավել հայտնի գործիչներին Հայաստանի տարածքից դուրս բերելու գործի կազմակերպումը հանձնարարվում է Դրոյին: Իսկ նա այդ դժվարին ու միաժամանակ չափազանց պատասխանատու եւ կարեւոր հանձնարարության կատարումը վստահում է իր մերձավոր զինակիցներից՝ բաշգառնեցի Մարտիրոս Աբրահամյանին եւ Երեւանի միլպետ Սեդրակ Ջալալյանին (Սեթո):

Իր հուշերում անդրադառնալով իրեն վստահված այդ հանձնարարությանը՝ Սեթոն գրում է. «1920 թ. դեկտեմբերի 1-ին, կէսօրուայ ժամերին, Երեւանի մէջ հեռաձայնելով ինձ կանչեցին վարչապետի գրասենեակը:

Անմիջապես գնացի: Երբ ներս մտայ, սեղանի վերի կողմը նստած գտայ նախկին վարչապետ Համո Օհանջանեանը, օրուան վարչապետ Ս. Վրացեանը եւ Դրօն, իսկ նրանց դիմացը՝ խմբապետներ Սեպուհը եւ Համազասպը»[1]:

ՀՀ նախկին վարչապետ Համո Օհանջանյանը, որը այդ ժամանակ ներկայացնում էր ՀՅԴ Բյուրոն, համառոտակիորեն ներկայացնում է Հայաստանում տիրող կացությունը եւ այն պատճառները, որոնք հարկադրեցին ՀՀ կառավարությանն ու բանակին եւ կուսակցությանը (Հ. Յ. Դաշնակցություն) խաղաղ ճանապարհով բոլշեւիկներին հանձնել իրենց իշխանությունը:

Հ. Օհանջանյանը նաեւ տեղեկացնում է, որ համաձայն Լեգրանի հետ կնքված դաշնագրի, Դրոն եւ Հ. Տերտերյանը ժամանակավորապես մտնելու են խորհրդային կառավարության կազմի մեջ, իսկ պետական եւ ռազմական գործիչները մինչեւ նոր կարգադրություն պիտի մնան Հայաստանում եւ առավելագույնս աշխատեն ու թույլ չտան, որ հանկարծ Հայաստանում բռնկվի քաղաքացիական կռիվներ: Շարունակելով բացատրությունը՝ Հ. Օհանջանյանը ավելացնում է. «-Իբր բացառություն, միայն մի փոքրիկ խմբակ պատասխանատու պետական գործիչներից պէտք է հեռանայ երկրից, եւ այդ խմբի մէջ մտնում էք դուք՝ երեքդ (նկատի ունի նաեւ Սեպուհին ու Համազասպին-Հ.Գ.):

... Ընդհանրացնելով իր խօսքը՝ Համօն յայտնեց, թէ մեր անելիքների մասին մանրամասն հրահանգներ կը ստանանք Դրօյից»[2]:

[1] «Հայրենիք» ամսագիր, 1951, թիւ 11, էջ 28:
[2] Նույն տեղում:

Չնայած այն իրողությանը, որ խորհրդային իշխանությունը դեռեւս չէր հասցրել ինչպես հարկն է առավելագույնս ամրապնդվել Հայաստանում, բայց, այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետության կառավարության եւ խորհրդարանի նախկին անդամների ու կուսակցական գործիչների անվտանգ տեղափոխության իրականացումը դյուրին խնդիր չէր: Այդ ժամանակ Հայաստանից հեռանալու երկու հնարավոր ուղիներ կային. առաջինը Լոռի-Փամբակի տարածքով դեպի հարեւան Վրաստան, իսկ մյուսը Զանգեզուրով դեպի Պարսկաստան:

Մայրաքաղաքից մինչեւ Վրաստան եւ Զանգեզուր ընկած տարածքում արդեն տեղաբախշվել եւ հսկողություն էին իրականացնում, ճիշտ է, ոչ այնքան մեծաքանակ, բոլշեւիկների հրամանատարությամբ գործող զինախմբերը: Գրեթե բոլոր շրջաններում արդեն բացահայտ եւ ոչ բացահայտ գործում էին բոլշեւիկյան կազմակերպության տեղական բջիջներն ու գործակալները, որոնք իրենց բնակավայրերում նկատվող ամենափոքրիկ կասկածելի շարժումների մասին առանց երկմտելու անմիջապես հաղորդում էին համապատասխան մարմիններին:

Դրոյի հրահանգի համաձայն, Սեթոյի առաջնորդած խումբը, որի կազմում էին նաեւ Համո Օհանջանյանն ու ՀՀ արդարադատության նախկին նախարար Ռուբեն Դարբինյանը (Արտաշես Զիլինգարյան) մինչեւ Ապարան պիտի գնար կառքով, ապա այնտեղից ձիերով Սպիտակի, Դիլիջանի եւ Իջեւանի տարածքով ուղեւորվեր Վրաստան:

Սեթոյին եւ մյուս պատասխանատու ընկերներին համապատասխան հրահանգներ տալուց հետո «...Դրօն, - նշում է Սեթոն, - մեզ հրաւիրեց ճաշասենեակը, ուր սեղանը պատրաստ էր: Գաւաթները լեցնելով՝ նա մեզ բարի ճանապարհ մաղթեց:

-Դրօ ջան, ինչպէ՞ս համաձայնեցիր մնալ այս անօրէնների մէջ:

Մի՞թէ հաւատում ես, որ մի բանով կարող ես նրանց միջոցով օգտակար լինել մեր ժողովրդին:

-Ես էլ չեմ հաւատում, բայց մենք պարտաւոր ենք ամէն զոհողութիւն անել հայ ժողովրդի վիճակը բարւոքելու յոյսով: Մենք յուսահատական մի փորձ ենք անում. եթէ խաբուեցինք՝ որտեղ կտրի կապը, էնտեղ...տիրու պապը. մէկ Դրօ էլ թող պակաս լինի:

Ցուզած սրտով մի քանի բաժակ էլ ըմպեցինք, եւ հրաժեշտի համբոյրներով դուրս ելանք...»[1]:

[1] Նույն տեղում, էջ 22:

Սեթոյի խումբը Երեւանից անհապաղ պիտի մեկներ, առանց որեւէ ժամանակ կորցնելու, սակայն ինչ-որ չնախատեսված խորհրդակցությանը Հ. Օհանջանյանի մասնակցության պատճառով, նրանց մեկնումը փոքր-ինչ ձգձգվում է:

Ներկայացնելով այդ պահը՝ Ռուբեն Դարբինյանը գրում է. «Մանր նախազգացումով եւ չափազանց վրդովված՝ տուն վերադարձայ: Որեւէ ողջամիտ մարդու համար պարզ էր միանգամայն, որ մէկ օրուան ուշացումը կրնար աղետալի հետեւանքներ ունենալ մեզի համար:

... Երբ Դրոն իմացեր էր, որ մենք դեռ չէինք հեռացած Երեւանէն, չափազանց վրդովեր էր եւ յայտնեց, թէ ինք անմիջապէս պիտի գար մեր մօտ եւ ժամ առաջ ճամբու դնէր մեզ, քանի որ մեր մնալը կը կապէր իր ձեռքերը եւ կը զրկէր զինք գործելու ազատութիւնէն»[1]:

Միանգամայն հասկանալի է նրանց մեկնելու ձգձգման պատճառով Դրոյին համակած անհանգստությունը: Ընդամենը երկու օր անց լրացուցիչ մարտական ուժերով մայրաքաղաք Երեւան էին ժամանելու Խորհրդային Հայաստանի նոր իշխանությունը ներկայացնող ռազմա - հեղափոխական կոմիտեի (հեղկոմ) անդամները, եւ բնավ չէր բացառվում, որ նրանք բոլորովին այլ պահանջներ ներկայացնեին ՀՀ կառավարության ու խորհրդարանի նախկին անդամների, զինվորական եւ կուսակցական գործիչների նկատմամբ:

Սեթոյի հավաստմամբ, իրենց մեկնելու ուշացման պատճառը պարզելու նպատակով Դրոն կապվել է իր հետ ու հայտնելով իր դժգոհությունը, հարցրել. «-Սէթօ՛, ա՜յ տղայ, դեռ այստե՞ղ ես: Բա, Էսպէս բան կանե՞ն: Բա, որոշումները այսպէ՞ս կը գործադրեն:

... Ցայտնեցի բժ. Հ. Օհանջանեանի կարգադրութիւնը, որ առաւօտուայ ժողովից յետոյ պիտի մեկնէինք, եւ իմ զարմանքը այդ մասին: Դրօն իր արդար զայրույթը յայտնելուց յետոյ, ասաց.

- Հրամայում եմ քեզ անմիջապէս իմ պատուէրները գործադրես: Թէկուզ բռնի կերպով կը նստեցնես կառքը ու կը տանես:

- Անմիջապէս շարժւում եմ: Դրօ ջան մնաս բարով, Աստուած քեզ հետ»[2]:

Սեթոյին համապատասխան հրահանգներ տալուց հետո նա անձամբ գնում եւ վերջին հրաժեշտն է տալիս ու բարի ճանապարհ մաղթում դեպի տարագրության գիրկը մեկնող ընկերներին:

Վերհիշելով իրենց հրաժեշտի պահը՝ Ռ. Դարբինյանը գրում է. «...Տասը րոպէ չանցած, եկաւ Դրոն եւ իր սովորական աղմկալի ձեւով իր վրդովմունքը յայտնելով՝ ըսաւ.

[1] Դարբինեան Ռ., Երկեր, հ. Ա, էջ 504:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1951, թիւ 11, էջ 28:

- Եկայ՝ ձեզ անձամբ ճամբու դնելու: Ուշանալու ժամանակ չկայ այլեւս: Ոչ մի դէպքում մի աւելորդ ժամ իսկ պէտք չէ մնաք այստեղ: Ես արդէն խօսել եմ Սեթոյի հետ: Նա ամէն բան պատրաստել է արդէն: Նա շատ լաւ ծանոթ է ճանապարհին: 10-15 հոգի լաւ զինուած տղերք ունի, նրանք կարող են պէտք գալ ձեզ: Դուք ոչ մի բանի մասին մտածելու կարիք չունէք. նրանք ձեզ ապահով կը հասցնեն Վրաստանի սահմանը: Համբուրուեցա Դրոյի հետ եւ կինս ու ես դուրս եկանք փողոց»[1]:

Դեկտեմբերի 3-ի առավոտյան խումբը Սեթոյի գլխավորած 25 զինավառ հեծյալ մարտիկների առաջնորդությամբ Զանգուի (Հրազդան) կամրջի մոտից դուրս է գալիս Երեւանից եւ առանց որեւէ լուրջ պատահարի հասնում է Ապարան, ուր նրանց են միանում Հայաստանից մեկնող այլ անձինք, որոնց մեջ էր ՀՀ խորհրդարանի անդամ Վահան Նավասարդյանը:

Դժբախտաբար, Սեթոյին չի հաջողվում իրականացնել խմբի անդամների ապահով ուղեւորությունը եւ նրանց հասցնել Վրաստան: Ամենուրեք բույն դրած բոլշեւիկների գործակալները, տեղեկանալով խմբի անդամների ով լինելու մասին, անմիջապես հայտնում են բոլշեւիկների համապատասխան ծառայություններին: Սեթոն իր առաջնորդած մարտիկներով հազիվ է կարողանում խուսափել խորհրդային մարտական ուժերի հետապնդումից, իսկ խմբի անդամները, բազում դժվարություններ հաղթահարելով, հասնում են մինչեւ Ղարաքիլիսա եւ ձերբակալվում Կարմիր բանակի զինվորների կողմից:

Ներկայացնելով իրենց ձերբակալության մանրամասները՝ Ռ. Դարբինյանը գրում է. «- Սեփական կառաւարութի՞ւն կուզէիք ունենալ, - կը ծաղրէին մեզ Կարմիր բանակային ռուս զինուորները՝ համեմելով իրենց խօսքերը գռեհիկ հայհոյանքներով,- բաժանուի՞լ կուզէիք Ռուսաստանէն...Մենք ձեզ ցոյց կը տանք, թէ ին՜չ կը նշանակէ բաժնուիլ մեզմէ... Նախարարներ...բուրժուաներ...սրիկաներ...Մեր Կարմիր Բանակի՞ դեմ կուզէիք կռուիլ...Սովետներու դէմ դուրս էիք եկած... Մենք ձեզ ցոյց կու տանք»[2]:

Ձերբակալվածների խմբին, որի մեջ էին Հ. Օհանջանյանը, Ռ. Դարբինյանը, Վ. Նավասարդյանը, Կորյուն Ղազարյանը, Վարոս Բաբայանը եւ այլք, Դիլիջանի հեղկոմի որոշմամբ բերում են Երեւան եւ նետում քաղաքային բանտ:

[1] Դարբինեան Ռ., Երկեր, հ. Ա, էջ 504:
[2] Նույն տեղում, էջ 523:

Մի ուշագրավ փաստ. ձերբակալվածներին բոլշեւիկները կարող էին, առանց դույզն- ինչ պատասխանատվություն կրելու, մահապատժի ենթարկել, բայց չեն գնացել նման քայլի: Կարծիք կա, որ նրանց կրքերին ու համանման քայլերի չդիմելուն ինչ-որ տեղ զսպել ու կաշկանդել են դաշնակցական փորձառու ահաբեկիչների վրեժխնդրությունն ու սպասվելիք պատասխան ահաբեկչական գործողությունները:

Որպես փաստարկ ձերբակալվածների նկատմամբ բոլշեւիկների դրսեւորած հանդուրժողական վերաբերմունքի, Վահան Նավասարդյանը Ռուբեն Դարբինյանին պատմել է իր եւ ՀԿԿ քարտուղար Աշոտ Հովհաննիսյանի հանդիպման ժամանակ տեղի ունեցած հետեւյալ խոսակցությունը: Ի դեպ, Վ. Նավասարդյանին Երեւանի բանտից, որպես իր հայրենակցի(նրանք երկուսն էլ ծնունդով Արցախցի են- Հ.Գ.), ազատել է Աշոտ Հովհաննիսյանը:

Վ. Նավասարդյանը Ա. Հովհաննիսյանի հետ կայացած հանդիպման ժամանակ, որին ներկա է եղել Դավիթ Անանունը «...մեզ ազատելու մասիսն խոսք կը բանայ, Աշոտ Հովհաննիսեան կըսէ.

- Բացի Ա. Զիլինկարեանէն (Ռ. Դարբինեան), միւսներին հաւանաբար կազատենք կամ թեթեւ պատիժներ կը տանք...

Այդ ատեն կը միջամտէ Դաւիթ Անանուն, ըսելով.

Աշոտ, երեւի լաւ չես մտածում հետեւանքների մասին: Պէտք է լաւ իմանաս,որ Դաշնակցութիւնը քեզ չի ների երբեք... Եւ վաղ թէ ուշ Դաշնակցութեան վրիժառու գնդակը կը պատժի քեզ: Ես խնդրում եմ, որ բոլորին ազատէք...

... Աշոտի դեմքը կը մռայլուի եւ լռութիւն կը տիրէ:

Վահան համոզուած էր, որ Աշոտ Հովհաննիսեան շատ կը վախնար Դաշնակցութեան վրիժառու գնդակէն եւ այդ պատճառով ալ չէր համարձակած կատարել իր սպառնալիքը»[1]:

Դժվար է միանշանակորեն հաստատել կամ ժխտել Հայաստանում իշխանությունը բռնազավթած բոլշեւիկների վրա Դաշնակցության վրիժառու գնդակի ազդեցության իսկությունը, բայց մի փաստ անժխտելի է. եթե փետրվարյան համաժողովրդական ապստամբության ժամանակ ապստամբ մարտիկները Երեւանի բանտ ներխուժեին թեկուզ հաշված րոպեներ ուշացումով, ապա որեւէ կասկած լինել չէր կարող, որ բանտում գտնվող պետական, քաղաքական, կուսակցական գործիչներն ու մտավորականներն արժանանալու էին զինվորական բանտարկյալների ողբերգական ճակատագրին: Նրանց առանց խնայելու կկոտորեին ազգությամբ թուրք բանտապահները:

[1] Նույն տեղում, էջ 500:

Հայաստանից մեկնելու մյուս հնարավոր երթուղին, ինչպես արդեն նշվել է, Երեւանից Դարալագյազի տարածքով դեպի Զանգեզուր տանող ճանապարհն էր: ՀՅԴ Բյուրոյի որոշմամբ այդ երթուղով Զանգեզուր պետք է ուղեւորվեին ՀՀ զինվորական նախկին նախարար Ռուբեն Տեր-Մինասյանն ու Լեւոն Քալանթարյանը, որոնց մի քանի մարտիկներով պիտի ուղեկցեր Բաշգառնեցի Մարտիրոսը, որը նոր-նոր էր, դարձյալ հաղթանակով, դուրս եկել հերթական կռիվներից եւ դեռ չէր հասցրել դույզն-ինչ հանգիստ շունչ առնել:

Հարկ է ընդգծել, որ թեեւ Ալեքսանդրապոլում ընթանում էին բանակցությունները հայկական ու թուրքական պատվիրակությունների միջեւ, բայց մարտական գործողությունները տեղ-տեղ շարունակվում էին: Թուրքերը, պարտություն կրելով Սուրմալուի ճակատամարտում, այնուամենայնիվ, երբեմն-երբեմն գրոհներ ձեռնարկելով, փորձում էին անակնկալ հարվածներով ճեղքել Արաքսի գետանցումները պաշտպանող հայ մարտիկների պաշտպանական դիրքերն ու ներխուժել Արարատյան դաշտ:

Նոյեմբերի 28-ին թուրքական երեք գումարտակներ չորս թնդանոթների եւ վեց գնդացիրների կրակի աջակցությամբ, հերթական անգամ հարձակվում են Կարակալայի կամուրջի պաշտպանական հատվածում դիրքավորված, Մարտիրոսի գլխավորած 600 մարտիկներից բաղկացած զորամասի վրա:

«Կռիւը, -վկայում է Մարտիրոսը, - տեւեց երկու օր: Մենք տվեցինք տասը սպանված եւ քսան վիրաւոր: Թշնամին նոյնպէս կորուստներ ունեցաւ: Երկու օրւայ կռիւների ընթացքին թշնամին ոչ միայն յառաջանալ չկարողացաւ, այլե՛ւ նահանջեց եօթ կիլոմետր ետ: Թուրքական նահանջող զօրքի մի մասը ուղղուեց դէպի Զքրբխչի, իսկ միւս մասը՝ դէպի Կողբ»[1]:

1920 թ. նոյեմբերի 28-ին հայրենի հողի վրա մղած կռիվը Դրոյի գլխավորած զորամասի վերջին մարտն էր, որն ավարտվել է դարձյալ հաղթանակով:

Դեկտեմբերի 4-ին Երեւան են ժամանում Սարգիս Կասյանն ու Ավիս Նուրիջանյանը, ապա մի քանի օր անց՝ նաեւ հեղկոմի մյուս անդամները: Մայրաքաղաք հասնելու հենց առաջին իսկ օրից հեղկոմի անդամները, հատկապես Ավիսն ու Կասյանը, բուռն պայքար

[1] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 8:

են ծավալում հեղկոմում Դրոյի եւ Հ. Տերտերյանի ընդգրկվելու դեմ եւ պահանջում, որպեսզի նրանք հեռացվեն հեղկոմի կազմից: Ավելին, նրանք դժգոհում են նաեւ ՀՀ կառավարության եւ Լեգրանի կողմից կնքված պայմանագրից եւ իշխանությունը խաղաղ, անարյուն ճանապարհով վերցնելու եղանակից: Նրանց համոզմամբ՝ հեղափոխության հաղթանակը եւ խորհրդային իշխանության հաստատումն անպայմանորեն պետք է կենսագործվեր դասակարգային պայքարով, քաղաքացիական կռիվներով ու արյունահեղությամբ :

Բնական է, որ համանման անմարդկային ու ապազգային գաղափարներով առաջնորդվողները որեւէ պարագայում չպետք է համակերպվեին ու հանդուրժեին իրենց շարքերում, առավել եւս նվաճած իշխանության վերին մարմիններում մեկ այլ կուսակցության ներկայացուցիչների՝ թեկուզ իրենց համակիր, ներկայությունը:

Ավելին, Ավիսը գործել է բացարձակապես ինքնուրույն, իսկ երբեմն՝ իր ընդունած որոշումների մասին հարկ չհամարելով տեղեկացնել Դրոյին ու երբեմն նրանից գաղտնի, կարեւոր նշանակություն ունեցող փաստաթղթերը ստորագրել է իր եւ Դրոյի անունից:

Օրինակ, 1920 թ. դեկտեմբերի 16-ին նրանց ստորագրած «Կոչ ուղիղ հեռագրաթելով Երեւան-Քեիշքենդ—Զանգեզուրի գիւղացիութեան եւ հրամանատարութեան» հեռագիրը[1]:

Այդ հեռագրում նշում են. «Թող յայտնի լինի բովանդակ Զանգեզուրին, որ Հայաստանը յայտարարուած է սովետական յեղափոխական հանրապետութիւն: Հին կառավարութիւնը նետել է երկիրը արեան ու արցունքի անդունդը...Հայաստան քայքայուած է, մենք կարող ենք վերականգնել միայն այն օգնութեան միջոցներով, որը ցոյց կը տայ մեզ Խորհրդային Ռուսաստանը եւ Խորհրդային Ադրբեջանը, առաջինն իր ուժեղ բանակով, իսկ երկրորդն իր նավթով...

Ներկայումս ամբողջ Հայաստանում կազմակերպուած է Սով. իշխանութիւն: Քաղաքական հակառակորդներից ոչ ոք չէ հետապնդւում՝ բացի հին կառավարութեան անդամներից...

Զանգեզուրի բարձունքներում կռուելով կարմիր բանակի դէմ՝ դուք այդպիսով անգիտակցաբար խորացնում էք վիշտն ու դժբախտութիւնը ձեր ժողովրդի, որի միակ փրկութիւնը կախուած է կարմիր բանակի ու Սով. Ռուսաստանի օգնութիւնից: Սով. Ադրբեջանը զիջել է Հայաստանին Զանգեզուրը, Ղարաբաղն ու Նախիջեւանը...

Մենք համոզված ենք, որ մեր բոլորի հարազատ Զանգեզուրը եւս կը մտնի Խորհրդային Հայաստանի մէջ, որպէսզի վերջ տրուի ամէն

[1] Գեուրգեան Վ., Լեռնահայաստանի հերոսամարտը(1919-1921)Երեւան, 2010, էջ108:

մի թշնամական գործողութեան կարմիրների դէմ, որոնք բարեկամական եւ եղբայրական յարաբերութիւնների մէջ են գտնուում Խորհրդային Հայաստանի Կարմիր զօրքի հետ...

Մենք կոչ ենք անում Զանգեզուրին Խորհրդային Հայաստանի իշխանութեան դրօշակի տակ կանգնել, մերձենալ Ռուսաստանին եւ Խորհրդային Ադրբեջանին: Մենք ազնուութեամ, բաց սրտով յայտարարում ենք մեր ժողովրդին. որ կարմիր զօրքի դէմ յետագայ կռիվները ձեռնտու են միայն հայ ժողովրդի թշնամիներին...

Խորհրդային Հայաստանի Հանրապետութեան Զինուորական կոմիսար ԱՎԻՍ:

Խորհրդային Հայաստանի Կարմիր զօրքերի հրամանատար ԴՐՕ»[1]:

Այս հեռագիրը իրենց հեղինակած աշխատութիւններում ամբողջովին մեջբերել են Ս. Վրացյանն ու Արամ Սիմոնյանը, որոնք որպես նախադրյալ հիմք ունենալով այս հեռագիրը, կատարում են տարբեր եզրահանգումներ:

Ս. Վրացյանը վստահեցնում է, որ 1. Դրոն, որպես ՀՀ զինվորական նախարար, չէր կարող իր ստորագրությունը դնել մի փաստաթղթի տակ, որը դատապարտում է «հին կառավարութիւնը, որը, իբր թէ, նետել է երկիրը արեան եւ արցունքի անդունդը...»[2]:

2. «...Դրօն չէր կարող ստել զանգեզուրցիներին, թէ «Խորհր. Ադրբեջանն արդէն ուղարկում է մեզ համար նաւթ, մանուֆակտուրա եւ մթերք», որովհետեւ նա գիտէր, որ այդ ճիշտ չէ»:

3. Դրոն չէր կարող ասել, որ «քաղաքական հակառակորդներից ոչ ոք չի հետապնդւում», որովհետեւ նա տեղեակ էր որ Հայաստանի բանտերն արագ կերպով լցւում էին...»:

Ս. Վրացյանը գրում է, որ «Յետագային, Դրօն անձամբ հաստատեց, որ հեռագիրը քաշուած է Ավիսի առաջարկութեամբ եւ Կասեանի ու Մռաւեանի հաւանութեամբ: Զանգեզուրցիին աւելիքի մասին ընդհանուր որոշում է տրւել, իսկ հեռագիրը շարադրել եւ ստորագրութիւնները դրել է Ավիսը ինքը»[3]:

Ա. Սիմոնյանի գնահատմամբ՝ եթե Ավիսն ու Դրոն միամտորեն խանդավառված էին Զանգեզուրը, Նախիջեւանը եւ Ղարաբաղը Հայաստանին զիջելու բոլշեւիկների ու Ադրբեջանի թուրք պարագլուխների խոստումներով, ապա «...դեպքերն ու իրադարձությունները խորությամբ քննող Նժդեհը դույզն-ինչ չէր կասկածում, որ դա բոլշեւիկյան և քեմալական հերթական խաբկանք է, համոզված էր,

[1] Նույն տեղում:
[2] Տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի հանրապետութիւն, էջ 558:
[3] Նույն տեղում:

որ Թուրքը Հայաստանին կամավոր չի զիջի մի թիզ հող անգամ, եթե նա ստիպված չլինի զիջելու»[1]:

Այո, միանգամայն իրավացի է հարգարժան պատմաբանը՝ պնդելով, որ «Թուրքը Հայաստանին կամավոր չի զիջի մի թիզ հող անգամ», մանավանդ պատմական հիշյալ ժամանակահատվածում, երբ Հայաստանը պատերազմում սարսափելի պարտություն էր կրել եւ կանգնած էր կործանման եզրին: Օրինական հարց է ծագում. մի՞թե արեւելքը նվաճելու ռազմավարությամբ առաջնորդվող Խորհրդային Ռուսաստանը կհամաձայներ հող զիջել Հայաստանին, կամ Հայաստան-Ադրբեջան փոխհարաբերություններում նախապատվություն տար սատարելու Հայաստանին ու նրան զիջեր Զանգեզուրը, Նախիջեւանը եւ Ղարաբաղը, երբ նրա դաշնակիցը ոչ թե Հայաստանն էր, այլ քեմալական Թուրքիան ու իրեն խորհրդային հռչակած Ադրբեջանը: Մի՞թե Խորհրդային Ռուսաստանի քաղաքական շահերը թույլ կտային Հայաստանի նկատմամբ դրսեւորել հանդուրժողական ու մարդասիրական քաղաքականություն, երբ դեպի արեւելք ձգվող ճանապարհը նրա առջեւ փակում էր հայ զինվորը:

Մի՞թե Ա. Սիմոնյանի բնութագրմամբ՝ «դեպքերն ու իրադարձությունները խորությամբ քննող Նժդեհը» այնքան վստահ էր, որ Զանգեզուրը կարող էր հաղթել Կարմիր բանակին, երբ ՀՀ կառավարությունը Խորհրդային Ռուսաստանի հետ 1920 թ. օգոստոսին 10-ին Թիֆլիսում կնքել էր, ինչպես արդեն նշվել է, խորհրդային զորքերը, որպես խաղաղապահ ուժեր Զանգեզուրում, Նախիջեւանում եւ Ղարաբաղում տեղաբաշխվելու պայմանագիրը, իսկ հայ-թուրքական պատերազմում պարտված ՀՀ կառավարությունը 1920 թ. դեկտեմբերի 2-ին իշխանությունը կամովին զիջել էր բոլշեւիկներին:

Պիտի աներկբա ընդունել, որ Խորհրդային Ռուսաստանը եկել էր Անդրկովկաս ոչ թե Զանգեզուրը, Նախիջեւանը եւ Ղարաբաղը Ադրբեջանին, ապա նաեւ Կարսի մարզը, Սուրմալուն եւ Սարիղամիշը քեմալական Թուրքիային հանձնելու, այլ այդ երկրամասը եւ այնտեղ գտնվող հանրապետությունները զավթելու ու դեպի արեւելք առաջանալու նպատակով: Զանգեզուրի մարտական ուժերը խորհրդային զորքերի դեմ կռիվներ են սկսում 1920 թ., հոկտեմբերին, այսինքն՝ Զանգեզուրում բացում են պայքարի երկրորդ ճակատը ճիշտ եւ ճիշտ այն ժամանակահատվածում, երբ ՀՀ բանակը ծանր պարտություններ էր կրում Կարսի ուղղությունում, որի հետեւանքով Հայաստանի Հանրապետությունը հայտնվում է ծանրագույն իրավիճակում:

[1] Տե՛ս Սիմոնյան Ա., նշվ. աշխ., էջ 368-369:

Ցպետք է մոռանալ, որ բացի մարտադաշտից, որտեղ հարցերը լուծվում են ի հաշիվ զենքի, զինվորի ու հրամանատարության դրսեւորած ճկուն մարտավարության ու քաջագործության, կա նաեւ դիվանագիտական ճակատ, որտեղ պիտի գործել թերեւս ավելի ճկուն մարտավարությամբ, սառը ու կշռադատված հաշվարկով եւ, առողջ բանականությամբ: Այս առումով պիտի ընդունել, որ գոյություն ունի մեկ այլ անժխտելի իրողություն: Ցանկացած երեւույթ կարելի է փաստարկել ու գնահատել ոչ թե միարժեք տրամաբանությամբ, մեկ տեսանկյունից, այլ տարբեր տեսանկյունից եւ նոր միայն կատարել անհրաժեշտ եզրահանգումներ ու գործնական քայլեր:

Օրինական հարց է ծագում. ի՞նչպես կդասավորվեր Հայաստանի Հանրապետության, այդ թվում՝ Զանգեզուրի, Նախիջեւանի եւ Արցախի ճակատագիրն ու ապագա կարգավիճակը, եթե ՀՀ կառավարությունը, այնուամենայնիվ, կարողանար առավել սթափ գնահատել պատմական հիշյալ ժամանակաշրջանի առաձնահատկությունները եւ Հայաստանի իրական կարողություններն ու կացությունը եւ կանխելով քեմալական Թուրքիային ու Ադրբեջանին՝ կարողանար ավելի շուտ անհրաժեշտ դիվանագիտական կապեր հաստատել Խորհրդային Ռուսաստանի հետ:

Թե որքանով էին իրավացի հայության ճակատագրական պահին խորհրդային ուժերի դեմ երկրորդ ճակատ բացած պատասխանատու գործիչները եւ թե ի՞նչ նպաստ կարող էր այն բերել ու բերեց Հայաստանին եւ հայ ժողովրդին, դա ուսումնասիրության մեկ այլ թեմա է: Այս հարցում պատմաբանը պիտի լինի ավելի քան անկողմնակալ, զերծ որեւէ զգացմունքայնությունից, քանզի նա պարտավոր է առաջնորդվել այն հիմնավոր սկզբունքով, որ պատմական կարեւորագույն երեւույթների անաչառ մեկնաբանությունն ու կշռադատված գնահատականն անգնահատելի դասեր են յուրաքանչյուր ազգի ինչպես ներկան, այնպես էլ ապագան ճիշտ եւ արդյունավետ կառուցելու գործում:

Որպես նախադրյալ հիմք ունենալով վերոհիշյալ հեռագիրը՝ Ա. Սիմոնյանը գրում է. «Կոչը խորացրեց Նժդեհի և Դրոյի միջև եղած հակասությունները, որոնք գնալով վերածվեցին անձնական բացահայտ հակակրանքի»[1]:

Դրոյի եւ Նժդեհի առեղծվածային փոխհարաբերությունների մասին, կարելի է ասել, կան բազմաթիվ, իսկ երբեմն իրարամերժ ու իրականության հետ որեւէ կապ չունեցող տեսակետներ:

[1] Նույն տեղում, էջ 369:

Ա. Սիմոնյանի կողմից Դրոյի եւ Նժդեհի փոխհարաբերությանը տրված վերոհիշյալ բնութագրի համար, կարելի է փաստել, որ հիմք ծառայում է նաեւ Ե. Իշխանյանի «Լեռնային Ղարաբաղ 1917-1920» գրքում տեղ գտած՝ նրանց միջեւ պատահած մի անցանկալի միջադեպի պատմությունը, որը տեղի է ունեցել ոչ թէ 1920 թ. մայիսի 24-ին Արցախի Ավետարանոց գյուղում, այլ Զանգեզուրում[1]:

Ե. Իշխանյանը գրում է, որ Արցախում «... Դրօն և Նժդեհը ընդհարուել են իրարու հետ խստիւ, բայց շնորհիւ ընկերների միջամտութեան վերջ է տրուել վէճին:

Նույնը երկու անգամ կրկնուել է Զանգեզուրում, որտեղ Դրօն Նժդեհին մենամարտութեան է կանչում. առաջին անգամին, սակայն ինչպէս պատմում էր Մելիք Հասան-Ջալալեանը, որը ներկայ եղել այդ միջադեպին, Նժդեհը ասում է՝ «մեր կեանքը մեզ չի պատկանում, այլ հայ ժողովրդին, իսկ եթէ ուզում ես խփել ինձ, առ քեզ» ատրճանակը շպրտում է Դրոյին: Դրօն փոթիկացնում է ու ծիծաղելով ասում «դերասան չան որդի»[2]:

Բնավ չի բացառվում, որ դյուրաբորբոք Դրոն տեղի տալով զգացմունքներին, մենամարտի է կանչել Նժդեհին: Ի դեպ, դա առաջին դեպքը չէր, երբ Դրոն մենամարտի է կանչում իր տեսակետին հակառակվողներին: Անգամ հավասարակշռված ու սառնասիրտ Նիկոլ Դումանը չի խուսափել խճճված հարցը համանման եղանակով լուծելու եղանակից ու Երեւանում մենամարտի է հրավիրել իր կուսակցական ընկերոջը՝ ՀՅԴ Մրգաստանի կենտրոնական կոմիտեի անդամ Մելիք Մուսյանին[3]:

Դրոյի ու Նժդեհի կյանք ու գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, իրոք, մեր ժողովրդի երկու նվիրյալ զավակները Հայաստանին ու հայությանը վերաբերող կարեւորագույն մի քանի հարցերի վերաբերյալ դավանել են տարբեր տեսակետներ, որոնք երբեմն տեղիք են տվել բուռն վիճաբանություններին: Իսկ դա բոլորովին չի նշանակում, որ այդ վեճերը վերածվել են անձնական բացահայտ հակակրանքի, առավել եւս թշնամանքի:

Դրոյի կնոջ՝ տիկին Գայանեի վկայությամբ Դրոն եւ Նժդեհը բազմիցս հանդիպել են իրենց բնակարանում ոչ միայն Ռումինիայում, այլեւ Բեռլինում:

«Ես ներկա էի այդ հանդիպումներին: Ցուրաքանչյուր անգամ հանդիպելիս, նրանք տարբեր հարցերի վերաբերյալ վիճաբանում

[1] Տե՛ս Իշխանեան Ե., Նշվ. աշխ., էջ 681:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս Գեւորգյան Հ., Նիկոլ Դուման, Երեւան, 2002, էջ 252:

էին, երբեմն համաձայնում էին, իսկ երբեմն էլ՝ ոչ: Վերջում մոռանում էին վիճաբանությունները, սեղան էին նստում ու մի քանի գավաթ խմում էին Հայաստանի կենաց, ապա միասին քնում մեր բնակարանում գտնվող միակ թախթի վրա»:

Մի ուշագրավ դրվագ եւս տիկին Գայանեի ու Դրոյի զինակիցների պատմածներից:

Երբ Խորհրդային զորքերը մուտք են գործել Բուլղարիա, Նժդեհը, հույս ունենալով, որ Գեորգի Դիմիտրովը, որի հետ Բուլղարիայում ապրելու տարիներին ունեցել է ընկերական հարաբերություններ, կօգնի իրեն խուսափելու գերությունից, մեկնում է Սոֆիա ու հանձնվում ԽՍՀՄ բանակին: Դրոն՝ այդ մասին տեղեկանալով, խիստ զարմացել է ու զայրացած ասել. «Այդ մարդը խելքը թռցրել է, մի՞թե նա դեռեւս հավատում է բոլշեւիկներին, պետք է Նժդեհին անհապաղ հետ բերել, քանի դեռ չի հանձնվել, հակառակ դեպքում նրան կձերբակալեն ու կգնդակահարեն»:

Նժդեհին հետ բերելու նպատակով Դրոն ինքնաթիռ է պատվիրում ու ուզում է մեկնել Սոֆիա:

Ըստ տիկին Գայանեի ու այդ դեպքի ականատես Վահրամ Բարսեղյանի պատմածի, իրենք ու եւս մի քանի ընկերներ ուղեկցել են Դրոյին եւ երբ հասել են օդանավակայան, ուր կանգնած էր Սոֆիա թռչող ինքնաթիռը, զուտ պատահականությամբ իրենց է հանդիպել Դրոյի ծանոթներից մեկը: Նրանք առանձնացել ու մի քանի րոպե զրույցի են բռնվել: Այդ ընթացքում անսպասելիորեն պայթել է Դրոյի պատվիրած ինքնաթիռը: Պարզվում է, որ նրա դեմ մահափորձ էր կազմակերպված: Դրոյին ստույգ մահից փրկել է այդ պատահական հանդիպումն ու մի քանի րոպե տեւած խոսակցությունը[1]:

Դրոյի եւ Նժդեհի փոխհարաբերության մասին հետաքրքիր հուշեր է պատմում Երվանդ Ֆնտքյանը*:

Պրագայի համալսարանի քիմիայի բաժինն ավարտելուց հետո Ե. Ֆնտքյանը Դրոյի հրավերով գալիս է Փլոյեշտի եւ աշխատանքի անցնում նավթի գործարանում: Փլոյեշտիում ապրել է Դրոյի հետ

[1] Տիկին Գայանեի ու Վահրամ Բարսեղյանի պատմածները տողերիս հեղինակը ձայնագրել է ԱՄՆ-ի Բոստոն քաղաքում: Ձայնագրությունները պահպանվում են իմ անձնական արխիվում:
* Երվանդ Ֆնտքյանը ծնվել է Տրապիզոնի Կրոպի գյուղում: Սովորել է Գեւորգյան ճեմարանում, ապա Պրագայի համալսարանում: 1915-1916 թթ. կռվել է Ձեմլյակի վաշտում եւ մասնակցել Ալեքսանդրապոլի կռիվերին: Թիֆլիսում ահաբեկել է ցարական պաշտոնյա Մ.Սախարովին , ապա ընդգրկվել է «Նեմեսիս» խմբին եւ Մ. Թորլաքյանի ընկերակցությամբ մասնակցել Ջիվանշիրի ահաբեկման գործողությանը:

նույն բնակարանում եւ մի քանի անգամ հենց այդ նույն բնակարանում ականատես է եղել Դրոյի ու Նժդեհի հանդիպումներին:

Հանդիպումներից մեկի ժամանակ, Դրոն Նժդեհին կատակով ասել է. «Երկու գոյական միացրել ես եւ մի գոյական ես կազմել. ի՞նչ իրավունքով...(նկատի ունի ցեղ-ա-կրոն-Հ. Գ.)

-«Այո՛, կարող են միանալ: Դու քերականութիւնից ի՞նչ ես հասկանում... Եւ վիճում էին երկու սքանչելի մարդիկ, երկու իրական մեծեր ու մէկը միւսին քաշքշում՝ մի փոքրիկ զուարճանալու համար...»[1]:

1936 թ. ՀՅԴ Բյուրոյի հանձնարարությամբ Դրոն գալիս է Սոֆիա՝ քննելու ՀՅԴ Բալկանների կենտրոնական կոմիտեի գործերը, որի անդամն էր Նժդեհը: Այդ հանդիպման մասին Ե. Ֆնտքյանը պատմում է հետեւյալը. «...Դրօն հարց էր տալիս, թէ ինչու՞ իրենց տուած որոշումը չի գործադրուել, եւ Նժդեհը զանազան բացատրութիւններ էր տալիս, Դրօն յանկարծ նիւթին հետ բոլորովին կապ չունեցող մի հարց էր տալիս.

-Լսի՛ր Նժդեհ, դու հայոց պատմութեան մէջ Դրաստամատ անունով մէկին յիշում ես »

-Չէ, չեմ յիշում:

Դրոն Նժդեհին պատմում է Անհուշ բերդում Արշակ թագավորի ու նրա հավատարիմ զինվորական Դրաստամատի մասին եւ վերջում ավելացնում. «Ասում ես թէ ես քերականութիւնից բան չեմ հասկանում, բայց դու էլ ազգային մեր պատմութեան ամենակարեւոր դէպքերն ու նաեւ դէմքերը չես ճանաչում: Հիմա իմացա՞ր թէ Դրաստամատը ով է...(Դրօ Դրաստամատի կրճատ ձեւն է...)»:

Այս խոսակցությունը տեղի է ունեցել սեղանի շուրջ: Նժդեհը Դրոյին լսելուց հետո, բարձրացրել է բաժակը եւ ասել «-Դրօ ջան կենացդ, ամա՛ լաւ հայոց պատմութիւն գիտես, հա՜...

-Այո՛, Նժդեհ ջա՛ն, ափսոս որ հնարաւոր չէ, որ Մանուկ Աբեղյանին մի նամակ գրէի ու հրաւիրէի, որ գար ու քեզանից քերականութեան կամ շարահիւսութեան դաս առնէր, կենա՛ցդ»»[2]:

Նժդեհի՝ որպես իր մարտական զինակցի նկատմամբ Դրոյի դրսեւորած ընկերական ու հոգատար վերաբերմունքի լավագույն ապացույցներից մեկը Ս. Վրացյանին գրած վերոհիշյալ նամակն է, որը տեղ է գտել այս աշխատության հավելվածում:

Դրան հակառակ՝ Նժդեհը, ՀՀ ՍՍՀ ՊԱՆ ներքին բանտում գտնվելու ժամանակ իր հեղինակված «Դաշնակցության առաջացման պատմական պայմանները եւ նրա բնութագիր» խորագիրը կրող ակնարկում համեմատելով ՀՅԴ հին եւ նոր սերնդի ներկայացուցիչներին, խստորեն դատապարտում է նոր սերնդի ներկայացուցիչների գործունեությունն ու բարոյական նկարագիրը, եւ միանգամայն անհարկի որակավորումներով բնութագրում Դրոյին ու Ռուբեն Տեր Մինասյանին:

Գարեգին Նժդեհի բնութագրմամբ՝«Անհնարին է զուգահեռներ անցկացնել Դաշնակցության սկզբնական եւ այժմյան ղեկավարների, այն ժամանակվա հայդուկների ու հետո եկած մաուզերիստների միջեւ՝ առանց հիանալու առաջիններով ե՛ւ խորապես նողկալու վերջիններից»[1]:

Միանգամայն ճիշտ է, մուզերիստների գործունեության ուսումնասիրությունը իրոք նողկանք է առաջացնում, բայց տարօրինակ է, որ Նժդեհը Դաշնակցության նոր սերնդին բնութագրելիս հիշատակում է մաուզերիստներին, մոռանալով, որ մեր ժողովրդի ամենաբախտորոշ ժամանակաշրջանում եւ անասելի ծանրագույն պայմաններում հայությունը գլխավորապես հենց Դաշնակցության նոր սերնդի գործուն մասնակցությամբ, այնուամենայնիվ, կարողացավ կազմավորել կանոնավոր բանակ եւ շնորհիվ Մայիսյան հերոսամարտերի նվաճած հաղթանակների ու ի դեմս Հայաստանի Հանրապետության՝ վերականգնել Հայոց պետականությունը, առանց որի խոսք լինել չի կարող հայ ժողովրդի գոյության պահմանմանը:

Շարունակելով Դաշնակցության հին ու նոր սերնդի համեմատությունն ու բնութագիրը՝ Գարեգին Նժդեհը նշում է. «Իսկապես, ի՜նչ համեմատություն կարող է լինել Նիկոլ Դումանի եւ ավազակ Դրոյի, լեգենդար Սերոբի ու մորթապաշտ Տեր-Մինասյանի (Ռուբեն փաշա) միջեւ»[2]:

Հայ ազգային-ազատագրական պայքարի մեծանուն գործիչ Նիկոլ Դումանի գործունեության ուսումնասիրությունն աներկբա հավաստում է, որ չափազանց խստապահանջ եւ ազատագրական պայքարի գործիչների մեջ անառարկելի հեղինակություն ու կշիռ ունեցող Դումանը իր հրամանատարությամբ մարտնչած երիտասարդ ռազմիկների շարքում առավելագույնս գնահատել ու վստահել է հենց Դրոյին, այլապես 20-ամյա երիտասարդին չէր հանձնարարի Բաքվի գեներալ-նահանգապետ իշխան Նակաշիձեի ու գեներալ Ալիխանով Ավարսկու ահաբեկումը, իսկ հետո վստահեր Կոտայքի, Դարալագյազի, Լեռնային Նախիջեւանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը, ապա մարտական խմբով ուղարկեր Զանգե-

[1] ԱԿՕ, Նժդեհ, էջ 456:
[2] Տե՛ս նույն տեղում 456-460:

[1] Գարեգին Նժդեհ, Հատընտիր, Երեւան, 2006, էջ 680-681:
[2] Նույն տեղում, էջ 681:

զուր՝ օգնելու գավառի մարտական ուժերի ընդհանուր զորահրամանատար Սեբաստացի Մուրադին[1]:

Իհարկե, այս անմեղի մասին Նժդեհը չէր կարող չիմանալ: Նրան նաեւ քաջ հայտնի էր, որ երբ առաջին աշխարհամարտի նախօրեին Կովկասում ծավալվում էր կամավորական շարժումը, անհնարին էր, որ Հայոց Ազգային բյուրոն եւ Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը Անդրանիկից հետո, կամավորական 2-րդ զորախմբի հրամանատարությունը վստահեին իր բնութագրմամբ՝«ավազակի», երբ մարտաշարքերում էին հայ ազատագրական պայքարի այնպիսի համբավավոր ու բազմափորձ գործիչներ, որպիսիք էին Սեպուհը, Սմբատ Բորոյանը, Դաշնակցական Խեչոն, Իշխան Արղությանը, Խանասորի Վարդանը եւ այլք:

Ավելին, լինելով կամավորական 2-րդ զորախմբի հրամանատարի՝ Դրոյի օգնականը՝ Գարեգին Նժդեհը բազմիցս ականատես ու մասնակից է եղել նրա հրամանատարությամբ տեղի ունեցած հաղթական մարտերին: Դրոյի հրամանատարական փայլուն կարողությունների ու մարտերում դրսեւորած քաջագործությունների մասին հիացմունքով են արտահայտվել ոչ միայն հայ, այլեւ ռուս բարձրաստիճան զինվորականները: Հարց է առաջանում. մի՞թե այդ ամենի մասին տեղյակ չէր Դրոյի օգնական Գարեգին Նժդեհը:

Հարց է ծագում, ի՞նչպես կարող էր Հայոց Ազգային Խորհուրդը հայության ամենաճակատագրական ու բախտորոշ պահին, հայ մարտիկներին ռազմի դաշտ ու սխրանքների կոչելու նպատակով, որպես առաջնորդի ապավիներ «ավազակին»՝ նշելով. «Ո՛վ արի, նախնեաց մեր անզուգական հերոսների քաջութեամբ զինուած մարտիկներ, դէպի ճակատ՝ մեր նոր հերոսամարտին, ուր ձեր հրամայողը, մարտի սրբազան դաշտում ձեզ առաջնորդողը ԴՐՕՆ է, մեր ամէնքի պաշտելի հերոսը, որ երբեք պարտուել չգիտէ»:

Իսկ 1918 թ. Երեւանի նահանգում մահմեդական հրոսակախմբերի դեմ նրա ծավալած գործունեությունը, ապա նաեւ մասնակցությունը Սարիղամիշի ռազմաճակատի կռիվներին ու անգնահատելի ներդրումը Մայիսյան հերոսամարտերին(Սուրմալու եւ Բաշ-Ապարան) վեր է որեւէ գովասանքից ու գնահատականից:

Բացարձակապես ճիշտ չէ մաուզերիզմը կապել Հ. Ց. Դաշնակցության ու Դրոյի գործունեության հետ:

Նժդեհին չէր կարող հայտնի չլինել, որ Հայաստանի Հանրապետության հռչակման առաջին իսկ օրերին, եւ նույնիսկ դրանից առաջ Արարատյան աշխարհում դիկտատոր հռչակված, իսկ հետո

[1] Տե՛ս Գեւորգյան Հ, Նիկոլ Դուման, Երեւան, 2001:

ՀՀ ներքին գործերի նախարարի պաշտոնը ստանձնած Արամ Մանուկյանի համագործակցությամբ մաուզերիստների անօրինական խմբերի դեմ գլխավորապես պայքարել է Դրոն եւ ինչ-որ տեղ նաեւ Ռուբենը: Պիտի նշել, որ հենց նրանց գործունեության շնորհիվ է հանրապետությունում վնասազերծվել մաուզերիստական խմբերը եւ կարգուկանոն հաստատվել երկրում:

Շարունակելով որեւէ փաստով չհիմնավորված Դրոյին տրված բնութագիրը՝ Նժդեհը նշում է. «Դոկտոր Օհանջանյանի (նկատի ունի ՀՀ 3-րդ վարչապետ Համո Օհանջանյանին-Հ. Գ.) ու Նավասարդյանի աչքերում Դրոն «գյաղայի» տիպար է՝ ընդունակ ցանկացած հանցագործության: Տեր-Մինասյանը ինձ ուղղած մի նամակում Դրոյին անվանել «հայ ժողովրդի դավաճան», որն «իր կամավորական հարձակումներով հարուցեց հայ ժողովրդի սպանդը Թուրքիայում»[1]:

Առավել արդար ու համոզիչ կլիներ, որ Նժդեհը իր մեջբերումը հիմնավորելու համար վկայակոչեր Դրոյի կատարած գոնե մեկ հանցագործություն:

Անտարակույս, եթե Համո Օհանջանյանի աչքում Դրոն «գյաղայի» տիպար էր, ապա ինչպե՞ս բացատրել, որ լինելով ՀՀ վարչապետ, ինչո՞ւ էր նրան վստահում ՀՀ պաշտպանության նախարարի օգնականի պաշտոնը, Զանգեզուր-Արցախ հատուկ նշանակության զորախմբի, իսկ հայ-թուրքական պատերազմի ժամանակ Սուրմալուի ռազմաճակատի հրամանատարությունը: Իսկ ՀՀ վերջին վարչապետ Ս. Վրացյանի գլխավորած կաբինետում հենց Համո Օհանջանյանի առաջարկությամբ է Դրոն նշանակվել ՀՀ զինվորական նախարարի պաշտոնում:

Հանրահայտ իրողություն է, որ Դրոյի մերձավորագույն ընկերները եղել են Սիմոն Վրացյանն ու Վահան Նավասարդյանը: Հարց է ծագում, ինչպե՞ս կարող էր Վ. Նավասարդյանի աչքում իր հարազատ ընկերը՝ Դրոն, ըստ Նժդեհի մեջբերման, լինել «գյաղայի» տիպար, երբ հենց նա է Դրոյին անվանել «...քաջերուն մէջ շքեղօրէն քաջը եւ հերոսներուն մէջ կախարդօրէն հերոսը», «Հայկական Ազատամարտի ամէնէն դիւցազնատիպ էջերը զարդարած...»:

Իսկ ինչ վերաբերում է Նժդեհի պնդմամբ իբրեն հասցեագրած Ռուբեն Տեր-Մինասյանի նամակում Դրոյին վերագրած «հայ ժողովրդի դավաճան», որն «իր կամավորական հարձակումներով հարուցեց հայ ժողովրդի սպանդը Թուրքիայում» մեղադրանքին, ապա

[1] Նույն տեղում, էջ 684:

պիտի ասել, որ դա չի դիմանում որեւէ քննադատության: Եթե Դրոն իր գլխավորած կամավորական զորախմբի հարձակումներով հարուցել է հայ ժողովրդի սպանդը, ապա մի՞թե նույնը չեն արել հայ կամավորական մյուս զորախմբերը: Այդ դեպքում դավաճան կարելի է անվանել կամավորական զորախմբերի բոլոր կազմակերպիչներին ու այդ թվում նաեւ Անդրանիկին, Քեռուն, Սեպուհին, Համազասպին, Սմբատին, Խանասորի Վարդանին, Խեչոյին, Իշխն Արղությանին եւ մյուս հրամանատարներին:Կամավորական զորախմբերը, ճիշտ է, չկարողացան ու չէին կարող կանխել Օսմանյան տերությունում իրականացրած հայության սպանդը, սակայն փրկեցին տասնյակ հազարավոր հայերի: Որպես վերոհիշյալի լավագույն ապացույց եւ օրինակ կարելի է հիշտակել դեպի Արեւելյան Հայաստան գաղթող Վան-Վասպուրականի բնակչության պաշտպանության ժամանակ Դրոյի գլխավորած 2-րդ կամավորականի մղած փրկարար նշանակություն ունեցող կռիվները:

Մի էական պարզաբանում:

Մի՞թե գաղտնիք են ու անհայտ ձերբալալվածների նկատմամբ ԽՍՀՄ ՊԱԿ-ի պահվածքն ու վերաբերմունքը, հարցաքննության ձեւերն ու միջոցները: Համակ ուշադրությամբ հետեւելով ձերբակալվածների յուրաքանչյուր շարժումներին, ՊԱԿ-ի աշխատակիցները միջոցների մեջ խտրականություն չդնելով, նրանց ներկայացրել են մտացածին ու չինծու մեղադրանքներ եւ կիրառելով անպատմելի բռնություններներ ու անմարդկային դաժան միջոցներ՝ ստորագրել են տվել իրենց անհրաժեշտ ցանկացած մեղադրանք:

Մի՞թե Գարեգին Նժդեհը կարող էր բացառություն կազմել: Ճիշտ չէ ԽՍՀՄ-ի ՊԱԿ-ի ճիրաններում հայտնված որեւէ բանտարկյալից հարկադրաբար կորզած «բացատրություններն ու խոստովանությունները», ինչպես նաեւ ՊԱԿ-ի աշխատակիցների դաժան հսկողության պայմաններում գրած ակնարկներն ու այլ գրությունները ընդունել որպես սկզբնաղբյուր եւ նախադրյալ ու առանց անաչառ վերլուծության՝ կատարել եզրահանգումներ ու ընդհանրացումներ:

Ուշագրավ է, որ Գարեգին Նժդեհը «Դաշնակցության առաջացման պատմական պայմանները եւ նրա բնութագիր» խորագիրը կրող ակնարկը գրել է 1947 թ. ՀՀ ՍՍՀ ՊԱՆ բանտում գտնվելու ժամանակ, այսինքն Երեւանում:

Համոզված կարելի է պնդել, որ Գարեգին Նժդեհը իր բանտային գրառումները որոնց թվում՝ վերոհիշյալ ակնարկը, գրել է ՀԽՍՀ

ՊԱՆ բանտի աշխատակիցների հսկողությամբ եւ բնավ չի բացառվում՝ նրանց թելադրանքով, այլապես նա որքան էլ չսիրեր Հ. Ց. Դաշնակցության նոր սերնդի ներկայացուցիչներին, Դրոյին, որին ի դեպ հենց ինքն է անվանել Հայաստանի Գարիբալդի եւ Ռուբեն Տեր-Մինասյանին, նման չփաստարկված ու անհարկի որակումներով չէր բնութագրի նրանց: Իսկ հայ կոմունիստների վերաբերմունքը Հ. Ց. Դաշնակցության եւ հատկապես Դրոյի նկատմամբ ավելի քան թշնամական էր:

Եթե ընդունենք, որ այդ ակնարկը գրվել է ինքնուրույն, առանց ՀԽՍՀ ՊԱՆ բանտի աշխատակիցների միջամտության ու թելադրանքի, որը շատ քիչ է հավանական, ապա կարելի է ասել, որ դա բնավ չի խոսում հօգուտ Նժդեհի:

Դրոյի կյանքի ու գործունեության ուսումնասիրությունը միանշանակ հավաստում է, որ նրա զորավարական տաղանդի, մարտերում դրսեւորած քաջագործությունների ու մերձավորների նկատմամբ դրսեւորած մարդկային բացառիկ վերաբերմունքի, ընկերասիրության մասին արժնվույնս են գնահատել ոչ միայն նրա հրամանատարությամբ մարտնչած զինվորականները՝ գնդապետներ Խուդաբաշյանը, Կարապետ Հասանփաշայանը, Կորոլկովը, Շնեուրը, Կուռո Թարխանյանը, Եգոր Տեր Ավետիքյանը, Տիգրան Բաղդասարյանն ու բազում այլ զինվորականներ եւ ոչ զինվորականներ, այլեւ ՀՀ բանակի բարձրաստիճան զորապետները՝ գեներալներ Թ. Նազարբեկյանը, Մ. Սիլիկյանը, Ք. Արարատյանը եւ այլոք: Իսկ նրա գլխավորած կամավորական զորախմբի հրամանատարներ Մարտիրոս Աբրահամյանը, Ղազար Քոչարյանն ու Ցապոնը(Հովհաննես Պարոնյան) իրենց հուշագրություններում ներկայացնելով նրա հրամանատարությամբ ու իրենց մասնակցությամբ տեղի ունեցած կռիվները, խորին հարգանքով ու ակնածանքով դրվատելով նրա մարդկային անբասիր նկարագիրը՝ նրան որակում են որպես քաջազուն մարտիկ, լեգենդատիպ ու տաղանդավոր ռազմավար զինվորական:

Գեւորգ Հայրյանը իր հեղինակած «Վահագնի ծնունդը (Ասք ազգային հերոս Դրոյի մասին)» գրքույքում միանգամայն իրավամբ գտնելով, որ «Այդ կերպարն ամբողջական դարձնելու համար մի գիրք, այն էլ ոչ մեծածավալ, քիչ է», տալիս է Դրոյի ուշագրավ հետեւյալ բնութագիրը. «Վահագնածին Դրոն իր մեջ կրում էր հարազատ ժողովրդի լավագույն հատկանիշները, բարեկամների համար բարի էր ու սրտամոտ, թշնամիների նկատմամբ խիստ էր ու անզիջող: Իր ցեղի ազատագրական մարտերում գործած անօրինակ

սխրանքների շնորհիվ նրա կյանքը, դեռ կենդանության օրոք, կատարյալ առասպել էր դարձել: Նա ռազմական գործիչ լինելուց բացի պետական գործիչ էր, որը դեռ Սարդարապատից առաջ, անմոռաց Արամի հետ կառուցում էր անկախ Հայաստանի Հանրապետությունը, մնալով նրա հետագա զարգացման եռանդուն մասնակիցն ու ոգեշնչողը»[1]:

Երեւանում հեղկոմի իշխանության հաստատվելուց հաշված օրեր անց մոռացվեցին ու անտեսվեցին բոլշեւիկների խոստացած դեմոկրատիան եւ պետական, զինվորական ու դաշնակցական գործիչների անձեռնմխելիությունը պահպանելու խոստումները: Դաժան հալածանքներ ու բռնություններ սկսեցին գործադրել քաղաքական, զինվորական եւ կուսակցական գործիչների ու մտավորականների նկատմամբ:

Ձերբակալությունից խուսափելու հարկադրանքով Հայաստանից տարբեր ուղղությամբ հեռացել են մի շարք ռազմական ու քաղաքական գործիչներ: Ռուբեն Տեր-Մինասյանին ու Լեւոն Քալանթարյանին Զանգեզուր ուղեկցելու առաջադրանքը Մարտիրոսին հանձնարարում է Դրոն, որն այդ ժամանակ դեռեւս ՀՀ պաշտպանության նախարարն էր: Մարտիրոսն այնքան էլ չի ոգեւորվել այդ հանձնարարությամբ եւ փորձել է իր մերժումը արդարացնել պատճառաբանելով, որ ինքը չպետք է լքի Դրոյին, թողնի նրան միայնակ ու գնա: Ռուբենին Զանգեզուր ուղեկցելու համար նա խոստանում է տրամադրել հուսալի մարդկանց , որոնք ապահով նրան կհասցնեն Լեռնահայաստան:

Երկրորդ անգամ Մարտիրոսին կանչելով իր՝ պաշտպանության նախարարի աշխատասենյակը, Դրոն հարցնում է.

«- Ինչո՞ւ ես հրաժարվում, պատճառն ուզում եմ իմանալ:

- Քեզ դաւաճանել չեմ ուզում:

Դրոն դեմքը խոժոռեց, բռունցքը խփեց սեղանին:

- Հրամայում եմ քեզ, որ առանց այլուայլի գնաս, պատրաստես ու մեկնես Ռուբէնի հետ:

... Դու ամբողջապէս դրւում ես Ռուբէնի տրամադրութեան տակ: Քեզ ինչ որ կարգադրի, առանց առարկութեան պիտի լսես եւ կատարես, եթէ ապահով տեղ հասնելուց յետոյ նա թոյլ տա քեզ վերադառնալ, կարող ես յետ գալ»[2]:

Մարտիրոսը հաջողությամբ է կատարում այդ հանձնարարությունը: Նա ապահով ուղեկցում է մինչեւ Զանգեզուր, եւ մինչեւ

[1] Գեւորգ Հայրյան, նշվ. աշխ.,, էջ 6:
[2] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, նշվ. աշխ., հ. 2, էջ 13:

դեկտեմբերի 21-ը, համաձայն Դրոյի հրահանգի, մնում է Ռուբենի տրամադրության տակ, ապա դեպքերի թելադրանքով, ստանում է նրա համաձայնությունն ու անհապաղ վերադառնում Երեւան:

Հայաստանում կատարվող չարաղետ դեպքերի եւ հեղկոմի կենսագործած «քաջագործությունների» լուրը տարածվելով՝ հասնում է Լեռնահայաստան, ուր Ռուբենի պահանջով դեռեւս գտնվում էր Մարտիրոսը: Հայաստանում կատարվող իրադարձությունները, պետական եւ ռազմական գործիչների զանգվածային ձերբակալությունների լուրը կտրուկ կերպով փոխում է Զանգեզուրում հանգրվանած Ռուբենի եւ նրան ուղեկցող Մարտիրոսի ու մյուս ընկերների տրամադրվածությունը: Եթե մինչ այդ Ռուբենը համառորեն պահանջում էր, որ Մարտիրոսը մնա իր հետ, գործի Լեռնահայաստանում, ապա այժմ հարկադրված փոխում է իր ցանկությունը: Նա, դիմելով Մարտիրոսին, ասում է.

«- Մարտիրո՛ս, դու անյապաղ պէտք է վերադառնաս Երեւան: Բանտարկած ընկերներին անխուսափելի մահ է սպառնում: Բոլոր միջոցները պէտք է գործադրես՝ բանտից ազատելու համար մեր ընկերներին կամ կաշառքի, կամ գաղտնի փախուստի եւ կամ ապստամբութեան միջոցով: Որքան ուշանաս, այնքան կը դժւարանայ ընկերներին ազատելու խնդիրը»[1]:

Երեւան վերադառնալու նախօրեին Ռուբենը Մարտիրոսին տալիս է չորս նամակներ, որոնցից մեկը նա պիտի Գորիսում հանձներ Գարեգին Նժդեհին, մյուսը Դարալագյազում՝ Եղիշե Իշխանյանին(Արցախի Ազգային Խորհրդի նախկին նախագահ-Հ.Գ.), իսկ մյուս երկուսը՝ Դրոյին եւ Ս. Վրացյանին:

Մարտիրոսը, կատարելով Ռուբենի հանձնարարությունը, լինում է Գորիսում եւ նամակներից մեկը հանձնում Նժդեհին, որը կարդալով նամակը, ուրախանում ու հավանություն է տալիս նրանում արծարծված առաջարկություններին եւ իր կողմից ավելացնում. «Դու տեղ հասնելուն պէս, կարճ ժամանակում կազմակերպիր մեր համակիր ու դժգոհ ռազմական ուժերը, այդ ապստամբ ուժերի գլուխն անցած՝ աշխատիր գրավել Երեւանը եւ գնդակահարումից ազատել մեր բանտարկած ընկերներին: Ապստամբների ղեկաւար մարմինը անուանիր «ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԷ...»[2]:

Եթե հիմք ընդունենք Մարտիրոսի վկայությունները, ապա պիտի փաստել, որ խորհրդային իշխանության դեմ ապստամբելու եւ վերստին իշխանությունը նվաճելու գաղափարը Ռուբենը մտահղացել է

[1] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 27-28:
[2] Նույն տեղում:

Զանգեզուրում գտնվելու ժամանակ, որի մասին նա հայտնում է Հայաստանում գտնվող ընկերներին՝ Դրոյին եւ Ս. Վրացյանին: Իսկ ապստամբության ղեկավար մարմինը՝ «ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԷ», առաջինը կոչել է Նժդեհը:

Մարտիրոսը առանց որեւէ դժվարության գալիս է Երեւան եւ Ռուբենի գրած նամակները. ապահով հանձնում է հասցեատերերին՝ Դրոյին եւ Ս. Վրացյանին:

Մի ուշագրավ երեւույթ. Ս. Վրացյանը, որն ընդամենը մեկուկես շաբաթ անց պիտի ստանձներ խորհրդային իշխանության դեմ բռնկված ապստամբության ղեկավար մարմնի՝ Փրկության կոմիտեի ղեկը, կարդալով Մարտիրոսի կողմից իրեն հանձնած Ռուբենի նամակը «...խիստ զայրացել ու ասել էր.

- Է՛ս ինչ նոր աւանտիւրա է պատրաստում - նամակն էլ սկզբում անպատասխան թողեց»[1]:

Իսկ մի քանի օր անց, երբ բոլշեւիկները Երեւանի բանտում ավելի ու ավելի էին շատացնում ձերբակալվածների թիվը, իսկ Դրոյին ուղարկում «Պատվավոր աքսոր», Հայաստանում ծավալվող իրադարձությունների թելադրանքով «Ընկ. Ս. Վրացեանը, - նշում է Մարտիրոսը, - ոչ միայն ապստամբութիւնը չհամարեց ավանտիւրա, այլ եւ հրահանգեց, խնդրեց շտապեցնել այն եւ առաջին հերթին գրաւել Երեւանն ու ընկերների կեանքը փրկել ահաւոր վտանգից՝ գնդակահարութիւնից»[2]:

Դրոն, ծանոթանալով խորհրդային իշխանության դեմ ապստամբելու Ռուբենի առաջարկությանը, որոշակիորեն կողմ կամ դեմ չի արտահայտել իր տեսակետը, բայց Մարտիրոսին փոխանցել է հետեւյալ հրահանգը. «Զպիտի՛ գայիր: Որ եկել ես, առանց իմ գիտութեան եւ հրահանգի ոչինչ չձեռնարկես: Այնպէս կը թագնուես, որ ձերոնք էլ տեղդ չիմանան»[3]:

Դատելով Մարտիրոսին տված նրա հրահանգից՝ կարելի է ենթադրել, որ նա սթափ գնահատելով Հայաստանում տիրող քաղաքական, սոցիալ-տնտեսական իրական կացությունը, տվյալ պահին կողմնակից չի եղել ապստամբության բարձրացմանը: Մանավանդ, որ արդեն ստորագրվել էր իշխանությունը խաղաղ ճանապարհով բոլշեւիկներին հանձնելու դեկտեմբերի 2-ի համաձայնագիրը, իսկ թուրքական զորքերը, որոնց դիմակայող հայ մարտական ուժեր

[1] Նույն տեղում, էջ 35:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

գրեթե չկային, ընդամենը մի քանի կիլոմետր հեռավորության վրա էին գտնվում Արարատյան դաշտից ու մայրաքաղաքից:

Հաստատվելով Հայաստանում բոլշեւիկներն ավելի ու ավելի են խստացնում բռնություններն ու հարստահարությունները:

Շատ շուտով Հայաստանից հեռացնելու հերթը հասնում է նաեւ Դրոյին, որն այդ ժամանակ պաշտոնապես դեռեւս համարվում էր Խորհրդային Հայաստանի բանակի հրամանատարը: 1921 թ. հունվարի 10-ին 11-րդ Կարմիր բանակի հրամանատար Գեկկերի «հրավերով» նա պիտի մեկներ Բաքու:

Մարտիրոսի գնահատմամբ՝ «Յունուարի սկզբներին պարզուեց, որ կոմունիստական շրջանակները Դրոյի ներկայութիւնը Հայաստանում համարում են անհանդուրժելի, նրա ունեցած բարոյական հեղինակութեան համար...»[1]:

Մինչ Մոսկվա մեկնելը, բոլշեւիկների կողմից նրան տնային բանտարկության ենթարկելու իրողությունը ավետող լուրերը տարածվելով՝ հասել էին նույնիսկ Զանգեզուր: Իրենց հրամանատարի կարգավիճակն ու նրա կյանքին սպառնացող վտանգն անչուշտ չէր կարող չմտահոգել ու անհանգստացնել Զանգեզուրում գտնվող նրա զինակիցներին:

«Յունուարի 8-ին թէ 9-ին (1921 թ.),-գրում է Մարտիրոսը,- Երեւանից լուր հասաւ, որ Դրոյին բոլշեւիկները տնային բանտարկութեան ենթարկել: Ես սոսկալիօրէն ազդուեցի: Անմիջապէս Լեւոնին մի նամակով ուղարկեցի Երեւան՝ նախ ստուգելու թէ ճի՞շտ է ինձ հասած լուրը, երկրորդ՝ ի՞նչ է մտածում ինքը՝ Դրոն:

Նամակովս յայտնում էի.

«Սիրելի Դրո».

Լսեցի որ քեզ տնային բանտարկութեան են ենթարկել: Ես ի վիճակի եմ երկու հարիւր զինուած ձիաւորներով գիշերը մտնել Երեւան եւ քեզ փախցնել: Միայն խնդրում եմ նամակաբերիս միջոցով յայտնես ժամը, տեղը եւ օրը»»[2]:

Որեւէ կասկած լինել չէր կարող, որ Դրոյի համաձայնությունը ստանալու դեպքում Մարտիրոսն անպայմանորեն կկատարեր իր խոստումն ու 200 զինված ձիավորների գլուխն անցած՝ գիշերով կներխուժեր Երեւան ու մայրաքաղաքից դուրս կբերեր իրենց հրամանատարին: Զինած հեծելախմբի ներխուժումը Երեւան եւ Դրոյի հեռանալը կարող էր դիտվել որպես զինված ելույթ, ապստամբության փորձ ընդդեմ խորհրդային իշխանության: Համանման ձեռնարկում կարող էր հարմար պատրվակ ծառայել, որպեսզի արյուն

[1] Նույն տեղում, էջ 51
[2] Նույն տեղում, էջ 50:

հեղելու ցանկությամբ տառապող Ավիսն ու Աթաբեկյանը եւ նրանց զինակիցներն առավելագույնս սաստկացնեին բռնություններն ու հալածանքները, ինչը կարող էր հանգեցնել անկանխատեսելի հետեւանքների:

Հայաստանից մեկնելու նախօրեին, Դրոն՝ անտարակույս հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքը, Մարտիրոսին գրած հաջորդ նամակում հայտնում է.

«Շատ սիրելի Մարտիրոս.

Ժողովրդական ասէկոսէներին մի հաւատայ, ինձ տնային բանտարկութեան չեն ենթարկել: Միայն ես իմ կամքով, ուզում եմ գնալ Մոսկւա, որ համոզեմ, որպեսզի մեր երկիրն ու ժողովուրդը ազատագրեմ այս լակոտ - լուկուտների ահաւոր հալածանքներից:

...Դո՛ւ էլ, սիրելի Մարտիրոս, ինչպէս անցեալում էլ գրել եմ քեզ, ոչինչ չես անի, կը սպասես հրահանգի: Լաւ կը թագնուես, որ տեղդ ոչ ոք չիմանայ»[1]:

Այս նամակը մեկ անգամ եւս հաստատում է, որ ապստամբություն բարձրացնելու հարցում Դրոն այդ ժամանակ վճռականորեն տրամադրված չէր, քանզի դեռեւս հավատում էր, որ իրեն կհաջողվի բոլշեւիկյան կենտրոնական իշխանության աջակցությամբ փոխել Հայաստանում տիրող իրավիճակը:

Իհարկե, Դրոյի ներկայությունը Խորհրդային Հայաստանի հեղկոմի համար ավելի քան անցանկալի էր:

1.Նախ, ինչպես հայտնի է, բոլշեւիկների դավանանքը միահեծան իշխանության հաստատումն է, եւ այս առումով նրանց համար միանգամայն ընդունելի ու հանդուրժելի չէր Դրոյի կամ որեւէ մեկ այլ, ոչ բոլշեւիկ անձնավորության ներկայությունը հեղկոմի կազմում:

2. Դրոն դեռեւս հեղինակություն եւ ազդեցիկ ուժ էր Հայաստանում, հատկապես զինվորականության շրջանում: Նրա ներկայությունը ոչ միայն կարող էր ստվերել հեղկոմի անդամների, հատկապես արյունարբու Ավիսի եւ իր անպատմելի դաժանությամբ հայտնի նշանավոր չեկիստ Գեւորգ Աթաբեկյանի հեղինակությունը, այլեւ ինչ- որ տեղ խանգարել կենսագործելու նրանց միահեծան իշխանությունն ու բռնապետական քաղաքականությունը:

Վկայակոչենք հայրենական պատմաբան Վ. Ղազախեցյանի կազմած ու խմբագրած «Հ.Յ. Դաշնակցությունը եւ խորհրդային իշխանությունը» գրքում տեղ գտած մի քանի ուշագրավ փաստաթղ-

[1] Նույն տեղում, էջ 50-51::

թեր, որոնք խոսուն ապացույցներն են Դաշնակցության եւ Դրոյի նկատմամբ հայ բոլշեւիկների դրսեւորած վերաբերմունքի:

1920 թ. դեկտեմբերի 23-ին Ալեքսանդրապոլի գավառի պատասխանատու աշխատողների ընդհանուր ժողովը, քննարկելով Հայաստանում տիրող քաղաքական իրավիճակը, ընդունում է մի բանաձեւ, որում կարեւորելով դաշնակցական հակահեղափոխության դեմ անողոք պայքար մղելու ահրաժեշտությունը, միաժամանակ նշում է. «Ժողովը անհրաժեշտ է համարում նշել այն հանգամանքի մասին, որ մեր իշխանությունը մասամբ հենվում է Դրոյի եւ մյուս խմբապետների վրա, եւ որը վարկաբեկում է ինչպես մեր կուսակցությանը, այնպես էլ բանվորա-գյուղացիական իշխանությանը եւ կասկածի վերաբերմունք է ծնում մեր իշխանության նկատմամբ ինչպես բանվորագյուղացիական զանգվածների, այնպես էլ թուրքական ասկյարների կողմից, որոնց համակրանքը մեր իշխանության նկատմամբ աճում է օրեցօր»[1]:

ՀՀ Կենտկոմին հասցեագրած նամակներից մեկում Ռուսաստանում Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Սահակ Տեր -Գաբրիելյանը, անդրադառնալով դաշնակցականներին իշխանությունից հեռացնելու անհրաժեշտությանը, գրում է. «Քանի դեռ կոնֆերանսը չի սկսվել (նկատի ունի Թուրքիայի հետ կայանալիք կոնֆերանսը, որը տեղի ունեցավ 1921 թ. փետրվար- մարտ ամիսներին, եւ առանց Հայաստանի ներկայացուցչի մասնակցության ընդունվում է մարտի 16-ի հանրահայտ որոշումը-Հ.Գ.), Ձեզ անհրաժեշտ է մաքրվել դաշնակցական աղտեղությունից, Դրոյից եւ մյուսներից: Բանն այն է, որ Ռուսաստանին ուղղված դիմումներում թուրքերը անվստահություն են հայտնում դեպի հայ կոմունիստները ընդհանրապես, մասնավորապես մատնացույց են անում Դրոյի եւ մյուսների լինելը կառավարության կազմում: Որպեսզի մենք կարողանանք նույն ձեւով հարվածել թուրքերին, ինչպես, օրինակ, թուրքական կառավարության մեջ Նուրի փաշայի (Էնվերի խորթ եղբայրն է Նուրի փաշան, որի գլխավորությամբ 1918 թ. թուրքական զորքերը գրավել են Բաքուն եւ մեծապես նպաստել Բաքվի հայության կոտորածին-Հ.Գ.), գնդապետ Ջեյնալովի եւ մյուս ակնհայտ հակահեղափոխական տարրերի առկայությունը, որոնք արդեն բախվել են Ադրբեջանում կարմիր զորամասերի հետ, անհրաժեշտ է հրաժարվել Դրոյի եւ մյուսների ծառայությունից, եթե նույնիսկ նրանք ամբողջ անկեղծությամբ աշխատում են մեզ հետ»[2]:

[1] «Հ.Յ. Դաշնակցությունը եւ խորհրդային իշխանությունը», Երեւան, 1999, էջ 11:
[2] Նույն տեղում, էջ 12:

Վերոհիշյալ փաստաթղթերը փաստում են մի ուշագրավ իրողություն: Եթե հիմք ընդունենք Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպության ընդհանուր ժողովի ընդունած բանաձևի եւ Սահակ Տեր -Գաբրիելյանի հավաստումները, ապա պարզվում է, որ Հայաստանից Դրոյի հեռացմամբ շահագրգռված էին նաեւ Թուրքերը: Անշուշտ, թուրքական կողմին՝ ծանոթ էին նրա զորավարական եւ կազմակերպական բազմաշնորհ կարողություններն ու ինչպես նաեւ Հայաստանում ունեցած նրա անժխտելի հեղինակությունը: Միանգամայն հնարավոր է, որ Հայաստանից նրան հեռացնելիս բոլշևիկները հաշվի են առել նաեւ թուրքերի պահանջը: Չի բացառվում, որ Դրոյին Հայաստանից հեռացնելու անհրաժեշտությունն ու ձգտումը թելադրեր հայ բոլշևիկներին, որպես հարմար եւ արդարացուցիչ պատրվակ, հորինել իրենց դաշնակից թուրքերի ներկայացրած մտացածին պահանջները:

Հեղկոմի անդամ, Խորհրդային Հայաստանի զինվորական կոմիսար Ավիս Նուրիջանյանը, որի իրավասությանն էին հանձնված Հայաստանի ներքին կարգուկանոնի հաստատումն ու վերահսկողությունը, Ադրբեջանում ՀԿ(բ)Կ Կենտկոմի ներկայացուցչի հետ կայացած հեռախոսազրույցում, ներկայացնելով Հայաստանում իրենց ձեռք բերած նվաճումներն ու մասնավորապես Դաշնակցության դեմ ձեռնարկած արդյունավետ պայքարի արդյունքները, միաժամանակ նշում է. «Մենք ձեռնարկում ենք ամենաեռանդուն միջոցները նաեւ այլ կուսակցությունների նկատմամբ, ինչպես մենշեւիկները եւ էսեռներն են: Մեզ մոտ, ինչպես եւ ձեզ մոտ, այլ վերաբերմունք լինել չի կարող, քան պայքարը նրանց դեմ: Ռուսաստանից ժամանող շատ ընկերներ զարմանում են այն եռուն աշխատանքից, որ նկատվում է մեզ մոտ: Հայաստանից դուրս կանգնած ընկերներին զարմացնում է մեր բանակում Դրոյի ներկայության փաստը...»[1]:

Հայաստանից Դրոյի հեռացման հանգամանքին անդրադարձել է նաեւ Հ.Յ.Դաշնակցությունից Հեղկոմի կազմում ընդկրկված Համբարձում Տերտերյանը: Ըստ նրա՝ քանի որ իրեն եւ Դրոյին չէին հրավիրում մասնակցելու Հեղկոմի նիստերին, ուստի ինքը որպես ֆինանսական նախարարության վարիչ, որոշում է անձամբ ներկայանալ Հեղկոմի նախագահ Սարգիս Կասյանին՝ խոսելու իր անելիքների , կարգավիճակի մասին ու միաժամանակ պարզելու Հեղկոմի ու Դրոյի եւ իր փոխհարաբերությունը:

[1] Նույն տեղում:

Հանդիպման ընթացքում ի թիվս քննարկված մի շարք հարցերի՝ Սարգիս Կասյանը հաղորդել է, որ «...Ավիսը չափազանց դժգոհ է եղած Լեգրանից, որ նա խորհրդայնացումը կատարել էր անարիւն եւ Ցեղկոմի անունից Դաշնակցութեանը տուել է որոշ աւանսներ, հրաւիրելով մինչեւ իսկ ինձ ու Դրոյին: Պարզուեց, որ կոմունիստ շարժանակները դժգոհ են, որ Ցեղկոմի մէջ են մտնում երկու դաշնակցական, մասնաւորաբար դժգոհ են եղած Դրոյի մասնակցութիւնից»[1]:

Եթե հիմք ընդունենք վերոհիշյալ նախադրյալները, ապա ամենաստույգ եզրահանգումը պիտի լինի այն, որ Հայաստանից Դրոյի հեռացումը պայմանավորված էր միաժամանակ ե՛ւ Հեղկոմի, ե՛ւ թուրքերի կողմից նրա նկատմամբ դրսեւորած անհանդուրժողական դիրքորոշմամբ ու վերաբերմունքով:

Շատերն էին հասկանում այդ «հրավերի» բուն էությունը եւ փորձում էին նրան համոզել հրաժարվել Բաքու մեկնելուց: Սուրմալուի ճակատամարտում հաղթանակ նվաճած Դրոյի գվարդիայի հիմնական միջուկը դեռեւս պահպանվել էր, եւ նա ցանկացած պահի կարող էր խույս տալ կարմիրների ճանկերից:

Հայաստանի Հանրապետության վերջին անցքերը լուսաբանող վավերագրերից մեկում կարդում ենք. «Հայաստանում աշխատում է 11-րդ ռուսական բանակի արտակարգ կոմիսիան, որը անկախ է իր գործողութիւնների մեջ, կարող է գնդակահարել եւ բանտարկել բոլորին անխտիր եւ ոչ ոք իրաւունք չունէ նրանից բացատրութիւն պահանջելու: Դրոյին կանչում են Բագու, որ իբրեւ զօրքի հրամանատար հաշիւ տայ իր բանակի մասին - մեզ հաղորդուեց առ ժամանակ թոյլ չտալ, որ Դրօն գնայ - Դրոյի գնալը կը վերջանայ նրա կեանքի գնով: Այդպէս ենք համոզուած»[2]:

Առաջնորդվելով այդ մտավախությամբ՝ Հ.Յ.Դաշնակցության Երեւանի պատասխանատու մարմինը փորձում է արգելել նրան չընդունել բոլշևիկների կողմից Բաքու մեկնելու «հրավերքը»:

«Պատասխանատու մարմինը,-վկայում է Հ. Տեր-Հակոբյանը,- դէմ էր Դրոյի մեկնելուն, գտնելով դա չափազանց վնասակար մեր երկրին, մասնավորապէս մեր կուսակցութեանը: Նրա որոշման համաձայն, ես եւ Յ. Բուտաղեանը գնացինք Դրոյի մօտ եւ կուսակցութեան անունից յայտարարեցինք, որ չգնայ, որ նրա գնալուց յետոյ պիտի առանց քաշուելու քայքայեն մեր զօրքը (իսկ նրա ներկայու-

[1] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, «Համբարձում Տերտերեանի յուշերը», հ. Զ, Պէյրութ, 1967, էջ 284:
[2] ՀՀ ԲԿԱ, թԺ. 121, գ. 97, «Հայաստանի վերջին անցքերը», էջ 10-11:

թիւնից կվախնային) եւ ապա՝ որ նա, որպէս զինուորական ոյժ, հարկաւոր է մեր երկրին, ու երրորդ՝ որ նրա գնալուց յետոյ բոլշեւիկները աւելի ազատ կվարուեն Դաշնակցութեան հետ: Առաջարկեցինք կամ մնալ Հայաստանում, եթէ դա հնարաւոր է, կամ անցնել Զանգեզուր կամ Թաւրիզ»[1]:

Նույն՝ Բաքու գնալու մտադրությունից հրաժարվելու պահանջով նրան դիմում են նաեւ Ս. Վրացյանն ու Հ. Տերտերյանը:

«Յունուարի սկզբներին պարզուեց, - վերհիշում է Հ. Տերտերյանը, - որ կոմունիստական շրջանակները Դրոյի ներկայութիւնը համարում են անհանդուրժելի նրա ունեցած բարոյական հեղինակութեան համար հայկական զօրամասերում: Նրան անպաշտօն հասկացրել էին, որ պէտք է հեռանա Հայաստանից: Նրա մեկնելուց առաջ ես եւ Վրացյանը եղանք մօտը եւ խորհրդակցեցինք մեր անելիքների մասին: Նախատեսելով ժողովրդական ապստամբութեան անխուսափելիութիւնը՝ մենք նրան խորհուրդ տուինք, որ եթէ հնարաւոր է համարում, չերթայ Ռուսաստան, այլ քաշուիլ Զանգեզուր: Դրօն անընդունելի էր համարում Զանգեզուր քաշուիլը, նախ անպատուաբեր էր նկատում իր համար փախուստը, երկրորդ՝ անկեղծօրէն համոզուած էր, որ Մոսկուան համամիտ չէ Յեղկոմի քաղաքականութեան եւ կարծում էր, որ բաւական է ինքը բացատրութիւն տայ Մոսկուայի ղեկավար շրջաններին, իսկոյն կը փոխուի Հայաստանի Յեղկոմի թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին քաղաքականութիւնը»[2]:

Հ. Տերտերյանի պնդմամբ՝ իրենց ներկայությամբ Դրոյի սպաներից մի քանիսը դիմել են նրան, խնդրել ու աղաչել են չհեռանա երկրից ու անմիջապես ապստամբություն բարձրացնեն:

Դրոն մերժում է սպաների, այսինք իր մարտական զինակիցների առաջարկությունը, այդ պահին ապստամբություն բարձրացնելու վերաբերյալ նրա տեսակետն ու համոզմունքն անբեկանելի էր:

...Դրօն,-գրում է Հ. Տերտերյանը,- ապստամբութիւնը համարում է աւանտյուրա, նկատելով, որ Հայաստանը ներկայումս անկախ չի կարող լինել եւ որ հայ ժողովրդի միակ փրկութիւնը Ռուսաստանի հետ կապուած լինելու մէջ է»[3]:

Կարելի է մեղադրել Դրոյին, որ նա հավատ ընծայելով Ռուսաստանին ու համակերպվելով տիրող իրավիճակին՝ դեմ է եղել ապստամբություն բարձրացմանը:

[1] ՀՀ ԲԿԱ, Ֆ. Ս. Վ., թթ. 2, գ. 5, «Յակոբ Տէր Յակոբեանի յուշերը», էջ 9:
[2] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, «Հ. Տերտէրեանի յուշերը», հ. Զ., էջ 287
[3] Նույն տեղում., էջ 287:

Հարց է ծագում. իսկ ի՞նչ կարող էր շահել հյուսիսից եւ հարավից, այն է՝ Խորհրդային Ռուսաստանի եւ քեմալական Թուրքիայի կողմից հարձակման ենթարկված ու չափազանց ծանրագույն կացությունում գտնվող Հայաստանը, եթե Դրոն համաձայներ ապստամբություն բարձրացնել ու երկիրը ներքաշվեր քաղաքացիական կռիվների մեջ: Չէ որ Հայաստանի Հանրապետությունը օրեր առաջ էր հեշտագին պարտություն կրել Թուրքական զորքերից ու կնքել Թուրքական կողմի պարտադրած Ալեքսանդրապոլի, իսկ դեկտեմբերի 2-ին՝ իշխանությունը կամովին բոլշեւիկներին հանձնելու պայմանագրերը:

Պետական գործիչը, որի որոշումն ու գործելակերպը կարող էր պայմանավորել երկրի ճակատագիրը, նման պատասխանատու վճիռ կայացնելիս պիտի համակողմանիորեն ու կշռադատված սթափ գնահատեր երկրում տիրող իրական կացությունը եւ չտրվելով ավելորդ արկածախնդրությանն ու չկշռադատված քայլերի՝ գործեր իրականությանը համահունչ մարտավարությամբ:

Ավելորդ բարդությունների տեղիք չտալու եւ երկրում տիրող առանց այդ էլ լարված մթնոլորտը ավելի չշիկացնելու նպատակադրությամբ՝ Դրոն որոշում է ընդունել 11-րդ կարմիր բանակի հրամանատար Գեկկերի «հրավերքը» եւ 12 սպաների ուղեկցությամբ, որոնց թվում էին վերջին մարտական գործողություններում նրա մշտական զինակիցներ՝ գնդապետներ Հասանփաշայանը, Միրիմանյանը, Խուդաբաշյանը, Մամաջանյանը, Թարվերդյանը եւ այլք, մեկնում է Բաքու[1]:

Ըստ Մարտիրոսի՝ «Դրոն Երեւանից մեկնել էր 1921 թվի Յունուար 14-ին, իրեն հետ վերցնելով, հաւատարիմ ու գործակից հետեւյալ հայ սպաներին՝ գնդ. Հասան Փաշայեան, գնդ. Խուդաբաշեան, գնդ. Մամաջանեան, գնդ. Թարվերդյան»[2]:

Դրոյի կողմից իր հետ Բաքու մեկնող սպաների ընտրությունը բնավ պատահական չէր: Նա իր հետ Բաքու է տանում, կարելի է ասել, ՀՀ բանակի սպայության ընտրանուն, լավագույններին: Թվարկված զինվորականները նրա ընկերակցությամբ մասնակցել էին բազմաթիվ հերոսամարտերի եւ կռիվներում դրսեւորած քաջությամբ ու հայրենիքին մատուցած անգնահատելի ծառայությամբ արժանիորեն մեծ հեղինակություն էին վայելում ժողովրդի ու զինվորականության շրջանում:

[1] ՀՀ ԲԿԱ, Ֆ. Ս. Վ., թթ. 2, գ. 5, «Յակոբ Տէր Յակոբեանի յուշերը», էջ 9:
[2] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան-Բաշգառնեցի, նշվ. աշխ., հ. 2, էջ 51:

Տարիներ հետո անդրադառնալով Բաքու մեկնելու իրողության գնահատմանը՝ Դրոն «Արեւելք» հանդեսում Զարեհ ծածկանունով ստորագրած՝ «Բոլշեւիկներն ինչպէս դրժեցին իրենց խոստումները» խորագիրը կրող հոդվածում անդրադառնալով այդ ժամանակահատվածում Հայաստանում տիրող իրավիճակին, գրում է. «...Հալածանք սկսաւ հայկական բանակի հրամանատարութեան դէմ: Ցունուարին Մոսկուայի կառավարութիւնը պահանջեց Դրօյի հեռացումը Հայաստանէն: Դրօն որոշեց երթալ՝ հակառակ անոր, որ իր ձեռքին տակ գտնուող հայկական բանակի թիւը շատ աւելի մեծ էր, քան եկուոր սովետական բանակը: Կուսակցութեան որոշումով եւ իր համաձայնութեամբ Դրօն բռնեց աքսորի ճամբան: Եթէ այդպէս չընէր, Հայաստանը պիտի իյնար քաղաքացիական սպանիչ կռիւներու գիրկը եւ առանց անոր ալ արիւնաքամ հայութիւնը պիտի ենթարկուէր նոր զրկանքներու»[1]:

Հարկ է նշել, որ 1921 թ. փետրվարյան համաժողովրդական ապստամբության հարվածային հիմնական ուժերի զգալի մասը, եթե ոչ ամենահիմնականը, հենց Դրոյի՝ Սուրմալուի ճակատում մարտնչող զորամասի գնդապետ Կուռո Թարխանյանի, Մարտիրոս Աբրահամյանի գլխավորած զորաջոկատներն էին, որոնք իրենց հաղթարշավը սկսելով Կոտայքի տարածքից եւ մասնավորապես Բաշ-Գառնիից՝ առաջինը մուտք գործեցին մայրաքաղաք եւ ճիշտ ժամանակին մտնելով Երեւանի բանտը՝ հասցրին ստույգ մահվանից ազատել բոլշեւիկների կողմից բռնադատված հարյուրավոր մտավորականների, քաղաքական ու զինվորական գործիչների:

Հայրենական պատմաբաններից Ա. Սիմոնյանը իր հեղինակած «Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ.» աշխատությունում, անդրադառնալով Դրոյին Հայաստանից հեռացնելու իրողությանը, գրում է. «Դեռ 1921թ. հունվարի 5-ին Տրոցկին հեռագիր էր ուղարկել Երեւան եւ պահանջել, որ Խորհրդային Հայաստանի կարմիր բանակի հրամանատար Դրոն Բաքվի վրայով մեկնի Մոսկվա: Դա նախազգուշական քայլ էր, որ խորհրդային իշխանություններն անում էին որոշակի նպատակով. Դրոն մեծ հեղինակություն ուներ զինվորականության շրջանում, որը Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո իր հիմնական զանգվածով մնացել էր Երեւանում: Նախկին հայկական բանակի զինվորականությունը չեզոքություն էր հանդես բերել նոր կարգերի նկատմամբ, իսկ շատ սպաներ, համակրելով խորհրդային իշխանությանը, ցանկանում էին ծառայել Հայաստանի կարմիր բանակում: Չնայած դրան՝ Հայաստանի խորհրդային եւ զինվորական մարմինների ոչ քիչ պատասխանատու աշխատողներ (Ավիս, Աթարբեկյան, Այվազյան եւ ուրիշներ) մնում էին այն տեսակետին, որ հին զինվորականությունը նոր իշխանության անուղղելի հակառակորդն է, ուստի պետք է հալածել նրան՝ կանխելու հնարավոր ըմբոստացումը:Այդ ուղղությամբ ձեռնարկած առաջին քայլերից մեկը հենց Դրոյին Երեւանից հեռացնելն էր...»[1]:

Դրոյին Հայաստանից հեռացնելով, Հայաստանի բոլշեւիկյան իշխանությունները փաստորեն վերացնում էին այն խոչընդոտը, որը կարող էր խանգարել նրանց՝ իրականացնելու հաջորդ քայլը, այն է՝ ձերբակալել ու բանտերը լցնել պետական, քաղաքական գործիչներին եւ Ռուսաստանի խորքերը աքսորել հայ սպաներին:

Մոսկվա մեկնելու նախօրեին Դրոյին ճանապարհելու, նրան հայրենի հողում վերջին անգամ տեսնելու եւ հրաժեշտ տալու ու անհրաժեշտ հրահանգներ ստանալու նպատակով նրանց տանն էին հավաքվել նրա մտերիմները, մարտական զինակիցներն ու բարեկամները, ինչպես նաեւ հեղկոմի անդամները:Ինչպես միշտ, հյուրերին դիմավորելու ու հյուրասիրելու նպատակով նրա տանը պատրաստած սեղանը եղել է ճոխ եւ առատ:

«Դրօն,- պատմում է բժիշկ Եր. Խաթանեսյանը, - բոլորին յանձնարարում էր պահել պաղութիւնը, համակերպել եղելութեան: Իր մտերիմ ընկերներից մէկը՝ Վ.Ն. (նկատի ունի Վահան Նավասարդյանին- Հ.Գ.) հիացմունքով նկարագրում է Դրոյի հոգեկան բարձր կորովը: Մինչ Դրոյի բարեկամները մտահոգութեամբ եւ չարագուշակ գալիքով տագնապում են, նա լիովին պահում է ոչ միայն իր հաւասարակշռութիւնը, այլեւ եռուն կենսուրախութիւնն ու լաւատեսութիւնը:

...երբեք չէր խորտակւում պարտութիւնից, որովհետեւ այնքա՜ն հզօր էր իր յաղթելու կամքը, որի խոր գիտակցութիւնը ունէր - այնքա՜ն աներեր էր հաւատքը հայ ժողովրդի մեծութեան եւ յաւերժութեան վրայ, որ ոչ մի դժբախտութիւն չէր կարող իր լաւատեսութիւնն ու կենսուրախութիւնը սարսել»[2]:

Այդ օրը Դրոյի հյուրերի թվում են եղել նաեւ հեղկոմի անդամները, Չեկայի ծառայողներն ու ռուս սպաները: Հյուրերին պատվելու համար

[1] «Արեւելք», 1948, փետրվարի 18:

[1] Սիմոնյան Ա, նշվ. աշխ., էջ 386:
[2] «Ալիք» բացառիկ, 1956:

նրանց տանը ընթրիքի առատ սեղան են բացել: Կերուխումի չիկացած պահին Աքանազ Մռավյանը կենաց է ասում ի պատիվ Դրոյի եւ նրա մասին որոշ ջերմ, դրվատանքի խոսքեր արտասանելով՝ մի փոքր սպառնալիքով շեշտում է. «Վաղը դու պիտի մեկնես համաշխարհային մեծ յեղափոխութեան օրրանը: Բարի ճանապարհ եմ մաղթում քեզ, այն երկիրը, ուր ոտք պիտի դնես, մի հրեղէն, բոցավառ գետին է, որ կարող է քեզ այրել եւ մոխրել»: Բոլորը լուռ են, լուռ է նաեւ Դրօն, որ անբաժան ժպիտը դէմքին, կարծես ուզում է հասկացնել, թէ՝ «ըմբռնում եմ թէ ասածիդ իմաստը եւ թէ չասածիդ գաղտնիքը: Հայ ժողովուրդը թէ ինձ է ծնել եւ թէ քեզ: Քո՛ սիրտը թէ օտարի լեզուով է խօսում եւ թէ օտարի բերանով: Իմ սիրտը հայ ժողովրդի սիրտն է, ուր օտարը չի կարողացել նստել: Դո՛ւ, խղճով վարձկան, ձայնդ բարձր է հնչում միայն քո ականջին»:

Հասկանո՞ւմ են, կռահո՞ւմ են կոչականները՝ Դրոյի հոգում եռացող մտորումները: Թւում է, թէ՝ այո՛:

Մի քանի րոպէ յետոյ լռութիւնը խզում է Սաչա Բեկզադեանը.

-Ուղիղ է Մռավեանը: Ռուս հողը համակ կրակ է, սակայն մի մոռանաք, որ Դրօն ինքը՝ համակ կրակ է: Կրակը կրակով չի այրւի»[1]:

Հաջորդ օրը նա իր մի խումբ զինակիցների հետ Մոսկվա մեկնելու կապակցութեամբ ուղեւորվում է Բաքու:

Հունվարի 14-ին Երեւանում սոսկալի փոթորիկ էր, մայրաքաղաքի ողջ ժողովուրդը հավաքվել էր ճանապարհելու անհայտ ուղղութեամբ գնացող իր պաշտելի զորավարին: Նրան ճանապարհողների մեջ էին նաեւ նրա հրամանատարութեամբ բազում մարտերի մասնակցած զինակիցներն ու զինվորները:

Վերհիշելով հրաժեշտի պահը՝ Մարտիրոսը նշում է. «Ցուզիչ, արտակարգօրէն յուզիչ լռութեան մէջ՝ Երեւանի ամբողջ ժողովուրդը, դուրս թափւած Աստաֆեան պողոտայի վրայ, լուռ հեկեկանքով ու արցունքներով ճանապարհ էր դրել Դրոյին եւ իր հաստարիմ, զինակից սպաներին»[2]:

Տասնամյակներ անց վերհիշելով եւ արժեւորելով այդ պահը՝ Դրոն «Արեւելք» հանդեսում տպագրված վերոհիշյալ հոդվածում գրում է. «Դրոյի հեռացումը ճնշող տպաւորութիւն թողուց ժողովրդի վրայ, որուն հակազդեցութիւնը ժողովրդական լուռ ցույցի մը ձեւ առաւ:

[1] Նույն տեղում:
[2] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 51:

Աբովեան փողոցը լեցուած խիտ բազմութիւնը ցաւով ճանապարհ դրաւ Դրօն, որուն հեռացման մէջ հայ ժողովուրդը կը տեսնէր իր վերջին յոյսերուն անհետացումը»[1]:

Կ. Սասունին՝ ներկայացնելով Դրոյի հրաժեշտի պահը, գրում է. «Դրոյի գացած օրը ժողովուրդը խռնուեցաւ անոր դռան առջեւ: Դրօն խոսեցաւ իր հրաժեշտի ճառը: Ունկնդիրները կուլային:

Դրոյի մեկնումով այդ լուռ մխացող հաւաքականութեան յուսերն ալ օդը կը ցնդէին, որովհետեւ հասարակական բոլոր յայտնի դեմքերը կա՛մ բանտն էին, կա՛մ արդեն արտասահման անցեր էին»[2]:

«Ես,-գրում է Ս. Վրացյանը, - չեմ ճանաչում Արամի մահից յետոյ ուրիշ որեւէ մէկը, որ Հայաստանում այդ օրերին աւելի ժողովրդական լինէր, աւելի համակրանք վայելէր, աւելի սիրուէր ժողովրդի բոլոր խաւերի կողմից, քան Դրօն»[3]:

Հայաստանից Դրոյին հեռացնելուց հետո, Հայաստանը զավթած բոլշեւիկյան իշխանութիւնները շարունակում են ավելի դաժան հալածանքներ ու բռնութիւններ գործադրել քաղաքական, զինվորական եւ կուսակցական գործիչների ու մտավորականների նկատմամբ: Աքսորի դաժան ճանապարհը բռնեցին 1200 զինվորականներ, որոնց թվում էին գեներալներ Նազարբեկյանը, Սիլիկյանը, Հախվերդյանը եւ այլք: Ընդ որում՝ Խորհրդային Հայաստանի Հեղկոմը 1200 զինվորականների կարողացել է ձերբակալել խաբեութեամբ: Դավադրաբար նրանց հավաքել է հանրապետության Խորհրդարանի շենքում, ապա ձերբակալել եւ ոտքով Քանաքեռի ուղղութեամբ քշել Ռուսաստան[4]:

[1] «Արեւելք», 1948, փետրվարի 18:
[2] Սասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը, Պէյրութ, 1970, էջ 54-55:
[3] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Դ, էջ 199:
[4] Տես «Հայրենիք» ամսագիր, 1957, թիւ 9, էջ 17:

5. 3. ԴՐՈՆ ՄՈՍԿՎԱՑՈՒՄ, ՆՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԶՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Բաքվում գտնվելու ընթացքում Դրոն մի շարք հանդիպումներ է ունենում խորհրդային զինվորական եւ քաղաքական գործիչների հետ: Ըստ Ս. Վրացյանի հավաստման, Դրոն, հասնելով Բաքու, համաձայն իրենց պայմանավորվածության, հեռագրաթելի մոտ է կանչել իրեն եւ հայտնել, որ «... հանգիստ եւ ապահով հասել է Բաքու եւ շուտով պիտի մեկնի Մոսկուա: Ինչ որ բաներ ասաց Զանգեզուրի մասին, ուր Նժդեհը մերժում էր ենթարկուել բոլշեւիկներին: Իմաստն այն էր, որ պէտք չէ դժուարութիւններ ստեղծել սովետական իշխանութեան համար»[1]:

Բաքվում հանդիպելով եւ բանակցելով խորհրդային պատասխանատու գործիչների հետ, Դրոն, ամենայն հավանականությամբ հիմք ունենալով նրանցից ստացած խոստումներն ու երաշխիքները, Գրիգոր Վարդանյանի նախագահությամբ Գորիս մեկնող խորհրդային պատվիրակության միջոցով երկու նամակ է ուղարկում հասցեագրած Գարեգին Նժդեհին եւ Զանգեզուրի գյուղացիության կոմիտեին: Երկու նամակներն էլ, բնականաբար, պիտի վերաբերվեին Զանգեզուրին: Ճիշտ է, քաջարի զանգեզուրցիները Գարեգին Նժդեհի ընդհանուր հրամանատարությամբ տոնել էին մի շարք փայլուն հաղթանակներ ու հռչակել էին Սյունյաց աշխարհի անկախությունը՝ Ինքնավար Սյունիքը, բայց միանգամայն պարզ էր ու որեւէ գաղտնիք լինել չէր կարող, որ Խորհրդային Ռուսաստանը երբեք չէր կարող համակերպվել նման իրավիճակին, եւ վաղ թե ուշ կարմիր բանակի մեծաքանակ մարտական ուժերը կենտրոնացնելով, կրկին անգամ հարձակումներ կձեռնարկեր Զանգեզուրի վրա:

Հարց է ծագում, կարո՞ղ էր արդյոք Զանգեզուրը միայնակ, թեկուզեւ գերմարդկային դիմադրողականություն, համառություն եւ կարողություն դրսեւորեր ու երկարատեւ դիմադրություն ցույց տար խորհրդային զորքերի հարձակումներին, մանավանդ այնպիսի ժամանակահատվածում, երբ Ս. Վրացյանի պատկերավոր արտահայտությամբ՝ Հայաստանի Հանրապետությունը հայտնելով «բոլշեւիկյան մուրճի եւ թուրքական սալի միջեւ», խիստ կարիք ուներ օգնության եւ աջակցության: Իսկ

[1] Վրացեան Ս., Սրրկածին Դրոն, էջ 142:

դա նշանակում էր, որ Զանգեզուրը լիովին զրկված էր թիկունքից եւ որեւէ օգնություն ստանալու հնարավորությունից:

Որեւէ կասկած լինել չի կարող, որ Զանգեզուրի ճակատագիրը չէր կարող խորապես չհուզել ու չմտահոգել Դրոյին, որի հրամանատարությամբ էր գավառը վերջնականապես «մաքրվել» թուրք բնակչությունից: Կարելի է վստահորեն պնդել, որ միայն Զանգեզուրի նկատմամբ ունեցած մտահոգությունն ու տագնապը կարող էին նրան մղել որոշակի առաջարկություններ պարունակող նամակներ հասցեագրել Նժդեհին եւ Զանգեզուրի գյուղացիության կոմիտեին:

Նժդեհին գրած նամակում Դրոն արել էր հետեւյալ առաջարկությունները.1. «Սյունիքը հայտարարել խորհրդային: 2. Դադարեցնել ապստամբական կռիվները Արցախում: 3. Ընդունել 11-րդ բանակի հրամանատարության ներկայացուցիչներին, եթե դա ցանկանում է Նժդեհը»[1]:

Այս նամակը ավելի շատ խորհրդատվական բնույթ ունի, քանզի հարցի լուծման իրավունքը, այնուամենայնիվ, ընձեռվում է Նժդեհին, որը եթե նույնիսկ համաձայնվեր ընդունել 11-րդ բանակի հրամանատարությանը, ապա անպայմանորեն նրանց կներկայացներ Զանգեզուրի շահերին համահունչ պայմաններ:

Կարելի է ասել, որ նույն մտահոգությամբ ու առաջարկությամբ է հագեցած նաեւ նրա մյուս նամակը՝ հասցեագրած Զանգեզուրի գյուղացիության կոմիտեին:

«Զանգեզուրի գիւղացիական կոմիտէին՝ պատճէնը՝ Նժդեհին

Հայրենակիցներ, երկու տարի ու կէսուայ դառը փորձերը համոզեցուցիչ էին, որ իզուր էր հայ ժողովուրդը յոյսերը դրել Եւրոպայի վրայ, որն ամենակրիտիկական մոմենտում նամարդի նման թողեց ամբողջ ժողովուրդը թշնամու գրկում, որովհետեւ իր շահերը այդ էին պահանջում...

Ներկայումս Մոսկվայում հաւաքւում է կոնֆերենցիա, որտեղ պէտք է լուծի Հայաստանի սահմանների խնդիրը Ռուսաստանի, Տաճկաստանի եւ Հայաստանի մասնակցութեամբ:

1-ին. Զանգեզուրի չճանաչելը Խորհրդային Հայաստանը խանգարելու է մեզ լուծել Նախիջեւանի, Շարուրի եւ Արցախի խնդիրները:

2 րդ. Պատճառ է դառնում Զանգեզուրի այդ բռնած դիրքը եւ գործիք է տալիս տաճիկների ձեռքը չհեռացնել իրենց զօրքերը

[1] Տե՛ս Սիմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ., էջ 88:

մեր երկրից, պատճառաբանելով թէ Հայաստանի խորհրդային իշխանութիւնը կեղծ է, որ մօտիկ ապագայում Հայաստանը նորից կըլինի գործիք իմպերիալիզմի ձեռքը:

3-րդ. Քանի Զանգեզուրը չի ճանաչել խորհրդային իշխանութիւնը, դեռ պիտի կասկածով վերաբերուեն Հայաստանին, չի սկսուիլ խաղաղ եւ շինարար աշխատանք մեր արիւնաքամ եղած երկրում:

4-րդ. Դժւար է խոստովանել եւ հաշտուել այն մտքի հետ, որ կատարւած է մի շարք քաղաքական սխալներ, բայց դժբախտաբար դա դառն իրողութիւն է:

Ուստի դիմելով ձեզ ուզում եմ հաւատալ, որ Զանգեզուրը եւ նրա ղեկավարները վերջ կըտան իրենց բռնած քաղաքականութեանը եւ կը միանան իրենց մայր երկրին՝ Հայաստանին: Մոսկւայի տաճիկների հետ բանակցութիւնը կը գայ ապացուցանելու, որ Սովետական Ռուսաստանը պաշտպանելու է հայ աշխատաւորութեան շահերը:

Ա. Ուստի ձեզ պէտք է անմիջապէս յայտարարել խորհրդային եւ միանալ Խորհրդային Հայաստանի հետ:

Բ. Եթէ որեւիցէ բան ունիք պարզաբանելու, առանց ուշացնելու պետք է ներկայացուցիչներ ուղարկէք Ցեղկոմ ԺԱ-րդ բանակի եւ Հայաստանի կառավարութեան մօտ:

Բագու, 21 Յունուար, 1921 Դրօ»[1]:

Եթե փորձենք ըստ ամենայնի արժեւորել ու մատնանշել համանման առաջարկութիւններով եւ բովանդակութեամբ հագեցած վերոհիշյալ նամակներ գրելու ելակետերը, ապա պիտի առանձնացնել հետեւյալ գործոնները. 1. Նախ եւ առաջ Հայաստանի եւ հայութեան իրական կացութիւնը: 2. Դաշնակից տերութիւնների կողմից ամենաճակատագրական պահին Հայաստանին որեւէ օգնութիւն չցուցաբերելու եւ լքելու իրողութիւնը: 3. Հայաստանի տարածքում քեմալական Թուրքիայի զորքերի ներկայութիւնը:

4. Հայաստանի տարածքների նկատմամբ հարեւան երկրների՝ Վրաստանի եւ այժմ արդեն Խորհրդային Ադրբեջանի զավթողական նկրտումները: 5. Ռուսաստանի նկատմամբ տածած հավատը, թեկուզ ոչ այնքան հիմնավոր ու պատճառաբանված:

[1] Գեւորգեան Վ., Լեռնահայաստանի հերոսամարտը, Երեւան, 1991, էջ 129-130:

Զանգեզուրի գյուղացիական կոմիտեին գրած վերոհիշյալ նամակում Դրոն այդ առնչությամբ նշում է. «Վերջին բոպէին պետութեան գլուխ անցած դաշնակցական կուսակցութեան պատասխանատու ընկերները նոյեմբերի 26-ի ժողովում խոշոր մեծամասնությամբ որոշեցին ընդունել Ռուսաստանի օրիէնտացիան:

Հայաստանը յայտարարուեց խորհրդային, հիմնւած այն համոզմունքի վրայ, որ միակ յեղափոխական Ռուսաստանը կը գայ անկեղծ կերպով պաշտպանելու հայ աշխատաւորութեան շահերը եւ յետ կը շպրտի մեր հայրենիքից քեմալական դժոխային ծրագիրներ կազմող բանակը»[1]:

Զանգեզուրցիները հերոսական պայքարով արդեն ապացուցել էին ազատության համար մարտնչելու իրենց անկոտրում կամքն ու վճռականությունը եւ այդ պայքարը, կարելի է ասել, ի դեմս «Ինքնավար Սյունիքի» հռչակման, տվել էր իր դրական արդյունքը:

Հարց է ծագում. մի՞թե ավելի ճիշտ ու օգտակար չէր հետեւել Դրոյի «...պէտք է անմիջապէս յայտարարել խորհրդային եւ միանալ Խորհրդային Հայաստանի հետ» խորհրդին, դադարեցնել մարտական գործողություններն ու դրանով խուսափել անհարկի կորուստներից եւ արյունահեղությունից: Այս առումով ուշագրավ է խորհրդային 11-րդ բանակի հրամանատար Հեկկերի եւ Ադրբեջանում Խորհրդային Հայաստանի Հեղկոմի ներկայացուցիչ Գեւորգ Աթաբեկյանի կողմից Զանգեզուր գործուղված իրենց ներկայացուցիչներին տրված հետեւյալ հանձնարարականը.

«Ա. Դրոյի նամակները տանել ու հանձնել Նժդեհին և Զանգեզուրի գյուղացիական խորհրդին:

Բ. Բանակցել Գարեգին Նժդեհի հետ և նրան առաջարկել, որ Զանգեզուրը հայտարարի խորհրդային իշխանություն՝ միացած Խորհրդային Հայաստանին:

Գ. Անհամաձայնության դեպքում աշխատել, որ Նժդեհն իր կողմից մարդիկ ուղարկի Շուշի կամ Բաքու բանակցությունները շարունակելու համար:

Դ. Համաձայնության դեպքում խոստանալ ամենալայն ամնիստիա իրեն՝ Նժդեհին և թե բոլոր յուրայիններին»[2]:

[1] Նույն տեղում:
[2] Սիմոնյան Ա., նշվ. աշխ., էջ 389:

Այս օրերին համանման բովանդակությամբ խորհրդային գերագույն հրամանատարության կողմից Ինքնավար Սյունիքի կառավարությանն է դիմել Շուշիի զինվորական կոմիսար Ա. Պոտեչին, քաղաքի կայազորի պետ Վայցեխովսկին, իսկ առանձին գրությամբ Արցախում գտնվող խորհրդային զորամասի հրամանատար Սեմենովը[1]:

«Հետեւելով իմ դաւանած գաղափարներուն,-կը գրէր, հրամանատար Սեմենով յունուար 22-ին, ես կառաջարկեմ ձեզ դադրացնել ամէն տեսակ ռազմական գործողութիւններ, կապ հաստատել մեզ հետ եւ փոխադարձաբար գտնել ընդհանուր լեզու:

Ես համոզուած եմ, որ մեր բարի դրացիական յարաբերութիւնները կամրապնդուին, ու կը դադրի ոչնչացումը անոնց, որ կը փափագին դիմել իրենց ապագայ խաղաղ ու շինարարն կեանքին»[2]:

Ինչպես հայտնի է, Նժդեհը, հետեւաբար նաեւ նրա գլխավորած Ինքնավար Սյունիքի կառավարությունը, չեն ընդունում խորհրդային իշխանության կողմից իրենց արված առաջարկությունը, եւ կռիվները Զանգեզուրում շարունակվում են:

Բաքվից 10 սպաների ուղեկցությամբ Դրոյին «պատվավոր» աքսորի են ուղարկում Մոսկվա, Խորհրդային Ռուսաստանի ԲԳԿԲ-ի ռազմա-հեղափոխական կոմիտեի տրամադրության տակ: Մոսկվայում նրանց ծախսերի համար հատկացրել են դրամական աջակցություն ու տեղավորել ժամանակավորապես բնակվելու ՌԽՖՍՀ արտաքին գործոց ժողկոմատի թիւ 2 հյուրանոցում[3]:

Հայտնի է, որ նույնիսկ այդ դժնդակ ժամանակահատվածում Հ.Յ. Դաշնակցության կառույցները գործել են ոչ միայն Կովկասում, այլեւ Ռուսաստանի մի շարք շրջաններում:

Դրոյի Մոսկվա մեկնելը համապատասխան աղբյուրների կողմից հայտնի էր դարձել նաեւ Ռուսաստանի Հ.Յ.Դաշնակցության կառույցներին եւ հայ բնակչությանը: Բժ. Երվանդ Խաթանեսյանի հավաստմամբ, Բաքվից Մոսկվա ուղեւորվելու ճանապարհին «Բոլոր գլխաւոր կայարաններում, ուր Դրոյի գնացքը կանգ էր առնում, տեղացի հայութիւնը հոծ ու խուռն բազմութեամբ խուժում էր կառաշարը, դիմաւորելու մեծանուն հերոսին: Ականատեսները վկայում են, որ ցուցաբերած հիւրընկալութիւնը, ընծայած մեծարանքը եւ հրճվանքի բացականչութիւնները կատարուեցին այնպիսի ջերմութեամբ, անկեղծութեամբ դիմաւորողների կողմից, որ Դրոյի աքսորը ստացաւ շքեղ ու հանդիսաւոր երթի բնոյթ ու կերպարանք»[1]:

Երվանդ Խաթանեսյանի տեղեկացմամբ՝ նույնիսկ վրաց բոլշեւիկները, որոնք քաջատեղյակ էին, որ հայ-վրացական պատերազմի ժամանակ Դրոյի գլխավորած զորքերն էին վրացական բանակին հուժկու հարվածներ հասցնողը՝ սիրալիր վերաբերմունք են դրսեւորել նրա նկատմամբ, քանզի «...չէին մոռացել, որ Դրոն այն անվրէպ բազուկն էր, որ վրացիների վրէժը լուծեց: Ալիխանովը (նկատի ունի գեներալ Ալիխանով Ավարսկուն, որին Նիկոլ Դումանի հանձնարարությամբ ահաբեկել են Դրոն եւ Մարտիրոս Զարուխյանը-Հ. Գ.)՝ Վրաստանի գիւղացիութիւնը կեղեքող եւ զուլումի ենթարկող ճիվաղն էր, որի դէմ անէծք եւ լուտանք էին տեղացնում վրացիք, սակայն որին անզոր էին արժանի պատիժ տալու: Դրոյի ձեռքով կատարած ահաբեկումը երախտիքով, գոհունակութեամբ եւ շնորհապարտութեան զգացումով լցրին վրացիների հոգին»[2]:

Թեպետ նա խորհրդային իշխանության վերին մարմիններում ունեցել է իրեն հարգանքով վերաբերվող բարձրաստիճան պաշտոնյաներ, այնուամենայնիվ, Մոսկվայում նա գտնվել է հատուկ ծառայությունների հսկողության տակ:

«Արեւելք» հանդեսում տպագրված նույն հոդվածում անդրադառնալով Մոսկվայում իրեն արժանացրած վերաբերմունքին՝ նա նշում է. «Դրօն Մոսկուայի մէջ արգելափակուեցաւ, իրաւունք չունենալով առանց կառավարութեան գիտութեան 60 քիլոմէթրէն անդին երթալ եւ 84 ժամէն աւելի բացակայիլ»[3]:

Նա դեռ նոր էր հաստատվել Մոսկվայում, երբ Հայաստանում բռնկվում է Փետրվարյան ապստամբությունը: Ինչպիսի՞ն էր նրա վերաբերմունքը Փետրվարյան ապստամբության նկատմամբ, դժվար է միանշանակ պատասխան տալ: Չկա որեւէ լուրջ փաստաթուղթ, վկայություն կամ հուշագրություն, որը մատ-

[1] Տե՛ս Գեւորգեան Վ., նշվ. աշխ., էջ 131:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 85, թ. 1-2:

[1] «Ալիք», բացառիկ, 1956, էջ 21:
[2] «Ալիք», բացառիկ, 1956, էջ 21-22:
[3] «Արեւելք», 1948, փետրուար 18:

նանչի նրա դրական կամ բացասական վերաբերմունքը: Միայն Ս. Վրացյանն է նշում, որ Դրոն հետագայում իրեն պատմել է, որ Մոսկվայում ինքը Սահակ Տէր- Գաբրիելյանի եւ ուրիշների միջոցով մշտապես ստույգ տեղեկություններ էր ստանում Հայաստանում տիրող իրավիճակի մասին: Փետրվարյան ապստամբությունը երկակի զգացում է պատճառել նրան. ե՛ւ ոգեւորիչ, ե՛ւ սարսափեցնող: Նա վախենում էր, որ ցավագար Ավիսն ու Աթաբեկյանը դաժան հաշվեհարդար կտեսնեն ժողովրդի հետ եւ արյան մեջ կխեղդեն Հայաստանը»[1]:

Շատ շատերին է զարմացրել ապստամբության առաջնորդների շարքում նրան չտեսնելն ու Հայաստանից նրա առեղծվածային բացակայությունը: Անգամ ՀՀ առաջին վարչապետ Հովհ. Քաջազնունին, նույնպես կարծելով, որ նա Հայաստանում է, ապստամբության ծավալման օրերին զարմանքով հարցրել է. «Իսկ ո՞ւր է Դրոն: Չէ՞ որ այդ օրերին նա կարող էր հրաշքներ գործել»:

Իսկ ՀՀ վերջին վարչապետ Ս. Վրացյանը համոզված պնդում է. «Փետրուարեան ապստամբութիւնը պէտք է Դրոն գլխաւորէր: Այդ նրան էր յարմար»[2]:

Հարց է ծագում, ինչպիսի՞ ընթացք ու զարգացում կունենար Փետրվարյան ապստամբությունը եւ ինչպիսի՞ կացությունում կհայտնվեր Հայաստանը, եթե Դրոն լիներ Հայաստանում եւ ղեկավարեր համաժողովրդական պայքարն ու Հայրենիքի Փրկության Կոմիտեի մարտական ուժերը:

Ինչ խոսք, եթե Դրոն ապստամբության օրերին լիներ Հայաստանում, ապա անտարակույս, չէր կարող դեպքերի պասիվ ականատեսը լինել ու անտարակույս կմասնակցեր ապստամբությանը:

Եթե անաչառ գնահատենք պատմական այդ ժամանակահատվածը իր յուրահատկությամբ ու Հայաստանի ու հայության իրական կացությունն անկողմնակալ գնահատմամբ, ապա պիտի հաստատապես պնդել, որ ինչպիսին էլ լիներ անպարտելի զորավարի դիրքորոշումը, եթե անգամ ճակատագրի բերմամբ Դրոն լիներ Հայաստանում եւ գլխավորեր Փետրվարյան ապստամբությունն ու Հովհ. Քաջազնունու արտահայտությամբ՝ հրաշքներ գործեր, ապա միեւնույն է, Փետրվարյան ապստամբությունը իր

[1] Վրացեան Ս., Մրրկածին Դրոն, էջ 128:
[2] Նույն տեղում, էջ 145:

ունեցած որոշակի դրական նշանակությամբ հանդերձ, միանշանակորեն դատապարտված էր:

Մարտիրոս Աբրահամյանի վկայությամբ՝ Փետրվարյան ապստամբությանը գործուն մասնակցություն է ունեցել Դրոյի հայրը՝ Մարտիրոս Կանայանը (Կակո): Մարտի 19-23-ին Հայրենիքի Փրկության Կոմիտեի զորքերը Ղամարլուի ճակատում Մարտիրոսի հրամանատարությամբ փորձում են գրավել Վեդին, բայց ձեռնարկած հարձակումներն անցնում են ապարդյուն: Վեդիի գրավումը չափազանց կարեւոր էր: Անհրաժեշտ էր վնասազերծել այդ տարածքում կենտրոնացած հակառակորդի խմբավորումն ու ճանապարհ հարթել՝ միանալու Ցապոնի գլխավորած Դարալագյազի մարտական ուժերին:

Հարձակումը հաջողությամբ զարգացնելու համար հարկավոր էին լրացուցիչ մարտական ուժեր: Ինչքան էլ տարօրինակ հնչի, ապստամբությանը մինչ այդ իրենց մասնակցությանը չէին բերել Սուրմալուի մարտական ուժերը, որոնք հայտնի էին իրենց կազմակերպվածությամբ ու բազմաթիվ կռիվներում դրսեւորած քաջագործությամբ: Որպեսզի սուրմալեցիներին մասնակից դարձնի համաժողովրդական պայքարին՝ Մարտիրոսը նամակով դիմում է Դրոյի հորը՝ Կակոյին ու եղբորը՝ Զաւէնին:

«Սիրելի Կակո եւ Զաւէն, -գրում է Մարտիրոսը,-այսօր թէեւ հայ ժողովրդի ապստամբութեան ղեկավարը Դրօն չէ, իր բացակայութեան մեղքը սակայն ոչ ինձ եւ ոչ էլ մեր արի հայ մարդոց վրայ է ընկնում:Այդ մեղքը թշնամուն է...

...Մենք հիմա դուրս ենք եկել այդ թշնամուց՝ նաեւ Դրոյի վրէժը լուծելու համար:

Լա՞ւ է, որ սրբազան վրիժառութեան պայքարին մի հատ սուրմալուեցի չմասնակցի:

...Կակո ջան, խնդրում եմ քեզ մօտ կանչես Արդաշէս Պահլաւունուն (Փրկության կոմիտեի ներակայացուցիչն էր Սուրմալուում, որին մինչ այդ չէր հաջողվում կազմակերպել ու ճակատ ուղարկել այդ շրջանի մարտական ուժերը-Հ.Գ.), Ցակոբին ու Զաւէնին եւ քո հրամանով ու նրանց օգնութեամբ սուրմալուեցիներից մի զօրամաս կազմես եւ ուղարկես ճակատ..)»[1]:

Դրոյի հայրը՝ ստանալով Մարտիրոսի նամակը, ընդամենը երկու օրում սուրմալուեցի մարտիկներից կազմավորում է մի գումարտակ եւ ուղարկում է մարտադաշտ: Փրկության Կոմիտեի զոր-

[1] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 254:

քերի հրամանատար, գնդապետ Կուռո Թարխանյանն այդ գումարտակը փոխանակ ուղարկելու Մարտիրոսի տնօրինությանը, ուղարկում է Ախտայի ճակատը, ուր այդ ժամանակ խորհրդային զորքերի հարձակման հետեւանքով ստեղծվել էր չափազանց դժվարին իրավիճակ:

Որպեսզի սպարապետ Կուռո Թարխանյանի այդ որոշումը տեղի չտար ավելորդ ու անցանկալի դժգոհությունների՝ Դրոյի հայրը՝ Կակոն, Մարտիրոսին է ուղարկում խրատական բովանդակությամբ հետեւյալ նամակը.

«...Կարծում եմ, որ քեզ համար էլ տարբերություն չունի:

Ախտա կամ քեզ մոտ, չէ՞ որ նա էլ քո թիկունքն է:

Մարտիրոս ջան, ես քեզ Դրոյից չեմ ջոկել, չպէտք էլ ջոկեմ: Ես սրանից յետոյ պատահած սուրամալուեցիներին կուղարկեմ քեզ մոտ: Մի քիչ տարիքս ներէր, ես էլ քեզ մոտ կը լինէի: Եթէ կարող եմ օգտակար լինել, գրի՛ր. ես պատրաստ եմ գալ քեզ մոտ:

Լսիր, քո փորձած ծերունի Կակոյին:

Անխնայ եղիր մեր ընդհանուր, այդ թշնամու նկատմամբ, չխնայես ո՛չ մէկին: Դրանք, մեր ժողովրդի ու մեր հայրենիքի չարիքներն են. նրանք ուզում են ոչնչացնել մեր սրբութիւնները, որոնք ժառանգութիւն են մնացել մեզ, մեր պապերից:

...Նորից կրկնում եմ, եթէ օգտակար կարող եմ լինել քեզ, պատրաստ եմ գալու»[1]:

Մոսկվայում Խորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Սահակ Տեր-Գաբրիելյանի եւ նրա տեղակալ Բ. Բորյանի կողմից նրան տրված վկայականները հավաստում են, որ նա Մոսկվայում գտնվել է հենց Խորհրդային Հայաստանի ներկայացուցչության վերահսկողության ներքո.

«Վկայական

Սույն ներկայացնողը, Հայաստանի Սով. Սոց. Հանրապետության բանակի նախկին հրամանատար ընկ. Կանայան Դրաստամատը իրոք գտնվում է լիազոր ներկայացուցչության տրամադրության տակ:

Հաստատվում է ստորագրությամբ եւ կնիքով:

Հայաստանի ՍՍՌ-ի լիազոր ներկայացուցչի տեղակալ Բորյան:

Քարտուղար

[1] Նույն տեղում, էջ 255:

26-ը փետրվարի 1923 թ.»[1]:

Մեկ այլ վկայականում հաստատելով նույն իրողությունը՝ նշվում է նաեւ նրա ապրուստի միջոցը.

«Վկայական հունիսի 3

Սույնով հաստատվում է, որ քաղ. Դրաստամատ Կանայանը գտնվում է Մոսկվայում Հայաստանի լիազոր ներկայացուցչի տրամադրության տակ եւ ապրելու համար միջոցներ է ստանում Հայաստանի իր հարազատներից յուրաքանչյուր ամիս 10 (տասը) չերվոնեց:

Տրվում է ներկայացնելու Տունկոմ (տնային կոմիտե):

ՌՍՖՍՌ-ում Հայաստանի լիազոր ներկայացուցիչ՝

Տեր-Գաբրիելյան

քարտուղար՝ Պոպովա»[2]:

Մոսկվայում Դրոն ապրել է ոչ թե միայնակ, այլ իր կնոջ՝ Արփենիկի եւ զավակների հետ միասին:

Խորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցչության կողմից նույն օրը՝ հունիսի 3-ին, նրան տված մեկ այլ վկայական հաստատում է այդ փաստը.

«Տրվում է քաղ. Արփենիկ Կանայանին, առ այն, որ նա իրոք համարվում է Հայաստանի ՍՍՌ-ի բանակի նախկին հրամանատար ընկ. Դրաստամատ Կանայանի կինը եւ ապրում է ամուսնու խնամակալության տակ, որը յուրաքանչյուր ամիս հարազատներից ստանում է 10 (տասը) չերվոնեց:

ՌՍՖՍՌ-ում Հայաստանի ՍՍՌ-ի լիազոր ներկայացուցիչ

Տեր-Գաբրիելյան

քարտուղար՝ Պոպովա»[3]:

Դրոյի մասին պատմող սկզբնաղբյուրները վկայում են, որ գտնվելով խորհրդային հատուկ ծառայությունների հսկողության ներքո՝ նա, այնուամենայնիվ, ժամանակն իզուր չի վատնել: Իր զինվորական կրթությունն ու գիտելիքները հարստացնելու նպատակով նա հաճախում է ռազմագիտական եւ քաղաքական գիտելիքների ուսուցման դասընթացներ, ուր ուսումնասիրում է հեղափոխությունների, մասնավորապես Ռուսաստանում 1917-1920

[1] ՀԱԱ, ֆ. 48, g. 1, գ. 528, թ. 170:
[2] Նույն տեղում, թ. 275:
[3] Նույն տեղում, թ. 274:

թթ. տեղի ունեցած քաղաքացիական կռիվների պատմությունը եւ առավել մանրակրկիտ՝ նույն քաղաքացիական կռիվներում կարմիր բանակի զորահրամանատարների կենսագործած ռազմավարության ու մարտավարության ձեւերը եւ եղանակները[1]:

Տիգրան Դեւոյանի հավաստմամբ՝Դրոն Մոսկվայում ապրում է ընդամենը երկու տարի եւ այդ ընթացքում օգտագործելով խորհրդային մի շարք պաշտոնյաների հետ ձեռք բերած կապերը, կարողանում է զգալի աջակցություն ցույց տալ Ռուսաստանում աքսորված հայ սպաներին[2]:

Նրա գործունեության այդ շրջանին վերաբերող փաստաթղթերը վկայում են, որ նա գործի բերումով իր ժամանակը անցկացրել է ոչ միայն Մոսկվայում, այլեւ Պետրոգրադում.

«Վկայական

Տրվում է ներկայացուցչության տակ գտնվող Հայաստանի Հանր. բանակի նախկին հրամանատար ընկ. Կանայանին Դրաստամատ, որ նա իրոք գործուղվում է Պետրոգրադ, որը եւ վավերացվում է ստորագրությամբ եւ կնիքով:

ՌՍՖՍՌ-ում Հայաստանի լիազոր
ներկայացուցչի տեղակալ Բորյան
քարտուղար Պոպովա
փետրվար 3»[3]:

Մոսկվայում անցկացրած տարիներին նրա կյանքում տեղի ունեցած ուշագրավ իրադարձություններից առավել արժանահիշատակելի է Զեմալ փաշայի ահաբեկչության հետ կապված միջադեպը:

1922 թ. հուլիսի 21-ին Թիֆլիսում, Պետրա Վելիկի (Պետրոս Մեծ) փողոցում հայ վրիժառուների՝ Արտաշես Գեւորգյանի եւ Պետրոս Տեր-Պողոսյանի կողմից ահեղ ու արժանի դատաստանի է արժանանում հայոց ցեղասպանության գլխավոր մեղսագործներից մեկը՝ Զեմալ փաշան: Ահաբեկիչներին հաջողվում է անվտանգ հեռանալ դեպքի վայրից ու խուսափել ոստիկանության հետապնդումներից»[4]:

[1] Տե՛ս Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Դ, էջ 188:
[2] Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1957, թիւ 9, էջ 17:
[3] ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 528, թ. 69:
[4] Տե՛ս Ազվին, Զեմալ փաշայի սպանությունը, Մոսկվա, 1991, էջ 5:

Երիտթուրքերի եռապետության(Թալիաթ, Էնվեր, Զեմալ) անդամի սպանությունը մեծ արձագանք է գտնում: Անդրկովկասյան խորհրդային իշխանության հատուկ ծառայությունները սպանությանը մասնակից լինելու պատրվակով ձերբակալում եւ բանտերն են նետում 200-ից ավելի հայերի: Զեմալ փաշայի սպանության առեղծվածը այնքան է հետաքրքրում խորհրդային իշխանություններին, որ արժանանում է նույնիսկ ՌԿ(բ)Կ կենտկոմի քաղբյուրոյի հատուկ քննարկմանը: Որպեսզի պարզեին, թե իրականում ովքեր էին Զեմալ փաշայի սպանության իրական կազմակերպիչները, Ստալինն ու Ձերժինսկին դիմում են նրա օգնությանը:

«Մի օր Ստալինը եւ Ձերժինսկին՝ Չեկայի ընդհանուր պետը, տեսակցութեան են հրավիրում Դրոյին: Սրտդողած եւ մեղադրանքի տեղատարափով, նրանք յայտնում են Դրոյին, թէ Դաշնակցութիւնը, անգլիական իմպերիալիստների փողով վարձել է երկու ռուսների, որոնք սպանել են Զեմալ փաշային Թիֆլիսում Չեկայի պաշտօնատան առջեւ...»[1]:

Զեմալի սպանության առեղծվածն ու մանրամասները պարզելու առաքելությամբ Դրոն Ստալինի եւ Ձերժինսկու համաձայնությամբ մեկնում է Թիֆլիս:

Մոսկվայում Խորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցչության կողմից նրան հասցեագրած փաստաթղթերից պարզվում է, որ Վրաստանի մայրաքաղաքում Զեմալ փաշայի սպանության կապակցությամբ Դրոյին Թիֆլիս գործուղելը կատարվել է նաեւ Օրջոնիկիձեի առաջարկությամբ եւ Սահակ Տեր-Գաբրիելյանի խնդրանքով.

«Ընկ. Դրաստամատ Կանայանին

Սույնը ստանալուն պես խնդրում եմ անհապաղ մեկնել Թիֆլիս ՊՎՍՕԿԱ (Կովկասյան բանակի ռազմա-հեղափոխական խորհուրդ-Հ.Գ.) անդամ Օրջոնիկիձեի տրամադրության տակ՝ համաձայն նրա հեռագրային առաջարկի:

ՌՍՖՍՌ-ում Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Տեր-Գաբրիելյան

քարտուղար Պոպովա»[2]:

[1] «Ալիք» բացառիկ, 1956, մայիսի 4, էջ 22:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1957, թիւ 9, էջ 17:

Դրոյի ուղեւորությունը ապահովելու նպատակով Հայաստանի լիազոր ներկայացուցչությունը արտաքին գործոց ժողկոմատին դիմում է հետեւյալ խնդրանքով.

«Սույնով Հայաստանի լիազոր ներկայացուցչությունը խնդրում է հունիսի 30-ի ճեպընթաց գնացքի միջազգային ընկերության վագոնում մեկ տեղ հատկացնել Հայաստանի բանակի նախկին հրամանատար ընկ. Կանայան Դրաստամատին մինչեւ Թիֆլիս... »[1]:

Դրոն բարեհաջող հասնում է Թիֆլիս եւ ներկայանում Վրաստանի կոմկուսի կենտկոմի 1-ին քարտուղար Լ. Բերիային: Թիֆլիսում Վրաստանի բոլշեւիկների պարագլուխները նրան ընդունում են ջերմությամբ եւ արժանապատվորեն, չնայած նրանք քաջատեղյակ էին, որ հենց նա էր 1918 թ. հայ-վրացական պատերազմի ժամանակ վրացական զորքերին ջախջախողն ու Լոռվա տարածքից իրենց դուրս մղելու հիմնական «մեղսագործը»:

Բժ. Եր. Խաթանեսյանի պնդմամբ, վրաց բոլշեւիկների սիրալիր վերաբերմունքը հիմնականում պայմանավորված էր այն հանգամանքով, որ «Նրանք չէին մոռացել, որ Դրոն այն անուրջպ բազուկն էր, որ վրացիների վրէժը լուծեց: Ալիխանովը՝ Վրաստանի գիւղացիութիւնը կեղեքող եւ զուլումի ենթարկող ճիւաղն էր, որի դէմ անէծք եւ լուտանք էին տեղացնում վրացիք, սակայն որին անզօր էին արժանի պատիժ տալու: Դրոյի ձեռքով կատարուած ահաբեկումը երախտիքով, գոհունակութեամբ եւ շնորհապարտութեան զգացումով լցրին վրացիների հոգին»[2]:

Թիֆլիս հասնելուն պես նա ներկայանում է Բերիային ու նրա ուղեկցությամբ այցելում հայ բանտարկյալներին:

«Դրոյի պատմելով, - վկայում է Տ. Դեւոյանը, - երբ Ջեմալ փաշան Թիֆլիսում տեռորի էր ենթարկուել, եւ շատ դաշնակցական ընկերներ ձերբակալվել էին, նա գնացել էր Թիֆլիս, Բերիայի հետ այցելել է բանտարկեալներին եւ, ապացուցելով ձերբակալվածների անմեղությունը, ազատ էր արձակել նրանց»[3]:

Ջեմալ փաշայի սպանության մեղադրանքով ձերբակալված ավելի քան 200 հայերի բանտից ազատելու իրողությունը հաստատում են նաեւ այլ վկայությունները[4]:

[1] Նույն տեղում, թ. 419:
[2] «Ալիք» բացառիկ, 1956, մայիսի 4, էջ 22:
[3] «Հայրենիք» ամսագիր, 1957, թիւ 9, էջ 17:
[4] «Հայրենիք» ամսագիր, 1957, թիւ 9, էջ 17, «Ալիք» բացառիկ, 1956, մայիսի 4, էջ 22:

Ձերբակալված դաշնակցականների(Խորհրդային հատուկ ծառայությունների գնահատմամբ Ջեմալի ահաբեկիչները դաշնակցականներն էին-Հ.Գ.) ազատման գործում Դրոյի վճռորոշ դերակատարության մասին փաստում է նաեւ Անդրկովկասի արտակարգ հանձնաժողովի նախագահ Մոգիլեւսկին, Մոսկվային հասցեագրած հետեւյալ հեռագրերում.

«Հեռագիր, Մոսկվա, Պետքաղվարչություն Թիֆլիսից
26 հուլիսի 1923 թ.
ժամը 16- 11

Հանձնել Մենժինսկուն (ԽՍՀՄ պետքաղվարչության հատուկ բաժնի պետ- Հ.Գ.): Անդրերկոմի որոշումով վճռված է վերջացնել Ջեմալի գործի կապակցությամբ ձերբակալված դաշնակցականների, այդ թվում դաշնակցականների կենտկոմի անդամների գործերը՝ Դրոյի հայտարարության ստորագրման հիման վրա: Դրա համաձայն այսօր Վրաստանի Արտակարգ հանձնաժողովը դաշնակցականներին ազատել է: Մենք նրանց կառաջարկենք թողնել Անդրկովկասի սահմանները: Խնդրում եմ նշել, թե ուր ուղարկել նրանց:

Անդրարտ. հանձնաժողովի նախագահ՝ Մոգիլեւսկի»[1]:

Նույն օրը՝ հուլիսի 26-ին, Մոգիլեւսկին նույն հասցեով ուղարկել է մի հեռագիր եւս, որում նշում է նաեւ Օրջոնիկիձեի առաջարկությունը.

«Հեռագիր, Մոսկվա, Պետքաղվարչություն Թիֆլիսից
26 հուլիսի 1923 թ.
ժամը 18- 34

Հանձնել Մենժինսկուն, պատճենը Վոլենբերգին: Սերգոն առաջարկում է համաձայնվել Դրոյի առաջարկության հետ, վերացնել բոլոր ձերբակալված դաշնակցականների, այդ թվում դատավարության պատրաստ Ջեմալականների գործերը, նրանց ազատելով: Սերգոն(Օրջոնիկիձե) խնդրում է համաձայնեցնել Ստալինի հետ: Խնդրում եմ ցուցումներ տալ:

Անդրարտհանձնաժողովի նախագահ՝ Մոգիլեւսկի»[2]:

Դրոն Թիֆլիսից այլեւս Մոսկվա չի վերադառնում: Նրան հաջողվում է Խորհրդային Միությունից անցնել Եվրոպա, նախ լի-

[1] ՀՀ Դաշնակցությունը եւ Խորհրդային իշխանությունը, էջ 28:
[2] Նույն տեղում:

նում է Փարիզում, ապա մեկնում Ռումինիա: Այսօր էլ հետաքրքրություն է ներկայացնում այդ իրողությունը, թե ինչպե՞ս, ի՞նչ հնարքով է նա կարողացել ազատվել բոլշեւիկների ճանկերից ու ողջ առողջ մեկնել արտասահման:

1. Բազմաթիվ փաստեր, օրինակ, Հայաստանի հեղկոմի կազմում ընդգրկվելը, Խորհրդային Հայաստանի բանակի հրամանատարությունը նրան վստահելը, Մոսկվայում անցկացրած տարիներին նրա նկատմամբ դրսեւորած հարգալից վերաբերմունքը եւ վերջապես, Ջեմալի սպանության կապակցությամբ ձերբակալվածներին նրա միջնորդությամբ ազատ արձակելը, միանշանակորեն վկայում են, որ Խորհրդային իշխանության ղեկավար մարմիններում եղել են բարձրաստիճան պաշտոնյաներ, մասնավորապես Ստալինն ու Ձերժինսկին, որոնք հարգել ու օգնել են նրան: Դրոն մարդկանց հետ չփվելու, նույնիսկ ամենաքմահաճ եւ դժվարամարս մարդու հետ ընդհանուր լեզու գտնելու արտակարգ շնորհներով է օժտված եղել:

Պիտի նկատել, որ քաղաքական կուսակցությունների եւ նրանց անդամների, մասնավորապես Հ. Ց. Դաշնակցության ու Դրոյի նկատմամբ առավել անհանդուրժողական եւ թշնամական վերաբերմունք են դրսեւորել հատկապես հայ բոլշեւիկները: Համեմատության համար մեջբերենք հետեւյալ փաստաթղթերը:

Այն ժամանակահատվածում, երբ Հայաստանի բոլշեւիկյան կազմակերպությունները հեղկոմի եւ Ջեկայի գլխավորությամբ երկրում «կարգ ու կանոն» հաստատելու պատրվակով անողոք պայքար էին մղում եւ բանտերը լցնում հարյուրավոր մտավորականների եւ ռազմական գործիչների, որոնք երբեք որեւէ կուսակցության անդամ չէին եղել, ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի քարտուղար Սերգո Օրջոնիկիձեն Ս. Կասյանին հասցեագրած հեռագրերում (1 փետրվարի 1921 թ. եւ 7 փետրվարի 1921 թ.), ներկայացնելով նրան ՀՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի «Դաշնակցությունը, որպես կուսակցություն վերացման մասին» որոշումը, միաժամանակ շեշտում է.

«Դաշնակների դեմ մղվող պայքարում հարկավոր է չմոռանալ խորհրդային իշխանությանը համակրող կամ օժանդակող ներքին խմբավորմանը, օրինակ Դրոյի, Վրացյանի խումբը: Հակաժողովրդական կուսակցության վերացման համար մղվող պայքարը չպետք է դառնա մտավորականության դեմ, թեկուզ

անցյալում դաշնակցական, պայքար: Չի կարող խոսք լինել այս կամ այն ընկերոջ հեռանալու մասին կուսակցական եւ պետական պատասխանատու պոստերից»[1]:

Այդ հեռագրի հավաստմամբ՝ Դրոյի նկատմամբ ավելի հանդուրժողական վերաբերմունք է դրսեւորել Սերգո Օրջոնիկիձեն, քան հայ բոլշեւիկները:

Անկասկած, վերոհիշյալ հանգամանքներն ու ղեկավար գործիչների հետ ունեցած անձնական կապերը իրենց նշանակալի դերն են ունեցել եւ օգնել նրան արտասահման մեկնելու թույլտվություն ձեռք բերելու գործում:

2. Դրոյին արտասահման մեկնելու թույլտվություն ձեռք բերելու գործում, անտարակույս, կարեւոր նշանակություն է ունեցել 1923 թ. օգոստոսի 1-ին հրապարակած՝ Դաշնակցությունն կուսակցության կովկասյան խմբերի դեկլարացիան :

Այդ դեկլարացիան ի լուր աշխարհի հայտարարում է. «... Դաշնակցությունն կուսակցության կովկասյան կազմակերպությունները ամենաանկեղծ կերպով վճռել են չգործել խորհրդային իշխանության դեմ եւ չխանգարել նրա աշխատանքներին Հայաստանում, հավատացած, որ խորհրդային իշխանությունը, հավատարիմ իր սկզբունքներին, կամրացնի հայ ժողովրդի քաղաքական անկախ գոյությունը:

Համոզված, որ սրանից հետո խորհրդային իշխանությունը Հայաստանում եւ ոչ մի կտոր հող չի գիջելու եւ, որպես ճնշված ժողովուրդների պաշտպան, իրականացնելու է հայերի իրավունքներն ու արդարացի պահանջները, մենք հայտարարում ենք մի անգամ ընդմիշտ, որ մենք խորհրդային իշխանության թշնամիներ չենք, որի հետ կապված է այսուհետեւ հայ ժողովրդի բախտը:

Եւ ով կռիվ կմղի խորհրդային իշխանության դեմ, ինչպես Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության տերիտորիայում, այնպես էլ սահմանից դուրս, հայ ժողովրդական մասսաների թշնամին ու դավաճանն է»:

1. Կենտրկոմի Կովկասյան խմբերի եւ Վրաստանի լիազոր («Աշխատավոր»)՝ Դրո
2. Վրաստանի Կենտր. կոմի («Աշխատավոր») նախագահ՝ Կ. Ղազարյան

Անդամներ՝ 3. Բ. Թոփչյան, 4. Մ. Մակարյան,

[1] Նույն տեղում, էջ 17:

5. Ա. Նալչաջյան, 6. Տ. Ավետիսյան, 7. Ա. Իսրայելյան
1 օգոստոսի 1923 թ.»[1]:

Դեկլարացիան ստորագրած դաշնակցական գործիչների մեջ Դրոն ամենահեղինակավոր դեմքն էր եւ բնականաբար նման որոշում կայացնելու ու հրապարակելու գործում նրա դիրքորոշումը պետք է որ վճռորոշ լիներ: Նրանց այդ քայլը ժամանակին եւ այսօր էլ միանշանակորեն չի ընդունվել իրենց կուսակցական ընկերների ու բոլշեւիկյան գործիչների կողմից եւ տեղիք է տվել տարբեր բնույթի քննադատությունների ու երբեմն էլ անհիմն եւ անհարկի որակումների:

Օրինակ, Ա. Մռավյանը, դրականորեն գնահատելով «Խորհրդային Հայաստան» լրագրի էջերում տպագրվող նախկին դաշնակցականների խմբային ու անհատական «մեղայական» բովանդակություն պարունակող նամակները, Դրոյի եւ նրա ընկերների ստորագրած դեկլարացիային տալիս է իրականության հետ բնավ կապ չունեցող հետեւյալ կեղծ ու մատացածին գնահատականը. «Համեմատեք այդ անպաճույճ տոնով գրված նամակները Դրոյի, Ղազարյանի եւ Թոփչյանի դիպլոմատիկական, խորամանկ ու երկմիտ ոճով գրված դեկլարացիայի հետ: Սար ու ձորի տարբերություն կա նրանց մեջ: Վերջինները, այսինքն Դրոն ու իր Թիֆլիսի ընկերները խորամանկաբար սքողում էին Դաշնակցության հին մեղքերը, արդարացնում այն եւ իրենց «խորհրդային օրենտացիան» էլ կապում անցյալի մեծ երազներ հիշեցնող սպասելիքների հետ եւ այդ բոլորն անում առանց հրաժարվելու Դաշնակցությունից, նրա քաղաքական միսիայի ֆիկցիայից...»[2]:

Աշոտ Հովհաննիսյանը Արամայիս Երզնկյանին գրած նամակում (21 օգոստոսի 1924թ.) իր տեսակետը հայտնելով Փարիզում կայանալիք ՀՅԴ համագումարում (Ընդհանուր ժողով-Հ.Գ.) իր արտահայտությամբ ձախ թեքված դաշնակցականների միջոցով Դաշնակցության շարքերը պառակտելու ու շերտավորելու մասին, Դրոյի մասին հայտնում է հետեւյալը. «...Դրոյի պլատֆորմ գոյություն չունի: Այդ մասին գրել եմ «Նորքում» եւ, որքան գիտեմ, իմ տեսակետը նաեւ մեր պատասխանատու ընկերների կարծիքն է հիմա: Դրոն կատարել է միայն՝ ինչ հրահանգել է Վիեննայի խորհրդաժողովը (նկատի ունի Վիեննայում կայացած ՀՅԴ

[1] Նույն տեղում, էջ 73:
[2] Նույն տեղում, էջ 77:

խորհրդաժողովը-Հ. Գ.): Դրոն չի հրաժարվել կուսակցության հին մեղքերից...»[1]:

Կարելի է վստահաբար պնդել, որ եթե Դրոյին Խորհրդային Միությունից արտասահման ուղարկելու թույլտվության խնդիրը ընձեռվեր Խորհրդային Հայաստանի բոլշեւիկ ղեկավարների իրավասությանը, ապա նրանք ավելի շուտ պատրվակներ կորոնեին ոչնչացնելու նրան, քան կհամաձայնեին թույլատրել նրան ողջ առողջ մեկնելու արտասահման:

Եթե անաչառորեն գնահատենք ՀՅԴ Վրաստանի կենտր. կոմիտեի հռչակած դեկլարացիայի փաստն ու անհրաժեշտությունը, ապա պիտի պատասխանել հետեւյալ հարցին. ինչպիսի վնասներ կարող էր պատճառել Հայաստանին եւ հայ ժողովրդին այդ դեկլարացիան ընդունվելու ու հրապարակվելու պարագայում կամ հակառակը. ինչպիսի՞ նպաստ կարող էր բերել այդ դեկլարացիան, եթե չընդունվեր ու չհրապարակվեր: Այդ հարցին պատասխանելիս պիտի նկատի ունենալ, որ այդ ժամանակահատվածում խորհրդային հատուկ ծառայությունները Դաշնակցության կուսակցության անդամ եւ համակիր լինելու, իսկ բազմիցս նաեւ մտացածին ու շինծու մեղադրանքով, բանտերը եւ աքսորավայրերն էին լցնում բազմաթիվ հայորդիների: Խորհրդային իշխանության դեմ այդ ժամանակահատվածում պայքար ծավալելը պարզապես արկածախնդրություն էր եւ չափազանց անիմաստ ու ժողովրդի համար վնասակար: Անշուշտ համանման որոշման հեղինակները դեկլարացիան ստորագրելիս հաշվի էին առել ժամանակաշրջանի յուրահատկություններն ու պահանջները: Բացի դրանից, Հայաստանն արդեն խորհրդայնացել էր, եւ տվյալ իրավիճակում նրանք այլ ելք չտեսնելով, որոշակի հույսեր են փայփայել ու հավատացել, որ «... խորհրդային իշխանությունը, հավատարիմ իր սկզբունքներին, կամրացնի հայ ժողովրդի քաղաքական անկախ գոյությունը: Համոզված, որ սրանից հետո խորհրդային իշխանությունը Հայաստանում եւ ոչ մի կտոր հող չի զիջելու եւ, որպես ճնշված ժողովուրդների պաշտպան, իրականացնելու է հայերի իրավունքներն ու արդարացի պահանջները»[2]:

Որեւէ կասկած լինել չի կարող, որ Ջեմալի ահաբեկման մեղադրանքով հարյուրավոր ձերբակալվածների ազատ արձակմանը մեծապես նպաստել է նաեւ այդ դեկլարացիայի հռչակումը:

[1] Նույն տեղում, էջ 75:
[2] Նույն տեղում, էջ 73:

ՀԾԴ Վրաստանի կենտր. կոմիտեի ընդունած դեկլարացիայի հրապարակումը, ինչպես եւ սպասվում էր, տեղիք է տալիս տարբերություն խոսակցությունների, իսկ ստորագրողների, իհարկե առաջին հերթին Դրոյի հասցեին, Հայաստանում եւ սփյուռքում հնչում են անհարկի որակումներ ու քննադատություններ: Անգամ նրա ամենամտերիմ ընկերն ու գաղափարակիցը՝ Ս. Վրացյանը, չի զլանում հրապարակավ, մամուլի էջերում քննադատել դեկլարացիան ու նրա հեղինակներին:

Դրոյին հասցեագրած նամակներից մեկում(1923 թ. նոյեմբերի 10), դեկլարացիայի նկատմամբ արտահայտելով իր եւ ընկերների դժգոհությունը՝ Ս. Վրացյանը գրում է.

«Սիրելի Սուրէն

Երկար չեմ գրում: Ցարութիւնը կհաղորդէ ասելիքներս:Բոլորովին անհասկանալի է քո վերջին քայլերը, դեկլարացիան եւ այլն: Արտասահմանի մարմինները եւ ընկերները բացարձակապէս դէմ են այդ քայլերին եւ սպասում, որ դու եւ ընկերները յետ կկենաք եւ կաշխատեք պահպանել կուսակցութեան միութիւնը: Հասունացած հարց լուծելու համար առաջարկում ենք գումարել Ընդհ. ժողով, իսկ մինչ այդ չպէտք է դեկլարացիային ընթացք տաք...

Եւ միթէ՞ դու պիտի լինես Ռոստոմի, Արամի, Դումանի եւ հարիւրաւոր ուրիշ ընկերների կառուցած շէնքի հիմք փորողը: Ձեմ հասկանում եւ սրտանց տանջւում եմ: Արտաքին դէպքերը եթէ 1914 ի քաղաքականութեան կրկնութիւնը լինի, թէեւ չեմ հաւատում որ պատերազմ լինի, մենք պէտք է լինենք բոլորովին չեզոք եւ մտածենք մեր ժողովրդի ինքնապաշտպանութեան մասին»[1]:

Այսուհանդերձ, շատ շուտով նրանք ընդունում են դեկլարացիան ստորագրող ընկերների նկատմամբ իրենց դրսեւորած քննադատական վերաբերմունքի եւ անհարկի կասկածամտության անարդարացիությունն ու չհիմնավորվածությունը:

Հեռանալով Խորհրդային Միությունից՝ Դրոն սկզբում լինում է Փարիզում, ուր այդ ժամանակ բնակվում էր Ս. Վրացյանը:

Բնական է, որ հայտնվելով անծանոթ քաղաքում՝ նա առաջինը պիտի այցելեր իր մտերիմ ընկերոջը: Նրա անսպասելի մեկնումը Խորհրդային Միությունից շատերի մոտ է կասկածներ հարուցել: Իրոք, դժվար էր հավատալ, որ հանրահայտ դաշնակցական գործիչը, թեկուզ «ձախ դաշնակցական», կարող էր հենց

[1] ՀՅԴ ԿԱ, ՍՎ (28-3): Նամակի վերջում Ս. Վրացյանը ավելացնում է . «Այս նամակը գրել եմ Դրոյին, շորի վրա գրուած, ուղարկել եմ Բոլգարացի Հարութիւնի հետ Ժընեւից»:

այնպես, հեշտությամբ ազատվել բոլշեւիկյան Չեկայի տնօրինությունից եւ հայտնվել Փարիզում: Նույնիսկ Սիմոն Վրացյանը, որը, ինչպես արդեն նշվել է, նրա ամենամտերիմ ընկերն ու համախոհն էր (ՀԾԴ նշանավոր գործիչներից Դրոյի ամենամտերիմ ընկերները եղել են Սիմոն Վրացյանն ու Վահան Նավասարդյանը-Հ.Գ.), նույնպես որոշակի կասկածանքով է վերաբերվել Փարիզում նրա առեղծվածային հայտնվելուն:

«Մոսկվայից, - գրում է Ս. Վրացյանը, - նա Փարիզ եկաւ ուղղակի ինձ մօտ: Ինչո՞ւ ծածկեմ, Դրոյի գալը մի պահ ինձ էլ շփոթեցրեց, եւ ես կտրուկ կերպով հարցրի նրան.

-Ստալինից ի՞նչ յանձնարարութիւն ես բերել...

Վարանում էր բարկանա՞յ թէ ծիծաղի: Բայց ոչ բարկացաւ, ոչ ծիծաղեց: Վճռական, կասկած չվերցնող ձեւով յայտարարեց, որ ոչ ոքից եւ մէկից ոչ մէկ յանձնառութիւն չունի:

Եւ, ի հարկէ չունէր: Ես պէտք չունէի համոզուելու, բայց շուտով ամենակասկածոտներն անգամ համոզուեցին»[1]:

Դրոյի արտասահման մեկնելու առեղծվածին իր հեղինակած «Շշուկների Մատյան» վեպում անդրադարձել է Վարուժան Ոսկանյանը*՝արձանագրելով հետեւյալ գնահատականը. «Մինչ օրս անհայտ է զորավար Դրոյին ազատ արձակելու վերաբերյալ ՆԿՎԴ-ի որոշման հիմքը: Նրանք, ովքեր կարծում են, թե զորավարին խնայել են, որպեսզի Հայաստանում ըմբոստություն չառաջացնի, ՆԿՎԴ-ին վերագրում են այնպիսի մտավախություններ, որոնք երբեք չի ունեցել: Հավանաբար, չափից ավելի ամբարտավանությունից ու միևնույն ժամանակ զորավարի ընտանիքին պատանդ պահելով՝ ռուսները կարծում էին, թե կարող էին Դրոյից օգտվել: Բայց չարաչար սխալվեցին ու պիտի ափսոսային...»[2]:

[1] Վրացեան Ս., Մրրկածին Դրոն, էջ 132-133:

*Ռումինիայի էկոնոմիկայի եւ արտաքին առեւտրի նախարար, Հայոց Ռումինիայի հայ գրողների միության նախագահ Վարուժան Ոսկանյանի «Շշուկների Մատյան» վեպը գրվել է Հայոց Մեծ Եղեռնի ահավոր սարափներն ապրած իր պապերի՝Կարապետ Ոսկանյանի, Սեդրակ Մելիքյանի ու նրանց ժամանակակիցների՝ վեպում ներկայացված դեպքերի մասնակիցների և ականատեսների պատմածների ու հուշերի հիման վրա: Պիտի ընդունել, որ իմացաբանական առումով վեպն անկասկած ունի նաև պատմագիտական անգնահատելի արժեք ու նշանակություն:

«Շշուկների Մատյան » վեպը հրատարակվել է 1909 թ. եւ համարվել է Ռումինիայի տարվա լավագույն գրական ստեղծագործությունը ու նույն տարի նրան շնորհվել է Ռումինիայի Ակադեմիայի գլխավոր մրցանակը: Գիրքը հրատարակվել է մի քանի լեզուներով ու Գրքի միջազգային տոնավաճառներում արժանացել է Եվրոպական գրական աշխարհի պատշաճ ուշադրությանը:

[2] Վարուժան Ոսկանյան, Շշուկների Մատյան, 2012, Երևան, էջ 183-184:

Դրոյի արտասահման մեկնելու ստույգ ժամկետը որոշելու հարցում կան որոշակի շփոթություն եւ տարբեր կարծիքներ:

Պահպանվել է Խորհրդային Միությունից Դրոյի հեռանալու ժամկետը նշող հետեւյալ ուշագրավ փաստաթուղթը, ուր արձանագրված է.

«ՀԿ(բ)Կ Անդրերկրամի նախագահության
ընդլայնված նիստի որոշումը
23 հուլիսի 1923թ.

Լսեցին. Անդրկովկասյան դաշնակցականների մասին:

Որոշեցին. 1) Ջատարկել ներկայացված հայտարարության հրապարակման դեմ (խոսքը վերաբերում է ՀՅԴ Վրաստանի կենտր. կոմիտեի ընդունած դեկլարացիային, որը Դրոյի եւ Կ. Ղազարյանի ստորագրությամբ հրապարակվում է 1923թ. օգոստոսի 1-ին-Հ.Գ.)...

2. Անհրաժեշտ համարել, որ հայտարարությունը ստորագրվի դաշնակների տեղական կենտկոմի բոլոր անդամների կողմից:

3. Կուսակցական պատկանելության համար ձերբակալված դաշնակներին(նկատի ունեն Ջեմալ փաշայի սպանության պատճառով ձերբակալվածներին-Հ.Գ.) ազատել հայտարարության հրապարակումից հետո:

4. Թույլատրել Դրոյին եւ Կորյուն Ղազարյանին մեկնել արտասահման...»[1]:

Հայտնի է, որ Դրոն Թիֆլիսյան առաքելությունը հաջողությամբ կենսագործելուց հետո այլեւս Մոսկվա չի վերադարձել: Պիտի ընդունել, որ «ՀԿ(բ)Կ Անդրերկրամի նախագահության ընդլայնված նիստի որոշման մեջ նշված է Դրոյի արտասահման մեկնելու թույլտվություն տալու թվականը՝ 1923թ.:

Կարելի է փաստել, որ այս փաստաթուղթը ոչ միայն նշում է Դրոյի արտասահման անցնելու թույլտվության տարեթիվը, այլեւ կրկնակի անգամ հավաստում, որ Ջեմալ փաշայի ահաբեկման պատրվակով ձերբակալված հարյուրավոր դաշնակցականներին ազատելու եւ Դրոյին արտասահման մեկնելու թույլտվություն ձեռք բերելու գործում, այնուամենայնիվ, վճռորոշ նշանակություն է ունեցել ՀՅԴ Վրաստանի կենտր. կոմիտեի կողմից հրապարակած հանրահայտ դեկլարացիան:

Ըստ Տիգրան Դեւոյանի, որը 1920թ. եղել է ՀՀ բանակի հրամանատարության շտաբի հետախուզության բաժնի պետը, Դրոն

[1] ՅՅ Դաշնակցությունը եւ Խորհրդային իշխանությունը, էջ 28:

Մոսկվայում մնացել է ընդամենը երկու տարի, եւ այնտեղից մեկնել է արտասահման, այսինքն 1923 թ.[1]:

Ճիշտ է, համաձայն ՀԿ(բ)Կ Անդրերկրամի նախագահության որոշման Դրոյին թույլատրել են արտասահման մեկնել 1923 թ., սակայն նա արտասահման է մեկնել փոքր-ինչ ավելի ուշ, հավանաբար 1924 կամ 1925 թ.: Եթե նա 1923 թ. գտնվեր արտասահմանում, բնականաբար հարկ չկար, որպեսզի Ս. Վրացյանը նրան ուղարկեր 1923 թ. նոյեմբերի 10-ին թվագրված վերոհիշյալ նամակը, որը գրված է ոչ թե թղթի, այլ շորի վրա:

Ս. Վրացյանի հավաստմամբ՝ նա Խորհրդային Միությունից Փարիզ է եկել 1925 թ եւ մասնակցել աղ օրերին այնտեղ կայացած ՀՅԴ 10-րդ Ընդհանուր ժողովին:

Միսաք Թորլաքյանի վկայությամբ՝ «1925-ին, Մասկուայէն անցաւ Ռումինիա»[2]:

Համաձայն Դրոյի գործունեությունը ներկայացնող ԽՍՀՄ ՊԱԺԿ (Պետական Անվտանգության Ժողովրդական Կոմիսարիատ)ծառայության, հանրահայտ ՆԿՏԲ-ի 8-րդ բաժնի 2-րդ բաժանմունքի պետի ներկայացրած զեկուցագրի(Данные 4 Управления НКГБ СССР к 17.12. 1942 г. Об антисоветской деятельности дашнакского лидера Дро Канаяна в 1942 г.) «Դրոն, դաշնակցական Հայաստանի զինվորական նախարարը, ԽՍՀՄ-ում ապրել է մինչեւ 1925 թ., ապա Ռումինիայում...»[3]:

Այս հարցում Ս. Վրացյանի, Մ. Թորլաքյանի եւ ԽՍՀՄ ՊԱԺԿ-ի վկայակոչած տվյալները միանշանակ են: Դրոն ԽՍՀՄ-ից մեկնել է արտասահման 1925 թ. ու մասնակցել ՀՅԴ 10-րդ Ընդհանուր ժողովին:

Եթե հիմք ընդունենք ՀԿ(բ) Կ Անդրերկրամի ընդլայնված նիստի վերոհիշյալ որոշումը՝ 23 հուլիսի 1923 թ., ապա միանգամայն հստակ է, որ նա ՀՅԴ համաժողովին մասնակցել է ոչ թէ Փարիզում հանգրվանելու առաջին օրերին, այլ ավելի ուշ, երկու տարի անց: Հետեւաբար, կարելի է պնդել, որ Դրոն ՀՅԴ 10-րդ Ընդհանուր Ժողովին մասնակցել է այն ժամանակ, երբ արդեն բնակություն էր հաստատել Ռումինիայում: Բայց, մի՞թե Ս. Վրացյանը կարող էր շփոթել 1923 ու 1925 թթ-ը եւ թյուրիմացաբար ներկայացներ ՀՅԴ 10-րդ Ընդհանուր Ժողովին Դրոյի մասնակցության փաստը:

[1] Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1937, թիւ 9, էջ 17:
[2] Թորլաքեան Մ., նշվ. աշխ., էջ 545:
[3] Абрамян Э., Забытый легион, Ереван, 2005, ст. 185:

Այս հարցում իրականությանն ավելի մոտ է Դրոյի որդու՝ Գուրգեն Կանայանի վկայությունը: Ըստ Գուրգենի՝ իր հայրը արտասահման է մեկնել 1924 թ. եւ իրենց ընտանիքը՝ մայրը՝ Արփենիկն իր երկու զավակների՝ յոթ եւ հինգ տարեկան տղաների՝ Սուրենի եւ Գուրգենի հետ, նույն տարում Մոսկվայից վերադարձել են Երեւան:

Գուրգեն Կանայանի վկայությունը հաստատում է Ռուբենին հասցեագրած Դրոյի նամակը, որը գրված է 1924 թ. օգոստոսի 24-ին, Ռումինիայի Փլոեշտի նավթընկերության անունը կրող բլանկի վրա:

Նամակում, Դրոն ի թիվս մի շարք հարցերի, Ռուբենին հայտնում է նաեւ իր բնակության վայրը:

«Սիրելի Ռուբէն

Ներիր որ այդքան ուշ եմ գրում: Նամակդ իր ժամանակին ստացա, լաւ կանես , որ մէկ մէկ գրես: Չէ որ գրիչ բանեցնելուն վարժվել ես եւ ապրում ես կուլտուրական կենտրոնում, ինձ պէս գործակատար չէս Բալկանի ձորերում...»[1]:

Փարիզից նա մեկնում է Ռումինիա: Դրոյին Ռումինիա ճանապարհողների թվում եղել է նաեւ Ս. Վրացյանը, որը պատմում է հրաժեշտի պահին Դրոյի հետ կատարված հետեւյալ ուշագրավ դեպքը. «Դրոն Փարիզից մեկնեց դառն յիշողութիւններով Ֆրանսիայի մասին: Իր մէկ մտերիմ ընկերոջից նա ստացել էր որոշ գումար, իբրեւ ճանապարհածախս եւ Ռումինիայում առաջին օրերին ապրուստի միջոց: Երբ պայուսակը վերին յարկից ուղարկեցինք վար եւ, ըստ Դրոյի սովորութեան, նստանք մի վայրկեան լուռ, յանկարծ նա ձեռքով շօշափեց գրպանը եւ պոռաց.

-Փողերը գողացել են...

...Ոստիկանական միջամտութիւն-կորած դրամը անկարելի եղաւ գտնել...

- Թո՛ւհ, անբարոյական Ֆրանսիա, հայհոյում էր Դրոն: Սրանց մի լաւ բոլշեւիզմ է հարկաւոր...»[2]:

Ռումինիա ուղեւորվելիս՝ Դրոյին առաջինը դիմավորում է Միսաք Թորլաքյանը, որը Ջիվանշիրին ահաբեկելու պատճառով Կոստանդնուպոլիսում կայացած դատավարության վճռով ազատ էր արձակվել ու մեկնել Ռումինիա: Թադեւոս Պետրոսյանից, որն այդ ժամանակ Կոստանցիայի հայկական դպրոցի տնօրենն էր, իմանալով Դրոյի Ռումինիա ժամանելու իրողությունը, անհապաղ մեկնում է դիմավորելու նրան: Միսաք Թորլաքյանը Դրոյին հանդիպում է Փարիզից Ռումինիա մեկնող գնացքի վագոններից մեկում ու նրան ուղղում իրեն առավելապես հետաքրքրող հետեւյալ հարցը. «Առաջվա պես պիտի ըլլա, զորավար... Լավ ժամանակներու պես: «Հիմա խաղաղություն է, ասաց զորավար Դրոն:Ասանկ ժամանակ մեզի համար դժվար կըլլա պայքարելով մեր սահմանները շահիլ...»: «Բայց որքա՞ն դեռ համբերություն ունենանք»,- շվարած հարցրեց Միսակ Թորլաքյանը: «Մինչեւ որ նորէն պատերազմ ըլլա, Միսակ,-ասաց զորավար Դրոն...»:[1]

Ուշագրավ է, որ նա Մ. Թորլաքյանի ուղեկցությամբ առաջին հերթին այցելում է Բուխարեստի Հայոց հյուպատոսարանը, որն այդ ժամանակ թեեւ լուծարվել էր, բայց ձեւականորեն շարունակում էր գործել: Հյուպատոսարանում գտնվողները, որոնց թվում՝ ՀՀ կառավարության ներկայացուցիչ Հարությունն Խնդիրյանը, նրան ընդունում են ընդգծված ջերմությամբ ու հետաքրքրասիրությամբ ու ուղղում բազմաթիվ հարցեր:

Դրոն, անշուշտ, հիասթափված ու խաբված էր բոլշեւիկներից ու Հայաստանի նկատմամբ Խորհրդային Ռուսաստանի դրսեւորած քաղաքականությունից: Խորհրդային Ռուսաստանի նկատմամբ նրա դրսեւորած գաղափարական ու քաղաքական համոզմունքներում տեղի էին ունեցել արմատական փոփոխություններ:

Հյուպատոսարանում պատասխանելով իրեն հասցեագրված հարցերին՝ նա ասել է. «Կհարցնեք թե որուն դեմ պիտի պայքարի՞նք: Առանց երկմտանքի կպատասխանեմ՝ բոլշեւիկներուն դէմ: Թուրքերը մեր մարմինը սպանեցին, իսկ բոլշեւիկները մեր հոգիները կսպանեն: Պէտք է մեր հոգիները փրկենք, որպեսզի հետո մեր ջարդված մարմինները վերակենդանացնենք»[2]:

Դրոն հաստատվում է Ռումինիայի Փլոյեշտի քաղաքում եւ աշխատանքի անցնում Ղուկասյանների նավթագործարանում, սկզբում որպես հսկիչ, ապա մի փոքր անց՝ կառավարիչ: Լիովին վայելելով գործարանատիրոջ՝ Ա. Ղուկասյանի բարյացակամությունն ու վստահությունը, նա, շնորհիվ իր կազմակերպական ընդունակությունների, կարողանում է աստիճանաբար ընդլայնել իր գործարար կապերն ու գործունեության շրջանակները: Գնե-

---

[1] ՀՅԴ ԿԱ, Ս. Վ. 99-65:
[2] Վրացեան Ս., Մրրկածին Դրոն, էջ 157-158:

[1] Վարուժան Վարդանյան, նշվ. աշխ., էջ 397:
[2] Նույն տեղում:

լում է նավթի պարունակությամբ հարուստ հողամասեր ու դառնում նավթարդյունաբերող: Նրա մոտ, ինչպես Հին Բայազետում ապրած տարիներին, հետզհետե հավաքվում եւ նրա ձեռնարկությունում աշխատանքի են անցնում մարտական զինակիցներն ու բարեկամները, որոնց թվում՝ Կուռո Թարխանյանը, Միսաք Թորլաքյանը, Գրիգոր Ամիրյանը եւ այլք:

«Ըստ լաւագոյն սովորութեան,- գրում է Տ. Դեւոյանը (նա նույնպես մի որոշ ժամանակ ապրել է Պլոյեշտի քաղաքում Դրոյի մոտ-Հ. Գ.), - նա իր մօտ տանում է իր սիրելի ընկերներին: Իր տունը անպակաս է լինում հիւրերով»[1]:

Մինչ Դրոյին հանդիպելը, Մ. Թորլաքյանը Արամ Երկանյանի ընկերակցությամբ ժամանակավորապես բնակել է Ռումինիայի Կոնստացիա քաղաքում: Երկու նշանավոր վրիժառուններն ապրել են ոչ այնքան տանելի պայմաններում:

Իր հեղինակած «Օրերուս հետ» գրքում անդրադառնալով Արամի հետ Կոստանցիայում ապրած օրերին՝ Մ. Թորլաքյանը գրում է. «Ամերկայէն մաս մը դրամ էր ստացուած: Ասով Արամին հետ 6 հատ կով առինք, ագարակ մը վարձեցինք ու կաթնատնտեսութեան գործի սկսեցինք: 7-8 ամիս քաշքշեցինք: Շահ չկցանք բերել: Շատ մը դժուարութիւններու ենթարկեցանք անփորձութեան և այլ պատճառներով և ծայրը ծայրին չկրցանք բերել...

Այդպէս, անկանոն կեանք մը վարելով, օր մը կուշտ, օր մը անօթի, քաշքշեցի Քոնսթանցիայի մէջ մինչեւ 1925 թ., երբ Դրօն եկաւ Ռումինիա:Դրօն այդ ժամանակ նաւթային շրջանի կեդրոն Միսլիայի մէջ կը ծառայէր յայտնի նաւթարդիւնաբերող Ղուկասովներու մօտ, որպէս անոնց գործի կառավարիչ: Գացի անոր մօտ և գործի դրաւ...»[2]:

Ռումինիայում հաստատվելու սկզբնական շրջանի նրա գործունեության ուսումնասիրությունը մատնանշում է, որ զուտ կուսակցական աշխատանքը նրա գործունեությունում դեռեւս առաջնահերթ խնդիրը չէր: Թեեւ նա Ռունինիայում հաստվելու առաջին տարիներին գրեթե չի մասնակցել կուսակցական ժողովներում արծարծվող հարցերի քննարկմանը, այնուամենայնիվ, ընկերները, խոր հարգանք տածելով նրա նկատմամբ, ցանկանում

[1] «Հայրենիք» ամսագիր, 1937, թիւ 9, էջ 17:
[2] Թորլաքեան Մ., նշվ. աշխ., էջ 512:

են նրան ընտրել ՀՑԴ բյուրոյի անդամ: Դրոն կտրականապես հրաժարվում է ընկերների առաջարկած չնորհից: Նրան այդ ժամանակ չէր հետաքրքրում կուսակցական գործունեությունը:

Ռումինիայում Դրոն, որպես գործարար նավթարդյունաբերող, հանգիստ ու ապահով ապրում է մինչեւ երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը: Այդ ընթացքում նրա կյանքում տեղի ունեցած կարեւորագույն իրադարձություններից մեկը՝ նրա ամուսնությունն է: Նրա զինակիցներից Թադէ Պետրոսյանը պատմում է, որ Փլոյեշտի քաղաքի Դրոյի բնակարանում կայացած ՀՑԴ Ռումինիայի կառույցի հերթական ժողովի ավարտից հետո, նա իրեն ստիպել է, որ մի երկու օր մնա Փլոյեշտիում իր տանը: Զրույցներից մեկի ժամանակ Դրոն անսպասելիորեն ասել է.

«- Թադէ ջան, ի՞նչ անխիղճ էք իմ հանդէպ: Բոլորդ ունէք ձեր ընտանեկան տաքուկ կեանքը: Միթե՞ մի օր էլ չպիտի մտածէք իմ մասին...

Իմ հարցումներին նա պատասխանեց.

Դու կարող ես, եթէ ուզես, գտնել մի հալալ հացակեր ինձ համար:

Եւ մեր Դրոյի համար իր սրտին ուզած «հալալ հացակերը» եղաւ բոլորիս սիրելի Գայանէն»[1]:

Դրոն Գայանեի հետ ամուսնացել է Ռումինիայում՝ 1935-ին: Վարուժան Ոսկանյանի գնահատմամբ՝ «Այնպես, ինչպես պատահում է ավելի շատ հատկապես կանանց, քան տղամարդկանց հետ, Գայանեն եղավ այն հազվագյուտ մարդկանցից, ում հաջողվեց հաղթել դարին՝ առանց ստիպված լինելու նրա դեմ պայքարել: 1900-ին Ղարաբաղի Նուխի բնակավայրում ծնված, հետո Ռումինիային վերադարձված Բեսարաբիայի Զետատեա Ալբը բնակավայրում ապրած Գայանե Կանայանը մահացավ 2005 թ. Բոստոնում, 105 տարեկանում, ճիշտ ապրիլի 24-ին, երբ հայկական գաղութները ոգեկոչում էին 1915-ի ցեղասպանության իններսուն տարին»[2]:

Դրոն մինչեւ 2-րդ համաշխարհային պատերազմի սկիզբը, ինչպես արդեն նշվել է, ապրել է Ռումինիայում ու այդ ընթացքում բազմաթիվ կապեր է հաստատել Գերմանիայի գործարար

[1] «Հայրենիք» ամսագիր, 1956, թիւ 10, էջ 29:
[2] Վարուժան Ոսկանյան, նշվ. աշխ., էջ 184:

շրջանակների հետ: Դրոյի, որպես նավթարդյունաբերողի գործունեությունը շարունակվում է մինչեւ երկրորդ աշխարհամարտը: Եվրոպայում նացիզմի ի հայտ գալը եւ Գերմանիայում, Իտալիայում նրանց կողմից իշխանության նվաճումն ու ապա 2-րդ աշխարհամարտի բռնկումը, բնականաբար իրենց խոր կնիքն են դնում ոչ միայն նրա ապրելակերպի ու կենցաղի, այլեւ գաղափարական համոզմունքների, քաղաքական կողմնորոշման եւ նրա գործունեության ուղղվածության վրա:

Շատ է հոլովվել ու հոլովվում այն մասին, թե Դրոն 2-րդ աշխարհամարտի տարիներին համագործակցել է ֆաշիստական Գերմանիային: Այո՛, դա իրողություն է:

Ինչո՞ւ Դրոն, որը մինչ այդ առավելապես հայտնի էր իր ռուսական կողմնորոշմամբ, հանկարծ հայտնվում է գերմանացիների հետ համագործակցողների շարքում: Մի՞թե նրա գաղափարական-քաղաքական համոզմունքներում եւ կողմնորոշման մեջ, պայմանավորված ժամանակաշրջանի յուրահատկությամբ ու տեղաշարժերով, կատարվել էին արմատական փոփոխություններ: Ինչպիսի՞ հանգամանքներ կարող էին նրան կողմնորոշել ու առավել եւս հարկադրել, որպեսզի նա համագործակցեր գերմանացիների հետ:

Գերմանիայում բնակվող հայերը գերմանացիների հետ որոշակի բարեկամական կապեր էին հաստատել դեռեւս քսանական թվականների սկզբներին, երբ Յոհանես Լեփսիուսի նախաձեռնությամբ Բեռլինում եւ հենց իր իսկ նախագահությամբ ստեղծվում է գերմանա-հայկական միություն, որի փոխնախագահն էր Արտաշես Աբեղյանը: Ի դեպ, այդ միության գործավարներից մեկը եղել է Ավետիք Իսահակյանը: Լեփսիուսի մահից հետո 1926 թ. միությունը գլխավորում է դոկտոր Պ. Ռորբախը: Նույն թվականին Արտաշես Աբեղյանի գործուն մասնակցությամբ Բեռլինի համալսարանին կից Արեւելյան լեզուների սեմինարիայում բացվում է հայագիտության ամբիոն: Արտաշես Աբեղյանի առաջարկությամբ եւ գերմանա-հայկական միության գործուն մասնակցությամբ 1928 թ. Բեռլինի նորաբաց փողոցներից մեկը կոչվում է «Հայկական փողոց»:

Բեռլինի խիստ փոքրաքանակ, մինչեւ 1000 հոգանոց հայ գաղութի կյանքը, նաեւ շնորհիվ Լեփսիուսի հիմնադրած գերմանա-

հայկական միության ջանքերի, մինչեւ 1933 թ. ընթանում է խաղաղ, բնականոն հունով:

1933 թ. Հիտլերի կողմից Գերմանիայում իշխանության գալը նվաճելուն զուգընթաց, իրավիճակը կտրուկ փոխվում է ոչ միայն այդ երկրում, այլեւ ամբողջ Եվրոպայում: Այդ ամենին զուգընթաց, կտրուկ փոխվում է նաեւ Գերմանիայի եւ մյուս երկրների հայկական գաղութների կյանքը:

Հայտնի է, որ ֆաշիստական վարչակարգը առանձնահատուկ բացասական վերաբերմունք ուներ ոչ արիական ծագում ունեցող, մասնավորապես սեմական լեզվաընտանիքին պատկանող ազգերի, հատկապես հրեաների նկատմամբ: Համաձայն ֆաշիստական Գերմանիայի պարագլուխների ու գաղափարախոսների դավանած սկզբունքների, ոչ արիական ծագում ունեցող ազգերը պետք է ոչնչացվերին եւ մասամբ վերածվեին արիացիների, իհարկե, առաջին հերթին գերմանացիների ծառայող ստրուկների: Նացիստ գաղափարախոսներն իրենց հրապարակած բազում հոդվածներում հայերին ներկայացնում էին որպես ոչ արիական, սեմական լեզվաընտանիքին պատկանող ժողովուրդ, իսկ դա նշանակում էր, որ հայերը, որպես ոչ արիացիներ, հրեաների ու սլավոնների նման, նույնպես դատապարտված էին ոչնչացման ու ստրկացման: Հայերի ոչ արիական, սեմական լեզվաընտանիքին պատկանելու հորինվածքը մեծապես պայմանավորված էր Հիտլերյան Գերմանիայի դաշնակից Թուրքիայի դիրքորոշմամբ, որն իր գործակալների միջոցով ամենուրեք տարածում էր հայերի ոչ արիական ծագումը հաստատող միտումնավոր հորինված տեսակետներ ու դրանով իսկ ձգտում էին Գերմանիայի իշխանություններին տրամադրել ընդդեմ հայության:

Հակահայկական տրամադրություններ են դավանել նացիստական կուսակցության բազմաթիվ անդամներ, որոնք պատերազմից առաջ իրենց ելույթներում պնդել են, որ «...հայերին չի կարելի վստահել, քանի որ տառապում են ռուսական հիվանդությամբ եւ այդ ազգին անհնարին է տրամադրել ընդդեմ ռուսների...»[1]:

Եվրոպայի մի շարք երկրներում ապրում էին ավելի քան 500.000 հայեր: Ի՞նչ ճակատագիր էր սպասում նրանց, եթե

[1] Абрамян Э., Забытый легион, Ереван, 2005, ст. 23:

Գերմանիան նվաճեր այդ երկրները, ի՞նչ ճակատագիր էր սպասում բուն Գերմանիայում բնակվող հայերին: Կասկած լինել չէր կարող, որ Եվրոպայի տարբեր երկրներում ու Գերմանիայում բնակվող հայերին անխուսափելիորեն սպառնում էր նոր եղեռնը: Ի՞նչ պետք է արվեր հայությանը սպառնացող այդ վերահաս աղետը կանխելու համար:

1. Նախ եւ առաջ անհրաժեշտ էր արժանի հակահարված տալ հայերին ոչ արիական, սեմական ժողովուրդների շարքը դասող տեսաբաններին ու գաղափարախոսներին եւ ծանրակշիռ փաստարկներով ու օրինակներով հիմնավորել հայերի՝ հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանելու իրողությունը եւ արիական ծագումը:

2. Անհրաժեշտ էր մերձենալ, ընդհանուր եզրեր գտնել գերմանական իշխանությունների հետ եւ շահել նրանց համակրանքն ու վստահությունը: Իհարկե, այդ քայլի կարեւորությունն առավել հրատապ է դառնում փոքր-ինչ ավելի ուշ, պատերազմի ծավալման շրջանում:

1934 թ. գերմանա- հայկական միության ղեկավար դոկտոր պ. Ռորբախը Արտաշես Աբեղյանի աջակցությամբ հրատարակում է «Հայկականություն-Արիականություն» նշանավոր գիրքը, որտեղ նրանք, գերմանացի մի քանի մտավորականների մասնակցությամբ, ծանրակշիռ օրինակներով ու փաստարկներով հիմնավորում են հայերի արիական ծագում ունենալու, հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանելու իրողությունը: Պիտի ընդգծել, որ այդ աշխատության լույսընծայմամբ դրվեց առաջին ծանրակշիռ հիմնաքարը հայերի արիական ծագումը ապացուցելու գործում: Աշխատությունը ուսումնասիրելու նպատակոր ստեղծվում է հատուկ խումբ:

Է. Աբրահամյանը իր հեղինակած «Забитый легион» գրքում հիմք ունենալով այդ հարցի վերաբերյալ գերմանացի հեղինակների աշխատություններում տեղ գտած տեսակետները, գրում է «Այդ հարցը ուսումնասիրող խմբի ստեղծումից հինգ ամիս անց, անձամբ Ա. Հիտլերի սեղանին է դրվում Ռոզենբերգի զեկուցման տեքստը, որտեղ գիտական սկզբնաղբյուրների ուսումնասիրմամբ ապացուցված էր հայերի արիական ծագումը: Նրանում ասվում եւ ապացուցվում է, որ հայ ազգի լեզուն հնդեվրոպական ծագում ունի, իսկ ազգը հանդիսանում է հնագույն «Արիացիների» անմիջական ժառանգորդը»[1]:

Համաձայն Է. Աբրահամյանի վերոհիշյալ գրքում տեղ գտած մեջբերումների, Ռոզենբերգի զեկուցագրում հայերի արիական ծագման վերաբերյալ եղել են հարյուրավոր ապացույցներ ու փաստարկներ, մասնավորապես Դարեհի բանակի կազմում հայկական զորքերի գտնվելու մասին վկայող արձանագրության վիմագիրը: Պարսկական արձանագրությունում այդ զորամասերը կոչվել են «արիացիների բանակը Հայաստանի հողից...»[2]:

«Հայկականություն-Արիականություն» գիրքը արագ տարածվում է Գերմանիայում ու ունենում իր դրական եւ բարերար ազդեցությունը:Թերթերում եւ այլ պարբերականներում ու հանդեսներում դադարում են հայերի ոչ արիական ծագումը մատնանշող հոդվածների հրապարակումները: Գերմանիայի ներքին գործոց նախարարության որոշմամբ՝ հայերին որպես արիացիների տրվում են հատուկ վկայականներ:

«Հայկականություն-Արիականություն» գրքի հրատարակման ու տարածման շնորհիվ, ինչպես արդեն նշվել է, դրվեց հայերի ֆիզիկական գոյությանը սպառնացող վտանգը հեռացնելու առաջին կարեւորագույն հիմնաքարը, մնում էր այն ավելի զարգացնել ու ամրապնդել:

Պատերազմի հենց առաջին իսկ օրերից գերմանական զորքերը մեկը մյուսի հետեւից, աներեւակայելի արագությամբ, նվաճում են Եվրոպական մի շարք երկրներ: Եվրոպական տարբեր տերություններում բնակվող շուրջ 500.000 հայեր հայտնվում են գերմանական գերության մեջ, եւ դարձյալ Գերմանիայի իշխանությունների վերին մարմիններում վերստին ծեծվում են հայերի ոչ արիական ծագումը հաստատող չինծու հորինվածքները: Իրավիճակն ավելի է բարդանում ու սպառնալի կերպարանք ստանում մանավանդ Գերմանիայի կողմից Ֆրանսիայի նվաճումից եւ ապա Խորհրդային Միության վրա հարձակվելուց հետո:

«Ֆրանսիայի պարտությամբ, - նշվում է «Առթիւ դատավարութեան երբեմնի հայ պատերազմական նախարար՝ Կանայեան Դրաստամատ» փաստաթղթում, - 1940-ին 3000 հայ պատերազ-

[1] Абрамян Э , նշվ. աշխ., էջ 22:
[2] Նույն տեղում:

մական գերիներ Ֆրանսիական բանակէն եկան Գերմանիա: Անոնց ֆիզիկական գոյութիւնը վտանգի մէջ էր, զի գերմանացիները ցեղային հարցեր մէջտեղ նետեցին ու քանի մը աւագ անհատներ չէին ուզեր հայերը արիական ցեղէ հաշուիլ»[1]:

ԽՍՀՄ զորքերի կրած արագ եւ դաժան պարտութիւնների հետեւանքով գերմանական գերութիւնում հայտնված հարիւր հազարավոր գերիների թվում կային նաեւ հազարավոր հայեր:

«Այս պատերազմի սկիզբը, - կարդում ենք վերոհիշյալ փաստաթղթում,- արտասահմանի հայութեան մեծ մտահոգութիւնն էր հայ ժողովրդի ֆիզիկական գոյութիւնը Հայաստանի, արտասահմանի մէջ, ու հայ պետութեան պահպանումը»[2]:

Իր ժողովրդի կյանքով ապրող յուրաքանչյուր ճշմարիտ հայրենասեր հայ, անհրաժեշտաբար պետք է լարեր իր ողջ ուժերն ու կարողությունները եւ միջոցներ փնտրեր ու օգնության ձեռք մեկներ մահվան ճիրաններում հայտնված հայրենակիցներին: Մի՞թե Դրոն նման ճակատագրական եւ բախտորոշ ժամանակաշրջանում կարող էր ծավալվող դեպքերի ոչ գործուն ականատեսը լինել եւ առանց որեւէ գործնական քայլեր ձեռնարկելու, հանգիստ դիտել, թե ինչպես էին գերմանական գերության մեջ, համակենտրոնացման ճամբարներում ոչնչանում իր արյունակիցները: Նրա գլխավոր մտահոգությունն էր. ինչպե՞ս վարվել եւ ինչպիսի՞ քայլեր կենսագործել, որ հայրենիքը՝ Հայաստանը եւ Եվրոպայի հայոց սփյուռքը, ինչպես նաեւ գերմանիայի գերության շղթաներում հայտնված հազարավոր հայորդիներ չհոշոտվեին պատերազմի հետեւանքով:

Դրոյի համագործակցությունը, գործնական առումով, գերմանացիների հետ սկսվել էր դեռեւս Ռումինիայում պատերազմի սկզբնական շրջանում:

«Данные 4 Управления НКГБ СССР к 17.12. 1942 г. Об антисоветской деятельности дашнакского лидера Дро Канаяна в 1942 г.» փաստաթղթի հավաստմամբ՝ «Մինչեւ ԽՍՀՄ-ի վրա Գերմանիայի հարձակվելը, Դրոն փորձել էր կապեր հաստատել ֆաշիստների հետ: Պատերազմի հենց սկզբում նա ժամանել է Գերմանիա, որտեղ գործուն աշխատանքներ է ձեռնարկել՝ հայ հետախույզներից կադրեր պատրաստելու ուղղությամբ»:

Ճիշտ է, նա որպես նավթարդյունաբերող որոշակի կապեր արդեն հաստատել էր Գերմանիայի գործարար շրջանների հետ, բայց դա դեռեւս բավարար չէր: Հանուն իր հայրենիքի եւ ազգակիցների փրկության ու գոյության պահպանման՝ Դրոն աշխատում է միջոցներ փնտրել, մերձենալ, կապեր հաստատել Գերմանիայի բարձրաստիճան պաշտոնյաների եւ շահել նրանց վստահությունն ու համակրանքը:

Երկրորդ աշխարհամարտի սկզբնական ժամանակահատվածում խորհրդային զորքերը ներխուժում են Ռումինիայի տարածք եւ գրավում Չերնովեցի ու Բուկովինիայի շրջանները: Գերմանիայի ռազմական ուժերը, ռումինացիների գործուն աջակցությամբ, խորհրդային զորքերին դուրս են մղում Ռումինիայի տարածքից եւ պատրվակ ծառայեցնելով, թե իբր խորհրդային զորքերի առաջխաղացմանը նպաստել ու աջակցել էին հրեաները, սանձազերծում են հրեաների զանգվածային ջարդեր:

Գերմանական կառավարության հրահանգով ռումինական իշխանությունները նույն պատճառաբանությամբ ու պատրվակով ցուցակագրում են Ռումինիայում բնակվող բոլոր օտարազգիներին, այդ թվում նաեւ հայերին: Եթե գերմանական իշխանությունները ցանկություն հայտնեին, կամ որոշակի իրական փաստերով հաստատեին նրանց ներկայացրած մեղադրանքները, ապա ցուցակագրվածներին անխուսափելիորեն սպառնալու էր հրեաներին բաժին ընկած ողբերգական ճակատագիրը: Այդ նույն օրերին Բուխարեստի մեջ ձերբակալվում եւ Ռումինիայի խորքերն ու ճամբարներն են աքսորվում 40 հայեր, իսկ Փլոյեշտի եւ մյուս քաղաքներում հաշվառման են վերցնում այնտեղ բնակվող բոլոր հայերին: Կասկած լինել չէր կարող, որ աքսորված եւ հաշվառման վերցված հարյուրավոր հայորդիները կարժանանային դաժան ճակատագրի, եթե նրանց ժամանակին չցուցաբերվեր անհրաժեշտ օգնություն: Իր հայրենակիցներին բաժին ընկած դժբախտ ճակատագիրը թեթեւացնելու, նրանց անխուսափելի կործանումից փրկելու նպատակով Դրոն գործի է դնում իր ողջ

[1] ՀՅԴ ԿԱ, Ֆ. Ս. Վ., թթ. 46, գ. 5բ (Դրոյի գործունեությունը համառոտակի ներկայացնող այս փաստաթուղթը կազմվել է նրա ձերբակալության կապակցությամբ՝ ամերիկացիներին ներկայացնելու նպատակով):
[2] Նույն տեղում:

կարողությունները, իշխանությունների ու գործարար շրջանների հետ ունեցած կապերը:

«Դրօն,- վկայում է Միսաք Թորլաքյանը,- անմիջապէս գործի անցաւ եւ իր բարեկամներու աջակցութեամբ յաջողեցաւ վերոյիշեալ 40 աքսորեալները բոլորն ալ ետ բերել տալ: Յաջողեցաւ նոյնպէս Բլօէշթի մէջ արձանագրուելու հարցը փակել տալ եւ այլեւս ոչ ոք քշեցին քաղաքէն դուրս: Բոլորն ալ արտօնուեցան մնալու, պայմանով, որ քաղքէն դուրս չգան. քաղքէն դուրս գալ պարտաւորուելու պարագային պէտք էր որ առանձին թոյլտուութիւն ստանային: Ասքէ օգտուելով, յաջողեցայ առանձին արտօնագիր մը ստանալ իբրեւ Դրոյի պաշտօնեան եւ ազատ երթեւեկել նաւթային շրջանին մէջ»[1]:

Քանի որ Դրոն Հ.Յ.Դաշնակցության անդամ էր եւ անվիճելիորեն մեծ հեղինակություն վայելող գործիչ, ուստի կարելի է կարծել, որ նա գուցեեւ գործել է հենց կուսակցության որոշմամբ ու հանձնարարությամբ: Նրա գործունեության այդ շրջանին վերաբերվող փաստաթղթերի, ՀՅԴ ղեկավար մարմինների կողմից ընդունված որոշումների ու բանաձեւերի ուսումնասիրությունը միանշանակ ցույց է տալիս, որ Հ. Յ. Դաշնակցության կողմից նման որոշում չի եղել եւ չէր կարող լինել:

1938 թ. հուլիսին Կահիրեում գումարված ՀՅԴ 13-րդ ընդհանուր ժողովում, որին ի դեպ Դրոն չի մասնակցել ընդունված որոշումներում եւ բանաձեւերում չկա որեւէ հստակ տեսակետ, դիրքորոշում Գերմանիայում տիրապետող գաղափարախոսության եւ նրա կողմից իրականացվող քաղաքականության վերաբերյալ: Նույնիսկ երկրորդ համաշխարհային պատերազմի ծավալման ժամանակահատվածում Հ.Յ.Դաշնակցությունը այդ հարցի վերաբերյալ դարձյալ չի ընդունել ժամանակաշրջանի ոգուն եւ պահանջների յուրահատկություններին համահունչ եւ դրանցից բխող հստակ որոշում, որով պիտի առաջնորդվեին ու գործեին ՀՅԴ ապակենտրոն կառույցները:

Հ.Յ.Դաշնակցության Բյուրոյի անդամներն այս հարցի կապակցությամբ տարբեր, իսկ երբեմն էլ իրարամերժ տեսակետներ են պաշտպանել: Օրինակ, իր անգլիամետ կողմնորոշմամբ հայտնի, Անգլիայի վարչապետ Ուինստոն Չերչիլի ջերմ երկրպագու Ռուբեն Տեր-Մինասյանը, ինչպես նաեւ Համո Օհանջանյանը

[1] Թորլաքեան Մ., Օրերուս հետ, Պէյրութ, 1963, էջ 515:

կտրականապես դեմ են եղել Խորհրդային Միության եւ Գերմանիայի հետ համագործակցելուն, գտնելով, որ այդ պետությունները վարում են հակաժողովրդական, բռնապետություններին յուրահատուկ բարոյազուրկ քաղաքականություն:

Դրոյի համոզմունքով, ազգի եւ հայրենիքի գոյության պահպանման եւ նրա ապագայի համար վճռորոշ նշանակություն ունեցող ժամանակաշրջանում իրենք կողմնորոշման եւ քաղաքականության հարցում չպետք է տուրք տային եւ առաջնորդվեին զուտ բարոյական ու ժողովրդավարական սկզբունքներով ու չափանիշներով, քանի որ քաղաքականությունը ինքնին բարոյազուրկ է, անկայուն եւ փոփոխվող: Նա գտնում էր, որ պետք է առաջնորդվել ազգային շահերի պաշտպանությամբ եւ անպայմանորեն հաշվի առնել ու համագործակցել իրական հզորությամբ օժտված վճռորոշ ուժերի հետ[1]:

Պատերազմի բռնկման հենց առաջին իսկ օրերին Դրոն իր շուրջն է համախմբում իր երբեմնի մարտական զինակիցներին ու համախոհներին եւ նրանց աջակցությամբ ծավալում բուռն գործունեություն:

«Հիտլերեան զօրաբանակները, - գրում է Թադէ Տեր-Պետրոսյանը, - շանթահարող հարուածներով յառաջանում էին Ռուսաստանի սահմաններից ներս: Ս. Արարատեանի (Հայաստանի Հանրապետության կառավարության նախկին խնամատարության նախարարը Հ. Օհանջանյանի վարչակազմում - Հ.Գ.) եւ Դրոյի հրաւէրով մի խումբ ընկերներ հաւաքուեցինք Պուքրէշ: Հաւաքոյթի նպատակն էր պարզել քաղաքական կացութիւնը եւ մտածել թէ՝ ի՞նչպէս եւ ի՞նչ միջոցներով կարելի է օգնութեան հասնիլ պատերազմի վայրերի մէջ գտնուած հայ զանգուածներին եւ միաժամանակ ի՞նչ կարող էինք անել երկրի համար, եթէ նացիստական արշաւը հասնէր եւ մեր հայրենիքին»[2]:

Այդ նույն հավաքույթում ընդհանուր գծերով հրավիրյալներին ներկայացնելով պատերազմի հետեւանքով եվրոպական երկրներում ստեղծված քաղաքական կացությունն ու հայության վիճակը՝ Դրոն ասել է. «...Անակնկալներով յղի այս օրերին, մենք չենք կարող մնալ լուռ հանդիսատես եւ թողնել, որ մեր եղբայր-

[1] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, Ֆ. Ս. Վ., թղ. 465, գ. 5 բ:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1956, թիւ 10, էջ 29:

ներն ու քոյրերը արեան ծովի մէջ խեղդուեն: Լուրջ մտածե՛նք, միջոց գտնենք՝ օգնութեան հասնելու համար նրանց, քանի որ, եղած ճչգրիտ լուրերի համաձայն, հրեաների պէս վտանգուած է ե՛ւ հայութիւնը...»[1]:

Դրոյի եւ նրա զինակիցների մտահոգութիւնն ու գործունեութեան բուն նպատակը միակն էր. ողջ ուժերը, կարողութիւններն ու հնարաւորութիւններն ի սպաս դնել, որպեսզի աշխարհասփյուռ հայութիւնը, ինչպես կատարվել էր 1-ին աշխարհամարտի ժամանակ, զոհ չդառնար այս պատերազմին:

Դրոն ու իր զինակիցները ծրագրում են համապատասխան գործունեութիւն ծավալել գլխաւորապես հետեւյալ ուղղվածութիւամբ.

1. Ձերծ պահել հնարաւոր կոտորածներից ու աքսորներից եվրոպական պետութիւններում բնակվող հայութիւնը:

2. Գերմանացիների նախաձեռնութիւամբ տարբեր վայրերում կառուցված համակենտրոնացման ճամբարներից եւ հանքավայրերում գործող աշխատանքային բրիգադներից ազատել հայ ռազմագերիներին:

3. Քանի որ Խորհրդային Միութեան տարածքում գերմանական զորքերի սրընթաց առաջխաղացման հետեւանքով տասնյակ հազարաւոր հայեր հայտնվել էին նացիստների գերիշխանութեան ներքո, ապա պետք է հնարաւոր բոլոր միջոցների օգտագործմամբ կանխվեր գրավյալ շրջանների հայ բնակչութեանը սպառնացող մահացու վտանգը: Այդ նպատակով, նաեւ Դրոյի նախաձեռնութիւամբ, ԽՍՀՄ-ից արդեն գրավված բնակավայրերում աշխատելու են գործուղվում այդ գործին զինվորագրված բազում նվիրյալներ:

«Ցուրեանի (Հարութիւն Հարութիւնյան - Հ.Գ.) հետ, - գրում է Միսաք Թորլաքյանը,- նաեւ երկու հոգի, ղրկուեցանք Վարշաւա, անկէ անցնելու Ռուսաստան եւ օգտակար ըլլալու թէ՛ հայ ռազմագերիներու եւ թէ՛ փախստականներու փրկութեան ու պաշտպանութեան գործին: Նոյն նպատակով Պուքրէշէն ուղղակի Օտեսա անցած էին, գերմանացիներու թոյլտուութեամբ, Սիմոն Փիլիպոսեանը եւ Թաթէ Պետրոսեանը»[2]:

[1] Նույն տեղում:
[2] Թորլաքեան Մ., նշվ. աշխ., էջ 515:

4. Ամենակարեւորը՝ Մայր Հայրենիքի՝ Հայաստանի ճակատագիրը: Մի՞թե հնարաւոր էր կանխատեսել, որ մինչ այդ միմիայն արագ ու շռնդալի հաղթանակներ նվաճած, Եվրոպայի մեծ մասը նվաճած հզոր Գերմանիան ի զորու էր պարտվել: Իսկ եթե հանկարծ Գերմանիան տոներ իր հերթական հաղթանակը, ապա այդ դեպքում ի՞նչ էր սպասվում Հայաստանին, չէ՞որ հայութեան դարաւոր եւ ոխերիմ թշնամին՝ Թուրքիան, Գերմանիայի դաշնակիցն էր եւ կազմուպատրաստ, մշտարթուն վիճակում հարմար պահի էր սպասում հարձակվելու Խորհրդային Միութեան վրա: Նկատի ունենալով այդ իրական եւ կարեւորագույն հանգամանքը՝ Դրոյի «դատավարութեանը» ներկայացված վերոհիշյալ փաստաթղթում նշվում է.

«Մեծագոյն վտանգ էր Թուրքիան...

Անկասկած էր, որ Թուրքերը պիտի արշաւէին Հայաստան եւ Կովկաս...Ռուս-Թուրքական յարաբերութիւնները շատ պրկուած էին: Եթէ պրկուածքը վերջնաբար պատերազմով, Թուրքերու մուտքը Կովկաս պիտի նշանակէր հայ ժողովրդի բնաջնջում...

...անվիճելի էր, որ Գերմանիա-Թուրքիա միասին շուտով գործ պիտի ձեռնարկէին Կովկասի եւ Հայաստանի դէմ: Այս պարագային հայ ժողովուրդը դարձեալ, ինչպէս 1915-18-ին, Թուրքիայի զոհը պիտի ըլլար: Միայն գերման բանակը կրնար պաշտպանութիւն տալ հայ ժողովրդին ու երկրին»[1]:

Թուրքերի Անդրկովկաս եւ Հայաստան ներխուժելու վտանգը, որը բնավ էլ բացառված չէր, անկասկած կարող էր հարցականի տակ դնել Հայաստանի եւ հայութեան գոյութիւնը: Դրոն գերմանացիներին մերձենալիս առաջնորդվել է նաեւառաջ հենց այս հանգամանքով:

Այդ նույն փաստաթղթում նշվում է, որ Վերմախտի բարձրաստիճան պաշտոնյաների հետ կայացած հանդիպման ժամանակ Դրոն ու հայկական պատվիրակութիւնը նրանց են ուղղել հետեւյալ հարցը. «Ի՞նչ է լինելու Գերմանիայի հաղթանակից հետո ու ինչպիսի՞ կարգավիճակ է ունենալու Հայաստանը, եթե Թուրքական զորքերը ներխուժեն Հայաստան»[2]:

[1] ՀՅԴ ԿԱ, Ֆ. Ս. Վ., թ. 46, գ. 5բ, էջ 6:
[2] Ն ույն տեղում:

Դրոյին ու հայկական պատվիրակությանը առավելապես մտահոգում էին Հայաստանի ու հայության անվտանգության ապահովմանը նպատակաուղղված Գերմանիայի կողմից ձեռնարկվելիք միջոցառումներն ու երաշխիքը: Պատասխանը միակն էր. «...երաշխիքը կազմավորվող հայկական լեգեոնն է, որը Գերմանիայի աջակցությամբ պիտի պաշտպանի Հայաստանը»[1]:

1942 թ. աշնանը Բեռլինում ռազմագերիների հետ կայացած հանդիպման ժամանակ, նկատի ունենալով այդ իրողությունը, նա ասել է. «Դաժան ճակատագիրը մեր քույրերին եւ եղբայրներին սփռել է աշխարհով մեկ: Արեւը մայր չի մտնում հայ մարդու վրա, որովհետեւ հայերը ամեն տեղ են, բոլոր աշխարհամասերում: Մենք ունենք մեկ կրոն, մեկ լեզու ու մեկ հայրենիք: Մենք պետք է օգնենք իրար, սիրենք մեր հայրենիքը: Այժմյան Հայաստանը, որ մոտավորապես 28 հազար քառակուսի կիլոմետր է, մեր լայնածավալ հայրենիքի մի սրբազան ու թանկագին կտորն է:

Չպետք է մոռանալ, որ մեր դարավոր թշնամին Թուրքիան է, որը սահմանի վրա կենտրոնացրել է երկու միլիոն զորք եւ ամեն ժամ պատրաստ է ներխուժել Կովկաս: Իհարկե, առաջին հերթին՝ Հայաստան: Թուրքերը ուշի ուշով հետեւում են կենտրոնական Ռուսաստանի արյունահեղ կռիվներին: Եթե ռուսները կորցնեն Ստալինգրադը, Թուրքիան կներխուժի Կովկաս»[2]:

Հանդիպման ընթացքում Դրոյի արտասանած այդ խոսքերը վկայում է նույն հանդիպման մասնակից, Ապարանի շրջանի Բուժական գյուղի բնակիչ Վահան Սարգսյանը «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2000 թ. մարտի 21-ի համարում, «Հանդիպում Դրոյի հետ» հուշագրությունում*:

Եթե նկատի ունենանք Դրոյի հասուն տարիքը, նյութական ապահովվածությունը եւ բազմաթիվ երկրներում ունեցած գործնական կապերն ու ծանոթությունները, ապա դժվար չէ պնդել, որ նա, ցանկության դեպքում օգտագործելով իր լայն հնարավորություններն ու ֆինանսական կարողությունը, կարող էր հեռու մնալ այդ ամենից ու ընտանիքով մեկնել՝ բնակվելու առավել ապահով որեւէ վայր, հանգիստ եւ խաղաղ անցկացնել իր կյանքի մնացած տարիները: Բայց մի՞թե դա էր նրա կյանքի իմաստն ու նպատակը:

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] ՀՅԴ ԿԱ, Ֆ. Ս. Վ., թղ. 46, գ. 5բ, էջ 6:

Որպես կանոն, Դրոն իր գործունեության նպատակի ու ձգտումների մասին անթաքույց արտահայտել է անգամ համակենտրոնացման ճամբարներում հայ ռազմագերիների հետ կայացած հանդիպումների ժամանակ:Վերոհիշյալ Վահան Սարգսյանի հավաստմամբ՝ այդ նույն հանդիպման ընթացքում Դրոն, ներկայացնելով գերմանացիների հետ համագործակցելու հիմնական շարժառիթներն ու նկրտումները, ընդգծել է. «... Ես արդեն 60 տարեկան եմ: Հայաստանի անկախության ու ազատության համար կռվել եմ թուրքերի ու բոլշեւիկների դեմ: Միշտ ձգտել եմ օգնել իմ բազմաչարչար ժողովրդին: Նրան տեսնել ազատ, անկախ ու երջանիկ: Ահա ինչու այս տարիքում, անտեսելով բոլոր դժվարությունները՝ շարունակում եմ պայքարը իմ ժողովրդի ազատության եւ անկախության համար»[1]:

Նրա գործունեության ուղղվածությունն արդեն վճռված էր, իսկ ի՞նչ դիրքորոշում պետք է որդեգրեր հայությունը սփյուռքում եւ հայրենիքում խորհրդա-գերմանական պատերազմի ընթացքում:

Սփյուռքահայ քաղաքական շրջանակներում այս հարցի վերաբերյալ հստակ, միանշանակ տեսակետ չի եղել: Քաղաքական, կուսակցական գործիչներից ոմանք, որոնք անվերապահորեն հավատացել են Գերմանիայի հաղթանակին եւ ընդգծված հակախորհրդային տրամադրվածություն ունեին, գտնում էին, որ եթե գերմանական զորքերը ներխուժեն Խորհրդային Միության տարածքը, ապա հայ ժողովուրդը Հայաստանում պետք է ապստամբություն բարձրացնի ընդդեմ խորհրդային կառավարության եւ օգտվելով գերմանական զորքերի ներկայությունից՝ տապալի խորհրդային իշխանությունն ու երկիրը հռչակի անկախ հանրապետություն:

Դրոն ունեցել է ճիշտ հակառակ դիրքորոշում եւ դեմ էր ԽՍՀՄ տարածքում գերմանական զորքերի ներխուժման պարագայում Հայաստանում հայության ապստամբությանը: Նա մեծ հավատ է ընծայել ռուս ժողովրդի ու ռուսական զենքի հզորության նկատմամբ եւ չի հավատացել Խորհրդային Միության պարտությանը: Նույնիսկ այն ժամանակ, երբ գերմանական

2.*Տողերիս հեղինակի հավաքածուում պահպանվում է նաեւ այդ հանդիպման մանրամասները պատմող Վահան Սարգսյանի ձայնագրությունը:

զորքերը գտնվում էին Մոսկվայի մատույցներում, իսկ հետո հասել Ստալինգրադ, Դրոն համոզված է եղել, որ ռուսները հաղթելու են: Այդ իսկ պատճառով նա կտրականապես դեմ էր ապստամբության եւ գտնում էր, որ նման ելույթը խորհրդային իշխանությունների համար հայերին աքսորելու կամ ոչնչացնելու առիթ կարող էր ծառայել: Մի փոքր առաջ անցնելով նշենք, որ Հայաստանում խորհրդային իշխանության դեմ ձեռնարկվող որեւէ բնույթի ընդվզում, ելույթ կանխելու նպատակով ձեռնարկում է որոշակի անհրաժեշտ քայլեր[1]:

Միաժամանակ, քաջատեղյակ լինելով Խորհրդային Միությունում տիրապետող իրավիճակին, նա խորապես համոզված էր, որ Հայաստանը չէր կարող ազատագրվել Ստալինյան դաժան բռնապետությունից ու վերստին հռչակել իր անկախությունը: Նա պիտի ընտրություն կատարեր՝ կա՛մ Հիտլերյան Գերմանիան կա՛մ Խորհրդային Միությունը, այսինքն՝ ընտրել երկու չարյաց փոքրագույնը:

Բուհերի համար նախատեսված «Հայոց Պատմություն» դասագրքում հեղինակներն արժանվույնս գնահատելով սփյուռքահայերի ավանդը պատերազմում ֆաշիզմի տարած հաղթանակներում, միաժամանակ նշում են. «Սփյուռքահայության միայն չնչին մասը չմիացավ հայ ազգային ճակատի ուժերին: Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության ղեկավարներից ոմանք Բեռլինում ստեղծեցին «Հայ ազգային խորհուրդ»՝ Արտաշես Աբեղյանի նախագահությամբ: Խորհրդի անդամներից էին՝ Աբրահամ Գյուլխանդանյանը (փոխնախագահ), Հարություն Բաղդասարյանը (քարտուղար), Գարեգին Նժդեհը, Դրաստամատ Կանայանը (Դրո), Վահան Փափազյանը (Կոմս) և ուրիշներ: Խորհուրդը գործում էր Ֆաշիստական Գերմանիայի կողմից զավթված ԽՍՀՄ արևելյան շրջանների նախարարության հովանու ներքո, որի հիմնական նպատակը Կովկասում գերմանական իշխանության հաստատումն էր և այն իրականացնելու համար գերմանական բանակի կազմում հայկական լեգեոնի ստեղծումը»[2]:

Պիտի ասել, որ «Հայոց Պատմություն» դասագրքի հեղինակների կողմից Բեռլինի Հայոց ազգային խորհրդի հիմնական

[1] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, Ֆ. Ս. Վ., թղ. 46, գ. 5բ, էջ 6: Նաեւ «Հայրենիք» ամսագիր, 1956, թիւ 10, էջ 30:
[2] Հայոց Պատմություն, Երեւան , 2012, էջ 667-668:

նպատակին վերագրված տեսակետը փոքր-ինչ թերի է ու միակողմանի: Հայոց Ազգային Խորհրդի հիմնական նպատակը բոլշեւիկների տիրապետությունից Հայաստանի ազատագրումն էր, իսկ լեգեոնի կազմավորումը սոսկ միջոց՝ միտված Հայոց անկախ պետականության վերականգնմանն ու Գերմանիայի բռնազավթած երկրներում բնակվող եւ համակենտրոնացման ճամարներում գերության մեջ տառապող հարյուր հազարավոր հայերի փրկությանը:

Այս առումով ուշագրավ տեսակետ է ներկայացնում Վարուժան Ոսկանյանը: Նրա համոզմամբ՝ «Ի վերջո, հայտնի դարձավ, որ չարյաց փոքրագույն գոյություն չունի և երկու չարիքների միջև ընտրությունն իրականում ոչ մի հնար չի թողնում: Այդպես եղավ նաև Դրոյի պարագայում այն տասնամյակի վերջում՝ պատերազմն սկսվելու պահին: Նա ընտրեց Բոլշևիկյան Ռուսաստանի դեմ նացիստական Գերմանիայի հետ գործակցելը՝ այդպիսով համարելով, որ երկու նպատակ միանգամից պիտի կատարի. գերմանացիների գրաված Եվրոպայի հայերին պաշտպանելն ու բոլշևիկների գրաված Հայաստանն ազատագրելը...»[1]:

Որպեսզի կարողանային իրագործել իրենց որդեգրած ծրագիրը, Դրոն եւ իր զինակիցները, ինչպես արդեն նշվել է, բնականաբար պիտի համագործակցության ու շփման եզրեր գտնեին ու կապեր հաստատեին Գերմանիայի բարձրաստիճան պաշտոնյաների հետ եւ աշխատեին շահել նրանց համակրանքն ու վստահությունը:

Առավել արդյունավետությամբ աշխատելու եւ իրենց գործունեության ոլորտը առավելագույնս խորացնելու ու ընդարձակելու նպատակով Դրոն մեկնում է Բեռլին ու այնտեղ գործնական կապեր հաստատում գերմանա-հայկական միության անդամների եւ հատկապես Արտաշես Աբեղյանի հետ, որն այդ օրերին իր գաղափարակից բարեկամների համագործակցությամբ դարձյալ անխոնջ գործունեություն էր ծավալում Գերմանիայի կառավարող շրջաններին կրկին անգամ փաստելու եւ ապացուցելու հայերի ոչ սեմական, այլ արիական ցեղին պատկանելու իսկությունը:

Դրոյի խմբի կազմում ընդգրկվել են ՀՀ կառավարության նախկին անդամներ Սարգիս Արարատյանը (ֆինանսների ու

[1] Վարուժան Ոսկանյան, նշվ. աշխ., էջ 186-187:

զորքերը գտնվում էին Մոսկվայի մատույցներում, իսկ հետո հասել Ստալինգրադ, Դրոն համոզված է եղել, որ ռուսները հաղթելու են: Այդ իսկ պատճառով նա կտրականապես դեմ էր ապատամբության եւ գտնում էր, որ նման ելույթը խորհրդային իշխանությունների համար հայերին աքսորելու կամ ոչնչացնելու առիթ կարող էր ծառայել: Մի փոքր առաջ անցնելով նշենք, որ Հայաստանում խորհրդային իշխանության դեմ ձեռնարկվող որեւէ բնույթի ընդվզում, ելույթ կանխելու նպատակով ձեռնարկում է որոշակի անհրաժեշտ քայլեր[1]:

Միաժամանակ, քաջատեղյակ լինելով Խորհրդային Միությունում տիրապետող իրավիճակին, նա խորապես համոզված էր, որ Հայաստանը չէր կարող ազատագրվել Ստալինյան դաժան բռնապետությունից ու վերստին հռչակել իր անկախությունը: Նա պիտի ընտրություն կատարեր՝ կա՛մ Հիտլերյան Գերմանիան կա՛մ Խորհրդային Միությունը, այսինքն՝ ընտրել երկու չարյաց փոքրագույնը:

Բուհերի համար նախատեսված «Հայոց Պատմություն» դասագրքում հեղինակներն արժանվույնս գնահատելով սփյուռքահայերի ավանդը պատերազմում ֆաշիզմի տարած հաղթանակներում, միաժամանակ նշում են. «Սփյուռքահայության միայն չնչին մասը չմիացավ հայ ազգային ճակատի ուժերին: Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության ղեկավարներից ոմանք Բեռլինում ստեղծեցին «Հայ ազգային խորհուրդ»՝ Արտաշես Աբեղյանի նախագահությամբ: Խորհրդի անդամներից էին՝ Աբրահամ Գյուլխանդանյանը (փոխնախագահ), Հարություն Բաղդասարյանը (քարտուղար), Գարեգին Նժդեհը, Դրաստամատ Կանայանը (Դրո), Վահան Փափազյանը (Կոմս) և ուրիշներ: Խորհուրդը գործում էր Ֆաշիստական Գերմանիայի կողմից զավթված ԽՍՀՄ արևելյան շրջանների նախարարության հովանու ներքո, որի հիմնական նպատակը Կովկասում գերմանական իշխանության հաստատումն էր և այն իրականացնելու համար գերմանական բանակի կազմում հայկական լեգեոնի ստեղծումը»[2]:

Պիտի ասել, որ «Հայոց Պատմություն» դասագրքի հեղինակների կողմից Բեռլինի Հայոց ազգային խորհրդի հիմնական

[1] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, Ֆ. Ս. Վ., թղ. 46, գ. 5բ, էջ 6: Նաեւ «Հայրենիք» ամսագիր, 1956, թիւ 10, էջ 30:
[2] Հայոց Պատմություն, Երեւան , 2012, էջ 667-668:

նպատակին վերագրված տեսակետը փոքր-ինչ թերի է ու միակողմանի: Հայոց Ազգային Խորհրդի հիմնական նպատակը բոլշեւիկների տիրապետությունից Հայաստանի ազատագրումն էր, իսկ լեգեոնի կազմավորումը սոսկ միջոց՝ միտված Հայոց անկախ պետականության վերականգնմանն ու Գերմանիայի բռնազավթած երկրներում բնակվող եւ համակենտրոնացման ճամարներում գերության մեջ տառապող հարյուր հազարավոր հայերի փրկությանը:

Այս առումով ուշագրավ տեսակետ է ներկայացնում Վարուժան Ոսկանյանը: Նրա համոզմամբ՝ «Ի վերջո, հայտնի դարձավ, որ չարյաց փոքրագույն գոյություն չունի և երկու չարիքների միջև ընտրությունն իրականում ոչ մի հնար չի թողնում: Այդպես եղավ նաև Դրոյի պարագայում այն տասնամյակի վերջում՝ պատերազմն սկսվելու պահին: Նա ընտրեց Բոլշևիկյան Ռուսաստանի դեմ նացիստական Գերմանիայի հետ գործակցելը՝ այդպիսով համարելով, որ երկու նպատակ միանգամից պիտի կատարի. գերմանացիների գրաված Եվրոպայի հայերին պաշտպանելն ու բոլշևիկների գրաված Հայաստանն ազատագրելը...»[1]:

Որպեսզի կարողանային իրագործել իրենց որդեգրած ծրագիրը, Դրոն եւ իր զինակիցները, ինչպես արդեն նշվել է, բնականաբար պիտի համագործակցության ու շփման եզրեր գտնեին ու կապեր հաստատեին Գերմանիայի բարձրաստիճան պաշտոնյաների հետ եւ աշխատեին շահել նրանց համակրանքն ու վստահությունը:

Առավել արդյունավետությամբ աշխատելու եւ իրենց գործունեության ոլորտը առավելագույնս խորացնելու ու ընդարձակելու նպատակով Դրոն մեկնում է Բեռլին ու այնտեղ գործնական կապեր հաստատում գերմանա-հայկական միության անդամների եւ հատկապես Արտաշես Աբեղյանի հետ, որն այդ օրերին իր գաղափարակից բարեկամների համագործակցությամբ դարձյալ անխոնջ գործունեություն էր ծավալում Գերմանիայի կառավարող շրջաններին կրկին անգամ փաստելու եւ ապացուցելու հայերի ոչ սեմական, այլ արիական ցեղին պատկանելու իսկությունը:

Դրոյի խմբի կազմում ընդգրկվել են ՀՀ կառավարության նախկին անդամներ Սարգիս Արարատյանը (Ֆինանսների ու

[1] Վարուժան Ոսկանյան, նշվ. աշխ., էջ 186-187:

առեւտրի նախարար), Գեւորգ Ղազարյանը (կրթության նախարար), Հովհաննես Դեւեճյանը (նախարարների խորհրդի 1-ին քարտուղար), Աբրահամ Գյուլխանդանյանը (հաղորդակցությունների և արդարադատության նախարար) եւ այլք:

Վարուժան Ոսկանյանի բնութագրմամբ՝ «Փաստորեն, վարչապետից մինչեւ քարտուղար. այդ ժամանակ կարելի էր կազմել Հայաստանի իսկական տարագիր մի կառավարություն»[1]:

Դրոյին Բեռլինում ընդունել են պատշաճ մակարդակով:

Բեռլինում նա աշխատանքի է անցնում գերմանական բանակի մատակարարման՝ ինտենդանտական ծառայությունում եւ շնորհիվ իր ձեռներեցության ու տարիների ընթացքում Փլոյեշտիի նավթահանքերի շահագործումից ձեռք բերած հարստության եւ նախկինում ունեցած ծանոթությունների լայն շրջանակների, կարողանում է ամուր կապեր հաստատել Գերմանիայի կառավարող շրջանների մի շարք հեղինակավոր պաշտոնյաների հետ ու կարճ ժամանակահատվածում նվաճել նրանց վստահությունն ու համակրանքը:

Այս առումով վերոհիշյալ «Данные 4 Управления НКГБ СССР к 17.12. 1942 г. Об антисоветской деятельности дашнакского лидера Дро Канаяна в 1942 г.» փաստաթղթում նշվում է. «Ուշագրավ է, որ Դրոն այն եզակի էմիգրանտներից է, որին հաջողվել է գերմանացիների մոտ նվաճել մեծ հեղինակություն: Պաշտոնական փաստաթղթերում նրան կոչում են «գեներալ Դրո» եւ հատկացվել է նրա անվտանգությունն ապահովող թիկնազորն ու եւ այլն...»[2]:

Այդ նույն փաստաթղթի հավաստմամբ՝ «Ըստ պաշտոնական տվյալների գերմանական հակահետախուզական ծառայության գնդապետ Վիզերին 17. 4. 42 թ. տրվել է հետեւյալ հեռագիրը. «Գեներալ Դրոն ժամանելու է երկու անձանց ուղեկցությամբ: Պատրաստեցեք 3 սենյականոց առանձին բնակարան»»[3]:

Համանման փաստաթղթերում տեղ գտած վկայությունները ցույց են տալիս, որ նա իրոք կարողացել է ծանոթություններ հաստատել ու հանդիպել Գերմանիայի մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների հետ: Բեռլինում նա հանդիպել է նույնիսկ Էսէս ռեյսխֆյուրեր Հիմլերի (նա միաժամանակ ղեկավարել է Գերմանիայի ներքին գործերի նախարարությունը, գաղտնի ոստիկանությունը, Էսէս-ը, գեստապոն ու այլ ծառայություններ) ու Ռոզենբերգի (1933թ. Ռոզենբերգը զբաղեցրել է Գերմանիայի ազգային-սոցիալիստական բանվորական կուսակցության արտաքին գործերի կառավարման ղեկավարի պաշտոնը: 1941 թ. նշանակվել է արեւելյան բռնազավթած տարածքների ռեյսխ նախարար) հետ:

Դրոն առավել սերտ կապեր է ունեցել Մարտին Բորմանի եւ Ալֆրեդ Ռոզենբերգի հետ:

«Մ. Բորմանի քարտուղարների ու ազգականների խոսակցություններում հաճախակի է հիշատակվել հայ Դրոն, որի հրամանատարությամբ հայկական զորքերը 1918 թ. մայիսին Ապարանի ճակատամարտում հերոսաբար դիմագրավել ու հաղթել էին թուրքական մեծաքանակ ուժերին: Այդ պատճառով նրան բարեկամաբար անվանել են «Ապարանի հերոս»[1]:

«Հեռանալով Ռումինիայից,-նշում է Տիգրան Դեւոյանը,-Դրոն ընկնում է գերմանական շրջանը, ուր հայերին շատ տեղերում հրեաների տեղ էին ընդունում եւ կարող էին ուղղակի բնաջնջել: Արտաշէս Աբեղեանի հետ նա յաջողում է համոզել գերմանացիներին, որ հայերը ոչ թէ սեմական, այլ արիական ցեղին են պատկանում, եւ այդպիսով կարողանում են փրկել հազարաւոր հայ երիտասարդների կեանքը»[2]:

Ս. Վրացյանի գնահատմամբ՝ «Պատմութեան ընթացքը անառարկելի վճռականութեամբ հստատեց, որ Դրոյի եւ ընկերների նախասիրութիւնները ճիշդ էին եւ հաշիւները իրական: Գերման քաղաքականութիւնը հայերի վերաբերմամբ հիմնովին բարեփոխվեց. հայերի դէմ սկսուած ճնշումներն ու հալածանքները վերջ գտան. կարմիր բանակի տասնեակ հազարավոր հայ գերիների կեանքը փրկուեց...»[3]:

Գերմանիայի իշխանությունները ԽՍՀՄ-ի կազմում գտնվող ազգային փոքրամասնությունների, այդ թվում նաեւ հայության, նկատմամբ ունեին առանձնահատուկ դիրքորոշում ու նրանց հետ հարաբերություններ հաստատելու համար առաջնորդվել են հետեւյալ նկատառումներով:

---

[1] Նույն տեղում, էջ 186:
[2] Նշված փաստաթուղթը:
[3] Տե՛ս Նույն տեղում:

[1] Абрамян Э., նշվ. աշխ., էջ 34:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1957, թիւ 9, էջ 17:
[3] Վրացեան Ս., Մորկածին Դրոն, էջ 168:

Նպատակադրվելով զավթել Խորհրդային Միությունը՝ Գերմանիայի իշխանությունները ծրագրել էին բազմազգ խորհրդային պետությունը մասնատելու ու ոչնչացնելու համար որպես օժանդակ ուժ օգտագործել նաեւ Գերմանիայում ու նրա դաշնակից երկրներում բնակվող ազգային փոքրամասնությունների (ԽՍՀՄ-ի կազմում գտնվող) տարագրություն մեջ գտնվող ազգային կառավարությունների ու կուսակցությունների նախաձեռնությամբ ձեւավորվող զինված ուժերը:

Ազգային փոքրամասնություններին իր կողմը գրավելու եւ ԽՍՀՄ-ի դեմ պայքարելու նպատակով, Գերմանիայի իշխանությունների որոշմամբ կազմավորվել են Ազգային Կոմիտեներ, որոնց կազմում ընդգրկվել են էմիգրացիայում գտնվող նախկինում գոյություն ունեցող պետական կառույցների ղեկավարներն ու ռազմական բարձրաստիճան զինվորականները:

Ի՞նչ նպատակ էր հետապնդում Հայոց Ազգային կոմիտեն եւ ինչու՞ էր այն կազմավորվել:

ՀՀ ՊԱԿ-ի արխիվում պահպանվող թիւ 6 փաստաթղթի (Ռոզենբերգի գլխավորած Արեւելյան գրաված տարածքների նախարարության հայտարարությունն է-Հ.Գ.) հավաստմամբ՝

«1 «Հայոց Ազգային կոմիտեն հիմնվել է Բեռլինում 1941 թ. դեկտեմբերի 15-ին Արեւելյան գրաված տարածքների նախարարության հովանավորությամբ: Կոմիտեն իր վրա է վերցնում Գերմանիայի ու հայության միջեւ միջնորդ լինելու գործառույթը...

2. Հայոց Ազգային կոմիտեի նպատակն էր մի կողմից Հայաստանի ու հայ ժողովրդի ազատագրումը Խորհրդային Ռուսական տիրապետությունից, մյուս կողմից՝ Հայաստանի քաղաքական անկախությունը:

3. Այդ նպատակների ու խնդրի իրականացման համար, Հայոց Ազգային Կոմիտեն հենվում է Գերմանիայի քաղաքական պաշտպանության վրա, որպես կայուն երաշխիք...

4. Իր որդեգրած խնդիրները հաջողությամբ լուծելու համար Հայոց Ազգային Կոմիտեն անհրաժեշտ է գտնում միավորել հայ ազգային բոլոր առողջ ուժերը...

7. Հայոց Ազգային Կոմիտեն գտնում է, որ իր այն ցեղակիցները, ովքեր տարբեր ժամանակահատվածներում քաղաքական ու պատմական հանգամանքների հետեւանքով բռնությամբ հարկադրված հեռացել էին եւ այժմ բնակվում են տարբեր երկրներում, աստիճանաբար պիտի վերադառնան Հայրենիք...

7. Հայոց Ազգային Կոմիտեն համոզված է, որ իր ազգի ձգտումները կպսակվեն հաջողությամբ, իսկ Հայաստանը հզոր Գերմանիայի աջակցությամբ կլինի ինքնուրույն: Հայ ժողովուրդը այդ ճանապարհով կարող է զարգացնել իր մշակույթն ու ազգային կյանքը բոլոր ուղղություններով...»[1]:

Բացի Հայոց Ազգային կոմիտեից, ըստ ԽՍՀՄ ՊԱԺԿ (Պետական Անվտանգության Ժողովրդական Կոմիսարիատ) 4-րդ վարչության վերոհիշյալ փաստաթղթի՝ Ռոզենբերգի գլխավորած Արեւելյան նախարարության կազմում գործել է Կովկասյան բաժանմունք հայկական ներկայացուցչությամբ, որը ղեկավարել է դոկտոր Բաղդասարյանը (Հարություն Բաղդասարյանը միաժամանակ Հայոց ազգային խորհրդի քարտուղարն էր-Հ. Գ.): Բաժանմունքի նպատակն էր կովկասյան ազգերին պատկանող ռազմագերիների մեջ քարոզչական աշխատանքների կազմակերպումը:

Ըստ այդ փաստաթղթի՝ «Ազգային-բուրժուական կուսակցության՝ «Դաշնակցության» ղեկավարության մեծ մասը գործուն կերպով համագործակցել է գերմանական հետախուզական ծառայությունների հետ:Թեպետ այդ փաստաթղթում նշվում է, որ Դաշնակցություն» կուսակցության ղեկավարության մեծ մասը գործուն կերպով համագործակցել է գերմանական հետախուզական ծառայությունների հետ, սակայն հարկ է նշել, որ չկա որեւէ փաստաթուղթ, անգամ հիշատակումներ ու ակնարկներ, որոնք վկայեն Հ.Յ.Դաշնակցության վերին մարմնի՝ ՀՅԴ Բյուրոյի կողմից Գերմանիայի քաղաքական ղեկավարության հետ մերձենալու ու դաշնակցելու իրողությունը, հետեւաբար, նաեւ հայկական զորամասեր (լեգեոն) կազմելու որոշումն ու պահանջները:

Պատերազմի սկզբնական շրջանում, երբ հայտնի են դառնում գերմանական իշխանությունների հետ Դրոյի ունեցած անձնական կապերն ու շփումները, անգլիամետ Համո Օհանջանյանն ու Ռուբեն Տեր-Մինասյանը նույնիսկ առաջարկել են նրան հեռացնել ՀՅԴ շարքերից եւ միայն Վահան Նավասարդյանի, որն, ի դեպ, ռուսների հետ համագործակցելու կողմնակիցն էր, Դրոյի

[1] Абрамян Э, նշվ. աշխ., էջ 188:

մտերիմ ընկերն ու ջերմ երկրպագուն, ակտիվ միջամտությունը կանխում է իրագործելու նրանց մտադրությունը:

Փաստորեն, պատերազմող տերությունների նկատմամբ կողմնորոշման վերաբերյալ միանշանակ որոշման բացակայության պայմաններում Հ.Յ. Դաշնակցության ապակենտրոն կառույցներն ու անդամները հարկադրված գործել են յուրաքանչյուրն ըստ իր համոզմունքի ու կողմնորոշման:

Գերմանիայի քաղաքական ղեկավարության հետ բանակցելու նպատակով Բեռլին է ժամանել ոչ միայն Դրոն, այլեւ Ալ. Խատիսյանի գլխավորած խումբը, որի կազմում էին Սարգիս Արարատյանը եւ Վահան Փափազյանը (Կոմս):

Նրանք առաջին անգամ Գերմանիայի բարձրաստիճան պաշտոնյայի՝ անվտանգության նախարար Ռ. Հայդրիխի հետ բանակցել են 1941 թ. սեպտեմբերին, իսկ մեկ շաբաթ անց վրացական պատվիրակության ընկերակցությամբ հանդիպել են ռեյսխնախարար Ա. Ռոզենբերգին, որը պրոպագանդայի նախարար Գեբելսի համաձայնությամբ նրանց հրավիրել է քննարկելու «Ազատ Կովկաս» ծրագիրը: Համաձայն այդ ծրագրի, Կովկասի գրավյալ տարածքում պիտի կազմավորվեին ազգային հանրապետություններ: Այդ նպատակով հիմնվել Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի «Ազատագրման կոմիտեներ», որոնք 1942 թ. ապրիլին ստացել են Գերմանիային «հավասարազոր անդամ» կարգավիճակը:

Մեկ ամիս անց վրաց ու ազերի պատվիրակությունների ընկերակցությամբ Հայկական պատվիրակությունը, որի կազմում էին Ալ. Խատիսյանը, Ալֆրեդ Մուրադյանը (Հայկական լեգեոնի հոգաբարձու, իսկ 1943 թ. Հայկական միացյալ շտաբի պրոպագանդայի բաժնի վարիչ), Սուրեն Բեկզադյանը, Վարդան Սարգսյանը (1944 թ. փետրվարի 22-ից ղեկավարել է Հայկական միացյալ շտաբը, իսկ 1944 թ. դեկտեմբերի 12-ին նշանակվել է Կովկասյան միավորման «Հայաստան» մարտական խմբի (գունդ) պետ եւ Դրոն[1]:

Հանդիպման ժամանակ պատվիրակությունները Գերմանիային խոստացել են գերմանացիների կողմից Կովկասը ազատագրելուն պես Հայաստանը, Վրաստանը եւ Ադրբեջանն անմիջապես

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 34-35:

կհռչակեն իրենց անկախությունը ու կլինեն Սլովակիայի կամ Խորվաթիայի տիպի երկրներ:

Միանգամայն օրինաչափ է եւ տրամաբանական, որ եթե գերմանացիներն ընդառաջեին ու ընդունեին հայկական կողմի առաջարկած համագործակցելու պատրաստակամությունը, ապա պիտի ներկայացնեին նաեւ իրենց պայմանները:

Խորհրդահայ պատմագիտության մեջ շատ է ծեծվում այն տեսակետը, ըստ որի Դրոն եւ Հ.Յ.Դաշնակցության մի շարք անդամներ գերմանական իշխանությունների հանձնարարությամբ հայ ռազմագերիներից կազմել եւ ղեկավարել են հատուկ զորամասեր (Հայկական լեգեոն), որոնք գերմանական զորքերի կազմում կռվել են ընդդեմ Խորհրդային Միության: Այս տեսակետը համապատասխանում է իրականությանը, սակայն միակողմանիորեն ուռճացված է եւ խեղաթյուրված: Իրոք, գերմանացիները որպես համագործակցության նախապայման առաջարկել են.

« ա) կազմել յատուկ գունտեր,

բ) ղեկաւարութիւը եւ հրամանատարութիւն՝ հայ գերիներէն կազմուած լեգէոններու,

գ) Այս նկատմամբ որոշակի աշխատանք[1]:

Դրոն եւ նրա համախոհները գերմանացիներին ներկայացնում են հետեւյալ պահանջները.

«ա) եթէ թուրք-գերման բանակը մտնէ Հայաստան, գերման պետութիւնը պիտի ըլլայ երաշխաւոր հայ ժողովրդի ապահովութեան եւ հայ պետութեան պահպանումին,

բ) հայ սահմանների ընդարձակուել թուրքից գրաւուած մասերով ու Կովկասի մէջ սահմանի խնդիրներու հարթում,

գ) ճանչնալ հայերին Արիական ու չտարածել անոնց վրայ գերման օրէնքները ոչ արիականներու մասին»[2]:

1941 թ. գերմանական հրամանատարության որոշմամբ հիմնվում է չորս ռազմական կառույցներից (գումարտակ) բաղկացած «Արեւելյան Լեգեոն»-ը: Իսկ նույն թվականի նոյեմբերին կովկասյան չորս լեգեոնի կազմավորման հրամանը ստորագրում է անձամբ Հիտլերը: Նրա գնահատմամբ՝ «...այդ լեգեոնները ապագա անկախ հանրապետությունների համար հանդիսանալու են որպես միջուկ...»[3]:

[1] ՀՅԴ ԿԱ, Ֆ. Ս. Վ., թղ. 46, գ. 5բ, էջ 6:
[2] Նույն տեղում, էջ 7-8:
[3] Նույն տեղում, էջ 8:

Կտրականապես դեմ լինելով պատերազմին Գերմանիայի կողմից սլավոն ազգությունների զինվորներից կազմված զորամասերի մասնակցությանը, Հիտլերը հավանություն է տվել Կովկասյան ազգությանը պատկանող զինվորներից բաղկացած լեգիոն, այդ թվում նաեւ Հայկական լեգեոն կազմավորելու Վերմախտի կառավարության ու «Գրաված տարածքների նախարարության» ներկայացրած առաջարկությանը[1]:

Ըստ ձեռք բերած համաձայնության՝ պիտի կազմավորվեին անկախ պետական կազմավորումներ՝ Հայաստան, Վրաստան, Ադրբեջան եւ Կովկասյան մյուս ազգություններից բաղկացած Լեռնականների Ֆեդերացիա:

Դժվար է միանշանակ ընդունել, որ Գերմանիայի իշխանությունները կհամաձայնեին թույլ տալ Կովկասում կազմավորվելու այնպիսի անկախ հանրապետություններ, որոնք կունենային Գերմանիային հավասարազոր կարգավիճակ: Անկասկած, նախատեսված էր, որ պատերազմի ավարտին Հայաստանին, Վրաստանին, Ադրբեջանին եւ Լեռնականների Ֆեդերացիային տրվեին մարիոնետային պետությունների կարգավիճակ:

Ուշագրավ է, իսկ ինչպիսի՞ն պիտի լինեին նորանկախ հանրապետությունների սահմանները, չէ՞ որ ի սկզբանե սահմանների գծագրման գործում նրանց միջեւ կային վիճահարույց խնդիրներ, որոնց լուծումը բազմիցս հանգեցրել էր պատերազմի:

Հայաստանին խոստացել են Արցախը, Նախիջեւանը եւ Ախալքալակի մի մասը: Ադրբեջանը այդ ամենի դիմաց, որպես փոխհատուցում, ստանալու էր Իրանական «Ադրբեջան»-ի մի մասը ու Հյուսիսային Կովկասի, մասնավորապես Դաղստանի այն շրջանները, որտեղ բնակչությունը խոսում էր ադրբեջաներեն: Վրաստանի տարածքը պիտի ընդարձակվեր ի հաշիվ Զակաթալայի եւ Սոչիի օկրուգների[2]:

Գերմանիայի իշխանությունների կողմից Լեգիոն կազմավորելու որոշում ձեռք բերելը Դրոյի ու նրա զինակիցների համար առաջնահերթ նշանակություն ուներ: Այդ որոշումն արդեն նրանց իրավունք էր ընձեռում շրջել համակենտրոնացման ճամբարներն ու լեգեոնը համալրելու պատրվակով ազատել ռազմագերիներին:

[1] Տե՛ս Абрамян Э, նշվ. աշխ., էջ 36:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 37:

Կազմավորման առաջին շրջանում գումարտակներում ընդգրկվել են հակակոմունիստական ընդգծված տրամադրություն ունեցող ԽՍՀՄ-ի կողմից բռնազավթված ու խորհրդայնացված նախկին անկախ հանրապետություններից վտարանդի դարձած եւ տարբեր երկրներում հանգրվանած զինվորականները, որոնք ատում էին Խորհրդային Միությունն ու պատրաստ էին գերմանական զինուժի կազմում կռվելու ընդդեմ խորհրդային բանակի: Իսկ 1941 թ. դեկտեմբերին հատուկ հրամանով թույլատրվում է կազմավորել Հայկական Լեգեոնը, որի կազմում կարող էին ընդգրկվել ռազմագերիները, ինչպես նաեւ Գերմանիայի կողմից բռնազավթած երկրների զենք կրելու ընդունակ հայերը[1]:

Դրոն խոստացել է նպաստել այդ լեգեոնը զինվորներով համալրելու գործին, բայց իրականում գումարտակները կազմավորվել են հենց նրա գործուն մասնակցությամբ: Ավելին, նա Հայկական Լեգեոնը կազմավորելու ու մարզելու գործում ընդգրկում է մարտական փորձառություն ունեցող նախկին զինվորականների ու անգամ «Նեմեսիսի» խմբի մի քանի անդամների [2]:

Վարուժան Ոսկանյանի գնահատմամբ՝ «...քանի որ Դրոն կարծում էր,-և իրավացիորեն, որովհետև ամերկացիներն ու ֆրանսիացիները լքել էին Սեւրի պայմանագիրը, որը մեծ Հայաստանի պատրանքն էր ներշնչել,-որ Հայրենիքը միայն զինված պայքարով պիտի ազատագրվեր, իր մոտ վերցրեց «Նեմեսիս» խմբի Ռումինիա գաղթած անդամներին՝ աջ ձեռք Միսակ Թորլաքյանին, ապա Երվանդ Ֆընտըքյանին, Արամ Երկանյանին, Մկրտիչ Մկրյանին»[3]:

Ընդհանուր առմամբ Հայկական լեգեոնում ընդգրկվել են 18.000 կամավորներ, որոնցից 11.000-ը զորամասերում գրանցված զինվորներն էին, իսկ 7000-ը՝ օժանդակ-օգնական ուժերը: Լեգեոնը բաղկացած էր 11 հետեւակային գումարտակներից:

Ճիշտ է, Դրոն չէր հավատում Գերմանիայի վերջնական հաղթանակին, բայց բացառված չէր բնավ, որ Բեռլինի դաշնակից Թուրքիան օգտագործեր հարմարավետ պահն ու ներխուժեր Անդրկովկաս: Եվ եթե հիտլերականները հյուսիսից մտնեին

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1956, թիւ 10, էջ 30:
[3] Վարուժան Ոսկանյան, նշվ. աշխ., էջ 186:

Անդրկովկաս, իսկ հարավից՝ Թուրքիան, ապա Հայաստանը հուչակվելու էր Գերմանիայի դաշնակիցը: Հայ ռազմագերիներից կազմված լեգեոնը նախատեսված էր իրադարձությունների համանման զարգացման պարագայում անհապաղ տեղափոխել Հայաստան: Հայկական լեգեոնի հիմնական պարտականությունը մինչեւ կանոնավոր բանակի ստեղծումը, պետք է լիներ Հայաստանի Հանրապետության սահմանների ու ներքին կարգուկանոնի պաշտպանությունն ու պահպանումը: Ահա սա էր Դրոյի հիմնական մտահղացումը, ծրագիրն ու նպատակը եւ, լինելով հայրենանվեր, խորաթափանց ազգային գործիչ, նա չէր կարող չհաշվարկել եւ չկշռադատել հնարավոր տարբերակները:

Հայկական լեգեոնի կազմավորման եւ այդ առնչությամբ Դրոյի հետ կայացած հանդիպումներից հետաքրքիր հուշեր է պատմում Վահան Սարգսյանը «Հանդիպում Դրոյի հետ» վերոհիշյալ հուշագրությունում: Այն զորամասը, ուր ծառայել է Վ.Սարգսյանը, պատերազմի հենց առաջին օրերին շրջապատվում է գերմանական զորքերի կողմից եւ գրեթե առանց դիմադրության գերի վերցվում: Մի քանի ամիս տարբեր ճամբարներում դաժան օրեր անցկացնելուց հետո Վ. Սարգսյանը 1942 թ. աշնանը բազմաթիվ այլ ռազմագերիների հետ, որոնց թվում նաեւ կային հայեր, տեղափոխվում է Բեռլինի մոտակայքում գտնվող Բեռնաու քաղաքում կառուցված ռազմագերիների ճամբարը: Ընդամենը մի քանի օր Բեռնաուի ռազմագերիների ճամբարում հանգրվանելուց հետո, հազարավոր ռազմագերիների զինված պահակախմբի ուղեկցությամբ տանում են Բեռլին: Այդ օրը ռազմագերիների հետ հատուկ նպատակով հանդիպման էին եկել խորհրդային բանակի նախկին բարձրաստիճան զինվորականներ, ինչպես նաեւ մշակույթի գործիչներ: Գերմանական իշխանությունների թույլտվությամբ գերմանական բանակի կազմում կազմավորվում էին ազգային զորամասեր, եւ հանդիպման մասնակիցները, որոնց թվում եղել է հանրահայտ գեներալ Վլասովը, աշխատել են ռազմագերիներին համոզել, որ նրանք համալրեն նոր կազմավորվող ազգային զորամասերի շարքերը:

Հանդիպմանը մասնակցել է նաեւ Դրոն:

Բեռլինում կայացած այդ հանդիպման ընթացքում, մասնակիցներին ներկայացնելով հայկական լեգեոնի կազմավորման, հայ կամավորների հավաքագրման անհրաժեշտությունը՝ Դրոն նշել է. «Պատերազմը մոտենում է Կովկասին: Եթե այսպես շարունակվի, շուտով մարտերը կլինեն Կովկասյան Հանրապետություններում, նաեւ մեր հայրենիքում՝ Հայաստանում: Արդեն Բեռլինում ստեղծվել է հայ ազգային խորհուրդ՝ Բեռլինի Հումբոլտի համալսարանի պրոֆեսոր Արտաշես Աբեղյանի գլխավորությամբ: Խորհուրդը ծրագիր է ներկայացրել Գերմանիայի կառավարությանը եւ արժանացել ֆյուրերի հովանավորությանը: Ըստ ծրագրի՝ երբ գերմանական զորքերը մոտենան Հայաստանին, նրանց հետ կլինեն հայ կամավորներ, որպեսզի մեր հայրենիքում զոհեր ու ավերածություններ քիչ լինեն: Շուտով կսկսվի կամավորների հավաքագրումը, կոչ եմ անում առանց տատանվելու դառնալ կամավորներ ու մասնակցել մեր հայրենիքի ազատության պայքարին»[1]:

Ինչպես արդեն նշվել է, Դրոյի եւ նրա գործընկերների առաջնահերթ նպատակներից մեկը տարբեր պատրվակներով այդ թվում նաեւ լեգեոնում ծառայելու, հայ ռազմագերիներին գերմանական ճամբարներից ազատելն էր: Իսկ եթե երբեմն չէր հաջողվում իրականացնել այդ խնդիրը, ապա աշխատել են հնարավորին սահմաններում փոխել ռազմագերիների կյանքի ու ապրելու պայմանները, տեղափոխել ավելի տանելի վիճակում գտնվող, հիմնականում աշխատանքային ճամբարները: Փաստերը վկայում են, որ եթե նրանց այցելությունները չեն նպաստել ռազմագերիների լրիվ ազատմանը, ապա գոնե զգալիորեն փոխել են ճամբարներում ապրելու պայմանները: Վահան Սարգսյանի հուշերից պարզվում է, որ Դրոյի այցելություններից հետո նույն դրական փոփոխությունները կատարվել են նաեւ իրենց ճամբարում:

«Դրոյի հետ ունեցած հանդիպումից հետո,- խոստովանում է Վ. Սարգսյանը,-ճամբարում մեր նկատմամբ եղած վերաբերմունքը կտրուկ փոխվեց: Մեզ արդեն ֆիզիկական ծանր աշխատանքներ չէին պարտադրում, բարելավվեց նաեւ սննդի հարցը: Մեր ճամբարում կային տարբեր ազգությունների պատկանող՝ ռուս, ուկրաինացի, վրացի, ադրբեջանցի մոտավորապես 2500 ռազմագերիներ: Մենք՝ հայերս, ընդամենը 125-130 հոգի էինք: Մեզ, միայն հայերիս, օրը մի քանի անգամ հատուկ հսկողությամբ տանում էին մոտակա գյուղերն ու քաղաքները զբոսնելու: Այլ ազգությունների ռազմագերիների հետ համեմատած՝ մեզ շատ ավելի լավ էին վերաբերվում, նրանք մեզ նախանձով էին նայում, նույնիսկ եղել են

[1] «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 2000, մարտի 21:

դեպքեր, երբ նրանցից ոմանք փորձում էին իրենց հայ ներկայացնել: Կարող եմ վստահորեն խոստովանել, որ այդ մարդկանց ջանքերի շնորհիվ, իսկ մեր ճամբարը Դրոյից բացի, մի քանի անգամ այցելել են նաեւ Արտաշես Աբեղյանը, Գարեգին Նժդեհը, խնամակալ Մուրադյանը, Շաուլ Ազնավուրի մայրը՝ Քնարը եւ այլք, կտրուկ կերպով փոխվեց գերմանացիների վերաբերմունքը հայերիս նկատմամբ եւ մենք արդեն ապրում էինք անհամեմատ ավելի լավ պայմաններում»[1]:

Մի ուշագրավ հանգամանք եւս. Դրոն եւ իր գործընկերները, գլխավորապես զբաղվելով հայ ռազմագերիների եւ ճամբարներում նրանց ապրելու պայմանները բարելավելու գործերով, պատշաճ ուշադրություն են դարձրել նաեւ հայ ռազմագերիների կրթության ու գաղափարական դաստիարակության հարցերին: Այս առումով արժանահիշատակ փաստեր է վկայում Վահան Սարգսյանը.

«Մի անգամ կապոցներով ստացանք հայ հեղինակների գրքեր, հիմնականում պատմավեպեր՝ Ռաֆֆի, Մերենց եւ բառարաններ, գրելու համար թուղթ, մատիտ, ազատ ժամերին զբաղվելու համար շախմատ ու խաղաքարտեր: Այդ ամենը Բեռլինից մեզ համար ուղարկել էր Դրոն: Նա հոգ էր տանում, որ մեր ճամբարում կարդայինք, սովորեինք մեր լեզուն եւ պատմությունը: Դրոյի կարեւորագույն նախաձեռնություններից մեկն էլ այն էր, որ նա բոլոր այն հայերին, ովքեր չգիտեին հայերեն խոսել, պարտադրում էր, որ նրանք անպայմանորեն սովորեն ու խոսեն մայրենի լեզվով: Շատ հայեր Մոսկվայից, Տաշքենդից, ովքեր չգիտեին հայերեն խոսել, մեր օգնությամբ սովորում էին մայրենի լեզվով խոսել, գրել եւ կարդալ»[2]:

Դրոյի գործունեության այդ շրջանը բնութագրող վավերագրերը հավաստում են, որ նա հայերին, մասնավորապես ռազմագերիներին, անկախ նրանց ծննդավայրից եւ կուսակցական պատկանելությունից, վերաբերվել է ընդգծված ուշադրությամբ ու ջերմությամբ:

Եւս մի հատված Վահան Սարգսյանի վերոհիշյալ հուշերից.

«Բեմահարթակից իջավ Դրոն:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

- Բարե՛ւ, հայ եղբայրներ, - թավ ձայնով ասաց նա ու առանձին-առանձին սեղմեց մեր ձեռքը...

... Շարունակեց հարցնել, թե ով որտեղից է:

- Դո՞ւ որտեղից ես, - հարցրեց Սուրենին: Լենինականից:

- Ո՛չ, դու Գյումրեցի ես: Ձեր քաղաքի պատմական անունը Գյումրի է...

- Դո՞ւ որտեղից ես, - հարցրեց մեկ ուրիշի:

- Լեռնային Ղարաբաղից: Ո՛չ, տղաս, դու Արցախից ես: Զմոռանաս, որ Ղարաբաղի իսկական անունը Արցախ է:

- Իսկ դո՞ւ որտեղից ես, - հարցրեց ինձ:

- Ապարանի շրջանի Բուժական գյուղից»:

Լսելով պատասխանը՝ Դրոն հետաքրքրվել է Ապարանի եկեղեցու վիճակով եւ հուզմունքով ու անկեղծությամբ խոստովանել. «Ա~խ, ինչքան եմ ուզում տեսնել եկեղեցին, խմել Բաշ Ապարանի հորդառատ ջուրը: Քսաներկու տարի առաջ հեռացել եմ հայրենիքից, բայց Հայաստանը միշտ եղել է իմ սրտում: Օտարության մեջ Հայաստանից եկող ուրախ լուրերը երջանկացրել են ինձ, իսկ տխուր լուրերը մաշել են սիրտս...

- Աստված տա, որ պատերազմը շուտով ավարտվի, միասին վերադառնանք Հայաստան, Բաշ Ապարանի եկեղեցու մոտ ուրախության սեղան բացենք»[1]:

Հարկ է նշել, որ Հայկական լեգեոնը խորհրդային զորքերի դեմ շատ քիչ է կռվել: Ավելին, Դրոն ամեն ջանք գործադրել է, որպեսզի Հայկական լեգեոնը ոչ միայն գերմանա-խորհրդային, այլեւ ճակատ չմեկնի ընդհանրապես:

Դրոյին նվիրված իր հուշերում անդրադառնալով այդ իրողության նկարագրմանն ու գնահատմանը՝ Արամ Տապաղյանը նշում է. «Կովկասեան ազգերէ կազմուած կամաւորական բանակի գունդերը ղրկուեցան արեւելեան ճակատ: Մնացին միայն հայերը, որոնց մեկնումը կուշանար:

Արեւելեան ճակատի հարաւային մասի սպայակոյտին նախագահը, բարձրաստիճան սպայ մը, Պրաուն անունով, Դրոյի լաւ բարեկամն էր: Անոր շնորհիւ մեր հայկական գունտը, փոխանակ դէպի արեւելք շարժուելու, ղրկուեցաւ Նորմանտիի ճակատը, ուր անոնք առիթ չունեցան կռուի մէջ մտնելու...»[2]:

[1] Նույն տեղում:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1957, թիւ 5, էջ 6:

Դրոն գերմանացիներին խոստացել էր նաեւ. «...օգնութիւն ընել, եթէ գերման բանակը գրաւի Հայաստան: Այս օգնութիւնը կը վերաբերուի միայն Հայաստանի ներքին կազմակերպութեան եւ պաշտպանութեան»[1]:

Պատերազմի սկզբնական շրջանում գերմանացիները, առանց հաշվի առնելու գերիների ազգային պատկանելությունը, բոլորին անխտիր քշում էին թիկունք, որը մեծ դժվարություններ էր հարուցում հարյուր հազարավոր գերիների մեջ հայերին որոնելու ու նրանց ազատելու գործում: Գերիների այդ հսկայական բազմությունը, որոնց թվում նաեւ հայերը, կոտորվում էր սովից, ցրտից եւ տաժանակիր աշխատանքներից:

«Գերմանացիների,-գրում է Արամ Տապաղյանը (նա այդ ժամանակ բնակվել է Բեռլինում եւ համագործակցել է Դրոյ հետ- Հ.Գ.),- ձեռքը ինկած պատերազմական միլիոնաւոր գերիներու մէջ կային նաեւ բաւական թիւով հայ գերիներ, որոնք կը ղրկուէին թիկունք: Անոնք Լեհաստանի մէջ ցարական ժամանակէ մնացած անգործածելի դարձած հսկայ զօրանոցներու մէջ կը լեցուէին եւ ցուրտէն ու սովէն կը կոտորուէին, նորեկներուն տեղ բանալու համար»[2]:

Եթե հայերը շարունակեին մնալ գերիներին հատկացված ընդհանուր ճամբարներում եւ չառանձնացվեին, ապա չափազանց դժվար կլիներ նրանց գերությունից ազատելը: Անհրաժեշտ էր նախ եւ առաջ նրանց մեկուսացնել ու տեղափոխել առանձին կացարաններ, որպեսզի առավել ստույգ պարզվի նրանց թիվն ու ով լինելը:

«Պերլինի մէջ, - շարունակում է, - Արամ Տապաղյանը, - չորս ազգերու միացեալ դիմումներով կարելի եղաւ հրաման ստանալ, որ կովկասեան ազգերու ներկայացուցիչները ղրկուին գերիներու կեդրոնացման կայանները՝ հասկանալու իրենց ազգակիցներու թիւը:

...Պերլինի հայկական մարմինը՝ գլխաւորութեամբ Դրոյի, նախ յաջողեցաւ հրաման ստանալ, որ հայ գերիները զատ-զատ բաժնյակներու մէջ հաւաքուին եւ անունդ ստանան, աներեւակայելի պատահարներէ զերծ մնալու համար»[3]:

[1] «Հայրենիք» ամսագիր, 1956, թիւ10, էջ 8:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1957, թիւ 5, էջ 5:
[3] Նույն տեղում:

Շահելով գերմանական իշխանությունների վստահությունը՝ Դրոն իր զինակիցներով շրջում է գերմանացիների կողմից նվաճված երկրներն ու մեծ չարչարանքների ու անբասիր աշխատանքների գնով համակենտրոնացման ճամբարներից, բանվորական աշխատանքային բրիգադներից ազատում հազարավոր հայերի: Ըստ փաստաթղթերի ու վկայությունների, Դրոն իր զինակիցների աջակցությամբ ողջ պատերազմի ընթացքում կարողացել է գերությունից ազատել ավելի քան 40.000 հայերի[1]:

Ս. Վրացյանի բնութագրմամբ՝«Ինչպէս հայտնի, պատերազմի սկզբին, կարմիր բանակի ամբողջ զօրամասեր յօժարակամ անձնատուր էին լինում Գերմանիային: Գերման ճամբարներում միլիոնավոր կարմիր գերիներ հաւաքուեցին, որոնք ճանճերի պէս կոտորուում էին ձմեռուայ սառնամանիքից, բաց երկնքի տակ, անօթի ու թշուառ: Մօտ 40.000 հայ գերիների կյանքը փրկուեց Դրոյի եւ ընկերների շնորհիւ»[2]:

Հայ գերիներին ազատելիս նա բնավ կարեւորություն չի տվել նրանց կուսակցական պատկանելությանն ու համոզմունքներին: Այդ հարցում նրա համար միակ չափանիշը հայ լինելն էր:

«Մենք,-ասել է Դրոն,- եկած ենք օգնելու եւ փրկելու հայերին այս արյունոտ պայքարին մէջ: Ամէն մի փրկուած հայ մի պլիւս է մեր տառապած ցեղի համար, հոգ չէ, թէ ինչ քաղաքական կամ կուսակցական հոսանքի է պատկանում նա, բաւական է, որ իսկական հայ է...

Այդպէս էր բնորոշում Դրոն իր դերը այդ օրերին»[3]:

Նրան բնութագրող մի կարեւոր հանգամանք եւս. պատերազմի տարիներին ժամանակի հարկադրանքով համագործակցելով նացիստների հետ, Դրոն երբեք չի եղել նրանց գործերի, գաղափարների համակիրը, ջատագովն ու պաշտպանը: Որպես ազատության եւ ճշմարիտ ժողովրդավարության նվիրյալի՝ նրա համար ֆաշիստական Գերմանիայի քաղաքականությունը եւ տիրապետող գաղափարախոսությունը՝ նացիզմը՝ որպես բռնակալություն, եղել է խորթ եւ ատելի:

[1] ՀՅԴ ԿԱ, Ֆ. Ս. Վ., թղ. 46, գ. 5բ, էջ 10: Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Դ, 1965, էջ 218: Այդ նույնը տողերիս հեղինակի հետ ունեցած հանդիպումների ժամանակ հաստատում էին նաեւ նրա գործունեության այդ ժամանակաշրջանին առնչվող մարդիկ, որոնց հետ 1990 թ. ԱՄՆ-ի Բոստոն քաղաքում կայացած զրույցների ձայնագրությունները պահվում են իմ անձնական արխիվում:
[2] Վրացեան Ս., Մորկածին Դրոն, էջ 168:
[3] «Հայրենիք» ամսագիր, 1956, թիւ 10, էջ 30:

Մի ուշագրավ վկայություն Հայկական լեգեոնի ծառայողներից մեկի՝ Լեւոն Մկրտչյանի հուշագրությունից: 1943 թ. ապրիլին Դրոն հայ զինվորների հետ հանդիպելու եւ նրանց առջեւ ելույթ ունենալու նպատակով լինում է Հայկական լեգեոնի Բուլավիի ճամբարում, ուր այդ ժամանակ ծառայում էր լեգեոնական Լեւոն Մկրտչյանը:

«Ապրիլի 14-ը եւ 15-ը, - վերհիշում է Լ. Մկրտչյանը, - ուշագրաւ օրեր էին Լեգէօնի համար...

Լեգէօն էր ժամանել չորս հոգուց կազմուած մի խումբ Բեռլինից, - զօրավար Դրօ Կանայեան, պրոֆեսոր Արտաշէս Աբեղեան, գնդապետ Տիգրան Բաղդասարեան եւ երիտասարդ Ցարութիւնեանը .....Առաջին գծի վրայ էր գտնուում, իհարկէ, Դրօյի ելույթը:

Ես որեւէ տեղ չեմ լսել կամ կարդացել, թէ Դրօն աչքի ընկնող ճառախօս է եղել երբեւէ: Եւ իրականում էլ չի եղել հաւանաբար: Բայց մեր լսածը այնպիսին էր, որն անւարան կարելի էր կոչել «Կուռ եւ բովանդակալից ճառ»: Խօսքի չափը լաւ էր ընտրուած, ոչ երկար, ոչ էլ կարճ: Դրօն բեմից խօսում էր հանգիստ, սահուն, առանց ձայնի ու կշռուլթի նուազագոյն խափանման: Խօսքը ներքուստ լիցքաւորուած էր եւ մշակուած համոզմունքի արդիւնք:

Դրոյի խօսքի սկիզբը բաւական զգացական էր: «Ցաւալի՜, շա՜տ ցաւալի է,- յատուկ շեշտով ասում էր նա, - որ այս երիտասարդութիւնը տեսնում եմ օտար հողին վրայ: Ո՞ւրքա՜ն կուզենայի, որ ձեզ հետ հանդիպումը տեղի ունենար Երեւանում, Հայոց հողի վրայ»[1]:

Հավաքի մասնակից լեգեոնականները կարծել են, որ նա անպայմանորեն գովեստի ու դրվատանքի խոսքեր կասի նացիստների, նրանց վարած քաղաքականության ու գաղափարախոսության վերաբերյալ, սակայն Դրոն բոլորի համար անսպասելի ունկնդիրների ուշադրությանն է ներկայացնում բոլորովին այլ բովանդակության հարցեր:

«...Ապա Դրօն,- շարունակում է Լեւոն Մկրտչյանը,- ասաց, թէ խորհրդային պայմաններում մեծացած երիտասարդները Արեւմուտքը ճանաչելու պատեհութիւն չեն ունեցել: Իսկ այսօրուայ տեսածով չի կարելի չափել Արեւմտեան աշխարհը: «Դուք

[1] «Բագին» ամսագիր, 1969, մայիս-հունիս, էջ 15-16:

գտնուում էք տիրողի եւ տիրուողի երկրում, - քանիցս կրկնեց նա,- այն էլ պատերազմի ժամանակ»: Ապա նա խստօրէն ներկայացրեց ու գովեց այն կարգերը, որոնք գոյութիւն ունէին ժողովրդավարական երկրներում, քաղաքական ու ընկերային ասպարէզներում: Այդ կէտը շատ արտասովոր թուաց ինձ, թերեւս նաեւ շատ ուրիշների, երբ Դրոյի նման աչքի ընկնող անձնաւորութիւնը՝ գերմանացիների տրամադրած բեմից ու նրանց ականջի տակ ժողովրդավարական աշխարհի գովքն էր անում, նրա անունը տալով կամ չտալով, բայց այնքան հասկանալի մակարդակով ու շեշտուած նախասիրութեամբ»[1]:

Պատերազմի սկզբնական շրջանում եւ մինչեւ 1942 թ. կեսերը՝ Դրոն բացառապես զբաղվում է Եվրոպայի տարբեր երկրներում բնակվող հայության անվտանգության ապահովման եւ հայ ռազմագերիներին համակենտրոնացման ճամբարներից ու բանվորական բրիգադներից ազատելու գործով:

Նա այդ գործը իր զինակիցների գործուն աջակցությամբ կատարել է մեծ ջանասիրությամբ, զրկանքներով ու զոհողությամբ, բայց արդյունավետ:

Մի փոքրիկ դրվագ նրա կնոջ՝ տիկին Գայանեի հուշերից.

«Մի անգամ Բեռլինում հանդիպեցինք Դրոյի ջանքերով ազատված հայ ռազմիկների հերթական խմբերից մեկին: Այդ օրը նա ուտելիք էր բերել նրանց համար: Ես տեսա, թե ինչպես ուտելիքը նրանց բաժանելուց հետո Դրոն աննկատ հավաքում էր գետնին թափված հացի փշրանքներն ու արագորեն ուտում: Ինչքան սոված լիներ եւ կարիքի մեջ, միեւնույն է, իր վերջին ունեցածը տալիս էր հայ ռազմագերիներին եւ դժբախտության ու կարիքի մեջ հայտնված հայրենակիցներին»[2]:

Համակենտրոնացման ճամբարներից ու աշխատանքային բրիգադներից ազատած ռազմագերիներին նա, գլխավորապես իր ֆինանսական միջոցներով, ուղարկում էր ավելի ապահով վայրեր: Նրանց օգնելու համար Դրոն աշխատում է ներգրավել Եվրոպայի հայկական գաղթօջախների ողջ հայությանը, հատկապես ֆինանսական կարողություններ ունեցողներին, իսկ նրա

[1] Նույն տեղում:
[2] Դրոյի կնոջ՝ տիկին Գայանեի, ինչպես նաեւ նրա մասին պատմող մյուս ձայնագրությունները պահպանվում են տողերիս հեղինակի հավաքածուում:

խոսքն ու առաջարկությունները՝ որպես օրենք, անհետեւանք չէին անցնում:

«Դրոն,- նշում է Արամ Տապաղյանը, - պերճախոս չէր, սակայն խոսելու իւրահատուկ շնորք մը ունէր, եւ իր խոսածը ոչ թէ ականջիդ, այլ հոգիիդ մէջ կը մտնէր եւ հոն կը մնար...

Երբ մենք ճոխ սեղանի մը շուրջ նստած կը լայինք, կը սկսէր.

«Մենք իրաւունք չունինք այս ճոխ սեղանի շուրջը նստելու եւ կուշտ փորով ճաշելու: Հայութեան մէջ չկայ օրէնք, որ մէկը ուտէ, միւսը սոված մեռնի: Եղբայրնե՛ր, գիտեմ, հարուստ գաղութ չէք: Բայց գիտեմ, որ հոգով, սրտով, ազգասիրութեամբ հարուստ էք: Ազատենք սոված հայերը, որքան կարող ենք: Մեր պատառին կէսը մենք ուտենք, կէսն էլ սովեալներու տանք...»[1]:

Հայկական լեգեոնի կազմավորման ու գործունեության որոշ դրվագների մասին արժանահիշատակ հիշողություններ է պատմում նախկին լեգեոնական, Թումանյանի շրջանի Շամուտ գյուղի բնակիչ Աշոտ Հակոբի Սարգսյանը, որն իր «Մեծ հայ զորավարները» եւ «Հայկական լեգիոնի ճակատագիրը» խորագիրը կրող հուշագրություններում ներկայացնում է ուշագրավ պատառիկներ, իր իսկ բնորոշմամբ՝ Մեծ զորավարների՝ Դրոյի ու Նժդեհի հետ կայացած հանդիպումներից[2]:

Աշոտ Սարգսյանը, 1941 թ. օգոստոսի 22-ին Վիլնյուսի մոտակայքում ընթացող կռիվներից մեկի ժամանակ, նույն զորամասի հարյուրավոր զինվորների հետ, ծանր վիրավոր վիճակում հայտնվում է գերմանական գերության մեջ:

Նրան եւ բազմաթիվ այլ գերյալներից գերմանացիները աշխատանքային բրիգադներ են կազմում, ապա տեղափոխում են մի քանի երկրներ՝ Բելոռուսիա, Ուկրաինա, Լեհաստան, ուր բազում տաժանակիր օրեր անցկացնելուց հետո, ի վերջո 1942թ. ապրիլին հայտնվում են Գերմանիայի Գրան քաղաքի (Արեւելյան Պրուսիա) համակենտրոնացման ճամբարում: Համաձայն Ա. Սարգսյանի վկայության, այդ ճամբարի 240.000 գերյալների ճնշող մեծամասնությունը տարբեր հանգամանքներով ոչնչացվել էր: Ընդամենը մի քանի ամիս անց ճամբարում մնացել էին

[1] «Հայրենիք» ամսագիր, 1957, թիւ 5, էջ 5:
[2] «Կանչ Նախնյաց», 1993, 24 սեպտեմբերի: Աշոտ Սարգսյանի ձեռագիր-հուշագրությունը պահպանվում է տողերիս հեղինակի արխիվում:

4500 գերիներ, որոնց մեջ՝ 15 հայեր: Ի՞նչ ճակատագիր էր նրանց սպասում:

«Գերմանացիների դանակի ու մտրակի տակ, - վերհիշում է Աշոտ Սարգսյանը,- գերության մեջ էինք: Ամեն օր մեզ հույս տալով, թե վաղը լավ կլինի, աստված մեզ կօգնի: Սակայն մեր բախտնել էր կտրվել, մեր աստվածն էլ մեր գլխին խռովել էր ու մեզ գցել շների ու գազանների ձեռքը»[1]:

1942 թ. մայիսի սկզբներին Դրոն մի խումբ զինակիցների ուղեկցությամբ Բեռլինից գալիս է Գրան քաղաք եւ այցելում գերիների ճամբար: Գերիների հետ կայացած հանդիպման սկզբում՝ առանց իր անձը ներկայացնելու, Դրոն հայտնում է, որ իրենք եկել են նրանց գերությունից ազատելու: Հենց նույն հանդիպման ժամանակ նա հայ գերիներին առաջարկում եւ խորհուրդ է տալիս՝ ընդգրկվել հայկական ազատագրական բանակի կազմում: Նա գերիներին տեղեկացնում է, որ իրենք՝ հայոց հին զորավարները, գտնում են, որ Հայաստանի փրկության միակ երաշխիքը կարող է լինել նոր կազմակերպվող հայկական ազատագրական բանակը:

Գերիներին միաժամանակ տեղեկացնում է, որ իրենք նախօրոք համապատասխան ծրագրեր են ներկայացրել Հիտլերյան վերմախտի շտաբին ու իրենց վրա վերցրել պատասխանատվություն՝ կազմավորելու հայկական ազատագրական բանակ, որը կմտնի Անդրկովկաս եւ գերմանացիների աջակցությամբ «...Խորհրդային կայսրությունից կազատագրեն Վրաստանը, ապա Թուրքիայի յաթաղանի ճամբուն կխափանենք Հայաստանի վրայով Ադրբեջան ներխուժելուն, իսկ գերմանական հրամանատարությունը մեզ կվստահի, որ մենք ազատագրենք մեր հայրենիքը...»:

Ճամբար այցելելու իրենց նպատակները գերիներին ներկայացնելուց հետո միայն, ըստ Աշոտ Սարգսյանի վկայության, նա հայտնում է. «Ես Դրոն եմ, հայոց ազատ ու անկախ Հայաստանի զորապետը: Ինձ հետ է Ձեր սիրելի Նժդեհը, Գարեգինը Բեռլինում հենց այս հարցերով է զբաղված:

Դրո անունը ցնցեց բոլորիս, չփոթված չէինք իմանում ինչպես ողջագուրվենք: Մեծ հույս էր այդ գերբնական մարդու այցը մահվան ճամբարները»[2]:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

Հայ գերիներից մեկը, որին ԱշոտՍարգսյանը անվանում է քեռի Բաբայան(երեւանցի, մասնագիտությամբ ճարտարապետ), առաջինն է մոտենում Դրոյին, սեղմում նրա ձեռքը, խրախուսում նրան բարի, հայրենանվեր ու միաժամանակ վտանգավոր գործը ձեռնարկելու համար եւ երախտագիտությամբ ասում. «Պարոն Դրաստամատ, բարով տեսանք, էն մեզ համար աստվա՞ծ է ձեզ ուղարկել: Մեզ փրկեցեք, մեռնում ենք, լագերի կեսից ավելին կոտորվեցին, ինչ թավուր հայ տղերք մեռան- կորան, ինչ առաջարկեք, քեզ ճանաչում եմ, վատը չեք ցանկանա քու զավակներին: Միայն մեզ շուտ դուրս բերեք մահվան այս սպանդանոցից»[1]:

Հայ գերիները, հետեւելով քեռի Բաբայանին, հերթով մոտենում են խնամակալ Մուրադյանին եւ ցուցակագրվելով՝ զինվորագրվում նոր- նոր կազմակերպվող Հայկական լեգեոնին:

Հաջորդ օրը եւեթ ցուցակագրված բոլոր 15 հայերին ավտոմեքենայով տեղափոխում են Լեհաստանի Լյուբլին, ապա Զելյոնկա քաղաքը, որտեղ արագացված հրամանատարական դասընթացներում ուսուցանելուց եւ համապատասխան զինվորական կոչումներ շնորհելուց հետո, տեղափոխում են Լեհաստանի Պուլավա քաղաք:

Ըստ ԱշոտՍարգսյանի հավաստման՝ հենց այդ՝ Պուլավա քաղաքի ճամբարում կազմավորվում են Հայկական լեգեոնի թիվ 1-ին, 2-րդ եւ 3-րդ գումարտակները, որոնց հրամանատարները սկզբում գերմանացիներ էին, իսկ տեղակալները՝ հայեր: Գումարտակներին հանձնելով մարտական դրոշները՝ Դրոն ասել է. «... Այսօր հանձնելով հայկական երեք գումարտակներին իրենց մարտական դրոշները, հույս ունեմ, որ մեր այս սուրբ դրոշի ներքո, դուք, իմ թանկագին զինվորներ ու հրամանատարներ, ձեր կյանքն ու արյունը չեք խնայիլ մեր սուրբ հայրենիքն ազատագրելու համար...»:

Հայկական լեգեոնի ծառայողների համազգեստն ու ուսադիրները գերմանական էին, իսկ սպայական կազմի կարգանշանները՝ զուտ հայկական:

Լեգեոնի զինվորականները համազգեստի թեւքերի վրա կրում էին հայոց արծվի էմբլեմով նշան, որի վրա հայերեն եւ գերմաներեն գրված էր «Հայկական Լեգեոն», իսկ դրանից վերեւ կրում

[1] Նույն տեղում:

էին եռագույնը՝ Հայաստանի Հանրապետության դրոշը: Գումարտակները ունեցել են նաեւ իրենց զինվորական քայլերգերը, որոնք էին «Զեյթունցիները», «Անդրանիկը քաջ», «Սերոբ փաշան» եւ այլ հայրենասիրական երգեր[1]:

Մի ուշագրավ տեղեկություն եւս. Աշոտ Սարգսյանը վկայում է, որ իրենց «...տակտիկական պարապմունքներն անցկացնում էին հայ Մեծ զորապետներ Դրոյի եւ Նժդեհի հսկողության տակ ու նրանց ցուցումով.

...բացի տակտիկական - ռազմավարական տեխնիկայի ուսուցումը, Դրոն ու Նժդեհը մեր հայ հրամանատարական կազմի հետ պարապում էին Հայոց պատմություն ու նրա դասերը, հայ հոգեւոր եկեղեցու քրիստոնեությունն ու հավատը մեզ պարապում էր պարոն Մուրադյանը...»[2]:

Դրոյի հետ ունեցած հանդիպումից հուշեր է պատմել Ծալկայի շրջանի Նարդեւան գյուղի բնակիչ Իշխան Պողոսի Այվազյանը, որի պատմածը գրի է առել ու մեզ տրամադրել նրա որդին՝ մանկավարժական գիտությունների դոկտոր Էդվարդ Այվազյանը:

Երբ բռնկվել է պատերազմը, Իշխան Այվազյանը ծառայել է Մոզդոկ քաղաքի մերձակայքում տեղակայված հայկական դիվիզիաներից մեկում: Նա ծառայել է որպես վարորդ եւ իրեն հատկացված Զիլ մակնիշի բեռնատար ավտոմեքենայով զենք ու զինամթերք է տեղափոխել ճակատ:

1942 թ. այն զորամասը, որտեղ ծառայում էր Իշխան Այվազյանը, Կրասնոդար քաղաքի մատույցներում հարձակման ենթարկվելով, հայտնվում է շրջապատման մեջ: Պաշարման մեջ հայտնված հայկական զորամասը մեծ կորուստներ է տալիս, իսկ շատերը, որոնց թվում նաեւ Իշխան Այվազյանը, գերի են ընկնում: Գերմանացիները գերիներին տեղափոխում են Արմավիր քաղաքում գտնվող ճամբարներից մեկը:

«Ճամբար տեղափոխվելուց մի քանի օր հետո,-պատմել է Իշխան Այվազյանը,-գերմանացի սպաներից լսում ենք, որ ճամբար պիտի ժամանի մի հայ գեներալ, որին պատշաճ մակարդակով դիմավորելու համար գերմանացիները սկսում են կարգի բերել ճամբարը, գերիների հագուստն ու սննդամթերքը»:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

Շատ շուտով գերմանական շքեղ մեքենայով ժամանում է գեներալը՝ Դրոն, որին դիմավորելու համար շարքի են կանգնեցնում ճամբարում գտնվող բոլոր գերիներին:

Վերհիշելով հոր պատմածները՝ Էդվարդ Այվազյանը նշում է. «Հայրս ասում էր, որ ինքը այդպիսի համակրելի, գեղեցիկ արտաքինով սպա, տղամարդ չէր տեսել:

Գեներալը կանգնում է շարքի առաջ եւ մաքրամաքուր հայերենով դիմելով հայ գերիներին՝ ասում.

-Բարեւ, արծիվնե՛ր ջան, ես Դրոն եմ: Եկել եմ, որ Ձեզ ազատեմ ու տեղափոխեմ Գերմանիա: Այնտեղ Ձեզ հայկական հատուկ լեգեոնում կվարժեցնեն ու կնախապատրաստեն ճակատ մեկնելու: Դուք ո՛չ ռուսների եւ ո՛չ էլ գերմանացիների դեմ չեք կռվելու: Ա՛յ, երբ որ գերմանացին անցնի Հյուսիսային Կովկաս եւ մտնի Անդրկովկաս, այդ ժամանակ մենք խփելու ենք շանը՝ թուրքերին:Դուք ինձ պետք եք, արծիվներ ջան: Ես պայմանավորվել եմ գերմանացիների հետ: Դե՛, Ձեզ տեսնեմ, ովքեր ի վիճակի են, ցուցակագրվեք, որ վաղը եւեթ տեղափոխվեք»:

Այնուհետեւ Դրոն հետաքրքրվում է գերիների վիճակով եւ կրկին անգամ հայտնում, որ ինքը Դրոն է՝ Դրաստամատ Կանայանը ու հարցնում՝ ի՞նչ է, իրեն չե՞ն ճանաչում:

Այդ նույն պահին, երբ նա տալիս է իր անուն ազգանունը՝Դրաստամատ Կանայան, կատարվում է մի ուշագրավ դեպք:

«Հայրս պատմում էր, որ այս խոսքերի վրա իր կողքին կանգնած հայ զինվորներից մեկը բացականչում է՝ քեռի՜, ու ուշաթափվում: Դրոն հարցնում է, թե ի՞նչ պատահեց զինվորին: Հայրս պատասխանում է, որ զինվորը բացականչեց քեռի ու ուշաթափվեց: Դրոն գերմանացի պարետի հետ միասին վազելով մոտենում է ուշաթափված գերի զինվորին, եւ երբ նա ուշքի է գալիս, պարզվում է, որ այդ ուշաթափվածը Դրոյի քրոջ որդին է, որին նա ազատում է գերությունից ու մեքենայով տանում իր հետ»[1]*:

Գերիներից շատերը ցուցակագրվում են եւ գնացքով մեկնում Գերմանիա, բայց ճանապարհին ռմբակոծության են ենթարկվում խորհրդային ինքնաթիռների կողմից:

[1] * Պարզվում է, որ Դրոյի երեք քույրերի որդիներց ոչ մեկը պատերազմին չի մասնակցել: Հավանաբար նրան քեռի անվանողը եղել է նրա ազգականներից որեւէ մեկի որդին:

Իշխան Այվազյանը իր ռուս ընկերոջ հետ միասին փախչում է ճամբարից, եւ Հովհաննես (Իվան) անունով տեղացի հայ բնակչի ու նրա ռուս կնոջ շնորհիվ թաքնվում է նրանց տանը: Տանտերերը բուժում եւ կազդուրում են Իշխան Այվազյանին, ապա հանձնում խորհրդային զորքերի հրամանատարությանը:

«Դրանից հետո,-պատմում է Էդվարդ Այվազյանը,-հայրս Ֆեոդորովի պարտիզանական ջոկատի կազմում մինչեւ պատերազմի ավարտը մասնակցում է գերմանացիների դեմ մղվող կռիվներին: Պատերազմի ավարտին, Ֆեոդորովի եւ «Մահվան հովիտ» դաշտային հոսպիտալի գլխավոր բժիշկ Դիմովի տված տեղեկանքի շնորհիվ հայրս խուսափում է «գերի» որակավորումից եւ հաղթանակից հետո վերադառնում է գյուղ, միայն 1946 թ.»:

Հայտնի է, որ Հայկական լեգեոնի անձնակազմի մեծ մասը, գլխավորապես հենց շնորհիվ Դրոյի միջամտության, տեղափոխվել է ոչ թե գերմանա-խորհրդային ճակատ, այլ առավել ապահով վայր՝ արեւմուտք: Սակայն Հայկական լեգեոնի մյուս մասը, մասնավորապես Պուլավա քաղաքում կազմավորված 808 եւ 809-րդ գումարտակները, ինչպես արդեն նշվել է, համաձայն գերմանական վերին հրամանատարության հետ ձեռք բերած համաձայնության, այնուամենայնիվ, տեղափոխվել են Խորհրդային Միություն:

Երբ գերմանական զորքերը հասնում են Ղրիմ եւ մոտենում Անդրկովկասին, Դրոն թողնում է Գերմանիան եւ մի խումբ զինակիցների ընկերակցությամբ ուղեւորվում Խորհրդային Միություն: Հասնելով Ղրիմ Սիմֆերոպոլ, Դրոյի գլխավորած խումբն առանց ժամանակ կորցնելու բուռն գործունեություն է ծավալում այդ շրջանների հայության անվտանգությունն ապահովելու ուղղությամբ: Նրա գործունեության այդ ժամանակահատվածի վերաբերյալ արժանահիշատակ եւ հետաքրքիր հուշեր է պատմում իր հեղինակած «Օրերուս հետ» գրքում Միսաք Թորլաքյանը, որն այդ օրերին նույնպես գործել է Ուկրաինայում, Ղրիմում եւ Հյուսիսային Կովկասում: Այդ ժամանակ Ղրիմում եւ Հյուսիսային Կովկասում հայերի համար շատ բարդ եւ տագնապալի իրավիճակ էր ստեղծվել: Գերմանացիները ցուցակագրել էին հրեաներին, գնչուներին եւ այլոց, մոտավորապես 15.000 մարդու ու ապա մի փոքր անց հերթով բոլորին կոտորել[1]:

[1] Տե՛ս Թորլաքեան, նշվ. աշխ., էջ 519:

Ղրիմի թերակղզու թաթարները եւ Հյուսիսային Կովկասի մահմեդականությունը հնարավոր միջոցներ էին ձեռնարկում գրգռելու գերմանացիներին ընդդեմ հայերի եւ աշխատում նրանց աջակցությամբ ու թողտվությամբ կոտորել եւ հեռավոր համակենտրոնացման ճամբարները եւ այլ աքսորավայրեր քշել տեղի հայ բնակչությանը:

«Ղրիմի թաթարները, - գրում է Մ. Թորլաքյանը, որն այդ օրերին Դրոյի հետ գտնվում էր Ղրիմում, - թուրքերու թելադրանքով մեծ պրոպագանդ կը մղէին, թէ հայերը նոյնքան գէշ են, որքան հրեաները. Այս թաթարները գերմաններուն տուած էին առանձին զօրամասեր եւ յայտնապէս կը գործակցէին անոնց՝ ռուսներուն դէմ: Ուղղակի զինակից էին գերմաններուն, այս պատճառով ալ յաջողած էին անոնց վերի խաւերուն մօտ թափանցել եւ զանոնք նախապաշարել հայերուն դէմ: Այնքան լարած էին գերմանները, որ քիչ էր մնացել թոյլ տային թաթարներուն մաքրագործել հայերը»[1]:

Շնորհիվ Դրոյի ունեցած կապերի եւ ձեռնարկած անխոնջ ու արդյունավետ գործունեության՝ հաջողվում է կասեցնել Ղրիմի թաթարների կողմից հայերի ֆիզիկական գոյությանը սպառնացող վերահաս վտանգը:

Հաստատելով վերոհիշյալ իրողությունը՝ Մ. Թորլաքյանը գրում է. «Այստեղ անհրաժեշտ է արձանագրել թէ ինչպէս Դրոյի գլխաւորած կապերու շնորհիւ հայութիւնը փրկուեցաւ ստոյգ բնաջնջումէն: Եթէ չըլլար այս կապը եւ մեր աշխատանքը, այսօր Խրիմի մէջ մէկ հայ ողջ մնացած պիտի չըլլար»[2]:

Տեղի հայ բնակչությանն ու ազատագրված հայ ռազմագերիներին օգնելու նպատակով Դրոյի խմբի ջանքերով բացվում են հացի փուռ, արհեստանոցներ, խանութներ ու կրպակներ, որտեղ աշխատանքի են անցնում բազմաթիվ հայեր: Բացի բնակչության եւ ռազմագերիների ցուցաբերած աջակցությունից, զգալի օգնություն են ցույց տալիս նաեւ տեղի հայկական եկեղեցուն ու դպրոցին: Ղրիմում նրա խմբի գործունեությունը ավելի է ծանրանում եւ ընդարձակվում, երբ գերմանացիները գրավում են Սեւաստոպոլը, Ֆեոդոսիան, Կերչը եւ ապա ներխուժում Հյուսիսային Կովկաս:

[1] Նույն տեղում, էջ 519:
[2] Նույն տեղում, էջ 521:

Հայտնի է, որ Ղրիմի թերակղզու եւ Հյուսիսային Կովկասի պաշտպանության ժամանակ մեծ կորուստներ են կրել հատկապես այդ ռազմաճակատներում մարտնչող հայկական ազգային զորամասերը:

Խորհրդային զորքերի պարտության հետեւանքով գերմանացիները գերեվարում են բազմահազար զինվորների, որոնց թվում էին զգալի քանակության հայեր: Այդ գերիներից շատերին, ինչպես նաեւ գրավյալ տարածքների բնակիչներին՝ կանանց ու երեխաներին, քշում էին Գերմանիայի խորքերը՝ աշխատեցնելու հանքավայրերում եւ բանվորական բրիգադներում:Նույն ճակատագիրը սպառնում էր նաեւ թերակղզում ու Հյուսիսային Կովկասում բնակվող հայությանը:

«Ասիկա, - գրում է Մ. Թորլաքյանը, - համատարած կարգադրութիւն էր բովանդակ Եւրոպայի մէջ, ուր մուտք էր գործած գերման զէնքը: Խրիմի շրջանէն առաջին մեծ խումբին մէջ, ուր տարին դէպի Գերմանիա, կային 10-12 հայեր: Երկրորդ խումբին մէջ, զոր հաւաքած էին որ քշեն, 48 հայեր:Անմիջապէս լուր տուինք Դրոյին, որ յաջողեցաւ առաջքը առնել: Եւ որովհետեւ գերմանները չէին կրնար բացառիկ կարգադրութիւն ընել միայն հայերու համար, ուստի հրամայեցին բացառութիւն ընել բոլոր կովկասցիներուն: Այնուհետեւ այսպիսի խումբերու մէջ որեւէ հայ չմտցուցին»[1]:

Ղրիմում եւ Հյուսիսային Կովկասում Դրոյի խմբի գործունեությունը հիմնականում ծավալվում է հայ ռազմագերիներին փրկելու ուղղությամբ: Նրանց համառ եւ քրտնաջան աշխատանքը տալիս է իր դրական արդյունքը:

«Գերմանները, - շարունակում է Մ. Թորլաքյանը, - կարմիր բանակի հայ գերիներու մէկ մասը տարին Ջանքէօյ (Խրիմ), մէկ մասը Ֆէոդոսիա եւ մէկ մասն էլ Կերչի մէջ պահեցին: Այստեղի ճամբարներուն մէջ մահուան ենթականերու տոկոսը շատ բարձր էր, որովհետեւ խիստ ձմեռ էր: Ջանքէոյի ճամբարներէն յաջողեցանք մէկ անգամ ազատել 350 հոգի, բերինք բոլորն ալ Սիմֆերոպոլ...

Հետագային անոնք մասնաւոր արտօնագրեր ստացան, ազատ կացուցեցան եւ հոս հոն մեկնեցան:

[1] Նույն տեղում, էջ 522:

Նույն ձեւով ազատեցինք նաեւ Ֆէոդոսիայի, Կերչի եւ Սիմֆերոպոլի ճամբարներու գերիները: Կրնամ համարձակ ըսել, որ մեր ընդհանուր աշխատանքներու եւ կապերու շնորհիւ կրցանք փրկել մօտ 2000 հայ ռազմագերիներ»[1]:

Ղրիմի մահվան ճամբարներում տիրող սոսկալի իրավիճակի եւ հայ ռազմագերիների փրկության գործում Դրոյի ու նրա գործընկերների ցուցաբերած հայրենանվեր գործունեության վերաբերյալ արժանահիշատակ հուշեր է պատմում Կոտայքի մարզի Քասախ գյուղի բնակիչ Վազգեն Արտաշեսի Քոչարյանը, որի վկայությունները, որպես դեպքերի մասնակցի ու ականատեսի, ավելի էին հավաստի դարձնում եւ ամբողջականացնում Միսաք Թորլաքյանի հուշագրությունները:

1941 թ. վերջերին խորհրդային բանակի հրամանատարության կողմից Ղրիմի թերակղզին պաշտպանելու նպատակով ձեռնարկված հերթական ռազմական գործողություններից մեկի ճախողման ժամանակ Վազգեն Քոչարյանը 1942 թ. հունվարի 16-ին ուշակորույս վիճակում հայտնվում է գերմանական գերության մեջ: Նրան եւ հազարավոր ռազմագերիների գերմանացիները տեղափոխում են Մ. Թորլաքյանի հիշատակած Ջանքոյի ճամբարները, որտեղ սովի, սառնամանիքի, արսափելի պայմանների հետեւանքով յուրաքանչյուր օր հարյուրավոր մարդիկ էին մահանում :

«Ջանքոյի գերիների ճամբարում, - պատմում է Վազգեն Քոչարյանը, - պայմանները շատ ծանր էին, օրական մի քանի տասնյակ, հարյուրավոր դիակներ էին գերմանացիները լցնում փոսերը: Զգիտեմ, ինչ կլիներ մեր վիճակը, եթե մեզ չհասներ հայերի օգնությունը: Ջանքոյի ճամբարը եկավ հայ խնամակալ Մուրադյանը, որի հետ էր նաեւ զորավար Դրոն: Նրան ներկայացնելով մեզ՝ խնամակալ Մուրադյանը ասաց. «Գեներալ Դրոն է»: Երկուսն էլ քաղաքացիական հագուստով էին, սեւ թիկնոցներով, միջահասակ եւ լայնաթիկունք: Հայտարարեցին, որ եկել են մեզ այս ծանր վիճակից ազատելու: Հունվարից մինչեւ մարտ ամիս գերմանացիները ոչ մի մթերք չէին տվել գերիներին»:

Հետաքրքիրն այն է, որ հայ ռազմագերիներին ազատելիս Դրոն եւ իր գործընկերները առաջնորդվել են հենց գերիների կամքով ու ցանկությամբ: Գերիների նկատմամբ չի եղել որեւէ սպառնալիք ու հարկադրանք:

[1] Նույն տեղում, էջ 525:

«Մուրադյանն ու Դրոն,- շարունակում է Վ.Քոչարյանը,- ասացին, որ ազատվելը պետք է լինի մեր ցանկությամբ, որպեսզի հետագայում մեզ չմեղադրեք...

Ձեզ ոչ Հիտլերն է պետք, ոչ էլ Ստալինը: Ձեզ հարկավոր է տարբեր բնույթի աշխատանքներ կատարել, որպեսզի ոչ մի դեպքում ռազմաճակատում չհայտնվեք ու փրկվեք: Պատերազմը կվերջանա, կգնաք ձեր տները»:

Մարտի վերջերին Ջանքոյի մահվան ճամբարներից փրկված ռազմագերիներին, որոնց թվում նաեւ Վազգեն Քոչարյանին, Դրոն եւ նրա գործընկերները տեղափոխում են Սիմֆերոպոլ:

«Ջանքոյից Սիմֆերոպոլ, շարունակում է Վազգեն Քոչարյանը,- երեք օրվա ճանապարհը անցանք ոտքով: Ավտոմեքենան եւ սայլերը տանում էին վիրավորներին, հիվանդներին եւ ուտեստեղենը: Ցուրաքանչյուր 3-4 կմ անցնելիս կանգ էինք առնում, հանգստանում, ապա նորից շարունակում ճանապարհը: Քանի որ անչափ հյուծված էինք, մեզ ուղեկցող բժիշկը թույլատրում էր մեզ հաճախակի ուտել միայն հաց, այն էլ փոքր քանակությամբ: Ամբողջ ճանապարհին մեզ հետ միասին ոտքով քայլում էին նաեւ Մուրադյանն ու Դրոն: Հայ խնամակալը՝ Մուրադյանը, ինձ ծանոթացրեց Դրոյի հետ, գեներալը վերին աստիճանի համեստ էր եւ հայրենասեր: Հասանք Սիմֆերոպոլ, որտեղ կային շատ գերիներ, անմիջապես մեր բոլորի հագուստները հանեցին եւ ախտահանեցին: Ինձ հետ էին Գրիգորյան Մամիկոնը, որն այժմ ապրում է Նորքի 5-րդ զանգվածում, Ապարանի Քասախ գյուղից Միսաքը, Թոռնիկը, Հովսեփը, Ամրոն, Ռուբենը, մարտունեցի Հայկը, Ներքին Գետաշենից Գվիդոնը, Վարդենիկից Միրզոն, Երեւանից Պողոսը, Ամասիկը եւ այլք...

Նրանք հետագայում բոլորն էլ տարբեր ճանապարհներով ողջ առողջ վերադարձան իրենց տները:

Սիմֆերոպոլում պայմաններն անհամեմատ լավ էին: Կարող եմ վստահորեն խոստովանել, որ Դրոյի եւ խնամակալ Մուրադյանի շնորհիվ ստույգ մահվան սպառնալիքից փրկվեցին Ջանքոյի ճամբարներում գտնվող ավելի քան 300 հայեր, որոնց թվում նաեւ ես ու իմ կողմից հիշատակվածները»:

Գերմանական գերությունից ու համակենտրոնացման ճամբարներից Դրոյի եւ նրա զինակիցների ջանքերով փրկված բազմահազար հայերից շատ շատերը իրենց զավակների հետ ապրում են Հայաստանում: Բազմաթիվ են այն հայերը, որոնք, գտնվելով

գերմանական գերության մեջ, չփվել են Դրոյի հետ ու երախտագիտությամբ եւ մեծ համակրանքով են հիշում նրան ու նրա զինակիցների հայրենանվեր գործունեությունը:

Մինչեւ 1942թ. հոկտեմբերի 15-ը Պուլավայում կազմավորված գումարտակները մնում են Լեհաստանում: Հոկտեմբերի 16-ին այդ գումարտակների մարտիկներին, որոնց կազմում էր վերոհիշյալ Աշոտ Սարգսյանը, տեղափոխում են Վարշավայի երկաթուղային կայարան, ապա նստեցնում վագոններն ու տեղափոխում Խորհրդային Միություն՝ Հյուսիսային Կովկասի Արմավիր քաղաքը, ուր նրանց դիմավորում է Դրոն:

Նոյեմբերի 4-ին Արմավիրի հրապարակում մարտական շարքերով զգաստ կանգնած, Հայկական լեգեոնի գումարտակները պիտի ընդունեին Դրոյի ողջույնը:

Վերհիշելով այդ հիշարժան պահը՝ վերոհիշյալ Աշոտ Սարգսյանը գրում է. «Նժույգի վրա հայտնվեց զորապետը:

Լսվեց գումարտակի հրամանատարի հրամանը.

- Գումարտա՛կ, զգա՜ստ - ուշադրություն զորավարին: Պարո՛ն զորավար, Հայկական լեգեոնի առաջին գումարտակը լրիվ կազմով սպասում է Ձեր հայրական օրհնությանը:

- Ողջույն Ձեզ, իմ հայ արծիվներ... Բոլորիդ փոխարեն համբուրում եմ Ձեր սրբի պես պաշտելի հայկական դրոշը: Այս դրոշը լավ պահեցեք, դա ձեր հայրերի ու պապերի արյունով ձեռք բերած ազատ ու անկախ Հայաստանի դրոշն է...

... Իմ սիրելի որդիներ՝ Ձեզ փրկելով սովից ու մահից, պարգեւել ենք ազատություն ու զենք, որ այսօր Հայաստանի անկախության համար ոչինչ չխնայեք: Բարի ճանապարհ, սիրելի զավակներ, հանուն հայրենիքի անկախության...»[1]:

Որեւէ գաղտնիք չէ, որ Հայկական լեգեոնի կոչումը եւ կազմավորման նպատակը բնավ էլ Խորհրդային Միության եւ նրա դաշնակիցների դեմ կամ ի շահ Գերմանիայի հաղթանակի մարտնչելը չէր: Լեգեոնականների զգալի մասը լքում է իրենց զորամասերը եւ տարբեր ուղությամբ հեռանում: Հարյուրավոր լեգեոնականներ կամովին հանձնվում են խորհրդային հրամանատրության եւ նրա դաշնակիցների տնօրինությանը: Իսկ լեգեոնի այն մարտիկները, որոնք չէին լքել իրենց զորամասը, գերմանական զորքերի նահանջից հետո նույնպես հեռանում են

[1] «Կանչ Նախնյաց», 1993, 12 հոկտեմբերի:

Խորհրդային Միությունից եւ տեղափոխվում Եվրոպայի տարբեր երկրներ:

Հիշատակված հուշագրության հեղինակ Աշոտ Սարգսյանը 1945 թ. Եվրոպայից վերադառնում է Խորհրդային Միություն, բայց դեռեւս հայրենիք չհասած՝ կիսում է շատ շատերի ճակատագիրը, ձերբակալվում է Օդեսայում ու աքսորվում Սիբիր եւ մի քանի տարի տաժանակրության մեջ մնալուց հետո վերադառնում է իր հայրենի գյուղ[1]:

Հյուսիսային Կովկասում Դրոյի ծավալած գործունեությունից մի ուշագրավ դրվագ են պատմում նրա հորեղբոր՝ Հովհաննեսի թոռը՝ Բագրատ Կանայանն ու նրա կինը՝տիկին Անահիտը, որը այդ պատմությունը տարիներ առաջ լսել է ամուսնուց:

Բագրադ Կանայանը եղել է սամբո ըմբշամարտի Հայաստանի չեմպիոն եւ 1963 թ. հավաքականի կազմում մեկնել է Գրոզնի քաղաք՝ մասնակցելու այնտեղ տեղի ունեցած համամիութենական մրցումների:

Գոտեմարտի ընթացքում երբ հայտարարել են Կանայան ազգանունը, ավարտին նրան է մոտեցել մի անծանոթ հայ մարդ եւ հարցրել, թե նա որեւէ ազգակցական կապ ունի գեներալ Դրաստամատ Կանայանի հետ: Բագրատը, որը մինչ այդ չէր լսել Դրաստամատ Կանայան անունը, պատասխանում է, որ ինքը ազգակցական կապ չունի Դրաստամատ Կանայանի հետ ու երբեւէ չի լսել այդ մարդու անունը: Մրցումներն ավարտվելուց հետո, այդ նույն անծանոթ հայ մարդը Բագրատին հրավիրում է հյուր եւ նրան ավտոմեքենայով տանում է Գրոզնի քաղաքից 50-70 կմ հեռավորության վրա գտնվող մի հայաբնակ գյուղ:

«Երբ հասանք գյուղ, -պատմում է Բագրատը,-ինձ տարան մի շքեղ տուն, որտեղ մեծ թվով մարդիկ էին հավաքվել, իսկ ընդարձակ դահլիճի սեղանների վրա շարված էին տարբեր տեսակի ուտելիքներ ու ոգելից խմիչքներ: Ինձ ուղեկցող հայ մարդը դիմելով հավաքվածներին՝ նախ ներկայացեց ինձ որպես մրցումների հաղթող, ապա ասաց, որ իրենց հյուրն է գեներալ Դրաստամատ Կանայանի թոռը՝ Բագրատ Կանայանը: Լսելով գեներալ Դրաստամատ Կանայան ու իմ անունները՝ հավաքվածներն անմիջապես ոգեւորվեցին եւ մեծ ջերմությամբ ու ծափողջույններով ընդունեցին ինձ: Ես զարմացած էի ու շփոթված եւ չէի հաս-

[1] Նույն տեղում, 26 հոկտեմբերի:

կանում, թե ինչ է կատարվում: Ներկանների պատմածներից պարզվում է, որ 1942 թ., երբ Խորհրդային Միության զորքերը պատերազմի ժամանակ նահանջել են, իրենց գյուղացիների խնամքին են թողել վիրավոր մի քանի կարմրբանակայինների: Երբ գերմանացիները գրավել են գյուղը, ինչ-ինչ աղբյուրից տեղեկանալով՝ հայտնաբերել են այնտեղ պատսպարված վիրավոր զինվորներին ու որոշել են այդ արարքի համար խստագույն պատժի ենթարկել գյուղի բնակչությանը:

Գերմանացի զինվորները բռնությամբ հավաքել են բնակիչներին, լցրել են գոմերն ու սպառնացել կենդանի-կենդանի այրել նրանց: Բարեբախտաբար, Դրոն այդ ժամանակ գտնվում էր Հյուսիսային Կովկասում: Տեղեկանալով գյուղի հայ բնակչությանը սպառնացող սարսափելի աղետի մասին՝ նա անմիջապես կապվում է Բեռլինի, այդ տարաշրջանում գտնվող գերմանական բանակի հրամանատարության հետ, իսկ հանդիպման մասնակիցների պնդմամբ՝ անգամ Հիտլեր հետ եւ կարողանում անխուսափելի կոտորածից փրկել գյուղի բնակչությանը:

Գյուղացիների համոզմամբ, եթե այդ ժամանակ չլիներ Դրոյի միջամտությունը, գերմանացիներն անպայման կայրեին գոմերում բանտարկված իրենց համագյուղացիներին ու այսօր իրենց գյուղը գոյություն չէր ունենա:

«Մենք, մեր գյուղի ողջ բնակչությունը,- ասում էին այդ հանդիպման մասնակիցները,- մեր փրկությամբ պարտական ենք գեներալ Դրաստամատ Կանայանին»:

Ինչպես արդեն նշվել է, Հայկական լեգեոնը բաղկացած էր 11 հետեւակային գումարտակներից: Ճիշտ է Հայկական լեգիոնի մեծ մաս մեծ մասը, շնորհիվ Դրոյի ծանոթությունների եւ գործադրած ջանքերի, տեղափոխվել էր արեւմտյան ճակատ, հատկապես Հոլանդիա, այնուամենայնիվ, լեգեոնի 808 եւ 809-րդ գումարտակները Լեհաստանից տեղափոխվել են ԽՍՀՄ տարածք ու կռվել ընդդեմ խորհրդային զորքերի:

808-րդ հայկական հետեւակային գումարտակը կազմավորվել է 1942 թ. Լեհաստանի Պուլավա քաղաքում: Գումարտակ, որի կազմում եղել են 916 հայ եւ 41 գերմանացի զինվորներ, մասնակցել է Տուապսեի շրջանում տեղի ունեցած մարտերին: Գերմանական հրամանատարությունը այդ գումարտակին գնահատել է որպես անվստահելի:

Գումարտակում գործել է անլեգալ խումբ, որն աշխատում էր լքել գերմանացիներին ու անցնել Կարմիր Բանակի կողմը: 1942 թ. հոկտեմբերին այդ գումարտակը զինաթափվել ու վերածվել է որպես ճանապարհաշինարարական զորամաս:

809-րդ հայկական հետեւակային գումարտակը(Զեյթուն) կազմավորվել 1942 թ. նոյեմբերի 18-ին՝ դարձյալ Լեհաստանի Պուլավա քաղաքում:

Գումարտակի թվակազմն էր. 913 հայ եւ 45 գերմանացի:

1942 թ. նոյեմբերից մասնակցել է Հյուսիսային Կովկասում, մասնավորապես Կուբանի, Նալչիկի, Մոզդոկի շրջաններում եւ Կերչի թերակղզում տեղի ունեցած կռիվներին: Ի տարբերություն 808-րդ գումարակի, 809-րդ հետեւակային գումարտակը, որի սպաներն ու զինվորները համակված էին արիական գաղափարախոսությամբ ու Հայաստանը Խորհրդային Միության կազմից դուրս բերելու եւ անկախ պետականություն հաստատելու նպատակադրությամբ, Հյուսիսային Կովկասում ընթացող կռիվներում իրենց դրսեւորել են խիզախությամբ ու անգամ ահ ու սարսափ են մատնել հակառակորդին: Այդ գումարտակը իր մարտական մկրտությունը ստացել էր դեռեւս Պուլավայի զինվորական ճամբարում գտնվելու օրերին: Լեհ պարտիզանները բազմիցս հարձակվել են լեգեոնի ճամբարի վրա եւ յուրաքանչյուր անգամ հանդիպելով հայ լեգեոնականների դիմադրությանը՝ չեն կարողացել գրավել ճամբարն ու նահանջել են: Լեհ պարտիզանների դեմ մղած կռիվներում հայ լեգեոնականները իրենց դրսեւորել են քաջաբար եւ կարողացել են անառիկ պահել իրենց ճամբարը, որտեղ նրանց մարզում ու մարտավարության դասեր էին ուսուցանում:

1943 թ. հեկտեմբերի 16-ին այդ գումարտակը տեղափոխվել է Հոլանդիա, ապա Բելգիա իսկ 1944 թ. օգոստոսին՝Նորմանդիա, որտեղ հանձնվել է դաշնակիցների զորքերին:

Խորհրդային Միության անվտանգության ծառայություններին անկասկած քաջատեղյակ էին Ղրիմում, Հյուսիսային Կովկասում Դրոյի ու Հայկական լեգիոնի 808 եւ 809-րդ գումարտակների գտնվելու իրողությունը: Ավելին, խորհրդային անվտանգության ծառայությունների համար որեւէ գաղտնիք լինել չէր կարող նաեւ մարտական գործողություններին նրանց մասնակցությունն ու մարտերում դրսեւորած ռազմական կարողություններն ու մարտնչելու վարպետությունը:

Դրոն, ճիշտ է, պատերազմի ժամանակ եղել է Ղրիմում եւ Հյուսիսային Կովկասում, սակայն անձամբ չի մասնակցել կռիվներին: Հայկական լեգիոնի գումարտակների մարտական գործողությունները ղեկավարել է ոչ նա, այլ այդ գումարտակների հրամանատարներ: Սակայն նրա գործունեության հիշյալ ժամանակահատվածին վերաբերող սակավաթիվ փաստաթղթերից մեկի տեղեկացմամբ՝ պարզվում է, որ նա, այնուամենայնիվ, հարկադրված է եղել ղեկարել Հյուսիսային Կովկասում թուրք-ազերի զինվորների հետ տեղի ունեցած կռիվներից մեկը, որն ավարտվել է լեգիոնի լիակատար հաղթանակով[1]:

Այդ փաստաթղթում չի նշվում նրա գլխավորությամբ տեղի ունեցած կռվի ստույգ վայրը, թուրք-ազերի զինվորների քանակը, զորամասի տեսակը եւ կռվին մասնակցած հայկական գումարտակի անվանումն ու համարը: Ելակետ ունենալով այն իրողությունը, որ 808-րդ գումարտակը աչքի չի ընկել իր մարտունակությամբ ու գնահատվել է որպես անվստահելի, հետեւաբար, կարելի է եզրակացնել, որ խոսքը վերաբերում է 809 -րդ գումարտակին:

Այս հարցը մասամբ ստացավ իր պատասխանը, երբ «Հայ զինվոր» թերթում լույս ընծայվեց Հյուսիսային Կովկասում Դրոյի գլխավորությամբ հայկական լեգիոնի մղած կռիվներից մեկի մասին պատմող հայ արձակագիր Նոր-Այրի[2]* հուշերը, որը ժամանակին երջանիկ պատահականությամբ գրի է առել ու «Հայ զինվոր» թերթում «Դրոյի, նրա լեգիոնի եւ ազրբեջանական դիվիզիայի մասին(հուշ)» խորագրով, տպագրել է պատմական գիտությունների թեկնածու Արտյուշա Սանոսյանը[3]*:

[1] Տե՛ս Տե՛ս ՀՅԴ ԿԱ, ֆ. Ս. Վ., թթ. 46, գ. 5բ:

[2] * Նոր-Այր (Նորայր Ալեքանդրի Հարությունյան (1912-1981) հայ ածակագիր, լրագրող, ԽՍՀՄ գրողների միության անդամ 1934 թ-ից:

Սկզբում գրական անուն ընտրել է պապի ազգանունը՝ Հովնանյան եւ գրվել է Նորայր Հովնանյան: 1932 թ-ին եղիշե Չարենցը ջնջելով նրա Հովնանյան ազգանունը՝ կնքում է նրան Նոր-Այր անունով:

Աշխատել է ՀԿԿ կենտկոմում որպես հրահանգիչ, ապա մամուլի, գրականության ու արվեստի բաժանմունքի վարիչ, հետագայում վարել է գրական ֆոնդի հայկական բաժանմունքի տնօրենի պաշտոնը:

Մասնակցել է Հայրենական պատերազմին, ծանր վիրավորվել է Կրակովում: 1957-74 թթ. –ին եղել Հայաստանի գրողների միության Կիրովականի (Վանաձոր) բաժանմունքի պատասխանատու քարտուղարը:

[3] **Արյուշա Սանոսյանը ծնվել է 1937 թ, Վրաստանի հանրապետության Բոգդանովկայի շրջանի Սաթխա գյուղում: 1989 թ, ընտանիքով տեղա-

Գրող Նոր-Այրի հետ Ա. Սանոսյանը ծանոթացել է 1960 թ. դեկտեմբերին: Նա այդ ժամանակ ուսանել է Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի 5-րդ կուրսում եւ Հայաստանի կենտկոմի 1-ին քարտուղար Թովմասյանի ու 2-րդ քարտուղար Զարուբյանի օժանդակությամբ, իրենց դասախոս Վ. Քոսյանի ղեկավարությամբ կուրսով մեկնել էին էքսկուրսիա՝ Մոսկվա եւ Լենինգրադ:

«Մոսկվայի կառամատույցում,-գրում է Ա. Սանոսյանը,- մեր վագոն բարձրացավ մի միջահասակ հայ մարդ: Շուտով իմացանք, որ Հայաստանի գրողների միության Կիրովականի բաժանմունքի պատասխանատու քարտուղար Նոր-Այրն է »[1]:

Հայ գրողի հետ հանդիպումը, նրա հետ զրուցի բռնվելելն ապագա մանկավարժների համար անշուշտ մեծ հետաքրքրություն է առաջացրել: Նրանք չրջապատելով գրողին՝կլանված լսել են տարբեր հարցերին վերաբերող նրա հետաքրքիր պատմություններն ու հիշողությունները: Հենց այդ ժամանակ էլ Նոր-Այրը հիշատակել է Դրոյի անունը:

Արտյուշա Սանոսյանի խոստովանությամբ՝ «Մեզ առանձնապես հետաքրքրեց Դրոյի (Դրաստամատ Կանայան) մասին նրա պատմածը...»[2]:

Այդ ժամանակ ուսանողները Դրոյի գործունեության մասին այնքան էլ տեղեկացված չէին, միայն գիտեին, որ նրա եղբայրը դասավանդում է համալսարանում եւ զարմացած էին, որ նրան Դրոյի պատճառով չեն ձերբակալել[3]:

Ի զարմանս ուսանողների՝ ՀԿԿ կենտկոմում մի շարք բարձր պաշտոններ զբաղեցած կոմունիստ գրողը իր կուսակցության կողմից մշտապես պարսավանքի արժանացած մեկ այլ

փոխվել է Հայաստան եւ բնակություն հաստատել Նայիրիի շրջանի Բուժական գյուղում: Ավելի քան տասը տարի Հայոց պատմություն եւ աշխարհագրություն է դասավանդել Նաիրիի շրջ. Բուժական գյուղի միջնակարգ դպրոցում : Այժմ բնակվում է Երեւանում:

Ա, Սանոսյանի կողմից գրի առած Դրոյի մասին պատմող Նոր-Այր հուշերը փոքր-ինչ ավելի մանրասնությամբ՝ ձեռագիր , գտնվում է տողերիս հեղինակի անձնական արխիվում:

[1] «Հայ զինվոր», 2014, թիւ 24:

[2] Նույն տեղում:

[3] Ճշտում. ոչ թե Դրոյի եղբայրն է դասավանդել համալսարանում, այլ նրա հորեղբորորդիները՝ Խաչատուր Մկրտչի Կանայանը, որը հայագիտական առարկաներ է դասավանդել ԵՊՀ-ում եւ Հայկ Մկրտչի Կանայանը, որը ակնաբանություն է դասավանդել ԵՊՀ-ի բժկության ֆակ-ում:

կուսակցության, այն է՝ Հ. Դ. Դաշնակցության ամենանշանավոր գործիչներից մեկին՝ «Դրոյին, ներկայացնում էր բոլոր բարեմասնություններով՝ այնպես, ինչպես եղել էր: Դրոն նրա գնահատմամբ իսկական ազգային հերոս էր՝ իր գործունեության բոլոր շրջաններում»[1]:

Նոր-Այրը պատերազմի ժամանակ ծառայել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի կազմում գտնվող ազգային խառը կազմ ունեցող դիվիզիաներից մեկում: Այդ նույն ժամանակ Հյուսիսային Կովկասում էին նաեւ Դրոն եւ Հայկական լեգեոնի 808-րդ եւ 809-րդ գումարտակները:

Համաձայն Նոր-Այրի պատմածի՝ «Մի օր վաղ առավոտյան մեր դիվիզիան տագնապով հանեցին ոտքի և սկսեցին նախապատրաստել մարտի: Հրամանատարները բացատրեցին, որ այս անգամ մեր դիվիզիայի հակառակորդը գերմանացիների կողմից կռվող Դրոյի հայկական լեգիոնն է, որը, ինչպես հայտնի է, շատ ամուր ընկույզ է...

Բոլորս սարսափի մեջ էինք...

Կարմիր բանակի Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը Կովկասի նախալեռներում Դրոյի լեգիոնի դեմ էր հանել ադրբեջանական մեկ դիվիզիա: Դա, իհարկե, արվել էր գիտակցաբար: Նկատի էին ունեցել, որ հայ լեգիոնականների դեմ առանձնահատուկ ջանադրությամբ կկռվեին ադրբեջանցիները (կովկասյան թուրքերը), որոնք գործի կդնեին իրենց ցեղին հատուկ ատելությունը հայերի նկատմամբ, որ այնքան բացահայտ դրսեւորվել էր 1917-1920 թվականներին...

Ինչ խոսք, Դրոյի հայ լեգիոնականները նույնպես գիտեին, թե ում դեմ են կռվում...»[2]:

Որեւէ կասկած լինել չի կարող, որ եթե մարտադաշտում լեգիոնի հակառակորդը լիներ խորհրդային մեկ այլ դիվիզիա, այլ ոչ թե ադրբեջանական, ապա համաձայն ընդունված կարգի ու իր դավանանքի՝ Դրոն չէր մասնակցի մարտական գործողություններին:

Ինչպես արդեն նշվել է, ամենայն հավանականությամբ այդ կռվին մասնակցել է 809-րդ գումարտակը, որի թվակազմն էր. 913 հայ եւ 45 գերմանացի: Ադրբեջանական դիվիզիան իր թվակազմով(15.000 զինվոր) թեեւ բազմիցս գերազանցել է 809-րդ

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

գումարտակին, բայց իր կազմակերպածությամբ, կռիվներ մղելու վարպետությամբ զգալիորեն զիջել է հայկական գումարտակին: Իսկ Դրոն մեկ անգամ չէ, որ անհամեմատ փոքրաքանակ ուժերով պարտության է մատնել անգամ 1-ին աշխարհամարտի կռիվներում թրծված փորձառու հրամանատարների գլխավորությամբ մարտնչող թուրքական կանոնավոր զորամասերի, որոնք իրենց մարտունակությամբ անտարակույս ավելի բարձր էին ադրբեջանական դիվիզիայից:

Այդ կռիվը, որը իրավամբ կարելի է անվանել Դրոյի վերջին հաղթական ճակատամարտ, համաձայն Նոր-Այրի վկայության ընթացել է հետեւյալ ուղղվածությամբ. «...Չնայած ադրբեջանցիների թվական գերակշռությանը, ճակատամարտն ավարտվել է Դրոյի լեգեոնի փայլուն և լիակատար հաղթանակով, ամբողջովին ոչնչացվել էր ադրբեջանական տասնհինգհազարանոց դիվիզիան:

...Ամբողջ դիվիզիայից փրկվել էր միայն 300 զինվոր, այն էլ՝ իրենց արագավազության շնորհիվ:

Մարտից հետո բզկտված, քրքրված զինվորական արտահագուստով այդ ողորմելիներին հավաքել էին մարտադաշտի մերձակա անտառներից,-այդպես ավարտեց Նոր-Այրն իր խոսքը...»[1]:

Ըստ Նոր-Այրի պատմածի՝ այդ զարմահրաշ հաղթանակից հետո լեգիոնն այնպիսի սարսափ է առաջացրել, որ խորհրդային զորամասերը խուսափել են նրա հետ առճակատելուց:Նոր-Այրն այդ ժամանակ ծառայել է դիվիզիաներից մեկի շտաբում եւ մշտապես ուղեկցել է դիվիզիայի հայազգի շտաբի պետին: Ըստ նրա վկայության, իրենց դիվիզիան նույնպես խուսափել է լեգեոնի հետ ընդհարվելուց:

Այդ նույն փաստաթղթում, ինչպես արդեն նշվել է, նկարագրվում է, թե ինչպես է Հյ. կովկասից հեռանալու ժամանակ նա ու նրան ուղեկցող մարտիկներն անսպասելի հարձակման են ենթարկվել խորհրդային հատուկ նշանակության ջոկատի կողմից , բայց կարողացել են ազատվել գերի ընկնելուց: Դեպքը տեղի է ունեցել 1943 թ. ամռանը՝ Կուբանի շրջանում, երբ կարմիր բանակի հարձակման հետեւանքով գերմանական զորքերը հարկադրված սկսել էին թողնել գրավյալ տարածքներն ու նահանջել:Քանի որ գերմանական զորքերը անկարող լինելով դիմակայել խորհրդային զորքերի հարձակմանը, հարկադրված նա-

[1] Նույն տեղում:

հանջում էին Հյուսիսային Կովկասից, Դրոյի եւ նրա խմբի ներկայությունն այլեւս ոչ միայն անիմաստ ու աննպատակ էր, այլեւ չափազանց վտանգավոր: Նա նույնպես Հյուսիսային Կովկասից պիտի հեռանար Կերչի թերակղզի, ապա Ղրիմ ու այնտեղ սպասեր դեպքերի հետագա զարգացմանը:

Հարկ է նշել, որ Կովկասյան ռազմաճակատի հատուկ նշանակության ջոկատները բազմից փորձել էին գտնել ու գերավարել Դրոյին, բայց երբեք չեն կարողացել գտնել նրա հետքերն ու գտնվելու ստույգ վայրը: Համաձայն վերոհիշյալ փաստաթղթի վկայության, երբ Կարմիր բանակի հարձակման հետեւանքով գերմանական զորքերը հարկադրված հեռացել են Հյ. Կովկասից, ռազմաճակատի հետախուզական ծառայությունը կարողանում է գտնել Դրոյի գտնվելու տեղը ու հատուկ նշանակության ջոկատներից մեկը նրան ձերբակալելու հանձնարարությամբ շտապ մեկնում է նախանշված վայրը: Այդ ժամանակ Դրոյի հետ են եղել սահմանափակ քանակությանբ մարտիկներ, որոնք ամիսներ շարունակ պատսպարվելով Մայկոպի մերձակա լեռներում, կռվել էին խորհրդային զինվորների դեմ:

Մ. Թորլաքյանի հավաստմամբ՝ այդ մարտիկները «... Տրապիզոնի, Իունէյի և Զարշամպայի շրջանները լեռներու մէջ կռուած տղոնցմէ մաս մը, որոնք ազատուած էին և 1923-ին անցած Ռուսաստան, այժմ Մայքոպէն 30-40 քիլոմեթր հեռուն, կը կռուէին կարմիրներում դէմ...»[1]:

Դրոն, երբ Կուռո Թարխանյանի ընկերակցությամբ եղել է Կրասնադարում, տեղեկանալով Մայկոպի լեռներում կռվող հայ տղաների մասին, հանձնարարում է Միսաք Թորլաքյանին, որ «...կապուիմ լեռներու մէջ վերոյիշեալ կռուողներու հետ, նաեւ անցնիմ Նովորոսիսկ և այնտեղ տեսնեմ հայերու վիճակը...»[2]:

Կրասնոդարից Մ. Թորլաքյանը անցնում է Մայկոպ եւ նրա մերձակա լեռների մեջ հանդիպում է կռվող տղաներին:

«Ընդամենը,-գրում է Մ. Թորլաքյանը,- 20-25 հոգի, ուղղակի բերանն էին ռուսական յառաջխաղացքին, որուն դէմ կկռուէին: Անոնք տիրական դարձած էին իրենց լեռներուն մէջ»[3]:

Երբ խորհրդային զորքերն անցնում են հարձակման, այդ տղաների մի մասը գալիս է Կրասնոդար ու ներկայանում Դրոյին: Այն պա-

[1] Թորլաքեան Մ., նշվ. աշխ., էջ 529:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 532:

հին, երբ Դրոյի խումբը հարձակման է ենթարկվել խորհրդային հատուկ նշանակության ջոկատի կողմից, նրան ուղեկից մարտիկները եղել են Մ. Թորլաքյանի թվարկած Մայկոպի լեռներում կռվող 20-25 տղաների մի մասը: Նրանք ձիաբեռնակառքերի վրա նստած շարժվել են անտառապատ խճուղիով ու անսպասելիորեն հարձակման ենթարկվել խորհրդային զինվորների կողմից, որոնք փորձել են շրջապատել ու գերի վերցնել նրանց: Ի՞նչ պիտի արվեր: Եթե չկռվեին, չփորձեին պաշտպանվել, ապա անպայմանորեն կհայտնվեին գերության մեջ, որը հավասարազոր էր մահվան: Ստեղծված իրավիճակում այլընտրանք գոյություն չուներ: Անհրաժեշտ էր վճռական քայլեր ձեռնարկել, խափանել հակառակորդի հարձակումը, ճեղքել պաշարման շղթան ու հեռանալ: Եւ վերջին անգամ Դրոն դրսեւորում է անվրեպ նշանառու ռազմիկի իր անզուգական վարպետությունը: Նա, վերցնելով մաուզեր ատրճանակն ու կարաբին հրացանը, իջնում է ձիաբեռնակառքից ու յուրաքանչյուր հարվածով տապալով իրենց վրա հարձակվող բազմաթիվ զինվորների, հարթում է ճանապարհը: Նրա անվրեպ հարվածներից ու մարտական անբասիր կեցվածքից ոգեւորված՝ նրան ուղեկցող մարտիկները նույնպես ցույց են տալիս արժանի դիմադրություն ու համատեղ ջանքերով հետ մղելով հատուկ նշանակության ջոկատի հարձակումը՝ ճեղքում են պաշարման շղթան ու առանց որեւէ զոհ տալու՝ արագորեն հեռանում վտանգված տարածքից[1]:

Հյուսիսային Կովկասում եւ Ղրիմում գործելու ընթացքում Դրոյի գործունեությունը նպատակաուղղված էր ոչ միայն ի շահ այդ շրջաններում բնակվող հայ բնակչության անվտանգության ապահովմանն ու ռազմագերիների փրկությանը: Նա իր զինակիցների համագործակցությամբ պիտի կենսագործեր եւս մի կարեւորագույն առաքելություն:

Ստալինգրադի ճակատամարտից հետո Աբվերի ղեկավարության որոշմամբ պիտի կազմավորվեր հայկական հատուկ նշանակության խումբ, որին միանալու էր նաեւ Դրոյի գլխավորած 70 հոգանոց խումբը: Այդ խմբին տրվել է հատուկ նշանակության «Դրոմեդար» անվանումը: Խումբը ղեկավարել է Դրոն: Նա էլ նշանակել է իրեն տեղակալներ «...այսպես կոչված «Ազատագ-

[1] Տե՛ս ՀՅՊ ԿԱ, Ֆ. Ս. Վ., թթ. 51, գ.15բ, էջ 3-4:

բական կոմիտեի» լիդերներից Կուռոյին (Նիկոլայ Թարխանյան), չտաբի պետ է նշանակվել Տիգրան Բաղդասարյանը: Հետախուզական-դիվերսիոն գործողությունների պատասխանատուն էր Միսաք Թորլաքյանը...»[1]:

Աբվերի նախատեսմամբ՝ այդ խումբը պիտի «Ցունկերս ինքնաթիռով գիշերով տեղափոխվեր Հայաստան, բայց ռազմաճակատում իրավիճակի վատթարացման հետեւանքով այդ ծրագիրը չի իրականացվում: Եթե նույնիսկ այդ խումբը կարողանար հասնել Հայաստան, ապա նա Դրոյի որոշմամբ պիտի կենսագործեր ոչ թե Աբվերի հանձնարարությունը, այլ բոլորովին ուրիշ առաջադրանք:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ՊԱԿ-ի արխիվներում այս հարցին, այն է՝ Խորհրդային իշխանության դեմ պայքար ծավալելուն վերաբերող նյութերը՝ Է. Աբրահամյանը ընգծում է, որ 1942 թ. Լոռիի շրջանում Ցոլակ Աբրահամյանի, ինչպես նաեւ Զանգեզուրում գործող ապստամբ ուժերը սպասում էին գերմանացիների ազդանշանին, որպեսզի սկսեին խռովությունները: Լոռիի եւ Զանգեզուրի խռովություններին զուգընթաց պիտի ապստամբեին Մենգրելիայի, Սվանեթիայի եւ Աջարիայի ապստամբները[2]:

Ինչպես արդեն նշվել է, Դրոն այնքան էլ չէր հավատում Գերմանիայի հաղթանակին եւ շատ լավ հասկանում էր, որ եթե գերմանական զորքերի առաջխաղացման պարագայում Հայաստանում որեւէ ելույթ կամ ընդվզում կազմակերպվեր ընդդեմ Խորհրդային Միության, ապա հետագայում խորհրդային վարչակազմը, անձամբ Ստալինը դաժանորեն հաշվեհարդար կտեսներին հայերի հետ: Եվ ինչպես ցույց տվեց ժամանակը, նրա այդ մտավախությունը միանգամայն իրատեսական էր ու հիմնավորված:

Դրոն ուզիներ է որոնել զգուշացնել եւ թույլ չտալ, որ Հայաստանում բռնկվի որեւէ ընդվզում, ելույթ ընդդեմ Խորհրդային Միության, քանզի հստակ գիտակցում էր դրա հետեւանքով հայությանը սպառնացող սարսափազդու աղետի լրջությունը: Ստալինգրադի ճակատամարտից հետո նրան հաջողվում է իր զինակիցներից մի քանիսին Հյուսիսային Կովկասից ուղարկել

[1] Տե՛ս Абрамян Э, նշվ. աշխ., էջ 36:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 91:

Հայաստան, որպեսզի նրանց միջոցով արգելի նմանօրինակ գործողությունների բռնկումը[1]:

Այս կապակցությամբ ուշագրավ վկայություններ է փաստում Դրոյի վաղեմի մարտական զինակից Թադեոս(Թոդե) Պետրոսյանը, որն այդ օրերին նույնպես գործում էր Ղրիմում եւ Հյուսիսային Կովկասում:

«Հիթլերեան բանակների յաղթական յառաջխաղացումը,- գրում է Թ. Պետրոսյանը,- եւ ամէն օր հրապարակուած «ազատարար» կոչերը կարող էին խլրտում առաջ բերել Մայր Հայաստանի ժողովրդի մէջ...Կերչի անկումից յետոյ մանաւանդ, ուր կարմիր բանակի հայկական ուժերը կրեցին ամենամեծ կորուստները, նացիստները հասան Անդրկովկասի դռներին՝ Նովոռոսիյսկ-Ալագիր-Արմավիր... ճամբաներից մեր ազատած ռազմագերիները, որոնց մէջ կային մեծ թուով եւ մտաւորականներ ու սպաներ, պատմում էին Հայաստանի ժողովրդի մեծ դժգոհութեան մասին...

...Այս բոլորը անհրաժեշտ կդարձնէին, որ մենք օր առաջ զգուշացնէինք հայ զանգուածները անժամանակ պոռթկումներից: Ամենափոքր շարժումը Երկրի մէջ ընդդէմ Սովետներին եւ ի նպաստ նացիզմի, կարող էր ողբերգական հետեւանքներ ունենալ:

Դիւրին գործ չէր: Օձն իր պորտով, թռչունն իր թեւով անզօր էին ճեղքելու արեան գիծը: Բայց Դրօն ստեղծեց այդ հնարաւորութիւնը եւ Ցէօդոսիայից, Տամանից եւ Արմավիրից միանգամայն վստահելի անձնուէրների միջոցով լուր ղրկեց Երկրի հակասովետ խմբերին, որ բացարձակապէս հեռու մնան որեւէ ցոյցից, լինի հակասովետ, թէ ի նպաստ նացիստների»[2]:

Անդրադառնալով Գերմանիայի հետ ունեցած նրա կապերի գնահատմանը՝ Թ. Պետրոսյանի վկայակոչած փաստերը հավաստում է նաեւ Ավետիք Իսահակյանը:

[1] Տողերիս հեղինակը ԱՄՆ-ի Բոստոն քաղաքում հանդիպել է 2-րդ աշխարհամարտում Դրոյի հետ համագործակցած անձանց, որոնց պատմածներից պարզվում է, որ Դրոյի հանձնարարությամբ Հյուսիսային Կովկասից Հայաստան է մեկնել Միսաք Թորլաքյանը: Եթե իրագործվեր հատուկ նշանակությամբ կազմած խումբը Հայաստան տեղափոխելու Աբվերի ծրագիրը, ապա հենց Մ. Թորլաքյանը պիտի ղեկավարեր Հյուսիսային Կովկասից Հայաստան գործուղված այդ խմբի գործողությունները:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1956, թիւ 10, էջ 30:

«Ես Դրոյին,-վկայում է Ավ. Իսահակյանը,- վաղուց եմ ճանաչել: Մենք մոտ ընկերներ ենք եղած անցեալում: Նա մեծ հայրենասէր է, խիզախ յեղափոխական, հերոսական գործեր է կատարել: Բայց նրա մեծագոյն ծառայութիւնը Հայաստանին ու հայ ժողովրդին եղաւ հէնց պատերազմի ընթացքին, երբ նա երեւութապէս գործակցում էր գերմանացոց: Կռահելով նացիստների պարտութիւնը՝ նա գնացել էր Հյուսիսային Կովկաս գերմանական բանակի հետ եւ զգուշացրել, որ Հայաստանի ժողովուրդը որեւէ ապստամբական շարժում չաներ բոլշեւիկեան տիրապետութեան դէմ, որը պիտի լինէր Հայաստանի մահը, ինչպէս որ եղաւ Ղրիմի, Քալմուքների (կալմիկների) եւ Չեչենների ինքնավար շրջանների հետ, որոնց ժողովուրդները սիրով դիմաւորել էին գերմանական զօրքերը:

Նացիստների նահանջից յետոյ բոլշեւիկները ոչ միայն վերջ տուին այդ երեք ինքնավար շրջաններին, այլեւ նրանց ժողովուրդներին գլխովին աքսորեցին Սիբիրի խորքերը, իսկ նրանց երկրները լցրին ռուսներով: Նոյն դաժան ճակատագիրը վերապահուած էր Հայաստանին, եթէ չլիներ Դրոյի նախազգուշացումը»[1]:

2-րդ աշխարհամարտի վերջում, երբ դաշնակիցների զորքերը ներխուժում են Գերմանիայի տարածքը, ամերիկացիները Հայդելբերգ քաղաքում ձերբակալում եւ բանտարկում են Դրոյին:

«Սարսափելի դաժան օրեր ապրեցինք, - վերհիշում է տիկին Գայանեն, - Դրոյի ձերբակալութեան օրերին՝ քաղցած եւ գրեթէ բոլորի կողմից լքված ու մոռացված: Նրա ընկերները՝ զգուշանալով ամերիկացիների հետապնդումներից եւ ձերբակալվելու սպառնալիքներից՝ խուսափում էին մեզ հետ հանդիպելուց: Թէ որտեղ էր գտնվում նա, մենք ոչ մի տեղեկութիւն չունեինք»[2]:

Դրոյին օգնելու նպատակով զինակիցներն ու բարեկամները, այնուամենայնիվ, կազմում եւ ամերիկացիներին են ներկայացնում նրա կյանքն ու գործունեութիւնը լուսաբանող 17 կետից բաղկացած մի փաստաթուղթ[3]:

Մոտ մեկ ամիս անցկացնելով բանտում՝ Դրոն, կարելի է ասել, ազատվում է երջանիկ պատահականութիւնամբ:

---

[1] «Հայրենիք» ամսագիր, 1960, թիւ 3, էջ 94:
[2] Տիկին Գայանեի ծայնագրությունից:
[3] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, ֆ. Ս. Վ., թղ. 46, գ. 5բ:

1905թ. Բաքու, Մելիքյան (Ռեմբրանդ) լուսանկարչատուն

Դրոն Մարտիրոս Չարուխչյանի հետ
1905թ. Բաքու, Մելիքյան (Ռեմբրանդ) լուսանկարչատուն

1-ին կամավորական զորախմբի հրամանատար Անդրանիկը՝ իր զինակիցներով

2-րդ կամավորականի հարյուրապետները՝ Հովհաննես Քուրանյան, Ջեմլյակ, Դալի Ղազար, Ռիժա Տիգրան (կանգնածներ), Կարբեցի Օնը, Յապոն, Բաշգառնեցի Մարտիրոս

3-րդ կամավորական գումարտակի զինվորները Մոսոմոյում Հայաստանը ազատագրելու համար զենքերով

4-րդ կամավորական գումարտակի զինվորները Վերին Ջիլոյում գրավելուց հետո, ինչպես նաև գերեվարված թուրքերը

Դրոյի ծոռախումբը Եղիշեի գերեզմանի մոտ (Էջմիածին, 1915)

Գոմիտաս Տեր-Կարապետյան

Դրոն և աշակերտները դպրոցում


1918 թ. ԱՐԱՐԱՏԻ ԲԱՇ-ԱՊԱՐԱՆԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԵՇԱՆՆԵՐ
Հայկական դիրքերը 22.05.1918 թ.
Հայկական դիրքերը 22.05.1918 թ.
Հայկական դիրքերը 23.05.1918 թ.
Հայկական դիրքերը ընդհանուր հակահարձակումից առաջ 25.05.1918 թ.
23.05.1918 թ. հարձակումը եւ նահանջը
Հայկական ուժերի հակահարվածը 26.05 - 29.05.1918 թ.
Զորքերի 27.05.1918 թ. կատարած մոտակա խնդիրը
Զորքերի 28.05.1918 թ. կատարած հետագա խնդիրը
Զորքերի 29.05.1918 թ. կատարած հաջորդական խնդիրը
Հրետանային մարտկոցներ
9-րդ թուրքական հետեւակային դիվիզիայի գործադրանը
Թուրքական հրետանային գործադրանը
Թուրքերի հարձակումը
Թուրքերի փախուստը
Մասշտաբը 1:12 000
1 սմ - 120 մետր
ԲԱՇ-ԱՊԱՐԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒ ՈՒԺԵՐԸ՝
Հայկական կողմից
1. 6-րդ հրաձգային գունդ՝ հրամանատար գնդապետ Դոլուխանյան՝ 1800 սվին
2. Պարտիզանական հեծյալ գունդ՝ հրամանատար գնդապետ Կորոլով՝ 600 սուր
3. 2-րդ հեծյալ գունդ՝ հրամանատար գնդապետ Ջարինյան՝ 200 սուր
4. Գնդապետ Սակինի գումարտակ՝ 400 սվին
5. Աշխարհազոր՝ 1000-1200 սվին
6. Ջիանգիր առայի եզդիների հեծելազոր՝ 300 սուր
7. Սեդրակ Ջալալյանի, Արսեն Տեր-Պողոսյանի, Սրամի եւ ապարանցի Մաթեւոսի հեծյալները՝ 150 սուր
8. Հրետանի, 2 մարտկոց՝ հրամանատար շտաբս-կապիտան Իգիթխանյան
9. Մեկեդունի հարուցակ՝ 100-200 հոգի
Ընդամենը՝ 4600 - 5000 հոգի
Թուրքական կողմից
1. 9-րդ դիվիզիա՝ - 9 - 10 հազար հոգի
Տամջրլու (Սոսվան)
Ղարաքուլաղ (Երնջատափ)
Նորաշեն
Մելլաքասում
Զաղու
24.05.1918 թ.
25.05.1918 թ.
Զամալու (Քասախ)
Ղարաքիլիսա (Հարթավան)
Սփնաբերդ (Սփնաբերդ)
4-րդ մարտկոց
Ալիքուլակ (Զուլակ)
Բլխեր (Շեհավան)
Բազարգյուղ (Սրայի)
Կոմուս
1-ին մարտկոց
Շիրաղալա (Ամրոնեան)
Թաքիրան (Ճարկաշեն)
Ղալաֆար (Սրազան)
Աշխարհազոր
Հեծյալ զնդեր
Հրետանային մարտկոցներ
Ամենայն Սուրբ Աստուածածին գունդ
Ալեքսանդրապոլ

Սեքո
(Սեդրակ Ջալալյան)

Սպարապետ Սուրեն
(Կուռո Թարխանյան)

Կապիտան Խորեն Իգիթխանյան

Մակեդոն



Նիկոլ Դուման

Դրոն և Ս. Վրացյանը

Գեներալ Մ. Սիլիկյան

Լեռնահայաստանի սպարապետ Գ. Նժդեհ

Դրոն

Միսաք Թորլաքյան

ՀՅԴ 15-րդ ընդհանուր ժողովում:
Կենտրոնում՝ Դրոն եւ Վահան Նավասարդյանը, 1951

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏՆԵՐԸ



Հովհ. Քաջազնունի



Համո Օհանջանյան

Ալ. Խատիսյան

Ս. Վրացյան

Դրոն ավագ որդու՝ Լյուդվիգի հետ

Դրոյի գերեզման-հուշարձանը Բաշ Ապարանի հերոսամարտի հուշարձանի հարևանությամբ

Ըստ «Հայրենիք» ամսագրում տեղ գտած բացատրության՝ «Այդ ժամանակները Փարիզից այդ քաղաքն է գալիս ՀՅԴ կոմիտէի անդամ Ա.: Երբ նա իմանում է, որ մի կարեւոր հայ է բանտարկուած, թոյլտուութիւն է վերցնում տեսնելու նրան: Երբ հեռուից տեսնում է, որ բանտարկեալը Դրօն է, ծունկի է գալիս, ծնկաչոք մօտենում է Դրոյին եւ ուզում է նրա ձեռքը համբուրել...Ամերիկացիք, տեսնելով այս, սկսում են քննել Դրոյի գործը եւ ազատ են արձակում նրան»[1]:

Միսաք Թորլաքյանի հուշագրություններից պարզվում է, որ բանտում Դրոյին այցելողը ՀՅԴ այն ժամանակվա ճանաչված գործիչներից Հրանտ Ակոնյանն էր, որը մեծ կապեր ու ծանոթություններ է ունեցել ամերիկյան եւ ֆրանսիական գործարար շրջաններում եւ բանակում: Հրանտ Ակոնյանը պատերազմի ավարտական շրջանում գտնվելով Ֆրանսիայում, «...գաղթականական գործերով Փարիզէն Գերմանիա կու գայ ֆրանսիական կառավարութեան կողմէ:

Հայտելպերկի մէջ, իր առաջին գործը կըլլայ այցելել Դրոյին: Բանտի մէջ, երբ կը տեսնէ Դրոյին, ծունկի կու գայ, ու այդպէս յառաջանալով կերթայ համբուրելու մեծանուն հերոսին ձեռքը:

Այս տեսարանը ուշադրութիւնը կը գրավէ ամերիկացիներուն: Հետաքրքրուած, երբ կը հասկանան Հրանդէն Դրոյին մեծութիւնը, իրենց վերաբերմունքը կը փոխեն եւ փոխանակ պոլշեւիկներուն յանձնելու, օդանաւով կուղարկեն Ամերիկա»[2]:

Պատերազմից հետո Դրոն իր տիկնոջ՝ Գայանեի եւ երկու զավակների՝ Մարտիրոսի ու Օլգայի հետ մինչեւ 1952 թ. հաստատվում է Բեյրութում, ապա ԱՄՆ-ի Բոստոն քաղաքում:Օտար ափերում ապրած տարիներին մշտապես ընտրվելով Հ.Յ.Դաշնակցության ղեկավար մարմինների կազմում՝ նա մինչեւ կյանքի վերջն իր անսպառ եռանդն ու կարողությունը նվիրաբերում է սփյուռքում հայապահպանության եւ Հայ Դատը վառ պահելու ու սերունդներին ավանդելու անգնահատելի գործին:

Բեյրութում եւ Բոստոնում ապրելու տարիներին նա մշտապես մասնակցել է կազմակերպված հավաքույթներին ու միջոցառում-

---

[1] «Հայրենիք» ամսագիր, 1957, թիւ 9, էջ 17:
[2] Թորլաքեան Մ., նշվ. աշխ., էջ 545:

ներին եւ հաճախակի հանդիպել համայքների անդամներին ու հատկապես երտասարդությանը:

1997 թ. ձմռանը, երբ տողերիս հեղինակը Արցախի հերոս Պետրոս Ղեւոնդյան նվիրված «Պետոն» գրքի վերահրատարակության կապակցությամբ գտնվում էր Բեյրութում, բեյրութահայերի հետ կայացած հանդիպումների մեկի ժամանակ հանդիպման տարեց մասնակիցները պատմեցին, որ պատերազմից հետո իրենք Հ.Յ.Դաշնակցության կենտրոնում հանդիպել են Դրոյին, որի հետ է եղել նաեւ գնդապետ Տիգրան Բաղդասարյանը: Հանդիպման ընթացքում Դրոն անդրադարձել է միջազգային հարցերին, ապա առավել ոգեւորությամբ ներկայացրել է ազատագրական պայքարի առավել ուշագրավ, պատմական նշնակություն ունեցող դեպքերը, ինչպես նաեւ մի շարք անվանի գործիչների գործունեությունը: Հանդիպումն ավարտելուց հետո, երբ դուրս են եկել դահլիճից, Դրոն նկատել է սրահի պատին փակցրած լուսանկարները եւ մոտենալով ՝ սկսել է ուշադրությամբ դիտել լուսանկարները:

Ըստ այդ հանդպման մասնակիցների՝ նա խիստ կերպով զայրացել է տեսնելով, որ լուսանկարների մեջ բացակայում էր Անդրանիկի լուսանկարը: Դիմելով ներկաներին՝ նա խստորեն հրամայել է, որ անմիջապես գտնեն ու բերեն Անդրանիկի լուսանկարը: Դրոյի հրամանն անպայմանորեն պիտի կատարվեր: Նա սրահում սպասում է այնքան ժամանակ, մինչեւ որ ինչ-որ տեղից գտնում եւ բերում են Անդրանիկի լուսանկարը: Դրոն գոհունակությամբ վերցնում է լուսանկարը եւ բարձրանալով աթոռի վրա՝ իր ձեռքով այն փակցնում է իր պաշտելի հերոսի՝ Նիկոլ Դումանի լուսանկարի կողքին:

Երբ սրահից դուրս են գալիս բակ, այդ հանդիպման մասնակից երիտասարդներից մեկը դիմում է նրան եւ ասում. «Զորավար դուք շատերի մասին պատմեցիք, իսկ ի՞նչու Ձեր կատարած գործերի մասին ոչինչ չհիշատակեցիք:Դրոն ժպտալով լսեց ինձ ու մատնացույց անելով գետնին ընկած քարի փոքրիկ կտորը՝ ասաց. «Մանչս կտեսնես այն փոքրիկ քարը, ապա վերցրում եւ շպրտիր վերեւ: Ես կատարեցի զորավարի հրահանգը, վերցրի քարն ու շպրտեցի վերեւ: Նա ակնթարթորեն վերցրեց իր կողքին կանգնած գնդապետ Տիգրան Բաղդասարյանի գոտկատեղին ամրացված պատյանի մեջ գտնվող ատրճանակն ու գրեթե առանց նշանառության՝ կրակեց իմ շպրտած քարի ուղղությամբ: Բոլորս ապշած էինք տեսնելով նրա անհավանական դիպուկ կրակոցի արդյունքը: Դրոն իր զարմահրաշ կրակոցով փշուր-փշուր արեց փոքրիկ քարը»:

Կյանքի վերջին տարիներին Դրոն տառապել է մի շարք հիվանդություններով, սկզբում միզափամփուշտի քաղցկեղով (բարորակ ուռուցք), որը հետո բժիշկների ջանքերով հաջողվում է բուժել: Ապաքինվելուց մի փոքր անց նա հիվանդանում է թոքերի բորբոքումով եւ ամենասարսափելին՝ աջ ուսի ոսկորների վրա բժիշկները հայտնաբերում են արագ աճող ու տարածվող քաղցկեղի հյուսվածքներ: Այդ ամենին գումարած՝ նա տառապել է նաեւ հաստ աղիքի ու լյարդի հիվանդությամբ: Տնային պայմաններում ձեռնարկված բուժումները չեն մեղմացնում նրա ցավերը, եւ հարազատները հարկադրված նրան տեղափոխում են Բոստոնի լավագույն հիվանդանոցներից մեկում: Զինակիցներն ու բարեկամները, ջերմ ուշադրությամբ շրջապատելով իրենց ավագագույն ընկերոջը, մշտական հերթապահություն են սահմանել հիվանդասենյակում եւ ամեն օր արթուն պահակի զգոնությամբ ու հոգատարությամբ խնամել նրան:

Հիվանդանոցում Դրոյին հաճախակի այցելել է նաեւ Սիմոն Վրացյանը, որի վկայությամբ՝ «Այդ շրջանում, մանավանդ, յամայել է, որ անմիջապես գտնեն ու բերեն Անդրանիկի լուսանկարը: Դիմելով ներկաներին՝ նա խստորեն հրամայել է, որ անմիջապես գտնեն ու բերեն Անդրանիկի լուսանկարը: Դրոյի հրամանն անպայմանորեն պիտի կատարվեր: Նա սրահում սպասում է այնքան ժամանակ, մինչեւ որ ինչ-որ տեղից գտնում եւ բերում են Անդրանիկի լուսանկարը: Դրոն գոհունակությամբ վերցնում է լուսանկարը եւ բարձրանալով աթոռի վրա՝ իր ձեռքով այն փակցնում է իր պաշտելի հերոսի՝ Նիկոլ Դումանի լուսանկարի կողքին:

Երբ սրահից դուրս են գալիս բակ, այդ հանդիպման մասնակից երիտասարդներից մեկը դիմում է նրան եւ ասում. «Զորավար դուք շատերի մասին պատմեցիք, իսկ ի՞նչու Ձեր կատարած գործերի մասին ոչինչ չհիշատակեցիք:Դրոն ժպտալով լսեց ինձ ու մատնացույց անելով գետնին ընկած քարի փոքրիկ կտորը՝ ասաց. «Մանչս կտեսնես այն փոքրիկ քարը, ապա վերցրում եւ շպրտիր վերեւ: Ես կատարեցի զորավարի հրահանգը, վերցրի քարն ու շպրտեցի վերեւ: Նա ակնթարթորեն վերցրեց իր կողքին կանգնած գնդապետ Տիգրան Բաղդասարյանի գոտկատեղին ամրացված պատյանի մեջ գտնվող ատրճանակն ու գրեթե առանց նշանառության՝ կրակեց իմ շպրտած քարի ուղղությամբ: Բոլորս ապշած էինք տեսնելով նրա անհավանական դիպուկ կրակոցի արդյունքը: Դրոն իր զարմահրաշ կրակոցով փշուր-փշուր արեց փոքրիկ քարը»:

Կյանքի վերջին տարիներին Դրոն տառապել է մի շարք հիվանդություններով, սկզբում միզափամփուշտի քաղցկեղով (բարորակ ուռուցք), որը հետո բժիշկների ջանքերով հաջողվում է բուժել: Ապաքինվելուց մի փոքր անց նա հիվանդանում է թոքերի բորբոքումով եւ ամենասարսափելին՝ աջ ուսի ոսկորների վրա բժիշկները հայտնաբերում են արագ աճող ու տարածվող քաղցկեղի հյուսվածքներ: Այդ ամենին գումարած՝ նա տառապել է նաեւ հաստ աղիքի ու լյարդի հիվանդությամբ: Տնային պայմաններում ձեռնարկված բուժումները չեն մեղմացնում նրա ցավերը, եւ հարազատները հարկադրված նրան տեղափոխում են Բոստոնի լավագույն հիվանդանոցներից մեկում: Զինակիցներն ու բարեկամները, ջերմ ուշադրությամբ շրջապատելով իրենց ավագագույն ընկերոջը, մշտական հերթապահություն են սահմանել հիվանդասենյակում եւ ամեն օր արթուն պահակի զգոնությամբ ու հոգատարությամբ խնամել նրան:

Հիվանդանոցում Դրոյին հաճախակի այցելել է նաեւ Սիմոն Վրացյանը, որի վկայությամբ՝ «Այդ շրջանում, մանավանդ, յամայել էր յիշում իր ուսուցիչ Նիկոլ Դումանին, որ նոյնպես ճախ էր յիշում իր ուսուցիչ Նիկոլ Դումանին, որ նոյնպես բռնուեց քաղցկեղից եւ ինքնասպանութիւն գործեց: Իր մտքում Դրոն էլ որոշել էր հետեւել ուսուցչի օրինակին: Երբ գիշերները, ցաւից տանջուելով, անքուն նա, հառաչելով, ման էր գալիս սենեակում, սրտումս վախ էի զգում եւ աշխատում էի նրա ուշադրութիւնը ուրիշ բանով զբաղեցնել: Եւ բաւական էր որեւէ ձեւով յիշել Մարտիրոս Զարուխչեանի կամ Դաշնակցական խեչոյի անունը, որպէսզի նա ընկնէր անցեալի վերյիշումների մէջ, գիշերը լուսացնէինք անփորձանք»[1]:

Դրոյի կյանքի վերջին օրերի վկաներից մեկը՝ ԱՄՆ-ի Բոստոն քաղաքի բնակիչ Վահրամ Բարսեղյանը պատմում է, որ նա տոն քաղաքի բնակիչ Վահրամ Բարսեղյանը պատմում է, որ նա սարսափելի ցավերի պատճառով երբեմն կորցնում էր գիտակցությունը եւ այդ վիճակում բարձրաձայն խոսում էր իր վաղամեռիկ զինակիցների հետ: Հատկապես հաճախակի էր հիշում իր

[1] Վրացեան Ս., Մորկածին Դրոն, էջ 177-178:

Մեծ ուսուցչին՝ Նիկոլ Դումանին եւ ահաբեկիչ ընկերոջը՝ Մարտիրոս Զարուխչյանին: Անհուն կարոտով մշտապես երազել ու տենչացել է Հայաստանը, Երեւանը, իր հայրենի Իգդիրն ու հիշել բոլոր նրանց, ում հետ տարիներ շարունակ մարտնչել ու արյուն էր թափել:

Ըստ Վահրամ Բարսեղյանի, Դրոն բազմիցս ցանկություն է հայտնել հետեւել Նիկոլ Դումանի օրինակին ու ինքնասպանությամբ վերջ տալ կյանքին:

Նա մի քանի անգամ դիմել է Վահրամին ու պահանջել՝ «Վահրամ, դու որպես նախկին մաուզերիստ, թաքցրած զենք կունենաս, տուր ինձ ինքնասպան լինեմ: Դրոն ֆիզիկապես շատ ուժեղ էր: Նույնիսկ գնվելով հյուծված եւ ծարագույն հիվանդ վիճակում, երբ հենվում էր ուսերիս, ես հազիվ էի դիմանում նրա ձեռքերի ճնշմանը»[1]:

Երկարատեւ բուժումը, հարազատների հոգատար վերաբերմունքը չի տալիս որեւէ ցանկալի արդյունք:

...1956 թ. մարտի 6-ին ԱՄՆ-ի Բոստոն քաղաքում սարսափելի փոթորիկ էր: Այդ օրն «Ա~խ, մեկ էլ Երկիրը տեսնեի...» բառերը շուրթերին, հայրենիքից հեռու, օտար եզերքում իր մահկանացուն էր կնքում «...քաջերուն մէջ չքեղօրէն քաջը եւ հերոսներուն մէջ կախարդօրէն հերոսը», «Հայկական Ազատամարտի ամէնէն դիւցազնատիպ էջերը զարդարած...» Դրոն՝ սերունդներին կտակելով հետեւյալ պատգամը.

«...Քանի բռնութեան տակ է մեր հայրենիքը՝ Հայաստանը, քանի մեր հողերը բռնագրաւուած են, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը ունի իր պայքարը եւ Դաշնակցութեան զաւակները, իբրեւ հայ ժողովրդի հարազատ զաւակներ, պիտի շարունակեն այդ պայքարը. արիւնով կը լինի, գրիչով կը լինի, պայքարով կը լինի, մինչեւ Հայը հաւաքուի իր բոյնին մէջ. հայը հային կառավարի, ոչ անգլիացին, ոչ ամերիկացին, ոչ ռուսը, ոչ թուրքը. հայը լինի իր երկրին տէրը, հայը լինի իր ազատութեան տէրը...»[2]:

[1] Վահրամ Ղեւոնդի Բարսեղյանի (ԱՄՆ, Բոստոն) ձայնագրությունից:
[2] Դրո, Պէյրութ, 1956, էջ 9:

ՀԱՎԵԼՎԱԾ

Դրոյի նամակը Սիմոն Վրացյանին եւ ծանոթագրություններ

Սիրելի Սիմոն1,

Դուն շատ լաւ գիտէս, որ մէկն ես իմ ամէնահարազատներից, մէկն ես նոյնպէս, որ ինձ լաւ ես ճանաչում եւ այդ իսկ պատճառով անվերապահօրէն կը գրեմ քեզ հետեւեալ տողերը, որուն ամէն մէկ կէտին պէտք է հաւատաս տառացիօրէն:

Սկսեմ Պալքանով եւ Նժդէհով 2:

Երբ 1936-ի փետրուարին «1 անընթեռնելի բառ (ա.բ.-Վ.Ղ.)» դեգերումներուն (՞) վրայ անցայ Պալքան, հետեւեալ կացութիւնը գտայ այնտեղ: Մէկ ամբողջ տարի Հայկ Ասատրեանը 3 կենտրոնական կոմիտէ է խաղցուցէր առանձին (՞) եւ անպատասխանի թողցուցած Բիւրօյի նամակները այն մասին, թէ ո՞վքեր են մարմնի անդամները: Այս միեւնոյն անձը բառի իսկական մտքով հաւլածանքի մէջ հագարեան մեթոտներով կախակայէր, արտաքսէր է բոլոր անոնք, որոնք իր կամակատարները չեն եղէր. նոյնիսկ Մազմանեանի4 պէս քառասուն տարուան ընկերոջ կախակայած էր՝ առարկելով, թէ իր եռամսեայ տուրքը չէ վճարած: Այս մենատիրութիւնը անձնական կ["ենտրոնական] կոմիտէութիւնը շարունակեր է պահել մինչեւ դէհի Ամերիկայէն վերադառնալը 5:

Նժդէհի վերադարձէն «հե»տոյ, նախապէս պատրաստուած մարդկանցով գումարէր են փակ ժողով մը, գաղտնիացման պատրուակին տակ իմաց չէ տալով ոչ ոքի այն ընկերներէն, որոնք տասնեակ տարիներ պատասխանատու դէր են կատարած Պալքանի մէջ, նոյնիսկ անոնցմէ մէկ մասին վերաբերմամբ նախապէս պատժական որոշումներ են տվեր՝ զանազան պատրուակներով: Այս փակ ժողովը ուրիշ դէր չէ ունեցած, բայց միայն վաւերացնել Նժդէհի եւ Հայկի պատրաստած մարմինը, վաւերացնելով նաեւ այն պատժական որոշումները անոնց հանդէպ, որոնք չեն եղած իրենց անձնական համախոհները 6:

Երեք հոգինոց այդ մարմնին մէջ մտցուցած էին նաեւ Ներսէս Աստուածատրեան7 անունով մէկը, որ նախքան կ[ենտրոնական] կ[ոմիտեի] մէջ մտնելը որեւէ այլ մարմնի անդամ չէ եղած:

Նժդէհ, Հայկ եւ Ներսէս Աստուածատրեանէ կազմուած այս եռանդամը գործի անցնելով, իր գլխաւոր պարտականութիւնն է

նկատած մինչեւ յետին շարքային՝ առջեւ վարկաբեկել ղեկավար ընկերները Պալքանէն նէրս, թէ դուրս գտնվող -անհեթեթ պատմութիւններ հիւսելով ամէն մէկու հասցեին: Բացի ասկէ, օգտուելով քաղաքական եւ յեղափոխական մեր հարկադրական իներտութեան պատճառած դժգոհութիւնէն շարքայիններու մօտ, ջանացած են ոմանց ուղէղին մէջ կախել այն միտքը, թէ ղեկավարներու պարտուողական հոգեբանութեան հետեւանք է մեր կուսակցութեան ինէրտ լինելը: Եւ որպէսզի ցոյց տան, թէ իրենք գործօն հեղափոխականներ են, սկսէր են մարդկանց երեւակայութիւնը շոյող պատմութիւններ ու ծրագիրներ ներշնչել շարքայիններուն: Կտամ քեզի մէկ քանին միայն այս պատմութիւններէն, ցոյց տալու համար, թէ շարքերը անբարոյակացնելու համար մինչեւ ուր կարելի է հասցնել ծաղրածութեան հասած պատմութիւնները:

Ըստ Հայկ Ասատրեանի Դաշնակցութիւնը չէ կրցած ըմբռնել ռազմական այն արժէքը, որ ունի Նեմրութի սարը՝ թուրքերուն հարուածելու համար: Մանաւանդ (՞) այսօր, մարմինները եթէ կարենային պատերազմական կատարելագործուած թեքնիքայէն գրաւել, կրնային Նեմրութի սարը դարձնել յարձակման խարիսխ թուրքերուն դէմ:

Եւ որպէսզի մարմիններուն այս ապիկարութիւնը դարմանուի, կ.կոմիտէն արտակարգ գործի մը անունով ներքին հանգանակութեան կը ձեռնարկէ, համոզելով շրջանի մարմիններն ու ընկերները, թէ կարելի չէ բացատրութիւններ տալ այդ գործնական ձեռնարկներուն մասին: Հանգանակուած այդ գումարը ուրիշ բանի չէ հատկացուիր, բայց եթէ ապահովելու անհաշիւ երթեւեկի ծախքերը Հայկ Ասատրեանի, որպեսզի այդ ճամբորդութիւններով շրջանի ընկերներուն մէջ թոյն սրսկէ ու անվստահութեան մթնոլորտ մը ստեղծէ բոլորին հանդէպ, սկսած Պալքանէն մինչեւ Բիւրօ: Այս կերպով է, որ, մէկ կողմէն նախկին մարմիններէն իրենց փոխանցուած զանազան ֆոնդերու գումարները, իսկ միւս կողմէն «արտակարգ ձեռնարկներու» անունով հանգանակուած այդ գումարները ծառայեցուցեր են «բրոբականտ»՝ թոյն եւ կիրք սրսկելու համար ընկերներուն մէջ: Իսկ իրենց արտակարգ ձեռնարկը ուրիշ բան չէ եղած, բայց միայն քանի մը ընկերներ տեղաւորել գաղտնի ոստիկանութեան մէջ, որոշ շրջաններ հետեւելու համար թուրք էմիսարներու գործունէութեան:

Այս վրան բաց եւ յաճախ խորհրդաւորութիւնով սքողուած անլուր բամբասանքներն անկասկած ունեցած են իրր հետեւանք

դժգոհութիւններ, որոնք միացած տասնեակ տարիներու պատմութիւն ունեցող ներքին վեճերու, դրա հետ, վերածեր են կռուքի, ատելութիւնով կիտուած կատարվում աւելի քենոտ կերպով, քան Ամերիկայի ռամկավարներն ու դաշնակցականները:

Հայկ - Նժդէհ կ.կոմիտէի դէմ դժգոհ խմբակին գլխավոր ղեկավարներն էին մեր հին ընկերներէն Արամ Յակոբեան8, Օննիկ Մխիթարեան9 եւ իմ ներքին համոզումով մի մութ աւանտիւրիսթ՝ Թափառական10 անունով, որ նախքան դժգոհներուն միանալը, տարիներ շարունակ եղած է Նժդէհի գործակիցը:

Այս երկու խմբակին միջեւ պայքարը այն աստիճան կը սրի, որ Հայկի եւ Նժդէհի կողմէ լրտեսութեան կասկածներ կը ներշնչուեն շարքայիններուն մէջ նախ Տէվէճեանի11 հասցէին, Նժդէհի Ամերիկայէն վերադառնալու առթիւ՝ երբ Համոն12 ալ կը գտնուէր Պալքան, եւ յետոյ իրենց ընդդիմադիրներու հասկը գտնուէր Պալքան, եւ յետոյ իրենց ընդդիմադիրներու հասցէին, ընդհանրապէս, Քրիստափորի13 եւ Եավորովի14 յիշատացէին, ընդհանրապէս, Քրիստափորի եւ Եավորովի

Նախքան իմ Պալքան հասնելը, Լազեանը15 մօտ մէկ ամսով եղած էր այնտեղ եւ մանրամասն քննած կ.կ-ի եւ դժգոհներու փոխադարձ ամբաստանութիւնները, մասնաւորաբար Սոֆիայի եւ Ֆիլիպէի մէջ, որ թէ օրինական կազմակերպութեան եւ թէ դժգոհներուն միացած <ընկ>երներուն թիւը Պալքանի կազմակերպութեան գրեթէ ստուար մեծամասնութիւնը կը կազմէին:

Դատական ու պատժական որոշումներ առնելու առթիւ Լազեանին հետ համախորհուրդ հիմք ընդունեցինք այն պարագան, որ դժգոհները կուսակցութեան մէջ կուսակցութիւն ստեղծելու վտանգաւոր յանցանքը գործած են. անհատական դժգոհութիւններուն կազմակերպուած ձեւ տալով՝ դժգոհները յատուկ խումբերու մէջ են համախմբած եւ ընտրած իրենց վարչութիւնը: Խղճի հանդարտութեամբ պատժեցի մօտ 16 հոգի այդ դժգոհներէն, գլխաւորութեամբ ընկ. Արամ Ցակոբեանի, որուն կուսակցութիւնէն հեռացրի մինչեւ ժ ընդհ[անուր] ժողով, մի հին ընկեր, որ մէկէ աւելի անգամներ կ.կ-ի անդամ էր եղած եւ թէ Պալքանի եւ թէ Ռուսաստանի մէջ կուսակցական գործունէութիւն ունեցած:

Դժգոհները պատժեցի հետեւալ հիմունքներով, որ անոնք.

ա) Խորացուցած են թայֆայական կիրքերը կուսակցութիւնէն ներս, ստեղծելով կանոնագրօրէն անթոյլատրելի մարմիններ եւ կազմակերպութեան մէջ կազմակերպութիւն ստեղծելով:

բ) Որ անոնք թուլցուած են ամսավճարներ գանձել կուսակցութեան անունով, առանց օրինապէս ճանչցուած մարմին ըլլալու:

գ) Որ տպաւորութիւն ձգելու մտահոգութեամբ միայն, իրենց խումբերուն մէջ արձանագրած են տասնեակ տարիներով կուսակցութիւնէն հեռացածներ եւ այլն:

դ) Որ Թափառականի ղեկավարութեամբ Նժդէհի դէմ - երբ ան օրինական կ.կ-ի անդամ էր սարքուած սքանտալին հանդէպ կրաւորական դիրք են բռնած եւ այլն:

Այս կերպով, դժգոհ ըմբոստներուն պատժեր եմ, իրենց կազմած դժգոհութեան դասարանին16 իսկ, ինչպէս կ.կ-ի մէկ անդամին պատժեցի, հիմնուելով կ.կ-ի կազմած դասարին, ինչպէս պիտի տեսնես քիչ վարը:

Քննելով կ.կ-ի ալ դասարը, գտանք որ.-

ա) կապոցներով պատիժներ՝ կախակայում, արտաքսում, առանց հիմքի եւ հարցաքննութեան: Պատիժներէն մեծ մասը անոր համար, որ կ.կ-ի ստեղծած կախարդական մթնոլորտին մէջ գտնուեր են մարդիկ, որոնք չեն ուզեցեր անլեզու հայվան ըլլալ:

բ) հալածեր են մարդկանց եւ պատժեր այն առարկութեամբ, որ Բիւրօյին բողոքեր են Ցունաստանի կ.կ-ին միջոցաւ եւ ոչ թէ իրենց՝ Պալքանի: Մինչդէռ, ինչպէս վերեւ ակնարկեցի, Ռուսճուգի կոմիտէն, երբ իրենց՝ Պալքանի կ.կ-ին միջոցաւ ուզած է իր խօսքը լսելի դարձնել Բիւրօյին, այդ առթիւ իրենց միջոցաւ Բիւրօյին ուղղուած յիշեալ մարմնին նամակը չեն ուղարկած իր հասցէին: Ռուսճուգի մարմնին նամակը ուրիշ բովանդակութիւն չէ ունեցած, բայց եթէ խնդրել Բիւրօյէն, որ ժամ առաջ միջոցներ ձեռք առնէ Պալքանի վիճակը բարելաւելու համար:

Երբ Հայկ Ասատրեանին հարց տուինք, թէ ինչո՞ւ Ռուսէի նամակը չէ ղրկած Բիւրօյին, քանի որ իրենց միջոցաւ կատարուած է այդ դիմումը, իսկ միւս կողմէն պատժած այն ընկերները, որոնք Ցունաստանի միջոցաւ ղրկած են, Ասատրեան պատասխանեց, թէ ամիսներէ ի վեր լուրեր էին տարածուած, թէ Բիւրօյի լիազօրներ պիտի գան՝ ատոր համար չէ ղրկած Ռուսէի նամակը: Բայց պատասխան չի կրնար տալ, երբ հարց կուտանք իրեն՝ հապա ինչո՞ւ այնքա՜ն պատիժներ սահմանեցիք հենց լիազօրներու գալէն մօտ 15 օր առաջ, երբ գիտէիք, թէ լիազօրներ պիտի գային:

գ) Փաստօրէն արձանագրութիւն չեն ունեցած: Լիազօրներու գալու օրերուն կազմուած հապճէպ արձանագրութեանց մէջ անդամ Հայկ Ասատրեանը յաւելումներ էր կատարած՝ առանց իր երկու ընկերներու գիտութեան:

դ) Մեր մեկնումէն յետոյ, մեր կողմէ նշանակուած կ.կ-ի եւ ժամանակաւոր գործիչ ընկ. Ս.Ս-ի17 հաշուեքննութիւնէն պարզուեր էր, որ անոնք իրենց ամբողջ գործունէութեան շրջանին հաշուապահութիւն եւս չեն ունեցեր եւ ի վերջոյ տարիներու հաշիւները մէկ օրուան մէջ մատեանի մը մէջ արձանագրած են, առանց փաստաթուղթի եւ թուական կարգի: Թէեւ զեղծումի ոչ մէկ կասկածելի հետք չէ գտնուած:

Այս եւ նման զանցառութիւններ եւ կամայական արարքներ լեցուն են իրենց իսկ՝ կ.կ-ի կազմած դասարներուն մէջ:

Չպատժել կ.կ-ի անունով գործող եւ տարիներ շարունակ Բիւրօյին իսկ ճշգրիտ ոչ մէկ հաղորդագրութիւն չկատարող անձերը՝ անկարելի էր: Եռանդամ կ.կ-ին մէջ գտնուող Ներսէս Աստուածատրեանը՝ բառին իրական մտքովը «եալանչի փեհլեվան» էր եւ իր անունը դրած կ.կ-ի մէջ՝ թիւ լեցնելու համար: Այս իսկ պատճառով կարեւորութիւն չէ տուի այս մարդուն եւ չէ պատժեցի:

Գիտակցօրէն գնացի անարդարութեան, չպատժելով Նժդէհին, զինքը փրկելու միակ մտահոգութեամբ եւ կ.կ.-ի անդամներէն ու իրենց համախոհներէն պատժեցի միմիայն Հայկ Ասատրեանին, մինչեւ ընդհ[անուր] ժողով հեռացնելով կուսակցութիւնէն, մինչ-դէռ դժգոհներէն պատժած էի մօտ 16 հոգի:

Սիմոն ջան, դու շատ լաւ գիտես, որ ոչ քաղաքացիական արիութիւնը կը պակսէր ինձ եւ ոչ ալ կուսակցական այն գիտակցութիւնը, թէ կ.կ.-ի անդամները հաւաքաբար պատասխանատու են իրենց արարքներուն համար: Բայց ես չէ պատժեցի Նժդէհին, որովհետեւ բառին իսկական մտքով կուզէի փրկել զինքը. մեկու մը, որ դժբախտաբար երբէք ընդունակութիւնը չունեցաւ կարգին մարդկանցով ինքզինքը շրջապատելու:

Հակառակ վրան բաց իմ այս կողմնակցութեան, միմիայն Հայկ Ասատրեանին պատժած ըլլալուս համար, անոնք ամէն կերպ սապօթաժի ենթարկեցին մի քանի օրուան իմ վերակազմչական աշխատանքներս, նախ.

1) Փակելով Սօֆիայի ակումբին դռները իմ կողմէ հրավիրուած մէկ հաւաքումին, երբ ստիպուած եղայ դուռը կոտրել եւ բանալ:

2) Գոցել տալով էլէքտրական հոսանքը, որուն պատճառաւ ստիպուած եղայ անձնապէս տուգանքը յանձն առնել եւ ապօրէն կերպով լոյսը բանալ տալ:

3) Իմ կողմէ նշանակուած ժամանակաւոր կ.կ.-ի անդամներէն երեքը ընտրեցի իրենց ցանկութեամբ, մնացեալ երկուսէն մէկին համար եւս առարկութիւն ըրին, անոր ալ փոխեցի, հակառակ որ մեր հին ընկերներէն էր:

4) Որ Նժդէհի իսկ տան մէջ ինքը ինձ խնդրեց, որ ազատեմ իրեն Հայկ Ասատրնանէն. խնդրեց նաեւ, որ նիւթապէս օգնեմ Սէթօին,18 որպէսզի յիշեալին կինը միրգի խանութ բանայ: Իմ սեփական միջոցներով օգնեցի Սէթօին: Ու ի՞նչ տեղի ունեցաւ. մեկնումէս քսանեւչորս ժամ չանցած լուր տարածեցին, թէ ուզեցեր եմ կաշառել զիրենք: Ու այս անհեթեթ սուտը շրջանէ շրջան պտտցուցին տարիներով, անշուշտ ինձմէ դրամը ստանալով եւ ծախսելով հանդերձ:

5) Հակառակ իրենց խոստումին, կուսակցական արխիւները չի հանձնեցին օրինական մարմիններուն. մի քանի ակումբներ պահեցին իրենց ձեռքը մինչեւ այսօր. իմ մեկնումէն անմիջապէս յետոյ փորձեցին պայթեցնել իմ նշանակած կ.կոմիտէն եւ յաջողեցան անոնցմէ երեքին հրաժարականը տալ. կազմեցին ապօրէն շրջ[անային] ժողովներ եւ երեք տարիէ ի վեր կը շարունակեն շահագործել կուսակցութեան անունը՝ անվաւեր կ.կ.-ի մը անունով ուրոյն (՞) կազմակերպութիւն մը պահելով Պալքանի մէջ:

Հակառակ այս ամէնուն եւ հակառակ Նժդէհի մասին ժ ընդհ[անուր] ժողովի արտաքսման վճռին, ես կանչեցի նրան՝ ինձ մօտ, ու մինչ ես այս տողերը կը թելադրէի՝ նա Պուքրէշում էր, որովհետեւ իմ այս նամակի վերամշակումը յապաղեցաւ մօտ մէկ ամսով, որովհետեւ կինս ծանրօրէն հիւանդացաւ եւ ես հնարաւորութիւն չունեցայ զբաղվելու այս նամակով:

Կանչելով Նժդէհին ինձ մօտ, ես իրեն յայտարարեցի, որ զինքը կանչած եմ պարզապէս դուրս բերելու համար այն աղբէն եւ ապականութիւնէն, որուն մէջ խրեր է: Գէորգ Ղազարեանի տանը Սարգիս Արարատեանի, որուն հետ ինչպէս գիտես մօտ ինը տարի է չեմ խօսում, մեր Ցարութիկի19 եւ Գուրգէն Սարգիսեանի ներկայութեան խօսեցայ իրեն հետ: Ու այս հանդիպման չէ կանչեցի նոյնիսկ Մեկուսիի ներկայացուցչին, այլ միայն այն մարդկանց, որոնց հանդէպ ինք վստահութիւն ունի: Այդ հանդիպումին ես պատմեցի այն ամէնը, ինչ որ գրի եմ առած նախորդ էջերում Պալքանի մասին. ու հարց տուի Նժդէհին, ճի՞շտ են իմ ըսածներս, թէ՞ ոչ: Ու աւելցուցի. «Դուն անբարոյական տարրերուն հետ դուրս կուգաս հրապարակաւ եւ յետոյ զէնքի ընկերներդ կը փնտռես: Ինչպէս այլ առթիւ ալ ըսած եմ քեզի, ես քեզ կանչեցի այստեղ աղբից եւ ապականութիւնից փրկելու համար: Եթէ իմ խօսքը, իբր զէնքի ընկերոջ, արժէք ունի քեզ համար, պէտք է խզես կապերդ այդ այլասերուած տարրերուն հետ: Տարրեր, որոնք ուրիշ հովերով են տարուած. հակառակ պարագային մենք այլեւս զէնքի ընկերներ մնալ չենք կարող»: Վերեւ ակնարկածս ընկերներու ներկաութեան, իմ այս բոլոր յայտարարութիւններուս ոչ մէկ լուրջ առարկութիւն իր կողմէ. իշացած մնաց:

Նախքան Պուքրէշէն մեկնելը, Ցարութիկին եւ .Սարգիսեանին հետ եկած էր ինձ մօտ, դարձեալ յայտնեցի, որ թէ շարունակեն իրենց ընթացքը եւ ինքն ալ մնայ այդ այլասերուածներու կողքին, անոնք արժանի կըլլան ծանրագոյն պատժին, եւ ես մէկը կըլլամ յարմար առթիւ ըսելու, որ թէր դէմ ուրիշ որոշում չունենք...

Կը հաստատամ, որ ինքն ալ կուզէ դուրս գալ այդ կացութիւնէն: Խճճուած է անգամ մը եւ վերջին օրը անկեղծօրէն յայտնեց,

թէ կուզէ ազատուիլ այդ շրջանէն: Դժբախտաբար անձնական գործերս այժմ այնքան փայլուն չեն. բայց փոքր ինչ եթէ գործերս լաւանան, իմ սեփական միջոցներով պիտի փորձեմ փոխադրեր զինքը այլուր, որովհետեւ այսօր ալ իմ ամբողջ մտահոգութիւնս է փրկել այդ մարդուն, բան մը, որ կարելի է միմիայն զինքը այդ շրջանէն հեռացնելով: Թէեւ, ի հարկէ, փրկութիւնը նախ իրանից է կախուած:

Ամէն պարագայի, եթէ ես ընդհ[անուր] ժողով20 գացած ըլլայի, իր մասին իմ տեսակէտս պիտի ըլլար վերջին պատեհութիւնն մը եւս տալ, որոշելով, որ «Դաշնակցութեան ընդհ[անուր] ժողովը կարգի կը հրաւիրէ ընկ. Նժդէհին, պահանջ դնելով խզել ընդմիշտ իր կապերը այդ շրջանի ըմբոստացած տարրերուն հետ, մասնաւորաբար այն տարրերուն հետ, որոնք երբեւէ այլեւս չեն կրնար մուտք գործել Դաշնակցութեան մէջ, որից յետոյ եթէ ան շարունակէր գործակցութիւնը այդ այլասերուածներուն հետ, մեքենաբար կարտաքսուի կուսակցութիւնէն»:

Ես Նժդէհին արտաքսման լուրը ստանալուն պէս կարճ նամակ մը գրեցի իրեն, մօտաւորապէս հետեւեալ բովանդակութեամբ. «Սիրելի Գարեգին, իմացայ քո արտաքսման լուրը. ինձ չէ կարող ցաւ չպատճառել այդ որոշումը: Բայց ինչո՞ւ դուն քեզ այդտեղ հասցրիր: Դու չուզեցար լսել քո զէնքի ընկերոջը: Այս փաստի առաջ դժուարանում եմ քօնկրետ որեւէ բան. գրել քեզ. ես խնդրում եմ հաւասարակշռութիւնդ պահես եւ լուռ տեղդ նստես. տեսնենք ի՞նչ պիտի անել»21:

Նա ինձ յայտարարում է, թէ այս նամակս չէ ստացել, իսկ միւս կողմից իր հովանաւորած մամուլի մէջ այնպիսի այլանդակ դիրք է բռներ, որին հանդուրժել կարելի չէ: Այդ մամուլը անվայել, անթոյլատրելի պայքար մը սկսած է Ռուբէնին դէմ 22, որուն ներքին էութիւնը յար եւ նման է միհրանականութեան: Միհրանական շարժման ժամանակ եւս, Համբ[արձում] Առաքելեանը23 ուզեց այդ շարժման գաղափարական հագուստ հագցնել՝ պատրուակ ծառայեցնելով նախագիծը: Պալքանի մէջ ծայր տուած այդ շարժման համար ալ նոր Առաքելեան մը պիտի ծնի եւ անոր գաղափարական կերպարանք տայ, մինչդեռ տակը պարզապէս միհրանականութիւն է24:

Մի նեղացիր, եղբայրս, որ այս առթիւ մի քիչ էլ քեզ դիպչեմ: Խոսքս կը վերաբերի Կոմսի յուշերուն, որ տպեցիր «Վէմի»25 մէջ, քու ալ յաւելումովդ: Այդ գրութեամբ կարծէս թէ ուզած եք Ռուբէնին ցոյց տալ իբր միակ յանցաւոր Մշոյ ջարդերուն եւ այլն: Ինչո՞ւմն է, սակայն, Ռուբենի մեղքը, որ ան չէ կարողացա՞ւ ահազանգը տալ Մշոյ ժողովուրդին, թէ իրկուն պիտի ջարդեն եւ չէ կարողացա՞ւ ի զէն հրավիրել անոր: Բայց, ըսէ, տեսնեմ, Դաշնակցութիւնը կարողացա՞ւ կանխատեսել այն բոլոր ջարդերը, զոր տեղի ունեցան յետագային եւ կրցա՞ւ հայ ժողովուրդին ի զէ՞ն դառալ:

Տամ նաեւ Վանի օրինակը: Ճիշտ չէ, որ Վանի ղեկավարութեան ի զէն հրաւիրողը Արամն 26 է եղած: Ապստամբութիւնէն նոյնիսկ մէկ շաբաթ առաջ Արամը, Վռամեանը 27 եւ Իշխանը28 ճնշում բանեցուցած են զինուորցուներուն վրայ, որ ներկայանան զինուորական իշխանութեան: Անոնց հիմնական մտահոգութիւնն է եղած միայն եւ միայն յետաձգել հաւանական ջարդերը: Իսկ երբ Շատախ ղրկելու պատրուակին տակ Իշխանին կը սպաննեն Հերս29 գիւղին մէջ, եւ գիւղացի կին մը լուր կը բերէ այդ մասին, միւս կողմէն Ճէվդէթը30 վար կը դնէ Վռամեանին, քիչ էր մնում Արամն էլ ընկնէր նոյն այդ թակարդին մէջ, եթէ Գէորգ Ճետաճեանը 31 արգելք չըլլար իր մեկնումին: Ահա այդ պայմաններուն տակ է, որ Վանի երիտասարդութիւնը կը հարկադրէ Արամին անմիջապէս զէնքի դիմել:

Առնենք Տրապիզոնի օրինակը: Նոյն վայրի կ.կոմիտէն չէ՞ր որ զինուած ուժերուն հրահանգում էր անձնատուր ըլլալ32:

Անցնենք կռիւներու շրջանը: Դուն չե՞ս գիտեր, թէ ինչպէ՞ս Բե[ր]կրի Կալայում, Վանի նահանջի ժամանակ, շատ թանկագին եւ քանիցս մահւան դռան առաջ կանգնող ընկերներ խուճապի մատնուեցան ու Անդրանիկն անգամ ամբողջ բանակով թափեց եւ հեռացաւ: .

Չե՞ս յիշէր նոյնպէս Կոմսի պարագան, որ Մուրադի եւ Սեպուհի հետ Թիֆլիզէն անցաւ Հիւսիսային Կովկաս ճիշտ այն պահուն, երբ ամբողջ երկիրը Թուրքերուն հետ կռիւի էր բռնուած. Կոմսը, որ Արեւմտեան խորհուրդի անդամ ալ էր 33:

Ասա, խնդրեմ, եթէ մէկը դուրս գայ եւ մամուլի սեփականութիւն դարձնէ այս ամէնը, ի՞նչ կը շահէ Դաշնակցութիւնը եւ հայ ժողովուրդը:

Ու երբ այս ամէնը գիտենք, գիտենք նաեւ որ մարտահրաւէրի կոչ ոչ մէկ տէղ չէ եղած, այլ տեղ-տեղ դէպքերն է, որ հարկադրէր են զէնքի դիմելու: Կարելի՞ է Ռուբէնը միայն մեղադրանքի աթոռին վրայ նստեցնել, այն առարկութեամբ, որ

Մուշը ոտքի չէ հանած 34: Եւ, վերջապէս, ասա, խնդրեմ, Սիմոն ջան, ի՞նչ բանի կը ծառայէն այդ յուշերը: Պատմութեա՞ն համար կուզէք գրի առնել, թէ՞ սերունդ դաստիարակելու համար: Եթէ պատմութեան համար է՝ հրապարակելը վաղաժամ է, իսկ եթէ սերունդ դաստիարակելու համար է՝ վնասակար:

Արդեօք նման յուշերը մէղքի իրենց բաժինը չունե՞ն, որ Պալքանի այլասերած մամուլը նոյնիսկ Գէորգ Զավուշի սպանութիւնը Ռուբէնին վզին փաթթելու անմարդկային լրբութիւնը կունենայ: Արդ յուշերու ազդեցութեան տակ չէ՞, որ այսօր ընկերոջ (՞) մը վարկաբեկելու, հարուածելու ներքին որոշումով, Տարօնականութիւն կը խաղցնեն եւ կը ջանան ճեղք բանալ կուսակցութեան մէջ:

Եւ, վերջապէս, մէկ բան գէթ մեզի համար. պարզուած չէ՞ արդեօք, որ 914-915-ի շրջանին Դաշնակցութեան միակ ընդհանուր գիծն է եղած կանխել հունական վտանգները35 եւ երբէք առիթ չէ տալ թշնամիին արագացնելու բնաջնջման իր ծրագիրներուն գործադրութիւնը:

Սիմոն ջան, իմ համոզումով կուսակցութեան ժառանգները մարմիններու անդամները չեն միայն, այլ այն բոլոր հին ու նոր ընկերները, որոնք նոյնացած են կուսակցութեան հետ իրենց անցեալով եւ ներկայով: Ահա թէ ինչու կան ընկերներ, որոնք մեծ զգուշութեամբ պէտք է շարժեն իրենց գրիչները, որովհետեւ մեր բոլորիս ալ ցաւը, մտահոգութիւնը մէկ է, պահել կուսակցութիւնը եւ եթէ պիտի մեռնի հակառակ մեր ջանքերուն՝ նա մեռնի պատուով:

Անցնենք մի այլ նիւթի: Դա քեզ ծանօթ դէպքն է: Ոչ որոշումն էր ինձ ծանօթ, եւ ոչ ալ մանրամասնութիւններն են ծանօթ ինձ մինչեւ այժմ: Կը յայտարարեմ քեզ, իմ ընկերոջս, որ ես զայրացած եմ միմիայն վայրի եւ ամբոխավարական այն եղանակի համար, որով տեղի ունեցաւ այդ դէպքը: Բայց ես մէկն եմ անոնցմէ, որ իբր[եւ] կուսակցական կը վերցնեմ պատասխանատուութեան իմ բաժինս, առանց իմանալու մանրամասնութիւնները: Կը յիշե՞ս, ռուս եւ ճափոն պատերազմի ժամանակ, երբ մինչ մէկ կողմէն ցարերու կառավարութիւնը մեր դպրոցները կը փակեր, մեր եկեղեցական կալուածները կը գրաւէր եւ կոզակներու ձեռքով հարիւրաւոր անմեղ դիակներ կը փռէր անդին, հայ կոչնակը Բագու Բարապետի հրապարակում մաղթանք կը կարդար ռուսական զէնքի յաջողութեան համար: Ու Ժամհարեանն ու Խեչօն էին, որ աղօթողներու

մէջ ռումբեր կը նետէին իբր բողոքի արտայայտութիւն, մինչեւ 20 վիրաւոր եւ սպանուած թափելով այնտեղ: Այդ դէպքի առթիւ ի՞նչ եղաւ վերաբերմունքը կուսակցութեան իսկական տէրերուն եւ ղեկավարներուն: Անոնք թեթեւ պատիժներ միայն սահմանելով, հաստատեցին, որ յեղափոխական զայրոյթը արդարացի էր նման քայլ մը առնելով 36:

Անցնենք ընդհ[անուր] ժողովը սարքովի ըլլալու պատմութեան: Նախորդ էջերուն մէջ ակնարկածս հանդիպման բոլորի ներկաութեան Նժդէհը ոչ մի լուրջ բան չասեց, բացի ընդհ[անուր] ժողովը սարքովի ըլլալու մասին: Բայց այս ուղղութեամբ շատ տեղերէ լսած եմ դժգոհութիւններ: Բայց մի՞թէ չենք կարող ընդունել, որ փաստը կատարուած է եւ այդ փաստի առաջ ոչ մէկ պատասխանատու դաշնակցական պէտք չէ խախտի հեղինակութիւնը մեր մարմնին, տարածելով նման խնդիրները կուսակցական շարքերուն մէջ:

Դուն պիտի հարցնես, թէ հապա ի՞նչ է քու կարծիքդ: Գրեմ նաեւ իմ կարծիքներու եւ անելիքներուս մասին: Դուն գիտես, որ ինծէ չի պակսիր քաղաքացիական արիութիւնը ըսելու այն ամէնը՝ ինչ որ ես կը մտածեմ: Բայց զիս մտահոգողը մէկ բան է միայն: Զիրար գգգելով, կազմակերպութեան թշնամիներուն, քանդել ուզողներուն պէտք չէ սնունդ մատակարարենք:

Գրեմ, սակայն, թէ ի՞նչ է իմ կարծիքս, իմ տրամադրութիւնս, իմ ցանկութիւններս ու իմ դէրս:

Դու պէտք է գիտնաս, որ ես սկզբից հրաժարեցի մարմնի մէջ մտնել եւ յետոյ ետ առի հրաժարականս, հակառակ այն կարգ մը որոշումներուն, որոնք իմ կարծիքով անթոյլատրելի էին Դաշնակցութեան ընդհ[անուր] ժողովի մը համար: Կը բերեմ միայն մի քանի օրինակ, մնացածները համարելով երկրորդական ինձ համար:

Առաջինը այն է, որ ՀՅԴ ընդհ[անուր] ժողովը ցանկութիւն է յայտնած, որ ընկերները գրաւոր կապ չէ պահին անձնական գետնի վրա, կուսակցական խնդիրներու առթիւ: Այս ցանկութիւնը եթէ իբրեւ որոշում քուէարկուած ըլլար, բնական կերպով մարմիններու կողքին պէտք է կազմակերպուէր գաղտնի ոստիկանութիւն մը, որպէսզի հետապնդման ենթարկէր ընկերներու ներքին կապերը:

Երկրորդը այն հակասական որոշումն է, որ տուած են երկրի հետ կապի խնդրի առթիւ պատահած դժբախտութեանց գլխաւոր յանցաւորի՝ Եղիշէի 37 մասին:

Երրորդը այն է, որ ՀՅԴ ընդհ[անուր] ժողովը38 այն օրին է հասեր, որ, բացի Ռուպինայէն39 եւ Լիպարիտէն, խորհրդակցական ձայնով ուրիշ որեւէ ընկեր իր մէջ ունենալու հնարաւորութիւն չէ ունեցած:

Կուսակցութիւնը դէպի կենտրոնացում առաջնորդող միւս որոշումները ինծի համար երկրորդական նշանակութիւն ունին, բաղդատած այն բարոյական մթնոլորտին, որուն մէջ կայացած է ընդհ[անուր] ժողովը:

Այո, այդ բոլոր պարագաները չեն կրնար ճնշող տպաւորութիւն չէ թողուլ ինձ վրայ: Ընդհ[անուր] ժողովի կազմակերպիչները պէտք է չափէին իրենց ուժերով, որպէսզի աւելի լայն թիւով մարդկանց հնարաւորութիւն տրուէր մասնակցելու ընդհ[անուր] ժողովին: Այս թերացումը այսօր շատերը կը բացատրեն կանխամտածուած, դիտումաւոր: Բայց ինչքա՞ն ճիշտ է՝ ես չէ գիտեմ:

Ընդհ[անուր] ժողովէն առա՞ջ, թէ՞ ընթացքին, ես Բիւրօյին ուղղուած նամակներ գրեցի: Թէեւ նամակներն ուղղած էի Բիւրօյին, բայց չէի ենթադրեր, որ իմ այդ նամակները կարդացուելու չեն ընդհ[անուր] ժողովին մէջ, մանաւանդ այն ատէն, երբ իմ թեկնածութիւնը կը դրուի մարմնի համար: Ես այդ նամակներովս որոշ տեսակէտներ պարզած էի եւ նոյնիսկ պահանջած, որ յետաձգեն ընդհ[անուր] ժողովը, այդ հաւաքման տալով խորհրդակցական բնոյթ:

Այս երեւոյթին համար էլ դժգոհ եմ անշուշտ: Բայց կը կրկնեմ, փաստը կատարուած <է> արդէն:

Ու այս ամէնէն յետոյ ի՞նչ բանի մէջ ես գտնեմ դէրս: Լինեմ մարմնի մէջ, թէ մարմնէն դուրս, պիտի ձգտիմ իմ բոլոր հնարաւորութիւններովս հարթել բոլոր այն թիւրիմացութիւնները, որոնք ներսէն կը կրծեն մեր կուսակցութիւնը: Իմ համոզումն է, ձգտումն է եւ այս ուղղութեամբ դիմած եմ նաեւ մարմնին, որ Դաշնակցութիւնը պիտի ղեկավարուի հեղինակաւոր ընկերներու եւ մարմիններու համագործակից աշխատանքովը, որ ղեկավար, հեղինակաւոր ընկերը նոյնքան պատասխանատու է <իր> շրջանի կուսակցական աշխատանքներուն համար, ինչքան որեւէ մարմնի անդամ, որով բոլոր հիմնական խնդիրները պէտք է լուծուին ու գործադրուին այդ ընկերներուն <աջ>ակցութեամբ ու գործակցութեամբ:

Ես հաւատացած եմ, որ բոլոր այն դաշնակցականները, որոնք դեռ կը հաւատան, թէ դէր մը ունի կատարելիք այս կուսակցութիւնը հայ իրականութեան մէջ եւ <սա>ռնասիրտ կը դատեն ամէն ինչ, դուրս պէտք է շպրտեն <ի>նչ որ հետեւանքն է անհատական դաւանութիւններու <եւ> պարզ ու չեշտակի մարմիններու եւ հեղինակաւոր ընկերներու առաջ պիտի դնեն այն բոլոր խնդիրները, որոնք պիտի <ծ>առայեն Դաշնակցութիւնը փրկելու եւ ոչ թէ քանդելու:

Ներկայի իմ անձնական դրութիւնը այնքան փայլուն չէ: Բայց յոյս ունիմ, որ մօտիկ ապագայում հնարաւորութիւն կունենամ ոտքս դցելու թէ Եգիպտոս, թէ Բարիզ, եւ թէ գուցե Շանթի եւ Աղբալեանի բնակած վայրը40:

Իմ կարծիքս եղած է եւ կը մնայ, որ կուսակցութեան ժառանգները միմիայն մարմիններու մէջ գտնուող ընկերները չեն եւ ոչ ալ միմիայն մարմինները: Բայց միեւնոյն ժամանակ հիմնական կարծիքս է, որ հեղինակաւոր եւ պատասխանատու ընկերները նոյնքան պատասխանատու են իրենց գործունէութեան, թաքթիկ եւ վարմունքի համար, որքան մարմնի մէջ գտնուողները:

Վերջացնելով նամակս, Սիմոն Ջան, դառնութեամբ լեցուն, առաջներումս մթութիւն, մեր ընելիքները քաղաքական մարզի վրայ այնպէս մը դասաւորուած, որ ներկայ խմորումներու ընթացքին սուպեկտիվ շատ չնչին բան կարող ենք ընել մեր ուժերով: Այս պայմաններում ի՞նչ կը մնայ մեզ ընել, եթէ քանի մը տասնեակ ընկերներ ալ չէ կարողանանք զիրար հասկնալ եւ զիրար գգգզենք:

Շուտով կը լրանայ Դաշնակցութեան յիսնամեակը: Մեր բոլոր ճիգերը կենտրոնացնելով այդ յիսնամեակի առթիւ՝ դուրս պէտք է գանք աւելի ուժեղացած եւ կենսունակ, քանի որ մեր ժողովուրդի փրկութեան միակ ապաւենը Դաշնակցութիւնն է այսօր:

Ցամբիւրներով քո Դրօ

.Ե. Նժդէհը մեկնելուց առաջ, Գ. Սարգսեանին միջոցաւ լուր էր ղրկած, թէ նոր տարին, երբ կը վերջանան իրենց ձեռքը գտնուած ակումբներուն վարձակալական պայմանաժամը, պիտի յանձնուին օրինաւոր մարմիններուն, ինչպէս նաեւ դրամները:

Կը կատարի՞, անկե՞ղծ է արդեօք, հնարաւորութիւն կունենա՞յ, ապագան ցոյց պիտի տայ:

Մանրթագրություններ

1. Սիմոն Վրացյան:

2. Գարեգին Նժդեհ:

3. Հայկ Ասատրյան (1900-1956) - Հայ հասարակական-քաղաքական գործիչ, փիլիսոփա: Մասնակցել է 1921թ. փետրվարյան ապստամբությանը, այնուհետեւ բնակություն հաստատել Բուլղարիայում եւ Ռումինիայում: Ավարտել է Բեռլինի բարձրագույն քաղաքական դպրոցը եւ Պրահայի համալսարանի փիլիսոփայության բաժինը, փիլիսոփայական գիտությունների դոկտորի կոչումով: Համագործակցել է Գարեգին Նժդեհի հետ: Խմբագրել է պարբերականներ, հատկապես նշանավոր «Ռազմիկ» կիսաշաբաթաթերթը, Նժդեհի հետ միասին (1937-1944):

Համատեղ հիմնադրել եւ քարոզել են Տարոնական շարժում կամ Տարոնականություն գաղափարական հոսանքը, տպագրել «Ցեղ եւ հայրենիք» ամսագիրը: Գործուն մասնակցություն է ունեցել ֆաշիստական այն քարոզչության ժխտման գործում, որի համաձայն իբրեւ թե հայերը ոչ թե հնդեվրոպական, այլ սեմական ծագում ունեն, եւ որը կարող էր սպառնալիք դառնալ հայերի ջարդի համար, ինչպես այդ տեղի ունեցավ հրեաների հետ: Հայկ Ասատրյանը հանդես եկավ «Հայաստան-Արիական նախադիրք Առաջավոր Ասիայում» գրքով, որի առաջին մասը լույս է տեսել Նժդեհի առաջաբանով, իսկ երկրորդ մասը մնացել է անտիպ:

Հ.Ասատրյանը զբաղվել է կուսակցական գործունեությամբ, եղել է ՀՅԴ Բալկանների կենտրոնական կոմիտեի անդամ, ունեցել է տարաձայնություններ գործընկերների հետ, որի արդյունքում հեռացվել է կուսակցությունից (1935թ.):

Տարոնական շարժման ծավալման շնորհիվ, նշել է Ասատրյանը բանտային հարցաքննության ժամանակ, Բուլղարիայի դաշնակցական կազմակերպությունը կազմալուծվեց եւ հարեց մեր շարժմանը:

1944թ. Բուլղարիայում ձերբակալվել է «Սմերշի» կողմից, դատապարտվել է տաս տարվա ազատազրկման եւ մինչեւ 1955թ. տառապել խորհրդային բանտերում[1]:

[1] Տե՛ս Վաչե Օվսեպյան,Գարեգին Նժդեհի ԿԳԲ, Եր., 2001, ր.82-86, 179-183: Մ. Լալայան, Տարոնական շարժումը: Հայկ Ասատրյան, Երեւան, 2002, էջ 22-26:

4. Վահան Մազմանյան:

5. ՀՅԴ Բալկանների կենտրոնական կոմիտեի անդամ Հովհաննես Դեւեջյանը խորհրդային բանտարկության ժամանակ, 1947 թ. օգոստոսի 28-ին տվել է հետեւյալ ցուցմունքը. «Քարոզելով «Ցեղակրոն» գաղափարը, Նժդեհը Բուլղարիայում գրավեց ինչպես դաշնակցականների կենտրոնական կոմիտեն, որի անդամ էին ինքը՝ Նժդեհը, նրա գործակից Հայկ Ասատրյանը եւ բարեկամ Հովհաննես Օվանեսովը, այնպես էլ դաշնակցականների բուլղարական կազմակերպության մեծամասնությունը: Նժդեհի եւ Հայկ Ասատրյանի գործունեությունը հետաքննելու համար Բյուրոն Ռումինիայից Բուլղարիա գործուղեց Դրո Կանայանին, Հունաստանից՝ Գաբրիել Լազյանին, երկուսն էլ Բյուրոյի անդամ, որոնք տեղում ուսումնասիրելով գործը, կուսակցական տույժի ենթարկեցին Հայկ Ասատրյանին»: «Ցեղակրոնի» կողմնակիցները չենթարկվեցին այդ որոշմանը, ուստի Բյուրոն կուսակցությունից հեռացրեց 15-20 մարդու, այդ թվում Նժդեհին: Այնուհետեւ Դեւեջյանը ծանուցում է, որ ինքը բարեկամական հարաբերություններ չի ունեցել Նժդեհի հետ՝ սկսած 1923թ., եւ որոնք աստիճանաբար ավելի են խորացել:

Նույն թվականին Դեւեջյանի վերաբերյալ հարցաքննվել է նաեւ բանտարկյալ Նժդեհը, որը սակայն, մեզ հետաքրքրող հարցերին չի անդրադարձել[1]:

6. Նժդեհը ԱՄՆ-ում գտնվել է 1933-1934թթ.: Աշխատանք է տարել ՀՅԴ 12-րդ ընդհանուր ժողովի (Փարիզ 1932թ.) որոշումների կենսագործման ուղղությամբ, այն է՝ «հայ երիտասարդ սերնդի կազմակերպումը ապակուսակցական հողի վրա»: Նժդեհի գաղափարական-կազմակերպական գործունեության արդյունքը եղավ երիտասարդական ցեղակրոն կազմակերպությունների ստեղծումը: Ցեղ, ցեղակրոն, ապա նաեւ տարոնականություն (վերջինը Հայկ Ասատրյանի հետ միասին) հասկացությունների հիմքում դրվում էր հայրենասիրության ոգով երիտասարդության եւ ամբողջ ազգի դաստիարակությունը: Շուտով Ամերիկայի ցեղակրոն կազմակերպությունները վերանվանվեցին երիտասարդական կազմակերպության՝ ֆաշիստական ռասայական տեսության հետ չնույնանալու եւ սահմանազատվելու համար:

[1] Տես Վաչե Օվսեպյան, Գարեգին Նժդեհի ԿԳԲ., Եր., 2001, ս.15-20:

Ընդ որում եղել են նաեւ ցեղակրոն շարժումը չընդունողներ եւ մերժողներ: Օրինակ, այդ մասին բանտում հարցաքննության ժամանակ ցուցմունքներ է տվել պատմաբան-բանաստեղծ Սիրունին (Հակոբ Զոլոյանը), ավելացնելով, որ շարժումը լայն տարածում չունեցավ ինչպես կուսակցության մեջ, այնպես էլ նրանից դուրս: Բանտային հոդվածներից մեկում Նժդեհը լավագույնս լուսաբանել է ցեղակրոն շարժման կազմակերպման շարժառիթներն ու նշանակությունը: Ես, գրել է Նժդեհը, «հայրենասեր-գաղափարապաշտի խորին մտահոգությամբ» ձեռնարկեցի երիտասարդության կազմակերպման գործը, նրան համարելով «ամենակարող վերակերտիչ գործոն», երիտասարդ սերունդ, որը ծնված լինելով հայրենիքից դուրս եւ հեռու, իր տրամադրություններով դարձել էր մտահոգող: Իսկ գործը Ամերիկայից սկսելու կապակցությամբ գրել է, որ այնտեղ հայտնվել էր գաղութահայության ամենամեծ զանգվածը, եւ որ այդ երկիրն օժտված էր ամենակուլ ու ձուլող հատկությամբ[1]:

7. Ներսես Աստվածատուրյան (ծնվել է Կոստանդնուպոլսում, մահացել խորհրդային բանտում)- բուլղարահայ կուսակցական-հասարակական գործիչ, ունեցել է առեւտրական գործունեություն: Բալկաններում աշխատակցել է Հայկ Աստրյանի եւ Գարեգին Նժդեհի հետ[2]:

8. Արամ Հակոբյանի մասին տվյալներ ենք հանդիպել ՀՅԴ Բալկանների կենտր.կոմիտեի անդամ Աստուր Պետիկյանի հուշերում, որ տպագրվել են 1933 թ.: Արամ Հակոբյանը, գրել է Պետիկյանը, օրինակելի կուսակցական գործիչ էր Ֆիլիպեում, ապա Սոֆիայում: Նա այնտեղ էր, որտեղ գործ կար՝ կուսակցական մարմիններից մինչեւ ընթերցարան-մատենադարանը[3]: Արամ Հակոբյանի անունը հիշատակվում է նաեւ Նժդեհի «Դաշնակցությունը Բուլղարիայում» բանտային հոդվածում (1947 թ.), որպես պատերազմի ժամանակ Բուխարեստում Դրոյի հրավիրած ժողովի մասնակից:

9. Օնիկ Մխիթարյան - «Նոր խոսք» թերթի (Սոֆիա, 1932-1943) խմբագիր:

[1] Գարեգին Նժդեհ, Երկեր, հ. 2, Երեւան, 2002, էջ 441-446:

[2] Լալայան Մ., Տարոնական շարժումը: Հայկ Աստրյան, Երեւան, 2002, էջ 26-27:

[3] «Հայրենիք», 1933, թիւ 5, էջ 109:

10. Թափառական- Հալաճյան:

11. Հովհաննես Դեւեջյան (1886-անհայտ)-1921-1945թթ. ապրել եւ աշխատել է Բուլղարիայում եւ Ռումինիայում: Զբաղվել է մանկավարժությամբ, վարել է կուսակցական գործունեություն, տպագրել է հոդվածներ դաշնակցական մամուլում: Երկրորդ աշխարհամարտի ժամանակ գործակցել է Դրոյի հետ:

1955 թ. բանտարկությունից ազատվելուց հետո մեկնել է Արգենտինա, որտեղ տպագրել է (Արմեն Սեւան գրական կեղծանունով) «Բանտարկեալի մը յուշերը: Տառապանքի տարիները Գարեգին Նժդեհի հետ» գիրքը[1]:

12. Համո (Համազասպ) Օհանջանյան:

13. Քրիստափոր Միքայելյան (1859-1905)- Հայ հասարակական-քաղաքական գործիչ, ՀՅԴ կուսակցության հիմնադիրներից: Զոհվել է Աբդուլ Համիդի ահաբեկումը կազմակերպելիս ինքնաշեն ռումբի փորձարկման ժամանակ:

Ռումբերի պատրաստումը եւ գործարկումը կապված է «Փոթորիկ» անունը կրող կոմիտեի հետ: Այն ստեղծվել էր 1901 թ. Ֆիլիպեում (Բուլղարիա) «Դաշնակցության կամքը ներկայացնող մարմնի» կողմից: Նպատակը ազգային-ազատագրական շարժման համար հանգանակություն (հայ հարուստներից) կատարելն էր՝ զենք ու զինամթերք հայթայթելու նպատակով (հարցը քննարկվել էր ՀՅԴ 2-րդ ընդհանուր ժողովում 1898 թ.): Կոմիտեի ղեկավարը Քրիստափոր Միքայելյանն էր, որը 3-րդ ընդհանուր ժողովում (Սոֆիա, 1904 թ.) զեկուցել է կոմիտեի գործունեության առաջին արդյունքների մասին:

14. Պեյո Ցավորով (Պ.Կրաչոլով, 1878-1914)- բուլղար բանաստեղծ, Թուրքիայի կողմից 1890-ական թվականներին կազմակերպած հայկական կոտորածների անմիջական տպավորությամբ գրել է «Հայեր» նշանավոր բանաստեղծությունը:

15. Գաբրիել Լազյան:

16. Դոսար - դոսյե (դոսե)՝ գործ:

17. Ս.Ս.-ի ով լինելը չհաջողվեց պարզել:

18. Սեթո (Սեդրակ Ջալալյան, 1884 1955 թթ., ծնվել է Ապարանի Քասախ գյուղում): Սովորել է Երեւանի ռուսական գիմնազիայում, ավարտել Պետերբուրգի համալսարանի իրավաբանության բաժինը: Դրոյի, Տիգրան Դեւոյանի, Սմբատ Եղիազարյանի

[1] Տե՛ս Գարեգին Նժդեհ, Երկեր, հ. 2, Եր., 2002, էջ 504:

եւ ուրիշների հետ հիմնել է «Բորեաս» մարտական խումբը: 1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումների ժամանակ խմբապետ Սեթոն մասնակցել է Երեւանի, Նախիջեւանի եւ Ղազախ-Շամշադինի ինքնապաշտպանությանը: 1918 թ. Բաշ-Ապարանի ճակատամարտի կազմակերպիչներից: Հայաստանի Հանրապետության տարիներին Երեւանի միլպետն էր: Երկրորդ աշխարհամարտի ընթացքում գործակցել է Դրոյի եւ Նժդեհի հետ: 1946-1951 թթ. Գերմանիայի Շտուտգարդ քաղաքի Հայ Ազգային կոմիտեի նախագահն էր [1]:

19. Հավանորեն խոսքն այն Հարութիկի մասին է, որին անդրադարձել է Գարեգին Նժդեհը 1944 թ. հոկտեմբերի 18-ին բանտային հարցաքննության ժամանակ: Պատասխանելով առաջադրված հարցին, Նժդեհը նշել է, որ Դրոյի խմբից է եղել նաեւ հին դաշնակցական, ոմն Հարութիկ: Պատերազմի ժամանակ Հարութիկը գերմանացիների գրաված տարածքներում զբաղվել է կուսակցական- կազմակերպչական գործունեությամբ[2]:

Ըստ Միսաք Թորլաքյանի՝ Հարություն, նույն ինքը Ցուրեան, Ցարութիւն Ցարութիւնեան: Հիշատակում է պատերազմի ժամանակ Ղրիմում եւ այլ հայաբնակ շրջաններում (նաեւ ավելի վաղ տարիներին) համատեղ գործունեության մասին [3]:

Հարություն Հարությունյանը մասնակցել է 1918 թ. Դրոյի գլխավորությամբ տեղի ունեցած մարտերին, ապա անդամագրվել է «Նեմեսիս» խմբին եւ օգնել է Միսակ Թորլաքյանին՝ 1921 թ.հուլիսի 21-ին Կոստանդնուպոլսում ահաբեկելու Բաքվի հայության ջարդերի կազմակերպիչ Բահբուտ խան Ջիվանշիրին:

2-րդ համաշխարհային պատերազմից հետո փնտրվել է ԽՍՀՄ պետանվտանգության մարմինների կողմից որպես «վտանգավոր պետհանցագործ»:

20. Հասկանալ 13-րդ ընդհանուր ժողովը (1938թ.):

21. Կուսակցությունից հեռացվելու հարցին հանգամանորեն անդրադարձել է նաեւ ինքը՝ Գարեգին Նժդեհը: Կարելի է վկայակոչել դեպքի թարմ հետքերով եւ բավական կրքով գրված

[1] ՀՅԴ ԿԱ, թթ.65, գ. 5: Միսաք Թորլաքեան, Օրերուս հետ, էջ 391): Համլետ Գեւորգյան, Սեդրակ Ջալալյանի գործը եւ հուշերը, Երեւան,2011:

[2] Վաչե Օվսեպյան, Գարեգին Նժդեհ ԿԳԲ, Եր., 2001, ր.124: «Հայրենիք», ամսագիր, 1957, թիւ 9, էջ 17:

[3] Միսաք Թորլաքեան, Նշվ. աշխ., էջ 414, 482-497:

«Մատնություն թե՞ պրովոկացիա» (տպագրված է Սոֆիայի «Ռազմիկ» թերթում, 1938թ. դեկտեմբերի 7-ին), ինչպես նաեւ «Դաշնակցությունը Բուլղարիայում» 1947թ. խորհրդային բանտում գրած հոդվածները: Ըստ առաջին հոդվածի տվյալների՝ Նժդեհը Դաշնակցությունից հեռացվել էր «հակակուսակցական» եւ «հակակարգապահական» արարքների համար: Մամուլի հրապարակումների հետ մեկտեղ այդ ամենը Նժդեհը դիտել է որպես պրովոկացիա իր անձի դեմ եւ դրա հեղինակ ճանաչել Ռուբեն Տեր-Մինասյանին՝ որպես իր անձի ու իր քարոզած ցեղակրոնության մասին հայացքների թշնամի:

Այդ եւ այլ խնդիրների կապակցությամբ Նժդեհը հակամարտություն է ունեցել Ռուբեն Տեր-Մինասյանի հետ, մեղադրելով նրան դավադրության մեջ, եւ որը հասցրել է Նժդեհի հրաժարականին Դաշնակցության անդամությունից: «Այժմ դուրս է գալիս,- շարունակում է գրել Նժդեհը, -որ ոչ թե ես եմ հեռացել..., այլ որպես թե «հակակուսակցական» ընթացքի մեջ եմ գտնվել եւ հեռացվել»:

Երկրորդ հոդվածը տեղեկացնում է, որ Նժդեհը Դաշնակցությունից հեռացել է 1937թ., կուսակցությունԸնդհանուր ժողովին ծանր մեղադրանքներ ներկայացնելով Բյուրոյի նկատմամբ: Այնուհետեւ կուսակցությունից հեռացածները հիմնել են «Ռազմիկ» թերթը եւ «Տարոնի արծիվ» ամսագիրը, որոնց քարոզչությունը, կրելով «ռեւիզիոնիստական ընույթ», խնդիր է ունեցել «արտասահմանի հայերի մեջ ստեղծել «Հայկական Իռեդենտա» (պահանջատիրություն.) կազմակերպություն, որն իր վրա վերցնելով Թուրքիայի հայկական տարածքների խնդրի լուծումը, Դաշնակցության գոյությունը կդարձներ ավելորդ»[1]:

1938 թ. ՀՅԴ ընդհանուր ժողովը Նժդեհին արտաքսել է կուսակցությունից:

22. Ռուբեն Տեր-Մինասյան:

23. Համբարձում Առաքելյան - «Մշակ» թերթի խմբագիր:

24. Միհրանական շարժում, միհրանականություն-խմբապետ Միհրանի անունով (Գաբրիել Քեչիչյան):

Ցարական ինքնակալության դեմ պայքարի ուղուն ՀՅԴ անցել է այն բանաձեւի հետեւությամբ, որն ընդունվել էր 1904թ. Փարիզում կայացած Ռուսաստանի հեղափոխական ու դիմադրա-

[1] Գարեգին Նժդեհ, Երկեր, հ.1, Երեւան, 2002, էջ 415-418 եւ հ.2, էջ 462-463:

կան կուսակցությունների (ՀՅԴ մասնակցությամբ) խորհրդաժողովի կողմից: Բանաձևը հռչակում էր՝ բռնապետության ոչնչացում, միապետական (ինքնակալ) կազմի փոխարինում ազատ, ռամկավարական կարգերով, ազգային ինքնորոշման իրավունք:

Այդ հիման վրա ՀՅԴ Խորհուրդը 1905թ. ընդունեց «Կովկասյան նախագիծը», որը 4-րդ ընդհանուր ժողովի (Վիեննա, 1907թ.) կողմից ճանաչվեց որպես ծրագրային հիմնադրույթ: Ծրագիրը անհրաժեշտություն էր համարում մասնակցությունը կովկասյան հեղափոխական կուվին, ինքնապաշտպանությունից բուն հեղափոխական գործունեությանն անցնելը, Անդրկովկասը դիտելով որպես ազատ Ռուսաստանի անբաժան, դաշնային մաս:

Միհրանականությունը դեմ էր այդ ծրագրին, գտնելով, որ կուսակցությունը պետք է սահմանափակվի «թուրքահայ դատով», նշելով, թե «Դաշնակցությունը հիմնված է ոչ թե սոցիալիզմի համար, այլ թուրքահայերի դատը պաշտպանելու համար»:

«Մշակ» թերթում (խմբագիր՝ Համբարձում Առաքելյան) տպագրած հոդվածներում խմբապետ Միհրանը կոչ էր անում հրաժարվել «Կովկասյան նախագծից» եւ նվիրվել միայն Արեւմտյան Հայաստանի ազատագրությանը:

Միաժամանակ ՀՅԴ մեջ դրսեւորվեց նաեւ ձախ հոսանք, Լեւոն Աթաբեկյանի ղեկավարությամբ: Սրանց կարծիքով արեւմտահայ դատը եւ ամբողջ հայկական շարժումը ստեղծված է հայ բուրժուազիայի կողմից եւ ծառայում է նրա շահերին:

ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովը որոշեց հետ մղել անջատման առաջարկը եւ արեւմտահայ ու կովկասահայ երկու գործունեություններն էլ վարել ՀՅԴ դրոշակի ու ղեկավարության տակ: Իսկ խմբապետ Միհրանը կուսակցության որոշմամբ՝ ահաբեկման ենթարկվեց[1]:

25. Կոմս- Վահան Փափազյան[2]:

26. Արամ Մանուկյան:

27. Վռամյան (Օնիկ Դերձակյան):

28. Իշխան (Սարգիս Պողոսյան):

29. Այլ տվյալներով՝ Հիրճ գյուղում, 1915 թ. ապրիլի սկզբին:

---

[1] Վարանդեան Մ., Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն: Երեւան, 1992, էջ 291-292, 400-402,412: «Հայրենիք», 1957, թիւ 4, էջ 14:

[2] «Վէմ», 1935թ., թիւ 3,4, 1936թ., թիւ 1, 2, 3, 4: Նույնը տե՛ս Վահան Փափազեան, Իմ յուշերը, Հ. 2, Պէյրութ, 1952, էջ 274-410:

30. Ջեւդեթ բեյ - Վանի կուսակալ (վալի):

31. Գեւորգ Չիտեչյան:

32. Տրապիզոնի անցքերի մասին տես. Միսաք Թորլաքեան, Օրերուս հետ:

Լոս Անճէլըս, 1953: 2-րդ հրատ., 1963:

33. Այստեղ առկա է որոշակի չփոթ: Արեւմտահայ Ազգային խորհրդի նախկին նախագահ Կոմսը (Վահան Փափազյան), Սեբաստացի Մուրադի եւ Սեպուհի հետ Թիֆլիսից Հյուսիսային Կովկաս չի մեկնել: Սեբաստացի Մուրադն եւ Սեպուհը Անդրկովկասից հեռացել են Հայոց Ազգային Խորհրդի որոշմամբ:Կոմսը միայն կատարելով Հայոց Ազգային խորհրդի պահանջը, որպես ճանապարհածախս, նրանց հանձնել է 5000 ռուբլի եւ խորհուրդ տվել հեռանալ Անդրկովկասից: Կոմսը Հյուսիսային Կովկաս է մեկնել մի փոքր ավելի ուշ[1]:

34. Հայ պատմագրության մեջ լուսաբանվել եւ քննարկվել են առաջին աշխարհամարտում ցեղասպանության ժամանակ Արեւմտյան Հայաստանի տարբեր վայրերում ինքնապաշտպանական կռիվների հիմնահարցերը, կռիվներ, որոնց շնորհիվ հայերը կարողացան ունենալ պակաս զոհեր:

Ինքնապաշտպանության կազմակերպման գործում եղել են նաեւ սխալներ ու դժվարություններ, մեղադրվել են քաղաքական ու ռազմական գործիչներ, արտահայտվել ինքնարդարացումներ: Մեղադրանք է հնչել նաեւ Ռուբեն Տեր-Մինասյանի հասցեին, որին անդրադարձել է Դրոն իր տպագրվող նամակում:

Ինքնապաշտպանական կռիվների հետ առնչվող հարցերի պատասխաններ կարելի է գտնել նորագույն գիտական ուսումնասիրություններում, որոնց թվում է նաեւ Ռուբեն Սահակյանի «Արեւմտահայության ցեղասպանությունը եւ ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին» (Երեւան, 2005) խորագրով մենագրությունը: Եվ, այնուամենայնիվ, հարկ ենք համարում տողեր մեջբերել Սասունցի Մուշեղի հուշերից, որ տեղ են գտել Ռուբեն Տեր Մինասյանի հուշագրություններում, ուր հեղինակն անդրադարձել է նաեւ վերջինիս դերին Մուշ-Սասունի ինքնապաշտպանության գործում:

---

[1] Տե՛ս Սեպուհ, էջեր իմ յուշերէն, հ.2, էջ 128-130:

Նկատի ունենալով ռազմամթերքի ու զենքի հայթայթման, ժողովրդի պարենավորման եւ այլ անհրաժեշտ խնդիրների լուծումը, Սասունցի Մուշեղը գրել է. «Այս բոլոր հոգերը, զինական, պարենաւորման, ներքին անդորրութեան, ամբողջութեամբ ծանրացած էին Ռուբենի ուսերուն: Ամբողջ եօթը ամիս, անիկա ոչ գիշեր ունէր եւ ոչ ալ ցերեկ, շարունակ կը շրջեր դիրքերը, կռուողներուն խրախոյս կու տար, ճակատներու կացութիւնը կը քննէր, ռազմամթերքը քննութեան կենթարկէր»: «Սասնոյ եւ Տարօնի կռիւները տեւեցին մօտաւորապէս եօթը ամիս: Ակկից աւելի անկարելի էր դիմանալ»:

Այդ ամենից հետո միայն Ռուբեն Տեր-Մինասյանի ղեկավարությամբ Անդոքում կայացած ժողովը եկավ եզրակացության, որ «այլեւս հաւաքական կռիւը չէ, որ կրնայ գործ մը տեսնել, փարթիզանական ձեւով կռիւը լաւագոյն միջոցն է, ով որ կրցաւ սահմանը անցնիլ թող անցնի, Սասնոյ սուրբերը բոլորիս օգնական: Գացողն ալ, մնացողն ալ ենթակայ է նոյն վտանգներուն, ով որ տեղ հասնի, թող պատմէ մեր վիճակի մասին»[1]:

35. Հունական վտանգների իմաստը կարելի է ցույց տալ հենց հունական փաստաթղթերի միջոցով: 1890-ական թվականներին թուրքերի կազմակերպած ջարդերից հայ բնակչության առանձին խմբեր փրկություն որոնեցին դեպի Տրապիզոն, Սեւ ծովի ափերը գաղթելով եւ այնտեղ կազմավորելով փոքրակազմ համայնքներ: Հայերն սկսեցին «առեւտրում բարգավաճել, միտում ունենալով տեղացի հույն առեւտրականների նկատմամբ գերակշռություն ձեռք բերել վերջիններիս միանգամայն պատիվ բերող պատճառներով: Այս միտումն օգտագործվում էր թուրքերի կողմից, որոնք միանգամայն շահագրգռված էին աղավաղելու Պոնտոսի հունական դիմագիծը, եւ այնպես ստացվեց, որ պոնտացիների շրջանում Հայաստանի հանդեպ խոր ատելության զգացում առաջացավ, նրանց արդեն հուզում էին ոչ թե առեւտրական շահերը, այլ սեփական երկրի հունական դիմագիծը»: «Այսպիսով, շարունակում է իր դիտարկումը փաստաթղթի հեղինակը, - արմենոֆոբիայի գաղափարի շուրջ համախմբելու համար ինչ հնարավոր էր անել, ամենայն հետեւողականությամբ արվեց»:

[1] Ռուբեն, նշվ. աշխ., հ. 7, Թեհրան, 1982, էջ 72, 82-85:

Հունական փաստաթղթերից կարելի է վկայակոչել նաեւ այլ տողեր այն մասին, թե ինչպիսի վտանգավոր մտայնություն ու ծրագիր էր երեւան գալիս Թուրքիայի հույների շրջանում: «Ըստ երեւույթին Բալկանյան պատերազմներից առաջ գոյություն ուներ արտաքին քաղաքականության մի ծրագիր, որը թուրքերի հետ համագործակցություն էր դավանում եւ որը, իմիջիայլոց, բավականին առաջ էր գնացել»: Հունական այս վտանգները կանխելու մասին է նամակում հիշվածը[1]:

36. 1903թ. սեպտեմբերի 2-ին Բաքվի Բարապետի հրապարակում տեղի ունեցած իրադարձությունները վերարտադրել է նաեւ Մ. Վարանդյանը. «Անզէն ժողովուրդը ցրուելէ յետոյ, մոտ 300 զինուած երիտասարդներ խմբուեցան եկեղեցիի ու գաւիթի մէջ եւ զանգակները զողանջեցին... Առաջ անցան ոստիկանական պաշտօնեաները եւ խիստ սպառնալիքներով պահանջեցին ցրիլ: Տրուեցաւ միաձայն, մերժողական պատասխան: Ու յանկարծ գաւիթէն դուրս թռաւ քաջերու մի խումբ եւ ատրճանակի հարուածներով գրոհ տուաւ թշնամու դէմ: Ոստիկանութիւնը, ահաբեկ, յետ նահանջեց: Վայրկենաբար զինուորներու վաշտ մը պաշարեց եկեղեցիի պարիսպը: Հրացանաձգութիւն, իրարանցում, ճիչեր, վիրաւորներու տնքոց... Կռիւը կատաղի եղաւ: Ապստամբութեան ղեկավարներն էին մեր երկու կարող խմբապետները-Դաշնակցական Խէչօ եւ Ջալլադ: Մէկ քանի ժամ տեւեց՝ առանց վճռական վախճանի: Մութը կոխեց: Պաշարուած տաճարի զանգը կը շարունակէր իր մեղմամաղձոտ զողանջը: Բայց դիմադրութիւնը աւելի երկար տեւել չէր կարող. փամփուշտը կը սպառէր»: «Քա՞նի կօզակ ու ոստիկան սպանուեցան մեր հայդուկներու գնդակներով-յայտնի չէ: Մերոնք ունեցան 11 սպանուած եւ 65 ծանր վիրաւոր»[2]:

Դաշնակցական Խէչո (Խաչատուր Ամիրյան)- Հայ ազգային ազատագրական պայքարի անվանի գործիչ (ծնվել է 1872 թ. Հին Նախիջեւանում, զոհվել է 1915 թ. Դատվանի կռվում): 1903թ. Բաքվում եւ Գանձակում ղեկավարել է հայկական մարտական խմբերի պայքարը հայ եկեղեցու գույքը բռնագրավող ցարական ուժերի դեմ: 1905-1906թթ. հայ-թաթարական ընդհարումների

[1] Հունական արխիվային փաստաթղթեր հայ-հունական հարաբերությունների մասին առաջին հանրապետության շրջանում (1918-1920), Երեւան, 1998:
[2] Վարանդեան Մ., Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն: Երեւան, 1992, էջ 285-286:

ժամանակ եղել է Նիկոլ Դումանի մերձավոր օգնականներից, գործուն մասնակցություն ունեցել Երեւանի նահանգի եւ Զանգեզուրի ինքնապաշտպանության կազմակերպմանը: 1908-1910թթ., որպես հայկական մարտական ուժերի հրամանատար, Պարսկաստանում մասնակցել է միապետականների բանակի դեմ մղված կռիվներին: Առաջին աշխարհամարտի տարիներին եղել է հայ կամավորական 2-րդ զորախմբի հրամանատար Դրոյի օգնականը, ապա գլխավորել Արարատյան գնդի հեծելազորը, առաջինը մուտք գործելով Վան:

Ջալլադ (Երվանդ Բաբերյան) - Ծնվել է Ալեքսանդրապոլում (Գյումրի), դաշնակցական գործիչ, մարտական խմբի խմբապետ, մասնակցել է Կուկունյանի (1890թ.) արշավանքին, գործել է Տարոնում, Կարսում, ղեկավարել զինատար խումբ:

37. Հավանորեն խոսքը Եղիշե Թոփչյանի (կեղծանունը՝ Երվանդ Թամարյան) մասին է: Եկեղեցական հողերի գրավման ժամանակ «Հայկական ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտեի» անունից «Ազդ» է ուղղել Կաթողիկոսին եւ եկեղեցու բոլոր գործիչներին՝ չկատարել ցարական իշխանությունների պահանջը, իսկ հայերին կոչ էր արվում միանալ «բողոքի հոսանքին եւ չխոնարհվել բռնակալ կառավարության պահանջի առաջ»:

Գործուն մասնակցություն է ունեցել «Ցառաջ» թերթի (Թիֆլիս) տպագրությանը եւ տարածմանը, ՀՅԴ Էրզրումի կազմակերպության աշխատանքներին:

Տվյալներ կան նաեւ ՀՅԴ Բալկանների կենտկոմի անդամ Աստուր Պետիկյանի հուշերում. «Պոլսից Երկիր մեկնելու ճանապարհին նա եղավ Ֆիլիպեում (սա սահմանադրության ժամանակ էր), արեց բանախոսություններ: Ընկ. Ե. Թոփչեան, ինչպես յայտնի է, հայ չարագործի գնդակին զոհ գնաց Բաբերդի մօտ 23 հոկտ. 1909-ին, իսկ ոճրագործը իր մեղքը քաւեց կախաղանի վրա՝ Էրզրումի մէջ»:

Իսկ Ռուբեն Տեր Մինասյանի հուշերում Եղիշեի մասին կարդում ենք. «Ան սպաննուեցաւ Ցաբէթի կողմէն, որ «ոռսական շուն» էր դարձած ռուսական քաղաքականութեան եւ «Մշակ» թերթին»: (Միքայէլ Վարանդեան, Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Երեւան, 1992, էջ 277, 396, 454-455: Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները: Թեհրան, 1982, հ.Զ, էջ 420:

«Հայրենիք» (Բոստոն), 1934, թիւ 3 (հունվար), էջ 155-159: Միսաք Թորլաքեան, Օրերուս հետ: Լոս Անճէլըս, 1953, էջ 141):

38. Հասկանալ 1938թ. կայացած 13-րդ ընդհանուր ժողովը:

39. Ռուբինա Արեշյան (1884-1971, Քրիստափոր Միքայելյանի հոգեզավակը, ՀՀ 3-րդ վարչապետ Համազասպ(Համո) Օհանջանյանի կինը)- ՀՅԴ անդամ (1900թ.), սուլթան Աբդուլ Համիդի դեմ անհաջող մահափորձի կազմակերպման մասնակից: Կյանքի վերջին տարիներն անցել են Կանադայում:

40. Բեյրութ (Լիբանան):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ——— 3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԴՐՈՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1905-1906ԹԹ. ՀԱՅ - ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿՌԻՎՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1. 1. Ուսումնառության տարիները: Գյուղապետ Գալավայի եւ Բաքվի գեներալ-նահանգապետ Նակաշիձեի ահաբեկումները ——— 8
1.2. Կոտայքի, Երեւանի, Դարալագյազի, Լեռնային Նախիջեւանի եւ Զանգեզուրի ինքնապաշտպանական մարտերում ——— 26
1. 3. Գեներալ Ալիխանով-Ավարսկու եւ ոստիկանապետ Տեր-Սահակովի ահաբեկումները, Դրոն Հին Բայազետում ——— 71

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ: ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ, ԴՐՈՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ 2-ՐԴ ԶՈՐԱԽՄԲԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

2. 1. 2-րդ կամավորականի առաջին արշավանքը, Կավրե-Շամեի կռիվը ——— 83
2. 2. Երկրորդ արշավանքը, դեպի Վան, Շատախ, Մոկս, Ռշտունիք, Տարոն ——— 109
2. 3. Նահանջի դժվարին օրերը ——— 160
2. 4. «Ալաղազի պատժիչ զորախմբի» գործողությունները: Երրորդ արշավանքը, դեպի Խնուս եւ Մուշ ——— 177

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

1918 ԹՎԱԿԱՆԸ...

3. 1. Հայկական բանակային կորպուսի կազմավորումը: Դրոն Երեւանի նահանգում, մահմեդական հրոսակախմբերի ելույթների «խաղաղեցումը» ——— 203
3. 2. Սարիղամիշի եւ Սուրմալուի ռազմաճակատներում ——— 261
3. 3. Բաշ - Ապարանի հերոսամարտը եւ Հայաստանի Հանրապետության հռչակումը ——— 316

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԴՐՈՅԻ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԸՆԴԱՐՁԱԿՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

4. 1. Հայ - վրացական պատերազմը ——— -383
4. 2. Հայաստանի Հանրապետության սահմանների ընդարձակումը, մահմեդական բնակչության զինված ելույթները ——— -454
4, 3. Դրոն Զանգեզուրում եւ Արցախում ——— 522

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՅ -ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ

5. 1. Սուրմալուի ճակատամարտը ——— 648.
5. 2. Դրոն որպես Հայաստանի Հանրապետության զինվորական նախարար եւ Խորհրդային Հայաստանի բանակի առաջին հրամանատար ——— 739
5. 3. Դրոն Մոսկվայում, նրա գործունեությունը 2-րդ համաշխարհային պատերազմում ——— 810

ՀԱՎԵԼՎԱԾ

Դրոյի նամակը Ս. Վրացյանին եւ ծանոթագրություններ ——— 893

ՀԱՄԼԵՏ ՄԱՐՏԻԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԴՐՈ

(Մենագրություն)

Խմբագիր՝ Սերգեյ Գասոյան
Շարվածքը՝ Լալա Մելքոնյանի
Ձևավորումը՝ Գևորգ Բաղդասարյանի

Ստորագրված է տպագրության 18.11.2014:
Չափսը՝ 60x84 1/16:
Ծավալը 57.5 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 500 օրինակ:

«ԳԵՎՈՐԳ - ՀՐԱՅՐ» ՍՊԸ

ԼՈՒՍԱԿՆ

Հրատարակչություն
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ 52.79.74, 52.79.47
Էլ. փոստ lusakn@rambler.ru